Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ԱՐՊԱՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ (1923-1988թթ.)

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

Ա.Ս. ԱՎԱՆԵՍՅԱՆ, Գ.Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

(1923-1988թթ.)

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

«Դիզակ պլյուս» հրատարակչություն
Ստեփանակերտ
2015

ՀՏԴ 37(091)
ԳՄԴ 74.03
Ա 774

Տպագրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության երաշխավորությամբ

Գրախոսներ՝
Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտ (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ. Ա.Մելքոնյան, պ.գ.դ. Հ.Աբրահամյան, պ.գ.թ. Ա.Վարդանյան, պ.գ.թ. Մ.Հարությունյան):

Ավանեսյան Ա.Ս., Հարությունյան Գ.Հ.
Ա 774 Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կրթական համակարգը (1923-1988թթ.): Ա. Ավանեսյան, Գ. Հարությունյան.-Ստեփանակերտ: Դիզակ Պլյուս, 2015. Հ. 2.- 504 էջ:

Աշխատության երկրորդ հատորում ուսումնասիրության է ենթարկված Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կրթական համակարգի ամբողջական պատմությունը: Արխիվային հարուստ նյութերի, սկզբնաղբյուրների և ժամանակակիցների հուշերի համադրական վերլուծության հիման վրա հետազոտվել և նորովի լուսաբանվել են քննարկվող ժամանակաշրջանի ԼՂԻՄ կրթական համակարգի սկզբնավորման ու զարգացման ուղղությունները՝ կրթական գործի կառավարման համակարգը, ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքը հայկական դպրոցներում՝ նախապատերազմյան (1920-1940թթ.) և հետպատերազմյան շրջանում, ուսուցչի ընտրությունը, նշանակման կարգը, մանկավարժության կադրերի պատրաստման և վերապատրաստման հիմնախնդիրները, ԼՂԻՄ կրթական գործի կազմակերպիչների արգասավոր գործունեությունը, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտակրթական գործունեությունը, կին մանկավարժների լուսավորական գործունեությունը, նրանց առաջավոր փորձը և պատմական ու տեսական արժեք ունեցող այլ հարցեր, որոնք հնարավորինս ամբողջական կերպով գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ:

Աշխատությունը նախատեսված է հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմությամբ զբաղվողների, առանձնապես ուսուցիչների, մանկավարժական կադրեր պատրաստող բուհերի դասախոսների, ուսանողների և, առհասարակ, ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 37(091)
ԳՄԴ 74.03

ISBN 978-9939-1-0284-9

© Ավանեսյան Ա.Ս., 2015
© Հարությունյան Գ.Հ., 2015

Հետազոտությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳՆ ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS «Արցախի կրթական համակարգը» գիտական թեմայի շրջանակներում:

ԱՌԱՋԱԲԱՆ

Ազատագրական ոգորումների շնորհիվ երկրորդ հազարամյակի վերջին արցախահայությանը հաջողվեց վերակերտել յոթ տասնամյակ առաջ կորցրած իր պետականությունը: Այն հաստատուն պահելու համար այսօր անչափ կարևորվում է երկրի տնտեսական և մշակութային կենսագործունեության ապահովումը: Փաստորեն ներկա պայմաններում հայրենիքի բախտն ու ապագան որոշվում են ոչ միայն ռազմական և քաղաքական ոլորտներում, այլև՝ տնտեսական, մշակութային և գաղափարական ճակատներում: 1991թ. սեպտեմբերի 2-ին Անկախության մասին հռչակագրով Արցախը ձեռք բերեց քաղաքական անկախություն և նշանակալից հաջողությունների հասավ տնտեսության, գիտության և մշակույթի բնագավառներում: Դառնալով անկախ հանրապետություն, Արցախը հնարավորություն ստացավ ինքնուրույնաբար լուծելու իր առջև ծառացած սոցիալ-տնտեսական, քաղաքական, հոգևոր-մշակութային և կրթական հիմնախնդիրները: Խորհրդային պետության և Բաքվի իշխանությունների կողմից նպատակամետ պլանավորվող և վարչահրամայական մեթոդներով կառավարվող տնտեսությունից և քաղաքականացված կրթական համակարգից ազատականի անցումը արմատապես փոխեց ոչ միայն սոցիալ-տնտեսական հարաբերությունները, հրատապ խնդիր դարձան նաև նոր ազգային կրթական համակարգի ստեղծումն ու զարգացումը, կառավարման նոր սկզբունքների, մեթոդների ու գործառույթների ապահովումը դպրոցի՝ որպես կրթական համակարգի առաջին օջախի զարգացումը:

Անտարակույս, այդ գործընթացը դյուրին չի ընթանում, քանզի, որպես կանոն, նորը հնի դեմ պայքարելով և նրանից դրականը վերցնելով ու բացասականը դեն նետելով է ինքնահաստատվում: Այս առումով թերևս առավել քան կարևորվում է կրթական համակարգի կազմակերպման նախորդ՝ խորհրդային հասարակարգի կրթական համակարգի փորձը: Իր առանձնահատկություններով հանդերձ, այն ունի նաև ընդհանրություններ, որոնք կարող են դրական կամ բացասական առումներով ուսանելի լինել հաջորդի համար և օգնել այժմյա չափազանց հրատապ ու արդիական կրթական հարցերի լուծմանը:

Անշուշտ, այսօր մեր հանրապետության սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքում, կրթական համակարգում ընթացող տեղաշարժերը պահանջում են նաև կրթադաստիարակչական նոր փոփոխություններ: Բայց դա չի նշանակում, որ մենք ոչինչ չպետք է ընդունենք խորհրդային կրթական համակարգից: Նախորդ տասնամյակներին մեր անցածը բավական զորավոր ժառանգություն է, և խորհրդային կրթական համակարգը, որպես մեխանիզմ թեև քաղաքականացված էր, այնուամենայնիվ՝ ընդօրինակելու շատ բան ունի: Այն ընդգրկում էր մի կուռ և միասնական համակարգ: Անժխտելի փաստ է, որ նախորդ վարչակարգին բնորոշ հանդիսամոլությունն ու ձևապաշտությունը ստվերարկում էին իրականացվող աշխատանքները, բայց, այնուհանդերձ, համընդհանուր կրթության, դաստիարակության պլանային գործունեությունն իր «առաքելությունը» կատարում էր: Անհրաժեշտ էր գնահատել նախորդ կրթական համակարգը, նրա առավելություններն ու թերությունները:

Խորհրդային կրթական համակարգի անվիճելի առավելությունը հանրակրթության հիմնարարությունն ու հանրագիտայնությունն էր: Իրոք, մեր երեխաների կրթվածության միջին մակարդակն անհամեմատ բարձր էր, քան մի շարք այլ երկրներում: Հիրավի, նախկին կրթական համակարգում հիմնական թերությունը կրթության ազգային-մշակութային բովանդակության սահմանափակումն էր հատկապես հումանիտար առարկաների դասավանդման ժամանակ: Բոլոր ծրագրերն ու մեթոդները միասնականացված էին և տրվում էին միասնական կենտրոնից՝ Մոսկվայից, որոնք Արցախին մատուցվում էին նպատակային խեղաթյուրված ձևով՝ Ադրբեջանի լուսավորության նախարարության կողմից: Այդ մոտեցումը բավականին դժվարացնում էր դասավանդումը դպրոցում, սահմանափակում սովորողների աշխարհայացքը: Չնայած այդ ամենին, անհրաժեշտ է գնահատել նախորդ հասարակարգի կրթական համակարգի առավելությունները և ուսումնասիրությունների միջոցով վերլուծաբար ներկայացնել հանրակրթական դպրոցի առաջավոր փորձը, վաստակաշատ մանկավարժների կողմից գործնականում կիրառված ուսուցման ու դաստիարակության արգասավոր ձևերն ու մեթոդները, որոնք կարելի է ստեղծագործաբար օգտագործել ժամանակակից հայ ազգային դպրոցում:

Անտարակույս, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի և XXI դարը մուտք գործած Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության կրթական համակարգի միջև բովանդակային առումով կան որոշակի նմանություններ և տարբերություններ, հանգամանք, որն իր հերթին պահանջում է անդրադառնալ խնդրո առարկա ժամանակաշրջանի՝ 1923-1988թթ. ընթացքում ծավալված իրադարձությունների համատեքստում ԼՂ ինքնավար մարզի հայ կրթական համակարգի բազմակողմանի ուսումնասիրությանը, տալ դրանց ազգային և քաղաքական գնահատականը, յուրացնել և ընդհանրացնել այդ հարուստ փորձը պատմագիտական և գիտագործնական առումով:

Այդ տարիներին հանրակրթական, միջնակարգ մասնագիտական, բարձրագույն դպրոցների և ողջ ժողովրդական կրթության անցած ուղու պատմության ուսումնասիրումը չափազանց կարևոր է մանավանդ այսօրվա համար, երբ ազատ և անկախ Արցախի Հանրապետությունում հանրակրթական միջնակարգ մասնագիտական և բարձրագույն դպրոցը թևակոխել է զարգացման նոր փուլ և, որ պետք է ուսումնասիրել ու իմանալ, թե ինչպես և ինչ միջոցներով ու ջանքերով են այդ հաջողությունները ձեռք բերվել Ադրբեջանի հետադիմական ազգահալած քաղաքականության պայմաններում:

Ժամանակագրական առումով դա մի հետաքրքիր ու հարուստ շրջան է, առանց որի վերաիմաստավորման անհնար է ժողովրդական կրթության հետագա զարգացումը: Դրանք դժվարին, բայց և հերոսական պայքարի ու մեծ հաղթական տարիներ էին (1923-1988թթ.): Այդ տարիներին ձևավորվեց, աճեց և կայացավ ԼՂԻՄ հանրակրթական, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն դպրոցը՝ իր բոլոր աստիճաններով: Իրականացվեցին պատմական և մշակութային նշանակության այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են մասսայական անգրագիտության վերացումը և պարտադիր միջնակարգ կրթության հաստատումը, ինչպես նաև բարձրագույն կրթության սկզբնավորումն ու զարգացումը:

Հետևաբար, այդ պատմական փաստերին անդրադառնալը և նոր մոտեցում-

ներ մշակելը, անցյալի փորձը դպրոցական գործին ծառայեցնելը կենսականորեն անհրաժեշտ են:

Ներկա աշխատության հիմնական նպատակը խնդրո առարկա ժամանակաշրջանի Արցախի կրթական համակարգի հանդեպ Խորհրդային Ադրբեջանի կողմից նպատակամետ խտրական քաղաքականության բացահայտումն ու մերկացումն է, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի յոթ տասնամյակի հայ կրթական համակարգի ամբողջական պատմության ուսումնասիրությունն ու ներկայացումը:

Աշխատության առաջին հատորում հանգամանորեն ցույց ենք տվել, որ Արցախի բազմադարյան կրթական համակարգի հարուստ ժառանգության ուսումնասիրությունը մշտապես հանդիսացել է հայ ուսումնասիրողների ուշադրության առարկան: Այդ ժառանգությունը ուսումնասիրվել է տարբեր տեսանկյուններից, ստեղծվել են բազմաթիվ աշխատություններ, սակայն դեռևս կան բաց էջեր, որոնց անդրադառնալը հնարավորություն կտա ամբողջացնել հայ ժողովրդի այս հատվածի կրթական համակարգի ամբողջական պատմությունը: Երկարամյա ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռել հեղինակներին ամբողջացնել «Արցախի կրթական համակարգի պատմությունը՝ 5-րդ դարից մինչև 20-րդ դարի երկու տասնամյակը» խորագիրը կրող աշխատությունում:

Ժամանակագրական առումով ուսումնասիրությունն ընդգրկում է 1923 թվականի հունիսին ԼՂ ինքնավար մարզի հռչակումից մինչև 1988 թվականը, Արցախյան շարժումը: Սակայն առանձին դեպքերում, ըստ անհրաժեշտության, անդրադարձել ենք նաև նախորդ ժամանակաշրջանի՝ 1920-1923 թվականներին Լեռնային Ղարաբաղի կրթական համակարգի զարգացման հիմնախնդիրների լուսաբանմանը: Աշխատության գլուխներն առանձնացված են ըստ հիմնահարցերի՝ պահպանելով դրանց ժամանակագրական ընթացքը: Ուսումնասիրությունը շարադրված է պատմահամեմատական ու քննական վերլուծության մեթոդաբանական սկզբունքների հիման վրա: ԼՂԻՄ հայ կրթական համակարգի զարգացման հիմնախնդիրների պատմաքննական վերլուծության հետ միաժամանակ բացահայտվում է նաև ինքնավար մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը նպատակաուղղված՝ Ադրբեջանի նպատակամետ հայատյաց քաղաքականությունը և վերջինիս նպաստումը մարզի հայ բնակչության արտահոսքի ծավալների ու տեմպերի մեծացմանը:

Հայտնի է, որ ԼՂԻՄ կազմավորման հենց սկզբից (1923թ. հուլիսի 7), մինչև 88-ի Շարժումը Ադրբեջանի ղեկավարությունը կոպտորեն ոտնահարել է երկրամասի հայ բնակչության իրավունքներն ու շահերը: Անշուշտ, դա արտահայտվել է մարզի սոցիալ-տնտեսական զարգացումն արհեստականորեն կասեցնելու, ԼՂԻՄ-ը Ադրբեջանի հումքային կցուկը դարձնելու, մարզի և իր իսկ միութենական հանրապետության միջև արտադրանքի ոչ համարժեք փոխանակում իրականացնելու, Նախիջևանի օրինակով մարզը հայազրկելու նպատակով հայազգի բնակչության նկատմամբ խտրական կադրային քաղաքականություն վարելու և, վերջապես, մարզին հարող հայկական շրջանների վարչատարածքային կառուցվածքը մասնակիորեն վերափոխելու, հայոց լեզուն և մշակույթը սահմանափակելու, հայկական հուշարձանները և մշակութային արժեքները ոչնչացնելու և դրանց յուրացնելու փորձերի մեջ: Յոթ տասնամյակում ԼՂ ինքնավար մարզում կտրուկ ավելացավ ադրբեջանական բնակչության թվաքանակը, հարակից շրջաններից

եկող վերաբնակիչների հաշվին: Սկսեց հետզհետե մեծանալ Բաքվի իշխանությունների կողմից «տեղական կադրեր» հորջորջված ադրբեջանցի պաշտոնյաների տեսակարար կշիռը պետական և հանրային կառույցերում: Մոսկվայից իջած հանձնարարություններով Բաքվի իշխանությունները նպատակամետ քաղաքականություն էին վարում, նպատակ ունենալով ինքնավար մարզում ընդլայնել ադրբեջանական կրթական հաստատությունների ցանցը, դրանով իսկ ստեղծել ադրբեջանական մտավորականության խիտ բանակ:

20-րդ դարի վերջին տասնամյակներին ազգային ազատագրական պայքարի շնորհիվ արցախահայությանը հաջողվեց վերականգնել իր անկախությունը և արցախահայ մտավորականների (ինչ փորձանք ու աղետ ասես, որ չի եկել նրանց գլխին՝ երկարաժամկետ ձերբակալություններ, արտաքսում հարազատ հողից և այլն) վաղուց երազած մտահղացումներն արդեն իրականացվեցին՝ նորաստեղծ Արցախի կրթական համակարգը լրիվությամբ ներառվեց Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի մեջ: Այդ միտումով էլ նորանկախ Հանրապետության կազմավորումից հետո նախադրյալներ ստեղծվեցին հայ ժողովրդի պատմության շատ հարցերի վերանայման, նորովի ուսումնասիրության համար, որոնք ժամանակի և հանգամանքների բերումով կամ դուրս էին մնացել հետազոտողների տեսադաշտից, կամ էլ անհրաժեշտ էր նորովի մեկնաբանել այդ իրադարձությունները: Դա հավասարապես վերաբերվում էր նաև խորհրդային շրջանի կրթական համակարգի ամբողջական պատմության նորովի ուսումնասիրությանը, որը կնպաստեր արցախահայ դպրոցի և մանկավարժական մտքի ամբողջական պատմության ստեղծմանը:

Ուսումնասիրելով աշխատությանն առնչվող հրապարակումները (ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախում), հեղինակները հանգել են այն եզրակացության, որ դեռևս հրապարակի վրա չկան այնպիսի ընդգրկուն մանկավարժական հետազոտություններ, որոնք ամբողջական պատկերացում տային 1923-1988 թվականներն ընդգրկող ժամանակաշրջանի կրթական համակարգի ամբողջական պատմության մասին:

Այս ուղղությամբ առանձին հետաքրքրական ուսումնասիրություններ են կատարել Գր.Հարությունյանը («Ժողովրդական կրթության զարգացումը Լեռնային Ղարաբաղում», Երևան, 1985թ.), Ս.Ավագյանը («Էջեր Լեռնային Ղարաբաղի կուլտուր-կրթական կյանքի պատմությունից», Երևան, 1982թ.), Ա.Ղուկասյանը, Ա.Աբրահամյանը («Լեռնային Ղարաբաղի և նրա կրթության համակարգի մասին», «Կրթությունը և գիտությունը Արցախում», 2005թ, հուլիս), «Կրթությունը Արցախում 405-2005թթ.» (համահեղինակ, ակադեմիկոս Ռ.Մարտիրոսյանի խմբագրությամբ, Երևան, 2005) և ուրիշներ:

Լեռնային Ղարաբաղի կրթական համակարգի պատմությանն առնչվող մի շարք հարցեր լուսաբանված են նաև Բ.Ուլուբաբյանի «Արցախի պատմություն» (Եր.1994), Հր.Աբրահամյանի «Արցախահայության հասարակական-քաղաքական կյանքը և Արցախի թեմը 1901-1933թթ. (էջմիածին, 2009), Վ.Բալայանի «Արցախի պատմություն» (Եր.2002), Ս.Մելքումյանի «Ճարտար», «Լեռնային Ղարաբաղ», Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (Եր.2010), Բ.Դավթյանի «20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժները» (Ստեփ. 2001) և այլոց ուսումնասիրություններում:

Որպես ընդհանուր բնորոշում ընդգծենք, որ վերը նշված և այլ աշխատություններ, անշուշտ, աղբյուրագիտական նշանակություն են ունեցել մեր ուսումնասիրության համար և նրանցում լուսաբանված խնդիրներն այս կամ այն չափով առնչվում են աշխատությունում քննարկված հարցերին: Բացի այդ, խորհրդային շրջանի և մեր ժամանակի պարբերական մամուլում («Խորհրդային մանկավարժ», «Դպրոց», «Խորհրդային Ղարաբաղ», «Ազատ Արցախ», «Լուսարար» և այն) հրապարակված բազմաթիվ հոդվածներում (Ա.Աբրահամյանի, Յու.Ամիրջանյանի, Հ.Աբրահամյանի, Ս.Աբրահամյանի, Ս.Արամյանի, Ս.Ղուկասյանի, Ա.Խաչատրյանի, Կ.Դավթյանի, Իվ.Աթայանի, Ա.Պողոսյանի, Մ.Բալայանի և շատ ուրիշների) հետաքրքիր նյութեր են պարունակում ինքնավար մարզի կրթական համակարգի պատմությանն առնչվող տարբեր հարցերի վերաբերյալ:

Աշխատության մեջ քննարկված հարցերի վերաբերյալ հետաքրքիր և կարևոր փաստեր ենք քաղել ՀՀ Ազգային արխիվի, ՀՀ ԿԳ նախարարության արխիվի ֆոնդերից: Մասնավորապես հարուստ նյութեր կան ԼՂՀ պետական և կրթության և գիտության նախարարության արխիվի ֆոնդերում, որտեղից ընտրել ենք ՀՀ գիտության և կրթության նախարարության կազմավորման ու գործունեության, դպրոցական գործի կազմակերպման և զարգացման, աշակերտության թվաքանակի, մանկավարժական կադրերի պատրաստման, նրանց նյութական դրության և հասարակական կյանքում խաղացած դերի, մշակութային լուսավորական կյանքի կազմակերպման, ուսուցչական համագումարների, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների և նրանց գործունեության, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր, որոնց մեծ մասն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ: Հատկապես արժեքավոր տվյալներ և տեղեկություններ կան ԼՂԻՄ առաջին լուսժողկոմ Արշավիր Քամալյանի կազմած զեկուցագրերում (Доклады с 1923-34гг., АССР Обл.ОНО АОНК, Степанакерт, 1934г.).

Հայ Առաքելական եկեղեցին ևս մշտապես ուշադրություն է հատկացրել ինքնավար մարզի կրթամշակութային հարցերին: Նկատի ունենք 1920-1930թթ. մինչև Արցախի թեմի գործունեության սահմանափակումը: Այդ առումով ուշագրավ է «Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան» գիրքը Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933թթ.) աշխատությունում հիշատակված հետաքրքիր փաստագրական տվյալները: Այս ժողովածուն հնարավորություն է տալիս պարզել հայ եկեղեցու վերաբերմունքը երկրամասի հայ կրթական քաղաքականության նկատմամբ, հայ հոգևոր մշակութային գործիչների ազգանվեր գործունեությունը կրթամշակութային զարթոնքում: Ինչպես նշեցինք, Արցախի թեմում հայ եկեղեցու գործունեությունը տևեց մինչև 1933 թվականը:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ինքնավար մարզի բնակչության սոցիալական կառուցվածքի փոփոխությունները, առանձին գյուղերի պատմությունը լուսաբանող ուսումնասիրությունները: Նկատի ունենք հատկապես Վ.Բալայանի «Գիշի, պատմական անցյալն ու ներկան» (Երևան, 1997թ.), Խ. Բարսեղյանի «Լեռնային Ղարաբաղ» (Բաքու, 1963թ.), Մ.Աղաջանյանի «Հաթերք» (Ստեփանակերտ, 2012թ.), Խ.Ղազարյանի «Տումի» (Երևան, 2003թ.), Ա.Գրիգորյանի «Հաղորտին գոյամարտի բովում» (Ստեփանակերտ, 2012թ.) և շատ ուրիշների աշխատությունները: Դրանք արժեքավոր տվյալներ ու տեսակետներ են պարու-

նակում գյուղի սոցիալ-ժողովրդագրական կառուցվածքի, դպրոցների պատմության վերաբերյալ:

Ըստ արժանվույն գնահատելով վերոնշյալ հեղինակների ուսումնասիրությունները, հարկ է նշել, որ դրանցում Լեռնային Ղարաբաղի կրթական համակարգի պատմության վերաբերյալ հարցերը պատմաքննական վերլուծության են ենթարկվել շատ համառոտակի և դրանց միջոցով հնարավոր չէ լիարժեք պատկերացում կազմել ԼՂ ինքնավար մարզի տվյալ ժամանակաշրջանի (1920-1988թթ.) հայ կրթական համակարգի ամբողջական պատմության մասին:

Բնականաբար, հեղինակներն օգտագործել են վերոնշյալ և այլ աշխատություններում, արխիվային հարուստ նյութերում, հուշագրություններում, անվանի մանկավարժների առանձին արխիվներում, ժամանակակից վաստակաշատ մանկավարժների նամակներում տեղ գտած որոշ փաստական ու թվային տվյալները, ինչը հնարավորություն է ընձեռել ստեղծել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի հայ կրթական համակարգի ամբողջական պատմությունը:

Անշուշտ, այս աշխատությունը նախորդի տրամաբանական շարունակությունն է, այն կարող է հարստացնել հայ դպրոցի և մանկավարժական մտքի ամբողջական պատմությունը, միաժամանակ հանդիսանալ գիտամանկավարժական բավարար բազա Արցախի կրթական համակարգի պատմությունը 1988 թվականից մինչև մեր օրերը ուսումնասիրելու և ընթերցող հասարակությանը ներկայացնելու ամբողջական աշխատություն:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող սույն աշխատության երկրորդ հատորը առաջին փորձն է տալու 1923-1988 թվականների ԼՂ ինքնավար մարզի հայ կրթական համակարգի ամբողջական պատմությունը: Անշուշտ, աշխատությունում կլինեն նաև թերություններ, երբեմն իրար հակասող փաստեր, քանզի փաստագրական շատ տվյալներ գրի են առվել դպրոցի, միջնակարգ մասնագիտական և երկամյա մանկավարժական ինստիտուտի շրջանավարտների հուշերից՝ արխիվային տվյալներ չլինելու պատճառով:

Հարգարժան ընթերցողը թող ների նման թերությունների համար: Աշխատության վերաբերյալ ցանկացած դիտողություն հեղինակների կողմից կընդունվի սիրով և շնորհակալությամբ:

Հեղինակները խորին շնորհակալություն են հայտնում բոլոր նրանց, ովքեր իրենց խորհուրդներով և մասնակցությամբ նպաստել են աշխատության ստեղծմանը:

Հեղինակներ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ (1920-1941թթ.)

1. Դպրոցական գործի վիճակը Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության հաստատման առաջին տարիներին (1920-1923թթ.)

Ժողովրդական կրթության գործը Լեռնային Ղարաբաղում խորհրդային կարգերի հաստատման նախօրյակին շատ խղճուկ պատկեր էր ներկայացնում: 20-րդ դարի սկզբին ցարական կառավարության ռեակցիոն, ազգային ճնշման քաղաքականությունը արգելակում էր ժողովրդական կրթության զարգացումը: Ցարիզմը ազգային դպրոցներում հաճախակի արգելում էր մայրենի լեզվով դասավանդումը՝ վարելով ռուսականացման քաղաքականություն[1]:

Լեռնային Ղարաբաղում ժողովրդական կրթության վիճակն էլ ավելի վատացավ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, հատկապես՝ հետպատերազմյան շրջանում՝ 1918-1920թթ.: Այդ տարիներին Ղարաբաղում ծանր վտանգներով լի կացություն է ստեղծվել հայ հասարակության համար: Ազգամիջյան կռիվներն ու բախումները, քաղաքական ծանր իրավիճակը երկրամասում ստեղծել էին ծանր տնտեսական կացություն. դրությունն ավելի քան օրհասական էր:

Շուշիի թեմական դպրոցի շրջանավարտ Աբրահամ Կիսիբեկյանը (1892-1973թթ.) իր հուշերում գրում է.«1918-1920 թվականները Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի դառնությունների տարիներին ինչե՞ր չանցան նրա գլխով և ինչպիսի հարվածներ նա չստացավ: Սակայն այս բոլոր զրկանքներից ամենասոսկալին սովն էր: Ով չի տեսել նրա դաժան դեմքը, նա չի կարող ամենայն մանրամասնությամբ պատկերացնել նրա զարհուրելի ավերիչ ու սոսկալի էությունը: Լեռնային Ղարաբաղի օղակումն ու նրա աշխատավորության մեկուսացումը, Ադրբեջանի կառավարության կողմից կազմակերպված ավազակություններն ու կողոպուտները, անարխիան ու սպեկուլյացիան, ամենօրյա անընդհատ ներս հոսող գաղթականությունը, սովորական նորմալ աշխատանքից զրկվելը լիակատար դարձրին նրա տնտեսության բացարձակ քայքայումը, որին հաջորդեցին վարակիչ հիվանդություններն ու սովը, որը սկսեց անխնա մահ սփռել ամենուրեք: Միակ միջոցը, որ կարող էր փոքրիշատե քաղցի ու կարիքի ճիրաններում թպրտացող հայ ժողովրդին փրկել, ամոքել նրա վիճակը, դա ներքին միջոցների կազմակերպումն էր, որը ձեռնարկեց Շուշիում գործող Հայոց բարեգործական ընկերությունը: Վերջինս Լեռնային Ղարաբաղի շրջաններն ուղարկեց մարդկանց, որոնցից մեկն էի ես, օգնելու տառապյալ ժողովրդին: Թե ինչպիսի սոսկալի տեսարանների ես ականատես եղա (ազգամիջյան կռիվներ, բախումներ, թուրքերի գիշերային հարձակումներ, կողոպուտ և այլն), այդ ամենը մանրամասն նկարագրում եմ իմ հուշերում»[2]: «Դրությունը քանի գնաց ծանրացավ. որքան տառապեց, որքան զոհեր տվեց, որքան արցունք թափեց իմ հարազատ ու անզուգական Ղարաբաղը (1918-1920թթ.): Սակայն նրան ոչ ոք չլսեց ու չկարեկցեց: Ընդհակառակը, ոխակալ, խարդախ ու դաժան թշնամին՝ Ադրբեջանի կառավարությունը և նրա լակեյները, միջոցներ էին գործադրում այդ դրությունից օգտվելու, իրենց կեղտոտ նպատակներն իրականացնելու…»[3]:

Չնայած իրար հաջորդող ծանր քաղաքական, տնտեսական պայմաններին,

ազերի նվճողների վայրագ բռնություններին, արցախահայությունը իր գոյության ամենաօրհասական պահերին անգամ(ինչպես դարեր շարունակ) երբեք չի կորցրել հոգու արիությունը և մտքի սլացքը, միշտ միջոցներ ու հնարներ է գտել պայքարելու իր անկախության, մշակույթի և այդ մշակույթը ժողովրդի մեջ վառ պահող ազգային դպրոցի համար՝ այն դիտելով որպես ազգային ինքնուրույնության դրսևորման և գոյատևման կարևորագույն գործոն:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Լեռնային Ղարաբաղի տնտեսության լիակատար քայքայման և ազգամիջյան կռիվների ու քաղաքական իրադարձությունների հետևանքով 1918-1920թթ. գրեթե դադարել էր գործելուց առանց այդ էլ խղճուկ դպրոցական ցանցը: Օրինակ՝ Ռուսական կայսրության սահմաններում եղած հայկական վեց թեմերում, մոտավոր հաշվառումներով, գոյություն են ունեցել 480[4] հայկական-ծխական տարրական դպրոցներ (Երևանում, Վրաստանում, Նոր Նախիջևանում, Աստրախանում, Շամախիում և Արցախ-Ղարաբաղում): 1918-1920 թվականներին՝ ազգամիջյան կռիվների մռայլ տարներին, Ղարաբաղում գործել են 22 հայկական դպրոցներ, իսկ Նուխի քաղաքում՝ 8, յուրաքանչյուր դպրոցում սովորում էր 18-20 աշակերտ, դասավանդում մեկ ուսուցիչ[5]:

1918-1920 թվականներին Լեռնային Ղարաբաղ-Արցախը կառավարվել է Հայոց Ազգային խորհրդի կողմից, որը հնարավորին չափով ապահովել է կրթօջախների համար հնարավոր տանելի պայմանները, իսկ 1920թ. ապրիլ-մայիս ամիսներին միավորվել է Հայաստանի Առաջին հանրապետությունը: 1920թ. մայիսին խորհրդային 11-րդ կարմիր բանակի զորամասերը գրավեցին Լեռնային Ղարաբաղը և այն խորհրդայնացվեց: Կավբյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի կամայական որոշմամբ Լեռնային Ղարաբաղը բռնակցվեց Խորհրդային Ադրբեջանին, իսկ 1922 թվից դարձավ Խորհրդային Միության մի մասը[6]:

Այդ մռայլ տարիներին Ղարաբաղում գործող հայկական դպրոցների համեմատ քիչ թե շատ բարեկարգ վիճակում էր ռուսական տիպի ուսումնական հաստատությունը՝ Շուշիի ռեալական ուսումնարանը[7], որտեղ հայ աշակերտները համեմատաբար մեծ թիվ են կազմել: Ժամանակակիցներից մեկը՝ աշխարհագրագետ, պատմաբան, մանկավարժ Ռուբեն Տեր Գասպարյանը (1919-1920թթ.), որը դասավանդում էր ՇուՇիի թեմական դպրոցում, դասավանդում ռեալական ուսումնարանում և վարում գրադարանի վարիչի պաշտոնը, հայրենի Շուշի քաղաքի պատմությանը նվիրված գրքում մատնանշում է, որ 1918-1920 թվականներին ռեալական ուսումնարանում սովորում էր 444 աշակերտ, դասավանդում՝ 23 ուսուցիչներ[8]: Բազմավաստակ պատմաբան Լեոն Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցի պատմությանը նվիրած իր աշխատությունում նույնպես հիշատակում է այդ փաստը[9]:

Անշուշտ, Շուշիի ռեալական ուսումնարանը՝ իրապես լինելով համարյա քիչ թե շատ ժամանակակից բարեկարգ դպրոցը արցախահայ իրականության մեջ, երբեք չի փակվել և իր գործունեության ընթացքում (1881-1920թթ.) պակաս դեր չի խաղացել արցխահայության հասարակական, քաղաքական ու մշակութային կյանքի զարգացման, մատաղ սերնդի դաստիարակության, կրթության գործում, քան Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցը, թեև նրա նման երկարամյա կյանք չի ունեցել, քանի որ թեմականը մի քանի անգամ փակվել, վերաբացվել է:

1920թ. Շուշիի ռեալական ուսումնարանի փակումից հետո ռեալականի շենքում գործող երկրորդ աստիճանի հանրակրթական դպրոցը 1921-1922 ուումնական տարում վերափոխվում է ուսուցչական սեմինարիայի, իսկ 1922-1923 ուում-

նական տարում՝ մանկավարժական ուսումնարանի՝ դառնալով ռեալական ուսումնարանի իրավահաջորդը[10]:

Մեր ձեռքի տակ եղած հավաստի փաստագրական տվյալների հիման վրա այժմ համառոտակի ներկայացնենք Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցների 1920-1923 թվականների ընդհանուր բնութագիրը:

Լեռնային Ղարաբաղի առաջին լուսժողկոմ Արշավիր Քամալյանի զեկուցագրերից[11] տեղեկանում ենք, որ 1920-1921 ուստարում ինչպես Հայաստանում, այնպես էլ Ղարաբաղում, վերանում են տարրական և միջնակարգ դպրոցների (երկաստիճան դպրոցները՝ առաջին աստիճան՝ 1-5 դասարան, երկրորդ աստրճան՝ 5-9 դասարան, համարվում էին միջնակարգ) վերատեսուչների, տեսուչների, վերակացուների, ավագ ուսուցիչների, դասարանկան դաստիարակների պաշտոնները, կրթական հոգեբարձուները, ծնողական խորհուրդները: Մինչև հատուկ կանոնադրության մշակումը դպրոցների անմիջական կառավարման համար ստեղծվում են դպրոցական ժամանակավոր խորհուրդներ: Դրանց կազմի մեջ էին՝

ա) դպրոցական բոլոր աշխատողները,

բ) սովորողների ներկայացուցիչները՝ (ծնողները), դպրոցական աշխատողների մեկ քառորդի հարաբերությամբ,

գ) ժողովրդական լուսավորության բաժնի ներկայացուցիչները:

Դպրոցական ժամանակավոր խորհրդի կազմում աշակերտական ներկայացուցիչների ընտրությանը կարող էին մասնակցել առաջին աստիճանի դպրոցների վերջին երկու խմբի աշակերտ- աշակերտուհիները, իսկ երկրորդ աստրճանի դպրոցներում՝ բոլոր սովորողները:

Դպրոցական խորհուրդներն ունեցել են իրենց գործադիր մարմինը՝ նախագահությունը, որի կազմի մեջ չէին կարող մտնել 1920-1921 ուստարվա առաջին ամիսներին, այսինքն՝ մինչև Հայաստանում, Ղարաբաղում խորհրդային կարգերի հաստատումը՝ վերատեսչի, տեսչի և ավագ ուսուցչի պաշտոնում աշխատած անձինք[12]:

Հենց այդ խնդիրների իրականացմանն են ուղղված եղել թե Հայաստանի և թե Լեռնային Ղարաբաղի հեղկոմի, լուսժողկոմատի և նրանց տեղական մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումները:

Այդ ուսումնական տարում, կյանքի պահանջներին համընթաց, Ղարաբաղի հայկական գյուղերում ակտիվանում է ժողովրդի հասարակական նախաձեռնությունը նոր դպրոցների ստեղծման գործում: Համեմատաբար մեծանում է տեղական հայ բնակչության հետաքրքրությունը լուսավորչական գործի նկատմամբ: Հասարակությունը ցանկություն է հայտնում դպրոցի պահպանման համար նյութական միջոցներ հանգանակել և կառուցել դպրոցի շենքը: Օրինակ՝ Աբրամ Կիսիբեկյանը, որ երկար տարիներ աշխատել է Գյունե Ճարտարի դպրոցում (1913-1917թթ.), իր հուշերում գրում է, որ Վարանդա գավառում համեմատաբար բարեկարգ վիճակում են եղել Գյունե, Ղուզե Ճարտարի, Գիշու և Խնուշինակի դպրոցները: Եթե 1916-1917 ուստարում Գյունե Ճարտարի երկդասյա երկսեռ դպրոցում սովորում էին 84 աշակերտ, դասավանդում 5 ուսուցիչ, Ղուզե Ճարտարում՝ 23 աշակերտ, 2 ուսուցիչ, Գիշու դպրոցում՝ 70 աշակերտ, 4 ուսուցիչ, Խնուշինակի դպրոցում՝ 67 աշակերտ, 3 ուսուցիչ, ապա 1920-1921 ուստարում նշված գյուղերի նոր տիպի առաջին աստիճանի դպրոցներում սովորում էին 35-40 աշակերտ[13]: Միայն բարեկարգ վիճակում էր Գյունե Ճարտարի դպրոցական շենքը, որը կառուցվել է Ճարտարի հասարակության հանգանակած նյութական միջոց-

ներով: Իսկ Արշավիր Քամալյանի զեկուցագրում նշվում է, որ Ղուզե Ճարտար, Գիշի և Խնուշինակ գյուղերում դպրոցական փոքրիկ շենքը կառուցվել է 1922-1923 ուսումնական տարում[14]:

Վաստակաշատ մանկավարժ Միքայել Աղաջանյանը «Հաթերք» ծավալուն աշխատությունում հիշատակում է, որ խորհրդային շրջանի առաջին դպրոցը Հաթերքում բացվեց 1921-1922 ուսումնական տարում՝ 1-4 դասարաններով[15]: 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Խորեն Ղազարյանը «Տումի» գրքում փաստում է, որ խորհրդային կարգերի հաստատումից հետո, 1920-1921 ուսումնական տարում Տումի գյուղում բացվեց տարրական՝ առաջին աստիճանի դպրոց, որտեղ սովորում էր 26 աշակերտ, դասավանդում էր Բաքվից եկած Ռուբեն անունով վարժապետը, որը միաժամանակ հեղափոխական աշխատանք էր տանում գյուղում: Ուսումնական պարապմունքները կազմակերպում էին համագյուղացի հայրենասեր Նիկոլայ Մելքումյանի սեփական տան երկրորդ հարկում, անվճար[16]:

1920-1923 թվականներին Լեռնային Ղարաբաղում բացված առանձին դպրոցների պատմության մասին համառոտ տեղեկություններ են տրվում նաև պրոֆեսոր Սերգեյ Մելքումյանի[17], 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Միքայել Բեգլարյանի[18], Արցախյան շարժման ակտիվ մասնակից Աբրիկ Գրիգորյանի[19] և շատ ուրիշների աշխատություններում, հուշագրություններում:

Այժմ տեսնենք, թե ինչպիսի պատկեր էին ներկայացնում Լեռնային Ղարաբաղի դպրոցները 1920-1921 և 1922-1923 ուսումնական տարիներին[20]:

1920-1921 ուսումնական տարում Լեռնային Ղարաբաղում գործող դպրոցների տիպերը, դասավանդող ուսուցիչների և աշակերտների թիվը՝ ըստ գավառների:

Աղյուսակ 1

Բնակավայրի անվանումը	Դպրոցների ընդհանուր քանակը	Առաջին աստիճանի դպրոց			Երկրորդ աստիճանի դպրոց		
		քանակը	Աշակերտ - ների քանակը	Ուսուցիչ - ների քանակը	քանակը	Աշակերտ - ների քանակը	Ուսուցիչ - ների քանակը
քաղաք Շուշի	3	2	64	2	1	262	18
գ. Ղարաղշլաղ	1	1	26	1	-	-	-
գ.Շոշ	1	1	38	2	-	-	-
գ.Սզնեք	1	1	26	1	-	-	-
գ.Քռասնի	1	1	24	1	-	-	-
գ.Հարավ	1	1	22	1	-	-	-
Վարանդա գավառ	21	21	1560	36	-	-	-
Դիզակի գավառ	28	28	1967	45	1	168	14
Խաչենի գավառ	18	18	846	23	-	-	-
Զրաբերդի գավառ	21	21	1219	37	-	-	-

Շուշի քաղաքում և Դիզակի գավառում գործում էին մեկական մանկատներ, համապատասխանաբար՝ 125 երեխա, 5 դաստիարակ և 60 երեխա, 3 դաստիարակ[21]:

1922-1923 ուսունական տարում Լեռնային Ղարաբաղում գործող դպրոցների տիպերը, դասավանդող ուսուցիչների և աշակերտների թիվը՝ ըստ գավառների[22]:

Աղյուսակ 2

Բնակավայրի անվանումը	Դպրոցների ընդհանուր քանակը	Առաջին աստիճանի դպրոց			Երկրորդ աստիճանի դպրոց		
		քանակը	Աշակերտ - ների քանակը	Ուսուցիչ - ների քանակը	քանակը	Աշակերտ - ների քանակը	Ուսուցիչ - ների քանակը
քաղաք Շուշի	10	9	711	19	1	222	16
գ. Ղարաղշլաղ	2	2	52	2	-	-	-
գ.Շոշ	1	1	48	2	-	-	-
գ.Սզնեք	1	1	32	1	-	-	-
գ.Քռասնի	1	1	30	1	-	-	-
գ.Հարավ	1	1	32	1	-	-	-
Վարանդա գավառ	28	28	1824	24	-	-	-
Դիզակի գավառ	28	27	1862	42	1	172	16
Խաչենի գավառ	22	22	924	26	-	-	-
Ջրաբերդի գավառ	26	26	1262	42	-	-	-

Վերոհիշյալ փաստագրական տվյալները վկայում են այն փաստը, որ նախորդ շրջանի (1918-1920թթ.) համեմատությամբ, 1921 թվականից սկսած, Լեռնային Ղարաբաղում առաջին աստիճանի դպրոցների և աշակերտների թիվը կրկնապատկվել էր և Ղարաբաղի հեղկոմին կից գործող ժամանակավոր դպրոցների կառավարման հանձնաժողովը (Ար. Քամալյան, Լևոն Վարդունի, Հայրապետ Մուսայելյան, Գրիգոր Տեր Պողոսյան, բժիշկ Նիկոլայ Յարամիշյան, Միքայել Շահգելդյան և ուրիշներ) իր իրավասության տակ է կենտրոնացրել հայկական բոլոր դպրոցները: Լուսավորության աշխատողներին անգնահատելի օգնություն է ցույց տվել Ղարաբաղի հայ հասարակությունը: Ամենուրեք գյուղերում և քաղաքներում հասարակական վճիռներ էին կայացվում՝ բացելու առաջին և երկրորդ աստիճանի դպրոցներ: Եթե նախկինում հայ կրթական գործիչներից շատերը անձնական նախաձեռնությամբ բացում էին մասնավոր դպրոցներ, ապա այժմ նրանք ևս նախընտրում են աշխատել նոր տիպի ազգային դպրոցներում, որտեղ ստեղծվել էին համեմատաբար տանելի պայմաններ: Այդ ժամանակաշրջանում նոր տիպի դպրոցներում դասավանդում էին Շուշիի թեմական դպրոցի, ռելական ուսումնարանի ուսուցիչները և նրանց սաները: Նկատի ունենք՝ Ար. Քամալյանին, Լ. Վարդունուն, Առ.Առաքելյանին, Գր.Ներսիսյանին, Խ.Սարգսյանին, Հ.Խաչատրյանին, Լ.Թախտաճեանին, Գր.Ղարագյոզյանին և շատ ուրիշների (նրանց մանկավարժական բեղուն գործունեության մասին մանրամասն կնշվի հաջորդ բաժնում):

Հարկ է նշել, որ նորաստեղծ Հայաստանի Խորհրդային Հանրապետության կուսակցական, պետական մարմինները, լուսավորության աշխատողները անգնահատելի օգնություն են ցույց տվել Լեռնային Ղարաբաղում եղած դժվարությունները համեմատաբար կարճ ժամանակամիջոցում հաղթահարելու և նոր տիպի դպրոց ստեղծելու գործում:

Հայտնի է, որ ազգամիջյան ընդհարումների մռայլ տարիներին քայքայվել է տնտեսությունը, ավերվել դպրոցական շենքերը, բնակչության մի մասը արտագաղթվել է հարազատ բնակավայրերից. վիճակը անմխիթար էր հատկապես ժողովրդական կրթության ասպարեզում: Չկային մասնագետներ, ուսուցչական կադրեր, ավելորդ է խոսել ուսումնադաստիարակչական աշխատանքների նվազագույն պայմանների՝ ուսումնական շենքերի, դասագրքերի, ձեռնարկների և օժանդակ այլ հարմարությունների մասին:

Վերոհիշյալ տարիներին լեռնային Ղարաբաղում նորաբաց առաջին աստիճանի դպրոցները զուրկ էին ուսումնական ամենաանհրաժեշտ գրենական պիտույքներից, դիդակտիկ նյութերից: Դպրոցները չունեին կաբինետներ և լաբորատորիաներ: Դպրոցական շենքերի բացակայության պատճառով դասերը տեղի էին ունենում մասնավոր տներում, նույնիսկ խրճիթներում[23]: Գոյություն չունեին նաև դպրոցական միասնական ծրագրեր ու դասագրքեր: Ծանր էր նաև ժողովրդական ուսուցիչների նյութական վիճակը: Եվ չնայած ուսուցիչները ազնիվ ու ծանր աշխատանքի համար չնչին վարձատրություն էին ստանում, հաճախ էլ ձրի, այնուամենայնիվ,պարապում էին դպրոցում: Ժողովուրդը հոգատար վերաբերմունք էր ցուցաբերում ազնիվ ու հայրենասեր ուսուցիչների նկատմամբ:

Այսպիսով, վերլուծելով փաստագրական տվյալները, տեսնում ենք, թե ինչպիսի վիճակում էր գտնվում ժողովրդական կրթության գործը Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության հաստատման նախօրյակին: Իսկ Ղարաբաղում 1920-1923 թվականներին ժողովրդական կրթության կազմակերպմանը նպաստող նախապայմաններից մեկը եղել է նորաստեղծ Հայաստանի Հանրապետության լուսավորության աշխատողների անգնահատելի օգնությունը՝ ուսումնական ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների, պլանների ու մանկավարժական կադրերի ապահովման հարցում:

Լեռնային Ղարաբաղի հայ կրթական համակարգում արմատական փոփոխություններ են կատարվում հատկապես խորհրդային շրջանում, որն անժխտելի փաստ է:

2. Նոր դպրոցի և կրթության համակարգի ստեղծման առաջին քայլերը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում (1923-1930թթ.)

1920թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր: Այդ ժամանակ հանրապետության բնակչության թիվը ընդամենը 720 հազար էր, որ կազմում էր 1913թ. ազգաբնակչության երկու երրորդը: Եվ դա այն դեպքում, երբ տեղաբնակներին գումարվել և հայրենիքում ապաստանվել էին թուրքական սպանդից մազապուրծ եղած ավելի քան երկու հարյուր հազար բռնագաղթվածներ: Միայն 1918-1920թթ. սովից ու հիվանդություններից մահացել էր ավելի քան 300 հազար մարդ, որբերի թիվն անցել էր 50 հազարից[24]: Ծանր ու դժվարին ժամանակներ էին նաև Լեռնային Ղարաբաղում: Ինչպես Հայաստանում, այնպես էլ Ղարաբաղում ծայրաստիճան քայքայվել էր ժողովրդական տնտեսությունը, անմխիթար վիճակում էր նաև ժողկրթության համակարգը[25]: Պաշտոնական տվյալների համաձայն,1918-1920թթ. Հայաստանում մնացել էր ընդամենը 166 դպրոց՝ 18600 աշակերտով, 1914-1915 թվականների 459 դպրոցի և 34739 աշակերտների դիմաց[26], իսկ Լեռնային Ղարաբաղում՝ 1918-1920 թվականներին մնացել էր ընդամենը 22 դպրոց՝ 820 աշակերտով, 1914-1916 թվականների 128 դպրոցի և 12546 աշակերտների դիմաց[27]:

Անհրաժեշտ էր անմիջապես ձեռնամուխ լինել երկրի տնտեսության, մշակույթի, ժողկրթության զարգացմանը:

Իշխանության եկած Հայհեղկոմի առաջին միջոցառումներից մեկն էլ եղավ 1920 թվականի դեկտեմբերի 12-ի հրամանով լուսավորության ժողովրդական կոմիսարիատի (Լուսժողկոմատ) ստեղծումը: Նորաստեղծ լուսժողկոմ է նշանակվում Շուշիում ծնված հայտնի քաղաքական գործիչ, պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը (1887-1972): Խորհրդային իշխանության եռամյա օրենսդրական նվաճումները մի ակտով տարածվում են Հայաստանի վրա:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ Խորհրդային Հայաստանում օրենսդրական ուժ են ստանում նաև ժողովրդական կրթության վերաբերյալ Խորհրդային Ռուսաստանի ժողկոմխորհի ու լուսժողկոմատի ընդունած օրենքներն ու որոշումները:

Դա հավասարապես վերաբերում էր նաև Լեռնային Ղարաբաղին: Խորհրդային իշխանության հաստատման առաջին օրերից Ղարաբաղում սկսվեց ժողովրդական կրթության ամբողջ համակարգի վերակառուցումը:

1923թ. օգոստոսի 1-ին Լեռնային Ղարաբաղում ստեղծվում է ժողովրդական լուսավորության կոմիսարիատ, որը ղեկավարում է Շուշիի ռեալական ուսումնարանի շրջանավարտ Արշավիր Քամալյանը (1889-1969)[28]: Հետագայում ԼՂ լուսժողկոմը 1929թ. վերանվանվեց մարզային խորհրդի ժողկրթության բաժնի (մարզլուսբաժին): Անցնելով իր պարտականությունների կատարմանը, նորաստեղծ մարմինն ընդունեց մի շարք որոշումներ, արձակեց հրամաններ: Առաջին կարևոր փաստաթուղթը, որ ընդունեց մարզլուսբաժինը, այն էր, որ ժողովրդական կրթության ընդհանուր ղեկավարությունը դրվում էր լուսավորության մարզային հանձնաժողովի վրա, իսկ տեղերում՝ բանվորների և գյուղացիների պատգամավորների գավառային և շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեների, ժողովրդական կրթության բաժինների վրա: Այդ որոշման համաձայն (1923թ. սեպտեմբեր)՝ Լեռնային Ղարաբաղում ժողովրդական կրթության բաժիններ են ստեղծվում Վարանդայի (Մարտունու), Դիզակի (Հադրութի), Շուշիի, Խաչենի (Ասկերանի), Ջրաբերդի (Մարտակերտի) շրջաններում:

Հենվելով ժողովրդական կրթության բնագավառում Հայաստանի ձեռք բերած եռամյա փորձի վրա, լուսժողկոմատն առաջին իսկ օրերին հրապարակում է որոշումներ, որտեղ շարադրված էին ժողովրդական կրթության բնագավառում ինքնավար մարզի հեղկոմի հիմնական սկզբունքներն ու խնդիրները: Այդ մասին ԼՂ հեղկոմի նախագահ Արմենակ Ղարագյոզյանը գրել է. «Առաջին տարին կազմակերպչական շրջանն էր. պետք էր վերաշինել քանդված Ստեփանակերտը, ստեղծել բնակարանային կուլտուրական պայմաններ, ընդլայնել դպրոցների ցանցը, վերացնել անգրագիտությունը, դրսից ուժեր հրավիրել, փոստ, հեռագրական և հեռախոսային կապ ստեղծել թե գավառների և թե դրսի հետ, կազմակերպել կառավարական բոլոր մարմինները…»[29]:

Լեռնային Ղարաբաղի հեղկոմի որոշմամբ, գոյություն ունեցող բոլոր դպրոցները, հոգևոր հաստատություններին պատկանող կուլտուր-լուսավորական հիմնարկները և թանգարանները հայտարարվեցին համաժողովրդական: Եկեղեցու իրավասության տակ գտնվող բոլոր ուսումնական հաստատությունները տրվեցին ժողկոմատի իրավասությանը և վերափոխվեցին աշխարհիկ ուսումնական հաստատությունների: Այսպիսով՝ վերացվեց դպրոցների բազմատիպությունը, ստեղծվեց դպրոցական միասնական նոր համակարգ: Արգելվում էին նաև դպրոցներում կրոնի դասավանդումը և դպրոցական շենքերում կրոնական ծիսակատա-

ությունների կատարումը: Դպրոցներում ուսումը սահմանվեց մայրենի լեզվով, իբր բխում է «լենինյան ազգային քաղաքականությունից, բոլոր ազգերի և ժողովուրդների իրավահավասարության սկզբունքից»: Փաստորեն դա հակասում էր իրականությանը, այնինչ հայկական դպրոցների ուսումնական պլաններում ավելի շատ մտցվում էին ադրբեջաներեն լեզու, ադրբեջանի պատմություն և ռուսաց լեզու առարկաները:

Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության ստեղծման առաջին տարիներին ժողովրդական կրթության գործը վերականգնելու և վերակառուցելու աշխատանքը տեղի էր ունենում չափազանց ծանր պայմաններում: Եղած հատուկենտ դպրոցական շենքերից շատերը քայքայվել էին, դպրոցներից շատերը տեղավորված էին մասնավոր տներում և ապահովված չէին նյութական միջոցներով, չկային ուսուցչական համապատասխան կադրեր և այլն: Չնայած այդ ամենին՝ Արցախի հասարակությունը, նրա առաջադեմ մտավորականությունը մեծ օգնություն էին ցույց տալիս երկրամասի ժողովրդական մասսաների լուսավորական և երեխաների ուսումնական աշխատանքի անխափան կազմակերպման գործին:

Այդ ուղղությամբ ակտիվ աշխատանք էին ծավալում Լեռնային Ղարաբաղի հեղկոմի և լուսժողկոմատի ղեկավարներ Արշավիր Քամալյանը, Առաքել Առաքելյանը, Անդրանիկ Ավագյանը, Լևոն և Շավարշ Վարդունիները և ուրիշներ: Այսպես, օրինակ, 1923թ. հոկտեմբերին ԼՂ հեղկոմը, 1923թ. դեկտեմբերի 17-ինկուսակցության ԼՂ մարզկոմը, որը ղեկավարում էր Հակոբ Կամարին, ընդունեցին համապատասխան որոշումներ, որտեղ նշվեց, որ պետք է համախմբել լուսավորության բոլոր հին աշխատողներին և ուղարկել ժողովրդական կրթության մարմինների տրամադրության տակ: Որոշման մեջ միաժամանակ նշված էր.

1. Վերաբացել անգործության մատնված հայկական դպրոցները:

2. Ընդլայնել առաջին և երկրորդ աստիճանի աշխատանքային միասնական դպրոցի ցանցը:

3. Մարզի բոլոր դպրոցներում վերսկսել կանոնավոր պարապմունքները:

4. Բացել գյուղատնտեսական տեխնիկումներ Ստեփանակերտում և Հադրութում:

5. Ընդլայնել մանկատների, մանկապարտեզների, դպրոցների ցանցը[30]:

6. Վերանորոգել դպրոցական հին շենքերը, կառուցել նորերը Ստեփանակերտում, Մարտունի շրջկենտրոնում, նաև՝ Կարաքենդում (Բերդաձոր), Գիշիում, Ճարտարում, Հադրութում, Բանազուր, Տումի, Տող, Մեծ Թաղլար գյուղերում, Մարտակերտում, Կուսապատ, Հաթերք, Առաջաձոր, Վանք և այլ գյուղերում[31]:

Շրջանային, քաղաքային ժողկրթբաժվարները և գյուղական կազմակերպությունները բացատրական լայն աշխատանք էին տանում բնակչության շրջանում՝ հորդորելով, կոչ անելով օգնելու դպրոցական շենքերի վերանորոգման, սեղան-նստարանների, գրատախտակների և անհրաժեշտ այլ գույքի պատրաստման աշխատանքներին, ինչպես նաև՝ միջոցներ տրամադրել ուսուցիչների նյութականն ապահովելու համար և այլն:

ԼՂ լուսժողկոմը մարզի շրջաններում կրթական գործի վերակառուցումն ապահովելու համար անհրաժեշտ է համարում շրջանային կրթության բաժիններին կից ստեղծել բաժիններ: Դրանք են՝

ա) Դպրոցական բաժին, որի մեջ ամփոփվեր դպրոցի ողջ ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը, ծրագրերի ստեղծումը, ուսումնական աշխատանքների ձևերի կազմակերպումը.

բ) Արտաուսումնական և արտադպրոցական դաստիարակչական աշխա-

տանքների բաժին, որտեղ առաջին պլան են մղվում ոչ միայն սովորողների ժամանակի ռացիոնալ կազմակերպման հարցերը, այլև դասերից ու դասաժամերից դուրս նրանց նախասիրությունների հաշվառման և հասարակության մեջ անձի ձևավորման հարցերը.

գ) Լուսժողկոմին կից ստեղծել դպրոցական ռեֆորմների բաժին, որը պետք է զբաղվեր անցյալի փորձի ուսումնասիրությամբ, ապագայի գործունեության պլանավորմամբ և դրանց հիման վրա դպրոցական ռեֆորմներ անցկացնելու հարցերով.

դ) Նախադպրոցական դաստիարակության բաժին, որը պետք է զբաղվեր ոչ միայն նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և դաստիարակության օրինաչափությունների հիմնավորման, այլև դրանք ստեղծելու և այն ղեկավարելու հարցերով.

ե) Արվեստի և արվեստագիտական կրթության բաժին, որը պետք է զբաղվեր արվեստների՝ որպես լուսավորության կարևոր բնագավառի, պրոպագանդման, սովորողների գեղագիտական դաստիարակության և այլ հարցերով:

ԼՂ լուսժողկոմի ձեռնարկումների և այս մարմինների միջոցով մարզում կարճ ժամանակամիջոցում վերամշակվեցին ուսումնական ծրագրերը, ստեղծվեցին նոր դպրոցներ, հիմք դրվեց արհեստագիտական մասնագիտական կրթությանը, որի կարիքը, հատկապես այդ շրջանում, շատ մեծ էր ժողովրդական տնտեսության մեջ(այդ մասին կնշվի աշխատության 2-րդ գլխում՝ գյուղտեխնիկումի գործունեությունը բնութագրելիս): Եթե դրան էլ գումարենք, որ անգրագիտության վերացման համար ստեղծվեցին քաղաքական, դաստիարակչական և ուսումնական լուսհիմնարկներ, այլ հաստատություններ, ապա պատկերը կամբողջանա:

Ժողովրդական կրթության և լուսավորության գործը կուսակցության ԼՂ մարզկոմը և լուսժողկոմը առաջ էին մղում նաև անհրաժեշտ ու խիստ կարևոր որոշումներով ու հրամաններով:

Այսպես, օրինակ, 1923թ. սեպտեմբերին ընդունած որոշման համաձայն վերացվում են դպրոցական տեսուչների, վերակացուների պաշտոնները: Ստեղծվում են հոգաբարձուների խորհուրդներ, որոնց մեջ բացի տնօրենից, ուսուցիչներից, ծնողներից մտնում էին նաև առաջին աստիճանի դպրոցի (1-5-րդ դասարաններ) վերջին երկու խմբերի և երկրորդ աստիճանի դպրոցի (6-9-րդ դասարաններ) բոլոր խմբերի աշակերտների ներկայացուցիչներ: Ինչպես տեսնում ենք, հիմք էր դրվում դպրոցական և աշակերտական ինքնավարությունների: Դրանք նպատակ էին հետապնդում դեմոկրատացնել դպրոցները՝ այն բխեցնելով ժողովրդական կրթության առջև դրված խնդիրներից: Այդ որոշմամբ նաև կատարվեց գաղափարախոսական կարևոր քայլ. դպրոցն անջատվեց եկեղեցուց, եկեղեցին՝ պետությունից: Դպրոցից հանվեցին բոլոր կրոնական առարկաները, արգելվեցին կրոնական այն ծիսկատարությունները, որոնք չէին առնչվում ազգային ավանդական սովորությունների հետ:

Այդպիսի որոշում էր ընդունել նաև Հայաստանի լուսժողկոմը 1920թ. դեկտեմբերի 4-ին[32]: Հարկ է նշել, որ մինչ այդ Հայաստանի հանրապետության պառլամենտը փոխնախագահ Լևոն Շանթի ստորագրությամբ օրենք է ընդունել Հայաստանում հայերենը պետական լեզու հռչակելու մասին[33]:

1923թ. հոկտեմբերի 10-ին ընդունած որոշման համաձայն, հատուկ ուշադրություն է կենտրոնացվում երեխաների, հատկապես՝ մանկատան երեխաների նկատմամբ հոգատարության ամրապնդման հարցերին.

ա) Ստեղծվում է մանկական սննդի հատուկ ֆոնդ, որին էլ հանձնվում է մթերա-

յին պահեստներում կուտակված ամբողջ մանկական սնունդը.

բ) «Փոքրահասակների աշխատանքի մասին» կետով արգելվում է մինչև 16 տարեկան երեխաներին աշխատանքի ընդունելը, իսկ մինչև 14 տարեկան դպրոցահասակ պատանիներին ու աղջիկներին՝ դպրոցից դուրս թողնելը: Նրանք պարտադիր կերպով պետք է ընդգրկվեին դպրոցներում: Դրվում են պարտուսի հիմքերը.

գ) Բոլոր ուսուցիչներն ազատվում են զինվորական ծառայությունից երեխաների կրթության, ուսման և դաստիարակության հարցերով զբաղվելու համար: Այդ քայլը նպաստելու էր դպրոցը տղամարդ մանկավարժներով ապահովելու, դաստիարակության դերը բարձրացնելու և ամրապնդելու գործին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում դպրոցաշինության առաջին տարիներին լուրջ վերամշակման ենթարկվեցին կրթական համակարգը և դպրոցական ցանցը: Ղարաբաղի հայ հասարակությունը մեծ ոգևորությամբ էր օգնում ժողկրթության տեղական մարմիններին: Մարզի լուսբաժվար Արշավիր Քամալյանի 1923թ. նոյեմբերի զեկուցագրում կարդում ենք.«Դպրոցների վերանորոգությունները անհնար կլիներ բաժնիս հատկացրած նյութական միջոցներով կատարել, եթե օգնության չգային մեզ իրենք՝ գյուղացիները, Ղարաբաղի սահմաններից դուրս գտնվող հայրենակից բարեկամները: Այսպես, օրինակ՝ այդ գործում մեզ շատ ու շատ նպաստել են Վարանդայի, Դիզակի, Խաչենի, Ջրաբերդի շրջանները, որտեղ համարյա թե գյուղացիների ջանքերով կանոնավորվեցին դպրոցական շենքերը, այդ վերանորոգումները արվում են գյուղացիների միջոցով. նաև միտինգների և ժողովների շնորհիվ դպրոցական գործը դարձել է ժողովրդական»[34]: Համապատասխան կազմակերպությունների և աշխատավորության ջանքերով հնարավոր է լինում ամռան ամիսներին վերականգնել 50-60 դպրոցական շենք: Այսպես, օրինակ՝ Ջրաբերդի շրջանի դպրոցների տեսուչ Լազր Մովսիսյանի՝ մարզլուսբաժվար Արշավիր Քամալյանին ներկայացրած զեկուցագրում նշվում է, որ 1923-24 ուստարում Ջրաբերդի շրջանն ունեցել է 27 առաջին աստիճանի դպրոցներ, որից 22-ը՝ հայկական, 1-ը՝ ռուսական, 1-ը՝ հունական և 3-ը՝ թուրքական: Դպրոցներից 7-ը (Վանքի, Առաջաձորի, Հաթերքի, Ջանյաթաղի, Կուսապատի, Մարտակերտի, Մարաղայի) ունեն սեփական շենքեր, իսկ մնացածները տեղավորված են մասնավոր տներում: Զեկուցագրում նաև նշվում է, որ սովորող 1684 աշակերտներից 1114-ը տղա է, 57-ը՝ աղջիկ, սրանցից հայեր՝1532-ը, ռուսներ՝ 56-ը, հույներ՝ 23-ը, թուրքեր՝ 73-ը: Դասավանդում էին 43 ուսուցիչներ[35]: Առաջիկա ուսումնական տարում շրջանում պիտի բացվեն առաջին աստիճանի դպրոցներ Վաղուհասում, Ծմակահողում, Սեյսուլանում, Մարաղայում, Մարգուշևանում, Հոռաթաղում, Հարգոմերում և երկրորդ աստիճանի դպրոց՝ Մարտակերտում: Լուսժողկոմին պարբերաբար նմանատիպ զեկուցագրեր են ներկայացրել նաև մյուս շրջանների լուսբաժինների վարիչները:

Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմատը 1923թ. հոկտեմբերին քննարկում է աշխատանքային միասնական դպրոցի կանոնադրությունը, որի մեջ ձևակերպված էին դպրոցի հիմնական նպատակներն ու խնդիրները, ուսումնադաստիարակչական աշխատանքի բովանդակությունն ու կազմակերպման ձևերը: Այդ կանոնադրության համաձայն նախկին միանձնյա տեսուչներին և եկեղեցական կրոնական խորհուրդներին փոխարինում է «դպրոցական խորհուրդ»-ը (մանկավարժական խորհուրդը)՝ նախագահի ղեկավարությամբ(տնօրենը), որն ընդունում և ազատում է ուսուցիչներին, սահմանում նրանց աշխատակարգը, ընդունում և հաստա-

տում է դպրոցական աշխատանքի տարբեր բնագավառներին վերաբերող հրահանգներ, որոշումներ և աշխատակարգը:

Այդ կանոնադրության համաձայն՝ Լեռնային Ղարաբաղում ստեղծվում է աշխատանքային միասնական դպրոցի երկու տիպ: Դրանք են՝ Ա աստիճանի աշխատանքային դպրոց՝ 5-ամյա դասընթացով, և Բ աստիճանի աշխատանքային դպրոց՝ 4-ամյա դասընթացով: Ա աստիճանի դպրոցներն ունեն նաև, այսպես կոչված, մանկապարտեզային կամ «գրագիտական» խմբեր, որոնք փաստորեն, նախապատրաստական դասարաններ էին: 1923 թվականից Ա աստիճանի դպրոցները դառնում են քառամյա, իսկ Բ աստիճանի դպրոցները՝ 5-ամյա՝ երկու աստիճանով. V-VII և VIII-IX դասարաններ[36]:

Առաջին աստիճանի դպրոցներում ընդգրկվում էին 8-12 տարեկան երեխաներ, իսկ երկրորդ աստիճանի դպրոցներում՝ 8-17 տարեկաններ: Այն ժամանակ երեխաները դպրոց էին ընդունվում 8 տարեկանից: Առաջին աստիճանի դպրոցն ավարտած աշակերտներն իրենց ուսումը կարող էին շարունակել երկրորդ աստիճանի դպրոցներում, իսկ երկրորդ աստիճանի դպրոցների շրջանավարտները՝ բարձրագույն դպրոցներում:

Այսպիսով՝ բնակչության տարբեր խավերի համար գոյություն ունեցող տարբեր տիպի դպրոցների փոխարեն ստեղծվում է միասնական աշխատանքային դպրոց: Միասնական դպրոցի սկզբունքը աշխատավոր ժողովրդի երեխաներին առաջին անգամ հնարավորություն տվեց սովորել դպրոցի բոլոր աստիճաններում՝ ստորին աստիճանից մինչև բարձրագույն ուսումնական հաստատություն:

1924 թվականից սկսած Լեռնային Ղարաբաղում հիմնվում են նաև գյուղական երիտասարդության դպրոցներ: Աշխատող երիտասարդությանը աշխատանքից չկտրելու և ուսումը շարունակելու նպատակով բացվեցին նաև երեկոյան և բաներիտ դպրոցներ: Հետագայում այդ դպրոցներն աստիճանաբար վերածվում են հանրակրթական մասսայական դպրոցների: Այդ տիպի դպրոցներում սովորում էին գյուղական աշխատավորության 13-18 տարեկան երեխաները: Գյուղերիտ դպրոցների նպատակն էր գյուղի համար մշակութային աշխատողներ պատրաստել:

1923-1924 ուսումնական տարում Լեռնային Ղարաբաղում գործում էին 102 առաջին և 4 երկրորդ աստիճանի աշխատանքային միասնական դպրոցներ[37]: Այդ դպրոցներում սովորում էր 4486 աշակերտ, դասավանդում էր 166 ուսուցիչ: Գործում էին նաև 10 առաջին աստիճանի և 1 երկրորդ աստիճանի այլազգի դպրոցներ Շուշիում, որոնց աշակերտների ընդհանուր թիվը հասնում էր 781-ի, իսկ ուսուցիչներինը՝ 30-ի[38]: Առաջին ասիճանի դպրոցներում դասավանդում էին հայոց լեզու, մաթեմատիկա, հայրենի բնություն, աշխարհագրություն, արվեստի պատմություն, նկարչություն, երգ, ձեռքի աշխատանք, ֆիզկուլտուրա, իսկ երկրորդ աստիճանի դպրոցներում՝ հայոց լեզու, ադրբեջանական լեզու (նաև հայկական դպրոցներում), մաթեմատիկա, ֆիզիկա, աշխարհագրություն, պատմություն, քիմիա, կենդանաբանություն, հասարակագիտություն, գեղագիտություն և այլ առարկաներ: 1922-23 ուումնական տարում Շուշիում բացվում է մանկավարժական ուսումնարան՝ երկու բաժիններով՝ հայկական և ադրբեջանական: Ուսումնարանը մեծ դեր խաղաց ուսուցչական կադրերի պատրաստման գործում: Հետագայում մանկավարժական տեխնիկում բացվեց Հադրութում (1923թ.), այսինքն՝ Շուշիից մանկավարժական ուսումնարանը տեղափոխեց Հադրուբ, նրա փոխարեն Շուշիիում բացվեց բանֆակ, իսկ Ստեփանակերտում՝ գյուղատնտեսական տեխնիկում[39]:

Խորհրդահայ անվանի մանկավարժ Աբ.Մովսիսյանը մատնանշում է, որ առաջին բանֆակը բացվել է Երևանում՝ 1923-1924 ուստարում, Աբովյանի անվան դպրոցի շենքում[40]: Բանֆակի նպատակն էր բանվոր երիտասարդությանը հնարավորություն տալ, առանց արտադրությունից կտրվելու, ձեռք բերել հանրակրթական միջնակարգ կրթություն: Բանֆակի դասընթացն ավարտելուց հետո շրջանավարտները կարող էին սովորել բարձրագույն ուսումնական հաստատություններում: Արշավիր Քամալյանի զեկուցագրում նշված տվյալների համաձայն՝ Շուշիում մանկավարժական բանֆակ բացվել է 1924-1925 ուս. տարում, որտեղ սովորում էին 64 ուսանող, դասավանդում 6 ուսուցիչ[41]:

ԼՂ լուսժողկոմատը զգալի աշխատանք տարավ նաև անապաստան երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքը կազմակերպելու ուղղությամբ: 1922-23թթ. մանկատներ բացվեցին Հադրութում, Ստեփանակերտում, Շուշիում և այլ տեղերում: 1923-24 ուստարում Լեռնային Ղարաբաղում զգալի չափով ընդլայնվում է դպրոցների ցանցը: Այսպես, օրինակ, մարզային լուսբաժնի վարիչի տեղակալ Առաքել Առաքելյանի՝ լուսժողկոմատին ներկայացրած զեկուցագրից տեղեկանում ենք, որ ամբողջ Ղարաբաղում գործում էին 102 առաջին աստիճանի աշխատանքային միասնական դպրոցներ (7940 աշակերտ և 212 ուսուցիչ), որից 16-ը՝ առաջին աստիճանի ադրբեջանական դպրոց, 3-ը՝ երկրորդ աստիճանի դպրոց, որից 1-ը՝ Շուշիում (38 աշակերտ, 8 ուսուցիչ): Այդ ուսումնական տարում Ստեփանակերտի Ալ. Ծատուրյանի անվան գյուղատնտեսական տեխնիկումում, սովորում էր 124 ուսանող, դասավանդում՝ 19 ուսուցիչ[42]: Հայկական դպրոցների թիվը, ըստ շրջանների, հետևյալ պատկերն էր ներկայացնում. Վարանդայում (Մարտունի)՝ 24 դպրոց, Դիզակում (Հադրութ)՝ 25, Խաչենում՝ 21, Ջրաբերդում՝ 22, Շուշիում՝ 10[43]:

Արշավիր Քամալյանի զեկուցագրում ներկայացվում են նաև անգրագիտության վերացման դպրոցները(լիկկայաններ), Վարանդայում՝ 14 դպրոց, 480 սովորողներ, Դիզակում՝ 12 դպրոց, 362 սովորողներ, Խաչենում՝ 10 դպրոց, 284 սովորողներ, Ջրաբերդում՝ 17 դպրոց, 516 սովորողներ[44]:

Պրոֆոսոր Սմբատ Ավագյանը «Էջեր Լեռնային Ղարաբաղի կուլտուր-կրթական կյանքի պատմությունից» աշխատության մեջ հիշատակում է այն փաստը, որ Լեռնային Ղարաբաղում անգրագիտության վերացման համար կարևոր նշանակություն ունեցավ 1919 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված «ՌՍՖՍՀ բնակչության անգրագիտությունը վերացնելու մասին» նշանավոր դեկրետը: Հետագայում նման որոշում ընդունեցին ՀԽՍՀ և Ադր.ԽՍՀ կառավարությունները: 1920թ. սեպտեմբերից Լեռնային Ղարաբաղում արդեն սկսել էին գործել ուսուցիչների պատրաստման դասընթացներ: Շուշիում բացվել էին անգրագիտության վերացման առաջին կետերը[45]: 1923 թվականի հոկտեմբերի 20-ին նորաստեղծ մարզկոմում ընդունվեց որոշում անգրագիտության վերացման մասին: Այն դարձել էր հրատապ խնդիր: 1924-1925թթ. մարզում կար 65 լիկկայան, որտեղ սովորում էր 1872 մարդ[46]:

Կազմակերպված էին գործում մարզի առանձին շրջաններում հենց նոր ստեղծված անգրագիտության վերացման կայանները, որոնց օգնում և ղեկավարում էր 1925թ. ԼՂԻՄ լուսժողկոմի որոշմամբ հիմնադրված կամավոր ընկերությունը:

Անգրագիտության վերացման հիմնական միջոցը մասսայական դպրոցների ստեղծումն էր, ժողովրդական կրթության գործի կառավարումը: Մեծ ակտիվություն էին ցուցաբերում ժամանակի անվանի մանկավարժներ Լևոն և Շավարշ

Վարդապետյանները, Գրիգոր Ներսիսյանը, Հովսեփ Հովսեփյանը, Հրանտ Ղահրամանյանը, Սուրեն Հախումյանը և ուրիշներ ու կոմունիստները:

Արխիվային փաստաթղթերը և այլ աղբյուրներ վկայում են, որ 1923-1924 ուսումնական տարում Ստեփանակերտում բացվել է նաև կուսակցական առաջին դպրոցը, որը հանրակրթական գիտելիքներին զուգընթաց, սովորողներին տալիս էր նաև քաղաքական գիտելիքներ: Այն ղեկավարվում էր կուսակցական մարմինների կողմից: Կուսակցական դպրոցի շրջանավարտների մի մասը ուսուցչական աշխատանք էր կատարում հանրակրթական դպրոցներում՝ դասավանդելով հատկապես պատմություն և հասարակագիտություն:

Պատմական կարճ ժամանակամիջոցում Լեռնային Ղարաբաղում ժողովրդական տնտեսության զարգացման հետ միասին արագ թափով ընդլայնվում է նաև հանրակրթական տարբեր աստիճանի դպրոցների ցանցը:

Այսպես, օրինակ՝ մարզի լուսավորության ժողովրդական կոմիսար Ա.Առաքելյանի զեկուցագրից տեղեկանում ենք, որ 1925 թվականի տվյալներով ամբողջ Ղարաբաղում գործում էր 134 առաջին աստիճանի դպրոց (14764 աշակերտ, 241 ուսուցիչ) և 5 երկրորդ աստիճանի դպրոց (464 աշակերտ): Գործում էր առաջին աստիճանի 18 այլազգի դպրոց (1260 աշակերտ, 32 ուսուցիչ), 1 երկրորդ աստիճանի դպրոց Շուշիում, ինչպես նաև 1 հունական դպրոց Մարտակերտում և ռուսական դպրոց Ստեփանակերտում[47]: Հայկական դպրոցների ցանցը Լեռնային Ղարաբաղում 1922-25 թթ. հետևյալ պատկերն էր ներկայացնում[48].

Աղյուսակ 3

Առաջին աստիճանի դպրոցներ

	1922թ.	*1923թ.*	*1924թ.*	*1925թ.*
Դպրոցներ	79	102	88	134
Դասարաններ	-	255	254	434
Աշակերտներ	4375	7627	8615	14764
Ուսուցիչներ	150	222	181	241

Երկրորդ աստիճանի դպրոցներ

	1922թ.	*1923թ.*	*1924թ.*	*1925թ.*
Դպրոցներ	2	3	5	5
Աշակերտներ	4	6	10	12
Ուսուցիչներ	80	126	110	315

Այլազգի դպրոցներ

Առաջին աստիճանի դպրոցներ

	1922-1923թթ.	*1923-1924թթ.*	*1924-1925թթ.*
Դպրոցներ	10	18	20
Աշակերտներ	781	1223	1260
Ուսուցիչներ	30	42	35

Երկրորդ աստիճանի դպրոցներ

	1	*2*	*3*
Դպրոցներ	-	1	1
Աշակերտներ	-	38	68
Ուսուցիչներ	-	4	4

Ըստ շրջանների՝ Վարանդայում՝ 21 դպրոց, 1560 աշակերտ, 30 ուսուցիչ, Դիզակում՝ 27 դպրոց, 1967 աշակերտ, 35 ուսուցիչ, Խաչենում՝ 18 դպրոց, 846 աշակերտ, 23 ուսուցիչ, Զրաբերդում՝ 21 դպրոց, 1219 աշակերտ, 14 ուսուցիչ:

Ինչպես տեսնում ենք, քննարկվող ժամանակաշրջանում արագ թափով ընդարձակվում էր հատկապես տարրական դպրոցների ցանցը՝ նպատակ ունենալով ավելի ու ավելի շատ երեխաներ ընդգրկել ուսման մեջ:

Ինչպես նշեցինք, 1924-1925 թվականներին Լեռնային Ղարաբաղի գյուղական վայրերում ստեղծվեցին նոր տիպի դպրոցներ: Նկատի ունենք գյուղական երիտասարդության դպրոցները (գյուղերիտ), որոնց ստեղծմանը ամենաակտիվ մասնակցություն ունեցավ կոմերիտմիությունը: Գյուղերիտ դպրոցները ստեղծվում էին տարրական դպրոցների բազայի վրա և ունեին ուսուցման եռամյա տևողություն: 1925 թվականից Լեռնային Ղարաբաղում արտադրական խոշոր ձեռնարկություններին կից ստեղվեցին ֆաբրիկագործարանային յոթնամյա դպրոցներ, որոնք մեծ ժողովրդականություն վայելեցին բանվորական շրջանում. դպրոցներ, որոնք սովորողներին տալիս էին ընդհանուր և պոլիտեխնիկական կրթություն: 1925 թվականի տվյալներով՝ Լեռնային Ղարաբաղում գործում էր 4 այդպիսի դպրոց: 1926 թվականի ապրիլի 23-ին Լեռնային Ղարաբաղում ուսուցիչների 3-րդ համագումարում կարդացած զեկուցման մեջ լուսժողկոմ Առաքել Առաքելյանը նշում է, որ շոշափելի են լուսավորության բնագավառի ձեռքբերումները: Արդեն մարզում գործում էին 113 առաջին աստիճանի, 6 երկրորդ աստիճանի դպրոցներ, 3 տեխնիկում, մեկ նկարչական ստուդիա: Համագումարում խնդիր դրվեց մարզում կուլտուրական հեղափոխություն իրականացնել՝ անհրաժեշտ գտնելով նախապատրաստվել անցնելու ընդհանուր տարրական պարտադիր կրթության: Առաջնահերթ խնդիր էր համարվում վերացնել մասսայական անգրագիտությունը[49]: Ուսուցիչների 3-րդ համագումարում նաև նշվում է, որ անհրաժեշտ է մարզի ամբողջ բնակչությանը (8-50 տարեկան) հնարավորություն տալ գրագիտություն սովորելու՝ մայրենի կամ ռուսերեն լեզվով (ըստ ցանկության): Այդ նկատառումով էլ համապատասխան մարմիններին պարտավորեցվում է բնակչու-

թյան անգրագիտության վերացումն անցկացնել ինչպես գոյություն ունեցող, այնպես էլ անգրագետ բնակչության համար նոր բացվող պետական դպրոցներում:

Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմ Առաքել Առաքելյանի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ եթե 1923-24 թվականներին Լեռնային Ղարաբաղում կար 116 լիկկայան՝ 3899 սովորողով (տղամարդիկ՝ 3420, կանայք՝ 479), ապա 1926-27 ուստարում գործում էր 300 լիկկայան՝ 4674 սովորողով[50]: Զեկուցագրում նաև նշվում է, որ 1924-25 թթ. ԼՂ լուսժողկոմին կից ստեղծվում է «Անգրագիտության վերացմանն օժանդակող ընկերություն», որի նախագահն էր ականավոր մանկավարժ-հոգեբան Գուրգեն Էդիլյանը (սոցդասվարչության նախագահ): Այնուհետև փոխվում է ընկերության կազմակերպական կառուցվածքը. խրճիթ-ընթերցարաններին, ակումբներին, ուսումնական հաստատություններին կից ստեղծվում են ընկերության տեղական բաժանմունքներ: Շրջաններում 10 բաժանմունքների առկայության դեպքում ստեղծվում են ընկերության շրջանային բյուրոներ, որոնք լայն աշխատանք էին տանում բնակչության շրջանում: 1923-1929 թթ. անգրագիտության և կիսագրագիտության վերացման դպրոցներում սովորել է 30000-ից ավելի մարդ, որից 7000-ը՝ գյուղական վայրերում: Այդ ժամանակաշրջանում անգրագիտության վերացման կայանների թիվը մարզում հասավ շուրջ 450-ի[51]:

Չնայած տեղական բաժանմունքերի զգալի աճին ու աշխատանքին՝ «Կորչի անգրագիտությունը» ընկերության աշխատանքներում դեռևս նկատվում էին թերություններ, որոնց վերացմանը նպաստեց 1924 թվականի մայիսի 17-ին «Անգրագիտությունը վերացնելու աշխատանքի մասին» լուսժողկոմատի ընդունած որոշումը: Այդ որոշման մեջ նշվում է, որ հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել զորակոչիկների, արդյունաբերական ձեռնարկությունների բանվորների, կանանց անգրագիտության վերացման վրա՝ ավարտելով այդ գործը 1-2 տարում: Անհրաժեշտ էր համարվում «Կորչի անգրագիտությունը» ընկերությունը դարձնել իսկական մասսայական կազմակերպություն, ծավալել անհատական և խմբային ուսուցում՝ ըստ բնակության վայրի:

Ժողովրդական լայն զանգվածներն անգրագիտության վերացման կազմակերպումը համարում էին իրենց հարազատ գործը և ամեն կերպ օժանդակում էին տեղական կազմակերպություններին: Ինքնավար մարզի թերթերի էջերում տպագրվել են աշխատավորների տասնյակ նամակներ այն մասին, թե ինչպես են իրենք միջոցներ հատկացնում անգրագիտության վերացման ֆոնդին և մրցության են հրավիրում ուրիշների: Այսպես, օրինակ, Ղարմետաքսկոմբինատի կոմերիտական կազմակերպությունը միաձայն որոշում է ընդունել աշխատել հանգստյան օրը և ստացած գումարը հանձնել անգրագիտության վերացման ֆոնդին:

Ընդհանուր կուլտարշավից ետ չէին մնում հատկապես մարզի ուսուցիչները: Օրինակ, Մարտակերտի շրջանի ուսուցիչները 1929 թ. նոյեմբերին կայացած իրենց ընդհանուր ժողովում որոշեցին, որ յուրաքանչյուր ուսուցիչ, որպես մինիմում, պետք է անվճար ղեկավարի անգրագիտության կամ կիսագրագիտության վերացման մեկ խմբակ: Նրանք մրցության հրավիրեցին Մարտունու շրջանի ուսուցիչներին:

Շատ ուսուցիչներ բնակչության անգրագիտությունը վերացնելու գործում իրենց հասանելիք աշխատավարձը նվիրում էին անգրագիտության վերացման ֆոնդին: Օրինակ, Վաղուհաս գյուղի դպրոցի ուսուցիչ Ս.Օհանյանն առանց վարձատրության 2 տարի շարունակ աշխատել է մի քանի լիկկայանում և գրագիտություն սովորեցրել ավելի քան 100 մարդու: Նման աշխատանքներ են կատարել ուսուցիչներ Մուշեղ Օհանյանը (գյուղ Կոճողոտ), Թամարա Օհանյանը (գյուղ

Սոս) և շատ ուրիշներ: «Խորհրդային Ղարաբաղ» թերթը 1929 թ. նոյեմբերի համարներից մեկում գրել է. «Ուսուցիչները հանդես են գալիս ոչ միայն որպես խմբակների դասատուներ, այլև անգրագիտության վերացման գործի կազմակերպիչներ»[52]: Կուլտարշավի շնորհիվ 1928 թ. վերջերից մինչև սկիզբը մարզի լիկկայաններում ընդգրկվեց 3000-ից ավելի մարդ: 1929-30 ուսումնական տարում միայն «Կորչի անգրագիտությունը» ընկերության գծով անգրագիտության վերացման դպրոցներում ընդգրկվեց 4000 մարդ, իսկ բոլոր կազմակերպությունների գծով՝ 5000 մարդ[53]:

Քննարկվող ժամանակաշրջանում մեծ ուշադրություն էր դարձվում կանանց անգրագիտության վերացմանը: Այդ մասին է վկայում այն փաստը, որ 1929-30 ուսումնական տարում Լեռնային Ղարաբաղում անգրագիտության վերացման խմբակներում ընդգրկվածների մեջ կանայք կազմում էին 86,9%-ը[54]: Այսպես, օրինակ՝ Շուշիի շրջանի Քարին տակ գյուղում 1929-30 ուսումնական տարում գրագիտություն էին սովորում 160 մարդ, որից 100-ը կանայք էին: Վաղուհաս գյուղում (Մարտակերտի շրջան) գրագիտություն սովորող 350 մարդուց 170-ը կանայք էին, Մարտակերտի շրջանի լիկկայաններում սովորող 1200 մարդուց 500-ը կանայք էին[55]: Կանանց մի մասի անգրագիտությունն էլ վերացվում էր տներում կազմակերպվող անհատական պարապմունքների միջոցով:

Մինչև 30-ական թվականները Լեռնային Ղարաբաղում ընդլայնվում է առաջին աստիճանի դպրոցների (տարրական) ցանցը ոչ միայն Ստեփանակերտում, Շուշիում, շրջկենտրոններում, այլև հատկապես գյուղերում: Բավական է նշել, որ 1928-29 ուստարում մարզում գործում էր 140 դպրոց՝ 15059 աշակերտներով[56]:

Մարզի մի շարք խոշոր գյուղերում բացվում են գյուղերիտ դպրոցներ, որտեղ հիմնականում սովորում էին չքավոր և միջակ գյուղացիների 13-18 տարեկան երեխաներ: Եթե հիմնադրման տարում՝ 1923-24 թթ. Լեռնային Ղարաբաղում գործում էր ընդամենը 25 գյուղերիտ դպրոց, ապա 1928-29 ուսումնական տարում դրանց թիվը հասավ 87-ի: Յուրաքանչյուր գյուղերիտ դպրոցում սովորում էին 10-15 երիտասարդ՝ տղա և աղջիկ: Այսպիսով՝ միայն առաջին հնգամյակի տարիներին մարզում գյուղերիտ դպրոցների թիվն աճեց ավելի քան 7 անգամ, իսկ սովորողներինը՝ 26 անգամ[57]:

Բացի հանրակրթական դպրոցներից, մարզում գործում էին նաև ուսումնարաններ ու տեխնիկումներ: Տեխնիկումները Լեռնային Ղարաբաղում սկսել են կազմակերպվել 1923 թվականից: Սկզբնական տարիներին հիմնվել են ինդուստրիալ, գյուղատնտեսական, մանկավարժական, կերպարվեստի տեխնիկումներ: 1926-27 ուսումնական տարում մարզում գործում էր 8 տեխնիկում՝ 959 աշակերտներով և 48 դասատուներով[58]:

Ընդհանուր գծերով այսպիսին է եղել ժողովրդական կրթության համակարգը Լեռնային Ղարաբաղում 1923-1930 թվականներին:

3. Ուսումնադաստիարակչական աշխատանքների համակարգը ԼՂԻՄ հանրակրթական դպրոցներում (1923-1930թթ.)

Մեր տրամադրության տակ եղած նյութերը հնարավորություն են ընձեռում ներկայացնել նաև այդ տասնամյակում Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցների ներքին կյանքը, ուսումնադաստիարակչական աշխատանքները, ուսումնական պլաններն ու ծրագրերը, դասագրքերը, ուսուցման սկզբունքներն ու մեթոդները, դաստիարակության հարցերը, արտադասարանական աշխատանք-

ների կազմակերպումը, դպրոցի ներքին կարգուկանոնը, ինչպես նաև՝ ներդպրոցական կառավարման հետ կապված այլ հարցեր:

Քննարկվող ժամանակաշրջանում հանրակրթական դպրոցի ուսուցման բովանդակությունը և եղանակները համեմատաբար փոխվել են նպատակների փոփոխությանը համընթաց: Կյանքի պահանջների հետ զուգընթաց փոխվել ու կատարելագործվել են առաջին և երկրորդ աստիճանի դպրոցների ուսումնական պլանները, ծրագրերը, դասագրքերը, ուսուցման ձևերն ու մեթոդները՝ պայմանավորված ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական քաղաքականության, մշակույթի նպատակների, գիտության զարգացման մակարդակով և այլ հանգամանքներով: Ուրեմն՝ նոր դպրոցի կրթության բովանդակությունը կախված էր կյանքի պահանջներից, անցյալի դպրոցի ավանույթներից, դպրոցի տիպից և աստիճանից, նպատակներից ու խնդիրներից և այլ հանգամանքներից: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նորաստեղծ լուսժողկոմի համապատասխան բաժիններում լայն աշխատանք էր տարվում մարզի հայկական դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման ուղղությամբ:

Հարկ է նշել, որ խորհրդային իշխանության հաստատման նախօրյակին Լեռնային Ղարաբաղի դպրոցներում գործածության մեջ էին դրվել Հայաստանի նորաստեղծ լուսժողկոմի կողմից մշակված նոր ուսումնական պլաններն ու ծրագրերը:

Այսպես, օրինակ, Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո նոր դպրոցի առջև դրված նպատակներն ու խնդիրները պահանջում էին հրաժարվել հին դպրոցի ուսումնական պլաններից, ծրագրերից ու դասագրքերից և կազմել նորերը՝ դպրոցում ավանդվող բոլոր առարկաների գծով: Հայաստանի լուսժողկոմատի սոցիալական դաստիարակչության վարչությունը 1921 թվականի աշնանը մշակում է առաջին աստիճանի դպրոցների ծրագրեր, որոնք գործածության մեջ են մտնում մինչև 1923 թվականը[59]: Այդ ուսումնական պլաններով ու ծրագրերով էին առաջնորդվում նաև Ղարաբաղի հայկական դպրոցները: Համեմատաբար, այդ ծրագրերը և պլանները ժամանակի առումով հանդիսանում էին «օրինակելի»: Ժողկրթության աշխատակիցներին և ուսուցիչներին հանձնարարվում էր փոփոխություններ կատարել: Ամեն մի առարկայի գծով լուսժողկոմատը ուսուցիչներին տալիս էր մասնակի ցուցումներ և սկզբունքներ, որոնցով պետք է ղեկավարվեին դասավանդման ժամանակ:

1923-1924 ուսումնական տարում Լեռնային Ղարաբաղի հայկական դպրոցների համար ուսումնական ծրագրեր կազմելու աշխատանքը ևս ղեկավարել է Հայաստանի լուսժողկոմատի սոցիալական դաստիարակության գլխավոր վարչության ակադեմիական սեկցիան (իսկ ուսումնական պլանները կազմում էր Ադրբեջանի լուսժողկոմատը), որն ստեղծվել է 1921 թ. աշնանը: Սեկցիան ծրագրեր մշակելու համար կազմել է հատուկ հանձնաժողովներ՝ ընդգրկելով տվյալ առարկայի լավագույն մասնագետներին: Այսպես, օրինակ, Ա աստիճանի դպրոցի հայոց լեզվի ծրագիր կազմող հանձնաժողովի անդամներ են եղել Տիգրան Ռաշմաճյանը, Մանուկ Աբեղյանը, Արսեն Տերտերյանը, Արշավիր Մեհրաբյանը և Մարգո Մխիթարյանը. երգի ծրագրերը մշակվել էր Մուշեղ Աղայանի ղեկավարությամբ[60] և այլն:

Ահա Լեռնային Ղարաբաղի դպրոցների 1923-1924 ուսումնական տարվա ուսումնական պլանը[61].

Աղյուսակ 4

Ա աստիճանի դպրոցի ուսումնական պլան

հհ	Առարկաներ	Դասարաններ				
		1	2	3	4	5
1	Հայոց լեզու	8	8	8	6	6
2	Մաթեմատիկա	6	6	6	5	5
3	Բնագիտություն (Հայրենագիտություն)	1	3	4	5	5
4	Աշխարհագրություն	-	-	-	3	3
5	Կուլտուրայի պատմություն	-	-	-	2	2
6	Աշխատանքի ուսուցում	2	2	2	2	2
7	Նկարչություն	2	2	2	2	2
8	Երգ	2	2	2	2	2
9	Ֆիզկուլտուրա	2	2	2	2	2
	Ընդամենը՝	**23**	**25**	**26**	**29**	**29**

Բ աստիճանի դպրոցի ուսումնական պլան

1	Հայոց լեզու և գրականություն	5	5	5	3	3	**23**
2	Ռուսաց լեզու	4	4	4	5	5	**22**
3	Ֆիզիկա	-	3	4	4	4	**15**
4	Քիմիա	-	-	3	3	-	**6**
5	Կենսաբանություն	6	3	2	2	4	**17**
6	Աշխարհագրություն	-	3	2	2	4	**11**
7	Աստղագիտ. կամ օդերևութաբանություն	-	-	-	-	2	**2**
8	Մաթեմատիկա	5	5	4	4	3	**21**
9	Հասարակագիտություն	4	4	4	6	6	**24**
10	Արվեստ (երգ, նկարչություն)	3	3	2	2	2	**12**
11	Օտար լեզու	2	2	2	2	2	**10**
	Ընդամենը՝	**29**	**32**	**32**	**35**	**35**	

Նշենք, որ բերված ուսումնական պլաններն ու ծրագրերը օրինակելի էին և ոչ թե պարտադիր:

Նոր ուսումնական պլանները և ծրագրերը պահանջում էին, որ հատուկ ուշադրություն տրվի բնական և հասարակական գիտություններին, նպատակ ունենալով բարձրացնել և ընդարձակել աշակերտների հասարակական-քաղաքական և հանրակրթական գիտելիքները, նպաստել նրանց աշխարհայացքի ձևավորմանը:

Ուսումնական պլաններն ու ծրագրերը պահանջում էին մեծ տեղ տալ աշակերտների պրակտիկ գործունեությանը, բարձրացնել աշակերտների հետաքրքրությունն ու ակտիվությունը ուսման և կյանքի նկատմամբ, պայքար մղել հին դպրոցի արատավոր մեթոդների դեմ և առաջավոր փորձը , ավանդական լավագույն մեթոդները կիրառել դասավանդման գործընթացում: Լուսժողկոմը շրջանային կրթության բաժինների աշխատողներին, ուսուցիչներին հանձնարարում էր որոշ փոփոխություններ կատարել ուսումնական ծրագրերի մեջ, հաշվի առնելով տվյալ դպրոցի դժվարություններն ու տեղական պայմանները: Միաժամանակ, լուս-

ժողկոմը նորանշանակ դպրոցական տեսուչներին, կրթության շրջանային բաժինների վարիչներին հանձնարարում է հետևողական աշխատանք տանել դպրոցներում պատշաճ մակարդակով կազմակերպելու ուսումնադաստիարակչական աշխատանքները:

Փորձենք ցույց տալ կոնկրետ օրինակներով: Ժամանակակիցների հուշերից[62], դպրոցների պատմությանը նվիրված աշխատություններից[63] տեղեկանում ենք, որ այդ տասնամյակում (1929-1930թթ.) մանկավարժական պրակտիկայում ճանաչված լավագույն ուսուցիչները, հաղթահարելով ամեն մի դժվարություն, վճռական դեր են կատարում մարզի դպրոցների սովորողների ուսուցման, դաստիարակության պատասխանատու, բայց պատվաբեր խնդրի հաջող իրականացման գործում:

Այսպես, օրինակ, Մարտակերտի շրջժողկրթբաժնի դպրոցների տեսուչ (նաև հրահանգիչ) Լազր Մովսիսյանի՝ ԼՂ լուսժողկոմատին ներկայացրած զեկուցագրում հիշատակվում է, որ շրջանի առաջին և երկաստիճան դպրոցներում (Հարգոմերի, Վանքի, Չլդրանի, Հաթերքի, Մաղավուզի, Կուսապատի, Մեծ շենի և այլ դպրոցներում) ուսման որակը բարձրացնելու նպատակով բազմաբնույթ միջոցառումներ են ձեռնարկում մանկավարժական կոլեկտիվներն ու նրանց ղեկավարները (տնօրենները): Կազմակերպում են բաց և օրինակելի դասեր, դասավանդման փորձի փոխանակում, դպրոցներում գործի են դրվում շրջիկ տետրերը (աշակերտների գրավոր լավագույն աշխատանքները): Փորձառու ուսուցիչներ Ասյա Աղավելյանի (Հարգոմերի դպրոցի տնօրեն 1926-1930թթ.), Սամսոն Օհանյանի (Վաղուհասի առաջին աստիճանի դպրոցի վարիչ1924-1926թթ.), Ռուբեն Անաստասյանի (Կուսապատի առաջին աստիճանի դպրոցի վարիչ 1926-1928թթ.), Եղիշե Տեր Կարապետյանի (Հաթերքի առաջին աստիճանի դպրոցի վարիչ 1926-1928թթ.) և շատ ուրիշների նախաձեռնությամբ և անմիջական օգնությամբ ուսուցիչները առաջին անգամ կազմում են ամենօրյա դասի պլան կոնսպեկտը, ուսումնական նյութը պլանավորում աշակերտների իրական հնարավորություններին համապատասխան[64]: Միաժամանակ դպրոցում աշակերտների ուսման որակի բարձրացման նպատակով համակարգված աշխատանք են տանում նաև ծնողների հետ, պարբերաբար հրավիրում ծնողական ժողովներ: Ուշագրավ է այն, որ դպրոցներում կատարված աշխատանքները քննարկվում էին մանկավարժական խորհրդի նիստերում:

Հետաքրքրության համար բերենք նաև մեկ այլ օրինակ: 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Մ.Աղաջանյանը հավաստի փաստերով «Հաթերք» գրքում հիշատակում է, որ խորհրդային շրջանի առաջին դպրոցը Հաթերքում բացվեց 1921-1922 ուստարում՝ 1-4 դասարաններով: 1926-1927 ուստարում դպրոցի 4-րդ դասարանն ավարտեց 19 աշակերտ, որից 14-ը որակավորում ստանալով անցավ մանկավարժական, մի մասն էլ՝ արտադրական աշխատանքի: Դպրոցի առջև ծառացել են կրթության և ուսուցման որակի բարձրացման, ուսումնական պլանների, ծրագրերի պահանջներին համապատասխան ուսումնական, դաստիարակչական աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու հարցերը: Այդ մասին հետագայում իրենց հուշերում պատմում են նաև 1923-1930թթ. Հաթերքի դպրոցում դասավանդած փորձառու ուսուցիչներ Եղիշե Տեր Կարապետյանը, Լիդա Տեր Կարապետյանը, Կարո Նալբանդյանը (Թիֆլիսից), Մուշեղ Գաբրիելյանը, Ծովիկ Խալատյանը և ուրիշներ[65]:

ԼՂ լուսժողկոմ Ար.Քամալյանի զեկուցագրում կարդում ենք, որ 1924-1925 ուստարում Ստեփանակերտի երկաստիճան դպրոցի մանկավարժական կոլեկտիվը

(նկատի ունենք այսօրվա Ստեփանակերտի թիվ1 դպրոցի նախկին՝ 1923-1930թթ. մանկավարժական կոլեկտիվը, տնօրեն՝ Սիսակ Հակոբյան) պատշաճ մակարդակով է կազմակերպում դպրոցի ուսումնական աշխատանքները: Փորձառու ուսուցիչներ էին Վարդիթեր Առաքելյանը, Անահիտ Թյունիբեկյանը (Շուշիի Մարիամ Ղուկասյան դպրոցի շրջանավարտներ), Գրիգոր Առստամյանը, Բախշի Բարութչյանը (1922-23 ուստարում եղել է առաջին ուսուցիչը) և ուրիշներ[66]:

Վերոնշյալ դպրոցի համառոտ պատմությանը նվիրած իր օրագրում Անահիտ Թյունիբեկյանը իրավացիորեն մատնանշում է, որ մանկավարժական պրակտիկայում արդեն ճանաչված ուսուցիչները դպրոցում պատշաճ մակարդակով են կազմակերպում ուսումնադաստիարակչական աշխատանքները, ուսումնական նյութի ճիշտ պլանավորումն ու հաղորդումը սովորողների ընձեռած հնարավորություններին համապատասխան, դասին դիտազննական պարագաների օգտագործումը, աշակերտներին դասագործընթացում ներգրավելու մանկավարժական արդյունավետ մեթոդների օգտագործումը, աշակերտների ուսումնական գործունեության արդյունքների ստուգումն ու գնահատումը, ծնողական ժողովներում աշակերտների առաջադիմության ամփոփումը, ինչպես նաև տնային հանձնարարությունների առաջադրումը և վերահսկումը: Անշուշտ, այդ ամենը նպաստում էր ուսման որակի բարձրացմանն ու դաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը[67]: Դպրոցում լուրջ ուշադրություն էր դարձվում նաև սովորողների գաղափարաքաղաքական դաստիարակությանը:

Ինչ խոսք, այդ ծանր ու դժվարին ժամանակաշրջանում հասարակական կյանքի առաջընթաց փոփոխությունները պահանջում էին նոր հիմունքներով կազմակերպել աճող սերդի դաստիարակությունը:

Պետք է նշել, որ նորաստեղծ ինքնավար մարզի դպրոցներում այդ ուղղությամբ տարված աշխատանքները (մանավանդ հետագա տասնամյակներում, մինչև 88-ի շարժումը) ընթացել է չափազանց բարդ ու դժվարին պայմաններում, երկրի աստիճանական ծանր վիճակը, այդ շրջանում հակախորհրդային ուժերի կազմալուծիչ գործունեությունը, ինչպես նաև Ադրբեջանի իշխանությունների կեղծ ինտերնացիոնալիստական գաղափարախոսությունը, հատկապես հայկական դպրոցներում և դպրոցականների վրա իրենց ազդեցությունը տարածելու փորձերը բացասական ներգործություն էին ունենում՝ դժվարացնելով նրանց դաստիարակության ու վերադաստիարակության գործը: Այդ դժվարությունները հաղթահարելու համար ուսուցիչները անարգել իրականացնում էին աճող սերնդի դաստիարակության վեհ ու խորապես մարդկային սկզբունքները՝ ինտերնացիոնալիզմը, կոլեկտիվիզմը, աշխատասիրությունը, հարգանքը դեպի աշխատանքի մարդիկ և այլն:

Այդ տասնամյակում ԼՂԻՄ հանրակրթական դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման մասին հետաքրքիր տեղեկություններ կան Ս.Մելքումյանի[68] («Լեռնային Ղարաբաղ», «Լեռնային Ղարաբաղի հանրապետություն», 2010), Վ.Բալայանի[69] («Գիշիի պատմական անցյալն ու ներկան», 1997), Գ.Հարությունյանի[70] («Ժողովրդական կրթության զարգացումը Լեռնային Ղարաբաղում», 1985), Խ.Ղազարյանի[71] («Տումի», 2003), Ա.Կիսիբեկյանի («Հուշեր», 1,2 մասեր, 2012[72]) և այլոց աշխատություններում, ինչպես նաև «Խորհրդային Ղարաբաղ» թերթի 1923-1930 թվականների համարներում[73]:

Քննարկվող ժամանակաշրջանում հանրակրթական դպրոցներում դասավանդումը առարկայական էր նաև յոթնամյա (այն ժամանակ քառամյա՝ 1-4-րդ, 7-ամ-

յա՝ 5-7-րդ և միջնակարգ՝ 8-9-րդ դասարաններ) և երկրորդ աստիճանի դպրոցներում:

Սկզբնական շրջանի ուսումնական պլանների ու ծրագրերի հիմնական թերությունը կայանում էր նրանում, որ նրանցում բավարար չափով հաշվի չէին առնված սովորողների մտավոր և տարիքային առանձնահատկությունները, հարկ եղած չափով պահպանված չէր առարկաների մատչելիության սկզբունքը, այդ պատճառով մեծ դժվարություններ էին ստեղծվում ուսման գործընթացում:

Ուսունական ծրագիրը ուներ նաև այն թերությունը, որ տնտեսագիտությունը, որի մեջ մտնում էին քաղաքատնտեսություն, քաղաքատնտեսության պատմություն և տնտեսական զարգացման պատմություն առարկաները, ապահովված չէր բավարար ժամաքանակով: Ուսումնական ծրագրում անտեսված էր աշակերտներին աշխարհագրական համակարգված, կայուն գիտելիքներով զինելու խնդիրը, և իրոք, V, VI և IX խմբերում աշխարհագրությունը նախատեսված չէր որպես ինքնուրույն առարկա: Այդ խմբերում հանձնարարվում էր աշակերտներին աշխարհագրական գիտելիքներ հաղորդել կենդանաբանության, հասարակագիտության և երկրաբանության ուսուցման ժամանակ: Դպրոցում գեղարվեստ առարկա անվան տակ նախատեսվում էր ավանդել ֆիզկուլտուրա, երաժշտություն և նկարչություն: Հարկ է նկատել, որ երաժշտության, նկարչության և ֆիզկուլտուրայի ավանդումը եղել է ճիշտ և նպատակային:

«Գալով ուսման պլանին ու ծրագրերին,- կարդում ենք բանգյուղտեսչության կողմից երկրորդ աստիճանի դպրոցների վերաբերյալ մամուլում հրապարակված մի հոդվածում,- ապա հետազոտության տվյալներից երևում է, որ սոցդասգլխվարչության կողմից հրատարակված երկրորդ աստճանի դպրոցների պլանները թերի են և անբավարար»[74]: Մի կողմից՝ սխալներով ու թերություններով տառապող ծրագրերը, մյուս կողմից՝ ուսուցման մեջ կիրառվող դալտոն պլանը, պրոյեկտների մեթոդը, լաբորատորային- բրիգադային մեթոդը դպրոցները հետզհետե կանգնեցնում են քայքայման, կործանման եզրին: «Ծրագրերը դրական արդյունք տալ չեն կարող,- նշված է վերոհիշյալ հոդվածում,- եթե դասավանդումը չի կատարվում համապատասխան մեթոդներով»[75]: Դպրոցական աշխատանքների մշտական գործոնները՝ ծրագրերը և ուսուցման մեթոդները, խոչընդոտ էին հանդիսանում ուսուցման մեջ: Եթե դրան ավելացնենք այն փաստը, որ ուսուցչությունն իր կրթական ցենզով չէր համապատասխանում երկրորդ աստիճանի դպրոցների պահանջներին, ապա պատկերն ավելի ամբողջական կլինի դպրոցներում ստեղծված խիստ անբավարար դրության վերաբերյալ:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում մեր դպրոցը լուրջ դժվարության առաջ էր կանգնած նաև դասագրքերի հարցում: Հին դպրոցի դասագրքերը չէին կարող բավարարել նոր դպրոցի պահանջները. ամիրաժեշտ էր վերանայել եղած ոչ պիտանի դասագրքերը, թողնել լավերը՝ նրանց մեջ լուրջ փոփոխություններ ու լրացումներ կատարելով, ինչպես նաև հրատարակել նորերը: 1921-1924 թվականներին, Հայաստանի լուսժողկոմի նախաձեռնությամբ, լույս է տեսնում ինքնուրույն և թարգմանված 15 դասագիրք: Դասագրքեր են լույս տեսնում նաև Լեռնային Ղարաբաղի հայկական դպրոցների համար:

Դպրոցի պատմության զարգացման այս շրջանում (1924-1925թթ.), ինչպես Ռուսաստանում, այնպես էլ ազգային հանրապետություններում, այդ թվում Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցան լուրջ փոփոխություններ դպրոցի բովանդակության և ուսումնական աշխատանքը կազամակերպելու ձևերի մեջ:

Հայտնի է, որ 1922թ. ԽՍՀՄ լուսժողկոմատին կից պետական գիտական խորհրդի գիտամանկավարժական բաժինը (որը ղեկավարում էր Անատոլի Լունաչարսկին) մշակել է հանրակրթական դպրոցների համար ուսումնական նոր ծրագրեր, որոնք ստացել են «Կոմպլեքսային ծրագրեր» անունը: 1923-24 ուստարում Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցները ևս անցան «Կոմպլեքսային ծրագրեր»-ին[76]: Այդ ծրագրերում տեղ գտած թեմաները ուսումնասիրվում էին տարվա եղանակների, սեզոնային աշխատանքների, հեղափոխական տոների և այլ հանգամանքների հետ կապված: Ամեն մի թեմայի անցման համար հատկացվում էր, նայած թեմայի մեծությանը, երկու շաբաթից մինչև մեկ և կես ամիս:

Ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում առաջավոր շատ ուսուցիչներ դեմ էին «Կոմպլեքսային ծրագրեր»-ով դասավանդմանը, դժգոհություն էին հայտնում այն կապակցությամբ, որ նման ծրագրերով դասավանդումը երեխաներին չի զինում համակարգված գիտելիքներով: Նույնը կարելի է ասել, այսպես կոչված, «պրոյեկտների մասին»:

«Կոմպլեքսային ծրագրեր»-ը և մեթոդական այլ աղավաղումներ խիստ քննադատության արժանացան 1931թ. սեպտեմբերի 5-ի ԽՍՀՄ և ՀԽՍՀ լուսժողկոմների որոշումներում: Իր քննադատական վերաբերմունքը դրսևորեց նաև Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմատը: Եվ այսպես՝ 1932-33 ուս« տարվանից Լեռնային Ղարաբաղի դպրոցները ևս վերստին անցան առարկայական ուսուցմանը:

Քննակրվող ժամանակաշրջանում ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման և արդյունավետ կազմակերպման գործում չկային անհրաժեշտ որոշակիություն և միասնականություն: Հանրապետության լուսժողկոմատը դեռևս պարժորոշ կերպով չէր սահմանել ուսումնական տարվա և օրվա տևողությունը, պարապմունքների կազմակերպման ձևերը, արձակուրդների օրերը և այլն: Նմանօրինակ շատ հարցեր թողնված էին լուսավորության տեղական մարմինների հայեցողությանը: Եվ չպետք է զարմանալ, որ Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցներում ուսումնական տարին մեծ մասամբ սկսվում էր սեպտեմբերի 20-ից, որոշ տեղերում՝ նույնիսկ հոկտեմբերի 1-ից, և ավարտվում էր մայիսի վերջերին[77]:

Լեռնային Ղարաբաղի հանրակրթական երկրորդ աստիճանի դպրոցներում 1925-1926 ուս. տարում փոխադրվողների թիվը ավարտողների հետ կազմել է աշակերտության 52,5 տոկոսը, մնացած 47,5- 38 տոկոսն ունեցել է աշնանային վերաքննություն, իսկ 9,5 տոկոսը մնացել է նույն խմբում: Դպրոցների Դ խմբում վերաքննություն ունեցողների թիվը կազմել է 64 տոկոս, ավարտական Ե խմբում՝ 50 տոկոս և այլն[78]:

Առանձին գյուղական շրջաններում աշակերտները դպրոց էին վերադառնում, երբ վերջանում էր բերքահավաքը: Դպրոցական շենքերի սակավության պատճառով Ստեփանակերտի, Շուշիի և գյուղական մի շարք դպրոցներում պարապմունքներն ընթանում էին բազմահերթ:

Հանրակրթական դպրոցը բարձրորակ ուսուցիչների խիստ կարիք ուներ:

Ինչ խոսք, այս ամենն ուսման որակի վրա բացասական ազդեցություն էր թողնում: Ուսման որակը բարձրացնելու նպատակով միջոցառումներ էին ձեռնարկում մարզային և շրջանային մանկավարժական խորհուրդներն ու նրանց առանձին բաժանմունքները: Կազմակերպվում էին բաց և օրինակելի դասեր, դասավանդման փորձի փոխանակում, դպրոցներում գործի էին դրվում շրջիկ տետրերը (աշակերտների լավագույն գրավոր աշխատանքները): Դրանք հանգամանորեն

քննարկվում էին նաև շրջանային և մարզային մանկավարժական խորհուրդների նիստերում: Այսպես, 1927թ. հունվարի 2-ին Ստեփանակերտում կայացած մանկավարժական խորհրդի նիստում քննարկվել են հետևյալ հարցերը.

ա) փորձնական դասերի կազմակերպում Մարտակերտի, Մարտունու, Հադրութի, Առաջաձորի, Շուշիի դպրոցներում,

բ) աշակերտների գրավոր աշխատանքների դրվածքը,

գ) մեթոդմիավորման աշխատանքները մարզի դպրոցներում,

դ) աշակերտների ընթերցանության և հաշվետու ունակությունների զարգացումը,

ե) ռուսաց լեզվի դասավանդման դրվածքը[79]:

Նման հարցեր են քննարկվել նաև շրջանային մանկավարժական խորհրդի նիստում: Օրինակ՝ 1929թ. Մարտակերտում կայացած մանկավարժական խորհրդի նիստում նախագահ Բ.Ի.Երիցյանը(լուսբաժնի վարիչ) իր զեկուցման մեջ նշել է. «Ուսուցիչների առաջ խնդիր է դրված դասավանդման ընթացքում աշակերտներին զինել կյանքի հետ կապված բազմակողմանի գիտելիքներով, այդ գիտելիքները սոցիալիստական շինարարության մեջ կիրառելու կարողություններով ու հմտություններով: Այդ նպատակով ամեն մի թեմա անցնելիս ուսուցչի պարտքն է տվյալ առարկայի ուսուցումը սերտ կերպով կապել կյանքի երևույթների հետ: Աշակերտները պետք է լավ իմանան մայրենի լեզուն, գրավոր աշխատանքներ կատարեն, ինքնուրույն թվաբանական խնդիրներ և վարժություններ լուծեն, զանազան հետազոտություններ անեն և այլն»[80]:

Ինչպես Խորհրդային Հայաստանի, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի դպրոցներում ուսումը կյանքի հետ կապելու նպատակով ձեռնարկված միջոցառումներից էր դպրոցական թանգարանների և ցուցահանդեսների կազմակերպումը, որը լայն հնարավորություն էր տալիս աշակերտների ուժերով գործնական աշխատանքների, էքսկուրսիաների, հետազոտությունների միջոցով հարուստ նյութեր հավաքել: Մարզի քաղաքային և գյուղական շատ դպրոցներում մեծ նշանակություն էր տրվում հատկապես գավառագիտական և հայրենի երկրամասի ուսումնասիրության աշխատանքներին:

Լեռնային Ղարաբաղի լուսավորության բնագավառի աշխատողների անմիջական ղեկավարությամբ ու օգնությամբ մեծ աշխատանք էր տարվում աճող սերնդի դաստիարակության բնագավառում: Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում սովորողների մատերիալիստական աշխարհայացքի ձևավորմանը ոչ միայն բուն ուսուցման, այլև արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների ընթացքում: Լուրջ աշխատանքներ էին տարվում սովորողների բարոյական, գեղագիտական, աշխատանքային, ֆիզիկական դաստիարակության ուղղությամբ:

Աշակերտների հետ տարվող դաստիարակչական աշխատանքի ընթացքում ուսուցիչները կիրառում էին հետաքրքիր ձևեր ու մեթոդներ: Ուշագրավ էր, որ Լեռնային Ղարաբաղի շատ դպրոցներում հաճախակի կազմակերպվում էին դպրոցական հաշվետու ցուցահանդեսներ, որտեղ ցուցադրվում էին աշակերտների եռամյա աշխատանքների արդյունքները: Դպրոցական ցուցահանդեսներ էին կազմակերպվում Ստեփանակերտում, Վարանդայում, Ջրաբերդում և այլ տեղերում[81]:

Գյուղի և քաղաքի աշխատավորները հետաքրքրությամբ էին հաճախում դպրոցական ցուցահանդեսները: Նրանց համար դպրոցականների ուժերով կազմակերպվում էին հանդեսներ, երեկույթներ, ներկայացումներ: Օրինակ՝ Լեռնային

Ղարաբաղի լուսժողկոմատի տեսուչ Հ.Նիկողոսյանն իր զեկուցագրում նշել է, որ 1924-25 ուստարում, ստուգելով մարզի 14 դպրոցներ, պարզել է, որ դաստիարակչական աշխատանքների դրվածքը բարվոք է Դիզակի և Զրաբերդի դպրոցներում: Դպրոցներից շատերը (Թաղեր, Բանազուր, Էդիլլու, Տող, Մարտակերտ, Կուսապատ և այլն) ունեն թատերական և այլ խմբակներ, «Կարմիր ուղի» ու «Բողբոջ» անուններով պատի թերթեր, որտեղ լուսաբանվում են դպրոցի դաստիարակչական կարևոր հարցերը[82]:

Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմատի սոցիալական դաստիարակության գլխավոր վարչության պետ Գ.Էդիլյանն իր զեկուցագրում մատնանշել է, որ մարզի բոլոր դպրոցներում 1925թ. հունվարի 17-22-ը պարապմունքների ժամանակ զրույցներ են կազմակերպվել՝ նվիրված քաղաքական գործիչների աշխատանքին[83]: Դպրոցներում ստեղծվել են կաբինետներ, փառքի անկյուններ, կազմակերպվել հետաքրքիր երեկույթներ ու ցերեկույթներ, լույս էին ընծայվել պատի թերթերի հատուկ համարներ և այլն: Այս միջոցառումների կազմակերպումը ավանդույթ էր դարձել մարզի շատ դպրոցներում: Սովորողների գաղափարական դաստիարակությանը մեծապես նպաստել են հոբելյանական տոների ու հանդեսների նախապատրաստումն ու անցկացումը:

1925թ. ամռանը կուսակցության մարզկոմի պլենումում քննարկվեց Լեռնային Ղարաբաղի սոցդասվարչության նախագահ Գ.Էդիլյանի «Դպրոցի հասարակական- քաղաքական դաստիարակությունը» զեկուցումը: Այդտեղ նշվում է, որ երեխաների հասարակական- քաղաքական դաստիարակության համար իբրև հիմնական ձևեր պետք է ծառայեն.

ա) հասարակական օգտակար աշխատանքը.

բ) հեղափոխական տոներին մասնակցելը, դրանց ուսումնասիրությունն ու յուրացումը.

գ) պիոներական ու կոմերիտական ակտիվ աշխատանքները.

դ) երիտասարդության հետ տարվող գաղափարական դաստիարակության գծով միջոցառումները և այլն[84]:

Սովորողների դաստիարակության գործում մեծ դեր էին խաղում հայ և ռուս ժողովուրդների բարեկամության մասին մարզի դպրոցներում կազմակերպված զեկուցումներն ու զրույցները, այդ կապակցությամբ տարվող ազգային քաղաքականության պարզաբանումը, տարբեր ազգերի դպրոցականների հանդիպումները, փոխադարձ այցելությունները, համատեղ էքսկուրսիաները, ցերեկույթներն ու երեկույթները, նամակագրական ու շեֆական կապերը և այլն:

Դպրոցի առաջնահերթ խնդիրներից մեկը եղել է սովորողներին բարոյականության ոգով դաստիարակելը, նրանց վարքի ու վարվելակերպի ճիշտ կազմակերպումը և գիտակցական կարգապահության ապահովումը: ԼՂՀ պետական արխիվում պահպանվող շրջանային ժողկրթության բաժինների հաշվետվություններն ու զեկուցագրերը, ինչպես նաև «Խորհրդային Ղարաբաղ» թերթում տպագրված նյութերը ցույց են տալիս, որ 1920-1930թթ. դպրոցներում առանձնահատուկ ուշադրության է արժանացել նաև աշակերտների բարոյական զգացմունքների ու համոզմունքների դաստիարակության հարցը[85]: Բարոյական դաստիարակության հետ սերտորեն կապված՝ ուշադրություն է դարձվել նաև դպրոցականների աշխատանքային և ֆիզիկական դաստիարակությանը:

Դպրոցի պատմության զարգացման այս շրջանում ինչպես Հայաստանում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում հիմք է դրվում նաև դպրոցական և աշակերտական ինքնավարություններին: Ինչպես նշեցինք, դրանք նպատակ էին հե-

տապնդում դեմոկրատացնել դպրոցները և բխեցնել ժողովրդական կրթության առջև դրված խնդիրներից:

Այսպես, օրինակ, աշակերտական ինքնավարությունների աշխատանքի բովանդակությունն ու ձևերը Խորհրդային Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում նոր դպրոցի ստեղծման առաջին տարիներին անցան ստեղծագործական որոնումների շրջան: Կարևորն այն է, որ նոր դպրոցի աշակերտական ինքնավարությունները պայքար էին մղում հին կարգերի կողմից ուսուցչի և աշակերտների միջև ստեղծված հակադրության մնացորդները վերացնելու ուղղությամբ:

Աշակերտական ինքնավարության բարձրագույն մարմինը համարվում էր աշակերտական ընդհանուր ժողովը, որն ընտրում էր աշխորհուրդ (կոչվում էր նաև աշակերտական կոմիտե): Աշխորհուրդը ուներ 4 սեկցիա՝

ա) առողջապահական- կենցաղային,

բ) քաղլուսվարական,

գ) կոլեկտիվ աշխատանքների կազմակերպման,

դ) կուլտուրական- շինարարական:

Լեռնային Ղարաբաղի շատ դպրոցներում այս սեկցիաներն ունենում էին նաև համապատասխան ենթասեկցիաներ: Յուրաքանչյուր խումբ (դասարան) իր ներկայացուցիչն ուներ ենթասեկցիայում:

Աշակերտական ինքնավարության աշխատանքի ձևերի վերաբերյալ մեզ համառոտակի գաղափար է տալիս Ստեփանակերտ քաղաքի կենտրոնական ցուցադրական դպրոցի աշխորհրդի գործունեությունը[86]:

Դպրոցն ունեցել է աշակերտական ինքնավարություն: Յուրաքանչյուր խմբում ընտրված է եղել երեք հանձնախումբ՝ տնտեսական, սանիտարական և կարգապահական: Հանձնախմբերը ունեցել են նախագահներ և քարտուղարներ: Աշակերտական ինքնավարությունները հետևում էին դպրոցական շենքի մաքրությանը, աշակերտների կարգապահությանը և այլն:

Աշակերտական ինքնավարություններն իրենց ներկայացուցիչներն ունեին դպրոցական խորհուրդներում և ծնողական կոմիտեներում: Երեխաներին տնտեսական կյանքին գործնականապես վարժեցնելու նպատակով աշակերտական կոմիտեներին կից կազմակերպվում էին նաև աշակերտական կոոպերատիվներ:

ԼՂ լուսբաժնի զեկուցագրերից[87] տեղեկանում ենք, որ աշակերտական կոմիտեները կազմակերպում էին ակումբների աշխատանքը, երեխաների գեղարվեստական դաստիարակության գործը (պարեր, ներկայացումներ, երեկույթ-ցերեկույթներ, երգեր և այլն):

1923-1930թթ. դպրոցական աշակերտական կազմակերպությունների աշխատանքի ձևերի ընտրության գործում սխալներ, աղավաղումներ և ծայրահեղություններ են եղել: Օրինակ, դպրոցում ամուր կարգապահություն ստեղծելու, աշակերտների կարգապահությանը հետևելու և նույնիսկ անկարգապահ աշակերտների գործի քննումն ու լուծումը երբեմն հանձնվում էր աշակերտական ինքնավարություններին: Այս հանգամանքը նվազեցնում, իջեցնում էր ուսուցչի ղեկավար դերն ու պատասխանատվությունը ուսումնադաստիարակչական աշխատանքում: Չնայած դրան, աշակերտական ինքնավարությունները մեծ դեր խաղացին դպրոցականներին կոլեկտիվիզմի ոգով դաստիարակելու և նրանց մեջ աշխատանքային ունակություններ զարգացնելու գործում:

Աշակերտական ինքնավարությունների կառուցվածքի, նրանց աշխատանքի ձևերի ու բովանդակության մեջ գոյություն ունեցող թերությունները վերացվեցին «Տարրական և միջնակարգ դպրոցների մասին» ՀամԿ(բ)Պ Կենտկոմի 1931թ.

սեպտեմբերի 5-ի պատմական որոշումով: ՀամԿ(բ)Պ Կենտկոմը իր այդ որոշման մեջ նշեց դպրոցի մանկական ինքնավարության աշխատանքի ուղղությունը:

Այս շատ համառոտ շարադրանքից պարզ երևում է, որ չնայած այն հանգամանքին, որ դպրոցի պատմության զարգացման այս շրջանում դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման համակարգում որոշ թերություններ կային աշակերտներին համակարգված գիտելիքներով զինելու գործում այնուամենայնիվ, երկաստիճան աշխատանքային միասնական դպրոցը իր հիմնադրման ու զարգացման սկզբնական շրջանում շատ ավելի գիտական, գործնական գիտելիքներ ու ունակություններ էր տալիս աշակերտներին քան նախորդ ժամանակաշրջանի դպրոցն իր ամենազարգացած աստիճանում անգամ: Այդ բոլորի հիման վրա մեր դպրոցը լուծում էր աշակերտների մատերիալիստական աշխարհայացքի և ազգային դաստիարակության խնդիրները:

Փաստորեն Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցներում 1923-1930 թվականներին ձեռք բերված նվաճումները լավ նախադրյալներ ստեղծեցին ապագայի համար: 30-ական թվականներին արդեն հնարավոր եղավ մշակել ուսումնադաստիարակչական աշխատանքների, ներդպրոցական կառավարման նոր համակարգ, որն էլ ավելի կատարելագործվեց հաջորդ տարիներին:

4. Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կրթության համակարգում իրականացվող բարեփոխումները (1930-1940թթ.)

Քննարկվող ժամանակաշրջանում, ինչպես Հայաստանում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում հասարակական, սոցիալ-տնտեսական հարաբերություններում, մշակույթի, գիտության տարբեր ոլորտներում տեղի ունեցող փոփոխությունները պարտադրում են նաև բարեփոխումներ կատարել կրթական համակարգում: Ինչպես նշում է խորհրդահայ ականավոր մանկավարժ Մուշեղ Սանթրոսյանը, հանրահայտ ճշմարտություն է, որ կրթական համակարգը միշտ էլ արտացոլել է այն փոփոխությունները, որոնք կատարվում են հասարակության մեջ և կոչված են բավարարելու նրա պահանջները[88]:

1930-ական թվականները Հայաստանում և Ղարաբաղում նշանակալից տարիներ էին՝ անհատական տնտեսությունները միավորվում էին կոլեկտիվ տնտեսությունների մեջ, Ստեփանակերտում, Շուշիում և շրջանային կենտրոններում ստեղծվում էին արդյունաբերական խոշոր օբյեկտներ: Սոցիալ-տնտեսական հարաբերություններում նկատելի տեղաշարժերը նոր պահանջներ էին ներկայացնում տեղական և վերադաս մարմիններին ավելի լավ կազմակերպելու գործող մշակութալուսավորական օջախների ու մշակութային օբյեկտների աշխատանքը, ստեղծելու նորը, ժամանակակիցը, առաջավորը: «Խորհրդային Ղարաբաղ» թերթը շարունակում է լայնորեն լուսաբանել մարզում մշակութակրթական, մշակութային կյանքը և տնտեսության ոլորտում տեղի ունեցող էական փոփոխությունները, ինչպես նաև կրթական համակարգում կատարվող բարեփոխումները[89]:

Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում հանրակրթական դպրոցի վերակառուցման այս շրջանում (1930-1940թթ.) նշանակալի դեր ունեցավ խորհրդային կառավարության ընդունած պատմական որոշումները[90]:

ԽՍՀՄ կառավարությունը 1930թ. ապրիլի 16-ին ընդունեց նոր որոշում՝ 1928-1929 ուստարում ընդունված «երկաստիճան աշխատանքային միասնական դպրոցի» կանոնադրության փոփոխման մասին: Նոր կանոնադրության մեջ հան-

ռակրթական դպրոցների կառավարման և ֆինանսավորման վերաբերյալ նախկին կանոնադրության բաժինները ամբողջությամբ վերանայվել են, որի շնորհիվ լայն հնարավորություններ են տրվում շրջանային կրթության բաժիններին՝

1. խթանել դպրոցների կառավարման գործում տնօրենների մասնակցությունն ու օժանդակությունը,

2. բարձրացնել դպրոցներում մանկավարժական խորհրդի դերը, ինքնուրույն քննարկելու և որոշումներ ընդունելու դպրոցի ներքին կյանքին վերաբերող հարցերի մասին,

3. ապահովել ներդպրոցական կառավարման ժողովրդավարացումը և անցումը խորհուրդների միջոցով կառավարման,

4. կատարելագործել դպրոցների կառավարման և ինքնակառավարման նորմատիվ իրավական բազան,

5. բարձրացնել դպրոցների՝ բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետությունն ու նպատակայնությունը,

6. խթանել մրցակցությունը դպրոցների միջև,

7. տարբերակված մոտեցում ցուցաբերել դպրոցների նկատմամբ,

8. ստեղծել նախապայմաններ դպրոցների և դրանց գործունեության առավել ռացիոնալ կազմակերպման, միջոցների խնայողության և նպատակային վերաբաշխման համար,

9. մեծացնել հատկացված պետական միջոցների ծախսման նպատակայնությունը՝ առաջնությունների որոշումները թողնելով դպրոցական ինքնակառավարման մարմինների վրա և այլն:

Հանրակրթական դպրոցի նոր կանոնադրությունում հսկայական նշանակություն տրվեց միջնակարգ դպրոցի աշակերտների կրթությանն ու դաստիարակությանը: Դրա գլխավոր ուղղությունները հանդիսացան.

ա) գաղափարական- քաղաքական կողմը. չէ որ դաստիարակությունը ընդհանուր իմաստով «ավագ սերնդի կուտակած փորձի ընդհանրացված նպատակաուղղված ու կազմակերպված հաղորդումն է կրտսեր սերնդին»,

բ) հանրօգուտ- հասարակական և ընդհանուրի, հանրության օգտին կատարվող արտադրողական աշխատանքը,

գ) տոների և ժողովրդական ծիսակատարությունների նշումը, կազմակերպումն ու անցկացումը, որոնք բխում էին ազգային ավանդույթների շահերից և ունեին դաստիարակչական նշանակություն,

դ) հայրենագիտական աշխատանքները, որոնք պետք է օգնեին սովորողներին ճանաչելու իրենց երկիրը, հայրենիքը, նրա բնությունը, բնական հարստությունները, ճարտարապետական կոթողները, ազգային արժեքները,

ե) ժողովուրդների, հատկապես խորհրդային պետությունում ապրող ազգային փոքրամասնությունների հետ բարեկամության և փոխադարձ վստահության հաստատումը,

զ) աթեիստական դաստիարակություն: Չարգելելով խղճի ու դավանանքի ազատությունը, դեմ կանգնել պատանիների և աղջիկների կրոնի՝ որպես իդեալիստական գաղափարախոսության հետ շփմանը,

է) աշխատանքային դաստիարակությունը: Դպրոցի շրջանակներում աշխատանքի՝ կյանքի հետ կապի ամրապնդման սկզբունքով: Պատկերացում տալ աշխատանքի մասին, դրական վերաբերմունք մշակել աշխատանքի նկատմամբ, նախաձեռնություն հանդես բերել այդ գործում, աշակերտներին գործնականում և հոգեբանորեն նախապատրաստել աշխատանքային գործունեության, նրանց մեջ

ձևավորել անհատական և կոլեկտիվ աշխատանք կատարելու կարողություններ, պատվաստել աշխատանքային կուլտուրա, աշխատանքի միջոցով զարգացնել նրանց ընդունակությունները, արթնացնել նախասիրությունները: Եվ այդ ամենը՝ դպրոցամերձ հողամասերի մշակման, դպրոցական այգիների հիմնման, դպրոցական գույքի վերանորոգման ու պաշտպանման միջոցով,

ը) երկրում ընդհանուր պարտադիր տարրական և յոթնամյա պարտադիր կրթության իրականացումը: Դպրոցը, սովորող դպրոցահասակ երեխաներին, պարտադիր ընդգրկելով մինչև 8-րդ դասարան, առաջնորդվում էր այն սկզբունքով, որ պետք է աշակերտներին դաստիարակել ոչ թե փողոցում, այլ «կոլեկտիվի մեջ, կոլեկտիվի միջոցով, կոլեկտիվի համար» սկզբունքով,

թ) տնօրենների և դասարանների ղեկավարների բարձր պատասխանատվությունը 7-ամյա պարտուսի օրենքի իրականացման համար: Պետության կողմից «պարտուսի» օրենքի խեղաթյուրումները կամ ուղղակի չկատարումը դպրոցի ղեկավարությանը դնում էր պատասխան տալու հարցի առաջ[91]:

ԽՍՀՄ կառավարությունը 1930թ. օգոստոսի 14-ին ընդունեց նոր որոշում «երկրում ընդհանուր պարտադիր տարրական կրթության վերացման մասին»[92]:

Ի կատարումն վերոհիշյալ պատմական որոշումների, Հայաստանի Կենտգործկոմն ու Ժողկոմխորհուրդը օգոստոսի 29-ին որոշում են ընդունում հանրապետությունում պարտադիր տարրական կրթության իրականացման մասին: Իսկ Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմը 1930թ. օգոստոսի 30-ին[93] ընդունում է համապատասխան որոշում մարզում պարտադիր տարրական կրթություն իրականացնելու մասին: Որոշման մեջ նշված է, որ բոլոր բնակավայրերում մտցվում է ընդհանուր պարտադիր տարրական ուսուցում 8-11 տարեկան բոլոր երեխաների համար: Առաջին աստիճանի դպրոցների լրիվ դասընթացն ավարտելը պարտադիր է հայտարարվում բոլոր աշակերտների համար: Իրագործվել է նաև տարրական դպրոցում չսովորած 11-15 տարեկան դեռահասների պարտադիր ուսուցում՝ արագացված կարգով (մեկ-երկու տարվա դասընթացներով):

Պարդադիր տարրական կրթության կենսագործման համար կենսականորեն անհրաժեշտ էր դառնում նոր դպրոցների շինարարությունը և եղած դպրոցական շենքերի վերանորոգումն ու ռացիոնալ օգտագործումը:

Պարտուսի օրենքի իրականացման և այդ ուղղությամբ տարվող աշխատանքները ղեկավարելու և վերահսկելու նպատակով լուսժողկոմատին կից ստեղծվում է պարտուսի կոմիտե: Նույնպիսի կոմիտեներ են ստեղծվում նաև շրջանային և գյուղական խորհուրդներին կից: Պարտուսի իրականացումը դառնում է համաժողովրդական խնդիր: Այսպիսով, 1930թ. «ընդհանուր պարտադիր տարրական կրթություն մտցնելու մասին» որոշման հիման վրա Լեռնային Ղարաբաղի մարզային գործադիր կոմիտեն սեպտեմբերի 9-ին որոշում է մարզում մտցնել ընդհանուր տարրական պարտադիր կրթություն, իսկ Ստեփանակերտում՝ յոթնամյա ընդհանուր կրթություն:

Մարզային գործադիր կոմիտեի որոշման մեջ առաջադրված էին հետևյալ պահանջներն ու խնդիրները.

1. Լեռնային Ղարաբաղում բնակվող երկսեռ դպրոցահասակ (8-12 տարեկան) բոլոր երեխաների համար հայտարարել պարտադիր ուսուցում.

2. առաջիկա ուսումնական տարում յոթնամյակի ծավալով պարտադիր ուսուցումը հայտարարել Ստեփանակերտում և հետագայում ընդլայնել յոթնամյակների, գյուղերի ու ֆաբրիկագործարանային դպրոցների ցանցը.

3. Լեռնային Ղարաբաղում բնակվող 11-15 տարեկան անգրագետ երեխաներին հնարավորություն տալ տարրական կրթություն ստանալ հատուկ երկամյա և միամյա դպրոցներում ու կուրսերում, դպրոցներին կից խմբակներում.

4. տեղական վարչական մարմինների կողմից ապահովել բոլոր որբերի և անապաստան երեխաների հաճախումը դպրոց.

5. դպրոցական շինարարությունը համարելով պարտադիր կրթության հաջող ընթացքի առաջնակարգ խնդիրներից մեկը՝ առաջարկել լուսբաժնին՝ համապատասխան գումար տրամադրել դպրոցաշինությանը.

6. բոլոր շրջգործկոմներին և գյուղխորհուրդներին կից կազմակերպել պարտադիր կրթությանն աջակցող կոմիտեներ՝ արհմիութենական կազմակերպությունների, կուսակցական և կոմերիտական բջիջների, կոլտնտեսությունների, կոոպերատիվ կազմակերպությունների, «Անգրագիտության վերացման ընկերության» բջիջների, հասարակական այլ կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև տեղական ուսուցչության ակտիվ մասնակցությամբ[94]:

Անգրագիտության վերացման համար մարզում շեֆական լայն աշխատանք էր ծավալվել:

Մարզային թերթի 1930թ. դեկտեմբերի 6-ի տվյալներով՝ «Լեռնային Ղարաբաղի տարածքում ապրող 8-10 տարեկան երեխաների 98 տոկոսը և 11-12 տարեկան երեխաների 95 տոկոսն արդեն ընդգրկվել էին համապատասխան դպրոցներում: Մեկ տարվա ընթացքում մարզում բացված 32 դպրոցներում ընդգրկվեցին 3827 երեխաներ: Լավ էին գործում նաև ազգային փոքրամասնությունների համար բացված 10 դպրոցները:

Չքավոր աշակերտներին ձրիաբար բաց էին թողնվել 2666 գիրք, 5229 տետր և 5000 զանազան գրենական պիտույքներ: Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմատ Արտո Վարդանյանը (Վարդանով) իր զեկուցագրում նշում է, որ տարրական պարտադիր կրթության իրականացման հետ մեկտեղ մարզում լայն աշխատանք է ծավալվում անգրագիտության վերացման ուղղությամբ: 1929-30 ուստարում մարզում գործող հարյուրավոր լիկկյաններում ընդգրկվել էին շուրջ 13000 անգրագետներ ու կիսագրագետներ: Ճիշտ է, չնայած ձեռնարկված միջոցառումներին, որոնց շնորհիվ տարեցտարի պակասում էր մարզի անգրագետների թիվը, այնուամենայնիվ, անգրագետների ու կիսագրագետների թիվը 1932 թվականին հասնում էր շուրջ 20 հազարի: Կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմը, քննարկելով այս հարցը, միջոցներ է ձեռնարկում ուժեղացնելու անգրագիտության վերացման աշխատանքները և 1932 թվականից մարզը դարձնելու համատարած գրագիտության երկրամաս[95]:

Ընդունվեցին «Տարրական և միջնակարգ դպրոցի մասին»,«Սովորողների գիտելիքների որակի բարձրացման մասին», «Դպրոցական դասագրքերի, առարկայական ծրագրերի մասին», «Ստուգողական փոխադրական քննությունների կազմակերպման մասին» կառավարության, տեղերում՝ հանրապետությունների, մարզլուսժողկոմատների մի շարք որոշումներ(այդ մասին մանրամասն կնշվի հաջորդ բաժնում):

Եթե 1929-30 ուստարում մարզում գործում էր 145 դպրոց՝ 19563 աշակերտով, ապա 1933-34 ուստարում մարզի դպրոցների ցանցը հետևյալ պատկերն էր ներկայացնում[96].

Դպրոցների տիպերը	Քանակը	Սովորողների թիվը	Ուսուցիչներ
Գյուղատնտեսական տեխնիկում	1	230	12
Մանկավարժական տեխնիկում	1	367	11
Կուսակցական դպրոց	1	95	6
Երեկոյան կուս. դպրոց	3	215	8
ԿԵԴ (Կոմունիստ.երիտ.դպրոց)	2	130	6
9-ամյա դպրոց	5	1500	92
7-ամյա դպրոց	3	390	34
1-ին աստիճանի դպրոց	165	2478	545
Ընդհանուր միջնակարգ դպրոց	2	75	4
ՖԶՈՒ	2	150	11
Մանկատուն	6	340	10
Մանկապարտեզ	-	-	-
Լիկկայան	830	25000	32
Ընդամենը՝	**995**	**31054**	**771**

Հետագա տարիներին աննախընթաց ավելանում է մարզի տարբեր դպրոցներում սովորողների թիվը: Օրինակ, մարզի դպրոցներում աշակերտների քանակը 1935-40թթ. հետևյալ պատկերն ուներ[97].

Ուսումնական տարին	Ընդամենը մարզի դպրոցներում	Տարրական դասարան - ներում	V-VII դասարան - ներում	VIII -X դասարան - ներում
1934-35	30066	20946	8636	484
1935-36	31789	20415	10511	863
1936-37	34299	21831	11245	1223
1937-38	35992	21996	12459	1537
1938-39	40429	23279	12472	4678
1939-40	43216	22795	13813	6644

Քննարկվող ժամանակաշրջանում մեծանում է նաև դպրոցականների համար կազմակերպվող դպրոցների և սովորողների թիվը: Այսպես, օրինակ, միայն 1931-32 ուս.տարում լիկկայաններում գրագիտություն է ստացել 2012 մարդ, որից ռուս՝ 64-ը, հույն՝ 39-ը: Նրանց երեխաների համար գործել է 20-ից ավելի դպրոց 1000-ից ավելի աշակերտով: Լեռնային Ղարաբաղի լուսավորական մարմինները զգալի աշխատանք են տարել նաև դպրոցաշինարարության ասպարեզում: Այդ հարցը քննարկվել է 1931թ. մայիսին Ստեփանակերտում հրավիրված՝ շրջլուսբաժվարների խորհրդակցությունում: Եթե մինչև 30-ական թվականները Լեռնա-

յին Ղարաբաղում կառուցվել է 60 դպրոցական նոր շենք, ապա 1930-ական թթ. կառուցվել է շուրջ 100-ը: Այդ ընթացքում դպրոցաշինարարության համար հատկացվել է 164 հազար ռուբլի: Միայն 1938-39 ուս. տարում դպրոցների շինարարության, վերակառուցման ու զարգացման համար նախատեսված էր 17 միլիոն 600 հազար ռուբլի[98]:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում որոշակի փոփոխություններ են կատարվել նաև դպրոցական համակարգում: Հաշվի առնելով կադրերի սուր պահանջը, 1930թ. Լեռնային Ղարաբաղում երկրորդ աստիճանի դպրոցների երկրորդ խմբերը (VIII-X դասարանները) վեր են ածվում տեխնիկումների, յոթնամյա դպրոցները մնում են որպես հանրակրթական: Սակայն 1932թ. նորից հնարավոր է դառնում տեխնիկումներին զուգընթաց ունենալ նաև երկրորդ աստիճանի (միջնակարգ) հանրակրթական դպրոցներ: Ի դեպ, միջնակարգ դպրոցը նախկին 9-ամյայի փոխարեն դառնում է 10-ամյա: «Տարրական և միջնակարգ դպրոցի ուսումնական ծրագրերի և ռեժիմի մասին» ՀԱՍԿԲԿ1932թ. օգոստոսի 25-ի որոշման մեջ ասվում է. «Շուտափույթ կերպով բարձրացնել միջնակարգ դպրոցի աշակերտության հանրակրթական և պոլիտեխնիկական պատրաստության մակարդակը... 1932-33 ուստարվանից ձեռնարկել յոթնամյա պոլիտեխնիկական դպրոցը տասնամյակի վերակազմելուն»[99]:

Նույն ժամանակվանից Լեռնային Ղարաբաղում վերացվում են նաև կոմերիտդպրոցների ու քաղաքային ֆաբրիկագործարանային 7-ամյակների միջև եղած ծրագրային տարբերությունները: Վերանում է նաև գյուղում և քաղաքում երկու տարբեր տիպի յոթնամյակ ունենալու անհրաժեշտությունը: 1934թ. մայիսի 16-ի «Տարրական և միջնակարգ դպրոցի կառուցվածքի մասին» որոշման համաձայն՝ սահմանվում են հանրակրթական դպրոցի հետևյալ տիպերը. ա) տարրական դպրոց (4 դասարան), բ) ոչ լրիվ (7-րդ դասարան), միջնակարգ դպրոց (10 դասարան): Այդ որոշման հիման վրա դպրոցների համակարգը փոխվում է: Երկրորդ հնգամյակի վերջում Լեռնային Ղարաբաղում լուրջ աշխատանք է տարվում դպրոցական ցանցի ընդարձակման, դպրոցներում մեծ թվով աշակերտներ ընդգրկելու ուղղությամբ: Այսպես, օրինակ՝ արխիվային տվյալների համաձայն՝ 1938-39 ուստարում մարզում հանրակրթական դպրոցների թիվը հասնում էր 193-ի, սովորողներինը՝ 28000-ի, ուսուցիչներինը՝ 1690-ի[100]:

Հարկ է նշել, որ այդ ուսումնական տարում որոշակի հաջողություններ են ձեռք բերվել նաև բարձրագույն մասնագիտական կրթության կազմակերպման բնագավառում: 1938-39 ուստարում Շուշիում բացվեց երկամյա մանկավարժական ինստիտուտ (այդ մասին մանրամասն կնշվի աշխատության 3-րդ գլխում):

Արխիվային փաստաթղթերը և այլ աղբյուրներ վկայում են այն փաստը, որ 1934 թ. սկսած, հատկապես արագ էր աճում գյուղական վայրերի ոչ լրիվ միջնակարգ դպրոցների և նրանցում ընդգրկված երեխաների թիվը: 1939-40 ուս.տարվա մարզլուսբաժնի հաշվետվության մեջ նշվում է, որ մարզի մի շարք շրջաններում (Մարտակերտ, Մարտունի, Հադրութ և այլն) արդեն լրիվ անցել են 7-ամյա կրթության: Նշված շրջանների բոլոր տարրական դպրոցները վերակառուցման շնորհիվ վեր էին ածվել ոչ լրիվ միջնակարգ դպրոցների: Նույն հաշվետվության մեջ գրված է, որ 1939-40 ուստարվանից բոլոր տիպի դպրոցների 4-րդ դասարանն ավարտող աշակերտները 100 տոկոսով ընդգրկվելու են 5-րդ դասարան ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական վայրերում[101]:

Մարզում մի շարք դպրոցներ ուսումնական աշխատանքի կազմակերպման առաջավոր մեթոդներով ու ձևերով օրինակ են ծառայել մյուս դպրոցների ման-

կավարժական կոլեկտիվների համար: Այդ ուղղությամբ զգալի աշխատանք են կատարել Ստեփանակերտի լրիվ և ոչ լրիվ միջնակարգ դպրոցների առաջավոր ուսուցիչներ Հրանտ Շահրամանյանը, Պավել Անդրյանը, Հրաչյա Մկրտչյանը, Արամ Մարտիրոսյանը, Կարո Դավթյանը, Ասյա Աղավելյանը, Վերգինե Կորգանյանը, Սուրեն և Սոֆյա Հայրապետյանները, Եսթեր Մովսիսյանը և շատ ուրիշներ: Ուսուցումը լավ հիմքերի վրա էր դրված նաև Մարտակերտի, Մարտունու, Հադրութի շրջկենտրոնների, ինչպես նաև մարզի մի շարք գյուղական դպրոցներում (Զանախչի, Ճարտար, Բադարա, Գիշի, Շոշ, Սարուշեն, Կարմիր գյուղ և այլն):

Քննարկվող ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղում հաջողություններ են ձեռք բերվել նաև միջնակարգ մասնագիտական կրթության բնագավառում: Մասնագետ կադրերի մեծ պահանջը բավարարելու նպատակով մարզում ընդլայնվեց միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանցը: Այսպես, օրինակ, 1930-ական թվականներին մարզում կար 6 տեխնիկում՝ մոտ 2000 սովորողներով: Մասնագետ կադրերի պատրաստման գործում արդյունավետ աշխատանք էին կատարում Ստեփանակերտի գյուղատնտեսական, բժշկական, Շուշիի մանկավարժական, Հադրութի ագրոնոմիական ու մանկավարժական տեխնիկումներն ու ուսումնարանները:

Շատ կարճ ժամանակում մեծ առաջընթաց ունեցավ հատկապես Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումը: Եթե 1923 թ. ուսումնական առաջին տարում այստեղ սովորում էր 46 ուսանող և դասավանդում միայն 6 ուսուցիչ, ապա 1930թ. տեխնիկումն արդեն ուներ 2 բաժին՝ զոոտեխնիկական և անասնաբուժական, 100-ից ավելի սովորողներով: Գյուղատնտեսական տեխնիկումի շրջանավարտները սիրով աշխատանքի էին անցնում մարզի կոլտնտեսություններում ու սովխոզներում: Նրանցից ոմանք էլ հետագայում դարձան անվանի գիտնականներ, այդ թվում՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Արտաշես Առաքելյանը, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ Գուրեն Քամալյանը, Գուրգեն Շաքարյանը, Միքայել Առաքելյանը, Երեմ Սաֆարյանը, Վերդի Հակոբյանը և ուրիշներ: Պրոֆեսոր Ս.Ավագյանը գրել է.«Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին մարզի տնտեսություններում արդեն աշխատում էին 147 ագրոտեխնիկներ, 125 անասնաբույժներ, 244 զոոտեխնիկներ: Իսկ իր գործունեության 50 տարիների ընթացքում սովխոզտեխնիկումը մեր գյուղատնտեսությանը տվել է 3232 բարձորակ մասնագետ»[102]:

Արխիվային տվյալները և այլ աղբյուրներ հնարավորություն են ընձեռել մեզ աղյուսակի միջոցով ընդհանուր պատկերացում տալ 1922-1940 թթ. Լեռնային ղարաբաղում գործող հայկական և այլազգի դպրոցների մասին:

Աղյուսակ 6

Ուսումնական տարի	Դպրոց	Աշակերտ	Ուսուցիչ	Այլազգի դպրոց
1922-23	79	4375	152	16
1923-24	102	7627	233	22
1924-25	108	8668	252	26
1925-26	134	14764	275	28
1926-27	137	15339	352	30
1927-28	138	1492	424	32

1928-29	140	15359	488	32
1929-30	160	19250	498	34
1930-31	174	224100	518	38
1931-32	178	26560	661	44
1932-33	182	28264	772	48
1933-34	184	29324	857	48
1934-35	188	29286	868	54
1935-36	190	30124	892	58
1936-37	192	31222	924	62
1937-38	192	32124	962	64
1938-39	193	34225	988	66
1939-40	188	29112	1112	68

Այսպիսով, վերոհիշյալ աղյուսակներից պարզ երևում է, թե ինչպես աճելով պարտադիր տարրական ուսուցման անցնելու սկզբնական տարիներին, հետագայում տարրական դպրոցները բավականաչափ արագությամբ նվազում են, իրենց տեղը զիջելով յոթնամյա, իսկ վերջիններս՝ միջնակարգ դպրոցներին: Թեև այդ տարիներին Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում յոթնամյա դպրոցները քանակով գերակշռել են, բայց զարգացման տեմպերով միջնակարգ դպրոցներն աճել են աներևակայելի արագությամբ: Եթե 1934-1936թթ. Հայաստանում միջնակարգ դպրոցների թիվը հասնում էր 147-ի, ապա 1938-1940թթ. այն հասել էր 324-ի[103]: Իսկ լեռնային Ղարաբաղում 1933-1934թթ. գործում էին հինգ 9-ամյա միջնակարգ դպրոց, երեք 7-ամյա, 165 առաջին աստիճանի դպրոց: 1938-1940թթ. գործում էին 196 հանրակրթական հայկական դպրոց, որից 94-ը՝ միջնակարգ, 46-ը՝ յոթնամյա, 123-ը՝ առաջին աստիճանի[104]:

Աղյուսակներում նշված դպրոցների, աշակերտների, ուսուցիչների քանակական տվյալները ցույց են տալիս, որ տարեցտարի ավելի ու ավելի է բազմացել դպրոցների թիվը և արագ կերպով աճել սովորողների, դասավանդող ուսուցիչների քանակը:Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղում ապրող մի շարք ժողովուրդների (ադրբեջանցիների, քրդերի) մոտ նախքան խորհրդային կարգերի հաստատումը դպրոցական գործի զարգացումը, գրագիտության ծավալումը ավելի վատթար վիճակում են եղել, քան հայերի մոտ: ԼՂԻՄ լուսժողկոմը հատուկ ուշադրություն է դարձրել այդ ժողովուրդների մշակութային ընդհանուր մակարդակի բարձրացման և հատկապես կրթական գործի կազմակերպմանը: Այդ է պատճառը, որ ԼՂԻՄ-ում մասնավորապես պարտուսի իրականացման ժամանակաշրջանում, հիշյալ ժողովուրդների մոտ դպրոցական, լիկկայանների (անգրագիտության վերացման կետերի) ցանցի ծավալման, աշակերտության և երիտասարդ ու տարիքն առած մարդկանց թվի աճի տեմպերը ավելի բարձր էին մարզի հայկական դպրոցներում, լիկկայաններում սովորողների թվի ընդհանուր աճի տեմպերից:

Հարկ է նշել այն իրական փաստը, որ ընդհանուր պարտադիր ուսուցման կենսագործման համար Հայաստանի Հանրապետությունը, ԼՂ մարզգործկոմը, լուսժողկոմատը հսկայական լրացուցիչ ֆինանսական միջոցներ են ներդրել լուսա-

վորության գործում: Դպրոցաշինարարությունը մեծ ծավալ է ստանում հատկապես գյուղական վայրերում: Զգալի աշխատանք է կատարվում նաև դպրոցները պահանջվող սարքավորումներով և ուսումնական պիտույքներով ապահովելու, ուսումնադաստիարակչական աշխատանքը պատշաճ մակարդակով կազմակերպելու, մանկավարժական կադրերի պատրաստման ու վերապատրաստման ուղղությամբ (այդ մասին կնշվի հաջորդ բաժնում):

5. Ուսումնադաստիարակչական աշխատանքների համակարգը ԼՂԻՄ հանրակրթական դպրոցներում 1930-1940թթ.

Քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանում, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղում դպրոցական պատմության զարգացման այս շրջանը (1930-1940թթ.) նշանավոր է ոչ միայն այն վիթխարի նվաճումներով, որոնք ձեռք են բերվել պարտուսի իրականացման, դպրոցական ցանցի ընդլայնման, աշակերտության թվի աճի, ուսուցչական կազմի քանակական ու որակական բարելավման բնագավառում, այլև հանրակրթական դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների արմատական բարելավման ասպարեզում:

Հանրակրթական դպրոցի այդ ընդհանուր վերելքի և ուսումնադաստիարակչական աշխատանքների արմատական վերակառուցման ու բարելավման գործում որոշիչ դեր են խաղացել ԽՍՀՄ կառավարության, Հայաստանի Կենտգործկոմի ու լուսժողկոմատի, ինչպես նաև կուսակցության մարզկոմի ու ԼՂԻՄ լուսժողկոմատի կողմից ընդունված պատմական որոշումները դպրոցի մասին:

Այդ տասնամյակներում հանրակրթական դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման և բովանդակության մեջ կային էական թերություններ, որոնց սպառիչ բնութագրումն ու գնահատականը տրված են ընդունված որոշումներում:

Այսպես, 1930 թվականի ապրիլին Հայաստանի լուսժողկոմը՝ հիմք ընդունելով ՌՍՖՍՀ լուսժողկոմատի նույն թվականի մարտի 16-ի որոշումը, հաստատեց ուսումնական ծրագրեր, որոնք կառուցված էին կոմպլեքսային պրոյեկտների հիման վրա: Դաս-դասարանային համակարգը և ծրագրերի առարկայական կառուցումը հայտարարվեցին ուսումնական աշխատանքի հնացած ձև, որը ժառանգվել է անցյալից: 1931 թվականին կազմվեց ֆաբրիկա-գործարանային յոթնամյակի ծրագրերի նախագիծ, որը կառուցված էր կոմպլեքսային-նախագծային հիմունքով: Յուրաքանչյուր տարի մեկը մյուսին փոխարինող կոմպլեքսային-նախագծային ծրագրերը հանգեցնում էին դպրոցականների ընդհանուր կրթության մակարդակի իջեցմանը: Այդ թերությունները կային նաև Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցներում:

Հանրակրթական դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքները վերակառուցելու գործում վճռական նշանակություն ունեցան ԽՍՀՄ կառավարության 1931 թվականի սեպտեմբերի 5-ի, Հայաստանի լուսժողկոմատի սեպտեմբերի 20-ի, ԼՂ լուսժողկոմատի՝ սեպտեմբերի 26-ի ընդունած որոշումները «Տարրական և միջնակարգ դպրոցների մասին»[105], որոնցում դատապարտվեցին այդ թերությունները՝ թեթևամիտ մեթոդական պրոժեկտյորականությունը, և տրվեցին սկզբունքային ցուցումներ դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների արմատական փոփոխման մասին: Նշվում էին դպրոցի խոշոր նվաճումները (դպրոցական ցանցի աճ, սովորողների սոցիալական կազմի փոփոխում, նախահեղափոխական ժամանակների համեմատությամբ դպրոցի ամ-

բողջ աշխատանքի սկզբունքորեն այլ բոցանդակություն և այլն): Միաժամանակ մատնանշվում էր, որ դպրոցը դեռևս չի համապատասխանում այն պահանջներին, որ նրան ներկայացնում է ժամանակակից զարգացող հասարակությունը: Դպրոցի արմատական թերությունը համարվում էր այն, որ նա դեռևս չի տալիս բավարար ծավալով հանրակրթական սիստեմատիկ գիտելիքներ և անբավարար է նախապատրաստում տեխնիկումների ու բարձրագույն դպրոցների համար գրագետ, գիտությունների հիմունքներին լավ տիրապետող շրջանավարտներ:

Դպրոցներում սովորողների գիտելիքների որակը բարձրացնելու միտումով այդ որոշումների մեջ կարևորներն ու արժեքավորներն էին համարվում.

ա) Պայքարը մեթոդական խեղաթյուրումների դեմ: Ուսուցման հարցում ելնելով սխոլաստիկ, դոգմատիկ մոտեցումները հաղթահարելու սկզբունքներից՝ դպրոցը մինչ այդ մեթոդական աշխատանքը կազմակերպում էր «համակարգից դուրս»: Այն բաժանում էին երկու մասի՝ «պատրաստի գիտելիքների հաղորդման» և «որոնումների միջոցով գիտելիքներ ձեռք բերելու» մեթոդների: Կամ՝ «դոգմատիկ», «էվրիստիկ» և «հետազոտական» մեթոդների: Հրաժարվելով առաջիններից և ընդունելով ու կիրառելով միայն վերջինները՝ դպրոցը փաստորեն աղքատացնում էր ուսուցման հնարավորությունները, հաստատում միայն այս կամ այն մեթոդի պիտանիությունն ու առավելությունը և մյուսների ոչ պիտանիությունը, դրանով իսկ սահմանափակելով և նսեմացնելով ուսուցչի ստեղծագործական աշխատանքը: Ուսուցիչը կանգնում էր ձևական և ցուցադրական մեթոդական թելադրանքի առջև: Նույն կերպ էր որոշվում նաև ուսումնական աշխատանքի ձևերի ընտրության հարցը: Դաս-դասարանային համակարգը հայտարարվում էր հին , իր դարն ապրած, և պարտադրվում էր արտասահմանյան «նորամուծությունը»: Վերացվում էր նաև կայուն դասացուցակը:

բ) Մինչ այդ մերժվում էին նաև ուսումնական կանոնավոր աշխատանքը, մանկավարժական գործընթացը համակարգված մասերի բաժանելու փորձերը, ուստի ռեալ քայլեր կատարվեցին վերականգնելու մանկավարժության հիմնական հասկացությունների՝ ուսուցման, կրթության և դաստիարակության կապը, ուսուցումը դարձավ դաստիարակող:

գ) Սահմանափակվեց «աշակերտների ազատությունը», վերջ տրվեց իրենց ցանկությամբ «ինչ սովորել» և «ինչպես սովորել» հակամանկավարժական սկզբունքին: Մերժվեց նաև ուսուցման մեջ «ազատ դաստիարակության» տեսությունը:

դ) Վերականգնվեց սովորողներին «գիտական գիտելիքներով զինելու» և նրանց անձի ձևավորման ու զարգացման համակողմանիությունը ապահովելու մանկավարժական պահանջը:

ե) Սահմանվեցին կայուն դասացուցակ և որոշակի ժամաչափով դաս:

զ) Վերացվեցին «գիտելիքների օգտակարությունն ու անհրաժեշտությունը ժամանակով զատելու» արատավոր պրակտիկան, «պետք է սովորել այսօր, եթե դա անհրաժեշտ է, պետք չէ, եթե անհրաժեշտ չէ» հակադաստիարակչական գործընթացը:

է) Պայքար կազմակերպվեց «պրոյեկտորների» մեթոդի դեմ, որը դեն էր շպրտում մարդկության դարավոր պատմության ընթացքում ստեղծված գիտելիքներն ու ամբողջ գիտությունները, և ճանաչում էր այն, ինչն այսօր գործնական նշանակություն ուներ և այդ պահին պետք էր, ինչը սահմանափակում էր ուսուցումը միայն պահի պահանջներով և այլն[106]:

Վերոնշյալ որոշումների համաձայն՝ առաջին անգամ դպրոցներում մտցվեց՝

ա) ուսուցման այն ելակետային դրույթը, որ «աշակերտը պետք է սովորի ոչ թե իր ցանկությամբ, հետաքրքրությունների ու պահանջմունքների թելադրանքով, այլ այն, ինչ նախատեսված է պետական պարտադիր ծրագրով»: Այլ բան է, որ բուն ուսուցման, գիտելիքների հաղորդման գործընթացը նրա համար դարձվի հետաքրքիր, գրավիչ՝ նրա մեջ առաջացնելով գիտելիքներ ձեռք բերելու ցանկություն և պահանջ:

բ) հարց դրվեց դպրոցի հասարակական-արտադրողական աշխատանքը կապել ուսուցման գործընթացի հետ, մտցնել պոլիտեխնիզացիա, սովորողներին ծանոթացնել արտադրության տարրական հիմունքների հետ:

գ) առաջ քաշվեց ուսուցման գործընթացի կազմակերպման նոր գիտական մոտեցում: Ըստ դրա՝

- Ուսումնական աշխատանքը կազմակերպելու հիմնական ձևը պետք է ընտրել դասը պարապմունքների խիստ ու որոշակի դասացուցակով և աշակերտների հիմնական կազմով:

- Պետք է կազմակերպել ու խրախուսել ուսուցչի գիտահետազոտական ու ստեղծագործական աշխատանքը, աշակերտներին ճանաչելու, տարիքային, հոգեբանական և անհատական առանձնահատկությունները պարզելու և հաշվի առնելու նպատակով նրա կողմից անցկացվող գիտափորձերը:

- Պետք է կազմակերպել սովորողների գիտելիքների, կարողությունների, ունակությունների և հմտությունների համակարգված հաշվառում, ստուգում և գնահատում, դրանց որոշակի սկզբունքների ու չափանիշների՝ օբյեկտիվության, ռեալության անաչառության, գործնականության, հրապարակայնության, համակողմանիության պայմաններով ու հաշվառմամբ:

- Ուսումնական գործընթացը պետք է կազմակերպել որոշակի առարկաներին համապատասխան մեթոդական խմբերով, մեթոդների կիրառման մանկավարժական պամանների հաշվառմամբ:

- Նոր գիտական հիմքերի վրա պետք է դնել սովորողների գիտակցական կարգապահությունը՝ կարգապահության որակների «գիտակցականության», «կազմակերպվածության», «կայունության», «կամավորության» հաշվառմամբ:

1931 թ. հոկտեմբերի 3-ին ընդունվեց հատուկ որոշում՝ դպրոցներում ուսումնական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու մասին: Այդ որոշման համաձայն՝

ա) ստեղծվեցին նոր, վերափոխված ծրագրեր և հայտարարվեց ծրագրերի մրցանակաբաշխություն.

բ) տարածվեց առաջավոր մանկավարժական փորձը՝ տեղի պայմանների հաշվառմամբ.

գ) դպրոցը ուսուցչական կադրերով ապահովելու և նրանց կրթական ցենզը բարձրացնելու նպատակով մտցվեց հեռակա ուսուցման համակարգ.

դ) նորացվեց դասագրքաստեղծման գործը, դպրոց մտցվեցին «ժուռնալ-դասագրքեր», «տետր-դասագրքեր».

ե) վերացվեց ուսուցման և դաստիարակության նկատմամբ կոմպլեքսային մոտեցումը. այն դրվեց նոր հիմքերի վրա, հաշվի առնվեցին սոցիալական, հոգեբանական և մանկավարժական գործոնները.

զ) արմատավորվեցին ուսումնական աշխատանքի կազմակերպման նոր ձևեր՝ «լաբորատոր-դաս», «կինո-դաս»,«դաս-բանավեճ», «գործնական-դաս» հասկացությունները համապատասխան մեթոդական հագեցվածությամբ և այլն:

Շուտով հաստատվեցին նոր ուսումնական պլաններ, ծրագրեր, որոնք կա-

ռուցված էին առարկայական դասավանդման հիման վրա, կազմվեցին և 1931/32 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում գործողության մեջ մտցվեցին ըստ ուսումնական առարկաների կառուցված նոր ուսումնական պլաններն ու ծրագրերը:

Ահա Լեռնային Ղարաբաի հայկական դպրոցների 1933/34 ուսումնական տարվա ուսումնական պլանները.

Աղյուսակ 7

Տարրական և միջնակարգ դպրոցների 1933/34 ուստարվա ուսումնական պլանները

ա) քաղաքի տարրական և միջնակարգ դպրոցների ուսումնական պլանը (հայկական և ռուսական դպրոցների համար, 6-օրյա շաբաթ)

Առարկայի անունը	1-ին խումբ	2-րդ խումբ	3-րդ խումբ	4-րդ խումբ	5-րդ խումբ	6-րդ խումբ	7-րդ խումբ	8-րդ խումբ	9-րդ խումբ	10-րդ խումբ
Հայոց լեզու (ռուսական դպրոցներում ռուսաց լեզու)	6	6	5	5	5	4	4	3	2	2
Մաթեմատիկա	5	5	5	5	5.5	4	4	4	4	4.5
Ռուսաց լեզու (ռուսական դպրոցներում հայոց լեզու)	-	-	4	4	4	3	3	3	3	3
Հասարակագիտություն	1.5	2	2	1	1	1	-	-	-	-
Պատմություն	-	-	-	-	2	2	2	2+1	2-1.5	2
Աշխարհագրություն	-	-	2	2	2	2	2	1	1.5	-
Օտար լեզու	-	-	-	-	-	-	-	2	2	2
Ֆիզիկա	-	-	-	-	2	3	3	3	2	2
Աստղաբաշխություն	-	-	-	-	-	-	-	-	-	2
Քիմիա	-	-	-	-	-	2	2	2	2	2
Երկրաբանություն	-	-	-	-	-	-	-	-	-	1
Բնագիտություն	2	2	2	2	2	2	2	2	2	-
Պոլիտեխնիկական աշխատանք	2	2	2	2	3.5	3	4	3	3	3
Գծագրություն	-	-	-	-	-	1	1	1	-	-
Կերպարվեստ	1.5	1	1	1	1	1	1	-	-	-
Երգ, երաժշտություն	1	1	1	1	1	1	1	-	-	-
Ֆիզկուլտուրա	1	1	1	1	1	1	1	1	1	1
Ռազմագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1	1
Լենինիզմի հիմունքներ	-	-	-	-	-	-	-	-	-	1.5
Քաղաքատնտեսություն	-	-	-	-	-	-	-	-	2	-
Սովետական էկոնոմիկա	-	-	-	-	-	-	-	-	-	2
Տեխնոլոգիա	-	-	-	-	-	-	-	1	1	1
ԸՆԴԱՄԵՆԸ՝	20	20	25	25	30	30	30	30	30	30

բ) գյուղական տարրական և միջնակարգ դպրոցների ուսումնական պլանը
(7-օրյա շաբաթ, հայկական և ռուսական դպրոցների համար)

Առարկայի անունը	1-ին խումբ	2-րդ խումբ	3-րդ խումբ	4-րդ խումբ	5-րդ խումբ	6-րդ խումբ	7-րդ խումբ	8-րդ խումբ	9-րդ խումբ	10-դդ խումբ
Հայոց լեզու (ռուսական դպրոցներում ռուսաց լեզու)	7	7	6	6	6	5	5	4	3	3
Մաթեմատիկա	6	6	6	6	6	6	5	5	4	5
Ռուսաց լեզու (ռուսական դպրոցներում հայոց լեզու)	-	-	4	5	5	4	4	4	4	4
Հասարակագիտություն	2	2	2	2	2	1	-	-	-	-
Պատմություն	-	-	-	-	2	2	3	2+1.5	2+2	2
Աշխարհագրություն	-	-	2	2.5	2	2	2	1	2	-
Օտար լեզու	-	-	-	-	-	-	-	2	2	2
Ֆիզիկա	-	-	-	-	3	4	4	3.5	3	3
Աստղաբաշխություն	-	-	-	-	-	-	-	-	-	2
Քիմիա	-	-	-	-	-	2	3	2	2	2
Տեխնոլոգիա	-	-	-	-	-	-	-	1	1	1
Երկրաբանություն և հանքաբանություն	-	-	-	-	-	-	-	-	-	1.5
Բնագիտություն	2	2	2	3	3	2	2	2	2	-
Պոլիտեխնիկական աշխատանք	3	3	3	2.5	4	4	4	5	5	5
Գծագրություն	-	-	-	-	-	1	1	1	-	-
Կերպարվեստ	2	2	1	1	1	1	1	-	-	-
Երգ, երաժշտություն	1	1	1	1	1	1	1	-	-	-
Ֆիզկուլտուրա	1	1	1	1	1	1	1	1	1	1
Ռազմագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1	1
Լենինիզմի հիմունքներ	-	-	-	-	-	-	-	-	-	1.5
Քաղաքատնտեսություն	-	-	-	-	-	-	-	-	2	-
Սովետական էկոնոմիկա	-	-	-	-	-	-	-	-	-	2
ԸՆԴԱՄԵՆԸ՝	24	24	28	30	36	36	36	36	36	36

Միջնակարգ դպրոցի սույն պլանները զգալի նվաճում էին հանդիսանում նախորդ տարիների համեմատությամբ: Քաղաքային և գյուղական դպրոցներն ստանում են միասնական ուսումնական պլաններ, որոշ չափով ավելացվում է հայոց, ռուսաց լեզուներին ու մաթեմատիկային հատկացվող ժամերի քանակը[107]:

Դրա հետ միասին, սույն ուսումնական պլանները դարձյալ ունեին մի շարք էական թերություններ: Անբավարար էր հայոց լեզվին, ռուսաց լեզվին, պատմությանը, մաթեմատիկական առարկաներին հատկացվող ժամերի քանակը՝ չնայած այն բանին, որ որոշ չափով ավելացվել էին հիշյալ առարկաների ժամերը: Որպես ինքնուրույն ուսումնական առարկաներ, ուսումնական պլանում բացակայում էին հայ գրականությունը, ռուսաց գրականությունը, հայ ժողովրդի պատ-

մությունը: Դրա փոխարեն ուսումնական պլանում բավական ժամեր էին հատկացվում հասարակագիտությանը, տվյալ շրջանում որպես ինքնուրույն ուսումնական առարկաներ, իրենց չարդարացրած՝ պոլիտեխնիկական աշխատանքին և տեխնոլոգիային: Ուսումնական պլանի թերություններից պետք է համարել նաև միջնակարգ դպրոցի աշակերտության ընդբռնմանն անմատչելի այնպիսի ուսումնական առարկաների առկայությունը, ինչպիսիք են լենինիզմի հիմունքները, քաղաքատնտեսությունը, խորհրդային էկոնոմիկան և այլն:

Այսպիսին էր Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հայկական միջնակարգ և ոչ լրիվ միջնակարգ դպրոցների 1936-1940թթ. ուսումնական պլանը.

Աղյուսակ 8

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Հայկական միջնակարգ և ոչ լրիվ միջնակարգ դպրոցների
1936-1940 ուս. տարիների

հհ	Առարկաներ	Քաղաքի տարրերակ - 40 վեցօրյակ										Գյուղի տարրերակ - 34 յոթօրյակ									
		Դասարաններ										Դասարաններ									
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X
1	Մայրենի լեզու և գրակ. ընթերց.	10	10	6/4	5	6	5	4/3	1	1	1	12	12	7/5	6	7	6	4	1	1	1
2	Գրականություն	-	-	-	-	-	-	-	2	2	2	-	-	-	-	-	-	-	3	3	3
3	Լուսաց լեզու	-	-	4	4	5	5	5	2	2	2	-	-	5	5	6	6	6	3	3	3
4	Գրականություն	-	-	-	-	-	-	-	2	2	2	-	-	-	-	-	-	-	2	2	2
5	Թվաբանություն	5	5	5	5	6	-	-	-	-	-	7	7	6	6	6	-	-	-	-	-
6	Հանրահաշիվ և երկրաչափություն	-	-	-	-	-	5	4	4	5	5	-	-	-	-	-	6	5/6	6	5	5
7	Բնագիտություն	-	-	1	2	2	2	2	2	2	1*	-	-	1/2	2/3	3	3/2	2	2	2	1*
8	Պատմություն	-	-	0/2	2	2	2	2	4	4	4	-	-	0/2	2	3	3	3	4	5	5
9	ԽՍՀՄ սահմանադրություն	-	-	-	-	-	-	2	-	-	-	-	-	-	-	-	-	2	-	-	-
10	Աշխարհագրություն	-	-	1	2	2	2	2	2	2	-	-	-	2/1	3/2	3	2/3	3/2	3	2	-
11	Ֆիզիկա	-	-	-	-	-	2	2/3	3	2	3	-	-	-	-	-	2	3	3	3	4
12	Աստղաբաշխություն	-	-	-	-	-	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	-	-	-	1
13	Քիմիա	-	-	-	-	-	-	2	2	2	3	-	-	-	-	-	-	2	2	3	3
14	Օտար լեզու	-	-	-	-	2	2	1	2	1	1	-	-	-	-	2	2	1	2	1	1
15	Գծագրություն	-	-	-	-	-	1	1	1	1	1	-	-	-	-	-	1	1	1	1	1
16	Նկարչություն	1	1	1	1	1	-	-	-	-	-	1	1	1	1	1	-	-	-	-	-
17	Երգ, երաժշտություն	1	1	1	1	1	1	-	-	-	-	1	1	1	1	1	1	-	-	-	-
18	Ֆիզկուլտուրա	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
19	Ռազմական պատրաստություն	-	-	-	-	-	-	-	-	1	1	-	-	-	-	-	-	-	-	1	1
20	Գեղագրություն	2	2	-	-	-	-	-	-	-	-	2	2	-	-	-	-	-	-	-	-
	Ընդամենը՝	**20**	**20**	**20**	**23**	**28**	**28**	**28**	**28**	**28**	**28**	**24**	**24**	**24**	**27**	**33**	**33**	**33**	**33**	**33**	**33**

Նկատելի տարբերություն է գոյություն ունեցել տարրական դպրոցների և միջնակարգ ու ոչ լրիվ միջնակարգ դպրոցների 1-4 դասարանների ուսումնական պլանների միջև: Բոլորովին անհասկանալի է, թե ինչու միջնակարգ ու ոչ լրիվ միջնակարգ դպրոցների 1-4 դասարանների մայրենի լեզվին ավելի շատ ժամեր են հատկացվել (քաղաքային տարբերակով՝ 1 ժամ, գյուղական՝ 2 ժամ), քան տարրական դպրոցների նույն դասարաններում: Չէ՞ որ երկու տիպի դպրոցներն էլ նույն ծրագրով էին պարապում: Եվ, առհասարակ, ինչու՞ տարրական դպրոցների աշակերտները մայրենի լեզվից ավելի պակաս գիտելիքներ ու հմտություններ պիտի ստանային, քան միջնակարգ դպրոցի ստորին դասարանների աշակերտները:

Տարօրինակ է նաև, որ միջնակարգ ու ոչ լրիվ միջնակարգ դպրոցներում (թե քաղաքում, թե գյուղում) ռուսաց լեզվի ուսուցումը սկսվել է 3-րդ դասարանից, իսկ տարրական դպրոցներում՝ 2-րդ դասարանից: Դրանից էլ առաջացել է զգալի տարբերություն ժամերի միջև: Քաղաքային տարրական դպրոցների 2-4-րդ դասարաններում ռուսաց լեզվին հատկացվել է շաբաթական 10 ժամ, իսկ միջնակարգ դպրոցների 2-4-րդ դասարաններում՝ 8 ժամ, գյուղական տարրական դպրոցներում՝ շաբաթական 13 ժամ, միջնակարգ դպրոցների 3-4-րդ դասարաններում՝ 10 ժամ: Նույնիսկ միևնույն գյուղում կային և ոչ լրիվ միջնակարգ և տարրական դպրոցներ, մեկում ռուսաց լեզուն ավելի սակավ ժամերով էին ուսումնասիրում, քան մյուսում: Դա որոշ չափով հասկանալի կլիներ, եթե վաղուց անցած չլիներինք յոթնամյա պարտադիր ուսուցման իրականացմանը նաև բոլոր գյուղական վայրերում: Պարտուսի պայմաններում այդպիսի տարբերությունը հիմնավորված չէ:

Այդ է նաև տարրական դպրոցներում մայրենի լեզվին պակաս ժամեր տալու պատճառը:

Որոշ տարբերություն կար նաև այդ դպրոցների թվաբանության ու գեղագրության ժամերի միջև, իհարկե, դարձյալ ի վնաս տարրական դպրոցի:

Ուսումնական պլաններում ներառված առարկաների ծրագրերը (միջնակարգ և ոչ լրիվ միջնակարգ դպրոցի) ևս կազմվել են առարկայական համակարգով և տասնամյակի ընթացքում ենթարկվել զգալի փոփոխությունների:

Լուսժողկոմատի զեկուցագրերից մեկում գրված է.«Դպրոցական պրակտիկան և անցած տարվա տեսչական ստուգումները, ինչպես նաև մանկավարժական գիտահետազոտական հիմնարկների կողմից դպրոցների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ առարկայական ծրագրերը հսկայական բեկում են ստեղծել դպրոցի աշխատանքում, ամեն մի առարկայից տալով սիստեմատիկ գիտելիքների որոշակի շրջան, դպրոցը վերածելով «գիտությունների հիմունքներին» տիրապետելու հիմնական միջոցի: Սակայն դրա հետ միասին պարզվել է, որ՝ 1) ծրագրերը բավականաչափ ծանրաբեռնված են և, գլխավորապես, վերլուծական նյութերով. դրանք պահանջում են որոշակի կրճատումներ և ծրագրերի որոշ մասերի փոխադրում մի դասարանից մյուսը, 2) մի քանի ծրագրերում նկատվում է խոշոր չափով սխեմատիզմ և մերկ սոցիոլոգիզմ, իսկական գիտելիքները փոխարինված են սոցիոլոգիական ֆորմուլաներով, մասնավորապես՝ պատմության, լեզվի, գրականության և աշխարհագրության ծրագրերում»[108]:

1934-35 թվականներին լուսժողկոմատը ուղղել է ծրագրերում եղած այդ սխալների ու թերությունների մի զգալի մասը, սակայն չի կարողացել լիովին հաղթահարել դրանք: հետագայում ևս եռանդուն աշխատանք է տարվել ծրագրերի կատարելագործման ուղղությամբ:

Կենտկոմի սեպտեմբերի 5-ի որոշման հիման վրա կազմված առաջին ծրագրերը (տարրական դպրոցի) հրատարակվել են 1932-ի սկզբներին, այնուհետև այդ տարվա օգոստոսի 25-ի որոշման հիման վրա դրանք վերանայվել, փոփոխվել և հրատարակվել են 1933-ի հունվարին և նորից՝ այդ տարվա ամռանը, փաստորեն մեկ-մեկուկես տարվա ընթացքում ունենալով երեք հրատարակություն:

Ինչ տեսք են ընդունել այդ ծրագրերը երրորդ հրատարակությունից հետո: Նշենք, որ տարրական դպրոցի բոլոր ծրագրերը և 5-10-րդ խմբերի հայոց, ռուսաց և օտար լեզուների ու գրականության 1933-1934 թթ. ծրագրերը և վերոնշյալ միջնակարգ և ոչ լրիվ միջնակարգ դպրոցների ուսումնական ծրագրերը կազմել է Հայաստանի լուսժողկոմատի ծրագրամեթոդական գիտահետազոտական կայանը՝ իր համապատասխան սեկցիաների միջոցով, և այն ուղարկվել է Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմ:

Այսպիսով, ԼՂԻՄ-ի հանրակրթական դպրոցներում, սկսած 1932 թվականից, ուսումնական- առարկայական ծրագրերը գործողության մեջ մտցվեցին և մեծ առաջընթաց քայլ հանդիսացան կրթության բովանդակության սահմանման առումով, սակայն դրանք ունեին և լուրջ թերություններ:

1932 թվականի գարնան և ամռան ընթացքում ըստ այդ ծրագրերի դասավանդման կիսամյա փորձը հանգամանորեն ուսումնասիրվեց: Այդ ուսումնասիրությանը լայն մասնակցություն ունեցան ուսուցիչները, ժողովրդական կրթության բաժինները, մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատակիցները և այլն: Ընդհանրացնելով այդ ուսումնասիրության արդյունքները, Հայաստանի լուսժողկոմը 1932 թվականի օգոստոսի 25-ին ընդունեց որոշում «Տարրական և միջնակարգ դպրոցների ծրագրերի և ռեժիմի մասին»[109]: Այդպիսի որոշում ընդունեց նաև ԼՂԻՄ լուսժողկոմը 1932թ. օգոստոսի 30-ին[110]:

Այդ որոշման մեջ նշվում էր, որ նոր ծրագրերը լավացել են, սակայն դրանք ունեն զգալի թերություններ: Ամենագլխավոր թերություններն էին ուսումնական նյութերով ծանրաբեռնվածությունը, որի հետևանքով ուսումնական շատ առարկաներ ուսումնասիրվում էին մակերեսորեն, առանց գիտելիքների բավարար յուրացման և ամրապնդման. առանձին առարկաների գծով ծրագրերի միջև կապի անբավարարությունը և նույնիսկ դրա բացակայությունը, հատկապես մաթեմատիկայի, ֆիզիկայի և քիմիայի գծով. պարզունակությունը և սկզբունքային սխալների առկայությունը (առանձնապես ֆիզիկայից և բիոլոգիայից). պատմականության պակասը հասարակագիտական առարկաների գծով:

Լուսժողկոմը համապատասխան բաժիններին առաջարկեց վերանայել ուսումնական ծրագրերը առ 1933 թվականի հունվարի 1-ը, այն հաշվով, որպեսզի ապահովվեն «երեխաների կողմից գիտությունների հիմունքների իրական, ամուր և սիստեմատիկ յուրացումը, փաստերի իմացումը և ճիշտ խոսելու-գրելու, մաթեմատական վարժությունների և այլ հմտությունները»: Որոշման մեջ կային կարևոր ցուցումներ ուսումնակա աշխատանքի կազմակերպման և մեթոդների վերաբերյալ:

Դատապարտելով նախկինում տեղ գտած աղավաղումները այդ հարցերում («լաբորատոր-բրիգադային մեթոդ», «դաս-դասարանային սիստեմի թերագնահատում» և այլն), Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմը սահմանեց, որ ուսումնական աշխատանքի կազմակերպման հիմնական ձևը դասն է, սովորողների կայուն կազմով և որոշակի դասացուցակով. ուսուցման մեջ պետք է կիրառել ուսուցման նյութի սիստեմատիկ շարադրանք ուսուցչի կողմից, սովորողների ինքնուրույն աշխատանքը գրքի և դասագրքի վրա, նրանց գրավոր և գրաֆիկ աշխատանքնե-

ը, լաբորատորային աշխատանքները, փորձերի և սարքերի ցուցադրումը, էքսկուրսիաների կազմակերպումը: Ուսուցիչներն արդեն սկսեցին կրառել ուսումնական աշխատանքի կազմակերպման բազմապիսի մեթոդներ, հնարներ, միջոցներ: Արխիվային փաստաթղթերի և այլ աղբյուրների ուսումնասիրությունից պարզվում է՝ դպրոցներում նորություն էր այն, որ դասերի ժամանակ գիտելիքների բանավոր շարադրումը ուսուցչի կողմից կատարվում էր պատմելու, բացատրելու, զրույցի, իսկ բարձր դասարաններում՝ դասախոսության ձևով: Պատմելու մեթոդի արդյունավետությունը նկատի ունի ուսումնական նյութի բազմակողմանի յուրացում, գիտազննական պարագաների, տեխնիկական միջոցների ճիշտ ընտրություն և դասի ճիշտ կահավորում, ուսուցման այլ մեթոդների հետ զուգորդում: Նորություն էր նաև փորձնական դասերի կազմակերպումը, արդյունքների քննարկումը մանկավարժական խորհրդի նիստերում, ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպումը և այլն:

Հանրակրթական դպրոցներում պահպանվող արխիվային փաստաթղթերի, ժամանակակիցների հուշերի, «Խորհրդային Ղարաբաղ» թերթում լույս տեսած հոդվածների և այլ աղբյուրների ուսումնասիրության հիման վրա կոնկրետ օրինակներով ցույց տանք այդ տասնամյակում (1930-1940թթ.) մարզի մի շարք դպրոցների մանկավարժական կոլեկտիվների կատարած աշխատանքները՝ սովորողների ուսուցման, դաստիարակության պատասխանատու, բայց պատվաբեր խնդրի հաջող իրականացման գործում:

Այսպես, օրինակ՝ Ստեփանակերտի Աշոտ Ղուլյանի անվան թիվ 2 դպրոցի արխիվում պահպանված՝ ժամանակակիցների հուշերից (Սերգեյ Անդրյան, Գրիգոր Գրիգորյան, 1935-1936թ. Ստեփանակերտի կրթության բաժնի վարիչ Սարգիս Արամյան և ուրիշներ)[111] և այլ փաստաթղթերից տեղեկանում ենք, որ Ստեփանակերտի թիվ 2 առաջին աստիճանի դպրոցը հիմնադրվել է 1933-1934 ուստարում՝ 1-4-րդ դասարաններով, իսկ 1936-1937 ուստարում այն եղել է երկաստիճան 9-ամյա աշխատանքային միասնական դպրոց՝ միջնակարգ դպրոցի կարգավիճակով: Դպրոցի առաջին տնօրենն էր Սաթո Սարգսյանը: 1934-1940 թվականներին դպրոցում դասավանդած շնորհալի մանկավարժները (Ելենա Աղաջանյան, Գրիգոր Գրիգորյան, Սաթո Սարգսյան, Սուրեն Հայրապետյան, որը միաժամանակ Ստեփանակերտի կրթության բաժնի վարիչն էր 1936-1938 ուստարում, և ուրիշներ) իրենց դասավանդման գործընթացում մեծ տեղ են հատկացրել սովորողների ինքնուրույն աշխատանքի ունակությունը զարգացնելու ձևերին և մեթոդներին[112]: Ամենօրյա դասին նախապատրաստվելիս փորձառու ուսուցիչները խելամտորեն ընտրում էին այն առաջատար կրթական, դաստիարակչական խնդիրները (իսկ գիտենք, որ այդ տասնամյակում մեր դպրոցի պրակտիկայում դեռևս կային լուրջ թերություններ՝ «Լուսժողկոմատի սիստեմում եղած մանկաբանական խեղաթյուրումները»), որոնք որոշում են դասի բովանդակությունը, գաղափարը, մտահղացումը:

Դպրոցի պատմությանը վերաբերող փաստագրական նյութերի, շրջանավարտների հուշերի ուսումնասիրություններից կարելի է եզրահանգել, որ ժամանակի առումով պրակտիկայում ճանաչված վերոնշյալ ուսուցիչները և ուրիշներ դասի կրթական առաջատար խնդիրներից էին համարում՝

ա) ուսումնական նյութի պլանավորումը աշակերտների իրական հնարավորություններին համապատասխան.

բ) աշակերտներին համակարգված գիտելիքներով, կարողություններով զինելը.

գ) ուսումնական նյութի ամրապնդման, կրկնության ու տնային առաջադրանք-

ների համար վարժությունների կատարումը.

դ) դասի ընթացքում աշակերտների գիտելիքների լրացումը, հատուկ և համաուսումնական կարողությունների համակարգումը.

ե) աշակերտների ազգային, գաղափարաքաղաքական, բարոյական դաստիարակության իրականացումը.

զ) ազգային արժանապատվության, հայրենասիրության և այլ որակների ձևավորումը և այլն:

Ուշագրավ են նաև այդ ուսուցիչների կողմից կազմակերպված փոխադարձ դասալսումները, արդյունքների վերլուծությունը ուսուցչական խորհրդակցությունում և մեթոդական խորհուրդներում՝ նպատակաուղղված սկսնակ ուսուցիչներին, դասը արդյունավետ կազմակերպելու միտումով:

ԼՂԻՄ լուսբաժնի դպրոցական տեսուչ Հովհաննես Ղուկասյանի հաշվետվությունից նաև տեղեկանում ենք, որ 1934-1935 ուստարում մարզի հանրակրթական առաջին և երկրորդ աստիճանի դպրոցներում (Մարտունու շրջանի Ճարտարի, Գիշու, Սոսի, Կաղարծու, Խնուշինակի, Հաղորտու, Հադրութի շրջանի Տողի, Տումու, Ազոխի, Մեծ Թաղլարի, Թաղասեռի, Շուշիի շրջանի Ղարաղշլաղի, Սզնեքի, Քարին տակի, Շոշի, Մարտակերտի շրջանի Կուսապատի, Մոխրաթաղի, Վաղուհասի, Մեծ շենի, Ասկերանի շրջանի Բալուջայի, Խանաբադի, Նորագյուղի և այլ դպրոցներ) բարձր հիմքի վրա էին դրված սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորումն ու կազմակերպումը: Հաշվետվության մեջ շեշտվում են վերոնշյալ դպրոցներում կատարված աշխատանքները.

- ուսումնական տարվա աշխատանքային պլանը կազմված է ըստ կիսամյակների.

- դպրոցներում յուրաքանչյուր կիսամյակում մանկավարժական խորհրդի նիստում ընդհանրացվում է սովորողների առաջադիմությունը, նշվում նաև թերությունները.

- դպրոցներում ուումնական տարվա նախապատրաստական աշխատանքները պլանավորում են տնօրենները և քննարկում մանկավարժական խորհրդում.

- դպրոցներում լավ են պլանավորված սովորողների արտաուսումնական աշխատանքները՝ էքսկուրսիաները, երեկույթները, ցերեկույթները, դպրոցական ցուցահանդեսները և այլ միջոցառումներ կազմակերպվում են պատշաճ մակարդակով.

- դպրոցներում հրավիրվում են նաև ծնողական ժողովներ, քննարկվում աշակերտների առաջադիմության, կարգապահության և այլ բնույթի հարցեր և այլն[113]:

ԼՂԻՄ լուսբաժնի վարիչ Ա.Վարդանովի (Վարդանյան) հաշվետվությունում կարդում ենք, որ 1937-1938 ուստարում մարզում մի շարք դպրոցներ իրենց առաջավոր մանկավարժական ուսումնական աշխատանքի կազմակերպման մեթոդներով ու ձևերով օրինակ են ծառայել մյուս դպրոցների մանկավարժական կոլեկտիվների համար: Այդ ուղղությամբ զգալի աշխատանք են կատարել Մարտունու շրջանի առաջավոր ուսուցիչներ Վարդան Բալայանը (Աշանի դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ), Արտաշես Գասպարյանը (Թաղավարդի դպրոցի մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ), Հադրութի շրջանի առաջավոր ուսուցիչներ Սմբատ Աբրահամյանը (Մեծ Թաղլարի, Էդիլլուի դպրոցներում դասավանդել է քիմիա և կենսաբանություն), Մարտակերտի շրջանի առաջավոր ուսուցիչներ Աբգար Տեր Գրիգորյանը (Վանքի, Ծմակահողի դպրոցներում դասավանդել է ռուսաց լեզու), Վաղո Աղաբեկյանը (հայոց լեզու և գրականություն է դասավանդել

Հարգոմերի, Հաթերքի, Զագլիկի դպրոցներում), Ասկերանի շրջանի առաջավոր ուսուցիչներ Սերգեյ Անդրյանը (Դաշբուլաղի, Դահրավի, Խանաբադի դպրոցներում դասավանդել է պատմություն, աշխարհագրություն), Սամվել Ղուկասյանը (Շոշ գյուղում դասավանդել է հայոց լեզու և գրականություն) և շատ ուրիշներ[114]: Հաշվետվությունում միաժամանակ նշվում է, որ այդ դպրոցներում հաճախակի կազմակերպում են փորձնական դասեր, մանկավարժական խորհրդի նիստերում քննարկվում են մեթոդմիավորման աշխատանքի, աշակերտների առաջադիմության, գրավոր աշխատանքի, ռուսաց լեզվի դասավանդման դրվածքի և ներդպրոցական կյանքին վերաբերող այլ հարցեր: Ուսուցումը լավ հիմքերի վրա էր դրված նաև Մարտակերտի, Մարտունու, Հադրութի շրջանների, ինչպես նաև մարզի մի շարք այլ գյուղական դպրոցներում (Կուսապատի, Առաջաձորի, Մեծ Թաղլարի, Տումու, Ճարտարի, Գիշու, Չանախչու, Շոշի, Սարուշենի, Կարմիր գյուղի, Քարին տակի, Բալուջայի և այլ դպրոցներում: Մարզլուսբաժնի վարիչի հաշվետվություններից տեղեկանում ենք նաև, որ մարզի հանրակրթական դպրոցներում կատարված աշխատանքներն ընդհանրացվում են յուրաքանչյուր ուսումնական տարում հրավիրված շրջանային ուսուցչական խորհրդակցություններում (այդ մասին կնշվի հաջորդ բաժիններում):

Քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանի և ԼՂԻՄ լուսժողկոմները ընդունեցին նաև մի շարք որոշումներ սովորողների գիտելիքների գնահատման, քննությունների կազմակերպման և դպրոցական դասագրքերի մասին:

Այսպես, 1933 թ. հունվարի 16-ին ԼՂ լուսժողկոմի ընդունած որոշման մեջ պարունակում էին սկզբունքային ցուցումներ սովորողների գիտելիքների ստուգման, գնահատման վերաբերյալ: Դատապարտելով գիտելիքների այնպիսի հաշվառումը, ինչպիսին ուսուցչի կողմից ամբողջ խմբին առաջադրանք տալն է, լուսժողկոմը հանձնարարում էր անցկացնել սովորողների գիտելիքների անհատական համակարգված հաշվառք: Անհրաժեշտ էր համարվում տարեվերջին բոլոր աշակերտների համար ստուգողական քննությունների սահմանումը: 1933 թվականի ապրիլի 16-ին ընդունված որոշման համաձայն՝ հանրակրթական դպրոցներում առաջին անգամ անցկացվեցին ստուգողական, փոխադրական քննություններ, և այդ տարվանից դրանք մտան դպրոցի ամենամյա կարգուկանոնի մեջ: Հաջորդ տարիներին (1934 թվական և հետագայում) Լուսժողկոմատի տեսուչները (լիազորները) իրենց հաշվետվություններում նշում էին դպրոցի մեծ հաջողությունները սովորողների գիտելիքների մակարդակի բարձրացման բնագավառում:

Այդ տասնամյակում դպրոցի առջև ծառացել էին ոչ միայն կրթության և ուսուցման բնույթի, բովանդակության, ուսումնական պլանների, ծրագրերի, դրանց կառուցվածքի, այլև դասագրքեր կազմելու հարցերը: 1933 թ. սկզբներին հրապարակվեց Հայաստանի լուսժողկոմի որոշումը դպրոցական դասագրքերի մասին[115]:

Դպրոցի մասին կառավարության և լուսժողկոմի որոշումների իրականացման գլխավոր պայմաններից մեկը որակյալ ու կայուն դասագրքերի հրատարակումն էր: Նոր դասագրքերը պետք է ապահովեին գիտությունների հիմունքների սիստեմատիկ ուսուցումը և միաժամանակ համապատասխանեին նրանց ներկայացվող մանկավարժական-դիդակտիկական պահանջներին: Հումանիտար առարկաների դասագրքերը, այդ ամենից բացի, պետք է ապահովեին սովորողների քաղաքական- գաղափարական դաստիարակությունը:

Հետագա տարիներին նույնպես Հայաստանի կոմկուսի Կենտկոմը և հանրապետության լուժողկոմը մի շարք որոշումներ են ընդունել դասագրքերի հրատա-

ռակման ու վաճառքի կազմակերպման, մասնավորապես պատմության ու աշխարհագրության դասագրքերի մասին:

Ուղեցույց ունենալով այդ որոշումներն ու ցուցումները, Հայաստանի կուսակցական և պետական վերադաս օրգանները և լուսժողկոմատը կոնկրետ միջոցներ են ձեռնարկել հանրապետությունում նոր, կայուն դասագրքերի ստեղծման ու հրատարակման ուղղությամբ: Այդ առթիվ համապատասխան որոշումներ են ընդունել Հայաստանի կոմկուսի Կենտկոմը և Ժողկոմխորհը:

Ուրախությամբ պետք է նշենք, որ Խորհրդային Հայաստանում, դեռ Կենտկոմի 1931 թ. սեպտեմբերի 5-ի պատմական որոշումից էլ առաջ, լուսժողկոմատի ղեկավար ընկերների կողմից լուրջ մոտեցում է հանդես բերվել դասագրքերի նկատմամբ:

Դեռևս 1931թ. հունիսին «Խորհրդային Հայաստան» օրաթերթում հրապարակված «Դպրոցական ծրագրերի ու դասագրքերի վերակառուցման մասին» հոդվածում լուսժողկոմ Ա.Եղիազարյանը ընդգծել է, որ «Խոշոր և վճռական դեր ունեն ծրագիրն ու դասագրքերը ազգային դաստիարակության ասպարեզում»[116]:

Կենտկոմի որոշումներից հետո Հայաստանի լուսժողկոմատը համախմբել է հանրապետության բոլոր կարող ուժերին՝ համապատասխան դասագրքեր ստեղծելու նպատակով: Սակայն ծրագրերում հաճախակի տեղի ունեցող փոփոխությունները բացասաբար են անդրադարձել նաև նոր դասագրքերի պատրաստման ու հրատարակման ընթացքի վրա:

1933թ. սկսվել է կայուն դասագրքերի հրատարակությունը, և 1-2 տարի հետո Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի գրեթե բոլոր տարրական և ոչ լրիվ միջնակարգ դպրոցներն ապահովված են եղել այդպիսի դասագրքերով:

Սակայն հիմնական խնդիրը դեռևս մնացել էր չլուծված: Դա դասագրքերի որակի հարցն էր: Առանձնապես խոր անհանգստություն են պատճառել մայրենի լեզվի ու գրականության դասագրքերը, որոնք այդ ժամանակ դեռևս չեն բավարարել ներկայացվող պահանջները:

Խոսելով մայրենի լեզվի և գրականության դասագրքերի որակի մասին, լուսժողկոմ Ա.Եղիազարյանը 1936թ. օգոստոսին նշել է, որ չնայած վերափոխված ծրագրերի համաձայն փոփոխվել են նաև այդ առարկաների դասագրքերը, այնուամենայնիվ, դրանց որակը դեռևս մնում է ցածր: Այդ է պատճառը, որ «միջնակարգ դպրոցի աշակերտները բավականաչափ չեն ծանոթացել հայ դասական գրականության, ինչպես նաև նախախորհրդային և խորհրդային շրջանի անվանի գրողներին: Աշակերտները հիմնավոր ծանոթություն չունեն ռուսական և եվրոպական դասական գեղարվեստական ստեղծագործության մասին»:

Դասագրքերում շատ մեծ տեղ էր տրված նաև ռուսական խորհրդային գրականությանը…

1935-36 ուստարվա համար լուսժողկոմատը և Հայպետհրատը լույս են ընծայել 67 անուն դասագիրք, որոնցից 25 անուն թարգմանական (մաթեմատիկա, քիմիա, ֆիզիկա, բնագիտություն, պատմություն և այլն), իսկ մնացած 42-ը՝ ինքնուրույն[117]: Դրանց թվում էին հայոց լեզվի ու գրականության, ռուսաց լեզվի ու գրականության, օտար լեզուների, Հայաստանի աշխարհագրության և հայ ժողովրդի պատմության դասագրքերը: 12 անուն դասագիրք հրատարակվել է քրդերեն լեզվով: Լեռնային Ղարաբաղի հայկական դպրոցների համար դասագրքեր են ստացվել Հայաստանից իսկ ադբեջանական դպրոցների համար՝ Ադրբեջանից:

Այսպիսով, 30-ական թվականներին ոչ միայն հաղթահարվել են դասագրքերի

թերագնահատման նախկինում եղած տրամադրությունները, այլև մեծ աշխատանք է տարվել բոլոր առարկաների գծով կայուն դասագրքեր ստեղծելու ուղղությամբ: Ճիշտ է, այդ դասագրքերը դեռևս զերծ չեն եղել լուրջ սխալներից ու թերություններից, բայց որակով հիմնովին տարբերվել են նախորդներից: Այդ գործում վճռական դեր են խաղացել Հայաստանի կուսակցության ու կառավարության, ԼՂ մարզկոմի և լուսժողկոմի համապատասխան որոշումները, ինչպես նաև լուսավորության մարմինների ձեռնարկումները:

Հարկ է նշել, որ այդ տասնամյակում (1930-1940թթ.), ինչպես Հայաստանի, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավմանը խանգարում էին, այսպես կոչված, «մանկաբանները», որոնք փորձում էին յուրացնել մանուկների ուսումնասիրության, նրանց դպրոց ընդունելու հարցի վճռման և դպրոցական կյանքի այլ կարևորագույն պրոբլեմների լուծման մենաշնորհը:

«Մանկաբանությունը»՝ որպես հոգեբանության կիրառական ճյուղերից մեկը, զբաղվում էր անձի ձևավորման «բնական գործոնի» ժառանգական, բնախոսական և անհատական առանձնահատկությունների հաշվառմամբ և ուսումնական գործընթացում նրանց առաջադիմության, կարողությունների, ուսանկությունների և հմտությունների պարզման և բանականության հիմքի վրա երեխայի ապագայի կանխագուշակման հարցերով: Դեռևս մատերիալիստական գաղափարախոսության թույլ զարգացման պայմաններում «մանկաբանները» վերահսկում էին ուսումնական գործընթացը և ուսուցչին զրկում իր սաների հետ անմիջական աշխատանք կատարելու հնարավորություններից: «Մանկաբանները» երեխայի ճակատագիրը ֆատալիստորեն պայմանավորում էին կենսաբանական և սոցիալական գործոններով, ժառանգականությամբ և միջավայրի ազդեցությամբ, իսկ խորհրդային դպրոցը՝ դաստիարակությամբ: Ստեղծված հակասությունն ուներ ոչ միայն գիտական, այլև կազմակերպչական նշանակություն, և դրանց վերանայումը օրակարգի հարց էր:

Հայաստանում լուրջ աշխատանքներ տարվեցին նաև բարձրագույն դպրոցի գործունեության կայունացման և ամրապնդման ուղղությամբ:

1931 թվականը համարվում է մանկավարժական ինստիտուտում ուսանողական գիտական ընկերության (ՈւԳԸ) ծննդյան տարի: Բուհը շահագրգռված էր ապագա ուսուցչի անձնային և մասնագիտական որակները ախտորոշելու նպատակով անդրադառնալ մարդու հոգեկան ներաշխարհի նրբություններին, որին չէին կարող նպաստել միայն կարդացվող դասախոսությունները: Անհրաժեշտ էր նաև ուսանողական ինքնուրույն ստեղծագործական աշխատանք: Այն կարող էին իրականացնել և իրականացրին ուսանողական գիտական ընկերությունները(ՈւԳԸ): Այդ ընկերությունների հիմնադրման և կազմակերպման գործում լուրջ աշխատանք կատարեց դասախոս, հոգեբան ու մանկավարժ, պրոֆեսոր Մարիամ Լիսիցյանը:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հոգեբանության գծով ուսանողական գիտական ընկերությունը և նրա գիտական գործունեությունը հիմք հանդիսացան հիմնելու մանկավարժական ինստիտուտի հոգեբանության պրոբլեմային լաբորատորիան:

Սակայն ինստիտուտի ուսանողական ընկերությունը ընկավ «մանկաբանների» ազդեցության տակ:

Դպրոցներում մանկավարժական խորհուրդներին զուգահեռ սկսում են գործել «մանկաբանների կազմակերպությունները»: Նրանք նպատակ էին հետապնդում

բիոսոցիալական տեսանկյունից ապացուցելու աշակերտների չառաջադիմելու պատճառները կամ նրանց վարքագծի առանձին թերությունների ժառանգական և սոցիալական պայմանավորվածությունները: Եվ այդ ամենը փնտրում էին իր՝ աշակերտի, նրա ընտանիքի, ծնողների, սոցիալական միջավայրի ազդեցությունների մեջ:

Սակայն 1936 թվին այն մերժվեց պետության ու կուսակցության կողմից, որպես «հակագիտական» մանկավարժական ուղղություն:

Բայց, ի պատիվ մանկավարժական ինստիտուտի, պետք է նշել, որ նրա մանկավարժական գիտական կորիզը (պրոֆեսորներ Գ.Էդիլյան, Ա.Շավարշյան, Մ.Սանթրոսյան և այլոք) դիմադրություն էր ցույց տալիս «մանկաբանության» դեմ կազմակերպված պայքարին և երկար ժամանակ այն ծածուկ մատուցում էր ուսանողությանը, մինչև վրա հասան լավագույն ժամանակները և անձի ձևավորման հիմնախնդիրը (բնական՝ ժառանգականությունը, սոցիալական՝ միջավայրի ազդեցությունը և մանկավարժական՝ դաստիարակությունը) ստացավ իր իսկական գիտական և ժամանակակից մեկնաբանումը:

- «Մանկաբանությունը» հանվեց դպրոցից և ուսուցչին հնարավորություն տրվեց անձամբ, սեփական հետազոտությամբ ճանաչել աշակերտին և նրա հետ կենդանի գործունեությամբ լուծել դպրոցի առջև դրված ուսումնադաստիարակչական աշխատանքի հարցերը[118]:

- Արմատապես վերակառուցվեց դպրոցական գործընթացը.

ա) դասարանները կոմպլեկտավորվեցին երեխաների հաստատուն կազմով,

բ) սահմանվեց կայուն դասացուցակ,

գ) վերանայվեց մեթոդական համակարգը. այն բխեց՝

- առարկայի բնույթից,
- դասարանի սովորողների մակարդակից,
- ուսուցչական կոլեկտիվի կրթական և ինտելեկտուալ մակարդակից,
- մանկավարժական- հոգեբանական պայմանների հաշվառումից:

դ) ընդունվեց և գործածության մեջ դրվեց գնահատման հինգբալյան համակարգը:

Այդ տասնամյակում չնայած դպրոցներում, ուսումնական հաստատություններում տեղ էին գտել լուրջ թերություններ («Մանկաբանական խեղաթյուրումները»), այնուամենայնիվ ժամանակի առաջավոր մանկավարժների (Մ.Սանթրոսյան, Աբ.Մովսիսյան, Ար.Շավարշյան, Գր.Էդիլյան, Ս.Դավթյան, Ղարաբաղում՝ Ա.Քամալյան, Լ.Վարդունի, Առ.Առաքելյան, Գր,Գրիգորյան, Ս.Հայրապետյան և ուրիշներ) եռանդուն գործունեության շնորհիվ Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում դպրոցն ապրում էր մանկավարժական որոշումների բուռն շրջան. ամեն ինչ արվում էր ժողովրդական կրթությունը, նոր գաղափարախոսությունը աճող ու զարգացող ժողովրդական տնտեսության շահերին համապատասխանեցնելու համար: Այդ կապակցությամբ.

ա) դպրոցական գործը, սովորողների ուսուցման, կրթության ու դաստիարակության հարցերը կազմակերպվեցին համալիր մոտեցման սկզբունքով: Հաշվի էին առնվում.

- համալիր մոտեցման հիմնական գծերը,
- համալիր մոտեցման պահանջները,
- համալիր մոտեցման խնդիրները,
- դաստիարակության ներգործության նպատակների և ուղղությունների միասնությունը

- սոցիալական, գաղափարական, կազմակերպական գործոնների հաշվառումը,

- հարցերի նկատմամբ գիտական մոտեցումը:

բ) օրակարգում դրվեցին «բնություն- մարդ- աշխատանք- հասարակություն» մոդելը, բնության և հասարակության օրենքներով երեխայի դաստիարակությունը կազմակերպելու սկզբունքները:

գ) այդ ընթացքում ներդրվեցին և գործնականում կիրառվեցին տարբեր հասարակարգերում «փորձություն» անցած մի շարք տեսություններ՝ «Դալտոն- պլան» կամ պրոյեկտների մեթոդ, լաբորատոր բրիգադային մեթոդ, մանհեյմյան համակարգ և այլն:

Մանկավարժական որոնումների բուռն շրջանում (1930-1940թթ.) դպրոցն ուսումնական աշխատանքում առաջնորդվում էր մի հիմնական սկզբունքով. ոչ թե դասարանից դասարան տեղափոխվող աշակերտներ, այլ գրագետ, կյանքին մոտ կանգնած քաղաքացիներ: Այդ կապակցությամբ ուսումնական գործի կազմակերպման մեջ ստեղծվում են մոտեցման տարբեր ձևեր.

ա) փորձարարական- ցուցադրական դպրոցներ, որտեղ կատարվում էին գիտական հետազոտություններ, բնական գիտափորձեր: Հիմք էր դրվում մանկավարժական գիտափորձի, գործնական կիրառում են ստանում գիտական հետազոտության մեթոդներ:

բ) դպրոցում արմատավորվում են ուսուցման ակտիվ, խմբային (ինտերակտիվ) մեթոդները, որոնք օգնում են ուսումնական աշխատանքի կազմակերպմանը ավելի շատ աշակերտներ ընդգրկելուն: Հետագայում դա արվում է, այսպես կոչված, «Լիպեցկյան փորձի» հիմքում (այդ մասին կնշվի հաջորդ բաժնում):

գ) արմատավորվում են սովորողների առաջադիմության ստուգման և գնահատման նոր սկզբունքներ, այսինքն մշակվում են գնահատման նոր սկզբունքներ (օբյեկտիվ, ռեալ, գործնական և համակարգված, հրապարակային, համակողմանի, շերտավորված, տարբերակված և այլն): Գնահատման այդ չափանիշների հիման վրա կարգավորվում է փոխադրումների հարցը:

դ) մանկավարժ-գիտնականների նախաձեռնությամբ հիմնադրվում է որոնողական մեթոդների շարք, որոնք օգնում են սովորողներին, անկախ տարիքից, սեփական որոնումներով ու փորձերով գտնել ու բացահայտել նոր ճշմարտություններ: Այդ նոր մեթոդը իսպառ մերժում էր գիտությունները պատրաստի ձևով ավանդելը: Հիմնք էր դրվում պրոբլեմային ուսուցմանը[119]:

Այսպիսով, վերոհիշյալ համառոտ շարադրանքից էլ կարելի է եզրակացնել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում՝ չնայած կրթական համակարգում տեղ են գտել որոշ թերություններ, աղավաղումներ, այնուամենայնիվ Լեռնային Ղարաբաղի ժողկրթության տեղական մարմինները, դպրոցների մանկավարժական խորհուրդները և ուսուցչությունը մեծ եռանդով ձեռնամուխ եղավ աճող սերնդի կրթության և դաստիարակության գծով Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմների որոշումներն ու կանխագծումները իրականացնելու գործին: Անշուշտ, Լեռնային Ղարաբաղի դպրոցի պատմության զարգացման այս երկու տասնամյակում (1923-1940թթ.) զգալի աշխատանք է տարվել նաև ուսուցչական կադրերի պատրաստման ու որակավորման ուղղությամբ (այդ մասին կնշվի հաջորդ բաժնում):

6. Ուսուցչական համագումարները և կոնֆերանսները: Մանկավարժական կադրերի պատրաստումը և վերապատրաստումը (1920-1940թթ.)

Քննարկվող ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի ժողովրդական կրթության կազմակերպման և նրա հիմունքների մշակման գործում որոշակի դեր են խաղացել լուսավորության բնագավռի աշխատողների առաջին համագումարները, որոնք տեղի են ունեցել քաղաքական սուր պայքարի պայմաններում: Դրանք միաժամանակ հանդիսացել են այն հարթակները, որոնց միջոցով պրոպագանդվել են խորհրդային իշխանության և կուսակցության գաղափարներն ու ծրագրերը: Դրանցում ուսուցչությունն իր վերաբերմունքն է արտահայտել խորհրդային իշխանության նկատմամբ:

Լեռնային Ղարաբաղի ուսուցիչների ճնշող մեծամասնությունը մեծ խանդավառությամբ ողջունեց խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում: 1920թ. դեկտեմբերի 19-ին Երևան քաղաքում տեղի է ունեցել ուսուցչական ընդհանուր ժողով, որին մասնակցել են 81 ուսուցիչներ[120]: Նրանք իրենց լիակատար պատրաստակամությունն են հայտնել բովանդակ ուժերով աջակցելու նաև Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության շինարարական և ստեղծագործական աշխատանքին՝ դպրոցական և հասարակական ասպարեզում: 1921թ. հունվարի 14-ից մինչև 17-ը Երևանում կայացավ առաջին ուսուցչական համագումարը, որի օրակարգում հետևյալ հարցերն էին.

1. Լուսժողկոմ Ա.Հովհաննիսյանի զեկուցումը «Խորհրդային Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի լուսավորության ընդհանուր նպատակների և կազմակերպման մասին»:

2. Գ.Էդիլյանի (սոց. դասավարչության նախագահ, իսկ 1924-1926թթ.՝ ԼՂԻՄ սոց. դասավարչության նախագահ) զեկուցումը՝ «Աշխատանքային միասնական դպրոցի զարգացման պատմությունը»:

3. Ա.Շավարշյանի (դպրոցական բաժնի տեսուչ) զեկուցումը «Աշխատանքային դպրոցի հոգեբանական և սոցիալական հիմունքների մասին»:

4. Մ.Դուրգարյանի զեկուցումը «Լուսժողկոմատի նախադպրոցական բաժնի գործունեության և առաջիկա անելիքների մասին» և այլն:

Համագումարում քննարկված բոլոր զեկուցումներում ու ելույթներում առաջ քաշված հիմնարար դրույթներն ու որոշումները բովանդակային առումով ելակետ են ունեցել նաև ԼՂԻՄ նորաստեղծ լուսժողկոմատի համար, ինչպես նաև այդ առթիվ Հահաստանի լուսժողկոմի ժողովներում ու համագումարներում առաջադրված խնդիրներն ու եռամյա կրթական համակարգի փորձը:

Այդ ուղղությամբ ակտիվ աշխատանք են ծավալում Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմատը, տեղական կուսակցական կազմակերպությունները և հեղկոմը: Այսպես, 1923թ. օգոստոսի 22-ին Հադրութում տեղի ունեցավ Դիզակի շրջանի գյուղերի հեղկոմների նախագահների, ուսուցիչների անդրանիկ համագումարը (ուսուցիչների առաջին ընդհանուր ժողով), որտեղ քնարկվեցին մարզի կրթական գործի զարգացման խնդիրները[121]:

Համագումարի օրակարգում հետևյալ հարցերն էին.

1. Լուսժողկոմ Արշավիր Քամալյանի զեկուցումը « Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմի առաջիկա անելիքների մասին»:

2. Առաքել Առաքելյանի (լուսժողկոմի տեղակալ) զեկուցումը «ԼՂԻՄ հանրակրթական դպրոցի ուսուցչական կադրերի պատրաստման և վերապատրաստման մասին»:

3. Լևոն Վարդունու (լուսժողկոմի դպրոցական բաժնի տեսուչ) զեկուցումը «Մարզում նախադպրոցական հիմնարկների և մանկատների կազմակերպման մասին»:

4. Արամ Մուշեղյանի (Հադրութի կրթության բաժնի վարիչ) զեկուցումը «Շրջանի դպրոցական գործի մասին» և այլն:

Ուսուցիչների անդրանիկ համագումարում լսված և քննարկված բոլոր զեկուցումների առթիվ ընդունվել են հատուկ բանաձևեր, որոնցից մի քանիսի բովանդակությանը համառոտակի կծանոթացնենք ընթերցողին:

Լուսժողկոմի զեկուցման առթիվ ընդունված բանաձևում համագումարը հավանություն է տվել կրթական համակարգի վերափոխման ասպարեզում լուսժողկոմատի վարած քաղաքականության, սահմանել կրթության համակարգը և նոր դպրոցի հիմնական սկզբունքները:

Կրթական համակարգի հիմքում ընկած էր նախադպրոցական կրթությունը, որն ընդգրկում էր 6-8 տարեկան երեխաներին: Բուն աշխատանքային հանրակրթական դպրոցը բաժանվում էր երկու աստիճանի. առաջին աստիճանի դպրոցն ուներ հնգամյա դասընթաց և ընդգրկում էր 8-13 տարեկան երեխաներին, իսկ երկրորդ աստիճանի դպրոցը՝ չորսամյա դասընթաց՝ 13-17 տարեկան պատանիների ընդգրկումով: Այդ երկու աստիճանների միջև պետք է ապահովի «միության սկզբունքի հաստատումը»[122], այսինքն՝ ծրագրային միասնականությունն ու հաջորդականությունը:

Այս սկզբունքի հաստատումն ու պահպանումը ունի չափազանց կարևոր նշանակություն և կազմում է խորհրդային դպրոցի բնորոշ գծերից մեկը՝ նրա հիմնադրման օրվանից մինչև 1988 թվականը: Անշուշտ, մեր ժամանակներում գնահատվեցին նախորդ կրթկան համակարգը և նրա առավելությունները: Ծրագրային միասնականությունն ապահովում է աշակերտների անարգել անցումը կրթական մի աստիճանից մյուսը, առաջին աստիճանի դպրոցից՝ երկրորդ աստիճանի դպրոցը և այլն:

Այդ սկզբունքի հռչակումով համագումարը ըստ էության մերժել է անցյալի տարբեր տիպի դպրոցների միջև գոյություն ունեցող անջատվածությունն ու կտրվածությունը, որոնք ամբողջովին բխում էին հին հասարակարգի (ցարական կառավարության) շահերից և արհեստական պատնեշ են ստեղծում աշխատավորների երեխաների համար, արգելելով վերջիններիս անցումը դեպի կրթական ավելի բարձր տիպի հաստատությունները:

Լեռնային Ղարաբաղում ժողովրդական կրթության կազմակերպման վերաբերյալ համագումարի ընդունած որոշման մեջ ասված էր.

ա) «Ի նկատի ունենալով, որ մարզի գավառներում գործում են քիչ թվով դպրոցներ և խոր գիտակցելով կրթության անհրաժեշտությունը, պետք է ուսումը գավառներում դարձնել պարտադիր երկու սեռի համար, դպրոցներն ապահովել որակյալ ուսուցչական կադրերով, յուրաքանչյուր գյուղում բացել դպրոց, կառուցել դպրոցական շենքեր, ոչ մի ջանք ու միջոց չխնայել լուսավորության գործի համար.

բ) Դպրոցներն ապահովել ուսումնական ծրագրերով, դասագրքերով, ձեռնարկներով.

գ) Դպրոցներում կազմակերպել մանկավարժական խորհուրդներ.

դ) Բարելավել ուսուցիչների նյութական վիճակը.

ե) Կազմակերպել ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, որոնք պետք է ունենան իրենց հատուկ ծրագրերը հետևյալ բաժիններով. կազմակերպչական-վարչական, գիտական-մանկավարժական, քաղաքական-հասարակական և այլն…»[123]:

Ուսուցչական համագումարը մեկ անգամ ևս հաստատել է, որ խորհրդային հանրակրթական դպրոցը պետք է լինի աշխարհիկ դպրոց, որտեղ չեն կարող ունենալ կրոնական առարկաներն ու ծիսակատարությունները, որ այն «լինելու է երկու սեռի երեխաների համար, հանրամատչելի և ձրի»[124]:

ԼՂ լուսժողկոմատի տեղակալ Առաքել Առաքելյանի զեկուցման մեջ ընդգծվում է, որ դպրոցները բավարարված չեն որակյալ մանկավարժական կադրերով, հին ուսուցիչների մի մասն էլ ի վիճակի չէին բավարարելու ժողովրդական կրթության վերակառուցման պահանջները: «Կրթական գործին նվիրյալ մեր ուսուցիչները,- ասում է Ա.Առաքելյանը,- պետք է ակտիվորեն պայքարեն ուսուցիչների այն փոքրաթիվ խավի դեմ, որը թշնամաբար էր վերաբերվում մեր դպրոցի արմատական վերակառուցմանն ու նոր՝ խորհրդային դպրոցի ամենաառաջավոր սկզբունքներին, աճող սերնդի կրթության ու դաստիարակության գործին: Անհրաժեշտ է վերապատրաստել եղած ուսուցչական կադրերը, պարզաբանել նրանց նոր դպրոցի առջև դրված նոր խնդիրները»[125]:

Համագումարը հատուկ որոշում է ընդունել նաև նախադպրոցական կրթության մասին, որի առթիվ զեկուցել է լուսժողկոմի դպրոցական բաժնի տեսուչ Լևոն Վարդունին: Քննարկելով այդ հարցը, համագումարը նախ և առաջ ընդգծել է նախադպրոցական կրթության կարևորությունը, մի բան, որ աչքաթող էր արված նախկինում:

«Ժողովրդական լուսավորության գործում,- ասված է համագումարի որոշման մեջ,- սկզբնական և անհրաժեշտ աստիճանի է նախադպրոցական կրթությունը, որի նպատակն է ստեղծել մանկական հասակի բոլոր պահանջները բավարարող պայմաններ երեխայի ֆիզիկական, ինտելեկտուալ և սոցիալական դաստիարակության համար: Միաժամանակ նախադպրոցական կրթությունը նախադուռն է միասնական աշխատանքային դպրոցի շղթայում»[126]:

Ջերմորեն ողջունելով ԼՂ լուսժողկոմի նախաձեռնությունը նախադպրոցական հասակի երեխաների դաստարակության գործը կազմակերպելու ասպարեզում և ընդգծելով, որ ցարական կառավարության օրոք «ոչ մի ուշադրություն չի դարձվել նախադպրոցական դաստիարակության վրա», համագումարում զեկուցողները և ելույթ ունեցողները մատնանշել են նախադպրոցական հաստատությունների ստեղծման անհրաժեշտությունը և այդ բնագավառում եղած դժվարությունների հաղթահարման ուղիները:

Հիմնական դժվարությունը նախադպրոցական մասնագետ կադրերի պակասն էր կամ, ավելի ճիշտ, բացակայությունը: Այդ դժվարությունը հաղթահարելու համար ուսուցչական համագումարը անհրաժեշտ է համարել դասընթացների և դասախոսությունների կազմակերպումը:

Համագումարի որոշման համաձայն, լուսժողկոմը նախադպրոցական տարիք է համարել 6-8 տարեկան հասակը: Նախադպրոցական կրթությունը արդեն պաշտոնական ճանաչում է գտել և մտել ժողովրդական կրթության ընդհանուր պետական համակարգի մեջ, որպես նրա առաջին և անհրաժեշտ աստիճանը:

Նմանատիպ որոշումներ են ընդունվել նաև Վարանդայի, Ջրաբերդի և Խաչենի շրջանների ուսուցչական համագումարներում և կոնֆերանսներում: Դրանք միաժամանակ հանդիսացել են այն օջախները, որոնց միջոցով պրոպագանդվել են առաջադիմական գաղափարներ, բարեկարգ դպրոցների առաջավոր փորձը, ընդհանրացվել և ի մի են բերվել տեղ գտած թերությունները, մանկավարժական նոր որոնումներ են կատարվել կատարելագործելու դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքները:

Պետք է նշել, որ այն ժամանակ ուսուցչական համագումարների հրավիրումն ուներ նախ և առաջ բացառիկ նշանակություն, քանի որ նրանց միջոցով հայ ուսուցչությունն արտահայտում էր իր վերաբերմունքը խորհրդային իշխանության նկատմամբ, որոշակիորեն սահմանազատվում դպրոցական ասպարեզում տեղ գտած քաղաքականապես անկայուն ու անհարազատ տարրերից և արտահայտում աշխատավոր ժողովրդին հավատարմորեն ծառայելու իր վճռականությունը:

Սակայն այդ համագումարներն ունեին նաև այլ նշանակություն: Նրանք քննարկում և որոշում էին նոր դպրոցի զարգացման չլուծված հարցերը, ուսուցման ու դաստիարակության կարևոր խնդրները, մեթոդամանկավարժական պրոբլեմները և այլն:

Արշավիր Քամալյանի զեկուցագրից և արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ 1925 թվականի օգոստոսի 20-24-ը ուսուցչական կոնֆերանսներ են հրավիրվում Վարանդայում, Շուշիում, Խաչենում, Ջրաբերդում, իսկ 1926թ. օգոստոսի 26-30-ը Ստեփանակերտ քաղաքում հրավիրվում է ԼՂԻՄ լուսբաժինների և ուսուցիչների առաջին ընդհանուր համագումարը, որին մասնակցում են նաև Հայաստանի լուսժողկոմի ներկայացուցիչները Գ.Էդիլյանը, Մ.Դուրգարյանը, Ա.Տոնյանը, Ս.Դավթյանը և ուրիշներ[127]:

Համագումարի օրակարգում դրված են եղել հետևյալ հարցերը.

1. ԼՂԻՄ-ի հանրակրթական դպրոցների կրթության բովանդակության (ուսումնական պլաններ, ծրագրեր, դասագրքեր) կատարելագործման մասին (ԼՂ լուսժողկոմ Ա.Քամալյան):

2. Երկրորդ աստիճանի դպրոցների մեթոդների և բովանդակության մասին (ԼՂ լուսժողկոմի տեղակալ Առ.Առաքելյան):

3. Սոցիալական դաստիարակության խնդիրների մասին (սոց.դաստ.վարչ.նախագահ Գ.Էդիլյան):

4. Նաղադպրոցական դաստիարակության խնդիրների մասին (Ս.Անդրյան):

5. Ուսուցիչների մանկավարժական- մեթոդական, մասնագիտական ու քաղաքական պատրաստության մակարդակի բարձրացման մասին (Լ.Վարդունի):

Համագումարի ընդունած բանաձևում նշվում է դպրոցների ցանցի հետագա ընդլայնումը ժամանակավորապես սահմանափակելու և մանկավարժական- մեթոդական աշխատանքն ուժեղացնելու, այսպես կոչված, շրջմանկխորհուրդներ կազմակերպելու, անչափահասների առողջական վիճակը բարելավելու ուղղությամբ լայն աշխատանք տանելու, աղջիկներին դպրոցներում ընդգրկելու նպա-

տակով հատուկ կոմպանիա անցկացնելու, առաջին աստիճանի տարիքավոր աշակերտների համար դեռահասների խմբեր կազմերպելու մասին: Համագումարը որոշումներ է ընդունել նաև նոր մեթոդների փորձարկման, կոմպլեքսային սիստեմի կիրառման, մանկավարժական թանգարանների և դպրոցական ցուցահանդեսների կազմակերպման, դպրոցներում գավառագիտության զարգացման, նախադպրոցական ցանցի պահպանման ու ամրապնդման, ուսուցչական կադրերի պատրաստման ու վերապատրաստման և այլ հարցերի վերաբերյալ[128]:

Լսելով լուսժողկոմ Արշավիր Քամալյանի զեկուցումը «ԼՂԻՄ հանրակրթական դպրոցների կրթության բովանդակության կատարելագործման (ուսումնական պլաններ, ծրագրեր, դասագրքեր) մասին», համագումարում ելույթ ունեցողները (Գ.Գրիգորյան, Լ.Վարդունի, Գ.Էդիլյան , Ս.Անդրյան և ուրիշներ), հավանություն են տվել և համագումարը ընդունել է որոշում, որի հիման վրա պետք է պատշաճ մակարդակով կազմակերպվեն առաջին և երկրորդ աստիճանի դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանքները: Լսված զեկուցումների շուրջ մասնավորապես որոշվել է երկրորդ աստիճանի դպրոցների ծրագիրը բաժանել երկու խմբի. «ա» խմբի հիմքը դարձնել գյուղը և գյուղատնտեսական աշխատանքը, «բ» խմբի հիմքը՝ քաղաքը և արդյունաբերական աշխատանքը: «ա» խմբի ծրագրերը կազմվել էին դեռևս նախորդ կոնֆերանսների ժամանակ (ինչպես նշել ենք, նախորդ կոնֆերանսը Ստեփանակերտում հրավիրվել է 1923թ.), համալիրային սկզբունքով, իսկ «բ» խմբի ծրագրերը կազմվում են այս համագումարի ընդունած որոշման համաձայն:

Իհարկե, կոմպլեքսացումն այստեղ նման չէր Ա աստիճանի կոմպլեքսային համակարգին, որի մասին խոսելու ենք հետո: Երկրորդ աստիճանի դպրոցների ծրագրերի կոմպլեքսացումը տեղի է ունեցել ցիկլային կարգով և կրել է շատ պայմանական բնույթ: Առաջին ցիկլի մեջ մտել են լեզուները, գրականությունը, պատմությունը, հասարակագիտությունը, աշխարհագրությունը, տնտեսագիտությունը, երկրորդ ցիկլի մեջ՝ ֆիզիկա-մաթեմատիկական, երրորդ ցիկլի մեջ՝ բնագիտական առարկաները: Այդ ցիկլերի ներսում էլ աշխատել են ներքին կապ ստեղծել համապատասխան առարկաների միջև, թեև միաժամանակ արձանագրել են, որ այդ կապը չպետք է խախտի յուրաքանչյուր առարկայի սիստեմը:

Այդ սկզբունքը, մեր կարծիքով, ուշադրության արժանի է նաև մեր օրերի համար:

Երկրորդ աստիճանի դպրոցներում թեքում տալու հարցը նունյպես լուրջ առարկություններ է առաջացրել: Ի վերջո, համագումարը որոշել է «գործնական» ուղղություն տալ այդ դպրոցներին, նրանց բարձր խմբերում մտցնելով կոոպերացիա, մանկավարժություն, հոգեբանություն և վիճակագրության առարկաների ուսուցում:

Առաքել Առաքելանը իր զեկուցման մեջ («Երկրորդ աստիճանի դպրոցների մեթոդների և բովանդակության մասին») տվել է այդ դպրոցների ընդհանուր դրության խոր վերլուծությունը և նշել նրանց հիմնական խնդիրներն առաջիկայում:

Նա ընդգծել է, որ երկրորդ աստիճանի դպրոցների թիվը մարզում դեռևս շատ քիչ է: Կա ընդամենը 22 այդպիսի դպրոց, միչդեռ առաջին աստիճանի դպրոցների թիվը հասնում է 108-ի: Քիչ է նաև այդ դպրոցների աշակերտության թիվը:

Նրանցում սովորում են միայն 259 հոգի, իսկ Ա աստիճանի դպրոցներում՝ մոտ 1658 (դեռ ավելի) հոգի: Դա ցույց է տալիս, որ Բ աստիճանի դպրոցը դեռ շարունակում է մնալ ընտրյալների դպրոց: Նա դեռ իր սոցիալական կազմով չի պատկանում մեզ: Դեռևս հին դպրոցի աշակերտությունն ՝ իր սոցիալական դաստիարակությամբ և ընտանեկան սովորություններով…[129]

Առաքել Առաքելանը միաժամանակ մատնանշել է, որ Բ աստիճանի դպրոցներում աշխատող 100 ուսուցիչներից 46-ը ունի բարձրագույն, իսկ մնացածը՝ թերի բարձրագույն կրթություն, այնուամենայնիվ, դեռևս չկան բավարար թվով հասարակագիտական, բնագիտական և մաթեմատիկական առարկաներ դասավանդող ուսուցիչներ:

Այնուհետև Առաքել Առաքելանը առաջ է քաշել երկրորդ աստիճանի դպրոցների համար ուսումնական ծրագրեր մշակելու, դասագրքեր հրատարակելու խնդիրը:

Համագումարի մասնակիցների առաջարկությամբ ստեղծվում են համապատասխան հանձնաժողովներ, որոնք համագործակցելով Հայաստանի լուսժողկոմի համապատասխան բաժինների առաջատար մասնագետների հետ, կազմել և գործողության մեջ են դրել Բ աստիճանի դպրոցների նոր միասնական ծրագրեր:

ԼՂ լուսժողկոմի սոց. դաստիարակության վարչության նախագահ(պետ), ականվոր հոգեբան, մանկավարժ Գուրգեն Էդիլյանը համագումարում հանդես է եկել երկու զեկուցմամբ՝ «Սոցդասգլխվարչության աշխատանքի մասին» և «Աշխատանքային դպրոցի համակարգի մեթոդների և կազմակերպման մասին»:

Առաջին հարցի կապակցությամբ համագումարը հատուկ ուշադրություն է դարձրելդպրոցների և ուսուցիչների նյութական դրության բարելավման, ուսուցչական նոր կադրերի պատրաստման, մանկավարժական ուսումնարանում մանկավարժական գիտությունների ուժեղացման, սոցիալական դաստիարակության հիմնարկների գաղափարական բովանդակության բաձրացման, աշակերտների քաղաքական դաստիարակության, արտադասարանական աշխատանքների կազմակերպման, ֆիզիկական դաստիարակության գործի բարելավման խնդիրներին:

Երկրորդ հարցով համագումարը քննարկել է սոցիալական դաստիարակության դպրոցի կառուցվածքը և սիստեմը: Նշել է, որ այդ «դպրոցն իր նորմալ ծավալով» պիտի ընդգրկի 4-17 տարեկաններին, և դրան համապատասխան սահմանել է կրթական հետևյալ համակարգը. ա) մանկապարտեզ՝ 4-8 տարեկանների համար, բ) առաջին աստիճանի 4-ամյա աշխատանքային դպրոց՝ 8-12 տարեկանների համար, գ) երկրորդ աստիճանի դպրոց՝ 5-ամյա դասընթացով: Վերջինս բաժանվել է երկու խմբի (կոնցենտրի). առաջին խումբն ուներ եռամյա դասընթաց (5-7 դասարաններ) և ընդգրկում էր 13-15 տարեկաններին, իսկ երկրորդ կոնցենտրը՝ երկամյա դասընթաց (8-9 դասարաններ)՝ 16-17 տարեկանների համար:

Համագումարն արձանագրել է, որ առաջին աստիճանի դպրոցի ծավալով կրթություն ստանալը առաջիկայում պիտի դառնա «պարտադիր մինիմում մարզի յուրաքանչյուր քաղաքացու համար», ուստի պետք է հոգ տանել այդ դպրոցների հետագա զարգացման մասին, թեև նույն համագումարը, ելնելով երկրի տնտեսական նեղ դրությունից, ստիպված է եղել ընդունել, որ 1923 թվականին պետք է ժամանակավորապես «չափավորել» նոր դպրոցների բացումը և մտածել եղածների բարելավման մասին:

Սահմանել է նաև, որ միասնականության սկզբունքի համաձայն, Ա աստիճանի դպրոցն ապահովում է աշակերտների անցումը ինչպես տարրական արհեստագիտական, այնպես էլ Բ աստիճանի դպրոցները. Բ աստիճանի ա կոնցենտրը ապահովում է անցումը տեխնիկում և նույն աստիճանի բ կոնցենտրը ապահովում է անցումը բարձրագույն հանրակրթական ու մասնագիտական դպրոցները:

«Սոցիալական դաստիարակության այս համակարգը,- ասված է նշված հարցի վերաբերյալ ընդունված բանաձևում,- որ հիմնված է հասակի, հոգեբանության և արդի գիտության ու արվեստի դասավանդվելիք անհրաժեշտ և հնարավոր մինիմումի վրա, իր ծրագրով որոշում է բոլոր այլ տիպի (արհեստագիտական, քաղաքական և այլն) դպրոցների հանրագիտական ծրագրերը»[130]:

Այս համակարգն ընդունելուց հետո համագումարը սոցիալական դաստիարակության գլխավոր վարչությանը հանձնարարել է համագործակցել Հայաստանի լուսժողկոմատի համապատասխան բաժնի հետ և դրան համապատասխան մշակել հանրակրթական դպրոցների նոր ուսումնական պլաններ ու ծրագրեր:

Համագումարն ածռանձնապես սուր կերպով է դրել աշխատանքային դաստիարակության խնդիրը՝ գյուղատնտեսական և գործարանային աշխատանքը գյուղական ու քաղաքային դպրոցների համար դարձնելով «դասավանդության ելակետ»: Այդ նպատակով հանձնարարվել է լայնորեն օգտագործել իլյուստրատիվ (ցուցադրական) մեթոդը՝ (էքսկուրսիաները, փորձերը, դիտումները, դիդակտիկ նյութերի ցուցադրումը, դրամատիզացիան և այլն), ինչպես նաև հատուկ ուշադրություն դարձնել տեղական միջավայրի ուսումնասիրությանը, այսինքն գավառագիտությանը:

Ուսուցչական համագումարում «Նախադպրոցական դաստիարակության խնդիրների մասին» զեկուցում է տվել Ս.Անդրեասյանը: Քննարկելով այդ հարցը, համագումարը նախևառաջ ընդգծել է նախադպրոցական կրթության, դաստիարակության կարևորությունը և ընդունված որոշման մեջ նշվել է, որ նախադպրոցական կրթությունը նախադուռն է միասնական աշխատանքային դպրոցի շղթայում: Իր զեկուցման մեջ Ս.Անդրեասյանը մատնանշել է նախադպրոցական հաստատությունների ստեղծման անհրաժեշտությունը և այդ բնագավառում եղած դժվարությունների հաղթահարման ուղիները:

Այդ դժվարությունները հաղթահարելու համար համագումարը անհրաժեշտ է համարել մեկ կամ երկամյա մանկավարժական դասընթացների կազմակերպումը Ստեփանակերտ քաղաքում, ինչպես նաև Շուշիում: Համագումարը նախադպրոցական տարիք է համարել 6-8 տարեկան հասակը:

Այսպիսով, ինչպես Հայաստանում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում առաջին անգամ նախադպրոցական կրթությունը պաշտոնական ճանաչում է գտել (այդ մասին նշված է նաև 1923թ. օգոստոսին Հադրութում կայացած առաջին ընդհանուր ուսուցչական համագումարում) և մտել ժողովրդական կրթության ընդհանուր համակարգի մեջ, որպես նրա առաջին անհրաժեշտ աստիճանը:

«Ուսուցիչների մանկավարժական-մեթոդական, մասնագիտական ու քաղաքական պատրաստականության մակարդակի բարձրացման մասին» զեկուցումով հանդես է եկել Լ.Վարդունին: Նրա զեկուցման առթիվ ընդունված բանաձևում հանգամանորեն նշված են աշխատանքի այն ձևերն ու միջոցները, որոնք պետք է կիրառվեն ուսուցչական վերապատրաստության գործը հաջող տանելու համար:

Հարկ է նշել, որ 1923-1925 թթ. ԼՂԻՄ-ի գավառներում տեղի ունեցած ուսուցչական զանազան կոնֆերանսներն ու համագումարները փաստորեն նախապատրաստել և անհրաժեշտ են դարձրել մարզի ուսուցիչների ընդհանուր համագումարի հրավիրումը:

Հետագա տարիներին՝ 1930-1940 թթ., մարզի գավառներում, Ստեփանակերտ քաղաքում նույնպես տեղի են ունեցել նման համագումարներ ու կոնֆերանսներ, որոնց որոշակի տեղն ու դերը մեծ է եղել ԼՂԻՄ-ի ժողկրթության նոր համակարգի սկզբնավորման, կազմակերպման ու նրա հերագա զարգացման ասպարեզում:

Ուսուցչական համագումարների և կոնֆերանսների նյութերը բավականաչափ շատ են: Մեր ուսումնասիրության բնույթից ելնելով, նպատակահարմար ենք գտել համագումարում լսված, քննարկված և ընդունված բանաձևերի, որոշումների ու զեկուցումների բովանդակությունը համառոտակի ծանոթացնել ընթերցողին: Ինչպես նշեցինք, այն ժամանակ դրանք հանդիսացել են այն օջախները, որոնց միջոցով պրոպագանդվել են մանկավարժական առաջադիմական գաղափարներն ու բարեկարգ դպրոցների առաջավոր փորձը: Համագումարներում ու կոնֆերանսներում զեկուցողներն ու ելույթ ունեցողները հանգամանորեն ընդհանրացրել են Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցներում երկու տասնամյակում (1920-1940թթ.) ձեռք բերած նվաճումներն ու թերությունները և այդ հենքի վրա էլ մանկավարժական նոր որոնումներ են կատարվել կատարելագործելու դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքները:

Համագումարների ու կոնֆերանսների ընդունած բանաձևերում ու որոշումներում նշվում է, որ Լեռնային Ղարաբաղում հայկական դպրոցական ցանցի ընդարձակումը, ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարելագործումը, բնականաբար, առաջ էր բերում նաև ուսուցչական կադրերի մեծ պահանջ: Անշուշտ, ուսուցիչների մանկավարժական-մեթոդական, մասնագիտական որակի բարձրացման, պատրաստման ու վերապատրաստման հիմնախնդիրները մտահոգել են ԼՂ լուսժողկոմի աշխատողներին հենց առաջին իսկ օրից: Հայտնի է, որ խորհրդային դպրոցի սկզբնավորման շրջանում ուսուցչական քիչ կադրեր կային, հին ուսուցիչների մի մասն ի վիճակի չէր բավարարել ժողկրթության վերակառուցման պահանջները:

Մանկավարժական կադրերի խնդիրը լուծելու համար Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմատի և նրա տեղական մարմինների ձեռնարկումները լայն ծավալ են ընդունում, այսինքն մասնագետ կադրերի մեծ պահանջը բավարարելու նպատակով, ինչպես Հայաստանում, այնպես էլ Ղարաբաղում բացվում են միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ, ուսումնարաններ, տեխնիկումներ, նույնիսկ երկրորդ աստիճանի հանրակրթական դպրոցներից շատերը վերակառուցվեցին և սկսեցին մասնագետ կադրեր պատրաստել ինչպես դպրոցների, այնպես էլ ժողտնտեսության տարբեր ճյուղերի համար:

Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմատների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ հնարավոր եղավ զգալի չափով համալրել ուսուցչական կադրերի պակասը, և արդեն 1922-1923 ուստարում ուսուցիչների թիվը հասնում էր 150-ի, որոնցից շատերն ավարտել էին Երևանի պետական համալսարանի մանկավարժական ֆակուլտետը[131]: Ինչպես նշվել է աշխատության առաջին հատորում, Լեռնային Ղարաբաղի հայկական դպրոցներն ուսուցչական կադրե-

ռով ապահովելու գործում ժամանակին կարևոր դեր են խաղացել Շուշիի թեմական դպրոցը, ռեալական ուսումնարանը, Մարիամյան օրիորդաց դպրոցը: Իսկ խորհրդային իշխանության հաստատումից հետո՝ 1922-1923 ուստարում, Շուշիում բացվում է միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն՝ մանկավարժական ուսումնարան, երկու բաժիններով՝ հայկական և ադրբեջանական: Հետագայում (1923 թ.) Հադրութում բացվում է մանկավարժական տեխնիկում, Շուշիում՝ բանֆակ: 1922-1923 ուստարում հրավիրված ուսուցչական ընդհանուր ժողովում (որին մասնակցում էին 100-ից ավելի ուսուցիչներ) լուսժողկոմ Արշավիր Քամալյանն իր զեկուցման մեջ նաև մատնանշեց, որ դպրոցներն ուսուցչական կադրերով ապահովելու համար անհրաժեշտ է մի շարք միջոցառումներ ձեռնարկել.

ա) ժողովրդական և ծխական դպրոցների ուսուցչական հիմնական կազմի օգտագործում,

բ) միջնակարգ և բարձրագույն կրթություն ունեցող մարդկանց ներգրավում ուսուցչական աշխատանքի մեջ,

գ) Հայաստանի Հանրապետությունից ուսուցչական կադրերի հրավիրում,

դ) ուսուցչական նոր կադրերի պատրաստում, նրանց մանկավարժական մեթոդական, մասնագիտական ու քաղաքական պատրաստության մակարդակի բարձրացում[132]:

Այդ հարցերին մեծ ուշադրություն դարձրեց Լեռնային Ղարաբաղի ընդհանուր ուսուցչական համագումարը, որը հրավիրվեց 1925թ. օգոստոսի 26-30-ը: Ընդհանուր ուսուցչական համագումարի օրակարգում ներառված հարցերից բացի քննարկվեցին նաև հետևյալ հարցերը. ա) դպրոցների բարելավումը, բ) դպրոցների ուսումնական դասագրքերով ու ծրագրերով ապահովումը, գ) ուսուցիչների համար մանկավարժական դասընթացների կազմակերպումը, դ) ուսուցիչների նյութական վիճակի բարելավումը, ե) դպրոցներում արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների կազմակերպումը[133]:

Համանման հարցեր քննարկվեցին նաև 1924 թ. օգոստոսի 20-24-ը Հադրութի, Վարանդայի, Մարտակերտի շրջաններում հրավիրված ուսուցչական համագումարներում, կոնֆերանսներում, որոնց ակտիվ մասնակցություն են ունեցել նաև մի շարք առաջադեմ ուսուցիչներ, այդ թվում Լևոն և Շավարշ Վարդունիները (Վարդապետյաններ), Հայկ Մուսայելյանը, Առաքել Չալյանը, Լևոն Մանուչարյանը, Լևոն Մովսիսյանը, Արամ Բաղդասարյանը և ուրիշներ:

Ավելի լուրջ խնդիր էր համարվում ուսուցչական նոր կադրերի պատրաստումը, նրանց որակավորման, մանկավարժական մեթոդական, մասնագիտական ու քաղաքական պատրաստության մակարդակի բարձրացումը:

Պաշտոնական տվյալների համաձայն՝ 1924 թ. հուլիսի 1-ին Շուշիում առաջին անգամ կազմակերպվեց եռամյա մանկավարժական դասընթաց, ուր ընդգրկվեց 119 ուսուցիչ, որոնցից շատերը երկրորդ աստիճանի դպրոցների շրջանավարտներ էին (քանի որ այն ժամանակ մեկը մյուսի ետևից բացվող տասնյակ դպրոցներ նոր ուսուցիչների պահանջ էին դնում և այդ պատճառով էլ վերջիններիս թույլատրվում էր դասավանդել դպրոցներում):

Շուշիի օրինակով մանկավարժական դասընթացներ են կազմակերպվում նաև Ստեփանակերտում, Հադրութի, Վարանդայի և Մարտակերտի շրջաններում:

1924 թ. փետրվարին կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմի բյուրոն, քննարկելով ուսուցչական կադրերի պատրաստման հարցը, ժողովրդական կրթության մարմիններից պահանջեց դասընթացների ամբողջ աշխատանքը կազմակերպել՝ ելնելով միասնական աշխատանքային դպրոցի սկզբունքներից ու պահանջներից: Իրագործելով այս որոշումը՝ Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմատը 1925թ. հուլիսին Ստեփանակերտում բացեց ուսուցչական կարճատև դասընթացներ, ուր ընդգրկվեցին մի շարք շրջանների 200-ից ավելի թերուս ուսուցիչներ[134]:

Մանկավարժական դասընթացների ծրագրերն ունեին երեք բաժին. ա) կազմակերպչական-վարչական, բ) գիտական-մանկավարժական, գ) քաղաքական-հասարակական: Դասընթացներում դասախոսել են ճանաչված մանկավարժներ Առաքել Առաքելյանը, Լևոն Վարդունին, Հայկ Մուսայելյանը, Գրիգոր Ներսիսյանը, Լևոն Մանուչարյանը, Միքայել Միքայելյանը, Վարդունի Շահնազարյանը, Արամ Բաղդասարյանը և ուրիշներ: Այդ ժամանակ լուսժողկոմատի ուսուցիչների վերապատրաստման բաժինը ղեկավարում էր Առաքել Առաքելյանը, ավելի ուշ՝ ականավոր հոգեբան, մանկավարժ Գուրգեն Էդիլյանը, Լևոն Վարդունին, Գրիգոր Չիլինգարյանը և ուրիշներ:

1925թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմատը սահմանել է ուսուցիչների վերապատրաստման ավելի ճկուն ու տևական կարգ, որի համաձայն՝ վերապատրաստության կենտրոնական մարմին է համարվել սոցդասվարչության գլխավոր բաժինը՝ ուսուցիչների վերապատրաստման բաժինը, որը ղեկավարում էր Գուրգեն Էդիլյանը: Այն պիտի գործեր լուսբաժնի վարչության հետ սերտորեն կապված:Վերապատրաստության գիտական, մանկավարժական և ծրագրային խնդրների լուծումը դրվել է լուսժողկոմատի մեթոդական խորհրդի սոցդաստիարակության սեկցիայի վրա: Շրջաններում այդ գործը ղեկավարում էր շրջսոցդասվարի մեթոդական բաժինը, գյուղերում՝ մանկխորհուրդը:

Լուսժողկոմատն այդ առթիվ մշակած իր հրահանգում հանգամանորեն նշել է մեթոդական օղակներից յուրաքանչյուրի անելիքները ուսուցիչների որակի բարձրացման ուղղությամբ՝ շեշտը դնելով հատկապես մանկավարժական- մեթոդական խնդիրների քննարկման, իհարկե, նաև համալիր ծրագրերի վրա:

1925-1926 ուստարում լուսժողկոմատի կատարած աշխատանքների մասին լուսժողկոմ Առաքել Առաքելյանի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ ստեղծվել է ուսուցիչների վերապատրաստման երկու հիմնական ձև. մեկն իրականացվել է դպրոցական աշխատանքներին զուգընթաց՝ գավառային մեթոդբյուրոների, շրջմանկխորհուրդների և դպրոցների մանկավարժական խորհուրդների, մյուսը՝ ամառային հատուկ դասընթացների միջոցով[135]: Կազմակերպվել են կենտրոնական, գավառային և շրջանային դասընթացներ, որոնց տևողությունը եղել է մեկից մինչև մեկուկես ամիս: 1925 թ. օգոստոսյան ուսուցչական համագումարը քննության հատուկ նյութ է դարձրել ուսուցիչների վերապատրաստման խնդիրը և այդ առթիվ ընդունել ծավալուն որոշում: Զեկուցումով հանդես է եկել լուսբաժվար Ա.Առաքելյանը:

Ուշադրության արժանի է սոցդասգլխվարչության 1926 թ. հրամաններից մեկի այն կետը, ուր ասված է. «Ուսուցչական դասընթացները պետք է լինեն արձակուրդից դուրս և հաշվվեն իբրև աշխատանք: Կարելի է արձակուրդն ընդհատում-

ներով անել այն ուսուցիչների համար, որոնք պետք է վերապատրաստվեն»[136]:

Լեռնային Ղարաբաղի դպրոցներն ուսուցչական կադրերով համալրելու գործում մեծ դեր խաղաց «ուսուցիչ մասնագետների մասին» կուսակցության մարզկոմի բյուրոյի 1925թ. սեպտեմբերի 29-ի որոշումը: Այդ որոշմամբ մարզկոմ բյուրոն համապատասխան մարմիններից պահանջեց լուսժողկոմատի իրավասությանը վերադարձնել բոլոր այն ուսուցիչներին, ովքեր ինչ-ինչ պաճառներով ոչ իրենց մասնագիտությամբ աշխատում էին այլ հիմնարկներում:

Վերոհիշյալ միջոցառումներից հետո տարեցտարի սկսեց աճել ուսուցչական կադրերի քանակը: Արդեն 1924-1925 ուս.տարում մարզում գրեթե բոլոր ուսուցիչները հանրակրթական դպրոցներում աշխատում էին իրենց մասնագիտությամբ: Նրանք աշխատում էին նաև լիկկյաններում: Այդ մասին «Խորհրդային Ղարաբաղ» թերթը գրել է. «Գյուղական ուսուցչության համառոտ ու տոկուն աշխատանքի շնորհիվ 1800 գյուղացիներ մայիս ամսին ավարտել են տարրական անգրագիտության դպրոցները: Այդ ուսուցչությունը հինգ ամիս առանց որևէ վարձատրության անտրտունջ կատարել է իր քաղաքացիական պարտքը»[137]: Համապատասխան հաշվետվություններում ու զեկուցագրերում վկայակոչվում են մեծ վաստակի տեր ուսուցիչներ Շավարշ Վարդունու, Լևոն Վարդունու, Արշակ Քամալյանի, Ա.Առաքելյանի, Գ.Էդիլյանի, Գր.Խաչատրյանի, Վարդուհի Շահնազարյանի, Ստ.Ստեփանյանի, Մ.Միքայելյանի, Պ.Պողոսյանի, Բախշի Տեր- Գրիգորյանի, Առաքել Չալյանի, Գրիգոր Չիլինգարյանի, Ռ.Ղուկասյանի, Պետրոս Մուսայելյանի և այլոց անունները, որոնք իրենց ամբողջ ուժերն ու կարողությունները նվիրաբերեցին աճող սերնդի դաստիարակության ու կրթության գործին:

Ուսուցչական կադրերի կոմպլեկտավորման գործում թույլ են տրվել նաև որոշ սխալներ: Այսպես, օրինակ՝ որոշ գյուղերում ուսուցչական աշխատանք էին կատարում այնպիսի անձինք, ովքեր դեռ չէին հրաժարվել իրենց հին հայացքներից կամ իրենց էությամբ հեռու էին ուսուցչի մասնագիտությունից: «Կոմունիստ» թերթը 1924թ. «Դպրոցական գործը Ղարաբաղում» հոդվածում գրել է, որ «Լեռնային Ղարաբաղի որոշ դպրոցներում տեղ են գտել նախկին քահանաներ, առաջ են եկել փարաջավոր ուսուցիչներ»[138]: 1925թ. օգոստոսի 10-ին մարզային գործադիր կոմիտեն և կուսմարզկոմը՝ անդրադառնալով այդ հարցին, անհրաժեշտ գտան ուսուցչության շրջանում կատարել զտում: Լուսժողկոմի որոշմամբ վերանայվեց մարզի ուսուցչական կադրերի կազմը, ազատվեցին 20-ից ավելի «անկայուն ուսուցիչներ»:

Ուսուցչական կադրերի վերապատրաստման նպատակով Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմատը 1924-25 թթ.սկսած ուսուցիչներ է գործուղել Մոսկվա, Լենինգրադ, Բաքու, Երևան և Միության այլ քաղաքներ՝ ուսուցչների վերապատրաստման դասընթացներին մասնակցելու: 1927թ. տվյալներով՝ մարզից երկրի մանկավարժական ուսումնական հաստատություններում սովորում էին 200-ից ավելի ղարաբաղցի տղաներ և աղջիկներ: 1926թ. հունիսին Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմատը քննարկեց ԼՂՀ-ին մանկավարժական կադրերով պահովելու հարցը և ընդունեց հետևյալ որոշումը.

1. ընթացիկ ուսումնական տարում մարզի մանկավարժական տեխնիկումներն ավարտածներին աշխատանքի ուղարկել ԼՂԻՄ դպրոցները.

2. հայկական դպրոցների համար ուսուցիչներ պատրաստելու նպատակով ու-

սումնական տարվա սկզբից կազմակերպել մեկամսյա մանկավարժական դասընթացներ:

3. պարտադիր ուսուցման անցնելու կապակցությամբ հանձնարարել լուսժողկոմատին՝ միջոցառումներ մշակել տեղում մանկավարժական կադրեր պատրաստելու ուղղությամբ:

Վերոհիշյալ միջոցառումները զգալի չափով օգնեցին համալրելու մարզի ուսուցիչների շարքերը: 1926-27 ուստարում Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցներում աշխատում էին շուրջ 300 ուսուցիչներ, այսինքն 4 անգամ ավելի, քան խորհրդային կարգեր հաստատելու նախօրյակին: Հաջորդ տարիներին ավելանում է մարզի ուսուցչական կադրերի թիվը՝ 1930-ական թվականներին հասնելով 1976-ի: Մարզի դպրոցները ուսուցչական կադրերով ապահովելու գործում մեծ դեր է կատարել Շուշիի մանկավարժական ուսումնարանը[139]:

Քննարկվող ժամանակաշրջանում զգալի աշխատանք է տարվել նաև ուսուցչական կադրերի պատրաստման ու որակավորման ուղղությամբ: Ուսուցչական կադրերի պատրաստման հարցին հատուկ ուշադրություն է դարձրել Լեռնային Ղարաբաղի մարզլուսբաժինը, որը 1935թ. դեկտեմբերի խորհրդակցությունում ընդունած իր բանաձևում հանձնարարել է ընդլայնել մանկավարժական տեխնիկումների ցանցը, ավելացնել ուսանողության քանակը, կազմակերպել կարճատև մանկավարժական դասընթացներ: Մարզային լուսավորության բաժինն անհրաժեշտ է համարեց դպրոցները ռուսաց լեզվի որակյալ ուսուցչական կադրերով ապահովելու նպատակով առաջիկա տարվանից մանկավարժական տեխնիկումներին կից ստեղծել ռուսական բաժիններ: Այսպես, օրինակ՝ 1935-36 թթ. Շուշիի մանկավարժական տեխնիկումը, բացի հայկականից, ուներ նաև ռուսական բաժին[140]:

Քանի որ գյուղական վայրերում իրագործվում էր 4-ամյա պարտադիր ուսուցում, իսկ դպրոցների ճնշող մեծամասնությունը գյուղական վայրերում էին գտնվում, բնականաբար, ամենից առաջ պետք էր մտածել տարրական դպրոցների համար ուսուցչական կադրերի պատրաստման մասին:

Տարրական և միջնակարգ դպրոցների համար ուսուցչական կադրեր պատրաստող լրացուցիչ օղակներ են հանդիսացել զանազան դասընթացները: Այսպես, օրինակ՝ ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման դասընթացներն անց են կացվել 1936թ. Երևանի Ժողովրդական կրթության աշխատողների որակավորման բարձրացման ինստիտուտում, իսկ 1938թ.՝ լուսժողկոմատի ուսուցիչների կատարելագործման ինստիտուտում: Ստեփանակերտում ևս կազմակերպվում են մանկավարժական դասընթացներ: Միայն 1935-36 ուստարում Ստեփանակերտի մանկավարժական դասընթացներին մասնակցել են 100-ից ավելի ուսուցիչներ[141]:

Քննարկվող ժամանակաշրջանում ուսուցիչների մեջ քիչ չէին այնպիսիները, ովքեր բոլորովին պատահաբար էին ընկել մանկավարժության բնագավառ՝ ոչ մի առնչություն չունենալով նրա և դպրոցի հետ: Այդպիսիներից ազատվելու նպատակով լուսժողկոմատը շրջլուսբաժիններին կից ստեղծում է էքսպերտ (փորձագետ) հանձնաժողովներ և սահմանում քննություններ թերուս ուսուցիչների համար: Այդ միջոցառումը, անկասկած, իր ժամանակին տվել է դրական արդյունք: Բայց, ինչպես երևում է, էքսպերտ հանձնաժողովները որոշ դեպքերում ծայրահե-

ղությունների մեջ են ընկել, և լուսժողկոմատը ստիպված է եղել կանխել դրանք:

Լուսժողկոմը 1928-29 ուստարում տեղեր է ուղարկել «Կանոններ մանկավարժական ուժի բաշխման մասին» (այդ կանոնները նախ մշակվել են Հայսատանի լուսժողկոմատի կողմից, որով և առաջնորդվել է ԼՂ լուսժողկոմը): Այնտեղ ասված է.«Նկատի ունենալով… անցյալ տարիների փորձը և մի շարք աննորմալություններ, որ տեղի են ունենում ուսուցչության մասսայական զտման, գավառից գավառ ու դպրոցից դպրոց տեղափոխելու հետևանքով՝առաջարկվում է այսուհետ անշեղորեն ղեկավարվել ներկա կանոններով: Վերացվում են (լիկվիդացիայի են ենթարկվում) էքսպերտ հանձնաժողովները և կազմվում են նորերը, որոնք ոչ մի առնչություն չպետք է ունենան ուսուցիչների զտման և նշանակման գործի հետ, այլ աշխատելու են նոր ընդունվող և փորձ չունեցող սկսնակների որակավորումով»[142]: «Կանոնները» մի շարք վճռական միջոցներ են նշում ուսուցիչների զտման, տեղափոխման և գնահատման գործում նկատված կամայականություններին վերջ տալու համար: Ուսուցիչների զտումը կամ տեղափոխումը կարող էր տեղի ունենալ միայն շրջանային բաժնի և մարզժողկրթբաժնի միջոցով: Այս միջոցառումը մեծ նշանակություն ուներ և կոչված էր կայունացնելու դպրոցների մանկավարժական կադրերը, վերջ տալու նրանց չպատճառաբանված փոխադրումներին և հոսունությանը:

Պետք է նշել, որ այդ շրջանում ուսուցիչներն անձնվեր աշխատանք են կատարել աճող սերնդի կրթության ու դաստիարակության գործում: Իրենց պարտականություններից բացի, նրանք գյուղական վայրերում, շրջանում և քաղաքում ակտիվ մասնակցություն էին ունենում կուլտուր-լուսավորական բոլոր աշխատանքներին: Ուսուցիչն է խրճիթ-ընթերցարանի գլխավոր ուժը, անգրագիտության վերացման կետերի կազմակերպողն ու պարապողը, երեկույթների, ցերեկույթների, թատերական ներկայացումների նախաձեռնողն ու մասնակիցը և այլն:

Լեռնային Ղարաբաղում մանկավարժական կադրերի պատրաստման ու որակավորման բարձրացման ուղղությամբ լայն աշխատանք է տարվել հատկապես 30-ական թվականներին: Այսպես, օրինակ՝ ընդհանուր պարտադիր ուսուցման կենսագործման համար վճռական կշանակություն ունեցող և միաժամանակ դժվար լուծելի հարցերից մեկը ուսուցչական կադրերի տարրական ուսուցման անցնելու հետևանքվ մարզում աճում էր դպրոցական ցանցը, ավելանում էր դասարանների և աշակերտների թիվը: Միաժամանակ առկա էր ուսուցչական որակյալ կադրերի պահանջ: Այն բավարարելու համար մարզլուսբաժնի կողմից մի շարք ձեռնարկումներ իրագործվեցին. ա) կազմակերպվեցին մանկավարժական դասընթացներ շրջաններում, Ստեփանակերտ քաղաքում, Շուշիում, բ) երկրորդ աստիճանի դպրոցները, որ մանկավարժական թեքում էին ստացել 1926 թվականից (անցնում էին մանկավարժության պատմություն, հոգեբանություն առարկաներ և մեթոդիկաներ), պահպանվեցին՝ դպրոցներին շրջանավարտներ տալու համար, գ) թույլատրվեց իրենց մասնագիտությամբ չաշխատող հին ուսուցիչներին ուղարկել մանկավարժական աշխատանքի, դ) ընդլայնել մանկավարժական տեխնիկումների և ուսումնարանների ցանցը, ե) մարզի դպրոցները ռուսաց լեզվի որակյալ ուսուցչական կադրերով ապահովելու նպատակով մանկավարժական ուսումնարաններում բացվեց առանձին ռուսական բաժին:

Համաձայն ԼՂ լուսժողկոմատի որոշման՝ 1935-36 ուստարում Շուշիի մանկա-

վարժական տեխնիկումը, բացի հայկական և ադրբեջանական բաժիններից, ուներ նաև ռուսական բաժին, որտեղ սովորում էր 25 հոգի: Լուսժողկոմի վիճակագրական տվյալներով՝ 1936-37 ուս.տարում Լեռնային Ղարաբաղում գործում էր 3 մանկավարժական տեխնիկում՝ 400-ից ավելի սովորողներով, երկրորդ աստիճանի դպրոցներից 4-ը վեր էր ածվել մանկավարժական տեխնիկումների, 1-ը՝ բանֆակի որոնք պատրաստում էին մանկավարժական կադրեր: Այս շրջանավարտներին իրավունք էր վերապահվում դասավանդելու միայն տարրական դպրոցներում, իսկ միջնակարգ դպրոցներում դասավանդում էին Երևանի Խ.Աբովյանի անվան և Բաքվի մանկավարժական ինստիտուտների շրջանավարտները[143]:

ԼՂԻՄ լուսբաժնի վարիչ Հայկ Բալայանի 1936-37 ուստարվա հաշվետվությունից իմանում ենք, որ այդ ուսումնական տարում միջնակարգ դպրոցների 9-10-րդ դասարաններում դասավանդող 850 ուսուցիչներից 500-ն ունեցել են բարձրագույն և թերի բարձրագույն կրթություն: Հանրակրթական դպրոցների 193 տնօրեններից և վարիչներից բարձրագույն կրթություն է ունեցել 130-ը, թերի բարձրագույն կրթություն՝ 50-ը, միջնակարգ մանկավարժական՝ 23-ը[144]: Պետք է նշել, որ բարձրագույն կրթություն ունեցող ուսուցիչների ճնշող մեծամասնությունը կենտրոնացված էր շրջկենտրոնների և Ստեփանակերտ ու Շուշի քաղաքների դպրոցներում: Գյուղական դպրոցներում բարձրագույն կրթություն ունեցող ուսուցիչների տոկոսը շատ ավելի ցածր էր: Այսպես, օրինակ՝ 1935-36 ուստարում Մարտակերտի շրջանի 250 ուսուցիչներից բարձրագույն կրթություն ունեցել են 30 հոգի, թերի բարձրագույն՝ 185, թերի միջնակարգ՝ 15 հոգի[145]: Դրությունը վատ էր նաև Մարտունու, Հադրութի և Շուշիի շրջաններում: 1936թ. ապրիլի 9-ի որոշման համաձայն՝ ուսուցիչների նյութական վիճակը որոշ չափով բարելավվում է, բարձրացվում են նրանց դերը և հեղինակությունը, գիտական և մանկավարժական մակարդակը: Այդ ուղղությամբ դրական դեր կատարեց նաև ուսուցիչների ատեստացիան: Լեռնային Ղարաբաղում 1936 թվականից իրագործվում է ուսուցիչների ատեստացիա. արդյունքների մասին ԼՂ մարզային լուսբաժնի վարիչ Գրիգոր Բաղյանի (հետագայում արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման) 1939-40 ուստարվա հաշվետվության մեջ գրված է. «Ուսուցիչների ատեստացիան սկսվել է 1936 թվականից, սակայն մեծ աշխատանք կատարվեց 1938-39 ուս.տարում»[146]: Հադրութի, Մարտունու, Շուշիի, Մարտակերտի շրջանային թերթերը պարբերաբար հաղորդել են ուսուցիչների ատեստացիայի, դպրոցները որակյալ մանկավարժական կադրերով ապահովելու, դպրոցի ներքին կյանքին առնչվող բազմաբնույթ հարցերի մասին: Այսպես, օրինակ՝ Մարտակերտի «Սոցիալիզմի ուղիով» շրջանային թերթի խմբագիր Հովսեփ Գևորգյանը թերթի 1939թ. համարներից մեկի առաջնորդողում հաղորդում է, որ ատեստացիայի ընթացքում շրջանի դպրոցներն ազատվեցին անճարակ ուսուցիչներից, համալրվեցին նոր, բարձրորակ մանկավարժական կադրերով: Շրջանի շատ ուսուցիչներ աչքի են ընկնում իրենց մասնագիտական և մեթոդմանկավարժական պատրաստվածությամբ:

Այսպիսով, վերոհիշյալ համառոտ շարադրանքից էլ կարելի է եզրակացնել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում (1920-1940թթ.) Լեռնային Ղարաբաղում հանրակրթական դպրոցը որակյալ մանկավարժական կադրերով ապահովելու խնդիրը լուծելու համար լուսժողկոմատը և նրա տեղական մարմինները ձեռնար-

կել են լուրջ քայլեր: Այդ գործընթացի շրջանակներում ինչպես Հայաստանում, այնպես էլ Ղարաբաղում բացվել են միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ, ընդարձակվել է յոթնամյա, երկրորդ աստիճանի դպրոցների, տեխնիկումների, ուսումնարանների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանցը (այդ մասին մանրամասն կնշվի երկրորդ և երրորդ գլուխներում), որի նպատակն էր հանրակրթական դպրոցի զարգացմանը համընթաց միջին և բարձր որակի կադրերի, ինչպես և մանկավարժական գիտական կադրերի պատրաստումը:

Ուսուցչական կադրերի որակը բարձրացնելու խնդիրը չափազանց կարևոր նշանակություն ուներ: Այդ կապակցությամբ լուսժողկոմատի առջև խնդիր էր դրվում՝ մի կողմից հետևողականորեն բարձրացնել ուսուցիչների կրթական մակարդակը ամենամյա դասընթացների միջոցով, մյուս կողմից՝ ավելի բարձր հիմքերի վրա դնել մանկավարժական տեխնիկումների և երկրորդ աստիճանի բարձր խմբերի սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքները, որպեսզի շրջանավարտները կարողանան լուծել աշխատանքային միասնական նոր դպրոցի առջև դրված խնդիրները:

Հատուկ միջոցառումներ մշակվեցին ցույց տալու համար պետության շահագրգռվածությունը դպրոցի, ուսումնական աշխատանքների, սովորողների դաստիարակության հարցերի նկատմամբ, որի արդյունքում հոգատարություն դրսևորվեց ուսուցչի մասնագիտության և նրա անձի նկատմամբ: Դա արտայատվեց.

- նրա աշխատավարձի բարձրացմամբ,
- ուսուցչական ատեստացիայի կազմակերպմամբ, նրա կարգավիճակի որոշմամբ: Որպես ուսուցչի մանկավարժական գործունեության գնահատման չափանիշ սահմանվեց «դասատու-ուսուցիչ-մանկավարժ» սխեման:

Վերոհիշյալ փաստագրական տվյալները վկայում են, որ խորհրդային իշխանության հաստատումից հետո Լեռնային Ղարաբաղում ժողկրթության բնագավառում՝ 1920-1940 թվականներին ձեռք են բերվել շոշափելի նվաճումներ, ինչը չենք կարող անտեսել, նույնը հաև հետագա տասնամյակներին, որի մասին կնշվի հաջորդ բաժնում: Սակայն նշենք, որ այդ շրջաններում և հետագա տասնամյակներում դառն են եղել Ղարաբաղի ժողովրդի ճակատագիրը, նրա կյանքի ճանապարհը: Եվ նրանք, ովքեր այսօր հետադարձ հայացքով չափում են այդ ճանապարհը, զարմանքով մտածում են, թե նա ինչպես կարողացավ վերակենդանանալ, վերընձյուղվել և ապրել կյանքի և մահվան սահմանագծում: Անշուշտ, դա Ղարաբաղի համառ կամքի տեր ժողովրդի և նրա անձնազոհ մտավորականության ու հայրենասեր բարերարների աշխատանքի արդյունքն է: Հավատ ունենալով ապագայի նկատմամբ, նրանք սերտորեն համագործակցել են մայր Հայաստանի հետ, իհարկե, շատ դեպքերում գաղտնի, պահպանել են հայեցի կրթություն տվող ազգային դպրոցը և հոգևոր-մշակութային արժեքները:

Անժխտելի փաստ է, որ Ղարաբաղն Ադրբեջանին բռնակցելուց հետո երբեք նպաստավոր պայմաններ չեն ստեղծվել հայ ժողովրդի այդ հատվածի տնտեսության, մշակույթի, դպրոցի ու լուսավորության զարգացման համար, և եթե միջոցներ են հատկացվել, ապա դրանք տրամադրվել են ղարաբաղաբնակ ադրբեջանցիների հոգևոր-մշակութային արժեքների, դպրոցի ու կրթական համակարգի զարգացման համար:

Արցախի պատմությանը խորագիտակ Հ.Խաչատրյանը, Բագրատ Ուլուբաբյանը, Հրանտ Աբրահամյանը, Շահեն Մկրտչյանը և ուրիշներ Արցախյան ազատամարտի թեժ օրերին մեկ անգամ ևս պատմական ու գիտական անհերքելի տվյալներով հաստատել են Ադրբեջանի ազգահալած գաղութային քաղաքականությունը և նրա հետևանքները: Բ.Ուլուբաբյանը «Արցախի պատմություն» աշխատության մեջ իրավացիորեն մատնանշում է, որ «մարզի հայկական դպրոցը երկաթե վարագույրով անջատվեց մայր Հայաստանի դպրոցական կյանքից: Ոչ միայն դպրոցը, այլև արցախահայն այնպես բաժանվեց իր ազգային վարչական- մշակութային առավել խոշոր միավորից, որ Հայաստան ուսման գնալը կամ այնտեղ կատարած սովորական երթևեկը դիտվում էր որպես քաղաքական անհուսալիության դրսևորում: Սակայն առավել վտանգավորն ու դատապարտելին համարվում էր Հայաստանի հայի հայտնվելն Արցախում, նրա որևէ առնչությունն Արցախի հասարակական կյանքի հետ…»[147:]

«Հայ գյուղը, հայկական մշակույթի գործիչը, հայ գիտնականն ու արվստագետը,- շարունակում է հայրենասեր պատմաբանը,- իրավունք չունի ոտք դնելու Արցախ, հանդիպելու իրենց հայրենակիցների հետ, որոնք իբրև թե ունեին սեփական ինքնավարություն և կարող էին վայելել դրա ընձեռած ազգային մշակույթի ու առաջադիմության պտուղները»[148]:

Եվ այսպես՝ խորհրդային իշխանության հաստատման առաջին իսկ օրից սկսած, Ղարաբաղի ժողովուրդը, նրա հայրենասեր մտավորականությունը չափազանց ծանր պայմաններում սկսեցին ժողովրդական կրթության գործի կազմակերպումը և, գտնվելով ամենածանր պայմաններում, չկորցրեցին իրենց հոգեկան կորովն ու մտքի սլացքը, միշտ մաքառեցին իրենց գոյության, ազգային մշակույթի, հոգևոր արժեքների պահպանման և այդ մշակույթը ժողովրդի մեջ վառ պահող դպրոցի համար: Դա ազգային ինքնագիտակցության, ապագայի նկատմամբ արցախցու մեծ հավատի ու աշխատանքի արդյունքն է (այդ մասին մանրամասն կնշվի աշխատության հաջորդ բաժիններում):

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941-1945թթ.)

1. Հանրակրթական դպրոցի հիմնական խնդիրները Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում (1941-1945թթ.)

Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին Լեռնային Ղարաբաղի ժողկրթության տեղական մարմինները, դպրոցների մանկավարժական խորհուրդները և ուսուցչությունը մեծ եռանդով ձեռնամուխ եղան աճող սերնդի կրթությունն ու դաստիարակությունը պատշաճ մակարդակով իրականացնելու գործին: Դպրոցի զարգացման երկու տասնամյակում (1920-1940թթ.) զգալի վերափոխումներ ու վերակառուցումներ կատարվեցին ԼՂԻՄ-ի ժողկրթության համակարգում: Սակայն 1941թ. հունիսի 22-ին գերմանական ֆաշիզմի ուխտադրուժ հարձակումը Խորհրդային Միության վրա ժամանակավորապես դադարեցրեց հանրակրթական դպրոցի ներքին կյանքում իրականացվող վերափոխումները ուսումնադաստիարակչական աշխատանքներում:

Պատերազմի առաջին իսկ օրերին խորհրդային բազմազգ ժողովրդի հետ միասին հայ ժողովրդի զավակները տարբեր ռազմաճակատներում ու զորատեսակների կազմում գործուն մասնակցություն ունեցան մարտական բոլոր գործողություններին, փառքով պսակելով հայ ժողովրդի մարտական ավանդույթներով լի պատմությունը[149]:

Հայրենական պատերազմի օրերին հազարավոր հայ ուսուցիչներ և ժողովրդական կրթության մարմինների աշխատողներ սրբազան պատերազմի ելան հանուն մեր մեծ հայրենիքի պաշտպանության: Նրանց շարքերում էին նաև Ղարաբաղի հարյուրավոր ուսուցիչներ: Թիկունքում մնացած ուսուցիչները և ժողկրթության տեղական մարմինների աշխատողները, կրկնապատկելով իրենց ուժերը, շարունակեցին հասունացող սերնդի ուսուցման ու դաստիարակության շնորհակալ գործը, ապահովելով մարզի բոլոր դպրոցների անխափան աշխատանքը պատերազմի ամբողջ ժամանակաշրջանում:

Դպրոցի առաջ նոր, չափազանց լուրջ խնդիրներ դրվեցին. արմատական փոփոխությունների ենթարկվեցին կրթության բովանդակությունը, ձևերն ու մեթոդները, առանձին սրությամբ դրվեցին սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրները:

«Ամեն ինչ ռազմաճակատին» նշանաբանով էին աշխատում նաև մարզի ժողկրթության բնագավառի աշխատողները: ԼՂՀ պետական արխիվի փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվում է, թե ուսուցիչներն ինչպիսի ջանասիրությամբ էին օգնում հոսպիտալներին և կարմիրբանակայինների ընտանիքներին: Մարզի ավագ դպրոցականները հոսպիտալների շեֆությունը վերցրին իրենց վրա: Այսպես՝ նրանք վիրավոր զինվորականների համար հավաքեցին 4000 ռուբլի դրամ, 6000 ձու, 400 թաշկինակ, 1680 գիրք, 870 ափսե, 1600 զույգ գդալ-պատառաքաղ և այլ պարագաներ[150]: Ստեփանակերտի դպրոցների ուսուցիչների ղեկավարությամբ ավագ դպրոցականները սիստեմատիկաբար խնամք էին տանում վիրավոր կարմիրբանակայինների նկատմամբ, հերթապահում էին հոսպիտալներում, նամակներ էին գրում վիրավորների անուններից,

նրանց համար թերթեր ու գրքեր էին կարդում, կազմակերպում համերգներ, երեկոներ և այլն:

Պատերազմի տարիներին դպրոցական շենքերի զբաղվածությունը որոշ դժվարություն էր հարուցում աշակերտների ուսումնադաստիարակչական աշխատանքների նորմալ կազմակերպման համար: Ուստի 1942թ. հուլիսի 30-ին ԽՍՀՄ ժողկոմխորհը հատուկ որոշում ընդունեց «Դպրոցահասակ բոլոր երեխաներին դպրոց ընդգրկելու և դպրոցական շենքերն ըստ նշանակության օգտագործելու մասին»[151]: Խնդիր դրվեց մինչև 1942 թ. օգոստոսի 20-ը ազատել զբաղեցրած բոլոր դպրոցական շենքերը, առանձնացնել և կահավորել լրացուցիչ շենքեր, որոնք անհրաժեշտ են նոր ուսումնական տարին հաջող սկսելու համար:

Այդ որոշման կենսագործման ուղղությամբ մարզային ժողկրթության բաժինը համապատասխան աշխատանք կատարեց: Օրինակ՝ մարզժողկրթբաժնի վարիչ Գրիգոր Գրիգորյանն իր հաշվետվության մեջ հայտնում է, որ 1941-42 ուստարվա հուլիսի 1-ի դրությամբ մարզի 193 դպրոցներից կապիտալ և ընթացիկ վերանորոգման է ենթարկվել 168-ը, ըստ որում՝ 24 դպրոցներում վերանորոգման աշխատանքներն ավարտվել են ժամանակին: 129 դպրոցներում արդեն մթերվել է տարվա վառելափայտը, դպրոցների կահավորման համար ձեռք են բերվել 131 հազար ռուբլու սարքեր[152]:

Մարզի ժողկրթության մարմինները և արհմիութենական կազմակերպությունները երեխաների հանգիստը կազմակերպելու համար լայն աշխատանքներ ձեռնարկեցին: 1941-45 թթ. աշակերտական ճամբարներում, առողջարանական տիպի մանկական ճամբարներում հանգստացել և բուժվել 4400 երեխա:

Լեռնային Ղարաբաղի մարզգործկոմին կից ստեղծվել էր ճակատայինների ընտանիքներին և երեխաներին օգնելու հատուկ ֆոնդ, որտեղ կենտրոնացվում էին մարզի հիմնարկ-ձեռնարկությունների, կոլտնտեսությունների և առանձին մարդկանց մուծումները: Պատերազմի տարիներին այդ ֆոնդն է մուծվել 189788 ռ., 47449 կգ հացահատիկ: Ֆոնդի հաշվին վերանորոգվել է ճակատայինների 998 տուն: Մարզի դպրոցականները կազմակերպում էին շաբաթօրյակներ, որոնցից ստացված եկամուտները մուծվում էին ճակատայինների երեխաների օգնության ֆոնդ: Այսպես, օրինակ՝ 1944թ. փետրվարի 20-ին Կարմիր բանակի 26-րդ տարեդարձի առթիվ կազմակերպված շաբաթօրյակին մասնակցել է 12348 մարդ: Այդ շաբաթօրյակից ստացված 58000ռ. գումարը և 12000 կգ հացահատիկը մուծվել է օգնության ֆոնդ[153]:

Հայտնի է, որ Ռյազանի մարզի Ֆեդյակինո գյուղի կոլտնտեսականները և ուսուցիչները նյութական և բարոյական գործարար օգնություն էին կազմակերպում ճակատայինների ընտանիքների համար: Հայրենասիրական այդ շարժումը լայն տարածում գտավ ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի բազմաթիվ կոլտնտեսություններում: Օրինակ՝ ճակատայինների երեխաներին օգնություն ցույց տալու նպատակով 1942թ. միայն Մարտակերտի և Մարտունու շրջանի կոլտնտեսականները հանգանակեցին շուրջ 65 հազար ռ., 105ց հացահատիկ, 400 կգ պանիր և այլ մթերքներ[154]:

Սովետական ռազմիկների երեխաների նկատմամբ մեծ հոգատարություն հանդես բերեցին նաև աշակերտներն ու ուսուցիչները: Օրինակ՝ Թալիշի և Չայլուի դպրոցների կոլեկտիվները ճակատայինների երեխաներին օգնելու համար 1943թ. ընթացքում ստեղծեցին մոտ 50 հազար ռուբլու դրամական ֆոնդ, ձեռք բերեցին 6 տ կարտոֆիլ, 3.5 տ հացահատիկ և այլ մթերքներ[155]: Ուշագրավ է այն փաստը, որ ճակատայինների երեխաների նկատմամբ նման հոգատարու-

թյունը եզակի երևույթ չէր, այլ կրում էր մասսայական բնույթ:

Ընդհանուր պարտադիր ուսուցման օրենքի կենսագործումը պատերազմի տարիներին մնում էր ժողովրդական կրթության մարմինների առաջնահերթ խնդիրը: Պարտադիր ուսուցման իրականացումը պետական, պաշտոնական խոշոր գործ էր և, որպես «անխախտ օրենք, մնում էր նաև պատերազմի պայմաններում»,- գրել է «Պրավդան»[156]:

Մարզում պարտադիր ուսուցման իրականացման գործում առանձնապես կարևոր նշանակություն ունեցավ լուսժողկոմի 1942 թ. դեկտեմբերին ընդունած «Ուսուցիչների և աշակերտների կուլտուր-կենցաղային պայմանները բարելավելու միջոցառումների մասին» որոշումը: Այդ որոշման լույսի տակ ինչպես ամբողջ Հայաստանում, այնպես էլ ԼՂՀ-ում հսկայական աշխատանք կատարվեց մատաղ սերնդի ուսուցման և դաստիարակության ուղղությամբ: Բավական է ասել, որ միայն 1943-44 ուստարում Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվել են 40 գիշերօթիկ դպրոցներ, որոնցում ընդգրկված էին 1500 երեխաներ: Միայն Երևան քաղաքում անապաստան և ճակատայինների երեխաներ խնամքի համար պետության հաշվին կատարված ծախսերը կազմել են. 1943թ.՝ 508.2 հազ ռ., 1944թ.՝ 674 հազ ռ., 1945թ.՝ 600 հազ ռ.: Հանրապետությունում 1944թ. գործող մանկատների թիվը հասավ 100-ի, որտեղ դաստիարակություն էր ստանում ավելի քան 10 հազար երեխա[157]:

Շուշի քաղաքում 1944թ. բացվեցին երեք նոր մանկատներ, որոնցում ընդգրվեցին 232 որբ և 169 անապաստան երեխաներ: Կոմերիտականների ջանքերով մարզի տարբեր վայրերում հավաքագրվեցին ավելի քան 500 խնամազուրկ անապաստան երեխաներ և տեղավորվեցին մանկատներում: Որբ և անապաստան երեխաներին խնամելու ուղղությամբ բավական աշխատանք էին տանում նաև կոլտնտեսություններում: Այսպես, օրինակ՝ միայն պատերազմի առաջին տարիներին մարզի կոլտնտեսություններում կազմակերպվեց 9 մանկատուն, որտեղ ընդգրկվեց 186 երեխա[158]:

Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում ընդհանուր պարտադիր կրթության վերաբերյալ մարզի ղեկավար մարմինների կարևորագույն ձեռնարկումներից մեկը պատմական որոշումն էր՝ Լեռնային Ղարաբաղում ևս 1943-44 ուստարվանից հանրակրթական դպրոցներում ուսուցումն սկսել 7 տարեկանից: Այդ կապակցությամբ տեղերում հսկայական միջոցներ և կազմակերպչական մեծ աշխատանք էր պահանջվում, որպեսզի ոչ մի երեխա դուրս չմնա դպրոցից: «Պրավդա» ժամանակին գրել է. «Պատերազմական իրադրության պայմաններում ինչպիսի դժվարություններ էլ որ ծագեն, դպրոցական հասակի բոլոր երեխաները պետք է սովորեն, դպրոցը պետք է աշխատի, պարապմունքները պետք է ընթանան կազմակերպված, ուսումնական ծրագրերը պետք է կատարվեն ամբողջությամբ: Այսպիսին է մեր ժողովրդի պահանջը»[159]:

Այդ պահանջը պատասխանատվության խոր զգացումով էին կատարում մարզի ժողովրդական կրթության մարմինները: Այդ մասին են վկայում նաև հետևյալ տվյալները[160].

Աղյուսակ 9

Տեղեկություններ 1941-45 թթ. ԼՂԻՄ-ի դպրոցների, աշակերտների և ուսուցիչների մասին

Ուս տարի	Դպրոցների թիվը				Աշակերտների թիվը	Ուսուցիչների թիվը
	տարր.	յոթն.	միջն.	ընդ.		
1941-42	44	102	33	197	26743	1590
1942-43	44	104	34	182	32307	1500
1943-44	46	105	36	187	31414	1490
1944-45	51	106	41	196	33719	1674

Դրվատանքի արժանի են Ստեփանակերտի, Շուշիի, Կաղարծու, Բերդաշենի (Ղզղալայի), Թալիշի, Հաթերքի, Չայլվի, Տումու, Ճարտարի, Բալուջայի, Շուշիքենդի և այլ դպրոցների մանկավարժական կոլեկտիվների կատարած աշխատանքները:

Ինչպես նշել ենք, Մեծ Հայրենականի առաջին օրերին Լեռնային Ղարաբաղի հարյուրավոր ուսուցիչներ մեկնեցին ռազմաճակատ: Դպրոցներում առանձնապես խիստ պակասել էր մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի և այլ առարկաների ուսուցիչների թիվը:

1942թ. լուսբաժինը լրացուցիչ միջոցառումներ ձեռնարկեց դպրոցներն ուսուցիչներով ապահովելու համար: Ժամանակից շուտ ավարտեց Ստեփանակերտի երկամյա ուսուցչական ինստիտուտի II կուրսերի, Շուշիի և Հադրութի մանկավարժական տեխնիկումների III կուրսերի ուսանողների մի մասը: Դպրոց վերադարձան այն մանկավարժները, ովքեր այլևայլ պատճառներով աշխատում էին ժողովրդական տնտեսության այլ բնագավառներում:

Հատուկ դասընթացներում պատրաստություն ստանալուց հետո ուսուցչական աշխատանքի ուղարկվեցին բարձրագույն կրթություն ստացած բազմաթիվ այլ մասնագետներ: Բացի այդ, կազմակերպվեցին վերապատրաստման դասընթացներ Ստեփանակերտում, Մարտակերտում, Հադրութում, որտեղ վերապատրաստվեցին հարյուրավոր ուսուցիչներ: Այդ դասընթացներում դասախոսություն էին կարդում նաև մարզի ճանաչված ուսուցիչներ Ս.Աբրահամյանը, Ա.Մարտիրոսյանը, Լ.Բաղդասարյանը, Կ.Դավթյանը, Ս.Կարապետյանը, Ս.Հայրապետյանը, Տ.Ալեքսանդրյանը և ուրիշներ: Այդ ամենի շնորհիվ մարզի դպրոցները համալրվեցին շուրջ 250 նոր ուսուցիչներով[161]:

Լեռնային Ղարաբաղի մարզժողկրթբաժինը 1942թ. մարտի 23-ին որոշում է ընդունում հանրակրթական դպրոցների 10-րդ դասարանների 20 գերազանցիկ շրջանավարտների թույլ տալ աշխատել դպրոցներում՝ որպես ուսուցիչ: Այդ նպատակով էլ լուսժողկոմատը 1942թ. ապրիլի 4-ի թիվ 24 հրամանով սահմանում է միջնակարգ դպրոցների 10-րդ դասարաններում «Մանկավարժություն» առարկայի ուսուցում՝ 20 ժամվա ծավալով: Հանրակրթական դպրոցներում մանկավարժական աշխատանքի են անցնում նաև ռազմաճակատից վերադարձած հաշմանդամ նախկին ուսուցիչները:

Պատերազմի ծանր տարիներին ինչպես Հայաստանի, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի առաջավոր ուսուցիչները պատվով կատարեցին իրենց պարտականությունները մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության, ինչպես նաև

բնակչության շրջանում տարվող ագիտացիոն-պրոպագանդական աշխատանքների ուղղությամբ, որոնցից շատերն արժանացան կառավարական պարգևների ու պատվոգրերի: Այսպես՝ պատերազմի սկզբին (1941թ.) մարզի դպրոցների 12 ուսուցիչներ ունեին վաստակավոր ուսուցչի կոչում:

Լեռնային Ղարաբաղի մարզժողկրթբաժնի վարիչ Գրիգոր Գրիգորյանի 1941-1942 ուստարվա հաշվետվություններում, շրջանային կրթության բաժինների վարիչներին հղած կոչերում ու հրահանգներում մատնանշում է, որ թիկունքում մնացած ուսուցիչների կարևորագույն խնդիրներից մեկն էր՝ ակտիվ մասնակցություն ունենալ մասսաների մեջ տարվող ագիտացիոն-մասսայական պրոպագանդիստական աշխատանքներին, մերկացնել գերմանական ֆաշիզմի գազանային էությունը և ստոր նպատակները: Պատերազմը պահանջում էր բացառիկ ուշադրություն դարձնել աշակերտների գաղափարական-քաղաքական դաստիարակությանը և արագ կերպով վերակառուցել դպրոցում ավանդվող բոլոր առարկաների դասավանդումը[162]:

Աշակերտական կազմակերպությունների կոնկրետ ղեկավարությունը, նրանց ամբողջ գործունեությունը պետք է արտահայտվեր ուսման որակի բարձրացման, գիտակցական ամուր կարգապահության ամրապնդման և քաղաքական-մասսայական աշխատանքի մեջ: Միաժամանակ կոչերում ու հրահանգներում նշվում է, որ գրականության ուսուցիչների խնդիրն է մեծ ուշադրություն նվիրել ինչպես ռուսական, այնպես էլ հայկական գեղարվեստական այն ստեղծագործությունների ուսումնասիրության վրա, որոնք օժանդակում էին հայրենասիրության ու մեր հայրենիքի թշնամիների նկատմամբ խոր ատելության դաստիարակությանը:

Պատմության ուսուցիչների խնդիրն է դասավանդման ընթացքում, պատմական կոնկրետ նյութի հիման վրա, վառ օրինակով դպրոցականների առաջ բաց անել մեր հայրենիքի ժողովուրդների, հատկապես ռուս մեծ ժողովրդի հերոսական պատմության էջերը, օտարերկրյա զավթիչների դեմ նրանց մղած հաղթական պատերազմների պատմության էջերը, աշակերտներին պատմել այն անօրինակ սխրագործությունների մասին, որ կատարել են մեր ժողովուրդներն ու նրանց լեգենդար հերոսները հանուն իրենց սրբազան հայրենիքի ազատության ու անկախության: Այդ բոլորն Հայրենական մեծ պատերազմում կարմիր բանակի տարած պատմական հաղթանակների ուսումնասիրության միջոցով պատմության դասատուները պետք է նպաստեին մեր երեխաների հայրենասիրական դաստիարակության մեծ գործին:

Աշխարհագրության ուսուցիչներն առանձնակի ուշադրություն պետք է դարձնեն աշխարհի ֆիզիկական և քաղաքական քարտեզների յուրացման, գործնական աշխատանքների ու վարժությունների վրա (տեղագրական և աշխարհագրական քարտեզների ընթերցում ու խելացի օգտագործում, հասարակ քարտեզների, սխեմաների ու պլանների գծագրում, տոպոգրաֆիական վարժությունների կատարում և այլն), կոնկրետ փաստերով աշակերտներին պետք է ցույց տային ֆաշիստական Գերմանիայի տնտեսական կառուցվածքի խոցելի, թույլ կողմերը, նրա ռեսուրսների սահմանափակությունը, Գերմանիայի պարտության անխուսափելիությունը[163]:

Մաթեմատիկայի դասավանդման մեջ անհրաժեշտ էր հասնել մաթեմատիկայի տեսության գիտակցական խոր ըմբռնմանը աշակերտների կողմից, ապահովել նրանց գործնական ունակությունների, մաթեմատիկական գիտելիքները կյանքում գործադրելու հմտությունների զարգացումը: Այդ գիտելիքները ռազմական գործի հետ սերտ կապակցելը կարևորագույն խնդիր դարձավ:

Ֆիզիկայի ուսուցիչները պարտավոր էին ֆիզիկայի դասավանդումը կազմակերպել այնպես, որպեսզի դպրոցն ավարտողները յուրացնեն ֆիզիկական այն օրինաչափությունները, որոնք ընկած են տեխնիկայի կոնկրետ օբյեկտների՝ հրետանու, ավիացիայի, ներքին այրման շարժիչների, տրակտորների, կապի միջոցների հիմքում, իմանան օպտիկական գործիքների, էլեկտրականության գործնական կիրառման միջոցները և այլն:

Քիմիայի դասավանդման ընթացքում ուսուցիչները պետք է հատուկ ուշադրություն դարձնեին մարտական թունավոր նյութերի, օրգանիզմի վրա այդ նյութերի ներգործության և նրանց դեմ կռվելու կոնկրետ միջոցների ուսումնասիրմանը: Սովորողները պետք է շատ լավ գիտենային հակագազի կառուցվածքը, նրա խնամքն ու գործադրումը, գազապաստարանների կառուցվածքը, թունավոր նյութերից պաշտպանվելու համար նախատեսված հագուստների օգտագործումը, ջրի և ուտելիքի պահպանության անհրաժեշտ պայմանները, դեգազացիայի ձևերն ու միջոցները: Դպրոցականները պետք է ճանաչեին հրաձիգ նյութերի և ռումբերի տեսակները, իմանային նրանց հանգցնելու ձևերն ու միջոցները, հակահրդեհային միջոցառումները և այլն[164]:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին կարևոր պարտականություններ էր դրվում հատկապես բնագիտության ուսուցիչների վրա: Նրանց խնդիրն էր աշակերտների հետ միասին դեղաբույսերի հավաքումը: Իհարկե, խաղաղ տարիներին դա դպրոցականների համար հասարակական օգտակար աշխատանքներից մեկն էր: Այդ աշխատանքը բացառիկ նշանակություն ստացավ Հայրենական պատերազմի տարիներին և դպրոցականների համար հանդիսացավ հայրենիքին ծառայելու իրենց կարևորագույն պարտականություններից մեկը:

Անհրաժեշտ էր կազմակերպել և ամեն կերպ խրախուսել աշակերտների աշխատանքը կարմիրբանակայինների ընտանիքների հողամասերում, դպրոցական տնտեսության մեջ, կոլտնտեսությունների այգիներում, բանջարանոցներում, դաշտերում և այլն: Այդ աշխատանքները, սակայն, չպիտի խանգարեին կամ դժվարացնեին ծրագրային նյութի անցմանն ու յուրացմանը աշակերտների կողմից, այլ ավելի բազմակողմանի ու հետաքրքիր պիտի դարձնեին ուսուցման գործընթացը՝ սովորողների մոտ զարգացնելով աշխատասիրություն, գիտակցական վերաբերմունք և պատրաստակամություն՝ բոլոր միջոցներով օգնելու Հայրենական մեծ պատերազմի հաջող ավարտմանը:

Օտար լեզվի ուսուցիչների խնդիրն էր ծրագրային նյութերի ուսուցման ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել ռազմական թեմային վերաբերող տարրերի յուրացման, բանավոր խոսքի ունակությունների զարգացման, ռազմական տերմիններին:

Հայրենական պատերազմը դպրոցի առջև մեծ սրությամբ դրեց սովորողների ռազմաֆիզիկական և ռազմասանիտարական ուսուցման խնդիրը: Աշակերտներին անհրաժեշտ էր կոփել ֆիզիկապես և տալ ռազմական բնույթի ունակություններ ու հմտություններ:

Առանձնապես անհրաժեշտ էր բարձր դասարանների աշակերտներին վարժեցնել եթերային ու տուրիստական բնույթի քայլվածքի, վազքի, անհարթ վայրերում հանդիպող դժվարությունների հաղթահարման (թռիչքով, մագլցելով կամ այլ ձևերով): Նրանք պետք է սովորեին ամեն տեսակի պայմաններում ազատ շարժվել դահուկներով, նռնակներ նետել որքան կարելի է հեռու և անվրեպ, լողալով անցնել ջրային արգելքները, ծանրություն բարձրացնել ու փոխադրել, ճարպկություն հանդես բերել ձեռնամարտերում և մյուս բոլոր դեպքերում, առաջին բու-

ժօգնություն ցույց տալ ընկերներին և այլն:

Ռազմաֆիզիկական պատրաստության ժամանակ աշակերտները պետք է գործնական գիտելիքներ և հմտություններ ձեռք բերեին հրաձգությունից, տեղագրությունից, տակտիկայից, շարային պատրաստությունից, հիվանդներին ու վիրավորներին ցույց տրվող առաջին օգնությունից, հակաօդային և հակաքիմիական պաշտպանությունից, ծանոթանային Կարմիր բանակի կառուցվածքին ու կանոնադրություններին:

Դպրոցականները ակտիվ կերպով պետք է մասնակցեին հակաօդային քիմիական պաշտպանության ձեռնարկումներին, լուսաքողարկումներին, բնակարանները, հիմնարկերը, բերքը հրդեհից պաշտպանելու և օդային տագնապի ժամանակ բնակչությանն օգնելու գործին: Մարզլուսբաժնի վարիչի կոչերում ու հրահանգներում մատնանշվում է, որ սկսած 5-րդ դասարանից, աշակերտներին անհրաժեշտ է ներգրավել ոչ միայն դպրոցում կատարվող ռազմապաշտպանական, այլև ինքնապաշտպանության տեղական մարմիններին օգնություն ցույց տալու գործի մեջ, օգնել ավազով պարկեր պատրաստելուն, կապի և այլ կարգի հանձնարարություն կատարել, նրանց մասնակից դարձնել դիտարանների պատրաստմանը և հերթապահություններին, պատնեշներ և ապաստաններ կառուցելու գործին:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին դպրոցին առաջադրված նոր պահանջներն իրենց արտացոլումը գտան նաև կրթության բովանդակության (ուսումնական պլաններ, ծրագրեր և դասագրքեր) վերափոխման մեջ: Պատերազմական իրադրությունից ելնելով՝ միջնակարգ դպրոցի 1941-42 ուստարվա ուսումնական պլաններում զգալի փոփոխություններ կատարվեցին: Այսպես, օրինակ՝ ռազմական պատրաստություն առարկան նախկինում դասավանդվում էր 9-10-րդ դասարաններում՝ շաբաթական մեկ ժամ, սակայն նոր պլանով մտցվեց նախնական ռազմական պատրաստություն 5-7-րդ դասարաններում՝ շաբաթական երեք ժամ և մինչզինակոչային ռազմական պատրաստություն 8-9-րդ դասարաններում՝ շաբաթական չորս ժամ, իսկ 10-րդ դասարանում՝ հինգ ժամ: Այսինքն՝ նախկին 2 ժամվա փոխարեն ռազմական պատրաստությանը միջնակարգ դպրոցում հատկացվեց շաբաթական 22 ժամ:

Պատերազմի տարիներին կենսական պահանջ էր դարձել դպրոցականների կողմից ուսումնական աշխատանքներին զուգընթաց հանրօգուտ և արտադրողական աշխատանք կատարելը: Այդ նպատակով էլ, լուսժողկոմի որոշման համաձայն, 1941-42 ուստարվանից բոլոր դպրոցների 5-7-րդ դասարաններում մտցվեց գյուղատնտեսական աշխատանքի ուսուցում՝ շաբաթական 2 դասաժամ, իսկ 8-9-րդ դասարաններում՝ ներքին այրման շարժիչների ուսուցում՝ շաբաթական 2 դասաժամ: Այդ նպատակի համար կազմված ծրագրերն ապահովում էին ոչ միայն տեսական գիտելիքների ուսուցումը, այլև դրանց գործնական կիրառումը:

Նշենք, որ ուսումնական պլանում և ծրագրերում կատարված այս փոփոխությունները չարվեց հանրակրթական առարկաների հաշվին, այլ պարզապես ավելացվեց աշակերտների շաբաթական ծանրաբեռնվածությունը: Եթե նախապատերազմական տարիներին ուսումնական պլանով 5-10-րդ դասարաններում շաբաթական ծանրաբեռնվածությունը 28 ժամ էր կազմում, ապա նոր ուսումնական պլանով՝ 35 ժամ[165]:

Դպրոցում ավանդվող հանրակրթական առարկաների և հատկացված ժամերի մասին մեզ գաղափար են տալիս 1941-42 ուսումնական տարվա պլանները:

Ուսումնական պլան
Տարրական և միջնակարգ դպրոցի (1941-42 ուսումնական տարի)
Տարրական դպրոց[166]

Աղյուսակ 10

Հ/հ	Առարկաներ	Դասարաններ			
		1	2	3	4
1	Մայրենի լեզու	12	11	6	7
2	Ռուսաց լեզու	-	3	5	5
3	Թվաբանություն	7	6	6/5	6
4	Բնագիտություն	-	-	2/1	2/3
5	Պատմություն	-	-	0/2	2
6	Աշխարհագրություն	-	-	2	3/2
7	Ռազմաֆիզիկական պատրաստություն	1	1	2	2
8	Նկարչություն	1	1	1	1/0
9	Երգ	1	1	1	0/1
10	Գեղագիտություն	2	1	-	-
	Ընդամենը՝	24	24	25	28

Միջնակարգ դպրոց

Հ/հ	Առարկաներ	Դասարաններ									
		1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Մայրենի լեզու և գրական ընթերցանություն	12	12	6	7	7	6	4	1	1	1
2	Գրականություն	-	-	-	-	-	-	-	2/3	3	3/2
3	Ռուսաց լեզու	-	-	5	5	6	6	6	3	3	1
4	Ռուս գրականություն	-	-	-	-	-	-	-	2	2	2
5	Թվաբանություն	7	7	6/5	6	6	-	-	-	-	-
6	Հանրահաշիվ, երկրաչափություն և եռանկյունաչափություն	-	-	-	-	-	6	5/6	5	5/6	6
7	Բնագիտություն	-	-	2/1	2/3	3	3/2	2	2	2/1	-
8	Պատմություն	-	-	0/2	2	3	2/3	2/3	4/3	3/4	3/4
9	ՍՍՀՄ կոնստիտուցիա	-	-	-	-	-	-	2	-	-	-
10	Աշխարհագրություն	-	-	2	3/2	3	2	3/2	2	2	-
11	Ֆիզիկա	-	-	-	-	-	2	2	3	3	4
12	Աստղաբաշխություն	-	-	-	-	-	-	-	-	-	1
13	Քիմիա	-	-	-	-	-	-	2	2	3/2	3
14	Օտար լեզու	-	-	-	-	2	2	1	2	2	1

15	Ռազմֆիզկուլտ պատրաստություն	1	1	2	2	-	-	-	-	-	-
16	Նախնական ռազմական պատրաստություն	-	-	-	-	3	3	3	-	-	-
17	Գծագրություն	-	-	-	-	-	-	1	1	1	1
18	Նկարչություն	1	1	1	0/1	-	-	-	-	-	-
19	Երգ	1	1	1	1/0	-	-	-	-	-	-
20	Գեղագիություն	2	2	-	-	-	-	-	-	-	-
21	Գյուղատնտեսության ուսուցում (ագրոմինիմում)	-	-	-	-	2	2	2	-	-	-
22	Մինչզինակոչային ռազմ. պատրաստություն	-	-	-	-	-	-	-	-	-	5
23	Ներքին այրման շարժիչներ	-	-	-	-	-	-	-	2	2	2
Ընդամենը՝		24	24	25	28	35	35	35	35	35	35

Դպրոցում ավանդվող հանրակրթական առարկաների և հատկացված ժամերի մասին մեզ գաղափար են տալիս 1942/43 ուսումնական տարվա պլանները.

Աղյուսակ 11

Ուսումնական պլան
Տարրական դպրոցի (1942-43 ուսումնական տարի)

Հ/հ	Առարկաներ	Դասարաններ			
		1	2	3	4
1	Մայրենի լեզու	12	11	6	7
2	Ռուսաց լեզու	-	3	5	5
3	Թվաբանություն	7	6	6/5	5
4	Բնագիտություն	-	-	2/1	2/3
5	Պատմություն	-	-	0/2	2
6	Աշխարհագրություն	-	-	2	3/2
7	Ռազմաֆիզիկական պատրաստություն	1	1	2	2
8	Նկարչություն	1	1	1	1/0
9	Երգ	1	1	1	0/1
10	Գեղագիտություն	2	1	-	-
Ընդամենը՝		24	24	25	28

Ուսումնական պլան
Միջնակարգ և ոչ լրիվ միջնակարգ դպրոցի համար
(1942-43 ուսումնական տարի)

Հ/հ	Առարկաներ	Դասարաններ									
		1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Մայրենի լեզու և գրական ընթերցանություն	12	12	6	7	7	6	4	1	1	1
2	Գրականություն	-	-	-	-	-	-	-	2/3	3	3/2
3	Ռուսաց լեզու	-	-	5	5	6	6	6	3	3	1
4	Ռուս գրականություն	-	-	-	-	-	-	-	2	2	2
5	Թվաբանություն	7	7	6/5	6	6	-	-	-	-	-
6	Հանրահաշիվ, երկրաչափություն և եռանկյունաչափություն	-	-	-	-	-	6	5/6	5	5/6	6
7	Բնագիտություն	-	-	2/1	2/3	3	3/2	2	2	2/1	-
8	Պատմություն	-	-	0/2	2	3	2/3	2/3	4/3	3/4	3/4
9	ՍՍՌՄ կոնստիտուցիա	-	-	-	-	-	-	2	-	-	-
10	Աշխարհագրություն	-	-	2	3/2	3	2	3/2	2	2	-
11	Ֆիզիկա	-	-	-	-	-	2	2	3	3	4
12	Աստղաբաշխություն	-	-	-	-	-	-	-	-	-	1
13	Քիմիա	-	-	-	-	-	-	2	2	3/2	3
14	Օտար լեզու	-	-	-	-	2	2	1	2	2	1
15	Ռազմֆիզկուլտ պատրաստություն	1	1	2	2	-	-	-	-	-	-
16	Նախնական ռազմական պատրաստություն	-	-	-	-	3	3	3	-	-	-
17	Մինչզինակոչային ռազմ. պատրաստություն	-	-	-	-	-	-	-	-	-	5
18	Գծագրություն	-	-	-	-	-	-	1	1	1	1
19	Նկարչություն	1	1	1	0/1	-	-	-	-	-	-
20	Երգ	1	1	1	1/0	-	-	-	-	-	-
21	Գեղագիություն	2	2	-	-	-	-	-	-	-	-
22	Գյուղատնտեսության ուսուցում (ագրոմինիմում)	-	-	-	-	2	2	2	-	-	-
23	Ներքին այրման շարժիչներ	-	-	-	-	-	-	-	2	2	2
	Ընդամենը՝	24	24	25	28	35	35	35	35	35	35

Վերոհիշյալ աղյուսակներից երևում է, որ տարրական, միջնակարգ և ոչ լրիվ միջնակարգ դպրոցի 1941-42 և 1942-43 թվականների ուսումնական պլաններում զգալի փոփոխություններ կատարվեցին:

Պատերազմի տարիներին որոշ չափով վերանայվեցին նաև ուսումնական ծրագրերն ու դասագրքերը, առանձնահատուկ ուշադրություն դարձվեց գործնական աշխատանքներին: Ուսուցվող նյութի ծավալը թողնելով նույնը, խնդիր դրվեց, որպեսզի համապատասխան առարկաների ուսուցման ժամանակ սովորողներին պրակտիկ գիտելիքներ տրվեն այն մասին, թե ինչպես կողմնորոշվել, տեղանքի պլանը գծել, քարտեզից և կողմնացույցից օգտվել, շտապ օգնություն ցույց տալ, թունավոր քիմիական նյութերից պաշտպանվել և այլն: Պահանջվում էր պատմության և գրականության դասերին ավելի խորն ուսումնասիրել հայրենասիրական բնույթի պատմական իրադարձություններն ու գրական երկերը՝ սովորողների մեջ առաջացնելով սեր և նվիրվածություն դեպի հայրենիքը: Դա որոշակիորեն արտահայտվում էր նաև մյուս առարկաների ծրագրերում:

Ուսումնական պլանի և ծրագրերի մեջ կատարված փոփոխություններն ինքնին նոր դժվարություններ ստեղծեցին դպրոցի համար: Սակայն կային նաև այլ դժվարություններ:

Խիստ դժվարացավ դասագրքերի հրատարակության գործը: Թղթի պակասի հետևանքով դասագրքերի տպաքանակը կիսով չափ կրճատվեց: Որոշ դասագրքեր 2-3 տարին մեկ էին հրատարակվում: Ընդհանուր առմամբ փոքրացավ դասագրքերի ծավալը:

Ժողովրդական կրթության մարմինները և ուսուցիչները մեծ աշխատանք կատարեցին, որպեսզի դասագրքերը խնամքով պահպանվեն և օգտագործվեն մի քանի տարի:

Դասագրքերի ետգնման, ինչպես և դպրոցի ներսում դրանց փոխանակման գործը կատարվում էր դպրոցների և ուսուցիչների միջոցով, որն, իհարկե, մեծ ջանքեր էր պահանջում:

Առանձին դպրոցներում 3-5 աշակերտի տրվում էր մեկ դասագիրք և հերթականություն սահմանվում այն օգտագործելու համար: Երբեմն էլ կոլեկտիվ ձևով էր օգտագործվում դասագիրքը: Ուստի այդպիսի պայմաններում մարզի ժողովրդական կրթության բնագավառի աշխատողները, հատկապես ուսուցիչները, աշակերտների և ծնողների շրջանում լայն բացատրական աշխատանք տարան եղած դասագրքերին և դպրոցի ունեցվածքին խնամքով վերաբերվելու, վերանորոգելու և պահպանելու, ինչպես նաև ինքնաշեն գործիքներ, պիտույքներ ու սարքեր պատրաստելու ուղղությամբ: Օրինակ՝ Մարտակերտի շրջկենտրոնի դպրոցի աշակերտները բնակչության օգնությամբ ստեղծեցին ֆիզիկայի լաբորատորիա, վերանորոգեցին կոլտնտեսությունից ստացած տրակտորը և ավտոմեքենան: Մարտակերտի միջնակարգ դպրոցի օրինակին հետևեցին Թալիշի, Չայլվի, Կուսապատի, Գիշու, Ճարտարի, Աշանի, Հերհերի և մարզի գյուղական այլ դպրոցներ[167]:

Ծայրահեղ դժվար էր աշակերտներին տետրերով ապահովելը: Դարձյալ թղթի պակասության պատճառով տետր քիչ էր արտադրվում, այն էլ՝ անորակ: Աշակերտներին տետր տրվում էր շատ սահմանափակ: Հասկանալի է, որ նման պայմաններում կրճատվում էին նաև գրավոր հանձնարարությունները:

Ուսուցման գործին մեծապես վնասում էր նաև գրենական պիտույքների պակասը: Լաբորատոր նյութերով, քարտեզներով, պլակատներով դպրոցը գրեթե չէր մատակարարվում: Այդ պատճառով էլ հսկայական աշխատանք ծավալվեց ունեցածը խնամքով օգտագործելու, աշակերտների և ուսուցիչների միջոցով դրանք վերանորոգելու և ինքնաշեն գործիքներ, պիտույքներ ու սարքեր պատրաստելու ուղղությամբ: Այդ տեսակետից օրինակելի աշխատանք կատարեցին Հադրութի

շրջանի Տումու, Մեծ Թաղլարի, Բանազուրի, Ազոխի, Տողի, Մարտունու շրջանի Ճարտարի, Գիշու, Խնուշինակի, Հաղորտու, Շուշիի, Սարուշենի, Շոշ և Չանախչու միջնակարգ դպրոցի բարձր դասարանների աշակերտներն ու ֆիզիկայի և քիմիայի ուսուցիչները, որոնք տեղական միջոցներով ստեղծեցին ֆիզիկայի և քիմիայի հարուստ լաբորատորիաներ: Նրանց օրինակին հետևեցին նաև Ասկերանի, Մարտակերտի շրջանների մի շարք դպրոցների կոլեկտիվներ:

Որոշ ուսումնական պիտույքների արտադրության և վերանորոգման գործում օգնություն կազմակերպեցին Ստեփանակերտի, Շուշիի արտադրական ձեռնարկությունները:

ԼՂ լուսժողկոմի և տեղական մարմինների նախաձեռնությամբ հանրակրթական դպրոցը նույնիսկ ռազմական պայմաններում շարունակում էր աշխատանքը դպրոցահասակ բոլոր երեխաներին պարտադիր ուսուցման մեջ ներգրավելու ուղղությամբ: Ինչպես նշեցինք, Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում անշեղորեն կենսագործվել է պարտադիր ուսուցման օրենքը, դպրոցահասակ բոլոր երեխաներն ընդգրկված են եղել ուսման մեջ, պահպանվել ու ընդարձակվել է դպրոցական ցանցը: Դա ցույց է տալիս նաև, որ պարտադիր ուսուցումը Հայրենական պատերազմի տարիներին հանդիսացել է մեր երկրի պաշտպանական կարևոր խնդիրներից մեկը: Պատերազմի տարիներին դպրոցին առաջադրված նոր խնդիրներն իրենց արտացոլումը գտան ուսումնադաստիարակչական, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման ձևերի ու մեթոդների մեջ:

2. Հանրակրթական դպրոցի ուսումնադաստիարակչական, արտադասարանական և արտադպրոցական հանրօգուտ աշխատանքները Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945թթ.)

Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում ընդհանուր պարտադիր կրթության իրականացման, կրթության բովանդակության ժամանակավոր փոփոխման զուգընթաց որոշակի փոփոխություններ կատարվեցին նաև դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում: Ամբողջ դասավանդմանը, դպրոցի ողջ դաստիարակչական աշխատանքին տրվեց մարտական, հայրենասիրական բնույթ: Այդ գործին զգալիորեն օգնեցին ԼՂ լուսժողկոմատի, շրջանային կրթության բաժինների հրահանգներն ու ցուցումները ուսումնական նյութի վերանայման ուղղությամբ:

Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի դպրոցներում ուսումնական պարապմունքների արդյունավետ կազմակերպման համար բավականին մեծ դժվարություններ էին ստեղծվել հատկապես այն պատճառով, որ դպրոցական մի շարք շենքեր, առանձնապես Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Էջմիածնում, Ստեփանակերտում և Շուշիում վերածվեցին զինվորական հիվանդանոցների: Այդ պատճառով շատ դպրոցներ ստիպված եղան անցնել երեք հերթ պարապմունքների: Անհրաժեշտ էր դպրոցում ընդգրկել էվակուացիայի ենթարկված հարյուրավոր երեխաների: Դասագրքերի և տետրերի, ինչպես նաև գրենական պիտույքների արտադրությունը ժամանակավորապես նվազեց: Դպրոցները որակյալ կադրերով ապահովելու գործը դժվարացավ: Դժվարացան նաև վառելիքի հայթայթումն ու փոխադրումը:

Ստեղծված այդ և այլ դժվարությունները, սակայն, չէին կարող հարկադրել թեկուզ որևէ չափով կրճատելու ուսումնական ծրագրերն ու պլանները կամ թույլ

տալու, որ թերակատարվեն ծրագրային նյութերը: Հայաստանի կառավարությունը, կուսակցության ԼՂ մարզկոմը, լուսժողկոմն ու տեղական մարմիններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում ընդհանուր պարտադիր ուսուցման իրականացման համար:

Այսպիսով, ժողովրդական կրթության մարմինների ու բոլոր դպրոցների խնդիրն էր ամեն գնով իրականացնել ուսումնական ծրագրերը, ճիշտ կազմակերպել ուսուցման գործընթացը և դպրոցում ամրապնդել գիտակցական կարգապահությունը, երեխաների մեջ կոփել դժվարությունները հաղթահարելու ոգին:

Աճող սերնդին գիտելիքներով, կարողություններով և հմտություններով զինելու խնդրի կարևորությունը չէր կարելի թուլացնել: Ընդհակառակը, պատերազմական իրադրությունը և ժամանակակից բազմապիսի բարդ տեխնիկան հրամայաբար պահանջում էին այդ տեխնիկային տիրապետող մարդիկ: Հայրենական պատերազմը ակնառու կերպով ցույց տվեց, թե որքան մեծ նշանակություն ունեն գիտելիքները և այդ գիտելիքներից օգտվելու կարողությունն ու հմտությունը պրակտիկ կյանքում:

Ժողովրդական կրթության մարմինները, կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ, մասսայական ստուգումներ էին անցկացնում դպրոցներում՝ պարզելով դպրոցների ուսումնական և դաստիարակչական աշխատանքների վերակառուցման ընթացքը:

ԼՂ լուսբաժնի վարիչ Սարգիս Աբրահամյանի (1942-1949 թթ. մարզլուսբաժվար) հաշվետվությունից[168] տեղեկանում ենք, որ պատերազմական իրադրության հետևանքով փոխվեց նաև ուսումնական մի շարք առարկաների՝ մայրենի լեզվի և գրականության, ռուսաց լեզվի և գրականության, պատմության, աշխարհագրության, մաթեմատիկայի, կենսաբանության, ռազմագիտության դասավանդման բնույթը: Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցի ուսուցիչները հսկայական ջանքեր գործադրեցին դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքի որակը անհրաժեշտ մակարդակի վրա դնելու ուղղությամբ: Եվ նրանց հայրենանվեր աշխատանքի ու ջանքերի շնորհիվ էր, որ պատերազմի ընթացքում հայկական մարզի դպրոցներում դրվատանքի արժանի շատ գործեր կատարվեցին: Դրան մեծապես նպաստեցին հանրակրթական դպրոցներում հայոց լեզվի ուսուցման դրվածքը բարելավելու մասին ՀԿ(բ)Կ կենտկոմի բյուրոյի 1943թ. հունիսի 8-ի որոշումը, կուսակցության ԼՂ մարզկոմի 1943թ. հունիսի 16-ի որոշումները և ընդունած հրահանգներն ու ցուցումները:

Այդ որոշումների մեջ նշված էր, որ հանրապետության և ԼՂԻՄ դպրոցների հայոց լեզվի և գրականության դասատուների զգալի մասը մեկնել է ռազմաճակատ: Նրանց փոխարինել են անփորձ, իսկ հաճախ էլ տեսական թույլ պատրաստություն ունեցող մարդիկ: Ուստի անհրաժեշտ էր առաջին հերթին զբաղվել կադրերի որակի բարձրացման հարցով: Այդ կապակցությամբ լուսավորության նախարարությանը և լուսժողկոմներին(ՀՀ և ԼՂԻՄ) պարտավորեցվեց ամառային արձակուրդների ընթացքում դասընթացների միջոցով պատրաստել՝ Հայաստանում 500[169], Լեռնային Ղարաբաղում 250 ուսուցիչ[170]:

Լուսժողկոմներին հանձնարարվեց նաև վերանայել հայոց լեզվի ուսուցիչների կազմը՝ այն ավելի որակյալ մանկավարժներով համալրելու նպատակով:

Ապագա ուսուցիչների լեզվական պատրաստությունը բարձրացնելու նպատակով հանձնարարվեց մանկավարժական բուհերի և պետական համալսարանի բոլոր ֆակուլտետների առաջին կուրսերում, բանասիրական ֆակուլտետի բոլոր կուրսերում մտցնել հայոց լեզվի դասընթացի ուսուցում (պատերազմի տարի-

ներին Շուշիում գործում էր երկամյա մանկավարժական ինստիտուտ):

Մայրենի լեզվի ուսուցման որակը բարելավելու հարցը Հայրենական պատերազմի տարիներին հանրակրթական դպրոցի ուշադրության կենտրոնում էր մնում. ինչպես արդեն նշվեց, այդ ժամանակ նույնիսկ ավելացվում են մայրենի լեզվի ուսուցմանը հատկացված ժամերը, ամբողջությամբ հրատարակվում և վերահրատարակվում են հայոց լեզվի դասագրքերը:

1943-1944 ուսումնական տարում Հայաստանի և ԼՂԻՄ-ի քաղաքներում, բոլոր ենթաշրջաններում ստեղծվում է հասարակական մեթոդիստների ինստիտուտ՝ հայոց լեզվի ամենաորակյալ դասատուներից: Վերանայվում են հայոց լեզվից աշակերտների գիտելիքների գնահատման գոյություն ունեցող նորմերը:

Հայոց լեզվի ուսուցումը բարելավելու նպատակով 1944-45 ուստարվանից լուսժողկոմատը, ժողովրդական կրթության բաժինները, դպրոցների դիրեկտորուսմասվարները (տնօրենները) հայոց լեզվի ծրագրային պահանջների սահմաններում դպրոցներում սիստեմատիկ կերպով անց են կացնում միասնական ստուգողական թելադրություններ և գրավոր աշխատանքներ:

ԼՂ լուսժողկոմատի դպրոցական վարչությունում կազմակերպվում է հայոց լեզվի մեթոդիստ-տեսուչների խմբակ՝ 3 հոգուց բաղկացած: Մեթոդիստ-տեսուչների խմբակ է կազմակերպվում նաև Մարտակերտի, Շուշիի, Մարտունու, Հադրութի շրջանային ժողկրթբաժնի մանկավարժական կաբինետներում, իսկ Երևանում լուսավորության նախարարության դպրոցների գիտահետազոտական ինստիտուտում ստեղծվում է հայոց լեզվի և գրականության դասավանդման մեթոդիկայի կաբինետ:

Մայրենի լեզվի ուսուցման բարելավման աշխատանքը սերտորեն կապվում և զուգակցվում էր բացատրական ընթերցանության ու գրականության դասավանդման բարելավման հարցերի հետ:

Սովորողների գաղափարական, հատկապես հայրենասիրական դաստիարակության գործում մեծ դեր կատարեց գրականության ուսուցումը: Ելնելով ժամանակի պահանջներից՝ գրականության ուսուցման ընթացքում հատուկ ուշադրություն դարձվեց այն ստեղծագործությունների ուսումնասիրմանը, որոնք սովորողների մեջ զարգացնում էին հայրենասիրական վեհ զգացմունքներ և բուռն ատելություն ու ցասում բորբոքում օտարերկրյա զավթիչների՝ ֆաշիստական բարբարոսների նկատմամբ: Այդ նպատակին հասնելու լավագույն միջոց էր հանդիսանում «Սասունցի Դավիթ» էպոսի, Հ.Թումանյանի «Թմկաբերդի առումը», Մուրացանի «Գևորգ Մարզպետունի», Դ.Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպերի, Հ.Հակոբյանի, Ավ.Իսահակյանի, Շ.Կուրղինյանի, Ն.Զարյանի և ուրիշների հայրենասիրական ստեղծագործությունների ուսուցումը:

Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմներն ուսումնական ծրագրերում մտցնում և արտադասարանական ընթերցանության համար հանձնարարում են գեղարվեստական այն երկերը, որոնց ուսումնասիրությունը հնարավորություն կտա դպրոցականների մեջ դաստիարակել բոցավառ հայրենասիրության և թշնամու նկատմամբ խոր ատելության զգացմունք:

Միջնակարգ դպրոցների 10-րդ դասարանների գրականության ծրագրում մտցվեց «Սովետական գրականությունը Հայրենական մեծ պատերազմի ժամանակ» թեման:

Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմատի հաշվետվություններում[171] կարդում ենք, որ գրականության դասատուների խնդիրն էր ծրագրային նյութերի անցումը և աշակերտներին տրվող գրավոր աշխատանքները Հայրենական մեծ պատե-

ռազմի հետ կապելը:

Ժամանակակիցների հուշերից և դպրոցներում պահպանվող արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ պատերազմի տարիներին մարզի դպրոցներում դասավանդել են հայոց լեզվի և գրականության ճանաչված ուսուցիչներ Սամսոն Ավետիսյանը (Մարտունու շրջանի Հաղորտու միջն. դպրոց), Վարդան Բալայանը (Աշանի միջն. դպրոց), Ելիզավետա Հովհաննիսյանը (Շուշի քաղաքի հայկական միջն. դպրոց), Սամվել Ղուկասյանը (Չանախչու միջնակարգ դպրոց), Արփիկ Բաղրյանը (Մարտակերտի շրջանի Հաթերքի միջն. դպրոց) և շատ ուրիշներ, որոնք ունեցել են դասի արդյունավետ անցկացման ուսանելի փորձ:

Այսպես, օրինակ, վաստակաշատ մանկավարժ Նորայր Ավետիսյանի (20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ) հուշերում[172] մատնանշվում է, որ Սամսոն Ավետիսյանը գրականության դասին պատմահայրենասիրական երկերի ուսուցումը ցանկալի մակարդակի վրա դնելու համար երեխաների մեջ սեր էր արթնացնում հայ ժողովրդի զավակների հերոսական սխրագործությունների (դարերի ընթացքում և Հայրենական մեծ պատերազմում) նկատմամբ, նրանց մեջ մշակում անցյալին և պատերազմական իրադրությանը նվիրված ստեղծագործությունը հասկանալու կարողություն, որովհետև միայն նման բնույթի երկերի (Մուրացանի «Գևորգ Մարզպետունի», Դ.Դեմիրճյանի «Վարդանանք» և Հայրենական պատերազմին վերաբերող թեմաների) ուսուցումը սովորողների մեջ զարգացնում էր հայրենասիրության վեհ զգացումներ և բուռն ատելություն ու ցասում բորբոքում օտարերկրյա զավթիչների՝ ֆաշիստական բարբարոսների նկատմամբ:

Ուշագրավ է նաև Ելիզավետա Հովհաննիսյանի, Արփիկ Բաղրյանի, Սամվել Ղուկասյանի կողմից կազմակերպված՝ հայոց լեզվի և գրականության, գեղարվեստական ասմունքի խմբակների գործունեությունը: Նրանք հաճախակի կազմակերպում էին գրական երեկոներ ոչ միայն աշակերտների, այլև բնակչության, հիվանդանոցներում բուժվող վիրավոր ռազմիկների համար, հրատարակում էին պատի թերթեր, բարելավում արտադասարանական ընթերցանության գործը (այդ մասին կնշվի հետո): Դպրոցների արխիվներում[173] պահպանվում են նաև հայրենասիրական թեմաներով աշակերտների գրած ստեղծագործական շարադրությունները, որոնք կարդում էին գրական խմբակներում:

Բերենք մի օրինակ:

Ասկերանի շրջանի Չանախչու միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Ա.Ն.-ն (ուսուցիչ՝ 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Սամվել Ղուկասյան) «Ժողովրդական վրիժառուները Հայրենական պատերազմում» թեմայով գրած իր շարադրության մեջ նշել է. «Այն անհուն սերը, որ տածում է մեր ժողովուրդը դեպի մեր ազատ և սրբազան Հայրենիքը, թև է տալիս, հերոսության է մղում մեր ժողովրդին: Մեր ժողովուրդն ապացուցեց, որ Հայրենիքի սերը սուրբ է և նվիրական»[174]:

Լեռնային Ղարաբաղի դպրոցականները (նկատի ունենք հայկական դպրոցների դպրոցականներին) իրենց գրավոր աշխատանքներում փառաբանում էին խորհրդային Հայրենիքն ու բազմազգ ժողովրդին, արտահայտում իրենց անկեղծ ու անսահման նվիրվածությունը խորհրդային մեծ պետությանն ու «Կոմունիստական կուսակցությանը»:

Պատերազմական պայմաններում ավելի մեծացավ ռուսաց լեզվի և գրականության ուսուցման դերն ու նշանակությունը: Հայ ժողովրդի անսահման սերը ռուս մեծ ժողովրդի նկատմամբ, բոլոր ժողովուրդների եղբայրական միասնությունն ամրապնդելու անհրաժեշտությունը, ինչպես նաև կարմիր բանակի շարքե-

ռում մարտնչելու կարևորությունը պահանջում էին ավելի արդյունավետ դարձնել պետական լեզվի ուսուցումը: Այդ բարձր նպատակին հասնելու ձգտումով տոգորված աշխատեցին մեր դպրոցների ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչներ Ասյա Աղավելյանը[175] (աշխատել է Ստեփանակերտի թիվ 1, Մարտակերտի շրջանի Վաղուհասի, Հարգոմերի միջնակարգ դպրոցներում), Աբգար Տեր Գրիգորյանը (դասավանդել է Վանքի, Ծմակահողի, Առաջածորի միջն. դպրոցներում), Պավել Սլոտինը (1940-1942թթ. դասավանդել է Ստեփանակերտի դպրոցներում, 1942թ. մայիսից մինչև 1945թ. մարտնչել է Հայրենական պատերազմի տարբեր ռազմաճակատներում), Բախշի Իսրայելյանը (դասավանդել է Մարտակերտի շրջանի Հարությունագոմերի, Վաղուհասի դպրոցներում), Սոֆյա Համբարձումյանը (մասնագիտությամբ մաթեմատիկայի և ֆիզիկայի մասնագետ էր, սակայն ունենալով ռուսական կրթություն, ռուսաց լեզու է դասավանդել Ստեփանակերտի դպրոցներում, քանի որ ռուսաց լեզվի ուսուցիչներ շատ քիչ կային մարզի դպրոցներում) և ուրիշներ[176]: Նրանց եռանդուն գործունեության շնորհիվ սովորողների բուռն ձգտումն ու ժրաջան աշխատանքը տվեցին ցանկալի արդյունքներ: Ձգալիորեն հարստացան սովորողների բառապաշարը, բանավոր ու գրավոր խոսքի կուլտուրան: Ռուս գրականության այնպիսի մարգարիտներ, ինչպիսիք են Գոգոլի «Տարաս Բուլբան», Լ.Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն», Մ.Գորկու «Մայրը», Ն.Օստրովսկու «Ինչպես էր կոփվում պողպատը», Վ.Մայակովսկու բանաստեղծությունները և այլն, ոչ միայն աշխարհաճանաչողական խոշոր դեր կատարեցին, այլև հայրենասիրական ու բարոյաքաղաքական մեծ ազդեցություն ունեցան հայ պատանիների ու աղջիկների հոգեկան աշխարհի վրա:

Ինչպես մայրենի լեզվի ու գրականության, այնպես էլ ռուսաց լեզվի և գրականության ուսուցման լավագույն արդյունքների ապացույց պետք է համարել մարզի հայկական դպրոցների շրջանավարտների հայրենասիրական սխրագործությունները թե ռազմաճակատում և թե թիկունքում (այդ մասին կնշվի հաջորդ բաժնում): Պատերազմական շրջանում գրած իրենց շարադրություններում աշակերտներն անսահման նվիրվածություն էին հանդես բերում դեպի հայրենիքը, դեպի կուսակցությունն ու կառավարությունը: Նրանք խորը ատելությամբ անարգանքի սյունին էին գամում ֆաշիստական զավթիչներին ու անսահման հավատ դրսևորում Կարմիր բանակի, մեր ժողովրդի վերջնական հաղթանակի նկատմամբ: Այդ ոգով գրված հազարավոր շարադրություններից բերենք Ստեփանակերտի թիվ 2 դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Մ-ի 1942թ. գրած շարադրությունից մի հատված. «Սովետական ժողովուրդը անհողդողդ է ու անպարտելի: Նա համոզված է՝ միասնական գաղափարներով կռվել թշնամու դեմ մինչև արյան վերջին կաթիլը և, եթե հարկ է, զոհվել հայրենիքի ազատության համար: Այս վեհ գիտակցությունն է, որ մղում է սխրագործության, այս բարձր գիտակցությունն է, որ անմահացնում է ռազմի դաշտում ընկած հերոսների փառապանծ անունները: Զոհվել մեծ գործի, մեծ գաղափարների համար. ահա թե որն է ամենաթանկագինն ու ամենագնահատելին մարդու կյանքում»[177]:

Անհրաժեշտ է ընդգծել, որ հանրակրթական դպրոցներում ռուսաց լեզվի ուսուցման դրվածքը զգալիորեն բարելավելուց բացի, մարզի ժողովրդական կրթության մարմինների, բոլոր դպրոցների առաջ կարևորագույն խնդիր էր դրված՝ երիտասարդությանը, բոլոր զինակոչիկներին ընդգրկել ռուսաց լեզուն ուսումնասիրող մասսայական խմբակներում: Այդ խմբակների աշխատանքները ղեկավարելու գործը հանձնարարվում էր մարզի ռուսաց լեզվի լավագույն ուսուցիչներին: Ռուսաց լեզվի ուսումնասիրությունը հեշտացնելու նպատակով մասսայական

տպաքանակով հրատարակվում էին համապատասխան բրոշյուրներ, մեթոդական-մանկավարժական գրքույկներ: 5-7-րդ և 8-10-րդ դասարանների համար հրատարակվեց թելադրությունների ժողովածու: Մասսայական գրադարաններին, ակումբներին, հանրակրթական դպրոցներին և հիմնարկ-ձեռնարկություններին կից կազմակերպվեցին ռուսաց լեզուն ուսումնասիրողների հարյուրավոր խմբակներ: Ինչպես լուսժողկոմատի կոլեգիան, այնպես էլ ժողովրդական կրթության բաժինները և դպրոցների մանկավարժական խորհուրդները քննության էին առնում ռուսաց լեզվի ուսուցման դրվածքը բարելավելու հարցերը և այդ ուղղությամբ մշակում կոնկրետ միջոցառումներ: Ուսուցիչները ռուսաց լեզվի և գրականության ուսումնական նյութերը սերտորեն կապում էին Հայրենական պատերազմի հետ:

Գիտակցելով ռուսաց լեզվի ուսուցման մեծ նշանակությունը և մեր հայրենիքի շահերը, բազմաթիվ դպրոցներ և ուսուցիչներ ջանքեր չէին խնայում բարձր հիմքերի վրա դնելու ռուսաց լեզվի դասավանդումը: ԼՂ լուսժողկոմի հաշվետվություններում նշվում է Ստեփանակերտի, Շուշիի, Մարտունու, Հադրութի, Մարտակերտի շրջանների դպրոցների և ուսուցիչների լավագույն աշխատանքը ռուսաց լեզվի ուսուցման գործում:

Ռուսաց լեզվի ուսուցման դրվածքը բարձր հիմքերի վրա դնելու նպատակով դպրոցներում հաճախակի կազմակերպվում էին բաց դասեր, զեկուցումներ: Ուսուցիչները սովորողների մեջ լայն բացատրական աշխատանք էին տանում, նշելով ռուսաց լեզվին տիրապետելու անհրաժեշտությունը:

Ռուսաց լեզվի տիրապետման ուղղությամբ սովորողների պատասխանատվությունն ավելի բարձրացավ հասունության ատեստատի քննություններ սահմանելու կապակցությամբ:

Այդ մասին իր հուշերում 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Աբգար Տեր Գրիգորյանը (երկար տարիներ ռուսաց լեզու և գրականություն է դասավանդել Մարտակերտի շրջանի դպրոցներում) իր հուշերում գրում է. «ռուսաց լեզվի ուսուցման դրվածքը մեր դպրոցներում և աշակերտների գրագիտության աստիճանը համեմատել անգամ չի կարելի անցյալի հետ: Բարձրացել է պահանջկոտությունը Ռուսաց լեզվի դասավանդման նկատմամբ, բարձրացել է նաև մեր աշակերտության գիտակցությունը ռուսաց լեզվին տիրապետելու համար: Այժմ արդեն 4-5 տարի է, ինչ իմ դասերը բացառապես ռուսերեն լեզվով եմ վարում և հազվագյուտ դեպքերում եմ դիմում այս կամ այն բառի կամ գրվածքի թարգմանությանը»: Վաստակաշատ մանկավարժը միաժամանակ նշում է, որ դպրոցներում ռուսաց լեզվից զարգացել է աշակերտների բանավոր խոսքի կուլտուրան, հարստացել է նրանց բառապաշարը, կայունացել են ուղղագրական հմտությունները[178]:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին սովորողների գաղափարական-քաղաքական դաստիարակության գործում մեծ դեր կատարեց պատմության ուսուցումը: ԽՍՀՄ պատմության դասընթացի ուսումնասիրման ընթացքում առանձնապես նշվում էր ռուս ժողովրդի հերոսական հաղթանակները Չինգիզ-խանի, գերմանական «ասպետների», շվեդ զավթիչների և օտարերկրյա այլ բռնակալների նկատմամբ: Ռուս պանծալի զորավարներ Նևսկու, Սուվորովի, Կուտուզովի, Ֆրունզեի, Չապաևի և մյուսների հաղթանակների լիարժեք վերհանումով՝ աշակերտների մեջ դաստիարակվում էր խորը համոզմունք դեպի ռազմական արվեստի բարձր արժանիքներն ու նրա անխուսափելի հաղթանակը:

Հայ ժողովուրդը աշխարհի այն հնագույն ժողովուրդներից է, որ բազում փոր-

ձությունների միջով է անցել: Գտնվելով ռազմա-առևտրական կարևոր նշանակություն ունեցող ճանապարհների խաչմերուկներում՝ Հայաստանը ռազմատենչ շատ պետությունների համար կռվախնձոր է հանդիսացել: Այդ պատճառով էլ նա հաճախ է պատերազմների թատերաբեմ դարձել: Ու ամեն անգամ, երբ թշնամին սուր է բարձրացրել, հայ ժողովուրդը համախմբել է իր բոլոր ուժերը՝ իր ազատությունը, անկախությունն ու պատիվը պաշտպանելու համար: Եվ այդ պահերին հայրենիքի պաշտպանության համար ցուցաբերած քաջությունը, անվեհերությունն ու հերոսությունը հանդիսացել են ազատաբաղձ ժողովրդի անբաժան հատկությունը: Այդպիսին է հայ ժողովրդի պատմությունը:

Ինքնին հասկանալի է, որ այդպիսի ժողովրդի պատմության ուսուցումը դպրոցում նոր սերնդի մեջ հարենասիրական բարձր զգացմունքներ միայն կարող էր զարգացնել: Եվ ահա 1943-1944 ուստարվանից 8-10-րդ դասարաններում հայ ժողովրդի պատմության դասընթացի ուսուցում մտցնելը մեծապես նպաստեց սովորողների մեջ դեպի հայրենիքը անհուն սեր ու խանդավառություն դաստիարակելուն, նրա ազատության գործին անվերապահ նվիրվելուն:

Այդ տարիներին մարզի դպրոցներում պատմության դասի անցկացման ուսանելի փորձն են կատարել 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժներ Սարգիս Աբրահամյանը (1942-1949թթ. մարզային ժողկրթբաժնի վարիչ, միաժամանակ դասավանդում էր Ստեփանակերտի դպրոցներում)[179], Աթանես Դադալյանը (1941-1944թթ. աշխատել է հայրենի գյուղի՝ Մուշկապատի, Հաղորտու, Ճարտարի դպրոցներում), Գրիգոր Ուլուբաբյանը (1941-1945թթ. եղել է Մարտունու կրթության շրջանային բաժնի դպրոցական տեսուչ, Հաղորտի գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն, դասավանդել է նշված և այլ դպրոցներում) և շատ ուրիշներ (վերոնշյալների և ուրիշների մանկավարժական գործունեության մասին կնշվի հաջորդ բաժնում):

Պատերազմի շրջանում զգալիորեն բարձրացավ նաև աշխարհագրության դասավանդման դաստիարակչական և գործնական նշանակությունը: Ուսուցման ընթացքում հատուկ ուշադրություն դարձվեց գործնական այնպիսի ունակությունների զարգացման վրա, որոնք ռազմական նշանակություն ունեին (տեղագրական և ռազմական քարտեզների ու պլանների ուսումնասիրում, կողմնորոշում տեղանքում և այլն): Առանձնակի տեղ տրվեց ԽՍՀՄ, աշխարհի ֆիզիկական ու քաղաքական քարտեզների ուսումնասիրմանը: Աշխարհագրական ճշգրիտ տվյալներով աշակերտների մեջ ամրացվում էր այն համոզմունքը, որ ֆաշիստական Գերմանիայի տնտեսական ռեսուրսները չեն կարող բավարարել երկարատև պատերազմի պահանջները, մինչդեռ դրան հակառակ՝ Խորհրդային Միության տնտեսական անսպառ պաշարներն ու մարդկային ուժերը անխուսափելի հաղթանակի հզոր գործոններ են:

Աշխարհագրության ուսուցման մեջ հայրենագիտական տարրի ուժեղացումը մեծապես նպաստում էր ոչ միայն շրջապատը, հայրենի երկիրը լավ ճանաչելուն, այլև աշխարհագրական երևույթների ու փաստերի խորը գիտակցմանն ու ընկալմանը:

Ելնելով այդ կարևոր սկզբունքներից, Հայկական ԽՍՀ լուսժողկոմատի կոլեգիան 1944թ. հուլիսի 31-ին որոշում կայացրեց հանրապետության դպրոցներում Հայկական ԽՍՀ-ի աշխարհագրության դասընթացի ուսուցում մտցնելու մասին: 1944-45 ուստարվանից Հայաստանի աշխարհագրության ուսուցում մտցվեց 4-րդ դասարանում 10 ժամ, 7-րդ դասարանում՝ 17 ժամ (տարվա ընթացքում)[180]:

Պատերազմական տարիներին մարզի դպրոցներում աշխարհագրության դա-

սավանդման դրվածքը բարձր հիմքերի վրա դրվեց դպրոցական պրակտիկայում ճանաչված լավագույն մանկավարժների՝ Թիմուր Ամիրջանյանի (1941-1944թթ. աշխատել է Շուշիի մանկավարժական ուսումնարանում, երկամյա մանկավարժական ինստիտուտում, Ստեփանակերտի դպրոցներում), Սերգեյ Անդրյանը (1941-1942թթ. դասավանդել է Ասկերանի շրջանի Դաշբուլաղ, Բաղարա գյուղերի դպրոցներում, 1942-1945թթ. մասնակցել Հայրենական պատերազմին), Հարություն Եղիազարյանը (1941-1942թթ. դասավանդել է Մարտակերտի շրջանի Կուսապատի, Մեծ շենի գյուղերի միջնակարգ դպրոցներում) և շատ ուրիշների շնորհիվ, որոնց մասին մանրամասն կնշվի հաջորդ բաժնում, որպես 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժներ:

Հայրենական պատերազմի տարիներին հանրակրթական դպրոցներում աշակերտներին պրակտիկ հմտություններով զինելը մաթեմատիկայից և ֆիզիկայից, պաշտպանական կարևորագույն խնդիր դարձավ, չափազանց մեծ նշանակություն ստացավ տեսությունը պրակտիկայի հետ կապելը:

Մաթեմատիկայի առարկաների ուսուցիչները Արտաշես Գասպարյանը (1941-1945թթ. դասավանդել է Սոս, Թաղավարդ գյուղերի միջնակարգ դպրոցներում), Սոֆյա Համբարձումյանը (1941-1942թթ. դասավանդել է Ստեփանակերտի դպրոցներում), Սարգիս Սարգսյանը (1941-1942թթ. դասավանդել է Շուշիի մանկավարժական ուսումնարանում, երկամյա մանկավարժական ինստիտուտում, Ստեփանակերտի դպրոցներում, 1942թ. դեկտեմբերին զորակոչվել Կարմիր բանակ), Սեդրակ Օհանջանյանը (1942-1944թթ. դասավանդել է Մարտակերտի շրջանի Թալիշի, Կարմիրավանի, Կուսապատի դպրոցներում)[181] և ուրիշներ ծրագրային բաժինների ու թեմաների հետ սերտորեն առնչված հետաքրքիր օրինակներ ու խնդիրներ էին կազմում: Բացառիկ ուշադրություն էին նվիրում ռազմակիրառական և գործնական նշանակություն ունեցող աշխատանքներին (ուղիղ գծերի անցկացում, չափումներ տեղանքում, տեղանքում անկյունների կառուցում և այլն): Դասավանդման ընթացքում ուսուցիչները առանձնակի ուշադրություն էին դարձնում այն թեմաներին, որոնք կարող էին նպաստել ռազմական գիտելիքների արագ յուրացմանը: Օրինակ, աշակերտները տնտեսական ու գործնական լուրջ գիտելիքներ և հմտություններ ձեռք բերեցին տեղանքի մակերևույթի և զանազան օբյեկտների մեծության, բարձրության, լայնության, ծավալի, հեռավորության որոշման ուղղությամբ: Ավելի խորությամբ էին ուսումնասիրվում այն թեմաները, որոնք նվիրված էին ներքին այրման շարժիչներին, ռադիոյին և կապի միջոցներին:

Մաթեմատիկայի դասավանդման մեջ նույնպես մտցվեցին մեծ փոփոխություններ. դպրոցն իր ջանքերը կենտրոնացրեց սովորողների կողմից մաթեմատիկական կանոնների և բանաձևերի սիստեմատիկ, ամուր և գիտակցական յուրացման վրա: Լավագույն ուսուցիչները ձգտում էին բարձրացնել մաթեմատիկայի, ֆիզիկայի դասավանդման դրվածքը: Մարզի հայկական դպրոցների զգալի մասն ուներ ֆիզիկայի և քիմիայի կահավորված կաբինետներ: Լուսժողկոմատը պարտավորեցնում էր դպրոցներին՝ ինչպես քննությունների, այնպես էլ ուսման ընթացքում «աշակերտներից պահանջել, որ նրանք ոչ միայն ցույց տան համապատասխան գործիքը կամ նյութը, այլև կատարեն համապատասխան փորձ, որով և հնարավոր կլինի գնահատել աշակերտների գործնական աշխատանքների ունակությունները[182]: Հարցատոմսերը կազմելիս հատուկ տեղ էր հատկացվում ռազմական պաշտպանության հարցերին: Այնուհետև պահանջվում էր դնել այնպիսի հարցեր, որոնք կպարզեն, թե աշակերտն ինչպես է յուրացրել ֆիզիկա-

յի օրենքների կիրառումը ռազմական տեխնիկայում, արտադրության մեջ, կենցաղում:

Ինչպես Ստեփանակերտ, Շուշի քաղաքների, այնպես էլ շրջանների միջնակարգ դպրոցներում ֆիզիկայի դասավանդումը կազմակերպված էր լուսժողկոմատի հրահանգների համաձայն: Հատուկ ուշադրություն էր դարձվում ֆիզիկայի օրենքների գործնական ուսուցման վրա, ցույց էր տրվում դրանց գործածությունը ռազմական տեխնիկայում և այլն:

Լուսժողկոմատի հաշվետվություններում[183] կարդում ենք, որ մարզի դպրոցներում զգալիորեն բարձրացել է նաև քիմիայի տեսական մասի յուրացումը աշակերտների կողմից: Ուսուցիչները գիտակցորեն բացատրում էին քիմիական հիմնական օրենքներն ու օրինաչափությունները, լավ գիտեին նյութերի ստացման ռեակցիաների հավասարումները, տիրապետում էին քիմիական լեզվին, բավարար գաղափար ունեին ռազմական գործում քիմիայի դերի մասին:

Կենսաբանության դասընթացի ուսուցումը նույնպես վերակառուցվեց ժամանակի պահանջներին համապատասխան: Աշակերտներին տեսական ու գործնական գիտելիքներ էին տրվում վարակիչ հիվանդությունների և նրանցից պաշտպանվելու, արյունահոսության, ցրտահարության և այրվածքների դեպքում շտապ օգնություն ցույց տալու վերաբերյալ:

Բնագիտության ուսուցման ասպարեզում մարզի դպրոցները ձեռք էին բերում տեսական ուսուցումը գործնական և պաշտպանական խնդիրների հետ կապելու հարուստ փորձ: Հատուկ ուշադրություն էր դարձվում դպրոցականներին սանիտարահիգիենիկ ունակություններ տալու, վարակիչ հիվանդություններից զերծ պահելու, դրանց կանխման միջոցների հետ ծանոթանալու, արյունահոսության, այրվածքների, ցրտահարության դեպքում առաջին օգնության ձևերի պրակտիկ կիրառումը սովորեցնելու խնդիրներին, դեղաբույսերի դերն ու նշանակությունը պարզաբանելուն:

Բնագիտության դասավանդման ընթացքում օգտագործվում էին դիտողական պիտույքներ, կատարվում էին բավարար չափով փորձեր: Բնագիտության դասատուների ղեկավարությամբ աշակերտները լուրջ աշխատանք էին կատարում կարտոֆիլի պալարների (գագաթների) աչքերի հավաքման ուղղությամբ: «Բիոլոգիայի կուրսին զուգընթաց աշակերտներին տրվում են ռազմապաշտպանական և սանիտարահիգենիկ ունակություններ»[184]:

Քիմիա-կենսաբանություն, բնագիտություն առարկաների դասավանդման ընթացքում այդ տարիներին մարզի դպրոցներում ուսանելի փորձ են ունեցել ճանաչված ուսուցիչներ Սմբատ Աբրահամյանը (1941-1945թթ. դասավանդել է Հադրութի շրջանի Տումու, Տողի, Մեծ Թաղլարի միջնակարգ դպրոցներում, միաժամանակ եղել է դպրոցի տնօրեն), Ազնիվ Աղաբեկյանը (1941-1945թթ. դասավանդել է Ստեփանակերտի դպրոցներում), Ելենա Աղաջանյանը (1941-1945թթ. դասավանդել է Ստեփանակերտի դպրոցներում) և շատ ուրիշներ[185]:

Հանրակրթական դպրոցներում սովորողների ռազմական ուսուցումն իրականացվում էր ռազմաֆիզկուլտ (1-4-րդ դասարաններ), նախնական ռազմական պատրաստություն (5-7-րդ դասարաններ) և մինչզինակոչային ռազմական պատրաստություն (8-10-րդ դասարաններ) առարկաների միջոցով:

Անհրաժեշտ է նշել, որ աշակերտության մեջ, սկսած տարրական դասարաններից, մեծ հետաքրքրություն էր առաջացել դեպի ռազմական գործը: Բոլորի մեջ այն համոզմունքն էր ձևավորվել, որ մեր երկրի ամեն մի քաղաքացի, մեծ թե փոքր, պետք է սովորի պաշտպանել սրբազան Հայրենիքը:

Ռազմական ուսուցումը, հատկապես միջնակարգ դպրոցներում, տարվում էր բարձր կազմակերպվածությամբ: Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցներում ստեղծվել էին ռազմական կաբինետներ՝ զենքի անհրաժեշտ տեսակներով և ուսումնամարզական պիտույքներով: Պարապմունքներին հիմնականում տրվում էր հիմնականում, գործնական բնույթ: Ժամանակակիցներն իրենց հուշերում մատնանշում են, որ դասարանում, տեսական որոշ գիտելիքներ տալուց հետո, անց էին կացվում զենքի օգտագործման գործնական վարժություններ, տակտիկական պարապմունքներ, զորախաղեր:

Պատերազմի երկրորդ տարուց սկսած՝ դպրոցների մեծ մասում զինղեկեր և դասատուներ էին աշխատում ճակատային փորձ ունեցող սպաներ, որոնք վիրավորվելու պատճառով զորացրվել էին: Նրանց աշխատանքը, ինչ խոսք, ավելի արդյունավետ էր:

Ժողովրդական կրթության մարմինները նույնպես մեծ ուշադրություն էին դարձնում աշակերտների ռազմական ուսուցման և ֆիզիկական դաստիարակության գործին, այն համարելով իրենց գործունեության ամենակարևոր օղակներից մեկը:

Սովորողների ռազմական և ֆիզիկական ուսուցման գործը հաջող կազմակերպելու և ղեկավարելու նպատակով 1942թ. լուսժողկոմատում ստեղծվում է ռազմ-ֆիզկուլտվարչություն, իսկ 1943թ. սահմանվում է լուսժողկոմի ռազմական գծով տեղակալի պաշտոն[186]:

Ռազմական ուսուցման գործի ղեկավարումը հիմնականում իրականացվում էր մարզի և շրջանային զինվորական կոմիսարիատների հետ միասին: Այդ հանգամանքն էլ ավելի նպաստեց դպրոցներում ռազմական ուսուցումը արդյունավետ դարձնելուն:

Ռազմական ուսուցումից աշակերտների գիտելիքները հարստացնելու և կյանքում գործադրելու, ինչպես և նրանց առողջությունն ամրապնդելու, կամքը կոփելու նպատակով միջնակարգ դպրոցների 9-10-րդ դասարանների տղաների համար ուսումնական տարին ավարտելուց հետո կազմակերպվում էին ռազմական ճամբարներ: 15-օրյա ճամբարային պարապմունքներն անց էին կացվում կազմակերպված ու արդյունավետ:

Միջնակարգ դպրոցում ռազմական առարկաների ուսուցման գործնական արդյունքը եղավ այն, որ շրջանավարտները գործող բանակի շարքերը խտացրին անհրաժեշտ գիտելիքներով զինված, հայրենասիրական բարձր գիտակցությամբ:

Կարմիր բանակի համար բարձորակ ռազմիկներ պատրաստելու նպատակով, լուսժողկոմատի համակարգում կազմակերպվել էին հատուկ ռազմական դպրոցներ: Այդպիսիներից էին Երևանի օդաչուական և հրետանային հատուկ միջնակարգ դպրոցները: 1942թ. Երևան էվակուացվեց Ռոստովի թիվ 10 օդաչուական հատուկ դպրոցը, որտեղ սովորում էին նաև Լեռնային Ղարաբաղի դպրոցներից գործուղված պատանիներն ու աղջիկները[187]:

ԼՂ լուսժողկոմի հաշվետվություններից տեղեկանում ենք, որ 1942-1943 ուս. տարվա ռազմաֆիզկուլտ առարկայի քննությունները ցույց տվեցին, որ աշակերտները տիրապետել են զենքի նյութական մասին, տակտիկային, զեկուցման կարգին, պահակային ծառայությանը, ինքնախրամատավորման գործին, նշանառությանը և այլն:

Եվ այսպես, պատերազմական տարիներին հանրակրթական դպրոցում դասավանդվող ամեն մի առարկա, լիներ դա մայրենի լեզու, գրականություն, թե ռու-

սաց լեզու, պատմություն, աշխարհագրություն, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, հանրակրթական ընդհանուր ճանաչողական գիտելիքների հետ միասին դպրոցականներին տոգորում էին հայրենասիրության, թշնամուն ջախջախելու ոգով:

Չնայած բազմաթիվ դժվարություններին, պատերազմի տարիներին հսկայական աշխատանք կատարվեց ուսման որակի բարձրացման, աշակերտներին փայլուն գիտելիքներով զինելու ուղղությամբ: Դրան մեծապես նպաստեցին լուսժողկոմի և շրջանային կրթության բաժնի ղեկավար մարմինների կողմից ընդունված մի շարք որոշումներ: Սակայն նշենք, որ եղել են նաև որոշ թերություններ, որոնք բացասաբար են անդրադարձել ուսումնական աշխատանքների վրա: Այսպես՝ ԽՍՀՄ կառավարությունը 1943թ. հուլիսի 2-ին ընդունեց որոշում երկրի հանրակրթական դպրոցներում տղաների և աղջիկների անջատ ուսուցում մտցնելու մասին:

Այդ որոշման համաձայն, ինչպես Հայաստանի, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցներում 1943-1944թթ. ուսումնական տարվանից մտցվեց տղաների և աղջիկների անջատ ուսուցում[188]:

Երկսեռ ուսուցումից անջատ ուսուցմանն անցնել, անկասկած, որոշ դժվարություններ ստեղծեց: Նախ՝ կազմակերպական տեսակետից մենք անպատրաստ էինք այդպիսի մեծ միջոցառում իրականացնելու համար: Առանց այդ էլ դպրոցական շենքերի պակասը խիստ զգացնել էր տալիս, և հանկարծ առաջանում է նույն միկրոշրջանում առանձին դպրոցներ ունենալու հարցը: Այդ տեսակետից ավելի վատ էր դրությունը բանվորական այն ավաններում, ուր միայն մեկ դպրոցական շենք կար: Այդ պատճառով հաճախ նույն շենքում մի հերթը հատկացվում էր տղաներին, մյուսը՝ աղջիկներին: Մյուս, թերևս ավելի մեծ դժվարությունը անջատ ուուցման համար մանկավարժական անձնակազմի անպատրաստ լինելն էր: Այդ պատճառով էլ, մանավանդ առաջին ուսումնական տարում, մեծ դժվարություններ առաջացան ուսումնադաստիարակչական աշխատանքներում:

Հայկական ԽՍՀ լուսժողկոմատի կոլեգիայի որոշմամբ 1944թ. հունվարից Հայաստանի և ԼՂԻՄ-ի բոլոր դպրոցներում մտցվեց աշակերտների գիտելիքների գնահատման հինգբալյան թվանշանային համակարգ՝ «5», «4», «3», «2», «1», նախկին բառային գնահատականների («գերազանց», «լավ», «միջակ», «վատ», «շատ վատ») փոխարեն:

Աշակերտների գիտելիքների գնահատման հինգբալյան համակարգի հետ միաժամանակ, Հայկական ԽՍՀ լուսժողկոմատը, ինչպես նաև ԼՂԻՄ լուսժողկոմը 1944թ. օգոստոսի 14-ին ընդունած որոշմամբ հաստատեցին նաև աշակերտների վարքի գնահատման թվանշանային նոր համակարգ: Հանրակրթական դպրոցներին առաջարկվեց աշակերտների վարքը գնահատելիս ղեկավարվել հետևյալով.

- «5» թվանշան նշանակվում է դպրոցում և դպրոցից դուրս աշակերտի ունեցած անբասիր վարքի համար:
- «4» թվանշան նշանակվում է աշակերտի վարքի նկատելի խախտումների համար: Վարքը «4» թվանշանով գնահատելը թույլատրվում էր միայն մեկ քառորդում:
- «3» թվանշան նշանակվում է աշակերտի վարքի լուրջ խախտումների համար՝ որպես նախազգուշացում դպրոցից հեռացնելու հնարավորության մասին:

Երբ աշակերտը սահմանված փորձաշրջանում չի ուղղվում, մանկավարժական խորհուրդը քննում է նրան դպրոցում թողնելու հնարավորության հարցը: Հեռացվող աշակերտի վարքը գնահատվում է «2» թվանշանով, և նա հեռացվում է դպրոցից:

Մանկավարժական խորհրդի այդ որոշումը հաստատվում է ժողկրթության շրջանային (քաղաքային) բաժնի կողմից:

Վկայագիր և ատեստատ տալ թույլատրվում է միայն աշակերտի վարքը գերազանց լինելու դեպքում. «5» թվանշանի դեպքում հետևյալ նմուշով՝ գերազանց (5) վարքով…

Ուսուցիչները և դասղեկները պարտավոր են հետևելու, որպեսզի ծնողները կամ նրանց փոխարինողները սիստեմատիկ կերպով տեղյակ լինեն աշակերտների առաջադիմության ու վարքի օրագրերին և քառորդային տեղեկագրերին:

Վարքի թվանշանի իջեցման յուրաքանչյուր դեպքի մասին իրազեկ է պահվում ծնողը[189]:

ԽՍՀՄ դպրոցի կյանքում լուրջ իրադարձություն էր «Կանոններ աշակերտների համար» հրահանգի մշակումն ու գործադրումը: «Կանոններ աշակերտների համար» հրահանգը, ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ում, այնպես էլ Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում, գործողության մեջ մտավ 1943/44 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից:

«Կանոններ աշակերտների համար» հրահանգը մանրամասն քննության է առնվում հանրակրթական բոլոր դպրոցների մանկավարժական խորհուրդների նիստերում, դասարանական և ընդհանուր ծնողական ժողովներում, աշակերտական կոլեկտիվների, կոմերիտական և պիոներական կազմակերպությունների ժողովներում: Հրահանգի բոլոր կանոնների կենսագործումը դպրոցականների ամենօրյա սովորությունը դարձնելու համար անհրաժեշտ էր կազմակերպել դպրոցի բոլոր օղակների միասնական, համաձայնեցված աշխատանքը:

Վերոհիշյալ հրահանգը գոհունակությամբ ընդունեցին ոչ միայն դպրոցական աշխատողները, այլև ամբողջ հասարակությունը:

1944-45 ուսումնական տարում ԽՍՀՄ կառավրության որոշմամբ (մարտի 22-ին) սահմանվեց նաև դպրոցական տարիքի երեխաների պարտադիր ուսուցում 7 տարեկան հասակից: Այդ միջոցառումը վերացրեց մանկապարտեզի և դպրոցի միջև եղած խզվածությունը, սակայն դրա կենսագործման համար պետք եղավ հաղթահարել մի շարք դժվարություններ (չէին հերիքում ուսուցիչները, դպրոցական շենքերը, պակասում էին 7 տարեկան երեխաների տարիքային առանձնահատկություններին հարմարվելու կարողությունները և այլն):

Քննարկվող ժամանակաշրջանում հանրակրթական դպրոցներում ուսման որակի և գիտակցական կարգապահության բարձրացման գործում օգտակար դեր կատարեց ուսման բնագավառից սոցիալիստական մրցության վերացումը: Արտադրության բնագավառից ուսման մեջ մեխանիկորեն փոխադրված սոցիալիստական մրցության պրակտիկան մեծ չափով վնասում էր աշակերտների ռեալ առաջադիմությունը: ԼՂ մարզլուսբաժնին ներկայացված շրջանային (Մարտակերտի, Մարտունու, Հադրութի) կրթության բաժինների վարիչների հաշվետվություններում[190] կարդում ենք, որ դպրոցներում աշակերտները՝ մրցության մեջ մտնելով միմյանց հետ, շատ դպրոցական կոլեկտիվներ տուրք էին տալիս աչքակապության, ստեղծում էին առաջադիմության փքուն տոկոսներ, քողարկում դպրոցներում տեղի ունեցող շատ երևույթներ: Օրինակ, Մարտակերտի շրջժողկրթբաժնի վարիչ Մ.Երիցյանը գրում է. «Ինչպես ցույց տվեց հետագա տարիների փորձը, ուսման մեջ սոցիալիստական մրցության վերացումն զգալիորեն դեպի լավը փոխեց աշակերտների առաջադիմության և դաստիարակության գործը»[191]:

Դպրոցի կյանքում մեծ դեր կատարեց «Դպրոցում ուսման որակը բարելավե-

լու միջոցառումների մասին» ԽՍՀՄ ժողկոմխորհրդի 1944թ. հունիսի 21-ի որոշումը: Այդ պատմական որոշմամբ միութենական հանրապետությունների, ինչպես նաև Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցներում սահմանվեցին ավարտական փոխադրման և հասունության ատեստատի քննություններ, ավարտական 4-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների աշակերտները ուսումնական տարեվերջին պետք է քննություն տան ոչ միայն տվյալ ուսումնական տարում անցած ծրագրային նյութի, այլև տվյալ առարկայի դասընթացի ամբողջ ծավալով:

Միջնակարգ դպրոցն աչքի ընկնող հաջողություններով և գերազանց վարքով ավարտողների համար սահմանվեցին ոսկե և արծաթե մեդալներ: Ոսկե մեդալի պարգևատրում նախատեսվեց այն շրջանավարտներին, ովքեր բոլոր առարկաներից և վարքից հանդես կբերեն գերազանց առաջադիմություն, իսկ արծաթե մեդալի՝ ոչ ավիլի քան 3 առարկայից «4», իսկ մնացած բոլոր առարկաներից «5» գնահատական ունեցողներին: Մեդալակիրներին առանց քննության բարձրագույն դպրոց ընդունվելու արտոնություն տրվեց:

1944թ. հուլիսի 28-ին Հայկական ԽՍՀ ժողկոմխորհուրդը հաստատեց հասունության ատեստատի քննություններ, իսկ Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմը նման կանոնադրություն հաստատեց 1944թ. օգոստոսի 14-ին: Այդ կանոնադրության համաձայն՝ հասունության ատեստատի քննական հանձնաժողովներ թույլատրվում էր կազմակերպել այն միջնակարգ դպրոցներում, որոնք ունեին բոլոր առարկաների գծով բարձրագույն կրթությամբ ուսուցիչներ: Այդ պատճառով էլ առանձին շրջաններում երբեմն կազմակերպվում էին մեկ կամ երկու քննական հանձնաժողովներ: Հասունության ատեստատի քննական հանձնաժողովի կազմում մտնում էր դպրոցի տնօրենը (հանձնաժողովի նախագահ), տվյալ առարկայի դասատուն, երկու ընթերակա՝ նույն կամ հարակից մասնագետներից, և մարզլուսբաժնի ներկայացուցիչը:

Հասունության ատեստատի քննություններ սահմանվեցին հետևյալ առարկաներից. հայոց լեզու և գրականություն (գրավոր և բանավոր), ռուսաց լեզու և գրականություն (գրավոր և բանավոր), մաթեմատիկա՝ հանրահաշիվ, երկրաչափություն, եռանկյունաչափություն (գրավոր և բանավոր), օտար լեզու, ֆիզիկա, քիմիա, պատմություն (բանավոր):

Շարադրությունների թեմաները, մաթեմատիկայի գրավոր վարժություններն ու խնդիրները կազմվում էին մարզլուսբաժնում՝ համապատասխան մասնագետների կողմից և քննության նախօրյակին փակ ծրարով ուղարկվում դպրոցներին: Ծրարները թույլատրվում էր բացել հանձնաժողովի ներկայությամբ, քննությունից անմիջապես առաջ: Քննական տոմսերը նույնպես կազմվում էին մարզլուսբաժնում, բազմացվում և ուղարկվում դպրոցներին:

Ելնելով կանոնադրությունից՝ ԼՂ լուսժողկոմը մշակեց քննությունների անցկացման մանրամասն հրահանգ, որտեղ նշված էին նաև հասունության ատեստատի քննություններին սովորողներին ներկայացվող պահանջները:

Այսպես, հայոց լեզվի և գրականության գրավոր քննության ժամանակ սովորողներից պահանջվում էր դրսևորել թեման ճիշտ հասկանալու, մտքերը պարզ ու գրագետ շարադրելու հմտություններ, բանավոր քննությունների ժամանակ պահանջվում էր ցույց տալ քերականական վերլուծությունների կարողություն, հայ գրականության զարգացման արժեքավորման, գլխավոր ստեղծագործությունների գնահատման, ուսումնասիրվող հեղինակների կենսագրության և նրանց գեղարվեստական ստեղծագործությունների, գրականության տեսության հարցերի

մասին կայուն գիտելիքներ: Ռուսաց լեզվից և գրականությունից քննվողները պետք է կարողանային ցուցաբերել բավարար գիտելիքներ ռուսաց լեզվից՝ հիմնական օրենքների և կանոնների վերաբերյալ, գեղարվեստական ու գիտական գրականությունն ազատ կարդալու և հասկանալու, կարդացածի բովանդակությունը բանավոր հաղորդելու և գրավոր շարադրելու հմտություններ:

Մարզլուսբաժնի և շրջժողկրթբաժնի հրահանգներում շարադրված են նաև մյուս առարկաների քննություններին սովորողներին ներկայացվող պահանջները: Ավարտական քննություններին չթույլատրված աշակերտներին կամ քննությունից կտրվածներին երկրորդ տարին 10-րդ դասարանում մնալու իրավունք չէր տրվում: Նրանք ստանում էին վկայական՝ տարեկան թվանշանների նշումով: Այդպիսիներին թույլատրվում էր հաջորդ տարում նույն դպրոցում հանձնելու հասունության ատեստատի քննություններ՝ ընդհանուր հիմունքներով[192]:

Հասունության ատեստատի քննությունների անցկացման կարգը փոփոխություն չի մտցնում մնացած դասարաններում անցկացվող քննությունների մեջ: 4-րդ և 7-րդ դասարաններում հանձնում են ավարտական, իսկ մնացած դասարանները՝ փոխադրական քննություններ: Ուսումնական տարվա վերջին կամ աշնանային վերաքննություններից հետո երկուսից ավելի անբավարար գնահատական ունեցողները մնում են նույն դասարանում: Ինչ վերաբերում է առաջին, երկրորդ և երրորդ դասարաններին, ապա այստեղ փոխադրումը կատարվում է տարեկան գնահատականների հիման վրա:

Ուսման որակի բարձրացման նկատմամբ պահանջկոտության ուժեղացմամբ, ինչպես 1944-45 ուստարում, այնպես էլ հետագա մի քանի տարիներին, միջնակարգ դպրոցն ավարտողների թիվը զգալիորեն նվազեց: Օրինակ, 1944-45 ուստարում Հայաստանի դպրոցներում 10-րդ դասարաններում սովորող 4259 աշակերտներից տարեվերջին հասունության ատեստատ ստացավ 1140-ը[193]: Իսկ Լեռնային Ղարաբաղում 10-րդ դասարաններում սովորող 1324 աշակերտներից տարեվերջին հասունության ատեստատ ստացավ 1120-ը[194]: Դա պետք է բացատրել ինչպես մի շարք այլ պատճառներով, այնպես էլ քննական հանձնաժողովների, հատկապես լուսժողկոմատի ներկայացուցիչների անաչառ և խստապահանջ մոտեցմամբ՝ դեպի շրջանավարտների գիտելիքների գնահատումը (մեր համոզմամբ՝ դա պետք է ուսանելի օրինակ լինի այսօրվա դպրոցներում և ուսումնական հաստատություններում):

Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցների մանկավարժական կոլեկտիվները գոհունակությամբ ընդունեցին վերոնշյալ որոշումը: Ամենուրեք մանկավարժական խորհուրդներում քննության առնելով այն, պարտավորվում էին բազմապատկված եռանդով աշխատել, պայքարել ուսման բնագավառում ձևամոլության ամեն մի դրսևորման դեմ, կատարելագործել ուսուցման մեթոդներն ու եղանակները, աշակերտությանը մղել ուսումնառության արդյունավետ աշխատանքի:

Այսպիսով, Հայրենական մեծ պատերազմի տարիներին հանրակրթական դպրոցի ուսումնական աշխատանքների արդյունավետ կազմակերպման, սովորողների առաջադիմության բարձրացման, սովորողների գիտելիքների ստուգման ու գնահատման, ավարտական քննությունների կազմակերպման վերաբերյալ ԽՍՀՄ կառավարության, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմների ընդունած որոշումներն ու հրահանգները շրջադարձային նշանակություն ունեցան դպրոցի կյանքում: Սակայն պատերազմի հետևանքով դպրոցի համար ստեղծված ուսումնանյութական անբարենպաստ վիճակը, մանկավարժական կադրերի զգալի պակասը, սովորողների նյութական ու ընտանեկան պայմաններ-

րի վատացումը չէին կարող իրենց բացասական կնիքը չդնել ուսման որակի վրա: Եթե այս բոլորին ավելացնենք նաև այն, որ գրեթե բացակայում էր պահանջկոտությունը աշակերտի նկատմամբ, որ դասարանից դասարան նա փոխադրվում ու այնուհետև դպրոցն ավարտում էր առանց կայուն գիտելիքների, ապա պարզ կլինի, թե որքան կարևոր ու անհրաժեշտ էին ընդունված պատմական որոշումները:

Հարկ է նշել նաև, որ Հայրենական պատերազմի տարիներին հանրակրթական դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքի որակը բարձրացնելու գործին նպաստեցին այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են առաջավոր ուսուցիչների փորձի լայն փոխանակումը, բաց դասերի կազմակերպումը, մեթոդական մանկավարժական հարցերի շուրջ եղած զեկուցումները, առանձին առարկաների դասավանդման դրվածքի ուսումնասիրությունն ու դրանց արդյունքների քննարկումը, գոյություն ունեցող թերությունները վերացնելու վերաբերյալ ձեռնարկումները և այլն:

Այդ բնագավառում հիշատակության արժանի է մարզի մի շարք դպրոցների աշխատանքի փորձը: Օրինակ, արխիվային մի փաստաթղթում կարդում ենք, որ Մարտունու շրջանի Ճարտարի, Գիշու, Աշանի, Հաղորտու, Հադրութի շրջանի Մեծ Թաղլարի, Տումու, Ազոխի, Մարտակերտի շրջանի Հաթերքի, Կուսապատի, Մեծ շենի, Շուշիի շրջանի Ղարաղշլաղի, Շոշի, Քարին տակի միջնակարգ դպրոցներում պատշաճ մակարդակով են կազմակերպվում ուսումնադաստիարակչական աշխատանքները: Ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավման գործում առանձնապես կարևոր նշանակություն ունեցան կուսակցության Լենինային Ղարաբաղի մարզկոմի բյուրոյի 1942թ. հոկտեմբերի 22-ի և 1943թ. մարտի 14-ի որոշումները «ԼՂ դպրոցների վիճակի և ուսուցման ընթացքի մասին» և «Դպրոցական կարգապահության որակի բարձրացման մասին»: Մարզկոմի բյուրոն այդ որոշումների մեջ պարտավորեցնում է ժողկրթության մարմիններին, կուսակցական կազմակերպություններին՝ մոտիկից օգնել և վերահսկել դպրոցական կոլեկտիվների աշխատանքը և արմատապես բարելավել ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքը[195]:

1943թ. օգոստոսի 14-ին Ստեփանակերտ քաղաքում անցկացված՝ մարզի առաջավոր ուսուցիչների խորհրդակցությունում մարզժողկրթբաժվար Ս.Աբրահամյանը «Մարզի դպրոցներում ուսուցման ու դաստիարակության մի քանի պրակտիկ հարցերի մասին» զեկուցման մեջ բնութագրեց դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման բնագավառում ձեռք բերված առաջավոր փորձը և նշեց այդ գործում տեղ գտած թերությունները: Այնուհետև ելույթ ունեցան 18 փորձառու ուսուցիչներ, որոնք պատմեցին ուսումնադաստիարակչական աշխատանքներում ձեռք բերած հաջողությունների մասին: Մարտունու շրջանի Աշան գյուղի դպրոցի տնօրեն Վ.Բալայանն իր զեկուցման մեջ նշեց. «Աշանի դպրոցի առաջադիմությունը 1942-1943 ուստարում կազմել է 95 տոկոս, աշակերտների 43 տոկոսը սովորում է «լավ» և «գերազանց» գնահատականներով: Դպրոցում գործում են պատանի բնասերների, մաթեմատիկների, ինքնագործունեության, ասմունքողների, ռադիոսիրողների, սպրոտային խմբակներ, որոնք ուղղված են սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Դպրոցում նպատակասլաց աշխատանք է տարվում աշակերտներին ջերմ հայրենասիրության ոգով դաստիարակելու ուղղությամբ»[196]:

Աշակերտների ուսումնադաստիարակչական, գաղափարաքաղաքական, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, ռազմահայրենասի-

րական դաստիարակությանը վերաբերող հրատապ հարցեր են քննարկվել նաև առանձին դպրոցներում և շրջկենտրոններում կազմակերպված փնջային մեթոդ-միավորումների նիստերում[197]: Նման փնջային մեթոդմիավորման թեմատիկ պլաններ էին կազմում նաև Մարտակերտի, Հադրութի առաջավոր դպրոցների ուսուցիչները:

Մարզի հանրակրթական դպրոցների մանկավարժական խորհուրդներում, արտադրական խորհրդակցություններում, առարկայական հանձնաժողովների նիստերում քննարկվում էր առանձին ուսուցչների առաջավոր փորձը, վերլուծվում առանձին առարկաների դասավանդման դրվածքը և միջոցառումներ մշակվում ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության հետագա բարձրացման համար: Օրինակ՝ Ստեփանակերտի շրջանի Չանախչի գյուղի միջնակարգ դպրոցում(դիրեկտոր՝ հանրապետության վաստակավոր ուսուցիչ Շ.Ասլանյան) խնամքով կահավորված մեթոդական անկյունում կենտրոնացված էին մանկավարժական գիտության նվաճումներին վերաբերող բազմաթիվ տպագիր հոդվածներ, դպրոցի վաստակաշատ ուսուցիչներ Ք.Ալավերդյանի, Ս.Բաղդասարյանի, Մ.Նահապետյանի, Ա.Շահնազարյանի աշխատանքի փորձին վերաբերող նյութեր (կոնսպեկտներ, զեկուցագրեր, դիդակտիկ առարկաներ և այլն): Դպրոցի մանկավարժական խորհրդի նիստերում և արտադրական խորհրդակցություններում 1943-1944 ուսումնական տարվա ընթացքում լսվել և քննարկվել են «Դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակությունը», «Ուսուցչի խոսքի կուլտուրան», «Պատմության դասավանդումը և այժմեականությունը», «Դպրոցականների աշխատանքային դաստիարակությունը», «Էքկուրսիայի դերը երեխաների մտահորիզոնի ընդարձակման մեջ» և այլ զեկուցումներ[198]:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում մարզի հանրակրթական դպրոցներում ուսումնական աշխատանքին զուգահեռ մանկավարժական կոլեկտիվների աշխատողների եռանդուն գործունեության շնորհիվ շատ բան արվեց նաև սովորողների դաստիարակության, գիտակցական կարգապահության, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների արդյունավետ կազմակերպման ու որակի բարձրացման ուղղությամբ: Պատերազմական պայմանները պատանեկության մի մասի վրա իր բացասական ազդեցությունն էր թողել: Առանձնապես նկատվում էր կարգապահության անկում: Առանձին դպրոցներում գիտակցական կարգապահության դաստիարակության բնագավառում նկատված վարչարարության փաստերը վերացնելու համար ԼՂ լուսժողկոմատը պարզաբանում էր, որ դպրոցում գիտակցական կարգապահություն դաստիարակելը պայմանավորված է ուսումնական առարկաների հմուտ դասավանդումով, ամբողջ դպրոցական կյանքի խիստ ռեժիմով, յուրաքանչյուր դպրոցականի կողմից աշակերտական կանոնների անշեղ պահպանումով, մանկական կոլեկտիվի սերտ համախմբումով ու պատժի միջոցների ճիշտ կիրառումով: Այդ գործում առաջատար դերը պատկանում է ուսուցչին:

ԼՂ լուսժողկոմի հրահանգում նշված էին նաև կարգապահության դաստիարակության նոր ձևերը՝ զանցառու աշակերտին ոտքի կանգնեցնելը(իր տեղում կամ ուսուցչի սեղանի մոտ, դասարանի դռան մոտ), դասերից հեռացնելը, դասերից հետո դպրոցում թողնելը, մնկավարժական խորհրդի նիստին կանչելը և այլն:

Դպրոցականների դաստիարակության ու կարգապահության բարձրացման գործում զգալի դեր խաղաց «Կանոններ աշակերտների համար» հրահանգի սահմանումը, որը գործադրության մեջ դրվեց 1944թ. հունվարից[199]: Ահա դրանք:

Յուրաքանչյուր աշակերտ պարտավոր է.

1. Համառորեն և հաստատապես տիրապետել գիտելիքներին՝ կրթված ու կուլտուրական քաղաքացի դառնալու և սովետական հայրենիքին որքան կարելի է ավելի շատ օգուտ տալու համար:

2. Ջանասիրությամբ սովորել, կանոնավոր հաճախել դասերին, դպրոցի պարապմունքներից չուշանալ:

3. Առանց առարկության ենթարկվել դպրոցի դիրեկտորի և ուսուցիչների կարգադրություններին:

4. Դպրոց գալ անհրաժեշտ դասագրքերով ու գրենական պիտույքներով. մինչև ուսուցչի դասարան մտնելը պատրաստել այն ամենը, ինչ անհրաժեշտ է դասի համար:

5. Դպրոց ներկայանալ մաքուր, սանրված և կոկիկ հագնված:

6. Դասարանում իր տեղը պահել մաքուր և կարգին:

7. Զանգից անմիջապես հետո մտնել դասարան և գրավել իր տեղը, դասի ժամանակ դասարան մտնել և դուրս գալ միայն ուսուցչի թույլտվությամբ:

8. Դասի ժամանակ ուղիղ նստել, արմունկների վրա չհենվել և չմեկնվել, ուշադիր կերպով լսել ուսուցչի բացատրությունները և աշակերտների պատասխանները, չխոսել և կողմնակի գործերով չզբաղվել:

9. Ուսուցիչներին, դպրոցի դիրեկտորին, երբ նրանք մտնում են դասարան կամ դուրս են գալիս դասարանից, ողջունել՝ ոտքի կանգնելով:

10. Ուսուցչին պատասխանելիս ոտքի կանգնել, մարմինն ուղիղ պահել, տեղը նստել միայն ուսուցչի թույլտվությամբ, պատասխանել ցանկանալիս կամ հարց տալիս ձեռք բարձրացնել:

11. Օրագրում կամ հատուկ տետրում ճշտորեն գրանցել ուսուցչի կողմից հաջորդ օրվա դասի համար հանձնարարածը և այդ գրանցումը ցույց տալ ծնողներին, տնային բոլոր հանձնարարությունները կատարել անձամբ:

12. Հարգանքով վերաբերվել դպրոցի դիրեկտորին և ուսուցիչներին, փողոցում իր դպրոցի դիրեկտորին և ուսուցիչներին հանդիպելիս քաղաքավարությամբ գլուխ տալ նրանց, ըստ որում տղաները պետք է գլխարկները հանեն:

13. Քաղաքավարի լինել մեծերի հետ: Դպրոցում, փողոցում և հասարակական վայրերում իրեն պարկեշտ և վայելուչ պահել:

14. Չհայհոյել և կոպիտ արտահայտություններ չգործածել, չծխել և գումար չխաղալ:

15. Պահպանել դպրոցական գույքը, խնամքով վերաբերվել ինչպես իր, այնպես էլ ընկերների իրերին:

16. Ուշադիր և սիրալիր լինել դեպի ծերերը, փոքր երեխաները, թույլերը, հիվանդները, ճանապարհ տալ և տեղը զիջել նրանց, ամեն տեսակի օգնություն ցույց տալ:

17. Լսել ծնողներին, օգնել նրանց, հոգատար լինել փոքր եղբայրների և քույրերի նկատմամբ:

18. Մաքրություն պահպանել սենյակներում, հագուստը, ոտնամանը, անկողինը կարգին պահել:

19. Իր մոտ ունենալ աշակերտական տոմսը, պահպանել խնամքով, ուրիշներին չհանձնել և դպրոցի դիրեկտորի կամ ուսուցիչների պահանջի դեպքում ներկայացնել:

20. Իր դպրոցի և դասարանի պատիվը բարձր գնահատել՝ ինչպես իր սեփական պատիվը:

Կանոնները խախտելու համար աշակերտը ենթական է պատժի՝ ընդհուպ մինչև դպրոցից հեռացվելը[200]:

Աշակերտական կանոնները ուսուցչական, ծնողական և աշակերտական ժողովներում քննարկվեցին, պարզաբանվեցին դրանց իմաստը, իրականացման միջոցներն ու ձևերը: Այնուհետև հետևողական աշխատանք ծավալվեց կանոնների յուրացման ու կյանքում գործադրելու ուղղությամբ:

1944թ. ապրիլին ԼՂ լուսժողկոմի ընդունած հրամանում (թիվ 12) հանգամանորեն նշվում է դպրոցներում գիտակցական կարգապահությունը բարձրացնելու, աշակերտական կանոններն իրագործելու և դրանք արդյունավետ դարձնելու մասին: Առանձնապես նշված էր դաստիարակության բնագավառում համոզման մեթոդի կիրառման անհրաժեշտությունը: Սահմանվեցին նաև խրախուսանքի և պատժի հետևյալ միջոցները. խրախուսանք՝ գովեստ ուսուցչի կողմից, պարգև և գովասանագիր՝ դիրեկտորի կողմից, պատիժներ՝ նկատողություն ուսուցչ կողմից, հանդիմանություն դասարանի առաջ, զանցառու աշակերտին ոտքի կանգնեցնել, հեռացում դասարանից, դասերից հետո դպրոցում թողնել, վարքի գնահատականն իջեցնել, կանչել մանկավարժական խորհրդի նիստին՝ ներազդելու համար. այն աշակերտներին, որոնց վրա վերը նշված պատիժները դրական արդյունք չեն տա, այդ դեպքում մանկավարժական խորհուրդներին իրավունք տալ նրանց դպրոցից հեռացնելու 1-3 տարով:

Բացի այդ բոլորից, ուսուցիչներին և դպրոցական մյուս աշխատողներին զգուշացվում էր, որ դաստիարակության հարցում խուսափեն վարչարարությունից և հոգատարությամբ ու խնամքով շրջապատեն երեխաներին, մանկավարժական մեծ հմտություն հանդես բերեն դաստիարակության գործում:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ԼՂ հանրակրթական դպրոցը և ուսուցչությունը նույնպես ակտիվ մասնակցություն ունեցան հաղթանակը կոփելու մեծ ու պատվավոր աշխատանքին: Պատերազմի պայմաններին համապատասխան, ճիշտ կազամկերպելով աճող սերնդի ուսման ու դաստիարակության գործը, դպրոցը պետք է միաժամանակ բոլոր միջոցներով օգներ ռազմաճակատի կարիքները հոգալու և թիկունքն ամրապնդելու ուղղությամբ ծավալվող վիթխարի աշխատանքներին:

Պատերազմի առաջին իսկ օրերից դպրոցական ամբողջ գործունեության նպատակը դարձավ հայրենիքի պաշտպանունակության ամրապնդմանը նպաստելը, աշակերտների մեջ հայրենասիրություն, օտարերկրյա զավթիչների նկատմամբ ատելություն դաստիարակելը: Այդ աշխատանքը կատարվում էր, ինչպես արդեն նշել ենք, նախնառաջ ուսուցման ընթացքում: Սակայն այդ ուղղությամբ քիչ գործ չկատարվեց նաև ուսումնական պարապմունքներից դուրս: Մարզի դպրոցներում լայն ծավալ ստացավ արտադասարանական և արտադպրոցական աշխատանքը:

Փոխվեց արտադպրոցական և արտադասարանական աշխատանքների բովանդակությունը, օգտագործվեցին դրանց կազմակերպման նոր ձևեր ու մեթոդներ: Պատերազմի առաջին իսկ օրից վերակառուցվեցին դպրոցում գոյություն ունեցող արտադասարանական խմբակների աշխատանքները: Ստեղծվեցին նոր տիպի խնբակներ հակաօդային պաշտպանության, նռնակաձիգների, ավտոմատավորների, հրաձիգների, սվինամարտի, ՊԱՊ համալիրի և այլն:

Այդ բնագավառում հիշատակության է արժանի Մարտունու շրջանի Ճարտարի, Գիշու, Հաղորտու, Սոսի, Մուշկապատի, Հադրութի շրջանի Մեծ Թաղլարի, Տողի, Մարտակերտի շրջանի Հաթերքի, Վաղուհասի, Հարգոմերի, Մեծ շենի, Կուսա-

պատի, շրջկենտրոնի թիվ 1, Ասկերանի շրջանի Շոշի, Սարուշենի և այլ գյուղերի միջնակարգ դպրոցների մանկավարժական կոլեկտիվների աշխատանքի փորձը: ԼՂ լուսբաժին ներկայացրած իրենց զեկուցագրերում շրջանային կրթության բաժինների վարիչները համոզիչ փաստերով մատնանշում են, որ դպրոցահասակ բոլոր երեխաները դպրոց են հաճախում: Դպրոցներում արդյունավետ էին կազմակերպվում արտադասարանական, ինչպես նաև՝ արտադրպոցական հանրօգուտ աշխատանքները[201]:

Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներում բացառիկ կարևորություն էր տրվում քաղաքական-դաստիարակչական և հասարակական օգտակար աշխատանքին, առանձնապես պաշտպանական բնույթի միջոցառումներին:

Զգալի աշխատանք էին կատարում դպրոցներում կազմակերպված արտադասարանական խմբակները: Այսպես, օրինակ՝ Ստեփանակերտի շրջանի Չանախչու միջնակարգ դպրոցում 1943-44 ուստարում հայտնի էր գրական խմբակի աշխատանքը, որը ղեկավարում էր փորձառու ուսուցիչ Ս.Ղուկասյանը: Խմբակում քննարկվել են «Հայրենիքի թեման հայ պոեզիայում», «Ժողովուրդը հայ պատմավեպում», «Զինվորի կերպարը սովետահայ պոեզիայում», «Ժողովուրդների բարեկամությունը Թումանյանի ստեղծագործություններում» և այլ ռեֆերատներ:

Մարտունու շրջանի Թաղավարդի միջնակարգ դպրոցի աշխարհագրության ուսուցիչ Զ.Հովհաննիսյանը աշխարհագրական խմբակի պարապմունքներին հրավիրում էր նաև պատերազմի մասնակիցներին, որոնք պատմում էին իրենց անցած մարտական ուղու մասին: Հետաքրքիր ու նպատակասլաց ձևով էին կազմակերպում արտադասարանական խմբակի պարապմունքները առաջավոր ուսուցիչներ Ս.Գասպարյանը (Մարտակերտի միջն. դպրոցի ռուսաց լեզվի ուսուցիչ), Ս.Սաֆարյանը (Մարտունու շրջ. Կաղարծու միջն. դպրոցի քիմիայի ուսուցիչ), Ս. Ղարախանյանը (Ստեփանակերտի շրջանի Շոշի միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ), Լ.Արամյանը (Ստեփանակերտի շրջանի Նորագյուղի միջն. դպրոցի պատմության ուսուցիչ) և ուրիշներ[202]:

Հատուկ ուշադրություն էր դարձվում արտադասարանական, ռազմական և ֆիզկուլտուրայի խմբակների աշխատանքներին: Այսպես՝ մարզի միջնակարգ դպրոցներում կազմակերպված 40 խմբակներում ու դրուժինաներում ընդգրկված էր ավելի քան 1550 աշակերտ: Շատ դպրոցներում գործել են ռազմասանիտարական խմբակներ:

Պատերազմի տարիներին Լեռնային Ղարաբաղի ժողովրդական կրթության մարմինները, ուսուցիչները և աշակերտները շարունակում էին երկրի պաշտպանական ֆոնդի համար նյութական և այլ միջոցների հավաքումը: Այսպես, օրինակ՝ միայն 1942թ. մարզի դպրոցականների ուժերով հավաքվել և պետությանն է հանձնվել 1575ռ., 11670 կգ մասուր, 30 տոննա գուավոր մետաղի ջարդոն, 300 կգ դեղաբույսեր, 2 տոննա վայրի պտուղներ[203]:

ԽՍՀՄ շատ հանրապետություններում ու մարզերում ծայր առած թիմուրականների շարժումը լայն արձագանք գտավ նաև Լեռնային Ղարաբաղում: Մարզի դպրոցներում կազմակերպվեցին թիմուրականների 200 ջոկատներ ու խմբեր, որտեղ ընդգրկված էին 2 հազարից ավելի պիոներ-դպրոցականներ: Այդ շարժման հիմնական նպատակը ճակատայինների ընտանիքներին և երեխաներին օգնություն ցույց տալն էր:

1942թ. բերքի հավաքմանն ակտիվ մասնակցելու կոչով հանդես եկան Մարտունու շրջանի Ճարտար գյուղի դպրոցի աշակերտները: Այդ ամռանը բերքահա-

վաքին մասնակցեցին մարզի դպրոցների 5-10-րդ դասարանների շուրջ հազար աշակերտներ և հարյուրավոր ուսուցիչներ: Միայն 1944թ. մարզի հանրային տնտեսությունների դաշտերում, այգիներում և այլ տեղամասերում աշխատել են 11 հազար դպրոցականներ[204]:

Արտադասարանական, արտադպրոցական և հանրօգուտ աշխատանքները լուրջ ազդակ հանդիսացան աշակերտների ձեռք բերած գիտելիքների հաստատուն յուրացման ու խորացման համար մի կողմից, նրանց ստեղծագործական ակտիվության և ինքնագործունեության զարգացման համար՝ մյուս կողմից: Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների հարուստ ու հետաքրքիր բովանդակությունը, դրանց գաղափարական-քաղաքական ուղղվածությունը մեծապես նպաստեցին դպրոցականների մեջ հայրենասիրության դաստիարակությանը, հայրենիքի նկատմամբ նրանց տածած գիտակցական սիրո ու պարտքի զգացմունքի ձևավորմանն ու զարգացմանը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ԼՂԻՄ-ի հայ դպրոցականները ծավալուն աշխատանք կատարեցին ռազմաճակատին անմիջական օգնություն ցույց տալու և մեր երկրի պաշտպանունակությունը հզորացնելու ուղղությամբ: Նրանք կազմակերպված խմբերով, ուսուցիչների ու բարձր դասարանների կոմերիտական աշակերտների ղեկավարությամբ շրջում էին փողոցները, բակերը՝ հավաքելով մետաղի կտորտանքներ, որոնք անհրաժեշտ էին տանկեր, ռումբեր, ինքնաթիռներ, հրանոթներ, զենքի և ռազմանյութերի այլ տեսակներ պատրաստելու համար: Նրանք հավաքում և պետությանն էին հանձնում ինքնաեռներ, ալյումինե ամաններ, արծաթե դրամներ ու բաժակներ, գդալներ, կերոսինկաներ և այլ բազմատեսակ իրեր: Այդ աշխատանքը դպրոցականների հայրենասիրական առաջին պարտականություններից մեկը հանդիսացավ:

Խորհրդային ամբողջ ժողովուրդի հետ միասին Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հայ ուսուցիչները և հարյուր հազարավոր դպրոցականներ ակտիվորեն մասնակցում էին երկրի պաշտպանության գործին:

Վերոհիշյալ ակնարկից դժվար չէ եզրակացնել, որ Հայրենական մեծ պատերազմի դժվարին օրերին անխափան գործել են Լեռնային Ղարաբաղի դպրոցները, աշակերտները ոչ միայն ստացել են բազմակողմանի գիտելիքներ, այլև ուսուցիչների անմիջական ղեկավարությամբ հայրենանվեր աշխատանք են կատարել կոլտնտեսային դաշտերում, ուժերի ներածին չափ օգնել ռազմաճակատին: Էլ չենք խոսում այն մասին, որ մարզի դպրոցների ուսուցիչներից ու շրջանավարտներից շատերն էլ իրենց կյանքն են զոհաբերեր Մեծ Հայրենականի հերոսական մարտերում՝ հանուն մեր սրբազան հայրենիքի ազատության և անկախության:

3. Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցի հայ ուսուցիչների ու նրանց սաների սխրանքները Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում (դպրոց-ռազմաճակատ)

Հայրենական մեծ պատերազմում, մինչև հաղթանակի օրը, խորհրդային բազմազգ ժողովրդի հետ միասին ուս-ուսի տված անձնվիրաբար մարտնչեցին նաև հայ ժողովրդի հազարավոր զավակներ: Նրանք գործուն մասնակցություն ունեցան մարտական բոլոր գործողություններին՝ փառքով պսակելով հայ ժողովրդի մարտական հարուստ ավանդույթներով լի պատմությունը:

Հայրենական պատերազմին մասնակցել են 800 հազար հայ զավակներ, որից 300 հազարը՝ Խորհրդային Հայաստանից: Հայ զավակներից ավելի քան 200 հա-

զարը զոհվեցին թշնամու դեմ մղված արյունահեղ մարտերում՝ ոսկե տառերով գրելով իրենց անունները պատերազմի տարեգրության էջերում: Տարբեր ռազմաճակատներում ու զորատեսկաների կազմում ցուցաբերած խիզախության և կատարած անօրինակ սխրանքների համար շուրջ 70 հազար հայորդիներ պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով, իսկ նրանցից առավել աչքի ընկած 105-ը արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման[205]: Այդ կոչումը սահմանվել էր դեռևս 1934թ. ապրիլի 16-ին՝ ԽՍՀՄ Կենտգործկոմի որոշմամբ, որպես պատվավոր կոչում, գերազանցության բարձրացման աստիճան:

Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև արցախահայերը և արժանավոր տեղ գրավեցին այդ մեծ գոյամարտի հերոսական պատմության էջերում:

Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից մինչև հաղթական ավարտը Լեռնային Ղարաբաղից մասնակցել են 45 հազար հայորդիներ, որոնցից 22 հազարը զոհվել են թշնամու դեմ մղված արյունահեղ մարտերում[206]: Հազարավոր արցախահայեր պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով, իսկ նրանցից առավել աչքի ընկած 23-ը արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման: Արցախի պատմության նվիրյալ և հմուտ հետազոտող Շահեն Մկրտչյանը իրավացիորեն մատնանշում է, որ Մեծ Հայրենականի տարիներին Ադրբեջանի կառավարությունը, օգտվելով առիթից, հանրապետությունում ապրող հայերին զանգվածաբար ռազմաճակատ ուղարկեց ի հաշիվ ադրբեջանցիների: Փաստորեն պատերազմի տարիներին ռազմաճակատ է զորակոչվել ԼՂԻՄ-ի հայ բնակչության 30 տոկոսը[207]: Պատկերը նույնն էր նաև Հյուսիսային Արցախում՝ Շահումյանի շրջանի տարածքում ապրող հայաշատ վայրերում, որի մասին համառոտ տեղեկություններ է տալիս պրոֆեսոր Խիկար Բարսեղյանը իր «Հայ ժողովրդի ավանդը Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում» աշխատությունում (Եր. 1995, էջ 56):

Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում գործուն մասնակցություն ունեցած հազարավոր հայ ռազմիկների մի զգալի մասը Հայաստանի ժողկրթության մարմիններում աշխատողներն ու հանրակրթական դպրոցի ուսուցիչներն էին և դպրոցներում դաստիարակված սաները: Նրանց շարքերում էին նաև Ղարաբաղի հարյուրավոր ուսուցիչներ ու աշակերտներ, որոնք իրենց սխրանքներով ու հերոսությամբ փառավոր էջեր գրեցին Հայրենական պատերազմի տարեգրության մեջ:

Հայրենական մեծ պատերազմի ժամանակ Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցը փայլուն քննություն բռնեց: Դպրոցի բովով անցած հարյուրավոր երիտասարդներ իրենց ուսուցիչների հետ միասին ռազմաճակատներում ցուցաբերած հերոսությամբ ու մարտական սխրագործություններով հանդես բերեցին վառ հայրենասիրություն և անսահման նվիրվածություն հայրենիքին և իրենց ժողովրդին:

Հայության այդ հատվածը՝ Ղարաբաղը, փոքրիկ մի հատված է, բայց այդ փոքր հողակտորի ծնունդ են պատերազմի տարիներին ռազմական մեծ հռչակի արժանացած տաղանդավոր զորավարներ՝ մարշալ Բաղրամյանը, ծովակալ Իսակովը, Բաբաջանյանն ու Խուդյակովը (Խանփերյանցը), տասնյակ գեներալներ, փառքի տարբեր աստիճանների շքանշանների ասպետներ, որոնք Մեծ Հայրենականի պատմության էջերում փառավոր տեղ են գրավում: Արցախի ամեն հայորդի, լինի բանվոր թե կոլտնտեսական, արհեստավոր, բժիշկ թե ուսուցիչ, պատերազմի դաշտում կռվում էր զինվորի վեհ գիտակցությամբ, հաղթելու վճռական

հավատով (ինչպես եղավ նաև Արցախյան պատերազմում):

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Ղարաբաղի հայկական դպրոցների հարյուրավոր ուսուցիչներ ու նրանց դաստիարակած սաներ նույնպես թշնամու նկատմամբ վրեժի ու ատելության զգացմունքով լցված հանդես եկան հայրենասիրական դիմումներով՝ կամավոր ռազմաճակատ մեկնելու համար: Չնայած տարիքային առումով՝ շրջանային զինկոմիսարիատի հրահանգով ուսուցիչներն ու աշակերտները զորակոչվում էին ռազմաճակատ, սակայն մեծ մասը կամավոր էր մեկնում՝ իր նախնիներից ժառանգելով արցախցուն վայել ազնիվ ձգտումներն ու բնավորությունը:

Ղարաբաղի հայկական դպրոցներում դաստիարակված հարյուրավոր սաներ ռազմաճակատից ուղարկած իրենց նամակներում ցույց էին տալիս իրենց աննկուն ոգին, հոգեկան մաքուր աշխարհը, հայրենասիրության այն վառ զգացմունքները, որ ժամանակին նրանց մեջ դաստիարակել էին դարերի հարուստ ավանդույթ ունեցող հայ դպրոցն ու ուսուցիչը:

Անշուշտ, դա հատուկ ուսումնասիրության թեմա է, սակայն համառոտակի կնշենք միայն մի շարք ուսուցիչների ու աշակերտների սխրագործությունների մասին, որոնք հերոսաբար զոհվել են ռազմի դաշտում:

Պարբերական մամուլի էջերում՝ «Խորհրդային դպրոց», «Խորհրդային Ղարաբաղ», «Կոմունիստ» (հայերեն), շրջանային թերթերում՝ «Սոցուղի», «Կարմիր դրոշ», «Աշխատանք», բազմաթիվ աշխատություններում (Ա.Մնացականյան, «Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում», Եր., 1954թ. Խ.Բարսեղյան «Հայ ժողովրդի ավանդը Հայրենական մեծ պատերազմում», Եր., 1995թ., Կ.Հարությունյան «Հայ ժողովուրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմին 1939-1945թթ.», Եր., 2001թ., Շ.Մկրտչյան, «Լեռնային Ղարաբաղը Հայրենական մեծ պատերազմի տարիներին», բանբեր Հայաստանի արխիվների, 1985թ., Հ.Աբրահամյան, Շ.Մկրտչյան, «Արցախի համար զոհված դիզակցիները», Եր., 2000թ., Ղ.Դալլաքյան, «Մարտական 89, Թամանյան դիվիզիայի հերոսական պատմությունը», Եր.,1968թ., Ս.Կարապետյան, «Լեռնային Ղարաբաղի քաջարի զավակները», Ստեփանակերտ, 1945թ., Խ.Ղազարյան, «Տումի», 2003թ., Միքայել Աղաջանյան, «Հաթերք») և այլ ուսումնասիրություններում ռազմաճակատից ստացված և դպրոցների արխիվներում պահպանված հարյուրավոր նամակներում նկարագրվում են Լեռնային Ղարաբաղի հայկական դպրոցների ուսուցիչների ու աշակերտների ցուցաբերած խիզախությունը, արիությունն ու հերոսական սխրագործությունները: Կարմիր բանակի սպաները, հրամանատարները դպրոցներին, ծնողներին ուղարկած իրենց նամակներում, թերթերում տպագրած («Կարմիր զինվոր») հոդվածներում մեծ գոհունակությամբ էին նշում խորհրդային դպրոցի ու ընտանիքի կատարած միասնական դաստիարակչական աշխատանքի մասին, որի արդյունքները Հայրենական պատերազմում հիացմունք էին պատճառում բոլորին: Համառոտակի կնշենք միայն մի քանի փաստ:

Վերոնշյալ և այլ աշխատությունների, պարբերական մամուլում տպագրված հոդվածների և ԼՂ Հանրապետության դպրոցներում պահպանված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ Հայրենական մեծ պատերազմին Լեռնային Ղարաբաղից մասնակցել են հազարավոր ուսուցիչներ, ժողկրթության մարմինների աշխատողներ և բարձր դասարանների շրջանավարտներ: (Լավ կլիներ, որ այդ թեման ամբողջական ուսումնասիրվեր և ներկայացվեր ընթերցող հասարակությանը):

Գոհունակությամբ պետք է նշել, որ նրանցից ոչ մեծ խմբի, շուրջ 360 ուսուցիչ-

ների մարտական գործողությունների ու սխրանքների մասին շատ համառոտ տեղեկություններ են տալիս պատերազմի մասնակից արցախցի ուսուցիչ վետերաններ Գուրգեն Աղասարյանը և Ռաֆիկ Հովսեփյանը՝ «Արցախի հայ ուսուցիչները Մեծ Հայրենականում (1941-1945թթ.)» արժեքավոր աշխատությունում: Սակայն նշենք, որ խորհրդային շրջանում Լեռնային Ղարաբաղի հայ կրթական համակարգի պատմությունը, ժամանակագրական առումով 1941-1945թթ. վերաբերող նյութերը ուսումնասիրելիս, արխիվային փաստաթղթերում և այլ աղբյուրներում ի հայտ են բերվել նորահայտ փաստագրական նյութեր, որոնք վերաբերում են Հայրենական մեծ պատերազմում Ղարաբաղի հայ ուսուցիչների ու բարձր դասարանների աշակերտների ցուցաբերած սխրագործություններին: Ահա այդ միտումով էլ նպատակահարմար գտանք աշխատության այս բաժնում ուսումնասիրության հետ կապված շատ համառոտակի տեղեկություններ տալ տարբեր ռազմաճակատներում զոհված ուսուցիչների ու աշակերտների և զորացրված ուսուցիչների ու աշակերտների անօրինակ սխրանքների, ռազմաճակատից ուղարկված նամակների բովանդակության և խաղաղ ժամանակաշրջանում նրանց մանկավարժական գործունեության մասին:

Անշուշտ, ուսումնասիրվող թեման շատ տարողունակ է և մեր ուսումնասիրության բնույթից ելնելով՝ համառոտակի կներկայացնենք ավելի քան հարյուր ուսուցիչների ու աշակերտների ցուցաբերած սխրագործությունները Հայրենական մեծ պատերազմում և մանկավարժական գործունեությունը խաղաղ ժամանակաշրջանում, որը, մեր կարծիքով, հետաքրքիր կլինի հարգարժան ընթերցողների համար:

3.1. Նրանք զոհվեցին Հայրենիքի համար (դպրոց-ռազմաճակատ)

Հայրենական մեծ պատերազմում խորհրդային բազմազգ ժողովուրդը ֆաշիստական Գերմանիայի դեմ հաղթանակ ձեռք բերեց մեծ զոհաբերություններով: Պատերազմում ԽՍՀՄ-ը կորցրեց 20 միլիոն մարդ: Մահ ու կենաց կռվում իրենց կյանքը չխնայեցին նաև հայ ժողովրդի զավակները: Ինչպես նշեցինք, պատերազմի տարբեր ռազմաճակատներում զոհվեցին ավելի քան 200 հազար հայ ռազմիկներ, Լեռնային Ղարաբաղից՝ 20 հազար հայ ռազմիկներ: Շատերի հետ միասին զոհվեցին նաև Ղարաբաղի հայկական դպրոցների բազմաթիվ ուսուցիչներ, բարձր դասարանների աշակերտներ, ժողկրթության մարմինների աշխատողներ: Զոհվեցին ռազմաճակատներում մարտական առաջադրանքները խիզախորեն կատարելու ժամանակ: Առ այսօր դպրոցներում, հարազատների ու մտերիմների մոտ պահպանվում են ռազմաճակատներից նրանց գրած շատ ու շատ նամակները, որոնք բովանդակում են մեծ հայրենասիրություն և հավատ գալիք հաղթանակի նկատմամբ: Նամակներում արտահայտել են իրենց նվիրվածությունը Հայրենիքին: Կասկած չի հարուցում այն ճշմարտությունը, որ մարտադաշտում նրանց կողմից հայ ժողովրդին յուրահատուկ հայրենասիրության դրսևորումը արդյունք էր այն քաղաքական ու գաղափարական մկրտության, որ նրանք ստացել են հանրակրթական դպրոցներում, ուսումնական հաստատություններում ուսումնառության տարիներին: Նրանք ընկան ռազմաճակատներում, բայց թողեցին ամենալավագույն հայրենասերների հիշատակ, որ սրբությամբ են պահպանում այսօրվա դպրոցականներն ու ուսուցիչները, ուսումնական հաստատության ուսանողներն ու դասախոսները:

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ 1941թ. հունիսի 20-ին, Կարմիր բանակում էր ծառայում Ասկերանի շրջանի Կարմիր գյուղի 7-ամյա դպրոցի մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ **Վաղարշակ Աբրահամյանը:**

Պատերազմի առաջին տարում (1941-1942թթ.) նա ակտիվորեն մասնակցել է տարբեր զորատեսակների կազմում տարվող ռազմապաշտպանական բազմաթիվ միջոցառումների, իր օրինակով ոգևորել բանակում ծառայող կոմերիտականներին, նրանց վարակել հայրենասիրությամբ: Վերոնշյալ դպրոցում պահպանվող արխիվային փաստաթղթերում, Գ.Աղասարյանի և Ռ.Հովսեփյանի «Արցախի հայ ուսուցիչները Մեծ Հայրենականում (1941-1945թթ.)» աշխատությունում հանգամանորեն նշվում է նրա սխրանքների մասին[208]:

1942թ. ամռանը Վուստրաուի ֆաշիստական համակենտրոնացման ճամբարում, Բեռլինից ոչ հեռու, սկսեց գործել «Սովետական հայրենականներ» հայկական ընդհատակյա կազմակերպությունը, որի մեջ էր նաև Վաղարշակ Աբրահամյանը: Նա և իր ռազմագերի ընկերները կազմակերպում են հակաֆաշիստական խմբեր, պրոպագանդիստական աշխատանք տանում, իրագործում դիվերսիոն աշխատանքներ… Գերմանացիները զգալով վտանգը՝ ցրում են ռազմագերի հայերին: Վ. Աբրահամյանը մի խումբ հայերի հետ տարվում է Հիշբերգ՝ օպտիկական ապակու գործարան: Այստեղ էլ հանգիստ չեն մնում: Աղի լուծույթ խառնելով հալվող ապակուն՝ շարքից հանում են մեծ քանակությամբ օպտիկական ապակիներ:

1943թ. Հիշբերգ քաղաքում, օպտիկական ապակու գործարանում սկսեց գործել ընդհատակյա տպարան, որի կազմակերպության անդամներից էր Վ. Աբրահամյանը: Նրանք թռուցիկներ էին տարածում Հիշբերգ, Գրաֆենֆելդ, Դրեզդեն, Նոյրուպին և այլ քաղաքներում:

1945թ. փետրվարի 14-ի լուսաբաց…Բարաք են ներխուժում էսէսականները: Նրանք ունեին «Սովետական հայրենականներ» ընդհատակյա կազմակերպության անդամների ցուցակը: Տղաներին դուրս հրելով՝ լցնում են մեքենաների մեջ: Հրաշքով փրկվում են միայն մի քանիսը: Նա զոհվել է կատաղի մարտերից մեկում: Ցավոք սրտի, նրա ռազմական գործողությունների մասին նվազ տեղեկություններ են պահպանվել[209]:

Հայրենիքի համար ճակատագրական պահին, կենաց ու մահվան այդ ծանր տարիներին (1941-1943թթ.), հայ որդիների հետ միասին **Ասծատուր Ազիզբեկյանը** անձնվիրաբար մասնակցեց ռազմաճակատի մարտական բոլոր գործողություններին: Հադրութի շրջանի Տումիի միջնակարգ դպրոցում պահպանված փաստաթղթերից և հարազատներին գրած նրա նամակներից ու այլ աղբյուրներից տեղեկանում ենք նրա մանկավարժական, ռազմաքաղաքական գործունեության ու Հայրենական մեծ պատերազմում ցուցաբերած սխրագործությունների մասին:

Հայրենի գյուղի 7-ամյա դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակում է Շուշիի մանկավարժական ուսումնարանում (1926-1930թթ.) և ավարտելուց հետո որպես աշխարհագրության ուսուցիչ աշխատում է շրջանի Խծաբերդի, Տումու դպրոցներում, միաժամանակ բարձրագույն կրթություն ստանում Բաքվի մանկավարժական ինստիտուտի աշխարհագրության ֆակուլտետի հեռակա բաժնում (1933-1938թթ.) [210]:

Շրջանային կրթության բաժինը՝ գնահատելով նրա մանկավարժական, մասնագիտական խոր պատրաստվածությունը, 1938-1939 ուսումնական տարում Ա.Ազիզբեկյանին նշանակում է Մամեդաձրի միջնակարգ դպրոցի տնօրեն: 1940-1941 ուսումնական տարում, երբ ավարտել էին տարեվերջի քննությունները,

Ա.Ազիզբեկյանը մեկնեց ռազմաճակատ: Բարձրագույն կրթություն ունենալու համար նրան 1941թ. հուլիսին ուղարկում են Բաքվի ռազմական ուսումնարան, որն ավարտում է գերազանց գնահատականներով: 1942թ. ծառայությունը շարունակում է նորաստեղծ 89-րդ հայկական դիվիզիայում (հետագայում Թամանյան դիվիզիա, հրամանատար՝ գեներալ Նվեր Սաֆարյան): Այստեղ նրան շնորհում են ավագ լեյտենանտի կոչում և նշանակում հակատանկային հրանոթային վաշտի հրամանատար: Կատաղի մարտերում ցուցաբերած սխրանքների համար (1942-1943թթ.) Ա.Ազիզբեկյանը արժանացավ կառավարական պարգևների:

Հարազատ քրոջը՝ Արաքսյային գրած վերջին նամակում (1943թ. փետրվարի 20-ին) նա գրում է. «Սիրելի Արաքսյա, ես ողջ և առողջ եմ: Վերջապես հասել է ժամանակը, որ կատաղի թշնամուն դուրս շպրտենք մեր հողից: Հեռու չէ այն օրը, որ հաղթանակով կվերադառնամ: Համբուրում եմ ձեզ բոլորիդ: Քո եղբայր Ասծատուր»: Դա հայրենասեր քաջ ղարաբաղցու վերջին նամակն էր: Նա զոհվեց 1943թ. փետրվարին՝ Ազովի ծովի ափին պաշտպանողական դիրքերում ՝ հակառակորդի հետ մղվող թեժ մարտերից մեկում:

Հայրենիքի ազատության համար մղվող արյունալի մարտերում ու տարբեր ռազմաճակատներում իրենց կյանքն են զոհաբերել Մարտակերտի շրջանի Հաթերքի միջնակարգ դպրոցի շրջանավարտներ Ասծատուր, Արտեմ, Լևոն Գրիգորյան եղբայրները[211]:

Ասծատուր Գրիգորյանը՝ ավարտելով հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը (1939-1940 ուստարում) ընդունելության քննություններ էր հանձնում Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում՝ նպատակ ունենալով ավարտել և աշխատել հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում: Սակայն նա զորակոչվեց պարտադիր զինվորական ծառայության: Դեռ չէր ավարտվել զինվորական ծառայության ժամկետը, երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը:

Պատերազմը սկսվելուց հետո գյուղում նրանից նամակ ստացան, որը գրում էր Լիտվայից: Ընդամենը մի քանի տող էր գրել եռանկյունածալ նամակում. «Դեռ այժմ ես լավ եմ: մամայիս և եղբայրներիս համար են շատ անհանգստանում: Գրեք նրանց մասին: Թշնամին շատ ուժեղ է: Բայց միևնույն է, մենք կհաղթենք նրան և կվերադառնանք հաղթանակով: Կրկին բարևներ բոլորիդ: Բարևներ նաև նրան (խոսքը սիրած աղջկա մասին էր, որի մասին գիտեին նրա հարազատները): Հարգանքներով՝ ձեր Ասծատուր»[212]: Դա նրա առաջին ու միաժամանակ վերջին նամակն էր: Այլևս նրանից ոչ մի նամակ և ոչ մի տեղեկություն: Դեռ սպասում են նրան…

Նրա մյուս եղբայրը՝ **Արտեմ Գրիգորյանը,** նույնպես գերազանց գնահատականներով ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը (1939թ.) և ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Դեռ 17 տարեկան էր հայրենասեր պատանին, երբ ներկայացավ Մարտակերտի շրջանի զինկոմ և խնդրեց, որ իրեն զորակոչեն Կարմիր բանակի շարքերը: Սակայն զինկոմը մերժեց նրա խնդրանքը, հաշվի առնելով, որ նրա հասակը չի համապատասխանում: Սակայն մի շաբաթից հետո նրա խնդրանքը հարգվեց և բացառության կարգով, 17 տարեկան հասակում զորակոչվեց բանակի շարքերը (1939թ. նոյեմբերին):

Արտեմ Գրիգորյանը գերազանց գնահատականներով ավարտեց Պոդոլսկ քաղաքի ռազմական ուսումնարանը և ստացավ լեյտենանտի կոչում: Դեռ չէր վերջացրել պարտադիր զինվորական ծառայությունը, երբ սկսվեց Մեծ Հայրենականը: Պատերազմի սկզբին նա արդեն ավագ լեյտենանտ էր և Մոսկվայի պաշտ-

պանների շարքում վարում էր գնդի քաղղեկի տեղակալի պաշտոնը:

Մոսկվայի պաշտպանության օրերին Արտեմից նամակ ստացվեց, որում նա դարձյալ ընդամենը մի քանի խոսք էր գրում. «Հիտլերականները որոշեցին տիրանալ մեր հայրենիքի սիրտ Մոսկվային: Բայց իզուր են նրանց ջանքերը: Շուտով, շատ շուտով թշնամին գլխովին կջախջախվի և դուրս կշպրտվի Մոսկվայի մատույցներից: Ես շատ եմ նիգարան մամայից և եղբայրներիցս: Կրկին բարևներ բոլորիդ: Բարևներ նաև նրան… Բարևներով՝ ձեր Արտեմ»[213]:

Այս նամակը Արտեմի գրած վերջին նամակն էր Մոսկվայի պաշտպանության համար մղած մարտերի թեժ օրերին: Այսպես՝ Արտեմի ճակատագիրն ևս մնաց անհայտ:

Երրորդ եղբայրը՝ **Լևոն Գրիգորյանը,** դպրոցն ավարտելուց հետո աշխատում էր «Նոր կյանք» կոլտնտեսությունում: Պատերազմի առաջին իսկ օրը մի խումբ հաթերքցիների հետ նա ևս զորակոչվում է ռազմաճակատ:

Միքայել Աղաջանյանը իր գրքում մանրամասն նկարագրում է Ուլունց Սողոմոնի (Սողոմոն Գրիգորյանի) յոթ եղբայրների (որոնցից երեքը դպրոցի շրջանավարտներ էին) մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին և նրանց կատարած սխրանքները:

Շատ հուզիչ էին որդուն ռազմաճակատ ուղարկելիս մոր՝ Սոնա մայրիկի տված պատգամները…

Այդ երեկոյան Սոնա մայրիկի տունն էին հավաքվել նրա հինգ տղաները, աղջիկ Մաշին, մյուս հարազատները ու հարևանները: Սոնա մայրիկն ասաց. «Իմ տղաներից Ասծատուրը և Արտեմը ռազմաճակատում են: Երկու օրից հետո Լևոնն է գնում ռազմաճակատ: Շուտով կգնան նաև Իլիզբարը, Խաչատուրը և Ավանեսը, իսկ հասակը լրանալուց հետո՝ նաև Սերգին: Գիտեմ, որ դուք բոլորդ սիրում եք ինձ, ձեր մորը: Մորը սիրող տղաները պետք է սիրեն նաև հայրենիքը: Այնպես կանեք, որ Սոնա մոր տված կաթը ձեզ հալալ լինի: Ձեր հայր Սողոմոնը նամուսով է եղել, նամուսով կկռվեք, մեր նամուսը գետնով չտաք: Ես այսօր կամ, վաղը չկամ: Այնպես կանեք, որ մեր ոսկորները հանգիստ մնան հողի տակ: Համ էլ կռվումը զգույշ կլինեք…»[214]:

Եվ ահա երկու օրից հետո Լևոնին մի խումբ երիտասարդների հետ համագյուղացիները, ղավալ Ծատուրի զուռնայի ղողանջների ուղեկցությամբ ճանապարհեցին ռազմաճակատ: Բելոռուսիայից ստացված առաջին նամակը, որում գրում էր. «Այստեղ համառ մարտեր են մղվում: Թշնամին ուժեղ է, բայց կջախջախվի: Ձեզ շատ եմ կարոտել: Ինչպե՞ս է Եվան, սիրտս վատ բան է գուշակում: Ափսոս, որ հասցե չունեմ, որ գրեք նրա մասին: Բարևներ բոլորիդ: Ձեր Լևոն:» Ինչքա՜ն ճիշտ էր գուշակում Լևոնի սիրտը: Իրոք, որ տեղի էր ունեցել ողբերգություն: Աշնանային մի արևոտ օր կոլտնտեսության ծխախոտագործները իջնում են Թարթառի հովիտը՝ բերքը հավաքելու: Գետի վրայի անհուսալի գերանով անցնելիս Եվան սայթաքում և ընկնում է Թարթառի խելահեղ ալիքների մեջ: Փրկելն անհնարին է դառնում: Այսպես՝ ողբերգական մահով Եվան կյանքից հեռանում է ընդամենը 22 տարեկան հասակում, անտեղյակ մնալով իր ամուսին Լևոնի հետ տեղի ունեցածին: Ըստ հավաստի տվյալների՝ Լևոնը մարտում հերոսություն է ցուցաբերել, շարքից հանել էր 16 գերմանացու, որոնց թվում նաև մեկ գեներալի և ներկայացվել կառավարական պարգևի՝ Մարտական Կարմիր դրոշի շքանշանի, բայց զոհվել և չի հասցրել այն ստանալ[215]:

Հայրենիքի ճակատագրական պահին, կենաց ու մահվան այդ ծանր տարիներին ռազմաճակատ մեկնեցին Հաթերքի միջնակարգ դպրոցի ուսուցիչներ Ձինա-

վոր, Կարապետ և Հայրապետ Առուշանյանները (նրանք մի ընտանիքի զավակներ են): Հավաստի փաստերի հիման վրա ներկայացնենք նրանց մանկավարժական գործունեությունն ու տարբեր ռազմաճակատներում ցուցաբերած սխրանքները[216]:

Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին **Զինավոր Առուշանյանը** նախնական կրթությունը ստանում է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում, այնուհետև ավարտում Շուշիի մանկավարժական ուսումնարանը անցնում մանկավարժական աշխատանքի Մարտակերտի շրջանի Չափարի, Զագլիկի և Հաթերքի դպրոցներում, վայելում իր գործընկերների ու աշակերտների սերն ու համակրանքը: Միաժամանակ ակտիվորեն մասնակցություն է ունենում բնակչության շրջանում անգրագիտությունը վերացնելու գործին և շատ ուսուցիչների նման անվճար դասավանդում երեկոյան դպրոցներում (լիկկայաններում):

Զինավոր Առուշանյանը 1939թ. զորակոչվում է Կարմիր բանակ: Զինվորական ծառայությունն անց է կացնում Ուկրաինայում: Շուրջ երկու տարվա զինվորական ծառայության ընթացքում մայրը զորամասի հրամանատարությունից բազմաթիվ նամակներ է ստացել, որոնցում առանձին գովասանքով նշվում է Զինավորի գերազանց ծառայությունը, շնորհակալություն էր հայտնում հայրենիքին արժանի պաշտպան դաստիարակելու համար: Մայրը պարծենում էր, ուրախանում իր զավակներով և օրեր էր հաշվում, թե ահա կվերադառնա որդին, հայրական օջախը կշենացնի: Զինավորը հուսադրում էր մորը, ուրախացնում նրան իր պլաններով: Սկսվեց Մեծ Հայրենականը: Պատերազմի առաջին իսկ օրերին զոհվեց Զինավորը: Նրա մասին ոչ մի տեղեկություն չստացվեց: Խեղճ մայրն էլ որդու կորուստը սրտում կնքեց իր մահկանացուն: Զինավոր Առուշանյանի նման պատերազմի թոհուբոհի մեջ շատերն անհետ կորան: Երախտապարտ հաթերքցիք նրանց հիշատակը հավերժացնելու համար գյուղում հուշարձան կանգնեցրին:

Հուշարձանի սրբատաշ քարին գրված են հաթերքցի 195 անմահների անունները, որոնց մեջ է նաև Զինավորի անունը:

Կարապետ Առուշանյանը՝ ավարտելով Շուշիի մանկավարժական ուսումնարանը, (1931թ.), որպես պատմության և աշխարհագրության ուսուցիչ դասավանդում էր Հաթերքի, Առաջաձորի, Դրմբոնի, Հարությունագոմերի և Վաղուհասի դպրոցներում և լավագույն ուսուցիչների հետ միասին պատշաճ մակարդակով կազմակերպում ուսումնադաստիարակչական աշխատանքները և բարձրացնում ուսման որակը նշված առարկաներից:

1939թ. զորակոչվում է բանակ և, որպես կոմունիստ, գործուղվում քաղաշխատողների դասընթացներ: 1941թ. ավարտում է դասընթացները և նշանակվում վաշտի քաղղեկ գործող բանակում: Ռազմաճակատում Առուշանյանը, որպես մարտական քաղաշխատող, ցուցաբերում է լավագույն ունակություններ և կազմակերպչական ձիրք: Նա միշտ անբաժան էր մարտիկներից և գտնվում էր այնտեղ, որտեղ վճռվում էր մարտի բախտը, որտեղ անհրաժեշտ էր անձնական օրինակով և կրակոտ խոսքով ոգևորել մարտիկներին: Ղրիմի համար մղվող մարտերում 1942թ. մայիսին կապիտան Առուշանյանը առաջնորդում էր իր վաշտի գրոհը տակտիկական կարևոր նշանակություն ունեցող բարձունքը գրավելու համար: Այդ գրոհի ժամանակ Ղարաբաղի քաջորդին զոհվում է հերոսի մահով:

Զորամասի հրամանատարությունը Առուշանյանի կնոջն ու հարազատներին տեղեկացնում է. «Ձեր ամուսին Կարապետ Թևոսովիչը զոհվեց մարտական կարևոր առաջադրանք կատարելիս, զոհվեց որպես հերոս»[217]:

Մինչև Հայրենական պատերազմ զորակոչվելը **Հայրապետ Առուշանյանը**

Մարտակերտի երկաստիճան դպրոցը գերազանց ավարտելուց հետո բեղուն մանկավարժական գործունեություն է ծավալում շրջանի Հաթերքի, Չափարի, Զագլիկի և այլ դպրոցներում, ձեռք բերելով մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցչի մեծ համբավ: Նա պատրաստվում էր ընդունելության քննություններ հանձնել Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետում, սակայն 1939թ. հոկտեմբերին զորակոչվեց Կարմիր բանակ: Զինվորական ծառայությունն անց էր կացնում Բելոռուսիայում՝ հրանոթային զորամասում: Ծնողներին և հարազատներին հղած իր նամակներում Հայրապետը առանձին գոհունակությամբ էր խոսում զինվորական իր ծառայության մասին, հուսադրում ծնողներին, որ շուտով ծառայությունը կավարտի, տուն կվերադառնա: Իսկ երազանքները պարզ էին ու հասկանալի: Պետք է ավարտի մանկավարժական ինստիտուտը, վերադառնա նորից ուսուցչական աշխատանքի: Քիչ էր մնացել, շատ քիչ՝ մեկ-երկու ամիս, որ Հայրապետը տուն վերադառնար, երբ պայթեց պատերազմը… Հայրապետը հասկացավ, որ այժմ ինքը զինվոր է՝ ռազմաճակատում կռվելու համար, հայրենիքի փառքն ու պատիվը պաշտպանելու համար: Նա կռվեց, ակտիվ կերպով մասնակցեց գերմանական ֆաշիստների հարձակումը կասեցնելու համար մղվող մարտերին: 1942թ. մայիսին այլևս նամակներ հարազատները չէին ստանում, իսկ շուտով եկավ նաև «սև թուղթը»՝ Հայրապետը զոհվել էր հերոսի մահով:

Հայրենական մեծ պատերազմի տարբեր ռազմաճակատներում կռվում էին հաթերքցի քառասուն երիտասարդ ուսուցիչներ: Նրանցից 13-ը՝ Զինավոր Առուշանյանը, Կարապետ Առուշանյանը, Վարթազ Աղաբեկյանը, Չարքազ Աբրահամյանը, Ավանես Բալայանը, Սահակ Իսկանդարյանը, Ռուբեն Հակոբյանը, Արիստակես Միրզախանյանը, Մակիչ Մուսայելյանը, Անդրանիկ Սարգսյանը, Ռուբեն Սարգսյանը և ինքը՝ Հայրապետ Առուշանյանը, տուն չվերադարձան: Նրանք իրենց մահկանացուն կնքեցին ռազմաճակատի տարբեր վայրերում՝ հոգիները պարուրած հաղթանակի հավատով, հայրենի հողի և հարազատների կարոտը սրտներում[218]:

Երախտապարտ Հաթերքն իր զոհված զավակների հիշատակը հավերժացրեց հոյակապ մի հուշարձան կառուցելով, որի սրբատաշ մարմարյա պատերին գրեց հայրենիքի համար զոհված 195 հայրենասեր հաթերքցիների անուն-ազգանունները, այդ թվում նաև 13 լույսի սերմնացանների անուն-ազգանունները:

Հայրենիքի համար այլ ռազմաճակատներում իրենց կյանքն են զոհաբերել հաթերքցի Մնացական Աղաջանյանի չորս որդիները, որոնցից Պետրոս Աղաջանյանը հայրենի գյուղի միջնակարգ դպրոցի շրջանավարտ էր: Միքայել Աղաջանյանի գրքից և այլ աղբյուրներից[219] տեղեկանում ենք, որ Հաթերքի միջնակարգ դպրոցում 1940-1941 ուսումնական տարին արդեն ավարտվել էր, շրջանավարտներից յուրաքանչյուրն արդեն ընտրել էր իր ընդունվելիք բուհն ու ֆակուլտետը: Նրանք նախապատրաստվում էին «Պեպո» ներկայացմանը, որից հետո հրաժեշտ պիտի տային սիրելի դպրոցին և ուսուցիչներին: Մեծ ուրախություն էր համակել շրջանավարտներին: Բայց սկսվեց չսպասված ահեղ պատերազմը: Ամեն ինչ մնաց անկատար՝ ներկայացումը, բուհ ընդունվելն ու սովորելը, նշանդրեքն ու հարսանիքը, տան կառուցումը, աշխատանքը և էլի բազում երազանքներ:

Շուտով ռազմաճակատ զորակոչվեց Պետրոսը՝ իր ավագ եղբոր՝ Զինավորի հետ: Մոսկվայից ստացված նամակում նա եղբորը՝ Պողոսին գրում է.«Մենք Մոսկվայում կարճատև դասընթացներ ավարտեցինք: Ինձ շնորհվեց լեյտենանտի կոչում: Իսկ Զինավորը որակավորվեց որպես նշանառու: Մենք շատ ուրախ ենք,

որ եղբայրներով միասին ենք: Ես վարում եմ գնդի հրամանատարի քաղղեկի գծով տեղակալի պաշտոն: Դեկտեմբերին թշնամին առաջին ջախջախիչ հարվածը ստացավ Մոսկվայի մատույցներում և հետ շպրտվեց 100-200 կմ: Հեռու չէ այն ժամանակը, երբ վերջնականապես կջախջախվի: Գրեք Ալեքսանի և մեր մյուս հարազատների մասին: Կրկին բարևներ բոլորիդ: Ձեր՝ Պետրոս, 1942թ., հունվարի 20»:

Հաջորդ նամակը նրանից ստացվեց Ստալինգրադից, որում հայտնում էր, որ եղբորը՝ Զինավորին, իրենից բաժանել են, և որ այնտեղ դաժան մարտեր են ընթանում, այնքան դաժան, որ գրչով ու մտքով անհնար է պատկերացնել: Պետք է միայն տեսնել և ապրել: Բայց, միևնույն է, թշնամին այստեղ ևս կջախջախվի:

Պետրոսն արդեն ավագ լեյտենանտ էր և շարունակում էր վարել գնդի հրամանատարի քաղղեկի գծով տեղակալի պաշտոնը: Մի հարթավայրում համառ մարտեր էին մղվում: Պետրոսը խրամատից խրամատ էր անցնում, զինվորներին ոգևորում: Զինվորները կռվեցին քաջաբար և շարքից հանեցին տասնյակ թշնամիների: Նա արժանացավ Մարտական Կարմիր դրոշի շքանշանի:

Դեռևս չէին չորացել Խասա մայրիկի արցունքները, երբ գյուղ խուժեց Պետրոսի «սև թուղթը», որը խորապես ցնցեց նրան և մյուս հարազատներին: «սև թղթի» հետ ստացվեց նաև հրամանատարի երկտողը, որում նա գրում էր. «Հարգելի Խասա մայրիկ: Ձեր որդին, ավագ լեյտենանտ, գնդի հրամանատարի քաղղեկի գծով տեղակալ Պետրոս Աղաջանյանը, քաջի մահով ընկավ սրբազան պատերազմում: Նա կռվեց ու զոհվեց որպես հերոս: Նա մեր գնդի հոգին էր: Մենք շատ էինք հպարտանում նրանով: Իր համար նա անմահության հուշարձան կառուցեց ժողովրդի սրտում: Նրա անունը ոսկե տառերով է գրվել Հայրենական պատերազմի դյուցազնամատյանում: Երբեք չի թառամի նրա հիշատակը: Խորը վշտով ցավակցում ենք ձեզ և մյուս հարազատներին՝ Պետրոս Աղաջանյանի մահվան կապակցությամբ:

Ն զորամասի հրամանատար՝ Մ.Լոբանով, 28 հունվարի, 1943թ.»[220]:

Այսպես Խասա մայրիկի երեք տղաները կյանքից հեռացան՝ մեծ վշտի մեջ թողելով մորն ու մյուս հարազատներին:

Հայրենիքի ազատության համար մղվող արյունալի մարտերում զոհվեցին Մարտակերտի շրջանի Հաթերքի, Վաղուհասի, Հարությունագոմերի, Մարտակերտի յոթամյա և միջնակարգ դպրոցներում արգասավոր գործունեություն ծավալած (միաժամանակ եղել է Մարտակերտի շրջանային կրթության բաժնի տեսուչ) **Տոնական Գալստյանը:** Հավաստի փաստերի հիման վրա ներկայացնում ենք նրա կենսագրությունը, մանկավարժական գործունեությունը, նաև՝ գործուն մասնակցությունը ռազմաճակատում[221]:

Ծնվել է 1909թ. Արևմտյան Հայաստանի Երզնկա քաղաքում: 1945թ. ցեղասպանության զոհ են դառնում Տոնական Գալստյանի ծնողներն ու հարազատները: Կարողանում է փրկվել միայն չափահաս քույրը, որը Տոնականին աննկարագրելի տանջանքներով մի կերպ հասցնում է էջմիածին, այնուհետև մշտական բնակություն հաստատում Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գյումրի) գավառի Դյուզքանդ (այժմ՝ Ախուրյան) գյուղում:

Դյուզքանդ գյուղում, քրոջ խնամքի ներքո, Տոնականն ապրում է մինչև 1920թ. աշունը: Այդ օրերին թուրքական բանակը՝ հրի ու սրի մատնելով Հայաստանը, մոտենում էր Ալեքսանդրապոլին: Քույրը Տոնականին հանձնում է Ալեքսանդրապոլի ամերիկյան որբանոցի խնամքին, ուր նա մնում է մինչև 1928թ.: Այստեղ էլ ստանում է միջնակարգ կրթություն: Այդ տարիներին Տոնականը դրսևորում է բացառիկ

ունակություններ և տաղանդ ուսումնառության և գեղարվեստական երկերի արտասանության մեջ: Արտասանում էր այնպիսի վարպետությամբ, որ մարդկանց թվում էր, թե գործ ունեն պրոֆեսիոնալ կատարողի հետ: Դպրոցի թատերական խմբակի կենտրոնական դեմքը Տոնականն էր:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո Գալստյանը գործուղվում է Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղ՝ դպրոցի տնօրենի պաշտոնով: Հաթերքում նա աշխատում է մինչև 1930թ.: 1930թ. սեպտեմբերի 1-ին նրան նշանակում են Մարտակերտի ժողկրթբաժնի դպրոցական տեսուչ:

1932-1937թթ. Տոնականը Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանող էր: Նրա դասախոսներն էին հայ անվանի գիտնականներ Մանուկ Աբեղյանը, Հրաչյա Աճառյանը, Գրիգոր Ղափանցյանը, Արսեն Տերտերյանը, Սիմոն Հակոբյանը, Հայկ Գյուլիքյոխյանը և ուրիշներ:

1937թ. փայլուն արդյունքներով ավարտում է համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Կրթությունը շարունակում է նույն համալսարանի ասպիրանտուրայում՝ գրականագետներ Սիմոն Հակոբյանի և Արսեն Տերտերյանի ղեկավարությամբ:

Փայլուն ապագա էր սպասվում Տոնական Գալստյանին, եթե նրան հաջողվեր ասպիրանտուրան ավարտելուց հետո(1940թ.) պաշտպանել գերմանացի գրող Գերհարդ Հաուպտմանի գրական ստեղծագործության մասին դիսերտացիան:

Տոնական Գալստյանն իր գիտական կարիերան իրագործելու բախտ չունեցավ: Շուտով, 1940թ. վերջերին նա զորակոչվեց Կարմիր բանակ, մեկ տարի անց մասնակցեց Հայրենական մեծ պատերազմին և իր մահկանացուն կնքեց Կերչում՝ 1942թ. մայիսին:

Հայրենիքի համար մղվող արյունալի մարտերում իրենց կյանքն են զոհաբերել Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղից 110 հայորդիներ: Նրանց շարքերում էին նաև դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները: Մեր ձեռքի տակ եղած որոշ փաստաթղթերի և բարեկամների հուշերի[222] հիման վրա համառոտակի նշենք միայն մի քանի փաստ:

Վաղուհաս դպրոցում դաստիարակված լավագույն սաներից մեկն է **Հովսեփ Գևորգյանը:** Վաղ հասակից զրկվել է ծնողներից: Բազմանդամ ընտանիքի հոգսերն ընկնում են ավագ եղբոր՝ Սեդրակի ուսերին: Նա որոշում է ցանկացած գնով Հովսեփին ուսում տալ, քանի որ շատ ընդունակ էր և լավ սովորող: Հիանալի էր տիրապետում բոլոր առարկաներին, այդ թվում ռուսերենին և գերմաներենին: Նա կդառնար անվանի քաղաքական գործիչ կամ գիտնական, եթե չլիներ պատերազմը:

Գերազանց գնահատականներով ավարտում է հայրենի գյուղի 7-ամյան, այնուհետև՝ Հարությունագոմերի միջնակարգ դպրոցը և շրջանային կուսակցական մարմինների երաշխավորությամբ ուսումը շարունակում Թիֆլիսի բարձրագույն կուսակցական դպրոցում (1934-1937թթ.): 1937թ. հունիսին ավարտում է կուսակցական դպրոցը և նշանակվում Մարտակերտի շրջանի «Սոցուղի» թերթի խմբագիր: 1939թ. զորակոչվում է Կարմիր բանակ և ավարտում Պոդոլսկ քաղաքի սպայական դպրոցը: Մեծ Հայրենականի տարիներին նա եղել է գնդի հրամանատարի քաղմասի գծով տեղակալ:

Հերոսական շատ ու շատ դրվագներով հարուստ Հովսեփ Գևորգյանի մարտական ուղին շարունակվեց մինչև Բեռլին՝ Արևմտյան Պրուսիա, որտեղ հերոսաբար զոհվեց 1945թ. ապրիլի 26-ին: Վերջին նամակը գրել է 1945թ. փետրվարին, երբ արցախահայ ռազմիկները հերոսաբար կատաղի մարտեր էին մղում գերմա-

նական ֆաշիզմի դեմ: Նամակում գրում է. «Սիրելի քույր Մաշինկա (տողերիս հեղինակի՝ Գ.Հ. մայրը): Կներեք, որ ուշացումով եմ գրում: Ռազմաճակատում՝ Լեհաստանում, հանդիպեցի երկու եղբայրներիս՝ Սեդրակի և Իսակի հետ, նրանք լավ են: Հաղթանակը մերը կլինի, անպայման կջարդենք ֆաշիստական զավթիչներին ու կազատագրենք ոչ միայն մեր հայրենիքը, այլև Եվրոպայի տառապյալ ժողովրդին, որ թշնամու լծի տակ են: Համբույրներ բոլորիդ... Քո եղբայր Հովսեփ»[223]:

Հայրենական մեծ պատերազմի երկրորդ շրջանի կարևոր իրադարձությունը Կուրսկի ճակատամարտն էր: Այդ մեծ ճակատամարտում տարած հաղթանակի գործում ռուսների, ուկրաինացիների և ԽՍՀՄ մյուս ժողովուրդների ներկայացուցիչների հետ միասին Կարմիր բանակի տարբեր զորատեսակների կազմում իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև մի քանի հազար հայորդիներ, որոնց մեջ զգալի թիվ էին կազմում արցախահայերը:

Հրե աղեղում ծավալված արյունահեղ մարտերում հերոսաբար զոհվեց Վաղուհասի 7-ամյա դպրոցի շրջանավարտ, 636-րդ հրաձգային գնդի տրանսպորտային վաշտի 2-րդ դասակի հրամանատար, գվարդիայի կրտսեր լեյտենանտ Շահեն Սարգսի Գասպարյանը: Օրյոլի ազատագրման ժամանակ մարտական առաջադրանքները օրինակելի կատարելու համար «Մարտական ծառայության համար» մեդալով պարգևատրվեց նաև Շ.Գասպարյանը: Նա հերոսաբար զոհվեց կատաղի ու արյունալի մարտերում[224]:

Հայրենական պատերազմի ճակատներում հերոսացած Վաղուհասցի հայորդիների շարքում էր նաև դպրոցի պատմության և աշխարհագրության ուսուցիչ **Պողոս Վերդյանը:** Մինչև պատերազմը նա ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմաաշխարհագրական ֆակուլտետի հեռակա բաժնի 3-րդ կուրսը և մանկավարժականաշխատանքի անցել հայրենի գյուղի 7-ամյա, Հարութունագոմերի, Առաջածորի միջնակարգ դպրոցներում (1936-1940թթ.):

1940թ. զորակոչվում է Կարմիր բանակ: Ծառայել է հակաօդային պաշտպանության զորամասերում: 1940թ. հոկտեմբերին ընդունվում է ռազմաքաղաքական ուսումնարան, ավարտելով այն՝ ստանում է քաղղեկի պաշտոն: Նշանակվում է վաշտի քաղղեկ 392-րդ հրաձգային դիվիզիայի 490-րդ գնդում: Վերդյանը հրաձգային գումարտակի կոմիսար էր, երբ սկսվեցին մարտերը Կովկասյան լեռների մատույցներում: Վերդյանի գումարտակը հրաման է ստանում գերմանացիներին դուրս շպրտել Սամիսոնի լեռնանցքից և ամրապնդվել այդտեղ:

Թեժ մարտերում գումարտակի հրամանատար Զասլավսկին զոհվում է: Գումարտակի հրամանատարությունն իր վրա է վերցնում Վերդյանը, որի գլխավորությամբ գումարտակը մեկ ժամից ավելի տևած կատաղի մարտում գրավում է լեռնանցքը: Դա շատ կարևոր օպերացիա էր, ուներ ստրատեգիական կարևոր նշանակություն: Բավական է նշել, որ լեռնանցքից մինչև Սուխումի քաղաքը ընդամենը 30 կմ էր: Վերդյանը որոշում է հետապնդել խուճապի մատնված թշնամուն: Հարձակողական մարտերի ժամանակ գերմանական սնայպերի գնդակից զոհվում է արցախցի քաջորդին: Հրամանատարությունը նրան ներկայացնում է բարձր կառավարական պարգևի: Հետմահու Վերդյանը պարգևատրվում է Մարտական կարմիր դրոշի շքանշանով:

Հերոս մանկավարժ Վերդյանի հիշատակը վառ են պահում նրա հայրենակից վաղուհասցիները:

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերից Մարտակերտի շրջկենտրոնի, Առաջածորի, Կուսապատի, Մոխրաթաղի, Գյուլաթաղի, Մարաղայի և մի

շարք այլ գյուղերի դպրոցների ուսուցիչներն ու աշակերտները իրենց դրսևորել են որպես խորհրդային Հայրենիքին նվիրված զորական, օրինակելիորեն կատարել են մարտական առաջադրանքները: Հայրենիքի կոչին արձագանքել են նաև շրջանավարտները, շատերը մեկնել են կամավոր:

Մարտական առաջադրանքներ կատարելու համար շատ-շատերը պարգևատրվել են կառավարական շքանշաններով ու մեդալներով, իսկ երկուսը (Գարեգին Հայրապետյան, Թեմիկ Ավքանդիլյան) արժանացել Խորհրդային Միության հերոսի կոչման: Տարբեր ռազմաճակատներում իրենց կյանքն են զոհաբերել նշված դպրոցի և շրջանի մյուս դպրոցների ուսուցիչներից շատ-շատերը:

Գուրգեն Պետրոսյանը՝ ավարտելով Շուշիի մանկավարժական ուսումնարանը (1939թ.), որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ դասավանդում էր Մարտակերտի, Կուսապատի միջնակարգ դպրոցներում: Ուսումնական աշխատանքին զուգահեռ շատ բան էր անում աշակերտների դաստիարակության, գիտակցական կարգապահուտյան բարձրացման ուղղությամբ: Երկար չի տևում երիտասարդ և նվիրյալ ուսուցչի մանկավարժական գործունեությունը: Պատերազմի առաջին իսկ օրը զորակոչվում է Կարմիր բանակ:

Ծառայությունը սկսել է 626-րդ գնդում: 1940թ. փետրվարին ավարտում է կրտսեր հրամկազմի դպրոցը և ստանում սերժանտի կոչում: Պատերազմի սկզբին նա Ուկրաինայում էր, որպես ջոկի հրամանատար:

1941թ. հուլիսին վիրավորվում է: Բուժվում է Սարատովի զինվորական հոսպիտալում: Բուժվելուց հետո նորից առաջին գծում էր, 561-րդ հրաձգային գնդում: Մարտերից մեկում դասակի հրամանատարը վիրավորվում է, նա հրամանատարությունը վերցնում է իր վրա և ցուցաբերում հրամանատարական արտակարգ ունակություններ, ինչի համար էլ արժանանում է «Մարտական ծառայության համար» մեդալի: Հաճախ էր նամակներ գրում հարազատներին: 1941թ. սեպտեմբերին նա գրում է. «Բելոռուսիայի հողում ենք: Թեժ մարտերում եմ: Իմացեք, հարազատներս, հայրենիքի համար ես կյանքս չեմ խնայի…»[225]:

Այլևս Գուրգենից նամակ չստացվեց: Մի ամիս անց զինկոմիսարիատը Գուրգենի հարազատներին է հանձնում «սև թուղթը»: Հետո ստանում են գնդի հրամանատարի նամակը: Ահա թե ինչ է գրում գնդի հրամանատարը.«Ձեր որդի Գուրգենը հերոսաբար զոհվեց, թաղված է Օսիպով գյուղից արևելք՝ Յարցևի շրջան»:

Հաճախ են Յարցև ավանի 2-րդ գիշերօթիկ դպրոցի պիոներները թարմ ծաղիկներ դնում հայ քաջորդու շիրիմին: Նրանք նամակներ են գրում Գուրգենի հարազատներին:

Մարտակերտի միջնակարգ դպրոցի շրջանավարտներից է **Խաչատուր Քարդումյանը:** Որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ աշխատում էր Ն.Հոռաթաղի 7-ամյա դպրոցում, միաժամանակ սովորում Բաքվի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի հեռակա բաժնում:

Զինվորական ծառայությունը սկսեց Ուկրաինայի Զուգուև քաղաքում: 1940թ. ավարտում է գնդի հրամանատարական դպրոցը: Ջոկի հրամանատար էր, երբ պայթեց Մեծ Հայրենականը: Պատերազմի առաջին օրը գտնվում էր Տուլայում: Ծնողներին գրած նամակում խորը կսկիծով էր վերապրում մեր բանակի անհաջողությունները, սակայն հավատում էր վերջնական հաղթանակին: Նա գրում էր. «Հաղթանակը անպայման մերը կլինի, դրանում ես չեմ կասկածում: Բայց ի՜նչ գնով…»:

1942թ. Խաչատուրը գրում է իր վերջին նամակը: Այնուհետև՝ ոչ մի լուր: Շատ տարիներ հետո՝ 1976թ., Քարդումյանների ընտանիքը նամակ է ստանում Կալու-

գայի մարզի Յախնովսկի շրջանի Բելցա գյուղի 8-ամյա դպրոցի պիոներներից: Նրանք գրում են. «Հարգելի Քարդումյաններ, ավագ լեյտենանտը՝ Ձեր Խաչատուրը, 147 հայրենասերների հետ զոհվել է Բելցա գյուղի համար մղված հերոսական մարտերում: Խաչատուրը եղել է գրոհողների առաջին շարքերում: Նրա հրամանատարության ներքո գտնվող ստորաբաժանումը մտավ մեր գյուղ և դուրս շպրտեց ֆրիցներին: Մենք երախտապարտ ենք հայ ժողովրդի զավակին»:

Խաչատուրի քույրը և ավագ եղբայր Սամսոնը ճանապարհ ընկան դեպի Բելցա, որտեղ հանգչում էր Խաչատուրի աճյունը: Մարմարե հուշակոթողի վրա փորագրված էր նաև Խաչատուրի անուն-ազգանունը: Երեք օր Խաչատուրի քույրն ու եղբայրը մնացին Բելցում: Այդ օրերը վերածվեցին հայ և ռուս ժողովուրդների բարեկամության ցույցերի: Ռուսները բարձր էին գնահատում այդ բարեկամությունը, որը Մեծ Հայրենականում մեր նվաճած հաղթանակի գործուն ուժերից մեկն էր:

Հայրենական պատերազմի ահեղ մարտերում զոհվեց վերոնշյալ դպրոցի շրջանավարտ, նաև՝ նույն դպրոցի ուսուցիչ **Լևոն Գյուրջյանը:**

1937թ. զորակոչվում է բանակ և պարտադիր զինվորական ծառայության ժամկետն ավարտելուց հետո վերադառնում է հայրենի գյուղ և անցնում ուսուցչական աշխատանքի: Կարճ է տևում Լևոնի մանկավարժական աշխատանքի ժամանակաշրջանը: Պատերազմի հենց առաջին օրը՝ հունիսի 22-ին նա կամավոր մեկնում է ռազմաճակատ, կրակի առաջին գիծ:

Լևոնի մարտական ծառայության, ինչպես և նրա ճակատագրի մասին հարազատները քիչ բան գիտեն: Միայն մի նամակ՝ որպես մասունք, մինչև այժմ աչքի լույսի պես պահում են: Նամակը գրված՝ 1943թ. հունվարի 21-ին:

Այդ նամակում արցախցի հայրենասեր քաջորդին գրում է.«Փշրում ենք թշնամու ողնաշարը, հաղթանակը մերը կլինի»[226]:

Հայրենական պատերազմի այլ ռազմաճակատներում իրենց կյանքն են զոհաբերել Մարտակերտի միջնակարգ դպրոցի շրջանավարտներ, շրջանի դպրոցներում բեղուն մանկավարժական գործունեություն ծավալած Մամունց երեք եղբայրները:

Մամունց Արամ, ծնվ. 1913թ. Մարտակերտում: Մարտակերտի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվում և 1935թ. ավարտում է Շուշիի մանկավարժական ուսումնարանը և աշխատանքի անցնում շրջանի դպրոցներում: Նա մաթեմատիկա էր դասավանդում Լյուլասազի (այժմ՝ Կամարի), Չայլվի, Մոխրաթաղի 7-ամյա դպրոցներում: Աշխատանքին զուգահեռ հեռակա կարգով սովորում է Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում: 2-րդ կուրսում էր, երբ սկսվեց պատերազմը: Պատերազմի երկրորդ օրը զորակոչվեց բանակ: Առաջին մարտական մկրտությունն ստացավ Մոսկվայի տակ մղվող պաշտպանական ծանր մարտերում: Այստեղ նա գրում է ծնողներին ու հարազատներին. «Ինչ գնով էլ լինի, մենք կհաղթենք: Պաշտպանում եմ մայրաքաղաքը»: 1943թ. նա 93-րդ գնդում վաշտի հրամանատար էր, ավագ լեյտենանտի կոչումով:

Մամունցի մարտական ուղին ձգվում է մինչև Ստալինգրադ: Նրա գլխավորած վաշտը Կքետսկ քաղաքի մատույցներում ոչնչացնում է շուրջ 30 հիտլերականների, հետ մղում թշնամու 10-ից ավելի գրոհներ: Նա հերոսաբար զոհվեց 1943թ. օգոստոսի 31-ին:

Մամունց Հովհաննես: Ավարտել է Մարտակերտի 7-ամյա դպրոցը, իսկ 1934թ.՝ Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումը: Հետագայում ուսումը շա-

րունակում է Բաքվի մանկավարժական ինստիտուտի քիմբիոլոգիական ֆակուլ-տետում: 1939թ. ինստիտուտն ավարտում և անցնում է ուսուցչական աշխատանքի: Քիմիա և կենսաբանություն էր դասավանդում նախ Չայլվի, ապա Վաղուհասի դպրոցներում: 1941թ. զորակոչվում է Կարմիր բանակ:

Մի քանի ամիս ծառայությունից հետո զորամասի հրամանատարությունը՝ որպես մարտական և քաղաքական պատրաստության գերազանցիկի, Մամունցին գործուղում է ռազմական ուսումնարան: Այստեղ Մամունցը դրսևորում է իր արտակարգ ընդունակություններն ու ռազմական գործին տիրապետելու ձգտումը: Կարճատև ուսումնառությունից հետո Մամունցը գերազանց ավարտում է ուսումնարանը և լեյտենանտի կոչումով մեկնում ռազմաճակատ:

Կռվում է Երկրորդ Բելոռուսական ռազմաճակատի զորամասերից մեկում որպես դասակի հրամանատար: Նրա դասակը գնդի առաջավոր ստորաբաժանումներից էր, քանի՞ -քանի անգամ է նա իր դասակը տարել գրոհի և միշտ պատվով կատարել մարտական առաջադրանքները, արժանացել գովասանքների, ներկայացվել կառավարական պարգևների:

Նամակներից մեկում գրում է. «Իմ սիրելի քույր: Պատերազմը դաժան է, ամեն րոպե մարդ կարող է զրկվել կյանքից: Որքան մեծ է վտանգը, այնքան էլ մեծ է կարոտը դեպի հարազատները: Բոլորիդ շատ եմ կարոտել, առանձնապես քեզ: Ես ու դու, դեռ ինչպես պետքն է, իրար չենք ճանաչել. չէ որ դու դեռ շատ ես փոքր: Երևի արդեն մեծացել ես: Կյանքը թանկ է, ոչ ոք չի ուզում մահանալ, բայց երբ ես իմ դասակի հետ գնում են գրոհի, մտածում եմ միայն հաղթանակի մասին, արհամարհում մահը: Հուսով եմ, որ մենք կհանդիպենք»:

Նրանք չհանդիպեցին: Հերթական գրոհներից մեկում (1944թ.) նա զոհվեց հերոսի մահով:

Մամունց Միքայել: Ծնվել է 1914թ. Մարտակերտում: 1937թ. «գերազանց» գնահատականներով ավարտեց Մարտակերտի միջնակարգ դպրոցը և աշխատանքի անցավ Մադաղիս գյուղի 7-ամյա դպրոցում, այնուհետև՝ Մարտակերտի միջնակարգ դպրոցում: Դասավանդում էր մաթեմատիկա և ֆիզիկա: Աշխատանքին զուգընթաց սովորում էր Բաքվի մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժնում:

Պատերազմի հենց առաջին օրերին զորակոչվեց բանակ: Մասնակցում էր Կովկասի համար մղվող մարտերին: Օրջոնիկիձե քաղաքի մատույցներում վիրավորվում է: Ապաքինվելուց հետո նորից է մեկնում ռազմաճակատ:

Քրոջը՝ Թամարային հասցեագրած նամակներից մեկում հայրենասեր մանկավարժ մարտիկը գրում է. «Սիրելի քույրիկ, ճիշտ է, առայժմ պաշտպանվում ենք, բայց ես հավատացած եմ, որ հիտլերականներին կքշենք մեր հողից և նրան կջախջախենք իրենց որջում»: 318-րդ հրաձգային դիվիզիայի 1337-րդ գնդում լեգենդներ էին պատմում նրա մասին:

Նրա մարտական ընկերները, որոնք տուն են վերադարձել, մեծ հիացմունքով են խոսում Միքայելի սխրագործությունների մասին: Վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ Միքայել Մամունցը Նովոռոսիյսկի մատույցներում բազմիցս իր վաշտով գրոհել է թշնամու դիրքերը, արժանացել հրամանատարության գովասանքներին և ներկայացվել կառավարական պարգևների:

Հերթական գրոհներից մեկում Մամունցը հերոսաբար զոհվում է: Նրա աճյունը գտնվում է Նովոռոսիյսկի եղբայրական գերեզմանոցում: Պարգևատրվել է մի շարք շքանշաններով ու մեդալներով[227]:

Մարտակերտի շրջանի Կուսապատի միջնակարգ դպրոցի փառքի անկյունում

ոսկեզօծ տառերով են գրված Հայրենական պատերազմում զոհված բազմաթիվ ուսուցիչների ու աշակերտների, այդ թվում Վահան Գասպարյանի, Գրիգոր Բալասանյանի, Կոլյա Սարգսյանի անունները[228]:

Վահան Գասպարյանը ավարտել է Մարտակերտի միջնակարգ դպրոցը (1930թ.), Շուշիի մանկավարժական ուսումնարանը (1934թ.) և աշխատանքի անցել հայրենի գյուղի և Չլդրանի դպրոցներում: Դասավանդում էր հայոց լեզու և աշխարհագրություն: Մանկավարժական գործունեությանը զուգընթաց, հեռակա կարգով, ավարտում է Բաքվի մանկավարժական ինստիտուտի աշխարհագրության ֆակուլտետը (1939թ.):

1940թ. զորակոչվում է Կարմիր բանակ՝ զինվորական պարտադիր ծառայության:

Վահանը պատերազմի հենց սկզբից իր զորամասի մարտիկների հետ կանգնեց ֆաշիստական ոհմակներին հարձակմանը հարվածելու դիրքերում: Կնոջը հղած նամակներում Վահանը հուսադրում է, որ զինվորական սուրբ պարտքին հավատարիմ՝ կռվում է արցախցուն հատուկ քաջությամբ՝ հայրենիքի պատիվը բարձր պահելու համար:

1942թ. մայիսին Վահանը կռվում էր Կերչում: Այստեղ էլ նա կնքեց իր մահկանացուն:

Գրիգոր Բալասանյանը ավարտում է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը, այնուհետև՝ Վանաձորի (Կիրովականի) մանկավարժական ուսումնարանը և աշխատանքի անցնում շրջանի Մեհմանա, Չլդրան գյուղերի դպրոցներում:

1938-39 ուստարում ուսուցչություն է արել հայրենի Կուսապատ գյուղի միջնակարգ դպրոցում, որպես դասվար:

Կարմիր բանակ է զորակոչվել 1940թ.: Ավարտել է հրետանային ուսումնարանը և լեյտենանտի կոչումով մասնակցել Մեծ Հայրենականին:

Հավատը սրտում նա հերոսաբար զոհվեց Կերչի համար մղվող ծանր մարտերից մեկում: Դա 1942թ. էր, երբ դեռ չէր բոլորել Գրիգորի 25-րդ գարունը:

Կոլյա Սարգսյանը հայրենի գյուղի դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակում է Կիրովաբադի մանկավարժական տեխնիկումում, որն ավարտում է 1936թ.-ին: Նույն տարում աշխատանքի է անցնում Մարտակերտի շրջանի Չլդրան գյուղի 7-ամյա դպրոցում: Դասավանդում էր պատմություն և հայոց լեզու, միաժամանակ կատարում ուսմասվարի պարտականությունները:

1939թ. զորակոչվեց Կարմիր բանակ: Մասնակցել է սպիտակ ֆիններին դեմ պատերազմին, պատրաստվում էր զորացրվել և վերադառնալ սիրած մանկավարժական գործունեությանը: Բայց պայթեց Հայրենական մեծ պատերազմը: Մասնակցեց Կովկասի պաշտպանության համար մղվող մարտերին: Օգտագործելով ֆիննական ճակատամարտում ձեռք բերած ռազմական փորձը, նա ինչպես նահանջի, այնպես էլ մեր զորքերի հարձակողական գործողությունների ժամանակ կատարում է մի շարք մարտական սխրագործություններ և արժանանում հրամանատարության գովասանքներին: Պարգևատրվում է «Արիության համար» մեդալով:

1943թ. իր մորը՝ Եվային և կնոջը՝ Սոնային գրած վերջին նամակում գրում է. «Թշնամու ջախջախումը սկսվել է, հեռու չէ այն օրը, երբ նորից կհանդիպենք»: Նա մասնակցել է Հյուսիսային Կովկասի Մայկոպ, Կրասնոդար քաղաքների, Բելորեչինսկայա, Կրիկսկայա և մի շարք այլ կայարանների ազատագրման մարտերին: Ծանր մարտեր էին գնում ֆաշիստների կողմից խոր էշենոլացված, երկաթբետոնե կառույցներով ամրացված, այսպես կոչված «կապույտ գծի» գրավման

համար: Հրաման էր ստացվել, ինչ գնով էլ լինի՝ ջախջախել ֆաշիստական ուժերը «կապույտ գիծ» ամրացված գոտում և հնարավորություն տալ մեր զորքերի հետագա ստրատեգիական պլանները իրականացնելու: Հենց այդ մարտում հերոսաբար զոհվեց արցախցի քաջորդին:

Երբ պայթեց Հայրենական մեծ պատերազմը, Մարտակերտի շրջանի Մոխրաթաղ գյուղի դպրոցի ուսուցիչ Սերգեյ Հովհաննիսյանը (դասավանդել է նաև Մարտակերտի միջնակարգ դպրոցում): Բարձրագույն կրթությունը ստացել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում: Մարտակերտի շրջժողկրթբաժնի վարիչն էր[229]: Նա կամավոր մեկնում է ռազմաճակատ:

1942թ. հոկտեմբերին Սերգեյը Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում անօրինակ սխրագործություններով մարտնչում էր գերմանական ֆաշիստների դեմ: Հիանալի նշանառու էր, կռվելու համար ծնված, հոյակապ ընդունակություններով և կամային անօրինակ հատկանիշներով օժտված մի զինվոր: Այդպիսին էին նրան ճանաչում զորամասի հրամանատարներն ու զինվորները:

1942թ. հոկտեմբերին սարսափելի իրավիճակ էր ստեղծվել Հյուսիսային Կովկասի Արդոն քաղաքի մատույցներում: Զորամասի դիրքերին հրեղեն կարկուտ էր թափում գերմանական մի անգդ: Սերգեյը՝ հարմար առիթ ընտրելով, հրացանի դիպուկ նշանառությամբ խոցեց անգդի կուրծքը: Քիչ հետո թշնամու սավառնակը բոցավառված մխրճվեց գետնին: Հրամանատարության ներկայացմամբ Սերգեյը պարգևատրվեց Լենինի շքանշանով:

Դա Սերգեյի մարտական առաջին մկրտությունն էր: Մի տարի անց՝ աշնանը, Սերգեյը զոհվեց Կերչի ազատագրության համար մղվող հերոսամարտերից մեկում:

Հետաքրքիր ու բովանդակալից կենսագրություն ունի հայրենիքի պաշտպանության համար մղվող ճակատամարտերում զոհված **Արշավիր Գրիգորյանը:** Ուսուցիչ, բանաստեղծ և մարտիկ ռազմաճակատայինի կենսագրությունը ներկայացնում ենք ամբողջությամբ:

Ծնվել է 1912թ. Մարտակերտի շրջանի Գյուլաթաղ գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում: Ավարտելով 7-ամյա դպրոցը՝ ընդունվում և 1930թ. ավարտում է Շուշիի մանկավարժական ուսումնարանը և աշխատանքի անցնում Ջանյաթաղի 7-ամյա դպրոցում, որպես ուսուցիչ և ուսմասվար: Շուտով լայն թափով բացահայտվում են Գրիգորյանի արտակարգ ընդունակությունները որպես մանկավարժ: Նրան տեղափոխում են շրջկենտրոն, ուր աշխատում է որպես ժողկրթբաժնի տեսուչ: Միաժամանակ մայրենի լեզու և գրականություն էր դասավանդում Մարտակերտի միջնակարգ դպրոցում: 1938թ. նա նշանակվում է մարզժողկրթության բաժնի վարիչ: Այդ նույն տարում նա գերազանցիկի դիպլոմով ավարտում է Երևանի պետական համալսարանի լեզվագրական ֆակուլտետը: Դասավանդում է Շուշիի երկամյա ուսուցչական ինստիտուտում[230]:

Արշավիրը և տաղանդավոր պրոպագանդիստ էր, և տաղանդավոր կազմակերպիչ, նաև հրապարակախոս ու լրագրող: Նրա գրաքննադատական և հրապարակախոսական հոդվածները զարդարում էին այն ժամանակվա թերթերի և ամսագրերի էջերը:

«Մանուկ հասակից մորս կաթի հետ ծծել եմ անհագ
Իմ Հայրենիքի սերը կարկաչուն՝ ոնց զուլալ աղբյուր,
Մանուկ օրերից ես ունեցել եմ մի վսեմ փափագ՝
Իմ Հայրենիքի պաշտպանը լինել միշտ ու ամենուր»:

Բանակ զորակոչվելու տարում պատրաստ էր նրա բանաստեղծությունների

անդրանիկ ժողովածում, սակայն պատերազմը խանգարեց այն հրատարակելու: Բանակից տասնյակ նամակներ էր ուղարկում բարեկամներին և ընկերներին: Նամակներից մեկում նա զարմանալիորեն կանխագուշակում էր պատերազմի անխուսափելիությունը, գրում էր, որ Հայրենիքի վրա սև ամպեր են կուտակվել:

1940թ. հոկտեմբերի 22-ի նամակում՝ հասցեագրված հարազատներին, Արշավիրը գրում է. «Հարազատներս, իմ ծառայության օրերը անցնում են բավականին լարված ու հետաքրքիր: Հայրենիքի զինվորը իրավունք չունի քնելու, երբ նրա սահմաններին վտանգ է սպառնում: Ուղարկում եմ երկու բանաստեղծություն, խնդրում եմ, ուղարկեք «Սովետական Ղարաբաղ» թերթին: Ես գերազանց եմ զգում ինձ, պատրաստ կրակների մեջ նետվելու, եթե դա պահանջի Հայրենիքի շահը»:

Բանաստեղծը նախատեսում էր իր տեղը մոտեցող պատերազմում.

Թույլ չենք տա երբեք ոչ մի հուդայի
Երկիրը ծախել օտար շներին,
Մեր հզոր ձեռքը անողոք կիջնի նրանց դնչներին:

Պատերազմի առաջին իսկ օրերից բանաստեղծ մարտիկը ռազմաճակատի առաջին գծում էր:

Այդ մասին վկայում է 1941թ. հունիսի 28-ին նրա գրած նամակը. «Արդեն 7-րդ օրն է, որ կռվում ենք թշնամու դեմ: Հոգեբանական ծանր պահերն անցնում են: Սատանան այնքան սարսափելի չէ, որքան նրան ներկայացնում են: Մեր ժողովուրդը մասսայական հերոսություն է ցուցաբերում… Հարազատներս, հաստատ իմացած եղք, որ մենք կհաղթենք, որովհետև մենք մեր հողն ենք պաշտպանում, մեր լեզուն, մեր ազատությունը»[231]:

Նա զոհվեց, բայց նրա երգը, նրա հիշատակը մնացին և դեռ երկար կմնան:

Քաջ ղարաբաղցու՝ Մարտակերտի շրջանի Չլդրան գյուղի 7-ամյա դպրոցի ուսուցիչ **Սուրեն Աղասյանի՝** հարազատներին գրած հուզիչ նամակը Հայրենական պատերազմի նախօրյակին էր, 5 օր անց…

Սուրենը Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի 4-րդ կուրսի ուսանող էր, երբ զորակոչվեց Կարմիր բանակի շարքերը: Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին ծառայում էր Օդեսա, Պերվոմայսկ քաղաքներում՝ վաշտի քաղղեկի պաշտոնով: Հայրենականի առաջին իսկ օրվանից ռազմաճակատում էր: Աղասյանը հասցրեց ռազմաճակատից միայն մի նամակ ուղարկել հարազատներին: Նա գրում էր. «Այս պատերազմը այն չէ, ինչ մենք պատկերացնում էինք, այն անողոք է և սարսափելի: Թշնամին ուժեղ է, բայց և խարդախ: Տեսնելով նրա բարբարոսությունները՝ իմ վաշտի մարտիկների հետ միասին երդվել ենք՝ մեր կյանքը չխնայել մեր ժողովրդին դարչնագույն ժանտախտից փրկելու համար: Եթե զոհվեմ, իմացեք, որ զոհվել եմ հայրենիքի փառքի համար»: Հերոսաբար զոհվեց 1942թ.-ին[232]:

Կարմիր բանակի շարքերում ծառայող՝ Մարտակերտի շրջանի Առաջածոր գյուղի 7-ամյա դպրոցի ուսուցիչ **Բաբա Թելյանը** մորը գրած նամակներում (1939թ. Ուկրաինայի Օվրուչ քաղաք) միշտ առանձին գովասանքով էր խոսում բանակային ծառայության մասին, նրան հուսադրում էր, որ ահա, ուր որ է կվերադառնա, կանցնի իր սիրած մանկավարժական աշխատանքին, կիրականացնի մոր և քույրերի փայփայած երազանքը՝ կամուսնանա, ընտանիք կկազմի: Առանձին բերկրանք ու հպարտություն էին ներշնչում մորը գրված՝ հրամանատարության նամակները, որոնցում գոհունակությամբ է նշում Բաբայի կողմից զինվորական պարտականությունները գերազանց կատարելու մասին, և դրա համար շնորհակալություն է հայտնում մորը:

Բայց Բաբայի երազանքը այդպես էլ չիրականացավ…

1941թ. հունիսի 22-ին զորամասը, որում ծառայում էր նա, ենթարկվում է ահեղ ռմբակոծության և բռնում դեպի արևելք նահանջելու ճամփան: Այդ դեպքից հետո մայրն ու քույրը մի քանի նամակ ստացան Բաբայից: Դրանցում Արցախի հայորդին նկարագրում էր նահանջի հետ կապված դժվարությունները, բայց և հուսադրում, որ այդ դժվարությունները կանցնեն, Կարմիր բանակը դավադիր թշնամուն կբնաջնջի և մեր հայրենի երկրի վրա նորից կշողշողա արևը:

1942թ. մայիսից հետո Բաբայից այլևս նամակներ չէին գալիս: Մայրը, քույրերը և մյուս հարազատները ապրում էին հոգեմաշ վիճակ…[233:]

Վերոնշյալ դպրոցի շրջանավարտ և հայոց լեզվի ու գրականության ուսուցիչ **Տիգրան Սիմոնյանը** (ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտը 1932-1936 ուստարում), 1941թ. զորակոչվել է բանակի շարքերը և ծառայել տանկային զորամասում: Բելոռուսիայից գրած նամակներից մեկում նշել է. «Գերմանիան պիտի հարձակվի Սովետական Միության վրա, բայց մենք կհաղթենք անպայման»:

Տիգրան Սիմոնյանի վերջին նամակները ստացվել են 1942թ. սկզբին, որից հետո ոչ մի տեղեկություն չի ստացվել նրա մասին:

Հանուն Հայրենիքի իրենց կյանքն են զոհաբերել Մարտակերտի շրջանի դպրոցների շատ ուսուցիչներ ու շրջանավարտներ: Արամ Ամիրյանը (Մարաղայի դպրոցի մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ) մասնակցել է Ուկրաինայի Օդեսայի, Սևաստոպոլի, Սիմֆերոպոլի, Կերչի, այնուհետև Ստալինգրադի համար մղվող հերոսական մարտերին: Զոհվել է 1942թ.: Ցուցաբերած անձնական արիության և ստորաբաժանումների անձնակազմի հետ տարած քաղաքական ակտիվ աշխատանքի համար բազմիցս արժանացել է գերագույն գլխավոր հրամանատարի շնորհակալագրերին: Պարգևատրվել է Կարմիր աստղի, Փառքի 2-րդ աստիճանի շքանշաններով, մի շարք մարտական մեդալներով: Արամ Ամիրյանի աճյունը հանգչում է Կերչ քաղաքից ոչ հեռու գտնվող գյուղերից մեկում:

Երվանդ Ալեքսանյանը (Մարաղայի 7-ամյա դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ) 1941թ. զորակոչվել է Կարմիր բանակ: Մարտերով անցել է Մեծ Հայրենականի դժվարին ուղիներով, և երբ մոտ էր հաղթանակը, զոհվում է 1945թ. ապրիլին: Հետմահու պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով:

Խորեն Խաչատրյանը (Զանյաթաղի 7-ամյա դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ) զոհվել է 1942թ. Կուրսկի ահեղ ճակատամարտերից մեկում:

Գրիգոր Սարգսյանը (Չլդրանի 7-ամյա դպրոցի պատմության և աշխարհագրության ուսուցիչ) պատերազմի տարիներին ավարտել է Լենինգրադի ռազմական ուսումնարանը և ստացել լեյտենանտի կոչում: Նա դասակի հրամանատար էր, երբ սկսվեց Մեծ Հայրենականը: Լենինգրադի պաշտպանության համար մղված ծանր մարտերում Սարգսյանը իրեն դրսևորել է որպես մարտի հմուտ կազմակերպիչ, ցուցաբերել անձնական արիություն և պարգևատրվել «Մարտական ծառայությունների համար» մեդալով: Լենինգրադի պաշտպանության թեժ մարտերից մեկի ժամանակ, երբ Սարգսյանը գրոհի էր տանում իր դասակը, թշնամու սնայպերի գնդակից զոհվում է:

Հայրենական մեծ պատերազմի ճակատամարտերում ցուցաբերած խիզախության և անօրինակ սխրանքների համար Ստեփանակերտից և նրա մերձակա գյուղերից հարյուրավոր ուսուցիչներ և աշակերտներ պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով, նրանցից շատերը հերոսաբար զոհվեցին կատաղի ու արյունալի մարտերում:

Համառոտակի նշենք միայն մի քանի փաստ:

Հայրենական մեծ պատերազմի ճակատամարտերում հերոսաբար զոհվեցին Ստեփանակերտի թիվ 1 դպրոցի շրջանավարտներ **Աշոտ, Արտաշ և Արտո Մկրտչյան եղբայրները:** Աշոտը, որ Մոսկվայի պետհամալսարանի ուսանող էր, կրկնեց կապիտան Գաստելլոյի սխրանքը՝ իր վառվող ինքնաթիռն ուղղելով թշնամու վառելիք տեղափոխող գնացքի վրա: Նա արժանացավ կառավարական բարձր պարգևի՝ Մարտական կարմիր դրոշի շքանշանի:

Եղբայրների հետ կամավոր ռազմաճակատ մեկնեց նաև Արտոն, որը նոր էր հանձնել ավարտական քննությունները: Նա հերոսաբար զոհվեց 1943թ, կատաղի մարտերից մեկում:

Նույն դպրոցի շրջանավարտ **Գեորգի Սահակյանը** հերոսաբար զոհվեց Բելոռուսիայի պաշտպանության ժամանակ՝ 1944թ.:

Իրենց սաների հետ ուս-ուսի տված անձնվիրաբար մարտնչեցին նաև վերոնշյալ դպրոցի ուսուցիչներ Վանյա Բեգլարյանը(պատերազմի սկզբին դպրոցի տնօրենն էր), որը մասնակցել է Ստալինգրադի պաշտպանությանը և զոհվել 1943թ.: Կուբանի պաշտպանության ժամանակ հերոսաբար զոհվեցին Կոլյա Խուրշուդյանը, Սուրեն Գրիգորյանը, Սամսոն Աղաջանյանը, Միքայել Խասապետյանը, Պավել Մանգասարյանը, Սուրեն Չիլինգարյանը և շատ ուրիշներ:

Արխիվային փաստաթղթերի և այլ աղբյուրների ուսումնասիրության հիման վրա համառոտակի նշենք Ստեփանակերտ քաղաքի մոտիկ գյուղերի (այն ժամանակ՝ Ստեփանակերտի շրջանի) և Ասկերանի շրջանի դպրոցներում դաստիարակված ռազմիկների և նրանց ուսուցիչների՝ Հայրենական մեծ պատերազմի ճակատամարտերում ցուցաբերած սխրանքների մասին:

Հարավ-Արևելյան Եվրոպայի երկրների՝ Չեխոսլովակիայի ազատագրման մարտերից մեկում՝ 1944թ. ապրիլին, հերոսաբար մարտնչելով թշնամու դեմ, զոհվեց Շոշի 8-ամյա դպրոցի ուսուցիչ **Գուրգեն Սիմոնյանը:** Պատերազմում ցուցաբերած սխրագործությունների համար պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով և մի շարք մեդալներով:

Նույն դպրոցի շրջանավարտ և Մխիթարշեն գյուղի դպրոցի ուսուցիչ **Համբարձում Թորոսյանը** զորակոչվել է Կարմիր բանակ 1941թ.: Եղել է լեյտենանտ՝ կապի գծով, զոհվել է Վորոնեժի պաշտպանության մարտերից մեկում 1943թ.: Նրա եղբայրը՝ Նիկոլայ Թորոսյանը, ավարտել է հայրենի գյուղի դպրոցը, այնուհետև՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը, դասավանդել Հարավի դպրոցում: 1939թ. մեկնել է զինծառայության, այնուհետև մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: Կռվել է Կերչում, զոհվել 1941թ.-ին[234]:

Շուշիի մանկավարժական ուսումնարանը ավարտելուց հետո **Հովհաննես Աղաբեկյանը** աշխատանքի է անցնում հայրենի գյուղի՝ Սղնախի յոթնամյա դպրոցում: Նա շատ էր սիրում հումանիտար առարկաները, առանձնապես՝ պատմությունը: Իզուր չէ, որ աշխատանքի առաջին օրվանից պատմություն էր դասավանդում: Երիտասարդ մանկավարժը ակտիվ մասնակցություն է ունենում գյուղի հասարակական աշխատանքներին: Հովհաննեսն էլ հազարավոր երիտասարդների նման գրիչը փոխարինեց զենքով. հայրենիքի համար ամենածանր օրերին զորակոչվեց Կարմիր բանակ:

Մարտական առաջին մկրտությունը Հովհաննեսն ստացել է Ղրիմում մղվող ծանր պաշտպանական մարտերում, մասնակցել է Դոնի Ռոստովի համար մղվող հերոսական մարտերին:

Սկսվում է սովետական զորքերի հարձակումը: Հովհաննեսը մարտերի առաջին գծում էր. նա ջոկի հրամանատար էր, աչքի էր ընկնում խիզախությամբ: Բազմիցս արժանանում է հրամանատարության գովասանքներին: Մարտերից մեկում, երբ ստորաբաժանումը հրամանատարության կարևոր առաջադրանք էր կատարում, թշնամու գնդակը խոցում է քաջարի ղարաբաղցու սիրտը:

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերից հայրենիքը պաշտպանողների շարքերում հերոսաբար կռվում էր նաև Շուշիի երկամյա մանկավարժական ինստիտուտի ուսանող **Ազատ Աղաջանյանը**: Գերազանց գնահատականներով ավարտում է հայրենի գյուղի (Ղավախան) 7-ամյա դպրոցը և Շուշիի երկամյա մանկավարժական ինստիտուտը, այնուհետև՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը:

Սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, և Ազատը կամավոր կանգնեց հայրենիքը պաշտպանողների շարքերում: Պատերազմի հենց առաջին օրերից նա գործող բանակում էր: Ավարտում է կրտսեր հրամանատարների կարճատև դասընթացները և մեկնում ռազմաճակատ:

Ռազմաճակատից ծնողներին գրած մի նամակում անվեհեր զինվորը գրում է. «Մեզ ծնկի բերել ոչ ոք չի կարող: Հաղթանակը մերը կլինի: Հիշեցեք իմ այս խոսքերը»:

Կարմիր հրետանավորը շատ մարտերից է հաղթանակով դուրս եկել: Բայց նրան բախտ չվիճակվեց ապրել ու մարտնչել մինչև պատերազմի ավարտը: Ազատը թշնամու արկի բեկորից մահացու վերք է ստանում Կանև քաղաքի համար մղվող անհավասար մարտում:

Պատերազմի հաղթական ավարտից հետո տուն դարձան նրա Ղումաշ մոր չորս որդիները՝ Եգորը, Շահենը, Արշավիրը, Խորենը, բոլորն էլ վիրավորված, հաշմանդամ: Չկար, ետ չդարձավ միայն Ազատը: Նրա դին մնաց Պոլտավայի մարզի Խարոլսկի շրջանի Շիշակի գյուղի եղբայրական գերեզմանատանը: Այստեղ կողք-կողքի շարված ժիտոմիրյան սև մարմարից պատրաստված շիրմաքարերից մեկի վրա գրված է. «Ազատ Համբարձումի Աղաջանյան: 22.04.1919 - 13.07.1943»[235]:

Ասկերանի շրջանի Խնձրիստան գյուղի դպրոցին փառք ու պատիվ են բերում աճեցրած ու դաստիարակված սաների և ուսուցիչների հերոսական սխրագործությունները Մեծ Հայրենական ռազմաճակատներում:

Գերազանց գնահատականներով ավարտելով հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը և Շուշիի մանկավարժական ուսումնարանը (1938թ.) **Աշոտ Դավիթի Ղուլյանը** մանկավարժական աշխատանքի է անցնում հայրենի գյուղի, Ուլուբաբի և Սեյդիշենի դպրոցներում: Ընդամենը երկու տարի աշխատեց Աշոտը: Նա պատրաստվում էր ուսումը շարունակել հեռակա կարգով, բայց ցանկությունը մնաց անկատար: 1940թ. զորակոչվեց Կարմիր բանակ: Տաշքենդի ընդհանուր զինվորական ուսումնարանի կուրսանտ էր, երբ սկսվեց պատերազմը:

1941թ. վերջին ավարտեց ռազմական ուսումնարանը, իսկ 1942թ. լեյտենանտի կոչումով մեկնեց ռազմաճակատ (սկզբում Երկրորդ Բելոռուսական, իսկ հետո՝ Առաջին Բելոռուսական): 143-րդ հրաձգային դիվիզիայի 478-րդ գնդի կազմում, դասակի հրամանատարի պաշտոնով մասնակցել է Կոնոտոպ, Կորստեն, Կովել, Բրեստ քաղաքների ազատագրմանը:

Երկու անգամ վիրավորվել է, դաշտային հոսպիտալում ապաքինվելուց հետո նորից վերադարձել հարազատ գունդ: Երբ մեր բանակն անցավ սովետա-լեհական սահմանը, Աշոտ Ղուլյանի վաշտը սահմանն անցնող զորամասերից առաջինն էր:

Քրոջը՝ Եսթերին գրած մի նամակում (քույրն այդ ժամանակ նույնպես ծառայում էր Կարմիր բանակի շարքերում) շարադրում է հետևյալը. «Այս նամակը գրում եմ խրամատից: Ֆաշիստները կատաղի դիմադրություն են ցույց տալիս, երբեմն էլ անցնում հակահարձակման, կրելով մեծ կորուստներ: Մենք անխնա ոչնչացնում ենք գազան ֆաշիստներին: Նրանք շուտով կստանան արժանի հատուցում: Հաղթանակը մերը կլինի: Դու ինչպե՞ս ես, քույր ջան: Քեզ լավ պահիր»[236]:

Ղուլյանը ակտիվորեն մասնակցել է Լեհաստանի ազատագրական մարտերին: 1945թ. մարտ ամսին, Վարշավայի ազատագրման համար մղվող մարտերից մեկում զոհվեց հերոսի մահով, վաշտի հրամանատար էր՝ կապիտանի կոչումով:

Ռազմաճակատում ցուցաբերած խիզախության համար Աշոտ Ղուլյանը պարգևատրվել է երկու շքանշանով և մի շարք մեդալներով:

Նշված դպրոցի շրջանավարտ **Արշակ Համբարձումյանը**՝ ավարտելով Շուշիի մանկավարժական ուսումնարանը, 1939թ. սեպտեմբերից աշխատում էր հայրենի գյուղի դպրոցում, սակայն շատ կարճ տևեց նրա մանկավարժական գործունեությունը: 1939թ. դեկտեմբեր ամսում զորակոչվում է Կարմիր բանակի շարքերը: Զինվորական երդումն ընդունելուց հետո նա սովորում է Սմոլենսկի ռազմա-օդային ուժերի քաղաքական ուսումնարանում: Ստանալով սպայի կոչում, նա մեկնում է Հյուսիս-Կովկասյան ռազմաճակատ:

Համբարձումյանը ակտիվորեն մասնակցել է կովկասյան դարպասների մոտ կանգնեցնելու հերոսական մարտերին, որի համար էլ արժանացել է Կարմիր աստղի շքանշանի: 1942թ. օգոստոս ամսին մասնակցել է Մոզդոկ քաղաքի համար մղված թեժ մարտերին և զոհվել օգոստոսի 23-ին:

Օգոստոսյան այդ մարտերի մասին գեներալ Ռուսլինը գրել է. «Վաշտի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ, ավագ լեյտենանտ Համբարձումյանը մարտիկներ Լուչենկոյի, Մլամունի, Դոնչևի հետ միասին մի քանի անգամ կասեցրել է ֆաշիստական տանկերի առաջխաղացումը մեր դիրքերի վրա: Մարտը անհավասար է եղել: Այս անհավասար մատրերում էլ զոհվեց ավագ լեյտենանտ Արշակ Համբարձումյանը»[237]:

Մարտական կարմիր դրոշի կառավարական շքանշանը 1989թ.-ին գտավ Համբարձումյանի հարազատներին: Նա չկար, որ հանդիսավորությամբ ստանար կառավարական պարգևը: Արշակի քույրը՝ ստանալով եղբոր պարգևը, շատ տխրեց, բայց միաժամանակ հպարտացավ, որ երկար լռությունից հետո նորից հիշվեց իր հարազատ եղբոր անունը:

Խնձրիստանի միջնակարգ դպրոցում դաստիարակված սաներից է **Խորեն Իսրայելյանը**: Նա գերազանց գնահատականներով ավարտում է Շուշիի մանկավարժական ուսումնարանը (1938թ.) և հայրենի Խնձրիստան գյուղի դպրոցում նշանակվում որպես տարրական դասարանների դասվար:

Մանկավարժական գործունեության առաջին օրվանից Խորենը ցուցաբերում է մեծ նվիրվածություն ու ջանասիրություն իր գործի նկատմամբ: Շատ կիրթ ու համեստ երիտասարդ էր: Վայելում էր ծնողական և աշակերտական հասարակության հարգանքը:

1941թ. գարնանը զորակոչվեց Կարմիր բանակի շարքերը: Ծառայությունը սկսել է Միջին Ասիայում, սկզբում Ալմա-Աթայում, իսկ հետո՝ Կզըլ-Արվադ քաղաքում:

Ընդամենը 3 ամսվա զինվոր էր, երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: 1941թ. նոյեմբեր ամսից մասնակցել է պատերազմին, հիմնականում կենտրոնական ռազմաճակատում:

Պատերազմի դաշտում վիրավորվեց, կազդուրվեց Միջին Ասիայում, նորից մեկնեց ռազմաճակատ: Այս անգամ՝ ստալինգրադյան ռազմաճակատ: Մասնակցել է Ստալինգրադի տակ գերմանացիներին ջախջախելու մարտերին:

Ստալինգրադի մատույցներից մինչև Բեռլին հաղթանակի երկար ճանապարհ անցավ խիզախ հրետանավորը: Նա ակտիվորեն մասնակցել է Բելգրադ-Օրյոլ ու Կուրսկի աղեղի դաժան մարտերին՝ դիվիզիոնի հրամանատարի պաշտոնում:

Մեծ հաղթանակի օրը դիմավորեց Բեռլինում՝ Ռայխստագի մոտ, արդեն մայորի ուսադիրներով, այս անգամ որպես հրետանային դիվիզիոնի հրամանատար: Նա տուն վերադարձավ՝ կուրծքը զարդարված մարտական 4 շքանշաններով և բազմաթիվ մեդալներով:

Ասկերանի շրջանի Խնապատի 7-ամյա (1940-1941 ուստարում՝ միջնակարգ) դպրոցի աշակերտների և ուսուցիչների մարտական սխրագործությունների մասին հետաքրքիր տեղեկություններ կան Ս.Սարգսյանի «Խնապատ»(Երևան, 2006), Գ.Աղասարյանի նշված աշխատություններում և այլ աղբյուրներում: Շատ համառոտակի նշենք միայն մի քանի փաստ:

Հայրենական մեծ պատերազմի հենց առաջին օրերից Խնապատի միջնակարգ դպրոցի շրջանավարտ **Ազատ Հարությունյանը** Մոսկվայի հերոս պաշտպանների շարքերում էր: Մայրաքաղաքի պաշտպանության համար ոտքի էր ելել Մոսկվայի և նրա շրջակայքի ողջ բնակչությունը, որը բանակի հետ բռունցք կազմելով ջարդեց գերակշիռ գերմանական ոհմակներին: Այդ մարտերում իրեն գերազանց դրսևորած անվեհեր խնապատցին, որի երակներում եռուն էր Ավարայրի, Սարդարապատի և Շամխորի հերոսների արյունը, համարձակորեն առաջ է քաշվում: Նա կապիտանի զինվորական աստիճանով նշանակվում է 8-րդ գվարդիական դիվիզիայի 19-րդ գվարդիական գնդի հրամանատար:

Ազատ Հարությունյանի հերոսական շատ ու շատ դրվագներով հարուստ մարտական ուղին շարունակվեց մինչև լատվիական Մագոնայի շրջան, որտեղ հերոսաբար զոհվեց Բարկավա գյուղի համար մղված մարտերում: Նա մարտադաշտում մշակել էր հրետանու մարտավարական յուրատեսակ ձևեր, որոնց խելացի կիրառումը ավելի էր բարձրացրել հայ սպայի պատիվն ու հեղինակությունը:

Ազատը 1944թ. օգոստոսի 5-ին Բարկավայից նամակ է գրում իր Հայկուհի մայրիկին. «Սիրելի մայրիկ ջան, լատվիական մի գյուղի համար կռվելիս ֆաշիստները հրկիզեցին մեր տանկը, ընկերներս զոհվեցին: Ես վերքեր և թեթև այրվածքներ ստացա և մնացի թշնամու թիկունքում[238]:

Սա Ազատ Հարությունյանի վերջին նամակն էր, որից երեք օր հետո նա զոհվեց՝ սիրասուն մոր կարոտը սրտում:

Նշված գյուղի դպրոցը ավարտելուց հետո **Հայրապետ Օհանջանյանը** ուսումը շարունակում է Սցենսկ քաղաքի կայազորին կից գնդային դպրոցում: Նոր էր գերազանց գնահատականներով ավարտել, երբ սկսվեց Հայրենական պատերազմը: Սմոլենսկի մատույցներում օրեցօր սաստկացող մարտական գործողություններին մասնակցող զորամիավորումները համալրում էին ստանում: Այդ զորամիավորումները համալրող զինվորների մեջ էր նաև բարձրահասակ, ամրապինդ, 20-21 տարեկան սերժանտ Հայրապետ Օհանջանյանը:

Պաշարված Լենինգրադի ուղղությամբ օր ու գիշեր մարտերը չէին դադարում: Գումարտակի շտաբում հաղորդում էին ստացել, որ երկրորդ էշելոնի թիկունքում գերմանական կայազորը վառելանյութի պաշարներ է կուտակում, և որ պետք է ոչնչացնել այն: Եվ նույն օրը՝ մութն ընկնելուն պես, Հայրապետը իր գամփռ շան հետ դուրս սողալով գումարտակի դիրքերից, անցնում է թշնամու թիկունքը: Գու-

մարտակի մարտիկները անհամբեր սպասում էին գերմանական դիրքերում: Գիշերը կիսվել էր, երբ հանկարծ թշնամու թիկունքում բոցավառվեց երկինքը, որին հաջորդեց ահեղ պայթյուն: Դրանից հետո թշնամու դիրքերում խուճապ առաջացավ, լսվեցին ինքնաձիգների կրակահերթեր: Այդ խառնիճաղանջ ճարճատյունների մեջ լսվեց նաև ռուսական ինքնաձիգի կարճ կրակահերթ և ապա տիրեց լռություն:

Ռուսական թնդանոթաձիգներն ու ականանետաձիգները արճճե հեղեղ թափեցին թշնամու գլխին: Բայց երբ թշնամին ուշքի եկավ, լուսադեմին հուժկու հարձակմամբ հետ մղեց խորհրդային այդ զորախմբին դեպի «Չորնայա ռեչկա» բնակավայր: Գումարտակի զինվորները մեծ ափսոսանք ապրեցին զինվորի ու շան համար, որ չէին վերադարձել և անհայտ էր նրանց գտնվելու վայրը: Բայց ահա գումարտակի աջ թևից շան կլանչոց լսվեց, և դիրքերում զինվորները զգաստացան: Նրանցից 6-7 խիզախներ վազեցին ձայնի ուղղությամբ: Եվ ի՜նչ, ծանր վիրավոր սեժանտին շունն առաջնորդում էր դեպի յուրայինների խրամատը՝ ատամներով ձգելով նրա վերնազգեստից: Ուրախությունից թնդացող մարտիկները գրկում են Հայրապետին ու հասցնում սանիտարական բլինդաժ:

Հայրապետ Օհանջանյանը սխրանքներով, հերոսական դրվագներով հարուստ շատ էջեր է գրել իր՝ ցավալիորեն կարճ մարտական կենսագրության մեջ: Քանի՜-քանի անգամ է նա ղեկավարել հետախուզական ջոկատները, որոնք իրենց փորձառու առաջնորդի խիզախ կռահումների շնորհիվ անփորձանք ու անկորուստ վերադարձել են գումարտակ:

1941թ. նոյեմբերի 21-ին, Լենինգրադի մատույցներում՝ նույն «Չորնայա ռեչկա» գյուղի մոտ ծավալված ամենաահեղ մարտերից մեկում էլ զոհվեց սերժանտ Հայրապետ Օհանջանյանը[239]:

Խնապատի դպրոցում դաստիարակված լավագույն սաներից էր նաև **Լազար Պողոսի Մելքումյանը** (գյուղի միջնակարգ դպրոցի 1940-41 ուստարվա առաջին շրջանավարտներից էր): Նա խոհուն ու երազուն մի պատանի էր, փափագում էր կենսաբան դառնալ, բայց հայրենիքի կանչով ռազմաճակատ մեկնեց:

Լ. Մելքումյանը հայտնվել էր 32-րդ գվարդիական դիվիզիայի զորամասերից մեկում: Դիվիզիան առաջադրանք ստացավ Թամանյան թերակղզուց հետ քաշվել և պաշտպանական դիրք բռնել Հյուսիսային Կովկասի ուղղություններում: Թշնամին կռահելով զբաղեցրած դիրքերի կարևորությունը, սկսեց անընդհատ ռմբակոծել դիվիզիայի զորամասերի դասավորությունները:

1942թ. սեպտեմբերի 13-ն էր: Դիվիզիայի հրամանատարը՝ գնդապետ Միխայիլ Տիխոնովը, նկատեց, որ Տուապսեի ուղղությամբ մի խումբ քաղաքացիներ են շարժվում, իսկ շուտով թշնամին կսկսի գնդակոծությունը: Հրամանատարը, դուրս գալով բլինդաժից, առաջին պատահած զինվորին իր մոտ կանչեց ու կարգադրեց հասնել նրանց և բացատրել իրողությունը: Այդ զինվորը Լազար Մելքումյանն էր: Հաղթահարելով դժվարին ճանապարհը, նա հասավ առաջ շարժվող բնակիչներին, որոնք ֆաշիստների կողմից օկուպացված Մայկոպի շրջանի գյուղերից էին, փախչում էին թշնամու անմարդկային արարքներից: Զինվորը նրանց հաղորդեց, որ ճանապարհը թշնամու գնդակոծության տակ է և շուտով նրանք կսկսեն արկակոծությունն ու հրետակոծությունը: Մարդիկ հավատացին նրան և, հետևելով զինվորին, սկսեցին անվտանգ արահետով շարժվել ետ: Շատ չէին անցել, երբ Լազարը նկատեց անտառից դուրս եկող երկու ֆաշիստական զինվորի, որոնք շարժվում էին խճուղու կողմը: Նա քաղաքացիներին խնդրեց շտապ, առանց խուճապի մատնվելու, անաղմուկ իջնել ձորը, քանի դեռ ֆաշիստական զինվորները

չէին նկատել իրենց, իսկ ինքը բարձրացավ զառիթափն ի վեր՝ դիմավորելու նրանց: Երբ ֆաշիստները մոտեցել էին Լազարին, նա հուժկու ձայնով հրամայեց ցած դնել զենքերը և անսպասելի կրակահերթ տվեց: Ֆաշիստ հետախույզները դեն նետեցին զենքերը և ձեռքները վեր բարձրացրած քարացան Լազարի առաջ: Թաքստոցի քաղաքացիներից երկու պատանի, տեսնելով ու կռահելով վտանգավոր պահը, բարձրացան զառիթափը և օգնելով զինվորին՝ ֆաշիստներին տապալեցին գետնին, ձեռքները կապկպեցին և իրենց հետ տարան շտաբ: Գերյալ զինվորները արժեքավոր տեղեկություններ հայտնեցին գերմանական 77-րդ դիվիզիայի սպառազինության ու նոր համալրումների մասին: Երբ լռեց թշնամու հրետանին, ուշ գիշեր էր: Լազար Մելքումյանը բնակիչներին տեղ հասցրեց ու վերադարձավ շտաբ: Լուսաբացին դիվիզիայի զորամասերը սկսեցին հարձակումները: Եռօրյա դաժան մարտերից հետո գերմանական զորախումբը ետ շպրտվեց բարձունքից, որի վրա ծածանվեց կարմիր դրոշը…

Դիվիզիայի «Գվարդեեց» թերթը մեծ հոդված տպագրեց երիտասարդ մարտիկի մասին՝ լուսանկարով: Դա նրա վերջին լուսանկարն էր: Հետագա մարտերից մեկի ժամանակ մահացու վերք ստացավ Լազար Մելքումյանը՝ անկատար թողնելով իր երազանքները[240]:

Իրենց քաջագործություններով ետ չեն մնացել նաև Շուշիի, Մարտունու և Հադրութի շրջանի դպրոցներում դաստիարակված ուսուցիչներն ու աշակերտները:

Բենիամին Ամիրյանը ծնվել է Շուշի քաղաքում: Սկզբնական կրթությունը (տարրական) ստացել է տեղի հայկական դպրոցում, այնուհետև ավարտել է Մարտակերտի շրջանի Առաջածորի միջնակարգ դպրոցը, գերազանց գնահատականներով՝ Շուշիի բանֆակը: 1933-1937թթ. սովորում ու գերազանցությամբ ավարտում է Բաքվի Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը:

Ականատեսների վկայությամբ՝ Բենիամինի ուսումնառության բոլոր տարիներին նրա նկարը փակցված էր բուհի սրահում՝ «Սովորել Բենիամինի պես» մակագրությամբ: Իսկ ամառները նրան միշտ տեսնում էին հայրենի Սխտորաշենում երեխաների հետ ակտիվ, հետաքրքիր և ուսանելի միջոցառումներ կազմակերպելիս, հանրօգուտ աշխատանք կատարելիս: Ինստիտուտն ավարտելուց հետո նրան անմիջապես ընդունում են աշխատանքի որպես դասախոս՝ ակնկալելով մեծ ապագա: Լինելով բացառիկ ընդունակությունների տեր, զարմանալի չէ, որ 1-2 տարում պատրաստ էր Բենիամինի դիսերտացիոն աշխատանքը: Սակայն, չնայած ընձեռնված հնարավորություններին, նա 1939-ին կամավոր մեկնում է բանակ և ծառայում նախ ուկրաինական Ժիտոմիր, այնուհետև՝ Բերդիչև քաղաքներում: Այստեղ էլ նրա համար սկսվում է Մեծ Հայրենականը: Խորհրդային բանակի սպան՝ ապագ գիտնականը, պատերազմը դիմավորում է Բերդիչևում: Ծանր է մտածել, թե հետո ինչ է եղել և ինչպես… Երախտապարտ Սխտորաշենի գերեզմանատան մուտքի պուրակում, պատերազմում զոհվածների հիշատակին կանգնեցված հուշարձանի սպիտակ մարմարի վրա 110 կտրիճների անուն-ազգանունների շարքում առաջինը կարդում ենք՝ Այդինյան Բենիամին Ասծատուրի[241]:

Եփրեմ Ղարիբյանը Մարտունու շրջանի Գիշու դպրոցի շրջանավարտ էր:

Կուրսկի ճակատամարտում իր խիզախությամբ աչքի ընկած արցախահայ տանկիստներից էր՝ 18-րդ տանկային կորպուսի 181-րդ տանկային բրիգադի 1-ին տանկային գումարտակի հրամանատար: Մայոր Ղարիբյանը մինչ այդ մասնակցել է Ստալինգրադի ճակատամարտին և պարգևատրվել Մարտական կարմիր

դրոշի շքանշանով: Միայն Պրոխորովկա բնակավայրի մոտ հուլիսի 12-ին տեղի ունեցած տանկային ճակատամարտում խիզախ տանկիստ-հրամանատարը երկու անգամ հակագրոհի տարավ իր գումարտակը՝ և հանդիպակաց մարտում կանգնեցրեց հակառակորդի առաջխաղացումը: 181-րդ տանկային բրիգադի հրամանատար, փոխգնդապետ Պուզիրյովը մայոր Ղարիբյանի պարգևատրման թերթիկում նշել է. «1-ին տանկային գումարտակի հրամանատար, մայոր Ե.Գ. Ղարիբյանը 1943թ. հուլիսի 12-ին երկու անգամ թշնամու դեմ գրոհի տարավ իր գումարտակը: Մարտի ժամանակ նա գործում էր վճռականորեն և արիաբար: Անձամբ ոչնչացրեց հակառակորդի 2 տանկ, հակատանկային 2 հրանոթ, մեկ դասակից ավել զինվոր ու սպա: Մարտի թեժ պահին վիրավորվելով, մայոր Ղարիբյանը չթողեց մարտադաշտը, այլ շարունակեց հմտորեն ու ղեկավարել գումարտակի գործողությունները մինչև գրոհի ավարտը: Ցուցաբերած քաջության և տոկունության համար արժանի է պարգևատրման Մարտական կարմիր դրոշի շքանշանով[242]: 5-րդ գվարդիական տանակային բանակի հրամանատար, տանկային զորքերի գեներալ-լեյտենանտ Պ. Ռոտմիստովի 1943թ. սեպտեմբերի 2-ի թիվ 44 հրամանով մայոր Ե.Գ. Ղարիբյանը պարգևատրվեց Մարտական կարմիր դրոշի շքանշանով[242]:

Պրոխորովկայից հետո մայոր Ղարիբյանը ակտիվորեն մասնակցեց Կուրսկի աղեղի երկրորդ շրջանի մարտերին և հերոսաբար զոհվեց Խարկովի ազատագրման մարտերից մեկում՝ հետմահու պարգևատրվելով Լենինի շքանշանով:

Խարկովի մարզի ազատագրման մարտերում հերոսաբար զոհվեց նաև 18-րդ տանկային կորպուսի 110-րդ տանկային բրիգադի 1-ին տանկային գումարտակի հրամանատար, մայոր **Ռուբեն Ղարիբյանը** (Մարտունու շրջանից): Մարտական մի շարք շքանշանների ու մեդալների ասպետ տանկիստը թաղվել է Խարկովի մարզի Շելեստյովսկ գյուղի եղբայրական գերեզմանոցում: Ռուբեն Ղարիբյանը Կարմիր բանակի շարքերում էր ծառայում 1935թ.-ից: 1938թ. ավարտել է տանկային, իսկ մեկ տարի հետո՝ կրտսեր լեյտենանտների ուսումնարանները: Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 1941թ. հունիսի 22-ից, մարտնչել Հարավարևմտյան, Արևմտյան, Հյուսիս-Արևմտյան և Վորոնեժի ռազմաճակատներում, եղել է վաշտի հրամանատար, գումարտակի շտաբի պետ, ապա՝ տանկային գումարտակի հրամանատար: Նա այն հայ զինվորներից էր, որոնց բախտ էր վիճակվել մասնակցելու 1941թ. նոյեմբերի 7-ին Մոսկվայի Կարմիր հրապարակում տեղի ունեցած զորահանդեսին:

Մարտունու շրջանի Հերհերի 7-ամյա դպրոցի շրջանավարտ **Աբգար Գրիգորյանը** գերազանց գնահատականներով ավարտում է Շուշիի մանկավարժական ուսումնարանը (1939թ.) և անցնում ուսուցչական աշխատանքի Սոս գյուղի միջնակարգ դպրոցում: Սակայն կարճ է տևում նրա մանկավարժական գործունեությունը:

Զորակոչվել է բանակ 1941թ. հունիսի 8-ին: Զինվորական ծառայությունը անցնում է Բրեստ քաղաքում: 1941թ. հունիսի 18-ին նա Բրեստից նամակ է ուղարկում հարազատներին, երբ դեռ պատերազմը չէր սկսվել: Դա հարազատներին հղած նրա վերջին նամակն էր: Մինչև այժմ հարազատները նրա ճակատագրի մասին ոչինչ չգիտեն:

Նշված դպրոցի ուսուցիչ **Ամիրբար Աղաբեկյանը** 1939թ. նոյեմբերին զորակոչվել Կարմիր բանակ և անմիջապես գործուղվել սովորելու հրետանային սպայական ուսումնարանում: Պատերազմի առաջին իսկ օրերից նա ռազմի դաշտում էր: Մոսկվայի տակ մղվող մարտերից մեկում վիրավորվում է: Հոսպիտալում ապա-

քինվելուց հետո նորից վերադառնում է ռազմաճակատ: Հոսպիտալից իր հարազատներին հղած նամակներից մեկում գրում է. «Շուտով կրկին մեկնելու եմ ռազմի դաշտ: Գուցեև զոհվեմ հայրենիքի համար մղվող մարտերում: Բայց լավ իմացեք, որ ղարաբաղցու անունը միշտ բարձր կպահեմ»[243]: Նա հերոսաբար զոհվեց 1941թ. դեկտեմբերին Մոսկվայի համար մղվող պաշտպանական մարտերում:

Արյունալի մարտերից մեկում հերոսաբար զոհվեց Մարտունու շրջանի Եմիշճան գյուղի 7-ամյա դպրոցի ուսուցիչ **Սամսոն Խաչատրյանը:** Բաքվի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը գերազանցությամբ ավարտելուց հետո երեք տարի աշխատել է Ասկերանի շրջանի Նախիջևանիկ գյուղի 7-ամյա դպրոցում, այնուհետև աշխատել «Կոմունիստ» (հայերեն) թերթի խմբագրությունում: Հայրենական պատերազմի սկզբին զորակոչվեց Կարմիր բանակ: 89-րդ հայկական դիվիզիայի կազմում մասնակցել է Հյուսիսային Կովկասի պաշտպանության մարտերին: Մարտերով Կովկասյան լեռներից հասել է Կրասնոդարի երկրամասի Բրյուխովեցկու շրջանի Նովոձերալիևսկ ստանցիա: Այստեղ կատաղի մարտեր էին գնում մի բարձունք գրավելու համար: Ֆաշիստներն այդ բարձունքը դարձրել էին ամրոց: Մեր զորամասերի գրոհներն անցնում էին ապարդյուն և մեծ կորուստներով: Խաչատրյանի գումարտակը հրաման է ստանում գիշերը շրջանցել բարձունքը, հարվածել թիկունքից և ոչնչացնել նրան, մեր ստորաբաժանումներին հարձակվելու հնարավորություն տալ: Խնդիրը շատ դժվարին էր և պատասխանատու: Ավագ լեյտենանտ Խաչատրյանը ամենայն լրջությամբ և պատասխանատվության զգացումով նախապատրաստեց այդ օպերացիան: Հետախույզներ ուղարկեց, անձամբ ստուգեց յուրաքանչյուր մարտիկի պարտականությունը: Գիշերվա երկրորդ կեսին գումարտակը, խստորեն պահպանելով քողարկության կանոնները, անցավ հարձակման: Առաջին շարքերում էր ինքը՝ Խաչատրյանը: Կատաղի մարտը տևեց մոտ երկու ժամ: Ի վերջո մեր զորամասը բարձունքը գրավեց: Երկու կողմերն էլ մեծ կորուստներ տվեցին: Հերոսաբար զոհվեց նաև Ղարաբաղի քաջարի զավակը՝ Սամսոն Խաչատրյանը:

Մեծ Հայրենականի հաղթանակից հետո տասնյակ տարիներ անցան: Չնայած Խորհրդային Միության պաշտպանության նախարարությանը հղած բազմաթիվ նամակներին, հարազատները Սամսոն Խաչատրյանի մասին ոչ մի տեղեկություն չկարողացան ստանալ:

Բայց ահա մի օր հարազատները նամակ ստացան Կրասնոդարի երկրամասի Բրյուխովեցկի շրջանի Նովոձերալիևսկ ստանցիայի դպրոցի ուսմասվար Անգելինա Սերգեևնայից: Նա մանրամասն նկարագրում է ստանցիային հարող բարձունքը գրավելիս Սամսոն Խաչատրյանի և իր մարտիկների սխրագործությունները, որի մասին հիշեցնում է մի հուշարձան, որի գրանիտե պատին ոսկեզօծ տառերով փորագրված են նրանց անունները:

Հայրենական մեծ պատերազմի կատաղի ճակատմարտերում իրենց կյանքն են զոհաբերել նաև Հադրութի շրջանի դպրոցների շատ ուսուցիչներ ու նրանց սաներ: Նշենք մի քանի փաստ:

Տումի գյուղի 7-ամյա դպրոցի շրջանավարտ **Լևոն Եղյանը** ավարտում է Հադրութի մանկավարժական տեխնիկումը և անցնում մանկավարժական աշխատանքի Մեծ Թաղլարի, Էդիլլվի դպրոցներում: Միաժամանակ եղել է ուսմասվար: Զորակոչվել է Հայրենական մեծ պատերազմի առաջին օրը: Ռազմաճակատում հրետանային զորքերի սպա էր, երբ ստացավ մարտական առաջին մկրտությունը: Ռազմաճակատից կնոջը գրած նամակներում միշտ հուսադրում էր, որ հաղթանակով տուն կվերադառնա: Վերջին նամակը գրել է 1943թ. փետրվարին: Նա

18-րդ բանակի կազմում էր և զոհվեց Կրասնոդար քաղաքի ազատագրման համար մղված մարտերից մեկում:

Հադրութի շրջանի Մեծ Թաղլարի միջնակարգ դպրոցի շրջանավարտ **Ավագ Լալայանը** ավարտում է Բաքվի մանկավարժական ինստիտուտը և ուսուցչություն անում հայրենի գյուղի դպրոցում: 1938թ. նոյեմբերին զորակոչվեց Կարմիր բանակ: Հենց պատերազմի առաջին օրվանից ռազմաճակատում էր: Մասնակցել է Արևմտյան Ուկրաինայի և Բելոռուսիայի ազատագրման համար ծավալված մարտերին: Հարազատներին գրում էր, որ ջոկի հրամանատար է, գնդացրորդ, քաղղեկի տեղակալ և երազում է վերադառնալ գյուղ ու շարունակել մանկավարժական գործունեությունը: Բայց չհասցրեց դասարան մտնել նորից: Զանգի ղողանջի փոխարեն նրա ականջին հասավ արկերի որոտը ու ռուս ընկերոջ՝ Կուզմինի հետ նետվեց գրոհի ու հերոսաբար զոհվեց: Նրա սխրագործությունների մասին մանրամասն գրված է դպրոցի փառքի անկյունում դրված գրքույկում՝ «Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել…»[244]:

Հայրենական մեծ պատերազմի ժամանակ Մոսկվայի պաշտպանության համար մղվող կատաղի մարտերից մեկում հերոսաբար զոհվեց (1941թ. դեկտեմբեր) Հադրութի շրջանի Քոչբեկ գյուղի 7-ամյա դպրոցի ուսուցիչ Հովհաննես Հովհաննիսյանը:

Նշված դպրոցի շրջանավարտ **Հրանտ Բալասանյանը՝** գերազանց ավարտելով Հադրութի մանկավարժական տեխնիկումը, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ աշխատում էր հայրենի գյուղի և Բլուբանի 7-ամյա դպրոցներում (1935-1939թթ.): 1941թ. զորակոչվում է Կարմիր բանակ, ծառայում Արևմտյան Ուկրաինայում: Պատերազմի կատաղի մարտերից մեկում, Վորոշիլովգրադ քաղաքի պաշտպանության համար մղված մարտերում հերոսաբար զոհվել է 1941թ. նոյեմբերին:

Նման օրինակներ կարելի է շատ բերել Հայրենական մեծ պատերազմի տարբեր ռազմաճակատներում Լեռնային Ղարաբաղի հայկական դպրոցների ուսուցիչների ու նրանց սաների ցուցաբերած սխրագործությունների մասին: Նրանք իրենց կյանքն են զոհաբերել հանուն մեր Հայրենիքի պաշտպանության: Այդ օրինակները ցույց են տալիս, որ ղարաբաղցի ուսուցիչներն ու դպրոցներում դաստիարակված սաները պատերազմի տարիներին ԽՍՀՄ բազմազգ ժողովուրդների հետ միասին բարձր էին պահում իրենց դպրոցի պատիվը՝ հանդես բերելով կամքի ու բնավորության բարձր ու վեհ գծեր:

Հետպատերազմյան տարիներին հաղթանակով տուն վերադարձած հայրենիքի դյուցազունների շարքում էին ուսուցիչները, ովքեր գրիչը փոխարինել էին հրացանով և ժամանակավորապես թողել սիրելի դպրոցը: Լեռնային Ղարաբաղի ժողկրթբաժինները հոգատարությամբ շրջապատեցին զորացրված մանկավարժներին, որպես կանոն, նրանց նշանակում էին իրենց նախկին աշխատանքին կամ զբաղեցրած պաշտոնին:

Ռազմաճակատից վերադարձածները, ինչպես և բարձրագույն դպրոցների շրջանավարտները, ժողովրդական կրթության մարմիններին հնարավորություն տվեցին պատերազմի ընթացքում դպրոցներում աշխատած ցածր մակարդակի ուսուցիչներին փոխարինել որակյալ կադրերով: Սակայն մարզի ծայրամասային գյուղերի դպրոցները դեռևս լրիվ ապահովված չէին որակյալ մանկավարժական կադրերով: Այդ նպատակով էլ Ստեփանակերտում, Շուշիում և շրջաններում սիստեմատիկաբար կազմակերպվում էին ուսուցիչների վերապատրաստման մեկամսյա դասընթացներ, նույնիսկ թույլատրվում էր որակավորման կուրսեր անց-

նել այն ուսուցիչներին, ովքեր պատերազմի տարիներին աշխատել են դպրոցներում և ձեռք բերել մանկավարժական փորձ: Ժամանակի մամուլում՝ «Սովետական Ղարաբաղ», «Սովետական դպրոց», «Կոմունիստ» (հայերեն) և այլ թերթերում ու ամսագրերում տպագրված հոդվածներից, ժողկրթբաժվարների հաշվետվություններից տեղեկանում ենք, որ ամեն տարի հարյուրավոր ուսուցիչներ բարձրացրել են իրենց որակավորումը վերապատրաստման դասընթացներում: Բարելավվեց նաև մանկավարժական կադրերի որակական կազմը: Օրինակ՝ եթե 1945-46 ուստարում մարզի դպրոցներում բարձրագույն և թերի բարձրագույն կրթությամբ ուսուցիչները կազմում էին 21.5 տոկոս, ապա 1949-50 ուստարում այն հասավ 36.2 տոկոսի:

Ուշագրավ է նաև այն, որ Ստեփանակերտում և շրջաններում կազմակերպվում էին տեսական ու գիտապրակտիկ սեմինարներ, որոնցում զեկուցումներով հանդես էին գալիս նաև վերապատրստման դասընթացների մասնակից ուսուցիչներից շատերը: Ընդհանրացվում էր այն ժամանակ ճանաչված մանկավարժների՝ Ա. Մարտիրոսյանի, Ս. Ղուկասյանի, Ս. Արամյանի, Ս. Հայրապետյանի, Խ. Հարությունյանի, Հ. Եգանյանի, Ե.Եսայանի, Մ. Բեգլարյանի, Լ.Հարությունյանի, Վ. Բալայանի, Ի. Աթայանի, Ա. Աբրահամյանի, Վ. Պողոսյանի և ուրիշների առաջավոր փորձը՝ ուսուցման գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ:

Համառոտակի ներկայացնենք նաև Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո հաղթանակով տուն վերադարձած ուսուցիչների և մարզի ժողկրթության մարմիններում աշխատողների (նկատի ունենք շրջանային կրթության բաժինների վարիչներին, դպրոցական տեսուչներին) հայրենասիրական (ռազմաճակատամարտերում ցուցաբերած սխրագործությունները) և մանկավարժական գործունեությունը դպրոցներում և այլ ոլորտներում:

4. ԼՂԻՄ հանրակրթական դպրոցի հայ ուսուցիչների ու աշակերտների սխրանքները Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում և հետպատերազմյան ժամանակաշրջանում նրանց հասարակական-քաղաքական, ռազմական և մանկավարժական գործունեությունը (դպրոց-ռազմաճակատ-դպրոց)

Աշխատության այս բաժնում համառոտակի կներկայացնենք Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում ուսուցիչների ու նրանց սաների սխրագործությունները և հետպատերազմյան շրջանում նրանց գործունեությունը հանրակրթական, միջնակարգ մասնագիտական ու բարձրագույն դպրոցներում: Անշուշտ, կնշվի նաև պատերազմի մասնակից ուսուցիչների գործունեությունը նախապատերազմյան շրջանում:

1941-1945 թվականներին հայրենիքը պաշտպանելու համար ԽՍՀՄ բոլոր ազգային հանրապետություններից զորակոչվեցին միլիոնավոր մարդիկ: Զորակոչվեցին ու մաքառեցին որպես մի ընտանիքի անդամներ: Նրանց մի մասը զոհվեց ռազմաճակատներում, իսկ մյուս մասը վերադարձավ ու նորից անցավ խաղաղ շինարարական աշխատանքի: Ֆաշիզմի դեմ տարած պատմական հաղթանակից հետո վերադարձավ նաև Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հայկական դպրոցների ուսուցիչների ու աշակերտների մի մասը: Նրանք վերադարձան շքանշաններով ու մեդալներով պարգևատրված, վերադարձան հայրենի օջախ և նոր

ուժով ու եռանդով նվիրվեցին մանկավարժական աշխատանքի: Մարզի հանրակրթական դպրոցներում նրանց շրջապատեցին առանձին հոգատարությամբ, սիրով ու հարգանքով:

Բնականաբար, հնարավոր չէ առաջին և այս բաժնում ընդգրկել այդ ծանր տարիներին ռազմաճակատներում և թիկունքում, ինչպես նաև պատերազմի հաղթական ավարտից հետո տուն վերադարձած անձնվեր ուսուցիչների ու նրանց սաների կատարած աշխատանքը: Նրանց աշխատանքը, որոնց հետ առնչվել և 60-80-ական, առավել ևս 90-ական թվականներին համատեղ աշխատել են սույն գրքի հեղինակները, կարողացել են գրի առնել նրանց հուշերը, որը անշուշտ, հիմք է ծառայել նրանց գործունեության լուսաբանման համար:

Հարկ է նշել, որ ինչպես առաջին, այնպես էլ այս բաժինը հատուկ ուսումնասիրման թեմա է և քանի որ տրամաբանորեն փոխկապակցված է ուսումնասիրության հետ, այդ միտումով էլ նպատակահարմար գտանք թեկուզև համառոտակի անդրադառնալ այդ հարցի լուսաբանմանը:

Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցի զարգացման պատմության երկրորդ տասնամյակում՝ 1930-1940թթ., նախապատերազմյան շրջանում ձեռք բերված կարևորագույն նվաճումներն էին՝ անգրագիտության վերացումը մարզում, ընդհանուր պարտադիր տարրական ուսուցման ապահովումը, դպրոցական կրթության մակարդակի բարձրացումը, ուսումնադաստիարակչական աշխատանքի որակի բարելավումը, ժողովրդական կրթության միասնական համակարգի առկայությունը, տարրական՝ չորս տարով, ոչ լրիվ միջնակարգ՝ յոթ տարով և լրիվ միջնակարգ՝ տասը տարով: Այդ ամենը պայմանավորված էր բարձրորակ մանկավարժական կադրերի անձնվեր աշխատանքով:

1930-ական թվականներին մեծացավ ոչ միայն ուսուցիչների թիվը, այլև յոթնամյա և միջնակարգ դպրոցների ցանցի աճման հետ կապված Հայաստանում և Ղարաբաղում բացվեցին երկամյա ուսուցչական ինստիտուտներ (Շուշիում՝ 1938-1939 ուստարում)՝ 5-7-րդ դասարանների ուսուցիչներ պատրաստելու նպատակով: Խաղաղ ժամանակաշրջանում ուսուցիչներն իրականացնում էին ոչ միայն դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքները, այլև ծավալում էին հասարակական ակտիվ գործունեություն գյուղացիներին կոլտնտեսությունների (կոլեկտիվացման) մեջ ներգրավելու, դեպուտատների խորհուրդների ընտրությունների ժամանակ և այլն: Իրենց մանկավարժական և հասարակական մեծ աշխատանքով, մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործին նվիրվածությամբ ուսուցիչները մեծ հարգանք վաստակեցին հասարակության մեջ, և կուսակցության ու կառավարության կողմից ըստ արժանվույն գնահատվեցին նրանց ծառայությունները:

Մանկավարժական պրակտիկայում ճանաչված լավագույն ուսուցիչների ջանքերի շնորհիվ մարզի հայկական դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքի որակը շարունակաբար բարելավվում էր: Սակայն Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրը ամեն ինչ փոխվեց: Հազարավոր հայ ուսուցիչներ և ժողկրթության մարմինների աշխատողներ սրբազան պատերազմի ելան հանուն հայրենիքի պաշտպանության: Ինչպես նշեցինք, պատերազմի ռազմաճակատներում հերոսաբար զոհվեցին հարյուրավոր ուսուցիչներ ու աշակերտներ, որոնց մասին համառորակի նշեցինք նախորդ բաժնում: Շատ-շատերը հաղթանակով վերադարձան և շարունակեցին իրենց կիսատ թողած մանկավարժական

գործունեությունը կամ ուսումը բարձրագույն ուսումնական հաստատություններում, իսկ աշակերտները հանձնեցին ավարտական քննությունները և շարունակեցին ուսումը միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Արխիվային տվյալները, ժամանակակիցների հուշերը և այլ աղբյուրներ հնարավորություն են ընձեռում մեզ ըստ շրջանների համառոտակի ներկայացնել նրանց գործունեությունը:

Հայրենական պատերազմի տարիներին փայլուն քննություն բռնեց **Մարտակերտի շրջանի** հանրակրթական դպրոցը: Մինչպատերազմյան շրջանում (1930-1940թթ.) շրջանի մի շարք դպրոցներ աշխատանքի կազմակերպման մեթոդներով ու ձևերով օրինակ են ծառայել մյուս դպրոցների մանկավարժական կոլեկտիվների համար: Այդ ուղղությամբ զգալի աշխատանք են տարել շրջանի ոչ լրիվ և լրիվ միջնակարգ դպրոցի ուսուցիչներ Արշակ Անանյանը, Վաղարշակ Աղաբեկյանը, Աբգար Աթաջանյանը, Հայկ Այվազյանը, Ներսես Բաղունցը, Սուրեն Գասպարյանը, Մուշեղ Գաբրիելյանը, Արտեմ Ավագյանը, Գուրգեն Հովսեփյանը և շատ ուրիշներ: Նրանց և շատ ուրիշների եռանդուն գործունեության շնորհիվ սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը լավ հիմքերի վրա էր դրված շրջանի դպրոցներում:

Հայրենական մեծ պատերազմի կենաց ու մահվան տարիներին նրանցից շատերը իրենց սաների հետ միասին մեկնեցին ռազմաճակատ: Սկզբում համառոտակի կբնութագրվի նախապատերազմյան շրջանում նրանց մանկավարժական գործունեությունը, այնուհետև ռազմաճակատներում ցուցաբերած սխրանքները, որից հետո խաղաղ շինարարության, դպրոցի ծաղկուն վերելքի տարիներին՝ հաղթական ավարտով վերադարձած վերոնշյալ և շատ ուսուցիչների գործունեությունը:

Արշակ Անանյանը սկզբնական կրթությունը ստացել է հայրենի Դաշքեսանի Վերի Քարար գյուղի յոթնամյա դպրոցում, այնուհետև ավարտել է Ստեփանակերտի երկաստիճան 9-ամյա դպրոցը և աշխատանքի անցել Կրկժան գյուղի առաջին աստիճանի (1-4-րդ դասարան) դպրոցում: 1929թ. տեղափոխվում է Մարտակերտի շրջան, որտեղ և ծավալվում է նրա մանկավարժական բեղմնավոր գործունեությունը: Մինչև Մեծ Հայրենականը Անանյանը աշխատել է Մարտակերի շրջանի Լյուլյասազ, Մաղավուզ, Ջանյաթաղ, Կուսապատ, Մադաղիս գյուղերում՝ ուսուցչի, ուսմասվարի և ապա դպրոցի դիրեկտորի (տնօրենի) պաշտոններում[245]:

1942թ. պատերազմի ծանր օրերին նա կամավոր մեկնեց ռազմաճակատ: Մարտական հերոսական ճանապարհ է անցել Անանյանը՝ Հյուսիսային Կովկասից մինչև Բեռլին: Մասնակցել է Օրջոնիկիձեի, Նովոռոսիյսկի, Արմավիրի, Թամանյան թերակղզու, Կերչի, Սիմֆերոպոլի, Սևաստոպոլի, Լյուբլինի, Վարշավայի, Պոզնանի, Ֆրանկֆուրտի, Բեռլինի համար մղվող ահեղ մարտերին: Չորս անգամ ծանր վիրավորվել է և ամեն անգամ ապաքինվելուց հետո նորից վերադարձել ռազմաճակատի առաջավոր գիծը: Հաղթանակի օրը՝ մայիսի 9-ը դիմավորեց Բեռլինում:

Պատերազմի թեժ մարտերի օրերին հակառակորդի կրակի տակ Արշակ Անանյանը մնում էր մանկավարժ, հրացանի հետ ամուր էր պահում գրիչը: Պահպանվում են նրա բազմաթիվ նամակները՝ հասցեագրված ուսուցիչներին, աշակերտներին, երիտասարդությանը, որոնցում կոչ է անում լավ սովորել, ամրապնդել թի-

կունքը, տիրապետել ռազմական գործին:

Ծանր մարտերից մեկում՝ Օրջոնիկիձե քաղաքի մոտ Անանյանը ոչնչացնում է հակառակորդի մեկ տանկ և երեք գնդացիր, որի համար պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով: Այդ նույն մարտում մեն-մենակ մարտի է բռնվում չորս հիտլերական զինվորների հետ: Անհավասար մարտում ճարպկորեն և արագ գործելով՝ Արշակը չորսին էլ ոչնչացնում է: Այս սխրագործության համար Անանյանը պարգևատրվում է «Արիության համար» մեդալով: Այդ մասին ակնարկ է տպվում ճակատային թերթում, որն Արշակի հրամանատարն ուղարկում է նրա կնոջը՝ Հայկուշին:

Արշակ Անանյանը ծառայում էր Մարտական կարմիր դրոշի, Կարմիր աստղի, Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշանակիր 89-րդ հայկական դիվիզիայի 390-րդ գնդում[246]:

1945թ. հունվարին Անանյանին հասցեագրած շնորհակալական նամակում դիվիզիայի հրամանատար, գեներալ Սաֆարյանը գրում է.

«Ընկ. Արշակ Գրիգորևիչ Անանյան: Այսօր թևակոխում ենք նոր տարին՝ 1945թ.: 1944թ. մեր Հայրենիքի և նրա զինված ուժերի համար եղավ մեծ հաղթանակների տարի: Հիտլերյան զավթիչներին մենք դուրս շպրտեցինք մեր սուրբ հողից և օգնության ձեռք մեկնեցինք Եվրոպայի ժողովուրդներին: Թշնամու դեմ մղած մարտերում դուք ձեզ դրսևորեցիք որպես Հայրենիքի քաջարի որդի»[247]:

Պատերազմը վերջացավ: Տուն վերադարձավ Արշակը: Նրա կուրծքը զարդարում էին Հայրենական պատերազմի, Կարմիր աստղի շքանշանները:

Նա նորից անցնում է մանկավարժական աշխատանքի: Աշխատում է Մարաղայի, այնուհետև՝ Մադաղիսի դպրոցներում՝ որպես դպրոցի տնօրեն: Այնուհետև ավելի քան 10 տարի գլխավորում է Մարտակերտի շրջանային ժողկրթության բաժինը: Այս տարիներին նա արժանացավ «Պատվո նշան» շքանշանի, «Աշխատանքային գերազանցիկության համար», «Աշխատանքային արիության համար» մեդալների և ճանաչվեց մարզի գերազանցիկ ուսուցիչ: Անանյանը հուշեր էր գրում իր մարտական ուղու, իր մարտական ընկերների մասին: Թոշակի անցնելուց հետո ձեռնամուխ եղավ «Ղարաբաղի ուսուցիչները Մեծ Հայրենականում» գիրքը պատրաստելուն: Այդ շնորհակալ գործը նա սկսեց, բայց մահը (1977թ.) խանգարեց այն ավարտելուն:

Նա գրել է. «Որպեսզի իսկական մադու հիշատակ թողնես, պետք է կարողանաս սիրել մարդկանց, աշխատել նրանց համար, մարտնչել հերոսաբար»:

Այդ սկզբունքով նա ապրեց մինչև իր կյանքի վերջը:

Մեծ և ուսանելի կյանքի ուղի է անցել 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ **Վաղարշակ Աղաբեկյանը:**

Նախապատերազմյան շրջանում ավարտում է Հաթերքի միջնակարգ դպրոցը (1937թ.) և որպես տարրական դպրոցի ուսուցիչ աշխատում Զագլիկ գյուղի առաջին աստիճանի դպրոցում: 1938-1939թթ. աշխատում է Հարությունագոմերի երկաստիճան (9-ամյա) դպրոցում որպես ուսմասվար, այնուհետև՝ տնօրեն:

1939թ. աշնանը զորակոչվում էԿարմիր բանակի շարքերը: Նոյեմբերին Աղաբեկյանը արդեն Բոբրույսկ քաղաքի ռազմական ուսումնարանի սան էր:

1942թ. հունիսին երիտասարդ Վաղարշակը իր կուրսանտ ընկերների հետ Բերեզինա գետի ափին մարտական առաջին «հանդիպումն» ունեցավ հիտլերյան հորդաների հետ: Անհավասար այս մարտում կուրսանտները սխրագործությամբ

մի քանի անգամ կասեցրին մինչև ատամները զինված թշնամու գրոհները: 1942թ. հոկտեմբերին Վաղարշակն արդեն որպես վաշտի հրամանատարի տեղակալ (84-րդ տանկային բրիգադի կազմում) գտնվում էր Վոլգայի ափին:

Կատաղի մարտեր էին մղվում Ստալինգրադի համար: Վաղարշակը գլխավորում էր 15 տանկից բաղկացած ստորաբաժանման ռազմական գործողությունները:

Ստալինգրադի համար մղված ճակատամարտերում ցուցաբերած խիզախության համար նա պարգևատրվեց սկզբում «Արիության համար» մեդալով, ապա՝ Կարմիր աստղի շքանշանով:

Այստեղ էլ վիրավորվում է Վաղարշակը և ուղարկվում Սարատովի հոսպիտալներից մեկը: Բայց նա հոսպիտալում երկար չի մնում: Վաղարշակ Աղաբեկյանի հետագա մարտական գործունեությունը ծավալվում է Կուրսկ-Օռյոլ աղեղի հանրահայտ ճակատամարտում: 1943թ. հոկտեմբերին, արդեն կապիտանի կոչումով, Վաղարշակ Աղաբեկյանը նշանակվում է տանկային 26-րդ գվարդիական հատուկ գնդի գումարտակներից մեկի հրամանատարի տեղակալ: Գունդը ճեղքում է թշնամու պաշտպանության գիծը: Մարտական առաջադրանքը պատվով կատարելու համար պարգևատրվում է Կարմիր աստղի երկրորդ շքանշանով:

Այնուհետև Աղաբեկյանի մարտական գործողությունների ասպատեզը դառնում է Մերձբալթիկան: Նրա տանկային գումարտակը մասնակցելով մերձբալթյան հանրապետությունների ազատագրմանը, մտավ պրուսական ռազմամոլների հողը:

1946թ. ապրիլին Վաղարշակ Աղաբեկյանը հայրենի գյուղ վերադարձավ՝ կուրծքը 4 մարտական շքանշաններով ու տասից ավելի մեդալներով զարդարված:

1946-1951թթ. Աղաբեկյանը սովորում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում: Ավարտելուց հետո աշխատանքի է անցնում Հաթերքում, ապա՝ Հարությունագոմերում: 1954թ. մինչև 1964թ. Աղաբեկյանը Չափարի յոթնամյա, ապա Հաթերքի միջնակարգ դպրոցների տնօրենն էր:

1964թ. Աղաբեկյանը նշանակվում է Մարտակերտի շրջժողկրթբաժվար:

1966-1969թթ.՝ ստանձնում է Մարտակերտի գիշերօթիկ դպրոցի տնօրենի պաշտոնը, որից հետո տեղափոխվում Հաթերք՝ որպես դպրոցի տնօրեն:

1979թ. անցնում է կենսաթոշակի և շարունակում իր գիտամանկավարժական ստեղծագործական աշխատանքը: Հեղինակ է չորս տասնյակից ավելի գիտական հոդվածների[248]:

Ուսուցիչն է հանդիսանում դպրոցի կենտրոնական դեմքը, նա է ապահովում ուսումնադաստիարակչական աշխատանքների գաղափարական- քաղաքական ուղղվածությունը, բարձր մակարդակն ու որակը: Քննարկվող ժամանակաշրջանում (1930-1940թթ.) Մարտակերտի շրջանի դպրոցներում՝ այդ սկզբունքով աշխատող նվիրյալ ուսուցիչներից է **Աբգար Աթաջանյանը**: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի Ղազանչի գյուղի առաջին աստիճանի դպրոցում, այնուհետև ավարտել է Զանյաթաղի յոթնամյա դպրոցը (1937թ.), ուսումը շարունակել Շուշիի մանկավարժական ուսումնարանում և ավարտելուց հետո աշխատել հայրենի գյուղի, Դրմբոնի յոթնամյա դպրոցներում՝ որպես ուսուցիչ, ուսմասվար և տնօրեն: Միաժամանակ հեռակա կարգով ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը:

1939թ. հոկտեմբերին զորակոչվել է Կարմիր բանակ: Ծառայությունը սկսել է տանկային զորամասում: Այդ զորամասը 1941թ. հոկտեմբերին մասնակցում է ստալինգրադյան հերոսական ճակատամարտին, այնուհետև Երկրորդ բելոռուսական ռազմաճակատում հարձակողական գործողություններով հասնում է մինչև Գերմանիա: Իր հուշերում[249] Աթաջանյանը գրում է. «1942թ. մարտ ամսին 7-րդ տանկային կորպուսը, որի հրամանատարն էր գնդապետ Ռոտմիստրովը, ծանր մարտեր էր մղում Ռժև քաղաքի մատույցներում: Հակառակորդը մեր տանկային գումարտակի և դեսանտայինների դեմ դուրս բերեց 100-ից ավելի տանկ, մեծ քանակությամբ ինքնագնաց հրանոթներ և նպատակ ուներ գրավելու Գրեմյաչի գյուղը: Գումարտակը մի քանի անգամ կասեցրեց հակառակորդի գրոհները՝ նրան պատճառելով մարտական տեխնիկայի և կենդանի ուժի մեծ կորուստներ: Հակառակորդի գերազանցող ուժերը դիմեցին նոր մանևրների, հրաժարվելով ճակատային գրոհներից, փորձեր արեցին շրջապատելու մեր գումարտակը: Հակառակորդի մտադրությունը չիրականացավ: Այդ մարտերում իր ստորաբաժանումը վճռական հարված հասցրեց հակառակորդին և հնարավորություն տվեց մեր զորամասերին անցնելու հարձակման»:

Պատերազմից հետո Աթաջանյանը շարունակեց ծառայությունը մինչև 1958թ.:

1958թ. Աթաջանյանը զորացրվում է և մշտական բնակություն հաստատում Ստեփանակերտ քաղաքում: Այստեղ շարունակում է աշխատել ժողովրդական կրթության համակարգում: 1963թ. մինչև 1968թ. ղեկավարել է ԴՕՍԱԱՓ-ի մարզային կոմիտեն:

1975-1978թթ. աշխատել է ժողկրթության մարզային բաժնում որպես նախնական զինվորական պատրաստության մեթոդիստ: Մեծ աշխատանք է ծավալել դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում: 1978թ. աշխատել է Ստեփանակերտի օրինակելի ավտոդպրոցում որպես դիրեկտորի (տնօրենի)՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ: Աշխատել է նաև մի շարք դպրոցներում որպես զինղեկ:

Հայրենական պատերազմում ցուցաբերած խիզախության համար Աթաջանյանը պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին և 2-րդ աստիճանի, Կարմիր աստղի շքանշաններով, «Մարտական ծառայությունների համար» և 12 այլ մեդալներով: Նա արժանացել է «Հանրապետության ժողովրդական կրթության գերազանցիկ» կրծքանշանի:

Հաթերքի երկաստիճան դպրոցի շրջանավարտ **Հայկ Այվազյանը** 1937թ. սեպտեմբերի 1-ից անցնում է մանկավարժական աշխատանքի՝ դասավանդում հայրենի գյուղի և Կոճողոտի դպրոցներում՝ որպես ուսուցիչ, ուսմասվար: Աշխատանքային գործունեության տարիներին պատշաճ մակարդակով է կազմակերպել մատաղ սերնդի կրթադաստիարակչական աշխատանքները և իր սկզբունքայնությամբ, պարտաճանաչությամբ, աշխատասիրությամբ ու մարդկային լավագույն հատկանիշներով անձնական օրինակ է եղել թե մանկավարժական կոլեկտիվի և թե աշակերտների համար:

1939թ. աշնանը զորակոչվում է Կարմիր բանակ: Զինվորական ծառայությունը անց է կացնում Ուկրաինայում: 1940թ. մասնակցում է Բեսարաբիայի ազատագրական կամպանիային: Հայկ Այվազյանը շատերի նման սպասում էր, որ շուտով լրանալու է զինվորական պարտադիր ծառայության ժամկետը և տուն կվերադառնա: Սակայն նրա երազանքը չիրականացվեց: 1941թ. սկսվեց պատերազմը:

Հայկը պատերազմական գործողությունների մեջ էր: Կարմիր բանակի զորամասերը, այդ թվում և այն զորամասը, որում ծառայում էր Հայկը, չկարողացան լուրջ դիմադրություն ցույց տալ հիտլերականների գերազանցող ուժերին: Զորամասն ընկավ շրջափակման մեջ, և շատերի նման գերի ընկավ նաև Հայկը:

1944թ., երբ մեր բանակը սկսեց իրականացնել իր ազատագրական առաքելությունը, Այվազյանին մի խումբ ընկերների հետ հաջողվում է փախչել գերությունից և միանալ մեր զորքերին: Նա նորից սովետական զինված ուժերի հետ մարտնչում է հիտլերականների դեմ, մասնակցում Եվրոպայի ժողովուրդների ազատագրման պատմական առաքելությանը:

1945թ. մայիսին Այվազյանը ծանր վիրավորվում է: Հոսպիտալում երկար ժամանակ բուժվելուց հետո, որպես առաջին կարգի հաշմանդամ, զորացրվում է և վերադառնում հայրենի գյուղ:

1945թ. ընդունվում է Բաքվի Կիրովի անվան պետական համալսարանը և այն կարմիր դիպլոմով ավարտում 1950թ.:

1950թ. մինչև 1961թ. աշխատել է Բաքվի տարբեր դպրոցներում ուսուցչի, ապա՝ ուսմասվարի պաշտոնում:

1961թ. մինչև 1980թ. աշխատել է Բաքվում հրատարակվող «Կոմունիստ» (հայերեն) թերթի խմբագրությունում՝ գիտության և կրթության բաժնի վարիչի պաշտոնում: Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով և մեդալներով: ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ էր, պարգևատրվել է այդ միության պատվոգրով[250]:

Առաջաձորի դպրոցի շրջանավարտ **Աշոտ Ազատյանը** 1939թ. հոկտեմբերին զորակոչվել է Կարմիր բանակ: Զինվորական ծառայությունն սկսել է արևմտյան սահմանամերձ քաղաքներից մեկում, որտեղ տեղակայված էր Կատովսկու անվան 3-րդ հեծելազորային դիվիզիան: Աշոտը ծառայել է 27-րդ հատուկ հրանոթային գումարտակում: Պատերազմի առաջին օրերից մարտնչել է մինչև ատամները զինված գերմանական բանակի դեմ: Ազատյանն էլ շատերի նման ճաշակել է նահանջի դառնությունները: Մարտերից մեկում վիրավորվելուց և դաշտային հոսպիտալում ապաքինվելուց հետո Աշոտը նորից վերադառնում է ռազմաճակատ: 1942թ. հոկտեմբերին նրան գործուղում են Հյուսիս-կովկասյան ռազմաճակատի 667-րդ հրանոթային գունդ, որը տեղակայված էր Արմավիր քաղաքի արվարձաններում: 1942թ. նոյեմբերի վերջին կորպուսն անցավ հակահարձակման, ազատագրեց Ռասվետ ավանը: Այս մարտում ցուցաբերած խիզախության համար ջոկի հրամանատար Ազատյանը պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով:

Ազատյանը հաղթանակը դիմավորեց ավստրիական Լինցե քաղաքում: Պատերազմի ավարտից հետո էլ գվարդիայի ավագ սերժանտ Ազատյանը մինչև 1947թ. ծառայել է բանակում: Զորացրվելուց հետո նա ընդունվել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի բնագիտա-աշխարհագրական ֆակուլտետը և այն ավարտել 1949թ.: 1949-1950 ուստարում իր մասնագիտությամբ աշխատել է Մարտակերտի շրջանի Վանքի միջնակարգ դպրոցում: 1950թ. տեղափոխվել է Ստեփանակերտ և հետագա տարիներին աշխատել քաղաքի երեկոյան դպրոցում:

1952-1960թթ. կատարել է պատասխանատու աշխատանքներ ներքին գործերի մարզային վարչությունում, կուսակցության Ստեփանակերտի շրջանային կոմիտեում: 1960-1973թթ. աշխատել է որպես ժողովրդական կրթության աշխատող-

ների արհմիության մարզային կոմիտեի նախագահ: 1973-1983թթ. աշխատում է կուսակցության մարզային կոմիտեում, սկզբում որպես պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի հրահանգիչ, այնուհետև՝ կուսակցության մարզկոմի քաղլուսավորության տան վարիչ: 1983թ. անցել է անհատական թոշակի:

Պատերազմում ցուցաբերած խիզախության համար Ազատյանը պարգևատրվել է Կարմիր աստղի, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով, «Արիության համար» և այլ մեդալներով: Խաղաղ պայմաններում երկարատև անբասիր աշխատանքի համար Ազատյանը պարգևատրվել է ԽՍՀՄ արհմիության աշխատողների և ժողովրդական կրթության գերազանցիկի կրծքանշաններով[251]:

Վերոնշյալ դպրոցի շրջանավարտ **Ռուբեն Անդրեասյանը** գերազանց գնահատականներով ավարտելով Շուշիի մանկավարժական ուսումնարանը (1936թ.) մանկավարժական աշխատանքի է անցել հայրենի գյուղի, Վանքի միջնակարգ դպրոցներում: Նա իր գործունեության տարիներին ծավալել է կազմակերպչական աշխատանքներ: Որպես տարրական դասարանների ուսուցիչների մեթոդմիավորման հանձնաժողովի նախագահ, կազմակերպում էր փոխադարձ դասալսումներ, մեթոդական օգնություն ցուցաբերում սկսնակ ուսուցիչներին՝ նպատակ ունենալով պատշաճ մակարդակի վրա դնել տարրական դասարաններում առարկաների դասավանդման դրվածքը: Միաժամանակ եղել է դպրոցի տնօրենի տեղակալ:

1940թ. Ռուբենը կամավոր մեկնում է բանակ: Զինվորական ծառայությունն սկսում է Օսիպովիչյան ռազմական հետևակային ուսումնարանում: 1941թ. օգոստոսին ԽՍՀՄ զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատարի հրամանով ուսումնարանը տեղափոխում է Ստալինգրադի մարզի Կամըշին քաղաք: Կուրսանտ Ռուբեն Անդրեասյանը 1942թ. հունվարին ստանում է երկրորդ կարգի զինտեխնիկի մասնագիտություն և սպայական կոչում: Շուտով նրան նշանակում են 224-րդ տանկային բրիգադի «Տ-34» տանկի հրամանատար: Բրիգադը շուտով տեղափոխվում է Հյուսիսային Կովկաս՝ կարևոր դեր խաղալով Կուբանի, Կրասնոդարի, ապա Թամանյան թերակղզու ազատագրման գործում: 1943թ. նոյեմբերին Ռուբեն Հակոբովիչը նշանակվում է 339-րդ հրածգային դիվիզիայի հրածգային գումարտակի հրամանատար: Ղրիմի ազատագրման համար մղված մարտերում գումարտակի հրամանատար Ռուբեն Անդրեասյանը Սապուն լեռան տակ վիրավորվում է և տեղափոխվում հոսպիտալ: Ապաքինվելուց հետո նորից վերադառնում է իր զորամասը: Այս անգամ զորամասը երկրորդ Բելոռուսական ռազմաճակատի կազմում մասնակցում է Բելոռուսիայի, Լեհաստանի, Արևելյան Պրուսիայի ազատագրական մարտերին և պատերազմը հաղթանակով ավարտում Բեռլինում:

Պատերազմի տարիներին Ռուբեն Հակոբովիչը ցուցաբերել է արցախցուն վայել ռազմական տոկունություն, հրամանատարական հնարամտություն և շնորհք, անձնվիրաբար կռվելու լավագույն օրինակ: Նա պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին և 2-րդ աստիճանի և Կարմիր աստղի երկու շքանշաններով: Ռուբեն Անդրեասյանը ծառայությունը շարունակեց մինչև 1961թ. այնուհետև աշխատանքի անցավ ՀԽՍՀ ավտոմոբիլային տրանսպորտի նախարարությունում՝ որպես ավագ ինժեներ: Այստեղ աշխատեց մինչև 1972թ., որից հետո անցավ մանկավարժական աշխատանքի՝ նշանակվելով Երևան քաղաքի 138-րդ դպրոցի տնօրեն:

Ռուբեն Անդրեասյանը պարգևատրվել է նաև Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով և «Աշխատանքի վետերան» մեդալով[252]:

Մարտակերտի շրջկենտրոնի միջնակարգ դպրոցի շրջանավարտ **Արտեմ Ավագյանը**՝ ավարտելով Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մաթեմատիկայի, ֆիզիկայի և մեխանիկայի ֆակուլտետը (1932-1937թթ.), վերադառնում է հայրենի Մարաղա գյուղ, որպես մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ աշխատում տեղի յոթնամյա դպրոցում: Կարճատև մանկավարժական գործունեության տարիներին (1937-1939թթ.) Ա.Ավագյանը ձեռնամուխ է եղել մի չափազանց աշխատատար գործի իրականացմանը՝ մաթեմատիկայի և ֆիզիկայի նոր կահավորված կաբինետի ստեղծմանն ու աշակերտական «Մաթեմատիկ-ֆիզիկոս» խորագրով պատի թերթի հրատարակմանը: Միաժամանակ ղեկավարում էր բնական գիտությունների աշակերտական խմբակը, որի նպատակն էր աշակերտներին տալ խոր և կայուն գիտելիքներ մաթեմատիկայից և ֆիզիկայից:

1939թ. աշնանը զորակոչվում է Կարմիր բանակ: Նոր էր ավարտել զինվորական ծառայությունը և ապրում էր հայրենի տուն վերադառնալու փափագով, երբ բռնկվեց Հայրենական մեծ պատերազմը:

Ռազմաճակատում, որպես կապավոր զինվոր, Արտեմ Ավագյանն իր պարտականությունները կատարել է պատասխանատվության բարձր զգացումով, ղարաբաղցու վեհ արժանապատվությամբ: Թշնամու կրակի տակ կյանքը վտանգի ենթարկելով՝ շատ անգամ ապահովել է կապը մեր զորամասերի միջև: Ավագյանը առանձնապես աչքի է ընկել Ստալինգրադի համար մղվող մարտերում: Անձնական արիության համար նա պարգևատրվել է «Մարտական ծառայությունների համար» մեդալով: Ավագյանի մարտական ուղին ձգվում է մինչև Չեխոսլովակիա: Հաղթանակը դիմավորում է Պրագայում: Նրա կուրծքը զարդարում էին Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանը և բազմաթիվ մեդալներ:

1945թ. աշնանը զորացրվել և վերադարձել է հայրենի Մարաղա գյուղ ու շարունակ մանկավարժական գործունեությունը Մարաղայի, Չայլվի, Մարգուշևանի դպրոցներում: Միաժամանակ վարել է ուսմասվարի, տնօրենի պաշտոններ[253]:

Մարտակերտի կրթության շրջանային բաժնի արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ շրջանի ուսուցիչների օգոստոսյան խորհրդակցություններում բազմիցս բարձր են գնահատվել նրա ղեկավարած դպրոցների մանկավարժական կոլեկտիվների կատարած աշխատանքները:

Մարտակերտի շրջանի Չայլու գյուղի միջնակարգ դպրոցի շրջանավարտ **Եպրաքսյա Բաբայանը** (նրա մաթեմատիկայի ուսուցիչն էր Արտեմ Ավագյանը), որի 18 տարին նոր էր լրացել, կամավոր մեկնում է Կարմիր բանակ՝ 1940թ. հոկտեմբերին: Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերից նա ռազմաճակատում կատարում է կամավորի դժվարին և պատասխանատու պարտականությունները: Նա իր մարտական մկրտությունը ստացավ Հյուսիսային Կովկասում:

Չգիտեր ինչ բան է վախը: Հրամանատարները ինչ-որ չափով ցանկանում էին զսպել նրա արտակարգ ակտիվ գործողությունները կրակի առաջին գծում, բայց նա միշտ խնդրում էր, որ իր նկատմամբ ոչ մի անհանգստություն չցուցաբերեն, թե չէ, կատակով ասում էր նա, «ի՞նչ կմտածեն կանանց մասին տղամարդիկ»:

Նա բազմիցս արժանացել է Գերագույն գլխավոր հրամանատարի գրավոր շնորհակալագրերին: Նրա մարտական ուղին ձգվել է Հյուսիսային Կովկասից

մինչև Բեռլին, որտեղ նա տոնել է հաղթանակը՝ իր սիրելի ուսուցիչ Արտեմ Ավագյանի հետ:

Պարգևատրվել է «Մարտական ծառայությունների համար», «Կովկասի պաշտպանության համար» և մի շարք այլ մեդալներով: Նա առանձնապես բարձր էր գնահատում ռազմաճակատում ստացած «Գերազանցիկ կապավորի» կրծքանշանը: Վերադարձավ հայրենի գյուղ զինվորական ուսադիրներով: Այդ ուսադիրներով աշխատում էր Չայլվի դպրոցում՝ որպես ավագ ջոկատավար: Այնուհետև ավարտեց Երևանի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը և հայոց լեզու և գրականություն էր դասավանդում Չայլվի միջնակարգ դպրոցում[254]:

Լավ պատկերացնելով խաղաղ ժամանակներում հանրակրթական դպրոցի զարգացման հիմնահարցերը, նվիրյալ ուսուցչուհին իր երկարամյա մանկավարժական գործունեության տարիներին (1946-1986թթ.) ձգտել է պատշաճ մակարդակի վրա դնել հայոց լեզվի, գրականության դասավանդման դրվածքը: Դպրոցում աշխատելու տարիներին Ե.Բաբայանը ձեռնամուխ է եղել մի չափազանց աշխատատար գործի իրականացմանը՝ հայոց լեզվի և գրականության նոր կահավորված կաբինետի ստեղծմանն ու «Դպրություն» գրական պատի թերթի հրատարակմանը: Նրա ղեկավարած խմբակի անդամներից շատերն այսօր հայոց լեզվի և գրականության լավագույն ուսուցիչներ են և աշխատում են մեր հանրապետության դպրոցներում:

Յուրաքանչյուր ուսուցիչ ունի իր ստեղծագործական լաբորատորիան՝ դպրոցը, գործունեության մշտական վայրը: Նա ամեն օր որոնումներ է կատարում և ավելի խորը թափանցում իր սաների ներաշխարհը ու մտածում, թե ինչ և ինչպես անել, որպեսզի սովորողների և ուսուցումը, և դաստիարակությունը արդյունավետ լինի: Դա ստեղծագործաբար աշխատող ուսուցչի հատկություններից մեկն է:

Խոսքը վերաբերում է Մարտակերտի շրջկենտրոնի 7-ամյա դպրոցի, այնուհետև՝ Շուշիի մանկավարժական ուսումնարանի շրջանավարտ **Սամսոն Բաղունցի** մանկավարժական բեղուն գործունեության՝ նախապատերազմյան և հետպատերազմյան շրջանին: Առաջին կարգի դիպլոմով ավարտելով ուսումնարանը (1932-1934 ուստարում), նշանակվել է շրջանի Ն.Հոռաթաղի դպրոցի ուսուցիչ, այնուհետև (1934թ.)՝ վարիչ: 1935 թվականից աշխատել է Մարտակերտի միջնակարգ դպրոցում: Պատերազմի սկզբից ռազմաճակատում էր: Մասնակցել է Ղրիմի համար մղված ծանր մարտերին: Այդ մարտերից մեկում էլ Բաղունցը վիրավորվում է: Օրջոնիկիձե քաղաքի հոսպիտալում բուժվելուց հետո նորից ռազմաճակատի առաջին գծում է: Այս անգամ նա մարտնչում է Կուրսկի և Բելգորոդի համար մղվող մարտերում: Կուրսկի տակ ծանր վիրավորվում է և որպես պատերազմի հաշմանդամ՝ զորացրվում: Վերադառնում և շարունակում է աշխատել հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես պատմության և ռազմագիտության ուսուցիչ:

Մարտական ծառայությունների համար Բաղունցը պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով, «Մարտական ծառայությունների համար» և մի շարք այլ մեդալներով:

Պատերազմի տարիներին Ս.Բաղունցը՝ որպես ճակատային վիրավոր ուսուցիչ, թիկունքում մնացած ուսուցիչների հետ կրկնապատկելով իրենց ուժերը, միասին շարունակեց հասունացող սերնդի ուսուցման ու ռազմահայրենասիրական

դաստիարակության շնորհակալ գործը: Որպես պատմության և ռազմագիտության ուսուցիչ, նա իր սաներին և սկսնակ ուսուցիչներին դաստիարակում էր իր անձնական օրինակով, կոչ անում ուսման հետ միասին նաև հանրօգուտ աշխատանք կատարել (մետաղի ջարդոնի հավաքում, օգնություն ճակատայինների երեխաներին և այլն):

Վաստակաշատ մանկավարժը 70-ական թվականների սկզբներին անցել է կենսաթոշակի, սակայն շարունակել ակտիվ մասնակցություն ունենալ մատաղ սերնդի դաստիարակության գործին, մանավանդ Արցախում ծավալված ազգային-ազատագրական շարժման օրերին[255]:

Մարտակերտի շրջկենտրոնի միջնակարգ դպրոցի գերազանցիկ աշակերտ **Սուրեն Գասպարյանը** նոր էր հանձնել 10-րդ դասարանի ավարտական քննությունները, երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Նա կամավոր մեկնում է ռազմաճակատ և մասնակցում Մոսկվայի պաշտպանության մարտերին: Ս.Գասպարյանը երկու անգամ վիրավորվել է ռազմադաշտում, ապաքինվել ու նորից վերադարձել ռազմի դաշտ: Կատաղի մարտերում Գասպարյանը նորից ծանր վիրավորվում է և բուժվելուց հետո, որպես հաշմանդամ, վերադառնում Մարտակերտ և նախապատրաստվում ուսումը շարունակելու Բաքվի մանկավարժական ինստիտուտի քիմբիոլոգիական ֆակուլտետում:

1949-1950 ուսումնական տարում Ս.Գասպարյանը գերազանց գնահատականներով ավարտում է ինստիտուտը և աշխատանքի անցնում Մարտակերտի միջնակարգ դպրոցում՝ որպես քիմիայի և բիոլոգիայի ուսուցիչ:

Իր երկարամյա մանկավարժական գործունեության տարիներին (1956-1976թթ.) ճանաչված մանկավարժը եղել է դպրոցի ուսումնական մասի վարիչ, փոխտնօրեն, շրջանի քիմիա-բիոլոգիայի ուսուցիչների մեթոդմիավորման հանձնաժողովի նախագահ և այդ ոլորտում բեղուն գործունեություն ծավալել: Նրա նախաձեռնությամբ դպրոցում ստեղծվել են քիմիայի և բիոլոգիայի, ռազմագիտության կահավորված կաբինետներ:

Ս.Գասպարյանը իր աշխատանքում հավասարապես մեծ ուշադրություն էր դարձնում աշակերտների ուսման և դաստիարակության խնդիրներին, կարևորում սովորողների աշխատանքային, գեղագիտական, ռազմահայրենասիրական, ֆիզիկական և բարոյական դաստիարակության ներդաշնակությանը: Ասածներին իմաստավորելու կարողության, խոր մտքի ու համոզմունքի տեր մանկավարժը երկար կմնա սերունդների հիշողության մեջ որպես կյանքին ու աշխատանքին անմնացորդ նվիրվածության օրինակ:

Հայրենական պատերազմում ցուցաբերած սխրանքների, մանկավարժական գործունեության տարիներին ծավալած օրինակելի աշխատանքի համար Ս.Գասպարյանը պարգևատրվել է «Պատվո նշան» և Հոկտեմբերյան հեղափոխության, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով, «Լուսավորության գերազանցիկ» շքանշանով, բազմաթիվ մեդալներով և գովասանագրերով:

Հետաքրքիր ու բովանդակալից կյանքի ուղի է անցել Կուսապատի դպրոցի շրջանավարտ **Արամ Եղիազարյանը**[256]: Ավարտելով հայրենի գյուղի առաջին աստիճանի դպրոցը(1922թ.), ուսումը շարունակում է Մարտակերտի շրջկենտրոնի 7-ամյա դպրոցում, որն ավարտելուց հետո նշանակվում է Կուսապատ գյուղի դպրոցի տարրական դասարանների ուսուցիչ: 3 տարի Կուսապատի դպրոցում աշխատելուց հետո 1930թ. ընդունվում է Երևանի մանկավարժական տեխնիկումը:

1933թ. նա Երևանի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետի ուսանող էր: Ինստիտուտն ավարտելուց հետո Արամը պատմություն է դասավանդել Նոյեմբերյանի և Շամշադինի շրջանների դպրոցներում:

Մեծ Հայրենականի առաջին իսկ օրերին կամավոր մեկնում է ռազմաճակատ, մասնակցում է Հյուսիսային Կովկասի, Ռումինիայի, Չեխոսլովակիայի, Հունգարիայի ազատագրման համար մղված մարտերին:

Մարտերում ցուցաբերած անձնական խիզախության համար Եղիազարյանը պարգևատրվել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով, «Արիության համար» և մի շարք այլ մեդալներով: Պատերազմի հաղթական ավարտից հետո վերադառնում է Երևան և աշխատանքի անցնում Կիրովյան շրջանի ժողկրթբաժնում՝ որպես դպրոցական տեսուչ: Այնուհետև շուրջ 40 տարի Երևանում վարում է միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնը:

Անբասիր աշխատանքի համար Եղիազարյանը բազմիցս արժանացել է Երքաղժողկրթբաժնի, Հայաստանի լուսավորության նախարարության և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրերի:

30-ական թվականներին Մարտակերտի շրջանի մի շարք դպրոցների (Կուսապատի, Չայլվի, Թալիշի, Սեյսուլանի, Հաթերքի, Ն.Հոռաթաղի և այլն) ճանաչված ուսուցիչներ Ա.Աթաջանյանը, Ա.Անանյանը, Ա.Բաբայանը, Ա.Բալայանը, Վ.Գրիգորյանը և ուրիշներ իրենց ուսումնական աշխատանքի կազմակերպման մեթոդներով ու ձևերով, դասը արդյունավետ կազմակերպելու ուսանելի փորձով օրինակ են ծառայել մյուս դպրոցների մանկավարժական կոլեկտիվների համար:

Սեյսուլանի 7-ամյա դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ **Աշոտ Խաչատրյանը** մասնագիտական կրթությունը ստացել է Շուշիի մանկավարժական ուսումնարանում, այնուհետև՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի հեռակա բաժնում: 1932-1940 թվականներին նա շրջանի ճանաչված մանկավարժ էր, մեծ հարգանք էր վայելում կոլեկտիվում ու բազմիցս շրջանային մանկավարժական խորհրդակցություններում արժանանում գովասանքի:

1940թ. հունվարին զորակոչվել է բանակ: Ավարտելով կրտսեր հրամանատարների դպրոցը, ստացել է սերժանտի կոչում և շարունակել ծառայությունը Լենինականում, 13-րդ հեծելազորային գնդում:

Պատերազմի սկզբին գերմանացիները մտադիր էին Իրանի տերիտորիան վերածել Սովետական Միության վրա հարձակվելու պլացդարմի: Սովետական կառավարության որոշմամբ Իրանում գերմանացիների պլացդարմ ստեղծելու պլանը կանխելու համար 1941թ. մեր զորքերը մտան Իրան: Գունդը, որտեղ ծառայում էր Աշոտ Խաչատրյանը, Իրան մտավ1941թ.օգոստոսին: Իրանի մի շարք քաղաքներում Խաչատրյանը ծառայել է սովետական պարետատանը՝ որպես պարետի օգնական ու թարգմանիչ: Օրինակելի ծառայության համար պարգևատրվել է «Մարտական ծառայությունների համար» և «Կովկասի պաշտպանության համար» մեդալներով: Ծառայության տարիներին նա ընդունվում է կոմկուսի շարքերը:

1945թ. դեկտեմբերին Աշոտ Խաչատրյանը զորացվում է և շարունակում մանկավարժական գործունեությունը: Աշխատում է շրջանի մի քանի գյուղերում, այնուհետև հիմնավորվում հայրենի գյուղում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար, հետագայում՝ երկար տարիներ դպրոցի տնօրեն:

Եղել է գյուղի հասարակական-քաղաքական կյանքի ակտիվ կազմակերպիչ, վայելել համագյուղացիների համակրանքն ու հարգանքը: Ճանաչվել է շրջանի հմուտ և հեղինակավոր մանկավարժներից մեկը:

Վերոնշյալ տասնամյակում (1930-1940թթ.) Մարտակերտի շրջանի նվիրյալ մանկավարժներից էր **Պատվական Խալափյանը:** Գերազանց գնահատականներով ավարտում է հայրենի՝ Թալիշի գյուղի 7-ամյա դպրոցը (1931թ.), այնուհետև՝ Շուշիի մանկավարժական ուսումնարանը (1935թ.) և անցնում ուսուցչական աշխատանքի: Այստեղ էլ՝ իր ջանասեր աշխատանքի, աշակերտների նկատմամբ մանկավարժական ճիշտ մոտեցմամբ նա արժանանում է թե մանկավարժական, թե աշակերտական կոլեկտիվների սերն ու համակրանքին:

1939թ. Պ.Խալափյանը զորակոչվեց զինվորական ծառայության:

1941թ. զինվորական ծառայությունն ավարտած Պատվականը օրեր էր հաշվում, որ հայրենի տուն վերադառնա, սակայն այդ բախտին չարժանացավ:

Սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Դառն փորձությունների ենթարկվելով, մի քանի անգամ շրջափակման վտանգից ելք գտնելով, Պատվականն իր զորամասի հետ բռնում է նահանջի ճամփան մինչև 1942թ. օգոստոսը: Այնուհետև զորամասը, ուր ծառայում էր արցախցի զինվորը, նախաձեռնությունն իր ձեռքը վերցնելով անցնում է հակագրոհի: Մարտերից մեկի ժամանակ շարքային Պատվական Խալափյանը ծանր վիրավորվում է և ուղարկվում հոսպիտալ: Ապաքինվելուց հետո գործուղվում է ռազմական ուսումնարանում սովորելու: 1943թ. լեյտենանտի կոչումով ավարտելով ուսումնարանը, Պատվականը նորից ուղարկվում է ռազմաճակատ:

Սկսվում է Պատվական Խալափյանի մարտական գործողությունների երկրորդ շրջանը՝ այս անգամ արդեն որպես գնդացրային վաշտի հրամանատար: Խալափյանն իր վաշտի հետ բազմաթիվ ճակատագրական մարտեր է մղել գերմանական հորդաների դեմ և միշտ բաց ճակատով դուրս եկել փորձություններից, ամեն անգամ արժանանալով հրամանատարների գովասանքին: Մարտերից մեկում նորից վիրավորվում է, նույնիսկ ենթարկվում կոնտուզիայի: Ապաքինվելուց հետո կրկին վերադառնում է գործող բանակ:

1945թ. աշնանը զորացրվում է, կուրծքը Կարմիր աստղի շքանշանով ու մարտական մեդալներով զարդարված տուն վերադառնում և նորից անցնում ուսուցչական աշխատանքի[257]:

Պատվական Խալափյանը շուրջ 30 տարի աշխատում է Մարաղայի միջնակարգ դպրոցում՝ որպես ուսուցիչ, ուսմասվար, դպրոցի կուսկազմակերպության քարտուղար:

Մանկավարժական գործունեության տարիներին ծավալած բեղուն գործունեության ու անբասիր աշխատանքի համար նա բազմիցս պարգևատրվել է շրջանային կրթության բաժնի գովասանագրերով:

Կյանքի ուսանելի ուղի է անցել նաև Մարտակերտի շրջանի Կուսապատի դպրոցի շրջանավարտ **Բագրատ Հայրապետյանը:** Պատերազմի նախօրյակին նա զորակոչվել է Կարմիր բանակ: Ծառայությունը սկսել է Օրյոլի մարզի Ելեց քաղաքում, 137-րդ տանկային գնդում: Պատերազմն սկսվելուն պես գունդը ուղարկվում է ռազմաճակատ: Բ.Հայրապետյանը մասնակցում է Վիտեբսկ քաղաքի համար մղվող մարտերին: 1941թ. հոկտեմբերին գունդը ընկնում է շրջափակման մեջ և ծանր մարտեր մղում շրջափակումից դուրս գալու համար: Այդ մարտերից մե-

կում Ռժև քաղաքի մոտ Հայրապետյանը ծանր վիրավորվում է և մնում թշնամու թիկունքում: Երկար թափառումներից և տանջանքներից հետո տեղի հայրենասերների օգնությամբ 1943թ. հունվարին ճեղքում է ճակատային գիծը և միանում մեր զորքերին: Այնուհետև ծառայությունը շարունակում է Հյուսիս կովկասյան ռազմաճակատում:

Այդ մարտերում Բագրատը վիրավորվում է երկրորդ անգամ: Ապաքինվելուց հետո վերադառնում է ռազմաճակատ՝ այս անգամ Կերչում՝ 89-րդ հայկական դիվիզիայի կազմում[258]: Նա գնդացրորդ էր: Սևաստոպոլի համար մղված մարտերում Բագրատը ցուցաբերած հերոսական գործողությունների համար պարգևատրվում է Փառքի 3-րդ աստիճանի շքանշանով և «Արիության համար» մեդալով:

Օդերի պլացդարմում մղված կատաղի մարտերում Հայրապետյանը ցուցաբերում է արցախցուն հատուկ արիություն և պարգևատրվում Հայրենական պատերազմի 1-ին և 2-րդ աստիճանի շքանշաններով: Լեհական կառավարությունը բարձր է գնահատում հայ քաջորդու մարտական ծառայությունները՝ նրան պարգևատրվելով լեհական «Օդեր-նեյսի և Բալթիկայի համար» շքանշանով:

Հայրապետյանը շնորհակալագրեր է ստացել նաև Կերչի, Սևաստոպոլի, Վարշավայի, Կալիշի, Օյուլիխաուի, Բեռլինի և մի շարք այլ քաղաքների ազատագրման համար մղված մարտերին մասնակցելու համար:

Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո Բագրատ Հայրապետյանը մարտական շքանշաններով ու մեդալներով պարգևատրված վերադառնում է հայրենի օջախ և ուսումը շարունակում Երևանի պետական համալսարանի աշխարհագրական ֆակուլտետում: Ավարտելուց հետո աշխատում է Հայաստանի Կոտայքի շրջանի դպրոցներում, իսկ 1958 թվականից որպես ուսուցիչ, փոխտնօրեն աշխատում հայրենի Ն.Հոռաթաղի միջնակարգ դպրոցում: Նվիրյալ մանկավարժ Բ.Հայրապետյանը, մանկավարժական կոլեկտիվի կողմից հարգված, հեղինակություն վայելած անձնավորություն էր և ուսանելի օրինակ էր ծառայում սկսնակ ուսուցիչների համար:

Ուսումնասիրություններից պարզվում է, որ միայն վերոնշյալ մանկավարժներն ու սաները չեն, ու Հայրենական պատերազմի ռազմաճակատներում ցուցաբերել են սխրանքներ և հաղթանակով վերադարձել ու նվիրվել մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության պատվավոր գործին: Նրանց հետ միասին՝ պարգևատրված շքանշաններով ու մեդալներով, վերադարձել են հարյուրից ավելի ուսուցիչներ ու աշակերտներ և աշխատել հանրակրթական դպրոցներում, շրջանային կրթության բաժիններում և այլ ոլորտներում:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին փայլուն քննություն բռնեցին նաև Ասկերանի, Շուշիի, Մարտունու, Հադրութի շրջանների, Ստեփանակերտ քաղաքի դպրոցները: Ուսուցիչներն ու այդ դպրոցներն ավարտած հարյուրավոր երիտասարդներ արիաբար կռվում էին անարգ թշնամու դեմ: Դպրոցներում պահպանված փաստաթղթերից տեղեկանում ենք, որ շրջանավարտներից շատ-շատերը, զորակոչվելու տարիքը չլրացած, կամավոր մեկնել են ռազմաճակատ և կռվել իրենց ուսուցիչների հետ միասին: Նրանք պատերազմի ժամանակ պատվով էին կատարում հրամանատարի և քաղաշխատողի իրենց պարտականությունները:

Ուսումնասիրության բնույթից ելնելով, շատ համառոտակի նշենք վերոնշյալ շրջանների դպրոցների ուսուցիչների ու շրջանավարտների ցուցաբերած սխ-

ռանքների և հետպատերազմյան տարիների մանկավարժական գործունեության միայն մի քանի փաստ:

Հայրենական պատերազմի ճակատներում և հետպատերազմյան շրջանում դպրոցներում աշխատելու տարիներին բավական մեծ վաստակ են ներդրել **Ասկերանի շրջանի** դպրոցի ուսուցիչներն ու նրանց սաները:

Հիշատակենք նրանցից մի քանիսը:

Վաստակաշատ մանկավարժ **Գրիգոր Ադաշյանը** անցել է ուսանելի կյանքի ուղի: Նա սկզբնական կրթությունը ստացել է հայրենի Ավետարանոցի (Չանախչի) միջնակարգ դպրոցում (1921-1931թթ.), այնուհետև ավատել է (1934թ.) Շուշիի մանկավարժական ուսումնարանը և բեղուն գործունեություն ծավալել Մարտունու շրջանի Խնուշինակի, Ճարտարի, Սոսի միջնակարգ դպրոցներում: Գ.Ադաշյանը 1936թ. զորակոչվում է Կարմիր բանակի շարքերը: Զինվորական ծառայությունն ավարտելուց հետո, որպես պահեստի սպա, նորից անցնում է մանկավարժական աշխատանքի:

Հայրենական պատերազմի հենց առաջին օրը զորակոչվում է՝ պաշտպանելու հայրենիքը: Պատերազմին մասնակցել է Հյուսիս կովկասյան ռազմաճակատում, 409-րդ հրաձգային դիվիզիայի կազմում: Մարտական փառապանծ ուղի է անցել Գրիգոր Ադաշյանը Հյուսիսային Կովկասից մինչև Վարշավա: Երկու անգամ վիրավորվել է: Երկրորդ անգամ վիրավորվել է 1944թ. սկզբներին, որից հետո զորացրվել է որպես երկրորդ կարգի հաշմանդամ:

1944թ. սեպտեմբերից նախկին վաշտի հրամանատար, պահեստի ավագ լեյտենանտ Գ.Ադաշյանը անցնում է մանկավարժական աշխատանքի: Որպես ռազմական պատրաստության ուսուցիչ դասավանդում է հայրենի գյուղի, Սզնեքի, Սարուշենի դպրոցներում: Արխիվային փաստաթղթերից[259] տեղեկանում ենք, որ Գ.Ադաշյանը դպրոցներում բարձր հիմքերի վրա է դրել ռազմաֆիզիկական, ռազմահայրենասիրական դաստիարակության գործը: Նա իր պրակտիկ փորձը փոխանցել է աշակերտներին, նրանց տվել ռազմական բնույթի գիտելիքներ, ունակություններ, հմտություններ: Բարձր դասարանների աշակերտներին վարժեցնում էր եթերային ու տուրիստական բնույթի քայլվածքի, վարքի, անհարթ վայրերում հանդիպող դժվարությունների հաղթահարման՝ սովորեցնում էր կրակել, նռնակ նետել որքան կարելի է հեռու և անվրեպ, ծանրություն բարձրացնել ու փոխադրել, ճարպկություն հանդես բերել ձեռնամարտերում, առաջին բուժօգնություն ցույց տալ և այլն: Նրա սաներից շատերը 1944-1945թթ. կամավոր մեկնել են ռազմաճակատ:

Գրիգոր Ադաշյանը ռազմաճակատում ցուցաբերած սխրանքների համար պարգևատրվել է Կարմիր աստղի երկու և Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով ու մեդալներով, ինչպես նաև անբասիր մանկավարժական գործունեության համար շրջանային շրջժողկրթբաժնի կողմից մի շարք գովասանագրերով:

Ավետարանոցի դպրոցում պահպանվող փաստաթղթերում բավականին հետաքրքիր նյութեր կան դպրոցի շրջանավարտներ՝ **Գրիգոր Հախնազարյանի**, Ալեքսանդր Բաղրյանի, Վաչագան Արզանյանի գործունեության մասին[260]:

Ավարտելով հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը (1935-1936 ուս.տարում), Գրիգոր Հախնազարյանը ուսումը շարունակում է Բաքվի երկամյա ուսուցչական ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության բաժնում և ավարտելուց հետո

(1939թ.), որպես ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ դասավանդում հայրենի գյուղի, Ղարաբուլաղի դպրոցներում: Սակայն կարճ է տևում նրա մանկավարժական գործունեությունը: 1939թ. հոկտեմբերին զորակոչվում է Կարմիր բանակ:

Գրիգոր Հախնազարյանը Հայրենական մեծ պատերազմը դիմավորեց ռուսական հինավուրց Սմոլենսկ քաղաքում: Մինչ այդ մասնակցել է սպիտակ ֆիննական պատերազմին: Պատերազմի առաջին իսկ օրերին Սմոլենսկի ռազմաքաղաքական ուսումնարանի սաները, այդ թվում և Հախնազարյանը, դարձան քաղաքի պաշտպաններ:

Նահանջը կուրսանտ զինվորներին հասցրեց մինչև Մոսկվա: Հախնազարյանը կուրսանտ ընկերների հետ միասին ակտիվ մասնակցություն ունեցավ մայրաքաղաքի պաշտպանության համար մղված մարտերին: Այստեղ ֆաշիստական զավթիչներին ջախջախիչ հարված հասցնելուց և ետ շպրտելուց հետո նրան ուղարկում են Սարատով՝ ուսումը շարունակելու: 1942թ. մայիսին 2-րդ օդային դեսանտային կորպուսի կազմում նա կռվում էր Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում: Այստեղ երիտասարդ սպան աչքի է ընկնում ոչ միայն որպես մարտիկների դաստիարակ, այլև խիզախությամբ ու համարձակությամբ:

Հախնազարյանը սկզբում վաշտի քաղղեկ էր, իսկ հետագայում դարձավ 80-րդ գնդի կապավորների գումարտակի կոմիսար: Դա այն փառապանծ 32-րդ դիվիզիան էր, որ գերազանց կատարելով հրամանատարության առաջադրանքները, իր ակտիվ մասնակցությունը բերեց Թամանյան թերակղզու, Կրասնոդարի երկրամասի ազատագրմանը, արժանացավ բարձր պարգևների ու կոչվեց Թամանյան Կարմրադրոշ, Սուվորովի ու Կուտուզովի շքանշանակիր գվարդիական դիվիզիա: Կրասնոդար քաղաքի համար մղված մարտերից մեկում Հախնազարյանը ծանր վիրավորվեց:

Հոսպիտալից դուրս գրվելուց հետո Գրիգոր Հախնազարյանը ավարտում է Չկալովի ռազմա-ավիացիոն ուսումնարանը և որպես շտուրման-օդաչու ծառայությունը շարունակում 16-րդ օդային բանակի Թամանյան 34-րդ գնդում: Այդ զորամասում էլ Հախնազարյանը որպես շտուրման մասնակցում է Կուրսկ-Օրյոլ աղեղում, Ղրիմի և, հատկապես քաղաք-ամրոց Սևաստոպոլի համար մղված մարտերին: Օդաչու Հախնազարյանը մասնակցում է Բելոռուսիայի, Լեհաստանի ազատագրմանը, վերջին թռիչքները կատարում է Բեռլինի և Շտետինի երկնքում: Ֆաշիստական զորքերին ջախջախելուց և հաղթանակ նվաճելուց հետո Գրիգոր Արտեմիչը Գերմանիայում ծառայությունը շարունակեց մինչև 1947թ. հունիսը: Տուն վերադառնալուց հետո էլ նա չի դադարել զինվոր լինելուց: Խաղաղ աշխատանքի առաջին տարիներին նա զինղեկ էր Ստեփանակերտի թ. 2 դպրոցում: Այնուհետև դարձավ ԴՕՍՍԱՖ-ի մարզային կոմիտեի նախագահի տեղակալ: Շուրջ երկու տասնամյակ գլխավորել է ֆիզկուլտուրայի և սպորտի Ստեփանակերտի քաղաքային կոմիտեի գործունեությունը, նորից զինղեկի պարտականություններով վորադարձել է դպրոց, եղել է քաղժողկրթբաժնի արտահաստիքային տեսուչ:

Հախնազարյանը պարգևարտվել է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի և Կարմիր աստղի երկու շքանշաններով, 15 մարտական ու հոբելյանական մեդալներով, ժողկրթության գերազանցիկի կրծքանշանով:

Ավետարանոցի դպրոցի շրջանավարտ **Ալեքսանդր Բաղրյանը** Հայրենական պատերազմի առաջին օրերին կամավոր մեկնում է Կարմիր բանակ: Ռազմաճակատից ուղարկած իր նամակներում Ալեքսանդրը ցույց է տալիս իր և ընկերների

աննկուն ոգին, հոգեկան մաքուր աշխարհը, հայրենասիրության այն վառ զգացմունքները, որ ժամանակին նրանց մեջ դաստիարակել էին ուսուցիչները: Նա հուսադրում է ծնողներին, հարազատներին ու ընկերներին, որ ֆաշիստական Գերմանիան անպայման ծնկի է գալու, որ հաղթանակը հեռու չէ:

Երբ ավարտվեց արյունահեղ պատերազմը մեր փառավոր հաղթանակով, Ալեքսանդրը շարունակեց զինվորական ծառայությունը 2 տարի ևս: Զորացրվելուց հետո նա աշխատանքի անցավ կոլտնտեսությունում, բայց նա դեռ ուսումնառության տարիներին երազում էր մանկավարժ դառնալ: Եվ նա հաջողությամբ հանձնում է ընդունելության քննությունները և ընդունվում Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը:

Իրականանում է նրա պայծառ երազանքը: Ավարտելով ինստիտուտը, աշխատանքի է անցնում ծննդավայրի դպրոցում: Նա հայոց լեզու և գրականություն է դասավանդում հարազատ դպրոցում, աշխատում եռանդով, բացառիկ նվիրումով: Սիրում էր իր սաներին, սիրվում նրանց կողմից: Շնորհալի ուսուցիչը ակտիվորեն մասնակցում էր դպրոցի և կոլտնտեսության հասարակական աշխատանքներին: Ագիտատոր էր, պրոպագանդիստ: Ալեքսանդրը նաև ակտիվ թղթակից էր: Դպրոցական կյանքից, կոլտնտեսության առօրյայից ուշագրավ հոդվածներ էր գրում մամուլին, ռադիոյին: Սկսել էր գրել դպրոցի պատմությունը, բայց չհասցրեց: Դաժան հիվանդությունը անկատար թողեց նրա երազանքը:

Հայրենական պատերազմի տարիներին Ասկերանի շրջանի Սարուշենի, Կարմիր գյուղի, Հարավի, Խանաբադի, Խնձրիստանի, Նորագյուղի և այլ դպրոցների ուսուցիչներն ու նրանց սաները նույնպես թշնամու նկատմամբ վրեժի ու ատելության զգացմունքով լցված, հանդես եկան հայրենիքին կամավոր զինվորագրվելու նախաձեռնությամբ: Նրանց շարքերում էին Սերգեյ Ավետիսյանը, Ավետիս Ավետիսյանը, Անդրանիկ Կարապետյանը, Արամ Զաքարյանը, Հրանտ Ալահվերդյանը, Գոհարիկ Զաքարյանը, Միքայել Բաղալյանը, Ազիզբեկ Հակոբյանը և ուրիշներ:

Սարուշենի 7-ամյա դպրոցի շրջանավարտ **Սերգեյ Ավետիսյանը** ուսումը շարունակում է Շուշիի մանկավարժական ուսումնարանում և ավարտում 1940թ.: Մանկավարժական գործունեությունը սկսել է հայրենի գյուղի, իսկ հետո՝ Սզնեքի, Ղշլաղի դպրոցներում:

1941թ. մայիսին զորակոչվել է Կարմիր բանակ, ծառայությունն սկսել տանկային գնդում: Պայթեց Մեծ Հայրենականը: Սերգեյն էլ իր նման հազարավոր զինվորականների հետ կրեց նահանջի ծանրությունը: Առաջին անգամ գերմանական ոհմակներին հանդիպել է պատերազմի 25-րդ օրը՝ Նևել քաղաքի մատույցներում: Հետ մղելով թշնամու գրոհները, հաճախ դիմելով հակագրոհի, նահանջել են մինչև Մոսկվայի մատույցները: Այստեղ՝ 9-րդ տանկային բրիգադի կազմում, Մոսկվայի համար մղվող պաշտպանական մարտերից մեկում, 1941թ. հոկտեմբերի 28-ին վիրավորվել է: Ապաքինվելուց հետո՝ ավարտելով կարճատև դասընթացներ, որպես Տ-70 տանկի մեխանիկ-վարորդ մեկնել է Ստալինգրադի ճակատամարտ, որտեղ էլ 1942թ. սեպտեմբերի 4-ին ծանր վիրավորվել է:

1943թ. նորից մասնակցել է պատերազմին, այս անգամ՝ 7-րդ մոտոմեխանիզացված կորպուսի 612-րդ ավտովաշտի կազմում: Մասնակցել է Ուկրաինայի, Բեսարաբիայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Հունգարիայի, Ավստրիայի ազատագրման մարտերին: Հաղթանակը դիմավորել է Պրագայի տակ:

Պատերազմի ավարտից հետո Ղարաբաղի հարյուրավոր ուսուցիչների հետ միասին Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով, «Խիզախության համար» և այլ մեդալներով պարգևատրված, 1945թ. հունիսին Ս.Ավետիսյանը վերադառնում է հայրենի օջախ և շարունակում իր մանկավարժական գործունեությունը Սարուշենի, Ակնաղբյուրի դպրոցներում:

Մանկավարժական պրակտիկայում ճանաչված մանկավարժի նախաձեռնությամբ Սարուշենի միջնակարգ դպրոցում ստեղծվում է երիտասարդ ուսուցիչներին օգնող հանձնաժողով: Պարբերաբար դպրոցի մանկավարժական խորհրդի նիստերում հանդես է գալիս «Ուսուցիչ-դաստիարակի պրոֆեսիան և նրա դերը մատաղ սերնդի դաստիարակության կրթության գործում», «Ուսուցչի մանկավարժական վարպետությունը դասին» խորագրով զեկուցումներով: Մարզային «Խորհրդային Ղարաբաղ» թերթում փորձառու մանկավարժը հանդես է գալիս մանկավարժական- հրահանգչական հոդվածներով, որտեղ մի շարք հարցեր է բարձրացնում ինչպես հանրակրթական, այնպես էլ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսումնական գործը պատշաճ մակարդակով կազմակերպելու շուրջ:

Մինչև Հայրենական պատերազմը Ավետիս Ավետիսյանը գերազանց գնահատականներով ավարտում է Շուշիի մանկավարժական ուսումնարանը, դասավանդում հայրենի գյուղի՝ Սարուշենի, Դաշուշենի, Սղնախի դպրոցներում:

Պատերազմի առաջին իսկ օրը նա կամավոր մեկնում է ռազմաճակատ: Ծառայության սկզբից մինչև վերջ եղել է Մոսկվայի հակաօդային պաշտպանության բանակում: Մարտական ծառայությունների համար պարգևատրվել է Կարմիր աստղի, Հայրենական մեծ պատերազմի շքանշաններով, 10 մարտական, հոբելյանական և այլ մեդալներով և 2 կրծքանշանով[261]:

Պատերազմի ավարտից հետո, 1945թ. հոկտեմբերի 28-ին վերադարձել է գյուղ և աշխատանքի անցել Սարուշենի դպրոցում որպես ուսուցիչ: 1947թ. ընդունվել և 1952թ. ավարտել է Ադրբեջանի հեռակա մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետը: 1950թ. մինչև 1980թ. աշխատել է որպես դպրոցի տնօրեն: Գյուղի դպրոցի հիմնադրման 100-ամյակի կապակցությամբ պարգևատրվել է Սարուշենի բարեգործական ընկերության պատվոգրով և 2000թ. դեկտեմբերի 28-ին՝ Ասկերանի շրջբաժնի պատվոգրով:

Մինչև Հայրենական պատերազմը, Ասկերանի շրջանի Կարմիր գյուղի 7-ամյա դպրոցի շրջանավարտ **Անդրանիկ Կարապետյանը** գերազանց գնահատականներով ավարտում է Ստեփանակերտի երկաստիճան դպրոցը (1930թ.) և նշանակվում հայրենի՝ Կարմիր գյուղի 7-ամյա դպրոցի տնօրեն: Այնուհետև ավարտում է Բաքվի մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժնի պատմության ֆակուլտետը:

Հայրենական պատերազմի առաջին իսկ օրը Ա.Կարապետյանը կամավոր մեկնում է ռազմաճակատ: Ծառայում է Թիֆլիսի օդաչուական զորամասում մինչև 1944թ.: Մարտական մի շարք առաջադրանքներ կատարելու համար նա արժանացել է բազմաթիվ կրծքանշանների և մեդալների:

Պատերազմից հետո որպես պատմության ուսուցիչ աշխատել է Ստեփանակերտի դպրոցներում, եղել է նաև պրոֆտեխուսումնարանի ուսմասվար, տնօրեն: Այս ասպարեզում էլ Ա.Կարապետյանը արժանացել է դիպլոմների ու գովասանգրերի:

Ուսանելի կյանքի ուղի է անցել նաև վերոնշյալ դպրոցի շրջանավարտ **Արամ Զաքարյանը**: Ավարտելով Շուշիի մանկավարժական ուսումնարանը, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ աշխատում է Խաչմաչ և այնուհետև Կարմիր գյուղի դպրոցներում:

1939թ. դեկտեմբերի զորակոչվել է Կարմիր բանակի շարքերը: Ծառայությունն սկսել է Բելոռուսիայի ռազմական օկրուգում՝ 24-րդ դիվիզիայի 70-րդ հեծելազորային գնդում: 1940թ. սեպտեմբերից ծառայել է երկաթուղային հատուկ զորամասում, որը կառուցել է Զուլֆա-Մինջևան երկաթագիծը: Գտնվում էր գործուղման մեջ՝ Ուկրաինայի Վիննիցա քաղաքում, երբ սկսեց Հայրենական պատերազմը: 44-րդ երկաթուղային բրիգադի կազմում Արամը մասնակցում է երկաթգծի կառուցմանը՝ երկրի հարավային շրջաններում:

1942թ. գարնանը զորամասը, որում ծառայում էր Արամ Զաքարյանը, գործուղվեց ռազմաճակատ՝ Դոնի-Ռոստովի ուղղությամբ:

1943թ.-ից սկսել են վերականգնվել պատերազմի հետևանքով խափանված երկաթգծերը Տուապսե, Կրասնոդար, Ղրիմ ուղղություններով: 1944թ. հուլիս ամսից Արամին գործուղել են 44-րդ երկաթգծային բրիգադը, ծառայել է բրիգադի շտաբում: Այնուհետև ամբողջ զորամասով շարժվել են դեպի Արևմուտք: 1945թ. մայիսի 1-ը տոնել են Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում:

1946թ. հունիս ամսին զորացվել է բանակից: Նույն թվականի սեպտեմբերից ուսուցչական աշխատանքի է անցել հայրենի գյուղում՝ դասավանդելով ռուսաց լեզու: 1962թ. ընտրվել է Կարմիր գյուղի գյուղխորհրդի նախագահ: 1967-1977թթ. նորից ուսուցչական աշխատանքի է անցնում հայրենի գյուղում:

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով և մի քանի մարտական ու հոբելյանական մեդալներով:

Հարավ գյուղի միջնակարգ դպրոցում դաստիարակված սաներից շատերն Հայրենական պատերազմի ճակատներում ցուցաբերած սխրանքների համար արժանացան բարձր պարգևների: Նրանց շարքում էր նաև **Հրանտ Ալահվերդյանը**:

1940թ. ավարտել է հարևան Կարմիր գյուղի միջնակարգ դպրոցը: Նույն թվականին զորակոչվել է Կարմիր բանակ: Ծառայությունը սկսել է Բելոռուսիայի Բորիսովկա քաղաքում՝ զրահատանկային գնդում: Ավարտում է գնդի կրտսեր հրամանատարների դպրոցը «գերազանց» գնահատականներով և նշանակվում տանկի հրամանատար: Զորամասը, ուր ծառայում էր Ալահվերդյանը, մասնակցել է Ստալինգրադի, Կուրսկ-Օռյոլի հատվածներում տեղի ունեցած մարտերին: Իր մարտական տանկով Ալահվերդյանը հասնում է մինչև գերմանական հողը և մասնակցում գերմանաֆաշիստական հորդաներին սեփական որջում ջախջախելու մարտերին: Մարտերում ցուցաբերած անձնական արիության համար նա պարգևատրվել է Կարմիր աստղի և Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով և մի շարք մեդալներով, բազմիցս արժանացել Գերագույն գլխավոր հրամանատարի գրավոր շնորհակալագրերին:

Զորացրվել է 1946թ. և Ստեփանակերտում մանկավարժական աշխատանքի անցել երեկոյան դպրոցում: Աշխատանքին զուգընթաց ավարտում է Ստեփանակերտի ուսուցչական ինստիտուտը: 1956թ. ավարտել է Բաքվի ֆինանսական տեխնիկումը և աշխատանքի անցել մարզգործկոմի ֆինբաժնում, որպես ավագ վերահսկիչ, միաժամանակ դասավանդել է Ստեփանակերտի հաշվապահական

դպրոցում: 1968թ. մինչև 1985թ. այդ դպրոցի տնօրենն էր:

Հայրենական պատերազմի ռազմաճակատում ցուցաբերած սխրանքների համար կառավարական պարգևների ու շքանշանների է արժանացել Դահիրավի միջնակարգ դպրոցի շրջանավարտ **Գոհարիկ Զաքարյանը**[262]:

Մինչև պատերազմը, որպես տարրական դասարանների ուսուցչուհի աշխատել է հայրենի գյուղի 7-ամյա դպրոցում: 1942թ.դեկտեմբերի 24-ին զորակոչվել է Կարմիր բանակի շարքերը: Զինվորական ծառայությունը սկսել է 252-րդ առանձին հրետանային գնդի 10-րդ մարտկոցում: Զաքարյանը հազարավոր կին հրետանավորների հետ պաշտպանել է անդրկովկասյան և հյուսիսկովկասյան կապույտ երկինքը գերմանաֆաշիստական օդային ուժերի հարձակումներից:

Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո վերադառնում է հայրենի օջախը: 1946թ. ընդունվում է Ադրբեջանի հեռակա մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը, որը հաջողությամբ ավարտում է 1950թ-ին:

1946-1947 ուստարուց մինչև 1989-1990 ուստարին, առանց ընդմիջման աշխատում է Ստեփանակերտի շրջանի Խնձրիստանի միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

1962-1970թթ. եղել է դպրոցի դաստիարակչական աշխատանքների գծով դիրեկտորի (տնօրենի) տեղակալ:

Գոհարիկ Զաքարյանը արժանացել է կառավարական պարգևների, նրա կուրծքը զարդարված է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով:

Խանաբադի 7-ամյա դպրոցի շրջանավարտ **Միքայել Բադալյանը** 1939թ. հունիսին ավարտում է Շուշիի մանկավարժական ուսումնարանը և որպես տարրական դպրոցի ուսուցիչ աշխատում հայրենի գյուղի դպրոցում: Սակայն կարճ է տևում նրա մանկավարժական գործունեությունը, 1939թ. դեկտեմբերին զորակոչվում է Կարմիր բանակի շարքերը: Գերազանց գնահատականներով ավարտում է Տաշքենդի ռազմական ուսումնարանը և սպայի կոչումով անցնում զինվորական ծառայության:

Միքայել Բադալյանը կռվել է 3-րդ բելոռուսական ռազմաճակատում: Մասնակցել է Մոսկվայի պաշտպանության, Սմոլենսկ, Մինսկ քաղաքների ազատագրման մարտերին: Մարտերից մեկում վիրավորվում է, ապաքինվում դաշտային հոսպիտալում, որից հետո դարձյալ մեկնում զորամաս: Այս անգամ մարտեր էին մղվում Արևմտյան Պրուսիայում: Մասնակցում է Քյոնիքսբերգ քաղաքի ազատագրման մարտերին:

Դասակի հրամանատար Բադալյանը մարտերով հասնում է մինչև Բեռլին, որի գրավմանը ակտիվ մասնակցություն է ունեցել:

Վերջացավ Հայրենական պատերազմը, Բադալյանն էլ վերադարձավ գյուղ: Նրա կուրծքը զարդարված էր Կարմիր աստղի, Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշաններով ու բազմաթիվ մեդալներով:

1946-1947 ուստարում մանկավարժական աշխատանքի է անցնում հայրենի գյուղում, սակայն պահեստի սպան 1952թ. նորից զորակոչվեց սովետական բանակի շարքերը, այս անգամ որպես քաղաշխատող: 1955թ. նորից զորացրվում, վերադառնում է գյուղ ու 1955-1956 ուստարում անցնում մանկավարժական աշխատանքի հայրենի գյուղի՝ Բադարայի դպրոցում[262]:

Խանաբադի դպրոցում դաստիարակված սաներից է նաև Ազիզբեկ Հակոբյանը, որը հայրենիքի հանդեպ ունեցած մարտական ծառայությունների համար

պարգևատրվել է կառավարական պարգևներով, մեդալներով:

Մինչև Հայրենական պատերազմը նա ավարտում է Շուշիի մանկավարժական ուսումնարանը (1934-1935թթ.), այնուհետև՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի հեռակա բաժինը (1940թ.) և որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ դասավանդում Ասկերանի շրջանի Խրամորթի, Խանաբադի, Խնձրիստանի դպրոցներում: Միաժամանակ եղել է ուսումասվար, տնօրեն:

Ազիզբեկ Հակոբյանը 1942թ. հունիսին զորակոչվել է Կարմիր բանակ: Ծառայել է Սուխումիի ռազմական ուսումնարանում, սակայն թշնամու առաջխաղացումը դեպի Սև ծովի ափերն ու Հյուսիսային Կովկաս, ստիպեցին ուսումնարանը փակել, իսկ կուրսանտներին և ուղարկել ռազմաճակատ: Թշնամու հետ առաջին հանդիպումը տեղի ունեցավ Սուխու գյուղի տարածքում: Թշնամին ջարդված նահանջեց և ամրացավ Ալաշտրախ սարի կատարին, սակայն չնայած դիրքային գերակշռությանը, չկարողացավ նախաձեռնել հարձակողական մարտեր: 1943թ. հունվարից թշնամին օրեցօր հարկադրված հեռանում էր գրաված դիրքերից: Հակոբյանի ղեկավարած կուսակցական կազմակերպությունը վաշտի հրամանատարության ամուր հենարան դարձավ (նշված է նրա բնութագրի մեջ): 1944թ. դեկտեմբերից մինչև 1945թ. օգոստոսը եղել է Իվանովի քաղաքական ուսումնարանի սան: Այստեղից էլ զորացրվել է: Զորացրվելուց հետո մանկավարժ-մարտիկն անցնում է իր սիրած աշխատանքին: Ավելի քան 15 տարի եղել է գյուղի ընկերական դատարանի նախագահ: 10 տարուց ավելի եղել է շրջանային և մարզային դատարանների ատենակալ, գյուղի «Գիտելիք» ընկերության նախագահ: Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով, «Խիզախության համար» մեդալով և էլի 7 ուրիշ մեդալներով[263]:

Պարբերական մամուլի էջերում, «Արցախի հայ ուսուցիչները մեծ Հայրենականում (1941-1942)» աշխատությունում, ռազմաճակատից ստացված բազմաթիվ նամակներում և դպրոցներում պահպանվող արխիվային փաստաթղթերում նկարագրվում են նաև **Մարտունու, Հադրութի շրջանի դպրոցների ուսուցիչների** ու նրանց սաների ցուցաբերած սխրագործությունները՝ Հայրենական պատերազմի ռազմաճակատներում, ինչպես նաև հետպատերազմյան շրջանում նրանց մանկավարժական գործունեությունը: Շատ համառոտ նշենք միայն մի քանի փաստ:

Մարտունու շրջանի Գյունե Ճարտարի դպրոցի շրջանավարտ Սուրեն Մնացականի Ադամյանը բարձրագույն կրթությունը ստանում է Բաքվի մանկավարժական ինստիտուտի քիմ-բնագիտական ֆակուլտետում և ավարտելուց հետո, 1939թ., աշխատում է հայրենի գյուղի դպրոցում՝ որպես ուսուցիչ, ուսմասվար:

1942թ. զորակոչվում է Կարմիր բանակի շարքերը: Ծառայել է 5-րդ ինժեներական բրիգադում: Զորամասը, որի կազմում ծառայում էր Ադամյանը, մասնակցել է Վիտեբսկ, Արույսկ, Կալնաս, Վիլնյուս և տասնյակ այլ քաղաքների ու բնակավայրերի ազատագրման մարտերին: Այդ մարտերում ցուցաբերած խիզախության համար Ադամյանը պարգևատրվել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով, «Արիության համար» և մի շարք այլ մեդալներով:

Ֆաշիստական Գերմանիայի ջախջախումից հետո Ադամյանը իր զորամասի հետ մասնակցել է ճապոնական կվանտունյան բանակի ջախջախմանը, Խարբինի, Մուկդենի, Զանչունի համար մղված մարտերին:

Վաստակաշատ մանկավարժը զորացրվելուց հետո նորից շարունակում է ուսուցչական աշխատանքը:

Նշված դպրոցի ուսուցիչ Վաղարշակ Հովսեփյանը 1939թ. հոկտեմբերին զորակոչվել է Կարմիր բանակ[264]: Զինվորական ծառայությունն սկսել է Չերեպովեց քաղաքում, իսկ 1940թ. մարտից՝ Արխանգելսկ քաղաքում, որպես ջոկի հրամանատար 426-րդ հրաձգային գնդում: Նա երազում էր զորացրվելուց հետո ստանալ բարձրագույն կրթություն և շարունակել մատաղ սերնդին ուսուցանելու և դաստիարակելու գործը, սակայն սկսվում է պատերազմը և նրան ուղարկում են Վելիկի Ուստյուգ, ռազմական ուսումնարան: 1941թ. նոյեմբերից մինչև 1942թ. մարտը ծառայել է 54-րդ բանակի 33-րդ հրաձգային բրիգադում, որպես հետախուզական դասակի հրամանատար: Հովսեփյանին մի քանի անգամ հաջողվել է իր դասակով անցնել կրակագիծը ու թշնամու թիկունքից «լեզու» բերել: Չնայած մեծ կորուստներին, շատ դեպքերում հաջողվել է կատարել մարտական առաջադրանքը: 1942թ. ապրիլի 4-ին, Լենինգրադի մատույցներում հերթական առաջադրանքը կատարելիս ծանր վիրավորվում է: Բուժվում է սկզբում Վոլոգդա, այնուհետև Սվերդլովսկ քաղաքներում:

1943թ. հունվարին զորացրվում և գործուղվում է Բրյանսկ քաղաքի միջնակարգ դպրոցը՝ որպես զինղեկ: Հովսեփյանի խնդրանքով 1943թ. ապրիլին նրան ուղարկում են Մարտունու շրջզինկոմի կարգադրության ներքո: Ապրիլի 20-ից նշանակվում է Գյունե Կալերի դպրոցի զինղեկ: Մինչև 1948թ. աշխատել է շրջանի Ծովատեղ, Քարահունջ գյուղերի դպրոցներում: Առողջական վիճակի պատճառով թողնում է դպրոցը և անցնում այլ աշխատանքի: Պարգևատվել է երկու մարտական շքանշաններով ու շուրջ 10 մարտական ու հոբելյանական մեդալներով:

Հայրենական պատերազմի առաջին իսկ օրը Ղուզե Ճարտարի (Կալեր գյուղ) դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի **Եվգենյա Բաբայանը** կամավոր մեկնում է ռազմաճակատ՝ 1942թ. նոյեմբերին:

Ծառայում է 31-րդ ավտոտրանսպորտային գնդում: Ավտովարորդ էր: Չնայած այդ աշխատանքը տղամարդուն հատուկ մասնագիտություն է, այնուամենայնիվ, ղարաբաղցի դուստրը բարեխղճորեն էր կատարում հրամանատարության առաջադրանքները: Դրա վկաներն են նրա ստացած բազմաթիվ գովասանագրերը: Մասնակցել է Կովկասյան ռազմաճակատի մարտական գործողություններին:

Նա հաղթանակով վերադարձավ իր հայրենի օջախը և ուսումը շարունակեց Ստեփանակերտի երկամյա ուսուցչական ինստիտուտում: 1948թ. ավարտեց այն և իր հետագա կյանքը նվիրեց մատաղ սերնդի ուսուցման ու դաստիարակման գործին: Աշխատել է հայրենի Ղուզե Ճարտարի դպրոցում մինչև թոշակի անցնելը:

Բաբայանը պարգևատրվել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով, բազմաթիվ մեդալներով[265]:

Ուսանելի կյանքի ուղի է անցել Սոս գյուղի 7-ամյա դպրոցի շրջանավարտ **Եսայ Եսայանը**: Մինչև պատերազմը նա գերազանց գնահատականներով ավարտում է Շուշիի մանկավարժական ուսումնարանը (1936թ.) և որպես ուսուցիչ, այնուհետև տնօրեն աշխատում հայրենի գյուղի դպրոցում:

1939թ. նոյեմբերին Ե.Եսայանը զորակոչվում է Կարմիր բանակ: Ամբողջ ծառայությունն անցել է Մոսկվայի հակաօդային պաշտպանության հատուկ բանակում: Պատերազմի սկզբից մինչև վերջ պաշտպանել է մայրաքաղաքի օդային տարա-

ծությունը: 251-րդ գնդի առաջին դիվիզիոնում Եսայանը հրետանային հաշվարկի հրամանատար էր, ստորաբաժանումը ֆաշիստական գիշանգղներից պաշտպանում էր Տուշինոյի օդանավակայանը և Ռուբլյովի ջրապոմպային կայանը, օբյեկտներ, որոնք մշտապես գտնվում էին թշնամու ուշադրության կենտրոնում: Թշնամին ձգտում էր շարքից հանել այդ կարևոր օբյեկտները:

1941թ. հուլիսի 22-ին ֆաշիստական ավիացիայի զանգվածային հարձակմանը զենիթայինները արժանի հակահարված են տալիս: Այդ հակահարվածին մասնակցում էր նաև Եսայանի հրետանային հաշվարկը: Նա արժանանում է Գերագույն գլխավոր հրամանատարի գրավոր շնորհակալագրին:

Գերմանական հրամանատարությունը՝ իմանալով, որ 1941թ. նոյեմբերի 6-ին մայրաքաղաքում պետք է կայանա հանդիսավոր նիստ՝ նվիրված Մեծ հոկտեմբերի 24-րդ տարեդարձին, որոշել էր զանգվածային հարվածներ հասցնել Մոսկվային: Տասնյակ «Յունկեր» ռմբակոծիչներ պտտվում էին Մոսկվայի օդային տարածքում: Եսայանի ստորաբաժանման զենիթայինները խփում են առաջատար ռմբակոծչին:

Զորացրվել է 1945-ին: Պատերազմից հետո նա ստանում է բարձրագույն կրթություն և շարունակում մանկավարժական գործունեությունը:

Եսայանը պարգևատրվել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով, «Մարտական ծառայությունների համար», «Մոսկվայի պաշտպանության համար» և մի շարք այլ մեդալներով[266]:

Մարտունու շրջանի Խնուշինակ գյուղի 7-ամյա դպրոցի շրջանավարտ **Գուրգեն Եսայանը** բարձրագույն կրթությունը ստանում է Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում: 1940թ. սեպտեմբերից աշխատանքի է անցնում Ստեփանակերտի շրջանի Ղարաբուլաղ գյուղում, որպես շարքային ուսուցիչ, իսկ 1941թ. սեպտեմբերին՝ որպես դպրոցի տնօրեն:1942թ. նոյեմբերին զորակոչվում է բանակ: Ծառայությունն սկսում է 603-րդ հետևակային դիվիզիայում, մասնակցում Մալայա Զեմլյայի գրավման մարտերին: 1942թ. փետրվարին վիրավորվում է և բուժվում Սոչի քաղաքի հոսպիտալում: Ապաքինվելուց հետո, 1943թ. մայիսին նորից ռազմաճակատում է, 317-րդ դիվիզիայում: Նույն թվականի հուլիսին նորից վիրավորվում է և այս անգամ բուժվում Եսենտուկի քաղաքում: Նոյեմբերին մեկնում է ռազմաճակատ: 1944թ. ամռանը զորացրվում և նույն տարվա սեպտեմբերին անցնում մանկավարժական աշխատանքի Ստեփանակերտի շրջանի Սարդարաշենի 7-ամյա դպրոցում՝ որպես դպրոցի տնօրեն: 1948թ. սեպտեմբերից տեղափոխվում է Ղարաբուլաղի դպրոցը՝ որպես ուսմասվար: 1964թ. որպես պատերազմի 3-րդ խմբի հաշմանդամ անցնում է թոշակի:

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով և մի շարք մեդալներով:

Հացի գյուղի 7-ամյա դպրոցում դաստիարակված սանուհի **Զաբելա Թավադյանը** մինչև Հայրենական պատերազմը ավարտել է Շուշիի մանկավարժական ուսումնարանը (1939թ.) և դասավանդել Ճարտարի, հայրենի գյուղի դպրոցներում: 1942թ. ապրիլին կամավոր մեկնում է ռազմաճակատ: Մարտական ծառայությունը սկսում է 3-րդ ուկրաինական ռազմաճակատի 35-րդ լուսարձակային առանձին դիվիզիոնի 4-րդ վաշտում: Առաջին իսկ օրից Զաբելան ցուցաբերում է նախանձելի ունակություն ռազմական տեխնիկային տիրապետելու գործում: Կարճ ժամանակամիջոցում աչքի է ընկնում իր վարպետությամբ: Նրա մասին

գրում է բանակային մամուլը: Շուտով նա նշանակվում է լուսարձակի հաշվարկի հրամանատար և մասնակցում Թամանյան թերակղզու ազատագրման մարտերին: Այնուհետև նրա մարտական ուղին անցնում է Սիմֆերոպոլ, Օդեսա, Սևաստոպոլ քաղաքներով, ապա մարտնչում է Ուկրաինայի, Բելոռուսիայի, Հունգարիայի ազատագրման համար մղվող մարտերում:

Պատերազմի ավարտից հետո Թավադյանը վերադառնում է հայրենի գյուղ և շարունակում մանկավարժական աշխատանքը: Աշխատում է Կաղարծիի, Սարգսաշենի և Լիսագորի դպրոցներում:

Թավադյանը պարգևատրվել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով և մարտական ու հոբելյանական մի շարք մեդալներով:

Մարտունու շրջանի Սպիտակաշենի դպրոցի ուսուցիչներ Սամսոն Հակոբյանը, Անդրանիկ Հայրապետյանը Հայրենական պատերազմի հենց սկզբից կանգնեցին հայրենիքի պաշտպանության դիրքերում:

Սամսոն Հակոբյանը 1941թ. հունիսին զորակոչվում է Կարմիր բանակ: 1942թ. մարտին ավարտում է Թիֆլիսի 6-ամյա հրամանատարական կուրսերը, ստանում կրտսեր լեյտենանտի կոչում և նշանակվում հայկական 409-րդ հրաձգային դիվիզիայի հրետանային գնդի 2-րդ մարտկոցի կրակային դասակի հրամանատար: Մասնակցում է Հյուսիսային Կովկասի ազատագրման համար մղվող մարտերին: 1943թ. տեղափոխվում է 89-րդ հայկական հրաձգային դիվիզիա և նշանակվում հրետանային գնդի 4-րդ մարտկոցի կրակային դասակի հրամանատար: Այդ պաշտոնում էլ մասնակցում է Նովոռոսիյսկի ազատագրման մարտերին և ցուցաբերած արիության համար պարգևատրվում Կարմիր աստղի շքանշանով: Այդ օրերին ընդունվում է կուսակցության շարքերը: Այնուհետև Հակոբյանը մասնակցում է Կերչի ազատագրման մարտերին: Այստեղ փողոցային մարտերում իր հրանոթով ոչնչացնում է գերմանական «Տիգր» տանկ, որի համար պարգևատրվում է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով: Ղրիմը ազատագրելուց հետո դիվիզիան մտնում է Լեհաստան: Վարշավայի համար մղված թեժ մարտերում Հակոբյանի հրետանավորները ոչնչացնում են հինգ տանկ, որից երեքը՝ անձամբ ինքը: Այդ սխրանքի համար նա պարգևատրվում է Մարտական կարմիր դրոշի շքանշանով: Վարշավայի համար մղված մարտերում Հակոբյանը վիրավորվում է և փոխադրվում Ուլյանովսկի հոսպիտալ: Ապաքինվելուց հետո 1945թ. սեպտեմբերին նա ավագ լեյտենանտի կոչումով զորացրվում է:

Մինչև 1948թ. աշխատում է Մարտունու միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ: 1948թ. տեղափոխվում է հայրենի Սպիտակաշեն, աշխատում որպես դպրոցի ուսմասվար, այնուհետև տնօրեն: 1951թ. ավարտում է Բաքվի մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժինը և բեղուն մանկավարժական գործունեություն ծավալում շրջանի դպրոցներում:

Նշված դպրոցի ուսուցիչ **Անդրանիկ Հայրապետյանը** 1939թ. նոյեմբերին զորակոչվել է բանակ, ընդունվել Թբիլիսիի հրետանային ուսումնարան: Մասնակցել է Նովոռոսիյսկի համար մղվող մարտերին, այնուհետև մարտերով հասել Բեռլին, որտեղ տոնել է մեծ հաղթանակը: Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով և մի շարք մարտական մեդալներով[267]: 1945թ. զորացրվելուց հետո աշխատել է Սպիտակաշենի 8-ամյա դպրոցում, դասավանդել պատմություն: Շարունակում է կիսատ թողած ուսումը և հեռակա կարգով ավարտում մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը:

Մարտունու շրջանի Մաճկալաշեն գյուղի 7-ամյա դպրոցի շրջանավարտ **Արտավազդ Խաչատրյանը** 1941թ. ապրիլին զորակոչվում է Կարմիր բանակ և պատերազմին մասնակցում մինչև 1943թ. հուլիս ամիսը: Մեր զորքերի նահանջի դժվարին պահերին բազմաթիվ փորձություններ է հաղթահարել արցախցի երիտասարդը: Առաջին անգամ վիրավորվելուց հետո ապաքինվել է ու նորից վերադարձել կռվի դաշտ: Երկրորդ անգամ ծանր վիրավորվել է 1943թ. ամռանը և այլևս ի վիճակի չէր շարունակել ծառայությունը:

1943թ. դեկտեմբերին վերադառնում է հայրենի գյուղ: Մի տարի աշխատում է Մաճկալաշենի դպրոցում որպես զինղեկ, այնուհետև շարունակում է ուսումը Շուշիի ուսուցչական ինստիտուտում:

1945-46 ուսումնական տարում նշանակվում է Շեխերի դպրոցի պատմության ուսուցիչ և ուսմասվար: Աշխատանքին զուգընթաց 1953թ. հեռակա կարգով ավարտում է Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը:

Արտավազդ Խաչատրյանը պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով, մարտական ու հոբելյանական մեդալներով, ինչպես նաև մարզժողկոմբաժնի գովասանագրերով:

Մարտունու շրջանի Ղավախան գյուղի 7-ամյա դպրոցի շրջանավարտ **Սերգեյ Հովհաննիսյանը** ավարտում է Ստեփանակերտի գյուղտեխնիկումը, այնուհետև՝ ընդունվում Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը (1938թ.):

Հովհաննիսյանը ինստիտուտի 3-րդ կուրսի ուսանող էր, երբ սկսվեց պատերազմը: Ինստիտուտի հարյուրավոր ուսանողների հետ նա ևս զորակոչվեց Կարմիր բանակ: Զինվորական ծառայությունն սկսում է Թբիլիսիում, որտեղ նա սովորում է հրետանային ուսումնարանին կից կարճատև դասընթացներում, որն ավարտելուց հետո ստանում է լեյտենանտի կոչում և գործուղվում է 223-րդ հրետանային դիվիզիայի 818-րդ հրետանային գունդ որպես դասակի հրամանատար: Մարտական գործողություններին ակտիվ կերպով մասնակցում է Մոզդոկ քաղաքից ոչ հեռու Իսչորսկայա կայարանի մոտ: Թեժ մարտերում լեյտենանտ Հովհաննիսյանը փոխարինում է ռմբակոծության հետևանքով շարքից դուրս եկած հրամանատարին և անձամբ ոչնչացնում մեր դիրքերը գրոհող թշնամու երկու տանկ: Երրորդին ստիպում է հետ նահանջել: Այդ դեպքից երկու օր հետո զոհվում է մարտկոցի հրամանատար Նիկիտինը: Հովհաննիսյանը նշանակվում է մարտկոցի հրամանատար: Մարտկոցը Հովհաննիսյանի հրամանատարությամբ մասնակցում է գերմանացիների ջախջախմանը Մոզդոկի տակ: Երիտասարդ լեյտենանտը մի քանի անգամ գլխավորել է զորամասի հետախուզային ջոկատը և ամեն անգամ հաջողությամբ կատարելով մարտական առաջադրանքները, արժանացել խրախուսանքի: Հերթական առաջադրանքը կատարելու ժամանակ Հովհաննիսյանը վիրավորվում է: Թբիլիսի քաղաքի հոսպիտալներից մեկում բուժվելուց հետո նորից վերադառնում է ռազմաճակատ: Այս անգամ նա մասնակցում է Կուրսկ-Օռյոլի աղեղի մարտերին, նորից վիրավորվում է և ուղարկվում բուժվելու Ստեփանակերտի հոսպիտալում: 1944թ. ամռանը ապաքինվելուց հետո ծառայությունը շարունակում է 45-րդ բանակի զորամասերում (Լենինական քաղաքում): Բանակից զորացրվելուց հետո աշխատում է պետական անվտանգության մարմիններում, իսկ 1947թ.-ից վերադառնում է մանկավարժական աշխատանքի հայրենի գյուղում: 1958թ. աշխատանքի է անցնում կուսակցության

մարզկոմում, իսկ այնուհետև տեղափոխվում է ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտ՝ որպես պատմության կաբինետի վարիչ[268]:

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով, «Արիության համար» և շուրջ 10 այլ մարտական և հոբելյանական մեդալներով:

Հայրենական պատերազմի ճակատներում բազում սխրանքներ է գործել Ղզղալա (Բերդաձոր) գյուղի միջնակարգ դպրոցի ուսուցիչ **Սարգիս Մարգարյանը:** 1936-1938թթ. ծառայում է Կարմիր բանակի շարքերում: Զորացրվելուց հետո աշխատում է Մարտունու շրջժողկրթբաժնում: 1939թ. նորից նշանակվում է Ղզղալայի միջնակարգ դպրոցի ուսուցիչ: 1940թ. ուղարկվում է 5 ամսվա հրամանատարական կուրսեր, ավարտելուց հետո ստանում լեյտենանտի կոչում: Պատերազմի սկզբից մեկնում է ռազմաճակատ և ծառայում որպես դասակի հրամանատար: 1942թ. վիրավորվում է և բուժվելուց հետո նորից վերադառնում ռազմաճակատ: Ծառայել է 46-րդ բանակի 408 դիվիզիայի 60-րդ գնդում՝ որպես վաշտի հրամանատար: 1943թ. նորից ծանր վիրավորվում է և զորացրվում որպես հաշմանդամ:

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին և 2-րդ աստիճանների շքանշաններով, 6 մեդալով և տասնյակ շնորհակալագրերով:

Զորացրվելուց հետո վերադառնում է հայրենի գյուղ և շարունակում մանկավարժական աշխատանքը: Երկու տարի աշխատում է Մարտունու շրջանային ԴՕՍԱԱՖ-ի նախագահ: 1957թ. նորից անցնում է մանկավարժական աշխատանքի հայրենի գյուղի դպրոցում, որպես զինղեկ:

Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում թշնամու դեմ արիաբար կռվում ու **սխրանքներ են գործում նաև Հադրութի շրջանի դպրոցների ուսուցիչներն ու նրանց սաները**: Հիշատակենք մի քանի փաստ:

Առաքյուլ գյուղի 7-ամյա դպրոցի շրջանավարտ **Արտաշես Աբրահամյանը** մինչև պատերազմը «գերազանց» գնահատականներով ավարտում է Շուշիի մանկավարժական ուսումնարանը (1940թ.) և որպես մաթեմատիկայի ու ֆիզիկայի ուսուցիչ, ուսմասվար աշխատում Բանազուրի միջնակարգ դպրոցում:

Հայրենական պատերազմի առաջին օրը նա կամավոր մեկնում է Կարմիր բանակ: Կռվել է երրորդ առանձին օդային պարաշյուտադեսանտային գումարտակի կազմում, այնուհետև որպես սակրավոր մասնակցել է Մոսկվայի մատույցները ականապատելուն, իսկ թշնամուն Մոսկվայի մատույցներից դուրս քշելուց հետո՝ ականազերծելու գործողություններին: 1942թ. ապրիլին տեղափոխվում է 64-րդ հրածգային դիվիզիայի 1029-րդ հրետանային գունդ՝ որպես 76 մմ տրամաչափի հրանոթի նշանառու, այնուհետև հրանոթի հրամանատար:

Այդ զորակազմում էլ Աբրահամյանը մասնակցում է Ստալինգրադյան հերոսական ճակատամարտին:

1943-1945թթ. նա մասնակցում է Բելոռուսիայի և Լեհաստանի ազատագրմանը, Օդեր, Ֆրանկֆուրտ և Բեռլին քաղաքների գրավման համար մղված մարտերին: Այդ մարտերում սերժանտ Արտաշեսը ոչնչացրեց թշնամու երեք տանկ, մի քանի զրահամեքենաներ:

Մարտական ծառայությունների համար պարգևատրվել է Կարմիր աստղի, Փառքի 3-րդ աստիճանի շքանշաններով և բազմաթիվ մեդալներով: Վիրավորվել է 1945թ. մայիսին Բեռլինի փողոցային մարտերում: Զորացրվել է 1945թ. նոյեմբերին: Երկար տարիներ մանկավարժական աշխատանք է կատարել Լեռնային Ղարաբաղի և Կիրովաբադի դպրոցներում:

1955թ. ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1967թ. փոխադրվել է Երևան, աշխատել 62-րդ դպրոցում, նախ որպես ուսմասվար, ապա՝ տնօրեն: 1967թ. ընտրվել է լուսավորության, բարձրագույն դպրոցների և գիտական հիմնարկների աշխատողների արհմիության շրջկոմի նախագահ[269]:

Վերոնշյալ դպրոցի շրջանավարտ **Գուրգեն Գյուլիշանյանը** Բաքվի մանկավարժական տեխնիկումն ավարտելուց հետո որպես հայոց լեզվի ու գրականության ուսուցիչ և ուսմասվար աշխատում է հայրենի գյուղի, Բանազուրի 7-ամյա դպրոցներում:

Մինչև Հայրենական պատերազմը նա ծառայում էր Կարմիր բանակի շարքերում (1939-1941թթ.), իսկ պատերազմի առաջին իսկ օրից, որպես քաղաշխատող, ծառայում է տարբեր ռազմաճակատներում, նաև հայկական 89-րդ Թամանյան դիվիզիայում: Հաղթանակը դիմավորել է Պրագայում: Մարտական առաջադրանքները խիզախությամբ կատարելու համար պարգևատրվել է Մարտական կարմիր դրոշի շքանշանով և մի շարք մեդալներով ու շնորհակալագրերով:

1946թ. մայորի կոչումով Գուրգեն Գյուլիշանյանը զորացրվել է և վերադարձել հայրենի երկրամաս:

1952թ. հեռակա կարգով ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը: Գյուլիշանյանը եղել է կուսշրջկոմի հրահանգիչ, շրջժողկրթբաժնի տեսուչ և պատվով կատարել իր պարտականությունները:

Երկարամյա մանկավարժական արգասավոր գործունեության համար նա պարգևատրվել է Հադրութի շրջժողկրթբաժնի գովասանագրերով: Շրջանային և մարզային թերթերի էջերում լույս տեսած իր հոդվածներում վաստակաշատ մանկավարժը նկարագրում էր հայ ժողովրդի զավակների ցուցաբերած խիզախությունը, արիությունն ու հերոսական սխրագործությունները Մեծ Հայրենականի ռազմաճակատներում: Իր սաներին հայրենասիրության ոգով դաստիարակում էր նաև Արցախյան ազգային ազատագրական պայքարի տարիներին:

Հայրենական պատերազմի ռազմաճակատներում սխրանքներ են ցուցաբերել Հադրութի շրջանի Տումու 7-ամյա դպրոցի ուսուցիչներ **Արտաշես Ավագյանը,** Սամսոն Խաչատրյանը, Գրիշա Խաչատրյանը, Սերգեյ Հակոբյանը և ուրիշներ: Նշված դպրոցներում պահպանվող փաստաթղթերի և այլ աղբյուրների ուսումնասիրության հիման վրա ներկայացնենք նրանց գործունեությունը[270]:

Տումու 7-ամյա դպրոցի շրջանավարտ Արտաշես Ավագյանը ավարտում է Հադրութի մանկավարժական ուսումնարանը (1936թ.) և աշխատանքի անցնում Ծակուռու տարրական դպրոցում, որպես ուսուցիչ և վարիչ: Այնուհետև սովորում է Բաքվի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետի հեռակա բաժնում և դասավանդում հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում, միաժամանակ վարում ուսմասվարի պաշտոնը:

1939թ. նոյեմբերի 17-ին զորակոչվում է Կարմիր բանակ: Ռազմական ծառայությունն սկսում է Բելոռուսիայում: Պատերազմի առաջին օրվանից նա մարտերի մեջ էր: Դրանցից մեկում հուլիսի 17-ին ծանր վիրավորվում է և մինչև 1941թ. դեկտեմբերի վերջը բուժվում հոսպիտալներում, հետո վերադառնում հայրենի գյուղ: 1942-1944թթ. աշխատել է Տումու միջնակարգ դպրոցում: 1944-1945 ուստարվանից աշխատել է շրջանի Թաղոտի 7-ամյա դպրոցում՝ որպես ուսմասվար:

Ավագյանը մինչև 1972թ. աշխատել է շրջանի Աղջաքենդ, Ջրակուս, Մամեդաձոր, Աղբուլաղ, Մոխրենես գյուղերում՝ որպես դպրոցի տնօրեն:

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով և բազմաթիվ մարտական ու հոբելյանական մեդալներով:

Սամսոն Խաչատրյանը սկզբնական կրթությունը ստացել է Տումու 7-ամյա դպրոցում, այնուհետև ավարտել Հադրութի շրջկենտրոնի միջնակարգ դպրոցը (1924թ.), դասավանդել հայրենի գյուղի դպրոցում, որպես տարրական դպրոցի ուսուցիչ:

1928թ. զորակոչվել է Կարմիր բանակ: Զինվորական ծառայությունն ավարտելուց հետո 1930թ. ընդունվում է Ադրբեջանի Շահումյանի անվան կուսակցական դպրոցը, որն ավարտում է 1932թ-ին:

Մանկավարժական աշխատանքի է անցել1934թ-ից, որին զուգահեռ ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Աշխատել է շրջանի մի շարք գյուղերում՝ որպես պատմության ուսուցիչ, ուսմասվար և տնօրեն:

Պատերազմի առաջին օրերին զորակոչվել է գործող բանակ, մասնակցել Կովկասի համար մղվող մարտերին, Կերչի ազատագրմանը, որտեղ էլ վիրավորվել է: Ապաքինվել է Ստեփանակերտի հոսպիտալում: Բժշկական հանձնաժողովի որոշմամբ զորացրվել է բանակից: Խաչատրյանը վերադառնում է հայրենի գյուղ, շարունակում իր նախկին գործը: Նա կրթել ու դաստիարակել է հարյուրավոր պատանիների ու աղջիկների, որոնք հետագայում իրենց արժանի տեղն են գտել կյանքում: 1962թ. առողջական վիճակի վատացման կապակցությամբ անցնում է կենսաթոշակի:

Պարգևատրվել է մի շարք մարտական ու հոբելյանական մեդալներով:

Տումու դպրոցի շրջանավարտ **Գրիշա Ալեքսանյանը** ավարտում է Հադրութի մանկավարժական ուսումնարանը և մինչև Հայրենական պատերազմի սկիզբը դասավանդում հայրենի գյուղի, Ծամձորի, Թաղուտի դպրոցներում, միաժամանակ հեռակա կարգով ավարտում Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի երրորդ կուրսը:

1941թ. հոկտեմբերին զորակոչվում է գործող բանակ: Սովորել է Թբիլիսիի քաղղեկների որակավորման եռամսյա դասընթացներում: Ավարտելուց հետո մեկնում է ռազմաճակատ՝ 338-րդ հրաձգային դիվիզիա: Դա այն ժամանակ էր, երբ դիվիզիան հարձակողական մարտեր էր մղում Ռոստով քաղաքի ազատագրման համար: Մեծ զոհերի գնով քաղաքն ազատագրելուց հետո մարտերում աչքի ընկած կոմունիստների հետ նրան ուղարկում են ռազմաճակատին կից կազմակերպված կոմիսարների կարճատև դասընթացներում սովորելու (Կույբիշևի մարզի Մելեկես քաղաքում): Դասընթացներն ավարտելու նախօրեին ծանր հիվանդանում է: Տևական բուժում էր պահանջվում, որի պատճառով ուղարկեցին թիկունք: Աշխատունակությունը վերականգնելուց հետո, չնայած նորից ռազմաճակատ ուղարկելու թախանձանքին, նրան,որպես հրամանատարական կադր, թողնում են թիկունքում աշխատելու:

Ալեքսանյանը պատվով է կատարել իր քաղաքացիական ու զինվորական պարտականությունները: Այդ մասին վկայում են 8 մեդալները, բազմաթիվ շնորհակալագրերն ու պարգևները: Նա 40 տարուց ավելի մանկավարժական աշխատանք է կատարել:

Տումու 7-ամյա դպրոցում դաստիարակված սաներից է նաև **Սերգեյ Հակոբյանը:** Ավարտելով Շուշիի մանկավարժական ուսումնարանը, դասավանդում է հայրենի գյուղի դպրոցում, որպես մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ: Միաժամանակ հեռակա կարգով ավարտում է Բաքվի երկամյա մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ բաժինը և որպես ուսմասվար ու տնօրեն աշխատում Տողի, Ազոխի և հայրենի գյուղի դպրոցներում: Փորձառու մանկավարժը բարձր հիմքերի վրա է դնում բնագիտական առարկաների դասավանդումը:

1941թ. հուլիսի 15-ին զորակոչվում է բանակ: Բաքվի ռազմական ուսումնարանի վեցամսյա դասընթացներն ավարտելուց հետո սպայի կոչումով որպես դասակի հրամանատար գործուղվեց գործող բանակի շարքերը: Մարտնչել է Ուկրաինայում: Անդրեևկա շրջկենտրոնի պաշտպանության մարտերում վիրավորվում է: Բաքվի 5030-րդ հոսպիտալում բուժվելուց հետո նորից վերադառնում է գործող բանակ: 1943թ. հուլիսից ծառայում է 28-րդ հրաձգային բրիգադի 216-րդ գնդում: 1944թ. փոտրվարին Կերչի ազատագրման մարտերից մեկում վիրավորվում է: Ապաքինվելուց հետո նորից շարունակում է ծառայությունը: Զորացրվում է 1946թ.: Մաթեմատիկա է դասավանդում Տումու, Մեծ Թաղլարի, Մոխրենեսի դպրոցներում: Կոմունիստ մանկավարժը երկար տարիներ մանկավարժական աշխատանքին զուգընթաց հասարակական-քաղաքական աշխատանք է տարել գյուղի աշխատավորների շրջանում:

Ս.Հակոբյանը պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով և մի շարք այլ մարտական ու հոբելյանական մեդալներով:

Աշխատանքի ու պատերազմի վետերան, բազմավաստակ մանկավարժ Արմենակ Բաղդասարյանը 1935-1936 ուստարում ավարտել է Ազոխի 7-ամյա դպրոցը, իսկ 1939թ.՝ Հադրութի մանկավարժական ուսումնարանը: Նույն թվականի սեպտեմբերի 1-ից մանկավարժական աշխատանքի է անցնում Հադրութի շրջանի Տրախտիկի տարրական դպրոցում:

1940թ. փետրվարին զորակոչվում է Կարմիր բանակ: Զինվորական ծառայությունն սկսում է Մոսկվայի ռազմական օկրուգում, որտեղ ծառայում է մինչև Հայրենական մեծ պատերազմի սկիզբը: Ակտիվորեն մասնակցում է մայրաքաղաքի պաշտպանության համար մղվող մարտերին: Լինելով զենիթային հրանոթի հրամանատար, Բաղդասարյանը մինչև պատերազմի վերջը մնում է Մոսկվայի պաշտպանների շարքերում: Զորացրվելուց հետո (1945թ. նոյեմբեր) անմիջապես անցնում է մանկավարժական աշխատանքի նախ Ֆիզուլիի ռուսական միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ, այնուհետև աշխատում է Ազոխի 7-ամյա դպրոցում: 1946-1947 ուստարում ընդունվում է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկայի ֆակուլտետը, որն ավարտում է 1949թ.: Առանց աշխատանքից կտրվելու 1959թ. ավարտում է Ադրբեջանի մանկավարժական ինստիտուտը: 1946-1982թթ. տարբեր ժամանակներում աշխատել է Հադրութի շրջանի Ազոխ, Դիդուկչի, Մեծ Թաղլար, Տրախտիկ, Բլութան գյուղերի դպրոցներում[271]:

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով, 10 մարտական ու հոբելյանական մեդալներով:

Մոխրենես գյուղի 7-ամյա դպրոցի շրջանավարտ **Արմիկ Ասրյանը** ավարտում է Տողի միջնակարգ դպրոցը (1938թ.), այնուհետև Հադրութի մանկավարժական ուսումնարանը (1939-1942թթ.): 1942թ. զորակոչվում է Կարմիր բանակի շարքերը,

մասնակցում Ստալինգրադի ազատագրության համար մղվող կատաղի մարտերին:

Պատերազմական գործողությունների ընթացքում ցուցաբերած մարտական ու հոգեբանական պատրաստվածության, հայրենիքի պաշտպանության գործում պատասխանատվության բարձր հատկանիշների դրսևորումներից ելնելով՝ Արմիկ Ասրյանին ընդգրկում են զինմասի հետախուզական վաշտում՝ որպես ջոկի հրամանատար: Մինչև Հայրենական մեծ պատերազմի ավարտը Ստալինգրադից մինչև Գերմանիա նրա մարտական ուղին անցնում է թշնամու թիկունքում ռազմական հետախուզական գործունեությամբ:

Հայրենիքի պաշտպանը, չվախենալով յուրաքանչյուր պահի թշնամու կողմից գերեվարվելու վտանգից, ամենայն պատասխանատվությամբ է կատարել իր հետախուզական պարտականությունները, ինչը բարձր է գնահատվել Գերագույն գլխավոր հրամանատարության կողմից: Այսպես, հայրենիքին մատուցած մարտական ծառայությունների համար պարգևատրվել է Մարտական փառքի, Կարմիր աստղի, Հայրենական մեծ պատերազմի շքանշաններով ու բազմաթիվ մեդալներով, ինչպես նաև արժանացել է Գերագույն գլխավոր հրամանատարի 7 գրավոր շնորհակալագրերի:

Պատերազմի ավարտից հետո անցել է մանկավարժական գործունեության հայրենի Մոխրենիս գյուղում: Այնուհետև ընտանիքը տեղափոխվում է նույն շրջանի Թաղոտ գյուղը, ուր աշխատելով որպես մանկավարժ, միաժամանակ ավարտում է Բաքվի Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետը:

1958-1961թթ. նշանակվում է Ազոխի միջնակարգ դպրոցի տնօրեն, այնուհետև կրկին տեղափոխվում է Թաղոտի միջնակարգ դպրոց և մինչև 1999թ. աշխատում նախ որպես տնօրեն, այնուհետև՝ հայոց լեզվի և գրականության ուսուցիչ:

Շուրջ 60-ամյա մանկավարժական գործունեության ընթացքում Ա. Ասրյանը իրեն դրսևորել է որպես լավագույն մասնագետ, ղեկավարման գործի հմուտ կազմակերպիչ, ամենուր ցուցաբերել է սկզբունքայնություն ու հասարակական-քաղաքական ակտիվություն, վայելել մանկավարժական կոլեկտիվների ու հասարակության սերն ու հարգանքը[272]:

Մինչև Հայրենական պատերազմը Հադրութի մանկավարժական ուսումնարանի շրջանավարտ **Ռուբեն Արզումանյանը** որպես տարրական դասարանի դասվար և ուսմասվար աշխատում էր (1940-1942թթ.) հայրենի Հին Թաղլար գյուղի 7-ամյա դպրոցում: 1942թ. ապրիլին զորակոչվում է Կարմիր բանակ:

Զինվորական ծառայությունն սկսել է Հեռավոր Արևելքում: 1945թ. հիտլերյան Գերմանիայի ջախջախումից հետո ռազմական գործողությունների թատերադաշտը տեղափոխվում է Հեռավոր Արևելք: Արզումանյանը ակտիվորեն մասնակցել է ճապոնական կվանտունյան բանակի ջախջախման մարտերին:

Պատերազմից հետո ավարտել է Վոլսկ քաղաքի ռազմաօդային դպրոցը, ստացել է ավիամեխանիկի մասնագիտություն: 1946թ. զորացրվել է բանակից և աշխատանքի անցել Հին Թաղլարի դպրոցում, որտեղ էլ աշխատել է որպես ռազմագիտության ուսուցիչ: Մի քանի անգամ սովորել է ռազմական վերապատրաստման դասընթացներում, ստացել տեխնիկ-լեյտենանտի կոչում: Հեռակա կարգով ավարտել է Բաքվի երկամյա ուսուցչական ինստիտուտը 1954թ.:

Պարգևարտվել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով,

մարտական ու հոբելյանական մի քանի մեդալներով: Պաշտոնաթող տեխնիկ-լեյտենանտ Արզումանյանը ակտիվորեն մասնակցում է գյուղում տարվող քաղաքական միջոցառումներին, դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության գործին[273]:

Հադրութի շրջանի Ծամձոր գյուղի դպրոցում պահպանվող փաստաթղթերից և այլ աղբյուրներից տեղեկանում ենք, որ նշված դպրոցի շրջանավարտ **Միքայել Աթայանը** ավարտել է Հադրութի մանկավարժական տեխնիկումը (1940թ.) և որպես ուսուցիչ, ուսմասվար աշխատել հայրենի գյուղի դպրոցում:

1941թ. հոկտեմբերին զորակոչվում է Կարմիր բանակ: Ծառայությունն սկսում է ռազմաօդային դեսանտային զորամասում: Ավարտում է զորամասի հրամանատարական դպրոցը, այնուհետև ընդունվում կրտսեր քաղղեկների դասընթացները և ստանալով կրտսեր քաղղեկի կոչում, նշանակվում վաշտի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ: Այդ պաշտոնում, 169-րդ հրաձգային դիվիզիայի 556-րդ գնդի կազմում նա մասնակցում է ստալինգրադյան հերոսական մարտերին: Գերմանական զորքերի խմբավորման ջախջախումից հետո Աթայանը իր զորամասի հետ մասնակցում է Կուրսկի աղեղի կատաղի մարտերին: Այդ մարտերի ավարտից հետո նրան սովորելու են ուղարկում քաղաշխատողների հատուկ դասընթացներում: Աշխատել է 867-րդ առանձին գումարտակի կոմերիտկոմիտեի քարտուղար: Այդ զորամասում նա ծառայում է մինչև 1945թ. նոյեմբերը: Այնուհետև զորացրվում է և ավագ լեյտենանտի ուսադիրներով վերադառնում հայրենիք: Անցնում է մանկավարժական աշխատանքի, ռուսաց լեզու է դասավանդում հայրենի գյուղի դպրոցում, շրջանի մի շարք այլ գյուղերում: Հեռակա կարգով ստանում է բարձրագույն մանկավարժական կրթություն:

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի շքանշանով և 10 մարտական ու հոբելյանական մեդալներով:

Ուսանելի կյանքի ուղի են անցել Մեծ Թաղլարի և Հին Թաղլարի 7-ամյա դպրոցների ուսուցիչներ **Մանուկ Գալստյանը** և **Միքայել Գասպարյանը**:

Ավարտելով Հադրութի մանկավարժական ուսումնարանը, **Մանուկ Գալստյանը** 1935-1941թթ. ուսուցչություն է արել Մեծ Թաղլարի դպրոցում:

1941թ. նոյեմբերին զորակոչվեց Կարմիր բանակ: Կովկասյան ռազմաճակատի ստորաբաժանումներից մեկում հրանոթի հրամանատար էր, իսկ հետո՝ դիվիզիոնի ավագ: Մասնակցել է Կովկասի պաշտպանության մարտերին: Երբ մեր զորամասերը անցան հակահարձակման, որտեղ ծառայում էր Գալստյանը, հարձակման առաջավոր զորամասերից մեկն է: Մարտական փառապանծ ուղի է անցել ուսուցիչ-զինվոր Գալստյանը Կովկասից մինչև Էլբա գետը, 1-2-րդ ուկրաինական և 1-ին բելոռուսական ռազմաճակատներում: Նա երկու անգամ վիրավորվել է, ապաքինվել ու նորից վերադարձել ռազմի դաշտ: Հաղթանակը դիմավորել է Էլբայի ափին: Պատերազմից հետո նորից աշխատել է Մեծ Թաղլարի միջնակարգ դպրոցում:

Պարգևատրվել է Կարմիր աստղի, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով, բազմաթիվ մարտական ու հոբելյանական մեդալներով: Գերագույն գլխավոր հրամանատարության կողմից 18 անգամ արժանացել է գովասանագրերի ու տարբեր տեսակի խրախուսանքների:

Մանկավարժական աշխատանքին զուգահեռ ագիտ-մասսայական աշխատանք է տարել գյուղի հասարակության շրջանում:

Միքայել Գասպարյանը Հադրութի մանկավարժական ուսումնարանն ավարտելուց հետո անմիջապես անցել է ուսուցչական աշխատանքի: 1942թ. հունվարին զորակոչվել է Կարմիր բանակ: Ծառայությունը հիմնականում անց է կացրել Հեռավոր արևելյան ռազմական օկրուգի 40-րդ դիվիզիայում: 1943թ. հունվարից ծառայել է 113-րդ ամրացված շրջանի 242-րդ առանձին գնդում, որպես կրտսեր հրամանատար:

Գասպարյանը մասնակցել է կվանտունյան բանակի ջախջախմանը: Այդ օրերին ցուցաբերած խիզախության համար նա պարգևատրվել է Փառքի 2-րդ աստիճանի շքանշանով ու մեդալներով:

Զորացրվել է 1946թ. ու աշխատանքի անցել Դոլանլարի 7-ամյա դպրոցում: 1952թ. ավարտել է Ստեփանակերտի երկամյա ուսուցչական ինստիտուտի պատմության ֆակուլտետը, իսկ 1955թ.՝ Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժինը: 1951-1955 ուստարուց աշխատում է Հին Թաղլարի միջնակարգ դպրոցում՝ որպես պատմության ուսուցիչ:

Շրջանում ճանաչված պրոպագանդիստ էր, «Գիտելիք» ընկերության անդամ, մեծ աշխատանք էր տանում դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ:

Հայրենական մեծ պատերազմին Լեռնային Ղարաբաղից մասնակցած ուսուցիչների ու նրանց սաների սխրագործությունների մասին գրվել են բազմաթիվ գրքեր (Խ. Բարսեղյան, «Կրակների միջով», Եր.1982, Ղ. Դալլաքյան, «Մարտական 89», Եր. 1968, Շ. Մկրտչյան, «Լեռնային Ղարաբաղը Հայրենական պատերազմի տարիներին», ՊԲՀԱ, 1991-1992, Գ. Աղասարյան, «Արցախի հայ ուսուցիչները Մեծ Հայրենականում», Մ.Աղաջանյան, «Հաթերք», 2012, Խ. Ղազարյան, «Տումի», 2003, Ս. Սարգսյան, «Խնապատ», Երևան, 2006) և այլ ուսումնասիրություններ: Անշուշտ պետք է ասել, որ մեծ ու դժվարին խնդիր է նորանոր ուսումնասիրություններ կատարել, գրել նրանց մարտական գործողությունների մասին, ովքեր հերոսաբար զոհվել են ռազմաճակատում և ովքեր հաղթական ավարտով վերադարձել ու նվիրվել են մանկավարժական գործունեությանը: Աշխատության այս բաժնում, ուսումնասիրության հետ կապված, փորձել ենք համառոտ ներկայացնել Հայրենական պատերազմից փառքով վերադարձած ուսուցիչների գործունեությունը:

Ուստի այսօր մեր մտավորականության սրբազան պարտականությունն է գրել ոչ միայն Հայրենական, այլև Արցախյան պատերազմում մեր հայրենիքի ազատության համար մարտնչած մարդկանց մասին, որոնք իրենց կյանքի գնով պատմական հաղթանակ նվաճեցին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1946-1988թթ.)

1. ԼՂԻՄ-ի կրթական համակարգի զարգացման փուլերը, իրականացվող բարեփոխումները հետպատերազմյան վերականգնման ու զարգացման տարիներին (1946-1988թթ.)

Հայրենական մեծ պատերազմը իր բացասական կնիքը դրեց ոչ միայն ժողովրդական տնտեսության, այլև կրթական գործի, հանրակրթական, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն դպրոցների վրա: Ուստի հետպատերազմյան շրջանում անհրաժեշտ եղավ մեծ ջանքեր գործադրել, որպեսզի վերականգնվեր նախապատերազմյան վիճակը ժողտնտեսության և հանրակրթության ոլորտներում: Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո ԽՍՀՄ կառավարության կողմից ընդունվեցին մի շարք որոշումներ ժողտնտեսության, մշակութային հիմնարկների, դպրոցների, ուսումնական հաստատությունների և այլ ոլորտի աշխատանքների վերականգնման անհետաձգելի միջոցառումների վերաբերյալ:

Այդ միջոցառումների ընդհանուր համակարգում կարևոր օղակ հանդիսացավ 1946թ. մարտին ընդունած երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման 1946-1950թթ. հնգամյա պլանը[275]: Այդ պլանով նախատեսվում էր ոչ միայն վերականգնել, այլև զգալիորեն գերազանցել տնտեսության և մշակույթի բոլոր բնագավառների նախապատերազմյան մակարդակը: Ըստ որում, մեծ ուշադրություն դարձվեց լուսավորությանը և դպրոցին: Նախատեսվում էր ոչ միայն վերականգնել պատերազմի ժամանակ քայքայված դպրոցական շենքերը, այլև կառուցել շատ նոր շենքեր, զգալիորեն ընդարձակել դպրոցների ցանցը և ավելացնել նրանցում սովորողների թիվը:

ԽՍՀՄ բազմազգ ժողովրդի անձնուրաց աշխատանքի շնորհիվ կարճ ժամանակամիջոցում կառուցվեցին դպրոցական նոր շենքեր, վերականգվեցին ֆաշիստների ոչնչացրած գրադարանները, ուսումնական կաբինետները և արտադպրոցական հիմնարկները: Այդ գործում միմյանց ցույց էր տրվում եղբայրական օգնություն: Այսպես, Ռուսաստանի Ֆեդերացիայում շտապ կերպով տպագրվեցին դասագրքեր ուկրաինական, մոլդավական դպրոցների համար, հավաքվեցին գրքեր և ձեռնարկներ տուժած շրջանների դպրոցական գրադարանների համար: Հայաստանում տպագրվեցին ուսումնական դասագրքեր, պլաններ, ծրագրեր, ձեռնարկներ Լեռնային Ղարաբաղի հայկական դպրոցների համար:

Լեռնային Ղարաբաղի արդյունաբերական ձեռնարկությունները, կոլտնտեսությունները և սովխոզները ցույց տվեցին գործուն օգնություն դպրոցական շինարարությանը: Տարեցտարի ծավալվեց քաղաքում և գյուղում դպրոցին օգնություն ցույց տալու ժողովրդական նախաձեռնությունը: Անշեղորեն մեծանում էին կուլտուրային և լուսավորությանը հատկացվող գումարները: Հետպատերազմյան առաջին հնգամյակի ընթացքում 1940 թվականի համեմատությամբ այդ նպատակով հատկացված միջոցներն ավելացան 2,6 անգամ:

ԽՍՀՄ-ում դպրոցների ցանցի վերականգնումը և հետագա ընդարձակումը

անց էր կացվում տվյալ հանրապետության և մարզի ազգաբնակչության խտության և տնտեսական զարգացման հեռանկարների հաշվառմամբ: Կազմվում էին դպրոցական շենքերի շինարարության և վերականգնման, ուսումնանյութական բազայի ամրապնդման և ծավալման, դպրոցական ցանցի նպատակահարմար կազմակերպման, ընդհանուր ուսուցման կազմակերպման ռեալ պլաններ: ԼՂԻՄ-ում գլխավոր ուշադրությունը դարձվում էր երեխաներին (առանձնապես մեկ կամ երկու ծնող կորցրածներին) դպրոցում ներգրավելու, սովորողների քանակակազմը պահպանելու, մանկավարժական անհրաժեշտ կադրեր պատրաստելու վրա:

Գերակատարվեցին դպրոցական ցանցի ընդլայնման և սովորողների թվի ավելացման հնգամյա պլանով նախատեսված առաջադրանքները: Նախատեսվել էր ԽՍՀՄ տարրական, յոթնամյա և միջնակարգ դպրոցների թիվը 1950 թվականին հասցնել 193 հազարի, իսկ դրանցում սովորողների թիվը՝ մինչև 31,8 միլիոնի: Իրականում 1950/51 ուսումնական տարում գործում էր ավելի քան 220 հազար հանրակրթական դպրոց, որոնցում ուսանում էր մոտ 35 միլիոն աշակերտ[276]:

Հետպատերազմյան շրջանում Հայաստանում ժողովրդական տնտեսության զարգացման մեծ թափը հնարավորություն ստեղծեց դպրոցական ցանցի առավել ընդարձակման համար: Դպրոցների թիվն ավելացնելու նպատակով կառավարությունն անհրաժեշտ միջոցներ տրամադրեց: Առանձնապես մեծ ուշադրություն դարձվեց 7-ամյա և միջնակարգ դպրոցների թիվն ավելացնելու վրա:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, ու Հայաստանի Հանրապետությունում 1946-50 թվականների ընթացքում տարեցտարի ընդարձակվել է հանրակրթական դպրոցների ցանցը, ինչպես նաև ավելացել սովորողների քանակը: Այսպես, օրինակ՝ այդ տարիներին հանրապետությունում դպրոցների թիվը ավելացել է 272-ով (պլանով նախատեսվածը գերազանցում էր 200-ով)[277]: Որոշակի փոփոխություններ կատարվեցին դպրոցի առանձին աստիճանների հարաբերակցության մեջ:

Հայաստանի Հանրապետությունում առանձնահատուկ ուշադրություն դարձվեց պարտադիր 7-ամյա և ընդհանուր միջնակարգ կրթության իրականացմանը: 1949-50 ուստարվանից և հաջորդ տարիներին հանրապետությունում ընդարձակվում է 7-ամյա և միջնակարգ դպրոցների ցանցը, զգալիորեն ավելանում 5-7-րդ և 8-10-րդ դասարաններում սովորողների քանակը: 1950/51 ուստարվա սկզբին հանրապետությունում գործում էր 3630 դպրոց, որոնցում սովորում էր 622100 աշակերտ: Եթե 1945-46 ուստարում հանրապետության 1290 7-ամյա դպրոցներում սովորում էր 199123, իսկ 470 միջնակարգ դպրոցներում՝ 196999 աշակերտ, ապա 1950/51 ուստարում հանրապետության 1509 7-ամյա դպրոցներում սովորում էր 238967 աշակերտ[278]:

Ինչպես տեսնում ենք, հետպատերազմյան տարիներին ժողովրդական տնտեսության զարգացման ասպարեզում ձեռք բերած մեծ նվաճումների հիման վրա հաջողությամբ կատարվեց ու գերակատարվեց նաև ժողովրդական կրթության հնգամյա պլանը: Ընդարձակվեց դպրոցական ցանցը: Այդ մասին պատկերացում է տալիս հետևյալ աղյուսակը.

Աղյուսակ 12

Հանրակրթական դպրոցների ցանցը Հայաստանում հետպատերազմյան առաջին հնգամյակի տարիներին[279]

Ուսումնական տարի	Դպրոցների քանակը	Տարրական դպրոց	7-ամյա դպրոց	Միջնակարգ դպրոց
1945/46	1144	244	612	288
1946/47	1146	245	613	288
1947/48	1164	253	624	287
1948/49	1168	258	624	286
1949/50	1182	232	655	295

Կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմի բյուրոն 1949թ. մարտին քննարկեց մարզում պարտադիր 7-ամյա կրթություն իրականացնելու հարցը և ընդունեց համապատասխան որոշում: Մարզկոմի բյուրոն ժողկրթության մարմինների առջև խնդիր դրեց դպրոցական նոր շենքեր կառուցելու, եղած շենքերի կապիտալ վերանորոգման, դպրոցների նյութատեխնիկական բազան հարստացնելու ուղղությամբ: Միայն 1945-46 ուստարում մարզում կապիտալ վերանորոգման ենթարկվեց 71, ընթացիկ վերանորոգման՝ 127 դպրոց, պահեստավորվեց 9650 խորանարդ մետր վառելափայտ, կահավորվեցին ֆիզիկայի 81, քիմիայի ու բնագիտության 20 կաբինետներ, որոնց համար ծեռք բերվեց 44 հազար ռուբլու սարքավորում[280]:

Հետպատերազմյան առաջին տարիներին ժողովրդական տնտեսության զարգացման ասպարեզում ծեռք բերված նվաճումների հետ միասին հաջողությամբ կատարվեց նաև ժողովրդական կրթության հնգամյա պլանը, ընդարձակվեց մարզի դպրոցների ցանցը, ավելացավ աշակերտների քանակը: Այդ են վկայում հետևյալ տվյալները.

Աղյուսակ 13

Ուսումնա - կան տարի	Դպրոցների քանակը	Տարրական դպրոց	7-ամյա դպրոց	Միջնակարգ դպրոց	Աշակերտ. թիվը
1945/46	238	51	81	106	32898
1946/47	200	53	40	107	34584
1947/48	201	53	40	108	35440
1948/49	200	52	40	108	34831
1949/50	200	52	40	108	34222

Կարելի է ասել, որ 1950-ական թվականներին Լեռնային Ղարաբաղի դպրոցների ցանցը լայն հնարավորություն ուներ ապահովելու 7-ամյա պարտադիր ուսուցման իրականացումը: ԼՂԻՄ լուսժողկոմատը ժողովրդական կրթության բնագավառում գլխավոր խնդիրներից մեկը համարեց ընդհանուր յոթնամյա կրթության անշեղ կենսագործումը գյուղում և միջնակարգ կրթության կենսագործումը

քաղաքում: Ընդունված որոշման հիման վրա ժողովրդական կրթության մարմինները զգալի աշխատանք ծավալեցին շրջաններում և գյուղերում տարրական դպրոցները 7-ամյա դպրոցների վերածելու ուղղությամբ:

Ինչպես հայտնի է, պատերազմից հետո երկրի կյանքում տեղի ունեցավ այնպիսի կարևոր իրադարձություն, ինչպիսին անցումն էր ընդհանուր պարտադիր 7-ամյա կրթության: 1949թ. հունվարին ընդունվեց ՌՍՖՍՀ Նախարարների խորհրդի որոշումը այդ տարվանից մտցնելու երեխաների 7-ամյա պարտադիր ուսուցում: Նման որոշումներ ընդունվեցին նաև բոլոր միութենական հանրապետություններում:

ԼՂԻՄ լուսժողկոմը ձեռնամուխ եղավ 7-ամյա պարտուսի իրագործմանը, 7-ամյա դպրոցների ցանցի ընդարձակմանը, բոլոր վայրերում երեխաների համար 7-ամյա դպրոցներ հաճախելու լավագույն պայմանների (սովորողների տնից դպրոց փոխադրումը կազմակերպելը, դպրոցից հեռու բնակվող երեխաների համար գիշերօթիկների բացումը) ստեղծմանը: Ժողովրդական կրթության մարմինները մեծ ուշադրություն դարձրին յոթնամյա դպրոցներում աղջիկներին ընդգրկելու հարցի վրա: Միաժամանակ մեծ աշխատանք տարվեց 7-ամյակն ավարտածներին լրիվ միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում ընդգրկելու ուղղությամբ:

Ուսուցիչների խորհրդակցությունում (1949թ. օգոստոս) ունեցած իր ելույթում ԼՂՀ ժողկրթբաժնի վարիչ Ս.Աբրահամյանը մատնանշեց, որ եթե 1940թ. մարզի դպրոցներում սովորում էր 40.5 հազար երեխա, ապա 1949-50 ուստարում այդ թիվը նվազել ու հասել է 34222-ի:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում որոշակի աշխատանք է տարվել արտադրության մեջ աշխատող պատանիներին ու աղջիկներին բանվորական և գյուղական երիտասարդական դպրոցներում ընդգրկելու ուղղությամբ: Այսպես, օրինակ՝ 1946թ. մարզում գործում էր բանվորական երիտասարդական 9 դպրոց, որտեղ սովորում էր 354 աշակերտ, իսկ մեծահասակների 2 տարրական դպրոցներում՝ 150 սովորող: 1952-53 ուստարում բանվորական երիտասարդական 3 դպրոցներում սովորում էր 400 աշակերտ, գյուղական երիտասարդական 8 դպրոցներում՝ 540 աշակերտ, մեծահասակների 11 տարրական դպրոցներում՝440[281]:

Օգոստոսյան խորհրդակցությունում լուսբաժնի վարիչը իր ելույթում միաժամանակ մատնանշեց, որ անհրաժեշտ է ջանքեր գործադրել ոչ միայն նախապատերազմյան վիճակը վերականգնելու, այլև նոր ժամանակների պահանջը բավարարող մակարդակին հասցնելու համար: Վիճակը շտկելու համար անհրաժեշտ էր միջոցառումների և պետական որոշումների շարք: Դրանք եղան հետևյալները.

1. Պայքար մերկ վարչարարության դեմ. կատարվեց դպրոցի տնօրենի իրավունքների սահմանափակում՝ հօգուտ մանկավարժական խորհրդի:

2. Երկու սեռերի՝ աղջիկների և տղաների համատեղ ուսուցման վերականգնում (1954թ. սեպտեմբեր), հանուն նրանց բարոյական և գեղագիտական դաստիարակության շահերի:

3. Սովորողների դաստիարակության նկատմամբ միասնական մոտեցման (դպրոց, ընտանիք, հասարակություն) սկզբունքի արմատավորում և կիրառում:

4. Արտադասարանական և արտադպրոցական դաստիարակչական աշխատանքների կազմակերպման նոր սկզբունքների՝ լավատեսության, անձի նկատմամբ բարձր վստահության, ստանձնած գործի նկատմամբ պատասխանատվության, ռոմանտիկայի և երևակայության սահմանում և ընդունում:

5. Բարեփոխումներ ուսումնական աշխատանքի շրջանում և ուսումնական

գործընթացի կատարելագործում, նոր պլանների, ծրագրերի ու դասագրքերի ստեղծում:

6. Անցում պարտադիր միջնակարգ կրթության (1959թ. ապրիլի 16):

7. Ուսուցչական կադրերի պատրաստման և վերապատրաստման խթանում մարզի սահմաններում և Ադրբեջանի տարածքում ապրող հայաշատ վայրերում:

8. Ուսումնական աշխատանքների նկատմամբ նոր մոտեցումների դրսևորում և այլն (այդ մասին մանրամասն կնշվի հաջորդ բաժիններում):

Լեռնային Ղարաբաղի մարզժողկրթբաժինն իր նիստերում քննարկել է դպրոցին վերաբերող բազմաթիվ հարցեր, համապատասխան որոշումներ ընդունել ժողովրդական կրթության բնագավառում տեղ գտած թերությունները վերացնելու և ուսումնադաստիարակչական աշխատանքների մակարդակը բարձրացնելու համար: Այսպես, օրինակ՝ 1945-46 ուստարում քննարկվեցին. ա) ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքը մարզի դպրոցներում, բ) ուսուցիչների աշխատավարձի բարձրացման մասին, գ) ԼՂՀ դպրոցներում ՍՍՀՄ սահմանադրության դասավանդման դրվածքի մասին, դ) շրջժողկրթբաժվարների աշխատանքները բարելավելու մասին և այլ հարցեր:

Լեռնային Ղարաբաղում 20-րդ դարի 50-ական թվականներին մեծ ծավալ ստացավ դպրոցաշինությունը, հարստացավ նյութական բազան: Դպրոցական նոր շենքեր կառուցվեցին Ստեփանակերտում, Հադրութի, Մարտունու, Շուշիի շրջանների մի շարք գյուղերում: Շահագործման հանձնվեց մոտ 40 դպրոցական շենք: Մինչև 1956 թվականը 15 գյուղերում կոլտնտեսությունների միջոցներով կառուցվել էր 50 դպրոցական շենք:

Հանրակրթական դպրոցի նկատմամբ իսկական ժողովրդական հոգատարության օրինակ է հանդիսանում ԼՂԻՄ-ի հայկական շրջանների աշխատավորության վերաբերմունքը:

Այսպես, 1949-50 ուստարին հաջողությամբ նախապատրաստելու և կազմ ու պատրաստ սկսելու նպատակով Մարտակերտի շրջանի ղեկավար մարմինները, կոլտնտեսականները և կրթության, մշակույթի բնագավառի աշխատողները մարզի բոլոր շրջանների կոլտնտեսություններին ու կրթության ոլորտի աշխատողներին հղեցին դիմում, որի մեջ ասված էր. «Ելնելով անցյալ տարվա փորձից, մենք այս տարի (1949-50 ուսումնական տարի) ևս պարտավորվում ենք օգնել նոր ուսումնական տարին ավելի հաջող նախապատրաստելու և կազմ ու պատրաստ սկսելու համար: Մենք պարտավորվում ենք.

1. Մինչև հուլիսի 30-ը վերանորոգել դպրոցական բոլոր շենքերը, գույքը և օգնել դպրոցներին՝ ձեռք բերելու լրացուցիչ ինվենտար:

2. Մինչև օգոստոսի 20-ը ավարտել ուսուցչական բնակելի կիսավարտ մնացած շենքերի կառուցման աշխատանքները: Օգնել դպրոցներին և ուսուցիչներին՝ իրենց հատկացված հողամասերի վրա կատարելու ցանքի աշխատանքներ:

3. Դպրոցական կոլեկտիվներին ցույց տալ ամենօրյա օգնություն՝ կենսագործելու պարտուսը, ինչպես նաև առանձնակի ուշադրություն դարձնել կոլտնտեսային արտադրության մեջ աշխատող երիտասարդության ուսուցման գործին:

4. Օգնել դպրոցի աշխատողներին.

ա) մինչև օգոստոսի 20-ը ռադիոֆիկացիայի ենթարկել բոլոր դպրոցական շենքերը և ուսուցիչների բնակարանները,

բ) շրջանի բոլոր դպրոցներում տեղադրել հեռախոսներ,

գ) օգնել դպրոցների և ուսուցչական բնակելի շենքերի բակերը առաջիկա երկու տարվա ընթացքում ցանկապատելու, բարեկարգելու և ծառազարդելու.

5. 1949 թվականի ընթացքում էլեկտրական լուսավորություն անցկացնել շրջանի բոլոր դպրոցներում և ուսուցիչների բնակարաններում:

6. 1949-50 թթ. ընթացքում բոլոր դպրոցների բակերում ունենալ ջրածորակներ:

7. Բոլոր դպրոցներին կից ստեղծել հրապարակներ և դրանք կահավորել ֆիզկուլտ-սպորտային անհրաժեշտ գույքով:

8. Հոգատարությամբ շրջապատել Հայրենական պատերազմում զոհվածների, հաշմանդամների երեխաներին և հայրենադարձ դպրոցականներին, նրանց ցույց տալ անհրաժեշտ նյութական օգնություն:

9. Շրջանի գյուղերի կոլտնտեսականները պարտավորվում են 1951թ. ընթացքում իրենց գյուղերում կառուցել դպրոցական երկհարկանի շենքեր:

10. Օգնել դպրոցների դիրեկցիաներին՝ դպրոցներն ապահովելու ուսումնական և գրենական պիտույքներով, դիդակտիկ նյութերով:

Մենք համոզված ենք,- ասված է դիմումի վերջում,- որ այս հայրենասիրական նախաձեռնությունը լայն արձագանք կգտնի մարզի բոլոր կոլտնտեսականների կողմից: Մեր մարզի կոլտնտեսային հասարակությունը իր բոլոր ուժերով կօգնի ժողովրդական կրթության ֆրոնտի աշխատողներին՝ դպրոցների մասին կուսակցության մարզկոմի և շրջանային կոմիտեների որոշումներն ամբողջովին կենսագործելու համար, կօգնի նրանց դաստիարակելու մեր հայրենիքին անսահմանորեն նվիրված սերունդ»[282]:

Այս խնդրում դպրոցին մեծ օգնություն կազմակերպեցին տեղական կուսակցական մարմինները, կոլտնտեսություններն ու արդյունաբերական ձեռնարկությունները: Մարզում սկսվեց համաժողովրդական մի շարժում՝ հարազատ դպրոցին օգնելու, նրա ուսումնանյութական բազան բարելավելու, ուսուցիչների համար պայմաններ ստեղծելու, աճող սերնդի կրթության ու դաստիարակության գործը նոր, ավելի բարձր մակարդակի հասցնելու համար:

Վերը նշված փաստերը վկայում են, որ ինչպես շրջանային, մարզային կրթության բաժինների աշխատողները, այնպես էլ աշխատավորությունը քիչ աշխատանք չկատարեցին դպրոցահասակ երեխաներին ուսման մեջ ընդգրկելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու ուղղությամբ: Այդ ամենը, սակայն, բավական չէր, որպեսզի դպրոցից դուրս մնացած բոլոր երեխաները ետ վերադառնային դպրոց: Հարկավոր էր տևական ու համառ աշխատանք կատարել ինչպես իրենց՝ երեխաների, այնպես էլ ծնողների հետ: Իսկ դա ուժերի մեծ լարում, հետևողական աշխատանք էր պահանջում:

Արխիվային փաստաթղթերից և այլ աղբյուրներից տեղեկանում ենք, որ տարեցտարի հարստանում է մարզի հանրակրթական դպրոցների ուսումնանյութական բազան: Այսպես, օրինակ՝ միայն 1952-53 ուստարում մարզի դպրոցները ձեռք բերեցին 400 հազար ռուբլու լաբորատոր սարքավորումներ, 200 հազար ռուբլու գրքեր, 500 հազար ռուբլու դպրոցական գույք, ստեղծվեց 50 լաբորատորիա և արհեստանոց: Նույն տարում կառուցվեց դպրոցական երկու նոր շենք, կապիտալ վերանորոգման ենթարկվեց 61 դպրոցական շենք, 15 դպրոցների կից ստեղծվեցին գիշերօթիկներ և այլն:

Մարզում 50-ական թվականներին զգալի աշխատանք տարվեց արտադրության մեջ աշխատող երիտասարդության կրթության ուղղությամբ: Այսպես, օրինակ՝ մարզժողկրթբաժնի վարիչ Ս.Հայրապետյանի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ 1950-51 ուստարում մարզում գործում էին 28 երեկոյան դպրոցներ, որոնցում ընդգրկված էին 1745 պատանիներ ու աղջիկներ, իսկ բանվորական

երիտասարդական և գյուղական երիտասարդական ու մեծահասակների 30 տարրական դպրոցներում սովորում էր 1186 մարդ[283]:

Պետք է ասել, որ 1950-ական թվականներին Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցների թե՛ կառուցվածքում և թե՛ աշխատանքի բովանդակության մեջ զգալի փոփոխություններ կատարվեցին. առանձնահատուկ ուշադրություն դարձվեց պարտադիր 7-ամյա կրթությունից ընդհանուր միջնակարգ կրթության անցնելու հարցին:

Ինչպես նշեցինք, պարտադիր 7-ամյա ուսուցման իրականացումը ԽՍՀՄ հանրապետություններում, այդ թվում Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում, սկսվեց հետպատերազմյան դժվարի տարիներին: Երեխաների նկատմամբ համաժողովրդական հոգատարության, նրանց ցույց տրվող օգնության շնորհիվ այն կենսագործվեց հաջողությամբ:

Հետագա տարիներին աշխատանքը շարունակվեց ոչ միայն 7-15 տարեկան երեխաների պարտադիր ուսման, այլև ընդհանուր միջնակարգ կրթության իրականացման ուղղությամբ: Այսպես, 1952թ. ԽՍՀՄ Նախարարների խորհրդի ընդունած որոշման համաձայն պահանջվում էր նախորդ հնգամյակի համեմատությամբ մեծացնել դպրոցների շինարարությունը քաղաքներում և գյուղերում 70 տոկոսով, միութենական հանրապետություններում և ինքնավար մարզերում կազմվեցին միջնակարգ դպրոցների ցանցի հետագա ընդլայնման պլաններ:

Արխիվային փաստաթղթերից, «Խորհրդային Ղարաբաղ» թերթում տպագրված հոդվածներից և ժամանակակիցների (Մ.Օհանջանյան, Բ.Դավթյան, Ա.Պողոսյան, Խ.Ղազարյան, Մ.Բալայան և ուրիշներ) հուշերից[284] և այլ աղբյուրներից տեղեկանում ենք, որ 1952-53 ուստարում ԼՂԻՄ-ում հինգ տարրական դպրոցներ վերածվեցին 7-ամյակի, իսկ 12 7-ամյա դպրոցներ՝ միջնակարգի: Այս երևույթը շարունակվում էր նաև հաջորդ ուսումնական տարիներին: Մարզի դպրոցներում անընդհատ ավելացվում էր 5-10-րդ դասարանների և նրանցում սովորողների թիվը: Միաժամանակ ավելանում էր 8-10-րդ դասարաններում սովորողների քանակը[285]:

1950-ական թվականներին Լեռնային Ղարաբաղում զգալիորեն ընդլայնվում է դպրոցների ցանցը: Դա երևում է ստորև բերվող աղյուսակից[286].

Աղյուսակ 14

Ուսումն. տարի	Դպրոցների քանակը	Տարրական դպրոց	7-ամյա դպրոց	Միջնակարգ դպրոց	Աշակերտ. թիվը
1950-51	205	54	111	40	34116
1951-52	214	52	110	42	32967
1952-53	203	51	108	44	30394
1953-54	201	49	105	47	29598
1954-55	203	44	106	53	28999
1955-56	205	44	100	61	28694
1956-57	204	46	102	56	27580

Երկրում ընդհանուր միջնակարգ կրթություն իրականացնելու համար նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը

որոշում ընդունեց 1956թ. սեպտեմբերի 1-ից միջնակարգ դպրոցների բարձր դասարաններում, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսման վարձը վերացնելու մասին:

Այդ շրջանում մեծ ծավալ ստացավ դպրոցաշինությունը: Խոշոր դպրոցներին կից կառուցվեցին գիշերօթիկներ, հարստացավ դպրոցների նյութատեխնիկական բազան: Այդ բոլորից բացի, ժողովրդի նյութական բարեկեցության զգալի բարելավումը նույնպես նպաստեց հանրակրթական դպրոցի զարգացման ուժեղ թափին:

Հետպատերազմյան ընդամենը 6-7 տարիների ընթացքում հիմնականում լուծվեց պարտադիր 7-ամյա կրթության հարցը:

Սակայն չբավարարվելով ձեռք բերածով՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ժողկրթության բնագավառի աշխատողները խնդիր դրեցին ձեռնամուխ լինել ընդհանուր միջնակարգ կրթության անցմանը և այդ նպատակով մարզի քաղաքներում ու շրջաններում ստեղծվել էին բոլոր պայմանները: Եթե 1950-51 ուստարում ԼՂԻՄ-ում գործում էին 54 տարրական, 111 յոթնամյա և 40 միջնակարգ դպրոցներ, ապա 1957-58 ուստարում տարրական դպրոցների թիվը հասավ 46-ի, յոթնամյա դպրոցներինը՝ 102-ի, միջնակարգներինը՝ 56-ի: Հայկական դպրոցներում սովորում էր 27580 աշակերտ: Միջնակարգ կրթությունը, որին հսկայական վնաս էր հասցվել պատերազմի տարիներին, սկսեց զարգանալ արագ տեմպով: Առանձնապես ԽՄԿԿ 19-րդ և 20-րդ համագումարներից հետո մեծ վերելքի հասավ 1958թ. դպրոցի մասին օրենքն ընդունելուց հետո: Երիտասարդության համար կրթություն ստանալու լավագույն պայմաններ ապահովելու միջոցառումների շարքում առանձնապես կարևոր էր ուսման վարձի վերացումը միջնակարգ և բարձրագույն դպրոցներում՝ սկսած 1956 թվականից:

Միջնակարգ դպրոցն ավարտածների թիվը զգալիորեն գերազանցում էր բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվողների քանակին: Միջնակարգ դպրոցների շրջանավարտները պետք է ընդգրկվեին արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության մեջ աշխատելու: Սակայն նրանք պատրաստ չէին դրան. դպրոցներում իշխում էին ուսուցման խոսքային և գրքային ձևերը, անց չէր կացվում սովորողների մասնագիտական կողմնորոշում (պրոֆորիենտացիա) և նրանց պրակտիկ գործունեությանը չէին նախապատրաստում:

ԼՂԻՄ-ում միջնակարգ դպրոցն ավարտածների մասնագիտական պատրաստությունը ապահովելու համար մեծացվեց տեխնիկումների թիվը, նրանց կից բացվեցին բաժանմունքներ, որտեղ ընդունվում էին լրիվ միջնակարգ կրթություն ունեցողները. ուսման տևողությունը այստեղ սահմանվեց 2-3 տարի: Միջնակարգ դպրոցի բազայի վրա աշխատանքային ռեզերվների համակարգում սկսեցին բացվել տեխնիկական ուսումնարաններ (1-2 տարվա դասընթացով)՝ բարձրորակ բանվորներ պատրաստելու համար:

Հետպատերազմյան տարիներին (1949-1956թթ.)՝ Լեռնային Ղարաբաղում դպրոցների ցանցի ընդլայնմանը և նրանց նյութատեխնիկական բազայի հարստացմանը զուգընթաց հետևողական աշխատանք կատարվեց նաև դպրոցները մանկավարժական կադրերով ապահովելու, ինչպես նաև նրանց որակը սիստեմատիկաբար բարձրացնելու ուղղությամբ:

Ինչպես նշեցինք, Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո դպրոց վերադարձան նաև խորհրդային բանակ մեկնած զգալի թվով ուսուցիչներ:

Հետպատերազմյան առաջին տարիներին մարզի ուսուցչության շարքերը համալրվեցին Հայաստանի մանկավարժական բուհերի և տեխնիկումների շրջանա-

վարտներով: Եթե մարզի դպրոցներում 1945-46 ուստարում կար 1600 ուսուցիչ, ապա 1949-50 ուստարում նրանց թիվը հասավ 1929-ի: Զգալի չափով բարելավվեց նաև մանկավարժական կադրերի որակական կազմը: Այսպես, օրինակ՝ եթե 1945-46 ուստարում մարզի դպրոցներում բարձրագույն և թերի բարձրագույն կրթությամբ ուսուցիչները կազմում էին 21,5 տոկոս, ապա 1949-50 ուստարում նրանց թիվը հասավ 36,2 տոկոսի: Մարզում սիստեմատիկ աշխատանք էր տարվում ուսուցիչների որակավորման բարձրացման ուղղությամբ:

1950-ական թվականների վերջերին խորհրդային երկիրը թևակոխեց իր զարգացման նոր՝ ավելի բարձր փուլ: ԽՄԿԿ 21-րդ համագումարի որոշումները գործունեության ուղենիշ հանդիսացան երկրի ժողովրդական տնտեսության, ինչպես նաև ժողովրդական կրթության բնագավառի աշխատողների համար:

Ժողովրդական տնտեսության, գիտության ու տեխնիկայի աննախադեպ առաջընթացը նպաստեց ոչ միայն ժողովրդական կրթության զարգացմանը, այլև նոր խնդիր դրեց դպրոցի առջև: Առանձնապես մեծ ուշադրություն դարձվեց կյանքի հետ դպրոցի կապի հույժ կարևոր խնդրին:

Մարզի ժողկրթության մարմինների համար հետագա գործունեության ուղեցույց ծառայեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1958թ. դեկտեմբերի 24-ի «Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման և ԽՍՀՄ-ում ժողովրդական կրթության համակարգի հետագա զարգացման մասին» օրենքը: ԽՍՀՄ գերագույն խորհրդի նստաշրջանում 1959թ. մարտի 26-ին քննարկվեց և ընդունվեց «Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման և ԽՍՀՄ-ում ժողովրդական կրթության սիստեմի հետագա զարգացման մասին» օրենքը[287]:

Ելնելով այդ օրենքից՝ ԽՍՀՄ լուսավորության նախարարությունը մշակեց դպրոցի վերակառուցման աշխատանքի համընդհանուր պլան և գործնականում ձեռնամուխ եղավ նրա իրականացմանը: Սահմանվեց, որ յոթնամյա պարտադիր կրթությունից ութամյա կրթության անցումը պետք է սկսել 1959-60 ուստարվանից և ավարտել 1962-63 ուստարում:

Մարզի ժողովրդական կրթության հետագա զարգացմանը մեծապես նպաստեց կուսակցության մարզկոմի և մարզգործկոմի 1959թ. հուլիսին ընդունած «Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման և ԼՂԻՄ-ում ժողովրդական կրթության հետագա զարգացման մասին» որոշումը:

Լեռնային Ղարաբաղի մարզժողկրթբաժինը մշակեց կոնկրետ միջոցառումներ յոթնամյա դպրոցներն ութամյայի վերափոխելու և միջնակարգ հանրակրթական դպրոցներում արտադրական ուսուցումն ապահովելու համար: Պետական նշանակություն ունեցող այդ խնդիրն իրականացնելու համար 1959թ. ապրիլին ստեղծվեցին մարզի դպրոցների վերակառուցման հանձնաժողովներ՝ ըստ շրջանների և քաղաքների: Հանձնաժողովները մշակեցին դպրոցի վերակառուցման կոնկրետ պլաններ՝ նկատի ունենալով հետևյալ հանգամանքները.

ա) աշակերտական համակարգի առկա վիճակը և սպասվող տեղաշարժը մինչև 1955թ.,

բ) դպրոցների նյութատեխնիկական բազայի ամրապնդումը,

գ) դպրոցների շրջանավարտների հետագա ուսուցման և աշխատանքի տեղավորելու հեռանկարները,

դ) տվյալ շրջանի տնտեսական առանձնահատկությունները և զարգացման հեռանկարները,

ե) մանկավարժական կադրերի տեղաբաշխումը[288]:

Ժողովրդական կրթության մարզային և շրջանային բաժինները, արտադրա-

կան բազմաթիվ կոլեկտիվներ մեծ ջանքեր գործադրեցին այդ խնդիրների լուծման հետ կապված դժվարությունները հաջողությամբ հաղթահարելու համար: Առաջնահերթ խնդիր էր անհապաղ անցումը ութամյա պարտադիր ուսուցման: Այս գործում օգնություն ցույց տվեցին կառավարման տեղական մարմինները: Այն սկսվեց 7-16 տարեկան երեխաների հաշվառումից: Տեղական խորհուրդների գործադիր կոմիտեների ներկայացուցիչների հետ միասին ուսուցիչներն անցկացրին պարտուսի ենթակա երեխաների հաշվառում, տնային կառավարչությունների ու գյուղական խորհուրդների հետ միասին ճշգրտեցին ցուցակները և պարզեցին պարտուսի ենթակա երեխաների թիվը: Դրան համապատասխան նախատեսվում էր իրականացնել մարզի յոթնամյա դպրոցներն ութամյակի վերածելու հետևյալ պլանը.

1960-61 ուստարում՝ 13 դպրոց,

1961-62 ուստարում՝ 32 դպրոց,

1962-63 ուստարում՝ 52 դպրոց:

Լեռնային Ղարաբաղի մարզլուսբաժվար Հ. Օհանջանյանի հաշվետվությունների հիման վրա ներկայացնում ենք մարզի հանրակրթական դպրոցների ընդհանուր վիճակը 1960-1965 թվականներին.

Աղյուսակ 15

Լեռնային Ղարաբաղի դպրոցների ցանցը 1960-1965թթ. (ըստ տիպերի)

Ուս. տարի	Դպրոց - ների քա - նակը	Տարրա - կան	7-ամյա	ութ - ամյա	Միջն. 10- ամյա	Միջն. 11 - ամյա	Գիշեր - օթիկ	երկար - օրյա	Աշակ. թիվը
1959-60	207	48	102	-	54	1	2	-	26670
1960-61	207	46	83	23	24	25	3	-	25933
1961-62	211	48	53	54	8	44	4	-	26965
1962-63	210	47	-	109	-	49	4	2	28936
1963-64	211	46	-	110	-	48	4	3	32176
1964-65	212	47	-	110	-	48	4	3	33870

Աղյուսակից պարզ երևում է, որ դպրոցի մասին ընդունված օրենքի համաձայն՝ մարզում ժողովրդական կրթության վերակառուցումն ավարտվել է 1962-63 ուստարում: Ինչպես ցույց է տրված աղյուսակում, այդ ուսումնական տարում Լեռնային Ղարաբաղում գործում էին 47 տարրական, 109 ութամյա, 49 տասնմեկամյա միջնակարգ, 4 գիշերօթիկ և 2 երկարօրյա դպրոցներ[289]:

Ինչպես նշեցինք, Կուսակցության 20-րդ համագումարի որոշումների հիման վրա 1957 թվականից սկսած Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում երեխաների դաստիարակությունը պատշաճ մակարդակի վրա դնելու համար ստեղծվեցին նոր տիպի՝ գիշերօթիկ դպրոցներ (ինտերնատներ): Համառոտակի բնութագրենք այդ տիպի դպրոցների բացման հետ կապված աշխատանքները:

ՍՄԿԿ 20-րդ համագումարում նշվեց, որ պատերազմի հետևանքով մեր երկրում գտնվեցին շատ երեխաներ, որոնք կորցրել էին իրենց ծնողներից մեկին կամ

երկուսին, շատ այրի մայրեր, որոնց համար շատ դժվար էր ինքնուրույն դաստիարակել իրենց երեխաներին: Կային նաև ոչ քիչ թվով ընտանիքներ, որտեղ հայրը և մայրը չափազանց զբաղված էին աշխատանքով և չէին կարող հաջողությամբ զբաղվել երեխաների դաստիարակությամբ: Նման ընտանիքներում երեխաները մնում էին պատահական անձանց խնամքին կամ էլ թողնվում էին իրենք իրենց:

ԽՄԿԿ Կենտկոմը և ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը 1956թ. սեպտեմբերին ընդունեցին հատուկ որոշում գիշերօթիկ դպրոցների կազմակերպման մասին[290]: Այդ որոշման մեջ ընդգծվում է, որ գիշերօթիկ դպրոցներում պետք է ստեղծվեն պայմաններ սովորողներին համակողմանի ընդհանուր և պոլիտեխնիկական կրթություն տալու, նրանց մեջ բարոյական բարձր հատկանիշներ դաստիարակելու, դպրոցականների ֆիզիկական և էսթետիկական զարգացումն ապահովելու և ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի տարբեր բնագավառներում նրանց պրակտիկ գործունեության նախապատրաստելու համար:

ԼՂԻՄԻ-ի գիշերօթիկ դպրոցներում (Ստեփանակերտում, Շուշիում, Մարտակերտում, Մարտունիում) ընդունում էին միայնակ մայրերի, պատերազմի և աշխատանքի հաշմանդամների երեխաներին, որբերին, ինչպես նաև այն երեխաներին, որոնց դաստիարակության համար ընտանիքում անհրաժեշտ պայմանները բացակայում էին[291]: Երեխաների ընդունումը գիշերօթիկ դպրոց պետք է կատարվեր բացառապես ծնողների կամ նրանց փոխարինող անձանց ցանկությամբ: Ամբողջությամբ պետության խնամքի տակ են ընդունվում այն երեխաները, որոնք չունեն ծնողներ, ինչպես նաև առանձին դեպքերում՝ քաղաքային և շրջանային գործադիր կոմիտեների որոշմամբ՝ բազմանդամ, սակավ ապահովված ընտանիքների երեխաները: Մնացած ծնողները մուծում են վարձ՝ իրենց նյութական դրությանը համապատասխան: Երեխաների դաստիարակության գործում պետության և հասարակության դերի բարձրացման վերաբերյալ հետպատերազմյան կուսակցական համագումարների որոշումների հետ կապված, ընդլայնվեց նախադպրոցական տարիքի երեխաների հասարակական դաստիարակության հիմնարկների՝ մանկամսուրների և մանկապարտեզների ցանցը: Վաստակաշատ մանկավարժ Արսեն Խաչատրյանը (երկար տարիներ եղել է Շուշիի գիշերօթիկ դպրոցի տնօրեն) իր հուշերում[292] պատմում է, որ երեխաների հետ տարվող դաստիարակչական աշխատանքների բարելավման և երեխայի դաստիարակության գործում ընտանիքին օգնող կարևորագույն միջոցառումներից էին երկարօրյա խումբը և երկարօրյա դպրոցը:

Դպրոցի այդ նոր տիպը շատ շուտով մեծ ժողովրդականություն նվաճեց Շուշի քաղաքի և մոտակա գյուղերի բնակչության շրջանում: Գյուղական վայրերում դրանց ստեղծման գործում մեծ դեր են խաղում կոլտնտեսությունները և սովխոզները: Կոլտնտեսականների ժողովները շատ հաճախ որոշումներ են կայացնում կոլտնտեսային ընդհանուր ֆոնդերից հատկացնելու միջոցներ՝ երկարօրյա խմբեր և դպրոցներ պահելու համար: Քաղաքներում երկարօրյա խմբերը և դպրոցները նույնպես կազմակերպվում են շեֆ կազմակերպությունների, ձեռնարկությունների և հիմնարկների, ծնողական ողջ հասարակության մասնակցությամբ:

Այդ դպրոցները, երեխաներին ընտանիքից չկտրելով, մեծ օգնություն են ցույց տալիս ծնողներին երեխաներին խնամելու, նրանց վրա հսկողություն սահմանելու գործում, հոգ են տանում լավ առաջադիմության համար, կազմակերպում են երեխաների ինքնուրույն աշխատանքը՝ տնային առաջադրանքների կատարման համար, անց են կացնում զանազան դաստիարակչական միջոցառումներ ու կազ-

մակերպում երեխաների հանգիստը՝ կենսագործելով երեխաների համակողմանի զարգացման և դաստիարակության խնդիրները:

Այդ դպրոցները կոչված էին մեծ դեր խաղալու ութամյա ընդհանուր ուսուցման ապահովման գործում և երեխաների երկտարեցիության դեմ մղվող պայքարում:

Պաշտոնական տվյալները վկայում են, որ դպրոցի վերաբերյալ 1958թ. ընդունված օրենքի հիման վրա ոչ լրիվ միջնակարգ յոթնամյա դպրոցը վերածվեց ընդհանուր պարտադիր ուսուցման ութամյա դպրոցի:

Ութամյա դպրոցը կոչված էր սովորողներին զինել գիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների առավել լայն ծավալով և ապահովել ավելի լայն հնարավորություններ նրանց համակողմանի զարգացման համար: Այն սովորողներին պատրաստում էր կրթությունը շարունակելու լրիվ միջնակարգ դպրոցում և միաժամանակ տալիս ավելի լավ պատրաստություն ապագա աշխատանքային գործունեության համար, քան յոթնամյա դպրոցը: Հանրակրթական գիտելիքների հետ միասին սովորողները ստանում են պոլիտեխնիկական պատրաստություն, ծանոթանում արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության կարևորագույն ճյուղերի հետ, ձեռք բերում որոշ տեղեկություններ տեխնիկայի բնագավառից, տիրապետում ընդհանուր տեխնիկական պարզագույն հմտություններին և աշխատանքի տարրական կուլտուրային:

Ութամյա դպրոցն ավարտելուց հետո սովորողները կարող են առանց քննությունների ընդունվել ոչ լրիվ միջնակարգ հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանը կամ քննություն տալով ընդունվել միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունները: Ութամյա դպրոցներն ավարտողները կարող են աշխատել արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության մեջ և շարունակել իրենց կրթությունը կամ երեկոյան (հերթափոխային) միջնակարգ հանրակրթական դպրոցներում, կամ էլ զանազան պրոֆտեխնիկական ուսումնարաններում:

1960-65թթ. Հայաստանի Հանրապետությունում գործում էին 3637 ցերեկային հանրակրթական դպրոցներ, որոնցից 1352-ը՝ տարրական, 583-ը՝ յոթնամյա, 786-ը՝ միջնակարգ, 7-ը՝ գիշերօթիկ, 46-ը՝ օժանդակ տիպի: Այդ դպրոցներում սովորում էր 596700 աշակերտ[293]: Նույն տարիներին ութամյա դպրոցների քանակը հասավ 186-ի: Իսկ Լեռնային Ղարաբաղում նշված թվականներին գործում էին 212 հանրակրթական հայկական դպրոցներ, որոնցից 47-ը՝ տարրական, 110-ը՝ ութամյա, 48-ը՝ միջնակարգ 11-ամյա, 4-ը՝ գիշերօթիկ, 3-ը՝ երկարօրյա տիպի: Այդ դպրոցներում սովորող աշակերտների թիվը հասնում էր 33870-ի[294]:

1960-ական թվականներին պարտադիր ուսուցման և ընդհանուր միջնակարգ կրթության իրականացման գործին մեծապես նպաստեց նոր դպրոցների կառուցումը: Այդ տասնամյակում (1960-1970թթ.) մարզում դպրոցաշինությունն առանձնապես լայն թափ ստացավ: Յուրաքանչյուր ուսումնական տարում դպրոցների կապիտալ և ընթացիկ վերանորոգման, ինչպես նաև նոր դպրոցական շենքերի կառուցման համար ծախսվում էին հսկայական միջոցներ, որոնք հատկացվում էին ինչպես պետության, այնպես էլ կոլտնտեսությունների կողմից: 1960-61 ուստարում այդ նպատակների համար ծախսվել է 14366 հազար ռուբլի, 1961-62 ուստարում՝ 349 հազար ռուբլի: Այդ տարիներին դպրոցական նոր շենքեր են կառուցվել Ստեփանակերտի, Մարտակերտի, Մարտունու շրջանների մի շարք գյուղերում:

Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում դպրոցներում ուսումնանյութական բազայի ստեղծմանը: Այսպես՝ Ստեփանակերտի գիշերօթիկ դպրոցը լաբո-

ռատոր սարքավորումներ և դիդակտիկ նյութեր ձեռք բերելու, ինչպես նաև աշխարհագրության կաբինետի, գրադարանի և լուսանկարչական լաբորատորիայի համար ծախսել էր 27620ռ.:

Երեխաների հասարակական դաստիարակության հետագա բարելավման, ընտանիքին անհրաժեշտ օգնություն ցույց տալու գործում կարևոր նշանակություն ունեցավ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1960թ. փետրվարի 15-ի «Երկարօրյա դպրոցների կազմակերպման մասին» որոշումը: Այդ որոշմամբ նախատեսվում էր 1-8-րդ դասարանների աշակերտներին ընդգրկել երկարօրյա խմբերում՝ դասերից հետո նրանց խնամքի, ուսման ու դաստիարակության գործի կազմակերպումը հանձնարարելով դպրոցին:

Լեռնային Ղարաբաղում երկարօրյա դպրոցների կազմակերպումը կատարվեց 1961-62 ուստարում: Ստեփանակերտ քաղաքում ստեղծվեց ութամյա երկարօրյա դպրոց, իսկ քաղաքի թիվ 2 դպրոցին կից բացվեցին 6 երկարօրյա խմբեր: Հաջորդ ուսումնական տարիներին ընդարձակվեց մարզի երկարօրյա դպրոցների ու խմբերի ցանցը: Այսպես, 1963-64 ուստարում մարզի մի շարք դպրոցներում արդեն գործում էին 44 երկարօրյա խմբեր՝ 1459 աշակերտներով[295]:

Այսպիսով, հետպատերազմյան շրջանում «Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման և ԽՍՀՄ-ում ժողովրդական կրթության համակարգի հետագա զարգացման մասին» օրենքի (1958) ընդունումով՝ 60-ական թվականներին Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում հանրակրթական դպրոցը թևակոխում էր զարգացման նոր փուլ: Նրան գլխավոր խնդիր է առաջադրվում՝ աճող սերունդը նախապատրաստել կյանքի, աշխատանքի համար:

Այդ տասնամյակում (1958-1968թթ.) ինչպես Հայաստանի, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի ժողկրթության մարմինների որոշմամբ սահմանվեցին լրիվ միջնակարգ կրթություն տվող ուսումնական հաստատությունների հետևյալ տիպերը.

ա) բանվորական և գյուղական երիտասարդության երեկոյան (հերթափոխային) միջնակարգ հանրակրթական դպրոցներ, որոնցում ութամյա դպրոցն ավարտած և ժողովրդական տնտեսության ճյուղերից մեկում աշխատող անձինք ստանում են միջնակարգ կրթություն և բարձրացնում իրենց մասնագիտական որակավորումը: Այդ դպրոցներում ուսման տևողությունը 3 տարի է՝ 9-11-րդ դասարաններով:

բ) արտադրական ուսուցմամբ միջնակարգ հանրակրթական աշխատանքային պոլիտեխնիկական դպրոցներ, որոնցում ութամյա դպրոցն ավարտած անձինք երեք տարվա ընթացքում ստանում են միջնակարգ կրթություն և մասնագիտական պատրաստություն՝ ժողովրդական տնտեսության կամ կուլտուրայի ճյուղերից մեկում աշխատելու համար: Միջնակարգ դպրոցը կարող է կազմակերպվել 1-11-րդ կամ 9-11-րդ դասարանների կազմով:

Թույլատրվում էր ստեղծել նաև հանրակրթական միջնակարգ այնպիսի դպրոցներ, որտեղ մի շարք առարկաներ կարող են դասավանդվել օտար լեզուներով:

գ) տեխնիկումներ և այլ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ, որոնցում ութամյա դպրոցն ավարտածները ստանում են ընդհանուր միջնակարգ և միջնակարգ մասնագիտական կրթություն:

Երաժշտության, կերպարվեստի և պարարվեստի ասպարեզում առավել մեծ ընդունակություններ ունեցող երեխաների համար հանձնարարվում է ստեղծել հատուկ դպրոցներ, որոնցում սովորողները կստանան ընդհանուր միջնակարգ կրթություն, աշխատանքային դաստիարակություն և մասնագիտական պատրաս-

տություն արվեստի տվյալ ճյուղում:

Ութամյա և միջնակարգ դպրոցներում վերակառուցումը որոշվեց սկսել 1959-60 ուստարվանից և ավարտել 1963-64 ուստարում:

Օրենքի երկրորդ բաժինը վերաբերում էր պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթությանը[296]:

Երիտասարդության պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթության հիմնական խնդիրը համարվում էր ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի համար կուլտուրական ու տեխնիկապես կրթված որակյալ բանվորների և գյուղատնտեսության աշխատողների պլանաչափ ու կազմակերպված պատրաստումը, սովորողների հայրենասիրական դաստիարակությունը:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի օրենքը սահմանում է.

ա) ութամյա դպրոցն ավարտելուց հետո արտադրություն գնացող երիտասարդության պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսուցման համար ստեղծել քաղաքային և գյուղական պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարաններ, որոնք մասնագիտացվում են ըստ արտադրության ճյուղերի.

բ) ֆաբրիկա-գործարանային ուսուցման դպրոցները, արհեստագործական, երկաթուղային, շինարարական և գյուղատնտեսության մեքենայացման աշխատանքային ռեզերվների ուսումնարանները վերակազմավորել ցերեկային և երեկոյան քաղաքային պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարանների՝ 1-3 տարվա ուսման տևողությամբ և գյուղական պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարանների՝ 1-2 տարվա ժամկետով:

Պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների վերակառուցումը հանձնարարվում է սկսել 1959-60 ուստարվանից և ավարտել 1963-64 ուստարում:

Երրորդ բաժինը նվիրված է միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում մասնագետների պատրաստմանը:

Միջնակարգ դպրոցի ծավալով հանրակրթական գիտելիքներին զուգահեռ, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողները պետք է ստանան անհրաժեշտ տեսական ու գործնական պատրաստություն՝ ըստ ընտրած մասնագիտությունների:

Սահմանվում են միջին որակի մասնագիտական կադրերի պատրաստման հետևյալ ձևերը.

ա) առանց արտադրությունից կտրվելու՝ երեկոյան կամ հեռակա ուսուցման միջոցով.

բ) ուսուցման տարբեր ժամանակաշրջաններում արտադրությունից չկտրված և կտրված ձևով.

դ) արտադրությունից կտրվելով՝ ուսումնական հիմնարկներում տարվող տեսական պարապմունքները զուգակցելով ժողովրդական տնտեսության, կուլտուրայի և առողջապահության զանազան ճյուղերի հիմնարկներում կազմակերպվող պրակտիկ ուսուցման հետ:

Այստեղ նույնպես հանձնարարվում է վերակառուցումը սկսել 1959-1960 ուստարվանից և ավարտել 1963-1964 ուստարում:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 70-ական թվականներին Լեռնային Ղարաբաղում հանրակրթական դպրոցների ցանցը զգալիորեն ընդարձակվել է: Հանրակրթական դպրոցը սկսում է համընդհանուր միջնակարգ կրթության իրականացումը:

Հատուկ ուշադրություն է դարձվում նաև ԼՂԻՄ-ում բնակվող մյուս ազգություն-

ների դպրոցներին: Ռուսական, ադրբեջանական, քրդական բնակչություն ունեցող վայրերում հաջողությամբ գործել են մայրենի լեզվով դպրոցներ: 1969-70 ուստարում մարզում գործում էր 48 ադրբեջանական դպրոց՝ 12472 աշակերտով, և 3 ռուսական դպրոց՝ 192 աշակերտով (հայեր, ռուսներ):

Վերջին 10 տարիների ընթացքում հանրակրթական դպրոցների ցանցը զգալիորեն ընդարձակվեց, իսկ սովորողների թիվը կրկնապատկվեց: Այդ մասին են վկայում մարզլուսբաժնի վարիչ, վաստակաշատ մանկավարժ Սարգիս Արամյանի հաշվետվությունում նշված տեղեկությունները[297]:

Մարզլուսբաժնի հաշվետվությունում նաև նշվում է, որ մարզում միջնակարգ պարտուսի իրականացումը առաջ քաշեց միջնակարգ դպրոցների թվի ավելացման և նրանց ուսումնանյութական բազայի հարստացման պահանջը: Եթե 1970-71 ուստարում մարզում կար 68 հանրակրթական միջնակարգ դպրոց, ապա 1982-83 ուստարում դրանց թիվը հասավ 90-ի: Բացի այդ, աշխատող երիտասարդության ուսուցման համար գործում էին 6 միջնակարգ հեռակա դպրոցներ: 1970 թվականից ի վեր մարզում կառուցվել են 52 նոր դպրոցական շենքեր, որոնցից 44-ը՝ գյուղական շրջաններում: Ս.Արամյանի հաշվետվության մեջ միաժամանակ նշվում է, որ դպրոցների շինարարության հետ զուգահեռ ամրապնդվել է նրանց նյութատեխնիկական բազան: Մարզի միջնակարգ դպրոցների մեծ մասն անցել է ուսուցման կաբինետային համակարգի: Մարզի դպրոցներում գործում էր 1322 կաբինետ: Ուշադրության արժանի է այն փաստը, որ մարզում ծավալուն դպրոցաշինությունը հնարավորություն տվեց աշակերտների 95,6 տոկոսի համար պարապմունքները կազմակերպել միահերթ: Պայմաններ ստեղծվեցին նաև երկարօրյա խմբերի ցանցի ընդլայնման համար: 1982-83 ուստարում այդ խմբերում ընդգրկված էր 16754 աշակերտ, կամ 1-8-րդ դասարանների աշակերտների 58 տոկոսը: 42 դպրոցներում երեխաների սնունդը կազմակերպված էր ձրի, հիմնականում կոլտնտեսությունների և սովխոզների հաշվին[298]:

Պարտուսի իրականացման գործում մեծ է նաև գիշերօթիկ և օժանդակ-հատուկ դպրոցների դերը: Մարզում գործում էին 4 գիշերօթիկ դպրոց (3-ը Շուշի քաղաքում, մեկը՝ Ստեփանակերտում), օժանդակ-հատուկ գիշերօթիկ դպրոցներ (Ստեփանակերտում և Շուշիում): Այդ դպրոցներում ընդգրկված երեխաների սննդի, կուլտուրական ժամանցի, ուսուցման ու դաստիարակության գործը լավ հիմքերի վրա էր դրված:

Ուրախությամբ պետք է նշել, որ մարզի ժողովրդական կրթության նվաճումները ցուցադրվել են ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսներում՝ «Ժողովրդական կրթության» տաղավարներում:

Մարզի գրեթե բոլոր դպրոցներում առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում դպրոցականների ուսուցումն արտադրական աշխատանքի հետ շաղկապելու հույժ կարևոր խնդրի իրականացմանը: Այստեղ մենք նկատի ունենք քաղաքային և գյուղական բազմաթիվ դպրոցներում ոչ միայն աշխատանքի ուսուցման, դպրոցականների արտադրական պրակտիկայի բարձր դրվածքը, այլև այդ ուղղությամբ արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների պատշաճ ձևով կազմակերպումը: Ամեն տարի արտադրական բրիգադներում հարյուրավեր պատանիներ ու աղջիկներ ուսուցիչների անմիջական ղեկավարությամբ ակտիվորեն մասնակցում էին խաղողի, բամբակի, ծխախոտի հավաքմանը, մեծապես օգնում մարզի կոլտնտեսություններին ու սովխոզներին:

Լավ ավանդույթ էր դարձել բարձր դասարանցիների աշխատանքի և հանգստի ճամբարների կազմակերպումը: Եթե 1976թ. մարզում գործում էին այդպիսի 5

ճամբարներ, ապա 1982թ. նրանց թիվը հասավ 73-ի: Ի դեպ, այդ ճամբարներում իրենց մանկավարժական փորձուսուցումն էին անցկացնում Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ուսանողները:

Դպրոցականների աշխատանքային դաստիարակությունը լավ հիմքերի վրա էր դրված Ստեփանակերտի թիվ 1, Շուշիի թիվ 1, Քարին տակի, Ճարտարի, Տողի, Աղբուլաղի, Մաղավուզի, Սեյսուլանի, Առաջաձորի, Շոշի, Չանախչու, Սարուշենի, Նորագյուղի, Բադարայի, Գիշու, Ղզղալայի և մարզի այլ դպրոցներում:

Ստեփանակերտի ուսումնաարտադրական կոմբինատում (որի տնօրենն էր վաստակաշատ մանկավարժ Սարգիս Հակոբյանը) քաղաքի դպրոցների բարձր դասարանցիները սովորում էին 7 մասնագիտություններ: Մարզի 13 միջնակարգ դպրոցներում աշակերտներն ուսումնասիրում էին ավտովարորդի, իսկ 42 դպրոցներում՝ մեխանիզատորի, տրակտորիստի և այլ մասնագիտություններ:

Մարզի ժողկրթության համակարգում մեծ ուշադրություն էր դարձվում մանկական նախադպրոցական հիմնարկների ցանցի ընդլայնմանը: Եթե վերոնշյալ տասնամյակում (1970-1980թթ.) Հայաստանում գործում էր 1070 մանկապարտեզ, ուր հաճախում էին ավելի քան 130 հազար երեխաներ և աշխատում մոտ 12 հազար մանկավարժ, ապա Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում գործում ին 83 նախադպրոցական հիմնարկներ, որոնցում ընդգրկված էր 66650 երեխա: Հայկական և ռուսական շատ մանկապարտեզներ մեծ հեղինակություն էին վայելում, իսկ Ստեփանակերտի թիվ 4 մսուր-մանկապարտեզի փորձը ցուցադրվել է ԽՍՀՄ ԺՏՆ ցուցահանդեսում ու արժանացել բրոնզե մեդալի:

Մարզում գործում էին 6 պիոներական տներ, 4 մանկապատանեկան մարզական դպրոցներ: Ստեփանակերտում բացվել էր շախմատի դպրոց, իսկ Հադրութում՝ մարզական դպրոց[299]:

Ստեփանակերտում գործում էին պատանի տեխնիկների և պատանի բնասերների կայաններ, որոնցում ընդգրկված էին հարյուրավոր երեխաներ: Միայն պատանի տեխնիկների մարզային կայանը, որը ստեղծվել է 1952թ., ուներ 12 խմբակ, ուր ընդգրկված էին 130 պիոներ-դպրոցականներ: Կայանի ավտոմոդելիստները բազմիցս մրցականային տեղեր են գրավել հանրապետությունում:

Կայանը ամեն տարի անց էր կացնում պատանի ֆիզիկոսների, քիմիկոսների, մաթեմատիկոսների օլիմպիադաներ, ավտոմոդելիստների մրցումներ, պատանի տեխնիկների ստեղծագործությունների, լուսանկարիչների գործերի ցուցահանդեսներ և այլն:

Նույնը կարելի է ասել նաև պատանի բնասերների մարզային կայանի մասին, որի իրավասության տակ էր գտնվում ուսումնափորձնական հողամասը: Կայանն ուներ բնության պահպանության, ծաղկաբուծական, դեղաբույսերի, ճագարաբուծական, բանջարաբուծական, այգեգործական և այլ խմբակներ, որոնց աշխատանքները սիրով ղեկավարում էին կնսաբանության առաջավոր ուսուցիչները: Ուշադրության է արժանի այն փաստը, որ պատանի բնասերների մարզային կայանը կապ էր պահպանում նաև Երևանի բուսաբանական այգու, գյուղատնտեսական ինստիտուտի և Մասիսի բանջարաբուծական գիտահետազոտական փորձակայանի հետ:

Արդյունավետ էր նաև պատանի տուրիստների կայանի աշխատանքը, որը հիմնադրվել է 1971թ.: Նրա նպատակն էր դպրոցականներին ծանոթացնել առաջին հերթին մարզի տեսարժան վայրերին: Մարզի շատ պատանիներ և աղջիկներ տուրիստական ուղեգրերով եղել են նաև երկրի շատ քաղաքներում, միջինասիական հանրապետություններում, Մերձբալթիկայում:

Մարզի մի շարք դպրոցներ բարեկամական կապերի մեջ էին եղբայրական հանրապետությունների դպրոցների հետ: Անկեղծ էր Ստեփանակերտի թիվ 9 և Ռիգայի թիվ 32 ութամյա դպրոցների միջև ստեղծված ավանդական բարեկամությունը: Փոխադարձ այցելություններն ու նամակագրական կապերը նպաստում էին մի կողմից՝ հայրենի երկրի պատմության ուսումնասիրմանը, մյուս կողմից՝ դպրոցականների ինտերնացիոնալ դաստիարակությանը:

Վիճակագրական տվյալների համաձայն՝ 1982-88 թվականներին մարզում գործել են 176 հայկական, ռուսական և ադրբեջանական դպրոցներ, որտեղ սովորել է 31895 աշակերտ: Այդ դպրոցներում դասավանդել է 4050 ուսուցիչ, որոնց մեծամասնությունն ուներ բարձրագույն կրթություն:

Մարզի 6 երաժշտական դպրոցներում սովորել է 225 աշակերտ, դասավանդել 75 ուսուցիչ: Ստփանակերտի արվեստի դպրոցում սովորել է 65 աշակերտ, դասավանդել 7 մասնագետ: Մարզում գործել է սպորտի տարբեր ձևերի գծով 6 դպրոց, որտեղ սովորել է 120 աշակերտ, դասավանդել 15 մասնագետ[300]:

Միջին որակավորմամբ մասնագետներ պատրաստելու գործում կարևոր դեր են կատարել տարբեր մասնագիտության ուսումնարաններն ու տեխնիկումները: Մարզի բժշկական և կուլտուր-լուսավորական հինգ ուսումնարաններում սովորել են 750 տղաներ ու աղջիկներ, դասավանդել 150 ուսուցիչներ: Գյուղատնտեսական երկու տեխնիկումներում սովորել է 520 ուսանող, դասավանդել 70 ուսուցիչ, երաժշտական երկու ուսումնարաններում սովորել է 250 ուսանող, դասավանդել 55 ուսուցիչ, արհեստագործական հինգ ուսումնարաններում սովորել է 850 ուսանող, դասավանդել 185 ուսուցիչներ, որակյալ վարպետներ և այլն[301]:

Այսպիսով՝ վերոհիշյալ փաստագրական տվյալները վկայում են, որ խորհրդային իշխանության տարիներին Լեռնային Ղարաբաղի ժողովրդական կրթության բնագավառում ձեռք են բերվել շոշափելի նվաճումներ, ինչը մենք չենք կարող անտեսել:

Անժխտելի փաստ է նաև, որ 70 տարիների ընթացքում դառն են եղել Արցախի ժողովրդի ճակատագիրը, նրա կյանքի ճանապարհը: Եվ նրանք, ովքեր այսօր հետադարձ հայացքով չափում են այդ ճանապարհը, զարմանքով մտածում են, թե այդ ժողովուրդն ինչպես կարողացավ վերակենդանանալ, վերընձյուղվել և ապրել կյանքի ու մահվան սահմանագծում: Անշուշտ, դա Արցախի համառ կամքի տեր ժողովրդի և նրա անձնազոհ մտավորականության ու հայրենասեր բարերարների աշխատանքի արդյունքն է: Հավատ ունենալով ապագայի նկատմամբ, նրանք սերտորեն համագործակցել են մայր Հայաստանի հետ, իհարկե, շատ դեպքերում՝ գաղտնի, պահպանել են հայեցի կրթություն տվող ազգային դպրոցը և հոգևոր-մշակութային արժեքները:

Անժխտելի փաստ է, որ Ղարաբաղն Ադրբեջանին բռնակցելուց հետո երբեք նպաստավոր պայմաններ չեն ստեղծվել հայ ժողովրդի այդ հատվածի տնտեսության, մշակույթի, դպրոցի ու լուսավորության զարգացման համար, և եթե միջոցներ են հատկացվել, ապա դրանք տրամադրվել են ղարաբաղաբնակ ադրբեջանցիների հոգևոր-մշակութային արժեքների, դպրոցի ու կրթության համակարգ զարգացման համար:

Արցախի պատմությանը խորագիտակ Հ.Խաչատրյանը, Բագրատ Ուլուբաբյանը, Զորի Բալայանը, Հրանտ Աբրահամյանը, Շահեն Մկրտչյանը և ուրիշներ Արցախյան ազատամարտի թեժ օրերին մեկ անգամ ևս պատմական ու գիտական անհերքելի տվյալներով հաստատել են Ադրբեջանի ազգահալած գաղութային քաղաքականությունը և նրա հետևանքները: Բ. Ուլուբաբյանը «Արցախի պատ-

մությունը» աշխատության մեջ իրավացիորեն մատնանշում է, որ «մարզի հայկական դպրոցը երկաթե վարագույրով անջատվեց մայր Հայաստանի դպրոցական կյանքից: Ոչ միայն դպրոցը, այլև արցախահայն այնպես բաժանվեց իր ազգային վարչական-մշակութային առավել խոշոր միավորից, որ Հայաստան ուսման գնալը կամ այնտեղ կատարած սովորական երթևեկը դիտվում էր որպես քաղաքական անհուսալիության դրսևորում: Սակայն առավել վտանգավորն ու դատապարտելին համարվում էր Հայաստանի հայի հայտնվելն Արցախում, նրա որևէ առնչությունն Արցախի կյանքի հետ…[302]:

Հայ գյուղը, հայկական մշակույթի գործիչը, հայ գիտնականն ու արվեստագետը,- շարունակում է հարենասեր պատմաբանը,- իրավունք չունեին ոտք դնելու Արցախ, հանդիպելու իրենց հայրենակիցների հետ, որոնք իբր թե ունեին սեփական ինքնավարություն և կարող էին վայելել դրա ընձեռած ազգային մշակույթի ու առաջադիմության պտուղները»[303]:

Եվ այսպես, խորհրդային իշխանության առաջին իսկ օրերից սկսած, Արցախի ժողովուրդը, նրա հայրենասեր մտավորականությունը չափազանց ծանր պայմաններում սկսեցին ժողովրդական կրթության գործի կազմակերպումը և, գտնվելով ամենածանր պայմաններում, չկորցրին իրենց հոգեկան կորովն ու մտքի սլացքը, միշտ մաքառեցին իրենց գոյության, ազգային մշակույթի, հոգևոր արժեքների պահպանման և այդ մշակույթը ժողովրդի մեջ վառ պահող դպրոցի համար: Դա ազգային ինքնագիտակցության, ապագայի նկատմամբ արցախցու մեծ հավատի ու աշխատանքի արդյունք է:

Այսպիսով, ուսումնասիրվող ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցի ցանցի ընդլայնման, դպրոցաշինության զարգացման զուգընթաց վերակառուցվեցին նաև ուսումնադաստիարակչական աշխատանքները, կրթության բովանդակությունը (ուսումնական պլաններ, ծրագրեր, դասագրքեր), ուսուցման կազմակերպման ձևերը, դասը կատարելագործելու ուղղությամբ ուսուցչի ընտրած ուսուցման մեթոդները, աշակերտների ուսումնական գործունեության արդյունքների ստուգման ու գնահատման մեթոդները, ինչպես նաև դասի դիդակտիկական, կրթական և զարգացնող պահանջները (այդ մասին կնշվի հաջորդ բաժնում):

2. Ուսումնադաստիարակչական աշխատանքների համակարգը Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցներում (1946-1988թթ.)

Հետպատերազմյան ժամանակաշրջանում, խաղաղ շինարարության անցման առաջին տարիներին տնտեսության սոցիալիստական համակարգը ժողովրդին հնարավորություն տվեց ոչ միայն արիաբար կրելու բոլոր ծանրություններն ու դժվարությունները, այլև հիմնադրելու բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ, ուսումնական հաստատություններ, վերակառուցելու ուսումնադաստիարակչական աշխատանքների համակարգը: Հետպատերազմյան առաջին հնգամյա պլանով նախատեսված վիթխարի խնդիրների շարքում հատուկ տեղ էր հատկացված գիտության, մշակույթի, կրթության հետագա զարգացման հարցերին: Հնգամյա պլանում նշվում էր, որ պետք է բոլորովին այլ լինեն հետպատերազմյան շրջանի հանրակրթական դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության հիմունքներն ու սկզբունքները, կրթական ու դաստիարակչական աշխատանքների բովանդակությունն ու մեթոդները:

Ինչպես հայտնի է, Հայրենական մեծ պատերազմի ժամանակ հանրակրթա-

կան դպրոցին առաջադրված նոր խնդիրներն իրենց արտացոլումը գտան կրթության բովանդակության մեջ, ուսումնական պլանում, ծրագրերում և ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման բնագավառում: Այլ կերպ չէր էլ կարող լինել: Ուսումնական պլանները, ծրագրերը, դասագրքերը պետք է արտացոլեին ուսուցման ու դաստիարակության այն նոր խնդիրները, որոնք բխում էին Հայրենիքի պաշտպանության շահերից, պատերազմական իրադրության պահանջներին համապատասխան:

Հայրենական պատերազմից հետո հանրակրթական դպրոցի առջև ծառացած նոր խնդիրներին համապատասխան լուրջ փոփոխություններ կատարվեցին նաև ուսումնական պլաններում, ծրագրերում:

1946-47 ուստարվանից մայրենի լեզվի ուսուցման համար հատկացված շաբաթական քանակը դպրոցների 7-րդ դասարաններում ավելացվում է մեկ, իսկ 10-րդ դասարաններում՝ կես ժամով: Դպրոցների 8-րդ և 10-րդ դասարաններում կեսական ժամով ավելանում են հայ գրականության ուսումնասիրության համար հատկացված ժամերը: Մաթեմատիկային հատկացված շաբաթական ժամերը 10-րդ դասարաններում ավելանում են կես ժամով, բնագիտությանը 9-րդ դասարաններում կես ժամով, աշխարհագրությանը 8-րդ դասարաններում՝ կես ժամով, ֆիզիկային 9-րդ դասարաններում կես՝ ժամով, քիմիային 10-րդ դասարաններում՝ կես ժամով և օտար լեզվին՝ 8-րդ, 9-րդ և 10-րդ դասարաններում՝ մեկական ժամով:

1948-49 ուստարվա ուսումնական պլանում որոշակիորեն ավելացան հանրակրթական առարկաներին հատկացված ժամերը: Այսպես, 1941-42 ուստարվա համեմատությամբ մայրենի լեզվի և գրականության ուսուցմանը հատկացվող շաբաթական ժամերը միջնակարգ դպրոցում ավելացան 9,5 ժամով, ավելացան նաև ռուսաց լեզվի և գրականության , մաթեմատիկայի, քիմիայի ժամերը:

Ելնելով ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի 1948թ. ապրիլի 16-ի որոշումից, ԽՍՀՄ լուսավորության նախարարության կոլեգիան որոշում ընդունեց 1949-50 ուստարվանից ռուսաց լեզվի ուսուցումն սկսել 2-րդ դասարանից:

Այդ կապակցությամբ Հայաստանի լուսժողկոմը (նախարարությունը), ԼՂԻՄ-ի ժողկրթության բաժինը միջոցառումներ մշակեցին մանկավարժական կադրերի պատրաստման ու վերապատրաստման, այբբենարանում և մյուս դասագրքերում փոփոխություններ կատարելու, ինչպես նաև ուսուցիչներին մեթոդական օգնություն ցույց տալու ուղղությամբ:

Արխիվային փաստաթղթերից[304] տեղեկանում ենք, որ 1949-50 ուստարում Ստեփանակերտում, Շուշիում կազմակերպվել են ռուսաց լեզվի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ: Քաղաքային դպրոցների 9-րդ դասարաններում մտցվեց հոգեբանության, իսկ 10-րդ դասարաններում՝ տրամաբանության ուսուցումը:

Ուսումնական պլանը որոշ չափով թեթևացրեց աշակերտների շաբաթական ծանրաբեռնվածությունը: Եթե 1941-42 ուստարում 5-10-րդ դասարաններում շաբաթական ծանրաբեռնվածությունը կազմում էր 35 ժամ, ապա նոր պլանով այն իջավ 5-6-րդ դասարաններում՝ 32-ի, 7-րդ դասարանում՝ 33-ի: Վերը նշված փոփոխությունները հիմնականում տեղի ունեցան ռազմական ուսուցմանը հատկացված ժամերի հաշվին:

Նոր ուսումնական պլանով աղջիկներն ամբողջովին ազատվեցին ռազմական պատրաստության դասընթացներից: Դրա փոխարեն նրանց համար մտցվեց կարուձև և ձեռագործ:

Միջնակարգ դպրոցի ուսումնական պլանի կատարելագործման և կայունացման ուղղությամբ Հայաստանի լուսավորության նախարարությունը և մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտը շարունակեցին նաև հետագա տարիներին՝ հրատարակել նոր ուսումնական պլաններ, ծրագրեր ու դասագրքեր Լեռնային Ղարաբաղի դպրոցների համար:

Ինչպես վկայում են ուսումնասիրությունները, 1956-57 ուստարվա համար կազմված նոր ուսումնական պլանը համեմատաբար ավելի նպատակահարմար ու կայուն էր: Այսպես, օրինակ, կուսակցության 20-րդ համագումարում ընդունված որոշման (դպրոցը կյանքին մոտեցնելու և աշակերտներին պոլիտեխնիկական ու գործնական գիտելիքներով զինելու մասին) համաձայն մտցվեց նոր առարկաների ուսուցման պրակտիկա գյուղատնտեսության հիմունքներից և էլեկտրատեխնիկայից (8-10-րդ դասարաններում) և գործնական պարապմունքներ՝ ուսումնափորձնական հողամասում և ուսումնական արհեստանոցում (5-7-րդ դասարաններում): Ավելացան նաև ռուսաց լեզվի ուսուցմանը հատկացվող ժամերը 2-4-րդ դասարաններում): ԽՍՀՄ սահմանադրության ուսուցումը 7-րդ դասարանից փոխադրվեց 10-րդ դասարան:

Ուսումնական պլանից հանվեցին հոգեբանությունը և տրամաբանությունը՝ հաշվի առնելով, որ դրանց ուսուցումը միջնակարգ դպրոցում քիչ արդյունավետ է ու ավելորդ ծանրաբեռնվածություն է սովորողների համար: Այս ուսումնական պլանը, մինչև դպրոցի վերակառուցումը հիմնականում մնաց անփոփոխ:

Ստորև տալիս ենք ՀԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի հանրակրթական դպրոցի 1956-57 ուս. տարվա պլանը[305]:

Աղյուսակ 16

ՀՀ	Առարկաներ	Դասարաններ									
		1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Հայոց լեզու և գրականություն	13	10/9	8	7	9	8	5/6	4/3	4	4
2	Ռուսաց լեզու և գրականություն	-	4/5	6	6	6	6	6	5	5	5
3	Մաթեմատիկա	6	6	6	6	6	6	6	5/6	6	6
4	Պատմություն	-	-	-	1	2	2	2	4/3	4/3	4/3
5	Հայ ժողովրդի պատմություն	-	-	-	-	-	-	-	1	1	1
6	ԽՍՀՄ սահմանադրություն	-	-	-	-	-	-	-	-	-	1
7	Աշխարհագրություն	-	-	-	1/2	3	2	2	2	2	-
8	Բիոլոգիա	-	-	-	2/1	2	2	2	2	1	-
9	Ֆիզիկա	-	-	-	-	-	2	3/2	3/4	3	5/4
10	Աստղաբաշխություն	-	-	-	-	-	-	-	-	-	1
11	Քիմիա	-	-	-	-	-	-	2	2	2/3	3/4
12	Օտար լեզու	-	-	-	-	2	2	2	2	2	2
13	Ֆիզկուլտուրա	2	1	2	2	2	2	2	2	2	2
14	Նկարչություն	1	1	1	0/1	-	-	-	-	-	-
15	Գծագրություն	-	-	-	-	-	-	1	1	1	1
16	Երգ	1	1	1	1	-	-	-	-	-	-
17	Ձեռքի աշխատանք	1	1	1	1/0	-	-	-	-	-	-
18	Գործնական պարապմունքներ դպրոցի և ուսումնափորձնական հողամասում և արհեստանոցում	-	-	-	1	1	1	-	-	-	-
19	Պրակտիկում գյուղատնտ. հիմունքներից, մեքենագիտ-ից և էլեկտրատեխնիկայից	-	-	-	-	-	-	-	1	2	1/2
	Ընդամենը՝	**24**	**24**	**25**	**27**	**33**	**33**	**34**	**34**	**35**	**36**

Աղյուսակից երևում է, որ նոր ուսումնական պլանի մեջ մտցվեցին աշխատանք 1-4-րդ դասարաններում, գործնական պարապմունքներ արհեստանոցներում և ուսումնափորձնական հողամասերում՝ 5-7-րդ դասարաններում, պրակտիկումներ մեքենագիտությունից, էլեկտրատեխնիկայից և գյուղատնտեսությունից՝ 8-10-րդ դասարաններում, հաստատվեց առավել սերտ կապ ուսումնական առարկաների (ֆիզիկա, մաթեմատիկա, բնագիտություն, քիմիա, աշխարհագրություն) և կյանքի, սոցիալիստական շինարարության պրակտիկայի միջև:

Ինչպես ուսումնական պլանում, այնպես էլ ծրագրերում հետպատերազմյան շրջանում կատարված բարեփոխումները հիմնականում հետապնդել են աշակերտներին հանրակրթական, պոլիտեխնիկական ու հատկապես գործնական գիտելիքներով զինելու նպատակ:

Հայրենական պատերազմից հետո դպրոցին առաջադրված խնդիրները պահանջում էին հրաժարվել պատերազմական ժամանակաշրջանում կազմված ծրագրերից ու դասագրքերից և ուսումնական նոր պլանների պահանջներին համապատասխան կազմել նորերը՝ դպրոցում ավանդվող բոլոր առարկաների գծով: Այդ նպատակով մարզժողկրթբաժնի կոլեգիան 1946-47 ուստարվա սեպտեմբերին կայացած խորհրդակցությունում քննության առավ ուսումնական ծրագրերի ու դասագրքերի որակի հարցը, իհարկե, համագործակցելով Հայաստանի լուսավորության նախարարության հետ:

Կոլեգիան նշեց, որ գրականության, պատմության, աշխարհագրության, կենսաբանության, ֆիզիկայի և քիմիայի ծրագրերն ու դասագրքերը ծանրաբեռնված են ավելորդ ուսումնական նյութերով և, բնականաբար, ծանրաբեռնում են սովորողներին, մի բան, որ բացասաբար է անդրադառնում նրանց և առաջադիմության, և առողջության վրա:

Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցների ուսումնական ծրագրերը առավել էական փոփոխությունների ենթարկվեցին 1954-55թթ.-ին: Այդ փոփոխությունները նպատակ ունեին ապահովել ոչ միայն ուսումնադաստիարակչական աշխատանքի հետագա բարելավումը, բարձրագույն դպրոցում ուսումը շարունակելու համար աշակերտներին տեսական գիտելիքներ տալը, այլև, հատկապես, գործնական գիտելիքներով նրանց զինելը, որպեսզի դպրոցն ավարտելուց հետո հաջողությամբ աշխատեն արտադրության մեջ, մասնակցեն նյութական բարիքների ստեղծմանը:

Վերանայված ծրագրերում լուրջ ուշադրություն է դարձվում մայրենի լեզվի ուսուցմանը: Նախատեսվում է միջոցներ ձեռնարկել վերացնելու քերականության, բանավոր խոսքի և գրական ընթերցանության ուսուցման միջև եղած արհեստական, վնասակար խզումը և ապահովել դրանց սերտ կապը:

Նոր ծրագրերով մայրենի լեզվի քերականության ուսուցումը 5-10-րդ դասարաններում հիմնականում փոխադրվեց 5-7-րդ դասարաններ, իսկ 8-10-րդ դասարաններում շաբաթական մեկական ժամ հատկացվեց նախորդ դասարաններում սովորածի ամրապնդման ու խորացման համար: Մայրենի լեզվի ուսուցիչների ուշադրությունը հրավիրվեց քերականական գիտելիքների գործնական ուսուցման վրա:

Գրական ընթերցանության դասավանդումը 5-7-րդ դասարաններում պետք է աշակերտներին հիմնականում ծանոթացներ հայ նշանավոր գրողների երկերին, նախապատրաստելով նրանց 8-10-րդ դասարաններում ուսումնասիրելու հայ գրականությունը: Բացի այդ, գրական ընթերցանության ծրագրերում ու դասագրքերում անհրաժեշտ տեղ է հատկացվում ռուս և եղբայրական մյուս ժողովուրդնե-

րի ականավոր գրողների երկերի ուսումնասիրությանը:

Գրականության ծրագրերում (1949թ.) զգալի տեղ է տրվում ոչ միայն ավագ, այլև միջին ու կրտսեր սերնդի սովետահայ գրողների ստեղծագործություններին: Վերանայված ծրագրերում տրվում է նաև ներածական մաս, մի հանգամանք, որ բացակայում էր նախկին ծրագրերում:

Ռուսաց լեզվի և գրականության ծրագրերում կատարված փոփոխությունների հիմնական նպատակը աշակերտների բառապաշարի հարստացումը, սահուն կարդալու, մտքերը բանավոր ու գրավոր ճիշտ արտահայտելու հմտությունների ու կարողությունների զարգացումն էր:

Մաթեմատիկայի ծրագրերից կրճատվեցին կարևոր նշանակություն չունեցող որոշ նյութեր: Ուժեղացվեց գործնական նշանակություն ունեցող թեմաների ուսուցումը: Նախատեսվում էին գործնական աշխատանքներ՝ դիագրամների և գրաֆիկների գծագրում, տեղանքի չափումներ, հաշիվներ լոգարիթմական քանոնով, համրիչով և այլն:

Ֆիզիկայի ծրագրերում մեծ տեղ տրվեց ֆիզիկական երևույթների կիրառմանը ժամանակակից արտադրության մեջ, լաբորատոր և գործնական աշխատանքներին: 5-7-րդ դասարանների գործնական պարապմունքների և 8-10-րդ դասարանների պրակտիկումի ընթացքում նախատեսվում էր անհրաժեշտ տեղեկություններ տալ արտադրության տեխնիկայի և տեխնոլոգիայի վերաբերյալ:

Քիմիայի բարեփոխված ծրագրերում վերացվեց կոնցենտրիզմը, օրգանական քիմիայի հարցերը 10-րդ դասարանում տրվեցին առանձին բաժնով: Մեծ տեղ տրվեց աշակերտների լաբորատոր և պրակտիկ աշխատանքներին:

Զգալիորեն փոխվեց նաև կենսաբանության դասավանդման բովանդակությունը: Ուսումնական ծրագրերում ավելի լայն ծավալով մտցվեցին տեղեկություններ բնագիտության զարգացման մեջ Միչուրինի ներդրման, միչուրինյան կենսաբանության օրենքների մասին: 40-ական և առանձնապես 50-ական թվականներին լայնորեն ծավալվեց ուսումնա-փորձնական հողամասերի, կենդանի բնության անկյունների, կենսաբանության կաբինետների կազմակերպումը, դպրոցներում սկսեցին մեծ տեղ հատկացնել դպրոցականների փորձնական աշխատանքներին:

Ուսումնական ծրագրերում բուսաբանության ուսումնասիրությանը հատկացվեց 2 տարի՝ նախկին մեկուկես տարվա փոխարեն, իսկ կենդանաբանության ուսումնասիրությանը՝ մեկ տարի (7-րդ դասարան): Այս առարկայի ծրագրից հանվեցին դժվար և երկրորդական նշանակություն ունեցող նյութերը, դրա փոխարեն ընդարձակվեց բույսերի ու կենդանիների դիտումները աշակերտների կողմից, փորձերի կազմակերպումը, ինչպես նաև ուժեղացվեցին ուսումնափորձնական հողամասում և գյուղատնտեսական արտադրության մեջ կատարվող գործնական պարապմունքներն ու աշխատանքները:

Փոփոխություններ կատարվեցին նաև պատմության, աշխարհագրության, օտար լեզուների և մյուս առարկաների ծրագրերում՝ հիմնականում ուսուցման գործնական բնույթն ուժեղացնելու և ոչ էական նշանակություն ունեցող նյութերը կրճատելու տեսանկյունով:

ԼՂԻՄ հանրակրթական դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքի որակի բարձրացումը մեծ չափով պայմանավորված էր դպրոցական դասագրքերով: Նոր հնգամյակի տարիներին այդ ուղղությամբ նույնպես մեծ ձեռնարկումներ կատարվեցին: Եթե 1945թ. Հայկական ԽՍՀ պետհրատը միջնակարգ դպրոցների համար հրատարակել էր 24 անուն դասագիրք, ապա 1948թ. արդեն հրատա-

ռակված էր 54 անուն դասագիրք[306]: Միջոցներ էին ձեռնարկվում 1949-50 ուստարվանից յուրաքանչյուր աշակերտի ապահովելու անհրաժեշտ բոլոր դասագրքերով՝ նախքան դպրոցներում ուսումնական պարապմունքներն սկսվելը:

Այդ ամենի շնորհիվ յուրաքանչյուր աշակերտ ապահովվեց դասագրքերի լրիվ կոմպլեկտով: 1949-50 ուստարում պետհրատը լույս ընծայեց 74 անուն դասագիրք՝ 2 միլիոն 400 հազար տպաքանակով: Հրատարակչական մարմինները լուրջ ուշադրություն դարձրին նաև դասագրքերի արտաքին ձևավորման և կազմի որակի վրա: 1950 թ. առաջին անգամ մայրենի լեզվի «Այբբենարանը» հրատարակվեց գունավոր (հեղինակներ Ավ. Ճուղարյան, Հայրապետյան), որ 20 տարի շարունակ մեր մանուկներին գրաճանաչություն էր սովորեցնում: Լեռնային Ղարաբաղի հայկական դպրոցների համար անհրաժեշտ քանակի ուսումնական պլաններ, ծրագրեր և դասագրքեր բերում էին Հայաստանից, իսկ ռուսաց լեզվի, բնակգիտական առարկաների դասագրքերի մի մասը՝ Բաքվից:

1950-ական թվականների վերջերին, 1958թ.-ին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից օրենքի (կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման, ԽՍՀՄ ժողովրդական կրթության հետագա զարգացման մասին) ընդունումից հետո հանրակրթական դպրոցի աշխատողների առջև խնդիր դրվեց անհապաղ իրականացնել ութամյա պարտադիր ուսուցումը: Դպրոցի վերակառուցման մասին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընդունած օրենքին (1959թ. ապրիլի 16-ին) համապատասխան՝ որոշ փոփոխության ենթարկվեցին հանրակրթական միջնակարգ դպրոցի ուսումնական պլաններն ու ծրագրեը: Լեռնային Ղարաբաղի ժողկրթբաժնի կոլեգիայի նիստերում (1959թ. մարտ-ապրիլ ամիսներին) հավանություն տրվեց միջնակարգ դպրոցի ուսումնական պլանների ծրագրերի վերանայման մասին Հայաստանի լուսավորության նախարարության որոշմանը:

Ինչպես արդեն նշվել է, դպրոցի հիմնական թերությունն այն ժամանակ համարվում էր կյանքից ուսուցման որոշակի կրտվածությունը: Նոր պլաններում ու ծրագրերում այդ թերությունը պետք է հաղթահարվեր:

Սկզբում համառոտակի ներկայացնենք 8-ամյա դպրոցի ուսումնական պլանը: Այդ պլանում զգալիորեն ավելացան աշխատանքային ուսուցման ժամերը: 7-ամյա դպրոցում հատկացված շաբաթական 7 ժամի փոխարեն աշխատանքային ուսուցմանը 8-ամյա դպրոցում հատկացվեց 16 ժամ: Մտցվեց հասարակական օգտակար աշխատանք առարկա՝ 3-8-րդ դասարաններում՝ շաբաթական մեկ ժամով, ինչպես նաև հասարակական արտադրական երկշաբաթյա պրակտիկա՝ 5-8-րդ դասարաններում:

Այսպիսով, աշխատանքային ուսուցմանը և հանրօգուտ աշխատանքին հատկացվեց տարեկան 780 ժամ[307]:

Նոր ուսումնական պլանի առավելությունը պիտի համարել այն, որ երգ-երաժշտության ուսուցումը մտցվեց ութամյակի բոլոր դասարաններում: Դրանից բացի, շաբաթական 4,5 ժամ հատկացվեց խմբակային երգեցողությանը: Նկարչության ուսուցումը մտցվեց 1-6-րդ դասարաններում: Գեղագիտական դաստիարակության նկատմամբ այս դրական երևույթը, անկասկած, նվաճում պետք է համարել մեր դպրոցի պատմության մեջ:

Ստորև ներկայացնում ենք ութամյա դպրոցի 1959-60 ուստարվա պլանը.

Աղյուսակ 17

ՀՀ	Առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը ըստ դասարանների								Ընդամենը ժամերի քանակը	
		1-ին	2-րդ	3-րդ	4-րդ	5-րդ	6-րդ	7-րդ	8-րդ	Շաբաթական	Տարեկան
1	Հայոց լեզու	11	10	9	8	5	3	2/3	2	50/5	1778
2	Գրականություն	-	-	-	-	3	3	3/2	3/2	11	395
3	Ռուսաց լեզու	3	5	5	6	6	6	4/5	4	39,5	1399
4	Մաթեմատիկա	5	5	6	6	6	6	6	5	45	1592
5	Պատմություն և ԽՍՀՄ սահմանադրություն	-	-	-	1	2	2	3	3/4	11,5	410
6	Հայրենի բնություն	-	-	-	2	-	-	-	-	2	70
7	Ֆիզիկա	-	-	-	-	-	2	2	3	7	249
8	Քիմիա	-	-	-	-	-	-	1/2	2	3,5	125
9	Բիոլոգիա	-	-	-	-	2	2	2/1	2	7,5	267
10	Աշխարհագրություն	-	-	-	-	2	2	2	2	8	286
11	Օտար լեզու	-	-	-	-	3	3	3/2	2/3	11	412
12	Գծագրություն	-	-	-	-	-	-	1	1	2	71
	Ընդամենը՝	**19**	**20**	**20**	**23**	**29**	**29**	**29**	**29,5**	**198,5**	**7037**
13	Երգ-երաժշտություն	1	1	1	1	1	1	1	1/0	7,5	263
14	Նկարչություն	1	1	1	1	1	1	-	-	6	210
15	Ֆիզկուլտուրա	2	2	2	2	2	2	2	2	16	560
	Ընդամենը՝	**4**	**4**	**4**	**4**	**4**	**4**	**3**	**2,5**	**29,5**	**1033**
16	Աշխատանքի ուսուցում	1	1	2	2	2	2	3	3	16	567
17	Հասարակական օգտակար աշխատանք	-	-	1	1	1	1	1	1	6	213
18	5-8-րդ դասարաններում հասարակական - արտադրական պրակտիկա	Ուսումնական տարվա վերջում երկուական շաբաթ									
	Ընդամենը՝	**1**	**1**	**3**	**3**	**3**	**3**	**4**	**4**	**22**	**780**
	Ընդհանուրը՝	**24**	**25**	**27**	**30**	**36**	**36**	**36**	**36**	**250**	**8849**

Աղյուսակից երևում է, որ ուսումնական պլանում հանրակրթական առարկաներին հատկացվող ժամերը ութամյա դպրոցում համարյա մնացին անփոփոխ, քանի որ ուսման տևողությունը ավելացավ մեկ տարով:

Առավել մեծ փոփոխության ենթարկվեց բարձր դասարանների ուսումնական պլանը: Հենվելով 8-ամյա կրթության վրա, արտադրական ուսուցմամբ միջնակարգ դպրոցի ուսումնական պլանը պետք է ապահովեր լրիվ միջնակարգ կրթություն՝ բարձրագույն դպրոցում սովորելու համար և մասնագիտական պատրաստություն՝ դպրոցն ավարտելուց հետո արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ կամ այլ բնագավառում աշխատելու համար:

Եթե մինչև վերակառուցումը միջնակարգ դպրոցի համար կազմվում էր մեկ ընդհանուր ուսումնական պլան, ապա դրանից հետո կազմվում է երկու հիմնական պլան՝ քաղաքային և գյուղական դպրոցների համար առանձին-առանձին: Հիմնական պլաններն էլ իրենց հերթին ունեին առանձին տարբերակներ: Դա կախված էր նրանից, թե արտադրական ինչ մասնագիտություն էր ընտրվում տվյալ դպրոցի համար՝ էլեկտրատեխնիկակա՞ն, դազգահաշիվնությու՞ն, փայտամշակու՞մ, այգեգործությու՞ն, դաշտավարությու՞ն, թե՞ մեկ այլ մասնագիտություն: Դրան համապատասխան էլ կազմվում էին ուսումնական պլանները:

Թե քաղաքային և թե գյուղական արտադրական ուսուցմամբ դպրոցների (9-10-րդ դասարաններ) ուսումնական պլաններում հանրակրթական առարկաների ուսուցմանը հատկացվում էր ժամերի մոտ 2/3-ը, իսկ 1/3-ը տրվում էր արտադրական ուսուցմանը և արտադրողական աշխատանքին:

Ինչպես 8-ամյա դպրոցում, այնպես էլ այստեղ, ուսումնական պլաններում մայրենի լեզվին և գրականությանը, ռուսաց լեզվին, մաթեմատիկային, ֆիզիկային և քիմիային հատկացվող ժամերը նախկինի համեմատությամբ գրեթե չեն փոխվում: Դա, իհարկե, դրական երևույթ պետք է համարել: Սակայն քաղաքային և գյուղական դպրոցների ուսումնական պլանների մեջ որոշ տարբերություն գոյություն ուներ՝ կապված արտադրական ուսուցման և արտադրողական աշխատանքի հետ: Գյուղական դպրոցների աշակերտների արտադրողական աշխատանքին ավելի շատ ժամանակ էր հատկացվում (54 օր):

Նոր ուսումնական պլաններում առաջին անգամ մտցվեցին հատուկ ժամեր ֆակուլտատիվ պարապմունքների համար, շաբաթական 2-ական ժամ 9-11-րդ դասարաններում: Այդպիսի պարապմունքներ մտցնելը նպատակ ուներ աշակերտներին հնարավորություն տալ ավելի խորանալու ընտրած մասնագիտության մեջ:

Այժմ ներկայացնենք քաղաքային և գյուղական ուսուցմամբ հանրակրթական միջնակարգ դպրոցների ուսումնական պլանները.

Քաղաքային արտադրական ուսուցմամբ միջնակարգ դպրոցի ուսումնական պլան (1959-60 ուստարի)

Աղյուսակ 18

ՀՀ	Առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը			Ընդամենը	
		9-րդ	10-րդ	11-րդ	շաբաթական	տարեկան
1	Հայ գրականություն	3/4	2	3	8,5	319
2	Ռուսաց լեզու և գրականություն	3	2/3	2/3	8	302
3	Մաթեմատիկա	4	4	4	12	452
4	Պատմություն	3	3/2	3/4	9	341
5	ԽՍՀՄ սահմանադրություն	-	-	1	1	35
6	Տնտեսական աշխարհագրություն	-	2/1	2	3,5	129
7	Ֆիզիկա	4	4	2	10	382
8	Քիմիա	2	2/3	2	6,5	246
9	Աստղագիտություն	-	1	-	1	39
10	Կենսաբանություն	2	-	-	2	78

11	Գծագրություն	2	-	-	2	78
12	Օտար լեզու	3/2	2	3/2	7	263
13	Ֆիզկուլտուրա	2	2	2	6	226
	Ընդամենը՝	28	24	24	76	2868
14	Ընդհանուր տեխնիկական առարկաներ, արտադրական ուսուցում և արտադրական աշխատանք	8	12	12	32	1200
	Ընդամենը՝	36	36	36	108	4068
15	Ֆակուլտատիվ պարապմունքներ	2	2	2	6	226

Գյուղական արտադրական ուսուցմամբ միջնակարգ դպրոցի ուսումնական պլան (1959-60 ուստարի)

Աղյուսակ 19

ՀՀ	Առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը			Ընդամենը	
		9-րդ	10-րդ	11-րդ	դասընթացում	տարեկան
1	Հայ գրականություն	4/3	3	3/4	10	307
2	Ռուսաց լեզու և գրականություն	3	3/4	4/3	10	307
3	Մաթեմատիկա	5	5/4	5	14/5	445
4	Պատմություն	3	3	5/4	10/5	374
5	ԽՍՀՄ սահմանադրություն	-	-	1	1	32
6	Տնտեսական աշխարհագրություն	-	2	2	4	124
7	Ֆիզիկա	5	5	2/3	12,5	380
8	Քիմիա	-	1	-	1	30
9	Աստղագիտություն	2/3	3	3	8,5	261
10	Կենսաբանություն	3	-	-	3	90
11	Գծագրություն	2	-	-	2	60
12	Օտար լեզու	3	3	9	9	276
13	Ֆիզկուլտուրա	2	2	2	6	184
	Ընդամենը՝	32	30	30	92	2820
14	Գյուղատնտեսության արտադրության հիմունքներ և արտադրական ուսուցում	4	6	3	16	492
	Ընդամենը՝	36	36	36	108	3312
15	Արտադրական աշխատանք ըստ սեզոնների՝ օրերով.....	54	54	18	-	126
	ժամերով	324	324	144	-	756
16	Ֆակուլտատիվ պարապմունքներ	2	2	2	6	184

Քննարկվող ժամանակաշրջանում հանրակրթական դպրոցին ներկայացվող նոր պահանջներին ու խնդիրներին համապատասխան վերակառուցվեցին նաև ուսումնական ծրագրերը: Այդ աշխատանքը կատարվեց Հայաստանի լուսավորության նախարարության մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտի միջոցով: Կազմվեցին հայոց լեզվի և գրականության, ռուսաց լեզվի և գրականության, օտար լեզուների, հայ ժողովրդի պատմության, Հայաստանի աշխարհագրության, հայրենի բնության, երգ-երաժշտության և նկարչության ծրագրերի նախագծերը: Այդ տասնամյակում Լեռնային Ղարաբաղի դպրոցների համար վերոնշյալ առարկաների ուսումնական ծրագրերը բերվում էին Հայաստանի Ժողկրթլուսավորությունից, իսկ ռուսաց լեզվի ծրագրերը՝ Մոսկվայից:

Հանրակրթական առարկաների նոր ծրագրերի հիմնական առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ պահպանելով տեսական նախկին մակարդակը, ուժեղացվում էր նրանց գործնական նպատակաուղղվածությունը: Հանրակրթական առարկաների ուսումնական ծրագրերի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռել մեզ վերլուծաբար ներկայացնել նոր ծրագրերի նպատակն ու խնդիրները:

Մայրենի լեզվից 1-4-րդ դասարանների դասընթացի հիմքում դրվեց առավելապես լեզվի գործնական ուսուցման սկզբունքը[308]՝ ընթերցանության, ուղղագրության, քերականության, բանավոր ու գրավոր խոսքի ուսուցման սերտ միասնությունն ու փոխկապակցությունը: Քերականությունից սիստեմատիկ դասընթաց չի տրվում: Նախատեսվում է կենդանի խոսքի զարգացման, կարդալու և գրագետ գրելու տեսակետից գործնական նշանակություն ունեցող առանձին քերականական պարզագույն հասկացությունների ուսուցում:

Մայրենի լեզվի սիստեմատիկ դասընթացի ուսուցումը նոր ծրագրով սկսվում է 5-րդ դասարանից և ավարտվում 8-րդում: Այն հնարավորություն է տալիս ապահովել լեզվական գիտելիքների ավելի կուռ և գործնական ուսուցում:

Ծրագրում մեծ ուշադրություն է դարձվում աշակերտների գրավոր խոսքի զարգացման վրա և, ի տարբերություն նախորդ ծրագրերի, առավել ուշադրություն է դարձվում ինքնուրույն գրավորների վրա (շարադրություն, փոխադրություն, գրության գործնական ձևեր և այլն):

5-8-րդ դասարաններում գրականության դասընթացի հիմնական խնդիրն է համարվում աշակերտների գաղափարական, գեղագիտական և բարոյական դաստիարակությունը, ինչպես նաև նրանց ընդհանուր և լեզվական կուլտուրայի զարգացումը: Գրականության դասընթացը կառուցվում է մայրենի լեզվի դասընթացի հետ սերտորեն կապված, հատկապես խոսքի զարգացման ասպարեզում: 5-6-րդ դասարաններում դասընթացը կառուցվում է թեմատիկ, իսկ 7-8-րդ դասարաններում՝ պատմաժամանակագրական սկզբունքով: Նախատեսվում են նաև նյութեր՝ արտադասարանական ընթերցանության համար[309]:

Միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում գրականության ծրագիրն ընդգրկում է հայ գրականության պատմությունը՝ սկսած 5-րդ դարից մինչև մեր օրերը:

Ռուսաց լեզվի ուսուցման գրավոր խնդիրը համարվում է այն, որպեսզի ութամյա դպրոցն ավարտողները կարողանան ռուսերեն ազատ խոսել և գրել, կարդալ և օգտվել գեղարվեստական, տեխնիկական ու հանրամատչելի գրականությունից: Ինչպես մայրենի լեզվից, այնպես էլ ռուսաց լեզվից ծրագրերը պահանջում են ուսուցմանը գործնական ուղղություն տալ, որպեսզի այն չվերածվի քերակա-

նական կանոնների չոր ու ցամաք, կյանքից կտրված վարժությունների: Հատուկ պահանջ է առաջադրվում, որպեսզի ընթերցանության և քերականաության դասերին ամեն կերպ զարգացվի աշակերտների բանավոր և գրավոր խոսքը:

Օտար լեզուների ուսուցումն սկսվում է 5-րդ դասարանից: Նախատեսվում է ութերորդ դասարանում աշակերտների ակտիվ բառապաշարի յուրացումը հասցնել 900 բառի: Ծրագրում մեծ տեղ է տրվում խոսքի զարգացման վարժություններին: Քերականության ուսուցումը սերտորեն և օրգանապես կապվում է կարդալու և խոսքի զարգացման հետ: 9-11-րդ դասարաններում զարգացվում և կատարելագործվում են ութամյա դպրոցում ստացված գիտելիքներն ու հմտություններն այն հաշվով, որպեսզի միջնակարգ դպրոցն ավարտողը կարողանա օտար լեզվով տեքստը ազատ կարդալ և հասկանալ, թարգմանել, ազատ օգտվել բառարաններից, լեզվական գիտելիքների սահմաններում օտարերկրացու հետ մտքեր փոխանակել:

Վերանայված ծրագրում լուրջ ուշադրություն է դարձվում նաև հայ ժողովրդի պատմության, աշխարհագրության, մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և այլ առարկաների ուսուցմանը: Համեմատաբար մեծ նշանակություն է տրվում պոլիտեխնիկական առարկաների՝ մաթեմատիկայի, ֆիզիկայի ուսուցմանը:

Միջնակարգ դպրոցում ֆիզիկայի և քիմիայի դասավանդման հիմնական խնդիրը՝ ըստ նոր ծրագրերի, համարվում են այդ գիտությունների հիմունքների կայուն և սիստեմատիկ գիտելիքների հաղորդումը՝ բնության ու արտադրության մեջ կատարվող ֆիզիկական ու քիմիական երևույթները դիտելու և բացատրելու ունակությունների զարգացումը:

Միաժամանակ խնդիր է դրվում սովորողներին ծանոթացնել արտադրության գիտական հիմունքներին էներգետիկ, մեխանիկական ու գյուղատնտեսական արտադրության մեջ, տրանսպորտում ու կենցաղում ֆիզիկայի և քիմիայի կիրառմանը, բացահայտել այդ գիտությունների դերը երկրի ժողովրդական տնտեսության զարգացման մեջ:

Ֆիզիկայի և քիմիայի ուսումնասիրությունը նաև նպատակ է դնում նպաստել սովորողների բազմակողմանի զարգացմանը՝ նրանց ապագա պրակտիկ գործունեության համար, օժանդակել և պայմաններ ստեղծել, որպեսզի միջնակարգ դպրոցն ավարտողները ազատ ընտրություն կատարեն:

8-10-րդ դասարանների պրակտիկումների հիմնական խնդիրն է աշակերտներին ծանոթացնել ժամանակակից արտադրության մեջ առավել տարածված հաստոցների և մեքենաների կառուցվածքին (խառատային հաստոց, ներքին այրման շարժիչ, էլեկտրաշարժիչ, ավտոմեքենա, տրակտոր և գյուղատնտեսական այլ մեքենաներ), տալ դրանց հետ վարվելու նախնական հմտություններ, սովորեցնել կատարելու ոչ բարդ մոնտաժային աշխատանքներ էլկտրա-ռադիոտեխնիկայից: Պրակտիկումի պարապմունքները զուգակցվում են կոլտնտեսություններում, սովխոզներում, արդյունաբերական և այլ ձեռնարկություններում աշակերտների ուժերին մատչելի, դպրոցի ուսումնադաստիարակչական խնդիրներին համապատասխան հասարակական-արտադրական աշխատանքին:

Կենսաբանության նոր ծրագիրը նպատակ է դնում սովորողներին տալ այդ գիության հիմունքների կայուն և սիստեմատիկ գիտելիքներ, բացահայտել նրա նշանակությունը գյուղատնտեսության մեջ, ժողովրդական տնտեսության այլ ճյուղերում և առողջապահության մեջ:

Դրանից ելնելով, ծրագիրը նախատեսում է լաբորատոր պայմաններում, կեն-

դանի բնության անկյունում, դպրոցի ուսումնափորձնական հողամասում, ինչպես նաև անմիջապես արտադրության մեջ, սովորողների հասակին համապատասխան տալ մատչելի աշխատանքի հմտություններ և ունակություններ, հատուկ ուշադրություն դարձնել տնտեսական կարևոր նշանակություն ունեցող փորձարարությանը:

Բոլորովին նոր սկզբունքներով կազմվեցին աշխատանքային և արտադրական ուսուցման ծրագրերը:

Աշխատանքային ուսուցումն ութամյա դպրոցում նպատակ ունի աշակերտներին զինել ընդհանուր տեխնիկական, գյուղատնտեսական և տնտսա-կենցաղային գիտելիքներով և ունակություններով, զարգացնել դպրոցականների տեխնիկական մտածողությունն ու ընդունակությունները, նրանց մեջ դաստիարակել գիտակցական վերաբերմունք աշխատանքի նկատմամբ և ընդհանուր աշխատանքային կուլտուրա, օգնել աշակերտներին՝ դրսևորելու իրենց հակումները և գիտակցորեն ընտրելու ապագա մասնագիտությունը:

Ուսուցման ընթացքում սովորողների աշխատանքը պետք է կրի պոլիտեխնիկական բնույթ և ունենա հասարակական օգտակար ուղղվածություն:

Աշխատանքային ուսուցման բովանդակության մեջ մտնում են ուսումնական արհեստանոցներում, ինչպես նաև գյուղատնտեսության ու տնարարության գծով անցկացվող պարապմունքները:

Ուսումնական արհեստանոցներում անցկացվող պարապմունքների ընթացքում աշակերտները պետք է տիրապետեն ձեռքի գործիքների և որոշ հաստոցների օգնությամբ փայտանյութի և մետաղների մշակման գծով գիտելիքներին և ունակություններին:

Հաշվի առնելով աղջիկների աշխատանքի առանձնահատկությունները, նախատեսվում էր տնարարությունից նրանց տալ տնտեսական-կենցաղային շխատանքներ կատարելու հմտություններ:

Աշխատանքային ուսուցման բոլոր տեսակի պարապմունքներին տրվում էր գործնական բնույթ:

Միջնակարգ դպրոցի 9-11-րդ դասարանների արտադրական ուսուցման բազմատեսակ ծրագրեր կազմվեցին: Ըստ մասնագիտությունների դրանց թիվն անցնում էր 30-ից: Բոլոր դպրոցների համար, սակայն, պարտադիր էին մեքենագիտության և էլեկտրատեխնիկայի դասընթացները:

Մեքենագիտության ուսուցումը նպատակ ուներ սովորողներին ծանոթացնել մեքենաների մասերի, նրանց միացությունների, մեխանիզմների ու զանազան մեքենաների կառուցվածքի սկզբունքներին ու գործողություններին, ինչպես նաև կոմպլեքսային մեքենայացմանն ու ավտոմատացմանը:

Նկատի ունենալով արտադրության բնագավառների բազմազանությունը և դրանցում օգտագործվող մեքենաների տարատեսակությունը, մեքենագիտության ընդհանուր հիմունքների ուսուցումը կապակցվում է ընտրած մասնագիտության մեքենաների ուսումնասիրության հետ:

Գյուղատնտեսական առարկաների գծով նույնպես լայն տեղ է տրվում դաշտավարության, այգեգործության և անասնապահության մեջ սովորողների արտադրողական աշխատանքին:

Ուսումնական ծրագրերին այս համառոտակի ծանոթությունը ցույց է տալիս, որ հանրակրթական գիտելիքների ծավալը նախկինի համեմատությամբ մնում է գրեթե անփոփոխ: Այն հիմնական պահանջը, ըստ որի միջնակարգ դպրոցը պետք է ապահովի գիտության հիմունքների ուսուցումը՝ բարձրագույն դպրոց ընդուն-

վելու մակարդակով, մնում է ուժի մեջ:

Նորն այն էր, որ բոլոր առարկաների գծով որոշակի պահանջ էր դրվում ուսուցումը մոտեցնել կյանքին, աշակերտներին զինել գործնական գիտելիքներով, դպրոցում ձեռք բերած տեսական գիտելիքները կյանքում գործադրել կարողանալ: Դրան հասնելու համար բավական ջանքեր գործադրվեցին, որպեսզի տեսական ու գործնական բնույթի առարկաների միջև ներքին, օրգանական կապեր ստեղծվեն:

Պետք է նշել, որ ծրագրերում որոշ չափով այդ սկզբունքները պահպանվում էին, հատկապես բնական գիտությունների և արտադրական ուսուցման առարկաների միջև ստեղծվել էր որոշ օրգանական կապ:

Ուսումնական պլաններում և ծրագրերում կատարված փոփոխություններն իրենց արտահայտությունը գտան դասագրքերում: Հայոց լեզվի և գրականության, օտար լեզուների, հայ ժողովրդի պատմության, բուսաբանության, հայրենի բնության, Հայաստանի աշխարհագրության դասագրքերը, որ կազմվում են տեղում, ոչ միայն հարմարեցվեցին 11-ամյա ուսուցմանը, այլև նրանցում զգալի չափով ուժեղացվեց գործնական բնույթ կրող առաջադրանքներն ու վարժությունները, նկատելի տեղ հատկացվեց աշխատանքային դաստիարակությանը նպաստող նյութերին:

Մնացած դասագրքերը, ինչպես անցյալում, թարգմանվեցին ռուսերենից:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում հանրակրթական դպրոցի ուսումնական ծրագրերի ու պլանների ուղղությամբ կատարված արմատական վերափոխումները անհրաժեշտ պայմաններ ստեղծեցին վերակառուցելու նաև ուսումնադաստիարակչական աշխատանքների համակարգը:

Հանրահայտ ճշմարտություն է, որ հանրակրթական դպրոցի աշխատանքի հիմքը կրթադաստիարակչական նպատակներն են, այսինքն՝ սպասվող այնպիսի արդյունքները, որոնք համապատասխանում են կրթական հաստատության, նրա կոլեկտիվի անդամների մոտիվացիային և տվյալ ժամանակահատվածում դրանք իրականացնելու հնարավորություններին: Հենց այդ նպատակով էլ Հայրենական պատերազմից հետո Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի հայկական դպրոցներում լայն աշխատանք են տարվել նաև ուսումնադաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքների արդյունավետ կազմակերպման ուղղությամբ:

Այդ նպատակով 1945-46 ուստարվա օգոստոսի 26-ին հրավիրված մարզժողկրթբաժնի կոլեգիայի նիստում (մարզժողկրթբաժնի վարիչ՝ Սարգիս Աբրահամյան) քննարկվել են նաև հանրակրթական դպրոցին վերաբերող բազմաբնույթ հարցեր և ընդունվել համապատասխան որոշումներ՝ շրջանային կրթության բաժիններում, դպրոցների տնօրենների, մանկավարժական կոլեկտիվների աշխատանքում տեղ գտած թերությունները վերացնելու և ուսումնադաստիարակչական աշխատանքների մակարդակը բարձրացնելու համար:

Համառոտակի ներկայացնենք մարզժողկրթբաժնի կոլեգիայի նիստերում քննարկված բազմաբնույթ հարցերից կարևորագույնները, որոնց վրա լուրջ ուշադրություն դարձրին մանկավարժական կոլեկտիվները:

Դրանք են.

1. հանրակրթական դպրոցներում անհապաղ բարձրացնել ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքը.

2. ուսուցման գործընթացի որակի բարձրացումը դպրոցներում.

3. դպրոցականների արտաուսումնական և արտադրպրոցական աշխատանք-

ների արդյունավետ կազմակերպում.

4. պարտադիր 7-ամյա կրթության իրականացում, անցում 8-ամյա կրթության.

5. ԽՍՀՄ սահմադրության դասավանդման դրվածքի բարձրացումը դպրոցներում.

6. դասի որակի և արդյունավետության բարձրացումը և այդ նպատակով՝

- դասի տիպի և կառուցվածքի որոշում.
- ժամանակի բաշխում.
- ուսուցման մեթոդների արդյունավետ կիրառում.
- ուսուցչի կողմից մեթոդական ֆոնդի հարստացում.
- դասին ուսուցման սկզբունքների կիրառում.
- գիտելիքների յուրացման փուլերի հաղորդման, լսման, ընկալման, իմաստավորման, վերացարկման (աբստրակցիայի), յուրացման, ամրապնդման, կիրառման հաջորդական ապահովում.
- աշակերտների ներքին և արտաքին ակտիվության ներդաշնակ ապահովում.
- ուսուցչի հարցերի ու առաջադրանքների կազմում, գիտելիքների հաշվառման, ստուգման և գնահատման սկզբունքների՝ օբյեկտիվության, ռեալության, գործնականության, հրապարակայնության, համակողմանիության, համակարգվածության ապահովում.

7. կյանքի հետ ուսուցման կապի ապահովում.

8. դաստիարակչական աշխատանքի նկատմամբ նոր մոտեցումների սահմանում.

9. աշակերտական վարքի նոր կանոնների սահմանում.

10. ուսումնական աշխատանքների նկատմամբ նոր մոտեցումների դրսևորում ուսումնական կաբինետների, լաբորատորիաների կահավորում.

11. դասը կատարելագործելու ուղղությամբ ուսուցման նոր մեթոդների կիրառում.

12. ուսման մեջ աշակերտների առաջադիմության խթանում, երկտարեցիության հաղթահարում.

13. ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպում.

14. ուսուցչի աշխատանքի գնահատում և աշխատավարձի բարձրացում.

15. ուսումնադաստիարակչական գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացում և այլն[310]:

Մարզժողկրթբաժնի 1946-1947թթ. կոլեգիայի նիստերում քննարկվել են նաև շրջանային ժողովրդական կրթության բաժինների խնդիրները դպրոցի գործունեության պլանավորման գործում: Մարզժողկրթբաժնի վարիչ Սարգիս Աբրահամյանը իր ելույթում նշել է, որ դպրոցներում աշխատանքի պլանավորման գործի բարելավումը և կատարելագործումը պայմանավորված են նրանով, թե ժողովրդական կրթության բաժինը այդ բնագավառի նկատմամբ ինչպիսի ուշադրություն և պահանջկոտություն է հանդես բերում: Իհարկե, այստեղ ոչ թե սոսկ պահանջկոտությունն է վճռորոշ նշանակություն ունենում, այլ գործնական և սիստեմատիկ օգնությունը, փորձի փոխանակումը: Դպրոցի գործունեության պլանավորումը բարելավելու համար կարևոր նշանակություն ունի շրջանային ժողկրթբաժնի և դպրոցների տնօրենների աշխատանքի պլանավորումը: Մարզժողկրթբաժնի վարիչը առաջարկում է, որպեսզի շրջժողկրթբաժինների վարիչները իրենց աշխատանքային պլանում ընդգրկեն հետևյալ հարցերը.

- դպրոցի կոնկրետ խնդիրների առանձնացումը.
- դպրոցական գործի էական դրույթների վերլուծություն, դժվարությունների,

հարցերի բացահայտում, որոնց վրա տարվա ընթացքում պետք է ուշադրություն դարձնելը.

- դպրոցական, նախադպրոցական և արտադպրոցական մանկական հիմնարկների ցանցի ընդլայնում.
- դպրոցականների գաղափարական, քաղաքական, բարոյական և աշխատանքային դաստիարակության ապահովումը.
- պարտադիր 7-ամյա կրթության կենսագործումը.
- աշխատանքը դպրոցների ղեկավար կազմի և մանկավարժների հետ.
- ժողովրդական կրթության հմնարկների ուսումնանյութական բազայի հարստացումը, աշխատանքային պայմանների բարելավումը.
- աշխատանքը ծնողների հետ, մանկավարժական գիտելիքների պրոպագանդումը ծնողների շրջանում.
- ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունավետության բարձրացումը.
- արտադասարանական և արտադպրոցական դաստիարակչական աշխատանքի կազմակերպումը և կատարելագործումը.
- դպրոցի, ընտանիքի և հասարակության համագործակցությունը, աշխատանքը ծնողների հետ, կապն արտադրական ձեռնարկությունների և արտադպրոցական մանկական հիմնարկների հետ.
- դպրոցի ուսումնանյութական բազայի բարելավումը և այլն[311]:

Մարզժողկրթբաժնի առաջադրած այս ուղեցույց-դրույթները շուտով օգնեցին շրջժողկրթբաժինների վարիչներին, դպրոցների տնօրեններին՝ նորովի մշակել դպրոցի գործունեության պլանավորման միասնական համակարգը, հաղթահարել այդ բնույթի թերություններն ու աղավաղումները և ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման գործը դնել բարձր մակարդակի վրա:

Ինչպես նշվեց, Հայրենական պատերազմից հետո Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում հայկական դպրոցների ուսումնանյութական բազայի, ուսուցչական կադրերի ուսումնական պլանների, ծրագրերի ուղղությամբ կատարված վերափոխումները անհրաժեշտ պայմաններ ստեղծեցին վերակառուցելու նաև բուն ուսումնադաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքների արդյունավետ կազմակերպման ու մեթոդամանկավարժական ձևերն ու միջոցները:

Հայտնի է, որ պատերազմի տարիներին, չնայած ուսուցչության անձնվեր աշխատանքին, այնուամենայնիվ, դպրոցական գործում լուրջ թերություններ կային, որոնց հետևանքները գոյատևեցին երկար ժամանակ: Իսկ որո՞նք էին այն դժվարությունները, որ պետք էր հաղթահարել հետպատերազմյան տարիներին:

Մարզժողկրթբաժնի հաշվետվություններից տեղեկանում ենք, որ 1946-1947 ուստարվա ուսուցչական օգոստոսյան խորհրդակցությունում նշվել են այն դժվարությունները, որոնք շրջանային ժողկրթության բաժինները պետք է հաղթահարեին: Նկատի ունենք հետևյալը.

- ուսումնական աշխատանքի քիչ թե շատ կանոնավոր ընթացքի համար անհրաժեշտ էր պարապմունքները տանել գոնե երկու հերթով: Իսկ դրան հասնելու համար պահանջվում էին ոչ քիչ ջանքեր.
- զինվորական հիվանդանոցներին տրամադրված դպրոցական շենքերը վերադարձվում էին բավականին դանդաղ: Նոր շենքերի կառուցումը նույնպես դանդաղ էր ընթանում, քանի որ երկրի տնտեսության վերականգնման կարիքները շատ էին.

- ուսուցման հաջողությունն անմիջապես առնչվում է ուսումնանյութական բազայի առկայության հետ: Այստեղ նույնպես խոչընդոտներն իրենց զգացնել տվեցին: Լաբորատոր և ուսումնաօժանդակ այլ սարքավորումների մատակարարման գործը դծվարությամբ էր մտնում հունի մեջ.

- պատերազմից հետո մի քանի տարիների ընթացքում ուսուցչության կազմը լուրջ փոփոխության ենթարկվեց: Երկար ժամանակ մանկավարժական գործունեությունն ընդհատած ուսուցիչների հետ անհրաժեշտ եղավ լուրջ աշխատանքներ տանել նրանց մասնագիտական ու մեթոդական գիտելիքները թարմացնելու և լրացնելու համար.

- մի կողմից ծնողների զբաղվածությունն աշխատանքում, մյուս կողմից տնտեսական ու կենցաղային գործերում աշակերտների չափից ավելի մասնակցությունը թուլացրել էին նրանց հետաքրքրությունն ու մղումը դեպի ուսումը: Այդ երևույթի հաղթահարումը չափազանց կարևոր էր դպրոցի հետագա զարգացման համար:

Կար ևս մի ուրիշ դժվարություն: Դա մանկավարժական գիտության և մեթոդական աշխատանքի նկատմամբ անտարբերությունն էր, որ առաջ էր եկել դարձյալ պատերազմական տարիներին ու շարունակվում էր մնալ նրանից հետո:

Ահա այդպիսի պայմաններում սկսվեց Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցի ուսումնական գործունեությունը հետպատերազմյան շրջանում: Մարզի ժողովրդական կրթության մարմինները, մանկավարժական կոլեկտիվները իրենց առաջնահերթ խնդիրը համարեցին ուսուցման գործընթացի բարելավումն ու կատարելագործումը: Հարկ է նշել, որ այս ուղղությամբ մեր ուսուցչությունը զգալի գործ սկսեց կատարել դեռևս 1944-1945 ուստարվանից՝ ԽՍՀՄ ժողկոմխորհրդի «Դպրոցում ուսման որակը բարելավելու միջոցառումների մասին» հայտնի որոշումից հետո: Սակայն 50-ական թվականներին ավելի նպաստավոր պայմաններ ստեղծվեցին առավել լուրջ ու արդյունավետ աշխատանք կատարելու համար:

Աճող սերնդի կրթության ու դաստիարակության բարելավման գործին մեծ օգնություն ցույց տվեցին մարզի շրջանային ժողովրդական կրթության մարմինները և կուսակցական կազմակերպությունները: Սովորողների ուսումնական աշխատանքի ռեժիմը կարգավորելու և այդ միջոցով նրանց գիտելիքների հարստացմանը նպաստելու գործում կարևոր նշանակություն ունեցավ ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1949թ. հունվարի 18-ի «Դպրոցականների հասարակական և ոչ ուսումնական այլ աշխատանքային ծանրաբեռնվածությունը վերացնելու մասին» որոշումը: Հիմք ընդունելով այդ որոշման դրույթները, ԼՂ մարզժողկրթբաժինը 1949թ. մարտի 16-ի կոլեգիայի նիստում նույնպես քննարկեց դպրոցականների ուսումնական և աշխատանքային ծանրաբեռնվածության հարցը: Մարզժողկրթբաժնի վարիչ Սարգիս Աբրահամյանը՝ իր ելույթում ընդհանրացնելով դպրոցներում տիրող իրավիճակը, մատնանշեց, որ դպրոցականներն իրոք խիստ ծանրաբեռնված են ոչ ուսումնական բազմատեսակ հանձնարարություններով ու գործերով: Որոշ դպրոցներում ուսումնական պարապմունքների հաշվին ժողովներ ու զանազան միջոցառումներ են անցկացվում, աշակերտներն ուղարկվում են մասնակցելու մրցումների, հավաքների և այլն: Հասկանալի է, որ նման պայմաններում կխախտվեր դպրոցի նորմալ կյանքը, կիջներ սովորողների առաջադիմությունը: Դա, իհարկե, վերջին հաշվով ժամանակի պահանջների հետևանք էր, որը ժամանակին շտկման ու կարգավորման խիստ կարիք էր զգում[312]:

Այդ որոշման հիման վրա մարզժողկրթբաժինը մշակեց գործնական միջոցառումներ: Շրջանային ժողկրթության բաժիններին և դպրոցների տնօրեններին

հանձնարարվեց նախօրոք պլանավորել ու կարգավորել դպրոցում անցկացվող բոլոր միջոցառումներն ու աշխատանքները, ինչպես և պիոներական հավաքույթները, կոմերիտական ժողովները: Խստորեն արգելվեց հասարակական աշխատանքներ կատարելու համար աշակերտներին դասերից կտրելը: Շրջանային ժողկրթության բաժինների խորհրդակցություններում հստակ սկզբունք ընդունվեց, որ արտադասարանական, արտադպրոցական և հասարակական աշխատանքները կազմակերպվեն այնպես, որ դրանք վերջին հաշվով նպաստեն դպրոցի կրթադաստիարակչական ընդհանուր շահերին, օգնեն աշակերտների կողմից գիտելիքների յուրացմանն ու նրանց հոգեկան աշխարհի հարստացմանը:

Սահմանվեց, որ աշակերտը կարող է ունենալ մեկ հասարակական պատրաստություն, մասնակցել արտադասարանական երկու խմբակի, որից մեկը՝ ինքնագործ արվեստի կամ մարզական: Այդ կարգի պարտականությունների կատարման համար հանձնարարվեց 5-7-րդ դասարանների աշակերտներին զբաղեցնել շաբաթական 3-4 ժամից ոչ ավելի, իսկ 8-10-րդ դասարանների աշակերտներին՝ 4-5 ժամ:

1951թ. հունվարի 26-ին Ստեփանակերտում հրավիրված ուսուցչական խորհրդակցությունում մարզժողկրթբաժնի վարիչ Սուրեն Հայրապետյանը իր զեկուցման մեջ արձանագրեց, որ մարզի դպրոցներում վերջին երկու տարում ուսման որակի բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքը, անշուշտ, ցանկալի արդյունք է տվել, սակայն դեռևս որոշ դպրոցներում մեծ թիվ են կազմում երկտարեցիները, միջնակարգ դպրոցների շրջանավարտների մեծ մասը չի բավարարում բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու պահանջները:

Հանրակրթական դպրոցի աշխատողներից պահանջվեց լուրջ ուշադրություն դարձնել աշակերտներին խորը, կայուն գիտելիքներ հաղորդելու և առանձնապես հանրակրթական գիտելիքների ուսուցման որակը բարձրացնելու վրա: Միջոցներ նշվեցին դպրոցները ֆիզիկայի, մաթեմատիկայի և ռուսաց լեզվի որակյալ ուսուցիչներով ապահովելու համար:

Խորհրդակցությունում[313] ուսուցչության ուշադրությունը հրավիրվեց ուսուցման պրոցեսի բարելավման և ուսման որակի բարձրացման հարցերի վրա: Քննադատվեց այն պրակտիկան, երբ ուսուցիչը նոր նյութը դասարանում անհրաժեշտ չափով չի բացատրում, բայց տնային հանձնարարություններով ծանրաբեռնում է: Հատուկ պահանջ ներկայացվեց ուսուցման ընթացքում աշակերտների ինքնուրույն, ստեղծագործական ունակությունների զարգացման նկատմամբ:

Դրա հիման վրա հանձնարարվեց տնային առաջադրանքներ տալ այն չափով, որ դրանց պատրաստման համար սովորողներն առաջին դասարանում ծախսեն մոտ 1 ժամ, երկրորդ դասարանում՝ 1.5 ժամ, երրորդ և չորրորդ դասարաններում՝ 1,5-2 ժամ, հինգերերդ և վեցերորդ դասարաններում՝ 2-3 ժամ, յոթերորդ դասարանում՝ 3 ժամ, ութերորդ, իններորդ և տասներորդ դասարաններում՝ 3-4 ժամ:

Մարզի հանրակրթական դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքի գաղափարական-քաղաքական մակարդակի բարձրացումը էլ ավելի նպաստեց աշակերտներին կայուն գիտելիքներով, հմտություններով ու կարողություններով զինելու գործին: Դպրոցում ուսման որակը բարձրացնելու նպատակով լուրջ քայլեր արվեցին ուսուցիչներին մեթոդական մանկավարժական օգնություն ցույց տալու, մարզի առաջավոր ուսուցիչների աշխատանքի փորձը մասսայականացնելու և ընդհանրացնելու ուղղությամբ:

Կրթության բաժինների, դպրոցների արխիվային փաստաթղթերի ուսումնասի-

ումը[314] ցույց է տվել, որ 1954-1956թթ. ուսուցչության շրջանում սկսվեց մեծ շարժում ուսուցման որակի բարելավման ուղղությամբ: Մանկավարժական կոլեկտիվներում գործարար աշխատանք ծավալվեց սովորողներին կայուն գիտելիքներով զինելու, դրանք կյանքում գործադրել կարողանալու համար: Առանձնապես ուշադրություն դարձվեց դասի պրոցեսի արդյունավետ կազմակերպման, նոր նյութը դասարանում յուրացնել տալու վրա:

Օրինակ, Մարտակերտի շրջժողկրթբաժնի վարիչ Արշակ Անանյանը իր հաշվետվությունում[315] նշում է, որ ուսուցման որակի բարձրացման համար տարվող աշխատանքը սերտորեն զուգակցվում է դպրոցներում գոյություն ունեցող ձևամոլության ու տոկոսամոլության երևույթների դեմ տարվող պայքարի հետ: Ձևամոլությունը դպրոցում միշտ էլ չարիք է եղել և առաջին հերթին վնասել է ուսուցման ու դաստիարակության որակին:

Մարզժողկրթբաժնի կոլեգիայի նիստերում, ժողովրդական կրթության աշխատողների և ուսուցչական օգոստոսյան խորհրդակցություններում 50-ական թվականներին հաճախ են քննարկվել ուսուցման մեջ ձևամոլության երևույթի դեմ պայքարի հարցերը: Գիտակցելով խնդրի կարևորությունը, ուսուցչությունը լրջորեն ձեռնամուխ եղավ գիտության հիմունքներով աշակերտներին զինելու, տեսականը գործնական աշխատանքների հետ կապելու գործին:

Դպրոցական աշխատանքում ձևամոլությունը հանգեցրել էր նաև մի այլ բացասական երևույթի՝ տոկոսամոլությանը:

20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Վաղարշակ Աղաբեկյանը իր հուշերում[316] (երկար տարիներ ղեկավարել է Մարտակերտի շրջժողկրթբաժինը) պատմում է, որ 50-ական թվականներին մարզի ժողովրդական կրթության մարմինների որոշ աշխատողներ, ինչպես նաև դպրոցների որոշ տնօրեններ, ուսուցչի աշխատանքը հաճախ գնահատում էին ոչ թե աշակերտների իրական առաջադիմության արդյունքներով, գիտելիքների խորությամբ, այդ գիտելիքները կյանքում գործադրելու կարողություններով ու հմտություններով, այլ գնահատականների թվական ցուցանիշներով միայն: Այն ուսուցիչը, որի մոտ աշակերտների առաջադիմության տոկոսը բարձր էր, համարվում էր առաջավոր, լավ աշխատող, իսկ թե այդ տոկոսների տակ ինչ էր թաքնված, դա նրանց քիչ էր հետաքրքրում:

Այդպիսի իրադրության մեջ, հասկանալի է, որ բարեխիղճ, որակի համար ջանացող ուսուցիչները չէին երևում: Եվ ընդհակառակը, նրանք, ովքեր ուժ ու էներգիա չէին ծախսում, անբարեխիղճ էին, սակայն աշակերտներին էժանագին գնահատականներ նշանակելով «բարձր» տոկոսների էին հասնում, խրախուսանքի էին արժանանում:

Մարզի հանրակրթական դպրոցին խորթ այդ երևույթը հասցնում էր բացասական հետևանքների՝ աշակերտները առանց լուրջ պատրաստության փոխադրվում էին դասարանից-դասարան և ավարտում դպրոցը: Բարձրագույն դպրոցներն ուսանողական որակյալ կոնտինգենտ չէին ստանում: Ուսուցիչների ոչ լուրջ վերաբերմունքը դեպի ուսուցումն ու դպրոցը սովորողների մեջ զարգացնում էր բնավորության բացասական գծեր: Այդ բոլորը միասին վերցրած, վերջին հաշվով, թուլացնում էին աճող սերնդի կրթության ու դաստիարակության հիմքերը:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, սկսած 1954-55 ուստարվանից, Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում տոկոսամոլության դեմ պայքարն ընդունում է բավական սուր բնույթ: Նրա դեմ ուժեղանում է նաև ժողովրդական կրթության ղեկավար օրգանների անհանդուրժողականությունը:

Այսպես, օրինակ՝ Հայաստանի լուսավորության նախարարության կոլեգիան

1956թ. մարտին որոշում է ընդունում ուսումնադաստիարակչական աշխատանքում ուսուցչի պատասխանատվությունը բարձրացնելու մասին[317]:

Որոշման մեջ արձանագրվում են դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում գոյություն ունեցող թերությունները, հատկապես տոկոսամոլության և աշակերտներին ոչ ճիշտ գնահատելու, ինչպես և դասի պրոցեսը ցածր մակարդակով վարելու երևույթները:

Այդ որոշմամբ հանձնարարվում է 1-3-րդ դասարաններում ուսուցումը տանել նույն ուսուցչի միջոցով: Խորհուրդ է տրվում նաև տվյալ առարկայի դասավանդումը 5-ից մինչև 10-րդ դասարանը հանձնարարել նույն ուսուցչին: Մարզժողկրթբաժնի հաշվետվություններից տեղեկանում ենք, որ պատասխանատվությունն ավելի բարձրացնելու նպատակով նոր դասարան ընդունող ուսուցչին հանձնարարվում է ուսումնական տարվա վերջին ծանոթանալ իրեն հանձնվող դասարանի աշակերտների գիտելիքներին ու առարկայի դրվածքին: Ժողկրթբաժիններին և դպրոցների ղեկավարներին հանձնարարվում է բարեխիղճ և արդյունավետ աշխատող ուսուցիչներին սիստեմատիկաբար խրախուսանքի արժանացնել:

20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Միքայել Բալյանը իր հուշերում պատմում է, որ Մեծ Թաղլարի դպրոցի մանկավարժական կոլեկտիվում այս որոշման քննարկումը թևավորեց ուսուցչությանը և սկսեց մի նոր շարժում ուսման որակի բարձրացման համար[318]:

Աշակերտների առաջադիմությանն զգալիորեն խոչընդոտում էր նաև ուսումնական աշխատանքերով նրանց չափազանց ավելի ծանրաբեռնելը: Տարեվերջի փոխադրական քննություններն առանձին դասարաններում հասնում էին 7-10 առարկայի: Հիմք ընդունելով ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1954թ. ապրիլի 24-ին ընդունած «Դպրոցներում քննական առարկաների քանակը կրճատելու մասին» որոշումը, ԼՂ մարզժողկրթբաժինը 1954-55 ուստարվանից փոխադրական և ավարտական քննություններ սահմանեց 4-րդ դասարանում՝ 3, 5-րդ դասարանում՝ 4, 6-րդ դասարանում՝ 4, 7-րդ դասարանում՝ 5, 8-րդ դասարանում՝ 4, 9-րդ դասարանում՝ 6, իսկ 10-րդ դասարանում՝ 9 քննություն:

Այսպիսով, միջնակարգ դպրոցում քննությունների ընդհանուր քանակը մոտ 2 անգամ կրճատվեց, նախկին 44 քննության փոխարեն մնաց 26-ը՝ հիմնականում մայրենի լեզվից, ռուսաց լեզվից և մաթեմատիկայից:

Հետագայում, մարզժողկրթբաժնի 1956թ. սեպտեմբերի 19-ի հրամանով, աշակերտների ծանրաբեռնվածությունը կրճատելու և ուսուցիչների դերը ուսումնադաստիարակչական աշխատանքներում բարձրացնելու նպատակով վերացվեցին փոխադրական քննությունները տարրական, յոթնամյա, միջնակարգ և երեկոյան դպրոցների 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ և 9-րդ դասարաններում: Աշակերտների փոխադրումն այդ դասարաններում կատարվում էր նրանց առաջադիմության տարեկան գնահատականների հիման վրա:

Արխիվային փաստաթղթերի, պարբերական մամուլում («Սովետական Ղարաբաղ») տպագրված մանկավարժական բնույթի հոդվածների, վաստակաշատ մանկավարժների (Սամսոն Ավետիսյան, Նորայր Ավետիսյան, Արմեն Ավանեսյան, Իվան Աթայան, Ելենա Աղաջանյան և ուրիշներ) հուշերի ուսումնասիրումը վկայում է այն փաստը, որ 50-ական թվականներին Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցներում ուսման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու և աշակերտների ուսման առաջադիմությունը բարձրացնելու գործին մեծ չափով խթանել է առաջավոր ուսուցիչների փորձի մասսայականացման ու ներդրման

պրակտիկան: Այս խնդրում կազմակերպչական մեծ աշխատանք են կատարել շրջանային կրթության բաժինների աշխատողները, դպրոցների մանկավարժական կոլեկտիվները, վաստակաշատ թոշակառու մանկավարժները, մարզժողկրթբաժնի տեսուչները:

Առաջավոր փորձի փոխանակումը կատարվել է ինչպես մանկավարժական մամուլի, այնպես էլ ուսուցիչների փոխադարձ դասալսումների, բաց դասերի կազմակերպման և այլ միջոցներով:

Առաջավոր փորձի ընդհանրացման և մասսայականացման գործում աչքի ընկնող դեր կատարեցին մանկավարժական ընթերցումները: Սկսած 1954 թվականից ամեն տարի անց են կացվել մանկավարժական ընթերցումներ: Շրջանային և քաղաքային մանկավարժական ընթերցումներում հավանության արժանացած զեկուցումները ներկայացվել են հանրապետական ընթերցումների: Եթե սկզբնական շրջանում ընթերցումներին մասնակցողները մի քանի տասնյակ ուսուցիչներ էին, ապա հետագայում նրանց թիվը բազմապատկվեց:

Այսպես, օրինակ, մարզժողկրթբաժնի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ 1956-57 ուստարվա օգոստոսի 24-26-ը Ստեփանակերտում կազմակերպված մանկավարժական ընթերցումներին ներկայացված զեկուցումների թիվը հասել էր մոտ 100-ի[319]: Այդ գործում իրենց ակտիվությամբ աչքի ընկան Մարտակերտի, Մարտունու և Հադրութի շրջանների և քաղաքի դպրոցների ուսուցիչները:

Մանկավարժական ընթերցումներում ուսուցիչները, դպրոցների տնօրեններն ու ուսմասվարները, ժողկրթբաժվարներն ու տեսուչները հանդես էին գալիս գերազանցապես իրենց աշխատանքային փորձին վերաբերող զեկուցումներով: Նկատի ունենք մարզի մանկավարժական պրակտիկայում ճանաչված ուսուցիչներ Սուրեն Միքայելյանի (Վաղուհաս), Վազգեն Պողոսյանի (Հաթերք), Հրանտ Ալահվերդյանի (Ասկերան), Գուրգեն Աղասարյանի (Ստեփանակերտ), Արշակ Անանյանի (Մարտակերտի շրջժողկրթբաժնի վարիչ), Ներսես Աբրահամյանի (Տումի), Իվան Աթայանի (Չանախչի), Վարդան Բալայանի (Մարտունի) և շատ ուրիշների, որոնք ունեցել են դասի արդյունավետ անցկացման ուսանելի փորձ:

Հայաստանի և ԼՂԻՄ-ի մանկավարժական ընթերցումների արժանավոր զեկուցումները գիտահետազոտական ինստիտուտը հրատարակել է ժողովածուների ձևով կամ առանձին բրոշյուրներով: Այսպիսով կարելի է ասել, որ 50-ական թվականներին մարզի դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանքների վերելքին որոշակիորեն նպաստել են նաև առաջավոր փորձի մասսայականացումն ու ներդրումը:

Ինչպես ժողովրդական կրթության ղեկավար մարմինների ձեռնարկած միջոցառումները, այնպես էլ ուսուցչության նախաձեռնությունն ու հայրենանվեր աշխատանքը, տվեցին իրենց դրական արդյունքները: Դպրոցում զգալիորեն բարձրացավ ուսումնադաստիարակչական աշխատանքների որակը:

Սակայն նշենք, որ հետպատերազմյան տարիներին (1949-1958թթ.) խորացավ կյանքից հանրակրթական դպրոցի ունեցած որոշակի խզվածությունը, որը դեռևս նկատվել էր նախապատերազմյան ժամանակաշրջանում՝ դպրոցներում պոլիտեխնիկական ուսուցման փաստական վերացման հետևանքով: Պոլիտեխնիկական կրթության և աշխատանքի հետ ուսման կապի բացակայության հետևանքով դպրոցը, որը սերտորեն շաղկապված էր սոցիալիստական հասարակության գաղափարա-քաղաքական կյանքի հետ, ավելի թույլ էր կապված նյութական արտադրության, արդյունաբերության, գյուղատնտեսության հետ:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում ժողովրդական տնտեսության հարաճուն զարգացումը դպրոցի առջև նոր խնդիրներ էր դնում՝ հանրակրթական գիտելիքներին զուգահեռ սովորողներին տալ պոլիտեխնիկական պատրաստություն:

ԽՄԿԿ 20-րդ համագումարը պահանջեց ամրապնդել դպրոցի կապը կյանքի հետ, սովորողներին մասնակից դարձնել արդյունաբերության ու գյուղատնտեսության կոնկրետ աշխատանքներին այն հաշվով, որ միջնակարգ դպրոցն ավարտողը կարողանա կյանքում իր աշխատանքային տեղը գտնել և ճիշտ կողմնորոշվել ապագա մասնագիտությունն ընտրելիս: Այդ նպատակով Հայաստանի լուսավորության նախարարությունը, ԼՂ մարզժողկրթբաժինը 1956թ. մարտ-ապրիլ ամիսներին համապատասխան որոշումներ ընդունեցին ուսումնական պլաններն ու ծրագրերը վերանայելու մասին և դպրոցներին ցուցում տվեցին պոլիտեխնիկական ուսուցումը կենսագործելու մասին: Այդ նոր առաջադրանքներն իրականացնելու ուղղությամբ մեծ աշխատանք ծավալվեց ինչպես ժողովրդական կրթության ղեկավար մարմիններում, այնպես էլ դպրոցներում: Առաջին հերթին մտահոգության առարկա դարձավ ուսումնանյութական բազայի ստեղծման հարցը, քանի որ պոլիտեխնիկական ու գործնական գիտելիքների հաղորդումը կախված էր բավարար չափով կահավորված լաբորատորիաներ ու կաբինետներ, ուսումնական արհեստանոցներ ունենալուց:

Այդ նպատակով մարզժողկրթբաժինը 1955-1956 ուստարում մարզի դպրոցներին հատկացրեց 614 հազար ռուբլի: Մի քանի տարվա ընթացքում դպրոցներում կահավորվեցին ֆիզիկայի, քիմիայի, բնագիտության և այլ կաբինետներ ու լաբորատորիաներ, հարստացվեցին եղածները: Գյուղական դպրոցների մեծ մասը ձեռք բերեց ուսումնափորձնական հողամասեր: 1958թ. տվյալներով՝ բոլոր միջնակարգ և ութնամյա դպրոցներն ունեին ուսումնափորձնական, իսկ խոշոր դպրոցները՝ ուսումնա-արտադրական հողամասեր և ուսումնական արհեստանոցներ:

1956-57 ուստարում մարզի հայկական դպրոցների ուսուցիչները սիրով լծվեցին իրենց առջև դրված նոր խնդիրների լուծմանը: Օրինակ, Մարտակերտի, Մարտունու, Հադրութի, Շուշիի շրջանների դպրոցների ուսուցիչները ֆիզիկայի, քիմիայի, բնագիտության դասերին լայն տեղ են տվել ցուցադրական փորձերին, դպրոցներում կատարվում էին նաև ֆրոնտալ փորձեր: Կազմակերպվում էին էքսկուրսիաներ դեպի արտադրական ձեռնարկություններ, օգտագործվում էին ՄՏԿ-ների արտադրական բազաները: Գյուղական դպրոցներում աշակերտները մասնակից էին դառնում գյուղատնտեսական աշխատանքներին:

Մարզի դպրոցներում 8-10-րդ դասարանների աշակերտները գիտությունների հիմունքները յուրացնելու հետ միասին արտադրական պրակտիկա էին անցնում արդյունաբերական ձեռնարկություններում, ՄՏԿ-ներում, կոլտնտեսություններում, սովխոզներում: Նրանք ստանում էին ընդհանուր միջնակարգ կրթություն, որը բացում էր ճանապարհ դեպի բարձրագույն կրթություն: Միաժամանակ նախապատրաստվում էին պրակտիկ գործունեության, ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում ըստ իրենց ստացած մասնագիտության:

Սովորողներին պոլիտեխնիկական գիտելիքներով ու հմտություններով զինելու ասպարեզում լուրջ աշխատանք կատարվեց ուսուցման ընթացքում: Մեծ ուշադրություն դարձվեց ժամանակակից արտադրության գիտա-տեխնիկական հիմունքների ուսումնասիրմանը ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, մաթեմատիկայի և առանձնապես մեքենագիտության, էլեկտրատեխնիկայի ու գյու-

ղատնտեսության հիմունքների դասավանդման գործընթացում:

Գյուղատնտեսական արտադրության հիմունքներից ավելի կոնկրետ ու հիմնավոր գիտելիքներ տալու նպատակով մարզժողկրթբաժնի կոլեգիայի որոշմամբ գյուղական 10 դպրոցներում 1955-56 ուստարվանից մտցվեց մասնագիտացված ուսուցում՝ դաշտավարության և անասնաբուծության թեքումով: Այդ դպրոցների 8-9-րդ դասարաններում շաբաթական 3 ժամ հատկացվեց արտադրական ուսուցմանը:

Տեսական ուսուցումը և գործնական աշխատանքներն անց էին կացվում կոլտնտեսություններում, մեքենատրակտորային կայաններում, անասնապահական ֆերմաներում: Ոչ միայն արտադրության ու տեխնիկայի հետ անմիջապես առնչվող, այլև մնացած առարկաների դասատուները նույնպես հսկայական աշխատանք կատարեցին ուսուցմանը գործնական բնույթ տալու ուղղությամբ: Կազմակերպվում էին ավելի շատ լաբորատոր ու գործնական աշխատանքներ, էքսկուրսիաներ դեպի արտադրական օբյեկտներ և այլն:

Գործնական պարապմունքներին և պրակտիկումին հատկացված ժամերը գնալով ավելի խելացի էին օգտագործվում: Աշակերտները արտադրական գործիքներին ու մեքենաներին ծանոթանալուց բացի, սկսեցին նյութական բարիքներ արտադրել: Այդ գործում դպրոցին մեծ օգնություն ցույց տվեցին շեֆ գործարանները, ձեռնարկությունները, կոլտնտեսությունները: Մարզի հանրակրթական դպրոցների մանկավարժական կոլեկտիվների մտածված ու հետևողական աշխատանքի շնորհիվ զգալիորեն վերակառուցվեց ուսուցման գործընթացը:

Օրինակ, վաստակաշատ մանկավարժ Արիս Պողոսյանը (Առաջաձորի դպրոցի տնօրեն) իր հուշերում պատմում է, որ իր ղեկավարած դպրոցում ուսուցիչներն ամեն կերպ ջանում էին աշակերտների հաղորդվող գիտելիքներին ու հմտություններին գործնական բնույթ տալ, նրանց մեջ սեր առաջացնել դեպի աշխատանքը և հատկապես դեպի ֆիզիկական աշխատանքը: Դպրոցներում ստեղծվեցին փայտամշակման ու մետաղամշակման արհեստանոցներ:

Կուսակցության 20-րդ համագումարի ցուցումների հետ կապված՝ ձեռնարկվեցին միջոցառումներ հանրակրթական դպրոցում պոլիտեխնիկական ուսուցումը զարգացնելու, սովորողներին ժամանակակից արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության կարևորագույն ճյուղերի հետ ծանոթացնելու, հանրօգուտ աշխատանքի հետ ուսուցման սերտ կապը ապահովելու և աճող սերնդի մեջ աշխատանքի նկատմամբ սեր դաստիարակելու համար:

Դպրոցականներին գյուղատնտեսական հանրօգուտ աշխատանքին հաղորդակից դարձնելու նպատակով 1957-58 ուստարում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի դպրոցների բարձր դասարանների աշակերտները կազմակերպեցին աշակերտական բրիգադներ (առաջին անգամ 1955թ. Ստավրոպոլի երկրամասում բարձր դասարանների սովորողներից կազմակերպվեցին աշակերտական բրիգադներ)[320]: Շուտով դպրոցական-աշակերտական բրիգադներ սկսեցին ստեղծվել ամենուրեք: Դրանք դարձան գյուղական դպրոցների սովորողներին գյուղատնտեսական հանրօգուտ աշխատանքին հաղորդակից դարձնելու նոր ձև:

Աշակերտական բրիգադները կազմված էին ավագ դպրոցականներից, որոնք իրենցից ընտրում էին բրիգադավարներ, օղակավարներ, հաշվառներ: Դպրոցների մանկավարժական կոլեկտիվները բրիգադի համար առանձնացնում էին ուսուցիչներ, կոլտնտեսությունները՝ գյուղատնտեսներ և կոլտնտեսության փորձված հեղինակավոր անդամներ:

Աշակերտական բրիգադային շարժումը լայն ծավալ ստացավ Լեռնային Ղա-

ռաբաղի հանրակրթական դպրոցներում: 1958-60-ական թվականներին ԼՂԻՄ-ի դպրոցներում աշակերտական բրիգադների թիվը հասավ 96-ի, որից Մարտակերտի շրջանում՝ 22, Ասկերանի շրջանում՝ 14, Մարտունու շրջանում՝ 22, Հադրութի շրջանում՝ 20, Շուշիի շրջանում՝ 12: Դրանցում ընդգրկված էին ավելի քան 2500 դպրոցականներ[321]:

Աշակերտական արտադրական բրիգադների գործունեությանը նվիրված մարզային հավաքում գովեստով նշվեց հատկապես Մարտակերտի շրջանի Մաղավուզ, Թալիշ, Վաղուհաս, Չայլու, Մարտունու շրջանի Ճարտար, Գիշի, Հաղորտի, Հադրութի շրջանի Մեծ Թաղլար, Ազոխ, Բանազոր, Ասկերանի շրջանի Սարուշեն, Բալուջա և այլ գյուղերի դպրոցների ԱԱԲ-ի կատարած աշխատանքների մասին: Օրինակ, Մաղավուզի միջնակարգ դպրոցում բարձր հիմքերի վրա էր դրված հատկապես սովորողների աշխատանքային դաստիարակության և մասնագիտական կողմնորոշման գործը: Դպրոցի ուսումնափորձնական հողամասը (երեք հեկտար) կանաչ լաբորատորիա էր, որտեղ սովորողներն իրենց ստացած տեսական գիտելիքները կիրառում էին պրակտիկայում: Հողամասում աշակերտները կատարում են փորձարարական աշխատանքներ: Փորձարկում են կարտոֆիլի, լոբու, սիսեռի, եգիպտացորենի, պոմիդորի և այլ կուլտուրաների տարբեր սորտեր: Աշակերտները իրենք են մշակում հողը, հատուկ խնամք կազմակերպում բույսերի նկատմամբ, հավաքում աճեցրած բերքը: Այդ ուղղությամբ ուսանելի փորձ են կուտակել նաև Ասկերանի, Մարտունու և Հադրութի շրջանների դպրոցները[322]: Դպրոցներում տարրական դասարանների սովորողները զբաղվում էին ծաղիկների մշակումով և կոնկրետ պատկերացում ստանում ծաղկաբուծության մասին: Իսկ գյուղատնտեսական մյուս աշխատանքներին ծանոթացնելու նպատակով նրանց համար կազմակերպվում էին էքսկուրսիաներ դեպի խաղողի դաշտերը, անասնապահական ֆերմաներ, սովխոզի արհեստանոցներ: 4-8-րդ դասարանների աշակերտները հիմնականում կատարում էին բանջարաբոստանային կուլտուրաների մշակման և այգեգործության աշխատանքներ: 9-10-րդ դասարանների աշակերտները ուսումնասիրում էին գյուղատնտեսական մեքենաները և մասնակցում ԱԱԲ-ի աշխատանքներին:

Հատկապես ամառային արձակուրդների շրջանում, իսկ որոշ դպրոցներում նույնիսկ ամբողջ տարվա ընթացքում, կոլտնտեսությունների աշխատանքներին կազմակերպված օգնություն ցույց տվեցին աշակերտական բրիգադները: Նրանց թիվն ու գործունեության ոլորտն այնքան ավելացավ, որ հատուկ հրահանգ մշակվեց այդ բրիգադների կազմակերպման սկզբունքների և աշխատանքային գործունեության բովանդակության ու ձևերի մասին: 1959թ. մարզի դպրոցներում գործում էին 122 աշակերտական բրիգադներ, որոնցում ընդգրկված էին 7-10-րդ դասարանների 2686 աշակերտներ: Նույն տարում այդ բրիգադներում ընդգրկված աշակերտները վաստակեցին 1866 աշխօր:

Գյուղական դպրոցներում ուսուցիչների, պիոներական ու կոմերիտական կազմակերպությունների ղեկավարությամբ ուսումնական պարապմունքներից ազատ ժամանակ սովորողները հսկայական օգնություն էին ցույց տալիս կոլտնտեսություններին ու սովխոզներին: Նրանք մեծ ոգևորությամբ մասնակցում էին գյուղատնտեսական կուլտուրաների մշակմանն ու բերքահավաքին, ստանձնում մատղաշների շեֆությունը, հավաքում և պետությանը հանձնում մեծ քանակությամբ դեղաբույսեր և այլն:

Այսպիսով, ուսուցման գործընթացում աշակերտներին գործնական գիտելիքներով ու հմտություններով զինելը, ինչպես և դեպի աշխատանքը նրանց մեջ սեր

դաստիարակելը, անկասկած, դրական նշանակություն ունեցան: Սովորողների մեջ որոշակի դրական վերաբերմունք առաջացավ դեպի ֆիզիկական աշխատանքը: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, աստիճանաբար, ավելի շատ պատանիներ ու աղջիկներ էին գնում աշխատելու արտադրական ձեռնարկություններում և գյուղատնտեսության մեջ:

60-ական թվականների սկզբին (1964-65 ուստարվա օգոստոսի 18-ին) ԽՄԿԿ Կենտկոմը և ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը ընդունեցին նոր որոշում հանրակրթական դպրոցում ուսուցման ժամկետը 11 տարուց 10 տարվա փոփոխելու վերաբերյալ[323]: Ուժի մեջ մնացին դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական սկզբունքները՝ դպրոցի կապը կյանքի և պրակտիկայի հետ, աշխատանքային դաստիարակությունը և պոլիտեխնիկական կրթությունը, աշխատանքի հետ ուսուցման կապը:

Ինչպես նշված է ԽՄԿԿ ծրագրում, «Դպրոցը կոչված է երեխաներին սեր ներշնչելու դեպի աշխատանքը, գիտելիքները, երիտասարդ սերունդը ձևավորել գիտակցականության և բարոյականության ոգով»[324]:

1964-65 ուստարվա սկզբից միջնակարգ դպրոցները երկու տարվա ընթացքում փոխադրվում են ուսուցման 10-ամյա ժամկետի: Կատարվում են անհրաժեշտ փոփոխություններ ութամյա և միջնակարգ դպրոցների ուսումնական պլաններում, սակայն նրանք շարունակում են աշխատել ընդհանուր և պոլիտեխնիկական կրթության նախկինում հաստատված ուսումնական ծրագրով:

60-ական թվականներին Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի ժողովրդական կրթության մարմինները ձեռնամուխ եղան նոր ձևով աշխատելուն: Անհրաժեշտ եղավ նախևառաջ քննարկման դնել նոր ուսումնական պլանների ու ծրագրերի նախագծերը: Ինչպես ուսուցիչները, այնպես էլ գիտական շատ աշխատողներ մի շարք առաջարկություններ արեցին, որոնք հաշվի առնվեցին Հայաստանի լուսավորության նախարարությունում՝ ծրագրերը հաստատելիս:

Նոր ձևով աշխատելու համար պետք էր նաև թե ուսուցիչներին և թե աշակերտներին հոգեբանորեն նախապատրաստել ու տրամադրել: Ուսուցչության ու աշակերտության զգալի մասը չէր հաշտվում հատկապես արտադրական ուսուցման հետ:

Հայաստանի լուսավորության նախարարությունը անցկացրեց հանրապետական մի շարք խորհրդակցություններ՝ պարզաբանելու համար նոր ձևով աշխատելու խնդիրները: Նման խորհրդակցություններ անց էին կացվում նաև շրջաններում ու դպրոցներում[325]: 1964-65 ուստարվա օգոստոսին Ստեփանակերտում նույնպես կայացավ նման խորհրդակցություն:

Նոր ուսումնական ծրագրերով աշխատելու մեթոդիկային ծանոթանալու նպատակով ուսուցիչների համար դասընթացներ ու սեմինարներ կազմակերպվեցին Երևանում, Լենինականում (Գյումրի), Կիրովականում (Վանաձոր), Ստեփանակերտում և շրջկենտրոններում:

Այդ տասնամյակում (1960-1970թթ.) մարզի ժողովրդական կրթության մարմինները զգալի հաջողություններ են ձեռք բերել ոչ միայն ցերեկային միջնակարգ, այլ նաև երեկոյան դպրոցների ցանցի ընդլայնման ու նրանցում սովորողների ավելացման ուղղությամբ:

1965-1966 ուստարվա օգոստոսին ուսուցչական խորհրդակցությունում «Մարզի հանրակրթական դպրոցներում ուսուցման բնագավառում ձեռք բերված հաջողությունների մասին» զեկուցումով հանդես եկավ մարզժողկրթբաժնի վարիչ Հակոբ Օհանջանյանը: Նա իր զեկուցման մեջ նշեց, որ մարզի հանրակրթա-

կան դպրոցների թիվը (հայկական) հասել է 214-ի, որից տարրական՝ 47, ութամյա՝ 110, միջնակարգ՝ 50, գիշերօթիկ՝ 2, երկարօրյա՝ 3, իսկ աշակերտների թիվը՝ 33870-ի: Միջնակարգ դպրոցները տարեկան թողարկում են 1250-1260 շրջանավարտ[326]: Ձեկուցման մեջ զգալի տեղ էր հատկացված աշխատանքային դաստիարակությանն ու արտադրական ուսուցմանը[327]:

Խորհրդակցությունում իրենց աշխատանքային փորձի մասին հանդես եկան Մարտակերտի, Մարտունու, Ասկերանի, Շուշիի շրջանների դպրոցների ուսուցիչները (այդ մասին մանրամասն կնշվի հաջորդ բաժնում):

70-ական թվականներին Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցը թևակոխում է որոնումների և հետագա զարգացման նոր շրջան: 1970թ. սեպտեմբերի 8-ին ԽՍՀՄ Նախարարների խորհրդի կողմից հաստատվում է (թիվ 749 որոշում) հանրակրթական միջնակարգ դպրոցի նոր կանոնադրություն, որի համաձայն որոշ փոփոխություններ են կատարվում ուսումնադաստիարակչական աշխատանքների համակարգում, ինչպես նաև երեկոյան հորթափոխային դպրոցներում:

Տեղական պայմաններին համապատասխան ստեղծվում են առանձին տարրական դպրոցներ1-3-րդ (4-րդ) դասարանների կազմով, ութամյա դպրոցներ՝ 1-8-րդ դասարանների կազմով, և միջնակարգ դպրոցներ՝ 1-11-րդ դասարանների կազմով՝ ընդհանուր միջնակարգ կրթության և բոլոր աստիճանների հաջորդականության պահպանմամբ: Նոր կանոնադրության համաձայն երեկոյան (հերթափոխային) հեռակա հանրակրթական միջնակարգ դպրոցներում սահմանվում է ուսուցման ժամկետ (9-րդ, 10-րդ, 11-րդ դասարաններ): Ժողովրդական կրթության շրջանային (քաղաքային) բաժինների որոշմամբ ութամյա կրթություն չունեցող աշխատող երիտասարդների համար այդ դպրոցներում կարող են ստեղծվել համապատասխան դասարաններ: Կանոնադրությունը սահմանում է հանրակրթական միջնակարգ դպրոցում շաբաթական պարտադիր ուսումնական ժամերի հետևյալ առավելագույն քանակը, 1-4-րդ դասարանների համար՝ 24 ժամ, 5-8-րդ դասարանների համար՝ 30 ժամ և 9-10-րդ դասարանների համար՝ 32 ժամ: Դպրոցներում, 7-րդ դասարանից սկսած, սահմանված կարգով անցկացվում են նախասիրական (ֆակուլտատիվ) պարապմունքներ: Ուսումնական պարապմունքների ժամկետը սահմանվում է 1-7-րդ դասարաններում՝ սեպտեմբերի 1-ց մինչև մայիսի 30-ը, 8-րդ դասարանում՝ մինչև հունիսի 10-ը, 9-10-րդ դասարաններում՝ մինչև հունիսի 25-ը: Ուսումնական քառորդներինը՝ առաջինը՝ սեպտեմբերի մեկից մինչև նոյեմբերի 4-ը, երկրորդը՝ դեկտեմբերի 25-ց մինչև հունվարի 11-ը, երրորդը՝ մինչև մարտի 23-ը, չորրորդը՝ ապրիլի 1-ից մինչև ուսումնական տարվա վերջը, ամառայինը հունիսի 25-ից մինչև օգոստոսի 31-ը: Կանոնադրությունը նաև սահմանում է, որ դպրոցների դասարաններում սովորողների թիվը չպետք է գերազանցի՝ 1-8-րդ դասարաններում՝ 40, 9-10-րդ (11-րդ) դասարաններում՝ 35 մարդուց: Սահմանված կարգով թույլատրվում է դասարանը բաժանել ենթախմբերի: Սովորողների թիվը երկարօրյա խմբերում և գիշերօթիկ, երեկոյան (հերթափոխային), հեռակա, առողջարանա-անտառային (սանատորիայում) և մտավոր ու ֆիզիկական պակասություն ունեցող երեխաների (օժանդակ) դպրոցների դասարաններում որոշվում է սահմանված կարգով:

Կանոնադրության համաձայն՝ որոշ փոփոխություններ կատարվեց նաև ուսուցման կազմակերպման ձևերում: Ինչպես միշտ, դասը համարվում է ուսուցման կազմակերպման հիմնական ձևը: Միջնակարգ դպրոցում դասի տևողությունը սահմանվում է 45 րոպե, դասամիջոցը՝ 10 րոպե, մեծ ընդմիջումը՝ 10-20 րոպե:

Դասերի թիվը և հաջորդականությունը որոշվում են ուսումնական պարապմունքների դասացուցակով: Տնային առաջադրանքները տրվում են, հաշվի առնելով դրանց կատարման հնարավորությունները, հետևյալ սահմաններում՝

1-ին դասարանում՝ մինչև 1 ժամ,

2-րդ դասարանում՝ մինչև 1,5 ժամ,

3-րդ և 4-րդ դասարաններում՝ մինչև 2 ժամ,

5-րդ և 6-րդ դասարաններում՝ մինչև 2,5 ժամ,

7-րդ դասարանում մինչև՝ 3 ժամ,

8-10-րդ (11-րդ) դասարաններում՝ մինչև 4 ժամ:

Սովորողների գիտելիքների գնահատման չափանիշները մնում են նույնը՝ 1945թ. մարտին ԽՍՀՄ Նախարարների խորհրդի ընդունած որոշման համաձայն: Պարտադիր ավարտական քննություններ են սահմանվում 8-10-րդ(11-րդ) դասարաններում, իսկ մյուս դասարաններում սահմանվում են փոխադրական քննություններ:

Աշակերտների ավարտական և փոխադրական քննությունների անցկացման կարգը սահմանվում է Հայաստանի լուսավորության նախարարության և ԼՂ մարզժողկրթբաժնի կողմից, իսկ բնագիտական որոշ առարկաներից և ռուսաց լեզվից սահմանվում է Ադրբեջանի լուսավորության նախարարության կողմից:

Որոշ փոփոխություններ կատարվեցին նաև աշակերտների վարքի գնահատման կանոնակարգում: Սովորողների վարքը գնահատվում է. 1-3-րդ (4-րդ) դասարաններում՝ ուսուցիչների, 4-10-րդ (11-րդ) դասարաններում՝ դասղեկների կողմից՝ «օրինակելի», «բավարար», «անբավարար»: 4-10-րդ (11-րդ) դասարաններում սովորողների վարքը գնահատելիս հաշվի է առնվում տվյալ դասարանում դասավանդող ուսուցիչների, դպրոցի հասարակական կազմակերպությունների կարծիքը: Սովորողների վարքից տարեկան անբավարար գնահատականները նշանակվում են միայն դպրոցի մանկավարժական խորհրդի որոշումից հետո: Ավարտական դասարանների՝ վարքից անբավարար գնահատական ունեցող աշակերտները ավարտական քննությունների չեն թույլատրվում. նրանք ստանում են տեղեկանք այն մասին, որ ունկնդրել են հանրակրթական միջնակարգ դպրոցի դասընթացը: Միջնակարգ կրթության ատեստատի քննությունները նրանք կարող են հանձնել հաջորդ երեք տարիներին, սահմանված կարգով աշխատանքի վայրից դրական բնութագիր ներկայացնելուց հետո:

70-ական թվականներին և 80-ական թվականների կեսերին (1970-1986թթ.) Լեռնային Ղարաբաղի ժողովրդական կրթության համակարգում ձեռք բերված նվաճումները (Ադրբեջանի ազգահալած քաղաքականության պայմաններում), անշուշտ, կապված են մարզժողկրթբաժնի վարիչ, վաստակաշատ մանկավարժ Սարգիս Արամյանի եռանդուն գործունեության (1967-1986թթ. եղել է Մարզժողկրթբաժնի վարիչ) հետ: Նրա անվան հետ է կապված գիշերօթիկ, երկարօրյա խմբերով դպրոցների, աշակերտական արտադրական բրիգադների, արտադպրոցական հիմնարկների մուտքը և գործունեությունը Լեռնային Ղարաբաղում (նրա բեղուն գործունեության մասին կնշվի հաջորդ բաժնում):

1969-1970 ուստարվա ուսուցչական օգոստոսյան խորհրդակցությունում (Մարտակերտում, որին ներկա էր նաև սույն գրքի համահեղինակը՝ Գ.Հարությունյանը, այն ժամանակ Վաղուհասի դպրոցի պատմության ուսուցիչ) Ս.Արամյանը իր զեկուցման մեջ մատնանշեց, որ շրջանի դպրոցներում ուսուցիչները զգալի հաջողություններ են ձեռք բերել, ունեցել են արդյունավետ դասի անցկացման ուսանելի փորձ: Նկատի ունենք Շ.Օհանջանյանին, Ս.Օհանջանյանին,

Ռ.Պետրոսյանին, Գ.Գրիգորյանին, Ռ.Բաղդասարյանին (Մարտակերտ), Յու.Եդիգարյանին (Մաղավուզ), Ա.Միքայելյանին, Ս.Աթասյանին (Վաղուհաս), Վ.Աղաբեկյանին (Հաթերք), Վ.Դանիելյանին (Մեծ շեն) և շատ ուրիշների[328]: Արամյանը ուսուցիչների ուշադրությունը հրավիրեց այն հարցի վրա, որ դպրոցների վերակառուցման նոր փուլում սովորողներին հանրակրթական ու պոլիտեխնիկական գիտելիքներով զինելու հարցը մնում է որպես դպրոցի առաջնահերթ խնդիր, առանց որի չի կարող իրականանալ աշխատանքային դաստիարակությունը, ուստի հանրակրթական առարկաների ուսուցիչների առջև խնդիր է դրվում կատարելագործել ուսուցման մեթոդները, բարձրացնել աշակերտների ակտիվությունն ու ինքնուրույնությունը, ուսուցմանը տալ գործնական բնույթ, այն կապել կյանքի, պրակտիկայի հետ:

80-ական թվականների կեսերին ԽՍՀՄ Նախարարների խորհրդի կողմից «Հանրակրթական և պրոֆեսիոնալ դպրոցի ռեֆորմի մասին» որոշման (1984թ. ապրիլ) ընդունումից հետո որոշ փոփոխություններ կատարվեցին հանրակրթական դպրոցի ներքին կյանքում: Ռեֆորմի պահանջներին համապատասխան՝ հանրակրթական ընդհանուր, միջնակարգ և պրոֆեսիոնալ դպրոցը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը.

տարրական դպրոց՝ 1-4-րդ դասարաններ,

ոչ լրիվ միջնակարգ դպրոց՝ 5-9-րդ դասարաններ,

միջնակարգ հանրակրթական և հանրակրթական դպրոց՝ 9-11-րդ դասարաններ,

պրոֆեսիոնալ դպրոց՝ միջնակարգ պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարաններ և միջնակարգ մասնագրտական ուսումնական հստատություններ[329]:

Ըստ ռեֆորմի պահանջների՝ միջնակարգ հանրակրթական դպրոցը դառնում է տասնմեկամյա: Ենթադրվում է դպրոցում երեխաների ուսուցումը սկսել մեկ տարի շուտ՝ վեց տարեկան հասակից: Այն նախապատրաստված է նախադպրոցական դաստիարակության համակարգի զարգացումով, որն այդ ժամանակ ընդգրկում էր երեխաների բացարձակ մեծամասնությունը, մանկապարտեզներում ու դպրոցներում նրանց ուսուցման փորձով: Դպրոցում վեց տարեկանից երեխաների ուսուցման անցնելը իրականացնել աստիճանաբար, մի շարք տարիների ընթացքում, սկսած 1986թ-ից, լրացուցիչ աշակերտական տեղերի ստեղծման, ուսուցչական կադրերի պատրաստման համեմատ, հաշվի առնելով ծնողների ցանկությունները, երեխաների զարգացման մակարդակը, տեղական պայմանները: Առաջին փուլում երեխաների որոշակի մասը դպրոց կընդունվի նաև յոթ տարեկան հասակում, իսկ վեց տարեկան երեխաների ուսուցումը կանցկացվի միասնական ծրագրերով, ինչպես դպրոցներում, այնպես էլ մանկապարտեզների ավագ խմբերում:

Տարրական դպրոցում (1-4-րդ դասարաններ) ուսման տևողությունը ավելացվում է մեկ տարով, որը թույլ կտա երեխաներին ավելի հիմնավոր կերպով սովորեցնել կարդալ, գրել ու հաշվել, տարրական աշխատանքային հմտություններ: Դա թույլ կտա միաժամանակ պակասեցնել աշակերտների բեռնվածությունը և հեշտացնել գիտությունների հիմունքների հետագա յուրացումը:

Ոչ լրիվ միջնակարգ դպրոցը (5-9-րդ դասարաններ) նախատեսում է, ինչպես և ներկայումս, գիտությունների հիմունքների ուսումնասիրում հինգ տարվա ընթացքում: 9-րդ դասարանն ավարտելով, 15 տարեկան դպրոցականները, որպես կանոն, ստանում են ոչ լրիվ միջնակարգ կրթություն: Հիմնականում լուծվում է դեռահասների ընդհանուր աշխատանքային պատրաստության խնդիրը: Մասնագի-

տական կողմնորոշման միջոցառումների զուգորդմամբ այնպիսի պայմաններ են ստեղծվում, որոնք նրանց համար հեշտացնում են ապագա մասնագիտության ընտրությունը: 9-ամյա դպրոցը բազա է հանդիսանում տարբեր ուղիներով ընդհանուր միջնակարգ և պրոֆեսիոնալ կրթություն ստանալու համար:

Միջնակարգ, հանրակրթական և պրոֆեսիոնալ դպրոցն ընդգրկում է հանրակրթական դպրոցի 9-11-րդ դասարանները, պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարանները և միջնակարգ մասնագրտական ուսումնական հստատությունները: Այն ապահովում է երիտասարդության ընդհանուր միջնակարգ կրթությունը, նրա աշխատանքային և մասնագիտական պատրաստությունը:

Միջնակարգ պրոֆտեխնիկական ուսումնարաններ ընդունվող 9-րդ դասարանների շրջանավարտների թիվն ու տեսակարար կշիռը, հեռանկարային առումով, կավելանան մոտավորպես երկու անգամ: Ընդ որում պետք է հաշվի առնվեն առանձին շրջանների, քաղաքի և գյուղի առանձնահատկությունները:

8-9-րդ դասարանների աշակերտներին հնարավորություն է տրվում իրենց ընտրությամբ ավելի խորն ուսումնասիրել ֆիզիկամաթեմատիկական, քիմիակենսաբանական և հասարակագիտական-հումանիտար ցիկլերի առանձին առարկաներ՝ նախասիրական պրապմունքների միջոցով: 10-11-րդ դասարաններում աշխատանքային ուսուցումը զուգակցվում է նյութական արտադրության և ոչ արտադրական ոլորտի համար պահանջվող մասսայական մասնագիտությունների տիրապետման հետ:

Հանրակրթական դպրոցի ռեֆորմը նաև նպատակ ունի հաղթահարել նրա գործունեության մեջ կուտակված մի շարք բացասական երևույթները, լուրջ թերություններն ու վրիպումները: Հարկավոր է կատարելագործել կրթության կառուցվածքը, էապես բարձրացնել հանրակրթական, աշխատանքային ու մասնագիտական պատրաստության որակը, ավելի լայնորեն կիրառել ուսման ակտիվ ձևերն ու մեթոդները, տեխնիկական միջոցները, նպատակասլաց կերպով իրականացնել ուսուցման ու դաստիարակության միասնության սկզբունքը, ընտանիքի, դպրոցի ու հասարակության սերտ կապը:

Անհրաժեշտ է վճռականապես արմատախիլ անել ձևամոլության ամեն տեսակի դրսևորումները դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքի բովանդակության ու մեթոդների մեջ և դպրոցի կյանքում, սովորողների գիտելիքների գնահատման գործում հաղթահարել, այսպես կոչված, տոկոսամոլությունը:

Հանրակրթական և պրոֆեսիոնալ դպրոցի ռեֆորմի իրականացումը պահանջում է լուծել հետևյալ հիմնական խնդիրները.

- բարձրացնել կրթության և դաստիարակության որակը, ապահովել յուրաքանչյուր առարկայի դասավանդման ավելի բարձր գիտական մակարդակը, գիտելիքների հիմունքներին կայուն տիրապետումը, գաղափարաքաղաքական, աշխատանքային ու բարոյական դաստիարակության, գեղագիտական և ֆիզիկական զարգացման բարելավումը, կատարելագործել ուսումնական ծրագրերն ու պլանները, դասագրքերն ու ուսումնական ձեռնարկները, ուսուցման ու դաստիարակության մեթոդները, վերացնել սովորողների գերծանրաբեռնվածությունը, ուսումնական նյութի չափից ավելի բարդությունը.
- արմատապես բարելավել հանրակրթական դպրոցում աշխատանքային դաստիարակության, ուսուցման և պրոֆեսիոնալ կողմնորոշման դրվածքը, ուժեղացնել դասավանդման պոլիտեխնիկական, գործնական ուղղվածությունը, զգալիորեն ընդլայնել պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթության համակարգում որակյալ բանվորական կադրերի պատրաստումը, իրականացնել անցում դեպի

երիտասարդության ընդհանուր պրոֆեսիոնալ կրթություն.

- ուժեղացնել աշակերտների պատասխանատվությունը ուսման որակի, ուսումնական և աշխատանքային կարգապահության պահպանման համար, բարձրացնել նրանց հասարակական ակտիվությունը աշակերտական կոլեկտիվներում, ինքնավարության զարգացման հիման վրա.

- բարձրացնել ուսուցչի և արտադրական ուսուցման վարպետի հասարակական վարկը, նրանց տեսական ու գործնական պատրաստությունը, լիովին ապահովել մանկավարժական կադրերի հարցում ժողովրդական կրթության համակարգի պահանջմունքները, բարձրացնել մանկավարժական աշխատողների աշխատավարձը և բարելավել նրանց բնակարանային կենցաղային պայմանները.

- ամրապնդել ուսումնական հաստատությունների, նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկների նյութատեխնիկական բազան.

- կատարելագործել հանրակրթական ու պրոֆեսիոնալ դպրոցի կառուցվածքը և ժողովրդական կրթության կառավարումը:

Քննարկվող ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցներում ուսումնական աշխատանքի կատարելագործմանն ու զարգացմանը զուգահեռ վերակառուցվում են նաև դաստիարակչական աշխատանքները: Այդ կարևորագույն խնդրի լուծումը, սակայն, կապված էր որոշակի դժվարությունների հետ: Այդ բնագավառում նույնպես զգացվում էին պատերազմական ժամանակների հետքերը: Բավական շատ էին ծնողազուրկ երեխաները: Արտադրության մեջ աշխատելու պատճառով որոշ ծնողներ հնարավորություն չունեին ապահովելու անհրաժեշտ հսկողությունը երեխաների նկատմամբ, իսկ դպրոցական աշխատողների մի մասն էլ պարզապես ի վիճակի չէր տնօրինելու սովորողների կարգապահության բարձրացման գործը: Այդ և ուրիշ հանգամանքներ բացասական աղդեցություն էին թողնում դաստիարակության գործ վրա: Ընդհանրապես դպրոցում կարգապահությունը բարձր մակարդակի վրա չէր գտնվում: Մարզային և շրջանային ժողկրթբաժինները որոշակի աշխատանք կատարեցին սովորողների դաստիարակության, նրանց գիտակցական կարգապահության բարձրացման ուղղությամբ: Այս բնագավառում խթանիչ դեր կատարեց հատկապես «Դպրոցական կարգապահությունը ամրապնդելու մասին» ԽՍՀՄ լուսավորության նախարարության 1952թ. ապրիլի 19-ի հրամանը[330]:

Հրամանը դպրոցնրի ղեկավարներին և ուսուցիչներին պարտավորեցրեց դպրոցներում հաստատել ամուր կարգուկանոն, անշեղորեն իրականացնել «Կանոններ աշակերտների համար» հրահանգը: Սահմանվեցին աշակերտական վարքի նոր կանոններ և այս անգամ արդեն ոչ թե ընդհանուր աշակերտների, այլ «կրտսեր», «միջին» (դեռահաս) և «ավագ» (վաղ երիտասարդության) դպրոցականների տարիքային հոգեբանական և անհատական առանձնահատկությունների հաշվառմամբ և ամրագրվեցին այսպես՝

ա) «կրտսեր դպրոցական տարիքի սովորողների վարքի կանոններ»,

բ) «միջին դպրոցական տարիքի սովորողների կամ դեռահասների վարքի կանոններ»,

գ) «ավագ դպրոցական տարիքի կամ վաղ երիտասարդական տարիքի կամ բարձր դասարաններում սովորողների վարքի կանոններ»:

Մարզի հանրակրթական դպրոցներում դաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման և գիտակցական կարգապահության բարձրացման գործին մեծ չափով նպաստեց տղաների և աղջիկների համատեղ ուսուցման մասին ԽՍՀՄ կառավարության որոշումը (1954թ.): Դրա հիման վրա Հայաստանի

և Լեռնային Ղարաբաղի դպրոցներում 1954թ. սեպտեմբերի 1-ից մտցվեց համատեղ ուսուցում:

Եթե պատերազմի տարիներին անջատ ուսուցումն ինչ-որ չափով նպատակահարմար էր, ապա խաղաղ ժամանակ այն իրեն չարդարացրեց: Դպրոցում գոյություն ունեցող մյուս աննպաստ պայմանների հետ միասին անջատ ուսուցումն էլ իր հերթին խոչընդոտում էր հատկապես դաստիարակության գործի նորմալ ընթացքին: Թե տղաների, և թե աղջիկների դպրոցներում զգալիորեն թուլացել էր կարգապահությունը: Շատ փաստեր կան արձանագրված, թե ինչպես միասեռ դպրոցներում, տղաներն իրենց արտահայտություններում ու շարժուձևերում ազատ են զգում, կոպտում միմյանց, անթույլատրելի խաղեր կազմակերպում, մինչդեռ երկսեռ ուսուցումը կարող էր որոշակի զսպվածություն առաջացնել, բարձրացնել նրանց վարքի կուլտուրան:

Անջատ ուսուցման պայմաններում կոլեկտիվ շատ միջոցառումներ անհաջողության էին մատնվում: Երեկույթներ, թատերական ելույթներ կազմակերպելը մեծ դժվարությունների հետ էր կապված՝ տղաների կամ աղջիկների բացակայության պատճառով:

Հոգեբանական տեսակետից նույնպես անջատ ուսուցումը իրեն արդարացնել չէր կարող: Արհեստականորեն հեռանալով միմյանցից, տղաներն ու աղջիկները հաճախ վատ էին տրամադրվում իրար հանդեպ, իսկ երբեմն էլ միմյանց հանդիպելը կատարվում էր գաղտնի: Մինչդեռ մեր հասարակության մեջ կանայք ու տղամարդիկ ապրում և աշխատում են միասին, ընկերական ու բարեկամական լավագույն փոխհարաբերությամբ:

Համատեղ ուսուցման կազմակերպումը շուտով դպրոցական կյանքը դարձրեց ներդաշնակ ու բովանդակալից: Այն հնարավորություն տվեց ստեղծել ավելի ամուր աշակերտական կոլեկտիվներ:

Ազնիվ, ընկերական մթնոլորտում աղջիկներն ու տղաները, դրականորեն ազդելով միմյանց վրա, զգալիորեն բարձրացրին գիտակցական կարգապահությունը և ուսման որակը:

Մարզի դպրոցներում գիտակցական կարգապահության բարձրացման հարցին մարզային և շրջանային կրթության բաժինները անդրադառնում են նաև հետագայում:

Արխիվային փաստաթղթերի[331] ուսումնասիրումը ցույց է տվել, որ 1955թ. մարտի 22-ին մարզժողկրթբաժնի կոլեգիայի նիստում շրջանային կրթության բաժինների վարիչները և դպրոցական տեսուչները՝ իրենց ելույթներում ընդհանրացնելով այդ բնագավառում ձեռք բերած որոշ հաջողությունները, միաժամանակ ընդգծեցին, որ դպրոցներում դեռևս բացակայում է լուրջ, հետևողական մանկավարժական աշխատանքը: Դպրոցական պրակտիկայում հաճախ տեղ է գտնում մերկ վարչարարությունը: Որոշ ուսուցիչներ աշակերտի գիտակցությանը դիմելու, նրան համոզելու, կոլեկտիվ աշխատանքի մեջ ներգրավելու փոխարեն տեղի-անտեղի պարսավանքի են ենթարկում, հեռացնում դասարանից, վիրավորում նրա արժանապատվությունը և այլն:

Այնուհետև մի շարք հանձնարարականներ ու խորհուրդներ տրվեցին կարգապահությունը բարելավելու վերաբերյալ:

Ուշադրության արժանի է մարզժողկրթբաժնի կողմից (Ս.Հայրապետյան) մշակված և դպրոցներին հանձնված «Միասնական պահանջներ աշակերտների նկատմամբ» հրահանգը (ընդունվել է 1956թ. մարտի 26-ին): Հայաստանի լուսավորության նախարարության կողմից այն ընդունվել է 1956թ. փետրվարին: Այս-

տեղ ամենայն մանրամասնությամբ ու կոնկրետությամբ նշված է, թե աշակերտը ինչպես պետք է իրեն պահի տանը, դասի ժամանակ, դասամիջոցին, փողոցում, հասարակական վայրերում, ժողովներում, երեկույթներում, պիոներական հավաքույթներում, ինչպիսին պետք է լինեն հագուստը և արտաքին տեսքը, խոսելու ձևը, ինչ վերաբերմունք պետք է ցուցաբերի դեպի դասագրքերը, տետրերը, օրագրերը, աշխատատեղը և այլն: Այս հրահանգը որոշակի օգնություն ցույց տվեց ուսուցիչներին՝ աշակերտների նկատմամբ միասնական պահանջներ առաջադրելու և զգալի արդյունքի հասնելու գործում:

Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցներում առանձնապես ուշադրություն դարձվեց սովորողների արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներին: Այս բնագավառում ուսուցիչներին մեծապես օգնում էին մարզի դպրոցների կոմերիտական ու պիոներական կազմակերպությունները: Այսպես՝ միայն 1946-47 ուստարում մարզի հանրակրթական դպրոցներում կային 145 կոմերիտական կազմակերպություններ՝ 5250 կոմերիտականներով, և 150 պիոներական դրուժինաներ՝16357 պիոներներով[332]:

Սովորողների արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազամերպման գործում դրական աշխատանք կատարեցին Ստեփանակերտի թիվ 3, Շուշիի թիվ 1, Մարտունու շրջանի Ճարտարի, Աշանի, Նորշենի, Գիշու, Հադրութի շրջանի Մեծ Թաղլարի, Ազոխի, Տումու, Բանազուրի, Ասկերանի շրջանի Սարուշենի, Բալուջայի, Նորագյուղի, Մարտակերտի շրջանի Վաղուհասի, Հարությունագոմերի, Հաթերքի, Թալիշի, Մեծ շենի և այլ առաջավոր դպրոցներ: Օրինակ, ժամանակակիցների հուշերից տեղեկանում ենք, որ Ստեփանակերտի թիվ 2 դպրոցի մանկավարժական կոլեկտիվը չափազանց հետաքրքիր է կազմակերպում սովորողների արտադասարանական աշխատանքները: Դպրոցում գործում էին հայոց լեզվի և գրականության, ֆիզիկայի, մաթեմատիկայի, ռադիոսիրողների, լուսանկարչական և այլ խմբակներ, որոնցում ընդգրկված էին 170 աշակերտներ: Դպրոցի «Փառքի անկյունում» փակցված էին հայ հերոսների, անվանի մարդկանց նկարներ, հերոս կոմերիտականների ու պիոներների կյանքին ու գործունեությանը նվիրված նյութեր: Ուշագրավ են հատկապես քիմբիոլոգիայի ուսուցչուհի Ելենա Աղաջանյանի (20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ) ջանքերով դպրոցում ստեղծված քիմբիոլոգիայի կաբինետը և նրա կողմից կազմակերպված փորձնական դասընթացը:

Դաստիարակչական տեսակետից իրեն արդարացրած արտադասարանական գործունեության ձևերից էին նաև դպրոցականների ձեռքերով ուսումնական կաբինետների կահավորումը, «Փառքի անկյուն»-ների, թանգարանների ստեղծումը: Դպրոցական թանգարանների, պատկերասրահների, ցուցահանդեսների ստեղծումն աշակերտների մեջ քաղաքացիական ինքնագիտակցություն, հասարակական ակտիվություն, կոլեկտիվիզմ դաստիարակելու, նրանց ինքնուրույն աշխատանքը կազմակերպելու, գիտական աշխատանաքի ունակություններ պատվաստելու լավագույն միջոց են: Դպրոցականների ձեռքերով են ստեղծվել Մարտակերտի շրջկենտրոնի թիվ 1, Մարտունու շրջանի Ճարտարի, Հադրութի շրջկենտրոնի թիվ 1, Ստեփանակերտի թիվ 2 դպրոցների թանգարաններն ու «Փառքի անկյուն»-ները, որոնց մասին լավ գիտեն մեր հանրապետությունում: Ի դեպ, նշենք, որ այդ դպրոցների թանգարաններն այսօր համալրվել են Արցախյան գոյամարտին վերաբերող արժեքավոր փաստագրական նյութերով: Դպրոցների թանգարաններ ստեղծելու մտահղացումն ու նախաձեռնությունը պատկանում են արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպիչ-

ներ Ս. Բաղունցին (Մարտակերտ), Շ.Քամալյանին (Մարտունի), Ս.Մանվելյանին (Հադրութ), Ա.Բալայանին (Ստեփանակերտ) և ուրիշների: Նշված և մարզի շատ դպրոցներում հուշակենսագրական թանգարանները պատմում են հասարակական-քաղաքական, մշակութային, գիտության վաստակավոր գործիչների, Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում հայ ժողովրդի զավակների ցուցաբերած սխրանքների, Փառքի շքանշանների արժանացած մեր հայրենակիցների մասին:

Մարզի դպրոցներում համապատասխան դասարանների դասղեկների, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպիչների, ավագ ջոկատավարների և փորձառու ուսուցիչների աշխատանքի շնորհիվ թանգարաններում ստեղծվել են ընդարձակ հոդվածներով և բազմաթիվ լուսանկարներով թեմատիկ ալբոմներ, վահանակներ, թանգարանային ցուցանմուշներ:

Դպրոցականների դաստիարակության անբաժանելի մասն է կազմում նաև էսթետիկական (գեղագիտական) դաստիարակությունը: Այդ նպատակով մարզի հանրակրթական դպրոցները շատ բան արեցին բնության ու հասարակության, արվեստի և կենցաղի մեջ լավը, գեղեցիկը, բարոյականը ճանաչելու և ընկալելու ունակություններ ու կարողություններ մշակելու գործում: Օրինակ, ժամանակակիցների հուշերում (Ազնիվ Աղաբեկյան, Սերգեյ Անդրյան, Արմեն Ավանեսյան և ուրիշներ) նշվում է, որ մեր դպրոցներում հաճախակի կազմակերպվում էին համերգներ, համերգ-դասախոսություններ, օպերաների, թատրոնների, կինոնկարների, ցուցահանդեսների կոլեկտիվ դիտումներ, իսկ որոշ դեպքերում նաև քննարկումներ, երաժշտական ունկնդրումներ, երեկոներ՝ նվիրված նշանավոր երգահանների, նկարիչների, գրողների կյանքին ու ստեղծագործությանը և այլն: Շատ միջնակարգ դպրոցներում կազմակերպվում էին նաև գրական երեկոներ, բանավեճեր, ընթերցողների կոնֆերանսներ, գրողների ներկայությամբ նրանց ստեղծագործությունների քննարկումներ և այլն:

Գեղագիտական դաստիարակությանը մեծապես նպաստեցին նաև շրջանային ու մարզային գեղարվեստական փառատոնները, որորք հաճախակի էին անցկացվում Ստեփանակերտում:

Աշակերտների ստեղծագործական մտքի, ինքնուրույնության, աշխատանքային ունակությունների զարգացմանը, ինչպես նաև կամքի ու բնավորության ձևավորմանը մեծապես օգնել են արտադասարանական միջոցառումներն ու խմբակները: Որպես կանոն, ամեն տարի մարզի դպրոցներում անց են կացվել պատանի մաթեմատիկոսների, ֆիզիկոսների և քիմիկոսների շրջանային ու մարզային օլիմպիադաներ: Այսպես, 1950-51 ուստարում անցկացված մաթեմատիկական օլիմպիադային մասնակցեցին124 աշակերտներ, իսկ քիմիականին՝ 96 աշակերտներ: Այդ երկու առարկաներից 18 հոգի առաջին կարգի, իսկ 34-ը՝ երկրորդ կարգի հաղթողներ են[334]: Նույն ուստարում օլիմպիադաներ են կազմակերպվել հայոց լեզու և գրականություն, պատմություն առարկաներից: Մարզի միջնակարգ դպրոցներում գործել են նաև առարկայական տեխնիկական և մարզական բազմազան խմբակներ, ինչպես, օրինակ, գրականության, մայրենի, ռուսաց և օտար լեզուների, մաթեմատիկայի, ֆիզիկայի, պատանի տեխնիկների, պատանի բնասերների, ռադիոյի և այլն:

Արտադասարանական առարկայական խմբակներ են կազամակերպվում նաև ութամյա դպրոցներում:

Ամեն տարի մարզժողկրթբաժինը անց է կացրել սպորտ-մասսայական միջոցառումներ՝ շրջանային, քաղաքային մրցություններ, խաղեր, ընկերական հան-

դիպումներ, սպարտակիադաներ: Այսպես, միջոցառումներին 1957թ. մասնակցել են ավելի քան 820, իսկ 1968-69 ուստարում՝ 1200 մարդ: Մարզի դպրոցականները մեծ դժվարությամբ մասնակցել են նաև Հայաստանում կազմակերպված սպորտ-մասսայական միջոցառումներին[335]:

Սովորողների արտադասարանական և արտադպրոցական գործունեության ձևերից են նաև էքսկուրսիաները, արշավները, հոբելյանական և տոն օրերին գիտության, մշակույթի գործիչների, պատերազմի և աշխատանքի վետերանների հետ հանդիպումները, տոնակատարությունների շրջանում արտադասարանական խմբակների հատուկ պարապմունքների կազմակերպումը և այլն: Դաստիարակչական մեծ նշանակություն է ունենում դպրոցում կազմակերպված բազմաբնույթ միջոցառումների ժամանակ հավաքված նյութերի ձևավորումը հատուկ ալբոմներում, ստենդներում: Այդ նյութերը խելամտորեն օգտագործվում են ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքում: Բերենք մի քանի օրինակներ, որոնք ուսանելի կլինեն այսօրվա դպրոցի մանկավարժական կոլեկտիվների համար:

Ուշադրության է արժանի Ստեփանակերտի թիվ 7 դպրոցի 7-10-րդ դասարանների աշակերտների էքսկուրսիան Ն զորամաս: Փառաբանված հրամանատարները, մարտական և քաղաքական պատրաստության գերազանցիկները հանդիպեցին դպրոցականների հետ, պատմեցին հուշեր, պատասխանեցին աշակերտների հարցերին և այլն: Ի դեպ, էքսկուրսիայից հետո էլ նամակագրական կապ է ստեղծվել դպրոցականների և Ն զորամասի մարտիկների հետ:

Դպրոցականների համամիութենական արշավները նոր լիցք հաղորդեց դաստիարակչական աշխատանքներին:

Մարզի հանրակրթական դպրոցներում հետաքրքիր միջոցառումներ են կազմակերպվում հեղափոխական ականավոր գործիչների կյանքի և գործունեության վերաբերյալ: Այսպես, օրինակ, «Սովետական Ղարաբաղը» 1983թ. ապրիլի 16-ի համարում մեծ գովեստով է խոսել Ստեփանակերտի թիվ 10 դպրոցի ուսուցիչներ Յու.Ղարախանյանի և Ստ.Իգնատովայի ղեկավարությամբ կազմակերպված «Հեղափոխական փառքի ուղիով» էքսկուրսիայի մասին: Ավագ դպրոցականները եղել են Մարտունու շրջանի Նոգի գյուղում, այցելել ականավոր հեղափոխական Բ.Կնունյանցի տուն-թանգարանը: Բ.Կնունյանցի հուշարձանի առջև Նոգի գյուղի և Ստեփանակերտից ժամանած դպրոցականները հանդիսավոր տողանի կանգնեցին: Բ.Կնունյանցի հեղափոխական գործունեության մասին բովանդակալից զեկուցումով հանդես եկավ Նոգիի դպրոցի տնօրեն Մ.Հայրապետյանը:

Ինչպես Ստեփանակերտ քաղաքի, այնպես էլ Մարտակերտի, Մարտունու, Շուշիի և այլ շրջանների դպրոցականները հաճախ են լինում Բ.Կնունյանցի անվան տուն-թանգարանում: Դպրոցականները հուզմունքով դիտում են Բաքվի 26 կոմիսարների ութ հայ ականավոր գործիչների կյանքի և հեղափոխական գործունեության վերաբերյալ նյութերը, դպրոցական տարիներին ստացած նրանց գովասանագրերը, անձնական իրերը:

Դպրոցականները խորապես գիտակցում են, որ հազարավոր հերոսների հետ միասին այդ գործիչները իրենց կյանքը զոհաբերել են հանուն հեղափոխության հաղթանակի, որպեսզի այսօր իրենք «գործեն ու ապրեն ուրախ ու երջանիկ»: Աշակերտները լավ են հասկանում, որ մեծ նպատակներ իրականացնելու համար

առաջին հերթին հարկավոր է լավ սովորել, ուսումը կապել կյանքի, հանրօգուտ աշխատանքի հետ: Դպրոցական Ա.Բալայանը նշեց, որ իրենք «երբեք չեն մոռանա ընկ. Մ.Գրիգորյանի (դպրոցի ուսմասվարն էր) խոսքը. այդ վեհ գործի շարունակողները դուք եք, տիրապետեք գիտելիքներին, ձեր մեջ դաստիարակեք լավագույն հատկություններ, որպեսզի լինենք նրանց վեհ գործի արժանավոր շարունակողները»[336]:

Ստեփանակերտի թիվ 1 դպրոցում գործում էր «Որոնող» ռազմահայրենասիրական ակումբը, որը ղեկավարում էր ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Ռ.Դադայանը: Նրանում ընդգրկված էին և դպրոցականներ, և երիտասարդ բանվորներ, և պրոֆտեխնիկական ուսումնարանի սովորողներ: Պատանի որոնողները կատարեցին հետաքրքիր արշավներ հայրենակիցների հեղափոխական-մարտական գործողությունների վայրերով: Նրանք օգնում էին կոլտնտեսությունների ու սովխոզների դաշտային աշխատանքներին, վաստակած միջոցները տրամադրում զոհված ազատամարտիկների հարազատներին կամ խաղաղության ֆոնդին:

Դպրոցականների հետ տարվող ամենօրյա ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքում խելամտորն օգտագործվում էին նաև աշխատանքային ավանդույթները և այդ ուղղությամբ կազմակերպում արտադասարանական, արտադպրոցական բազմաբնույթ միջոցառումներ[337]: Դպրոցականներին աշխատանքային ավանդույթներով դաստիարակելու ուղղությամբ որոշակի փորձ է կուտակվել ԼՂԻՄ հանրակրթական դպրոցներում:

Մարզի հանրակրթական դպրոցներում սովորողների աշխատանքային դաստարակության համակարգում կարևոր տեղ էին գրավում աշակերտական արտադրական բրիգադները (ԱԱԲ)[338]:

1986-1987 ուսումնական տարում ԼՂԻՄ դպրոցների արտադրական բրիգադների ցանցի մասին ընդհանուր պատկերացում է տալիս հետևյալ աղյուսակը[339].

Աղյուսակ 20

ԼՂԻՄ դպրոցների արտադրական բրիգադների ցանցը 1986-1987 ուստարում

Հ/հ	Դպրոցի անունը, որտեղ կազմակերպվում էր ԱԱԲ	Դատոկացված տեղամասը հեկտարով	Բրիգադի աշակերտների թիվը	Այն կոլտնտեսությունը կամ սովխոզը, որտեղ պիտի աշխատի ԱԱԲ
1	2	3	4	5
	Մարտակերտի շրջան			
1	Մարտակերտի թ.1 միջն. դպրոց	45	210	ՍՄԿԿ 22-րդ համագում. անվ. սովխոզ
2	Մարտակերտի թ.1 միջն. դպրոց	33	80	_ ,, _
3	Լենինավանի միջն. դպրոց	28	120	Լենինավանի սովխոզ
4	Մարաղայի միջն. դպրոց	10	70	Լենինի անվ. սովխոզ
5	Հաթերքի միջն. դպրոց	7	110	Միկոյանի անվ. սովխոզ
6	Չայլվի միջն. դպրոց	20	140	«Կոմունիզմ» սովխոզ

7	Հասանղայայի միջն. դպրոց	8	40	Ս.Կասպարովի անվ. սովխոզ
8	Թալիշի միջն. դպրոց	15	100	Իլյիչի անվ. սովխոզ
9	Որխավանդի միջն. դպրոց	3	100	Կասումովի անվ. սովխոզ
10	Մաղավուզի միջն. դպրոց	40	100	Հակոբ Կամարու անվ. սովխոզ
11	Վանքի միջն. դպրոց	5	90	Բաքվի 26 կոմիսարների անվ. սովխոզ
12	Ումուելվի միջն. դպրոց	5	60	Նիզամու անվ. սովխոզ
13	Առաջաձորի միջն. դպրոց	20	70	«Պրավդա» սովխոզ
14	Իմ. Գերավանդի միջն. դպրոց	3	70	Ստ.Շահումյանի անվ. սովխոզ
15	Մանիքլուի միջն. դպրոց	10	80	Կ.Մարքսի անվ. սովխոզ
16	Վաղուհասի միջն. դպրոց	6	65	Սպանդարյանի անվ. սովխոզ
17	Սեյսուլանի միջն. դպրոց	20	65	Պուշկինի անվ. սովխոզ
18	Մոխրաթաղի միջն. դպրոց	10	50	Ֆրունզեի անվ. սովխոզ
19	Կուսապատի միջն. դպրոց	8	40	«Բակինսկի բաբոչի» սովխոզ
20	Ն.Հոռաթաղի միջն. դպրոց	15	80	_ ,, _
21	Գետավանի միջն. դպրոց	5	25	Ստ.Շահումյանի անվ. սովխոզ
22	Մեծ շենի միջն. դպրոց	8	40	«Ավանգարդ» սովխոզ
23	Մադաղիսի միջն. դպրոց	10	30	«Կոմունիզմ» սովխոզ
24	Ջանյաթաղի միջն. դպրոց	10	65	Կ.Մարքսի անվ. սովխոզ
25	Կոճողոտի միջն. դպրոց	9	60	Մ.Կալինինի անվ. սովխոզ
26	Բաշ Գյունեփայայի միջն. դպրոց	6	60	«Իսկրա» սովխոզ
27	Հար.գոմերի միջն. դպրոց	13	45	_ ,, _
28	Չարեքտարի միջն. դպրոց	3	40	Շահումյանի անվ. սովխոզ
29	Քոլատակի միջն. դպրոց	5	40	Հ.Թևոսյանի անվ. սովխոզ
30	Չլդրանի միջն. դպրոց	5	25	Օրջոնիկիձեի անվ. սովխոզ
31	Չափարի միջն. դպրոց	6	26	Շահումյանի անվ. սովխոզ
	Ասկերանի շրջան			
1	Ասկերանի միջն. դպրոց	32	130	Ն.Ստեփանյանի անվ.կոլխոզ
2	Նախիջևանիկի միջն. դպրոց	12	55	Ֆրունզեի անվ.սովխոզ
3	Խրամորթի միջն. դպրոց	11	50	Լենինի անվ.կոլխոզ
4	Խանաբադի միջն. դպրոց	11	50	Ն.Ստեփանյանի անվ.կոլխոզ
5	Խոջալվի միջն. դպրոց	-	60	Բանջարաբուծական սովխոզ
6	Նորագյուղի միջն. դպրոց	20	45	«Հաղթանակ» կոլխոզ
7	Խնձրիստանի միջն. դպրոց	10	42	Վորոշիլովի անվ.սովխոզ
8	Բաղարայի միջն. դպրոց	25	50	«Հոկտեմբեր» կոլխոզ
9	Բալուջայի միջն. դպրոց	25	50	Սովխոզտեխնիկում
10	Շոշի միջն. դպրոց	-	35	Էնգելսի անվ.կոլխոզ
11	Կարմիր գյուղի միջն. դպրոց	8	30	«Կոմունիզմ» կոլխոզ
12	Չանաղչու միջն. դպրոց	24	83	Կ.Մարքսի անվ.կոլխոզ
13	Ղարաբուլաղի միջն. դպրոց	20	45	Կամոյի անվ.կոլխոզ
14	Սարուշենի միջն. դպրոց	5	22	Մայիսի 9-ի անվ. կոլխոզ
15	Սարդարաշենի միջն. դպրոց	4	12	«Հաղթանակ» կոլխոզ
16	Դաշբուլաղի միջն. դպրոց	9	35	«Հոկտեմբեր» կոլխոզ
17	Խանածախի ութամյա դպրոց	3	22	Սովխոզտեխնիկում
18	Հարավի ութամյա դպրոց	7	13	Ֆիալետովի անվ. կոլխոզ
19	Խոջալվի ութամյա դպրոց	-	30	Բանջարաբուծական սովխոզ
20	Սղնախի ութամյա դպրոց	1	15	Կ.Մարքսի անվ.կոլխոզ
21	Սեյդիշենի ութամյա դպրոց	5	29	Վորոշիլովի անվ.սովխոզ
22	Դահրավի ութամյա դպրոց	4	13	Դահրավի կոլխոզ

Մարտունու շրջան				
1	Գիշու միջն. դպրոց	20	90	Կ.Մարքսի անվ.սովխոզ
2	Սոսի միջն. դպրոց	6	90	Շահումյանի անվ. սովխոզ
3	Հերհերի միջն. դպրոց	3	46	Լեյտ.Շմիդտի անվ.կոլխոզ
4	Քերթի միջն. դպրոց	4	80	Աթարբեկովի անվ.կոլխոզ
5	Կարաքենդի միջն. դպրոց	5.5	70	Կիրովի անվ.կոլխոզ
6	Աշանի միջն. դպրոց	3	50	Լ.Միրզոյանի անվ.կոլխոզ
7	Կարմիր շուկայի միջն. դպրոց	5	70	Կարմիր շուկայի սովխոզ
8	Թաղավարդի միջն. դպրոց	3	50	_ ,, _
9	Ճարտարի միջն. դպրոց	8	130	«Կոմունիզմ» կոլխոզ
10	Ղուզե կալերի միջն. դպրոց	8	100	_ ,, _
11	Մարտունի միջն. դպրոց	8	200	ՍՍՀՄ 60-ամյակի անվ. սովխոզ
12	Կուրապատկինոյի միջն. դպրոց	4	46	_ ,, _
13	Մարտունու ութամյա դպրոց	4	38	_ ,, _
14	Խոջավանդի միջն. դպրոց	8	90	Կալինինի անվ.կոլխոզ
15	Ամիրանլարի միջն. դպրոց	2	60	_ ,, _
16	Մուղանլիի ութամյա դպրոց	3	30	_ ,, _
17	Կարադաղլիի միջն. դպրոց	4	60	Նարիմանովի անվ.կոլխոզ
18	Կոլխոզաշենի միջն. դպրոց	2	30	Պարսեղովի անվ.կոլխոզ
19	Կենտխուրդի միջն. դպրոց	-	13	Սվերդլովի անվ.կոլխոզ
20	Հաղարծիի միջն. դպրոց	2	24	Միչուրինի անվ.կոլխոզ
21	Նոր շենի ութամյա դպրոց	-	14	Իլիչի անվ.կոլխոզ
22	Սպիտակաշենի ութամյա դպրոց	-	15	Ժդանովի անվ.կոլխոզ
23	Մուշկապատի միջն.դպրոց	-	30	Սվերդլովի անվ. սովխոզ
24	Խնուշինակի ութամյա դպրոց	-	18	Թումանյանի անվ.կոլխոզ
25	Մաճկալաշենի ութամյա դպրոց	-	20	Շահումյանի անվ.կոլխոզ
26	Շեխերի ութամյա դպրոց	-	8	Կարմիր շուկայի սովխոզ
27	Ղ.Կալերի ութամյա դպրոց	-	15	_ ,, _
28	Գյուլե Կալերի ութամյա դպրոց	-	35	«Կոմունիզմ» կոլխոզ
Հադրութի շրջան				
1	Հադրութի միջն. դպրոց	20	100	Լենինի անվ. սովխոզ
2	Տումիի միջն. դպրոց	2	40	Բաքվի 26 կոմ.անվան սովխոզ
3	Տողի միջն. դպրոց	20	100	«Հոկտեմբեր» սովխոզ
4	Մեծ թաղլարի միջն. դպրոց	20	100	Խուդյակովի անվ. սովխոզ
5	Ազոխի միջն. դպրոց	10	40	_ ,, _
6	Տրախտիկի ութամյա դպրոց	5	40	«Դրուժբա» սովխոզ
7	Էդիլուի միջն. դպրոց	15	90	Կ.Մարքսի անվ. սովխոզ
8	Բանազուրի միջն. դպրոց	5	25	Շահումյանի անվ. սովխոզ
9	Դոլանլարի միջն. դպրոց	5	25	Ալ.Մյասնիկյանի անվ. սովխոզ
10	Հին թաղլարի միջն. դպրոց	1	20	«Հոկտեմբեր» սովխոզ
11	Մոխրենիսի ութամյա դպրոց	1	15	_ ,, _
12	Արփա գյադուկի ութամյա դպրոց	2	25	_ ,, _
13	Մամեդաձորի ութամյա դպրոց	2	24	_ ,, _
14	Ջրակուսի ութամյա դպրոց	1	15	Խուդյակովի անվ. սովխոզ
15	Խալակյաթինի ութամյա դպրոց	2	28	«Դրուժբա» սովխոզ
16	Աղբուլաղի ութամյա դպրոց	3	25	Չկալովի անվ.կոլխոզ
17	Բլուբանի ութամյա դպրոց	1	15	Լենինի անվ.կոլխոզ

18	Քոչբեկի ութամյա դպրոց	1	15	Լենինի անվ.կոլխոզ
19	Թաղասեռի ութամյա դպրոց	2	30	Կ.Մարքսի անվ. սովխոզ
20	Առաքյուլի ութամյա դպրոց	3	25	Ազիզբեկովի անվ.կոլխոզ
21	Աղջաքենդի ութամյա դպրոց	1	20	Կալինինի անվ.կոլխոզ
22	Խծաբերդի ութամյա դպրոց	1	15	«Դրուժբա» սովխոզ
23	Դուդուկչիի ութամյա դպրոց	2	20	_ ,, _
	Շուշիի շրջան			
1	Քարին տակի միջն. դպրոց	1.5	25	Շահումյանի անվ. սովխոզ
2	Կիրովի միջն. դպրոց	0.5	15	Կիրովի անվ. սովխոզ
3	Մալիբեկլուի միջն. դպրոց	1	30	Ազիզբեկովի անվ. սովխոզ
4	Թթուջրի միջն. դպրոց	0.4	40	Թթուջրի սովխոզ
5	Խանալարի միջն. դպրոց	1.4	30	«Սով.Ադրբեջան» սովխոզ
6	Շուշիի միջն. դպրոց	1	25	_ ,, _
	Ընդամենը՝ 112 ԱԱՔ	942	7734	

Դպրոցականների աշխատանքային դաստիարակությանը, ինչպես նաև նրանց մասնագիտական կողմնորոշմանը մեծապես նպաստում էին դպրոցում ստեղծված և ժամանակակից պահանջներին համապատասխան կահավորված փայտամշակման, մետաղամշակման և գյուղատնտեսական մեքենաների ուսումնասիրման կաբինետները: Բարձր դասարանցիները սիրով ու հաճույքով էին ուսումնասիրում գյուղատնտեսական մեքենաները, հանրօգուտ աշխատանք կատարում դաշտերում, կատարում էին վար ու ցանք, խաղողայգիների և գյուղատնտեսական կուլտուրաների մշակումներ: Յուրաքանչյուր ուսումնական տարի շրջանավարտները միջնակարգ կրթության ատեստատի հետ միասին ստանում էին տրակտորիստի վկայական և համալրում մեխանիզատորների շարքերը:

Այսպիսով, վերոհիշյալ համառոտ շարադրանքից էլ կարելի է եզրակացնել, որ հետպատերազմյան տարիներին Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցներում մանկավարժական կոլեկտիվները ջանքեր են գործադրել սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքները պատշաճ բարձրության դնելու համար: Հարկ է նաև նշել, որ հայկական դպրոցներում սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ճանապարհին շատ մեծ դժվարություններ են եղել: Սակայն ավելի վտանգավորն ու դատապարտելին համարվում էր Հայաստանի գիտության, մշակույթի գործիչների, պատերազմի վետերանների, քաղաքական-հեղափոխական գործիչների հետ հանդիպելը, նրանց հայտնվելը Ղարաբաղում և որևէ առնչությունը Ղարաբաղի հայ հասարակական կյանքի հետ: Նրանք, ինչպես հորջորջում էին ազերի ղեկավարները, իրավունք չունեին ոտք դնելու Ղարաբաղ («բիզիմ Կարաբախ»), հանդիպելու իրենց հայրենակիցների հետ և թշնամություն սերմանելու «խաղաղ ապրող հայերի և ադրբեջանցիների միջև»: Եվ ահա Լեռնային Ղարաբաղի մարզային, շրջանային կրթության բաժինների ղեկավարները, դպրոցների մանկավարժական կոլեկտիվները՝ գտնվելով ամենածանր պայմաններում, չկորցրին իրենց հոգեկան կորովն ու մտքի սլացքը, միշտ մաքառեցին իրենց գոյության, ազգային մշակույթի, հոգևոր արժեքների պահպանման և այդ մշակույթը ժողովրդի մեջ վառ պահող ազգային դպրոցի համար: Անշուշտ, դա ազգային ինքնագիտակցության, ապագայի նկատմամբ ղարաբաղցու մեծ հավատի ու աշխատանքի արդյունք է:

3. Ուսուցչական համագումարները և կոնֆերանսները, մանկավարժական որոնումներ, դպրոցի առաջավոր փորձի վերլուծություններ, մեկնաբանումներ, միտումներ

Աշխատության առաջին գլխում արդեն խոսվեց Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության հաստատման տարիներին (1920-1940թթ.) տեղի ունեցած ուսուցչական համագումարների, կոնֆերանսների և մանկավարժական կադրերի պատրաստման մասին:

Հետպատերազմյան տարիներին (1946-1988թթ.) նույնպես տեղի են ունեցել նման համագումարներ, կոնֆերանսներ: Հանրակրթական դպրոցի զարգացման նոր փուլում մանկավարժների որոնումներն ամենից առաջ ընթացել են նոր ժամանակաշրջանի դպրոցի կրթական բովանդակության որոշման և ուսումնական աշխատանքների կազմակերպման ձևերի հայտնագործման ուղղությամբ: Եվ, իրոք, այդ որոնումների ընթացքում մարզի դպրոցներում կուտակվել է բավականին հարուստ փորձ, որի շատ տարրեր արժեքավոր և օգտակար են նաև այսօրվա դպրոցի մանկավարժական կոլեկտիվի համար և, այդ տեսանկյունով ուսումնասիրվող ժամանակաշրջանում մարզի հայկական դպրոցներում կուտակված հարուստ փորձը ընդհանրացնելու, տեսականորեն վերլուծելու կարիք է զգում:

Հետպատերազմյան առաջին հնգամյակի տարիներին ԼՂԻՄ-ի դպրոցները լուրջ նվաճումներ են ձեռք բերել ուսումնադաստիարակչական աշխատանքների բնագավառում, որը նպաստեց աշակերտներին կայուն գիտելիքներով, հմտություններով ու կարողություններով զինելու գործին: Ուսման որակը բարձրացնելու նպատակով լուրջ քայլեր արվեցին ուսուցիչներին մեթոդական-մանկավարժական օգնություն ցույց տալու, մարզի առաջավոր ուսուցիչների աշխատանքի փորձը մասսայականացնելու և ընդհանրացնելու ուղղությամբ: Ահա այդ միտումով էլ հրավիրված ուսուցչական համագումարներն ու կոնֆերանսները մեծ նշանակություն ունեին: Նրանցում քննարկվում էին դպրոցի զարգացման չլուծված բազմաբնույթ հարցեր, ուսուցման ու դաստիարակության կարևոր խնդիրներ:

Հետպատերազմյան առաջին տարում Ադրբեջանի ուսուցիչների 3-րդ համագումարում (1946թ. օգոստոս) ԼՂԻՄ ժողկրթբաժնի վարիչ Սարգիս Աբրահամյանը իր ելույթում[340] հանգամանորեն ներկայացրեց մարզի հանրակրթական դպրոցների (հայկական, ադրբեջանական և ռուսական) վիճակը: Նա մատնանշեց, եթե մարզի դպրոցներում սովորում էին ընդամենը 31 հազար աշակերտներ, ապա 1946-1947 ուստարում սովորողների թիվը հասել է 34222-ի: Նա մատնանշեց նաև, որ մարզում որոշակի աշխատանք է տարվել արտադրության մեջ աշխատող պատանիներին ու աղջիկներին բանվորական և գյուղական երիտասարդական դպրոցներում ընդգրկելու ուղղությամբ: Մարզժողկրթբաժվարը փաստագրական տվյալներով ներկայացրեց, որ 1946թ. մարզում գործում էր բանվորական երիտասարդական 9 դպրոց, որտեղ սովորում էին 354 աշակերտներ, իսկ մեծահասակների 2 տարրական դպրոցում՝ 150 սովորող: Մարզում դպրոցների ցանցը հնարավորություն ունի ապահովելու յոթնամյա պարտադիր ուսուցումը: Նա նաև մատնանշեց, որ կուսակցության ԼՂ մարզկոմը և մարզգործկոմը մշտական հոգատարություն են ցուցաբերում ժողովրդական կրթության նկատմամբ: Կուսակցության մարզկոմի և մարզգործկոմի համատեղ նիստերում քննարկվել են դպրոցին վերաբերող բազմաբնույթ հարցեր, համապատասխան որոշումներ են ընդունվել ժողովրդական կրթության բնագավառում տեղ գտած թերությունները վերացնելու, ուսումնադաստիարակչական աշխատանքների մակարդակը բարձրացնելու համար:

Արխիվային փաստաթղթերից, ինչպես նաև ժամանակակիցների հուշերից[341] (Միքայել Բեգլարյան, Գաբրիել Գաբրիելյան, Սամսոն Ալեքսանյան, Սերգեյ Արզումանյան, Արմիկ Ասրյան և ուրիշներ) տեղեկանում ենք, որ հետպատերազմյան շրջանում Լեռնային Ղարաբաղի առաջին ընդհանուր ուսուցչական կոնֆերանսը հրավիրվել է 1948-1949 ուստարում, օգոստոսի 22-24-ին՝ Ստեփանակերտում: Կոնֆերանսին մասնակցեցին 200 առաջավոր ուսուցիչներ, շրջանային ժողովրդական կրթության բաժնների վարիչներ (Արշակ Գաբրիելյան՝ Մարտակերտ, Գրիգոր Ուլուբաբյան՝ Մարտունի, Գրիգոր Սաֆարյան՝ Հադրութ), դպրոցական տեսուչներ, մարզային, շրջանային կուսակցական, արհմիութենական կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլ բնագավառի աշխատողներ: Կոնֆերանսը քննարկեց հետևյալ հարցերը. ա) Հայրենական մեծ պատերազմից հետո հանրակրթական դպրոցի վերակառուցման երեք տարիների (1945-1948թթ.) արդյունքները և տեղ գտած թերությունները, բ) մարզում պարտադիր յոթնամյա և ընդհանուր միջնակարգ կրթության իրականացումը, գ) երկու սեռի՝ աղջիկների և տղաների համատեղ ուսուցման վերականգնումը (այն իրագործվեց միայն 1954թ. սեպտեմբերի 1-ից), դ) հանրակրթական միջնակարգ դպրոցները նոր ուսումնական պլաններով, ծրագրերով, դասագրքերով ապահովումը, ե) դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի բարձրացումը, զ) ուսուցիչների վերապատրաստման համար մանկավարժական դասընթացների կազմակերպումը, է) ուսուցիչների նյութական վիճակի ապահովումը, արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների կազմակերպումը և այլն:

Համանման հարցեր քննարկվեցին նաև 1948թ. օգոստոսի 26-28-ին Մարտակերտի, Ասկերանի, Շուշիի, Հադրութի և Մարտունու շրջաններում հրավիրված ուսուցչական կոնֆերանսներում, որոնց ակտիվ մասնակցություն ունեցան նաև մարզի դպրոցի պրակտիկայում ճանաչված ուսուցիչներ Ազնիվ Աղաբեկյանը, Վաղարշակ Աղաբեկյանը, Աբգար Գրիգորյանը (Մարտակերտ), Սերգեյ Անդրյանը, Գալյա Բաբայանը (Ասկերան), Արսեն Խաչատրյանը, Սոֆյա Համբարձումյանը (Շուշի), Հայկուշ Ազարյանը, Սամսոն Ավետիսյանը, Անուշավան Արամյանը (Մարտունի), Ներսես Աբրահամյանը, Սմբատ Աբրահամյանը, Սուրեն Բաղդասարյանը (Հադրութ), Ելենա Աղաջանյանը, Կարո Դավթյանը, Թեմուր Ամիրջանյանը, Գաբրիել Գաբրիելյանը (Ստեփանակերտ) և շատ ուրիշներ:

Շրջանային ուսուցչական խորհրդակցություններում ելույթ ունեցողները ավելի լուրջ խնդիրներ էին համարում՝ ա) վճռականապես արմատախիլ անել ձևամոլության ամեն տեսակի դրսևորումները դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքի բովանդակության ու մեթոդների մեջ և դպրոցի կյանքում սովորողների գիտելիքների գնահատման գործում, բ) բարձրացնել դպրոցականների կրթության և դաստիարակության որակը, ապահովել յուրաքանչյուր առարկայի դասավանդման ավելի բարձր գիտական մակարդակը, գիտելիքների հիմունքներին կայուն տիրապետումը, գ) ուժեղացնել աշակերտների պատասխանատվությունը ուսման որակի, ուսումնական և աշխատանքային կարգապահության պահպանման համար, բարձրացնել նրանց հասարակական ակտիվությունը աշակերտական կոլեկտիվներում, ինքնավարության զարգացման հիման վրա: Վաստակաշատ մանկավարժները անհրաժեշտ համարեցին ուժեղացնել ընտանիքին ցույց տրվող օգնությունը և միաժամանակ բարձրացնել նրա պատասխանատվությունը մատաղ սերնդի դաստիարակության համար: Օրինակ՝ Մարտակերտում տեղի ունեցած ուսուցչական կոնֆերանսի մասնակից, վաստակաշատ մանկավարժ (20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ) Վաղարշակ Աղաբեկյանը իր հու-

շերում բերում է իր ելույթից մի փոքրիկ հատված. «Մեր դպրոցներում աշակերտների դաստիարակության, կրթության արդյունավետությունը մեծ չափով կախված է ընտանիքի, դպրոցի, հասարակության և աշխատավորական կոլեկտիվների ջանքերի համաձայնեցվածությունից և սովորողների նկատմամբ նրանց պահանջների միասնությունից: Անհրաժեշտ է ակտիվացնել սովորողների դաստիարակության գործում ընտանիքին և դպրոցին աջակցող հանձնաժողովների (խորհուրդների) գործունեությունը, ծնողական կոմիտեների աշխատանքի ներգործությունը: Դպրոցներում պետք է վերացնել տոկոսամոլությունը, աշակերտների գնահատականների անհարկի բարձրացումը…»[342]: Դպրոցներում պահպանվող համապատասխան հաշվետվություններում ու զեկուցագրերում վկայակոչվում են մարզային և շրջանային ուսուցչական կոֆերանսներին (1948-1949թթ.) մասնակից վերոնշյալ և ուրիշ վաստակաշատ մանկավարժների անունները, որոնք հետպատերազմյան առաջին տարիներին իրենց ամբողջ ուժերն ու կարողությունները նվիրաբերեցին աճող սերնդի դաստիարակության ու կրթության գործին:

50-ական թվականներին մարզի հանրակրթական դպրոցը բուռն զարգացման նոր փուլ ապրեց: Կրթական համակարգում տեղի ունեցան լուրջ փոփոխություններ, բացվեցին նոր տիպի դպրոցներ (գիշերօթիկ), ուսումնական լաբորատորիաներ, կաբինետներ, արհեստանոցներ: Մարզի ժողովրդական կրթության բնգավառի աշխատողները լուրջ աշխատանք կատարեցին ուսման որակի բարձրացման ուղղությամբ: Ժողովրդական կրթության մարմինների կողմից նորովի առաջ քաշվեցին հանրակրթական դպրոցի ուսումնական աշխատանքի կատարելագործման ու զարգացման հարցերը: Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց նաև սովորողների արտադասարանական, արտադպրոցական աշխատանքներին: Մարզժողկրթբաժնի և շրջանային կրթության բաժինների կողմից մշակված հանրակրթական դպրոցի վերակառուցման աշխատանքի ընդհանուր պլանի համաձայն՝ դպրոցները վերակառուցված ձևով աշխատել սկսեցին 50-ական թվականներին:

Այդ տասնամյակում նորություն էր այն, որ մարզի հանրակրթական դպրոցներում ուսուցման ընթացքն առավել արդյունավետ դարձնելու և աշակերտների առաջադիմությունը բարձրացնելու գործին մեծ չափով խթանել է առաջավոր ուսուցիչների փորձի մասսայականացման ու ներդնման պրակտիկան: Վերոնշյալ և այլ բնույթի հարցեր քննարկվում էին մարզային, շրջանային ուսուցչական խորհրդակցություններում, Հայաստանի լուսավորության նախարարության նախաձեռնությամբ մանկավարժական գիտահետազոտական ինստիտուտի առաջատար մասնագետների կողմից կազմակերպված գիտապրակտիկ սեմինարներում, կոնֆերանսներում:

Այսպես, օրինակ՝ 1951թ. դեկտեմբերին Ստեփանակերտում հրավիրվեց առաջավոր ուսուցիչների խորհրդակցություն, որին մասնակցում էին Հայաստանի լուսավորության նախարարության ներկայացուցիչներ, մանկավարժական գիտահետազոտական ինստիտուտի առաջատար մասնագետներ, Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցների 250 ուսուցիչներ: Մարզժողկրթբաժնի վարիչ Գրիգոր Ուլուբաբյանը իր զեկուցման մեջ («ԼՂԻՄ-ի հանրակրթական դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավումը և ուսուցչության խնդիրները») մատնանշեց, որ մարզի դպրոցների առաջավոր ուսուցիչները իրենց քրտնաջան աշխատանքով երեխաների ուսուցման բնագավառում հասել են 100 տոկոս առաջադիմության: Նկատի ունենք Մարտակերտի շրջանի Առաջա-

ձորի դպրոցի ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ Վարդան Գրիգորյանին, Մաղավուզի դպրոցի տնօրեն Ռուբեն Անդրեասյանին, Մարաղայի դպրոցի տնօրեն Արշակ Անանյանին, Ասկերանի շրջանի Բալուջա (այժմ՝ Այգեստան) դպրոցի ուսմասվար Արմեն Ալուխանյանին, Հարավ գյուղի դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Հրանտ Ալահվերդյանին (նաև՝ ուսմասվար), Սարուշենի միջնակարգ դպրոցի ուսմասվար, հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Սերգեյ Ավետիսյանին, Հադրութի շրջանի Ազոխի դպրոցի ուսմասվար Արմիկ Ասրյանին, Մամեդաձորի դպրոցի տնօրեն Արտաշես Ավագյանին, Թաղուտ գյուղի դպրոցի տնօրեն Միքայել Ավագյանին, Մարտունու շրջանի Կոլխոզաշենի դպրոցի տարրական դասարանի ուսուցիչ Աստղիկ Բաբայանին, Ճարտարի, Ղուզե Կալերի յոթնամյա դպրոցի ուսուցիչ Եվգենիա Բաբալյանին, Սոս գյուղի դպրոցի ռուսաց լեզվի ուսուցիչ Եսայ Եսայանին, Մարտունու միջնակարգ դպրոցի ֆիզիկայի ուսուցիչ, ուսմասվար Սամսոն Հակոբյանին, Շուշի քաղաքի դպրոցի ռազմագիտության ուսուցիչ Առաքել Աղաբեկյանին, հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Ալեքսանդր Հախումյանին, Ստեփանակերտ քաղաքի դպրոցներում ճանաչված ուսուցիչներ Պավել Անդրյանին, Սերգեյ Արզումանյանին, Գուրգեն Աղասարյանին և շատ ուրիշների[343]: Մարզժողկրթբաժվարը միաժամանակ մատնանշեց, որ հանրակրթական դպրոցներում ուսման գործընթացն արդյունավետ դարձնելու և աշակերտների առաջադիմությունը բարձրացնելու գործին մեծ չափով խթանել է առաջավոր դպրոցների ուսուցիչների փորձի մասսայականացման ու ներդրման պրակտիկան: Այդ ուղղությամբ զգալի առաջընթաց ունեցան Մարտակերտի շրջկենտրոնի թիվ 1, Կուսապատի, Մեծ շենի, Հաթերքի, Հադրութի շրջանի Մեծ Թաղլարի և Հին Թաղլարի, Տումու, Ազոխի, Բանազուրի, Մարտունու շրջանի Գյունե Ճարտարի, Գիշու, Ղզղալայի (Բերդաձոր), Հաղորտու, Մաճկալաշենի, Շուշի քաղաքի հայկական թիվ 2, Ասկերանի շրջանի Սարուշենի, Բալուջայի և մի շարք յոթնամյա ու միջնակարգ դպրոցներ: Մարզժողկրթբաժվարը իր ելույթում նաև շեշտում է, որ նշված և մի շարք այլ դպրոցներում առաջավոր փորձի փոխանակումը կատարվել է ինչպես մանկավարժական ընթերցումների, մամուլի, այնպես էլ ուսուցիչների փոխադարձ դասալսումների, բաց դասերի կազմակերպման և այլ միջոցներով: Ս.Հայրապետյանի զեկուցման մեջ բերված բազմաթիվ օրինակներից վկայակոչենք երեքը: 1951-52 ուստարվա դեկտեմբերին ժողկրթբաժնի կոլեգիան քննության առավ Մարտակերտի շրջանի Հաթերքի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Վաղարշակ Աղաբեկյանի (տնօրեն), Մարտունու շրջանի Աշանի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Վարդան Բալայանի, Հադրութի շրջանի Տումու միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ Սերգեյ Հակոբյանի (տնօրեն) փորձը՝ բարձր առաջադիմության հասնելու կապակցությամբ և որոշեց այն մասսայականացնել մարզի բոլոր հայկական դպրոցներում:

ԼՂԻՄ-ի առաջավոր ուսուցիչների խորհրդակցությունում[344] ելույթ ունեցած մոտ մեկ տասնյակից ավել ուսուցիչներ, Հայաստանի լուսավորության նախարարության ներկայացուցիչներ, ինչպես նաև մարզային կուսակցական մարմինների ներկայացուցիչներ հավանություն տվեցին մարզժողկրթբաժվարի զեկուցմանը և միաժամանակ իրենց ելույթներում (Վաղարշակ Աղաբեկյան, Սուրեն Գասպարյան (Մարտակերտ), Գրիգոր Ուլուբաբյան, Սամսոն Ավետիսյան (Մարտունի), Գրիգոր Ավագյան, Սուրեն Բաղդասարյան (Հադրութ), Ավետիս Ավետիսյան, Ալեքսանդր Հակոբյան (Ասկերան), Խաչիկ Հարությունյան, Սարգիս Աբրահամյան (Ստեփանակերտ) և ուրիշներ մատնանշեցին, որ վերջին չորս տարիներին (1946-1950թթ.)

մարզի դպրոցներում ուսման որակը բարձրացնելու նպատակով շրջժողկրթբաժինների վարիչները, դպրոցական տեսուչները լուրջ քայլեր արեցին ուսուցիչներին մեթոդական մանկավարժական օգնություն ցույց տալու, մարզի առաջավոր ուսուցիչների աշխատանքային փորձը մասսայականացնելու և ընդհանրացնելու ուղղությամբ:

Արխիվային փաստագրական նյութերը, ժամանակակիցների հուշերը[345] մեզ հնարավորություն տվեցին ներկայացնել մի քանի ուշագրավ ելույթների համառոտ բովանդակությունը, որը ուսանելի կլինի այսօրվա դպրոցի ուսուցիչների համար և կարող են նրանց առաջ քաշած հիմնարար դրույթներն օգտագործել պրակտիկայում:

Այսպես, օրինակ՝ Մարտունու շրջժողկրթբաժնի վարիչ (1946-1950թթ.) Գրիգոր Ուլուբաբյանը (20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ) իր ելույթում («Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրումը, ընդհանրացումը և տարածումը մանկավարժական կոլեկտիվներում») իրավացիորեն մատնանշում է, որ դպրոցի պրակտիկայում առաջավոր ուսուցիներ են համարվում նրանք, ովքեր համարձակություն են ունենում անցնելու մանկավարժական պրակտիկայում տարածված փորձի սովորական սահմանները, ուսումնական գործընթացի ավանդական կազմակերպման մեթոդիկայի մեջ կատարել որոշակի սկզբունքային փոփոխություններ և դրանք կենսագործել իրենց փորձի մեջ, և ոչ թե նրանք, ովքեր բարեխղճորեն են աշխատում: Ամեն մի ուսուցիչ սեփական կամ ուրիշի փորձը ճիշտ գնահատելու համար պեք է ունենա դասի, փորձի մի նմուշ, մեթոդական-գիտական մի չափանիշ, որպեսզի հնարավոր լինի բաղդատել սեփական և ուրիշների փորձը: Որեմն, նախ պետք է իմանալ այն հասկացությունները, որոնցով կարելի լինի բնութագրել նման չափանիշը: Մենք նկատի ունենք նաև տվյալ առարկայի մեթոդիկայի գիտական նորույթները: Նորարար ուսուցչի փորձը վերլուծելիս և գնահատելիս պետք է նկատի ունենալ այն, թե նա ինչ է տալիս աշակերտներին, ինչպիսի կարողություններ ու հմտություններ է զարգացնում նրանց մեջ, ինչպես է նրանց նախապատրաստում կյանքին, ապագա գործունեությանը և դաստիարակում իբրև անհատ: Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է կարողանա դասին հմտորեն կազմակերպել խոսքային փոխներգործությունը և համագործակցել իր աշակերտների հետ, այսինքն՝ հաշվի առնել նաև տվյալ աշակերտի կարծիքը քննարկվող հարցի վերաբերյալ և այլն: Շրջժողկրթբաժվարի ելույթում կոնկրետ օրինակներ են բերվում Մարտունու շրջանի Ճարտարի, Գիշու, Սոսի, Հաղորտու, Մուշկապատի, Ղավախանի, Սպիտակշենի, Մաճկալաշենի և այլ դպրոցների մանկավարժական կոլեկտիվների՝ դասը արդյունավետ կազմակերպելու ուսանելի փորձից[346]:

«Դպրոցի, ընտանիքի և հասարակության համագործակցությունը աճող սերնդի դաստիարակության գործում» թեմայով բովանդակալից ելույթ ունեցավ Մարտակերտի շրջժողկրթբաժնի վարիչ, Հայրենական պատերազմի, Կարմիր աստղի շքանշանակիր, փորձառու մանկավարժ Արշակ Անանյանը: Նա մատնանշեց, որ դպրոցականի բազմակողմանի դաստիարակության հարցում դպրոցի, ընտանիքի և հասարակության համագործակցությունը կարող է արդյունավետ լինել, եթե դաստիարակչական այս կամ այն տիպի ներգործությունը կազմակերպելիս հաշվի առնվեն ոչ միայն տարիքային և անհատական առանձնահատկությունները, այլև երեխաների ներքին պահանջմունքներն ու հետաքրքրությունները: Որքան միասնական ու համակարգված ձևով է այն տարվում ծնողների, ուսուցիչների և հասարակության տարբեր անդամների պահանջները, դիտողությունները երե-

խայի անհատական հատկանիշների վերաբերյալ, այնքան դրանք մեծ ազդեցություն են ունենում երեխայի համար՝ նրա մեջ ստեղծելով ինքնադաստիարակմամբ զբաղվելու համապատասխան ցանկություն, կամք և այլ նախադրյալներ: Եվ ընդհակառակը, երեխայի անհատական հատկանիշների վերաբերյալ դպրոցում, ընտանիքում և հասարակական վայրերում գոյություն ունեցող տարակարծությունը մեծապես խոչընդոտում է նրա ինքնաճանաչողությունը և սեփական ուժերի ճիշտ գնահատմանը՝ հաճախ դառնալով նրա սխալ վարքի ու գործունեության դրդապատճառ: Շրջժողկրթբաժվարը իր ելույթում կոնկրետ օրինակ է բերում այդ ուղղությամբ Մարտակերտի շրջանի Մեծ շենի, Թալիշի, Չայլվի, Մարաղայի, Կուսապատի, Հաթերքի, Հարութունագոմերի, Վաղուհասի, Չափարի և այլ դպրոցների մանկավարժական կոլեկտիվների, ծնողական կոմիտեների կատարած լավագույն աշխատանքների վերաբերյալ, հատկապես դպրոցի և ընտանիքի կապի ամրապնդման ուղղությամբ[347]:

Արխիվային փաստաթղթերում, ժամանակակիցների հուշերում նշվում են նաև մարզի դպրոցի պրակտիկայում ճանաչված ուսուցիչների՝ Սուրեն Գասպարյանի (Մարտակերտի թիվ 1 դպրոց), Սուրեն Միքայելյանի (Վաղուհասի միջն. դպրոց), Անդրանիկ Այվազյանի, Վազգեն Պողոսյանի (Հաթերքի միջն. դպրոց), Գրիգոր Ավագյանի (Հադրութի շրջանի Խանձաձորի միջն. դպրոց), Ավետիս Ավետիսյանի (Ասկերանի շրջանի Սարուշենի միջն.դպրոց), Գրիգոր Գրիգորյանի (Մարտունու միջն.դպրոց), Պավել Անդրյանի (Ստեփանակերտի թիվ 2 միջն. դպրոց) և շատ ուրիշների անունները: Նրանք Ստեփանակերտի առաջավոր ուսուցիչների խորհրդակցությունում ունեցած իրենց ելույթներում դիտարկել են «Դասապատրաստման իմ փորձը», «Դասվարի, դասղեկի աշխատանքի իմ փորձից», «Ուսուցչի առաջին չափանիշը աշակերտի առաջադիմությունն է», «Ուսման նկատմամբ հետաքրքրությունների դաստիարակումը որպես գիտելիքների յուրացման միջոց», «Տնային աշխատանքների դերը սովորողների ինքնուրույնության զարգացման և կայուն գիտելիքների ձեռք բերման գործում», «Ուսուցման և դաստիարակության միասնության կենսագործումը դասի յուրաքանչյուր փուլում» և այլ հարցեր:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 1954-1955 ուսումնական տարում (մարտ-ապրիլ ամիսներին), Հայաստանի լուսավորության նախարարության դպրոցների գիտահետազոտական ինստիտուտը, ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ Ստեփանակերտում և մարզի շրջաններում (Մարտակերտում, Մարտունիում, Հադրութում) կազմակերպել է տեսական և գիտապրակտիկ սեմինարներ (մանկավարժական ընթերցումներ) ու կոնֆերանսներ, որտեղ զեկուցումներով հանդես են եկել մարզի հարյուրավոր ուսուցիչներ: Արխիվային փաստաթղթերի, ժամանակակիցների հուշերի, վաստակաշատ մանկավարժների աշխատությունների (ՄիքայելԱղաջանյան «Հաթերք», Խորեն Ղազարյան «Տումի», Միքայել Բեգլարյան «Իմ սերնդի ճակատագիրը») և այլ աղբյուրների ուսումնասիրումը հնարավորություն է ընձեռել մեզ ներկայացնել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների, ուսուցչի մասնագիտական որակի բարձրացմանը և առաջավոր փորձի ընդհանրացմանը նվիրված նրանց զեկուցումների համառոտ բովանդակությունը, որը, անշուշտ, օգտակար կլինի ժամանակակից դպրոցում աշխատող սկսնակ ուսուցիչների համար:

Այսպես, օրինակ՝ մարզի ուսուցիչների առաջին գիտապրակտիկ կոնֆերանսը տեղի է ունեցել նշված ուսումնական տարում մարտի 26-28-ին, Ստեփանակերտում, որին մասնակցել են Հայաստանի լուսավորության նախարարության դպրոցների գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատողներ Լևոն Վարդու-

նին (Վարդապետյան), Աշոտ Դանիելյանը, մարզային, շրջանային կրթության բաժինների վարիչներ, դպրոցական տեսուչներ, դպրոցների տնօրեններ, Շուշիի մանկավարժական ուսումնարանի փորձառու դասախոսներ, առաջավոր ուսուցիչներ, ինչպես նաև մշակույթի բնագավառի, մարզի կուսակցական մարմինների պատասխանատու աշխատողներ[348]:

Կոնֆերանսում զեկուցումներով հանդես եկան մարզժողկրթբաժնի վարիչ Սուրեն Հայրապետյանը («Ուսումնադաստիարակչական գործընթացի որակի բարձրացումը մարզի դպրոցներում»), վաստակաշատ մանկավարժ, Շուշիի թեմական դպրոցի շրջանավարտ Լևոն Վարդունին («Առարկայական մեթոդմիավորումների աշխատանքի պլանավորումն ու արդյունավետ կազմակերպումը մարզի հայկական դպրոցներում»), Մարտակերտի շրջժողկրթբաժնի վարիչ Ա. Անանյանը («Դպրոցական տեսչության խնդիրները»), Մարտունու շրջանի Բերդաշենի (Ղզղալայի) միջնակարգ դպրոցի տնօրեն Շահեն Հայրապետյանը («Աշակերտների առաջադիմության բարձրացման և ուսման մեջ հետ մնացող աշակերտների հետ տարվող ուսուցչի աշխատանքի փորձի մեկ օրինակ»), Շուշիի մանկավարժական ուսումնարանի ուսումնական մասի վարիչ, վաստակաշատ մանկավարժ Արսեն Խաչատրյանը («Ուսուցչի աշխատանքի գնահատման օբյեկտիվության համապատասխանեցումը նրա մասնագիտական հնարավորությունների հետ»), Ասկերանի միջնակարգ դպրոցի փորձառու դասվար Եփրաքսյա Կարապետյանը («Մարզում նախադպրոցական դաստիարակության վիճակը և բարելավման հեռանկարները») և ուրիշներ: Մարզժողկրթբաժնի վարիչ Սուրեն Հայրապետյանը իր զեկուցման մեջ հանգամանորեն նշեց, որ մարզի հանրակրթական դպրոցներում բարձր հիմքի վրա են դրված սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքները: Այդ միտումով ուսուցչության շրջանում սկսվեց մեծ շարժում ուսուցման որակի բարելավման ուղղությամբ: Մանկավարժական կոլեկտիվներում (Մարտակերտի թիվ 1,2, Կուսապատի, Թալիշի, Հաթերքի, Մաղավուզի, Մարտունու շրջանի Ճարտարի, Հաղորտու, Խնուշինակի, Աշանի, Գիշու, Հադրութի շրջանի Մեծ Թաղլարի, Տումու, Ազոխի, Դոլանլարի, Շուշիի շրջանի Քարին տակի, Ստեփանակերտի շրջանի Հարավի, Շոշի, Ստեփանակերտ քաղաքի թիվ 1,2 և այլ դպրոցներ) գործարար աշխատանք ծավալվեց սովորողներին կայուն գիտելիքներով զինելու, դրանք կյանքում գործադրել կարողանալու համար: Մարզժողկրթբաժնին ներկայացրած շրջանային կրթության բաժինների վարիչների, դպրոցական տեսուչների զեկուցագրերից պարզվել է, որ դպրոցներում առանձնապես մեծ ուշադրություն է դարձվել դասագործընթացի արդյունավետ կազմակերպման, նոր նյութերը հիմնականում դասարանում յուրացնել տալու վրա: Ուսուցման որակի բարձրացման համար տարվող աշխատանքը սերտորեն զուգակցվում էր ձևամոլության ու տոկսամոլության երևույթների դեմ պայքարի հետ: Ձևամոլության արտահայտությունները դպրոցում միշտ էլ չարիք են եղել և առաջին հերթին վնասել են ուսուցման ու դաստիարակության որակին: Մարզժողկրթբաժվարի զեկուցման մեջ կարևորվում են նաև աշակերտների նկատմամբ ուսուցչի մանկավարժական ճիշտ մոտեցման, մանկավարժական ներգործության մեթոդների գործադրման, արտաուսումնական պարապմունքների արդյունավետ կազմակերպման և այլ հարցեր:

Վաստակաշատ մանկավարժ Լևոն Վարդունու զեկուցման մեջ ներկայացվում են դպրոցում առարկայական մեթոդական միավորումների աշխատանքի կազմակերպման մեթոդական ուղղությունները, մեթոդական աշխատանքային պլանի օրինակը:

Ստորև ներկայացվում է հումանիտար ցիկլի առարկաների մեթոդմիավորման աշխատանքային պլանի օրինակը:

Աղյուսակ 21

Մեթոդմիավորման աշխատանքային պլան (1954-1955 ուստարի)

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարող անձ	Ըստ. ժամկ.	Նշ.կատարում
1	Մ/մ-ն աշխատանքային պլանի քննարկում	մ/մ	7/9	կատարվել է
2	Թեմատիկ պլանների քննարկում և հաստատում(նախագահ, փոխտնօրեն)	մ/մ	17/9	_ ,, _
3	Առարկայական խմբակների ստեղծում, ծրագրերի կազմում	խմբակի ղեկավար	9	_ ,, _
4	Առարկայական դասագրքերի ապահովում	ուսուցիչ	9	_ ,, _
5	Կաբինետների համալրում անհրաժեշտ դիդակտիկ նյութերով	ուսուցիչ	ընթացքում	_ ,, _
6	Դասաբաշխում և հաստատում			_ ,, _
7	Մեթոդամանկավարժական օգնություն սկսնակ և երիտասարդ ուսուցիչներին. ա) կատարել դասալսումներ և քննարկումներ բ) տալ մեթոդական ցուցումներ դասին ուսուցման ակտիվ մեթոդների, հնարների և միջոցների կիրառման վերաբերյալ	մ/մ նախ. անդամներ	ընթացքում	_ ,, _
8	Ուսուցչի աշխատանքը պատմություն առարկայից, աշակերտների գիտելիքների յուրացման արդյունավետությունը	մ/մ նախ.	9	_ ,, _
9	Դասի ընթացքում օգտագործվող ուսուցման մեթոդների արդյունավետությունը	փոխտնօրեն	9	_ ,, _
10	Աշխատանք հետ մնացող աշակերտների հետ(վերաքննություն ունեցող աշակերտների աշխատանքի վերահսկում)	մ/մ	9-10	_ ,, _
11	Նախապատրաստել և անցկացնել փոքր օլիմպիադա		10	_ ,, _
12	Լսել զեկուցումներ և ռեֆերատներ ինչպես առարկայական ուսուցման, այնպես էլ դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ	մ/մ անդամներ	12	_ ,, _
13	Կատարել փոխադարձ դասալսումներ և քննարկումներ			_ ,, _
14	Ուսումնասիրել առարկաների դրվածքը դպրոցում և կատարել քննարկումներ. ա) քիմիա բ) պատմություն գ) հայոց պատմություն	տնօրեն մ/մ	12	_ ,, _
15	Առարկայական միջոցառումներ			_ ,, _
16	Հայ գրականության դաս ուսումնական կաբինետում			_ ,, _
17	Մեծ օլիմպիադայի կազմակերպում և անցկացում	մ/մ նախ.ուսուցիչ	12	_ ,, _
18	Ուշադրության կենտրոնում պահել 1954-1955 ուստարում գերազանց սովորողներին, հետևել նրանց առաջադիմության շարժընթացին			_ ,, _
19	Աշակերտների գիտելիքները գնահատելիս անպայմանորեն օգտվել կրթական չափորոշիչներից			_ ,, _
20	Ուշադրության կենտրոնում պահել գրավոր աշխատանքների և լաբորատոր պարապմունքների անցկացման արդյունավետությունը և այլն			_ ,, _

Լևոն Վարդունին միաժամանակ մատնանշում է, որ դպրոցներում մեթոդմիավորման համատեղ աշխատանքը նպաստում է ուսուցիչների որակավորման, ուսումնամեթոդական, մանկավարժական և մասնագիտական վարպետության բարձրացմանը, որակավորման տարակարգ չունեցող, սկսնակ և ոչ մանկավարժական կրթությամբ ուսուցիչներին նախապատրաստում է որակավորման, աշխատանք է տանում սկսնակ և երիտասարդ ուսուցիչների հետ նրանց մեթոդամանկավարժական, առարկայական պատրաստվածության և ինքնակրթության ապահովման ուղղությամբ: Լևոն Վարդունին իր զեկուցման մեջ անդրադառնում է նաև դպրոցի աշխատանքային պլանի մշակման հիմնադրույթներին և կարևորում այն դրույթը, որ դպրոցի աշխատանքային պլանում, այդ թվում՝ մեթոդական աշխատանքային պլանում, պետք է որոշել դպրոցի նպատակները, խնդիրները, մտածել, թե ուսումնական տարվա առանձին փուլերում և վերջում ինչ կրթական և դաստիարակչական հարցեր են լուծվելու, ինչ արդյունքների է ձգտում հասնել դպրոցը[349]:

Հետաքրքիր ու բովանդակալից էր նաև Մարտակերտի շրջժողկրթբաժնի վարիչ, վաստակաշատ մանկավարժ Բաղդան Պողոսյանի «Մարտակերտի շրջանի տեսչության խնդիրներ»-ի մասին զեկուցումը: Դպրոցական տեսուչները, նշված է զեկուցման մեջ, պետական վերահսկողություն են իրականացնում դպրոցների և ժողովրդական կրթության մարմինների կողմից ժողկրթության բնագավառում, մարզժողկրթության բաժնի և կուսակցության մարզկոմի որոշումների, հրամանների ու ցուցումների կատարման նկատմամբ: Տեսչական ստուգումը դպրոցներում իրականացվում է գիտականության սկզբունքների, կյանքի հետ կապի հիման վրա, ուղեկցվում է թերությունները վերացնելու և կատարումը սիստեմատիկաբար ստուգելու ուղղությամբ գործնական օգնություն ցույց տալով: Այդուհանդերձ, հասկանալի, որ տեսչի գործունեության մեջ գլխավորը անմիջական աշխատանքն է: Այդ սկզբունքներով են իրենց աշխատանքը կառուցում շրջժողկրթբաժնի տեսուչներ Հայկազ Ասատրյանը (պատմություն), Արամ Բալայանը (ռուսաց լեզու), Սամսոն Բաղունցը (տարրական դասարաններ), Սուրեն Գասպարյանը (քիմիա և բիոլոգիա), Վարդան Գրիգորյանը(մաթեմատիկա), Բագրատ Հայրապետյանը (աշխարհագրություն) և ուրիշներ: Նրանց աշխատանքային պլանը կազմվում է շրջժողկրթբաժնի ընդհանուր պլանի հիման վրա, ըստ եռամսյակների, որոշ դեպքերում՝ ըստ շաբաթների: Դրանով ապահովվում է տեսչավորման սիստեմատիկությունը և բացառվում այն սխալ պրակտիկան, երբ որոշ դպրոցներում տեսուչները տարվա ընթացքում լինում են 4-5 անգամ, իսկ մյուսներում ընդհանրապես չեն երևում 2-3 տարի: Բ.Պողոսյանը միաժամանակ նշեց, որ դպրոցական տեսչի ուշադրության կենտրոնում միաժամանակ պետք է լինեն դպրոցներում ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման, դասավանդման տեսական և գաղափարական-քաղաքական մակարդակի բարձրացման հարցերը: Հիրավի, դպրոցական տեսչի գործունեության հիմնական նպատակը ուսման ու դաստիարակության գործընթացի ստուգումն է: Յուրաքանչյուր դպրոցի աշխատանքի վրա նրա ակտիվ ազդեցությունը պետք է ուղղված լինի նոր ծրագրերի տեսչական-մանկավարժական սկզբունքների ըստ ամենայնի իրականացման նպատակներին: Հետևաբար, տեսչավորումը պետք է նպաստի ուսուցման դաստիարակչական բնույթի ուժեղացմանը, ուսուցման տեսական բովանդակության խորացմանը, աշակերտների գիտակցված ու կայուն հմտությունների և ունակությունների զարգացման, ուսումնական ողջ գործընթացի կատարելագործմանը [350]: (Դա ուսանելի օրինակ պետք է լինի նաև այսօրվա կրթա-

կան համակարգի տեսուչների համար):

Գիտապրակտիկ կոնֆերանսում վաստակաշատ մանկավարժ Շահեն Հայրապետյանը (դպրոցի տնօրեն) իր զեկուցման մեջ ներկայացրեց Բերդաշենի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվի փորձը՝ սովորողների հետ մնալը կանխելու և ուսման առաջադիմությունը բարձրացնելու ուղղությամբ: «Մեր դպրոցի առաջավոր փորձը ցույց է տալիս,- ասաց նա,- որ նորմալ ֆիզոլոգիական զարգացում ունեցող բոլոր երեխաներն էլ կարող են հաջողությամբ սովորել դպրոցում, եթե ուսուցիչը խելամտորեն է կազմակերպում աշակերտների ուսումնական գործունեությունը և մանկավարժական ճիշտ մոտեցում է դրսևորում յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ»: Ուսուցչի առաջին չափանիշը աշակերտի առաջադիմությունն է (Ղ.Աղայան): Այդ ուղղությամբ լավ փորձ է կուտակել նրա ղեկավարած մանկավարժական կոլեկտիվը, և աշակերտները հաջողությամբ են կատարում ուսումնական առաջադրանքները, աչքի ընկնում աշխատունակությամբ ու աշխատասիրությամբ: Զեկուցողը բերեց կոնկրետ օրինակներ: Դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ա.Սողոմոնյանը ամենօրյա դասին նախապատրաստվելիս նախօրոք որոշում է դասի նպատակը, հայթայթում անհրաժեշտ դիդակտիկ և տեխնիկական միջոցներ (մի մասը նա պատրաստում է աշակերտների հետ միասին), մտածում, թե ուսուցվող թեման մատչելի ու հետաքրքիր դարձնող ինչ լրացուցիչ նյութեր պետք է օգտագործել: Ուսուցչուհին դասի պլանի մեջ նշում է, թե որ հետ մնացող աշակերտի հետ ինչ աշխատանք է տանելու, ինչպիսի տնային ստուգողական աշխատանք է տալու ուսման առաջավորներին: Դասի ընթացքում ուսուցչուհին մանրամասն ստուգում է տնային հանձնարարության կատարումը, միաժամանակ պարզում նաև չկատարման պատճառները: Ուսուցչուհին դասարանում ընկերական փոխօգնության այնպիսի մթնոլորտ է ստեղծել, որ երեխաները միմյանց օգնում են թե տանը, թե դասարանում: Նոր դասանյութը բացատրելու ժամանակ որպեսզի ստուգի, թե առաջադիմող աշակերտներն ինչպես են լսում ու հասկանում իրեն, ուսուցչուհին երբեմն հարցեր է ուղղում նրանց, ում համար թեման բարդություն է ներկայացնում, և պահանջում բացատրել իր ասածը: Նա աշխատում է դասապրոցեսին ներգրավել շատ հետ մնացողների՝ դասը դարձնելով մատչելի, դյուրին և հասկանալի: Ուսման մեջ հետ մնացող աշակերտների հետ տարվող աշխատանքի ուսանելի փորձ են կուտակել դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Ա.Հայրապետյանը, քիմիբիոլոգիայի ուսուցիչ Մ.Ասրյանը, տարրական դասարանների դասվար Ս.Սողոմոնյանը և ուրիշներ: Փորձառու ուսուցիչները խնամքով նախապատրաստվում են դասերին, նախօրոք հիմնավորապես ուսումնասիրում տեքստը, պարզում բովանդակության էությունը, առանձնացնում այն հիմնական հարցերը, որոնց վրա պետք է սրել աշակերտների ուշադրությունը: Մշակում են ինքնուրույն աշխատանքի ու առաջադրանքների այնպիսի համակարգ, որ սովորողներին օգնում են ըմբռնել ուսումնական նյութը և միաժամանակ կատարելագործել հմտությունները:

Փորձառու մանկավարժ Արսեն Խաչատրյանի զեկուցման մեջ զգալի տեղ էր հատկացված ուսուցչի աշխատանքի գնահատման չափանիշներին, մասնագիտական վերավորակավորման պահանջմունքներին, ուսուցման եռամյա պլանին և ներդպրոցական գործունեության վերահսկողության բազմաբնույթ հարցերին:

Ելնելով իր պրակտիկ մանկավարժական հարուստ փորձից (երկար տարիներ եղել է Շուշիի ուսուցչական ինստիտուտի դասախոս, հայկական դպրոցների տնօրեն), Արսեն Խաչատրյանը իր զեկուցման մեջ շեշտադրում է, որ ուսուցչական կադրերի գնահատումները դպրոցական կառավարման հիմնական բաղադրամա-

սերից են, քանի որ աշխատանքի համակարգված և մշտական գնահատումը դրականորեն է անդրադառնում նրանց մասնագիտական աճի ու զարգացման վրա:

Վաստակաշատ մանկավարժը առաջարկում է, որ դպրոցներում ուսուցչի աշխատանքը գնահատվի հետևյալ մեթոդներով. ա) գնահատող զրույց (ատեստավորում), բ) դասալսում և դասի վերլուծություն, գ) անկետավորում, դ) ուսուցչի գնահատում իր գործընկերների, աշակերտների կողմից, ե) ինքնագնահատում և այլ ձևեր: Խոսելով ուսուցիչների որակավորման բարձրացման մասին, փորձառու մանկավարժի կարծիքով՝ դպրոցի տնօրենը յուրաքանչյուր ուսումնական տարում պետք է կազմի ուսուցչական կադրերի ուսուցման պլանը, նրանց զարգացման միասնական ծրագրերի շրջանակներում հաշվի առնելով ուսուցիչներից յուրաքանչյուրի մասնագիտական մակարդակի փոփոխությունը: Կոնկրետ օրինակ է բերում իր տնօրինության տարիների փորձից, որ դպրոցում ուսուցչական կադրերի որակավորումը, ուսուցումը չի դիտարկել որպես պատիժ անբավարար աշխատանքի համար, այլ այնպիսի պայմաններ է ստեղծել, որ յուրաքանչյուր ուսուցիչ գիտակցի իր մասնագիտական բացը և ցանկանա այն լրացնել: Պետք է նրանց մեջ դաստիարակել ուսման նկատմամբ դրական վերաբերմունք նոր գիտելիքների ձեռքբերման, կատարելագործման նպատակով: Տնօրենն ինքը պետք է ձգտի անընդհատ վերարակավորման և նոր գիտելիքների ձեռքբերման, դրանով իսկ օրինակ ծառայելով իր կոլեկտիվի համար[351]:

Հետաքրքիր էր նաև Ասկերանի միջնակարգ դպրոցի տարրական դասարանի փորձառու ուսուցչուհի Արաքսյա Կարապետյանի «Մարզի նախադպրոցական դաստիարակության վիճակը և բարելավման հեռանկարները» զեկուցումը: Վաստակաշատ ուսուցչուհին կոնկրետ փաստերով նշեց, որ մարզում գործում են 60-ից ավելի մանկապարտեզներ, ուր հաճախում են ավելի քան 220 երեխա և աշխատում մոտ 32 մանկավարժ[352]: Հոգատարությունը երեխաների նկատմամբ, նրանց դաստիարակության արդյունավետության բարձրացման հարցերը միշտ եղել են մանկավարժական կոլեկտիվի (նկատի ուներ Ասկերանի շրջկենտրոնի թիվ 1 մանկապարտեզը) ուշադրության կենտրոնում: Շատ կարևոր է, որ մարզի բազմաթիվ մանկապարտեզների կուտակած փորձը դառնա նախադպրոցական հիմնարկների բոլոր աշխատողների սեփականությունը և այն փոխանցվի դպրոցին, որտեղ երեխայի դաստիարակությունը պետք է շարունակվի տվյալ երեխայի և նրա ընտանիքի մասին կուտակված գիտելիքների հիման վրա: Մանկապարտեզի դաստիարակները պարտավոր են փոքրիկի նկատմամբ մանկավարժորեն հիմնավորված վերաբերմունքի, տվյալ երեխայի առանձնահատկությունները հասկանալու օրինակ ցույց տալ ծնողներին: Այդ ուղղությամբ ուսանելի փորձ ունեն Ստեփանակերտի թիվ 1,2, Շուշիի թիվ 1 (հայկական), Մարտունու, Մարտակերտի, Հադրութի մանկապարտեզների մանկավարժական կոլեկտիվները: Խոսելով մարզի մանկական նախադպրոցական հիմնարկներում դաստիարակչական աշխատանքների վիճակի մասին, Ե.Կարապետյանը մատնանշում է, որ «ամբողջությամբ վերցրած նախադպրոցական հիմնարկներն ապահովում են երեխաների ճիշտ դաստիարակության պայմանները, իրականացնում նրանց բազմակողմանի ներդաշնակ զարգացումը, ամրապնդում նրանց առողջությունը, նրանց պարտադրում դպրոցական ուսուցման»:

Այսպիսով, մեր համառոտակի շարադրածից կարելի է եզրակացնել, որ վերոնշյալ վաստակաշատ մանկավարժների զեկուցումներում առաջ քաշված հիմնարար դրույթները ուսանելի են նաև այսօրվա դպրոցի սկսնակ ուսուցիչների համար:

Գիտապրակտիկ կոնֆերանսի ավարտից հետո(մարտի 28-ին) մանկավարժական ընթերցումներ են կազմակերպվել նաև Մարտակերտի շրջկենտրոնի թիվ 1, Մարտունու թիվ 2, Հադրութի թիվ 1 դպրոցներում և Շուշիի մանկավարժական ուսումնարանում[353]: Իսկ ինչ հարցեր են քննարկվել մանկավարժական ընթերցումներում, այդ մասին իրենց հուշերում պատմում են կոնֆերանսի և մանկավարժական ընթերցումների մասնակիցները:

Օրինակ՝ Մարտակերտի թիվ 1 դպրոցում կազմակերպված մանկավարժական ընթերցումների ժամանակ Մարտակերտի շրջանային կրթության բաժնի վարիչ Բաղդան Պողոսյանը (1954-1957թթ.) իր հուշերում վկայում է, որ մանկավարժական ընթերցումներին մասնակցում էին շրջանի դպրոցների 30-ից ավելի առաջավոր ուսուցիչներ: Հետաքրքիր զեկուցումներով հանդես եկան Արշակ Առաքելյանը («Ուսուցչի մանկավարժական վարպետությունը դասին»), Արամ Գասպարյանը («Ուսուցիչ-դաստիարակի հասարակական-քաղաքական ուղղվածությունը»), Սուրեն Գասպարյանը («Ուսուցչի մանկավարժական հաղորդակցման վարպետությունը»), Վարդան Գրիգորյանի («Ինչպես եմ նախապատրաստվում օրվա դասին»), Խորեն Դանիելյանը («Ուսուցման ակտիվ մեթոդների կիրառումը մաթեմատիկայի դասերին»), Եպրաքսյա Բաբայանը («Դասվար-դաստիարակի կազմակերպական գործունեությունը») և շատ ուրիշներ: Ուշագրավ է այն, որ այդ զեկուցումներից լավագույնները տպագրվել են պարբերական մամուլում («Սովետական դպրոց», «Խորհրդային Ղարաբաղ», 1954-1956թթ.)[354]:

Մարտունու շրջժողկրթբաժնի վարիչ Սամսոն Ավետիսյանը (1952-1956թթ.) իր հուշերում հետաքրքիր փաստեր է բերում շրջանի մանկավարժական ընթերցումների արդյունքների մասին: Նա վկայում է, որ փորձառու ուսուցիչներ Կիմ Գաբրիելյանի, Եսայ Եսայանի, Ջաբել Թավադյանի, Սամսոն Հակոբյանի, Վարդան Բալայանի, Միքայել Բեգլարյանի և ուրիշների զեկուցումները հիմնականում նպատակաուղղված են եղել շրջանի դպրոցներում ուսման որակի բարձրացման, ուսուցիչ-դաստիարակին ներկայացվող պահանջների, դասվարի, դասղեկի, դաստիարակչական աշխատանքների, առարկայական մեթոդմիավորումների, ուսուցիչների առաջավոր փորձի ընդհանրացման և բազմաբնույթ այլ հարցերի քննարկմանը: Մանկավարժական ընթերցումներում դիտարկվել են նաև աշակերտական ակումբներ կազմակերպելու, սովորողների առողջության ամրապնդման, ֆիզիկական դաստիարակության արդյունավետ կազմակերպման, ուսումնական կաբինետների կահավորման, ներդպրոցական կառավարման համակարգին վերաբերող այլ հարցեր:

Հադրութի շրջժողկրթբաժնի վարիչ Կոլյա Աբրահամյանը (1954-1956թթ.) իր հուշերում վկայում է, որ շրջանի մանկավարժական ընթերցումներին (Հադրութի թիվ 1 դպրոցում) հետաքրքիր զեկուցումներով հանդես եկան Արմենակ Բաղդասարյանը («Սովորողների ուսումնական աշխատանքների արդյունավետ կազմակերպման ու որակի բարձրացման իմ փորձից»), Միքայել Գասպարյանը («Ուսուցչի մասնագիտական պատրաստվածությունը, վարպետությունը դասին»), Հայասեր Եգանյանը («Ներառարկայական և միջառարկայական կապերի ապահովումը մաթեմատիկայի և ֆիզիկայի դասերին»), Սմբատ Աբրահամյանը («Ուսուցչի ստեղծագործական աշխատանքը քիմիա-կենսաբանության դասերին»), Գեորգի Ալավերդյանը («Աշխարհագրության ուսումնական կաբինետի կահավորման և աշակերտների արտաուսումնական աշխատանքների կազմակերպման իմ փորձը») և ուրիշներ:

20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Արսեն Խաչատրյանի անձնա-

կան արխիվում[355] բավականին հետաքրքիր փաստագրական նյութեր կան գիտապրակտիկ կոնֆերանսի (որին մասնակցել է) և Շուշիի մանկավարժական ուսումնարանում կազմակերպված մանկավարժական ընթերցումների մասին: Բազմափորձ մանկավարժի հուշերում նշվում է, որ մանկավարժական ընթերցումներին մասնակցում էին Սարուշենի, Չանախչու, Սզնեքի, Ղարաղշլաղի, Խաչմաչի, Շոշի, Կարմիր գյուղի և այլ գյուղերի միջնակարգ դպրոցների փորձառու և սկսնակ ուսուցիչներ (60-65), մանկավարժական ուսումնարանի դասախոսներ, բարձր կուրսերի ուսանողներ, Շուշիի կրթության բաժնի աշխատողներ, նշված և այլ դպրոցների ծնողական կոմիտեների ներկայացուցիչներ: Հետաքրքիր զեկուցումներով հանդես եկան Սարուշենի միջնակարգ դպրոցի տնօրեն, հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Սերգեյ Ավետիսյանը («Գրական երկի լեզվի առանձնահատկությունների, պատկերավորման և արտահայտչական միջոցների վերաբերյալ գիտելիքների ուսուցումը»), Կարմիր գյուղի դպրոցի տնօրեն, պատմության ուսուցիչ Միքայել Առաքելյանը («Տնային առաջադրանքները պատմությունից և դրանց կատարումը, ստուգումն ու գնահատումը»), Շուշիի շրջանի կրթության բաժնի դպրոցական տեսուչ, մաթեմատիկայի ուսուցիչ Սուրեն Ղարախանյանը («Բարելավել դպրոցականների մաթեմատիկական պատրաստվածությունը»), Չանախչիի միջնակարգ դպրոցի ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ Վաչագան Աղաջանյանը («Ռուսաց լեզվի դասավանդման դրվածքը մեր դպրոցում»), Շուշիի մանկավարժական ուսումնարանի դասախոսներ Թեմուր Ամիջանյանը («Ճննականության դերը աշխարհագրության ուսուցման ընթացքում»), Կարո Դավթյանը(«Ուսուցումը պետք է լինի հաճելի»), Սամվել Շինականյանը («Ինչպես եմ նախապատրաստում և անցկացնում մաթեմատիկայի դասը») և ուրիշներ[356]:

Վաստակավոր մանկավարժը իր հուշերում միաժամանակ մատնանշում է, որ մանկավարժական ընթերցումներին մասնակից շրջանի դպրոցների տնօրեններն իրենց ելույթներում մատնանշեցին, որ դպրոցներում մեթոդմիավորումները որոշակի աշխուժություն են մտցրել ուսուցիչների հետ տարվող մեթոդական աշխատանքներում՝ ապահովելով դպրոցներում մեթոդմանկավարժական նորույթի պրոպագանդման, նպատակային և բաց դասերի կազմակերպման միջոցով առաջավոր փորձի ուսումնասիրման, ընդհանրացման ու տարածման ուսուցիչների ակտիվության բարձրացման, նրանց ստեղծագործական կարողությունների զարգացման ու ինքնուրույնության բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Ստեփանակերտի թիվ 2 միջնակարգ դպրոցում կազմակերպված մանկավարժական ընթերցումների մասին իր հուշերում վաստակաշատ մանկավարժ Պավել Անդրյանը գրում է, որ մանկավարժական ընթերցումների ժամանակ ուսուցիչները հնարավորություն են ստանում միմյանց հաղորդելու դասավանդման իրենց ուսանելի փորձը, քննարկում են իրենց հուզող հարցերն ու խնդիրները: Մանկավարժական ընթերցումներին մասնակցեցին Ստեփանակերտի թիվ 1, 2, Շուշիի, Ասկերանի շրջանի միջնակարգ դպրոցների տնօրենները, ուսմասվարները և լավագույն ուսուցիչները: Ստեղծագործող, եռանդուն ու գործունյա ուսուցիչների զեկուցումները նվիրված էին դպրոցականների ուսումնական աշխատանքների արդյունավետ կազմակերպման ու որակի բարձրացման, դասին ուսուցչի համակողմանի նախապատրաստման, դասվարի, դասղեկի աշխատանքի առաջավոր փորձի ընդհանրացման, սովորողների արտաուսումնական և արտադպրոցական աշխատանքների արդյունավետ կազմակերպման և այլ հիմնահարցերի: Ուշա-

գրավ էին հատկապես փորձառու մանկավարժներ Իսահակ Ալավերդյանի, Արամ Մարտիրոսյանի, Երվանդ Աթայանի (Ստեփանակերտի թիվ 1 դպրոց), Պավել Անդրյանի, Արմիկ Արամյանի, Ամերիկո Հովհաննիսյանի (Ստեփանակերտի թիվ 2 դպրոց), Սուրեն Թամրազյանի (Ստեփանակերտ քաղաքի կրթության բաժնի դպրոցական տեսուչ), Սուրեն Արզումանյանի (Չանախչու միջն. դպրոց), Գոհարիկ Զաքարյանի (Դահրավի միջն. դպրոց) զեկուցումները[357]:

Մանկավարժական պրակտիկայում ճանաչված ուսուցիչներն իրենց զեկուցումներում կարևորում են նաև մանկավարժական ներգործության միասնության նշանակությունը, այսինքն՝ սովորողների վրա մանկավարժական կոլեկտիվի նպատակասլաց ներգործությունը նպաստում է արդյունավետ դաստիարակության կարևոր գործին: Անհրաժեշտ է սովորողների նկատմամբ մանկավարժական միասնական ճիշտ մոտեցում դրսևորել թե խրախուսման և թե պատժի մեթոդների կիրառման ուղղությամբ՝ գնահատելով նրանց մարդկային արժանապատվությունը: Այդ ուղղությամբ առաջարկում են հետևյալ պահանջները՝ մանկավարժական կոլեկտիվի կազմակերպման հիմունքների միասնականություն, մանկավարժի ղեկավար դերը, անձնական օրինակը, հեղինակությունը, սովորողների և ուսուցիչների միջև փոխհարաբերությունների միաձուլվող հետաքրքրությունների ընդունակությունը, բազմազանությունը, փոխադարձ հարգանքի մթնոլորտի ստեղծումը, խիստ կարգապահությունը և անձնավորության պատասխանատվությունն իր աշխատանքի, վարքի համար և այլն: Նման սկզբունքներով են ղեկավարվում մարզի հանրակրթական դպրոցների մանկավարժական կոլեկտիվները: Անշուշտ, մանկավարժական ընթերցումներում առաջադրված մեթոդամանկավարժական դրույթներն ու ուղեցույցները ուսանելի են նաև մեր ժամանակներում մանկավարժական բուհերի, ուսումնարանների ուսանողների, սկսնակ ուսուցիչների համար:

Փաստագրական նյութերից տեղեկանում ենք, որ հանրակրթական դպրոցի վերակառուցման մասին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընդունած օրենքից («Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման, ԽՍՀՄ ժողկրթության համակարգի հետագա զարգացման մասին», դեկտեմբեր, 1958թ.) հետո ինչպես Հայաստանում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում ժողովրդական կրթության մարմինները մեծ աշխատանք ծավալեցին նոր ձևով աշխատելու համար: Անհրաժեշտ եղավ նախևառաջ քննարկման դնել նոր ուսումնական պլանների ու ծրագրերի նախագծերը: Ինչպես ուսուցիչները, այնպես էլ վաստակաշատ մանկավարժները, գիտական շատ աշխատողներ հանդես եկան մի շարք առաջարկություններով, որոնք հաշվի առնվեցին թե Հայաստանի լուսավորության նախարարությունում և թե ԼՂ մարզժողկրթբաժնի կոլեգիայի նիստում՝ ծրագրերը հաստատելու ժամանակ:

Հայաստանի լուսավորության նախարարությունը, Լեռնային Ղարաբաղի մարզժողկրթբաժինը անցկացրին մանկավարժական մի շարք խորհրդակցություններ՝ պարզաբանելու համար նոր ձևով աշխատելու խնդիրները: Խորհրդակցություններ անց կացվեցին նաև շրջաններում ու դպրոցներում: Նոր ուսումնական ծրագրերով աշխատելու մեթոդիկային ծանոթանալու նպատակով մարզի ուսուցիչների համար դասընթացներ ու սեմինարներ կազմակերպվեցին Ստեփանակերտում, Շուշիում, Մարտակերտի, Մարտունու, Հադրութի շրջկենտրոններում:

1959-1960 ուստարում վերակառուցված ձևով աշխատել սկսեց նաև մարզի 8-ամյա, 10-11-ամյա դպրոցների մի մասը: Այդ գործընթացը շարունակվեց հաջորդ տարիներին և ավարտվեց 1962-1963 ուստարում: 60-ական թվականներին մար-

զի հանրակրթական դպրոցը թևակոխում է որոնումների ու հետագա զարգացումների նոր շրջան:

Վերակառուցման մասին վերոհիշյալ օրենքի կիրառման, դպրոցներում ուսման որակի բարձրացման, աշակերտներին տեսական ու գործնական գիտելիքներով զինելու գործում դպրոցի աշխատանքին նոր թափ հաղորդեցին Հայաստանի ուսուցիչների 2-րդ համագումարը (1960թ., դեկտեմբերի 26-28) ԼՂԻՄ-ի ուսուցիչների ընդհանուր խորհրդակցությունը (1961թ. հուվարի 20-24): Հայաստանի ուսուցիչների 2-րդ համագումարին մասնակցում էին շրջանային ու քաղաքային ուսուցչական խորհրդակցություններում ընտրված 446 պատգամավորներ[358], իսկ մարզի ընդհանուր ուսուցչական խորհրդակցությանը մասնակցում էին 252 առաջավոր ուսուցիչներ, մարզային, շրջանային կրթության բաժինների, արհմիութենական, կուսակցական մարմինների պատասխանատու աշխատողներ[359]: Որպես հյուր ընդհանուր ուսուցչական խորհրդակցությանը մասնակցում էին Հայաստանի լուսավորության աշխատողների ներկայացուցիչներ, ինչպես նաև Ադրբեջանի լուսավորության նախարարության ԼՂԻՄ դպրոցների գլխավոր տեսուչ Ա.Պետրոսյանը և ուրիշներ:

Խորհրդակցություն ծավալուն զեկուցումով հանդես եկավ մարզժողկրթբաժնի վարիչ Հակոբ Օհանջանյանը: Նա նշեց, որ մարզում իրականացվել է պարտադիր ութնամյա կրթությունը, ընդլայնվել է ութնամյա և միջնակարգ դպրոցների ցանցը: 1956-1958թթ. համամտությամբ մարզի հայկական դպրոցների թիվը հասել է 214-ի, որից տարրական՝ 47, ութնամյա՝ 58 (գործում էին նաև յոթնամյա 52 դպրոցներ մինչև 1963-64 ուստարին), միջնակարգ 10-ամյա դպրոց՝ 8, միջնակարգ 11-ամյա դպրոց՝ 44, գիշերօթիկ՝ 4, սովորող աշակերտների թիվը՝ 26965: Զեկուցման մեջ այնուհետև նշվում է յոթնամյա պարտադիր կրթությունից 8-ամյա պարտադիր կրթության անցնելու ուղղությամբ մարզում տարվող աշխատանքը: Միայն մեկ տարում (1959-60 ուստարում) բացվել են 23 նոր 8-րդ դասարաններ, իսկ 1961-1962 ուստարում՝ 31, պլանավորվում է նաև 7-րդ դասարանն ավարտած բոլոր աշակերտներին ընդգրկել 8-րդ դասարաններում: Մարզային, շրջանային կրթության բաժինները զգալի հաջողություններ են ձեռք բերել նաև երեկոյան դպրոցների ցանցի ընդլայնման ու նրանցում սովորողների ավելացման ուղղությամբ[360]:

Զեկուցման մեջ զգալի տեղ էր հատկացված աշխատանքային դաստիարակությանն ու արտադրական ուսուցմանը: Շրջանային կրթության բաժինների ներկայացրած հաշվետվությունների հիման վրա Հակոբ Օհանջանյանը բերում է փաստեր, թե ինչպես կարճ ժամանակում մարզի շատ դպրոցներ (Մարտակերտի թիվ 1,2, Վաղուհասի, Հաթերքի, Մաղավուզի, Կուսապատի, Չայլվի, Թալիշի, Մեծ շենի, Ճարտարի (Գյունե և Ղուզե Կալեր), Գիշու, Աշանի, Հաղորտու, Սոսի, Հերհերի, Կաղարծու, Մուշկապատի, Հադրութի թիվ 1, Տումու, Տողի, Ազոխի, Մեծ Թաղլարի, Էդիլլուի, Հին Թաղլարի, Մոխրենիսի, Առաքյուլի, Քարին տակի, Կիրովի (Ղարաղշլաղ), Շուշիի թիվ 1 հայկական, Ասկերանի թիվ 1, Նախիջևանիկի, Դահրավի, Նորագյուղի, Բալուջայի) որոշակի հաջողությունների են հասել աշխատանքային ու արտադրական ուսուցման բնագավառում:

Զեկուցման մեջ շոշափվեցին նաև գիտությունների հիմունքների դասավանդման խնդիրները: Ընդգծվեց, որ հանրակրթական դպրոցի գլխավոր խնդիրը եղել է, կա և մնում է գիտությունների հիմունքներով աշակերտներին զինելը: Եթե ուսուցումը ճիշտ է զուգակցվում հանրօգուտ արտադրական աշխատանքի հետ, ապա այդ զուգակցումը տեսական գիտելիքներին տալիս է ավելի գործնական բնույթ և մեծ չափով օժանդակում հանրակրթական գիտելիքների ավելի խոր, գի-

տակցված ու հաստատուն ընբռնմանը, օգնում ուսուցման մեջ սերտողականության ու ձևամոլության հաղթահարմանը:

Աշակերտներին հանրօգուտ աշխատանքներում ներգրավելը լայն հնարավորություն է ստեղծում բարձր հիմքերի վրա դնելու դաստիարակչական աշխատանքը: Աշխատանքի միջոցով աշակերտը մոտիկից ուսումնասիրում է կյանքը, մարդկանց աշխատանքային հարաբերությունները, տնտեսական նվաճումները, սիրով համակվում դեպի աշխատավոր մարդը:

Խորհրդակցությունում ելույթ ունեցած մոտ մեկ տասնյակ ուսուցիչներ, շրջժողկրթբաժինների վարիչներ, կուսակցության մարզկոմի պատասխանատու աշխատողներ, արդյունաբերության և գյուղատնտեսության բնագավառի ներկայացուցիչներ հավանություն տվեցին դպրոցի վերակառուցման վերաբերյալ Գերագույն խորհրդի ընդունած օրենքին: Դրա հետ միասին, սակայն, որոշ ուսուցիչներ ու շրջժողկրթբաժինների վարիչներ արձանագրեցին արտադրական ուսուցման առաջին տարվա թերությունները, հատկապես արտադրական ուսուցման բազայի պակասը: Նշվեց, որ շատ դպրոցներում արտադրական ուսուցումը ձևական բնույթ է կրում, որովհետև համապատասխան գործարաններում ու ֆաբրիկաներում աշակերտներին բանվորական տեղեր չեն հատկացվում: Մարզի շատ դպրոցներում ուսումնական արհեստանոցներ չկան, իսկ եղածները տակավին ապահովված չեն սարքավորումներով և հումքով:

Մարտակերտի շրջժողկրթբաժնի վարիչ Սուրեն Երիցյանը (1961-1964թթ.) առաջնային համարեց հանրակրթական ու պոլիտեխնիկական գիտելիքներով սովորողներին զինելը[361], առանց որի, ըստ նրա, չի կարող իրականանալ աշխատանքային դաստիարակությունը, ուստի հանրակրթական առարկաների ուսուցիչների խնդիրն է կատարելագործել ուսուցման մեթոդները, բարձրացնել աշակերտների ակտիվությունն ու ինքնուրույնությունը, ուսուցմանը տալ գործնական բնույթ, այն կապել կյանքի հետ: Այդ միտումով էլ շրջանի դպրոցների մանկավարժական կոլեկտիվների առջև խնդիր է դրվում ամենօրյա օգնություն ցույց տալ աշխատանքային և արտադրական ուսուցման ուսուցիչներին՝ ճիշտ և արդյունավետ կազմակերպելու սովորողների ուսուցումն ու արտադրողական աշխատանքը արհեստանոցներում, գործարաններում, ֆաբրիկաներում ու գյուղատնտեսության մեջ:

Ուսուցչական խորհրդակցության մասնակից, 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Խորեն Ղազարյանը իր հուշերում[362] պատմում է, որ շրջանային կրթության բաժինների վարիչները (Մարտակերտի՝ Սուրեն Երիցյան, Մարտունու՝ Եսայ Եսայան, Հադրութի՝ Գրիշա Մարդանյան) իրենց զեկուցումներում նաև առաջարկեցին Ստեփանակերտի թիվ 1,2 և շրջկենտրոնների միջնակարգ դպրոցներում կազմակերպել ցուցահանդեսներ, որտեղ կցուցադրվեն մարզի դպրոցների մանկավարժական կոլեկտիվների նվաճումները նախապատերազմյան (1920-1940թթ.) և հետպատերազմյան (1945-1965թթ.) տարիներին: Ի դեպ, նշենք, որ սույն գրքի համահեղինակ Գ.Հարությունյանը 1970-1971 ուստարում ուսուցիչների որակավորման ինստիտուտում (տնօրենն էր վաստակաշատ մանկավարժ, մանկ.գիտ. թեկնածու, դոցենտ Արմո Ներսիսյանը) կազամակերպված՝ ուսուցիչների վերապատրաստման դասընթացների ժամանակ (խմբի ղեկավարն էր վաստակաշատ մանկավարժ Թամարա Մարտիրոսյանը) դիտել է Ստեփանակերտի թիվ 2 դպրոցում կազմակերպված ցուցահանդեսը, որտեղ ցուցադրված էին բաց դասերի օրինակելի պլան-կոնսպեկտը, ուսուցչի առաջավոր փորձը, աշակերտների գրավոր աշխատանքները, դպրոցի արհեստանոցում աշակերտների պատ-

ռաստած դիտազննական պարագաները, լավագույն ուսուցիչների, գերազանցիկ աշակերտների նկարները, դպրոցի առարկայական մեթոդական միավորումների աշխատանքային պլանը, դասվարի, դասղեկի օրինակելի աշխատանքային պլանը, մանկավարժական կոլեկտիվի աշխատանքի գնահատման ձևերը, ուսուցիչների ուսուցման պլանը, դպրոցի զարգացման հեռանկարային պլանը, ուսուցչի օրվա դասի պլանը, դպրոցի տնօրենի շաբաթական, կիսամյակային և ուսումնական տարվա աշխատանքային պլանը և այլն[363]: Անշուշտ, սա ուսանելի է նաև այսօրվա դպրոցի մանկավարժական կոլեկտիվների համար և պետք է շարունակվեն անցյալի դպրոցի լավագույն ավանդույթները:

Ուսումնասիրություններից[364] ակնհայտ է դառնում, որ երկար ժամանակ(1966-1976թթ.) մարզում (Ստեփանակերտում) ուսուցչական ընդհանուր խորհրդակցություն չի հրավիրվել, և այս խորհրդակցությունը մեծ հետաքրքրություն և աշխուժություն առաջացրեց դպրոցական աշխատողների շրջանում: Խորհրդակցության նյութերը՝ զեկուցումները, առաջարկությունները, որոշումները և այլն, քննարկման դրվեցին կրթության բաժիններում, շրջանային խորհրդակցություններում, հայկական բոլոր դպրոցների մանկավարժական կոլեկտիվներում ու ծնողական ժողովներում: Հատկապես մեծ ուշադրության արժանացավ սովորողների ուսման որակի բարձրացման հարցը:

Մարզի հանրակրթական դպրոցի մանկավարժական կոլեկտիվները հիմնականում ճիշտ ըմբռնումով սովորողներին հանրակրթական կայուն գիտելիքներով զինելու անհրաժեշտությունը, մեծ ջանքեր էին գործադրում բարձր առաջադիմության հասնելու համար: Այդ շրջանում հատկապես մեծ թիվ էին կազմում ուսման մեջ հետ մնացող աշակերտները: 1962-1963 ուստարում նույն դասարանում մնացող աշակերտների թիվը մարզում հասնում էր 2642-ի: Մարզժողկրթբաժնի զեկուցման մեջ մատնանշվում է, որ դպրոցներում տիրող նման վիճակը մեծ անհանգստություն պիտի պատճառի մանկավարժական կոլեկտիվներին: Մարզային կթության բաժնի կողմից անցկացված խորհրդակցություններում, դպրոցների մանկավարժական կոլեկտիվների ժողովներում պարբերաբար քննարկվում էին երկտարեցիության դեմ պայքարի հարցերը:

Մարտակերտի շրջժողկրթբաժնի վարիչ Ս.Երիցյանի հուշերից, ինչպես նաև վաստակաշատ մանկավարժ Սեդրակ Խաչյանի (Վաղուհասի միջն. դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ) հետ ունեցած մեր զրույցից պարզվեց, որ 60-ական թվականներին մեր ուսուցչության ճնշող մեծամասնությունը երկտարեցիության դեմ պայքարի հիմնական միջոցը համարում էր ուսուցման մեթոդների կատարելագործումը, ուսուցչի նվիրված ու արդյունավետ աշխատանքը: Երկտարեցիության հաղթահարման այս ձևը իր էությամբ տարբերվում էր նախկինում գոյություն ունեցող տոկոսամոլության մեթոդից: Ուսուցիչներն այժմ մտածում էին նոր միջոցների մասին, ուսուցման վերակառուցման, դասավանդման մեթոդների կատարելագործման, աշակերտների ակտիվության ու ինքնուրույնության զարգացման մասին[365]:

Հարկավոր է նշել, որ այդ նույն հարցը, որով անհանգստացած էին ուսուցիչները, գտնվում էր Հայաստանի և Միության մյուս հանրապետությունների ուսուցիչների ուշադրության կենտրոնում: Եվ շատ տեղերում արդեն զգալի արդյունքների էին հասել այդ ուղղությամբ՝ ուսումնասիրելով Լիպեցկի, Ռոստովի մարզերի, Մոսկվայի և Լենինգրադի առաջավոր ուսուցիչների փորձը:

Հայաստանի լուսավորության նախարարությունը, մարզի ժողովրդական կրթության բաժինները, արհմիութենական կազմակերպությունները լայն աշխաանք

ծավալեցին առաջավոր ուսուցիչների փորձի ուսումնասիրման ու ընդհանրացման ուղղությամբ: Այդ նպատակին էր ծառայում 1965-66 թթ. հունվարի 7-8-ը Ստեփանակերտում, Մարտակերտում, Մարտունիում և Հադրութում տեղի ունեցած խորհրդակցությունները, որոնց մասնակցում էին 300-ից ավելի ուսուցիչներ, դպրոցների տնօրեններ, ժողկրթության մարմինների ղեկավար աշխատողներ, գիտնականներ, ինչպես նաև Երևանից եկած մի խումբ առաջավոր ուսուցիչներ:

Ուսուցման բնագավառում ձեռք բերված հաջողությունների և հետագա խնդիրների մասին խորհրդակցությունում հանդես եկան մարզժողկրթբաժվար Հ.Օհանջանյանը, շրջժողկրթբաժինների վարիչներ Վաղարշակ Աղաբեկյանը (Մարտակերտ), Արտաշես Փարամազյանը (Մարտունի), Արմավիր Սարգսյանը (Հադրութ): Իրենց աշխատանքային փորձի մասին հանդես եկան մանկավարժական պրակտիկայում ճանաչված ուսուցիչներ: Այսպես, օրինակ՝ Մարտակերտի շրջանի Ղազանչիի միջն. դպրոցի դասվար Եփրաքսյա Կարապետյանը (20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ) իր զեկուցման մեջ նշեց, որ ընդունելով առաջին դասարանը, ձգտում է ստեղծել առողջ մանկական կոլեկտիվ: Այդ նպատակով օգտագործում է ծնողներին, վերջիններից նույնպես ստեղծելով համերաշխ կոլեկտիվ: Ուսուցչուհին իր հուշերում գրում է. «Ուսման մեջ հաջողության հասնելու կարևոր գրավականը համարում եմ երեխաների մեջ դրական սովորությունների մշակումը՝ ժամանակին արթնանալը, լիցքային վարժություններ կատարելը, ճիշտ սնվելը, դասերին լավ նախապատրաստվելը, ուժերի ներածին չափ տնային տնտեսությանն օգնելը և այլն»: Ուսման մեջ նա մեծ տեղ էր տալիս անհատական մոտեցմանը՝ հետ մնացողներին ժամանակին օգնելն ու առաջ տանելը, աշակերտի մեջ միշտ լավ բան գտնելը և դրա վրա հենվելը, նրան ոգեշնչելն ու նոր հաջողությունների մղելը:

Վերոհիշյալ դպրոցում պահպանվող փաստաթղթերից ու ժամանակակիցների հուշերից (Ժորա Հարությունյան) տեղեկանում ենք, որ հայող լեզվի դասերին ուսուցչուհին մեծ ուշադրություն էր դարձնում ճիշտ, սահուն ու գեղեցիկ կարդալու հմտությունների մշակմանը: Ամեն կերպ զարգացնում էր երեխաների բանավոր խոսքը: Արդեն երրորդ դասարանում նրա աշակերտները կարողանում էին իրենց մտքերն ազատ արտահայտել ճիշտ գրական լեզվով: Գրավոր խոսքի զարգացմանն օգնում էին ստեղծագործական բնույթի աշխատանքները, որին մեծ տեղ էր տալիս նա:

Թվաբանությունից նրա աշակերտներն ուժեղ էին և դրան նպաստել է բանավոր արագ հաշվելու հմտության զարգացումը, որը նա սկսում էր առաջին իսկ օրվանից: Բանավոր խնդիրների և առհասարակ խնդիրների լուծմանը նա մեծ տեղ էր տալիս՝ հատուկ ուշադրություն դարձնելով կյանքից վերցրած տվյալներով ինքնուրույն խնդիրներ կազմելուն ու լուծելուն:

Նույն շրջանի Վանքի միջնակարգ դպրոցի ռուսաց լեզվի ուսուցիչ Աբգար Տեր Գրիգորյանը նշեց, որ ուսումնական ժամանակի յուրաքանչյուր րոպեն օգտագործում է ռացիոնալ և դրան վարժեցրել է նաև աշակերտներին: Դասին նախապատրաստվում է դասամիջոցին: Նոր նյութը հաղորդելիս տարբեր եղանակներով աշակերտներին հնարավորություն էր տալիս ինքնուրույն եզրակացություններ անել: Լուրջ ուշադրություն էր դարձնում նոր նյութը դասարանում ամրապնդելու վրա: Նա դասն այնպես էր կառուցում, որ միշտ ապահովում էր անցած նյութի կրկնությունը, մի բան, որ մեծապես նպաստում է գիտելիքների կայունացմանը:

Հետաքրքիր ելույթներ ունեցան նաև փորձառու ուսուցիչներ Հմայակ Առաքելյանը (աշխարհագրության ուսուցիչ), Արտաշ Ավանեսյանը (պատմություն), Արմիկ

Շահնազարյանը (պատմություն), Սայադ Հովհաննիսյանը (հայոց լեզու և գրականություն), Վլադիմիր Գրիգորյանը (մաթեմատիկա և ֆիզիկա) և ուրիշներ: Նրանք ուսման բարձր առաջադիմության հասնելու շարժման առաջամատրիկներից էին, իրենց գործունեության մեջ ստեղծագործաբար կիրառում էին մանկավարժական առաջավոր փորձը, որ կար Հայաստանի դպրոցների պրակտիկայում: Մարտունու շրջանի կրթության բաժնի վարիչ, վաստակաշատ մանկավարժ Արտաշես Փարամազայանը (1966-1974թթ.) իր հուշերում[366] պատմում է, որ շրջանի դպրոցներում (Ճարտարի, Ղուզե և Գյունե կալերի, Գիշու, Սոսի, Ղզղալայի, Բերդաձորի, Մարտունու թիվ 1,2) ուսուցիչները պատշաճ մակարդակով են կազմակերպում ուսումնական պարապմունքները, բոլոր դասերն անցնում են հետաքրքիր, աշակերտների ուսման առաջադիմություն բարձր է: Շրջանի կրթության բաժնի տեսուչները հաճախակի լինում են դպրոցներում, ոչ միայն ստուգումներ են անցկացնում, այլև կազմակերպում են բաց և փոխադարձ դասալսումներ, մեթոդական օգնություն ցույց տալիս սկսնակ ուսուցիչներին: Շրջժողկրթբաժնի տեսուչների զեկուցագրերից նաև տեղեկանում ենք, դպրոցներում ստեղծագործական աշխատանքով ապրող ուսուցիչների թիվը տարեցտարի ավելանում է, և դրան մեծապես նպաստում է առաջավոր ուսուցիչների փորձի փոխանակման լայն շարժումը, ստեղծվում են առաջավոր փորձի դպրոցներ: Ի դեպ, նշենք, որ առաջավոր փորձի փոխանակման լայն շարժումը ծավալվում էր նաև մարզի մյուս շրջանների հայկական դպրոցներում:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 60-ական թվականների վերջերին Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցը թևակոխում է վերակառուցման նոր շրջան: Մարզժողկրթբաժնի վարիչ, վաստակաշատ մանկավարժ Սարգիս Արամյանի գործունեության տարիներին (1967-1986թթ.) իրականացվում են բովանդակային փոփոխություններ կրթական համակարգում (Ս.Արամյանի բեղուն գործունեության մասին մանրամասն կնշվի 5-րդ բաժնում): Մարզժողկրթբաժվարի առաջին ձեռնարկումը եղավ այն, որ հիմք ընդունելով Հայաստանում գործող «Մանկավարժական առաջավոր փորձի դպրոցների կանոնադրություն»-ը, հասավ նրան, որ մարզում նույնպես ընդունվեց նմանատիպ կանոնադրությունը՝ «ԼՂԻՄ հանրակրթական դպրոցի առաջավոր փորձի ուսումնասիրման և պրակտիկայում ներդնելու մասին», որը պարտավորեցնում էր կրթության բաժինների վարիչներին (Մարտակերտի՝ Շահեն Օհանջանյանին, Մարտունու՝ Արտաշես Փարամազյանին, Հադրութի՝ Վիլեն Գրիգորյանին) դպրոցներում առաջավոր փորձը բացահայտել ըստ ուսումնական առարկաների, տարրական և բարձր դասարանների ուսուցիչների, ինչպես նաև նախադպրոցական աշխատանքների համար առանձին-առանձին:

Փաստագրական նյութերի[367] և ժամանակակիցների հուշերի ուսումնասիրումը ցույց է տվել, որ 70-ական թվականներին մարզում առաջավոր փորձի դպրոց են ղեկավարել Իվան Աթայանը (Ասկերանի շրջանի Ավետարանոցի միջնակարգ դպրոցի տնօրեն, ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ), Ներսես Աբրահամյանը (Հադրութի շրջանի Տումու միջնակարգ դպրոցի տնօրեն, հայոց լեզվի և գրականության ուսուցիչ), Սեդրակ Օհանջանյանը (Մարտակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցի տնօրեն, մաթեմատիկայի ուսուցիչ), Լևոն Հարությունյանը (Մարտունի շրջանի Աշանի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ), Ելենա Աղաջանյանը (Ստեփանակերտի թիվ 2 միջնակարգ դպրոցի քիմիայի և կենսաբանության ուսուցիչ) և շատ ուրիշներ: Մարտակերտի շրջանի Չայլվի, Թալիշի, Կուսապատի, Մարտունու թիվ 1, Ճարտարի, Մաճկալաշենի, Հաղորտու,

Հադրութի շրջանի Մեծ Թաղլարի, Ազոխի, Բանազուրի, Շուշիի թիվ 1 հայկական, Քարին տակի, Շոշի միջնակարգ դպրոցների տնօրենների հաշվետվություններում (70-ական թվականներին) նշված է, որ առաջավոր փորձ ունեցող ուսուցիչներն իրենց գործը սկսում են նրանից, թե ինչ կարևոր նշանակություն ունի ուսուցվող առարկային ըստ ամենայնի տիրապետելը[368]: Ուսուցվող գրեթե բոլոր հիմնական թեմաների վերաբերյալ փորձառու ուսուցիչներն ունեն մասնագիտական գրականություն, հարուստ ալբոմներ թեմայի վերաբերյալ, հանրագիտարաններ, ստանում և կարդում են մեթոդական ամսագրեր ու ձեռնարկներ: Դրանք բոլորը ուսուցիչները հմտորեն օգտագործում են ինչպես իրենց գիտելիքները հարստացնելու, այնպես էլ դասը հետաքրքիր դարձնելու համար: Հենց դրա մեջ է առաջին հերթին ուսուցիչը գտնում արդյունավետ ուսուցման գաղտնիքը:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, 70-ական թվականներին մարզի հայկական դպրոցներում ուսուցիչների շրջանում սկսվեց մեծ շարժում՝ ուսուցման որակի բարելավման ուղղությամբ: Մանկավարժական կոլեկտիվներում գործարար աշխատանք ծավալվեց սովորողներին կայուն գիտելիքներով զինելու, դրանք կյանքում գործադրել կարողանալու համար: Առանձնակի ուշադրություն դարձվեց դասի գործընթացի արդյունավետ կազմակերպման, նոր նյութը հիմնականում դասարանում յուրացնել տալու վրա:

Մարզի դպրոցներում ուսուցման որակի բարձրացման, գոյություն ունեցող ձևամոլության ու տոկոսամոլության երևույթների դեմ տարվող պայքարի հետ կապված, դպրոցական կյանքին վերաբերող բազմաբնույթ հարցեր պարբերաբար քննարկվում էին մարզային, շրջանային ուսուցչական խորհրդակցություններում: Այսպես, օրինակ՝ 1977թ. օգոստոսի 26-28-ին Ստեփանակերտում տեղի ունեցած ուսուցչական խորհրդակցությունում[369] (ներկա էին մարզի բոլոր շրջանների դպրոցների տնօրեններն ու առաջավոր ուսուցիչները, շրջժողկրթբաժինների վարիչները, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոսները, թոշակառու վաստակաշատ մանկավարժներ) մարզժողկրթբաժվար Ս.Արամյանը նշեց, որ մեր ժողովրդի բարգավաճմանն ու ծաղկմանը նվիրված, իրենց ուժերն ու կարողությունները նոր սերնդի դաստիարակության գործին ծառայեցնելու սկզբունքով աշխատող վարպետ ուսուցիչները մարզի դպրոցներում շատ են և նրանց օրինակով աշխատողների թիվը տարեցտարի ավելանում է: Հաջողությունները, սակայն, հեշտ չեն ձեռք բերվել և ամենուրեք չէ, որ այն եղել է: Մարզի դպրոցների մի զգալի մասում սովորողների առաջադիմության հարցը մնացել է որպես թույլ օղակ: Անբարեխիղճ ու ցածրորակ ուսուցիչներ նույնպես եղել են: Խորհրդակցությունում շրջժողկրթբաժինների վարիչներին, դպրոցների տնօրեններին հանձնարարվեց հետևողական աշխատանք տանել նման կարգի ուսուցիչների վերավորակավորման պահանջմունքները բացահայտելու և վերապատրաստման դասընթացներին նրանց ընդգրկելու ուղղությամբ: Իր ելույթում Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմո Ներսիսյանը[370] ընդհանրացնելով բուհ-դպրոց, դպրոց-ընտանիք սերտ կապի ամրապնդումը, հիմնահարցի կարևորությունը, որպես ապագա մանկավարժ մասնագետի ճիշտ ընտրության անհրաժեշտ պայման, մատնանշեց, որ իր փորձից գիտի, որ ուսուցիչների վերապատրաստումը կարող է բարելավել աշխատանքի նկատմամբ նրանց վերաբերմունքը, ստեղծել դրական միջանձնային հարաբերություններ, ամրապնդել մասնագիտության նկատմամբ նրանց սերն ու հավատը: Դպրո-

ցի տնօրենը պետք է զրուցի վերապատրաստումն ավարտած ուսուցիչների հետ, պարզի՝ բարելավվել են արդյոք նրանց մասնագիտական հմտությունները, կարողությունները, իմացական որակները, համեմատի ուսուցման արդյունքները սկզբնական խնդիրների և պլանի հետ, իր համար բացահայտի այն դրականը, որը ձեռք են բերել նրանք, և գրի առնի նրանցից յուրաքանչյուրի պատասխանները: Սակայն մանկավարժական կադրերի վերապատրաստումը (հատկապես սկսնակ ուսուցիչների) չպետք է դիտարկել որպես պատիժ անբավարար աշխատանքի համար: Նրանք պետք է գիտակցեն իրենց մասնագիտական բացը և ցանկանան այն լրացնել[371]:

Մարզային ուսուցչական խորհրդակցությունների, կոնֆերանսների, ինչպես նաև Հայաստանի ուսուցչական համագումարների (որին մասնակցում էին նաև ԼՂԻմ ուսուցչական պատգամավորները, իհարկե՝ մեծ դժվարություններով) նյութերը բավականաչափ շատ են, հատկապես 1978-1986թթ. ընդգրկող ժամանակաշրջանի նյութերը: Մեր ուսումնասիրության բնույթից ելնելով, համառոտակի ներկայացրինք հետաքրքիր ու բովանդակալից զեկուցումները, առաջարկությունները և ձեռք բերված նվաճումները: Իսկ այդ տասնամյակում մարզային, շրջանային ուսուցչական խորհրդակցություններում, կոնֆերանսներում, ինչպես նաև առաջավոր դպրոցներում կազմակերպված գիտապրակտիկ սեմինարներում, մանկավարժական ընթերցումներում պարբերաբար քննարկվում էին հետևյալ հարցերը.

1. Հանրակրթական դպրոցներում բարձրացնել կրթության և դաստիարակության որակը, ապահովել յուրաքանչյուր առարկայի դասավանդման ավելի բարձր որակական մակարդակ, գիտելիքների հիմունքներին կայուն տիրապետում:

2. Սովորողների գաղափարական, աշխատանքային ու բարոյական դաստիարակության, գեղագիտական և ֆիզիկական զարգացման բարելավում:

3. Կատարելագործել ուսումնական պլաններն ու ծրագրերը, ուսումնական դասագրքերն ու ձեռնարկները, ուսուցման մեթոդները, վերացնել սովորողների գերբեռնվածությունը, ուսումնական նյութի չափից ավելի բարդությունը:

4. Արմատապես բարելավել հանրակրթական դպրոցում աշխատանքային դաստիարակության և պրոֆեսիոնալ կողմնորոշման դրվածքը:

5. Ուժեղացնել աշակերտների պատասխանատվությունը ուսման որակի, ուսումնական և աշխատանքային կարգապահության պահպանման համար, բարձրացնել նրանց հասարակական ակտիվությունը աշակերտական կոլեկտիվներում՝ ինքնավարության զարգացման հիման վրա:

6. Բարձրացնել ուսուցչական կադրերի պարտաստման և վերապատրաստման որակը:

Վերջին խնդիրը (ուսուցչական կադրերի որակի բարձրացումը և վերապատրաստման դասընթացների կազմակերպումը) լուծելու համար մարզժողկրթբաժնի և շրջժողկրթբաժինների ձեռնարկումները լայն ծավալ են ընդունում բնութագրվող ժամանակաշրջանում: Իսկ այս հարցը մանրամասն կլուսաբանվի հաջորդ բաժնում:

4. Մանկավարժական կադրերի պարտաստումը և վերապատրաստումը (1946-1988թթ.)

Աշխատության առաջին գլխում համառոտակի ներկայացրել ենք նաև մանկավարժական կադրերի պատրաստումը և վերապատրաստումը 1920-1940թթ.: Արխիվային փաստաթղթերի, պատմամանկավարժական աղբյուրների և ժամանակակիցների հուշերի համակողմանի ուսումնասիրումը հնարավորություն է ընձեռել մեզ լուսաբանել նաև մանկավարժական կադրերի պատրաստման ու վերապատրաստման հիմնահարցը հետպատերազմյան ժամանակաշրջանում՝ 1946-1988թթ.:

Հայտնի է, որ Հայրենական մեծ պատերազմի ժամանակ դպրոցը փայլուն քննություն բռնեց: Հազարավոր հայ ուսուցիչներ և ժողովրդական կրթության մարմինների աշխատողներ սրբազան պատերազմի ելան հանուն մեր մեծ հայրենիքի: Նրանց շարքերում էին նաև Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցների հարյուրավոր ուսուցիչներ, որոնք հազարավոր ղարաբաղցի զավակների նման նույնպես, թշնամու նկատմամբ վրեժի ու ատելության զգացմունքով լցված, հանդես եկան կամավոր ռազմաճակատ մեկնելու հայրենասիրական դիմումներով: Նրանցից շատ-շատերը իրենց կյանքը զոհաբերել են մեր հայրենիքի ազատության և անկախության համար մղված ահեղ մարտերում: Իսկ Մեծ Հայրենականի հաղթական ավարտից հետո Ղարաբաղի հարյուրավոր ուսուցիչներ, մարտական շքանշաններով ու մեդալներով պարգևատրված, վերադարձան հայրենի օջախ և նոր ուժով ու եռանդով նվիրվեցին մանկավարժական աշխատանքի: Նրանք համալրեցին թիկունքում մնացած մանկավարժների, հաշմանդամ ուսուցիչների շարքերը: Մարզային և շրջանային ժողկրթբաժինները հոգատարությամբ շրջապատեցին զորացրված մանկավարժներին: Որպես կանոն, նրանք նշանակվում էին իրենց նախկին աշխատանքում, իսկ շատերն ստանձնեցին ավելի պատասխանատու պաշտոններ ոչ միայն դպրոցական բնագավառում, այլև կուսակցական մարմիններում: Հաղթանակով վերադարձած բազմաթիվ մանկավարժներ նշանակվեցին ժողկրթության բաժնի վարիչ, տեսուչ, դպրոցի տնօրեն, ուսմասվար: Եթե 1945-1946 ուստարում մարզի դպրոցներում աշխատում էին 1600 ուսուցիչներ (մի մասը՝ բուհերի, մանկավարժական ուսումնարանների 3-4-րդ կուրսերի ուսանողներ), ապա 1949-1950 ուստարում նրանց թիվը հասավ 1929-ի: Համեմատաբար բարելավվեց նաև մանկավարժական կադրերի որակական կազմը: Այսպես, օրինակ՝ եթե 1945-1946 ուստարում մարզի դպրոցներում բարձրագույն և թերի բարձրագույն կրթությամբ ուսուցիչները կազմում էին 21.5 տոկոս, ապա 1949-1950 ուստարում նրանց թիվը հասավ 36.2 տոկոսի: Մարզում սիստեմատիկ աշխատանք էր տարվում ուսուցիչների որակավորման բարձրացման ուղղությամբ[372]:

Ուսուցչական որակյալ կադրերի պատրաստումը, հասկանալի է, հիմնականում պետք է կատարվեր բուհերի միջոցով: Խաղաղ տարիներին զգալիորեն ավելացավ բուհերում սովորողների թիվը: Մարզի դպրոցների համար ուսուցիչներ էին պատրաստում Երևանի պետական համալսարանը, Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը, Բաքվի մանկավարժական ինստիտուտը և Շուշիի մանկավարժական ուսումնարանը:

Ընդամենը մեկ տասնյակում հնարավորություն ստեղծվեց դպրոցներն ապահովել որակյալ մասնագետներով, որոնց կարիքն այնքան խիստ զգում էր դպրոցը: Եթե 1945-1946 ուստարում մարզի դպրոցներում աշխատում էին բարձրագույն կրթությամբ 544 ուսուցիչներ, ապա 1947-1948 ուստարում նրանց թիվն ավելացավ մոտ երկու անգամ: Այդ նույն ժամանակամիջոցում զգալիորեն ավելացավ թերի բարձրագույն և մանկավարժական միջնակարգ կրթություն ունեցող ուսուցիչների թիվը: Եթե 1945-1946 ուստարում մարզի դպրոցներում աշխատում էին նույնիսկ միջնակարգ կրթություն չունեցող 268 ուսուցիչներ, ապա 1947-1948 ուստարում այդ թիվը հասավ 98-ի: Գնալով պակասեց ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողների թիվը:

Բերված թվերը ցույց են տալիս, թե ինչպես տարեցտարի ոչ միայն ավելացավ ուսուցչության ընդհանուր թիվը, այլև փոխվեց նրա որակական կազմը:

Ռազմաճակատից վերադարձածները, ինչպես նաև բարձրագույն դպրոցների շրջանավարտները, ժողովրդական կրթության մարմիններին հնարավորություն տվեցին պատերազմի ընթացքում դպրոցներում տեղ գտած ցածր մակարդակ ունեցող ուսուցիչներին փոխարինելու որակյալ կադրերով: Մանկավարժական կրթություն չունեցող, բայց պատերազմի տարիներին աշխատանքում իրենց արդարացրած ուսուցիչների համար մարզժողկրթբաժինը և շրջժողկրթբաժինները կազմակերպում էին ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ:

Միաժամանակ հարկ է նշել, որ պատերազմի տարներին դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ոլորտում ստեղծված ամենամեծ դժվարությունը կապված էր մանկավարժական կադրերի հետ: Ինչպես նշել ենք, պատերազմի առաջին օրերին մարզի հայկական դպրոցների ուսուցիչները մեկնեցին ռազմաճակատ, իսկ նրանց փոխարինում էին Շուշիի մանկավարժական ուսումնարանի, երկամյա մանկավարժական ինստիտուտի 2-3-րդ կուրսերի ուսանողները, նույնիսկ միջնակարգ դպրոցի բարձր դասարանների սովորողները, ինչպես նաև այդ տարիներին դպրոց վերադարձան այն մանկավարժները, ովքեր տարբեր պատճառներով աշխատում էին ժողովրդական տնտեսության այլ բնագավառներում:

Ահա թե ինչու հետպատերազմյան տարիներին ժողովրդական կրթության զարգացման զուգընթաց հետևողական աշխատանք կատարվեց մանկավարժական կադրերով դպրոցներն ապահովելու, ինչպես և սիստեմատիկաբար նրանց որակը բարձրացնելու ուղղությամբ:

1946-1947 ուսումնական տարում մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար կազմակերպվեցին վերապատրաստման դասընթացներ Ստեփանակերտում, Մարտակերտում, Մարտունիում, Հադրութում և Շուշի քաղաքում՝ ադրբեջանական դպրոցների ուսուցիչների համար: Այդ դասընթացներում դասախոսություն էին կարդում նաև մարզի ճանաչված մանկավարժներ Սարգիս Աբրահամյանը, Արամ Մարտիրոսյանը, Լևոն Բաղդասարյանը, Կարո Դավթյանը, Արսեն Խաչատրյանը, Սուրեն Հայրապետյանը, Տատյանա Ալեքսանդրյանը, Վոլոդյա Ստեփանյանը և ուրիշներ: Այդ ամենի շնորհիվ մարզի դպրոցները համալրվեցին շուրջ 250 նոր ուսուցիչներով[373]: Հայրենիքի պաշտպանության գործում (Մեծ Հայրենականի տարիներին) արժանի ծառայություն ունեցած փորձառու ուսուցիչներ Գ.Գաբրիելյանը, Խ.Հարությունյանը, Գ.Մնացականյանը, Վլ. Սարգսյա-

նը, Հ.Եգանյանը, Աշ. Միքայելյանը, Հ.Դանիելյանը, Կ.Ղալայանը, Ար.Անանյանը, Վ.Աղաբեկյանը և շատ ուրիշներ չեն խնայել իրենց ուժերը մատաղ սերնդի դաստիարակության ու կրթության գործում: Բացի այդ, նրանք զրուցում էին որակավորման դասընթացներն ավարտած երիտասարդ սկսնակ ուսուցիչների հետ և խորհուրդ տալիս սիստեմատիկաբար զբաղվել ինքնակրթությամբ:

Մարտակերտում կազմակերպված ուսուցիչների որակավորման դասընթացներին (1949թ. հունիս) մասնակից մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ Սամսոն Ալեքսանյանը իր հուշերում[374] պատմում է, որ այդ դասընթացներում դասախոսություն են կարդացել Սարգիս Աբրահամյանը, Արտեմ Ավագյանը, Վարդան Գրիգորյանը և ուրիշներ: Սարգիս Աբրահամյանի դասախոսության թեման էր «Ուսուցչի ինքնակրթությունը և մանկավարժական վարպետությունը»: Նա երիտասարդ սկսնակ ուսուցիչներին հիշեցնում է, որ ստեղծագործաբար աշխատող ուսուցչի հատկություններից մեկը ինքնակրթությունն է, գիտելիքների մեծ պաշարը նա ձեռք է բերում միայն ինքնակրթության միջոցով, իսկ ինքնակրթության նշանակությունը մեծանում է այն ուսուցիչների համար, ովքեր կոչված են ղեկավարելու սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացը, գրքի հետ կատարվող նրանց մտավոր աշխատանքը: Վաստակաշատ մանկավարժը միաժամանակ նշում է, որ ուսուցչի մասնագիտական խոր պատրաստվածությունը սերտորեն զուգակցված է նաև նրա մանկավարժական վարպետության, տակտի, ընդունակությունների, երեխաների վրա ներգործելու կարողությունների և այլ բաղադրամասերի հետ (Սարգիս Աբրահամյանի գործունեության մասին կնշվի հաջորդ բաժնում):

1948-1949 ուստարում, օգոստոսի 22-24-ը Ստեփանակերտում կայացած ընդհանուր ուսուցչական կոնֆերանսում քննարկվեց նաև մարզի դպրոցների ուսուցիչների մասնագիտական որակավորման հարցը: Մարտակերտի շրջժողկրթբաժնի վարիչ Արշակ Գաբրիելյանը իր զեկուցման մեջ նշում է, որ ուսուցչի աշխատանքի բարդությունը պահանջում է հիմնավոր նախապատրաստություն, իսկ դա իրագործվում է մանկավարժական բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ բուհում, ուսումնարաններում: Բուհը, ուսումնարանը ավարտելուց հետո նա պետք է հարստացնի իր գիտելիքների պաշարը, տիրապետի այն գիտությանը, որի վրա կառուցվում է իր կողմից դասավանդվող առարկան, ինչպես մեր դասական մանկավարժ Աղայանն է ասել՝ գիտելիքները հարստացվում են գիտելիքներով: Այո, դա ճշմարտություն է, եթե մտապահված գիտելիքներ չկան, ավելորդ է խոսել նոր գիտելիքներ հայտնագործելու մասին[375]:

Վաստակաշատ մանկավարժ, Մարտունու շրջժողկրթբաժնի վարիչ Գրիգոր Ուլուբաբյանի զեկուցումը նվիրված էր ուսուցչի մասնագիտական պատրաստվածությանն ու բազմակողմանի կրթվածությանը, հիմնախնդրի վերլուծությանը: Շրջանի դպրոցների առաջավոր ուսուցիչների (Ա.Ալեքսանյան, Եվ.Բաբայան, Գ.Գաբրիելյան, Ե.Եսայան, և ուրիշներ) պրակտիկ փորձից կոնկրետ օրինակներ բերելով, շրջժողկրթբաժնի վարիչը մատնանշում է, որ նշված և շատ այլ ուսուցիչների ղեկավարությամբ աշակերտներին դեպի գիտելիքների աշխարհ կողմնորոշումը դառնում է հասարակական պետական պահանջ, կենտրոնական հիմնախնդիր, որի լուծումը պայմանավորված է դպրոցի դերն ու ցավը գիտակցող

սկսնակ ուսուցիչների բարեխիղճ գործունեությամբ: Յուրաքանչյուր ուսումնական տարում շրջանի դպրոցների տնօրենները կազմում են ուսուցչական կադրերի ուսուցման պլանը՝ նրանց զարգացման միասնական ծրագրերի շրջանակներում՝ հաշվի առնելով նրանցից յուրաքանչյուրի մասնագիտական մակարդակի փոփոխությունը:

Հադրութի շրջժողկրթբաժնի վարիչ Գրիգոր Սաֆարյանը իր ելույթում[376] մատնանշում է, որ պատերազմից հետո, ընդամենը չորս տարում (1945-1949թթ.) հնարավորություն ստեղծվեց շրջանի դպրոցներն ապահովել որակյալ մասնագետներով, ոչ միայն բուհ ավարտած կադրերով, այլև վերապատրաստման դասընթացներն ավարտած ուսուցիչներով: Շրջանի դպրոցների 62 ուսուցիչներ ավարտել են Մարտունու թիվ 1 դպրոցում և Ստեփանակերտում կազմակերպված ուսուցիչների վերապատրաստման դասընթացները:

Մարզժողկրթբաժնի վարիչ Ս.Աբրահամյանը՝ ընդհանրացնելով ընդհանուր ուսուցչական կոնֆերանսի արդյունքները, առաջարկեց ուսուցիչների վորապատրաստման դասընթացները կազմակերպել Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտում, քաղաքի դպրոցների փորձառու ուսուցիչների մի մասին ուղարկել գյուղական դպրոցներ, հատկապես ռուսաց լեզու, մաթեմատիկա, քիմիա, կենսաբանություն առարկաների գծով: Նա առաջարկեց նաև Ստեփանակերտում կազմակերպել ֆիզկուլտուրայի, ռազմագիտության և ռուսաց լեզվի ուսուցիչների մեկամյա դասընթացներ:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ Ստեփանակերտում և շրջաններում կազմակերպվում էին տեսական ու գիտապրակտիկ սեմինարներ, կոնֆերանսներ, մանկավարժական ընթերցումներ, որտեղ զեկուցումներով հանդես էին գալիս նաև վերապատրաստման դասընթացի մասնակից ուսուցիչներից շատերը: Ընդհանրացվում էր այն ժամանակ ճանաչված մանկավարժների՝ Ա.Մարտիրոսյանի, Ս.Արամյանի, Ս.Հայրապետյանի, Խ.Հարությունյանի, Հ.Եգանյանի, Ե.Եսայանի, Մ.Բեգլարյանի, Լ.Հարությունյանի, Վ.Բալայանի, Վ.Պողոսյանի, Պ.Անդրյանի, Ե.Աղաջանյանի, Ս.Օհանջանյանի, Շ. Քամալյանի, Աբ. Տեր Գրիգորյանի, Ս.Սարգսյանի և ուրիշների առաջավոր փորձը ուսուցման գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ[377]:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում, ընդամենը մեկ տասնամյակում (1946-1956թթ.), վերոհիշյալ բոլոր ձեռնարկումների շնորհիվ ոչ միայն զգալիորեն ավելանում է ուսուցչական կադրերի քանակը, այլև բարձրանում է նրանց մասնագիտական, մեթոդամանկավարժական պատրաստվածության մակարդակը: Աստիճանաբար աճում է ավելի բարձր որակավորում ունեցող ուսուցիչների թիվը: Այսպես, օրինակ՝ մարզժողկրթբաժնի վարիչ Ս.Հայրապետյանի հաշվետվության տվյալներով՝ 1950-1956թթ. մարզի հայկական դպրոցներում աշխատում էին բարձրագույն կրթությամբ 800-ից ավելի ուսուցիչներ, ուսուցիչների որակավորման դասընթացներն ավարտած 444 ուսուցիչներ: Հաշվետվությունում միաժամանակ մատնանշվում է, որ մարզի ծայրամասային գյուղերի դպրոցները դեռևս լրիվ ապահովված չեն որակյալ մանկավարժական կադրերով: Այդ նպատակով էլ Ստեփանակերտում և շրջաններում սիստեմատիկաբար պետք է կազմակերպվեն մեկ կամ եռամսյա ուսուցչական որակավորման դասընթացներ:

Ստորև բերում ենք ուսուցչական կադրերի աճի ամբողջական պատկերը 1946-1956թթ.[378].

Աղյուսակ 22

Ուս.տարի	Դպրոցների քանակը	Ուսուցիչներ				
		Ընդամենը	Բարձրագույն կրթութ.	Թերի բարձր. կրթութ.	Միջն. մասնագիտ. կրթութ.	Թերի միջն.կրթութ.
1946-1947	202	1780	582	548	262	274
1948-1949	204	1840	722	514	346	264
1950-1951	205	1784	632	502	322	332
1952-1953	214	1866	784	452	310	320
1954-1955	203	1838	892	522	302	310
1956-1957	205	1898	862	422	304	310

Աղյուսակից բերված թվերը պերճախոս կերպով ցույց են տալիս, թե ինչպես տարեցտարի ոչ միայն ավելանում է ուսուցչության ընդհանուր թիվը, այլև փոփոխվում է նրա որակական կազմը: Հատուկ ուշադրություն է դարձվում գյուղական ուսուցչի նյութական ու կենցաղային վիճակը բարելավելու հարցերին: Շատ գյուղերում ուսուցիչների համար կառուցվում են բնակելի տներ:

Ինչպես Հայաստանի, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի լավագույն ուսուցիչներին խրախուսելու և ոգեշնչելու գործում շնորհակալ աշխատանք կատարեցին «Սովետական դպրոց» թերթը, «Սովետական մանկավարժ» ամսագիրը, ինչպես նաև «Սովետական Ղարաբաղը» և շրջանային թերթերը, որոնցում պարբերաբար հոդվածներ են տպագրվում առաջավոր ուսուցիչների փորձի, ինչպես նաև ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին մասնակից ուսուցիչների որակավորման մասին: Ահա մի օրինակ: «Սովետական դպրոց» թերթը իր 1954թ. թիվ 1-ում, նոր տարվա առթիվ, զետեղել է հայ մեծանուն գրող Դ. Դեմիրճյանի ոգեշնչող խոսքը՝ ուղղված հայ ուսուցչությանը.«Մարդն է ուսուցչի գործի առարկան: Ահա սա է, որ լցնում է ուսուցչի աշխատանքը մեծ բովանդակությամբ… Արդյոք չի՞ զգացվում, որ ուսուցչի գործի մեջ կա մի շատ գեղեցիկ և կարևոր բան՝ միշտ նոր, միշտ թարմ, միշտ խանդավառող: Լինելով «Ստեղծագործարան», դպրոցը պահանջում է, որպեսզի ուսուցիչը ստեղծագործի: Եթե պոետից պահանջվում է, որ իր պոեմը հյուսելիս նա լինի իր կոչման բարձրության վրա, տա իմաստալի, գեղեցիկ, կենսահաստատ, մարտնչող երկ, ապա ուսուցիչը ևս պիտի զգա իրեն նույնպիսի վեհ գործի պարտավորության առաջ»[379]:

Այս բոլորն, անշուշտ, ուսուցչությանը ոգեշնչեցին աճող սերնդի կրթության ու դաստիարակության գործում հասնելու նորանոր հաջողությունների: Մարզային, շրջանային թերթերում, ամսագրերում դրվատանքի շատ խոսքեր են ասվում ուսուցիչների, այդ համեստ ու դժվարին մասնագիտության տեր մարդկանց հասցեին թե մեծ մտածողների և թե հասարակ մարդկանց կողմից: Երախտապարտ աշակերտը միշտ էլ հիշում է իր առաջին ուսուցչին, և եթե ստեղծագործելու շնորհք ունի, առաջին թոթովանքը ձոնում է ուսուցչին, այն մարդուն, ով մեսրոպյան գրի միջոցով իրեն հնարավորություն է տվել հաղորդակից դառնալ հայ մշակույթի անսպառ գանձերին: Այդ ուրույն մասնագիտության տեր մարդիկ դպրոցի զար-

գացման հետ իրենք նույնպես վերելք են ապրել թե քաղաքականապես, թե որակապես:

Հարկ է նշել, որ մարզի դպրոցներում աշխատող միջնակարգ մասնագիտական կրթությամբ ուսուցիչների համար նպաստավոր պայմաններ են ստեղծվել, որպեսզի նրանք ընդգրկվեն հեռակա ուսուցման մեջ, իսկ տարրական, յոթնամյա (1949-1958թթ.), ութնամյա (1958թ.-ից) դպրոցներում աշխատող միջնակարգ կրթությամբ ուսուցիչներին (ինչպես ցույց էր տրված աղյուսակում) ընդգրկում էին ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին: Բացի այդ, գոյություն ուներ ուսուցչի որակի բարձրացման նաև մի այլ կայուն համակարգ՝ ուսուցիչների կատարելագործման ինստիտուտը:

Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտը (ՈւԿՄԻ) բացվել է 1963թ. սեպտեմբերին, Ստեփանակերտում: Իր գործունեության տարիներին (1963-1988թթ.) ինստիտուտը կայուն պլանով վերապատրաստման դասընթացներ էր կազմակերպում բոլոր մասնագիտությունների գծով: ԼՂ մարզժողկրթբաժնի սահմանած կարգի համաձայն՝ բարձրագույն կրթություն ունեցող ուսուցիչները վերապատրաստման դասընթացներով անցնում են հինգ տարին մեկ անգամ, իսկ միջնակարգ կրթություն ունեցողները՝ երեք տարին մեկ: Վերապատրաստման դասընթացները զգալի օգնություն ցույց տվին մարզի ուսուցիչներին՝ առարկայական ու մանկավարժական նոր գիտելիքներ ձեռք բերելու, գիտության նվաճումներին ծանոթանալու ուղղությամբ:

Մարզժողկրթբաժինը մտահոգվել էր նաև Ադրբեջանի տարածքում գտնվող (Շահումյանի, Շամախու, Կիրովաբադի, Խանլարի, Նուխիի և այլ շրջանների) հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման հարցով: Մարզժողկրթբաժնի վարիչ Հակոբ Օհանջանյանի հաշվետվություններում[380](1963-1966թթ.) հիշատակվում է, որ ամեն տարի հուլիս-օգոստոս ամիսներին ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտում 4-5 շաբաթով կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ նաև Ադրբեջանի տարածքում գործող հայկական դպրոցների ուսուցիչների համար: Օրինակ՝ նշված ինստիտուտի առաջին տնօրեն Վլադիմիր Գրիգորյանը (1963-1941թթ. ղեկավարել է ՈւԿՄԻ-ը) 1964-1965 ուստարվա հաշվետվությունում նշում է, որ հուլիսի 14-ից մինչև օգոստոսի 20-ը վերապատրաստման դասընթացներին (հայոց լեզու և գրականություն, մաթեմատիկա և ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն, պատմություն և աշխարհագրություն մասնագիտությամբ և տարրական դասարանների ուսուցիչներ) մասնակցել են 136 ուսուցիչներ, որոնցից 48-ը մարզժողկրթբաժնի հրավերով նշված շրջանների դպրոցներից եկած ուսուցիչներն էին: Դասընթացներում հանդես են գալիս Հայաստանից հրավիրված անվանի գիտնականներ, մանկավարժներ (Ս.Աբրահամյան, Լ.վարդունի, Ա.Առաքելյան, Ա.Հովհաննիսյան, Հ.Քարամյան, ինչպես նաև մարզի ճանաչված մանկավարժներ Ա.Հովհաննիսյանը, Ս.Ղուկասյանը, Ա.Ներսիսյանը, Ս.Օհանջանյանը, Շ.Մարտիրոսյանը, Թ.Մարտիրոսյանը, Ս.Թամրազյանը և շատ ուրիշներ): Առավել մանրամասն քննարկվում են մայրենի լեզվի և գրականության ուսուցման, ինչպես նաև մանկավարժական-մեթոդական բնույթի շատ հարցեր: Վ.Գրիգորյանը միաժամանակ մատնանշում է, որ տեսական պարապմունքներից բացի, հրավիրված ուսուցիչների համար կազմակերպվում էին էքսկուրսիաներ ու այցելություններ՝ ծանոթանալու մարզի ժողովրդա-

կան տնտեսության նվաճումներին, մշակութային օջախներին, պատմական հուշարձաններին (Գանձասար, Դադիվանք, Ամարաս, Գտչավանք) և հայության կյանքին ու աշխատանքին: Թե որչափ օգտակար է Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում վերապատրաստման գալը, նշում են իրենք՝ Նուխի գավառից, Շահումյանի շրջանից եկած ուսուցիչները: Ահա նրանցից մեկի՝ Շամախու շրջանի Մադրասա գյուղի միջն. դպրոցի ուսուցիչ Ա.Ավետիսյանի կարծիքը վերապատրաստման դասընթացների մասին. «Պետք է խոստովանեմ նաև, որ առավել մեծ չափով զգացի պատասխանատվությունս գործիս հանդեպ: Մենք՝ հայրենի բնաշխարհից (Հայաստանից, Արցախից) հեռու ուսուցիչներս, պետք է նվիրումով լծվենք մատաղ սերնդի կրթության, դաստիարակության գործին, նրանց մեջ սեր դաստիարակենք դեպի հայ մշակույթը, հայրենակերտման վսեմ գործին, հայ պահելով հայ մանուկը, նրա հոգին կապելով հայոց աշխարհի հետ»[381]: Մարզժողկրթբաժնի հանձնարարությամբ նրանց օգնում են ամեն ինչով՝ ուսումնական ծրագրերով, դասագրքերով (Հայաստանից ստացված մայրենի լեզվի, գրականության), լաբորատոր սարքավորումներով, գրենական պիտույքներով:

Ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտը բեղուն գործունեություն ծավալեց երախտաշատ մանկավարժ Արմո Ներսիսյանի տնօրինության շրջանում՝ 1971-1974թթ. (Ա.Ներսիսյանի գործունեություն մասին կնշվի հաջորդ բաժնում): Այդ տարիներին ինստիտուտում կազամերպվել են 17 մասնագիտական կաբինետներ, որտեղ անց են կացվել վերապատրաստման դասընթացներ: Ա.Ներսիսյանի անձնական արխիվային փաստաթղթերից (զեկուցագրեր, հաշվետվություններ) տեղեկանում ենք, որ ամեն տարի կատարելագործման ինստիտուտի դասընթացներով անցնում են 20-ից ավելի ուսուցիչներ, այդ թվում Ադրբեջանի տարածքում գործող հայկական դպրոցներից: Վերապատրաստման դասընթացներն ավարտած ուսուցիչները գրում են ռեֆերատներ և ըստ մասնագիտությունների հանձնում ստուգարք: Որպես 1971-1972 ուստարվա վերապատրաստման դասընթացների մասնակից (գրքի համահեղինակ Գ.Հարությունյան), ներկայացնենք տարրական դասարանների ուսուցիչներին հանձնարարված ռեֆերատների օրինակելի թեմատիկան[382].

1. Ուսուցչի մասնագիտական պատրաստվածությունը դասին:
2. Մանկավարժության դասականները ուսուցչի մասին:
3. Ուսուցիչ-դաստիարակին ներկայացվող ժամանակակից պահանջները:
4. Ուսուցիչ-դաստիարակի հասարակական-քաղաքական ուղղվածությունը:
5. Ուսուցչի մանկավարժական վարպետությունը դասին:
6. Ուսուցչի աշխատանքը ծնողների հետ:
7. Ուսուցչի անձնական օրինակը և մանկավարժական խոսքի կուլտուրան (մշակույթը):
8. Մանկավարժական հեղինակության դերն ու նշանակությունը ուսուցիչ դաստիարակի աշխատանքում:
9. Ուսուցիչ-դաստիարակի հեղինակության պահպանման միջոցները և այլն:

Վերապատրաստման դասընթացներին մասնակից ուսուցիչների գիտական զեկուցումները գնահատելիս Ա.Ներսիսյանը, ելնելով իր մանկավարժական պրակտիկ փորձից, մատնանշում է, որ ուսուցչի մասնագիտական պատրաստվածությունն ու բազմակողմանի կրթվածությունը նախապայմաններ են ստեղծում

դասի որակի բարձրացման համար, իսկ այդ ուղղությամբ զգալի աշխատանք պետք է տարվի դպրոցներում:

Ուշագրավ է մատնանշել նաև մարզի հանրակրթական դպրոցների տնօրենների վերապատրաստման դասընթացներում Ա.Ներսիսյանի կարդացած դասախոսության մի հատված. «Տնօրենները կոչված են ոչ միայն վերահսկելու դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքները, այլև ստուգելու ուսուցիչների մասնագիտական աճը, բացահայտելու որակավորման կարիք ունեցող մասնագետների պահանջմունքները հետևյալ գործոններով. ա) իր աշխատանքի նկատմամբ ուսուցչի ունեցած անբավարարվածությամբ, որն արտահայտվում է շրջանավարտների գիտելիքների ցածր մակարդակով, նախաձեռնության բացակայությամբ, հարցերի անբավարար լուծմամբ կամ ընդհանուր անտեղյակությամբ, բ) նոր, անծանոթ վերլուծությունների նկատմամբ ունեցած պահանջմունքով և դրանց ներդրման ցանկությամբ, գ) ուսուցիչների աշխատանքի թույլ և ուժեղ կողմերի վերլուծությամբ և այլն: Դպրոցի տնօրենը ուսուցիչների վերաորակավորումը չպետք է դիտարկի որպես պատիժ անբավարար աշխատանքի համար, այլ պետք է այնպիսի պայմաններ ստեղծել, որ յուրաքանչյուր ուսուցիչ գիտակցի իր մասնագիտական բացը և ցանկանա այն լրացնել: Յուրաքանչյուր ուսումնական տարում դպրոցի տնօրենը պետք է կազմի մանկավարժական կոլեկտիվի վերապատրաստման և ուսուցման եռամյա պլան՝ նրանց զարգացման միասնական ծրագրերի շրջանակներում հաշվի առնելով նրանցից յուրաքանչյուրի մասնագիտական մակարդակի փոփոխությունը»:

Վաստակաշատ մանկավարժ-գիտնականի անձնական փաստաթղթերում ուսումնասիրել ենք նաև դպրոցի ուսումնական աշխատանքների կազմակերպչի (ուսմասվարի), տնօրենի, դաստիարակի, դասարանի ղեկավարի, մեթոդական մաիվորման հանձնաժողովների գործունեության, աշխատանքային պլանները, ինչպես նաև պատշաճ մակարդակով կազմված՝ դպրոցի զարգացման հեռանկարային պլանը և ուշագրավ այլ նյութեր (այդ ամենը կներկայացվի հաջորդ բաժնում՝ Ա.Ներսիսյանի պրակտիկ, գիտամանկավարժական գործունեությունը բնութագրելիս):

Ինչպես ցույց են տալիս քննարկվող հիմնահարցի վերաբերյալ աշխատությունների, փաստագրական նյութերի, պարբերական մամուլում տպագրված հոդվածների և այլ աղբյուրների համակողմանի ուսումնասիրությունները, վերոնշյալ ժամանակահատվածում (1963-1973թթ.) և հետագա տարիներին (1974-1988թթ.) ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտը ղեկավարել են Սոկրատ Իսրայելյանը, Վազգեն Սարգսյանը, Հենրիկ Գրիգորյանը, Բահատուր Դավթյանը և ուրիշներ: Մարզային, շրջանային կրթության բաժինների ղեկավարները, դպրոցների փորձառու տնօրենները հսկայական աշխատանք կատարեցին հայկական դպրոցների, այդ թվում Ադրբեջանում գործող հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման դասընթացները հնարավորինս պատշաճ մակարդակով կազմակերպելու ուղղությամբ: Սակայն հարկ է նշել, որ վերոնշյալ ժամանակաշրջանում տեղի ունեցած սոցիալ-քաղաքական իրադարձությունները, Հայաստանի և Ղարաբաղի շրջափակումը, սոցիալ-քաղաքական ոլորտում ստեղծված դժվարությունները երբեմն խոչընդոտներ էին ստեղծում նաև ոլորտի զարգացման, ինչպես նաև մանկավարժական կադրերի վերաորա-

կավորման, վերապատրաստման (հատկապես Ադրբեջանի տարածքում գործող հայկական դպրոցների ուսուցիչների) դասընթացները պատշաճ մակարդակով կազմակերպելու համար: Մարզժողկրթբաժինը դեռևս չուներ մանկավարժական կադրերի վերապատրաստման ու մասնագիտական կատարելագործման օրինակելի մշակված հայեցակարգ: Իսկ որակավորման դասընթացների նպատակը ուսուցչական կադրերի մասնագիտական վարպետության կատարելագործումն է, ժամանակակից ուսուցման նոր տեխնոլոգիաներով վերազինումը, նրանց մանկավարժական գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացումը: Բավական դժվար էր ընթանում մարզի ուսուցիչների վերապատրաստման դասընթացը: Դա պայմանավորված էր նրանով, որ ուսուցիչը ոչ միայն պետք է լինի համապատասխան գիտելիքներ կրողը, տիրապետի դասագործընթացի կազմակերպման մեթոդներին, այլև հանդիսանա ժողովրդավարական հասարակությանը համապատասխան անձնավորում՝ բնորոշ վարվելակերպով ու աշխարհայացքով, մարդկանց նկատմամբ ունեցած վերաբերմունքով, հասարակական կյանքի կատարելագործման գործընթացներին ակտիվ մասնակցությամբ (իսկ դա այն ժամանակ շատ դժվար էր): Խնդիրը ոչ թե այդպիսի ուսուցիչների հայտնաբերումն է, այլ ուսուցիչներին այդպիսին դարձնելը: Հետևաբար, հենց ուսուցիչների վերապատրաստման դասընթացներն էլ պետք է լինի փորձարկման և վարժեցման այն դաշտը, որտեղ ուսուցիչը կարող է նպատակաուղղված իրագործել ինքնավերլուծության, ինքնաճանաչման և ինքնավերափոխման խնդիրները:

Ինչպես ցույց են տալիս այդ ուղղությամբ մեր կատարած ուսումնասիրությունները, նշված ժամանակահատվածում կրթության զարգացման ծրագրի բացակայության պայմաններում կադրային քաղաքականությունը տարերային բնույթ էր կրում: Մանկավարժական բուհերն աշխատում էին իներցիայով՝ մանկավարժական պրակտիկայի պրոբլեմներից կտրված (նկատի ունենք Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտը և Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը): Ատեստացիան ընդգրկում էր միայն ուսուցչական խավը, իսկ մանկավարժական կադրերի վերապատրաստումն ու կատարելագործումը սահմանափակվում էին զուտ առարկայական վերապատրաստման դասընթացներով: Գրեթե չէին անցկացվում ընդհանուր մանկավարժական և աշխարհայացքային հարցեր շոշափող հավաքներ ու դասընթացներ, պրոբլեմային ու հայեցակարգային մշակումների սեմինարներ:

Լեռնային Ղարաբաղի կրթական համակարգի զարգացման միտումների ուսումնասիրությունը նաև ցույց է տվել, որ 80-ական թվականներին, մինչև Արցախյան համազգային շարժումը, մարզի հանրակրթության ոլորտում կատարվեցին որոշ բարեփոխումներ՝ «Հանրակրթական և պրոֆեսիոնալ դպրոցի ռեֆորմի (1984թ. ապրիլի 10)» հիմնական պահանջներին համապատասխան: Ըստ այդմ էլ մարզային, շրջանային կրթության բաժինների վարիչները դպրոցների տնօրեններից պահանջում էին.

Առաջին փուլում պարզել, թե ուսուցիչներից ով է արդեն վերապատրաստվել, վկայագրվել կամ մասնագիտական կարգ ստացել, ինչ ծրագրով և որտեղ: Հանրակրթական դպրոցում կա՞ն արդյոք մեթոդիստներ, որ կարող են սկսնակ ուսուցիչների համար մենթորներ լինել, վկայագրված պատրաստողներ, որոնք կարող են սեմինարներ վարել: Դպրոցում մասնագիտական զարգացման ի՞նչ համա-

կարգ, ձևեր կամ մեթոդներ են գործում, առարկայական մասնախմբեր, մեթոդմիավորումներ, պարբերական սեմինարներ, փոխադարձ դասալսումներ և այլն: Ի՞նչ ռեսուրսներ, նյութական միջոցներ, ֆոնդեր կարող է տրամադրել կամ ձեռք բերել դպրոցը: Ինչպե՞ս են դրանք արվում դպրոցներում:

Երկրորդ փուլում պարզել, թե ինչից սկսել ելակետը. ուսուցիչների կարիքները, ի՞նչ գիտելիքի, տեղեկատվության, վարձատրության կամ մեթոդական օգնության կարիք կա: Ի՞նչ պետք է սովորեցնել և ինչպե՞ս, ի՞նչ արդյունքների պետք է հասնել: Որոշել գնահատման ձևն ու չափանիշները:

Երրորդ փուլում պարզել, թե ովքեր պետք է ընդգրկվեն վերապատրաստման ծրագրում: Ի՞նչ և ինչքա՞ն միջոցներ են անհրաժեշտ դրա համար և որտեղի՞ց հայթայթել դրանք:

Չորրորդ փուլում խրախուսել վերապատրաստման դասընթացներում վկայագիր ստացած ուսուցիչներին, նրանց աշխատանքի գնահատման օբյեկտիվության համապատասխանումը մասնագիտական հնարավորություններին, նկատի ունենալով, որ պարգևատրությունների բաժանման արդարությունը կարևոր պայմաններ են ուսուցչի աշխատանքի արդյունավետության բարձրացման համար:

Մեր հետազոտության բնույթից ելնելով՝ առաջարկում ենք այսօրվա դպրոցի ուսուցիչների որակավորման բարձրացման «հասցեագրվածության» սկզբունքը: Ըստ այդ պահանջի՝ նախկինում անգամ արդյունավետ գործած «պետպատվերկադրերի պատրաստում» սկզբունքը փոխարինել կրթական կարիքներ-կրթական ծառայություններ համակարգի «հասցեագրվածության» սկզբունքով, որը ներառում է ուսումնամեթոդական աշխատանքի կազմակերպումը, առարկայական մեթոդմիավորումների գործունեությունը, նորարարական փորձարարական աշխատանքների անցկացումը: Մեր կարծիքով, սրա հիման վրա անհրաժեշտ է ստեղծել նշված սկզբունքի իրագործման մեխանիզմ՝ հետևյալ կառուցվածքով.

• մանկավարժների կարիքների ու պահանջմունքների ուսումնասիրման նպատակի սահմանում,

• ուսուցիչների մանկավարժական գործունեության դիագնոստիկայի (ախտորոշման) առարկայի և օբյեկտի ձևերի և մեթոդների սահմանում, «ախտորոշիչ» հետազոտություններ կատարող օբյեկտի որոշում,

• մանկավարժական գործունեության արդյունավետության վերահսկման հնարավոր օպտիմալ ձևերի ընտրություն և այլն:

Առաջարկում ենք նաև այսօրվա դպրոցում ատեստավորվող ուսուցչի տարիֆաորակավորման բնութագրի չափորոշիչները: Նկատի ունենալ՝

• մանկավարժական իրավիճակի վերլուծության, արդյունքների կանխատեսման և դրանց ազդեցությունների պլանավորման կարողությունները,

• սովորողների հոգեբանական առանձնահատկությունների իմացությունը և նրանց արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ միջավայրի ստեղծման և պահպանման կարողությունները,

• ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման և իրականացման կարողությունները,

• առարկայի իմացությունը և այն սովորողներին մատչելի բացատրելու կարողությունը,

• սովորողների իրական առաջադիմությունը, դրա բացահայտման և գնահատման կարողությունը,

• մասնագիտական աճը և աշխատանքային պարտաճանաչությունը,

• անձնային արժեքները և հասարակության մեջ ունեցած հեղինակությունը և այլն:

Ելնելով վերը շարադրվածից, հարկ ենք համարում նաև նշել, որ դպրոցներում մանկավարժական կադրերի ուսուցումը չպետք է դիտարկել որպես պատիժ անբավարար աշխատանքի համար: Նրանք պետք է գիտակցեն իրենց մասնագիտական բացը և ցանկանան այն լրացնել: Պետք է նրանց մեջ դաստիարակել ուսման նկատմամբ դրական վերաբերմունք՝ մանկավարժական նոր գիտելիքների ձեռք բերման, կատարելագործման նպատակով:

Այսպիսով, նշված առաջարկությունների հիմնավորումը հիմք է տալիս եզրակացնելու, որ այսօր Հայաստանում և Արցախում կրթական քաղաքականության գլխավոր խնդիրը կրթության որակի ապահովումն է նրա արդյունավետության բարձրացման հիման վրա՝ պահպանելով գիտելիքների մատչելիությունը, հիմնարարությունը և համապատասխանությունը անձի, հասարակության և պետության արդիական ու հեռանկարային պահանջներին:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐԳԱՍԱՎՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1923-1988թթ.)

Քննարկվող ժամանակաշրջանում ուշադրության է արժանի վեր հանել այն փաստը, թե ովքեր էին արցախահայ դպրոցի և մանկավարժական մտքի զարգացման այն ներկայացուցիչները, որոնք, սկսած 20-րդ դարի 20-ական թվականներից մինչև արցախյան շարժումը, իրար հաջորդող ծանր քաղաքական պայմաններում հաղթահարելով բազում դժվարություններ, արգասավոր գործունեություն ծավալեցին Լեռնային Ղարաբաղում՝ նպաստելով մարզի կրթական համակարգի զարգացմանը:

Ուսումնասիրության հետ կապված պատմագիտական, մանկավարժական աղբյուրների, արխիվային հարուստ նյութերի, պարբերական մամուլում տպագրված հոդվածների, ժամանակակիցների հուշերի և այլ նյութերի համակողմանի ուսումնասիրումն ու պատմահամեմատական վերլուծությունները հիմք են հանդիսացել աշխատության այս բաժնում համառոտակի ներկայացնել Լեռնային Ղարաբաղի կրթական գործի կազմակերպիչների արգասավոր գործունեությունը:

Ժամանակագրական առումով ներկայացվում է Լեռնային Ղարաբաղի մարզլուսբաժնի վարիչների, շրջանային կրթության բաժինների վարիչների, ԼՂԻՄ ուսուցիչների կատարելագործման ինստիտուտի տնօրենների, վերապատրաստման դասընթացների կազմակերպիչների, վաստակաշատ մանկավարժների (իհարկե, ոչ բոլոր) բեղուն գործունեությունը:

1. Լեռնային Ղարաբաղի մարզլուսբաժնի (մարզժողկրթբաժնի) վարիչների գործունեությունը (1923-1988թթ.)

Աշխատության առաջին գլխում արդեն նշվել է, որ 1920թ. նոյեմբերի վերջին և դեկտեմբերի սկզբին Հայաստանը դարձավ խորհրդային: Իշխանության եկած հայհեղկոմի առաջին միջոցառումներից մեկն էլ եղավ դեկտեմբերի 12-ի հրամանով լուսավորության ժողովրդական կոմիսարիատի (Լուսժողկոմատ) ստեղծումը: Նորաստեղծ լուսժողկոմ է նշանակվում ծննդով Շուշեցի հայտնի քաղաքական գործիչ, ականավոր պատմաբան (հետագայում՝ ակադեմիկոս) Աշոտ Հովհաննիսյանը (նրա արգասավոր գործունեությունը ներկայացվել է սույն աշխատության առաջին հատորում):

Հայաստանի Լուսժողկոմի եռամյա գործունեության փորձի հիման վրա Լեռնային Ղարաբաղում նույնպես ձևավորվեցին լուսավորության նոր մարմիններ՝ մարզային ժողովրդական կոմիսարիատ (Մարզլուսժողկոմատ), շրջանային կրթության բաժիններ: Հավաստի աղբյուրների տվյալների համաձայն՝ 1923թ. օգոստոսի 1-ից Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմատը ղեկավարում էր **Արշավիր Քամալյանը** (1923-1925թթ.): Ծնվել է 1889թ. Շուշի քաղաքում: 1900թ. գերազանցությամբ ավարտել է Շուշիի ռեալական ուսումնարանը և ուսումը շարունակել Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում (1910-1912թթ): Սակայն, մասնակցելով ժամանակի քաղաքական իրադարձություններին՝ հեղափոխական շարժմանը, բանտարկվել է ցարական կառավարության կողմից: Բանտից ազատվելով (1917թ. ապրիլին) ուսումը ավարտում է նշված համալսարանում (էքստեռն կարգով) ու հայրենի երկրամասի լուսավորությանը ծառայելու մի-

տումով վերադառնում Շուշի և ծավալում լուսավորչական ու ակտիվ քաղաքական գործունեություն: Բժշկագիտության դոկտոր, պրոֆեսոր Լիա Քամալյանի մեզ տրամադրած հուշերից (Արշավիր Քամալյանի քույրը) տեղեկանում ենք, որ Քամալյանների տոհմը գիտության երախտավորներ, անվանի բժիշկներ, մանկավարժներ, լուսավորության, մշակույթի և այլ ոլորտների գործիչներ են: Նրանցից հիշատակենք մի քանիսին: Լիա Քամալյան, կենսաբանության դոկտոր-պրոֆեսոր, Գուրգեն Քամալյան, քիմիկոս-կենսաբան, դոկտոր-պրոֆեսոր Մարգարիտ Քամալյան, Լեռնային Ղարաբաղում ճանաչված բժշկուհի Թամարա Քամալյան (այսօր Արցախի բժշկական ուսումնարանը անվանակոչվել է նրա անունով), ԼՂՀ վաստակավոր մանկավարժ (20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ) Շահեն Քամալյան և շատ ուրիշներ:

Իր հասարակական, քաղաքական և պրակտիկ գործունեությանը զուգընթաց Արշավիր Քամալյանը ռուսաց լեզու, պատմություն, աշխարհագրություն և այլ առարկաներ է դասավանդել (1918-1920թթ.) ռեալական ուսումնարանում, թեմական դպրոցում, իսկ 1920-1923թթ.՝ Արցախի դպրոցներում:

Ա. Քամալյանը աշխատակցել նաև Շուշիում լույս տեսնող (1911-1917թթ.) «Փայլակ» քաղաքական-հասարակական, սոցիալ-դեմոկրատական (հիմնականում ունեցել է բոլշևիկյան ուղղություն) թերթին: Խմբագիր հրատարակիչը եղել է Լևոն Վարդապետյանը: Թերթին աշխատակցել են նաև Ա. Առաքելյանը, Լ.Վարդունին և ուրիշներ: Շուշիում լույս տեսնող «Փայլակ», «Ծիածան» (1916թ.), «Ղարաբաղ» (1911-1919թթ.), «Արցախ» (1919թ.) և այլ պարբերականներում հրապարակված բազմաթիվ հոդվածներում («Հայ կրթական կյանքը», «Դպրոցը մանկավարժական հիմնարկություն է», «Դպրոցական ռեֆորմ» և այլն) Արշավիր Քամալյանը առաջ է քաշում Արցախում դպրոցական գործի բարելավման և ընդհանրապես մշակութալուսավորական աշխատանքների կարգավորման հարցերը: Կարևոր է համարում ինչպես բարձրորակ ուսուցչական կադրեր ունենալը, այնպես էլ ուսուցումը նոր հիմունքներով կազմակերպելը, դպրոցում նոր առարկաներ մտցնելը, լեզուների ուսումնասիրումը և այլն: «Փայլակ» թերթի թիվ 25-ում տպագրված մի հոդվածում Ա. Քամալյանը գրում է. «Ղարաբաղի ինտելիգենցիան պիտի և պարտավոր է կազմակերպելու, իր ձեռքը վերցնելու ժողովրդին նոր ոգով կրթելու գործը, որպես միակ ընդունակ տարրը այդ խնդրում: Անհրաժեշտ է համախմբվել և անհապաղ գործի անցնել: Անհրաժեշտ է բարձր հիմքի վրա դնել ժողովրդական կրթության գործը Ղարաբաղում»[383]:

Ղարաբաղում խորհրդային իշխանության հաստատումից հետո, ինչպես նշվեց, Ա.Քամալյանը աշխատում է որպես մարզային լուսբաժնի վարիչ (լուսժողկոմ 1923-1925թթ.): Այնուհետև Ստեփանակերտում և Բաքվում աշխատում է ժողովրդական կրթության տարբեր մարմիններում: Լիա Քամալյանի հուշերում նշվում է, որ 1934թ. աշնանը Ա.Քամալյանը ընտանիքով տեղափոխվում է Բաքու, որտեղ զբաղվում է ուսուցչությամբ՝ վարելով նաև ԼՂԻՄ ժողկրթբաժնի տեսուչի պաշտոնը: 1954թ. տեղափոխվում է Երևան: Արցախի նշանավոր կրթական գործիչը վախճանվել է 1968թ. Երևանում:

Լեռնային Ղարաբաղի ժողովրդական կրթության առաջին կազմակերպիչներից է նաև գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր **Առաքել Գեորգիի Առաքելյանը** (1888-1991թթ.): Ծնվել է Արցախի Խաչեն գավառի (այժմ՝ Ասկերանի շրջան) Խանածախ գյուղում: Ավարտելով Շուշիի թեմական դպրոցը, Առ.Առաքելյանը ուսումը շարունակում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Ճեմարանավարտ 15-ամյա պատանին որպես հայոց

լեզվի, գրականության, պատմության ուսուցիչ, 1902-1907թթ. աշխատում է Իգդիրում, Երևանում և այլ դպրոցներում: 1908թ. նա տեղափոխվում է Շուշի, դասավանդում թեմական և օրիորդաց դպրոցներում, ռեալական ուսումնարանում[384]:

Նոր դարաշրջանի երկու տասնամյակներում (1908-1920թթ.) Արցախի թեմում մշակութա-լուսավորական գործն առաջ մղող կենտրոնական դեմքը՝ Առաքել Առաքելյանը, իր պրակտիկ մանկավարժական, գրական, հրապարակախոսական և հասարակական գործունեությամբ առաջ է մղել Արցախի մշակութային գործը: Նա ակտիվ մասնակցություն է ունեցել երկրամասի մի շարք ձեռնարկումների՝ դպրոցների, գրադարան-ընթերցարանների, մշակութալուսավորական այլ օջախների հիմնադրման գործում, ձեռք մեկնել զանազան հասարակական կազմակերպությունների, ընկերությունների աշխատանքին, իր բեղուն գործունեությամբ արձագանքել արցախահայ կյանքին վերաբերող բազմազան հրատապ խնդիրներին:

Առաքել Առաքելյանի գործունեությունը համընկնում է այն շրջանի հետ, երբ հայկական դպրոցների փակումից հետո (1896-1906թթ.) Արցախում վերստին բացվում էին դրանք՝ 1906-1907թթ.:

Անհրաժեշտ էր հավաքել աշակերտության և ուսուցչության ցիրուցան եղած ուժերը, կարգավորել դպրոցական ծրագրերը, մշակել կանոնադրություններ, դպրոցներն ապահովել նյութական բազայով: Այդ ուսումնական տարում նրա ղեկավարությամբ որոշակի աշխատանք կատարվեց մի շարք գյուղերում: Գիշի, Ճարտար, Թաղավարդ, Սարուշեն, Դահրավ, Ջրաբերդ և այլ վայրերում բացվեցին ծխական դպրոցներ՝ երկու տարվա դասընթացով:

Նրա առաջին ձեռնարկումը եղավ թեմական դպրոցում ուսումնական հանձնաժողովի կազմումը (անդամներ Առ. Առաքելյան, Ար. Տերտերյան, Լ.Վարդունի, Գ.Ներսիսյան, Գ.Ղազարյան և ուրիշներ): Հանձնաժողովի նպատակն էր. ա) դպրոցների համար մշակել նոր ուսումնական ծրագրեր, դասագրքեր, բ) կազմել նոր դպրոցական կանոնադրություն, հիմք ընդունելով Ստ. Լիսիցյանի, Մ.Աբեղյանի, 1906թ. Ղ.Աղայանի կազմած կանոնադրության դրույթները, գ) Շուշիի թեմական դպրոցում, ռեալական ուսումնարանում կազմակերպել մեկամյա կամ երկամյա ուսուցչական դասընթացներ՝ դպրոցները որակյալ մանկավարժական կադրերով ապահովելու համար և այլն: Առ.Առաքելյանի մշակած դպրոցական նոր կանոնադրության համաձայն՝ 1909-1910 ուստարում Արցախի թեմում ծխական դպրոցներն ունեին 4-ամյա դասընթաց, իսկ երկդասյանները՝ 5-ամյա դասընթաց: Ստանձնելով թեմի դպրոցների տեսչության պաշտոնը (1911-1914թթ.), նա ընդլայնում է երկսեռ (տղաների և աղջիկների համատեղ ուսուցումը) դպրոցների ցանցը, որոնցից շատերը երկդասյան էին: Մեծ ուշադրություն է դարձնում լեզուների ուսուցմանը, բարելավում է ուսուցչական կազմը, մտցնում մանկավարժական առավել ընդունելի մեթոդներ ու ձևեր: «Ղարաբաղ» թերթում տպագրված «Ղարաբաղի թեմի կրթական գործը 1911-1912 ուստարում» հոդվածում Առ. Առաքելյանը մանրամասն ներկայացնում է դպրոցների վիճակը, բացահայտում թերությունները, նշում տարբեր առարկաների ավանդման ճիշտ կազմակերպման անհրաժեշտությունը:

Այդ տարիներին Առ. Առաքելյանը երկրամասի լուսավորական-կրթական գործին նվիրված բազմաթիվ հոդվածներով հանդես է գալիս «Ղարաբաղ» (1911-1912)[385], «Նեցուկ» (1917), «Մշակ» (1913), «Փայլակ» (1915-1917), «Ղարաբաղի սուրհանդակ» (1918) և այլ պարբերականներում: «Ղարաբաղի թեմի կրթական գործը 1911-1912 ուստարում» ծավալուն հոդվածաշարում Առ. Առաքելյանը նշում

է, որ 1910-1911 ուստարում թեմի ծխական դպրոցները զուրկ են եղել թեմական տեսչից, դպրոցների ղեկավարությունը հանձնված էր տեղական հոգևոր վարիչներին, ինչի հետևանքով դպրոցները հասան ծայրաստիճան քայքայման ու անկման, փակվեցին մի շարք դպրոցներ, իսկ եղածներում կրթված ու ցենզավոր ուսուցիչներին շատ տեղերում փոխարինեցին «անկիրթ, անցեղ, կիսագրագետ անձնավորություններ»:

Հոդվածի հեղինակը միաժամանակ ցույց է տալիս ուսումնական գործի որոշ առաջընթացը հաջորդ ուստարում: Առ. Առաքելյանը Ղարաբաղի եկեղեցական-ծխական դպրոցների թեմական տեսուչն էր (1912), նրա ջանքերով գավառի դպրոցները համեմատաբար առաջադիմում են, բարելավվում է ուսուցումը, ուսուցչական ասպարեզը հիմնականում մաքրվում է անորակ դասատուներից, կարգուկանոն է մտցվում դպրոցների ներքին կյանքում, հոգ է տարվում լեզուների ուսուցումը ամուր հիմքերի վրա դնելու համար:

Առ. Առաքելյանի տեսչության շրջանում (1912-1914թթ.) դպրոցական գործի որոշակի աշխուժությունը նկատելի էր հատկապես Շուշիում. գործում էին թեմական հոգևոր դպրոցը՝ 300 աշակերտներով, Մարիամ Թադևոսյանը՝ 120, քաղաքայինը՝ 250, ռեալական ուսումնարանը՝ 400 աշակերտներով: Բացի դրանից, քաղաքում կային Մարինսկի ռուսական օրիորդաց դպրոցը՝ 100-ից ավելի աշակերտներով, և մի մասնավոր տարրական դպրոց՝ 60 աշակերտներով: Այդ ժամանակ Ղարաբաղում գործում էին 60-ից ավելի հայկական դպրոցներ:

Դրական աշխատանքների հետ մեկտեղ Առ. Առաքելյանը բացահայտում էր դպրոցներում գոյություն ունեցող թերությունները, նշում տարբեր առարկաների ավանդման խելացի կազմակերպման անհրաժեշտությունը:

Նշանավոր կրթական գործիչ Առ. Առաքելյանը, որպես մարզլուսժողկոմի տեղակալ (1923-1925թթ.) և մարզլուսժողկոմ (1925-1930թթ.), իր սկզբունքներն իրականացնելու համար ձեռնամուխ եղավ մարզի կրթական կյանքն արմատապես վերափոխելու գործին: Այսպես, նրա նախաձեռնությամբ մարզային լուսավորության ժողովրդական կոմիսարիատում ստեղծվեցին այդ ժամանակաշրջանի համար խիստ կարևոր ու անհրաժեշտ բաժիններ: Դրանք են.

1. Դպրոցական բաժինը, որի մեջ ամփոփվում էին դպրոցի ողջ ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը, ծրագրերի ստեղծումը, ուսումնական աշխատանքների ձևերի կազմակերպումը (բաժնի վարիչ՝ Հ.Եղիազարյան, հետագայում՝ 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ):

2. Արտաուսումնական և արտադպրոցական դաստիարակչական աշխատանքների բաժինը, որտեղ առաջին պլան են մղվում ոչ միայն սովորողների ժամանակի ռացիոնալ կազմակերպման հարցերը, այլև դասերից ու դպրոցից դուրս նրանց նախասիրությունների հաշվառման և հասարակության մեջ նրանց անձի ձևավորման հարցերը (բաժնի վարիչ՝ Ա.Աղավելյան, Շուշիի Մ.Ղուկասյանի անվան օրիորդաց դպրոցի շրջանավարտ, հետագայում՝ 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ):

3. Նախադպրոցական դաստիարակության բաժինը, որը պետք է զբաղվեր ոչ միայն նախադպրոցական տարիքի երեխաների կրթության ու դաստիարակության օրինաչափությունների հիմնավորման, այլև դրանք ստեղծելու և ղեկավարելու հարցերով (բաժնի վարիչ՝ Լ. Մովսիսյան):

4. Արվեստի և արվեստագիտական տեխնիկական կրթության բաժինը, որը պետք է զբաղվեր արվեստագետների, որպես լուսավորության կարևոր բնագավառի, պրոպագանդման, սովորողների գեղագիտական դաստիարակության և

ուսումն ու դաստիարակությունը «գեղեցիկի օրենքներով» կազմակերպելու հարցերով (բաժնի վարիչ՝ Հ.Նիկողոսյան):

5. Անգրագիտության վերացման և սոցդասվարչության բաժինը, որը ղեկավարում էր ականավոր հոգեբան-մանկավարժ Գուրգեն Էդիլյանը (նրա գործունեության մասին կնշվի առանձին) և այլ բաժիններ:

Այդ մարմինների միջոցով Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմում կարճ ժամանակում վերամշակվեցին ուսումնական պլանները, ծրագրերը, ստեղծվեցին նոր տիպի դպրոցներ (բաներիտ, բանֆակ, գյուղերիտ, երեկոյան), հիմք դրվեց արհեստագիտական կրթությանը, որի կարիքը, հատկապես այդ շրջանում, շատ էր զգացվում ժողովրդական տնտեսության համար, անգրագիտության վերացման համար, Ստեփանակերտում, Շուշիում և շրջանային կրթության բաժիններում ստեղծվեցին քաղաքական, դաստիարակչական և ուսումնական լուսհիմնարկներ:

Հիմք ընդունելով 1923թ. սեպտեմբերին Լուսժողկոմի ընդունած որոշումը «Մարզում անգրագիտությունը վերացնելու աշխատանքի մասին»[386], Առ.Առաքելյանը լուսժողկոմի կոլեգիայի նիստում առաջարկում է շրջանի գյուղերում կազմակերպել անգրագիտության վերացման ընկերություն, որի անդամները՝ ուսուցիչները, շրջանային կրթության բաժինների տեսուչները, պետք է ծավալուն աշխատանք կատարեին մարզում անգրագիտության վերացման ուղղությամբ: «Խորհրդային Ղարաբաղ» թերթի 1925-1926թթ. համարներում տպագրվել են շրջանի (Մարտակերտի, Հադրութի, Մարտունու, Շուշիի) աշխատավորների տասնյակ նամակներ այն մասին, թե ինչպես են իրենք միջոցներ հատկացնում անգրագիտության վերացման ֆոնդին և մրցման են հրավիրում ուրիշների (այդ նպատակների բովանդակությունը ներկայացվել է սույն աշխատության առաջին հատորում, դրա համար չենք կրկնում): Մարզլուսժողկոմը մեծ ուշադրություն է դարձնում կանանց անգրագիտության վերացման գործին: Այդ մասին է վկայում այն փաստը, որ 1929-1930 ուստարում Լեռնային Ղարաբաղում անգրագիտության վերացման խմբակներում ընդգրկվածների մեջ կանայք կազմում էին 86.9 տոկոսը: Նրանց մի մասի անգրագիտությունն էլ վերացվում էր տներում կազմակերպվող անհատական պարապմունքների միջոցով:

Առաքել Առաքելյանի գործունեության տարիներին (1925-1930թթ.) Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմատը մեծ ուշադրություն է դարձրել նաև ուսուցչական կադրերի պատրաստմանն ու վերապատրաստմանը: Ուսուցչությունը ակտիվորեն մասնակցեց դպրոցի վերակառուցման գործին: Պարբերաբար հրավիրվում էին մարզային, շրջանային ուսուցչական խորհրդակցություններ, որտեղ քննարկվում էին հայկական դպրոցները մանկավարժական բարձրորակ կադրերով ապահովելու, ներդպրոցական կյանքին վերաբերող, ուսումնադաստիարակչական աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու և այլ հարցեր: 1929-1930 ուստարվա օգոստոսին Ստեփանակերտում հրավիրված ուսուցչական ընդհանուր խորհրդակցությունում քննարկվում է մարզում ընդհանուր պարտադիր տարրական ուսուցման իրականացման մասին կարևոր հարցը՝ իհարկե, հիմք ընդունելով Հայաստանի լուսժողկոմի 1930թ. հուլիսի 25-ին ընդունած «Ընդհանուր պարտադիր տարրական ուսուցման մասին» որոշման հիմնադրույթները: Ուսուցման որակը բարձրացնելու, երկտարեցիությունը վերացնելու և մաղումները կանխելու, 8, 9,10 տարեկան երեխաների պարտադիր ուսուցումը կազմակերպելու նպատակով, մարզլուսժողկոմը ցուցում է տալիս շրջանային կրթության բաժիններին՝ նյութական օգնություն ցույց տալ չքավոր ընտանիքների երե-

խաներին՝ նրանց ձրի ապահովելով գրենական պիտույքներով, հագուստով, կոշիկներով, դասագրքերով և այլն:

Մատնանշելով պարտուսի իրականացման ճանապարհին եղած լուրջ դժվարությունները, Առ.Առաքելյանը մարզլուսբաժնի կոլեգիայի նիստում շրջանային կրթության բաժինների վարիչների խնդիրն է համարում այդ դժվարությունների հաղթահարման համար ողջ մանկավարժական կոլեկտիվների, լուսավորության բնագավառի աշխատողների համախմբումը, զանազան միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը (կուլտարշավներ, սոցմրցում, շեֆական օգնություն դպրոցին, հասարակական հսկողություն և այլն):

Այսպիսով, մարզլուսժողկոմ Առաքել Առաքելյանի թափով սկսած դպրոցական, լուսավորչական, մարզլուսբաժնի ղեկավարման գործունեությունը տվեց շոշափելի արդյունքներ: Հմուտ մանկավարժի, կրթական գործի հմուտ կազմակերպչի մշակած ժամանակաշրջանի մարզի կրթական համակարգի բարեփոխումների ծրագիրը, անշուշտ, այսօր մեզ համար ունի զուտ պատմական փաստաթղթի արժեք: Նրա գործունեության տարիներին մարզի կրթական համակարգում իրականացված վերափոխումների ծրագիրը հետագայում ուղեցույց դարձավ երկրամասի կրթական համակարգի ղեկավարների համար:

Ա.Առաքելյանը 1932թ. վերջերին տեղափոխվում է Երևան, շարունակում գիտամանկավարժական գործունեությունը: Նա դասախոսել է Երևանի պետական համալսարանում և Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում, որի արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչն է եղել 1934-1972թթ.: Առաքելյանի գրչին են պատկանում 40-ից ավելի գիտական հոդվածներ, աշխատություններ, արժեքվոր են «Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմությունը» (եռահատոր), «Գրաբարի դասագիրքը», «Հունական, հռոմեական գրականությունը» (2 հատորով) աշխատությունները:

Ականավոր գիտնական-մանկավարժի ղեկավարությամբ թեկնածուական, դոկտորական ատենախոսություններ են պաշտպանվել շատ-շատերը, որոնք այսօր աշխատում են ԼՂՀ և ՀՀ կրթության բնագավառում:

Քննարկվող ժամանակաշրջանում (1923-1930թթ.) Լեռնային Ղարաբաղի կրթական համակարգի զարգացմանը անգնահատելի ծառայություն է մատուցել ականավոր հոգեբան, մանկավարժ, ԼՂԻՄ-ի «Անգրագիտության վերացման ընկերության» (սոցդասվարչության) նախագահ, միաժամանակ՝ լուսժողկոմի տեղակալ **Գուրգեն Էդիլյանը** (1885-1942թթ.)[387]: Ունենալով կազմակերպչական աչքի ընկնող ընդունակություններ, նա մեծ դեր կատարեց Լեռնային Ղարաբաղում հայկական դպրոցների ցանցն ընդարձակելու և դպրոցական գործը բարձր հիմքի վրա դնելու ասպարեզում: Իր գործունեության տարիներին Գ. Էդիլյանը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում մի շարք նախաձեռնություններ է իրականացնում. ա) կազմակերպում է դպրոցների համար ուսումնական պլաններ, ծրագրեր մշակող հանձնաժողով, բ) մարզի շրջաններում բացում է «Անգրագիտության վերացման ընկերության» բաժանմունքներ՝ խրճիթ-ընթերցարաններ, ակումբներ, լիկկայաններ, մեծահասակների համար երեկոյան դպրոցներ, շրջաններում 10 բաժանմունքների առկայության դեպքում ստեղծվում են ընկերության շրջանային բյուրոներ, որոնք լայն աշխատանք էին տանում բնակչության շրջանում, գ) կազմակերպում է ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, որտեղ և դասավանդում է մանկավարժություն և հոգեբանություն, հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա և այլ առարկաներ: Գ.Էդիլյանի նախաձեռնությամբ մանկավարժական կոլեկտիվը մասնակցում է մարզում անգրագիտության վե-

ռացման գործին, գյուղերում բացում գրադարան-ընթերցարաններ, լուսավորչական լայն աշխատանք տանում բնակչության շրջանում: Այդ մասին «Խորհրդային Ղարաբաղ» թերթը 1928թ. նոյեմբերյան համարներից մեկում գրել է, որ Շուշիի մանկավարժական ուսումնարանի ուսուցիչները հանդես են գալիս որպես անգրագիտության վերացման գործի ակտիվ կազմակերպիչներ:

Գ. Էդիլյանի ձեռնարկումներից մեկն էլ այն էր, որ շրջանային կրթության բաժինների վարիչներից պահանջում էր, որպեսզի գյուղական դպրոցներն ունենան հողամասեր և դրանք մշակվեն աշակերտության և ուսուցչության միացյալ ջանքերով, որը մեծ նշանակություն կունենար աշակերտների աշխատանքային դաստիարակության համար: Բազմաթիվ փաստեր կարելի է բերել՝ ցույց տալու համար, թե ինչպես շատ դպրոցներ իսկապես աշակերտների և ուսուցիչների ուժերով մշակել են իրենց հողամասերը: Այդ գործը լավ հիմքերի վրա էր դրված հատկապես Մարտակերտի, Մարտունու և Հադրութի շրջանի գյուղերիտ դպրոցներում, որոնց թիվը գնալով մեծացել է:

«Խորհրդային Ղարաբաղ» թերթում տպագրված մի հոդվածում Գ. Էդիլյանը մատնանշում է, որ գյուղերիտ դպրոցները ոչ միայն գյուղատնտեսական աշխատանքի որոշ հմտություն են տալիս աշակերտներին, այլև նպաստում են գյուղատնտեսության զարգացմանն ընդհանրապես, օգնում են գյուղացիներին իրենց տնտեսությունը նոր, գիտական հիմունքներով կազմակերպելուն, սեփական տնտեսության մշակմամբ օրինակ են ծառայում նրանց համար, հարկ եղած դեպքում նրանց տալիս էին նաև ընտիր սերմացու, տնկիներ և այլն[388]: Հարկ է նշել, որ այս փորձը կարելի է կիրառել նաև այսօրվա դպրոցներում:

Մարզի հանրակրթական դպրոցի, ուսուցման ու դաստիարակության, ներդպրոցական համակարգի կառավարման սկզբունքների ու մեթոդների, աշակերտի նկատմամբ ուսուցչի մանկավարժական ճիշտ մոտեցման հույժ կարևոր հիմնահարցերը և շրջանային կրթության բաժինների աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու և կրթական համակարգի կառավարման վերաբերյալ Գ. Էդիլյանի մի շարք հոդվածներ տպագրվել են «Խորհրդային Ղարաբաղ» թերթի 1926-1929թթ. համարներում, որոնք ուղեցույց դարձան ուսուցիչների, դպրոցների տնօրենների, լուսավորության բնագավառի աշխատողների համար: Նրա նախաձեռնությամբ քաղաքային դպրոցներում նույնպես քայլեր են կատարվել աշակերտների աշխատանքային դաստիարակության ուղղությամբ: Գուրգեն Էդիլյանը հետագայում նվիրվում է մանկավարժական-հոգեբանական ստեղծագործական աշխատանքի և այդ ուղղությամբ հրատարակում արժեքավոր աշխատություններ: Նա մեծ վաստակ ունի նաև հայոց լեզվի մեթոդիկայի գիտական համակարգ մշակելու ասպարեզում:

Արխիվային փաստագրական նյութերից[389], մարզլուսժողկոմ Արշավիր Քամալյանի կազմած զեկուցագրերից և ժամանակակիցների հուշերից (Աբրամ Կիսիբեկյան, Լևոն Վարդունի) տեղեկանում ենք, որ 1930-1933թթ., Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմը ղեկավարել է բաքվաբնակ **Արտո Վարդանովը (Վարդանյան)**: Նրա բոլոր հաշվետվությունները, զեկուցագրերը շրջանային կրթության բաժինների վարիչներին, դպրոցների, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրեններին ուղղված բոլոր հրահանգերը գրվում էին ռուսերեն լեզվով: Եվ ցավալին այն է, որ դեռ այն ժամանակ Ադրլուսժողկոմի կողմից հատուկ նշանակված Ա.Վարդանովը իր գործունեության տարիներին (1930-1933թթ.) ավելի շատ ուշադրություն դարձրեց ադրբեջանական դպրոցական ցանցի ընդլայնմանը: Հետաքրքրության համար բերենք Ադրլուսժողկոմին ուղղ-

ված մի զեկուցագրից հատված, որը ներառված էր Ա.Քամալյանի (1922-1934թթ.) զեկուցագրերում. «Для подготовки педагогических кадров в нынешнем учебном году при Шушинском азербайджанском педтехникуме (Շուշիի հայկական մանկավարժական ուսումնարանը, որը ուներ 12-ամյա պատմություն, համարում է ադրբեջանական) организованы армянские группы. Помимо того, ежегодно командируем в Ганджанский педтехникум 25-36 учеников. Нынешним летом в. гор. Степанакерте будут организованы педагогические полуторамесячные курсы в Азербайджанских-Армянских школах 100 человек (բնագիրը նույնն է):

Зав. обл.оно АзербССР
А.Вартанов
секретарь /Чилингаров/
22 августа, 1932г.»

Ուսումնասիրելով Ա.Վարդանովի գործունեության տարիներին մարզի ժողովրդական կրթության ոլորտում կատարված աշխատանքները, դրական իմաստով, առավելությունները շատ քիչ են, համարյա Առ.Առաքելյանի, Գ.Էդիլյանի մշակած մարզի կրթական համակարգի զարգացման դրույթները չեն փոխվել, և վերափոխումներ չեն կատարվել հանրակրթական դպրոցի ներքին կյանքում: 1933թ. օգոստոսի վերջին Ա.Վարդանովը աշխատանքի է անցնում Ադրլուսժողկոմում՝ որպես գլխավոր տեսուչ:

Ուսումնասիրությունները[390] ցույց են տվել, որ 1933-1937թթ., չնայած կարճատև գործունեությանը, մարզի դպրոցական կրթական համակարգի զարգացման գործում մեծ երախտիք ունի փիլիսոփա, հասարակական-քաղաքական գործիչ, մանկավարժ **Հայկ Բալայանը՝** Արցախյան շարժման ականավոր գործիչ Զորի Բալայանի հայրը: Զորի Բալայանի մեզ տրամադրած հուշերից տեղեկանում ենք, որ Հայկ Բալայանը ծնվել է Մարտունու շրջանի Հաղորտի գյուղում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի միդասյա դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել է Շուշիի ռեալական ուսումնարանում և ավարտել Մոսկվայի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետը:

Իր ժողովրդի ազատության ձգտող ոգին, հայրենիքի անկախությունը վերականգնված տեսնելու տենչը նրան մղել է վերադառնալ հայրենի երկրամաս և նվիրվել ազգանվեր լուսավորչական գործունեությանը:

Եթե մարզլուսբաժնի վարիչ Ա.Վարդանովի գործունեության տարիներին մարզային, շրջանային կրթության բաժիններում, մանկավարժական կոլեկտիվներում հաճախակի էին լինում խռովություններ, ծայրամասային գյուղերը ապահովված չէին որակյալ մանկավարժական կադրերով, ուսուցիչների վերապատրաստման եռամյա դասընթացները, որ կազմակերպվում էին Առ.Առաքելյանի, Գ.Էդիլյանի գործունեության տարիներին, դարձել էին մեկամյա, ընդհանրապես շրջաններում չէին կազմակերպվում, դպրոցի կառավարման համակարգում առկա էին մի շարք թերություններ, ապա նորանշանակ լուսժողկոմ Հայկ Բալայանի կազմակերպչական ունակությունների ու նախաձեռնությունների շնորհիվ մեծ փոփոխություններ կատարվեցին:

Առաջնորդվելով ղեկավարին յուրահատուկ (նկատի ունենք մարզի կրթական համակարգի գործիչներին՝ Ա.Քամալյանին, Ա.Առաքելյանին, Գ.Էդիլյանին, Լ.Վարդունուն և ուրիշների) սկզբունքներով, Հ.Բալայանը մարզի կրթական համակարգը ղեկավարում էր ժողովրդավարացման, մարդասիրական, համակարգվածության և համաձայնեցվածության սկզբունքներով: Ձերծ մնալով համակար-

գի կառավարման սուբյեկտիվիզմի, ավտորիտարիզմի սկզբունքների կիրառումից (որ գործում էր Ա.Վարդանովի ղեկավարման շրջանում), Հ.Բալայանը իր շուրջն էր համախմբում ժամանակի մտավորականության կարող ուժեր՝ նպատակաուղղելու նրանց նորովի մտածել երկրամասի կրթական համակարգի աշխատանքները բարձր հիմքերի վրա դնելու ուղղությամբ: Խորհուրդ էր տալիս մարզային, շրջանային կրթության բաժինների վարիչներին, հանրակրթական դպրոցների տնօրեններին, տեսուչներին՝ չսահմանափակվել սեփական հետաքրքրությունների շրջանակով, այլ իրենց աշխատանքը դիտել կոլեկտիվ աշխատանքին մասնակցի դիրքերից:

Հայկ Բալայանի գործունեության տարիներին մարզի կրթական համակարգում զգալի փոփոխություններ կատարվեցին: Այսպես, օրինակ, ավելացավ մարզի տարբեր տիպի դպրոցների, միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատությունների և սովորողների թիվը: Օրինակ, եթե 1931-1932 ուստարում մարզում գործում էր 145 դպրոց՝ 19563 աշակերտով, ապա 1934-1935 ուստարում դպրոցների թիվը հասավ 165-ի, սովորողներինը՝ 24780-ի, ուսուցիչներինը 545-ի փոխարեն՝ 664-ի, իսկ 1936-1937 ուստարում ուսուցիչների թիվը հասավ 850-ի: Բացի այդ ավելացավ 7-ամյա դպրոցների թիվը: Մարզլուսժողկոմը այդ տարիներին դպրոցաշինությունը կրթական համակարգի զարգացման կարևորագույն օղակներից մեկն է համարում: Այս հարցն իր կոնկրետ ծրագրային արտացոլումը գտավ 1935-1936 ուստարում Ստեփանակերտում կայացած ուսուցչական ընդհանուր ժողովում Հայկ Բալայանի ունեցած ելույթում: Օրինակ, եթե մինչև 1932թ. մարզում կառուցվել ու վերակառուցվել է 60 դպրոցական շենք (այն էլ Առ.Առաքելյանի գործունեության տարիներին), ապա 1933-1937թթ. կառուցվել ու վերակառուցվել է շուրջ 100 դպրոցական նոր շենք: Մարզլուսբաժնի առաջարկությամբ դպրոցաշինարարության համար հատկացվել է 164 հազար ռ.: Հայրենասեր կրթական գործչի եռանդուն գործունեության տարիներին հատկապես արագ է աճում գյուղական վայրերի ոչ լրիվ միջնակարգ դպրոցների և նրանցուն ընդգրված երեխաների թիվը: Մարտակերտի, Մարտունու և Հադրութի շրջաններում, Ստեփանակերտ քաղաքում մի շարք դպրոցներ իրենց առաջավոր մանկավարժական ուսումնական աշխատանքի կազմակերպման մեթոդներով ու ձևերով արդեն օրինակ էին ծառայում մյուս դպրոցների մանկավարժական կոլեկտիվների համար (այդ մասին նշվել է նաև աշխատության առաջին գլխում): Հատկապես ուսուցչական կադրերի պատրաստման հարցին հատուկ ուշադրություն է դարձրել Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմը (այդ մասին տես աշխատության 1-ին գլխում):

Այսպիսով, վերը շարադրվածից ակնհայտ է դառնում, որ լուսժողկոմ Հայկ Բալայանը կարճատև, բայց արգասավոր գործունեություն է ծավալել: Ցավոք սրտի, նշանավոր կրթական գործիչը անհիմն մեղադրանքներով զոհ է գնացել ստալինյան բռնատիրությանը[391]:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում (1923-1940թթ.) Լեռնային Ղարաբաղում բեղմնավոր մանկավարժական գործունեություն է ծավալել նշանավոր կրթական գործիչ, ԼՂ լուսժողկոմ **Գրիգոր Բաղյանը** (1937-1940թթ.): Նա ծնվել է(1912թ.) Խանլարի շրջանի հայկական Ղուշչի գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի ոչ լրիվ միջնակարգ դպրոցում, այնուհետև ավարտել է Բաքվի Հովի. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցը:

Գ. Բաղյանը 1931-1934թթ. մանկավարժական գործունեություն է ծավալել Ստեփանակերտի, Խաչենի (Ասկերանի) շրջանի դպրոցներում, դասավանդել

պատմություն, աշխարհագրություն, ինչպես նաև ռուսաց լեզու, գրականություն (ուսուցիչ չլինելու պատճառով) և այլ առարկաներ: 1935-1937թթ. Գ.Բաղյանը կուսակցության մարզկոմում վարում է մի շարք ղեկավար պաշտոններ. եղել է նաև «Խորհրդային Ղարաբաղ» թերթի բաժնի վարիչ: 1937թ. հոկտեմբերի 1-ին, Գ.Բաղյանը նշանակվում է մարզլուսբաժնի վարիչ: Իր կարճատև գործունեության տարիներին Գ.Բաղյանը ջանում է որքան հնարավոր է բարձրացնել մարզի հանրակրթական դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքը, շրջանային կրթության բաժինների վարիչներին հանձնարարում է կազմակերպել ուսուցչական հատուկ դասընթացներ, որոնք հիմք դարձան «հատուկ ուսուցչական վերապատրաստման դասընթացների» համար և գործեցին հետագա բոլոր տարիներին: Ընդ որում, այդ դասընթացները կազմակերպվում էին ոչ միայն Ստեփանակերտում և Շուշիում, այլև շրջաններում:

1937-1938 ուստարվա օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում Գ.Բաղյանը մատնանշում է, որ բարձրագույն կրթություն ունեցող ուսուցիչների ճնշող մեծամասնությունը կենտրոնացված է Ստեփանակերտի, Շուշիի ու շրջկենտրոնների միջնակարգ դպրոցներում, մինչդեռ գյուղական վայրերի դպրոցներում դրանց տոկոսը խիստ ցածր է ամբողջ մարզում բարձրագույն կրթություն ունեցող ուսուցիչների ընդհանուր տոկոսից (այդ մասին մանրամասն նշվել է աշխատության 1-ին գլխում):

Հայտնի է, որ 1936թ. ապրիլի 10-ին ԽՍՀՄ Կենտգործկոմը, լուսժողկոմատը ընդունում են որոշում «Տարրական և միջնակարգ դպրոցների ուսուցիչների անձնական կոչումների մասին»: Հիմք ընդունելով այդ որոշման դրույթները, Հայաստանի լուսժողկոմատը հունիսի 16-ին նույնպես ընդունում է նմանատիպ որոշում, որի համաձայն Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում ձեռնարկվում են ուսուցչական ատեստացիա անցկացնելու աշխատանքներ, որոնց արդյունքների մասին ԼՂ լուսժողկոմ Գ.Բաղյանի 1938-1939 ուստարվա հաշվետվության մեջ գրված է. «Մարզում ուսուցիչների ատեստացիան սկսվել է 1936 թ., սակայն մեծ աշխատանք կատարվեց 1938-1939 ուստարում: Հադրութի, Մարտունու, Շուշիի, Մարտակերտի շրջանային թերթերը պարբերաբար հաղորդել են ուսուցիչների ատեստացիայի, դպրոցները որակյալ մանկավարժական կադրերով ապահովելու, դպրոցի ներքին կյանքին առնչվող բազմաբնույթ հարցերի մասին: Օրինակ, Մարտակերտի «Սոցիալիզմի ուղիով» թերթի խմբագիր Հովսեփ Գևորգյանը թերթի (1939թ.) առաջաբանում հաղորդում է, որ ատեստացիայի ընթացքում շրջանի դպրոցներն ազատվեցին անճարակ ուսուցիչներից, համալրվեցին նոր, բարձրորակ մանկավարժական կադրերով»:

Գ.Բաղյանի գործունեության շրջանում որոշակի հաջողություններ են ձեռք բերել նաև բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառում: Այսպես, ԼՂ լուսժողկոմի կոլեգիայի 1939թ. մարտ-ապրիլ ամիսներին հրավիրված նիստում քննարկվում են երկամյա մանկավարժական (ուսուցչական) ինստիտուտի հիմնադրման հետ կապված մի շարք հարցեր՝ ներկայացված նախագիծը, բյուջեն, կառուցվածքը, կանոնադրությունը, ուսումնական նոր հաստատության ներքին կյանքին առնչվող այլ հարցեր (այդ մասին մանրամասն կնշվի աշխատության 5-րդ գլխում):

Փաստագրական նյութերի ուսումնասիրությունից պարզվում է, որ մարզլուսժողկոմի կոլեգիայի 1939-1940 ուստարվա նիստում պարբերաբար քննարկվում են նաև մարզի միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում (Շուշիի մանկավարժական ուսումնարան, Ստեփանակերտի գյուղտեխնի-

կում և բժշկական ուսումնարան) ուսումնադաստիարակչական աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու և բարձրորակ կադրերով ապահովելու հարցեր, ինչպես նաև մարզի կրթության բաժինների վարիչներին, ուսումնական հաստատությունների տնօրեններին հանձնարարականներ են տրվում մշակել մանկավարժական խորհրդի աշխատանքային պլանը, նրա արդյունավետ իրագործման ուղիները, այսինքն՝ որոշել ուսումնական հաստատության նպատակները, խնդիրները, մտածել, թե ուսումնական տարվա առանձին կիսամյակներում՝ փուլերում և վերջում կրթադաստիարակչական ինչ հարցեր են լուծվել և ինչ արդյունքների է ձգտում տվյալ ուսումնական հաստատությունը, որոշել դրանց հասնելու պայմանները: Մանկավարժական հայտնի ճշմարտություն է, որ ուսումնական հաստատության աշխատանքներրի պլանը մանկավարժական կոլեկտիվի գործունեության կառավարման հիմնական միջոցն է:

Իր գործունեության տարիներին Գ.Բաղյանը որպես լուսժողկոմ իրեն դրսևորել է որպես սկզբունքային, գործիմաց, նախաձեռնող ղեկավար, նույնը՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945թթ.): Առաջին ուկրաինական ռազմաճակատում դիվիզիայի հրամանատար, հրամանատարի քաղգծով տեղակալ, Խորհրդային Միության հերոս Գ.Բաղյանը (1945թ. հունիսի 29-ի հրամանագրով նրան շնորհվում է Խորհրդային Միության հերոսի կոչում) հետպատերազմյան տարիներին եղել է նաև բանակի հրամանատարի տեղակալ: Նրա կյանքի թելը կտրվեց 1965թ. սեպտեմբերի 27-ին:

Ուսումնասիրությանն առնչվող պատմամանկավարժական աղբյուրները, արխիվային տվյալները և ժամանակակիցների հուշերը վկայում են, որ Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում կրթության մարզային բաժինը (մարզժողկրթբաժինը) ղեկավարել են վաստակաշատ մանկավարժներ, 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժներ **Գրիգոր Գրիգորյանը** (1941-1942 թվականի սեպտեմբեր), Սարգիս Աբրահամյանը (1942թ. հոկտեմբերի 1-ից մինչև հետպատերազմյան ժամանակաշրջանը՝ 1949թ. դեկտեմբերը):

Վաստակաշատ մանկավարժ Գրիգոր Գրիգորյանը[392] նախապատերազմյան շրջանում բեղուն գործունեություն է ծավալել Մարտունու շրջանի, Ստեփանակերտ քաղաքի դպրոցներում, ժողովրդական կրթության մարմիններում և այլ ոլորտներում:

Ծնվել է 1909թ. Մարտունու շրջանի Հաղորտի գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի միդասյան դպրոցում, այնուհետև ավարտել Մարտունու երկաստիճան դպրոցը, ուսումը շարունակել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում: Ավարտելուց հետո (1929թ.) աշխատանքի է անցել հայրենի գյուղի դպրոցում, դասավանդել հայոց լեզու և գրականություն:

Շրջանի դպրոցի պրակտիկայում արդեն ճանաչված երիտասարդ մանկավարժի փորձն ու մասնագիտական պատրաստվածությունը գնահատելով, նրան վստահում են ղեկավարելու Մարտունու շրջանային կրթության բաժինը (1932-1934թթ.), այնուհետև նշանակվում է ժողովրդական կրթության մարզային բաժնի վարիչի (Հայկ Բալայանի) տեղակալ: 1935-1940թթ. վարել է մի շարք պաշտոններ, եղել է Ստեփանակերտի քաղժողկրթբաժնի վարիչի (1935-1936թթ.), Հադրութի և Ստեփանակերտի միջնակարգ դպրոցների տնօրենի պաշտոնում (1938-1940թթ.), մարզժողկրթբաժնի դպրոցական տեսուչ, իսկ 1940թ. նոյեմբերից (երբ Գ.Բաղյանը զորակոչվեց Կարմիր բանակ) մինչև 1942թ. սեպտեմբերը ղեկավարել է մարզժողկրթբաժինը:

Իր գործունեության երկու տարիներին Գ.Գրիգորյանը բավականին մեծ աշխատանք կատարեց մարզի հանրակրթական դպրոցներում ուսումնական պարապմունքներն անխափան կազմակերպելու ուղղությամբ: Այդ հարցը պարբերաբար քննարկվում է մարզային, շրջանային ուսուցչական կոնֆերանսներում, մարզժողկրթբաժնի կոլեգիայի նիստերում, ինչպես նաև 1941-1942 ուստարում Ստեփանակերտում հրավիրված մարզի շրջանային կրթության բաժինների վարիչների, դպրոցների տնօրենների խորհրդակցությունում: Մարզժողկրթբաժնի կոլեգիայի նիստում (1941թ. օգոստոսի 26-ին) Գ.Գրիգորյանը՝ իր զեկուցման մեջ ներկայացնելով մարզի հանրակրթական, միջնակարգ մասնագիտական հաստատությունների, երկամյա մանկավարժական ինստիտուտի ուսումնական աշխատանքների կազմակերպման, ուսումնանյութական բազայի վիճակը և պատերազմական պայմաններում պարտադիր ուսուցման օրենքի կենսագործումը, անհրաժեշտ է համարում պատշաճ մակարդակով կազմակերպել դպրոցների անխափան աշխատանքը և ապահովել դպրոցական հասակի բոլոր երեխաների ընդգրկումը դպրոցներում, ուժեղացնել դպրոցների հսկողությունը ու ջերմ հոգատարությունը այն երեխաների նկատմամբ, որոնց հայրերը մեկնել են ռազմաճակատ, իսկ մայրերն անցել են արտադրական պաշտպանական աշխատանքի: «Մեր երկիրը ահավոր օրեր էր ապրում, անարգ և ստոր թշնամու հորդաները մեր երկրի խորքերն էին սողոսկում: Սակայն, չնայած ծանր օրերին՝ մենք վստահ լինելով, որ հաղթանակը մերն է, պետք է պատերազմական պայմաններում նույնիսկ կարողանայինք վերակառուցել դպրոցական շենքերը, կառուցել գյուղական վայրերում նոր շենքեր»: Մարզժողկրթբաժինը հատկապես հույժ կարևոր հարց էր համարում դպրոցները, ուսումնարանները, երկամյա մանկավարժական ինստիտուտը որակյալ մանկավարժական կադրերով ապահովումը, քանի որ մանկավարժական կադրերի զգալի մասը մեկնել էր ռազմաճակատ:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, մարզժողկրթբաժվարի նախանձախնդիր աշխատանքի շնորհիվ 1941թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում ուսումնական հաստատությունները մանկավարժական կադրերով ապահովելու հարցը հիմնականում լուծվեց: Ինչպես արդեն նշվել է աշխատության 2-րդ գլխում, ժամանակից շուտ մանկավարժական աշխատանքի ուղարկվեցին Շուշիի մանկավարժական ուսումնարանի, երկամյա մանկավարժական ինստիտուտի 2-3-րդ կուրսերի ուսանողները:

Կրթության նվիրյալ գործիչը 1942-1945թթ. ծառայել է խորհրդային բանակի շարքերում, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին, մարտնչել տարբեր ռազմաճակատներում, արժանացել մի շարք շքանշանների ու մեդալների:

Զորացրվելուց հետո Գրիգոր Գրիգորյանը շարունակել է մանկավարժական գործունեությունը Ստեփանակերտի դպրոցներում՝ որպես տնօրեն, ուսմասվար, մարզային կրթության բաժնի տեսուչ: Ժամանակակիցները՝ Բահատուր Դավթյան, Բ.Բաղրյան, Ա.Միրզոյան, Գ.Աղասարյան և ուրիշներ, այսպես են բնութագրել. «Ուր էլ եղել է, աշխատել է մեծ նվիրումով: Արցախի կրթության համակարգի անխոնջ աշխատողներից է, մեծ վաստակ ունեցող իսկական մանկավարժ և մտավորական, հայրենիքին ու հայրենի բնաշխարհին կապված, մեծ կամքի ու փորձի տեր անձնավորություն»: Անշուշտ, այն ժամանակվա պայմաններում նրա կատարած աշխատանքը և մանկավարժության բնագավառում ունեցած հարուստ փորձը պետք է օրինակ ծառայի այսօրվա դպրոցի մանկավարժական կոլեկտիվների համար: Եվ պատահական չէ, որ մարզի կրթական համակարգում ունեցած ներդրումի ու ակնառու ծառայությունների համար պարգևատրվել է շատ

շքանշաններով ու մեդալներով:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղում արգասավոր գործունեություն է ծավալել (1934-1969թթ.) գրող, հրապարակախոս, պետական, քաղաքական, կրթական համակարգի նշանավոր գործիչ, անվանի մանկավարժ **Սարգիս Աբրահամյանը** (1915-1969թթ.)[393]:

Փաստագրական նյութերի, «Ազատ Արցախ», «Լուսարար» թերթերում նրա գործունեության մասին տպագրված բազում հոդվածներից, ժամանակակիցների հուշերից (Ա.Խաչատրյան, Մ.Բեգլարյան, Ն.Ավետիսյան, Ս.Ղուկասյան) և այլ աղբյուրների ուսումնասիրությունից, տիկնոջ՝ Սաթենիկ Սողոմոնյանի պատմածներից պարզվում է, որ Ս.Աբրահամյանը իր կարճատև կյանքում հասցրեց շատ բան անել հայրենի լեռնաշխարհի համար:

Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի Շոշ (Ասկերանի շրջան, իսկ այն ժամանակ Ստեփանակերտի) գյուղի միդասյան դպրոցում, այնուհետև ավարտել Շուշի քաղաքի ոչ լրիվ միջնակարգ (յոթնամյա) դպրոցը, ուսումը շարունակել Բաքվի մանկավարժական տեխնիկումում: Գերազանց գնահատականներով ավարտել է և անցել մանկավարժական աշխատանքի: Որպես պատմության ուսուցիչ դասավանդել է Մարտունու շրջանի Նոգի գյուղի յոթնամյա դպրոցում (1935-1937թթ.), Բերդաշենի (Ղզղալա) դպրոցում՝ ուսմասվար (1937-1939թթ.): 1940-1941թթ. եղել է Մարտունու շրջանի կրթության բաժնի վարիչ, իսկ 1942-1949թթ. ղեկավարել է մարզային ժողկրթության բաժինը: Այդ տարիներին հեռակա կարգով ավարտել է (1944թ.) Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Հետագայում եղել է Ստեփանակերտի թիվ 3 միջնակարգ դպրոցի ուսմասվար (1949-1950թթ.), Ստեփանակերտի երկամյա ինստիտուտի ամբիոնի վարիչ (այդ մասին կնշվի 5-րդ գլխում) և վարել այլ պատասխանատու պաշտոններ: Նա իր ամբողջ էությամբ հայ ուսուցչի հավաքական կերպար էր ոչ միայն գրական մանկավարժական հարուստ ժառանգությամբ, այլև ուսանելի հարուստ կենսագրությամբ, հասարակական-քաղաքական և մշակութային գործունեությամբ:

Այժմ արխիվային տվյալների, փաստագրական նյութերի և ժամանակակիցների հուշերի ընձեռած հնարավորությունների սահմաններում համառոտակի բնութագրենք մարզային կրթության բաժնի վարիչ եղած տարիներին (1942-1949թթ.) Սարգիս Աբրահամյանի կատարած աշխատանքները Հայրենական պատերազմի և հետպատերազմյան տարիներին:

Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում (1942-1945թթ.) մարզժողկրթբաժնի վարիչ Ս. Աբրահամյանի հմուտ կազմակերպչական աշխատանքների պլանավորման շնորհիվ մարզային, շրջանային կրթության բաժինների վարիչներն ու դպրոցների մանկավարժական կոլեկտիվները լուրջ աշխատանք էին տանում: Այսպես, օրինակ, շրջանային ուսուցչական հունվարյան և օգոստոսյան խորհրդակցություններում, դպրոցների տնօրենների, ուսմասվարների խորհրդակցություններում (մարզային, շրջանային կրթության բաժիններում պարբերաբար հրավիրվում էին նշված խորհրդակցությունները), մանկավարժական խորհրդներում պարբերաբար քննարկվում էին պատերազմական պայմաններում ուսումնական հաստատություններում ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի բարձրացման, պարտադիր ուսուցման ապահովման, դպրոցից դուրս մնացած և անկանոն դպրոց հաճախող աշակերտների ընտանեկան պայմանների, դպրոցական կարգապահության ու վերահսկողության հետ կապված բազմաբնույթ հարցեր: Կատարված աշխատանքների մասին մարզժողկրթբաժին

ներկայացրած վերոնշյալ կրթության բաժինների ղեկավարների ամենամսյա հաշվետվությունները քննարկվում էին կոլեգիայի ընդլայնված նիստում, նաև բացահայտվում թերությունները՝ հատկապես պարտադիր ուսուցումը կենսագործելու ասպարեզում: 1942թ. ապրիլի 16-ին մարզժողկրթբաժնի կոլեգիայի ընդլայնված նիստում (որին մասնակցում էին շրջժողկրթբաժինների վարիչները, դպրոցների տնօրենները, տեսուչները և կրթության բաժնի այլ աշխատողներ) Ս.Աբրահամյանը՝ ընդհանրացնելով ներկայացված հաշվետվությունները և ելույթ ունեցողների առաջարկությունները, մատնանշել է, որ ինչպիսի դժվարություններ էլ որ ծագած լինեն, դպրոցական հասակի բոլոր երեխաները պետք է սովորեն, դպրոցը պետք է աշխատի, պարապմունքները պետք է ընթանան կազմակերպված, ուսումնական ծրագրերը պետք է կատարվեն ամբողջությամբ:

Նկատի ունենալով, որ զգալի թվով պատանիներ, թողնելով դպրոցը, անցել էին արտադրության մեջ աշխատանքի, մարզժողկրթբաժնի 1943թ. սեպտեմբերի 6-ի որոշմամբ Ստեփանակերտում, Շուշիում և շրջաններում բացվում են (հիարկե, ժամանակավոր) հանրակրթական դպրոցներ (երեկոյան), որը, անապաստան երեխաների համար գիշերօթիկ դպրոցներ (այդ մասին նշվել է աշխատության երկրորդ գլխում): Ս.Աբրահամյանի եռանդուն գործունեության շնորհիվ Մեծ Հայրենականի դժվարին տարիներին (1942-1945թթ.) մարզում չփակվեց ոչ մի դպրոց, ոչ մի ուսումնական հաստատությունում (տեխնիկումներում, ուսումնարաններում, երկամյա մանկավարժական ինստիտուտում) չդադարեցին ուսումնական պարապմունքները, ընդհակառակը, ինչպես նշվել է աշխատության երկրորդ գլխում, վերոնշյալ ժամանակաշրջանում մարզում հանրակրթական դպրոցների ցանցը ոչ միայն պահպանվեց, այլև ընդարձակվեց:

Արխիվային փաստաթղթերից[394] և ժամանակակիցների հուշերից տեղեկանում ենք, որ 1944թ. օգոստոսի 14-ին Ստեփանակերտ քաղաքում գումարված մարզի առաջավոր ուսուցիչների խորհրդակցությունում Ս.Աբրահամյանը իր «Մարզի հանրակրթական դպրոցներում, միջնակարգ մասնագիտական ուսումնարաններում և երկամյա մանկավարժական ինստիտուտում ուսուցման ու դաստիարակության մի քանի հարցերի մասին» զեկուցագրի մեջ նշեց ուսումնական աշխատանքի կազմակերպման բնագավառում տեղ գտած թերությունները, ձեռք բերած առաջավոր փորձը, հատկապես ընդգծեց Մարտակերտի թիվ 1, Չայլվի, Թալիշի, Հաթերքի, Մարտունու թիվ 1, Ճարտարի (Գյունե և Ղուզե կալերի), Գիշու, Բերդաձորի (Ղզղալայի), Տողի, Տումու, Ազոխի, Մեծ Թաղլարի, Շուշիի թիվ 1 հայկական, Շոշի, Սարուշենի և այլ դպրոցների մանկավարժական կոլեկտիվների (տնօրենների) պատերազմական այդ իրավիճակում կատարած աշխատանքները՝ 1) պարտադիր ուսուցման կենսագործում, 2) ծայրամասային գյուղերում բոլոր երեխաների ընդգրկումը դպրոցներում, 3) դպրոցական շենքերի վերակառուցում, 4)պատերազմական պայմաններում աշակերտների ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպում, 5) ռազմաճակատին օգնելու և թիկունքն ամրապնդելու նպատակով արտադասարանական, արտադպրոցական հանրօգուտ աշխատանքների (դեղաբույսերի, մետաղի ջարդոնի հավաքում, գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցություն և այլն) կազմակերպում, 6) ճակատայինների երեխաներին նյութական օգնություն և այլն:

Մարզային, շրջանային կրթության բաժինների վարիչների, դպրոցական տեսուչների հաշվետվությունների ու զեկուցագրերի, մարզժողկրթբաժնի գործունեությանը վերաբերող փաստաթղթերի և այլ աղբյուրների[395] ուսումնասիրությունը վկայում է, որ Հայրենական պատերազմի պայմաններին համապատասխան

մարզի հանրակրթական դպրոցներում հնարավորինս արդյունավետ կազմակերպելով աճող սերնդի ուսման ու դաստիարակության գործը և բոլոր միջոցներով ռազմաճակատի կարիքները հոգալու և թիկունքն ամրապնդելու ուղղությամբ, մարզժողկրթբաժնի վարիչ Ս.Աբրահամյանը վիթխարի աշխատանքներ է կատարել (այդ մասին մանրամասն նշվել է նաև աշխատության երկրորդ գլխում):

Հետպատերազմյան ժամանակաշրջանում մարզի լուսավորության մարմինների առաջ խնդիր դրվեց ապահովել երեխաների պարտադիր ուսուցումը քաղաքում և գյուղերում, բարձրացնել ուսման և դաստիարակության որակը դպրոցներում, պայքարել ձևականության դեմ ուսուցման մեջ, դպրոցներն ապահովել բարձրորակ մանկավարժական կադրերով, վերակառուցել և կառուցել դպրոցական նոր շենքեր: 1945-1946 ուստարվա օգոստոսի 20-ին մարզժողկրթբաժնի կոլեգիայի նիստում բացի վերոնշյալ հարցերի քննարկումից, Ս.Աբրահամյանը առաջնային համարեց նաև հանրակրթական դպրոցի առջև ծառացած նոր խնդիրներին համապատասխան փոփոխությունների կատարումը ուսումնական պլաններում, ծրագրերի մեջ (այդ մասին մանրամասն նշվել է երկրորդ գլխում), ընդհանուր յոթնամյա կրթության անշեղ կենսագործումը գյուղում և միջնակարգ կրթության կենսագործումը քաղաքում: Մարզժողկրթբաժնի կոլեգիայի որոշման հիման վրա կրթության բաժինները զգալի աշխատանք ծավալեցին տարրական դպրոցները 7-ամյա դպրոցների վերածելու ուղղությամբ (տես՝ երրորդ գլուխ, առաջին ենթագլուխ):

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 1946-1949թթ. հրավիրված հունվարյան և օգոստոսյան ուսուցչական խորհրդակցություններում (ուսուցչական խորհրդակցությունների մասին տես գլուխ 3, 3-րդ ենթագլուխ) Ս.Աբրահամյանի ունեցած զեկուցումներում առանձնապես նշվում է. ա) մարզի հանրակրթական դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի բարձրացումը, բ) ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպումը երկամյա մանկավարժական ինստիտուտում, գ) դպրոցներում ուսման որակը բարձրացնելու նպատակով ուսուցիչներին մեթոդական մանկավարժական օգնություն ցույց տալը, դ) առաջավոր ուսուցիչների աշխատանքի փորձի մասսայականացում և ընդհանրացում, ինչպես նաև մանկավարժական ընթերցումների կազմակերպում ուսումնական հաստատություններում և մարզի կրթական համակարգի զարգացմանը վերաբերող այլ հարցեր:

Այսպիսով, վերոնշյալ փաստագրական տվյալները վկայում են, որ Սարգիս Աբրահամյանը մարզժողկրթբաժնի վարիչի պաշտոնավարության շրջանում և գրականության ու մշակույթի ոլորտում արգասավոր գործունեություն է ծավալել:

Հիրավի, հայրենասեր կրթական նշանավոր գործիչի մանկավարժական, գրական, մշակութային ժառանգության ուսումնասիրումն ու իմաստավորումը տնտեսական ու գործնական մեծ նշանակություն կունենա ժամանակակից բարեփոխվող դպրոցի ու մանկավարժության համար: Իսկ նրա հայրենասիրական գործունեությունը ուսանելի օրինակ կլինի ներկա սերնդի համար:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում (1950-1988թթ.) Լեռնային Ղարաբաղի կրթական համակարգում էական փոփոխություններ կատարվեցին: Ինչպես Հայաստանում, այնպես էլ ԼՂ ինքնավար մարզում ստեղծվեց կրթության խիստ կենտրոնացված կառավարմամբ պետական համակարգ, ընդլայնվեց նախադպրոցական, հանրակրթական դպրոցների ցանցը, կատարելագործվեց կրթության բովանդակությունը (ուսումնական պլաններ, ծրագրեր, դասագրքեր), դպրոցներում լայնորեն կիրառվեցին ուսուցման ակտիվ ձևերն ու մեթոդները, տեխնիկա-

կան միջոցները, նպատակասլաց կերպով իրականացվեցին ուսուցման ու դաստիարակության միասնականության սկզբունքը, ընտանիքի, դպրոցի և հասարակության սերտ կապը: Վճռականապես արմատախիլ արվեցին ձևամոլության ամեն տեսակ դրսևորումները դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքի բովանդակության ու մեթոդների մեջ և խնդիր դրվեց դպրոցի կյանքում, սովորողների գիտելիքների գնահատման գործում հաղթահարել, այսպես կոչված, տոկոսամոլությունը: Մարզի հանրակրթական դպրոցներում բարձրացան կրթության ու դաստիարակության որակը, դասավանդման գիտական մակարդակը, ինչպես նաև բարելավվեց դպրոցներում աշխատանքային դաստիարակության, ուսուցման և պրոֆեսիոնալ կողմնորոշման դրվածքը, բարձրացավ ուսուցչի մասնագիտական որակը և իրականացվեցին այլ բարեփոխումներ:

Հիրավի, քննարկվող ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի կրթական համակարգում իրականացվող վերոնշյալ բարեփոխումները (այն էլ Բաքվի իշխանությունների հայատյաց քաղաքականության պայմաններում) սերտորեն կապված են կրթական գործի նշանավոր կազմակերպիչների, մարզժողկրթբաժնի վարիչներ Գրիգոր Ուլուբաբյանի (1951-1952թթ.), Սուրեն Հայրապետյանի (1952-1956թթ.), Հակոբ Օհանջանյանի (1956-1966թթ.), Սարգիս Արամյանի (1967-1986թթ.), Վիգեն Հայրապետյանի (1986-1992թթ.) արգասավոր գործունեության հետ:

Մեր ձեռքի տակ եղած փաստագրական տվյալները, նշված գործիչների անձնական արխիվում պահպանվող նյութերը, ժամանակակիցների հուշերը, ժամանակի պարբերական մամուլում նրանց գործունեության մասին հոդվածները և այլ աղբյուրներ հնարավորություն են տալիս համառոտակի ներկայացնել վերոնշյալ գործիչների մանկավարժական, մարզի կրթական համակարգի կառավարման, հասարակական-քաղաքական գործունեությունը:

Հայ մեծ մանկավարժ Ղ.Աղայանը խորհիմաստում է. «Լավ ուսուցիչը նա է, ով լավ է տիրապետում այն գիտությանը, որի վրա կառուցվում է իր կողմից դասավանդվող առարկան, և դպրոցի պարծանքն է դառնում այն ուսուցիչը, որն անտարբեր չէ իր առարկայի հիմնահարցերի նկատմամբ...»[396]:

Այդպիսին էր նաև մարզի դպրոցի պրակտիկայում ճանաչված պատմության ուսուցիչ **Գրիգոր Ուլուբաբյանը** (1911-1993թթ.): Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի Մուշկապատ գյուղի միդասյան տարրական դպրոցում, այնուհետև ավարտել է Մարտունու միջնակարգ դպրոցը (1929թ.) և ընդունվել Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը, որն ավարտելուց հետո անցել է մանկավարժական աշխատանքի, դասավանդել հայրենի գյուղի յոթնամյա դպրոցում:

Մարզային կրթության բաժնի վարիչ Գ.Գրիգորյանը՝ գնահատելով երիտասարդ ուսուցչի փորձը, մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները, նրան նշանակում է Մարտունու կրթության շրջանային բաժնում որպես պատմության գծով շրջանային տեսուչ (1941-1942թթ.): Այնուհետև մարզժողկրթբաժնի վարիչ Ս.Աբրահամյանի գործունեության տարիներին եղել է Մարտունու շրջանի Հաղորտի գյուղի յոթնամյա դպրոցի տնօրեն (1943-1946թթ.), շրջանային կրթության բաժնի վարիչ (1946-1950թթ.), Հադրութի շրջանի կրթության բաժնի վարիչ (1950-1951թթ.), իսկ 1951թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1952թ. օգոստոսի վերջը՝ կրթության մարզային բաժնի վարիչ[397]: Հետագա տարիներին, շուրջ չորս տասնամյակ, աշխատել է մարզի ժողկրթության մարմիններում, որից 13 տարի եղել է Ստեփանակերտի շրջանի ժողկրթբաժնի վարիչ (1957-1969թթ):

20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Գրիգոր Ուլուբաբյանը շուրջ 62 տարի աշխատել է մարզի հանրակրթական դպրոցներում, ժողկրթության մարմիններում, իսկ Արցախյան շարժման տարիներին՝ ուսուցիչների կատարելագործման ինստիտուտում, որպես երեկոյան և հեռակա դպրոցների կաբինետի մեթոդիստ[398]:

Իր մանկավարժական հարուստ փորձով և տեսական ու մասնագիտական պարաստվածությամբ, մեկն էր ժամանակաշրջանի ճանաչված այն մանկավարժներից (Ս.Աբրահամյան, Ա.Մարտիրոսյան, Ս.Ղուկասյան, Ա.Ներսիսյան, Ա.Հովհաննիսյան, Ս.Արամյան, Ն.Աբրահամյան և շատ ուրիշներ), ովքեր իրենց անդուլ ստեղծագործական աշխատանքով, պրպտուն որոնումներով նորություն մտցրին (փորձնական դասալսումների կազմակերպում, առաջավոր փորձի ընդհանրացում, առարկայական մեթոդմիավորման հանձնաժողովների աշխատանքի փորձի ընդհանրացում և այլն) ժամանակաշրջանի մարզի դպրոցի պրակտիկայում:

Գ.Ուլուբաբյանը ստեղծագործաբար և նորովի մշակել է կրթական համակարգը ղեկավարելու և նորովի կազմակերպելու աշխատանքային պլան, որտեղ առաջնակարգ խնդիր էր համարում դպրոցների մանկավարժական խորհուրդների նիստերում պարբերաբար կատարել փորձառու ուսուցիչների դասերի վերլուծություն, նրանցից սովորել դասավանդման մեթոդական հնարներ, թե նրանք ինչպես են պատրաստվում դասերին, պլանավորում յուրաքանչյուր դասի կրթական, դաստիարակչական, զարգացնող խնդիրները, ձեռք բերում դասի անցկացման ուսանելի փորձ: Ուշագրավ է նշել նրա անձնական արխիվային փաստաթղթերում պահպանվող՝ «Աշակերտների առաջադիմության բարձրացման և ուսման մեջ հետ մնացող աշակերտների հետ տարվող աշխատանքի փորձը», «Ուսման մեջ սովորողների հետադիմության հաղթահարման ուղիները», «Աշակերտների ուսումնական աշխատանքների արդյունքների ստուգման ու գնահատման դաստիարակչական նշանակությունը», «Ստեղծագործաբար աշխատող ուսուցչի հատկություններից մեկը ինքնակրթությունն է» խորագրով զեկուցումները, որոնցով նա հանդես է եկել ուսուցչական խորհրդակցություններում, մանկավարժական խորհրդի նիստում, ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտի վերապատրաստման դասընթացներում:

Գ.Ուլուբաբյանը եղել է երիտասարդ սկսնակ ուսուցիչների խորհրդատուն, բայց պահանջկոտ, սկզբունքային, աշխատողների լավագույն ցուցանիշները գնահատող, իսկ ղեկավարչական գործունեության մեջ ցանկալի արդյունքների է հասել ժողովրդավարական ոճով կառավարելու շնորհիվ: Վաստակավոր մանկավարժ Բ.Դավթյանը իր հուշերում[400] պատմում է, որ Գ.Ուլուբաբյանը, ճիշտ է, որոշումները ընդունում էր ինքնուրույն, ինչպես դա հատուկ է յուրաքանչյուր ղեկավարի, բայց դրանք մշակում էր իր ենթակաների հետ, համագործակցում, որը և խթանում էր տվյալ օղակի աշխատանքի արդյուավետությունը:

Գ.Ուլուբաբյանը խորապես իմանում էր կրթության ոլորտի յուրաքանչյուր ղեկավարի (շրջժողկրթբաժինների վարիչներ, դպրոցական տեսուչներ, դպրոցի տնօրեններ և այլոք) հոգեբանությունը, մանկավարժական ճիշտ մոտեցում դրսևորում նրանց նկատմամբ, բացառում կառավարման միակողմանիությունը և պահպանում համաձայնեցվածության (համագործակցության) կառավարման սկզբունքը և ընտրում իր ենթակաների վրա ներգործելու ճիշտ մեթոդը: 1950-1951 ուստարվա հունվարյան ուսուցչական խորհրդակցությունում քննարկելով մարզում պարտադիր յոթնամյա կրթության իրականացման հարցը, Գ. Ուլուբաբյանը իր «Մարզի դպրոցներում ուսուցման պրոցեսն առավել արդյունավետ

դարձնելու, աշակերտների առաջադիմությունը բարձրացնելու և առաջավոր փորձը մասսայականացնելու ուղիները» զեկուցման մեջ անդրադառնում է նաև դպրոցները ղեկավարելու կոլեկտիվիզմի սկզբունքի մանկավարժական վերլուծությանը: Մատնանշում է, որ այդ սկզբունքը պետք է իրագործվի շրջանային կրթության բաժինների, դպրոցների խորհուրդների, տնօրենների, մեթոդմիավորումների ակտիվ գործունեությամբ, որը կառավարչական որոշումներին տալիս է կոլեգիալության բնույթ, բարձրացնում է կառավարչական խնդիրների լուծման արդյունավետության նկատմամբ փոխադարձ պատասխանատվությունը կոլեկտիվում՝ ստեղծելով փոխադարձ վստահության, համագործակցության և դրական հոգեբանական մթնոլորտ:

Եվ, իրավացիորեն, ճիշտ բնորոշում է տվել վաստակաշատ մանկավարժ Բ.Դավթյանը. «Զբաղեցրած բոլոր աշխատատեղերում Գ.Ուլուբաբյանը մշտապես արդարացրել է իրեն, հասել լավագույն ցուցանիշների: Սկզբունքայնությունը, ճշտապահությունը, կարգապահությունը, պահանջկոտությունը, աշխատողներին խորաթափանց ճանաչելն ու գնահատելը եղել են նրա կյանքի ու աշխատանքային գործունեության ուղեկիցը և բարձր արդյունքների ու հաջողությունների գրավականը»[402]:

Մարզի հանրակրթության ոլորտում ունեցած անգնահատելի ծառայությունների համար Գ.Ուլուբաբյանը պարգևատրվել է մի շարք շքանշաններով ու մեդալներով և արժանացել ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Անշուշտ, իր նախորդների՝ վերոնշյալ կրթական գործի բազմահմուտ կազմակերպիչների նման, Գ.Ուլուբաբյանը հարուստ կենսագրության տեր, կրթության բնագավառի ակնառու գործիչ էր, որի հարուստ փորձը ուսանելի է նաև այսօրվա դպրոցի մանկավարժական կոլեկտիվների համար:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում՝ 1950-ական թվականներին (1952-1956թթ.) Լեռնային Ղարաբաղի կրթության մարզային բաժինը ղեկավարել է կրթական գործի բազմահմուտ կազմակերպիչ **Սուրեն Հայրապետյանը (1906-1965թթ.**)[403]: Նպատակահարմար ենք գտնում ներկայացնել նաև նրա կենսագրությունը: Նախնական կրթությունը ստանալով Բաքվի հայկական միդասյա դպրոցում, այնուհետև ավարտում է (1924թ.) երկաստիճան (9-ամյա աշխատանքային միջնակարգ) դպրոցը գերազանց գնահատականներով և մանկավարժական աշխատանքի անցնում Հայաստանի Գորիսի շրջանի Տեղ գյուղի երկասիճան դպրոցում (1924-1928թթ.):

Հայաստանի լուսժողկոմը՝ նկատի ունենալով Լեռնային Ղարաբաղի դպրոցներում որակյալ ուսուցչական կադրերի պահանջը, նրան ուղարկում է հայրենի երկրամասում ծավալելու մանկավարժական բեղուն գործունեություն:

Մարզլուսբաժնի վարիչ Ա.Առաքելյանի հրամանով Ս.Հայրապետյանը նշանակվում է Ավետարանոցի (Չանախչի) յոթնամյա դպրոցի ուսմասվար (1929-1932թթ.), իսկ մարզլուսբաժնի վարիչ Հայկ Բալայանը՝ գնահատելով նրա մանկավարժական փորձն ու գիտելիքները, նշանակում է (1933թ. սեպտեմբերի 1-ին)[404] Ստեփանակերտի կրթության շրջանային բաժնում որպես դպրոցական տեսուչ, ուր աշխատում է մինչև 1938թ. օգոստոսի վերջը: Մանկավարժական գործունեությանը զուգընթաց հեռակա կարգով ավարտել է Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը (1939թ.): Նախապատերազմյան շրջանում նա եղել է Ստեփանակերտի թիվ 2 դպրոցի տնօրեն (1939-1941թթ.):

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրը Ս.Հայրապետյանը զորակոչ-

վում է Կարմիր բանակի շարքերը (այդ մասին տես 2-րդ գլուխը) և կռվում տարբեր ռազմաճակատներում: Կատաղի մարտերից մեկում ծանր վիրավորվում է և 1943թ. գարնանը զորացրվում թիկունք: Ապաքինվելուց հետո շարունակում է մանկավարժական գործունեությունը Ստեփանակերտի թիվ 2 դպրոցում, երկամյա մանկավարժական ինստիտուտում որպես մաթեմատիկայի և ֆիզիկայի դասախոս, ամբիոնի վարիչ, ռեկտոր (1950-1952թթ.), իսկ 1952-1956թթ. աշխատում է որպես կրթության մարզային բաժնի վարիչ:

Փաստագրական հարուստ նյութերի ուսումնասիրությունից[405] տեղեկանում ենք, որ 1953թ. օգոստոսի 26-ին մարզժողկրթբաժնի կոլեգիան՝ քննարկելով նախորդ ուսումնական տարում(1951-1952) կատարած աշխատանքները (լսվել են շրջանային կրթության բաժինների վարիչների, մարզային և շրջանային տեսուչների, առաջավոր դպրոցների տնօրենների հաշվետվությունները), ընդունեց մի շարք որոշումներ, որոնց համաձայն մարզի հանրակրթական դպրոցների, միջնակարգ մասնագիտական հաստատությունների կառուցվածքում և աշխատանքի բովանդակության մեջ զգալի որակական փոփոխություններ կատարվեցին, առանձնահատուկ ուշադրություն դարձվեց պարտադիր յոթնամյա կրթությունից ընդհանուր միջնակարգ կրթության անցնելու հարցերին: Ըստ արխիվային տվյալների, 1952-1953 ուստարում ԼՂԻՄ-ում 5 տարրական դպրոցներ վերածվեցին յոթնամյակի, իսկ 12 դպրոցներ՝ միջնակարգի: Այս երևույթը շարունակվում է նաև հաջորդ ուսումնական տարիներին: Զգալիորեն ընդլայնվում է նաև դպրոցների ցանցը. տարրական՝ 51, յոթնամյա՝ 108, միջնակարգ՝ 53, ընդամենը՝ 203 դպրոց՝ 30294 աշակերտով (այդ մասին մանրամասն տես աշխատության 3-րդ գլխի 1-ին մասում): Մարզի հանրակրթական դպրոցներում ուսումնական աշխատանքների վերակառուցումը պահանջում էր որակական նոր աստիճանի վրա դնել սովորողների ուսման որակի բարձրացումը՝ ընտրած մասնագիտության մեջ խորանալու նրանց ձգտումը, ինչպես նաև աշխատանքային դաստիարակության, ուսուցման և պրոֆեսիոնալ կողմնորոշման դրվածքը: Փոփոխություններ կատարվեցին նաև կրթության բովանդակության մեջ, դպրոցի ներքին կյանքում:

Մարզլուսբաժնի վարիչ Ս.Հայրապետյանի գործունեության տարիներին մարզում դպրոցական ցանցի ընդլայնմանը և նյութատեխնիկական բազայի հարստացմանը զուգընթաց հետևողական աշխատանք կատարվեց նաև հայկական ծայրամասային գյուղերի տարրական, յոթնամյա դպրոցները մանկավարժական որակյալ կադրերով ապահովելու, ինչպես նաև նրանց որակը սիստեմատիկաբար բարձրացնելու ուղղությամբ: Այդ նպատակով մարզժողկրթբաժնի կոլեգիայի որոշմամբ Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտում պարբերաբար կազմակերպվեցին ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ: Մարզժողկրթբաժնի կոլեգիայի նիստում քաղաքային և շրջանային ժողովրդական կրթության բաժինների վարիչներին հանձնարարվեց ուժեղացնել ուսուցիչներին ցույց տրվող մեթոդամանկավարժական օգնությունը: Առաջարկվեց օգոստոսյան ուսուցչական խորհրդակցություններում ընդհանրացնել առաջավոր ուսուցիչների փորձը և տարածել մանկավարժական կոլեկտիվներում (այդ մասին տես սույն գլխի 2-րդ, 3-րդ ենթագլուխները), միաժամանակ օբյեկտիվորեն գնահատել մանկավարժական կոլեկտիվների կատարած աշխատանքը: Իր ելույթներում Ս.Հայրապետյանը մատնանշում է (մարզժողկրթբաժնի կոլեգիայի նիստում), որ տնօրենների կողմից ուսուցիչների աշխատանքի ճիշտ գնահատումը պետք է դրականորեն անդրադառնա ուսուցիչների մասնագիտական աճի ու զարգացման վրա: Բոլոր դեպքերում կադրերի գնահատումը պետք է համապա-

տասխանի որոշակի չափանիշների՝ մասնագիտական պատրաստվածությունը, մանկավարժական վարպետությունը, իր առարկայից աշակերտների առաջադիմությունը, աշակերտների նկատմամբ անհատական մոտեցումը, ծնողների հետ տարվող աշխատանքները և այլն: Այս իմաստով էլ դպրոցներում, ուսուցչության շրջանում սկսվեց շարժում ուսուցման որակի բարելավման ուղղությամբ: Օրինակ, 20-րդ դարի լավագույն մանկավարժ Մ.Բեգլարյանը իր հուշերում[406] պատմում է, որ այդ տարիներին Մարտունու շրջանի դպրոցների մանկավարժական կոլեկտիվնորեում գործարար աշխատանք ծավալվեց սովորողներին կայուն գիտելիքներով զինելու, դրանք կյանքում գործադրել կարողանալու համար: Առանձնակի ուշադրություն դարձվեց դասի պրոցեսի (գործընթացի) արդյունավետ կազմակերպման, նոր նյութը հիմնականում դասարանում յուրացնել տալու վրա: Անշուշտ, դա ուսանելի է նաև այսօրվա դպրոցների մանկավարժական կոլեկտիվների համար՝ ընդօրինակելու և կենսագործելու խորհրդային շրջանի դպրոցի լավագույն ավանդույթները: Ս.Հայրապետյանի՝ մարզժողկրթբաժնի վարիչ եղած տարիների գործունեության մասին հետաքրքիր հուշեր են պատմում Գ.Գաբրիելյանը, Խ.Հարությունյանը, Կ.Գաբրիելկանը. Ռ.Գասպարյանը և շատ ուրիշներ:

Հետագա տարիներին (1957-1965թթ.), մինչև իր կյանքի վերջը, Ս.Հայրապետյանը շարունակեց իր մանկավարժական գործունեությունը Սեփանակերտի դպրոցներում, լինելով նաև սկսնակ ուսուցիչների խորհրդատուն ու բարեկամը: Ավաղ, անժամանակ հեռացավ մանկավարժության ասպարեզից, նա շատ բան ուներ անելու Ղարաբաղում հայեցի կրթություն տվող դպրոցի կենսահաստատությունը պահպանելու համար:

Լեռնային Ղարաբաղի նշանավոր կրթական գործիչներից է վաստակաշատ մանկավարժ, հասարակական-քաղաքական գործիչ **Հակոբ Օհանջանյանը (1919-2005թթ.)**[407]: Ծնվել է Ստեփանակերտի շրջանի (այժմ՝ Ասկերանի) Նորագյուղում(հին Նորագյուղ): Սկզբնական կրթությունը ստացել է առաջին աստիճանի դպրոցում, այնուհետև ավարտել է Ստեփանակերտի միջնակարգ դպրոցը(արխիվային փաստաթղթերում այդպես է գրված, ենթադրվում է թիվ 2 միջն. դպրոցը), ուսումը շարունակել Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետում (1928-1932թթ.) և ավարտելուց հետո մանկավարժական աշխատանքի անցնում Խանաբադի (այժմ՝ Ոսկեվազի) յոթնամյա դպրոցում, այնուհետև դասավանդել հայրենի գյուղի յոթնամյա դպրոցում, միաժամանակ եղել է ուսմասվար:

Հայրենական պատերազմի առաջին իսկ օրը, մարզի հարյուրավոր ուսուցիչների հետ Հակոբ Օհանջանյանը զորակոչվում է Կարմիր բանակի շարքերը և ակտիվորեն մասնակցում տարբեր մարտերին, արժանանում մի շարք շքանշանների ու մեդալների: Պատերազմի հաղթական ավարտից հետո վերադառնում է հայրենի երկրամաս, անցնում մանկավարժական աշխատանքի:

Մարզժողկրթբաժնի վարիչ Ս.Հայրապետյանը՝ գնահատելով Հ.Օհանջանյանի մանկավարժական փորձն ու կարողությունները, նրան նշանակում է կրթության մարզային դպրոցական բաժնի վարիչ (1953-1956թթ.), իսկ մինչև այդ նա աշխատել է կուսակցության մարզկոմի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնում, որպես հրահանգիչ, բաժնի վարիչ: Շուրջ 10 տարի (1956թ. սեպտեմբերից մինչև 1967թ. սեպտեմբերի 1-ը) Հ.Օհանջանյանը ղեկավարել է կրթության մարզային բաժինը (մարզժողկրթբաժինը):

Այդ տարիներին նա մեծ աշխատանք է կատարել մարզի կրթական համակար-

գում մի շարք բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ: Այսպես, օրինակ՝ նրա անմիջական նախաձեռնությամբ ընդլայնվել է դպրոցական ցանցը, հիմնադրվել ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտը (ՈւԿՄԻ), բացվել են երկարօրյա խմբերով դպրոցներ ու մսուր-մանկապարտեզներ, ծավալուն աշխատանք է տարվել մարզում յոթնամյա պարտադիր կրթությունից ութնամյա կրթության անցնելու ուղղությամբ: Հիմք ընդունելով «Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման և ժողովրդական կրթության հետագա զարգացման մասին» օրենքի դրույթները, մարզժողկրթբաժինը մշակել է հանրակրթական դպրոցների վերակառուցման աշխատանքի համընդհանուր պլան և ձեռնամուխ եղել նրա իրականացմանը:

Այսպես, օրինակ՝ մարզժողկրթբաժնի կոլեգիայի 1960թ. ապրիլի 16-ի նիստում[408] հաստատվեց կոնկրետ միջոցառումների պլան՝ յոթնամյա դպրոցներն ութնամյակի վերափոխելու և միջնակարգ հանրակրթական դպրոցներում արտադրական ուսուցումն ապահովելու համար: Արխիվային փաստաթղթերից նաև տեղեկանում ենք, որ մարզժողկրթբաժնի կոլեգիայի նշված տարվա ապրիլի 26-ի ընդլայնված նիստում Հ.Օհանջանյանը շրջանային կրթության բաժինների վարիչներին, դպրոցական տեսուչներին հանձնարարեց նախապատրաստական աշխատանքը կազմակերպել այնպես, որպեսզի պարտուսի հասակ ունեցող բոլոր երեխաների համար սովորելու պայմաններ ստեղծվեն, նախևառաջ ուշադրություն դարձնել տարրական դպրոցները ութնամյակի վերածելու խնդրին: Այնտեղ, որտեղ հնարավոր էր, դա կատարվեց, իսկ փոքր բնակավայրերի տարրական դպրոցն ավարտած երեխաները ընդգրկվեցին մոտակա ութամյա կամ միջնակարգ դպրոցներում: Կոլեգիայի նիստում որոշվեց մարզի միջնակարգ դպրոցներում 1959-1960 ուստարվանից մտցնել արտադրական ուսուցում[409]: Որոշման մեջ նշվում է, որ մարզի միջնակարգ դպրոցների 9-10 (11-րդ)-րդ դասարաններում իրականացվող արտադրական ուսուցման նպատակն էր սովորողներին տալ գործնական ու տեսական գիտելիքներ ընտրած մասնագիությունից՝ ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի (մշակույթի) որևէ ճյուղում աշխատելու համար (այդ մասին նշվել է սույն գլխի 2-րդ բաժնում):

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ մարզժողկրթբաժնի վարիչը ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտի առաջին տնօրեն Վլադիմիր Գրիգորյանի հետ միասին առաջին անգամ ձեռնամուխ է լինում մշակելու ինստիտուտի աշխատանքային պլանը ըստ փուլերի՝ դպրոցներում ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման , առաջավոր փորձի ընդհանրացման պլանը, ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում մանկավարժական ընթերցումների պլանը, ինչպես նաև հունվարյան, օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունների, շրջանի առաջավոր դպրոցներում մանկավարժական ընթերցումների ու միջոցառումների կազմակերպման պլանը: Իհարկե, այդպիսի բովանդակային աշխատանքային պլանը մշակվում էր շրջանային կրթության բաժինների վարիչների, ժամանակի փորձառու մանկավարժների մասնակցությամբ, քննարկվում էր մարզժողկրթբաժնի կոլեգիայի նիստում, հաստատվում և իրականացվում:

Այսպիսով, մարզի հանրակրթության ոլորտում մեծ հեղինակություն ունեցող վաստակաշատ մանկավարժ Հ.Օհանջանյանի կատարած անուրանալի աշխատանքների մասին, որպես ականատես[410], կարող եմ հավաստի նշել, որ մարզի կրթական համակարգի հմուտ ղեկավարի ու խորիմաստ մտահղացումների, ստեղծագործական ու ջանադիր գործունեության շնորհիվ ավելի ու ավելի է խո-

ռանում մանկավարժական գործընթացի նորությունների ոլորտը՝ դպրոցներում փորձնական դասալսումների կազմակերպումն ու առաջավոր փորձի բացահայտումը, ուսուցման գործընթացը ակտիվացնող նոր մեթոդների կիրառումը, աշակերտների ակտիվության ապահովումը, շրջանային, քաղաքային ուսուցչական օգոստոսյան խորհրդակցություններում ուսուցչի առաջավոր փորձի ընդհանրացումը, ինչպես նաև թերությունների բացահայտումն ու դրդապատճառների որոնումները, դպրոցի պրակտիկայում առաջավոր ուսուցիչների մոտ՝ շրջանի, քաղաքի միջնակարգ դպրոցներում բաց դասերի (միջշրջանային, քաղաքային) կազմակերպումը և մեթոդական օգնություն ցույց տալը սկսնակ ուսուցիչներին, բոլոր դպրոցներում ուսուցիչների վերավորակավորման պահանջմունքների բացահայտում, յուրաքանչյուր ուսումնական տարում ուսուցչկան կադրերի ուսուցման՝ հատկապես սկսնակ ուսուցիչների, եռամյա պլանի մշակումը, մասնագիտական մակարդակի բարձրացումը և այլն:

Բավականին լայն են եղել Հ.Օհանջանյանի գործունեության շրջանակները՝ կուսակցության Ստեփանակերտ քաղկոմի առաջին քարտուղար, մարզգործկոմի մշակույթի բաժնի վարիչ, շրջանային և մարզային խորհուրդների պատգամավոր և այլն: Մարզի կրթական համակարգում ունեցած բեղմնավոր գործունեության համար նա արժանացել է հանրապետության վաստակավոր մանկավարժի կոչման:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի դպրոցի ու մանկավարժության ասպարեզի ականավոր գործիչ էր կրթության մարզային բաժնի վարիչ (1967-1986թթ.), մանկավարժական ասպարեզի հմուտ գիտակ Սարգիս Արամյանը (1915-1992թթ.)[411]:

Նրա բեղմնավոր գիտամանկավարժական, ստեղծագործական որոնումներով հագեցած աշխատանքը նպատակաուղղված էր հասունացող սերնդի կրթության և դաստիարակության համակարգի բոլոր կողմերի կատարելագործմանը: Նրա գործուն մասնակցությունը սիրած գործին անսահմանորեն նվիրվածության մի այնպիսի փայլուն և ուսանելի օրինակ էր, որ լիովին կարող է տիպար ծառայել այսօրվա բարեփոխվող դպրոցի մանկավարժական կոլեկտիվի յուրաքանչյուր ուսուցչի, կրթական համակարգը կառավարողի համար, անկախ նրա անձնական նպատակադրությունից, պրոֆեսիոնալ հետաքրքրություններից, զբաղմունքներից և հասարակական դիրքից: Տեղին է ասվածը անմիջապես ընդգծել, որովհետև Արամյանի նման հայրենասեր մտավորականների (այդ մասին նշվել են նախորդ բաժիններում) գոյությունը ինքնին վիթխարի նշանակություն ունի մանավանդ պատմաշրջանի՝ Ադրբեջանի վարած ազգային խտրական քաղաքականության պայմաններում: Այդ տարիներին ազգային գործիչը պետք է ունենար նաև հարաբերվելու և դիմակայելու հատկություններ. դա առավելապես վերաբերվում էր նաև Սարգիս Արամյանին՝ ժամնակաշրջանի մեծ ուսուցչապետին, որն ունի հարուստ և ուսանելի կենսագրություն և արգասավոր գործունեություն:

Սարգիս Արամյանը ծնվել է 1915թ. Թիֆլիսում՝ Արամյան տոհմածառի մի ճյուղի՝ Նիկոլայ Արամյանի ընտանիքում[412]: Սկզբնական կրթությունը ստացել է Թիֆլիսի երկդասյան հայկական դպրոցում, այնուհետև ծնողների հետ տեղափոխվում է Ղարաբաղ (1927թ.): Ուսումը շարունակում է Հադրութի երկաստիճան (9-ամյա) դպրոցում: Ամռանը ծնողների հետ միասին աշխատում էր կոլտնտեսությունում: Հայրը՝ Նիկոլայ Արամյանը, հայտնի գյուղատնտես էր, ահա թե ինչու ԼՂԻՄ հողժողկոմի հրավերով նրանց գերդաստանը տեղափոխվում է Ղարաբաղ, քանի որ մարզն այդ տարիներին նման մասնագետների խիստ կարիք ուներ:

Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումում ուսումնառության տարիներին (1931-1934թթ.) Ս.Արամյանը ցուցաբերում է ոչ իր տարիքին համապատասխան ընդունակություններ: Աչքի է ընկնում ինքնակրթությամբ, հարուստ հիշողությամբ, ինչպես ընտրած, այնպես էլ մանկավարժական մասնագիտության նկատմամբ ունեցած բուռն հետաքրքրություններով: Դա կարելի է բացատրել նրանով, որ նրա պապի՝ Նիկոլայ Արամյանի հորընտանիքում ուժեղ էին ժողովրդական մանկավարժության ավանդույթները, ծնողները, բարեկամները բնածին մանկավարժներ էին (հայրը գյուղատնտես էր, բայց դպրոցում դասավանդում էր մաթեմատիկական առարկաներ): Չնայած Ս.Արամյանը սովորում էր գյուղտեխնիկումում, հայրը նրա համար գնում էր մանկավարժական գրականություն՝ դասական մանկավարժների (Կոմենսկու, Ուշինսկու, Աբովյանի, Աղայանի և շատ ուրիշների) աշխատություններ, երկրամասի ճանաչված մանկավարժների հուշագրությունները: Փաստորեն գյուղտեխնիկումում սովորելու տարիներին և հետագայում որպես գյուղատնտես (Մարտակերտի շրջանի Հաթերքի կոլտնտեսությունում) աշխատելու տարիներին (1935-1936թթ.) ուսումնասիրում էր մանկավարժական գրականություն, հատկապես շատ էր սիրում բնական գիտությունները:

Իր յուրաքանչյուր գործնական քայլը ստուգելով մտքի աշխատանքով, նա մշտապես հավատարիմ էր մնում իր սկզբունքներին, աչքի էր ընկնում աշխատասիրությամբ և նպատակասլացությամբ: Հենց դա էլ հիմք էր հանդիսանում ընտրելու երկրորդ՝ մանկավարժի մասնագիտությունը: Մանկավարժական հակումների մասին, որոնք Սարգիս Արամյանի մեջ դրսևորվեցին դեռևս Ստեփանակերտի գյուղտեխնիկումում սովորելու և պրակտիկ գործունեության տարիներին, պատմում է իր հուշերում հայտնի լրագրող, հրապարակախոս, համալսարանավարտ Աբգար Դանիելյանը: Նա Արամյանի ժամանակի հայրենասեր մտավորականներից էր[413]:

Ս.Արամյանը օժտված էր շատ ընդունակություններով, բայց նրա մեջ գերազանցում էր մանկավարժի տաղանդը՝ սերը դեպի ուսուցչի մասնագիությունը: Ահա այդ միտումով էլ նա 1936թ. սեպտեմբերի 1-ին անցնում է մանկավարժական աշխատանքի և մարզլուսբաժնի վարիչ Հայկ Բալայանի հրամանով նշանակվում Ստեփանակերտի շրջանի Խանածախի յոթնամյա դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ: «Կարծում եմ, այն ժամանակ էլ սկսվեց ուսուցչի իմ ուղին: Կարծում եմ, որ մանկավարժի համար գլխավորը մարդկայնությունն է, մարդու խոր պահանջմունքը, այն բանի զգացումը, որ երեխաների հետ դու երջանիկ ես»,- գրում է իր հուշերում Ս.Արամյանը[414]:

Մանկավարժական պրակտիկ աշխատանքի տարիներին Ս.Արամյանը նպատակասլաց աշխատասիրությամբ ուսումնասիրում է մաթեմատիկա և ֆիզիկա առարկաները և փայլուն կերպով հանձնում ընդունելության քննությունները Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետում, որը ավարտելուց (1937-1941թթ.) հետո անմիջապես զորակոչվում է Կարմիր բանակ, ուր տարբեր ռազմաճակատներում, զորատեսակներում, սպայական պաշտոններում ծառայում է մինչև 1946թ. աշունը:

Մեծ Հայրենականի հաղթական ավարտից հետո ուսուցիչների հետ մարտական շքանշաններով ու մեդալներով պարգևատրված Սարգիս Արամյանը վերադարձավ հայրենի երկրամաս և նոր ուժով ու եռանդով նվիրվեց մանկավարժական աշխատանքի՝ մարզի հանրակրթական դպրոցներում, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, երկամյա մանկավարժական ինստիտուտում, ուսուցիչների կատարելագործման ինստիտուտում, գիշերօթիկ

դպրոցում և մարզային կրթության բաժնում:

Զորացրվելուց հետո, 1946-1947 ուստարում, Ս.Արամյանը աշխատանքի է անցնում Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտում (երկամյակը 1939-1946թ. գործել է Շուշիում, այդ մասին կնշվի աշխատության 5-րդ գլխում, նաև կնշվի երկամյա ինստիտուտի դասախոսների գործունեությունը, ուստի այստեղ մանրամասն չենք ներկայացնում Ս.Արամյանի գործունեությունը), որպես մաթեմատիկայի և ֆիզիկայի դասախոս, այնուհետև՝ ֆիզմաթ ֆակուլտետի դեկան: Ուսումնագիտական այս հաստատությունում էլ ձևավորվում է Ս.Արամյանի մեկընդմիշտ դպրոցին նվիրվելու և կրթության մշակը լինելու համոզմունքը: Արամյանը նվիրումով ու ազգային արժանապատվությամբ հնչեցրեց իր բարի խոսքը՝ կյանքի դժվարին կեռմաններում ու քառուղիներում պահպանել միակ բարձրագույն մանկավարժական կադրեր պատրաստող գիտակրթական օջախի ազգային դիմագիծը (հայտնի է, որ այն ժամանակ երկամյակը ուներ հայկական, ռուսական և ադրբեջանական բաժիններ): Նա լուրջ ուշադրություն է դարձնում երկամյա ինստիտուտում բարձրացնելու մաթեմատիկայի և ֆիզիկայի դասավանդման դրվածքը: Այդ մասին հետագայուն իր հուշերում պատմում է երկամյա մանկավարժական ինստիտուտի շրջանավարտ, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոնի դոցենտ Աշոտ Շահիջանյանը[415]:

Մեծ աղմուկով բացված, բայց իրականում գիտամանկավարժական գործունեություն քիչ ծավալած երկամյա մանկավարժական ինստիտուտի փակումից հետո դասախոսների մի մասը տեղափոխվեց Բաքվի մանկավարժական ինստիտուտ, իսկ մի մասն էլ, նրանց շարքում նաև Ս.Արամյանը, իր գործունեությունը շարունակեց մարզի հանրակրթական դպրոցներում, միջնակարգ մասնագիտական հաստատություններում:

1953թ. սեպտեմբերի 1-ից նշանակվում է Ստեփանակերտի թիվ 3 դպրոցի տնօրեն: Մանկավարժական պրակտիկայում արդեն ճանաչված փորձառու մանկավարժը, չնայած կարճատև գործունեություն ունեցավ (1953-1955թթ.), այնուամենայնիվ, իր մասնագիտական պատրաստվածությամբ, դպրոցը ղեկավարելու կազմակերպչական ընդունակություններով կարողացավ բարձրացնել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքը և պայքարեց կրթօջախում կամայականությունների դեմ, ձգտեց կոլեկտիվում ստեղծել առողջ հոգեբանական մթնոլորտ: Տնօրենն ինքն էր ձգտում անընդհատ վերավորակավորման և նոր գիտելիքների ձեռքբերման՝ թե մասնագիտության և թե կրթական համակարգի կառավարման հիմունքների վերաբերյալ գիտական գրականության ուսումնասիրման, դրանով իսկ օրինակ ծառայում իր ղեկավարած կոլեկտիվի համար: Արխիվային փաստաթղթերից[416] տեղեկանում ենք, որ յուրաքանչյուր ուսումնական տարում օգոստոսի 24-28-ը հրավիրում է ուսուցչական խորհրդակցություն, ընդհանրացնում կատարված աշխատանքները, մատնանշում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում տեղ գտած թերությունները, նշում դրանց վերացման ուղիներն ու միջոցները: Ամենակարևորը՝ կարողանում էր բացահայտել ուսուցիչների վերապատրաստման պահանջմունքները և այդ ուղղությամբ մշակում էր այն ուսուցիչների ուսուցման պլանը, որոնք պիտի վերապատրաստվեն:

Ս.Արամյանը իր ինքնատիպ մանկավարժական ձեռագիրը կարողացավ ներդնել նաև Ստեփանակերտի գիշերօթիկ դպրոցում (1957-1967թթ.)՝ լինելով այդ կրթօջախի հիմնադիրն ու նրա գոյության ողջ ընթացքում գլխավոր հովանավորը:

Իր գործունեության տարիներին Ս.Արամյանը գիշերօթիկ դպրոցը դարձրել է ստեղծագործաբար աշխատող, որոնումներ կատարող ուսուցչի կողմից դասավանդման նոր մեթոդներ, գիտափորձ կատարելու ու հայտնագործելու լաբորատորիա: Ժամանակակիցները (Ի.Աթայան, Ս.Ղուկասյան, Ա.Հովհաննիսյան, Բ.Դավթյան և ուրիշներ) իրենց հուշերում գրում են, որ Սարգիս Նիկոլաևիչը գիշերօթիկ դպրոցը դարձրել է «կյանքի դպրոց»[417]: Նա կարողացավ ձևավորել մանկավարժ համախոհների մի իսկական կոլեկտիվ, որոնց քրտնաջան աշխատանքի շնորհիվ գիշերօթիկ դպրոցը տարածաշրջանում մեծ համբավ ձեռք բերեց:

Բազմահմուտ մանկավարժ Ս.Արամյանը ուսուցչական կոլեկտիվի շունչն ու հոգին էր, նա կենտրոնական դեմք էր, բոլորին (ի նկատի ունենք նաև Ստեփանակերտի դպրոցների ուսուցիչներին) համախմբում էր իր շուրջը, մանավանդ անփորձներին, և օգնում նրանց ինչպես անձնական խորհուրդներով, այնպես էլ մանկավարժական մեթոդական զեկուցումներով, փորձնական դասեր ու դրանց շուրջ մտքերի փոխանակություն կազմակերպելով, մանկավարժական խորհուրդներում իր ղեկավարած դպրոցի ներքին կյանքին վերաբերող զանազան հարցերի մասին ելույթներ ունենալով: Առանձնապես ամուր հիմքերի վրա էր դրված ֆիզիկայի և մաթեմատիկայի դասավանդման գործը՝ շնորհիվ ստեղծագործաբար աշխատող, անընդհատ որոնումներ կատարող ուսուցիչների՝ Ս.Արամյանի, Ա.Շահիջանյանի, Արաքսյա Միրզոյանի, Վալենտինա Ադամովայի և ուրիշների: Հետագայում այդ մասին հետաքրքիր հուշեր է պատմում գիշերօթիկ դպրոցի շրջանավարտ, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ամբիոնի վարիչ Յուրա Անաստասյանը[418]: Նա նաև նշում է, որ գիշերօթիկի աշակերտները սկսեցին փայլուն հանդես գալ ֆիզիկայի ու մաթեմատիկայի մարզային, հանրապետական և միութենական օլիմպիադաներում: Պետք է ասել, որ նրանցից շատերը հետագայում դարձան ֆիզիկոսներ, մաթեմատիկոսներ, ճարտարագետներ և վաստակաշատ մանկավարժներ:

Հարկ է նշել նաև, որ դպրոցը բնույթով գիշերօթիկ էր, սակայն կրթական, մարզական, արտադրական և հանրօգուտ աշխատանքների կազմակերպման ժամանակացույցով ու բովանդակությամբ էլ այն շուրջօրյա էր: Այստեղ գործում էին բազմաբնույթ առարկայական, տեխնիկական ու մարզական խմբակներ, որոնց անդամները առաջնակարգ տեղեր էին գրավում այդ ժամանակներում կազմակերպվող տարբեր բնույթի տեխնիկական ստեղծագործական մրցույթներում ու ստուգատեսներում:

Իհարկե, մարզի գիշերօթիկ և երկարօրյա դպրոցների պատմությունն անհրաժեշտ է առանձին ուսումնասիրել, սակայն բավարարվենք շարադրվածով և բնութագրենք Ս.Արամյանի բեղմնավոր գործունեությունը կրթության մարզային բաժինը (մարզժողկրթբաժինը) ղեկավարելու տարիներին (1967-1986թթ.):

Մարզի ղեկավարությունը՝ գնահատելով երախտաշատ մանկավարժի մատուցած ծառայությունները երկրամասի կրթական համակարգին, ճիշտ ժամանակին Ս.Արամյանին նշանակեց մարզժողկրթբաժնի վարիչ: Այստեղ ավելի վառ դրսևորվեցին Ս.Արամյանի՝ որպես բազմահմուտ ղեկավարի, կազմակերպչական ունակությունները՝ այնքան անհրաժեշտ մասնագիտական ու մարդկային բարձր արժեքների հենքի վրա:

Նրա ժամանակակից, վաստակաշատ մանկավարժ Բ.Բաղրյանը իր հուշերում այսպես է գրում. «Նա ուներ կազմակերպչական զարմանալի և աստվածատուր կարողություններ, մանկավարժական կոլեկտիվի հետ աշխատելու բացառիկ

ձիրք ու համբերություն: Իսկ նրա եռանդը պարզապես անսպառ էր»[419]:

Ս.Արամյանի գործունեության տարիներին մանկավարժական կրթական համակարգը զարգացման վերելք ունեցավ, առանձնապես մեծ թափ ստացավ դպրոցաշինությունը: Կրթական համակարգում, որպես առաջադեմ ձև, սկսեց արմատավորվել ուսուցման կաբինետային համակարգը: Որպես ժամանակաշրջանի ականատես (տողերիս հեղինակ Գ.Հարությունյան), սխալված չենք լինի, եթե ասենք, որ այդ տարիներին մարզի ամենածայրամասային դպրոցն ուներ նյութատեխնիկական հարուստ բազա, ուսուցչական բարձորակ մասնագիտական համակազմ և ուսուցման գործընթացի կազմակերպման ուսանելի փորձ: Իսկ մարզի առանձին դպրոցներ ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ինքնավարությամբ ու որակով հասել էին միութենական ճանաչման: Հիրավի, այս հաջողություններում մարզժողկրթբաժնի վարիչի դերը բավականին բարձր էր:

Ս.Արամյանը կաբինետային ղեկավար չէր: Մարզժողկրթբաժինը, որ նա ղեկավարում էր շուրջ 20 տարի, նրա համար հանրակրթական դպրոցի առաջավոր ուսուցիչների փորձը բացահայտելու գիտահետազոտական լաբորատորիա էր: Կարելի է ասել, որ մարզում չկա մի դպրոց, որտեղ Ս.Արամյանը դաս լսած չլիներ, այդ թվում նաև՝ սույն գրքի համահեղինակի (Գ.Հ.) դասը Մարտակերտի շրջանի Վաղուհասի, Հարգոմերի դպրոցներում, մանկավարժական խորհրդում մեթոդական խոհուրդներ տված չլիներ սկսնակ ուսուցիչներին: Ս.Արամյանը ուներ տարիների ընթացքում գիտամանկավարժորեն մշակած, մարզի կրթական համակարգի ղեկավարման պլան՝ ընթացիկ, ըստ ուսումնական տարիների և հեռանկարային, որտեղ արտացոլում էր կրթական համակարգի զարգացման ուղղությունները՝

- բարձրացնել բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետությունը և նպատակայնությունը,
- հիմքեր ստեղծել դպրոցի հարթությունում որոշումների ընդունման համար,
- խթանել մրցակցությունը դպրոցների միջև,
- տարբերակված մոտեցում ցույց տալ դպրոցների նկատմամբ,
- ապահովել ներդպրոցական կառավարման ժողովրդավարացումը,
- ուսուցիչ-աշակերտ հարաբերակցության օպտիմալացում սահմանված նորմերի շրջանակում՝ դասարանների խտության և ուսուցիչների ծանրաբեռնվածության բարձրացման միջոցով,
- դպրոցներում մանկավարժական համերաշխ կոլեկտիվի և հոգեբանական մթնոլորտի ստեղծում,
- կոլեկտիվում միմյանց նկատմամբ վստահության ապահովում, գործնական և բարյացակամ քննադատություն, կոլեկտիվում աշխատելու նպաստավոր պայմանների ստեղծում,
- դպրոցի զարգացման հեռանկարային պլանի մշակում, քննարկում մանկավարժական խորհրդում, շրջանային ուսուցչական խորհրդակցությունում և մարզժողկրթբաժնի կոլեգիայի նիստում,
- դասալսումների արդյունքների քննարկում մանկավարժական խորհուրդներում,
- մանկավարժական առաջավոր փորձի բացահայտում, ընդհանրացում շրջանային և ուսուցչական խորհրդակցություններում և տարածում կոլեկտիվներում,
- դպրոցի ղեկավարի կողմից ուսուցչի մասնագիտական մանկավարժական գործունեության խթանում և այլն[420]:

Վերոնշյալ աշխատանքային գիտական պլանում տեղ են գտել նաև դպրոցի

տնօրենի, ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով նրա տեղակալի, ուսուցչի ժամանակը և աշխատանքը, աշակերտների ժամանակը, ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպումը և այլ հիմնահարցեր, որոնք ուղեցույց դարձան ժամանակաշրջանի մանկավարժական կոլեկտիվների համար, ինչպես նաև ուսանելի են այսօրվա դպրոցների տնօրենների, կրթության շրջանային բաժինների վարիչների, ուսուցիչների համար:

Իր պրակտիկ մանկավարժական աշխատանքին զուգընթաց Արամյանը բուռն հետաքրքրությամբ զբաղվում էր նաև ստեղծագործական աշխատանքով: Սարգիս Արամյանի անձնական արխիվում պահպանվում են նաև գիտամանկավարժական հոդվածներ («Ուսուցչի մանկավարժական առաջավոր փորձը», «Մանկավարժական գիտելիքներ բոլորին», «Ուսուցիչ-դաստիարակի իրավունքներն ու պարտականությունները», «Դաստիարակչական աշխատանքը գիշերօթիկ դպրոցում և երկարօրյա խմբերում», «Դասի կազմակերպչական պահանջները», «Դասի արդյունքների վերլուծությունը և թերությունների բացահայտումն ու վերացման ուղիները»)՝ նվիրված դպրոցի ներքին կյանքին վերաբերող հիմնահարցերի լուսաբանմանը: Վերոնշյալ և բազում այլ հոդվածներ լույս են տեսել ոչ միայն մարզի, այլև Հայաստանի պարբերական մամուլում:

Այս իմաստով հարկ է նշել, որ երախտաշատ մանկավարժ Ս.Արամյանը մեծ ներդրում ունի ոչ միայն մարզի կրթական համակարգի զարգացման գործում, այլև 20-րդ դարի արցախահայ մանկավարժական մտքի պատմության մեջ: Եվ համոզված ենք, որ սույն աշխատությունը հիմք կծառայի գալիք սերունդների համար՝ խորապես ուսումնասիրելու 20-րդ դարի լավագույն մանկավարժների բազմամյա հարուստ և ուսանելի փորձը:

Քննարկվող ժամանակաշրջանի Լեռնային Ղարաբաղի դպրոցի ու մանկավարժության ասպարեզի նշանավոր գործիչներից է Արցախյան շարժման ակտիվիստ **Վիգեն Հայրապետյանը**[421]: Արցախի կրթական, հասարակական-քաղաքական գործիչն ունի հարուստ և ուսանելի կենսագրություն: Ծնվել է 1933թ. Ստեփանակերտ քաղաքում, ուսուցչի՝ մարզժողկրթբաժնի վարիչ Սուրեն Հայրապետյանի ընտանիքում:

Գերազանց գնահատականներով ավարտելով Ստեփանակերտի թիվ 3 ռուսական դպրոցը (1952թ.), ուսումը շարունակում է Երևանի պեական մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետում և ավարտելուց հետո (1956թ.) մանկավարժական աշխատանքի անցնում Շուշի քաղաքի ռուսական դպրոցում, որպես մաթեմատիկայի, ֆիզիկայի ուսուցիչ, իսկ այնուհետև՝ ուսմասվար:

Վ.Հայրապետյանի բեղմնավոր մանկավարժական գործունեությունը, որպես ուսուցիչ, ուսումնական մասի վարիչ, տնօրեն և մարզժողկրթբաժնի վարիչ (1986-1992թթ.) ծավալվում է 1960-1980-ական թվականներին և Արցախի պետականակերտման շրջանում:

Հայրենասեր մանկավարժը, երկրամասի հայեցի կրթություն տվող դպրոցի զարգացման նվիրյալը մեծ ջանքեր է գործադրում Ստեփանակերտ քաղաքի կրթօջախներում հավուր պատշաճի բարձրացնելու ֆիզիկամաթեմատիկական առարկաների դասավանդման դրվածքը: Նա դասավանդում է Ստեփանակերտ քաղաքի բաներիտ դպրոցում (1959-1962թթ.), թիվ 5 դպրոցում (1962-1964թթ.), միաժամանակ եղել է ուսմասվար: Այնուհետև մարզժողկրթբաժնի վարիչ Հ.Օհանջանյանի հրամանով նշանակվել է Ստեփանակերտի թիվ 8 դպրոցի ուսմասվար, իսկ Սարգիս Արամյանի հրամանով՝ նշված դպրոցի տնօրեն (1976-1984թթ.), Ստեփանակերտի կրթության քաղաքային բաժնի վարիչ (1984-1986թթ.): Իսկ

1986թ. սեպտեմբերի 1-ին փոխարինում է թոշակի անցած մեծ ուսուցչապետին՝ մարզժողկրթբաժնի վարիչ Ս.Արամյանին, ուր ղեկավարում է մինչև 1992թ.: Այդ ժամանակաշրջանում նման գործունեության ծավալումը հատուկ էր խիզախ անհատականություններին: Նրա համարձակությունն ու խիզախությունը դրսևորվեցին Արցախյան շարժման տարիներին (այդ մասին մանրամասն կնշվի աշխատության 3-րդ հատորում):

Հայտնի է, որ այն ժամանակներում Հայաստան տանող ճանապարհը բռնող Արցախի մտավորականը և նույնիսկ իր պապենական հողում Հայաստան ասելիս ենթակա էր պատժի, որովհետև հայոց Արցախին տիրություն անող ազերիների, մարզի ադրբեջանամետ ղեկավարների ամենատես հայացքի տակ էր:

Ահա այդ պայմաններում նա իր ժողովրդի հետ էր, առանձնապես դժվարին է եղել նրա աշխատանքը կրթության մարզային բաժնի վարիչ աշխատելու տարիներին: Եվ այդ ժամանակներից է սկսվել Ղարաբաղյան շարժումը, իսկ Շարժման ուղնուծուծը մտավորականությունն էր և ինքը՝ Հայրապետյանը: Նրանք քայլում էին առջևից՝ ծանրութեթև անելով ամեն մի քայլ, հավասարակշռված ղեկավարում համակարգը: Այդ նրա սթափ ղեկավարության շնորհիվ է, որ համակարգը ճեղքվածք չտվեց, դպրոցը գործեց, ուսուցչական կոլեկտիվներն աշխատեցին, հայկական դպրոցների քանակը կարճ ժամանակում ավելացավ: Ճակատագիրը նրա կյանքը դասավորել է բնության շնորհած ընդունակություններին համապատասխան և, առանց չարաշահելու նա իր ընդունակություններն օգտագործել է ի շահ երկրամասի կրթական գործի:

Հայրենասեր գործիչը նշված բարձր պաշտոնում աշխատել է մինչև թոշակի անցնելը: Երկրամասի կրթության ոլորտում իր անձնուրաց ծառայությունների համար Վ.Հայրապետյանը արժանացել է մեծ հարգանքի և պարգևների: Նրա ամբողջ կենսագրությունը բարեգործություն է և ուսանելի այսօրվա սերնդի համար:

2. ԼՂԻՄ-ի շրջանային կրթության բաժինների վարիչների գործունեությունը (1923-1888թթ.)

Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության տարիներին կրթական գործի կազմակերպման բնագավառում ակտիվ աշխատանք էին ծավալում նաև շրջանային կրթության բաժինների վարիչները: Մեր ձեռքի տակ եղած արխիվային փաստագրական նյութերը, պարբերական մամուլում տպագրված բազում հոդվածները, ժամանակակիցների հուշերը և այլ աղբյուրներ հնարավորություն են ընձեռել մեզ ըստ շրջանների ներկայացնել կրթական գործի կազմակերպիչների, շրջժողկրթբաժինների վարիչների ազգանվեր գործունեությունը: Շատերի մասին մեզ դեռ չի հաջողվել նյութեր հավաքել, հատկապես 1923-1940-ական թվականներին աշխատած անձանց պաշտոնավարման ժամանակահատվածի մասին: Սակայն, հիմք ընդունելով արխիվային որոշ փաստաթղթերում, Արշավիր Քամալյանի 1922-1934թթ. զեկուցագրերում նշված տվյալները, մարզի լուսժողկոմ Առաքել Առաքելյանի հուշերը, «Խորհրդային մանկավարժ» ամսագրում (1940-1968թթ.) տպագրված Ս.Ավագյանի հուշերը և այլոց ուսումնասիրություններում նշված որոշ տվյալները, հնարավորինս աշխատել ենք թեկուզև համառոտակի ընդհանուր պատկերացում տալ նրանց գործունեության մասին:

ա) Մարտակերտի շրջանի կրթության բաժնի վարիչների գործունեությունը

Մարտակերտի շրջանի կրթության բաժնի ներկայիս վարիչ Ժասմեն Դավթյանի (2008թ. հունվարի 29-ից առ այսօր) մեզ տրամադրած «Մարտակերտի շրջանի կրթության բաժնի վարիչի պաշտոնում աշխատած անձանց պաշտոնավարման ժամանակահատվածը՝ սկսած 1943 թվականից» ցուցակում ժամանակագրական կարգով ներկայացվում են շրջանի կրթության բաժնի վարիչների անունները և պաշտոնավարման ժամանակաշրջանը:

Համակողմանի ուսումնասիրելով փաստագրական հարուստ նյութերը, վեր ենք հանել այն փաստը, որ 1923-1930-ական թվականներին Մարտակերտի կրթության շրջանային բաժնի վարիչի պաշտոնում աշխատել են Լազր Մովսիսյանը (1926-1928թթ.), Հովհաննես Նիկողոսյանը (1928-1934թթ.): Արշավիր Քամալյանի զեկուցագրում կարդում ենք. «Մարզի լուսբաժնի վարիչին՝ Ա.Քամալյանին, Ջրաբերդի շրջանի կրթության բաժնի վարիչ Լազր Մովսիսյանի 1926-1927 ուստարվա զեկուցագիրը շրջանի առաջին և երկրորդ աստիճանի դպրոցների քանակի, աշակերտության կազմի, ուսուցիչների կրթական ցենզի մասին» (նշենք, որ 1923-1925թթ. Լ.Մովսիսյանը եղել է մարզային կրթության բաժնի հրահանգիչ)[422]: ԼՂՀ ՊԱ լուսբաժնի ֆոնդում պահպանվող մի փաստաթղթում(գ.114) նույնպես նշվում է Լ.Մովսիսյանի հաշվետվությունը շրջանում անգրագիտության վերացման մասին: Կա ևս մի հաշվետվություն մարզսոցդասվարչության նախագահ Գուրգեն Էդիլյանին, որտեղ ներկայացնում է անգրագիտության վերացման ուղղությամբ շրջանում տարվող աշխատանքների, նաև ռուսական կրթություն ունեցող ուսուցիչների գործունեության մասին: Շրջժողկրթբաժնի վարիչի հաշվետվություններում նշվում է ուսումնական պլանների, ծրագրերի, դասագրքերի արդյունավետության, դպրոցաշինության և դպրոցների ներքին կյանքին վերաբերող այլ հարցերի մասին[423]: Շրջժողկրթբաժինը մեծ ուշադրություն է դարձրել նաև ուսուցչական կադրերի վերապատրաստման հարցին: Նա կարողացել է հանախմբել շրջանի դպրոցների ուսուցչական կոլեկտիվներին և մասնակից դարձրել դպրոցի վերակառուցման գործին:

Վերոնշյալ փաստագրական տվյալների համաձայն՝ **1928-1934 թվականներին** Մարտակերտի շրջանային կրթության բաժնը ղեկավարել է մարզային կրթության **բաժնի տեսուչ Հովհաննես Նիկողոսյանը**: ԼՂ լուսժողկոմ Առաքել Առաքելյանին, սոցդասվարչության նախագահ Գ.Էդիլյանին և ԼՂ լուսժողկոմ Արտո Վարդանովին (1930-1933թթ.) ներկայացրած հաշվետվություններում Հովհ. Նիկողոսյանը ներկայացնում է մարզի հանրակրթական դպրոցներում տարվող վերակառուցողական աշխատանքները 1928-1930թթ. և պարտադիր տարրական կրթության իրականացումը՝ համաձայն 1930թ. օգոստոսի 30-ին մարզլուսժողկոմի ընդունած որոշման: Շրջժողկրթբաժնի վարիչի հաշվետվություններում նշված է, որ շրջանի բոլոր բնակավայրերում մտցվում է ընդհանուր պարտադիր տարրական ուսուցում 9-10 տարեկան բոլոր երեխաների համար այն հաշվով, որպեսզի 1931-1932 ուստարում դպրոցներում ընդգրկվեն նաև 11 տարեկան երեխաներ: Միաժամանակ նշում է, որ առաջին աստիճանի դպրոցների (1-4-րդ դասարան) լրիվ դասընթացն ավարտելը պարտադիր է հայտարարվում այդ դպրոցների բոլոր սովորողների համար՝ անկախ նրանց տարիքից:

Մատնանշելով պարտուսի իրականացման ճանապարհին եղած լուրջ դժվարությունները, շրջժողկրթբաժնի վարիչը նաև նշում է այդ դժվարությունների հաղ-

թահարման համար մանկավարժական կոլեկտիվների, տնօրենների կողմից կատարված ուշագրավ աշխատանքներն ու կազմակերպչական միջոցառումները: Արխիվային փաստաթղթերից, ինչպես նաև Ար.Քամալյանի կազմած զեկուցագրերից տեղեկանում ենք, որ Հովհ.Նիկողոսյանի մարզլուսժողկոմին ներկայացրած հաշվետվություններում միջոցառումներ են նշվում շրջանի դպրոցաշինության ծավալման համար հատկացվող ֆինանսական միջոցների ավելացման, մանկավարժական նոր կադրերի պատրաստման, որակավորման և այլ հարցերի վերաբերյալ:

Արխիվային մի փաստաթղթում կարդում ենք, որ 1938-1940թթ. Մարտակերտի շրջանի կրթության բաժինը ղեկավարել է **Արշավիր Գրիգորյանը,** 1940-1941թթ.՝ **Սերգեյ Հովհաննիսյանը**[424]:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Հայրենական պատերազմի տարիներին (1942-1945թթ.) Մարտակերտի շրջանային կրթության բաժինը ղեկավարել է դպրոցի պրակտիկայում ճանաչված մանկավարժ **Սեդրակ Գասպարյանը** (1908-1988թթ.) [425]: Ծնվել է Արևմտյան Հայաստանի Մշո գավառի Սարե-Գյուլե (Վարդենիս) գյուղում: Ընդամենը յոթ տարեկան էր, երբ նրա ծնողները զոհ դարձան երիտթուրքերի կողմից իրականացված հայերի ցեղասպանության: Միջնակարգ կրթությունը (երկրորդ աստիճանի 9-ամյա դպրոցը) ստացել է Արևելյան Հայաստանի որբանոցներից մեկում և ավարտելուց հետո (1926թ.) մանկավարժական աշխատանքի անցել Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Չայլու գյուղի 7-ամյա դպրոցում (1926-1928թթ.), այնուհետև որպես ուսմասվար, տնօրեն աշխատում է Մարաղայի դպրոցում (1929-1932թթ.): Այդ տարիներին (1932-1937թթ.) նա ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը և աշխատանքի գործուղվել Խանլարի շրջան, որպես ուսմասվար աշխատել է հայկական Զագլիկ, Կուշչի գյուղերի յոթնամյա դպրոցներում: 1941թ. հունվարին Ադրբեջանի լուսժողկոմը բավարարում է նրա խնդրանքը և նորից տեղափոխում Մարտակերտի շրջան և նշանակում Չայլվի դպրոցի տնօրեն:

Սկսվեց Մեծ Հայրենականը: Գասպարյանը գրիչն ու մատյանը փոխարինում է զենքով: 1941թ. զորակոչվեց բանակ: 2 ամիս ծառայեց որպես շարքային, այնուհետև նշանակվեց վաշտի քաղղեկի տեղակալ, իսկ կոմունիստները նրան ընտրել էին կուսկազմակերպության քարտուղար: 1942թ. մայիսին Կերչի համար մղվող ծանր մարտերում Գասպարյանին, որը ծանր վիրավորվելուց հետո արդեն ապաքինվել էր, տալիս են 6 ամիս արձակուրդ, բայց հայրենասեր մանկավարժը 1 ամիս հետո կամավոր վերադարձավ ռազմաճակատ: 1943թ. ավարտեց Մախաչկալայի սպայական կարճատև դասընթացները և լեյտենանտի կոչումով մեկնեց ռազմաճակատ: Նշանակվում է վաշտի հրամանատար: Նրա վաշտը պատվով կատարում է հրամանատարության առաջադրանքը և բազմիցս արժանանում գովասանքների: 1943թ. նոյեմբերին Ս.Գասպարյանը նորից վիրավորվեց և, Բաքվի հոսպիտալում ապաքինվելուց հետո, որպես 2-րդ կարգի հաշմանդամ, զորացրվեց:

Մարտական շքանշանով պարգևատրված Ս.Գասպարյանը վերադառնում է Մարտակերտ: Մարզլուսբաժնի վարիչ Ս.Աբրահամյանի հրամանով 1943թ. սեպտեմբերի 1-ին նշանակվում է շրջանի կրթության բաժնի վարիչ: Հայտնի է, որ պատերազմական պայմանները որոշակի դժվարություններ էին առաջացրել նաև դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման և ուսումնանյութական բազայի հարցում: Դպրոցականներին անհրաժեշտ քանակությամբ գրենական պիտույքներով ապահովել հնարավոր չէր: Սակայն պատե-

ռազմի ռազմաճակատներում կոփված, դժվարությունները հաղթահարած շրջանային կրթության բաժնի վարիչը՝ Ս.Գասպարյանը, կարողացավ թիկունքում մնացած ուսուցիչներին համախմբել, նրանց ընդգրկել երկրի պաշտպանության գործին և, ամենակարևորը, ծավալուն աշխատանք տարավ պարտադիր ուսուցումը կենսագործելու ասպարեզում:

Հետպատերազմյան շրջանում (1946-1982թթ.) Ս.Գասպարյանը շարունակում է մանկավարժական գործունեություն: Որպես պատմության ուսուցիչ, ուսմասվար, տնօրեն աշխատում է Մարտակերտի շրջանի Թալիշի, Չայլվի, Մարաղայի միջնակարգ դպրոցներում[426]: Կյանքի վերջին տարիներին, չնայած առողջական վատ վիճակին, նա շարունակում է մանկավարժական թեմաներով հոդվածներով, պատերազմի տարիների իր հուշերով հանդես գալ շրջանային «Ձրաբերդ», մարզային «Սովետական Ղարաբաղ» թերթերում:

Փաստագրական տվյալներից տեղեկանում ենք, որ հետպատերազմյան շրջանում՝ 1946-1950թթ., Մարտակերտի շրջժողկրթբաժինը ղեկավարել են հայոց լեզվի և գրականության ուսուցիչներ **Արսեն Խաչատրյանը** (1945-1946թթ.), **Գևորգ Աբրահամյանը** (1946թ. մայիսից հոկտեմբեր), **Գուրգեն Գևորգյանը** (1946թ. հոկտեմբերից 1947թ. օգոստոս), պատմության ուսուցիչ **Թևան Ջավադյանը** (1947-1949թթ.), քիմիայի ուսուցիչ **Արշակ Գաբրիելյանը** (1949-1950թ. հունվար) [427]:

Ինչպես արդեն նշել ենք, պատերազմի տարիներն իրենց կնիքը դրեցին ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառների վրա: Այդ տեսակետից դպրոցը բացառություն չկազմեց: Ուստի հետպատերազմյան շրջանում շրջանային կրթության բաժնի վերոնշյալ ղեկավարներն, իրենց գործունեության շրջանում մեծ ջանքեր գործադրեցին, որպեսզի վերականգնվեր ոչ միայն նախապատերազմյան վիճակը, այլև նոր ժամանակների պահանջը բավարարող մակարդակի վրա դրվեր շրջանի դպրոցներում աճող սերնդի կրթության ու դաստիարակության գործը:

Ժամանակակիցների հուշերը[428] վկայում են, որ այդ տարիներին շրջանում դպրոցների թիվը ավելացավ, հատուկ ուշադրություն դարձվեց 7-ամյա և միջնակարգ դպրոցների թիվը ավելանալու վրա: Շրջանում կրթական գործի բարելավումը կապված էր նաև դպրոցի նյութական բազայի ամրապնդման և հատկապես դպրոցաշինարարության հետ: Վաստակաշատ մանկավարժ Միքայել Աղաջանյանի հուշերում, «Հաթերք» արժեքավոր աշխատությունում հիշատակվում են շրջանի գյուղերում տարրական դպրոցները 7-ամյա դպրոցների վերածելու (պարտադիր 7-ամյա կրթության անցնելու) ուղղությամբ տարվող աշխատանքների, ինչպես նաև այդ տարիներին հունվարյան, օգոստոսյան ուսուցչական խորհրդակցություններում քննարկվող ներդպրոցական բազնաբնույթ հարցերի մասին: Ուսուցչական խորհրդակցություններում ծավալուն հաշվետվություններով հանդես են եկել շրջժողկրթբաժնի վարիչը, առաջավոր դպրոցների տնօրենները(այդ մասին նշվել է սույն գլխի 3-րդ ենթագլխում):

1950-1960-ական թվականներին Մարտակերտի շրջանի կրթության բաժնի վարիչի պաշտոնում աշխատել են **Արամ Գասպարյանը** (1950թ. հունվարից 1951թ. սեպտեմբերը), **Արշակ Անանյանը** (1951-1953թթ. և 1957-1961թթ.), **Բոգդան Պողոսյանը** (1954-1957թթ.), **Սուրեն Երիցյանը** (1961-1964թ. մայիս), **Վաղարշակ Աղաբեկյանը** (1964-1967թ. սեպտեմբեր), **Յուրի Մարտիրոսյանը** (1967-1968թ. սեպտեմբեր), **Ստեփան Անաստասյանը** (1968-1969թ. սեպտեմբեր):

Արամ Գասպարյան (1906-1970թթ.): Ծնվել է Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղում[429]: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի առաջին

աստիճանի դպրոցում, այնուհետև ավարտել է Մարտակերտի երկրորդ աստիճանի դպրոցը (9-ամյա) և ուսումը շարունակել Ստեփանակերտի գյուղտեխնիկումում: Բարձրագույն կրթությունը ստացել է Կիրովաբադի գյուղատնտեսական ինստիտուտում (1929-1932թթ.): Ավարտելուց հետո աշխատում է շրջանային կուսակցական մարմիններում (1932-1936թթ.) որպես հրահանգիչ, իսկ 1937թ. մինչև 1941թ. հունիսը եղել է Մարտակերտի 7-ամյա (1937-1938թթ.), միջնակարգ դպրոցների (1938-1941թթ.) տնօրեն:

Պատերազմի հենց առաջին օրերին Գասպարյանը վերադասին հասցեագրված դիմումում գրում է. «Խնդրում եմ ինձ ազատեք պաշտոնից և ուղարկեք ռազմաճակատ: Իմ տեղը կրակների տակ է, կռվողների առաջին շարքում»:

Նրա խնդրանքը բավարարվեց: Նա շուտով զինվորական համազգեստով, ավագ լեյտենանտի ուսադիրներով քաղաշխատող էր 51-րդ բանակի 390-րդ հրածգային գնդում: Դասակի հրամանատար էր, շուտով իրեն դրսևորեց որպես հասուն, քաղաքականապես պատրաստ, գրագետ ու սկզբունքային կոմունիստ: Գնդի կոմունիստները նրան ընտրում են կուսկոմիտեի քարտուղար: Այնուհետև նա դառնում է գնդի ոգին, նրա խիղճը:

Դիվիզիայի թերթի 1942թ. մարտյան համարներից մեկում զետեղված էր մի ակնարկ «Անընկճելի ոգի» վերնագրով: Այն նվիրված էր Արամ Գասպարյանի սխրագործություններին: Գասպարյանը պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով և ստացել մայորի կոչում: Չանցած շատ ժամանակ, նա խիզախ գործողությունների համար պարգևատրվեց Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով: Այդ ժամանակ Գասպարյանը աշխատում էր որպես դիվիզիայի քաղբաժնին կից կուսակցական հանձնաժողովի պատասխանատու քարտուղար: Գերմանական ֆաշիզմի ջախջախումից հետո Գասպարյանը մասնակցել է ճապոնական միլիտարիզմի ջախջախմանը:

Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո մի շարք շքանշաններով ու մեդալներով պարգևատրված Ա.Գասպարյանը վերադառնում է հայրենի երկրամաս, շարունակում մանկավարժական գործունեությունը հայրենի Կուսապատի միջնակարգ դպրոցում՝ որպես ուսմասվար, տնօրեն (1945-1948թթ.), Մարտակերտի միջնակարգ դպրոցում (1948-1950թթ.): Մարզժողկրթբաժնի վարիչ Ս.Աբրահամյանի հրամանով 1950թ. սեպտեմբերի 1-ին նշանակվում է Մարտակերտի շրջժողկրթբաժնի վարիչ: Չնայած կարճատև գործունեություն է ծավալել կրթական համակարգում, այնուամենայնիվ, վաստակաշատ մանկավարժը մեծ աշխատանք է կատարել շրջանի դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների մակարդակը բարձրացնելու գործում: Մարտակերտի շրջժողկրթբաժնի արխիվում պահպանվող նրա հաշվետվությունների, ուսուցչական խորհրդակցություններում ունեցած զեկուցումների և այլ փաստաթղթերի ուսումնասիրությունից իմանում ենք, որ շրջժողկրթբաժնի վարիչը առաջնային է համարել ծայրամասային գյուղերի դպրոցները բարձրորակ ուսուցչական կադրերով ապահովելը, նրանց մեթոդամանկավարժական, մասնագիտական պատրաստվածության մակարդակը բարձրացնելը: Նման բնույթի և դպրոցի ներքին կյանքին վերաբերող բազմաբնույթ հարցեր պարբերաբար քննարկվել են շրջանային ուսուցչական խորհրդակցություններում: Այդ մասին իր հուշերում վկայում է նաև Վաղուհասի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Ռոզա Աթասյանը[430]: Վաստակաշատ ուսուցչուհին նաև պատմում է, որ շրջժողկրթբաժնի ընդլայնված խորհրդակցություններում իրենց հաշվետվություններով հանդես էին գալիս դպրոցների տնօրենները, նշում թերությունները: Ուսումնական տարվա յուրաքանչյուր կի-

սամյակում տնօրենների դասալսումների արդյունքները քննարկվում են շրջ-ժողկրթբաժնի ընդլայնված խորհրդակցություններում, և այդ ավանդույթը շարունակվում է հետագա տարիներին:

Հետպատերազմյան տարիներին Արամ Գասպարյանը ակտիվ մանկավարժ-պրոպագանդիստ էր, նա շատ բան է արել իր հարուստ փորձը իր կոլեգիաների սեփականությունը դարձնելու համար: Նրա գրչին են պատկանում շուրջ 10 հոդվածներ հանրապետական և մարզային մամուլում, նրա փորձի մասին մամուլում հրապարակված են բազմաթիվ հոդվածներ և հաղորդումներ:

Գասպարյանը արժանացել է հանրապետության վաստակավոր ուսուցչի պատվավոր կոչման:

Մարտակերտի կրթական համակարգի պատմության մեջ իր արժանավոր տեղն ունի վաստակաշատ մանկավարժ, «Ղարաբաղի ուսուցիչները Մեծ Հայրենականում» ձեռագիր գրքի հեղինակ **Արշակ Անանյանը** (1908-1977թթ.): Նրա կենսագրության, նախապատերազմյան շրջանում մանկավարժական գործունեության և Հայրենական պատերազմին ակտիվ մասնակցության, ինչպես նաև հետպատերազմյան շրջանում ծավալած գործունեության մասին համառոտակի ներկայացվել է սույն աշխատության երկրորդ գլխում: Ուստի այս բաժնում փաստագրական նյութերի և ժամանակակիցների հուշերի ուսումնասիրության հիման վրա կներկայացվի միայն Մարտակերտի շրջժողկրթբաժնի վարիչի պաշտոնում աշխատած տարիների (1951-1953թթ. և 1957-1961թթ.) բեղմնավոր գործունեությունը:

1950-ական թվականների սկզբներին, ինչպես մարզի մյուս շրջանների, այնպես էլ Մարտակերտի հանրակրթական դպրոցները լուրջ հաջողություններ ձեռք բերեցին երկրի ժողովրդական տնտեսության վերակառուցման շրջանում, զգալիորեն ընդլայնվում է դպրոցական ցանցը, ավելանում նաև դպրոցներում սովորողների թիվը: Այդ ժամանակաշրջանը (1950-1958թթ.) բնորոշ էր նաև նրանով, որ շրջանում աստիճանաբար ավելանում էր յոթնամյա դպրոցների թիվը:

Փաստագրական նյութերից և այլ աղբյուրներից տեղեկանում ենք, որ շրջ-ժողկրթբաժնի վարիչ Արշակ Անանյանը իր գործունեության առաջին՝ 1951-1952 ուստարում օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում իր զեկուցման մեջ ընդհանրացնում է անցած ուստարում (1950-1951) շրջանի դպրոցների մանկավարժական կոլեկտիվների կատարած աշխատանքները, մատնանշում հատկապես Մարտակերտի թիվ 1, Կուսապատի, Չայլվի, Թալիշի, Հաթերքի, Հարգոմերի, Վաղուհասի միջնակարգ դպրոցներում՝ ուսումնադաստիարակչական աշխատանքերի կազմակերպման ուղղությամբ ուսուցիչների առաջավոր փորձը, ինչպես նաև շեշտում որոշ դպրոցներում դեռևս գոյություն ունեցող թերությունները: «Ուսումնական աշխատանքների արդյունավետ կազմակերպումն ու որոշակի բարձրացումը շրջանի դպրոցներում» խորագրով զեկուցման մեջ շրջժողկրթբաժնի վարիչը դիտարկում է ժամանակաշրջանի պահանջներին համահունչ հետևյալ հարցերը. ա) ուսուցչի ինքնակրթությունը և մանկավարժական վարպետության բարձրացման ուղիները, բ) ուսուցչի մանկավարժական վարպետությունը, տակտը և կուլտուրան դասին, գ) սովորողների գաղափարաքաղաքական դաստիարակության արդյունավետ կազմակերպումը, դ) դպրոցականների ուսուցման արդյունավետության բարձրացումը, ե) ուսուցիչների առաջավոր փորձի բացահայտումը և տարածումը մանկավարժական կոլեկտիվներում, զ) դպրոցներում ծնողական ժողովների նախապատրաստման և անցկացման աշխատանքային պլանի մշակումը և սիստեմատիկ իրականացումը և այլն[431]:

Արխիվային փաստաթղթերում[432] նաև պահպանվում են նրա մշակած աշխատանքային պլանը, հաշվետվությունները, դպրոցներում կատարված դասալսումների գրառումները, դպրոցների տնօրենների խորհրդակցություններում քննարկված հարցերը, տնօրենների հաշվետվությունները և այլն: Հետաքրքրության համար ներկայացնենք աշխատանքային պլանի մի հատված:

1. Շրջանի դպրոցներում պարբերաբար ստուգել ուսումնական պլանների, ծրագրերի կատարումը և բացահայտել թերությունները:

2. Դասամատյանների, խմբակների և նախապատրաստական պարապմունքների մատյանների, աշակերտների առաջադիմության ստուգում և քննարկում շրջանի ուսուցչական խորհրդակցություններում:

3. Սովորողների հետ տարվող ուսումնական և արտաուսումնական աշխատանքների կազմակերպման արդյունքների քննարկումը մանկավարժական խորհրդի նիստերում և դպրոցների տնօրենների խորհրդակցություններում:

4. Բաց և փոխադարձ դասալսումների, ինչպես նաև Հաթերքի, Թալիշի, Չայլվի, Մարտակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցներում առաջավոր փորձը փոխանակելու նպատակով դասալսումների կազմակերպում՝ մասնակից դարձնելով մոտակա գյուղերի դպրոցների մանկավարժական կոլեկտիվներին: Հետագայում դասալսումները շարունակել շրջանի մյուս դպրոցներում:

5. Դասվարների, դասղեկների դաստիարակչական աշխատանքների պլանի ստուգումը տնօրենի կողմից և կատարման արդյունքների քննարկումը մանկավարժական խորհրդի նիստում՝ մասնակից դարձնելով նաև ծնողական կոմիտեի անդամներին:

6. Առարկայական մեթոդական միավորումների աշխատանքի պլանավորումը և նշված խնդիրների լուծումը:

7. Ներդպրոցական գործունեության վերահսկողությունը՝ տնօրենի, փոխտնօրենի և տեսչական վերահսկողության վերակառուցում, որը կնպաստի ուսումնադաստիարակչական աշխատանքերի արդյունավետ կազմակերպմանն ու որակի բարձրացմանը:

Ինչպես տեսնում ենք, ժամանակաշրջանի կրթության բաժնի վարիչներից առաջինն է Ա.Անանյանը, որ ստեղծագործաբար մշակել է շրջանի դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքերի նորովի կազմակերպելու պլանը, որը, ըստ ժամանակակիցների հուշերի (Սարգիս Աթասյան՝ Վաղուհասի միջն.դպրոց, Լևոն Մակյան՝ Հարգոմերի դպրոց, Միքայել Աղաջանյան՝ Հաթերքի դպրոց, Սեդրակ Օհանջանյան՝ Մարտակերտի միջն.դպրոց և ուրիշներ), ուղեցույց եղավ շրջանի դպրոցների մանկավարժական կոլեկտիվների համար:

Շրջժողկրթբաժնի վարիչ Ա.Անանյանի գործունեության տարիներին՝ 50-ական թվականներին, ուսուցչի օրվա անցկացման պրակտիկան կիրառվեց նաև շրջանի բոլոր դպրոցներում: Տվյալ ժամանակաշրջանում, երբ որոշակի պայքար էր ծավալվում ուսման որակի բարձրացման, սովորողներին կայուն գիտելիքներ տալու, ուսուցման մեջ ձևամոլության դեմ պայքարելու համար, հիշյալ միջոցառումը որոշակի դրական դեր կատարեց: Դա միևնույն ժամանակ լավագույն ուսուցիչներին խրախուսելու, նրանց մանկավարժական փորձը մասսայականացնելու օգտակար միջոց հանդիսացավ:

Ա.Անանյանի գործունեության տարիներին՝ դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքերի կազմակերպման, առաջավոր փորձի վերլուծության և ուսուցչական խորհրդակցություններում ու կոնֆերանսներում քննարկված հարցերի մասին արդեն համառոտակի նշվել է սույն գլխի 2-րդ, 3-րդ բաժիննե-

ում: Այժմ հանառոտակի բնութագրենք 60-70-ական թվականներին Մարտակերտի շրջանի կրթության բաժնի վարիչների կատարած աշխատանքները: Հարկ է նշել, որ 50-ական թվականներին (1954-1957թթ.) Մարտակերտի կրթության բաժինը ղեկավարել է Մեծ շենի միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Բոգդան Պողոսյանը, իսկ 1957-1961թթ. նորից ղեկավարել է Արշակ Անանյանը:

1960-ական թվայաններին Մարտակերտի շրջանի կրթության բաժնի վարիչի պաշտոնում աշխատել են **Սուրեն Երիցյանը** (պատմության ուսուցիչ, 1961-1964թթ.), **Վաղարշակ Աղաբեկյանը** (հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, 1964-1967թթ.), **Յուրի Մարտիրոսյանը** (ֆիզիկայի ուսուցիչ, 1967-1968թթ.), **Ստեփան Անաստասյանը** (պատմության ուսուցիչ, 1968-1969թթ.):

-1950-ական թվականներին մեր շրջանում ժողովրդական տնտեսության վերելքը, բնակչության նյութական որոշ չափով բարեկեցությունը ռեալ պայմաններ ստեղծեցին նաև մշակույթի և ժողովրդական կրթության հետագա զարգացման համար,- իր զեկուցման մեջ մատնանշել է շրջժողկրթբաժնի վարիչ **Սուրեն Երիցյանը՝** 1962թ. օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում: Ինչպես իրենց հուշերում վկայում են այդ խորհրդակցության մասնակիցները (Ռ.Բաղդասարյան, Մ.Միքայելյան, Ս.Խաչյան, Մ.Աղաջանյան և ուրիշներ)[433], այդ կապակցությամբ շրջժողկրթբաժնի նախաձեռնությամբ մշակվեցին ու շրջանի դպրոցներ ուղարկվեցին մի շարք փաստաթղթեր: Դրանց մեջ ուշադրության արժանի է մանկավարժական տեսակետից հիմնավորված «Դպրոցական կարգապահությունը ամրապնդելու մասին» մարզժողկրթբաժնի դեռևս 1954թ. ապրիլի 16-ին ընդունած որոշումը:

Շրջժողկրթբաժնի վարիչի հաշվետվություններում առանձնապես ուշադրություն էր դարձվում շրջանի դպրոցներում արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը, էքսկուրսիաների, կուլտուր-մասսայական միջոցառումների, ընկերական հանդիպումների, շրջանային մրցույթների՝ ստեղծագործական շարադրությունների, խաղերի և այլ միջոցառումների խրախուսմանը, ինչպես նաև հանրօգուտ աշխատանքների և այլ միջոցառումների կազմակերպմանը:

Երիցյանը հանգամանորեն ներկայացրեց 50-ական թվականներին շրջանի կրթական համակարգում իրականացված որոշ բարեփոխումներ՝ հանրակրթական դպրոցների և նախադպրոցական հիմնարկների ցանցի ընդլայնում, 7-ամյա պարտադիր կրթության իրականացում և անցում պարտադիր 8-ամյա կրթության (1958 թվականից), դպրոցներում ուսումնական կաբինետների և լաբորատոր սարքավորումների կահավորում, ուսումնական պլանների ու ծրագրերի վերանայում, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման որակի բարձրացում և այլն: Շրջժողկրթբաժնի վարիչը զեկուցման մեջ նաև շեշտեց, որ շրջանում մեծ ծավալ է ստացել դպրոցաշինությունը, հարստացել դպրոցների նյութական բազան: Նա հանրակրթական դպրոցի բարեփոխման նոր փուլում առաջնային խնդիր համարեց 7-ամյա պարտադիր կրթությունից 8-ամյա կրթության անցումը 1962-1963 ուստարում, ինչպես նաև երկարօրյա դպրոցների կազմակերպումը 1961-1962 ուստարում և ընդհանուր միջնակարգ կրթության իրականացումը[434]: Շրջժողկրթբաժնի վարիչը առանձնապես նշեց, որ շրջանի կրթության ամբողջ համակարգում իր ուրույն տեղն ունի սովորողների աշխատանքային դաստիարակության արդյունավետ կազմակերպումը: Այս ասպարեզում աշխատանքային դաստիարակության ճշմարիտ ուղին, անշուշտ, ուսումնական առարկան հետաքրքիր ու կենսական դարձնելն է: Այն ապահովում

է աշակերտների գիտելիքների գործնականությունը, տարբեր իրավիճակներում դրանց գործադրման հմտությունների ու կարողությունների զարգացումը:

Վերոնշյալ ուսուցչական խորհրդակցությանը մասնակցել է մարզժողկրթբաժնի վարիչ Հակոբ Օհանջանյանը և իր ելույթում ամփոփել հետպատերազմյան շրջանում մարզի կրթական համակարգում ձեռք բերված նվաճումները, առաջնահերթ խնդիր համարել մարզի հանրակրթական դպրոցներում ուսուցման գործընթացի բարելավումն ու կատարելագործումը նոր պահանջներին համապատասխան: Նա հատուկ ուշադրություն է դարձրել գյուղական դպրոցների ուսուցիչների նյութական ու կենցաղային վիճակի բարելավման հարցերին և հանձնարարել շրջժողկրթբաժնին՝ երկարատև ու անբասիր աշխատանքի համար լավագույն ուսուցիչներին ներկայացնել խրախուսման: «Դպրոցը,- նշել է Հ.Օհանջանյանը,- կենդանի օրգանիզմ է, սիրում է կենդանի մարդկանց: Կենդանի մարդիկ են երեխաները, կենդանի մարդ պիտի լինի նաև ուսուցիչը: Լինելով «ստեղծագործական», դպրոցը պահանջում է,որ ուսուցիչը ստեղծագործի»[435]:

Ժամանակակիցների հուշերը վկայում են, որ Ս.Երիցյանը կաբինետային վարիչ չէր, պարբերաբար լինում էր շրջանի գյուղական դպրոցներում, մասնակցում դասալսումներին, մանկավարժական խորհրդակցություններին և իր գրառումները ներկայացնում հունվարյան և օգոստոսյան ուսուցչական խորհրդակցություններում, միաժամանակ ուսուցիչներին կոչ անում ամենօրյա դասը կատարելագործելու ուղղությամբ որոնել դասավանդման նոր մեթոդներ ու հնարներ, բարձրացնել դասի արդյունավետությունն ու որակը: Այդ նպատակով շրջանի Մարադայի, Կուսապատի, Հաթերքի, Հարգոմերի, Վաղուհասի, Չլդրանի, Մաղավուզի և ուրիշ դպրոցների մանկավարժական խորհուրդների նիստերում ունեցած իր ելույթներում մատնանշում է, որ ստեղծագործաբար աշխատող ուսուցիչը պետք է խորապես թափանցի սաների ներաշխարհը ու մտածի, թե ինչպես նախապատրաստվել ամենօրյա դասերին, որպեսզի աշակերտների ուսուցումը արդյունավետ լինի: Նա հատկապես խորհուրդներ էր տալիս սկսնակ ուսուցիչներին՝ դասալսումներ ունենալ փորձառու ուսուցիչների մոտ, լսել նրանց ուսանելի խորհուրդները[436]:

Ուսումնասիրությունները վկայում են, որ Մարտակերտի շրջժողկրթբաժնի վարիչ, վաստակաշատ մանկավարժ **Վաղարշակ Աղաբեկյանի գործունեության տարիներին** (1964թ. մայիսից-1967թ. սեպտեմբեր) շրջանի կրթական համակարգը հնարավորինս վերակառուցվեց և արմատապես բարելավվեց ուսումնադաստիարակչական աշխատանքերի կազմակերպումը դպրոցներում, բարձրացավ յուրաքանչյուր առարկայի դասավանդման մակարդակը, բարձր հիմքի վրա դրվեցին դաստիարակչական աշխատանքները գիշերօթիկ և երկարօրյա դպրոցներում, լուրջ աշխատանք ծավալվեց արտադրական ուսուցման առարկաները ծրագրերով ապահովելու, ուսուցիչների վերապատրաստման դասընթացները, դպրոցներում մանկավարժական ընթերցումները կազմակերպելու ուղղությամբ:

Վ.Աղաբեկյանը իր պաշտոնավարության առաջին՝ 1964-1965 ուսումնական տարում շրջանի ուսուցչական խորհրդակցությունում հանդես է գալիս բովանդակալից ու հետաքրքիր զեկուցումով, որտեղ մասնավորապես ուսուցիչների ուշադրությանն է ներկայացնում կարևորագույն հիմնահարցերը: Նկատի ունենք հետևյալը.

1.Ուսուցչի մասնագիտական որակավորման բարձրացումը, դպրոցներում այդ ուղղությամբ վերարակավորման պահանջմունքների բացահայտումը:

2.Դպրոցի և ընտանիքի սերտ կապի ամրապնդումը, ուսուցչի աշխատանքը

ծնողի հետ:

3. Ուսուցչի և աշակերտի փոխհարաբերությունները ուսուցման և դաստիարակության գործընթացում:

4. Աշակերտի նկատմամբ ուսուցչի մանկավարժական ճիշտ մոտեցումը՝ որպես ուսումնական աշխատանքերի արդյունավետ կազմակերպման և որակի բարձրացման անհրաժեշտ պայման:

5. Մանկավարժական կադրերի աշխատանքի օբյեկտիվ գնահատման չափանիշների մշակումը:

6.Դպրոցի տնօրենի շաբաթական աշխատանքային պլանի առկայությունն ու իրականացումը:

7.Դասղեկին, դասվարին ներկայացվող մանկավարժական պահանջները:

8.Դպրոցի մանկավարժական խորհրդի աշխատանքի պլանավորման իմ փորձը:

9.Ամենօրյա դասալսումների արդյունքների վերլուծությունը, թերությունների բացահայտումը և սկսնակ ուսուցիչներին մեթոդական օգնություն ցույց տալու միջոցները[437]:

Ուսումնադաստիարակչական աշխատանքերի որակի բարձրացմանը խթանող նշված հիմնահարցերի մի մասը լուսաբանված է Վ.Աղաբեկյանի «Պատգամ սերունդներին» արժեքավոր աշխատությունում:

Ժամանակակիցների հուշերը (Ազնիվ Աղաբեկյան, Մ.Աղաջանյան. Մ.Մովսիսյան, Մ.Միքայելյան, Ռ.Բաղդասարյան, Է,Հարությունյան, Ա.Վանյան և ուրիշներ) վկայում են, որ Վ.Աղաբեկյանը իր գործունեության տարիներին շրջանի գրեթե բոլոր դպրոցներում դաս է լսել կամ հայոց լեզվի և գրականության փորձնական դաս կազմակերպել՝ մասնակից դարձնելով հատկապես սկսնակ ուսուցիչներին: Օրինակ, սույն գրքի համահեղինակը (Հ.Գ.), որ 1965-1966 ուստարում աշխատում էր Հարգոմերի դպրոցում, ներկա է եղել Վ.Աղաբեկյանի կազմակերպած փորձնական դասին (1952-1953թթ. Վ.Աղաբեկյանը եղել է նաև նշված դպրոցի տնօրեն), նաև լսել «Պոլիտեխնիկական կրթության դրվածքը շրջանի դպրոցներում» խորագիրը կրող նրա զեկուցումը:

Հարկ է նշել նաև, որ շրջժողկրթբաժվարը շրջանային, մարզային պարբերական մամուլում հանդես էր գալիս «Ուսուցիչը դպրոցի կենտրոնական դեմքն է», «Մանկավարժական կոլեկտիվը՝ ստեղծագործական որոնումների ուղիներում», «Դաստիարակել կրթությամբ» և այլ ուշագրավ հոդվածներով, որոնցում տեսական հարցերի լուսաբանման հետ միասին կենկրետ օրինակներ էր բերում շրջանի դպրոցների լավագույն ուսուցիչների դասը արդյունավետ կազմակերպելու ուսանելի փորձից:

Անշուշտ, տքնաջան աշխատանքի արդյունք էին շրջանի կրթական համակարգում նրա բեղուն գործունեությունը և մանկավարժական ստեղծագործական աշխատանքը: Եվ ես (Գ.Հ.) հիմա անկեղծ ջերմությամբ եմ հիշում այն տարիները, երբ բախտ եմ ունեցել (շատ երիտասարդ տարիքից) աշխատել նրա ղեկավարած կրթական համակարգում, լսել նաև շրջանային ուսուցչական խորհրդակցությունում նրա հետաքրքիր, մանկավարժական ասույթներով հագեցած զեկուցումները, սկսնակ ուսուցիչներին տված խորհուրդները:

Վերոնշյալ ժամանակաշրջանում Մարտակերտի շրջանի կրթության բաժնի վարիչի պաշտոնում աշխատել են ֆիզիկայի ուսուցիչ **Յուրի Մարտիրոսյանը** (1967թ. սեպտեմբեր-1968թ. սեպտեմբեր), պատմության ուսուցիչ Ստեփան Անաստասյանը (1968թ. սեպտեմբեր-1969թ.օգոստոս): Ի դեպ, սույն գրքի համա-

հեղինակը (Գ.Հ.), մասնակցել է այդ ուսումնական տարիներին նրանց ղեկավարած ուսուցչական խորհրդակցություններին: Շրջանի կրթական համակարգը ընդհանրացնող նրանց զեկուցումներում հակիրճ տեղեկություններ էին տրվում շրջանի դպրոցների մանկավարժական կոլեկտիվների գործունեության մասին: Հիշում եմ, մարզժողկրթբաժնի վարիչ Ս.Արամյանը իր ելույթում շեշտում էր, որ շրջժողկրթբաժնի վարիչը պետք է մանրամասն ներկայացնի շրջանի կրթական համակարգում կատարված աշխատանքները, լինի ուսուցչի խորհրդատուն, լսի նրա դասը, մեթոդական օգնություն ցույց տա, ակտիվորեն մասնակցի մանկավարժական խորհրդի նիստերին: Ս.Արամյանը իր ելույթներում նաև ըստ արժանվույն գնահատեց Ս.Երիցյանի, Վ.Աղաբեկյանի պաշտոնավարության ժամանակ շրջանի դպրոցներում կատարված լավագույն աշխատանքները և մատնանշեց, որ այդ լավագույն ավանդույթները պետք է շարունակվեն:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ շրջանի հանրակրթական դպրոցների վերակառուցման աշխատանքները հաջողությամբ իրականացվեցին և նախկին լավագույն ավանդույթները շարունակվեցին բազմահմուտ մանկավարժ, գրաքննադատ, հրապարակախոս և սկսնակ ուսուցիչների խորհրդատու **Շահեն Օհանջանյանի՝ շրջժողկրթբաժնի վարիչի պաշտոնավարման շրջանում** (1969-1976թթ.)[438]: Նպատակահարմար ենք գտնում ներկայացնել նաև նրա բեղմնավոր գործունեությունը մանկավարժական, մշակութային և քաղաքական ասպարեզում:

Ծնվել է 1931թ. Մարտակերտում: 1948թ. գերազանց գնահատականներով ավարտել է միջնակարգ դպրոցը, ուսումը շարունակել Բաքվի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում (1949-1954թթ.), այն ավարտել առաջին կարգի դիպլոմով ու մանկավարժական աշխատանքի անցել շրջանի դպրոցներում: 1954-1955թթ. որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար աշխատել է Լենինավանի միջնակարգ դպրոցում, իսկ 1956-1960թթ.՝ Մարտակերտի միջնակարգ դպրոցում, միաժամանակ եղել է շրջժողկրթբաժնի մեթոդկաբինետի վարիչ: Հետագա տարիներին (1961-1964թթ.) Շ.Օհանջանյանը աշխատել է որպես կուսշրջկոմի քաղլուստան բաժնի վարիչ, շրջխորհրդի գործկոմի նախագահի տեղակալ:

Անշուշտ, այդ տարիներին Շ.Օհանջանյանի ուշադրության կենտրոնում միշտ եղել են հայեցի կրթություն տվող դպրոցը, մանկավարժական աշխատանքը: Դա են վկայում պարբերական մամուլում տպագրված նրա ուշագրավ հոդվածները՝ նվիրված մանկավարժական տեսական հարցերի լուսաբանմանը: Եվ չնայած աշխատում էր կուսակցական մարմիններում, նրա հոդվածները մանկավարժական բնույթ էին կրում:

Գնահատելով Շ. Օհանջանյանի մանկավարժական տաղանդն ու կազմակերպչական ընդունակությունները, շրջանի ղեկավարությունը նրան նշանակում է շրջժողկրթբաժնի վարիչ (1969թ. սեպտեմբերի 1-ից), ուր աշխատում է շուրջ ութ տարի և անգնահատելի ծառայություն մատուցում շրջանի կրթական համակարգի բարգավաճմանը:

Որպես այդ ժամանակաշրջանի մանկավարժ (սույն գրքի համահեղինակը 1972-1974թթ. աշխատում էր Վաղուհասի միջն. դպրոցում՝ Գ.Հ.), հստակ կարող եմ մատնանշել, որ Շահեն Օհանջանյանի՝ որպես շրջժողկրթբաժնի ղեկավարի, տարիների մանկավարժական փորձը հնարավորություն են ընձեռում այնպես կառուցել ուսումնադաստիարակչական աշխատանքերը շրջանի դպրոցներում, որպեսզի յուրաքանչյուր ուսուցիչ դասավանդի այնպես, որ աշակերտը, դասերից

հետո տուն գնալով, անհամբերությամբ սպասի հաջորդ առավոտյան, որ գնա դպրոց: Նրա բնութագրմամբ՝ «դպրոցը պետք է դառնա ուրախության դպրոց, իսկ ուսուցիչը խորապես տիրապետի այն գիտությանը, որի վրա կառուցելու է իր կողմից դասավանդվող առարկան»: Լենինավանի միջն. դպրոցի պատմության ուսուցիչ Ալեքսանդր (Շուրա) Հասրաթյանը (հինգ գրքի հեղինակ) իր հուշերում գրում է. «Երբ նրան նշանակեցին մեր դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար, սկսեց ուշադիր ուսումնասիրել աշակերտներին, ձգտում էր թափանցել նրանց հոգեկան աշխարհը: Հմտորեն որոնում էր դաստիարակության և ուսուցման իր հնարներն ու միջոցները, դասը արդյունավետ դարձնելու եղանակները, իսկ մանկավարժական խորհրդի նիստերում միշտ մատնանշում էր, որ բարձր առաջադիմության հասնելու համար անհրաժեշտ է հետևողական ու քրտնաջան աշխատանք: Նրան հաջողվեց կարճ ժամանակում դպրոցում ստեղծել հայոց լեզվի և գրականության, պատմության և աշխարհագրության և այլ առարկաների մեթոդական միավորման հանձնաժողովներ, կազմակերպել բաց և փոխադարձ դասալսումներ, բարձրացնել այդ առարկաների դասավանդման դրվածքը: Նրա մանկավարժական փորձը հնարավորություն է ընձեռել հմտորեն կազմակերպել շրջանի կրթական համակարգի աշխատանքները»[439]:

Փաստագրական նյութերի ուսումնասիրությունից տեղեկանում ենք, որ Շ.Օհանջանյանը իր գործունեության առաջին՝ 1969-1970 ուստարվա օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում (մասնակցում էին շրջանի դպրոցների ուսուցիչները, ներդպրոցական կառավարման համակարգի բոլոր աշխատողները, մարզժողկրթբաժնի վարիչ Ս.Արամյանը, կուսակցության մարզկոմի քարտուղար Ե.Սարգսյանը, շրջանի կուսակցական պատասխանատու աշխատողներ և այլ անձինք) հանդես եկավ ծավալուն զեկուցումով (խորհրդակցությանը ներկա է եղել նաև տողերիս հեղինակը՝ Գ.Հ.), որտեղ մանրամասնորեն ներկայացրեց շրջանի դպրոցներում տիրող իրավիճակը: Մինչև խորհրդակցությունը նա եղել էր շրջանի բոլոր դպրոցներում, ծանոթացել տարվող աշխատանքներին, իր օրագրում նշել նաև թերությունները: Զեկուցման մեջ առաջնային էր համարում.

1. Շրջանի դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների արմատական վերակառուցում:

2. Պարտադիր միջնակարգ դպրոցների թվի ավելացում (այդ ժամանակաշրջանում կար ընդամենը 12 միջն. դպրոց), ուսումնանյութական բազայի հարստացումը:

3. Արտադրությունում աշխատող երիտասարդության համար բացել հեռակա, երեկոյան դպրոցներ և արդյունավետ կազմակերպել ուսումնական պարապմունքները:

4. Բարձրացնել ուսումնադաստիարակչական աշխատանքների որակը Մարտակերտի գիշերօթիկ դպրոցում և Մարտակերտի, Թալիշի, Չայլվի, Լենինավանի, Կուսապատի, Հաթերքի երկարօրյա դպրոցներում:

5. Ավանդույթ դարձնել միջշրջանային փոխադարձ դասալսումները, բաց դասերի կազմակերպումը և առաջավոր փորձը տարածել հատկապես ծայրամասային գյուղերի դպրոցներում:

6. Մանկավարժական խորհրդի նիստերում պարբերաբար քննարկել դասալսումների արդյունքները, ներկայացնել ուսուցիչների թույլ և ուժեղ կողմերի վերլուծությունը: Դասալսումները չպետք է դիտարկել որպես պատիժ անբավարար աշխատանքի համար, այլ դրանք պետք է միտված լինեն ուսուցչին մեթոդապես օգնելուն, դասի որակը բարձրացնելուն:

7. Յուրաքանչյուր դպրոցի տնօրեն պետք է ունենա ամենօրյա, շաբաթական, կիսամյակային և ուսումնական տարվա աշխատանքային պլան, ինչպես նաև դպրոցի զարգացման հեռանկարային պլան, որտեղ պիտի նշվեն.

ա) ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպումը դպրոցում.

բ) նորամուծությունների փորձարկման և ներդրման ուղղությամբ տարվող աշխատանքները.

գ) արտաուսումնական, արտադպրոցական աշխատանքների կազմակերպումը դպրոցում.

դ) նախասիրական (ֆակուլտատիվ) պարապմունքների արդյունավետ կազմակերպումը.

ե) աշխատանքը սկսնակ ուսուցիչների հետ.

զ) դպրոցի համատեղ աշխատանքը ծնողների հետ.

է) առարկայական մեթոդմիավորման աշխատանքների կազմակերպումը և որակի բարձրացումը.

ը) դասղեկների, դասվարների աշխատանքների պլանավորումը դպրոցում.

թ) մանկավարժական ընթերցումների պլանի նորովի մշակումն ու կազմակերպումը դպրոցում.

ժ) մանկավարժական խորհրդի նիստերում քննարկվելիք հարցերը.

ի) աշակերտների ուսման առաջադիմությունը՝ ըստ կիսամյակների.

լ) ուսումնադաստիարակչական գործընթացի վերահսկողության իրականացումը դպրոցում.

խ) դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը.

ծ) դպրոցի աշխատանքները արձակուրդին և այլն:

Անշուշտ, շրջժողկրթբաժնի վարիչի վերոնշյալ խելամտորեն մշակված և առաջադրված ծրագրային դրույթները ուղեցույց են եղել շրջանի դպրոցների մանկավարժական կոլեկտիվների համար: Շ.Օհանջանյանի գործունեության տարիներին կառուցվել են դպրոցական նոր շենքեր, վերանորոգվել հները, բոլոր դպրոցներում առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում դպրոցականների ուսուցումն արտադրական աշխատանքի հետ շաղկապելու հույժ կարևոր խնդրի իրականացմանը: Հարկ է նաև նշել, որ յուրաքանչյուր ուսումնական տարվա հունվարյան և օգոստոսյան ուսուցչական խորհրդակցություններում հավաստի փաստերի հիման վրա և կոնկրետ օրինակներով ներկայացվում էին շրջանի դպրոցներում տարվող աշխատանքները: Ժողկրթբաժվարը պահանջում էր, որ դպրոցական տեսուչները, դպրոցների տնօրենները իրենց հաշվետվություններով հանդես գան կատարված աշխատանքների մասին, հատկապես նշեն թերությունները և դժվարությունները և անեն առաջարկություններ, որոնք կխթանեն դպրոցներում ուսման որակի բարձրացմանը: Նա ուսուցչական խորհրդակցություններում առանձնակի ուշադրություն էր դարձնում տնօրենների, ուսմասվարների լսած դասերի վերլուծություններին և թերությունները վերացնելուն[440]:

Ուրախությամբ պետք է նշել, որ Շ.Օհանջանյանի գործունեության տարիներին շրջանի դպրոցների ուսուցիչները մասնակցում էին ոչ միայն մարզի ուսուցչական ընդհանուր խորհրդակցություններին, կոնֆերանսներին, այլև Հայաստանի, ուսուցչական համագումարներին, շրջանի կրթական համակարգում ձեռք բերած նվաճումները ցուցադրվում էին մարզժողկրթբաժնում կազմակերպված «Ժողովրդական կրթության տաղավարում»: Այդ տարիներին շրջանի կրթական համակարգում գործում էին 56 հանրակրթական, 7 երեկոյան դպրոցներ, 23 նախադպրոցական և 5 արտադպրոցական հիմնարկներ:

Հետագա տարիներին Շ.Օհանջանյանը եղել է Մարտակերտի թիվ 1 դպրոցի տնօրեն (1977-1984թթ.), միաժամանակ զբաղվել գրական ստեղծագործական աշխատանքով, տարիների իր հարուստ փորձը ընդհանրացրել պարբերական մամուլում տպագրված հոդվածներում ու գրական ստեղծագործություններում: Ըստ Բ.Դավթյանի «20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժները» գրքի տվյալների, Շ.Օհանջանյանը հեռակա կարգով ավարտել է Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրան և պաշտպանել թեկնածուական թեզ «Համո Սահյանի լիրիկան» թեմայով: Սակայն Ռ.Բաղդասարյանի հուշերում նշվում է, որ կուսմարզկոմի առաջին քարտուղար Բ. Կևորկովը խանգարել է նրան պաշտպանել թեկնածուական ատենախոսությունը, քանի որ կապված էր Հայաստանի գրական աշխարհի հետ: Որպես մարզի ժողովրդական կրթության երախտավորներից մեկը՝ Շ.Օհանջանյանը շրջժողկրթության անզուգական կազմակերպիչ էր, լրագրող, արձակագիր («Վերելքի ճանապարհին», «Որոնողները» գրքերի, վիպակների հեղինակ): Նրա ամբողջ գիտակցական կյանքը իր ժողովրդին անձնվիրաբար ծառայելու վառ օրինակ էր:

Արամ Մուսաևիչ Բորիսովսկին «Վ.Ա.Սուխոմլինսկի» աշխատությունում գրում է, որ Սուխոմլինսկու բազմամյա մանկավարժական փորձը հիմք էր տալիս պնդելու, որ ոչ բոլորը կարող են ուսուցիչ լինել: Այդ մասնագիտությունը մարդուց պահանջում է մեծ հոգի, սիրող սիրտ: Այդպիսին էին ժամանակաշրջանի մարզի կրթական գործի կազմակերպիչները, նրանց շարքում՝ Շահեն Օհանջանյանը:

1970-ական թվականների կեսերից մինչև Արցախյան շարժումը Մարտակերտի շրջժողկրթբաժնի վարիչի պաշտոնում աշխատել են **Ռուբեն Հարությունյանը** (1977-1986թթ.), **Ռաֆիկ Ահարոնյանը** (1986-1988թթ.), **Ռաֆայել Բաղդասարյանը** (1988-1994թթ.):

Փաստագրական նյութերի, կրթության բաժնի վարիչների և ժամանակակիցների հուշերի ուսումնասիրությունից տեղեկանում ենք, որ 1977-1988թթ. շրջանի կրթական համակարգում շատ քիչ փոփոխություններ են կատարվել «Հանրակրթական և պրոֆեսիոնալ դպրոցի ռեֆորմի մասին» որոշումն (1984թ. ապրիլի 16-ին) ընդունելուց հետո:

բ) Մարտունու շրջանի կրթության բաժնի վարիչների գործունեությունը

Արխիվային հարուստ նյութերի, Արշավիր Քամալյանի զեկուցագրերի, պատմամանկավարժական աղբյուրների, ժամանակակիցների հուշերի, պարբերական մամուլում (1932-1966թթ.) տպագրված մի շարք հոդվածների և այլ նյութերի ուսումնասիրումը հնարավորություն է ընձեռել մեզ, թեկուզ շատ համառոտակի, ներկայացնել Մարտունու շրջանի կրթության բաժնի վարիչների գործունեությունը 1932-1988թթ.: Արխիվային փաստաթղթերի բացակայության պատճառով հնարավոր չի եղել ներկայացնել բաժնի վարիչների 1923-1932թթ. գործունեությունը:

Ըստ Ար.Քամալյանի զեկուցագրի, Բ.Դավթյանի «20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժները» աշխատությունում նշված տվյալների, **1932-1934թթ. Մարտունու շրջանի կրթության բաժնի վարիչի պաշտոնում աշխատել է Գրիգոր Գրիգորյանը:** Ինչպես արդեն նշել ենք նախորդ բաժնում, Գ.Գրիգորյանը 1940-1941թթ. եղել է մարզժողկրթբաժնի վարիչ և ներկայացվել են նաև նրա կենսագրականն ու գործունեությունը, այստեղ կնշվեն միայն շրջժողկրթբաժնի վարիչի պաշտոնավարության շրջանում կատարված աշխատանքները:

Հայտնի է, որ մարզլուսժողկոմի 1930թ. օգոստոսի 26-ի որոշմամբ գործնական միջոցառումներ են նշվել 1930-1931 ուստարվանից անցնելու ընդհանուր տարրական պարտադիր ուսուցման՝ մարզի բոլոր վայրերում և ընդհանուր յոթնամյա պարտադիր ուսուցման՝ քաղաքում ու շրջաններում, բանվորական ավաններում:

Գ.Գրիգորյանը իր գործունեության առաջին՝ 1931-1932 ուսումնական տարում (նկատի ունենք, որ նա նշանակվել է կրթության բաժնի վարիչ 1932թ. ապրիլին) ձեռնամուխ եղավ շրջանում ընդլայնել ու տարրական (միաստիճանի) դպրոցների ցանցը, դպրոցներում ընդգրկելու այն բոլոր երեխաներին, որոնք մինչև այդ չէին սովորում դպրոցում: Փաստագրական նյութերից[441] տեղեկանում ենք, որ վերոնշյալ ուսումնական տարվա օգոստոսի 26-ին շրջանի ուսուցչական խորհրդակցությունում քննարկվել են հետևյալ հարցերը. ա) շրջանում ընդհանուր պարտադիր տարրական կրթության իրականացում, բ) ուսուցչական կադրերի վերապատրաստման դասընթացների կազմակերպում, գ) դասավանդման որակի բարձրացում, դ) ծայրամասային գյուղերի դպրոցական շենքերի վերանորոգում և այլն:

Արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ շրջանի տարրական, յոթնամյա, միջնակարգ դպրոցները մանկավարժական բարձրորակ կադրերով ապահովելու նպատակով Գ.Գրիգորյանը դպրոցական տեսուչների, շրջանի դպրոցների լավագույն տնօրենների մասնակցությամբ մշակել է ուսուցչության նյութական դրության բարելավման միջոցառումների պլան:

Այդ նպատակով նա դպրոցական տեսուչների հետ լինում է շրջանի դպրոցներում, ծանոթանում ուսուցիչների նյութական ապահովվածության վիճակին, կենցաղային պայմաններին, դպրոցի նյութական բազային, գործող ուսումնական կաբինետներին, դասավանդման որակին, միաժամանակ կազմակերպում փոխադարձ և բաց դասալսումներ, մեթոդական օգնություն ցույց տալիս սկսնակ ուսուցիչներին: Իսկ այդ տարիներին դպրոցներում որակյալ ուսուցչական կադրերի պահանջը շատ մեծ էր:

Վերոնշյալ և այլ աղբյուրների ուսումնասիրումը վկայում է, որ Գ.Գրիգորյանի գործունեության տարիներին, 1928-1930թթ. տվյալների համեմատ, շրջանում ընդլայնվել է հատկապես տարրական դպրոցների ցանցը և մանավանդ աճել աշակերտների թիվը: Այսպես, օրինակ, շրջանի 40 դպրոցից 28-ը տարրական էր, 7-ը՝ յոթնամյա, 5-ը՝ միջնակարգ, սովորողների թիվը՝ 1922: Արագորեն աճել է նաև սովորող աղջիկների թիվը տարրական դպրոցներում(այդ մասին մանրամասն նշվել է սույն աշխատության 1-ին գլխում): 1933-1934 ուստարվա ուսուցչական խորհրդակցություններում Գ.Գրիգորյանի հաշվետվություններում[442] ներկայացվում են դպրոցաշինության, ուսուցչական կադրերի վերապատրաստման, յոթնամյա և միջնակարգ դպրոցների ցանցի ընդլայնման, ուսումնադաստիարակչական աշխատանքերի որակի բարձրացման և այլ բազմաբնույթ հարցեր: Արխիվային փաստաթղթերի բացակայության պատճառով չկարողացանք վեր հանել նաև հավաստի փաստեր 1935-1939թթ. Մարտունու շրջժողկրթբաժնի վարիչի պաշտոնում աշխատած անձանց գործունեության մասին:

Վաստակաշատ մանկավարժ Սարգիս Աբրահամյանի կնոջ՝ Սաթենիկ Սողոմոնյանի՝ խնամքով պահպանված արխիվային փաստաթղթերից և Բ.Դավթյանի նշված աշխատությունից տեղեկանում ենք, որ **1939-1941 թվականներին Ս.Աբրահամյանը ղեկավարել է Մարտունու շրջժողկրթության բաժինը:** 1939-1940 ուստարվա հաշվետվություններում Ս.Աբրահամյանը մանրամասն ներկայացնում է

շրջանի հանրակրթական դպրոցներում տարվող աշխատանքները: Այսպես, կոնկրետ օրինակներով նշվում են Գյունե և Ղուզե Ճարտարի, Աշանի, Նոր շենի, Գիշու, Սոսի, Հաղորտու, Ննգիի, Շեխերի, Մաճկալաշենի և այլ դպրոցների մանկավարժական կոլեկտիվների կողմից կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների լավ արդյունքները: Օրինակներով ցույց է տալիս հատկապես շրջանի դպրոցի պրակտիկայում ճանաչված ուսուցիչների՝ Սամսոն Ավետիսյանի, Վարդան Բալայանի, Արտաշես Գասպարյանի, Աթանես Դադայանի և ուրիշների կողմից ուսումնադաստիարակչական աշխատանքերի կազմակերպման ուսանելի փորձը: Ս.Աբրահամյանի հաշվետվություններում նշվում են նաև ուսուցչական խորհրդակցություններում քննարկված հարցերը, դպրոցների մանկավարժական խորհուրդների նիստերում ունեցած ելույթները(այդ մասին նշվել է նախորդ բաժնում, դրա համար չենք կրկնում):

Վաստակաշատ մանկավարժ Միքայել Բեգլարյանի[443] «Իմ սերնդի ճակատագիրը» աշխատության տվյալների և ժամանակակիցների հուշերի (Ս.Ղուկասյան, Խ.Հարությունյան) համաձայն՝ **1946-1950թթ. Մարտունու շրջժողկրթբաժնի վարիչի պաշտոնում աշխատել է,** ինչպես նշեցինք, 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ **Գրիգոր Ուլուբաբյանը:** Նախորդ բաժնում մանրամասն ներկայացվել են նրա կենսագրությունն ու մարզի կրթական համակարգում պաշտոնավարության շրջանում կատարած աշխատանքները: Այստեղ համառոտակի կնշվի, թե այդ պաշտոնում իր գործունեության տարիներին ինչպիսի փոփոխություններ է մտցրել շրջանի կրթական համակարգում:

Իր պաշտոնավարման առաջին տարում (կրթության շրջանային բաժնի վարիչի պաշտոնում Գ.Ուլուբաբյանը նշանակվել է 1946թ. սեպտեմբերի 1-ին) հրավիրված շրջժողկրթբաժնի ընդլայնված խորհրդակցությունում (որին մասնակցում էին շրջանի դպրոցական տեսուչները, դպրոցների տնօրենները, փորձառու ուսուցիչները) Գ.Ուլուբաբյանը իր ելույթում մատնանշում է, որ Հայրենական պատերազմը իր բացասական կնիքը դրեց ոչ միայն ժողովրդական տնտեսության, այլև կրթական գործի վրա: Ուստի անհրաժեշտ է մեծ ջանքեր գործադրել, որպեսզի ոչ միայն վերականգնվի նախապատերազմյան վիճակը, այլև նոր ժամանակների պահանջը բավարարող մակարդակին հասցվի աճող սերնդի կրթության ու դաստիարակության գործը: Շրջժողկրթբաժնի մշակած պլանում նախատեսվում է՝ ա) պարտադիր յոթնամյա կրթության իրականացում, բ) դպրոցները որակյալ մանկավարժական կադրերով ապահովում, քանի որ գյուղական դպրոցներում դեռևս աշխատում էին մարզի ուսումնական հաստատությունների 2-րդ և 3-րդ կուրսի ուսանողները, գ) մեծ ուշադրություն դարձնել յոթնամյա դպրոցներում աղջիկներին ընդգրկելու հարցի վրա, դ) մեծ աշխատանք տանել յոթնամյակ ավարտածներին լրիվ միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում ընդգրկելու ուղղությամբ[444]:

Ինչպես մարզի մյուս շրջաններում, այնպես էլ Մարտունու շրջանում պարտադիր յոթնամյա ուսուցման իրականացումը սկսվեց հետպատերազմյան դժվարին տարիներին: Երեխաների նկատմամբ համաժողովրդական հոգատարության, նրանց ցույց տրվող օգնության շնորհիվ այն կենսագործվեց հաջողությամբ: Արխիվային փաստաթղթերում և այլ աղբյուրներում հիշատակվում է, որ 1945-1946 ուստարում Մարտունու շրջանում գործում էին 45 դպրոցներ, որոնցից 9-ը՝ միջնակարգ, 28-ը յոթնամյա, իսկ 8-ը՝ տարրական: Շրջժողկրթբաժնի վարիչը խորհրդակցության մասնակիցներին հանձնարարում է արագացնել դպրոցների շինարարությունը ծայրամասային գյուղերում: Իհարկե, մատնանշում է Գ.Ուլուբաբյա-

նը, շրջանում կրթական գործի ընդլայնումը կապված է նաև դպրոցի նյութական բազայի ամրապնդման և հատկապես դպրոցաշինության հետ:

Ժամանակակիցների հուշերը և փաստագրական նյութերը վկայում են այն փաստը, որ 1946-1950թթ. հրավիրված հունվարյան և օգոստոսյան ուսուցչական խորհրդակցություններում շրջժողկրթբաժնի վարիչը, դպրոցական տեսուչները, շրջանի դպրոցների տնօրենները իրենց հաշվետվություններում ամփոփում են կատարված աշխատանքները, մատնանշում նաև այն թերությունները, որոնք խոչընդոտում են ուսումնադաստիարակչական աշխատանքերի արդյունավետ կազմակերպմանը: Օրինակ, շրջժողկրթբաժնի հաշվետվության մեջ նշվում է՝ ա) որոշ դպրոցներում վերանորոգման աշխատանքները (Մյուրիշենի, Սպիտակաշենի, Ավդուռի, Ղավախանի և այլ գյուղերի դպրոցներ) շատ դանդաղ են ընթանում, բ) դպրոցական լաբորատորիաները, ուսումնական կաբինետները դեռևս կահավորված չեն նոր սարքավորումներով, դիտազննական պարագաներով, գ) ստուգումներից պարզվել է, որ տնօրենների կողմից դասալսումները շատ քիչ են (4-5) կազմակերպվում շրջանի դպրոցներում և այլն: Շրջանային ուսուցչական խորհրդակցության մասնակիցներին Գ.Ուլուբաբյանը հանձնարարում է հոգատարությամբ շրջապատել Հայրենական պատերազմում զոհվածների, հաշմանդամների երեխաներին և հոգատարություն ցուցաբերել նրանց նկատմամբ, ցույց տալով անհրաժեշտ նյութական օգնություն: Նրա գործունեության մանրամասները ներկայացվել են նախորդ բաժնում[445]:

1950-ական թվականներին Մարտունու շրջանի կրթության բաժնի վարիչի պաշտոնում աշխատել են **Քրիստափոր Պետրոսյանը** (1950-1952թթ.), **Սամսոն Ավետիսյանը** (1952-1956թթ.), **Սուրեն Սարգսյանը** (1956թ. դեկտեմբերի 8-ից), **Միքայել Հակոբյանը** (1957թ. ապրիլի 17-ից), **Եսայ Եսայանը** (1957թ. նոյեմբերից մինչև 1966թ. մարտը):

Լեռնային Ղարաբաղի դպրոցի պրակտիկայում ճանաչված մանկավարժներից է 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ **Քրիստափոր Պետրոսյանը** (1916-1993թթ.) [446]: Ծնվել է Բաքու քաղաքում: Ժամանակաշրջանի քաղաքական բարդ իրադարձությունների հետ կապված՝ ծնողները 1919թ. տեղափոխվում են Ստեփանակերտի շրջանի Քռասնի գյուղը: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի առաջին աստիճանի դպրոցում, այնուհետև ավարտել է (1935թ.) Ստեփանակերտում այն ժամանակ գործող միակ ինտերնացիոնալ (հայկական, ռուսական) միջնակարգ դպրոցը, ուսումը շարունակել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմական ֆակուլտետում և, ավարտելուց հետո (1940թ), որպես պատմության ուսուցիչ, դասավանդում է Բաքվի հայկական դպրոցներում: 1942-1946թթ. սովորել և դասավանդել է Բաքվի ռազմական ուսումնարանում, միաժամանակ ակտիվորեն մասնակցել պատերազմի պայմաններում թիկունքում տարվող բազմազան աշխատանքներին:

Հայրենի երկրամասում՝ Ղարաբաղում, Քրիստափոր Պետրոսյանը մանկավարժական գործունեություն է ծավալում սկսած 1947թ.: 1947-1950թթ. աշխատել է մարզժողկրթբաժնում, որպես դպրոցական տեսուչ, միաժամանակ դասավանդել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտում: Այնուհետև մարզժողկրթբաժնի վարիչ Ս.Հայրապետյանի հրամանով (1957թ. սեպտեմբերի 1-ին) նշանակվում է Ստեփանակերտի թիվ 3 դպրոցի տնօրեն և ղեկավարում դպրոցը ավելի քան երեք տասնամյակ:

Մարտունու շրջանային կրթության բաժնի վարիչի պաշտոնում կարճատև գործունեության տարիներին (1950թ.սեպտեմբերից մինչև 1952թ. հուլիսը)

Ք.Պետրոսյանի կատարած աշխատանքների մասին իր հուշերում պատմում է 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Միքայել Բեգլարյանը. «Մենք՝ նրա ենթակայության տակ աշխատողներս, չենք տեսել կրթության բնագավառի ավելի խստապահանջ ղեկավարի, քան նա էր: Պահանջկոտ էր ու մի քիչ էլ կոշտ բնավորությամբ: Մարտունու շրջժողկրթբաժնի վարիչի պաշտոնում աշխատելու տարիներին յուրաքանչյուր կիսմյակում հրավիրում էր դպրոցների տնօրենների խորհրդակցություն, լսում նրանց հաշվետվությունները դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքերի կազմակերպման, ուսուցչի մասնագիտական որակի բարձրացման, ամառային արձակուրդներին և կիսմյակում դպրոցի վերանորոգման, կաբինետների կահավորման և այլ աշխատանքների կատարման ուղղությամբ: Նա ոչ միայն լսում էր, այլև հաջորդ օրը լինում էր դպրոցներում և ստուգում հաշվետվության մեջ նշված փաստերի ճշմարտությունը: Ուսուցիչների շրջանային խորհրդակցություններում (1950-1952թթ.) Քրիստափոր Պետրոսյանը իր ծավալուն հաշվետվությունում մանրամասն ներկայացնում էր շրջանի դպրոցների վիճակը և խստորեն հանձնարարում ժամանակին վերացնել թերությունները: Նրա կողմից տնօրեններին, ուսուցիչներին ներկայացվող պահանջները զուգակցվում էին բարեհաճությամբ ու հոգատարությամբ: Հատկապես ուշադիր էր ուսումնական կաբինետների նկատմամբ»[447]:

Մարտունու շրջժողկրթբաժնի արխիվային փաստաթղթերի տվյալներից տեղեկանում ենք, որ նրա գործունեության տարիներին հսկայական աշխատանքներ են տարվել դպրոցականների ուսման որակի բարձրացման ուղղությամբ, մի շարք դպրոցներում ստեղծվել են ուսումնական կաբինետներ, վերակառուցվել դպրոցական շենքերը:

Անժխտելի փաստ է նաև, որ շուրջ 30 տարի ղեկավարելով Ստեփանակերտի թիվ 3 դպրոցը, մարզում և հանրապետությունում աշակերտների ուսման առաջադիմությամբ օլիմպիադաներում, տարբեր մրցույթներում այդ դպրոցի սաները գրավում էին առաջին տեղը: Նրա ղեկավարած դպրոցում դաստիարակչական աշխատանքները կազմակերպվում էին ներդաշնակորեն՝ ուսման հետ համատեղ:

Ք.Պետրոսյանի ղեկավարած դպրոցի փորձը բազմիցս ուսումնասիրվել և տարածվել է մարզի և հանրապետության կրթական օջախներում: Հատկապես մեծ ներդրում ունի դպրոցի տիպային շենքի կառուցման, աշխատանքի ուսուցման, փայտամշակման, մետաղամշակման արհեստանոցների, սովորողների ավտոգործի, տնարարության ուսուցման, ուսումնական կաբինետների ստեղծման գործում: Անհանգիստ, մշտապես որոնումների ու պրպտումների մեջ, նորին ձգտող առաջադիմական մտավորական և լավագույն մանկավարժ էր:

Վաստակաշատ մանկավարժ Նորայր Ավետիսյանի հուշերում[448]՝ «Սրտի կայծեր» աշխատությունում, ինչպես նաև Մ.Բեգլարյանի «Իմ սերնդի ճակատագիրը» աշխատությունում ու Մարտունու շրջժողկրթբաժնի արխիվային փաստաթղթերում հավաստի տվյալներով ներկայացվում են **շրջանի կրթության բաժնի վարիչ Սամսոն Ավետիսյանի գործունեության տարիներին (1952-1956թթ.)** կատարված աշխատանքները:

Ծնվել է (1920-1990թթ.) Մարտունու շրջանի Հաղորտի գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի յոթնամյա դպրոցում (1928-1935թթ.), այնուհետև ավարտել Մարտունու միջնակարգ դպրոցը (1938թ.), ուսումը շարունակել Բաքվի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում: Ավարտելուց հետո (1942թ.) Ս.Ավետիսյանը մանկավարժական աշխատանքի է անցնում շրջանի Կաղարծու միջնակարգ դպրոցում (1941-1942թթ.) որպես հայոց

լեզվի և գրականության ուսուցիչ և ուսմասվար: 1943-1945թթ., որպես փոխտնօրեն, տնօրեն աշխատել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում: Մարզժողկրթբաժնի վարիչ Ս.Աբրահամյանի հրամանով 1945թ. նշանակվում է Մարտունու շրջանի կրթության բաժնի դպրոցական տեսուչ, միաժամանակ՝ հայոց լեզվի և գրականության մեթոդական կաբինետի վարիչ: Այդ տարիներին մեթոդկաբինետում պարբերաբար կազմակերպվում են շրջանի հայոց լեզվի և գրականության ուսուցիչների համար մանկավարժական ընթերցումներ, ընդհանրացվում դասալսումների(որպես դպրոցական տեսուչ) արդյունքները, մեթոդական խորհուրդներ տալիս սկսնակ ուսուցիչներին՝ դասը արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ:

Հետպատերազմյան տարիներինՍ.Ավետիսյանը շարունակում է բեղմնավոր մանկավարժական գործունեությունը շրջանի կրթական համակարգում: Այսպես, 1946-1949թթ. եղել է հայրենի Հաղորտի գյուղի միջն. դպրոցի տնօրեն, իսկ 1949-1952թթ.՝ Մարտունու միջն. դպրոցի տնօրեն, 1952-1956թթ՝ շրջանի կրթության բաժնի վարիչ: Հետագա տարիներին աշխատել է նաև շրջանի կուսակցական մարմիններում, մշակույթի ոլորտում:

Ս.Ավետիսյանի ժամանակակից, անվանի մանկավարժ Մ.Բեգլարյանը իր աշխատությունում գրում է. «1952-1957թթ. (արխիվային մի փաստաթղթում նշվում է 1956թ.), երբ Ս.Ավետիսյանը գլխավորում էր շրջանի կրթության բաժինը, հանդես էր բերում հետևողականություն, պայքարում էր թափթփվածության, անպատասխանատվության դեմ, իր անձնական օրինակով ցույց տալով, թե ինչպես պետք է ծառայել աճող սերնդի կրթության և դաստիարակության գործին: Շրջժողկրթբաժնի դպրոցական տոսուչները նրա հանձնարարականով մշտապես լինում են դպրոցներում, կազմակերպում փոխադարձ և բաց դասալսումներ, մեթոդական օգնություն ցույց տալիս հատկապես սկսնակ ուսուցիչներին: Այդպիսի դասալսումներ են կազմակերպել նաև մեր ղեկավարած Քերթի միջնակարգ դպրոցում»[449]:

Արխիվային փաստաթղթերից, նաև ժամանակակիցների հուշերից (Հայկանուշ Ազարյան, Վ.Բալայան, Ա.Գասպարյան և ուրիշներ) տեղեկանում ենք, որ նրա գործունեության տարիներին շրջանի կրթական համակարգում համեմատաբար մեծ փոփոխություններ կատարվեցին. ա) ընդլայնվեց յոթնամյա, միջնակարգ դպրոցների ցանցը, բ) դպրոցները ապահովված էին ուսումնական պլաններով, ծրագրերով, դասագրքերով, գ) գյուղական դպրոցներում դասարանները կահավորված էին դիտազննական պարագաներով, դ) ըստ առարկաների գործում էին մեթոդմիավորման հանձնաժողովներ, ե) դպրոցներում նորովի մշակվեցին ծնողական ժողովների նախապատրաստման և անցկացման կանոնները, զ) բարձրացվեց սովորողների ուսման առաջադիմությունը, է) պարտադիր էր համարվում, որպեսզի մանկավարժական խորհրդի նիստերին՝ կիսամյակում աշակերտների ուսման առաջադիմության արդյունքները քննարկելիս ներկա լինեն ծնողական կոմիտեի անդամները, ինչպես նաև ծնողներ, ը) լուրջ ուշադրություն էր դարձվում ամառային արձակուրդներին գյուղական դպրոցներում տարվող վերանորոգման աշխատանքներին[450]:

Վերոնշյալ աղբյուրներից նաև տեղեկանում ենք, որ շրջանային ուսուցչական խորհրդակցություններում (նկատի ունենք 1953-1954, 1955-1956 ուստարիներին) մանրամասն քննարկվում էին դպրոցների տնօրենների, կրթության բաժնի տեսուչների հաշվետվությունները յուրաքանչյուր կիսամյակում կատարված աշխատանքների մասին:

Շրջժողկրթբաժնի վարիչ Ս.Ավետիսյանի գործունեության տարիներին բարձ-

ռացել է նաև շրջանի դպրոցներում բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետությունն ու նպատակայնությունը: Իհարկե, ապահովվել է նաև դպրոցների ինքնուրույնությունն իրենց եկամուտների (դպրոցամերձ հողամասերից) և ծախսերի պլանավորման հարցում, խթանվել մրցակցությունը դպրոցների միջև, ինչպես նաև տարբերակված մոտեցում է ցուցաբերվել դպրոցների նկատմամբ: Հիրավի, աշխատելով շրջանի կրթական համակարգում և տարբեր բնագավառներում, Ս.Ավետիսյանն իրեն դրսևորել է որպես լավագույն մասնագետ և հմուտ կազմակերպիչ: Նա իր ողջ գիտակցական կյանքը նվիրաբերել է մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործին: Նրա բեղմնավոր աշխատանքը բարձր է գնահատվել, արժանացել է «Ադր. հանրապետության լուսավորության գերազանցիկ» կրծքանշանի, պարգևատրվել կառավարական պարգևներով ու պատվոգրերով:

1950-ական թվականներին Մարտունու շրջժողկրթբաժնի վարիչի պաշտոնում շատ կարճատև գործունեություն են ծավալել **Սուրեն Սարգսյանը** (1956 դեկտեմբերի 18-ից), **Միքայել Հակոբյանը** (1957թ. ապրիլի17-ից): Սակայն շուրջ 10 տարի շրջանային կրթության բաժինը ղեկավարել է բազմավաստակ մանկավարժ **Եսայի Եսայանը** (1916-2000թթ): Նպատակահարմար ենք գտնում ներկայացնել նրա հարուստ կենսագրությունը և բեղմնավոր գործունեությունը շրջանի կրթական համակարգում, մշակույթի տարբեր ոլորտներում[451]:

Ծնվել է Մարտունու շրջանի Սոս գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի միաստիճան (1-4-րդ դասարաններ) դպրոցում (1924-1928թթ), այնուհետև ավարտել է 7-ամյա դպրոցը (1929-1933թթ.), ուսումը շարունակել Շուշիի մանկավարժական ուսումնարանում (1934-1937թթ.) և ավարտելուց հետո անցել մանկավարժական աշխատանքի:

Ըստ փաստագրական տվյալների, Ե.Եսայանը 1937-1939թթ. աշխատել է Կարմիր Շուկայի յոթնամյա դպրոցում, որպես ուսուցիչ, ուսմասվար, դասավանդել նաև ռուսաց լեզու, իսկ 1939-1940թթ.՝ որպես ռուսաց լեզվի ուսուցիչ, ուսմասվար աշխատել է հայրենի գյուղի յոթնամյա դպրոցում:

Հայրենական պատերազմի նախօրյակին Ե.Եսայանը ծառայում էր(1940թ. նոյեմբերից) Կարմիր բանակում՝ Մոսկվայի հակաօդային պաշտպանության հատուկ բանակում: Մինչև հաղթանակը նա մասնակցել է տարբեր ռազմաճակատների, պարգևատրվել մի շարք շքանշաններով, մեդալներով:

Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո Ե.Եսայանը փառքով վերադառնում է հայրենի երկրամաս, շարունակում մանկավարժական գործունեությունը որպես ռուսաց լեզվի ուսուցիչ, ուսմասվար Սոսի (1945-1948թթ), Թաղավարդի (1949-1952թթ. սեպտեմբեր) միջնակարգ դպրոցներում, իսկ 1952թ՝ից մինչև 1957թ. նոյեմբերը եղել է շրջանի կրթության բաժնի վարիչ:

Ինչպես արդեն նշել ենք նախորդ բաժնում, 50-ական թվականների վերջին մարզի դպրոցի կյանքում կարևոր նշանակություն ունեցավ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից ընդունված «Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման և ԽՍՀՄ ժողովրդական կրթության համակարգի հետագա զարգացման մասին» օրենքը: Հիմք ընդունելով օրենքի ծրագրային դրույթները մարզժողկրթբաժնը ևս ընդունեց որոշում, որի համաձայն ոչ լրիվ միջնակարգ յոթնամյա դպրոցը վերածվեց ընդհանուր պարտադիր ուսուցման ութամյա դպրոցի և 1959-1960 ուստարվանից դպրոցներում մտցվեց արտադրական ուսուցում: Այդ ուղղությամբ, ինչպես մարզի մյուս շրջաններում, այնպես էլ Մարտունու շրջանի կրթության բաժնում բավականին մեծ աշխատանքներ կատարվեցին:

Արխիվային փաստաթղթերից[452], ժամանակակիցների հուշերից տեղեկանում ենք, որ 1959թ. օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում ծավալուն զեկուցումով («Կրթության համակարգի վերակառուցման հիմնական ուղղությունները») հանդես եկավ շրջժողկրթբաժնի վարիչ Եսայ Եսայանը: Հետաքրքրության համար ներկայացնում ենք զեկուցման համառոտ բովանդակությունը: Զեկուցման մեջ նշվում է, որ շրջանում կրթությունն ավանդաբար բարձր մակարդակ է ունեցել, այսօր էլ պետական ու ազգային կարևորագույն խնդիր է համարվում հետպատերազմյան շրջանում (1946-1957թթ.) շրջանի կրթության համակարգում ձեռք բերված նվաճումների պահպանումը և զարգացումը, մարզի կրթական համակարգում նրա մրցունակության ապահովումը: Շրջանի կրթական համակարգը ներառում է կրթության բոլոր բնագավառները՝ նախադպրոցական հիմնարկներ և հանրակրթական դպրոցներ (տարրական, պարտադիր ութամյա և ընդհանուր միջնակարգ), որոնք գործում են գլխավորապես բյուջետային նպատակային պետական ֆինանսավորման շնորհիվ:Այդ իսկ պատճառով շրջանի կրթական համակարգի զարգացման համար նախատեսված է միջոցառումների իրականացման պլան, որի համաձայն՝

1. ութամյա պարտադիր ուսուցման անհապաղ իրականացման ուղղությամբ շրջանի դպրոցներում նախապատրաստական աշխատանքներ կազմակերպել, այնպես, որ պարտուսի հասակ ունեցող բոլոր երեխաների համար սովորելու պայմաններ ստեղծվեն:

2. Ուշադրություն դարձնել տարրական դպրոցները ութամյակի վերածելու խնդրին և այնտեղ, որտեղ հնարավոր է, այդ կատարել, իսկ փոքր բնակավայրերի տարրական դպրոցն ավարտած երեխաներին ընդգրկել մոտակա ութամյա կամ միջնակարգ դպրոցներում, նրանց համար ստեղծել բարենպաստ պայմաններ՝ նորմալ հաճախելու ուսումնական պարապմունքներին:

3. Այդ նպատակով ամրապնդել ուսուցչի աշխատանքը ծնողների հետ, մանկավարժական գիտելիքների պրոպագանդումը նրանց շրջանում դիտել որպես երեխաների դաստիարակության և ուսուցման անհրաժեշտ պայման:

4. Դպրոցներում՝ երեխաների ուսման առաջադիմությունը բարձրացնելու նպատակով ուսուցիչների և ծնողների փոխհամաձայնեցված միջոցառումների կազմակերպում(դասախոսություններ, մանկավարժական ընթերցումներ, աշակերտների առաջադիմության բարձրացման ուղղությամբ առաջարկությունների քննարկում և այլն):

5. Պարտադիր ութամյա և ընդհանուր միջնակարգ կրթության իրականացման նպատակով դպրոցի տնօրենների աշխատանքնային պլանում, պետք է ընդգրկվեն հետևյալ հարցերը՝

ա) դպրոցի կոնկրետ խնդիրների առանձնացում,

բ) ուսումնադաստիարակչական աշխատանքերի արդյունավետ կազմակերպում, դժվարությունների, այն հարցերի բացահայտում, որոնց վրա ուսումնական տարվա ընթացքում պետք է ուշադրություն դարձնել,

գ) ուսումնական տարում իրականացվող աշխատանքների ու միջոցառումների ցանկի մշակում,

դ) ժամկետների սահմանում և պատասխանատուների նշանակում,

ե) ընդունված որոշումների կատարման վերահսկողություն և արդյունքների ամփոփում մանկավարժական խորհրդի նիստերում:

Շրջժողկրթբաժվարի զեկուցման մեջ դպրոցների տնօրեններին պարտավորեցվում էր մշակել դպրոցի զարգացման հեռանկարային պլանը, որտեղ պիտի

նախատեսվեն դպրոցի գործունեության հիմնական ուղղություններն ու նորարարական գործընթացները: Հեռանկարային պլանում պետք է նշվեն նաև դպրոցի զարգացման կարևորագույն ուղղությունները՝ կապված պարտադիր ութամյա կրթության, 10-ամյա և 11-ամյա կրթության անցման հետ, ինչպես նաև միջնակարգ դպրոցի 9-10-րդ դասարաններում (1964-1966թթ. 11-րդ) իրականացվող արտադրական ուսուցման արդյունավետ կազմակերպումը:

Ե.Եսայանի գործունեության տարիներին շրջանի 46 դպրոցներից 8-ը տարրական էր, 22-ը՝ ութամյա, 16-ը՝ միջնակարգ: Շուրջ 30 դպրոցներում գործում էին աշակերտական արտադրական բրիգադներ[453]: Արտադրական ուսուցման նպատակն էր սովորողներին տալ գործնական ու տեսական գիտելիքներ ընտրած մասնագիտությունից՝ գիտության, տնտեսության, կրթության ու մշակույթի որևէ ճյուղում աշխատելու համար: Շրջանի դպրոցներում աշակերտների ուսումնա-արտադրական բազա հանդիսացան ձեռնարկությունների արտադրական տեղամասերը, լաբորատորիաները, կոլտնտեսությունների ու սովխոզների ուսումնափորձնական տնտեսությունները, ֆերմաները, դպրոցական ու միջդպրոցական արտադրական արհեստանոցները, մշակույթի, առևտրի և այլ հիմնարկներ: Աշակերտական արտադրական բրիգադների գործունեությանը նվիրված մարզային հավաքում գովեստով նշվեց նաև Մարտունու շրջանի դպրոցներում բարձր հիմքի վրա դրված հատկապես սովորողների աշխատանքային դաստիարակության և մասնագիտական կողմնորոշման գործը:

Ուսումնասիրություններից նաև պարզվում է, որ շրջժողկրթբաժնի վարիչը յուրաքանչյուր ուսումնական տարում հրավիրված օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում մանրամասն քննարկում է շրջանի դպրոցների տնօրենների հաշվետվությունները, ձեռք բերածը նշելով հանդերձ, հատկապես կանգ առնում հիմնական թերությունների վրա: Դպրոցական տեսուչների կողմից կատարված ստուգումներից պարզվել է՝

1) շաբաթվա դասալսումների (տնօրենի, փոխտնօրենի, ուսմասվարի, առարկայական մեթոդմիավորման հանձնաժողովների կողմից) արդյունքները չեն քննարկվում տնօրենի խորհրդակցությունում,

2) շրջանի մի շարք դպրոցներում ուսուցիչները պլան-կոնսպեկտով չեն ներկայանում դասերին, երբեմն անպատրաստ են մտնում դասարան, 45 րոպեն ռացիոնալ չեն օգտագործվում,

3) մի շարք դպրոցներում բացակայում են դասվարների, դասղեկների աշխատանքային պլանները,

4) բացակայում է ծնողների հետ տարվող յուրաքանչյուր ուսուցչի պլան- օրագիրը (տուն այցելելու օրը, աշակերտի կենցաղային պայմաններին ծանոթանալը),

5) բացակայում է առարկայական մեթոդմիավորումների աշխատանքային պլանը և այլն:

Հարկ է նշել,որ շրջանային կրթության բաժնի վարիչի, դպրոցական տեսուչների մասնակցությամբ դպրոցների մանկավարժական խորհուրդների նիստերում քննարկվում են վերոնշյալ թերությունների վերացման ուղղությամբ կատարված աշխատանքները, իհարկե, նաև գնահատվում և խրախուսվում են լավագույն տնօրենների կազմակերպչական ու հետևողական աշխատանքները:

Անժխտելի փաստ է, որ Ե.Եսայանի պաշտոնավարման շրջանում շրջանի կրթության համակարգում զգալի փոփոխություններ կատարվեցին կրթության բաժնի մասնագետների պատրաստման, որակի կառավարման համակարգում և

այդ ուղղությամբ մշակվեցին որակի կառավարման հիմնախնդիրներ ներդպրոցական կյանքում և կառավարման համակարգում:

Հետագա տարիներին Ե.Եսայանը եղել է Մարտունու շրջանի «Աշխատանք» թերթի խմբագիր (1966-1977թթ.), շրջժողկրթբաժնում ռուսաց լեզվի մեթոդիստ (1977-1988թթ.) և կատարել հասարակական-քաղաքական այլ աշխատանքներ:

Արխիվային փաստաթղթերից և ժամանակակիցների հուշերից տեղեկանում ենք, որ **1966-1970-ական թվականներին Մարտունու կրթության բաժինը ղեկավարել են** վաստակաշատ մանկավարժներ **Արտաշես Փարամազյանը (1966-1974թթ), Հենրիկ Գրիգորյանը (1974թ. հոկտեմբերի 18-ից մինչև 1975թ.օգոստոսի 21-ը), Օֆելյա Գրիգորյանը (1976-1981թ. հունվարը),** իսկ Արցախյան շարժման և պատերազմական շրջանում՝ **Էդիսոն Սերգեյանը (1981թ. հունվարի 12-ից մինչև 1993թ. դեկտեմբերը):**

Վաստակաշատ մանկավարժ Մ.Բեգլարյանը «Իմ սերնդի ճակատագիրը» աշխատությունում ներկայացնում է Ա.Փարամազյանի՝ շրջժողկրթբաժնի վարիչի պաշտոնում եղած տարիների գործունեությունը, ինչպես նաև շրջանի «Աշխատանք» թերթում տպագրված հոդվածներում (1968-1972թթ.) որոշ տեղեկություններ կան նրա՝ որպես զինղեկի, ուսուցչի, Ղարաբաղի ուժեղագույն շախմատիստի, ԽՍՀՄ առաջնության բազմաթիվ մրցումների մասնակցի, շատ պարգևների և բարձր կոչումների արժանացած և լավագույն մանկավարժի գործունեության մասին:

Մ.Բեգլարյանը իր գրքում շրջանի դպրոցների, կրթական գործիչների մասին հուշերում նաև պատմում է,որ 1966-ից մինչև 1974թ. աշխատելով շրջժողկրթբաժնի վարիչի պաշտոնում, բազմապիսի եղանակներով խորանում էր ուսուցիչների մանկավարժական գործունեության մեջ: Նա որոշումներ ընդունելիս հենվում էր ժողկրթբաժնի խորհրդի նիստերում ընդունված որոշումների վրա, որոնք նրա օրոք հաճախակի էին հրավիրվում: Ի դեպ, խորհրդի նիստերը նա անցկացնում էր ընդլայնված կարգով՝ մասնակից անելով բոլոր տնօրեններին և վաստակաշատ մանկավարժներին[454]:

Մարտունու շրջանի Եմիշճանի դպրոցի տնօրեն Շահեն Հայրապետյանը (1954-1957թթ. եղել է Բերդաշենի, 1957-1969թթ. Էմիշճանի դպրոցների տնօրեն, ուսմասվար, դպրոցական տեսուչ) իր հուշերում[455] պատմում է, որ Արտաշես Փարամազյանի պաշտոնավարման շրջանում դպրոցներում բարձր հիմքերի վրա դրվեցին առարկայական մեթոդմիավորումների աշխատանքները, հաճախակի ճարտարի, Գիշու, Աշանի, Նոր շենի, Սոսի, Բերդաշենի, Հաղորտու դպրոցներում կազմակերպվում էին փնջային դասալսումներ, խորհրդակցություններ, մանկավարժական ընթերցումներ՝ նպատակաուղղված ուսումնադաստիարակչական աշխատանքերի արդյունավետ կազմակերպմանը:

Շրջանի կրթության բաժնի արխիվում պահպանվող՝ Ա.Փարմազյանի հաշվետվություններից տեղեկանում ենք, որ օգոստոսյան ուսուցչական խորհրդակցություններում (1967-1973թթ.) պարբերաբար ընդհանրացվում էին դպրոցների մանկավարժական կոլեկտիվների կատարած աշխատանքները, մատնանշվում տեղ գտած թերություններն ու բացթողումները և դպրոցական տեսուչներին, տնօրեններին հանձնարարվում ուսումնական տարվա մանկավարժական խորհրդի նիստում քննարկել կիսամյակի և տարվա կատարած աշխատանքների, դասալսումների արդյունքները, բացահայտել թերություններն ու բացթողումները և համապատասխան միջոցառումներ ձեռնարկել ժամանակին վերացնելու թերությունները: Ըստ հաշվետվությունում նշված պահանջների, յուրաքանչյուր դպ-

ոոցի տնօրեն իր աշխատանքային պլանում պետք է նշի նոր ուսումնական տարվա խնդիրները.

• ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպումը դպրոցում,

• մանկավարժական առաջավոր փորձի(նորամուծությունների) ներդնման աշխատանքներ՝ այսինքն շրջանի առաջավոր դպրոցների ուսուցիչների փորձի տարածումը դպրոցում,

• արտաուսումնական, արտադպրոցական աշխատանքների արդյունավետ կազմակերպումը,

• աշխատանքը մանկավարժական կադրերի հետ,

• ուսումնական նոր ծրագրերով աշխատելու համար ամառային արձակուրդների, ինչպես նաև ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչների ներգրավումը որակավորման դասընթացներին, սեմինարներին,

• դպրոցի համատեղ աշխատանքը ծնողների, արտադպրոցական հիմնարկների հետ,

• ուսումնադաստիարակչական գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացումը,

• դպրոցի ֆինանսատնտեսկանա գործունեությունը,

• դպրոցի աշխատանքը արձակուրդներին և այլն:

Ինչպես տեսնում ենք, շրջժողկրթբաժնի աշխատանքային պլանում խելամտորեն առաջադրված պահանջները դպրոցի տնօրեններին և նրանց կողմից մշակված այդ հիմնախնդիրները նպատակաուղղված են հիմնականում դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքերի որակի բարձրացմանը և բխում են ժամանակաշրջանի, դպրոցի բարեփոխումների պահանջներից:

Վաստակաշատ մանկավարժ Շահեն Քամալյանը իր հուշերում պատմում է, որ Ա.Փարամազյանի գործունեության տարիներին շրջանի դպրոցներում սկիզբ առան ներդպրոցական մրցությունները,հատկապես շինարարության և կարգապահության հարցերի շրջանակներում: Այդ մրցությունները ծավալվեցին նաև միջշրջանային մակարդակով: «Հիշում եմ մեր և Հադրութի շրջանի սոցմրցության ստուգման մի դեպք, երբ նախօրոք կազմված շրջանային հանձնաժողովները այցելեցին երկու շրջաններն էլ: Մարտունուց մի այդպիսի հանձնաժողովի կազմում էր հենց ինքը՝ շրջժողկրթբաժվարը, իսկ Հադրութի հանձնաժողովի կազմում՝Ա.Աբրահամյանը և ուրիշներ: Երկու օր ստուգվում էր երկու ենթաշրջանների՝ Իշխանագետի և Վարանդագետի ձորակների դպրոցների վիճակը 1974-1975 ուստարում: Ստուգումը ցույց տվեց, որ Մեծ Թաղլարի, Տողի, Ազոխի, Դրախտիկի, Թաղավարդի, Շեխերի,Ճարտարի, Գիշու, Աշանի, Կարմիր շուկայի, Նոր շենի դպրոցները լավ են նախապատրաստվել նոր ուսումնական տարվան, քան մի շարք դպրոցներ՝ Բանազուրի, Ջրակուսի, Աղբուլաղի, Մամեդաձորի, Սարգսաշենի, Սպիտակաշենի, Ննգու, Ղավախանի, Հաղորտու, Կաղարծու և այլն: Իսկ 1975-1976 ուստարվա ստուգումներից պարզվել է, որ նշված և ուրիշ դպրոցներում թերությունները ժամանակին վերացվել են և լավ նախապատրաստվել նոր ուսումնականին»[456]:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում (1974-1976թթ.) **Մարտունու շրջժողկրթբաժնի վարիչի պաշտոնում** աշխատել է կրթական գործի հմուտ կազմակերպիչ **Հենրիկ Գրիգորյանը (1937-1996թթ.):** Ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը, ուսումը շարունակել Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտում (1955-1960թթ.):

Ընտրած մասնագիտությունից բացի նաև մանկավարժական մասնագիտու-

թյան նկատմամբ ունեցած մեծ հետաքրքրությունը մղում է նրան ինստիտուտն ավարտելուց հետո ընտրել նաև երկրորդ՝ մանկավարժի մասնագիտությունը և այդ միտումով էլ ընդունվել է Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի քիմկենսաբանական բաժինը: Ավարտելուց հետո աշխատանքի է անցել Մարտունու շրջանի Հերհերի միջնակարգ դպրոցում՝ որպես քիմիայի և կենսաբանության ուսուցիչ:

Նրա ժամանակակիցներն[457] իրենց հուշերում գրում են.«Գործում էր համարձակորեն, անչափ աշխատասեր էր, ինչպես ասում են՝ անխոնջ և տրտունջը բացառող մանկավարժ էր Հենրիկ Գրիգորյանը»: «Իր գործունեության տարիներին,- գրում է իր հուշերում վաստակաշատ մանկավարժ Վլադիմիր Անտոնյանը,- լավ իմանալով դպրոցավարությունը, միշտ մասնակի ստուգումների էր ենթարկում դպրոցների տնօրենների առօրյա դպրոցավարական գործունեությունը և արդյունքները քննարկում շրջանի կրթության բաժնի խորհրդի ընդլայնված նիստում, որին մասնակցում էին դպրոցների տնօրեններն ու ուսմասվարները»: Որպես այդ խորհրդակցության մասնակից, Վ. Անտոնյանը մատնանշում է, որ նա տնօրեններից պահանջում էր մանրամասն ներկայացնել մանկավարժական խորհրդի նիստերում քննարկված դասալսումների, աշակերտների ուսման առաջադիմության, արտաուսումնական, արտադասարանական միջոցառումների կազմակերպման, ուսուցիչներին վորապատրաստման դասընթացներին ընդգրկելու ուղղությամբ կատարված աշխատանքները: Միաժամանակ Վ.Անտոնյանը մատնանշում է, որ տոկոսամոլության մասին, որ այն ժամանակներում աշխատանքի գլխավոր չափանիշն էր, լսել անգամ չէր ուզում: Օբյեկտիվ և միայն օբյեկտիվ գնահատականներ էր պահանջում ուսուցիչներից: Եթե դպրոցական տեսուչները ստուգումներ էին անցկացնում դպրոցներում և արդյունքները գոհացուցիչ չէին, շատ խիստ կվարվեր ցածր առաջադիմություն տված ուսուցիչների և տնօրենների հետ և նման հարցերը պարբերաբար քննարկվում էին օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում, իհարկե, խրախուսում էր նաև լավագույն ուսուցիչներին:

Շրջանային կրթության բաժնի արխիվային փաստաթղթերի (Հ.Գրիգորյանի, դպրոցի տնօրենների և տեսուչների հաշվետվությունները և այլ նյութեր) ուսումնասիրությունը և ժամանակակիցների հետ ունեցած մեր հարցազրույցները վերստին հաստատում են, որ Հ.Գրիգորյանի գործունեության տարիներին շրջանի կրթական համակարգում որակական փոփոխություններ են կատարվել, հատկապես բարձրացել է շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության որակը:

Հետագա տարիներին Հ.Գրիգորյանը եղել է Ստեփանակերտի քաղաքային կրթության բաժնի վարիչ (1976-1982թթ.), ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման ինստիտուտի տնօրեն (1989-1995թթ.), ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարար (1995-1996թթ.): Հենց նա հանրապետության դպրոցների սեղաններին դրեց «Կրթությունը և գիտությունը Արցախում» անդրանիկ ամսագիրը:

Արցախյան շարժման տարիներին Մարտունու շրջանի **կրթության բաժինը ղեկավարել են Օֆելյա Գրիգորյանը, Էդիսոն Սերգեյանը:** Այդ տարիներին շրջանի կրթական համակարգում (նկատի ունենք 1981-1988թթ.) որոշ փոփոխություններ կատարվեցին միայն 1984թ. ապրիլի 12-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից հաստատված հանրակրթական և պրոֆեսիոնալ դպրոցի ռեֆորմից հետո (այդ մասին նշվել է աշխատության 3-րդ գլխի 1-ին բաժնում:

գ) Հադրութի շրջանի կրթության բաժնի վարիչների գործունեությունը

Արխիվային փաստաթղթերի, պարբերական մամուլում տպագրված հոդվածների, ժամանակակիցների հուշերի, վաստակաշատ մանկավարժների նամակների, շրջանի դպրոցների տնօրենների ուղարկած տեղեկությունների և այլ փաստագրական նյութերի ուսումնասիրումը հնարավորություն է ընձեռել մեզ, թեկուզև համառոտակի, ներկայացնել Հադրութի շրջանի կրթության բաժնի վարիչի պաշտոնում աշխատած անձանց գործունեությունը 1946-1988թթ.: Սակայն նշենք, որ ուսումնասիրությունների ընթացքում մենք չկարողացանք բացահայտել նաև ճշտգրիտ փաստագրական տվյալներ 30-40-ական թվականներին շրջանի կրթության բաժնի վարիչների գործունեության մասին: Տարբեր աղբյուրներում, օրինակ, հիշատակվում են Հովհաննես Նիկողոսյանի (մարզլուսբաժնի տեսուչ), Եղիշե Գասպարյանի (Մեծ Թաղլարի դպրոցի տնօրեն), Արշավիր Ավագյանի (Ազոխի դպրոց), Սամսոն Խաչատրյանի (Տումու դպրոց) և ուրիշների անունները, որպես շրջանի կրթության բաժնի տեսուչներ, վարիչներ: Սակայն դրանք ենթադրություններ են: Ուսումնասիրության համար հատկապես հիմք են ընդունվել 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Խորեն Ղազարյանի ուղարկած ճշտգրիտ տեղեկությունները շրջանի կրթության բաժնի վարիչների գործունեության մասին, այսինքն՝ միայն պաշտոնավարման ժամանակահատվածը (1946-1988թթ.):

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հետպատերազմյան շրջանում՝ 1946-1950թթ. Հադրութի շրջանի **կրթության բաժնի վարիչի պաշտոնում աշխատել է** ժամանակաշրջանի դպրոցի պրակտիկայում ճանաչված մանկավարժ **Գրիգոր Սաֆարյանը**[458]: Ինչպես արդեն նշել ենք, Հայրենական պատերազմի տարիներն իրենց կնիքը դրեցին ինչպես մարզի ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառների, այնպես էլ հանրակրթության ոլորտի վրա: Այդ տեսակետից Հադրութի շրջանի հանրակրթական դպրոցը բացառություն չկազմեց: Ուստի հետպատերազմյան շրջանում Հադրութի շրջանի կրթական գործի կազմակերպիչների համար անհրաժեշտ եղավ մեծ ջանքեր գործադրել, որպեսզի վերականգնվեր նախապատերազմյան վիճակը և նոր ժամանակների պահանջը բավարարող մակարդակի վրա դնել հանրակրթական դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքերի կազմակերպման գործը, ինչպես նաև ավելացնել շրջանի դպրոցների ու սովորողների թիվը, դպրոցները ապահովել որակյալ մանկավարժական կադրերով: Այդ մասին Խորեն Ղազարյանը մատնանշում է. «Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո զորացրված զինվորականները, ուսուցիչները շենացրին իրենց գյուղերը, շրջժողկրթբաժնի ղեկավարների ջանքերով ավելացավ հատկապես յոթնամյա, միջնակարգ դպրոցների թիվը (այդ մասին տես սույն գլխի 1-ին բաժինը): Ավելացավ նաև աշակերտների, որակյալ մանկավարժական կադրերի թիվը, որոնք փոխարինում են պատերազմի տարիներին դպրոցներում դասավանդող Շուշիի մանկավարժական ուսումնարանի, Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի 2-3-րդ կուրսի ուսանողներին»[459]:

Հադրութի շրջժողկրթբաժնի արխիվային փաստաթղթերից[460] տեղեկանում ենք, որ Գրիգոր Սաֆարյանը իր գործունեության առաջին՝ 1945-1946 ուստարում սեպտեմբերի 26-ին (նշանակվել է կրթության բաժնի վարիչ սեպտեմբերի 1-ին) հրավիրում է ընդլայնված խորհրդակցություն (որին մասնակցում են շրջանի դպ-

ոոցական տեսուչները, տնօրենները, փորձառու ուսուցիչները) և քննարկում մի շարք կարևորագույն հարցեր՝ ա) շրջանի հանրակրթական դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքերի որակի բարձրացում, բ) դպրոցներն ապահովել բուհական կրթությամբ կադրերով, գ) շրջանի դպրոցական հին շենքերի վերանորոգում և նոր շենքերի (Էդիլլու, Ուխտաձոր, Խծաբերդ, Թաղասեր և այլ գյուղերում) կառուցում, դ) որբ, անապաստան երեխաների ընդգրկումը դպրոցներում և հատուկ հոգատարություն նրանց նկատմամբ, ե) դպրոցներում առարկայական կաբինետների ստեղծում և կահավորում, զ) ուսուցիչների ինքնակրթության, մանկավարժական վարպետության բարձրացման ուղղությամբ դպրոցներում, կրթության բաժնի մեթոդկաբինետներում մանկավարժական ընթերցումների կազմակերպում և այլ հարցեր: Իսկ նույն ուսումնական տարվա օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում, ինչպես նշում է խորհրդակցության մասնակից, քիմիա և կենսաբանության ուսուցիչ, 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Սմբատ Աբրահամյանը[461], շրջժողկրթբաժնի վարիչ Գ.Սաֆարյանը հանդես եկավ ծավալուն զեկուցումով, որտեղ հատուկ ուշադրություն է դարձրեց դպրոցների և ուսուցիչների նյութական դրության բարելավման, ուսուցչական կադրերի որակի բարձրացման, վերապատրաստման դասընթացների կազմակերպման, աշակերտների քաղաքական դաստիարակության, արտադասարանական, հանրօգուտ աշխատանքների կազմակերպման, ֆիզիկական դաստիարակության գործի բարելավման և այլ խնդիրներին: Իր զեկուցման մեջ շրջժողկրթբաժվարը հատկապես նշեց, որ կարճ ժամկետում շրջանի ծայրամասային գյուղերի դպրոցներըպետք է ապահովել որակյալ ուսուցչական կադրերով, քանի որ այդ ժամանակ, դպրոցներում աշխատում էին միջնակարգ կրթություն ունեցող ուսուցիչներ: Հատկապես Տումու, Ազոխի, Մեծ Թաղլարի, Տողի, Բանազուրի դպրոցների 8-10-րդ դասարաններում դասավանդելու համար անհրաժեշտ էին ռուսաց լեզվի, մաթեմատիկայի, քիմիա՛կենսաբանության, աշխարհագրության որակյալ ուսուցչական կադրեր:

Սմբատ Աբրահամյանը իր հուշերում միաժամանակ մատնանշում է, որ ուսուցչական խորհրդակցությունում իրենց հաշվետվություններում շրջանի դպրոցների (Մեծ Թաղլարի, Տողի, Բանաձորի, Ազոխի, Խծաբերդի, Ծամձորի, Կարմրակուճի) տնօրենները և ինքը (Տումիի միջնակարգ դպրոցի տնօրենն էր 1942-1948թթ.) ներկայացրին ուսումնական տարում կատարած աշխատանքները՝ մանկավարժական որակյալ կադրերով դպրոցները ապահովելու, ուսման որակը բարձրացնելու, դպրոցական կարգապահությունն ամրապնդելու, կիսամյակում և ամառային արձակուրդներին դպրոցական շենքերի վերանորոգման ուղղությամբ: Շրջանի ժողկրթբաժնի վարիչը հանձնարարեց տնօրեններին, որ դպրոցի ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքները պետք է սկսվեն օգոստոս ամսից և ավարտվեն օգոստոսի վերջին ու քննարկվեն կայանալիք մանկավարժական խորհրդի նիստում: Գ.Սաֆարյանի կարծիքով դպրոցի ուսումնական տարվա աշխատանքային պլանի համար պատասխանատվությունը անձամբ կրում է տնօրենը, նա պլանում որոշակիացնում է դպրոցի խնդիրները, հիմնական օղակները, մանկավարժական կոլեկտիվի գործունեության կոնկրետ ուղղությունները:

Խ.Ղազարյանը իր հուշերում միաժամանակ նշում է, որ շրջժողկրթբաժնի վարիչ Գ.Սաֆարյանի գործունեության շրջանում՝ 1949-1950 ուստարվա ապրիլ ամսին անցկացվեց շրջանի դպրոցների ուսուցիչների ատեստավորում՝ հատուկ հրահանգի խիստ պահանջներով: Որպես ատեստավորման մասնակից, Խ.Ղա-

զարյանը իր հուշերում գրում է. «Ինչքան հիշում եմ, ատեստավորման հանձնաժողովը ուներ հետևյալ կազմը՝ Հ.Շաքարյան (Ադր. լուս. մինիստրության հայկական դպրոցների գլխ.տեսուչ), Բագրատ Ուլուբաբյան, Հրանտ Միրզոյան, շրջժողկրթբաժնի վարիչ Գ.Սաֆարյան: Նրանք հարցազրույցով ստուգում էին շրջանի դպրոցների ուսուցիչների մասնագիտական, մեթոդամանկավարժական և գաղափարաքաղաքական պատրաստվածության մակարդակը: Իսկ դա մանկավարժական կոլեկտիվներին պարտավորեցնում էր զբաղվել ինքնակրթությամբ, ստեղծագործաբար աշխատել, լավ նախապատրաստվել ամենօրյա դասերին և բարձրացնել դասավանդման որակը»:

Գ.Սաֆարյանի գործունեության չորս տարիներին շրջանի դպրոցները ուսուցման գրծընթացը առավել արդյունավետ դարձնելու, աշակերտների առաջադիմությունը բարձրացնելու, ինչպես նաև դպրոցական շենքերը վերանորոգելու, դպրոցի ներքին կյանքի հետ կապված այլ աշխատանքներ կազմակերպելու ուղղությամբ շոշափելի հաջողությունների են հասել: Ուսուցչական խորհրդակցություններում գնահատվել են նաև լավագույն դպրոցների (Մեծ և Հին Թաղլարի, Տումու, Տողի, Ազոխի, Տրախտիկի, Բանազուրի, Արփագյադուկի, Թաղասեռի, Առաքելի (Առաքյուլի) մանկավարժական կոլեկտիվների կատարած աշխատանքները:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 1950-1960 թվականներին Հադրութի շրջանի կրթության բաժնի վարիչի պաշտոնում աշխատել են **Գրիգոր Ուլուբաբյանը (1950-1951թթ.), Գեորգի Բալայանը (1953-1954թթ.), Արմավիր Սարգսյանը (1953-1954թթ.), Նիկոլայ Աբրահամյանը (1954-1956թթ), Սաշա Մուսայելյանը (1956-1957թթ), Գրիշա Մարդանյանը(1957-1964թթ.):** Նկատի ունենալով, որ Գրիգոր Ուլուբաբյանի գործունեության մասին արդեն նշվել է, որպես մարզժողկրթության, Մարտունու շրջանի կրթության բաժնի վարիչի, նաև նշվել է Հադրութի շրջանի կրթության բաժնի վարիչի պաշտոնում կատարած աշխատանքի մասին, այստեղ համառոտակի կնշվեն մյուսների կարճատև գործունեության տարիներին կատարված աշխատանքները:

Քննարկվող ժամանակաշրջանում Հադրութի շրջանի կրթական համակարգի (հանրակրթական դպրոցները, նախադպրոցական հիմնարկները, արտադասարանական, արտադպրոցական հիմնարկները, կրթության բաժնի ենթակառույցները և այլն) զարգացման գործում մեծ երախտիք ունեն նաև կրթական գործի վերոնշյալ կազմակերպիչները: Եվ չնայած կարճատև գործունեություն են ունեցել, այնուամենայնիվ, շրջանում կրթական համակարգի զարգացման առումով, յուրաքանչյուր շրջժողկրթբաժնի վարիչ յուրովի է մշակել շրջանի կրթական համակարգի բարեփոխումների ուղղությունները, որոնք համահունչ էին ժամանակաշրջանի պահանջներին:

Այսպես, օրինակ, Հադրութի շրջանի կրթության բաժնի փաստաթղթերի ուսումնասիրությունից[462] տեղեկանում ենք, որ **շրջանի կրթության բաժնի վարիչ Գեորգի Բալայանը (1953-1954թթ.)** իր «Շրջանի կրթական համակարգի զարգացման հիմնական ուղղությունները» խորագրով աշխատանքային պլանում առաջնային է համարում շրջանում պարտադիր յոթնամյա կրթության իրականացումը և այդ ուղղությամբ շրջժողկրթության դպրոցական տեսուչներից պահանջում զգալի աշխատանք կատարել ծայրամասային գյուղերի մանկավարժական կոլեկտիվներում տարրական դպրոցները յոթնամյակի վերածելու համար: Ըստ արխիվային տվյալների, շրջժողկրթբաժնի վարիչի նախաձեռնությամբ 1951-1952 ուստարում շրջանի 18 տարրական դպրոցներից 5-ը վերածվեցին 7-ամյա դպրոցնե-

րի, խոշոր գյուղերի միջնակարգ դպրոցներում (Մեծ Թաղլարի, Տումու, Տողի, Ազոխի, Բերդաձորի) գործում էին «ա», «բ», «գ» դասարաններ, ավելացվեց նաև աշակերտների քանակը, վերանորոգվեցին Հակակուի, Դրախտիկի, Առաքյուլի, Ծամձորի, Քոչբեկի, Աղբուլաղի (Ակնաղբյուր) գյուղերի դպրոցական շենքերը: Վերոնշյալ դպրոցներում ստեղծվեցին ուսումնական կահավորված կաբինետներ, լաբորատորիաներ: Ուշագրավ է նշել այն իրական փաստը, որ այդ խնդրում դպրոցին մեծ օգնություն կազմակերպեցին տեղական կուսակցական, գյուղական խորհրդի մարմինները, կոլտնտեսականներն ու Հադրութի արդյունաբերական ձեռնարկությունները: Ժամանակակիցների հուշերում նշվում է, որ գյուղերի հասարակայնությունը բավականին միջոցներ է հատկացրել դպրոցներին՝ ձեռք բերելու լաբորատոր սարքավորումներ, անհրաժեշտ դիտազննական պարագաներ: Դպրոցական կոլեկտիվներին ցույց էին տալիս ամենօրյա օգնություն՝ կենսագործելու պարտուսը,ինչպես նաև առանձնակի ուշադրություն դարձնելու կոլտնտեսային արտադրության մեջ աշխատող երիտասարդության ուսուցման գործին[463]:

1954թ. օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում շրջանի կրթության բաժնի վարիչ Գ.Բալայանը իր զեկուցման մեջ ամփոփում է շրջանի դպրոցներում կատարված աշխատանքները, դպրոցական տեսուչներին, դպրոցների տնօրեններին տալիս հանձնարարականներ պատշաճ մակարդակով նախապատրաստվել նոր ուսումնական տարին կազմ ու պատրաստ սկսելու:

Նրա գործունեության տարիներին շրջժողկրթբաժնի դպրոցական տեսուչների, առաջավոր դպրոցների (Մեծ Թաղլարի, Տումու, Տողի, Ազոխի, Բերդաձորի, Դրախտիկի և այլն) մանկավարժական կոլեկտիվների աշխատանքները օբյեկտիվորեն գնահատվել և շրջժողկրթբաժնի կողմից արժանացել են պարգևների: Այդ մասին իրենց հուշերում գրում են վաստակաշատ մանկավարժներ Ներսես Աբրահամյանը, Միքայել Բալյանը, Խորեն Բաղդասարյանը, Սամսոն Խաչատրյանը և շատ ուրիշներ[464]:

Արխիվային նյութերի տվյալների և ժամանակակիցների հուշերի հավաստի տեղեկությունների համաձայն՝ **Հադրութի շրջժողկրթբաժնի վարիչ Արմավիր Սարգսյանը երկու տարվա (1953թ. սեպտեմբերից մինչև 1954թ. դեկտեմբերը)** գործունեության տարիներին որոշակի աշխատանքներ է կատարել շրջանի հանրակրթական դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքները բարելավելու ուղղությամբ:

Ժամանակակիցներն իրենց հուշերում պատմում են, որ շրջժողկրթբաժնի վարիչը հաճախակի լինում էր դպրոցներում, ստուգում կատարված աշխատանքները և արդյունքները քննարկում ինչպես մանկավարժական խորհրդի նիստերում, այնպես էլ ուսուցչական խորհրդակցություններում: Շրջժողկրթբաժնի դպրոցական տեսուչները ոչ միայն ստուգումներ էին անցկացնում դպրոցներում, այլև կազմակերպում էին փորձնական դասեր, մասնակից դարձնելով հատկապես սկսնակ ուսուցիչներին, բացի այդ նրանք մանկավարժական խորհրդի նիստերում դասի արդյունավետության բարձրացման թեմայով հանդես էին գալիս զեկուցումներով, ինչը նպաստում էր դպրոցում ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:

Հադրութի շրջանի հանրակրթական դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու միտումով՝ վերը նշված լավագույն ավանդույթները շարունակվում են նաև **շրջանի կրթության բաժնի վարիչ Նիկոլայ Աբրահամյանի գործունեության (1954-1956թթ.)** տարինե-

ին: Սակայն նշենք, որ կրթության բաժնի յուրաքանչյուր ղեկավար ուներ կրթական համակարգը ղեկավարելու իր սկզբունքները: Հիմնականում Ն.Աբրահամյանը կրթական համակարգը ղեկավարում էր գիտականության, նպատակաուղղվածության և պլանայնության, համագործակցության, մանկավարժական առաջավոր փորձի ներդրման սկզբունքներով: Տարիների հարուստ փորձը (շրջանի դպրոցներում եղել է տնօրեն, ուսմասվար, դպրոցական տեսուչ) հնարավորություն էր տալիս առավել արդյունավետ պլանավորել կազմակերպել շրջանի կրթական համակարգի կոլեկտիվների աշխատանքը: Ժամանակակիցների վկայությամբ՝ Ն.Աբրահամյանը կրթության բաժնի կառավարման որոշումները մշակում և ընդունում էշրջժողկրթբաժնի ընդլայնված խորհրդակցությունում դպրոցական տեսուչների, տնօրենների և հրավիրած փորձառու մանկավարժների մասնակցությամբ, հաշվի առնելով նրանց կարծիքներն ու առաջարկությունները:

1955թ. օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում գնահատելով անցած ուսումնական տարիներին (1950-1954թթ.) շրջանի կրթական համակարգում ձեռք բերված նվաճումները, Ն. Աբրահամյանը մատնանշում է, որ չպետք է բավարարվել ձեռք բերածով, այլ պետք է ավելի կատարելագործել ուսուցման ձևերն ու մեթոդները ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան: Նա առաջնային է համարում հատկապես առաջավոր փորձի բացահայտումն ու տարածումը մանկավարժական կոլեկտիվներում: Այդ նպատակով մարզժողկրթբաժնի վարիչ Ս.Հայրապետյանի համաձայնությամբ կազմում է համապատասխան հանձնաժողովներ՝ ըստ մասնագիտությունների (հանձնաժողովներում ընդգրկվում են դպրոցական տեսուչներ, դպրոցների լավագույն մասնագետներ) և մշակում դասալսումների կազմակերպման աշխատանքային պլան, որի համաձայն՝ 1954-1955 ուստարվա մարտ-ապրիլ ամիսներին պետք է դասալսումներ անցկացվեն շրջանի դպրոցներում: Որպես հանձնաժողովի անդամ, Ստեփանակերտի շրջանի Նախիջևանիկի միջն.դպրոցի տնօրեն Անուշավան Արամյանը իր հուշերում պատմում է դպրոցի մանկավարժական խորհրդի նիստում դասալսումների արդյունքների քննարկման և այդ ամիսներին սկսնակ ուսուցիչներին ցույց տված մեթոդական օգնության մասին: Միաժամանակ մատնանշում է մի շարք դպրոցների մանկավարժական կոլեկտիվների մասին, նաև գոհունակություն արտահայտում ժողկրթբաժնի այդ նախաձեռնության վերաբերյալ և առաջարկում, որ մյուս շրջանների դպրոցներում ևս շարունակվի նման ավանդույթը[466]:

Ինչպես արդեն նշել ենք, 1953թ.սեպտեմբերին մարզժողկրթբաժնի կոլեգիան քննության առավ ուսումնական ծրագրերի և որակի հարցը՝ հիմք ընդունելով Հայաստանի լուսավորության նախարարության 1953թ. սեպտեմբերի 14-ին ընդունած որոշումը այդ մասին: Կոլեգիան նշեց, որ գրականության, պատմության, աշխարհագրության, կենսաբանության, ֆիզիկայի և քիմիայի ծրագրերն ու դասագրքերը ծանրաբեռնված են ավելորդ ուսումնական նյութերով և, բնականաբար, ծանրաբեռնում են սովորողներին, մի բան, որ բացասաբար է անդրադառնում նրանց և՛ առաջադիմության, և՛ առողջության վրա: Ուսումնական ծրագրերն էական փոփոխությունների ենթարկվեցին 1954-1955թթ. (այդ մասին նշվել է սույն գլխի 1-ին բաժնում):

Նոր ծրագրերով դասավանդելը պահանջում էր բարձրացնել ուսուցիչների մասնագիտական պատրաստվածության մակարդակը: Այդ նպատակով շրջժողկրթբաժնի վարիչ Ն.Աբրահամյանը 1955-1956 ուստարվա օգոստոսի 22-24-ը հրավիրում է ընդլայնված ուսուցչական խորհրդակցություն և դպրոցական տեսուչներին, դպրոցների տնօրեններին հանձնարարում կազմակերպել վերոնշյալ

առարկաների գծով ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, անհրաժեշտության դեպքում նրանց գործուղել Երևան՝մասնակցելու Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

Շրջժողկրթբաժնի վարիչ Ն.Աբրահամյանի կարճատև գործունեության տարիներին բավականին մեծ աշխատանքներ կատարվեցին ուսման որակի, ուսուցիչների մասնագիտական որակի բարձրացման և դպրոցաշինության ասպարեզում: Նրա գործունեության մասին իր հուշերում ակնածանքով է խոսում Խորեն Ղազարյանը:

20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Միքայել Բալյանի հուշերի, Հադրութի շրջանային կրթության բաժնի արխիվային փաստաթղթերի տվյալների համաձայն, **1956-1957թթ. բաժինը ղեկավարել է** դպրոցի պրակտիկայում ճանաչված մանկավարժ **Սաշա Մուսայելյանը**: Նրա կարճատև գործունեության տարիներին, ինչպես իր հուշերում պատմում է Մ.Բալյանը, հրավիրվել են երկու ուսուցչական խորհրդակցություն (1955-1956 ուստարում՝ օգոստոսի 22-24-ը, 1956-1957 ուստարում՝ օգոստոսի 26-28-ը), շրջանի դպրոցների տնօրենների չորս խորհրդակցություն, որոնց մասնակցել են մարզժողկրթբաժնի վարիչներ Ս.Հայրապետյանը (1955-1956 ուստարում) և Հ.Օհանջանյանը (1956-1957 ուստարում): Նորություն էր այն, որ ուսուցչական խորհրդակցությունում «Դասը արդյունավետ կազմակերպելու իմ փորձը», «Դասղեկի աշխատանքի իմ փորձը», «Մեթոդմիավորման հանձնաժողովի աշխատանքի կազմակերպման իմ փորձը» թեմաներով հանդես եկան նաև առաջավոր փորձ ունեցող ուսուցիչներ, իսկ խորհրդակցությունն ավարտելուց հետո դպրոցական տեսուչների ղեկավարությամբ շրջանի դպրոցների ուսուցիչների համար կազմակերպվեցին սեմինարներ, որոնցում զեկուցումներով հանդես եկան շրջանի առաջավոր դպրոցների ուսուցիչները[467]: Արխիվային մի փաստաթղթից տեղեկանում ենք, որ 1956-1957 ուստարում տնօրենների խորհրդակցությունում լսվել են Տումու, Տողի, Ազոխի, Մեծ Թաղլարի, Ծամձորի, Խծաբերդի և այլ գյուղերի դպրոցների տնօրենների հաշվետվությունները ուսումնական տարում կատարած աշխատանքների մասին[468]:

Շրջժողկրթբաժնի հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզվել է, որ այդ տարիներին շրջանի դպրոցների մանկավարժական կոլեկտիվներում սկսվել է ծավալվել մեծ շարժում ուսումնադաստիարակչական աշխատանքերի որակի բարձրացման ուղղությամբ, տնօրենների խորհրդակցություններում հրապարակայնորեն խրախուսվում ու գնահատվում էին լավագույն ուսուցիչների ու տնօրենների կատարած աշխատանքները: Մամուլում այդ առթիվ տպագրվում են ուշագրավ հոդվածներ, որը ևս խթանող գործոն էր հանդիսանում ուսուցչի լավագույն փորձը մասսայականացնելու ուղղությամբ:

Խորեն Ղազարյանը իր հուշերում[469] հիշատակում է այն փաստը, որ շրջանային կրթության բաժնի վարիչ Ս.Մուսայելյանը իր գործունեության երկրորդ՝ 1956-1957 ուստարում շրջանի չորս խոշոր դպրոցներում (Մեծ Թաղլար, Ազոխ, Տող, Տումի) կազմակերպել է առարկայական մեթոդմիավորումների (հայոց լեզվի, գրականության, պատմության, աշխարհագրության, մաթեմատիկայի, ֆիզիկայի և այլն) հանձնաժողովների և առարկայագետ ուսուցիչների խորհրդակցություն, որին մասնակցել են դպրոցական տեսուչները, մոտակա գյուղերի ուսուցիչները, ինչպես նաև ծնողական կոմիտեների անդամները: Հիմնականում քննարկվել է նշված առարկաների ուսուցման դրվածքը դպրոցներում: Ժամանա-

կաշրջանի ճանաչնած մանակավարժ Արմիկ Ասրյանի[470] հուշերում նշվում է, որ փորձառու ուսուցիչների մոտ (նաև սույն գրքի համահեղինակի՝ Հ.Գ.-ի մոտ, որն այն ժամանակ աշխատում էր Մեծ Թաղլարի միջն.դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ) կազմակերպվել են բաց դասալսումներ՝ դրանց մասնակից դարձնելով նաև սկսնակ ուսուցիչների, ծնողական կոմիտեների անդամների: Աշակերտների պատասխանները, դասին կատարած լրացուցիչ առաջադրանքները գոհացուցիչ էին: Դասալսումների արդյունքները քննարկվել են մանկավարժական խորհրդի նիստերում, իսկ առաջավոր փորձը ընդհանրացվել է շրջանի ուսուցչական օգոստոսյան խորհրդակցությունում: Վաստակաշատ մանկավարժը միաժամանակ նշում է, որ խորհրդակցություններում պարբերաբար քննարկվում էին նաև դպրոցներում տեղ գտած լուրջ թերությունները՝ ա) տնօրենի ղեկավարման վարչական, հրամայական ոճը, որը բացասաբար էր անդրադառնում կոլեկտիվի հոգեբանական մթնոլորտի վրա, բ) դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքերի թույլ վերահսկողությունը, գ) մանկավարժական կոլեկտիվների անդամների ուսումնական ծանրաբեռնվածության ոչ ճիշտ բաշխումը, որը տեղիք էր տալիս հակասությունների, դ) դպրոցներում սանիտարահիգիենիկ կանոնների ոչ ճիշտ պահպանումը և այլն:

1957-1967թթ. Հադրութի շրջանի կրթության բաժնի վարիչի պաշտոնում աշխատել է վաստակաշատ մանկավարժ **Գրիշա Մարդանյանը**: Վաստակաշատ մանկավարժ Արտաշես Ավագյանը իր հուշերում (1953-1958թթ. եղել է Աղբուլաղի (Ակնաղբյուրի) ութամյա դպրոցի, այնուհետև 1958-1968թթ.՝ հայրենի գյուղի՝ Տումու միջն.դպրոցի տնօրեն) որոշ տեղեկություններ է տալիս շրջանային կրթության բաժնի վարիչ Գրիշա Մարդանյանի 1957-1960թթ. գործունեության մասին, իսկ մանրամասն, ինչպես նշել ենք, վաստակաշատ մանկավարժ Խ.Ղազարյանը ներկայացնում է իր հուշերում:

Հայտնի է, որ 1950-ական թվականների վերջերին ինչպես Հայաստանի, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցներում արմատական փոփոխություններ կատարվեցին հատկապես 1958թ. դեկտեմբերին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից ընդունած «Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման, ԽՍՀՄ-ում ժողովրդական կրթության սիստեմի (համակարգի) հետագա զարգացման մասին» օրենքից հետո, որից հիման վրա տեղի ունեցավ պարտադիր ութամյա կրթության իրականացում և միջնակարգ դպրոցների վերափոխում արտադրական ուսուցմամբ հանրակրթական 11-ամյա դպրոցների: Իսկ ինչ աշխատանքեր են տարվել այդ ուղղությամբ Հադրութի շրջժողկրթբաժնի վարիչի և նրա ենթակաների՝ դպրոցական տեսուչների կողմից:

Հադրութի շրջանային կրթության բաժնի արխիվային փաստաթղթերի[471] և ժամանակակիցների հուշերի ուսումնասիրությունից տեղեկանում ենք, որ 1958-1959 ուստարվա մարտ ամսին շրջանային կրթության բաժնի ընդլայնված խորհրդակցությունում (որին ներկա էին մարզի կրթության բաժնի վարիչ Հ.Օհանջանյանը, շրջանի դպրոցական տեսուչներ, տնօրեններ, մարզի կրթության բաժնի դպրոցական տեսուչներ) քննարկվել են հետևյալ հարցերը.

1. Շրջանում ութամյա կրթության իրականացում, միջնակարգ դպրոցների վերափոխում արտադրական ուսուցմամբ հանրակրթական 11-ամյա դպրոցների, այդ ուղղությամբ համապատասխան աշխատանքների կազմակերպում դպրոցներում(պատասխանատուներ՝ դպրոցական տեսուչներ, տնօրեններ, մարզային կրթության բաժնի տեսուչներ (զեկուցող՝ մարզի կրթության բաժնի վարիչ Հ.Օհանջանյան):

2. Դպրոցի վերակառուցման նոր փուլում շրջանի դպրոցներում արտադրական ուսուցման իրականացում, գյուղատնտեսական հանրօգուտ աշխատանքին հաղորդակից դարձնելու նպատակով աշակերտական բրիգադների կազմակերպում (զեկուցող՝ շրջժողկրթբաժնի վարիչ Գ.Մարդանյան):

3. Ուսուցիչների մասնագիտական որակը բարձրացնելու նպատակով վերապատրաստման դասընթացներ (10-օրյա կամ միամսյա) կազմակերպում Ստեփանակերտի գիշերօթիկ դպրոցում (զեկուցող՝ Ս.Հայրապետյան):

4. Առարկայական մեթոդմիավորումների աշխատանքի կազմակերպման իմ փորձը (զեկուցող՝ Հադրութի շրջանի Կարմրակուճ գյուղի պատմության և աշխարհագրության առարկայական մեթոդմիավորման նախագահ, հետագայում՝ 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Գեորգի Ալավերդյան):

Ինչպես իր հուշերում նշում է խորհրդակցության մասնակից, Մեծ Թաղլարի դպրոցի տնօրեն (1958-1961թթ.) Եղիշե Գասպարյանը[472], այդ խորհրդակցությունում արված առաջարկությունները և ընդունված որոշումները ուղենիշ եղան շրջանի մանկավարժական կոլեկտիվների համար՝ ավելի արդյունավետ կազմակերպելու մատաղ սերնդի ուսուցման ու դաստիարակության գործը: Միաժամանակ վաստակաշատ մանկավարժը մատնանշում է, որ շուտով դպրոցական-արտադրական բրիգադաներ սկսեցին ստեղծվել շրջանի դպրոցներում, որոնցից մեկը ղեկավարել էի նաև ես (Հ.Գ.): Դրանք դարձան գյուղատնտեսական աշխատանքներին աշակերտներին հաղորդակից դարձնելու նոր ձև: Փաստագրական տվյալների համաձայն՝ 1959-1964թթ. Հադրութի, Տումու, Տողի, Մեծ Թաղլարի, Ազոխի, Դրախտիկի, Էդիլլուի (Ուխտաձոր), Բանազուրի (Բանաձորի), Հին Թաղլարի, Մոխրենիսի, Ջրակուսի, Քոչբեկի, Թաղասեռի, Առաքյուլի, Խծաբերդի դպրոցներում գործում էին աշակերտական արտադրական բրիգադաներ, որոնց արդյունավետ գործունեության մասին գովեստով նշվեց 1961-1962 ուստարվա օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում:

Խ.Ղազարյանը իր հուշերում ակնածանքով է խոսում Գ.Մարդանյանի պաշտոնավարության շրջանում կատարված ուշագրավ աշխատանքների մասին՝ նկատի ունենալով ժամանակին դպրոցին ներկայացված պահանջները.

ա) շրջանի դպրոցներում համադպրոցական դասալսումների կազմակերպում՝ դպրոցական տեսուչների մասնակցությամբ և արդյունքների քննարկում մանկավարժական խորհրդի նիստերում, առաջավոր փորձի ընդհանրացում,

բ) յուրաքանչյուր շաբաթվա վերջում մանկավարժական ընթերցումների կազմակերպում,

գ) աշակերտների ուսման առաջադիմությունը բարձրացնելու նպատակով անհատական լրացուցիչ պարապմունքների կազմակերպում՝ լավագույն մասնագետների ընդգրկմամբ,

դ) դպրոցի և ընտանիքի կապի ամրապնդման նպատակով շաբաթվա վերջին օրը այցելել աշակերտների ընտանիքները, ծանոթանալ նրանց պայմաններին, պարզել՝ ծնողները ծանո՞թ են աշակերտի օրագրին,

ե) պարբերաբար ծնողներին մասնակից դարձնել դասալսումներին, նրանց ներկայությամբ չպատժել աշակերտներին, թերությունները վերացնել ծնողների հետ փոխհամաձայնեցված:

Անշուշտ, պետք է նշել, որ վերոնշյալ լավագույն ավանդույթները շարունակվում էին նաև Մարտակերտի, Մարտունու շրջանային կրթության բաժիններում, հանրակրթական դպրոցների մանկավարժական կոլեկտիվներում: Մեր զրույցի ժամանակ իրավացիորեն ճիշտ էին ասում վաստակաշատ մանկավարժներ Բա-

հատուր Դավթյանը, Սվետա Դավթյանը, Արշավիր Միրզոյանը և շատ ուրիշներ, որ խորհրդային դպրոցի ավանդույթները շատ ուսանելի են, ցավոք, այսօր դրանք անուշադրության են մատնված. մինչդեռ պետք է շարունակվեն:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 1960-ական թվականներին **Հադրութի շրջանի կրթության բաժինը երկրորդ անգամ ղեկավարել են Արմավիր Սարգսյանը(1964-1966թթ.), Գեորգի Բալայանը(1967-1969թթ.), իսկ 1969-1972թթ ղեկավարել է Վիլեն Գրիգորյանը:** Նկատի ունենալով, որ Արմավիր Սարգսյանի և Գեորգի Բալայանի գործունեության մասին արդեն նշել ենք, այստեղ միայն կներկայացվեն Վիլեն Գրիգորյանի[473] կարճատև գործունեության տարիներին կատարված աշխատանքները:

Ինչպես արդեն նշել ենք նախորդ բաժիններում, 60-ական թվականներից մարզի կրթական համակարգում որակական մեծ փոփոխություններ կատարվեցին ութամյա պարտադիր և միջնակարգ պարտադիր կրթության իրականացման, արտադրական ուսուցմամբ հանրակրթական 11-ամյա կրթության (1958-1966թթ.) անցման ուղղությամբ: Փաստագրական նյութերի ուսումնասիրությունից տեղեկանում ենք, որ 1969-1970 ուստարում մարզային,շրջանային կրթության բաժինների, այդ թվում Հադրութի շրջժողկրթբաժնի ղեկավարների կողմից բավականին մեծ աշխատանքներ կատարվեցին ութամյա պարտադիր և միջնակարգ պարտադիր կրթությունը էլ ավելի կատարելագործելու, դպրոցի աշխատանքում անհրաժեշտ կայունություն ստեղծելու, պոլիտեխնիկական ուսուցման և աշխատանքային դաստիարակության սկզբունքները հետևողականորեն իրագործելու նպատակով: Այդ ուղղությամբ մարզային կրթության բաժինը՝ հիմք ընդունելով ՀԽՍՀ լուսավորության նախարարության 1968թ. նոյեմբերի 16-ի որոշումը միջնակարգ կրթության կատարելագործման մասին, մարզի ժողովրդական կրթության մարմիններին պարտավորեցնում է մտցնել գիտականորեն հիմնավորված ուսումնական պլաններ և ծրագրեր և այդ նպատակով Ստեփանակերտի ուսուցիչների կատարելագործման ինստիտուտում կազմակերպել ուսուցիչների մեկամսյա վերապատրաստման դասընթացներ:

Վաստակաշատ մանկավարժներ Լևոն Սանամյանը (1960-1971թթ. Մեծ Թաղլարի միջն.դպրոցի տնօրեն), Ալյոշա Սարգսյանը (1965-1972թթ. Թաղասեռի 8-ամյա դպրոցի տնօրեն) իրենց հուշերում[474] մատնանշում են, որ 1970-1971 ուստարվա օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում (ներկա էին նաև մարզժողկրթբաժնի վարիչ Սարգիս Արամյանը, ուսուցիչների կատարելագործման ինստիտուտի տնօրեն Արմո Ներսիսյանը և դպրոցական մարզային, շրջանային տեսուչներ, ծնողական կոմիտեների ներկայացուցիչներ, արհմիութենական, կուսակցական մարմինների պատասխանատու աշխատողներ, շուրջ 368 մարդ) շրջժողկրթբաժնի վարիչ Վիլեն Գրիգորյանը հանգամանորեն ներկայացրեց 1969թ. հունվարից մինչև 1972թ. հուլիսի վերջը ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքները: Նա նշեց.

1. Յուրաքանչյուր ուսումնական տարում շրջժողկրթբաժնում հրավիրվել է տնօրենների խորհրդակցություն, քննարկվել նրանց հաշվետվությունները կատարած աշխատանքների մասին: Հատկապես ուշադրություն է դարձվել աշակերտների ուսման առաջադիմության բարձրացմանը և այդ ոլորտում թերությունների վերացմանը.

2. Դպրոցական տեսուչները դասալսումներ են ունեցել համարյա բոլոր դպրոցներում, արդյունքները քննարկվել են մանկավարժական խորհրդի նիստերում և տնօրենների խորհրդակցություններում.

3. Կազմակերպվել են միջփնջյան (միջդպրոցական) վեց բաց դասալսումներ, առաջավոր փորձն ընդհանրացրվել է ուսուցչական խորհրդակցություններում և տարածվել դպրոցների մանկավարժական կոլեկտիվներում.

4. Շրջանի դպրոցների շուրջ 32 ուսուցիչներ ընդգրկվել են կատարելագործման ինստիտուտում կազմակերպված վերապատրաստման դասընթացներում և ավարտելուց հետո իրենց հաշվետվություններով հանդես եկել կոլեկտիվների ընդհանուր խորհրդակցություններում.

5. Շրջժողկրթբաժինը հետևողական աշխատանք է տարել նաև դպրոցների վերանորոգման աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու ուղղությամբ:

Շրջանի կրթության բաժնի արխիվում[475] պահպանված՝ Վ.Գրիգորյանի հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզվել է, որ շրջժողկրթբաժնի վարիչը իր գործունեության տարիներին եղել է համարյա շրջանի բոլոր դպրոցներում, մասնակցել մանկավարժական խորհրդի նիստերին, քննարկվող հարցերի մասին արտահայտել իր կարծիքն ու առաջարկությունները: Հաշվետվություններում գովեստով է խոսում Մեծ և Հին Թաղլարի, Տումու, Տողի, Ազոխի, Հակակվի, Թաղասեռի, Բանազուրի, Ծամձորի, Խծաբերդի,Մարիամաձորի,Էդիլլուի, Արփագյադուկի և ուրիշ դպրոցների մանկավարժական կոլեկտիվների կատարած արդյունավետ աշխատանքների մասին.

1) Աշակերտների ուսումնական առաջադիմության բարձրացման,

2) Դպրոցի և ընտանիքի սերտ համագործակցության,

3) Փոխադարձ և բաց դասերի կազմակերպման,

4) Արտաուսումնական և արտադպրոցական աշխատանքների արդյունավետ կազմակերպման,

5) Միջդպրոցական մանկավարժական կոլեկտիվների հանդիպումների կազմակերպման,

6) Մանկավարժական ընթերցումների կազմակերպման,

7) Արտադրական բրիգադների աշխատանքներին աշակերտներին ընդգրկելու և նրանց մոտ հետաքրքրություն առաջացնելու, դպրոցի ներքին կյանքում որակական փոփոխություններ կատարելու, ուսումնական կաբինետները կահավորելու և այլ բնույթի աշխատանքներ պատշաճ մակարդակով կազմակերպելու ուղղությամբ:

Ինչպես ցույց են տալիս ուսումանսիրությունները[476], 1972-1973 ուստարվա մայիսի 16-ին (մինչև ավարտական քննությունների կազմակերպումը) մարզային ուսուցչական խորհրդակցությունում մարզժողկրթբաժնի վարիչ Ս.Արամյանը իր զեկուցման մեջ ներկայացնելով մարզի հանրակրթական դպրոցների մանկավարժական կոլեկտիվների կատարած աշխատանքները, գովեստով է խոսում շրջանային կրթության բաժնի վարիչներ Շահեն Օհանջանյանի (Մարտակերտ), Հենրիկ Գրիգորյանի (Մարտունի), Վիլեն Գրիգորյանի գործունեության մասին: Նրանք պարտքի ու պատասխանատվության զգացումով են կատարում իրենց պարտականությունները, և պատահական չէ, որ այդ տարիներին մարզի հանրակրթական դպրոցների շատ շրջանավարտներ ճիշտ էին ընտրում իրենց մասնագիտությունները և հաջողությամբ ընդունվում Հայաստանի, Բաքվի, Մոսկվայի և այլ հանրապետությունների բուհեր և ավարտելուց հետո վերադառնում հայրենի երկրամաս, նվիրվում մանկավարժական, հասարակական-քաղաքական գործունեության:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հադրութի շրջանի վերոնշյալ կրթա-

կան գործի նվիրյալ կազմակերպիչների շարքում կարևոր տեղ է գրավում նաև 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ, բազում մանկավարժական-տեսական հոդվածների հեղինակ, ուսուցիչների խորհրդատու **Անդրանիկ Աբրահամյանը:** Նպատակահարմար ենք գտնում համառոտակի ներկայացնել նաև նրա ուսանելի մանկավարժական գործունեությունը՝ զուգակցված **Հադրութի շրջժողկրթբաժնի վարիչի պաշտոնավարության շրջանի (1973-1981թթ.)** գործունեության հետ, ինչպես նաև նրա մանկավարժական ուսանելի խորհուրդները սկսնակ ուսուցիչներին[477]:

Նա ծնվել է 1933թ. Հադրութի շրջանի Արփագետիկ (Արփագյադուկ) գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի յոթնամյա դպրոցում (1941-1948թթ.), այնուհետև ավարտել է Հին Թաղլարի միջնակարգ դպրոցը (1949-1952թթ.) և ընդունվել (1952թ.) Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը: Գերազանց գնահատականներով ավարտելով երկամյակը, 1953թ. սեպտեմբերի 1-ին աշխատանքի է անցել Հադրութի շրջանի Արևշատի յոթնամյա դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: Չնայած նշված դպրոցում նա դասավանդել է ընդամենը մեկ ուսումնական տարում (1953-1954), բարձր դասարանների աշակերտների ուժերով կարողացել է ստեղծել և կահավորել հայոց լեզվի և գրականության կաբինետ, և այդ նախաձեռնությունը օրինակ է ծառայել նաև մյուս ուսուցիչների համար:

Ա.Աբրահամյանը 1954-1957թթ. ծառայել է խորհրդային բանակի շարքերում և զինվորի իր պարտականությունները բարեխիղճ կատարելու համար արժանացել հրամանատարական կազմի խրախուսանքին ու գովասանագրերին:

Զինվորական ծառայությունը պատվով կատարելուց հետո Ա.Աբրահամյանը վերադառնում է հայրենի երկրամաս և շարունակում մանկավարժական գործունեությունը: Որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար և տնօրեն աշխատել է Արևշատի, Դոլանլարի, հայրենի գյուղի՝ Արփագետիկի, Խծաբերդի և Պետրոսաշենի (Ղոշախաչ) յոթնամյա-միջնակարգ դպրոցներում: Միաժամանակ իր մանկավարժական գործունեության տարիներին նա հեռակա կարգով ավարտել է Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: Նրա մանկավարժական արգասավոր գործունեության մասին մանրամասն կնշվեն առանձին բաժնում: Այստեղ համառոտակի կներկայացվեն միայն Հադրութի շրջժողկրթբաժնի վարիչի պաշտոնում աշխատելու շրջանում (1973-1981թթ.) կատարած աշխատանքները: Ի դեպ, նշենք, որ հետագայում 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժը վերոնշյալ կրթության բաժինը վերստին ղեկավարել է 1988-2008թթ.:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, 1970-ական թվականներին դպրոցին ներկայացվող նոր պահանջներին ու խնդիրներին համապատասխան վերակառուցվեցին նաև ուսումնական, արտաուսումնական, արտադասարանական աշխատանքների կազմակերպման եղանակներն ու ձևերը: Դպրոցի վերակառուցման նոր փուլում մարզային, շրջանային կրթության բաժինների ղեկավարները իրենց առաջնահերթ խնդիրը համարեցին հանրակրթական դպրոցներում ուսուցման գործընթացի բարելավումն ու կատարելագործումը, ինչպես նաև ուսուցչի առաջավոր փորձի բացահայտումն ու տարածումը մանկավարժական կոլեկտիվներում: Այդ ուղղությամբ ուշագրավ աշխատանքներ են տարվել նաև Հադրութի շրջանի կրթության բաժնում:

Արխիվային փաստաթղթերի,ժամանակակիցների հուշերի (Շմավոն Պողոսյանի, 1971-1978թթ. Ազոխի դպրոցի տնօրեն, Գալյա Բաղասյանի, 1971-1978թթ. Մեծ Թաղլարի դպրոցի տնօրեն, Ալեքսան Բաղյանի, 1961-1979թթ. Մարիամաձորի դպրոցի տնօրեն, և այլոց) ուսումնասիրություններից տեղեկանում ենք, որ Հադրութի շրջանի կրթության բաժնի վարիչ Անդրանիկ Աբրահամյանը օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում ունեցած ծավալուն զեկուցման մեջ (նշենք, որ մինչև խորհրդակցությունը նա եղել է շրջանի համարյա բոլոր դպրոցներում, ծանոթացել կոլեկտիվներում տարվող աշխատանքներին, որի հիման վրա էլ կազմել է զեկույցը) մանրամասնորեն ընդհանրացրել է [478].

ա) շրջանի դպրոցներում տարվող աշխատանքները, կոնկրետ օրինակներով նշել է մի շարք դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանքերի կազմակերպման գործում դեռևս գոյություն ունեցող թերությունները,

բ) դպրոցական տեսուչների վերահսկողության և ստուգման ձևերը, բացթողումները,

գ) դպրոցների տնօրենների աշխատանքերի առավելություններն ու թերությունները:

Ինչպես նշում են ժամանակակիցները, շրջժողկրթբաժնի վարիչը իր զեկուցման վերջում խորհրդակցության մասնակիցներին (226 ուսուցիչներ, տնօրեններ, դպրոցական տեսուչներ) հանձնարարում է դպրոցի վերակառուցման նոր փուլում շրջանի հանրակրթական դպրոցներում իրականացնել արմատական բարեփոխումներ՝

1. Դպրոցներում ուսումնական ծանրաբեռնվածության բաշխումը պետք է համապատասխանի տվյալ առարկայի ուսուցչի մասնագիտական պատրաստվածության մակարդակին:

2. Նախասիրական (ֆակուլտատիվ) պարապմունքներում, առարկայական խմբակներում ընդգրկել լավագույն մասնագետներին, որպեսզի նախապայմաններ ստեղծվեն աշակերտների մասնագիտական ճիշտ կողմնորոշման համար:

3. Դպրոցներում՝ փոխադարձ,բայց և համադպրոցական դասալսումներին անպայման մասնակից դարձնել դպրոցական տեսուչներին, թոշակառու վաստակաշատ մանկավարժներին և արդյունքների վերլուծությունը ընդհանրացնել մանկավարժական խորհրդի նիստում, թերությունները նշելիս չպետք է դիտարկել որպես պատիժ անբավարար աշխատանքի համար, այլ մեթոդապես օգնել նրանց գիտակցելու իրենց մասնագիտական բացը և նման կարգի ուսուցիչներին ընդգրկել վերապատրաստման դասընթացներին:

4. Դպրոցական տեսուչները, տնօրենների հետ համագործակցած, յուրաքանչյուր ուսումնական տարվա մարտ-ապրիլ ամիսներին պետք է հրավիրեն հայոց լեզվի և գրականության, պատմության և աշխարհագրության, մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչների շրջանային խորհրդակցություն, որտեղ պետք է քննության առնվեն տվյալ առարկայի դասավանդման դրվածքը, առաջավոր փորձի օգտագործումը մանկավարժական կոլեկտիվներում, ինչպես նաև այդ առարկաները դասավանդող ուսուցիչների կողմից նոր մեթոդների, հնարների, մեթոդմիավորման աշխատանքների հետ կապված այլ հարցեր:

5. Շրջանի դպրոցներում պատշաճ մակարդակով կազմակերպել սովորողների աշխատանքային ուսուցումն ու դաստիարակությունը: Այս խնդրի կենսագործումը հանդես է բերում առարկայի ուսուցման առավել արդյունավետ մեթոդների ու հնարների գործադրման անհրաժեշտություն:

6. Ուսուցիչների ինքնակրթության եռամյա պլանի մշակումն ու իրականացու-

մը պետք է լինի դպրոցական տեսուչների և տնօրենների առաջնահերթ խնդիրը: Լուրջ ուշադրություն դարձնել ուսուցիչների մանկավարժական վարպետության բարձրացմանը:

7. Շրջանի դպրոցներում բարձրացնել ռուսաց լեզվի և մյուս օտար լեզուների դասավանդման դրվածքը և այլն:

Վերոնշյալ ուսուցչական խորհրդակցության մասնակից վաստակաշատ մանկավարժներ Գուրգեն Ստեփանյանը (Թաղուտի դպրոց), Պետյա Պետրոսյանը (Թաղասեռի դպրոց), Արփիկ Խասապետյանը (Մեծ Թաղլարի դպրոց) և ուրիշներ իրենց հուշերում գրում են, որ հարգված ուսուցչի, շրջժողկրթբաժնի ղեկավարի՝ Ա.Աբրահամյանի բարոյական կերպարը և նրա զեկուցման մեջ առաջ քաշված ծրագրային դրույթները տարիներ շարունակ ուղենիշ են եղել շրջանի դպրոցների մանկավարժական կոլեկտիվների համար: Իսկ Խ.Ղազարյանը, Մ.Բալյանը իրենց հուշերում գրում են, որ Ա.Աբրահամյանի ծառայությունները չափազանց մեծ են շրջանի կրթական համակարգի զարգացման գործում, մանավանդ որ Հադրութի շրջանի որոշ դպրոցներին կից գործում էին ադրբեջանական դպրոցներ: Նման քաղաքական բարդ իրադրության պայմաններում նա կարողացավ պահպանել ազգային դպրոցի հայաշունչ ոգին: Ժամանակակիցների հուշերում, նաև մի շարք փաստագրական նյութերում նշվում են, որ Ա.Աբրահամյանի գործունեության տարիներին վերանորոգվել են 22 դպրոցական շենքեր, կառուցվել 3 նոր շենքեր, բացվել են 6 նախադպրոցական հիմնարկներ (մանկապարտեզներ), պատանի տեխնիկների, բնասերների 2 կայան, աշակերտների ամառային հանգստի 4 ճամբար: Բացի այդ, յուրաքանչյուր ուսումնական տարում հրավիրվել են հայոց լեզվի և գրականության, պատմության և աշխարհագրության, մաթեմատիկայի և ֆիզիկայի, ռուսաց լեզվի և գրականության, ֆիզիկական կուլտուրայի առարկաների ուսուցիչների խորհրդակցություն, մեթոդմիավորման(դասվարների, դասղեկների առարկայական) հանձնաժողովների խորհրդակցություն, որտեղ քննարկվել են սովորողների ուսուցման որակի, արդյունավետության բարձրացման բազմաբնույթ հարցեր (այդ մասին մանրամասն կնշվի հաջորդ բաժնում):

3. ԼՂԻՄ-ի ուսուցիչների կատարելագործման ինստիտուտի (ՈՒԿՄԻ) տնօրենների և վերապատրաստման դասընթացների նշանավոր կազմակերպիչների գործունեությունը (1963-1988թթ.)

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մինչև 60-ական թվականները Լեռնային Ղարաբաղում մանկավարժական կրթությամբ կադրերի պատրաստումը և վերապատրսատումը սկզբում կատարվում էին հատուկ մանկավարժական թեքում ունեցող երկրորդ աստիճանի (9-ամյա) դպրոցներում, Շուշիի մանկավարժական ուսումնարանում (1922-1938թթ.), իսկ այնուհետև՝ Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտում (1939-1953թթ.): Այդ տարիներին մարզի հանրակրթական դպրոցները որակյալ ուսուցչական կադրերով ապահովելու խնդրի իրականացումը հիմնականում դրվեց 1938-1939 ուստարվա սեպտեմբերի 1-ին հիմնադրված երկամյա մանկավարժական ինստիտուտի վրա, իսկ այդ ուղղությամբ անձնվեր աշխատանքներ կատարեցին ԼՂԻՄ-ի կրթական գործի նշանավոր կազմակերպիչներ Արշավիր Քամալյանը, Առաքել Առաքելյանը, Գուրգեն Էդիլյանը, Գրիգոր Գրիգորյանը, Սարգիս Աբրահամյանը, Գրիգոր Ուլուբաբյանը, Թեմուր Ամիրջանյանը, Արսեն Խաչատրյանը և ուրիշներ:

Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցներն ուսուցչական որակյալ կադրերով ապահովելու նպատակով վերոնշյալ և ուրիշ կրթական նշանավոր գործիչների նախաձեռնությամբ Ստեփանակերտում, շրջանային կրթության բաժիններում պարբերաբար կազմակերպվում են ուսուցիչների վերապատրաստման տասնօրյա կամ մեկամսյա դասընթացներ:

Մանկավարժական կադրերի վերապատրաստման խնդիրը լուծելու համար ԼՂԻՄ ժողկրթբաժնի (մարզժողկրթբաժնի) և նրա տեղական մարմինների ձեռնարկումները լայն ծավալ են ընդունում, այսինքն՝ բարձորակ կադրերի մեծ պահանջը բավարարելու նպատակով ինչպես Հայաստանում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում բացվում են ոչ միայն միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ, այլև ուսուցչի որակի բարձրացման նաև մի այլ հաստատություն՝ ուսուցիչների կատարելագործման ինստիտուտ: Մանավանդ երկամյա մանկավարժական ինստիտուտը փակվելուց հետո մարզում չկար բարձրագույն ուսումնական հաստատություն (1953-1969թթ.): Մեծ դժվարությամբ մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչների մի մասը կարողանում են մասնակցել Երևանի մանկավարժական գիտահետազոտական ինստիտուտին (ՄԳԻ) կից գործող ՈՒԿԻ վերապատրաստման դասընթացներին: Մարզժողկրթբաժնի վարիչ Հակոբ Օհանջանյանի հաշվետվություններից[479] տեղեկանում ենք, որ 1954-1958թթ. Երևանի ՈՒԿՄԻ դասընթացներին մասնակցել են մարզի դպրոցների 96 ուսուցիչներ, իսկ 1959-1962թթ.՝ 122 ուսուցիչներ: Մարզային և շրջանային կրթության բաժիններում կազմակերպված դասընթացներին 1954-1962թթ. մասնակցել են 864 ուսուցիչներ, որոնցից 522-ը տարրական դասարանների ուսուցիչներ էին: Դրանց թվում կային նաև միջնակարգ մասնագիտական կրթություն ստացած թոշակառու ուսուցիչներ, որոնք ժամանակին հնարավորություն չեն ունեցել ստանալ բարձրագույն կրթություն:

Փաստագրական նյութերից[480] տեղեկանում ենք, որ ԼՂ մարզժողկրթբաժնի 1963թ.օգոստոսի 14-ի կոլեգիայի նիստի որոշմամբ սեպտեմբերի 16-ին բացվում է ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտ (ՈՒԿՄԻ): Արխիվային նյութերի, ժամանակակիցների հուշերի և այլ աղբյուրների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռել, թեկուզև համառոտակի, ներկայացնել ՈՒԿՄԻ-ի դասընթացները պատշաճ մակարդակով կազմակերպած նվիրյալ մանկավարժների գործունեությունը: Միաժամանակ ցույց տալ ուսուցիչների մեթոդամանկավարժական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու միտումով նրանց կողմից դպրոցներում դասալսումների, մանկավարժական ընթերցումների կազմակերպումը, ներդպրոցական համակարգում որոշակի բարեփոխումների իրականացումը, ինչպես նաև սերտ կապը մարզից դուրս գտնվող հայկական դպրոցների մանկավարժական կոլեկտիվների հետ, մանավանդ, որ նրանք ևս մասնակցում էին վերապատրաստման դասընթացներին:

Հավաստի տվյալների համաձայն՝ **ՈՒԿՄԻ-ի առաջին տնօրենը եղել է վաստակաշատ մանկավարժ Վլադիմիր Գրիգորյանը (1963-1967թթ)** [481]: Նպատակահարմար ենք գտնում ներկայացնել նաև բոլոր տնօրենների կենսագործունեությունը և պաշտոնավարության շրջանում յուրաքանչյուրի կատարած աշխատանքները:

Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի՝ Խանձաձորի ութամյա դպրոցում: Այնուհետև Վ.Գրիգորյանը ավարտում է Հին Թաղլարի միջնակարգ դպրոցը, ուսումը շարունակում Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտում (1941-1951թթ.) և, ստանալով ուսուցչի որակավորում, աշխա-

տանքի է անցնում Ստեփանակերտի շրջանի Կրկժանի հայկական յոթնամյա դպրոցում: 1953-1956թթ. եղել է այդ դպրոցի ուսմասվարը: Մանկավարժական գործունեության տարիներին (1953-1957թթ.) հեռակա կարգով ավարտում է Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը: Հետագա տարիներին (1956-1963թթ.) Վ.Գրիգորյանը եղել է Ստեփանակերտի երեկոյան դպրոցի ուսմասվար, տնօրեն (1956-1959թթ.), կրթության մարզային բաժնի դպրոցական տեսուչ (1959-1963թթ.): Իսկ մարզժողկրթբաժնի վարիչ Հակոբ Օհանջանյանը, գնահատելով նրա մանկավարժական փորձն ու կոլեկտիվը ղեկավարելու ունակությունները, 1963թ. սեպտեմբերի 16-ին նրան նշանակում է ուսուցիչների կատարելագործման նորաստեղծ ինստիտուտի տնօրեն:

Ի դեպ, նշենք, որ ՈՒԿՄԻ-ն իր հիմնադրման օրից վայելել է մարզի հանրակրթական դպրոցների մանկավարժական կոլեկտիվների սերն ու համակրանքը և կարող անձինք, թե՛ ՈՒԿՄԻ տնօրենի հորդորանքով, թե՛ սեփական նախաձեռնությամբ, բազմաթիվ նվերներ են տվել՝ մասնագիտական գրքեր, ուսումնական ձեռնարկներ, հայ գրողների, մանկավարժների դիմանկարներ, իսկ Հայաստանի մանկավարժական գիտահետազոտական ինստիտուտը, նրան կից գործող ՈՒԿԻ-ն, նորաստեղծ ԼՂԻՄ ՈՒԿԻ-ի գրադարանին են նվիրել տարբեր տեսակի 196 գրքեր, ձեռնարկներ, նոր ձևավորված ֆիզիկայի և մաթեմատիկայի, քիմիայի և կենսաբանության, հայոց լեզվի և գրականության կաբինետներին անհրաժեշտ սարքավորումներ[482]:

ՈՒԿՄԻ-ի հիմնադրման առաջին տարում, 1963-1964 ուստարվա հուլիս-օգոստոս ամիսներին, կազմակերպվում են երկշաբաթյա, մեկամսյա վերապատրաստման դասընթացներ մարզի դպրոցների հայոց լեզվի և գրականության, պատմության, քիմիա-կենսաբանության և տարրական դասարանների ուսուցիչների համար: Դասընթացների մասնակից, Ասկերանի (այն ժամանակ՝ Ստեփանակերտի) շրջանի Դահրավի ոչ լրիվ միջնակարգ դպրոցի (ութամյա) հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Ժորա Աբրահամյանը (20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ) իր հուշերում[483] պատմում է, որ դասընթացների խմբերում մասնակցում էին 84 ուսուցիչներ, որից 32-ը՝ տարրական դասարանների դասվարներ: Դասընթացներին հետաքրքիր դասախոսություններով հանդես են եկել վաստակաշատ մանկավարժներ Սարգիս Արամյանը, Արամ Մարտիրոսյանը, Թեմուր Ամիրջանյանը, Կարո Դավթյանը, ինչպես նաև յուրաքանչյուր խմբի ղեկավար՝ Թամարա Ծատրյանը(տարրական դասվարների), Սամվել Ղուկասյանը (հայոց լեզվի ուսուցիչների), Շահեն Մարտիրոսյանը (գրականություն), Նիկոլայ Բաբայանը (քիմիա-կենսաբանություն), Գրիշա Առուշանյանը (պատմություն և աշխարհագրություն): Վերապատրաստման դասընթացներն ավարտելուց հետո տարբեր մասնագիտությունների գծով ուսուցիչները գրում են «Բարելավել տարրական կրթության որակը դպրոցում», «Բարելավել աշակերտների մաթեմատիկայի պատրաստվածությունը տարրական դասարանում», «Թումանյանի երկերի օգտագործումը պատմության դասերին», «Աշակերտների գիտելիքների ստուգումն ու գնահատումը հայոց լեզվից», «Ինչպես եմ նախապատրաստում և անցկացնում գրականության դասը», «Տնային առաջադրանքները քիմիայից», «Զննական պարագաների օգտագործումը քիմիայի դասերին», «Բույսերի նշանակությունը բույսերի համար», «Դասավանդման իմ փորձը» և այլ թեմաներով ռեֆերատներ և հանձնում ստուգարքներ: Ուսուցիչների վերապատրաստման վկայականները հանձնում էին տնօրեն Վ.Գրիգորյանը, մարզժողկրթբաժնի վարիչ Հակոբ Օհանջանյանը: Ժամանակակիցների հուշերից տեղեկանում ենք, որ մարզժողկրթբաժվարն իր ելույ-

թում նշել է, որ հետագայում, սահմանված կարգի համաձայն, բարձրագույն կրթություն ունեցող ուսուցիչները վերապատրաստման դասընթացներով կանցնեն 5 տարին մեկ անգամ, իսկ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն ավարտածները՝ 3 տարին մեկ անգամ:

Ժ. Աբրահամյանի հուշերից նաև տեղեկանում ենք, որ ուսուցիչների վերապատրաստման դասընթացների արդյունքները ընդհանրացնելիս մարզժողկրթբաժնի վարիչ Հակոբ Օհանջանյանը մատնանշեց. «Եթե չհաշվենք այս բնագավառում դեռևս գոյություն ունեցող որոշ թերություններ, ապա պետք է նշել վերապատրաստման դասընթացների զգալի օգնությունը ուսուցիչներին՝ առարկայական ու մանկավարժական նոր գիտելիքներ ձեռք բերելու, գիտության նվաճումներին ծանոթանալու ուղղությամբ»: Նա անհրաժեշտ համարեց վերապատրաստման դասընթացներում ընդգրկել նաև մարզից դուրս գտնվող հայկական դպրոցների ուսուցիչներին[484]:

Ուսուցիչների կատարելագործման ինստիտուտի արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ 1966թ. հուլիս-օգոստոս ամիսներին վերապատրաստման դասընթացներին մասնակցել են Շահումյանի, Խանլարի շրջանների, Նուխիի հայկական ութամյա և միջնակաչգ դպրոցների 68 ուսուցիչներ: Ամեն տարի մարզժողկրթբաժնի հրավերով, բացի նշված շրջանների ուսուցիչներից, մասնակցել են նաև Շամախու, Դաշքեսանի շրջանների հայկական դպրոցների ուսուցիչները՝ 4-5 շաբաթ տևողությամբ:

Նրանց համար կազմակերպված դասընթացներում դասախոսություններով հանդես են եկել մարզի անվանի մանկավարժներ, գիտնականներ, մշակույթի գործիչներ, ինչպես նաև Երևանից հրավիրված գիտաշխատողներ, մեթոդիստ-մանկավարժներ Լևոն Վարդունին, Ար.Բալյանը, Ս.Խուդոյանը, Աշ.Դանիելյանը, Ա.Աբրահամյանը և շատ ուրիշներ: Նրանք ուսուցիչներին ծանոթացրել են Հայաստանի և մարզի կրթության, մշակույթի, արդյունաբերության, գյուղատնտեսության և այլ ոլորտներում ձեռք բերված նվաճումներին: Հարկ է նշել, որ այն ժամանակվա դժնդակ տարիներին դա մարզժողկրթբաժնի կողմից համարձակ քայլ էր: Դասընթացներում մանրամասն քննարկվում էին հայոց լեզվի և գրականության ուսուցման և մանկավարժական-մեթոդաբանական բնույթի այլ հարցեր:

Վ.Գրիգորյանն իր գործունեության տարիներին ոչ միայն պատշաճ մակարդակով կազմակերպել է ուսուցիչների վերապատրաստման դասընթացները, այլև ուսուցիչների հետ համագործակցելով դասալսումներ է անցկացրել դպրոցներում, մեթոդապես օգնել նրանց: ՈւԿՄԻ մեթոդիստ-մանկավարժներ Շահեն Մարտիրոսյանը, Նիկոլայ Բաղդասարյանը,ՍամվելՂուկասյանը, Ամերիկո Հովհաննիսյանը «Դասի արդյունավետության բարձրացման ուղիները» թեմայով հետաքրքիր դասախոսություններ են կարդացել մանկավարժական խորհրդի նիստերում, որը շատ օգտակար էր ուսուցիչների համար: Այդ մասին հետագայում իր հուշերում գրում է 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Վլադիմիր Անտոնյանը(Մարտունու շրջանի Գիշիի դպրոց) [485]:

Վաստակաշատ մանկավարժ, ՈւԿՄԻ տնօրեն Վ.Գրիգորյանը հետագա տարիներին (1967-1980թթ.) շարունակում է բեղմնավոր գործունեություն ծավալել մարզի դպրոցներում, կրթության տարբեր ոլորտներում: Ինչպես նշում է իր գրքում Բ.Դավթյանը, այդ տարիներին նա եղել է Ստեփանակերտի երեկոյան, գիշերօթիկ դպրոցների տնօրեն, Ստեփանակերտ քաղաքի կրթության բաժնի վարիչ (1971-1976թթ.), թիվ 7 դպրոցի տնօրեն (1976-1978թթ.), այնուհետև՝ Ստեփանակերտի հատուկ օժանդակ դպրոցի տնօրեն՝ մինչև կենսաթոշակի անցնելը:

Հմուտ և բանիմաց մանկավարժի փորձը ընդհանրացվել և տարածվել է մարզի կրթօջախներում, նրա հեղինակությամբ հրատարակվել են ուսումնական ձեռնարկներ, ուղեցույցներ, բազմաթիվ մանկավարժական հոդվածներ,որոնք շատ օգտակար են եղել երիտասարդ ուսուցիչների համար:

Ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտի գործունեության մեջ **բովանդակային փոփոխություններ են կատարվել հատկապես երախտաշատ մանկավարժ Արմո Ներսիսյանի պաշտոնավարության շրջանում (1968-1972թթ.):** Որպես ուսանելի օրինակ սկսնակ ուսուցիչների, բուհերի դասախոսների համար, անհրաժեշտ ենք համարում ամբողջությամբ ներկայացնել նաև նրա պրակտիկ և գիտամանկավարժական գործունեությունը[486]:

Մեծ և ուսանելի ուղի է անեցել մանկավարժական գիտությունների թեկնածու, դեցենտ, ԼՂԻՄ ժողովրդական կրթության գերազանցիկ, բազում գիտամանկավարժական աշխատությունների, մեթոդական ուղեցույցերի հեղինակ Արմո Ներսիսյանը (1930-1989թթ.), որն իր գիտակցական ամբողջ կյանքը նվիրել է հանրակրթական դպրոցի վերակառուցման, ինչպես նաև երկրամասի հայ դպրոցի ու մանկավարժության զարգացման, երիտասարդ սերնդի հայեցի դաստիարակության գործին:

Ա.Ներսիսյանը ծնվել է Ստեփանակերտի (այժմ՝ Ասկերանի) շրջանի Սարուշեն գյուղում: Ավարտելով հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը (1946թ.) ուսումը շարունակում է Բաքվի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում (1946-1950թթ.) և առաջին կարգի դիպլոմով ավարտելով բուհը՝ մանկավարժական աշխատանքի անցնում շրջանի Ավետարանոց (Չանախչի) գյուղի միջնակարգ դպրոցում, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ և փոխտնօրեն: Այնուհետև դասավանդում է նույն շրջանի Շոշի միջնակարգ դպրոցում՝ միաժամանակ կատարելով փոխտնօրենի պարտականությունները: Ա.Ներսիսյանը բեղուն մանկավարժական գործունեություն է ծավալել (1958-1968թթ.) հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում՝ կատարելով փոխտնօրենի, տնօրենի պարտականությունները:

Ա.Ներսիսյանը որտեղ աշխատել է, յուրովի և ստեղծագործաբար մշակել է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքերը նորովի պլանավորելու ու արդյունավետ կազմակերպելու օրինակելի պլան, որտեղ առաջնային խնդիր է համարել մանկավարժական խորհրդի նիստերում պարբերաբար լսել փորձառու ուսուցիչների դասերի վերլուծությունը: Նա սկսնակ ուսուցիչներին խորհուրդ էր տալիս նրանցից սովորել դասավանդման արդյունավետ մեթոդներն ու հնարները, իմանալ, թե նրանք ինչպես են պատրաստվում ամենօրյա դասերին և բարձրացնում դասավանդման որակը: Այդ տարիներին մարզային ուսուցչական խորհրդակցություններում միշտ էլ գովեստով են խոսել Ա.Ներսիսյանի ղեկավարած մանկավարժական կոլեկտիվի գործունեության մասին: Այդ մասին իր հուշերում գրում է Ա. Ներսիսյանի գործընկեր, հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, մարզային դպրոցական տեսուչ Ամերիկո Հովհաննիսյանը[487]:

Հաշվի առնելով այդ պաշտոններում սկզբունքային ու համեստ մարդու եռանդուն գործունեությունը և կոլեկտիվը ղեկավարելու նրա հակումները, ԼՂ մարզժողկրթբաժնի վարիչ Ս.Արամյանը նրան նշանակում է ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտի տնօրեն (1968-1972թթ.):

Վաստակաշատ մանկավարժ-գիտնականի հաշվետվություններից[488], ժամանակակիցների հուշերց տեղեկանում ենք, որ իր գործունեության չորս տարիներին ՈւԿՄԻ գիտակրթական գործունեության մեջ (այդ ժամանակաշրջանում

այնտեղ նաև գիտահետազոտական աշխատանքներ են կատարվել) բովանդակային բարեփոխումներ են իրականացվում.

1. Համագործակցելով Հայաստանի ուսուցիչների կատարելագործման ինստիտուտի տնօրինության հետ և հիմք ընդունելով նրանց տարիների առաջավոր փորձը, Ներսիսյանը կոլեկտիվի փորձառու մանկավարժների նախաձեռնությամբ բացում է ուսումնական կաբինետներ ըստ մասնագիտությունների՝ հայոց լեզվի և գրականության, ֆիզիկայի և մաթեմատիկայի, պատմության, աշխարհագրության, քիմիա-կենսաբանության, ռուսաց լեզվի, աշխատանքի ուսուցման և այլ առարկաների (17 ուսումնական կաբինետ) և կահավորում անհրաժեշտ սարքավորումներով:

2. Տնօրինության աշխատանքային պլանի համաձայն և համագործակցելով մարզի հանրակրթական դպրոցների տնօրենների հետ ուսուցիչների վերապատրաստման դասընթացները կազմակերպում է ըստ կիսամյակային արձակուրդների (տասնօրյա) և ամառային արձակուրդների՝ հուլիս-օգոստոս ամիսներին:

3. ՈՒԿՄԻ խորհրդում հաստատված կանոնադրության (այն առաջին անգամ Ա.Ներսիսյանի նախաձեռնությամբ և քննարկվել ու հաստատվել է մարզժողկրթբաժնի կոլեգիայի նիստում: Այն մշակելիս Ներսիսյանը հիմք է ընդունել Երևանի գիտահետազոտական ինստիտուտին կից գործող ՈՒԿԻ ավագ գիտաշխատող Լևոն Վարդունու մշակած կանոնադրության դրույթները) համաձայն ուսուցիչների վերապատրաստումը կարող է բարելավել աշխատանքի նկատմամբ ուսուցիչների վերաբերմունքը, ստեղծել դրական միջանձնային հարաբերություններ, ամրապնդել մասնագիտությանն նկատմամբ նրանց սերն ու հավատը:

4. ՈՒԿՄԻ աշխատանքային պլանի համաձայն՝ յուրաքանչյուր ուսումնական տարում կազմակերպվում են մարզի, Շահումյանի, Խանլարի, Դաշքեսանի, Շամախու և այլ շրջանների հայակական դպրոցների տնօրենների մեկամսյա վերապատրաստման դասընթացներ: Դասավանդում էին Ա.Ներսիսյանը, Ս.Ղուկասյանը, Ս.Թամրազյանը, Շ.Մարտիրոսյանը, Թ.Ամիջանյանը, ինչպես նաև մարզժողկրթբաժնի վարիչ Ս.Արամյանը, դպրոցական տեսուչներ Բ.Դավթյանը, Գ.Ուլուբաբյանը և ուրիշներ:

5. Յուրաքանչյուր ուսումնական տարում Ա.Ներսիսյանի նախաձեռնությամբ ինստիտուտի բարձրորակ մասնագետները դասալսումներ էին անցկացնում մարզի հայակական դպրոցներում, մեթոդական օգնություն ցույց տալիս ուսուցիչներին: Ինստիտուտի փորձառու մանկավարժները ուսուցիչների համար կազմում էին օրինակելի պլան-կոնսպեկտներ, վարում փորձնական դաս՝ մասնակից անելով հատկապես սկսնակ ուսուցիչներին: Բացի այդ, նրանք կազմում էին նաև դասվարի, դասղեկի աշխատանքային օրինակելի և մեթոդմիավորումների աշխատանքային պլաններ:

6. ՈՒԿՄԻ մանկավարժական կոլեկտիվը տնօրենի նախաձեռնությամբ լինում էին ոչ միայն մարզի, այլև Շահումյանի, Խանլարի, Դաշքեսանի, Շամախու շրջանների հայակական դպրոցներում, հնարավորինս մեթոդական օգնություն ցույց տալիս ուսուցիչներին, կազմակերպում մանկավարժական ընթերցումներ, հրավիրում խորհրդակցություններ, քննարկում դասը արդյունավետ կազմակերպելու ուսուցչի փորձը, ներկայացնում օրինակելի դասի վերլուծությունը, միաժամանակ դպրոցների գրադարաններին նվիրում մեթոդական գրքեր, ուղեցույցեր, ուսումնական ծրագրեր և իրենց կազմած օրինակելի դասի պլան-կոնսպեկտը, դասղեկի աշխատանքային պլանը, իսկ Ա.Ներսիսյանը յուրարքանչյուր դպրոցի տնօրենին, որպես ուսանելի օրինակ, տալիս էր իր մշակած դպրոցի կիսամ-

յակային և տարեկան աշխատանքային պլանը:

Ա. Ներսիսյանի գործունեության տարիներին ՈՒԿՄԻ վերապատրաստման դասընթացներին մասնակցել են մարզի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների 352 ուսուցիչներ, բարձր դասարանների 222, Ադրբեջանի շրջանների հայկական դպրոցների 166 ուսուցիչներ: Ուշագրավ է այն կարևոր փաստը, որ վերապատրաստման դասընթացներն ավարտվելուց հետո Ա.Ներսիսյանի նախաձեռնությամբ կազմակերպվում էր գիտապրակտիկ, տեսական սեմինար, որտեղ ուսուցիչներն ընդհանրացնում էին իրենց ստացած գիտելիքներն ու փորձը: Այդ հետաքրքիր ընթերցումներին մասնակցում էին մարզի դպրոցների ուսմասվարներն ու տնօրենները, շրջանային դպրոցական տեսուչները: Իսկ լավագույն ելույթները տպագրվում էին մարզային և շրջանային մամուլում, «Սովետական մանկավարժ» ամսագրում, «Սովետական դպրոց» և այլ պարբերականներում:

Ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտում աշխատելու տարիներին Ա.Ներսիսյանի մոտ դրսևորվել են նաև գիտահետազոտական աշխատանք կատարելու հետաքրքրություններ ու կարողություններ: 1972թ. ավարտելով Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրան (հեռակա բաժին), պաշտպանում է «Սովորողների ինքնուրույնության զարգացումը հայոց լեզվի և գրականության ընթերցանության ժամերին» թեմայով ատենախոսություն: Նշված ինստիտուտի 020 մասնագիտական խորհուրդը նրան շնորհում է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 1976թ. ԽՍՀՄ ԲՈՀ-ը (ՎԱԿ) նրան շնորհում է դոցենտի գիտական կոչում: Ա.Ներսիսյանը շուրջ 15 տարի ղեկավարել է ՍՄԻ-ի մանկավարժության և հոգեբանության ամբիոնը, եղել է նաև բանասիրական ֆակուլտետի դեկան: Սկսած 1969թ., երբ Ստեփանակերտում բացվում է Բաքվի մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղը, մինչև իր լուսավոր կյանքի մայրամուտը (մահացել է 1989թ. հուլիսի 4-ին), նա աշխատել է ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտում, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում, կրթել ու դաստիարակել հազարավոր ուսանողների, որոնցից շատերը բուհն ավարտելուց հետո, սիրելի մանկավարժի օրինակով, իրենց նվիրել են մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործին:

Մանկավարժական ինստիտուտում աշխատելու տարիներին երիտասարդ դասախոսներին, այդ թվում նաև սույն գրքի համահեղինակի համար (Հ.Գ.) ուսանելի էին դոցենտ Ա.Ներսիսյանի բուն իսկ դասախոսական աշխատանքի փորձը, ազնիվ օրինակը, սկզբունքայնությունը, պարտաճանաչությունը, համեստությունը, աշխատասիրությունը և մարդկային վսեմ այլ հատկանիշներ: ՍՄԻ-ում գիտապրակտիկ մանկավարժական գործունեության տարիներին զբաղվել է նաև մանկավարժական ստեղծագործական աշխատանքով:

Մանկավարժության տեսության, պատմության, մանկավարժական հոգեբանության տարբեր հարցերի շուրջ Ա.Ներսիսյանի տասնյակ հոդվածներ տպագրվել են ոչ միայն մարզի, այլև Հայաստանի պարբերական մամուլում («Սովետական մանկավարժ», «Սովետական դպրոց», «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» և այլ ամսագրերում): Նա պրոֆեսոր Արամ Բալայանի հետ թարգմանել է ակադեմիկոս Յու.Բաբանսկու «Մանկավարժություն» բուհական դասագրքի երկու հատորը: Երկար տարիներ աշխատում էր «Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցը Հայրենական մեծ պատերազմի տարիներին և հետպատերազմյան շրջանում» թեմայով դոկտորական ատենախոսության վրա, սակայն դաժան մահը անկատար թողեց տաղանդաշատ մանկավարժի մտահղացումը:

Անբասիր աշխատանքի համար մանկավարժ-գիտնականը պարգևատրվել է «Աշխատանքի վետերան» մեդալով, «ԽՍՀՄ բարձրագույն դպրոցի գերազանցիկ» և «ԽՍՀՄ լուսավորության գերազանցիկ» կրծքանշաններով, կառավարական պարգևներով:

Լեռնային Ղարաբաղի կրթական համակարգի նվիրյալ գործիչներից էր բազմավաստակ մանկավարժ **Սոկրատ Իսրայելյանը (1926-2002թթ.):** Ավարտելով հայրենի Նախիջևանիկ գյուղի միջնակարգ դպրոցը, ուսումը շարունակել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմական ֆակուլտետում և առաջին կարգի դիպլոմով ավարտելով այն՝ մանկավարժական աշխատանքի է անցել Ստեփանակերտի շրջանի դպրոցներում: Երկրամասի կրթական համակարգում հայտնի դեմք լինելով (եղել է ուսմասվար, Ստեփանակերտի թիվ 1, 2 դպրոցների տնօրեն, մարզի ժողկրթության բաժնի տեսուչ և այլն), նա իր մանկավարժական և մասնագիտական փորձն անմնացորդ փոխանցում է երիտասարդ ուսուցիչներին, նրանց մոտ հետաքրքրություն առաջացնում իրենց ընտրած մասնագիտության նկատմամբ:

Մարզժողկրթբաժնի վարիչ Ս.Արամյանը՝ բարձր գնահատելով Ս.Իսրայելյանի մանկավարժական հարուստ փորձը, նրան նշանակում է ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտի տնօրեն (1973-1978թթ.):

Արխիվային փաստաթղթերի և ժամանակակիցների հուշերի[489] ուսումնասիրություններից տեղեկանում ենք, որ իր գործունեության տարիներին Ս.Իսրայելյանը լուրջ ուշադրություն է դարձրել մարզի դպրոցների ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարման արդյունավետության բարձրացմանն ու միջին որակի մասնագիտական կադրերի վերապատրաստմանը: Այդ միտումով էլ ՈՒԿՄԻ-ի խորհրդակցությունում (1974թ. սեպտեմբերի 16-ին) վերապատրաստման դասընթացների կազմակերպիչներից նա պահանջում է այցելել դպրոցներ և բացահայտել ուսուցիչների, տնօրենների, ուսմասվարների, մեթոդմիավորման հանձնաժողովների ղեկավարների վերավորակավորման պահանջմունքները: Խորհրդակցության մասնակից Թեմուր Ամիրջանյանը (աշխարհագրության կաբինետի վարիչ) իր հուշերում մանրամասն պատմում է ՈՒԿՄԻ գործունեության մասին: Նա նշումէ, որ տնօրենը՝ Ս.Իսրայելյանը, խորհրդակցությունում քննարկելով վերապատրաստման դասընթացների հետ կապված բազմաբնույթ հարցեր, իր ելույթում նաև նշել է, որ մեր դպրոցների տնօրենները, նրանց տեղակալները (փոխտնօրեն, ուսմասվար) պետք է ձգտեն անընդհատ վերավորակավորման և նոր գիտելիքների ձեռքբերման՝ դրանով իսկ օրինակ ծառայեն իրենց կոլեկտիվների համար:

Հավաստի աղբյուրների համաձայն՝ 1974-1976թթ. ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտում վերապատրաստման դասընթացներին, ձմեռային արձակուրդներին (դեկտեմբերի 27-ից մինչև հունվարի 12-ը) և ամառային արձակուրդներին (հունիս-օգոստոս ամիսներին) մասնակցել են մարզի դպրոցների 66 տնօրեններ, Ադրբեջանի շրջաններում գործող հայկական դպրոցների 24 տնօրեններ, դպրոցների 94 դասվարներ, որից 26-ը՝ Ադրբեջանի շրջաններում գործող հայկական դպրոցներից, բարձր դասարանների 86 ուսուցիչներ, որից Ադրբեջանի շրջաններում գործող հայկական դպրոցներից 22-ը, դպրոցների մեթոդմիավորման հանձնաժողովների 42 ղեկավարներ[490]:

Ինչպես միշտ, ինստիտուտում վերապատրաստման դասընթացներն ավարտելուց հետո նրանք ստանում էին համապատասխան վկայականներ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՈՒԿՄԻ վերապատրաստման դա-

սընթացներին մասնակից ուսուցիչների, ուսմասվարների, տնօրենների թիվը 1976-1978թթ. կրկնապատկվել է:

Հետագա տարիներին, մինչև թոշակի անցնելը, Ս.Իսրայելյանը բեղուն գործունեություն է ծավալել մարզի հանրակրթական դպրոցներում, մարզային կրթության բաժնում, կուսակցության Ստեփանակերտի քաղկոմում:

Ճանաչված ու հարգված մանկավարժն արժանացել է մարզային կրթության բաժնի պատվոգրերի:

Լեռնային ղարաբաղի կրթական համակարգի նշանավոր գործիչներից էր 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ **Վազգեն Սարգսյանը**: Մինչև ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտի տնօրենի պաշտոնավարության շրջանը (1978-1989թթ.), նա բեղուն գործունեություն է ծավալել մարզի հանրակրթական դպրոցներում, որպես մաթեմատիկայի, ֆիզիկայի ուսուցիչ, ուսմասվար, տնօրեն, Ստեփանակերտի շրջանի կրթության բաժնի վարիչ:

Նպատակահարմար ենք գտնում համառոտակի ներկայացնել նաև նրա ուսանելի կենսագրությունը: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի՝ Քյաթուկի 7-ամյա դպրոցում (1944թ.), այնուհետև ավարտել է Խանաբադի միջնակարգ դպրոցը (1947թ.), ուսումը շարունակել Ստեփանակերտի երկամյա մանակավարժական ինստիտուտի բնագիտական ֆակուլտետում և, ավարտելով այն, որպես մաթեմատիկայի, ֆիզիկայի ուսուցիչ աշխատել Խանաբադի դպրոցում, միաժամանակ կատարելով ուսմասվարի պարտականությունները:

Մասնագիտական որակը բարձրացնելու միտումով Վ.Սարգսյանը ավարտում է նաև Բաքվի մանակավարժական ինստիտուտը (1951-1955թթ.) և ստանում մաթեմատիկայի, ֆիզիկայի ուսուցչի որակավորում: Խորապես տիրապետելով իր մասնագիտությանը, 1955-1957թթ. Ստեփանակերտի շրջանի Վարդաշենի դպրոցում աշխատելու տարիներին բարձրացնում է նշված առարկաների դասավանդման դրվածքը, միաժամանակ աշակերտների հետ միասին ստեղծում մաթեմատիկայի և ֆիզիկայի կաբինետ:

Այդ տարիներին ձեռք բերած մանկավարժական փորձն ու մասնագիտական գիտելիքները նրան հնարավորություն են ընձեռում Խանաբադի դպրոցում ուսմասվարի պաշտոնում աշխատելու տարիներին (1957-1967թթ.) պատշաճ մակարդակով կազմակերպել ուսումնադաստիարակչական աշխատանքները, բարձրացնել սկսնակ ուսուցիչների մեթոդամանկավարժական պատրաստվածության մակարդակը: Մարզի դպրոցի պրակտիկայում ճանաչված մանկավարժը ստեղծագործաբար աշխատում է նաև ԼՂ մարզային կրթության բաժնում որպես դպրոցական տեսուչ (1967-1974թթ.), Ստեփնակերտի կրթության բաժնի վարիչ (1974-1978թթ.):

Վ. Սարգսյանը իր պրակտիկ փորձով և մանկավարժական կոլեկտիվը ղեկավարելու ընդունակություններով բեղուն գուծունեություն է ծավալում նաև ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտում (1978-1989թթ.):

Իր գործունեության առաջին ուսումնական տարում (1978-1979թթ.) Վ.Սարգսյանը ուսուցիչների վերապատրաստման դասընթացների ժամանակ (հուլիս-օգոստոս) կազմակերպում է «Ուսուցման արդյունավետության բարձրացման ուղիները» թեմայով գիտապրակտիկ սեմինար, որին մասնակցում են նաև մարզի դպրոցների տնօրեններ, ուսմասվարներ, մարզային կրթության բաժնի տեսուչներ, մարզժողկրթբաժնի վարիչ Ս.Արամյանը, ինչպես նաև շրջանային ժողկրթբաժինների վարիչներ: Գիտապրակտիկ սեմինարի մասնակից, Ասկերանի շրջանի Դահրավի դպրոցի տնօրեն, պատմության ուսուցիչ Արմեն Ավանեսյանի (20-րդ դարի

Արցախի լավագույն մանկավարժ) հուշերից[491] տեղեկանում ենք, որ սեմինարին մասնակից ուսուցիչների՝ Վ.Անտոնյանի (Գիշի), Ժորա Աբրահամյանի (Դահրավ), Ելենա Աղաջանյանի (Ստեփանակերտի թիվ 2 դպրոց), Նորայր Ավետիսյանի (Հաղորտի), Զավեն Բաբայանի (ՈւԿՄԻ ռուսաց լեզվի կաբինետի վարիչ), Նիկոլայ Բաղդասարյանի (ՈւԿՄԻ հայոց լեզվի կաբինետի վարիչ) և ուրիշների զեկուցումները նվիրված էին «Սովորողների ինքնուրույն մտածողության զարգացման», «Ստեղծագործական խնդիրների համակարգը՝ սովորողների ինքնուրույն մտածողության զարգացման կարևորագույն միջոց», «Գիտելիքների պրոբլեմային շարադրանքը», «Դասին ոչ բոլորը իրար ետևից սերտել, այլ հաղորդածը իմաստավորել», «Ապահովել գիտելիքների ստեղծագործական կիրառումը ուսման մեջ և աշխատանքում» և այլ հիմնահարցերի քննարկմանը: Իսկ ՈւԿՄԻ տնօրենի զեկուցումը նվիրված էր «Մեթոդական օգնություն տնօրեններին, ուսմասվարներին» հարցի ամբողջական վերլուծությանը, որի քննարկման շուրջ եղան նաև առաջարկություններ:

Հարկ է նշել, որ տնօրենի նախաձեռնությամբ յուրաքանչյուր ուսումնական տարում ՈւԿՄԻ վերապատրաստման դասընթացների կազմակերպիչները պարբերաբար լինում էին մարզի դպրոցներում, մեթոդական օգնություն ցույց տալիս, կազմակերպում փորձնական դասալսումներ՝ մասնակից դարձնելով սկսնակ ուսուցիչներին: Բացի այդ, դպրոցներում կազմակերպում էին նաև բաց և փոխադարձ դասալսումներ, արդյունքները ընդհանրացնում մանկավարժական խորհրդի նիստերում (այդ մասին մանրամասն կնշվի առանձին բաժնում):

Հետագա տարիներին (1989-1996թթ.) Վ.Սարգսյանը եղել է Ասկերանի միջնակարգ դպրոցի տնօրեն, ժողկրթության, մշակույթի և սպորտի Ասկերանի շրջանի մեթոդական ծառայության կաբինետի վարիչ:

Համեստ բնավորությամբ անձնավորություն էր վաստակաշատ մանկավարժը, որտեղ աշխատել է, մեծ պատասխանատվությամբ է կատարել հանձն առած պարտականությունները, զբաղեցրած բոլոր պաշտոններում արդարացրել իրեն:

Այսպիսով, արխիվային փաստաթղթերի և ժամանակակիցների հուշերի ուսումնասիրությունների հիման վրա համառոտակի ներկայացվեց ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտի տնօրենների գործունեությունը (1963-1989թթ.): Իսկ այժմ համառոտակի բնութագրենք ՈւԿՄԻ վերապատրաստման դասընթացների կազմակերպիչների գործունեությունը:

Մարզի հանրակրթական դպրոցներում, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտում և ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտում բեղմնավոր գործունեություն է ծավալել վաստակավոր մանկավարժ **(20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ) Թեմուր Ամիրջանյանը (1919-1999):** Ծնվել է Հադրութի շրջանի Տումի գյուղում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի 7-ամյա դպրոցում, այնուհետև ավարտել Շուշիի մանկավարժական ուսումնարանը (1936-1937 ուստարի), ուսումը շարունակել Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմաաշխարհագրական ֆակուլտետում (1937-1941թթ.): Առաջին կարգի դիպլոմով ավարտելով բուհը, մանկավարժական աշխատանքի է անցնում Շուշիի մանկավարժական ուսումնարանում՝ որպես աշխարհագրության ուսուցիչ[492]: Սակայն պատերազմական տարիներին ուսումնարանում մանկավարժական կադրերի բացակայության պատճառով դասավանդել է նաև պատմություն, ռազմական գործ և այլ առարկաներ:

Բազմավաստակ մանկավարժը շուրջ 10 տարի գիտամանկավարժական գոր-

ծունեություն է ծավալել Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտում (1944-1953թթ.), եղել է աշխարհագրության ավագ դասախոս, ամբիոնի վարիչ, դեկանի տեղակալ, գիտխորհրդի մշտական անդամ, 1951-1953թթ.՝ բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի դեկան: Երկամյակը փակվելուց հետո (1953թ.), Ամիրջանյանը երկար տարիներ աշխարհագրություն է դասավանդել մարզի դպրոցներում: Շուրջ ութ տարի եղել է Ստեփանակերտի թիվ 1, 2 դպրոցների աշխարհագրության մեթոդմիավորման հանձնաժողովի նախագահ: Բացի իր մանկավարժական պարտականություններից, նա մարզժողկրթբաժնի հրավերով համատեղության կարգով կատարել է նաև աշխարհագրության մեթոդիստի պարտականությունները, գործուղվել դպրոցները, մեթոդական օգնություն ցույց տվել ուսուցիչներին:

Վաստակաշատ մանկավարժը ծանրակշիռ դեր ունի նաև ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտի հիմնադրման, վերապատրաստման դասընթացները պատշաճ մակարդակով կազմակերպելու և մարզի դպրոցներում աշխարհագրության դրվածքը բարձր հիմքիվրա դնելու գործում: Նրա նախաձեռնությամբ մարզի դպրոցներում, ՈՒԿՄԻ-ում ստեղծվել են աշխարհագրության կաբինետներ, կահավորվել անհրաժեշտ սարքավորումներով: Շատ դիտազննական պարագաներ (քարտեզ-գծագրեր, մարզի պատմական հուշարձանների, օգտակար հանածոների քարտեզներ և այլն) պատրաստել է ինքը և վերապատրաստման դասընթացների ժամանակ աշխարհագրության ուսուցիչներին խորհուրդ տվել, որ դպրոցում իրենք ևս պատրաստեն նմանատիպ դիտազննական պարագաներ: Այդ մասին իր հուշերում պատմում է 1974-1975 ուստարվա հուլիսին աշխարհագրության ուսուցիչների վերապատրաստման դասընթացների մասնակից, Հադրութի շրջանի Կարմրակուճ գյուղի 8-ամյա դպրոցի աշխարհագրության ուսուցիչ Գեորգի Ալավերդյանը:

Իր պրակտիկ մանկավարժական գործունեության տարիներին Թ.Ամիրջանյանը զբաղվել է նաև ստեղծագործական աշխատանքով: Երկար տարիների հարուստ փորձը ընդհանրացրել է գիտական հոդվածներում, պարբերական մամուլում տպագրված հոդվածներում, որտեղ իր փորձի հիման վրա մեթոդական խորհուրդներ է տալիս ուսուցիչներին՝ դասը կատարելագործելու ուղղությամբ ընտրելու արդյունավետ մեթոդներ:

Նրա երկար տարիների մանկավարժական վաստակն իր արժանի, ուրույն տեղն ունի այսօր մեր հանրապետության կրթական համակարգում:

ՈՒԿՄԻ աշխարհագրության ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում դասավանդել է մարզի դպրոցի պրակտիկայում ճանաչված մանկավարժ, աշխարհագրության ուսուցիչ **Վարդան Արզումանյանը (1934թ)**: Համառոտակի ներկայացնենք նաև նրա պրակտիկ մանկավարժական գործունեությունը:

Նախնական կրթությունը ստացել է Ասկերանի շրջանի Սղնախի 7-ամյա դպրոցում (1949թ.), այնուհետև ավատել Շուշիի մանկավարժական ուսումնարանը (1949-1953թթ.), ծառայել խորհրդային բանակում (1953-1956թթ.) և զինվորական ծառայությունն ավարտելուց հետո մանկավարժական աշխատանքի անցել հայրենի գյուղի 8-ամյա դպրոցում, որպես աշխարհագրության ուսուցիչ՝ կատարելով նաև ուսմասվարի պարտականությունները: Մանկավարժական գործունեության տարիներին (1964-1969թթ.) Արզումանյանը հեռակա կարգով ավարտում է Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի աշխարհագրության ֆակուլտետը: Այդ տարիներին, որպես տնօրեն, ուսմասվար աշխատել է նաև Դաշքեսանի շրջանի հայկական դպրոցներում, իսկ 1974-1978թթ. եղել է ՈՒԿ-

ՄԻ աշխարհագրության ուսուցիչների վերապատրաստման դասընթացների խմբի ղեկավար, միաժամանակ համատեղության կարգով կատարել է մարզժողկրթբաժնի աշխարհագրություն մասնագիտության գծով դպրոցական տեսչի պարտականությունները[493]:

ՈւԿՄԻ-ում աշխատելու տարիներին նա մշտական կապ է պահպանել դպրոցի աշխարհագրության ուսուցիչների հետ, մեթոդապես օգնել նրանց կազմելու օրինակելի պլան-կոնսպեկտ, կազմակերպելու փորձնական դաս սկսնակ ուսուցիչների համար՝ նպատակ ունենալով բարձրացնել աշխարհագրության դասավանդման դրվածքը: Հարկ է նշել, որ այդ ուշագրավ նախաձեռնությունը նա սովորել է վաստակաշատ մանկավարժ Թեմուր Ամիրջանյանից:

Հետագա տարիներին Վ.Արզումանյանը եղել է Ասկերանի շրջանի կրթության բաժնի վարիչ (1978-1987թթ.), ԼՂՀ կրթական համակարգում (ԿԳ և սպորտի նախարարությունում) կատարել նաև մեթոդկաբինետի վարիչի պարտականությունները:

Վաստակաշատ մանկավարժ Թ.Ամիրջանյանը իր հուշերում ակնածանքով է խոսում Վ.Արզումանյանի մասնագիտական բարձր որակի, ՈւԿՄԻ-ում աշխատելու տարիներին բարեխիղճ աշխատանքի և մարդկային վսեմ հատկանիշների մասին:

Անբասիր մանկավարժական գործունեության համար նա արժանացել է մեդալների և պատվոգրերի:

Լեռնային Ղարաբաղի կրթական համակարգի նշանավոր գործիչներից է **Զավեն Բաբայանը (1920-1992):** Նախնական կրթությունը ստացել է հայրենի Շոշ գյուղի 7-ամյա դպրոցում, այնուհետև ավարտել է (1938-1947թթ.) Ստեփանակերտի թիվ 2 միջնակարգ դպրոցը, Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության բաժինը: Ավարտելով այն, մանկավարժական աշխատանքի է անցնում Մարտակերտի միջնակարգ դպրոցում, որպես ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ, միաժամանակ համատեղության կարգով կատարում շրջժողկրթբաժնի ռուսաց լեզվի դպրոցական տեսչի պարտականությունները:

1951-1954թթ. ծառայել է խորհրդային բանակի շարքերում, զորացրվել որպես պահեստի սպա ու շարունակել մանկավարժական գործունեությունը: 1954-1960թթ. դասավանդել է Դաշբուլաղ (Աստղաշեն), Շուշիքենդ (Շոշ) գյուղերի դպրոցներում՝ միաժամանակ կատարելով փոխտնօրենի պարտականությունները: Այդ տարիներին հեռակա կարգով ավատել է Բաքվի ռուսաց և օտար լեզուների ինստիտուտը:

Մարզի հանրակրթական դպրոցի պրակտիկայում արդեն ճանաչված մանկավարժը 1962-1965թթ. աշխատում է ԼՂ մարզժողկրթբաժնում՝ որպես ռուսաց լեզվի և գրականության գլխավոր տեսուչ, իսկ 1965-1976թթ.՝ ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտում որպես ռուսաց լեզվի և գրականության մեթոդկաբինետի վարիչ: Շուրջ տասը տարի կազմակերպել է մարզի դպրոցների ռուսաց լեզվի ուսուցիչների վերապատրաստման դասընթացները, նրանց համար կազմել դասի օրինակելի պլան-կոնսպեկտ,մեթոդական ուղեցույցներ, ձեռնարկներ: Բացի այդ, շրջանային, մարզային, հանրապետական թերթերում («Սովետական Ղարաբաղ», «Սովետական դպրոց») և ամսագրերում («Սովետական մանկավարժ», «Советская педагогика») հանդես էր գալիս ռուսաց լեզվի դասավանդման ու մեթոդական հարցերին, ինչպես նաև մարզի լավագույն ուսուցիչների դասերի վերլուծությանը նվիրված բազում հոդվածներով:

ՈւԿՄԻ-ում նա ոչ միայն կազմակերպում է ռուսաց լեզվի ուսուցիչների վարա-

պատրաստման դասընթացներ, այլև յուրաքանչյուր ուսումնական տարվա արձակուրդներին լինում է շրջանային կրթության բաժիններում, կազմակերպում ռուսաց լեզվի ուսուցիչների գիտապրակտիկ սեմինարներ՝ նվիրված դպրոցներում ռուսաց լեզվի դասավանդման դրվածքի բարելավմանը: Այդ մասին իրենց հուշերում պատմում են Մարտակերտի շրջանի Մեծ շենի միջնակարգ դպրոցի ռուսաց լեզվի ուսուցիչ Վիլյամ Դանիելյանը, Վաղուհասի միջնակարգ դպրոցի ռուսաց լեզվի ուսուցիչ Բագիր Միքայելյանը, Մարտունու շրջանի Գիշու միջնակարգ դպրոցի ռուսաց լեզվի ուսուցիչ Արկադի Կարապետյանը և շատ ուրիշներ[494]:

Վաստակաշատ մանկավարժը իր բեղուն մանկավարժական գործունեության տարիներին եղել է մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչների խորհրդատուն, բարեկամը և նրանց ձգտումների արտահայտիչը: Նրա անչափելի վաստակը գնահատվել է Պատվո նշան շքանշանով, արժանացել է Ադր. հանրապետության լուսավորության գերազանցիկի կրծքանշանի:

Լեռնային Ղարաբաղի կրթական գործի նվիրյալ գործիչներից է գիտամանկավարժական, մեթոդական բազում հոդվածների, ուղեցույցերի հեղինակ, ճանաչված մեթոդիստ, մանկավարժ **Սամվել Ղուկասյանը (1911-1994):** Սկզբնական կրթությունը ստացել է ՀՀ Սիսիանի շրջանի Բռնակոթի տարրական դպրոցում: Ընտանեկան ծանր պայմաններից ելնելով՝ նա մեկնում է Բաքու, աշխատում և միաժամանակ ավարտում հայկական թիվ 9 յոթնամյա դպրոցը, ուսումը շարունակում Բաքվի ինդուստրիալ-մանկավարժական տեխնիկումում: Ավարտելով այն՝ գործուղվում է Լեռնային Ղարաբաղ, դասավանդում Շուշիքենդի (Շոշ) յոթնամյա դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: Հետագայում, 1942թ. ավարտում է Ադրբեջանի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը և որպես ուսմասվար, տնօրեն արգասավոր գործունեություն ծավալում Ստեփանակերտի (այժմ՝ Ասկերանի) շրջանի Կարմիր գյուղի, Խաչմաչի (1936-1938թթ.), Չանախչու (1942-1945թթ.) դպրոցներում, իսկ 1946-1963թթ. եղել է Ստեփանակերտի կրթության շրջանային բաժնի տեսուչ:

Բեղմնավոր մանկավարժական գործունեությանը զուգընթաց Ս.Ղուկասյանը նույնպես որոշակի դեր խաղաց ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտի հիմնադրման գործում: Նա ձգտում էր, որպեսզի ուսումնագիտական այդ հաստատությունը դառնա մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչների առաջավոր փորձի հետազոտության կենտրոն:

Փաստագրական նյութերի ուսումնասիրությունից[495] տեղեկանում ենք, որ ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտում աշխատելու տարիներին (1963-1984թթ.) հայոց լեզվի և գրականության ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին հանդես էր գալիս առաջավոր ուսուցիչների փորձին նվիրված դասախոսություններով, վերլուծություններ էր մեկնաբանում ոչ միայն մանկավարժական գրականությունից, այլև կոնկրետ օրինակներ էր բերում իր պրակտիկ փորձից:

Վերապատրաստման դասընթացների մասնակից, Ստեփանակերտի թիվ 1 դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Սվետալանա Դավթյանը (20 տարի եղել է նշված դպրոցի տնօրեն), իր հուշերում պատմում է. «Ուսուցիչների կատարելագործման ինստիտուտի հայոց լեզվի մեթոդական կաբինետը դարձել էր դասը կատարելագործելու, նորը հայտնագործելու հետազոտական կենտրոն: Վերապատրաստման դասընթացների ժամանակ յուրաքանչյուր ուսուցիչ ներկայացնում էր արդյունավետ դասի անցկացման իր ուսանելի փորձը և դա շատ օգ-

տակար էր հատկապես երիտասարդ ուսուցիչների համար»:

Իր բազմամյա մանկավարժական գործունեության տարիներին Ս.Ղուկասյանը նպատակասլաց աշխատասիրությամբ և մեթոդամանկավարժական պատրաստվածությամբ ձգտել է ամեն ինչ անել ի նպաստ մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործընթացի բարելավման, սկսնակ ուսուցիչների մասնագիտական որակի բարձրացման: Նրա գիտամանկավարժական հոդվածները, դասախոսությունները և հետաքրքիր զրույցները լավագույն ուղեցույց էին սկսնակ ուսուցիչների համար[496]:

Լեռնային Ղարաբաղի կրթական գործի նվիրյալ գործիչներից էր մաթեմատիկայի ուսուցիչ, ուսումնամեթոդական բազմաթիվ հոդվածների հեղինակ **Սուրեն Թամրազյանը (1917-1995):** Նախնական կրթությունը ստացել է Ասկերանի շրջանի Քյաթուկ գյուղի առաջին աստիճանի դպրոցում (1-4-րդ դասարան), այնուհետև ավարտել Ասկերանի երկրորդ աստիճանի դպրոցը (9-ամյա) և ուսումը շարունակել Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի մեխանիկայի բաժնում: Ավարտելով այն, ուսումը շարունակում է Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետում: Այն առաջին կարգի դիպլոմով ավարտում է 1940թ. և մանկավարժական աշխատանքի անցնում Մարտակերտի միջնակարգ դպրոցում, որպես մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ: Այնուհետև զորակոչվում է Կարմիր բանակի շարքերը Լծառայում ինժեներասակրավորական գումարտակում:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին մասնակցել է Ուկրաինայի, Բելոռուսիայի և մի շարք քաղաքների ազատագրման համար մղված մարտերին: Հետպատերազմյան շրջանում սկսվում է Ս.Թամրազյանի մանկավարժական բեղմնավոր գործունեությունը: Որպես մաթեմատիկայի ուսուցիչ դասավանդում է Ասկերանի շրջանի Խնձրիստանի ութամյա դպրոցում (1946-1950թթ.), այնուհետև, 1951-1960թթ.՝ Ստեփանակերտ քաղաքի դպրոցներում որպես ուսմասվար, տնօրեն, իսկ 1961-1962թթ. եղել է մարզային կրթության բաժնի դպրոցական տեսուչ:

Վաստակաշատ մանկավարժը բեղմնավոր գործունեություն է ծավալում հատկապես ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտում (1963-1988թթ.):

Ճանաչված մեթոդիստ-մանկավարժը իր հարուստ փորձով և մասնագիտական բարձր պատրաստվածությամբ ՈւԿՄԻ-ում աշխատելու տարիներին պատշաճ մակարդակով կազմակերպում է մարզի հանրակրթական դպրոցների մաթեմատիկայի ուսուցիչների վերապատրաստման դասընթացները:

ՈւԿՄԻ-ի կառուցվածքային հիմնական օղակներից է ուսումնամեթոդական կաբինետը, որը իրականացնում է ուսուցիչների որակավորում ինչպես ինստիտուտում, այնպես էլ դպրոցներում, քաղաքային և շրջանային մեթոդական կաբինետներում: Ս.Թամրազյանի նախաձեռնությամբ ՈւԿՄԻ-ում ստեղծվում է մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսումնամեթոդական կաբինետ, որտեղ կազմակերպվում են նշված մասնագիտությամբ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ: Այստեղ կիրառվում են ուսուցիչների հետ տարվող աշխատանքի արդյունավետ ձևեր ու եղանակներ, լուրջ ուշադրություն է նվիրվում դասընթացներին: Փաստորեն, ՈւԿՄԻ-ի նշված և մյուս ուսումնամեթոդական կաբինետները դառնում են առաջավոր փորձի իսկական լաբորատորիա և բազմակողմանի մեթոդական օգնություն ցույց տալիս մարզի ուսուցչությանը: Մարզի դպրոցներում դասալսումների, մանկավարժական կոլեկտիվի, ուսմասվարի և տնօրենի հետ ունեցած զրույցների միջոցով Թամրազյանը յուրաքանչյուր ուսումնական տարում կարողացել է բացահայտել նրանց վերաբերմունքը վերապատրաստման

դասընթացների նկատմամբ: Բացի այդ, նա մի շարք դպրոցներում ստեղծել է մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսումնական կաբինետներ, կազմակերպել սեմինարներ, ուսուցիչներին ծանոթացրել նոր ուսումնական ծրագրերին, պարզաբանել բարդ հիմնահարցերը, մեթոդական օգնություն ցույց տվել բարձրացնելու մաթեմատիկայի և ֆիզիկայի դասավանդման դրվածքը: Այդ մասին իր հուշերում պատմում է Հունոտ գյուղի ութամյա դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Վարդան Գրիգորյանը: Նա միաժամանակ մատնանշում է, որ ՈւԿՄԻ-ում գիտական-տեսական մակարդակը բարձրացնելու կարիք ունեցող ուսուցիչների համար կազմակերպվում էին մեկամսյա դասընթացներ, գիտապրակտիկ սեմինարներ: Այդ դասընթացներում դասախոսությունները և գործնական պարապմունքներն անց էին կացնում ինստիտուտի դասախոսները, ինչպես նաև Երևանից հրավիրված բարձրորակ մասնագետները:

Հմուտ ու բազմափորձ մանկավարժ Ս.Թամրազյանը մինչև թոշակի անցնելը ամեն ինչ արել է ի նպաստ ուսուցիչների մեթոդամանկավարժական վարպետության բարձրացման[497]:

Ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտի գործունեության տարիներին (1963-1974թթ.) վերապատրաստման դասընթացներում հայոց լեզու և գրականություն առարկաների դասախոսությունները և գործնական պարապմունքները անց էր կացնում նաև վաստակաշատ մանկավարժ, ԼՂԻՄ ժողովրդական կրթության բաժնի հայոց լեզվի և գրականության գլխավոր տեսուչ **Ամերիկո Հովհաննիսյանը (1912-1976թթ.)**: Նախնական կրթությունը ստացել է Մարտակերտի շրջանի Տոնաշեն գյուղի առաջին աստիճանի դպրոցում, այնուհետև ավարտել է Մաղավուզ գյուղի 7-ամյա դպրոցը, ուսումը շարունակել Շուշիի մանկավարժական ուսումնարանում (1935-1939թթ.): Ավարտելով այն, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ դասավանդել է հայրենի Տոնաշեն գյուղի յոթնամյա դպրոցում:

Հայրենական պատերազմի առաջին ամիսներին Մարտակերտի շրջանի մեծ թվով ուսուցիչների հետ Ա.Հովհաննիսյանը մեկնեց ռազմաճակատ և 1942թ. փետրվարին Ստալինգրադի համար մղվող կատաղի մարտերից մեկում ծանր վիրավորվելուց հետո, որպես երկրորդ կարգի հաշմանդամ, զորացրվեց ու վերադարձավ հայրենիք:

Ապաքինվելուց հետո շարունակում է մանկավարժական գործունեությունը Մարտակերտի շրջանի դպրոցներում (1943-1953թթ.) որպես ուսմասվար, տնօրեն, Ստեփանակերտի շրջանի դպրոցներում (1954-1964թթ.), իսկ 1964թ.-ից մինչև 1945թ. աշխատել է ժողովրդական կրթության մարզային բաժնում՝ որպես դպրոցական գլխավոր տեսուչ:

Ա.Հովհաննիսյանի մասնագիտական ու մանկավարժական հմտությունն ու վարպետությունը դրսևորվում են նաև ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտում: Այստեղ աշխատում է համատեղության կարգով, կարդում դասախոսություններ, անցկացնում գործնական սեմինարներ, մշակում ուսուցիչների վերապատրաստման դասընթացների ուսումնական պլաններն ու ծրագրերը: Վաստակաշատ մանկավարժը համոզված էր, որ ուսուցիչներին ճանաչելը և աշխատանքի կոնկրետ պլանավորումը հեշտացնում են վերապատրաստման դասընթացների կազմակերպումը: Նա գտնում էր, որ դպրոցական տեսուչները, ՈւԿՄԻ դասախոսները դպրոցներում պետք է ուշադրություն դարձնեն ոչ միայն թերությունների վերացմանը, այլև բացահայտեն ձեռք բերված դրական արդյունքները:

Վաստակաշատ մանկավարժ Սամվել Ղուկասյանի վկայությամբ՝ Ամերիկո

Հովհաննիսյանի բազմամյա մանկավարժական փորձը տարածվել է մարզի հանրակրթական դպրոցներում:

Գիտելիքների հարուստ պաշար, մանկավարժական հստակ կեցվածք, աշխատանքային մեծ փորձ, պահանջկոտություն ուսուցչի նկատմամբ, անսահման բարություն, համեստություն և չափավորություն՝ ահա **Շահեն Մարտիրոսյանի** կերպարի բնորոշ գծերը: Սկզբնական կրթությունը ստացել է Ստեփանակերտի շրջանի Կարմիր գյուղի՝ ծննդավայրի ութամյա դպրոցում, այնուհետև Ստեփանակերտում ավարտել է միջնակարգը և ուսումը շարունակել Բաքվի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում: Ավարտելով բարձրագույնը (1947թ.), որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ , ուսմասվար, տնօրեն աշխատել է հանրակրթական դպրոցներում, իսկ որպես բարձրակարգ մասնագետ հայ գրականություն է դասավանդել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում (1969-1975թթ.)[498]:

Հայրենի փայլուն գիտակ, երախտաշատ մանկավարժը բեղմնավոր գործունեություն է ծավալել նաև ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտում (1976-1988թթ.): Այդ տարիներին եղել է ՈւԿՄԻ-ի հայոց լեզվի և գրականության կաբինետի վարիչ, ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում՝ հայոց լեզվի և գրականության խմբի մեթոդական ղեկավար: Ինչպես վկայում են նրա անձնական արխիվում պահվող փաստաթղթերը, յուրաքանչյուր ուսումնական տարում լինում էր մարզի դպրոցներում, տնօրեններից ստանում այն ուսուցիչների ցուցակը, որոնք ներգրավվելու են վերապատրաստման մեջ, նաև տեղեկություններ էր ստանում ուսուցիչների մասնագիտական որակի մասին: Դրանց վերլուծության հիման վրա նա կոմպլեկտավորում էր դասընթացները և նախատեսում այն միջոցառումները, որ պետք է իրականացվեն վերապատրաստման դասընթացների ժամանակ: Դասախոսություններում նա ձգտել է ուսուցիչների հոգում մշտապես վառ պահել սերը մայրենիի նկատմամբ, նրանց օժտել մեր ազգային մշակույթի հարուստ ժառանգությունը և ավանդույթները պահելու և հարստացնելու ոգով:

Անվանի ուսուցչապետը և դասախոսը գիտամանկավարժական, մեթոդական, լեզվագրական բազում հոդվածներ է տպագրել պարբերական մամուլում: Հեղինակ է մի շարք ուսումնամեթոդական ձեռնարկների և ուղեցույցների:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտի գործունեության տարիներին (1963-1988թթ.) վերապատրաստման դասընթացների կազմակերպմանն ակտիվ մասնակցություն են ունեցել Թամարա Ծատուրյանը (տարրական կրթության կաբինետի վարիչ), Նիկոլայ Բաղդասարյանը (հայոց լեզվի կաբինետի վարիչ), Գրիգորի Առուշանյանը (աշխարհագրության և պատմության կաբինետի վարիչ), Նիկոլայ Բաբայանը (քիմիա և կենսաբանության կաբինետի վարիչ), Արտաշես Գասպարյանը (կերպարվեստի և աշխատանքի ուսուցման կաբինետի վարիչ), Ռաֆայել Մարտիրոսյանը (օտար լեզուների կաբինետի վարիչ) և շատ ուրիշներ:

Այսպիսով, համառոտակի ներկայացնելով ՈւԿՄԻ տնօրենների, մեթոդկաբինետների վարիչների գործունեությունը, մենք ձգտեցինք նաև բացահայտել ուսուցիչների ու դպրոցների ղեկավարների վերաբերմունքը վերապատրաստման դասընթացների նկատմամբ: Անշուշտ, մեր ուսումնասիրության բնույթից ելնելով, շատ համառոտակի ներկայացրեցինք նրանց գործունեությունը, կարծում ենք, որ հետագայում ամբողջական կուսումնասիրվի ՈւԿՄԻ երեք տասնամյակի պատմությունը:

4. ԼՂԻՄ-ի վաստակաշատ մանկավարժների, ժողովրդական ուսուցիչների գործունեությունը (1923-1988թթ.)

Քննարկվող ժամանակաշրջանում, չնայած որոշ չափով արդեն խոսվել է, այնուամենայնիվ, ուշադրության արժանի է այն փաստը, թե կրթական գործի կազմակերպիչների հետ ովքեր էին Լեռնային Ղարաբաղի դպրոցի և մանկավարժության ասպարեզի ներկայացուցիչները, որոնք սկսած 20-րդ դարի 20-ական թվականներից, բեղմնավոր գործունեություն են ծավալել մարզի հանրակրթական դպրոցներում:

Ի պատիվ մեր անցյալի մտավորականության, պետք է ասել, որ նրանք կանգնած էին մեր ժողովրդին ազնվորեն ծառայելու դիրքերում և անգնահատելի ծառայություն ունեցան գիտության զարգացման բնագավառում, կրթեցին ու դաստիարակեցին մի ամբողջ սերունդ և իրենց ուսերի վրա տարան արցախահայ մտավորականության նոր կադրեր պատրաստելու դժվարին, բայց պատվաբեր գործը:

Արխիվային հարուստ նյութերի, պարբերական մամուլում տպագրված հոդվածների, ժամանակակիցների հուշերի և այլ աղբյուրների ուսումնասիրումը հնարավորություն է ընձեռել ներկայացնել անվանի մանկավարժների, ժողովրդական ուսուցիչների բազմամյա գործունեությունը: Մեր ուսումնասիրության համար հիմք են ծառայել արխիվային փաստաթղթերը, դպրոցներում դեռևս պահպանվող նրանց հուշերը, ինչպես նաև այսօր մեր շարքերում ստեղծագործական, լրագրողական գործունեություն ծավալող Միքայել Աղաջանյանի, Միքայել Բեգլարյանի, Միքայել Բալյանի, Խորեն Ղազարյանի, Խորեն Բաղդասարյանի, Շահեն Քամալյանի, Վլադիմիր Անտոնյանի և շատ-շատերի հետ ունեցած զրույցները, հուշերը և այլ աղբյուրներ:

Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության ստեղծման առաջին տարիներին ժողովրդական կրթության գործի վերականգնումն ու վերակառուցումը տեղի էին ունենում չափազանց ծանր պայմաններում: Եղած հատուկենտ դպրոցական շենքերից շատերը քայքայվել էին, դպրոցներից շատերը տեղավորված էին մասնավոր տներում և ապահովված չէին նյութական միջոցներով: Իսկ դրանցում դասավանդող ուսուցիչներից շատերը՝ հայտնվելով նյութական սուղ պայմաններում, հրաժարվում էին շարունակել մանկավարժական գործունեությունը և զբաղվում էին այլ աշխատանքով:

Ինչպես արդեն նշել ենք, 1920-1930-ական թվականներին ԼՂԻՄ կրթական նոր համակարգի ձևավորման ու զարգացման գործում մեծ ծառայություն ունեն մարզլուսբաժնի վարիչները, շրջանային կրթության բաժինների ղեկավարներն ու դպրոցական տեսուչները: Ի դեպ, նշենք, որ 1920-1930-ական թվականներին մարզի հայկական դպրոցներում բեղուն մանկավարժական գործունեություն են ծավալել Արցախի մանկավարժության նոր սերնդի ներկայացուցիչները, որոնց լավագույն ավանդույթները շարունակվել են երկրամասի կրթական համակարգի զարգացման հետագա տարիներին: Վերոնշյալ տասնամյակում մարզի դպրոցի պրակտիկայում արդեն ճանաչված մանկավարժներն էին Միքայել Մանվելյանը (1884-1931թթ.), Աբգար Տեր-Գրիգորյանը (1894-1981թթ.), Սերգեյ Անդրյանը (1896-1974թթ.), Սամվել Շինականյանը (1904-1982թթ.), Կարո Դավթյանը (1904-1985թթ.), Հարություն Եղիազարյանը (1905-1977թթ.), Մովսես Ուլունցը (1907-1991թթ.), Հովհաննես Միանսյանը (1908-2005թթ.), որոնք ակտիվ աշխատանք էին տանում առաջին, երկրորդ աստիճանի դպրոցներում ուսումնադաստիարակչա-

կան աշխատանքները կազմակերպելու ուղղությամբ:

Արխիվային հարուստ նյութերի, ժամանակակիցների հուշերի և այլ աղբյուրների ուսումնասիրումը հնարավորություն է ընձեռել համառոտակի ներկայացնել վերոնշյալ նվիրյալ մանկավարժների ուսանելի կենսագրությունն ու գիտամանկավարժական պրակտիկ գործունեությունը:

Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության առաջին տարիներին կրթական գործի նվիրյալ կազմակերպիչներից էր **Միքայել Մանվելյանը** (1884-1931): Սկզբնական կրթությունը ստացել է Հադրութի շրջանի Խանձաձոր գյուղի ծխական դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել է Շուշիի թեմական դպրոցում: Ընտանեկան պայմանների հետ կապված՝ տեղափոխվում է Երևան և ավարտում տեղի հոգևոր սեմինարիան (1904թ.): Միքայել Մանվելյանը բարձրագույն կրթությունը ստանում է Պետերբուրգի համալսարանի բնագիտական ֆակուլտետում (1908թ.), այնուհետև Դորպատի հանրահայտ համալսարանում (1911թ.): Ստանալով մասնագիտական բարձրագույն որակավորում, Միքայել Մանվելյանը վերադառնում է մայր Հայաստան, անձնվիրաբար նվիրվում մանկավարժական գործունեության: Որպես քիմիա-կենսաբանության, անատոմիայի ուսուցիչ դասավանդում է Վանաձորի (Ղարաքիլիսայի), Գյումրիի (Ալեքսանդրապոլի) դպրոցներում, միաժամանակ կատարելով շրջանի դպրոցական տեսչի պարտականությունները:

Ժամանակաշրջանի կրթական համակարգում մեծ համբավ ունեցող մանկավարժ Միքայել Մանվելյանը հայրենիքի կանչով վերադառնում է (1920թ.) Ղարաբաղ և շարունակում բեղմնավոր մանկավարժական գործունեությունը Հադրութի շրջանի դպրոցներում, որպես փոխտնօրեն, տնօրեն, շրջանային կրթության դպրոցական տեսուչ:

Հայրենասեր մանկավարժի նախաձեռնությամբ Հադրութի շրջանի գյուղերում ստեղծվեցին գյուղերիտ (գյուղական երիտասարդության համար) դպրոցներ՝ ուսուցման եռամյա տևողությամբ: Նա ակտիվ աշխատանք է տանում շրջանի գյուղերում անգրագիտության վերացման ուղղությամբ, լիկկայաններում (անգրագիության վերացման կենտրոններ) գրագիտություն էր սովորեցնում նաև մեծահասակ մարդկանց: Շրջանում «Կորչի անգրագիությունը» ընկերության հիմնադիրներից մեկն էր: Նա հատկապես մեծ ուշադրություն էր դարձնում կանանց անգրագիության վերացմանը:

Եվրոպայում բարձրագույն որակավորում ստացած մանկավարժը, որպես քիմ-կենսաբանության ուսուցիչ նաև բժշկի պարտականություններ էր կատարում գյուղերում: Ժամանակակիցները իրենց հուշերում[499] պատմում են, որ համագյուղացիները նրան դիմում էին որպես բժշկի, խորհրդատուի: Սիրով կատարում էր ոչ միայն հայրենի գյուղի, այլև շրջանի մյուս գյուղերի մարդկանց խնդրանքները: Անվանի մանկավարժը 1931թ. Հադրութում բռնկված համաճարակը հայտնաբերողներից մեկն էր և այդ ուղղությամբ բժշկական մեծ օգնություն էր ցուցաբերում բնակչությանը, և անձնվիրաբար ծառայելու ժամանակ մանկավարժ-բժիշկը դառնում է այդ համաճարակի զոհը:

Գնահատելով մանկավարժ-բժշկի հայրենանվեր և անձնազոհ ծառայությունները, 1963թ. մարզգործկոմի որոշմամբ Հադրութի միջնակարգ դպրոցը կրում է Մ.Մանվելյանի անունը:

20-րդ դարի 20-ական թվականներին մարզում կրթական գործը վերականգնելու և վերակառուցելու աշխատանքներին ակտիվ մասնակցություն ունեցավ դպրոցի ճանաչված մանկավարժ **Աբգար Տեր-Գրիգորյանը (1894-1981):** Ծնվել է

Մարտակերտի շրջանի Ծմակահող գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է Մախաչկալայի գիմնազիայում, այնուհետև ավարտել Մախաչկալայի մանկավարժական բարձրագույն դպրոցը և, որպես ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ դասավանդել տեղի հայկական առաջին աստիճանի դպրոցում: 1917թ. տեղափոխվել է Լեռնային Ղարաբաղ և աշխատանքի անցել Մարտակերտի շրջանի Վանքի երկդասյան դպրոցում, որպես ուսուցիչ, վարիչ: Ղարաբաղում խորհրդային իշխանության առաջին տարիներին, մարզլուսբաժվար Արշավիր Քամալյանի հանձնարարությամբ Ա. Գիգորյանը ակտիվորեն մասնակցում է շրջանում կրթական գործը վերակառուցելու աշխատանքներին: Նրա նախաձեռնությամբ առաջին ասիճանի նոր տիպի դպրոցներ են բացվում հայրենի գյուղում, Ծմակահողում, Գառնաքարում, Շահմասուրում, Առաջաձորում, Հայադիում: Շուրջ 60 տարի ռուսաց լեզու և գրականության է դասավանդել նշված գյուղերի դպրոցներում: 1932թ. մինչև թոշակի անցնելը, որպես վարիչ, տնօրեն, ուսմասվար աշխատել է Վանք գյուղի դպրոցում[500]:

Ա.Գրիգորյանը շրջանային ուսուցչական խորհրդակցություններում բազմիցս հանդես է եկել «Շրջանի դպրոցներում ռուսաց լեզվի դասավանդման որակի բարձրացման մի քանի հարցեր» թեմայով զեկուցումներով և առաջարկել ռուսաց լեզու և գրականություն դասավանդող ուսուցիչներին ընդգրկել ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտի վերապատրաստման դասընթացներին կամ ուղարկել Երևան՝ մասնակցելու գիտահետազոտական ինստիտուտին կից գործող վերապատրաստման դասընթացներին: Ա. Գրիգորյանի ուշագրավ ձեռնարկումներից մեկն էլ այն էր, որ Վանքի, Առաջաձորի միջնակարգ դպրոցներում պարբերաբար կազմակերպեց ռուսաց լեզվի և գրականության առարկայից բաց դասեր՝ դրանց մասնակից անելով Գառնաքարի, Հայադի, Ծմակահողի, Շահմասուրի, Չլդրանի, Կիչանի դպրոցների ռուսաց լեզվի ուսուցիչներին: Շուրջ 25 տարի եղել է Առաջաձորի ենթաշրջանի ռուսաց լեզվի առարկայական մեթոդմիավորման ղեկավար: Կրթության գործում ունեցած ակնառու հաջողությունների համար 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Ա. Տեր-Գրիգորյանը արժանացել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչման և պարգևատրվել մի շարք մեդալներով ու պատվոգրերով:

Լեռնային Ղարաբաղում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, լուսժողկոմ Արշավիր Քամալյանը անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում դպրոցներն ուսուցչական կադրերով ապահովելու համար: Այդ ուղղությամբ ակտիվ աշխատանք է տանում Շուշիի թեմական դպրոցի շրջանավարտ, լուսժողկոմի դպրոցական տեսուչ **Սերգեյ Անդրյանը (1896-1974):** Սկզբնական կրթությունը ստանալով հայրենի Դաշբուլաղ (Աստղաշեն) գյուղի միդասյա դպրոցում (1909թ.), ավարտում է Շուշիի թեմական դպրոցը (1917թ.) և մանկավարժական աշխատանքի անցնում Դահրավի միդասյան (1-4-րդ դասարաններ) դպրոցում, այնուհետև 1919-1923թթ. աշխատում է հայրենի գյուղի դպրոցում: Մարզլուսժողկոմի ստեղծման առաջին իսկ օրը Արշավիր Քամալյանի հանձնարարությամբ լծվում է հայրենասիրական և ազգանպաստ մանկավարժական և կազմակերպչական գործունեության:

Ժամանակաշրջանի դպրոցի պրակտիկայում արդեն ճանաչված փորձառու մանկավարժը, որպես կրթական գործի կազմակերպիչ՝ առաջին աստիճանի դպրոցներ է բացում Ասկերանի շրջանի (այն ժամանակ Ստեփանակերտի շրջանի) Ղշլաղ, Սարդարաշեն, Բադարա, Խանաբադ, Խնձրիստան, Խանցք և այլ գյուղերում: Շրջանի կրթության բաժնի ղեկավարների առջև խնդիր է դնում հետևողա-

կանորեն բարձրացնել ուսուցիչների կրթական մակարդակը ամենօրյա դասընթացների միջոցով, բարձր հիմքերի վրա դնել դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանքները և միաժամանակ լուսավորական աշխատանք կատարել աշխատավորների մեջ, մանավանդ գյուղերում: Այդ նպատակով, Ս.Անդրյանը շրջանի գյուղերում ստեղծում է անգրագիտության վերացման կետեր, որոնցում գրաճանաչության դասեր է տալիս մեծահասակներին:

Նախապատերազմյան շրջանում՝ 1930-1940թթ., որպես դպրոցական տեսուչ, տնօրեն միշտ աշխատել է պատասխանատվության զգացումով և նվիրվածությամբ, կիրառել մանկավարժական նոր մեթոդներ, միաժամանակ իր պրակտիկ փորձը հաղորդել սկսնակ ուսուցիչներին:

Հայրենական պատերազմի տարիներին Ս.Անդրյանը, հազարավոր ղարաբաղցիների, դպրոցներում աճեցրած ու դաստիարակած իր սաների հետ միասին անօրինակ սխրագործություններ է կատարում պատերազմի տարբեր ճակատներում և պատերազմի հաղթական ավարտից հետո, պարգևատրված մի շարք շքանշաններով ու մեդալներով, վերադառնում է հայրենի երկրամաս ու շարունակում մանկավարժական գործունեությունը:

Ս.Անդրյանի անձնական արիվային փաստաթղթերից[501] տեղեկանում ենք, որ հետպատերազմյան շրջանում (1946-1972թթ.), մինչև թոշակի անցնելը, նա ակտիվ գործունեություն է ծավալել Ասկերանի շրջանում, եղել է դպրոցական գլխավոր տեսուչ, շրջանի մեթոդմիավորման հանձնաժողովի (պատմության և աշխարհագրության) նախագահ, մարզային ժողկրթության բաժնի կոլեգիայի անդամ:

Անբասիր մանկավարժական աշխատանքի համար արժանացել է մարզժողկրթության բաժնի գովասանագրերի, 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժի պատվավոր կոչման:

Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցներում, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում բեղմնավոր գիտամանկավարժական գործունեություն է ծավալել վաստակաշատ գիտնական, անվանի լեզվաբան **Կարո Դավթյանը (1904-1985):** Անվանի մանկավարժ-գիտնականի անունը դուրս է եկել Հայաստանի Գյումրիի շրջանի դպրոցների սահմաններից և տարածվել Լեռնային Ղարաբաղում: Նկատի ունենալով, որ Կ.Դավթյանի կենսագրականը մանրամասն ներկայացված է Բ.Դավթյանի «20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժները» գրքում և այլ աղբյուրներում, այստեղ կներկայացվեն մարզի կրթական համակարգում նրա ունեցած անգնահատելի ծառայությունները:

Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմ Առաքել Առաքելյանի հրավերով 1925թ. սեպտեմբերի 15-ին Կարո Դավթյանը տեղափոխվում է Ղարաբաղ, աշխատում լուսժողկոմում, որպես դպրոցական տեսուչ: Լինելով ժողովրդայնության ոգու մարմնացում, Դավթյանը հայոց արցախական աշխարհում ևս վառ պահեց մեր ժողովրդավար լուսավորիչների ավանդույթները և անձնվիրաբար նվիրվեց լուսավորության գործին:

Ինչպես արդեն նշել ենք, խորհրդային իշխանության առաջին տարիներին մարզի առաջին և երկրորդ աստիճանի դպրոցները ապահովված չէին ուսուցչական որակյալ կադրերով: Գյուղական դպրոցները զուրկ էին ուսումնական ամենաանհրաժեշտ գրենական պիտույքներից: Դպրոցական շենքերի բացակայության պատճառով դասերը տեղի էին ունենում մասնավոր տներում, նույնիսկ խրճիթներում: Մարզային, շրջանային կրթության բաժինների ղեկավարների հետ միասին Կարո Դավթյանը հսկայական աշխատանք է տանում որոշ չափով բարե-

լավելու մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործը:

Փաստագրական նյութերից[502] տեղեկանում ենք, որ Կ.Դավթյանը անվճար դասավանդում էր ծայրամասային գյուղերի դպրոցներում: Որբանոցներում մեծացած երիտասարդ մանկավարժը պատասխանատվության զգացումով էր կատարում մարզլուսժողկոմի ղեկավարների՝ Առ.Առաքելյանի, «Սոցդասավարչության» նախագահ Գուրգեն Էդիլյանի հանձնարարությունները: Գյուղերում բացում է միաստիճան դպրոցներ, անգրագիտության վերացման կետեր (լիկկյաններ): Բացի այդ, Կ.Դավթյանը՝ որպես փորձառու ուսուցիչ, մշակում է առաջին աստիճանի դպրոցների ծրագրերը, շրջանային կրթության աշխատողներին և ուսուցիչներին հանձնարարում որոշ փոփոխություններ կատարել մանկավարժական խորհրդի որոշմամբ: ԼՂԻՄ լուսժողկոմի հանձնարարությամբ Կ.Դավթյանը, լինելով Մարտակերտի, Մարտունու, Հադրութի շրջանների դպրոցներում, ամեն առարկայի գծով ուսուցիչներին տալիս էր մասնակի ցուցումներ, որոնցով պետք է ղեկավարվեին:

Երկար տարիներ Կ.Դավթյանը գիտամանկավարժական գործունեություն է ծավալել Շուշիի մանկավարժական ուսումնարանում (ուսմասվար), երկամյա մանկավարժական ինստիտուտում (ֆակուլտետի դեկան) և Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում:

Վաստակաշատ գիտնական-մանկավարժը հեղինակ է տասնյակ գիտական աշխատությունների, մեթոդական ձեռնարկների և բազում գիտամեթոդական հոդվածների:

Ըստ արժանվույն են գնահատվել վաստակաշատ գիտնական-մանկավարժի ծառայությունները: Պարգևատրվել է մի շարք մեդալներով ու պատվոգրերով, արժանացել հանրապետության վաստակավոր մանկավարժի կոչման:

1934-1935 ուստարում Շուշիի մանկավարժական ուսումնարանում իր դասախոսական աշխատանքն է սկսում Երևանի պետական համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետի առաջին կարգի շրջանավարտ **Սամվել Շինականյանը (1904-1982):** Նախնական կրթությունը ստացել է հայրենի Նոր Բայազետ՝ Կամո քաղաքի յոթնամյա դպրոցում: Այնուհետև նրանց ընտանիքը տեղափոխվում է Թիֆլիս, որտեղ և ավարտում է միջնակարգը: Զինվորական ծառայությունն ավարտելուց հետո ուսումը շարունակում է Երևանի պետական համալսարանում և ավարտում 1928-1929 ուստարում: Որպես մաթեմատիկայի ուսուցիչ աշխատում է Երևան քաղաքի դպրոցներում:

Մեծ սեր տածելով հայոց Արցախ աշխարհի նկատմամբ, եկավ բեղմնավոր լուսավորական գործունեություն ծավալելու երկրամասի առաջին մանկավարժական ուսումնագիտական կրթօջախում (1934-1970-ական թվականներին):

Հետաքրքիր ու բովանդակալից է եղել անվանի մանկավարժի (հետագայում արժանացել է 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժի պատվավոր կոչման) գործունեությունը Շուշիի մանկավարժական ուսումնարանում: Տասնամայակներ շարունակ եղել է փոխտնօրեն, մեթոդմիավորման հանձնաժողովի նախագահ, մարզային ժողկրթության խորհրդի անդամ, ղեկավարել է նաև հանրակրթական դպրոցներում մաթեմատիկայի դասավանդման դրվածքը ստուգող հանձնաժողովը:

Անգնահատելի է Ս.Շինականյանի դերը հանրակրթական դպրոցների համար բարձրորակ ուսուցչական կադրեր պատրաստելու գործում: Մանկավարժական տեխնիկումում, բանֆակում, ուսումնարանում կրթել ու դաստիարակել է հազարավոր ուսանողների, որոնցից շատերը ավարտելուց հետո սիրելի ուսուցչի օրի-

նակով բարձրագույն կրթություն են ստացել Երևանի, Բաքվի, Մոսկվայի և այլ քաղաքների բարձրագույն ուսումնական հաստատություններում և իրենց նվիրել մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործին: Նրանցից շատերն այսօր գիտության դոկտորներ, պրոֆեսորներ են, դոցենտներ ու գիտամանկավարժական բեղմնավոր աշխատանք են կատարում նաև Արցախի պետական համալսարանում:

Վաստակաշատ մանկավարժը սկզբունքայնությամբ ու պարտաճանաչությամբ անձնական օրինակ է եղել թե՛ մանկավարժական կոլեկտիվի, թե՛ ուսանողության համար:

Մանկավարժական ուսումնարանում ծավալած 40-ամյա բեղմնավոր գործունեության ու վաստակի համար Ս.Շինականյանը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով և արժանացել ԼՂՀ վաստակավոր ուսուցչի և 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժի պատվավոր կոչումների:

Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի կրթական գործի նվիրյալ կազմակերպիչներից է **Հարություն Եղիազարյանը (1905-1977):** 1915թ. եղեռնի արհավիրքները տեսած մանուկ Հարությունը՝ միանալով հրաշքով փրկված հայության բեկորներին, ապաստան է գտնում ամերիկյան նպաստամատույց կոմիտեի որբանոցում, որտեղից էլ տեղափոխվում է Ղարսի որբանոց և սկսում աշխատել որպես թղթատար: 1921թ. Ղարսի որբանոցը տեղափոխում են Ալեքսանդրապոլ (Լենինական-Գյումրի): Նա սկզբնական գրագիտությունը ստանում է որբանոցին կից գործող տարրական դպրոցում, այնուհետև ավարտում Իջևանի երկաստիճան դպրոցը, դասավանդում տեղի տարրական դպրոցում:

Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմ Առ.Առաքելյանի հրավերով 1925թ. Հ.Եղիազարյանը գալիս է Ղարաբաղ և մանկավարժական աշխատանքի անցնում Մարտակերտի երկաստիճան (9-ամյա) դպրոցում: Հեռակա կարգով ավարտում է (1937թ.) Երևանի պետական համալսարանի երկրաբանական-աշխարհագրական ֆակուլտետը[503]:

Հայրենական պատերազմի նախօրյակին(1937-1939թթ.) Հ.Եղիազարյանը աշխատել է Մարտակերտի շրջանային կրթության բաժնում, որպես դպրոցական գլխավոր տեսուչ, կազմակերպել տարրական դասարանների ուսուցիչների մեկամյա վերապատրաստման դասընթացներ, մեթոդական օգնություն ցույց տվել հատկապես սկսնակ ուսուցիչներին: Փաստագրական նյութերի ուսումնասիրությունից տեղեկանում ենք, որ փորձառու մանկավարժի նախաձեռնությամբ աշխարհագրական կաբինետներ են ստեղծվել Մարտակերտի, Կուսապատի, Մեծ շենի, Հաթերքի դպրոցներում, բարձրացվել է աշխարհագրության դասավանդման դրվածքը: Յուրաքանչյուր ուսումնական տարում, հուլիս-օգոստոս ամիսներին, Մարտակերտի կրթության բաժնի աշխարհագրության մեթոդկաբինետում կազմակերպվել են շրջանի աշխարհագրության ուսուցիչների 10-օրյա վերապատրաստման դասընթացներ:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1943թթ.) մասնակցել է տարբեր ռազմական գործողությունների և վիրավորվել Ստալինգրադի համար մղվող մարտերից մեկում: Զորացրվելուց հետո աշխատանքի է անցել Մարտակերտի կրթության շրջանային բաժնում՝ որպես դպրոցական գլխավոր տեսուչ: Շուրջ երկու տասնամյակ (1950-1970թթ.) եղել է Մարտակերտի շրջանի Մատաղիսի, Մաղավուզի, Մոխրաթաղի, Մեծ շենի դպրոցների ուսմասվար, տնօրեն: Բեղմնավոր մանկավարժական գործունեության և անբասիր աշխատանքի համար Հ.Եղիազարյանը արժանացել է մի շարք պատվոգրերի, շքանշանների, 20-րդ

դարի Արցախի լավագույն մանկավարժի պատվավոր կոչման:

Հադրութի շրջանի կրթական գործի հմուտ կազմակերպիչներից էր Շուշիի թեմական դպրոցի սան **Մովսես Միրզոյանը (Մովսես Ուլունց), (1907-1991):** Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի Խծաբերդի միդասյան դպրոցում (1-4-րդ դասարան), այնուհետև ավարտել է Շուշիի թեմական դպրոցը (1920թ.) և մանկավարժական աշխատանքի անցել շրջանի դպրոցներում, անգրագիտության վերացման ուղղությամբ ակտիվ աշխատանք տարել շրջանում: Արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ կրթության շրջանային բաժնի աշխատողների հետ լիկկայաններ է բացում Բանազուր, Մամեդաձոր, Ծամձոր, Խծաբերդ, Ազոխ, Դրախտիկ, Տումի և այլ գյուղերում: Բացի այդ, նշված գյուղերում բացում է միդասյան դպրոցներ[504]:

Մանկավարժական գործունեության տարիներին Մ.Միրզոյանը հեռակա կարգով ավարտում է (1942թ.) Շուշիի երկամյա մանկավարժական ինստիտուտը և կամավոր մեկնում Հայրենական պատերազմի ռազմաճակատ, կռվում 18-րդ բանակում: Որպես պատերազմի երկրորդ խմբի հաշմանդամ զորացրվում է 1945թ. ապրիլին և շարունակում մանկավարժական գործունեությունը հայրենի գյուղի յոթնամյա դպրոցում որպես տնօրեն: Մ. Ուլունցը հեռակա կարգով ավարտում է նաև Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը (1949-1954թթ.): Երկար տարիներ (1963-1973թթ.) Մ.Միրզոյանը որպես տնօրեն, ուսմասվար աշխատել է հայրենի գյուղի ութնամյա դպրոցում և իր մանկավարժական վարպետությամբ, տակտով և ընդունակություններով մեծ հղինակություն վայելել մանկավարժական կոլեկտիվում՝ հարգալից վերաբերմունք դրսևորելով յուրաքանչյուր ուսուցչի նկատմամբ:

Վաստակաշատ մանկավարժի՝ 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժի ծառայությունները գնահատվել են ըստ արժանվույն: Նա պարգևատրվել է մի շարք մեդալներով, պատվոգրերով ու գովասանագրերով:

Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցներում, շրջանային կրթության բաժնում բեղմնավոր մանկավարժական գործունեություն է ծավալել բազմավաստակ մանկավարժ **Հովհաննես Մինասյանը (1908-2005):** Սկզբնական կրթությունը ստացել է Վան քաղաքի տարրական դպրոցում, սակայն եղեռնի տարիներին դպրոցը փակվում է, և նա տեղի բնակիչների հետ բռնում է գաղթի ճամփան, հասնում Հայաստան, դեգերում էջմիածնի, Դիլիջանի, Գյումրիի որբանոցներում: Մինասյանը ուսումը շարունակում է Գյումրիի մանկավարժական թեքումով դպրոցում (1920-1923թթ.):

1924թ. ԼՂ լուսժողկոմի հրավերով Հ.Մինասյանը գալիս է Ղարաբաղ, մանկավարժական աշխատանքի անցնում Մարտակերտի շրջանի Առաջաձորի միդասյան (1-4-րդ դասարան) դպրոցում: Ժամանակի նվիրյալ մանկավարժների՝ Մ.Մանվելյանի, Ա.Տեր-Գրիգորյանի, Կ.Դավթյանի, Հ.Եղիազարյանի և շատ ուրիշների նման Հ.Մինասյանը անգրագիտության վերացման կազմակերպումը համարում է նաև իր գործը և ամեն կերպ օժանդակում տեղական կազմակերպություններին: Մարտակերտի կրթության շրջանային բաժնի դպրոցական տեսուչների հետ շրջանի Մաղավուզ, Մեծ շեն, Մոխրաթաղ, Գառնաքար, Վաղուհաս, Հարգոմեր և այլ գյուղերում բացում է անգրագիտության վերացման լիկկայաններ, որտեղ գրել-կարդալ են սովորում 450-ից ավելի մեծահասակներ: Հատկապես մեծ ուշադրություն էր դարձվում շրջանում կանանց անգրագիտության վերացմանը: Իր հուշերում Հ.Մինասյանը պատմում է, որ ականավոր մանկավարժ-հոգեբան Գ.Էդիլյանի նախաձեռնությամբ շրջանի գյուղերի խրճիթ-ընթերցարաններին,

ակումբներին, դպրոցներին կից ստեղծվում են «Անգրագիտության վերացման օժանդակ ընկերության» բաժանմունքներ: Այդ ժամանակ շրջանում անգրագիտության վերացման կայանների թիվը հասնում էր շուրջ 66-ի[505]:

1930-1940-ական թվականներին Հ.Մինասյանը աշխատել է Մարտակերտի շրջժողկրթբաժնում՝ որպես դպրոցական գլխավոր տեսուչ, և այդ տարիներին նա հեռակա կարգով ավարտել Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի (այժմ՝ ՀՊՄՀ) բանասիրական ֆակուլտետը:

Պրակտիկ մանկավարժական գործունեության տարիներին Հ.Մինասյանը ակտիվ աշխատանք է տանում շրջանի դպրոցների հայոց լեզվի և գրականության ուսուցիչների վերապատրաստման դասընթացները կազմակերպելու ուղղությամբ: Նա դպրոցական տեսուչների հետ միասին շրջանի դպրոցներում դասալսումներ է ունենում երիտասարդ ուսուցիչների մոտ, բացահայտում վերավորակավորման պահանջմունքները և, համագործակցելով դպրոցների տնօրենների հետ, նրանց համար շրջանում, Ստեփանակերտում կազմակերպում մեկամյա վերապատրաստման դասընթացներ: Դպրոցների տնօրեններին խորհուրդներ է տալիս ուսուցչի մանկավարժական աշխատանքի գնահատման օբյեկտիվությունը համապատասխանեցնել նրա մասնագիտական հնարավորություններին, ինչը շատ կարևոր է ուսուցչի աշխատանքի արդյունավետության բարձրացման համար:

Հ.Մինասյանը Մեծ Հայրենականի տարիներին մասնակցել է Մոսկվայի, Ստալինգրադի և մի շարք այլ քաղաքների ազատագրման համար մղված կատաղի մարտերին, պատգևատրվել մեդալներով, շքանշաններով:

Հետպատերազմյան շրջանում Հ.Մինասյանը շարունակել է մանկավարժական գործունեությունը Առաջաձորի դպրոցում՝ մինչև կենսաթոշակի անցնելը: Կատարած մանկավարժական աշխատանքի համար Հ.Մինասյանը արժանացել է վաստակավոր ուսուցչի կոչման (1942թ.), իսկ կենսաթոշակի անցնելուց հետո պարգևատրվել ԼՂ մարզժողկրթբաժնի գովասանագրերով:

1930-ական թվականներին Լեռնային Ղարաբաղի դպրոցի պրակտիկայում արդեն ճանաչված մանկավարժներ էին Սանջան Հովհաննիսյանը (1909-1986), Սմբատ Աբրահամյանը (1911-1987), Աթանես Դադասյանը (1910-1985), Արսեն Խաչատրյանը (1911-1998), Արամ Մարտիրոսյանը (1912-1987), Մուսա Մուսայելյանը (1912-1991), Սերգեյ Յարամիշյանը (1912-1980), Պավել Անդրյանը (1912-1996) և շատ ուրիշներ, որոնք բեղմնավոր գործունեություն են ծավալել նաև Հայրենական պատերազմի և հետպատերազմյան ժամանակաշրջանում: Վերոնշյալ մանկավարժների անձնական արխիվային փաստաթղթերի, ժամանակակիցների հուշերի և այլ աղբյուրների ուսումնասիրությունները մեզ համար հիմք են ծառայել ներկայացնել նրանց կենսագրական տվյալներն ու պրակտիկ մանկավարժական գործունեությունը:

Լեռնային Ղարաբաղի կրթական գործի նշանավոր կազմակերպիչներից է բազմավաստակ մանկավարժ **Սանջան Հովհաննիսյանը:** Ծնվել է Մարտունու շրջանի Ճարտար գյուղում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի երկրորդ աստիճանի (9-ամյա) դպրոցում, այնուհետև առաջին կարգի դիպլոմով ավարտել Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի ագրոնոմիական բաժինը և աշխատանքի անցել Ճարտարի տնտեսությունում՝ որպես ագրոնոմ:

Երիտասարդ, հայրենասեր ղարաբաղցին չի բավարարվել միջնակարգ մասնագիտական կրթությամբ՝ ագրոնոմիայի մասնագիտությամբ: Համառ աշխատասիրությամբ ու ինքնակրթությամբ խորամուխ է եղել բնական գիտությունների

մեջ, ձեռք բերել հարուստ գիտելիքներ, մասնավորապես մաթեմատիկայի և ֆիզիկայի առարկաների գծով, տիրապետել սիրած մասնագիտությանը: Շրջանային կրթության բաժինը՝ հաշվի առնելով Ս.Հովհաննիսյանի մաթեմատիկայի և ֆիզիկայի առարկաների գծով մասնագիտական պատրաստվածությունը, նրան երաշխավորում է դասավանդել հայրենի գյուղի դպրոցներում, մանավանդ որ Լեռնային Ղարաբաղի դպրոցի պատմության այս շրջանում (1920-1930թթ.) ուսուցչական քիչ կադրեր կային, հին ուսուցիչների մի մասն էլ ի վիճակի չէր բավարարել ժողովրդական կրթության վերակառուցման պահանջները: Նույնիսկ երկրորդ աստիճանի դպրոցներն ավարտողներից շատերը ուսուցչական աշխատանքի էին անցնում:

Ս.Հովհաննիսյանը առաջին անգամ դասամատյանը ձեռքին դասարան է մտել 1929-1930 ուստարում՝ հայրենի գյուղի դպրոցում, դասավանդել մաթեմատիկա, ֆիզիկա և գյուղատնտեսական առարկաներ, քանի որ այն ժամանակ գյուղական աշխատանքային դպրոցներին տրվում էր նաև գյուղատնտեսական թեքում:

Երախտաշատ մանկավարժը իր հուշերում (նրա անձնական արխիվային նյութերը, հուշերը գտնվում են որդու, սույն աշխատության համահեղինակ Ա. Ավանեսյանի մոտ) պատմում է, որ սրտի թրթիռով, հուզված բացել է երկաստիճան դպրոցի 7-րդ դասարանի դուռը, հանգիստ մտել, նստել ու այնտեղ գտել իր սիրելի սաներին, գործընկերներին: Մի քանի ամիս դասավանդելուց հետո մեծ սեր ու հարգանք էր վայելում թե՛ մանկավարժական և թե՛ աշակերտական կոլեկտիվներում:

Մարտունու շրջանում բնակչության անգրագիտության վերացման կազմակերպումը (1926-1990թթ.) հանրակրթական դպրոցների մանկավարժական կոլեկտիվները համարում էին իրենց հարազատ գործը և այդ հարցում ամեն կերպ օժանդակում տեղական կազմակերպություններին: Ճարտար գյուղում անգրագիտության վերացման լիկկյայանների՝ խրճիթ-ընթերցարանների բացման գործում մեծ ներդրում ունի Ս.Հովհաննիսյանը: Շրջանում ընդհանուր կուլտուրարշավից ետ չէր մնում Ճարտարի դպրոցի մանկավարժական կոլեկտիվը: Հայրենասեր մանկավարժի նախաձեռնությամբ մի խումբ ուսուցիչներ իրենց հասանելիք աշխատավարձի մեծ մասը հատկացնում էին անգրագիտության վերացման ֆոնդին: Ճարտարի դպրոցի ուսուցիչները մեծ ուշադրություն էին դարձնում նաև կանանց անգրագիտության վերացմանը: Ինչպես իր հուշերում վկայում է Ս.Հովհաննիսյանը, 1929-1930 ուստարում անգրագիտության վերացման խմբակներում ընդգրկվածների մեջ կանայք կազմում էին 58 տոկոս: Եթե այդ ուստարում գյուղում գրագիտություն էր սովորում 160 մարդ, ապա նրանցից 100-ը կանայք էին: Վաստակաշատ մանկավարժի հուշերից նաև տեղեկանում ենք, որ Ճարտարի միջնակարգ դպրոցի ուսուցիչները կիրառում էին ուսումնադաստիարակչական աշխատանքի հետաքրքիր մեթոդներ ու ձևեր: Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում նաև արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը: Առաջին անգամ Ս.Հովհաննիսյանի նախաձեռնությամբ դպրոցում կազմակերպվում են բնագիտական առարկաների (մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության) ցուցահանդեսներ, որտեղ ցուցադրվում են աշակերտների աշխատանքների (գրավոր աշխատանքներ, ինքնաշեն գործիքներ, ալբոմներ, գծագրեր, գրաֆիկական աղյուսակներ և այլն) արդյունքները տարբեր առարկաներից: 1933-1934 ուստարում նման ցուցահանդեսներ են կազմակերպվել բոլոր առարկաներից: Դպրոցական մեծ ցուցահանդեսներ էին կազմակերպվում հատկապես ուսումնական տարվա վերջին: Գյուղի հասարակությունը մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում ցուցա-

հանդեսների նկատմամբ, մանկավարժական կոլեկտիվի ղեկավարությամբ աշակերտները կազմակերպում էին երեկույթներ, թատերական ներկայացումներ, մաթեմատիկական հետաքրքիր խաղեր և այլ միջոցառումներ:

Ս.Հովհաննիսյանը շրջանի պրակտիկայում մաթեմատիկայի և ֆիզիկայի ճանաչված ուսուցիչ էր, ուներ դասի անցկացման ուսանելի փորձ: Նրա՝ եռանդուն ուսուցանողի, դասավանդման մեթոդները ցանկալի արդյունք էին տալիս:

Մանկավարժական աշխատանքին զուգահեռ Ս.Հովհաննիսյանը ինքնակրթությամբ տիրապետում է իր մասնագիտությանը և 1934թ. հաջողությամբ ընդունելության քննություններ հանձնում Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետում: Ուսումնառության տարիներին(1934-1939թթ.) մաթեմատիկա և ֆիզիկա է դասավանդել Արմենիքենդի հայկական դպրոցներում՝ կատարելով նաև դաստիարակչական աշխատանքների գծով կազմակերպչի պարտականությունները: Առաջին կարգի դիպլոմով մանկավարժական ինստիտուտն ավարտելուց հետո վերադարձել է հայրենի գյուղ և աշխատանքի անցել որպես մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ, ուսմասվար, 1940թ. սեպտեմբերի 1-ից՝ տնօրեն: Ս.Հովհաննիսյանի հանդեպ գյուղի հասարակության, մանկավարժական և աշակերտական կոլեկտիվների մեծ հարգանքն ու վստահությունը նրան պարտավորեցնում էին քրտնաջան և ստեղծագործական մեծ աշխատանք կատարել և իրականացնել դպրոցի առջև դրված խնդիրները՝ աճող սերնդին տալ խոր ու կայուն գիտելիքներ, դաստիարակել ջերմ հայրենասիրությամբ: Երիտասարդ մանկավարժը նաև ակտիվ մասնակցություն է ունենում գյուղի հասարակական-քաղաքական աշխատանքներին:

Սկսվեց Մեծ Հայրենականը: Պատերազմի հենց առաջին օրերին Ս.Հովհաննիսյանը վերադասին հասցեագրած դիմումով (կրկնօրինակը պահպանվում է անձնական արխիվում) գրում է. «Խնդրում եմ ինձ ազատել աշխատանքից և ուղարկել ռազմաճակատ: Իմ տեղը կրակների տակ է, կռվողների առաջին շարքերում»: Նրա խնդրանքը բավարարվեց, և նա կամավոր մեկնեց ռազմաճակատ:

Մարտական առաջին մկրտությունը ստացել է Նովոռոսիյսկում մղվող պաշտպանական կատաղի մարտերում: 1942թ. հունիսին Թեոդոսիայի մատույցներում ծանր վիրավորվում է, և ապաքինվելուց հետո, որպես երկրորդ խմբի հաշմանդամ զորացրվում և վերադառնում է հայրենի գյուղ, շարունակում մանկավարժական գործունեությունը: Հայրենասիրության բարձր գաղափարը եղել է նրան առաջնորդողն ու ղեկավարողը ամենօրյա աշխատանքում: Ռազմաճակատում կոփված մարտիկ մանկավարժն անմնացորդ նվիրվել է իր ժողովրդին և այդ ոգով էլ դաստիարակել իր սաներին:

Մարդկային վսեմ հատկանիշներով, ազնիվ ու շիտակ բնավորությամբ, մասնագիտության նկատմամբ ընդգծված խիստ ու պահանջկոտ մանկավարժ Ս.Հովհաննիսյանը իր սաների՝ ապագա մասնագետների սրտում բարության, գեղեցկության և գիտության սերմեր էր ցանում, որոնք լավ պտուղներ էին տալիս: Նա, որպես մաթեմատիկայի և ֆիզիկայի լավագույն ուսուցիչ, կանաչ լույս էր վառում իր աշակերտների ճանապարհին, և այդ լույսը առաջնորդում էր դեպի ապագան, դեպի մարդկային վեհ բարձունքները:

Մարտունու շրջանի տարբեր դպրոցներում մանկավարժական բեղուն գործունեության տարիներին (1943-1970թթ. Ճարտարի, Մարտունու շրջկենտրոնի միջնակարգ դպրոցներում եղել է որպես մաթեմատիկայի, ֆիզիկայի ուսուցիչ, ուսմասվար և տնօրեն), Ս.Հովհաննիսյանը տարիների իր հարուստ փորձին մասնակից էր դարձնում երիտասարդ ուսուցիչներին, սկսնակներին՝ ղեկավարելով նաև

դպրոցի ֆիզիկայի, մաթեմատիկայի մեթոդմիավորումը, նաև այդ մասնագիտությունների գծով ուսուցիչների շրջանային մեթոդմիավորման բաժանմունքի ղեկավարն էր: Նշված դպրոցներում աշխատելու տարիներին տնօրեն Ս.Հովհաննիսյանի և հմուտ ուսուցիչների ջանքերով բարձր հիմքերի վրա էր նաև մյուս առարկաների դասավանդումը: Մանկավարժական խորհրդի նիստերում պարբերաբար քննարկվում էին դասալսումների արդյունքները, նշվում թերությունները: Փորձառու տնօրենը այն չի դիտարկում որպես պատիժ անբավարար աշխատանքի համար,այլ այնպես էր ներկայացնում, որ ուսուցիչները գիտակցեն իրենց մասնագիտական բացը և ցանկանան այն լրացնել:

Ս.Հովհաննիսյանի անձնական արխիվային փաստաթղթերի ուսումնասիրումը հիմք է տալիս մատնանշելու նաև մանկավարժական կոլեկտիվը ղեկավարելու, կադրերի աշխատանքը ճիշտ գնահատելու նրա արժանիքների մասին: Տնօրենի պաշտոնավարության առաջին օրից ձգտել է դպրոցում ստեղծել առողջ հոգեբանական մթնոլորտ, կոլեկտիվի յուրաքանչյուր անդամի նպատակաուղղել ստեղծագործական աշխատանքի, մասնագիտական պատրաստվածությունը սերտորեն զուգակցել մանկավարժական վարպետության, տակտի հետ և մանկավարժական ճիշտ մոտեցում դրսևորել աշակերտների նկատմամբ: Ուսումնական տարվա վերջին մանկավարժական խորհրդի նիստում յուրաքանչյուր ուսուցչի կատարած աշխատանքը գնահատում է ըստ արժանվույն, խթանում ուսուցիչների մեթոդամանկավարժական, մասնագիտական որակի բարձրացմանը:

Վաստակաշատ մանկավարժը շուրջ չորս տասնամյակ արգասավոր գործունեություն է ծավալել շրջանի դպրոցներում: Աշխատանքային տարիներին նորարար մանկավարժին հաջողվել է համախմբել, ղեկավարել մանկավարժական կոլեկտիվների ուժերը և դպրոցները դուրս բերել առաջավորների շարքը: Արժանահիշատակ այդ ավանդի մասին անկեղծորեն նշված է ոչ միայն ժամանակակիցների (Մ.Բեգլարյան, Լ.Հարությունյան, Վ.Անտոնյան, Շ.Քամալյան և ուրիշներ) հուշերում, այլև պարբերական մամուլում:

Հավուր պատշաճի է գնահատվել բազմավաստակ մանկավարժի աշխատանքը: Հայրենական մեծ պատերազմին ակտիվ մասնակցության, բեղուն մանկավարժական գործունեության ու ձեռք բերած նվաճումների համար Ս.Հովհաննիսյանը արժանացել է կառավարական մի շարք պարգևների, այդ թվում՝ «Արիության համար», «1941-1945թթ. Գերմանական ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի համար», «Աշխատանքային արիության համար» մեդալների և այլն: Նրա ապրած տարիները բեղմնավոր գործունեության, հայրենանվեր ու տքնաջան աշխատանքի տարիներ էին: Արցախ աշխարհի արժանավոր զավակը իր մարդկային վեհ հատկանիշներով եղել է և կլինի կենդանի օրինակ շատ սերունդների համար: Այսօր էլ նրա բազմաթիվ սաները քննություն են բռնել կյանքում, դարձել ճարտարագետներ, բժիշկներ, մանկավարժներ, գիտության անվանի գործիչներ, արտադրության հմուտ կազմակերպիչներ:

Հադրութի շրջանի կրթության բաժնում, դպրոցներում մանկավարժական բեղմնավոր գործունեություն է ծավալել քիմիայի և կենսաբանության ուսուցիչ **Սմբատ Աբրահամյանը (1911-1987):** Նախնական կրթությունը ստացել է հայրենի Տումի գյուղի առաջին աստիճանի դպրոցում, այնուհետև ավարտել է (1930թ.) Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումը և աշխատանքի անցել էդիլլուի յոթնամյա դպրոցում, որպես ուսուցիչ, ուսմասվար: Մանկավարժական գործունեությանը զուգընթաց Ս.Աբրահամյանը շրջանային կրթության բաժնի աշխատողների հետ լուսավորական աշխատանք է տարել բնակչության շրջանում անգ-

ռագիտության վերացման ուղղությամբ[506]: Հարկ է նշել այն կարևոր փաստը, որ շատ ուսուցիչների թվում Աբրահամյանը ևս անգրագիտության վերացման գործում իրեն հասանելիք աշխատավարձի մի մասը նվիրում էր շրջանում ստեղծված անգրագիտության վերացման ֆոնդին: Հայրենի գյուղի՝ Տումու, Տողի, Ազոխի դպրոցներում աշխատելու տարիներին (1932-1936թթ.), որպես ուսմասվար, տնօրեն, ճիշտ ուղղություն էր տալիս մանկավարժական կոլեկտիվներին և անհրաժեշտ պայմաններ ստեղծում ինչպես դպրոցավարության աշխատանքների արդյունավետ կազմակերպման, ընդհանուր պարտադիր տարրական կրթության իրականացման, այնպես էլ սովորողների դաստիարակության ու կրթության մակարդակի բարձրացման խնդիրները հաջողությամբ լուծելու համար:

Մասնագիտական որակը բարձրացնելու նպատակով երիտասարդ ուսուցիչը 1935թ. հեռակա կարգով հաջողությամբ հանձնում է ընդունելության քննությունները Ռյազանի մանկավարժական ինստիտուտի քիմիա-կենսաբանության ֆակուլտետում և առաջին կարգի դիպլոմով ավարտում 1939թ. և աշխատանքի անցնում Հադրութի շրջժողկրթբաժնում, որպես քիմիա-կենսաբանության առարկաների գծով գլխավոր տեսուչ (1939-1942թթ.):

Հետպատերազմյան տարիներին, շուրջ երեք տասնամյակ, եղել է Տումու, Տողի, Մեծ Թաղլարի, Հադրութի միջնակարգ դպրոցների տնօրեն: Իր մանկավարժական գործունեության մեջ Ս.Աբրահամյանը նշանակալի արդյունքների էր հասնում այն առումով, որ նրա աշխատանքի ոճի(ժողովրդավարական, համագործակցային) բարոյահոգեբանական գծերը պայմանավորված էին գիտելիքների մակարդակով և գործնական որակներով: Նրա ժամանակակիցների հուշերում նշվում է, որ մանկավարժական կոլեկտիվում աշխատելու, ուսուցիչների, աշակերտների հետ շփվելու ընթացքում Աբրահամյանը օգտագործում էր ղեկավարման տարբեր սկզբունքներ, մեթոդներ, ձևեր ու միջոցներ:

Մինչև թոշակի անցնելը, 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Ս.Աբրահամյանը իր պրակտիկ մանկավարժական ուսանելի փորձը սիրով հաղորդում էր երիտասարդ ուսուցիչներին: Նրա բազմաթիվ սաները՝ բժիշկներ, գյուղատնտեսներ, պատմաբաններ, քիմիկոսներ, կենսաբաններ և գիտության, մշակույթի, այլ ոլորտների աշխատողներ այսօր էլ նշում են նրա ներդրումը իրենց մասնագիտական կրթություն ստանալու գործում:

Մանկավարժական ասպարեզում ցուցաբերած ակնառու ծառայությունների համար Ս.Աբրահամյանը արժանացել է Ադր. ԽՍՀ ժողովրդական լուսավորության գերազանցիկի կրծքանշանի, 1965թ.՝ վաստակավոր ուսուցչի կոչման, պարգևատրվել մի շարք շքանշաններով ու մեդալներով:

Մարտունու շրջանի դպրոցական կրթական գործում մեծ ծառայություն ունի 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ **Աբանես Դադասյանը (1910-1985):** Նախնական կրթությունը ստացել է հայրենի Մուշկապատ գյուղի միդասյան դպրոցում (1922թ.), միջնակարգը՝ Բաքվի հայկական դպրոցում (1929թ.), բարձրագույնը՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմական ֆակուլտետում (1930-1935թթ.): Նրա անձնական արխիվում պահպանված փաստագրական տվյալներից տեղեկանում ենք, որ ինստիտուտն ավարտելուց հետո, որպես պատմության ուսուցիչ, աշխատել է Բաքվի հայկական (Արմենիքենդի) դպրոցում (1935-1938թթ.), այնուհետև տեղափոխվել է Լեռնային Ղարաբաղ (1938թ. սեպտեմբերին) և մանկավարժական աշխատանքի անցել Մարտունու միջնակարգ դպրոցում՝ որպես ուսմասվար, տնօրեն:

Մեծ Հայրենականի տարիներին Ա.Դադասյանը տնօրենի պաշտոնում աշխա-

տել է Հաղորտու, Թաղավարդի, Ճարտարի դպրոցներում: Նրա ղեկավարած դպրոցների մանկավարժական կոլեկիվները ակտիվ մասնակցություն ունեցան թիկունքում տարվող բազմազան աշխատանքներին (դեղաբույսերի, մետաղի ջարդոնի հավաքում, ռազմաճակատի մարտիկներին նվեր-ծանրոցների ուղարկում, ակտիվ մասնակցություն գյուղատնտեսական աշխատանքներին, կարմիր բանակայինների ընտանիքների տնամերձ հողամասերի մշակում, նրանց համար վառելիքի՝ փայտի փոխադրում, օգնություն էվակուացիայի ենթարկված ընտանիքներին և այլն): Ուսուցիչների ղեկավարությամբ աշակերտները հասարակական օգտակար աշխատանք էին կատարում կարմիրբանակայինների ընտանիքների հողամասերում, դպրոցական տնտեսության մեջ: Այդպիսի հանրօգուտ աշխատանքը դպրոցականների համար հանդիսացավ հայրենիքին ծառայելու կարևորագույն պարտականություններից մեկը:

Հետպատերազմյան շրջանում Ա.Դադասյանը շարունակում է բեղմնավոր գործունեությունը նշված դպրոցներում: Նրա դասավանդման պրակտիկ փորձը տարիներ շարունակ համակարգված բնույթ էր կրում շրջկենտրոնում: Ա.Դադասյանի նախաձեռնությամբ կազմակերպվում էին բաց դասալսումներ Ճարտարի, Թաղավարդի դպրոցներում՝ դրանց մասնակից դարձնելով հարևան գյուղերի դպրոցների սկսնակ ուսուցիչներին:

Երկարամյա մանկավարժական բեղմնավոր գործունեությունը բարձր է գնահատվել մարզժողկրթբաժնում: Նա պարգևատրվել է պատվոգրերով, գովասանագրերով և արժանացել վաստակավոր ուսուցչի կոչման:

Լեռնային Ղարաբաղի կրթական գործի նվիրյալ գործիչներից է բազմավաստակ մանկավարժ **Արսեն Խաչատրյանը (1911-1998)**: Նկատի ունենալով , որ հայրենասեր մանկավարժի կենսագրական տվյալները, նրա մասին բազում շրջանավարտների հիշողությունները ներկայացվել են Բ.Դավթյանի «20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժները» (2001թ.), Ա.Խաչատրյանի, Գ.Հարությունյանի «Շուշիի մանկավարժական ուսումնարան» (2006թ.), Ա.Խաչատրյանի «Հավերժի ճամփորդը» (2005թ.) գրքերում և պարբերական մամուլում տպագրված բազմաթիվ հոդվածներում, այստեղ կներկայացվեն նրա պրակտիկ մանկավարժական հարուստ փորձը և կոլեկտիվը ղեկավարելու աշխատանքային, ժողովրդավարական, նրբազգաց կառավարման ոճի բարոյահոգեբանական գծերը, որոնք պայմանավորված էին նրա անձնական առանձնահատկություններով, մասնագիտական բարձր մակարդակով և գործնական որակներով:

Բազմահմուտ մանկավարժի գործունեությունը սկսվում է 1930-ական թվականների վերջերին: Առաջին կարգի դիպլոմով ավարտելով Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը (1938թ.), մարզժողկրթբաժնի հրավերով վերադառնում է Ղարաբաղ և նշանակվում Շուշիի մանկավարժական ուսումնարանի տնօրեն: Այդ ժամանակից էլ Խաչատրյանի համար Շուշին դարձավ մշտական բնակավայր, հարազատ քաղաք: Իհարկե, նա չէր մոռանում նաև ծննդավայրը՝ Գորիսի շրջանի Խանածախ գյուղը, որտեղ անցել են նրա մանկությունն ու պատանեկությունը:

Ժամանակակիցների հուշերից տեղեկանում ենք, որ կրթօջախի տնօրենի պաշտոնավարության առաջին ուսումնական տարում հրավիրած մանկավարժական խորհրդի նիստում Ա.Խաչատրյանը իր «Մանկավարժական բարձրորակ կադրերի պատրաստման հիմնախնդիրները» զեկուցման մեջ իրավացիորեն մատնանշում է, որ մանկավարժի մասնագիտությունը ազնվագույն և դժվարագույն մասնագիտություն է, սուրբ ու պատվավոր: Կյանքը դրան նվիրած մարդուց

պահանջվում է մշտական ստեղծագործություն, անդուլ աշխատանք, հոգու շռայլություն և սեր իր սաների նկատմամբ, անսահման նվիրվածություն աշխատանքին: Յուրաքանչյուր մանկավարժ պետք է գիտակցական ու գիտական բնույթ տա իր աշխատանքին, լինի նախաձեռնող ու ստեղծագործող, կապված ժամանակակից մանկավարժական գիտության հետ: Ուսանողների ուսուցման, դաստիարակության պատասխանատու, բայց պատվաբեր խնդրի հաջող իրականացման գործում վճռական դեր է պատկանում մանկավարժի անձնավորությանը՝ ուսանողների համար նա պետք է լինի հեղինակավոր անձնավորություն[507]:

Ուսանելի են նաև վաստակաշատ մանկավարժի խորհուրդները ուսումնարանի սկսնակ դասախոսներին. «Լավ դասախոսությունը արթնացնում է ուսանողի միտքը, ստիպում նրան խորհել տվյալ գիտության, առարկայի վերաբերյալ, որոնել դասախոսության ժամանակ ծագած հարցերի պատասխանները: Ուստի անհրաժեշտ է բազմակողմանի նախապատրաստվել ամենօրյա դասախոսություններին: Դրան հասնելու միայն մեկ ուղի կա՝ անխոնջ ստեղծագործական աշխատանք իր վրա, սեփական գիտելիքների համակարգված խորացում ու ընդլայնում, աշխատանքի գիտակցական կազմակերպում»[508]:

Ուսումնասիրելով նրա անձնական արխիվային փաստաթղթերը, նկատում ենք, որ Շուշիի մանկավարժական ուսումնարանի տնօրեն Ա.Խաչատրյանը ձեռնամուխ եղավ բազում արգելք-խոչընդոտների հաղթահարմանը, Շուշիում հասակ առած և հարկադրաբար խորթություն ապրող հայ մտավորականների համախմբմանը, երկրամասի լուսավորության, կրթության, գիտական մտքի, մշակույթի զարգացման գործում նրանց ընդգրկելուն՝ ժամանակի առումով այնքան մեծ դեր խաղացող մանկավարժական ուսումնարանի վերակառուցման աշխատանքներին:

Մեծանուն մանկավարժը նվիրումով ու ազգային արժանապատվությամբ հնչեցրեց իր բարի խոսքը՝ կյանքի դժվարին կեռմաններում ու քառուղիներում պահպանել մանկավարժական կադրեր պատրաստող միակ դարբնոցի ազգային դիմագիծը: Հիրավի, նա կանաչ լույս վառեց ուսումնարանի հետագա զարգացման դժվարին ու հերոսական ընթացումի ճանապարհին՝ մանավանդ ինտերնացիոնալ ոլորտում պահպանել ուսումնարանի ազգային բովանդակությունը:

Ա.Խաչատրյանը ստեղծագործաբար մշակեց ուսումնարանի աշխատանքը նորովի կազմակերպելու պլան, որտեղ առաջատար խնդիր էր համարվում մանկավարժական խորհրդի նիստերում պարբերաբար լսել փորձառու ուսուցիչների դասերի վերլուծությունը, նրանցից սովորել դասավանդման մեթոդական հնարներ, իմանալ, թե նրանք ինչպես են պատրաստվում դասերին: Ուշագրավ է, որ ուսումնական տարվա վերջում հրավիրվում էր խորհրդակցություն, ընդհանրացվում էին կատարված աշխատանքների արդյունքները և հրահանգներ տրվում, որպեսզի ուսումնարանի լավագույն մանկավարժների առաջավոր փորձը դառնա ողջ կոլեկտիվի սեփականությունը: Կրթօջախում հմուտ մանկավարժի խորիմաց մտահղացումների, ստեղծագործական ու ջանադիր գործունեության շնորհիվ ավելի ու ավելի է խորանում մանկավարժական գործընթացի նորությունների ոլորտը, համառորեն որոնվում, բացահայտվում են ուսումնական գործընթացին բացասաբար անդրադարձող թերությունները: Նրա հետևողական աշխատանքի շնորհիվ է, որ բարձր հիմքի վրա դրվեցին կրթօջախի ուսումնադաստիարակչական աշխատանքները, կատարելագործվեցին ուսուցման ձևերն ու մեթոդները, բարձրացավ նաև ուսումնարանի դերն իր թողարկած մասնագետների որակի ապահովման գործում:

Այսօր էլ ուսանելի են մեծ մանկավարժի խորիմաստ մտքերը, խորհուրդներն ու պատգամները ուսուցիչներին.

- ուսուցիչն իր սաների համար ավագ ընկեր է, համախոհ, նա դեպի իրեն է տրամադրում այնպես, որ նրանք վստահում են ուսուցչի նվիրական երազանքներին ու հոգու գաղտնիքներին.

- ուսուցիչն իր սաների մեջ հետաքրքրություն է արթնացնում դեպի գիտելիքները, ամեն կերպ խրախուսում իր սաների հաջողությունը, վստահություն ներշնչում նրա ընդունակությունների նկատմամբ:

- ուսուցիչը պետք է ձգտի լրիվ բավարարել իր սաների բազմազան հետաքրքրություններն այնպես, որ նրանց համար հետաքրքիր լինի սովորելն ու ապրելը.

- անհրաժեշտ է և չափազանց կարևոր, որ երիտասարդ ուսուցիչներին թույլ չտալ, որպեսզի իրենց սիրտը թափանցի անբարյացակամության զգացումը սովորողների նկատմամբ: Հատկապես սարսափելի է չարախնդությունը, որով թունավորված սիրտը դառնում է խուլ ու համր, այն չի որսում սովորողների հոգու նուրբ շարժումները.

- ուսուցիչը պետք է գիտակցական ու գիտական բնույթ տա իր աշխատանքին, լինի նախաձեռնող ու ստեղծագործող՝ կապված մեր ժամանակների գիտության, տեխնիկայի ու արվեստի աննախընթաց վերելքի հետ, որովհետև նրա օբյեկտը զարգացման անզուսպ տենչով տոգորված մարդն է, ապագայի հասարակական, քաղաքական գործիչը, լավագույն մանկավարժը, գիտության երախտավորը:

Արսեն Խաչատրյանի բազմամյա հարուստ փորձի, մարդկային լավագույն հատկանիշների մասին իրենց հուշերում երախտագիտությամբ են արտահայտվել նրա շրջանավարտներն ու երկրպագուները:

Շուրջ 53 տարի շարունակ նրա ղեկավարած մանկավարժական կոլեկտիվներում (Շուշիի մանկավարժական ուսումնարան, գիշերօթիկ դպրոց (1960-1982թթ.), Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոց (1982-1991թթ.) նորովի մշակվել է ուսումնական հաստատության աշխատանքների պլանը, որը կոլեկտիվի գործունեության կառավարման հիմնական միջոցն է, ինչպես նաև զարգացման հեռանկարային պլանը՝ ըստ բաժինների, մանրամասն նշվել, թե հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների հիմնական մասը (ամբիոնները, մեթոդմիավորման հանձնաժողովները, կուրսղեկները և այլն) ինչ աշխատաքներ պետք է կատարի յուրաքանչյուր ուսումնական տարում: Աշխատանքային պլանում առանձնահատուկ տեղ էր տրվում ծնողական ժողովներում քննարկվող հրատապ հարցերին: Սովորողների ուսման որակի բարձրացումը յուրաքանչյուր դասախոսի, կուրսղեկի և ծնողի սուրբ ու պատվավոր գործն է: Այսօր էլ երախտաշատ մանկավարժի հարուստ փորձը ուղեցույց դրույթներ են մանկավարժական կոլեկտիվների համար:

20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Արսեն Խաչատրյանի 53 տարվա արգասավոր մանկավարժական և ազգանպաստ գործունեության վկան մեր հանրապետությունում և նրա սահմաններից դուրս աշխատող հազարավոր սաներն են, որոնք գիտության, մշակույթի գործիչներ են, վաստակավոր մանկավարժներ, պետական մարմինների պատասխանատու աշխատողներ: (Ա.Խաչատրյանի հայրենանվեր գործունեության մասին կնշվի նաև աշխատության 5-րդ գլխում):

Վաստակաշատ մանկավարժը հարազատ երկրամասի կյանքում ունեցած անուրանալի վաստակի համար պարգևատրվել է մի շարք մեդալներով, շքանշաններով ու գովասանագրերով:

Մեծ և ուսանելի կյանքի ուղի է անցել 20-րդ դարի Արցախի լավագույն ման-

կավարժ, գրականագետ, դպրոցական իմաստության ակունքը հանդիսացող, բազմակողմանի գիտելիքներով զինված և բարոյական կերպարի օրինակ մարմնավորող **Արամ Մարտիրոսյանը (1912-1987)**[509]: Սկզբնական կրթությունը ստացել է Ստեփանակերտի շրջանի (այժմ՝ Ասկերանի) Խանածախ գյուղի առաջին աստիճանի դպրոցում, այնուհետև ավարտել Ստեփանակերտի թիվ 1 երկրորդ աստիճանի 9-ամյա աշխատանքային դպրոցը (1930թ.) և ուսումը շարունակել (1928-1932թթ.) Շուշիի մանկավարժական ուսումնարանում: Ավարտելով առաջին կարգի դիպլոմով, Արամ Մարտիրոսյանը, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ , ուսմասվար աշխատել է Ոսկեվազ (Խանաբադ), Ավետարանոց (Չանախչի), Աստղաշեն (Դաշբուլաղ) գյուղերի դպրոցներում: Դպրոցական տեսուչ է եղել Մարտունու կրթության շրջանային բաժնում, ուսմասվար՝ Ստեփանակերտի օրինակելի միջնակարգ դպրոցում: Բարձրագույն կրթությունը ստացել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում (1935-1940թթ.), որն ավարտելով առաջին կարգի դիպլոմով, դասախոսական աշխատանքի է անցնում Շուշիի (հետագայում՝ Ստեփանակերտի) երկամյա մանկավարժական ինստիտուտում: Երկամյակի սկսնակ դասախոսների համար ուսանելի էր համալսանավարտ Արամ Մարտիրոսյանի բուն դասախոսական աշխատանքի փորձը: Նա իր սաներին դաստիարակում էր անձնական օրինակով՝ սկզբունքայնությամբ, պարտաճանաչությամբ, աշխատասիրությամբ, ազնվությամբ, համեստությամբ և մարդկային վսեմ այլ հատկանիշներով:

Մարզի միակ ուսումնական կրթօջախում աշխատելու (որպես ամբիոնի վարիչ, դեկան) տարիներին (1940-1953թթ.) Արամ Մարտիրոսյանը կրթել ու դաստիարակել է հարյուրավոր սաների, որոնցից շատերը այժմ գիտության նշանավոր գործիչներ են, արվեստագետներ, պատմաբաններ, բժիշկներ, Արցախի և Հայաստանի բուհերում աշխատող փորձառու դասախոսներ:

Երկամյա մանկավարժական ինստիտուտը փակվելուց հետո (1953թ.) Ա.Մարտիրոսյանը աշխատանքի է անցնում Ստեփանակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցում, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար (1972-1986թթ.):

Ժամանակակիցները իրենց հուշերում պատմում են, որ մանկավարժական խորհրդի նիստերում Ա.Մարտիրոսյանը իր ելույթներում միշտ նշում է, որ դասերի պլանավորումը պետք է ծառայի սկսնակ ուսուցիչների մանկավարժական վարպետության բարձրացմանը, նրանց գործնական օգնություն ցույց տալուն: Այդ ամենը պահանջում է ստեղծագործական մոտեցում դասերի պլանավորման նկատմամբ: Դասի պլանում սկսնակ ուսուցիչները պետք է հատկապես հաշվի առնեն աշակերտների գործողությունները դասի ընթացքում, քանի որ ուսուցիչը պլանը միայն գործողությունների հերթականությունը պահպանելու համար չի կազմում, այլ այն տրամաբանությամբ, թե ինչով և ինչպես պետք է զբաղվեն աշակերտները: Հատկապես Ա.Մարտիրոսյանը կարևոր ուշադրություն է դարձնում սկսնակ ուսուցիչների ինքնակրթության հարցին և այդ մասին նշում է, որ ստեղծագործաբար աշխատող ուսուցչի հատկություններից մեկը ինքնակրթությունն է, գիտելիքների մեծ պաշարը նա ձեռք է բերում ինքնակրթության միջոցով: Ինքնակրթության նշանակությունը մեծանում է այն ուսուցիչների համար, ովքեր կոչված են ղեկավարելու սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացը, գրքի հետ կատարվող նրանց մտավոր աշխատանքը:

Արամ Մարտիրոսյանի երկարամյա աշխատանքային գործընկեր Ս.Դավթյանը իր հուշերում գրում է. «Մարտիրոսյանը փայլուն կարողությունների տեր, բազմակողմանիորեն զարգացած, հանրագիտարանային գիտելիքների տեր անձնավո-

ություն էր: Նրա հետ աշխատած ուսուցիչները հաճույքով են հիշում նրան, առանձնապես երբ դասեր էր լսում ու քննարկում, նորություններ հաղորդում իր մանկավարժական հարուստ փորձից»[510]:

Վաստակաշատ մանկավարժ Մարտիրոսյանը մինչև իր լուսավոր կյանքի մայրամուտը, շուրջ 55 տարի, բեղմնավոր գործունեություն է ծավալել մարզի հանրակրթական դպրոցներում, ուսումնական հաստատություններում: Եվ ըստ արժանվույն են գնահատվել նրա ծառայությունները մարզժողկրթբաժնի կողմից: Պարգևատրվել է մի շարք մեդալներով, շքանշաններով (Հայրենական պատերազմին ակտիվ մասնակցելու համար): Արժանացել է հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչման:

Լեռնային Ղարաբաղի դպրոցի պրակտիկայում ճանաչված մանկավարժներից է **Պավել Անդրյանը (1912-1996)**: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի Դաշբուլաղ (Աստղաշեն) գյուղի առաջին աստիճանի դպրոցում, այնուհետև ավարտել է Ստեփանակերտի 2-րդ աստիճանի մանկավարժական թեքումով դպրոցը և որպես հայոց լեզվի ու գրականության ուսուցիչ աշխատանքի անցել հայրենի գյուղի յոթնամյա դպրոցում (1930-1934թթ.), միաժամանակ կատարելով ուսմասվարի պարտականությունները:

Իր մասնագիտությանը խորապես տիրապետող երիտասարդ ուսմասվարը դասալսումների արդյունքները վերլուծելով ուսուցչական խորհրդի նիստերում, մատնանշել է, որ սովորողների ուսուցման արդյունավետության բարձրացման առաջատար խնդիրը ուսուցչի մասնագիտական, մեթոդամանկավարժական պատրաստվածության բարձրացումն է, դասավանդվող առարկաների միջև օրգանական կապի ճշտորեն պահպանումը (միջառարկայական կապի ապահովումը), ինչպես նաև ուսման մեջ ետ մնացող աշակերտների հետ անհատական պարապմունքների արդյունավետ կազմակերպումը: Ստեփանակերտի շրջանային դպրոցական տեսչի պաշտոնում աշխատելու տարիներին (1934-1936թթ.) Անդրյանը «Ուսուցչի մասնագիտական պատրաստվածությունն ու վարպետությունը դասին» թեմայով պարբերաբար զեկուցումներ է կարդում շրջանի դպրոցների մանկավարժական խորհուրդների նիստերում և խորհուրդներ տալիս սկսնակ ուսուցիչներին պատշաճ մակարդակով պատրաստվել ամենօրյա դասերին:

Վաստակաշատ մանկավարժը երկար տարիներ (1936-1942թթ.) եղել է Ստեփանակերտի թիվ 1 և թիվ 2 միջնակարգ դպրոցների տնօրեն, շրջանային ժողովրդական կրթության բաժնի վարիչ: Այդ տարիներին հեռակա կարգով ավարտել է նաև Բաքվի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը:

Հայրենական պատերազմի տարիներին մասնակցել է ստալինգրադյան ահեղ ճակատամարտին և ծանր վիրավորվել: Ապաքինվելուց հետո նորից է վիրավորվել արյունահեղ մարտերից մեկում և զորացրվել թիկունք:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում Պ.Անդրյանը շարունակում է մանկավարժական գործունեությունը Ստեփանակերտի թիվ 1 և թիվ 2 միջնակարգ դպրոցների տնօրենի, ուսմասվարի, Ստեփանակերտի շրջանային ժողովրդական կրթության բաժնի վարիչի պաշտոններում: Փաստագրական նյութերից[511] տեղեկանում ենք, որ Անդրյանը եղել է նաև մարզժողկրթբաժնի դպրոցական տեսուչ, դասավանդել ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտում:

Բարձր է գնահատվել Պ.Անդրյանի մանկավարժական բեղմնավոր գործունեությունը, ժամանակին արժանացել է հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչման:

Ասկերանի (նախկին Ստեփանակերտի) շրջանի կրթության բնագավառի նվիր-

յալ գործիչներից էր 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ **Մուսա Մուսայելյանը (1912-1991**)[512]: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի Կարմիր գյուղի (Դոնավազ) առաջին աստիճանի դպրոցում (1924թ.), այնուհետև ուսումը շարունակել է Բաքվի հայկական թիվ 44 յոթնամյա դպրոցում և ավարտելուց հետո (1928թ.) սովորել է Ստեփանակերտում կազմակերպված մանկավարժական դասընթացներում: Որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ աշխատել է (1932-1934թթ.) Շուշիի շրջանի Մեծ շենի (Մեծ Ղարաղշլաղ) յոթնամյա դպրոցում, իսկ 1935-1936 ուստարում նշանակվել Հին շենի (Կիրովի) յոթնամյա դպրոցի տնօրեն: Ուսման որակը բարձրացնելու նպատակով նորանշանակ տնօրենը մի շարք ձեռնարկումներ է իրականացնում: Մանկավարժական խորհրդի առաջին նիստում (1936թ. սեպտեմբերի 16-ին) իր զեկուցման մեջ («Ուսումնական աշխատանքների արդյունավետ կազմակերպման ուղիները») մատնանշում է, որ դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների բնագավառում ուսուցիչները պետք է կիրառեն դասավանդման հետաքրքիր նոր մեթոդներ ու ձևեր, դպրոցում պետք է կազմակերպեն ցուցահանդեսներ՝ ցուցադրելով աշակերտների ուսման առաջադիմության ցուցանիշները, գրավոր աշխատանքները բոլոր առարկաներից, ինչպես նաև արտադասարանական աշխատանքի արդյունքները: Ուսուցչական խորհրդակցությունում (1936թ. օգոստոսի 26-28) Մուսայելյանը դպրոցական ցուցահանդեսների կազմակերպման իր փորձի մասին հանդես է գալիս զեկուցումով, քննարկվող հարցի վերաբերյալ անում մի շարք հետաքրքիր առաջարկություններ:

Մեծ Հայրենականի տարիներին կամավոր մեկնել է ռազմաճակատ և կատաղի մարտերից մեկում ծանր վիրավորվել ու զորացրվել թիկունք: Շարունակելով մանկավարժական գործունեությունը Հին շենում (որպես դպրոցի տնօրեն), եռանդուն աշխատանք է տանում երկրի պաշտպանունակության ամրապնդման ուղղությամբ «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով: Տնօրենի նախաձեռնությամբ մանկավարժական կոլեկտիվը հասանելիք աշխատավարձից 450 ռուբլի նվիրում է ԼՂԻՄ պաշտպանական ֆոնդին, իսկ դպրոցականները հավաքում են դեղաբույսեր, տարբեր տեսակի մթերքներ և նվիրում ֆոնդին: Իհարկե, մարզի դպրոցներում դա եզակի երևույթ չէր, այլ կրում էր մասսայական բնույթ:

Հետպատերազմյան շրջանում Մուսայելյանը բարձրագույն կրթություն է ստացել (1953-1959թթ.) Բաքվի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի հեռակա բաժնում: Իր գործունեության տարիներին, որպես վերոնշյալ դպրոցի տնօրեն, զգալի աշխատանք է կատարել նաև արտադրության մեջ աշխատող երիտասարդության կրթության կազմակերպման ուղղությամբ՝ նրանց համար դպրոցներում կազմակերպել երեկոյան դասընթացներ: Մուսայելյանը առանձնապես մեծ ուշադրություն դարձրեց դպրոցականների արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը: Տնօրենը, ուսումնական գործընթացը արդյունավետ կազմակերպմանը զուգընթաց, կարևորեց նաև սովորողների ուսուցումն արտադրական աշխատանքի հետ շաղկապելու հույժ կարևոր խնդրի իրականացումը: Նա մարզում առաջիններից մեկն էր, որ ստեղծեց աշակերտական արտադրական բրիգադ, որը շուրջ 15 տարի օգնեց կոլտնտեսությանը:

Բերդաձորի ենթաշրջանի Հին շենի (Կիրովի) դպրոցի փորձառու ուսուցիչ Ն.Պետրոսյանը իր հուշերում գրում է, որ դպրոցում լավ ավանդույթ էին դարձել երիտասարդ աշխատողների համատեղ կիրակնօրյակները շինարարական հրա-

պարակներում, գյուղատնտեսական զանազան աշխատանքներին աշակերտների մասնակցությունը: Տնօրենի նախաձեռնությամբ կազմակերպված հանդիպումները աշխատանքի վետերանների , ատրադրության առաջավորների հետ, լավ տպավորություն էին թողնում աշակերտների վրա, նրանք գիտակցում էին, թե ինչի համար է մարդը պատվի արժանանում[513]:

Իր բազմամյա մանկավարժական գործունեության տարիներին Մ.Մուսայելյանը շուրջ երեք տասնամյակ ղեկավարել է դպրոցը, ամեն ինչ արել ի նպաստ մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության արդյունավետ կազմակերպման: Հայրենասեր մանկավարժի վաստակը գնահատվել է ըստ արժանվույն. նա արժանացել է Ադր.ԽՍՀ լուսավորության գերազանցիկի կրծքանշանի, հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչման, մի շարք պարգևների ու գովասանագրերի:

Լեռնային Ղարաբաղի կրթական գործի զարգացման բնագավառում մեծ ծառայություն ունի վաստակաշատ մանկավարժ **Սերգեյ Յարամիշյանը (1912-1980)**: Նախնական կրթությունը ստացել է հայրենի Շոշ (Շուշիքենդ) գյուղի առաջին աստիճանի դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել Շուշիի երկրորդ աստիճանի դպրոցում և ավարտելուց հետո (1928թ.) ընդունվել Շուշիի մանկավարժական ուսումնարանը: Գերազանց գնահատականներով ավարտելով այն (1932թ.) որպես պատմության ուսուցիչ և տնօրեն աշխատել է (1932-1934թթ.) հայրենի գյուղի յոթնամյա դպրոցում: Մանկավարժական գործունեության տարիներին Սերգեյ Յարամիշյանը միշտ աշխատել է պատասխանատու պաշտոններում: Եղել է Բադարայի դպրոցի տնօրեն (1934-1937թթ.), Ստեփանակերտի շրջանային կրթության բաժնի վարիչ (1937-1939թթ.): Խորհրդային բանակի շարքերում ծառայելուց հետո (1939-1944թթ.)՝ կուսակցության մարզկոմի ռազմական, այնուհետև դպրոցական բաժնի վարիչ (1944-1946թթ.), «Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագիր (1946-1949թթ.) և այդ տարիներին ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմական ֆակուլտետի հեռակա բաժինը:

1950-1960-ական թվականներին Յարամիշյանը բեղմնավոր մանկավարժական գործունեություն է ծավալել Ստեփանակերտի թիվ 2 դպրոցում (1949-1955թթ.), որպես ուսմասվար, թիվ 1 դպրոցում (1955-ից մինչև թոշակի անցնելը)՝ որպես տնօրեն:

Իր գործին նվիրված բազմափորձ մանկավարժի, հասարակական ակտիվ գործչի մասին նրա ընկերները (Բ.Բաղրյան, Լ.Թումանյան, Բ.Դավթյան, Ս.Հարությունյան և ուրիշներ) հիացմունքով են պատմում, միաժամանակ նշելով նրա խիստ պահանջկոտ, գործունյա և հոգատար ղեկավար լինելու փաստը: Առանձնապես լուրջ ուշադրություն էր դարձնում դպրոցում ուսումնադաստիարակչական, արտադրական և արտադպրոցական աշխատանքներ որակի բարձրացմանը: «Տարիներ շարունակ նրա ղեկավարած մանակավարժական կոլեկտիվները,- նշում է Բ.Դավթյանը,-արժանացել են մարզային կրթության բաժնի գովասանագրերի: Նա ձգտում էր, որ իր ղեկավարած դպրոցի աշխատանքը գնահատվի ըստ արժանվույն»[514]:

Արխիվային հարուստ նյութերի, պարբերական մամուլում տպագրված հոդվածների, ժամանակակիցների հուշերի և այլ նյութերի ուսումնասիրությունները հնարավորություն է ընձեռել մեզ ներկայացնելու 1930-1940-ական թվականներին Լեռնային Ղարաբաղի հանրակրթության ոլորտում հայտնի վաստակաշատ մանկավարժների՝ Սուրեն Ղարախանյանի, Ջավադ Հովհաննիսյանի, Ալեքսանդր Շահնազարյանի, Արտաշես Ավագյանի, Հովհաննես Հովհաննիսյանի, Վարդան

Բալայանի, Բեհբութ Առաքելյանի, Խորեն Դանիելյանի բեղմնավոր մանկավարժական գործունեությունը: Մարզային, շրջանային կրթության բաժինների մարմիններում և հանրակրթական դպրոցներում:

Ժամանակագրական կարգով ներկայացնենք յուրաքանչյուրի կենսագրությունն ու գործունեությունը:

Ասկերանի շրջանի (նախկին Ստեփանակերտի) դպրոցներում բեղմնավոր գործունեություն է ծավալել մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ, 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ **Սուրեն Ղարախանյանը (1912-1984):** Նախնական կրթությունը ստանալով հայրենի Շոշ գյուղի առաջին աստիճանի դպրոցում, ուսումը շարունակել է Ստեփանակերտի յոթնամյա դպրոցում (1930-1933թթ.), այնուհետև ավարտել է (1936թ.) Շուշիի մանկավարժական ուսումնարանը և որպես մաթեմատիկայի ուսուցիչ աշխատանքի անցել Կարմիր գյուղի միջնակարգ դպրոցում: Մանկավարժական որոնումներ կատարող երիտասարդ ուսուցիչը լսել և ընդօրինակել է մանկավարժական ուսումնարանի իր ուսուցիչների՝ Սամվել Շինականյանի, Պավել Բաբայանի, Բենիամին Պողոսյանի և ուրիշների ուսանելի խորհուրդները և դրանք կենսագործել ու կիրառել իր պրակտիկ գործունեության ընթացքում: Հիմք ընդունելով իր սիրելի դասախոսների դասավանդման արդյունավետ մոթոդները, մանկավարժական հնարներն ու միջոցները, Ս.Ղարախանյանը որտեղ աշխատել է, բարձրացրել է մաթեմատիկայի, ֆիզիկայի դասավանդման դրվածքը:

Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտն ավարտելուց հետո հեռակա կարգով ավարտում է (1938-1943թթ.) նաև Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը և շարունակում մանկավարժական գործունեությունը Ասկերանի շրջանի Ավետարանոցի (Չանախչի) միջնակարգ դպրոցում, որպես ուսմասվար, տնօրեն: Իսկ 1945-1957թթ. եղել է Շուշիի հայկական միջնակարգ դպրոցի տնօրեն:

Վաստակաշատ մանկավարժի անձնական արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ դպրոցում բարձրացրել է բնագիտական և հումանիտար առարկաների դասավանդման դրվածքը, իհարկե, ամենօրյա դասալսումների վերլուծությունների ու թերությունների բացահայտման միջոցով: Հիմնականում ուշադրություն է դարձրել հետևյալ թերություններին.

- ամենօրյա դասերին ոչ խորությամբ պատրաստվելը,
- պլան-կոնսպեկտի բացակայությունը,
- ուսումնական ծրագրերը, ձեռնարկները, համապատասխան սկզբնաղբյուրները ժամանակին չուսումնասիրելը,
- դասի ընթացքում ուսուցչի կողմից չի ապահովվում ուղիղ և հետադարձ կապը:

Մանկավարժական խորհրդի նիստերում քննարկելով դպրոցում ուսման որակի բարձրացման կարևոր հարցը, Ս.Ղարախանյանը մատնանշում է, որ մանկավարժական համագործակցությունը պետք է բացառի ուսման նկատմամբ հարկադրանքի մեթոդը:

Շուրջ երեք տասնամյակ աշխատել է հարազատ գյուղի դպրոցում, որպես ուսմասվար, տնօրեն: Դպրոցի մանկավարժական կոլեկտիվի եռանդուն գործունեության շնորհիվ յուրաքանչյուր ուսումնական տարում աշակերտները ակտիվորեն մասնակցել են բնագիտական և հումանիտար առարկաներից անցկացվող շրջանային և մարզային, հանրապետական և միութենական օլիմպիադաներին:

Ս.Ղարախանյանի բազմամյա մանկավարժական գործունեությունը բարձր է

գնահատվել: Նա արժանացել է հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչման:

Մարտունու շրջանի կրթական գործի նվիրյալ կազմակերպիչներից էր **Հովհաննես Ջավադյանը (1914-1963):** Նախնական կրթությունը ստացել է հայրենի Գիշի գյուղի առաջին աստիճանի դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել Մարտունու երկրորդ աստիճանի յոթնամյա դպրոցում (1928-1932թթ.): Միջին մասնագիտական կրթությունը ստացել է Բաքվի մանկավարժական (հայկական) դասընթացներում (1932-1935թթ.) և որպես մաթեմատիկայի ուսուցիչ աշխատանքի անցել (1936թ.) Հաղորտու յոթնամյա դպրոցում, ուսուցիչ չլինելու պատճառով դասավանդում էր նաև պատմություն և աշխարհագրություն առարկաները: Հետագայում Հովհաննես Ջավադյանը փոխում է մասնագիտական ուղղվածությունը, հեռակա կարգով ավարտելով (1940թ.) Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմական ֆակուլտետը:

Փաստագրական նյութերից և ժամանակակիցների հուշերից[516] տեղեկանում ենք, որ երբ Հովհաննես Ջավադյանին նշանակում են հարազատ գյուղի դպրոցի տնօրեն, նա առաջին անգամ ստեղծագործաբար մշակում է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքները նորովի կազմակերպելու պլանը, որը հիմք դարձավ մանկավարժական կոլեկտիվի աշխատանքները արդյունավետ պլանավորելու և հաջողությունների հասնելու համար: Տնօրենի աշխատանքային պլանում կանխատեսվում են կոլեկտիվի ապագա գործունեության արդյունքները, որոշվում էր, թե դպրոցի յուրաքանչյուր օղակ (դասվարները, առարկայական մեթոդմիավորումները, դասղեկները, առարկայական հանձնաժողովները և այլն) ինչ գործունեություն, ինչ հերթականությամբ, ինչ ժամանակահատվածում և ինչպես պետք է կատարի իր պարտականությունները:

Տնօրենի պաշտոնավարության երկամյա գործունեության տարիներին վաստակաշատ մանկավարժը իր ստեղծագործական ու եռանդուն աշխատանքի շնորհիվ պլանվորում ու կազմակերպում էր փորձնական բաց դասեր Գիշու, Ճարտարի, Սոսի, Խնուշինակի դպրոցներում՝ մասնակից դարձնելով նաև շրջանային կրթության բաժնի դպրոցական տեսուչներին: Նրա այս ուշագրավ նախաձեռնությունը ուսանելի օրինակ է դառնում շրջանի դպրոցների տնօրենների համար: Հմուտ մանկավարժի՝ կոլեկտիվը ղեկավարելու մանկավարժական առաջավոր փորձը բազմիցս քննարկվել է շրջանային օգոստոսյան ուսուցչական խորհրդակցություններում, ըստ արժանվույն գնահատվել, որպես մանկավարժական գործընթացի նորությունների ուսանելի օրինակ:

Բազմավաստակ պատմաբան, գրող-հրապարակախոս Բագրատ Ուլուբաբյանը Հովհաննես Ջավադյանի՝ իր ուսուցչի մասին «Կանթեղ» խորագիրը կրող գրքում մատնանշում է. «Այդ նրանից է, որ առաջինը լսեցի, թե ուսուցիչը կանթեղի նման պիտի վառվի, որ լույս տա մարդկանց: Եվ տեսա նրա կանթեղի լույսը, որ անսպառ էր կարծես և անհատնում... Ես նույնիսկ չկարողացա պարզել, թե որ առարկայի մեջ է առավել մասնագիտացված, քանի որ գրականության դասատուի մոտ գրականագետ էր, բանգետի մոտ՝ բնախույզ, մաթեմատիկայի ամենակնճռոտ խնդիրները նրա օգնությամբ էին լուծվում, բացվում... մինչդեռ դասին աշակերտներին ուղեկցում էր դեպի պատմության խորքերը»[517]:

Երկարամյա մանկավարժական արգասավոր աշխատանքի համար Հովհաննես Ջավադյանը պարգևատրվել է «Աշխատանքային գերազանցության համար», «1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմի տարիներին թիկունքում բարեխիղճ աշխատանքի համար» մեդալներով ու մի շարք պարգևներով:

Ասկերանի շրջանի դպրոցի պրակտիկայում ճանաչված մաթեմատիկայի ուսուցիչ և ուսմասվար է եղել 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ **Ալեքսանդր Շահնազարյանը (1915-1989):** Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի Ավետարանոցի յոթնամյա դպրոցում (1923-1930թթ.), այնուհետև ավարտել է Շուշիի մանկավարժական ուսումնարանը (1930-1933թթ.) և աշխատանքի անցել հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում, որպես մաթեմատիկայի ուսուցիչ: Մանկավարժական գործունեության տարիներին հեռակա կարգով ավարտում է Բաքվի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկական ֆակուլտետը (1940թ.) և նույն թվականի սեպտեմբերի 1-ին նշանակվում Ավետարանոցի միջնակարգ դպրոցի մաթեմատիայի ուսուցիչ և ուսմասվար:

Մեծ Հայրենականի տարիներին, մինչև զորակոչվելը ռազմաճակատ, Ա.Շահնազարյանի ղեկավարած մանակավարժական կոլեկտիվը թիկունքում պատվով կատարեց իր պարտականությունները մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության, ինչպես նաև բնակչության շրջանում ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքները, բանակայինների ընտանքներին օգնելու, երեխաների ուսուցումը կազմակերպելու ուղղությամբ:

1942թ. մարտի 8-ին Ա.Շահնազարյանը զորակոչվում է Կարմիր բանակ, ակտիվորեն մասնակցում Ստալինգրադի, Ուկրաինայի, Բելոռուսիայի քաղաքների ազատագրման համար մղվող մարտերին և արժանանում մի շարք շքանշանների:

Պատերազմի հաղթական ավարտից հետո վերադառնում է հայրենի երկրամաս, շարունակում մանկավարժական գործունեությունը Ավետարանոցի միջնակարգ դպրոցում: 22 տարի (1947-1965թթ.) Ա.Շահնազարյանը աշխատել է տնօրենի պաշտոնում և իր մանկավարժական վարպետությամբ, տակտով ու լավատեսությամբ մեծ հեղինակություն վայելել ինչպես մանկավարժական, աշակերտական կոլեկտիվներում, այնպես էլ հասարակության մեջ, շրջանային կրթության բաժնում:

Փաստագրական նյութերից[518] և այլ աղբյուրներից տեղեկանում ենք, որ շրջանային ուսուցչական օգոստոսյան խորհրդակցություններում Շահնազարյանը մշտապես հանդես էր գալիս «Մաթեմատիկայի դասավանդման դրվածքը մեր դպրոցում», «Սկսնակ ուսուցիչների հետ տարվող աշխատանքի փորձը», «Տնօրենի շաբաթական, կիսամյակային և ուսումնական տարվա աշխատանքային պլանը և նրա իրականացման ուղիները», «Ինչպես եմ նախապատրաստվում նոր ուսումնական տարվան» խորագրերով զեկուցումներով, որոնց շուրջ քննարկումներ էին լինում և գնահատվում էր նրա մանկավարժական ուսանելի փորձը: Մաթեմատիկայի դասավանդման որակի բարձրացման վերաբերյալ նրա գիտական հոդվածները տպագրվել են «Մաթեմատիկան դպրոցում» մեթոդական ամսագրում: Ավետարանոցի դպրոցի արխիվային փաստաթղթերում պահպանվում են նրա բեղմնավոր գործունեությանը վերաբերող փաստաթղթեր (մանկավարժական խորհրդի նիստերում քննարկված հարցեր, ուսումնական տարվա աշխատանքային պլան, մանկավարժական ընթերցումների պլան, ուսուցիչների վերապատրաստման եռանյա պլան և այլ նյութեր):

Երկարամյա մանկավարժական գործունեության տարիներին մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում ունեցած ծառայությունների համար Ա.Շահնազարյանը արժանացել է լուսավորության գերազանցիկի կրծքանշանի և ավագ ուսուցչի կոչման:

Բազմավաստակ մանկավարժ **Արտաշես Ավագյանը (1915-2001)** ծնվել է Հադրութի շրջանի Տումի գյուղում: Ավարտելով յոթնամյա դպրոցը (1930թ.), երեք տա-

րի կոլտնտեսությունում աշխատելուց հետո ուսումը շարունակում է (1933-1936թթ.) Հադրութի մանկավարժական ուսումնարանում և այն գերազանց գնահատականներով ավարտելուց հետո նշանակվում շրջանի Ծակուռի գյուղի առաջին աստիճանի դպրոցի ուսուցիչ և վարիչ: Ընտանեկան պայմանների հետ կապված՝ 1937թ. սեպտեմբերին տեղափոխվում է Ստեփանակերտ և աշխատանքի անցնում 7-ամյա դպրոցում, դասավանդում հայոց լոզու և գրականություն: Բարձրագույն կրթությունը ստանում է Բաքվի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի հեռակա բաժնում (1937-1939թթ.): Ավարտական կուրսից՝ 1939թ. նոյեմբերին զորակոչվում է Կարմիր բանակ:

Հայրենական պատերազմի նախօրյակին Ա.Ավագյանը ռազմական ծառայությունը սկսում է Բելոռուսիայում և պատերազմի առաջին իսկ օրվանից մասնակցում կատաղի մարտերին, Դնեստրի ափին՝ հուլիսի 17-ին ծանր վիրավորվում է և ապաքինվելուց հետո, որպես հաշմանդամ զորացրվում թիկունք՝ հայրենի երկրամաս:

Հայրենասեր մանկավարժը վերստին շարունակում է մանկավարժական գործունեությունը շրջանի Տումու միջնակարգ (1941-1944թթ.), Թաղուտի 7-ամյա (1944-1950թթ.) դպրոցներում որպես ուսմասվար, տնօրեն[519]: Ա.Ավագյանը շուրջ երկու տասնամյակ (1950-1972թթ.) տնօրենի պաշտոնում աշխատել է Հադրութի շրջանի Աղջաքենդ, Ջրակուս, Մամեդաձոր, Աղբուլաղ, Մոխրենես գյուղերի դպրոցներում:

Ժամանակակիցների հուշերից տեղեկանում ենք, որ վերոնշյալ դպրոցներում աշխատելու տարիներին Ա.Ավագյանը ուշադրություն էր դարձնում դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի բարձրացմանը: Վաստակաշատ մանկավարժ Խ.Ղազարյանը իր հուշերում նշում է, որ դպրոցում բաց և փոխադարձ դասերի վերլուծումն ու գնահատումը կատարվում էին նաև մանկավարժական խորհրդի նիստերում, դրականի հետ նշվում էին նաև թերությունները: Իսկ դասալսումների արդյունքների վերլուծությունը նպաստում էր ուսուցիչների մասնագիտական վարպետության բարձրացմանը: Յուրաքանչյուր ուսումնական տարում տնօրենը՝ Ա.Ավագյանը, կազմում էր ուսուցչական կադրերի ուսուցման պլան՝ նրանց զարգացման միասնական ծրագրերի շրջանակներում հաշվի առնելով յուրաքանչյուր ուսուցչի մասնագիտական մակարդակի փոփոխությունը:

Ա.Ավագյանի երկարամյա մանկավարժական գործունեությունը բարձր է գնահատվել շրջանային և մարզային կրթության բաժինների կողմից: Նա պարգևատրվել է գովասանագրերով ու պատվոգրերով: Նրա կուրծքը զարդարել են Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանն ու բազմաթիվ մարտական ու հոբելյանական մեդալներ:

Հադրութի շրջանի դպրոցներում բեղուն մանկավարժական գործունեություն է ծավալել հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար, տնօրեն **Հովհաննես Հովհաննիսյանը (1916-1998):** Սկզբնական կրթությունը ստացել է շրջանի Կարմրակուճ գյուղի առաջին աստիճանի դպրոցում (1928թ.), այնուհետև ավարտել է Հադրութի միջնակարգ դպրոցը (1934թ.) և ուսումը շարունակել Հադրութի մանկավարժական տեխնիկումում: Ավարտելով (1937թ.) գերազանց գնահատականներով, նշանակվում է Կարմրակուճ գյուղի 7-ամյա դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար: Մանկավարժական գործունեության տարիներին հեռակա կարգով սովորել է Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում (1938-1941թթ.), սակայն ավարտական կուրսից կամավոր մեկնել է ռազմաճակատ, քանի որ այնտեղ էր

ավագ եղբայրը, որը նույնպես ուսուցիչ էր:

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո, Լեռնային Ղարաբաղի հարյուրավոր ուսուցիչների հետ փառքով վերադառնում է հայրենի երկրամաս, և նոր ուժով ու եռանդով նվիրվում մանկավարժական աշխատանքի: 1946-1950թթ. որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, տնօրեն աշխատել է ծննդավայրի 7-ամյա դպրոցում, միաժամանակ ավարտել (1949թ.) Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը՝ հայոց լեզվի և գրականություն մասնագիտությամբ: Որպես տնօրեն աշխատել է (1950-1954թթ.) Հադրութի շրջկենտրոնի միջնակարգ դպրոցում, իսկ 1955թ. մինչև կյանքի մայրամուտը՝ Կարմրակուճի 8-ամյա դպրոցում:

Երկարամյա մանկավարժական գործունեության տարիներին իր գիտակցական ողջ կյանքը նվիրել է մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործին: Նրա ղեկավարած դպրոցներում պահպանվող փաստաթղթերից տեղեկանում ենք, որ բաց և փոխադարձ դասալսումների միջոցով բարձրացրել է սովորողների կրթության որակը, ապահովել յուրաքանչյուր առարկայի դասավանդման գիտական բարձր մակարդակը, կատարելագործել դասավանդման մեթոդները, վերացրել սովորողների գերծանրաբեռնվածությունը, ուսումնական նյութի չափից ավելի բարդությունը: Արմատապես բարելավել է դպրոցում աշակերտների աշխատանքային դաստիարակության, ուսուցման և մասնագիտական կողմնորոշման դրվածքը:

Վաստակաշատ մանկավարժը առանձնապես մեծ ուշադրություն է դարձրել դպրոցի ուսուցիչների մեթոդամանկավարժական պատրաստվածությանը: Ըստ կիսամյակների ստեղծագործաբար մշակել է ուսուցիչների մանկավարժական ընթերցումների պլանը՝ նպատակաուղղված տվյալ առարկայի դասավանդման որակի բարձրացմանը: Որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, տնօրեն, Հ. Հավիաննիսյանը միշտ էլ անձնական օրինակով, սկզբունքայնությամբ, մարդասիրությամբ և ազնվությամբ ուսանելի է եղել կոլեկտիվի համար:

Հադրութի շրջանի հանրակրթական դպրոցներում ունեցած ծառայությունների համար Հ. Հովհաննիսյանը արժանացել է ԼՂ Հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչման[520]:

Մարտունու շրջանի կրթական գործի նշանավոր կազմակերպիչներից է 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ, արձակագիր, Հայաստանի գրողների միության անդամ **Վարդան Բալայանը (1918-1966)**: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի՝ Աշանի առաջին աստիճանի դպրոցում, այնուհետև ավարտել շրջանի Բերդաշենի յոթնամյա դպրոցը և ուսումը շարունակել (1934-1936թթ.) Շուշիի մանկավարժական ուսումնարանում: Ավարտելուց հետո որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ աշխատել է Բերդաշենի միջնակարգ դպրոցում (1936-1938թթ.), իսկ 1938-1942թթ., որպես տնօրեն՝ Աշանի միջնակարգ դպրոցում[521]:

Հայրենիքի համար ճակատագրական պահին հայրենասեր մանկավարժը կամավոր մեկնում է ռազմաճակատ: Կովկասի պաշտպանական կատաղի մարտերից մեկում, Նալչիկի մոտ, 1943թ. հոկտեմբերին ծանր վիրավորվում է և որպես երկրորդ խմբի հաշմանդամ զորացրվում թիկունք:

Պատերազմական պայմանները որոշակի դժվարություններ առաջացրին նաև Մարտունու շրջանի դպրոցներում: Դպրոցական գույք ձեռք բերելը մեծ դժվարությունների հետ էր կապված: Որակյալ ուսուցչական կադրերը գտնվում էին ռազմաճակատում: Վարդան Բալայանը 1943-1944 ուստարում նշանակվելով Մար-

տունու շրջանի կրթության բաժնի տեսուչ, բաժնի աշխատողների հետ միասին լուրջ աշխատանք տարավ պատերազմի պայմաններում պարտադիր ուսուցման օրենքի կենսագործման ուղղությամբ: Բանակում գտնվողների կամ պատերազմում զոհվածների երեխաներին ընդգրկում էին դպրոց, անվճար տրամադրում գրենական պիտույքներ, ապահովում հագուստով: Ուսումը կիսատ թողած 8-10-րդ դասարանների երեխաներին ընդգրկում էին գիշերօթիկ դպրոցում: Առանձնապես բարձր հիմքի վրա դրվեց ռազմահայրենասիրական դաստիարակությունը:

Վաստակաշատ մանկավարժը, որպես տնօրեն, հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, 1945-1950թթ. աշխատել է Բերդաշենի միջնակարգ դպրոցում և այդ տարիներին հեռակա կարգով ավարտել Բաքվի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: Իսկ 1950-1964թթ. եղել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն: Երկու տարի ղեկավարել է կոլտնտեսությունը (1964-1966թթ.) և նորից անցել մանկավարժական աշխատանքի որպես դպրոցի տնօրեն:

Վարդան Բալայանը իր պրակտիկ մանկավարժական գործունեության տարիներին շատ բան արեց դպրոցում ուսման որակի բարձրացման ուղղությամբ և, որպես ճանաչված մանկավարժ, փորձառու տնօրեն, նրա անունը դուրս է եկել շրջանի սահմաններից, տարածվել ամբողջ մարզում: Նա դպրոցում ստեղծել է հոգեբանական առողջ մթնոլորտ, նպատակ ունենալով, որ դպրոցի յուրաքանչյուր ուսուցիչ ազատ լինի, հանգիստ վիճակում զբաղվի ստեղծագործական ակտիվ աշխատանքով, սիրով նվիրվի մանկավարժական գործունեությանը: Ժամանակակիցները իրենց հուշերում պատմում են, որ Բալայանի տնօրինության ժամանակաշրջանում ուսուցչի գործունեությունը ընթանում էր մանկավարժական և աշակերտական կոլեկտիվների հետ սերտ համագործակցության մեջ: Նա ձգտում էր, որ մանկավարժական կոլեկտիվում համատեղ գործունեության ընթացքում ձևավորվի միջանձնային հարաբերությունների որոշակի համակարգ՝ համակրանք, բարեկամություն և այլն: Նրա ղեկավարած դպրոցների արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ ղեկավարչական բարձր կուլտուրա ունեցող տնօրենին հատուկ էր գործարար ոճը(այլ ոչ թե ավտորիտարը): Այսինքն, Վ.Բալայանը, որպես հմուտ ղեկավար, տիրապետում էր իր ենթակաների վարքի և գործունեության վրա ազդող բազմազան մեթոդների և կարողանում կառավարման գործընթացի յուրաքանչյուր պահի օգտագործել համապատասխան մեթոդ:

Վ. Բալայանը զբաղվել է նաև գրական-ստեղծագործական աշխատանքով: Դպրոցի կառավարմանը, տնօրենի կողմից դասալսումների կազմակերպմանը, ուսուցիչների մանկավարժական ընթերցումների, ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման և այլ հարցերին նվիրված մի շարք հոդվածներ են տպագրվել շրջանային, մարզային, ինչպես նաև Հայաստանի մանկավարժական («Սովետական դպրոց», «Մանկավարժ», «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում») մամուլում:

Վ. Բալայանի բեղմնավոր մանկավարժական գործունեությունը բարձր է գնահատվել շրջանային, մարզային կրթության բաժինների կողմից: Նա արժանացել է մի շարք գովասանագրերի, պատվոգրերի, Հայրենական պատերազմի և հոբելյանական մեդալների:

Մարտակերտի շրջանի կրթության գործի նվրյալ գործիչների շարքում ուրույն տեղ ունի Բեհբուդ Առաքելյանը (1918-1988): Ավարտելով Մարտակերտի շրջկենտրոնի 9-ամյա աշխատանքային միասնական դպրոցը (1926-1934թթ.) ուսումը շարունակել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտե-

տում և առաջին կարգի դիպլոմով ավարտել 1938թ.: Նշանակվել է Մարտակերտի միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ու ֆիզկայի ուսուցիչ, ուսմասվար: Այնուհետև 1943-1946թթ. աշխատել է Կուսապատի դպրոցում, որպես ուսմասվար, իսկ 1946-1969թթ. եղել է Մարտակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցի ուսմասվար, 1969-1978թթ.՝ տնօրեն[522]:

Այժմ բնութագրենք նրա բազմամյա մանկավարժական գործունեության տարիներին կատարված աշխատանքները: Կուսապատի, Մարտակերտի միջնակարգ դպրոցներում պահպանված փաստաթղթերից տեղեկանում ենք, որ Բ.Առաքելյանի նախաձեռնությամբ առաջին անգամ նշված դպրոցներում ստեղծվել են մաթեմատիկայի և ֆիզկայի առարկայական մեթոդմիավորումներ, որը ուսանելի օրինակ դարձավ մյուս մասնագետ ուսուցիչների համար: Իսկ տնօրենի պաշտոնում աշխատելու տարիներին կազմել է փնջային (միջդպրոցական) մեթոդմիավորումների աշխատանքային օրինակելի պլան, որի համաձայն դպրոցում մեթոդմիավորման աշխատանքները կազմակերպում և ղեկավարում է մեթոդմիավորման ղեկավարը: Աշխատանքային պլանի համաձայն՝ մեթոդմիավորման նիստերը գումարվում են ամիսը առնվազն մեկ անգամ, հանգամանորեն քննարկվում դասալսումների արդյունքները: Մեթոդմիավորման համատեղ աշխատանքները նպաստում են ուսուցիչների մեթոդական, մանկավարժական և մասնագիտական վարպետության բարձրացմանը: Վաստակաշատ մանկավարժի ուշագրավ ձեռնարկումներից մեկն էլ սկսնակ ուսուցիչների հետ տարվող աշխատանքն էր՝ նպատակաուղղված առարկայական պատրաստվածության և մանկավարժական վարպետության կատարելագործմանը:

Մարտակերտի միջնակարգ դպրոցում պահպանված փաստաթղթերից տեղեկանում ենք, որ Բ.Առաքելյանը ուսուցիչների ինքնակրթության թեմատիկան կազմելիս առանձնապես մեծ ուշադրություն է դարձրել ուսուցչի մանկավարժական ստեղծագործության, անձնական օրինակի, աշակերտի նկատմամբ ճիշտ մոտեցման, ուսուցչի հեղինակության հարցերին:

Փորձառու մանկավարժի բազմամյա բեղմնավոր գործունեությունը բարձր է գնահատվել մարզային կրթության բաժնի կողմից: Նա արժանացել է հանրապետության վաստակավոր ուսուցչի բարձր կոչման:

Վաստկաշատ մանկավարժ **Խորեն Դանիելյանը (1918-1989)** մեծ ծառայություն ունի Մարտակերտի շրջանի կրթական գործի զարգացման բնագավառում: Նախնական կրթությունը ստացել է Մեծ շեն գյուղի առաջին աստիճանի դպրոցում (1930թ.), այնուհետև ավարտել է Կուսապատի երկաստիճան դպրոցի 5-րդ դասարանը (1932թ.) և ուսումը շարունակել շրջկենտրոնի միջնակարգ դպրոցում: 1935-1936 ուստարում ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը (1939թ.) և աշխատանքի անցել Ստեփանակերտի շրջանի Բադարայի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1940թ. մայիսին զորակոչվում է Կարմիր բանակ, ծառայում Թբիլիսիում՝ 11-րդ տանկային գնդում: Հաջողությամբ ավարտում է կրտսեր հրամանատարների դպրոցը և նշանակվում վաշտի հրամանատար: Մեծ Հայրենականի տարիներին մասնակցել է Ղրիմի, Սևաստոպոլի և մի շարք այլ քաղաքների համար մղվող մարտերին:

Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո «Արիության համար» մեդալով ու շքանշաններով պարգևատրված վերադառնում է հայրենի կրթջախ, շարունակում մանկավարժական գործունեությունը Մեծ շենի դպրոցում (1946-1952թթ.), այնուհետև՝ Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումում, իսկ

1960-1980թթ.՝ Ստեփանակերտի թիվ 1 և 5 դպրոցներում, որպես մաթեմատիկայի ուսուցիչ, ուսմասվար:

Շուրջ չորս տասնյակ տարիներ աշխատելով մատաղ սերնդի հետ և նրանց համար, հոգով, սրտով, ամբողջ էությամբ ձգտել է նրանց մեջ սեր արթնացնել մաթեմատիկայի, գիտության, հայրենիքի, աշխատանքի նկատմամբ և մեծ հեղինակություն ուներ մանկավարժական և աշակերտական կոլեկտիվներում: Նա սկսնակ ուսուցիչների խորհրդատուն էր, դասալսումների արդյունքները քննարկելիս չէր շեշտում մասնագիտական գիտելիքների ցածր մակարդակը, այլ խորհուրդ էր տալիս աստիճանաբար ինքնակրթությամբ բարձրացնել դասավանդման որակը: Փորձառու մանկավարժն այն համոզմունքն ուներ, որ սկսնակ ուսուցիչներն անպայման պետք է ընդգրկվեն ուսուցիչների կատարելագործման ինստիտուտում կազմակերպված որակավորման դասընթացներին: Խորեն Դանիելյանի անձնական արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ Մարտակերտի շրջանի կրթության բաժնի դպրոցական տեսուչների հետ միասին կազմել է շրջանի մաթեմատիկայի և ֆիզիկայի ուուցիչների ինքնակրթության եռամյա պլանը:

Խորեն Դանիելյանը՝ որպես մաթեմատիկայի ճանաչված ուսուցիչ, եղել է մաթեմատիկայի ուսուցիչների մեթոդմիավորման մարզային հանձնաժողովի ղեկավար: Նա էր պլանավորում միջփնջային (միջդպրոցական) բաց և փոխադարձ դասալսումները, արդյունքները քննարկում մանկավարժական խորհրդի նիստերում, օգոստոսյան ուսուցչական խորհրդակցություններում և լավագույն ուսուցիչների փորձը տարածում մարզի դպրոցների մանկավարժական կոլեկտիվներում:

Մարզային կրթության բաժնի կողմից գնահատվել են Խորեն Դանիելյանի հայրենանվեր ծառայությունները, նա արժանացել մի շարք գովասանագրերի ու պատվոգրերի[523]:

Արխիվային փաստաթղթերի, ժամանակակիցների հուշերի և այլ աղբյուրների ուսումնասիրության հիման վրա ժամանակագրական կարգով ներկայացնենք 1935-1940-ական թվականներին Լեռնային Ղարաբաղի դպրոցի պրակտիկայում ճանաչված մանկավարժների նոր սերնդի՝ Սամսոն Բաղունցի, Գաբրիել Գաբրիելյանի, Խաչիկ Հարությունյանի, Աբրահամ Հայրապետյանի, Երվանդ Ղահրամանյանի, Ներսես Աբրահամյանի, Արմենակ Բաղդասարյանի, Մովսես Ավետիսյանի բեղմնավոր գործունեությունը նշված ժամանակահատվածում և հետպատերազմյան տարիներին:

Վաստկաշատ մանկավարժ, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանակիր **Սամսոն Բաղունցը (1919-2001)** Մարտակերտի շրջանի կրթության զարգացման գործում որոշակի երախտիք ունի: Ավարտելով շրջկենտրոնի 7-ամյա դպրոցը, ուսումը շարունակում է Շուշիի մանկավարժական ուսումնարանում (1930-1933թթ.) և ավարտելուց հետո, որպես տարրական դասարանների դասվար և դպրոցի վարիչ, աշխատում շրջանի Հասանղայայի առաջին աստիճանի դպրոցում (1933-1934թթ.): Այնուհետև նշանակվում է (1934թ.) Հոռաթաղի առաջին աստիճանի դպրոցի վարիչ, իսկ 1935-1941թթ. աշխատել է Մարտակերտի միջնակարգ դպրոցում, մինչև 1971թ. թոշակի անցնելը:

Իր պրակտիկ մանկավարժական գործունեության տարիներին (1933-1941թթ.) ակտիվ մասնակցություն է ունեցել շրջանի մեծահասակ բնակչության անգրագիտության վերացման գործին:

Փաստագրական նյութերից և ժամանակակիցների հուշերից տեղեկանում

ենք, որ Ս.Բաղունցը՝ համատեղության կարգով ստանձնելով շրջանի կրթության բաժնի մեթոդմիավորման կաբինետի տարրական դասարանների դպրոցական տեսչի պարտականությունները, մի շարք ձեռնարկումներ իրականացրեց: Առաջին անգամ շրջժողկրթբաժնում ստեղծեց տարրական դպրոցի ուսումնամեթոդական կաբինետ, որտեղ կազմակերպվում էին տարրական դասարանների ուսուցիչների մանկավարժական ընթերցումներ: Շրջանային կրթության բաժնի հետ համագործակցած կազմակերպվեցին տարրական դասարանների ուսուցիչների տասնօրյա կամ մեկամսյա վերապատրաստման դասընթացներ: Որպես փորձառու ուսուցիչ, շրջանի տարրական դասարանների ուսուցիչների համար կազմեց «դասվարի աշխատանքնային պլանը», և այն երաշխավորվեց շրջանային կրթության բաժնի կողմից, որպես մեթոդական ուղեցույց ուսուցիչների համար[524]:

Ս.Բաղունցը կենսաթոշակի անցնելուց հետո ակտիվորեն մասնակցում է մատաղ սերնդի դաստիարակության գործին, մանավանդ Արցախում ծավալված ազգային-ազատագրական շարժման օրերին: Ըստ արժանվույն են գնահատվել նրա հայրենանվեր ծառայությունները, արժանացել է շրջանային, մարզային կրթության բաժինների գովասանագրերին ու պատվոգրերին:

1930-ական թվականներին Մարտունու շրջանում ճանաչված ուսուցիչ էր 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ **Խաչիկ Հարությունյանը (1919-1999):** Հայրենի գյուղի՝ Հերհերի յոթնամյա դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Շուշիի մանկավարժական ուսումնարանը և 1937թ. ավարտելուց աշխատանքի անցել Մարտունու շրջանի Կարմիր շուկա ավանի 7-ամյա դպրոցում, որպես մաթեմատիյակի ուսուցիչ և ուսմասվար: Մանկավարժական գործունեությանը զուգընթաց երիտասարդ մանկավարժը նաև մասնակցել է ավանի մշակութալուսավորական աշխատանքներին, հայրենասիրական, գաղափարաքաղաքական զեկուցումներով հանդես եկել կոլտնտեության ընդհանուր ժողովներում. եղել է ավանի ակտիվ պրոպագանդիստը: Այդ մասին իր հուշերում պատմում է վաստակաշատ մանկավարժ Միքայել Բեգլարյանը[525]:

1939թ. աշնանը Խ.Հարությունյանը զորակոչվում է Կարմիր բանակի շարքերը, ծառայում Ուկրաինայում, 65-րդ հեծելազորային գնդում: 1941թ. հունվարին տեղափոխվում է 314-րդ տանկային գունդ: Աշխարհամարտի առաջին օրից մինչև նրա հաղթական ավարտը քաջարի ուսուցիչ-մարտիկը մասնակցել է մի շարք ճակատամարտերի և արժանացել Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանի ու մեդալների: Պատերազմի ավարտից հետո երկու տարի ևս ծառայել է Կարմիր բանակում, որպես սպա:

Զորացրվելուց հետո վերադառնում է հայրենի օջախ և շարունակում մանկավարժական գործունեությունը Ստեփանակերտի թիվ 2 դպրոցում, որպես մաթեմատիկայի ուսուցիչ և ուսմասվար: Խ.Հարությունյանը հեռակա կարգով ավարտում է (1953թ,) Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը: Շուրջ մեկուկես տասնամյակ նա եղել է Ստեփանակերտի թիվ 7 դպրոցի տնօրեն և թոշակի անցնելուց հետո էլ սերտորեն կապված էր դպրոցի հետ: Ժամանակակիցների վկայությամբ՝ Խ.Հարությունյանը կոլեկտիվի կողմից սիրված ու հարգված ղեկավար էր: Աշխատանքային կարգապահությունը, պատասխանատվությունը նրա գործունեության մեջ առաջնային էին: Նա հեռու էր ձևամոլությունից ու ցուցադրականությունից: Նրա համար կարևորը ուսումնադաստիարակչական աշխատանքի որակի բարձրացումն էր, ուսուցիչներին անհրաժեշտ օգնություն ցույց տալը[526]:

Վերոնշյալ դպրոցի արխիվային փաստաթղթերում պահպանված՝ Խ.Հարու-

թյունյանի ուսումնական տարվա աշխատանքային պլանում (34 մեքենագիր էջ) կանխատեսվում էին դպրոցի գործունեության հիմնական ուղղությունները՝ կապված 10-ամյա կրթության իրականացման հետ: Պլանում հանգամանորեն նշվում են աշակերտների քանակական շարժը ըստ տարիների, դասարանների թվի աճը, ուսուցիչների որակավորման բարձրացման, մասնագիտացման անհրաժեշտությունը, մեթոդմիավորման հանձնաժողովների գործունեության պլանավորումը, փոխադրական քննությունների և վերաքննությունների կազմակերպման ձևերը, աշխատանքային կարգապահության կանոնները դպրոցում, դասալսումների ժամանակացույցը, մանկավարժական խորհրդի նիստում քննարկվելիք հարցերը, ծնողական ժողովների կազմակերպումը, արտադպրոցական բազմազան միջոցառումների պլանը և ներդպրոցական կյանքին վերաբերող բազմազան այլ հարցեր: Ի դեպ, սույն գրքի համահեղինակը (Գ.Հ.) ուսանողների մանկավարժական փորձուսուցման ժամանակ (1976-1977 ուստարում) ուսանողներին՝ ապագա ուսուցիչներին, ծանոթացրել է նշված աշխատանքային պլանի բովանդակությանը: Պլանում նշված էին նաև դպրոցի դասվարներին, դասղեկներին ներկայացվող մանկավարժական պահանջները, ուսուցիչների աշխատանքը ծնողներ հետ, դասղեկի աշխատանքային պլան-օրագրի մի նմուշ: Տնօրենի աշխատանքային օրինակելի պլանը փորձուսուցման մասնակից ուսանողների համար եղավ ուղեցույց, որի հիման վրա նրանք կազմեցին նաև իրենց փորձուսուցման աշխատանքային պլանները:

Հայրենասեր վաստակաշատ մանկավարժը մինչև կյանքի մայրամուտը ստեղծագործաբար աշխատել է՝ մանկավարժական գործընթացի նորություններին ծանոթացնելով սկսնակ ուսուցիչներին: Մաթեմատիկայի, ֆիզիկայի դասավանդման որակի բարձրացման վերաբերյալ նրա շատ հոդվածներ հրապարակվել են պարբերական մամուլում: «Մաթեմատիկան դպրոցում» ամսագրում հատկապես դիտարկվում էին ուսուցումը հետաքրքիր դարձնելու հիմնահարցերը:

Բարձր է գնահատվել անվանի մանկավարժի բեղուն գործունեությունը: Նա արժանացել է բազում շքանշանների, մեդալների ու «Հանրապետության լուսավորության գերազանցիկ» կրծքանշանի:

Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցի պրակտիկայում ճանաչված մանկավարժ է **Գաբրիել Գաբրիելյանը (1919-2005):** Նախնական կրթությունը ստացել է Մարտունու շրջանի Սխտորաշեն գյուղի առաջին աստիճանի դպրոցում, այնուհետև ավարտել է Մարտունու 7-ամյա դպրոցը, ուսումը շարունակել Շուշիի մանկավարժական ուսումնարանում և, ավարտելով այն, մանկավարժական աշխատանքի անցել հայրենի գյուղի 7-ամյա դպրոցում ՝ որպես պատմության ուսուցիչ և ուսմասվար, իսկ 1939-1941թթ.՝ տնօրեն:

Հայրենական մեծ պատերազմի հենց սկզբին Գաբրիել Գաբրիելյանը կամավոր մեկնել է ռազմաճակատ և մասնակցել ռազմական գործողություններին մինչև պատերազմի հաղթական ավարտը: Զորացրվելուց հետո շուրջ 50 տարի (1945-1995թթ.) բեղուն գործունեություն է ծավալել Ստեփանակերտի թիվ 2 և 7 միջնակարգ դպրոցներում՝ որպես պատմության ուսուցիչ, ուսմասվար, փոխտնօրեն: Աշխատանքին զուգահեռ հեռակա կարգով ավարտել է (1948-1953թթ.) Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմական ֆակուլտետը:

Իր պրակտիկ մանկավարժական գործունեության տարիներին Գ.Գաբրիելյանը, որպես փորձառու մանկավարժ, դասավանդել է նաև ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտում վերապատրաստման դասընթացներին մասնակցող պատմության ուսուցիչներին: Նրա անձնական արխիվային փաս-

տաթղթերում պահպանվում են դասախոսությունների թեմաները՝ «Միջառարկայական կապերի ապահովումը պատմության դասերին», «Դիտազննական պարագաների օգտագործումը պատմության դասերին», «Պատմության ուսուցչի մանկավարժական վարպետությունը դասին» և այլն: Այդ թեմաներով դասախոսությունները կարդալիս տեսականը զուգակցում էր իր պրակտիկ փորձի հետ և կոնկրետ օրինակներ բերում իր և գործընկերների փորձից[527]:

Հադրութի դպրոցի մանկավարժության ասպարեզի նշանավոր գործիչներից է 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ **Ներսես Աբրահամյանը (1920-2005):** Նախնական կրթությունը ստացել Տումու 7-ամյա դպրոցում (1928-1935թթ.), այնուհետև ավարտել Հադրութի մանկվարաժական տեխնիկումը (1938թ.) և աշխատանքի անցել հայրենի գյուղում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: Մանկավարժական գործունեությանը զուգընթաց նա ակտիվորեն մասնակցել է շրջանի կրթական համակարգի վերակառուցման գործին: Միաժամանակ բազմաթիվ հոդվածներով հանդես է եկել մարզային, շրջանային թերթերում, թղթակցել Հայաստանի պարբերականներին:

Երիտասարդ Աբրահամյանը, չբավարարվելով միջնակարգ մասնագիտական կրթությամբ, ընդունվել է (1939թ.) Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, սակայն Հայրենական մեծ պատերազմը սկսվելուց կիսատ մնաց համալսարանական կրթությունը: Նա կամվոր մեկնեց ռազմաճակատ, մասնակցեց Մոսկվայի, Ստալինգրադի և մի շարք այլ քաղաքների ազատագրմանը և արժանացավ շքանշանների ու մեդալների:

Պատերազմի հաղթական ավարտից հետո Ն.Աբրահամյանը վերադարձավ հայրենի օջախ և շարունակեց մանկավարժական գործունեությունը Տումի գյուղի միջնակարգ դպրոցում, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար (1946-1950թթ.): Տնօրենի պաշտոնում աշխատել է մինչև թոշակի անցնելը:

Ն.Աբրահամյանը շուրջ հինգ տասնամյակ բեղմնավոր գործունեություն է ծավալել Տումու միջնակարգ դպրոցում:

Փաստագրական նյութերից և ժամանակակիցների հուշերից տեղեկանում ենք, որ տնօրենի պաշտոնում աշխատելու տարիներին Ն.Աբրահամյանի մանկավարժական վարպետությունն ու տակտը, գործիմացությունն ու ղեկավարչական հմտությունը, կոլեկտիվի նկատմամբ անշահախնդիր պահանջկոտությունը ու հարգալից վերաբերմունքը բարձրացնում էին նրա և դպրոցի հեղինակությունը շրջանում: Խորեն Ղազարյանի վկայությամբ, ուսումնական տարվա կիսամյակային արձակուրդներին Ն.Աբրահամյանը դպրոցում կազմկերպում էր ուսուցիչների ինքնակրթության բարձրացման ուղղությամբ մանկավարժական ընթերցումներ: Նա անձամբ ինքն էր ընտրում ընթերցումների թեմատիկան, նախօրոք քննարկում մանկավարժական խորհդի նիստերում[528]:

Իր պրակտիկ մանկավարժական գործունեության տարիներին Ն.Աբրահամյանը ձեռնամուխ է եղել շրջանի կրթական կյանքը արմատապես վերափոխելու գործին: Ուսուցչական խորհրդակցություններում ունեցած նրա զեկուցումները նվիրված էին ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպմանը (Ստեփանակերտում, Երևանում), մանկավարժական կադրերի աշխատանքի գնահատման չափանիշների մշակմանը, շրջանի դպրոցներում ուսուցչի առաջավոր փորձի ընդհանրացմանն ու տարածմանը և բազմաբնույթ այլ հարցերի, որը այն ժամանակ կարելի էր դիտարկել որպես շրջանի կրթական համակարգում մանկավարժական նորամուծության (ինովացիոն) գործընթացի հիմք:

Վաստակաշատ մանկավարժ Ներսես Աբրահամյանի բազմամյա բեղմնավոր

գործունեությունը ուսանելի է եղել շրջանի դպրոցական կոլեկտիվների համար: Ըստ արժանվույն է գնահատվել նրա վաստակը. նա արժանացել է հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչման:

Հադրութի շրջանի վաստակաշատ մանկավարժ **Երվանդ Ղահրամանյանը (1920-2005)** կյանքի մեծ մասը նվիրեց դպրոցին և սիրով ծառայեց նրան: Նախնական կրթությունը ստացել է շրջանի Առաքյուլ գյուղի 7-ամյա դպրոցում(1928-1935թթ.), մինչնակարգը՝ Բանաձորի դպրոցում, բարձրագույնը՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում (1937-1941թթ.): Ավարտական պետական քննությունները հանձնելիս սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, և նա կամավոր մեկնում է ռազմաճակատ: Մասնակցում է Մոսկվայի, Ուկրաինայի, Բելոռուսիայի քաղաքների ազատագրման համար մղվող կատաղի մարտերին և պարգևարտվում մի շարք շքանշաններով ու մեդալներով: Պատերազմի ավարտից հետո, 1946թ. հունիսին, Ե. Ղահրամանյանը վերադառնում է հայրենի գյուղ և շարունակում մանկավարժական գործունեությունը 7-ամյա դպրոցում՝ որպես պատմության ուսուցիչ, ուսմասվար: Հեռակա կարգով ավարտում է ինստիտուտը (1948թ.) և նշանակվում դպրոցի տնօրեն:

Երվանդ Ղահրամանյանի հուշերից (սիրելի դպրոցի մասին 4 ձեռագիր էջ)[529] տեղկանում ենք, որ շուրջ 55 տարի մանկավարժական գործունեություն է ծավալել Առաքյուլի (1946-1950թթ.), Ջեբրայիլի հայկական (1950-1966թթ.), Բանաձորի (1966-1988թթ.) դպրոցներում՝ որպես տնօրեն, այնուհետև հայրենի գյուղի դպրոցում (1988-1991թթ.)՝ որպես ուսուցիչ: Արցախյան շարժման տարիներին տեղափոխվում է Երևան, սակայն նորից է վերադառնում հայրենի գյուղ (1996թ.) և շարունակում մանկավարժական գործունեությունը:

Երվանդ Ղահրամանյանը, որպես ուսմասվար, տնօրեն, լուրջ ուշադրություն էր դարձնում ուսուցչական կադրերի վերապատրաստման գործին: Փաստագրական նյութերից տեղեկանում ենք, որ դպրոցում աշխատելու տարիներին ստեղծել է ուսումնական կաբինետներ: Շրջանի տնօրեններից առաջինն էր, որ Բանաձորի միջնակարգ դպրոցում բացեց պատմության թանգարան, և դպրոցը դարձավ ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտի հենակետային դպրոց, որտեղ կազմակերպվում էին գիտապրակտիկ սեմինարներ, մանկավարժական ընթերցումներ, շրջանի դպրոցների փնջային մեթոդմիավորման նիստեր:

Երվանդ Ղահրամանյանը ստեղծագործաբար որոշումներ կատարող, դպրոցի ներքին կյանքը թարմացնող, ուսուցիչներին մեթոդական օգնություն ցույց տվող և կոլեկտիվը ժողովրդավարական սկզբունքով ղեկավարող փորձառու տնօրեն էր: Նրա փորձը բազմիցս խրախուսվել է Հադրութի շրջանի, մարզային ուսուցչական խորհրդակցություններում: Ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման և որակի բարձրացման վերաբերյալ գիտամանկավարժական հոդվածներով հանդես է եկել մարզային, շրջանային թերթերում, ինչպես նաև Հայաստանի պարբերական մամուլում: Վեց գրքի հեղինակ է:

Հասարակական ակտիվության, ազգանպաստ գործունեության համար Երվանդ Ղահրամանյանը արժանացել է հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչման և կառավարական բազմաթիվ պատվոգրերի ու պարգևների:

Վաստակաշատ մանկավարժ, Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանակիր **Արմենակ Բաղդասարյանը (1920-1999)** մեծ ներդրում ունեցավ Հադրութի շրջանի կրթության համակարգի զարգացման գործում: Ավարտելով հայրենի Ազոխ գյուղի 7-մյա դպրոցը (1935թ.) ուսումը շարունակում է Հադրութի մանկավարժական տեխնիկումում և, ավարտելով այն, նշանակվում Դրախտիկ

գյուղի 7-ամյա դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ և ուսմասվար: Տնօրենի՝ Սուրեն Հովսեփյանի հետ ձեռնամուխ է լինում դպրոցի վերանորոգմանը: Վերանորոգում են դպրոցի շենքը, մեծ դժվարությամբ ձեռք բերում գույք, անհրաժեշտ սարքավորումներ, դիտազննական պարագաներ, բարձրացնում ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքը և դպրոցում առաջին անգամ կազմակերպում բաց և փոխադարձ դասալսումներ փորձառու ուսուցիչների մոտ՝ մասնակից դարձնելով նաև սկսնակ ուսուցիչների:

Անվանի մանկավարժի բեղուն գործունեությունը ընդհատվում է, երբ 1940թ. փետրվարին զորակոչվում է Կարմիր բանակ ու մինչև պատերազմի ավարտը ծառայում Մոսկվայի օդային տարածքը պաշտպանող զորամասերում:

Զորացրվելուց հետո Արմենակ Բաղդասարյանը անցնում է մանկավարժական աշխատանքի Ֆիզուլիի ռուսական միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի և ֆիզկայի ուսուցիչ (1945-1947թթ.), այնուհետև աշխատում է Ազոխի 7-ամյա դպրոցում (1947-1958թթ.):Այդ տարիներին ավարտում է Ստեփանակերտի երկամյա մանակավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը (1948թ.), իսկ հետո ավարտում Բաքվի մանակավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը (1959թ.): Շուրջ երեք տասնամյակ, որպես մաթեմատիկայի ուսուցիչ, ուսմասվար, տնօրեն, աշխատում է Ազոխի, Դրախտիկի, Մեծ Թաղլարի, Բլուբանի դպրոցներում: Թոշակի անցնելուց հետո էլ (1982թ.) սերտորեն կապված էր կոլեկտիվի հետ և իր բազմամյա մանկավարժական փորձը փոխանցում էր երիտասարդ մասնագետներին:

Շրջանային, մարզային կրթության մարմինների ղեկավարների կողմից բարձր է գնահատվել է Արմենակ Բաղդասարյանի անբասիր մանկավարժական աշխատանքը: Նա պարգևատրվել է գովասանագրերով ու պատվոգրերով:

Ասկերանի շրջանի դպրոցի պրակտիկայում ճանաչված մանկավարժ, Կարմիր աստղի շքանշանակիր **Մովսես Ավետիսյանը (1920-1995)** նախնական կրթությունը ստացել է Ասկերանի շրջանի Սարուշեն գյուղի երկաստիճան դպրոցում (1927-1934թթ.), այնուհետև ավարտել է Շուշիի մանկավարժական ուսումնարանը և աշխատանքի անցել շրջանի Դաշուշեն գյուղի 7-ամյա դպրոցում, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար (1937-1939թթ.), իսկ 1940-1941թթ. եղել է Սղնախի 7-ամյա դպրոցի տնօրեն:

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրից նա կամավոր մեկնեց ռազմաճակատ, մասնակցեց Մոսկվայի, Ստալինգրադի և մի շարք այլ քաղաքների ազատագրմանը և արժանցավ շքանշանների ու մեդալների:

Պատերազմի հաղթական ավարտից հետո վերադարձավ հայրենի գյուղ (1946թ.) և շարունակեց մանկավարժական գործունեությունը:

Բարձրագույն կրթությունը ստանալով Բաքվի մանակավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում (1952թ.), շուրջ 45 տարի, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար, տնօրեն (25 տարի եղել է Սարուշենի միջնակարգ դպրոցի տնօրեն)՝ բեղուն մանկավարժական գործունեություն է ծավալել Դաշուշեն, Սղնախ, Ղարաբուլաղ գյուղերի դպրոցներում:

Ըստ արժանվույն է գնահատվել Մ.Ավետիսյանի մանկավարժական բազմամյա վաստակը: Նա արժանացել է մարզային կրթության բաժնի գովասանագրերի ու պատվոգրերի:

Լեռնային Ղարաբաղում բեղմնավոր պրակտիկ գիտամանկավարժական գործունեություն է ծավալել վաստակաշատ մանկավարժ, գրող, դրամատուրգ և թատերագետ **Իսահակ Ալավերդյանը (1917-1992)**[530]: Ծնվել է Շուշի քաղաքում,

նախնական կրթությունը ստացել Ստեփանակերտի առաջին աստիճանի դպրոցում, այնուհետև ավարտելով քաղաքի օրինակելի դպրոցը (1935թ.), մանկավարժական աշխատանքի անցել Նախիջևանիկի 7-ամյա դպրոցում, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար: Կարճատև մանկավարժական գործունեության ընթացքում (1935-1936թթ.) հայոց լեզվին և գրականությանը քաջատեղյակ ուսուցիչը փոփոխություններ մտցրեց այդ առարկաների դասավանդման դրվածքի մեջ, գործադրեց ուսուցման գործընթացն ակտիվացնող առաջավոր սկզբունքներ ու մեթոդներ: Նշված դպրոցում առաջին անգամ կազմակերպել է հայ գրականության և թատերական խմբակներ և իր սաների մեջ հետաքրքրություն առաջացրել հայ բազմադարյան գրականության ու թատերարվեստի նկատմամբ: Ուշագրավ է նշել նաև Ալավերդյանի կողմից կազմակերպված փորձնական դասը հայոց լեզվից: Մանկավարժական խորհրդի նիստում ունեցած ելույթում նա առաջ է քաշում ուսուցանվող առարկաների դասավանդումը բարձր հիմքի վրա դնելու, հատկապես մայրենի լեզվի ուսուցումը նորովի վարելու հարցը:

Նախապատերազմյան շրջանում Իսահակ Ալավերդյանը մանկավարժական գործունեություն է ծավալել Շոշի միջնակարգ դպրոցում (1936-1937թթ.), Շուշի քաղաքի միջնակարգ դպրոցում՝ որպես ուսմասվար, փոխտնօրեն (1937-1938թթ.), Ստեփանակերտի թիվ 2 միջնակարգ դպրոցում (1938-1941թթ.), որպես ուսմասվար, հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: Այդ տարիներին նա իր մանկավարժական փորձով և մասնագիտական պատրաստվածությամբ մեկն էր ժամանակաշրջանի այն վաստակաշատ մանկավարժներից, ովքեր իրենց անդուլ ստեղծագործական աշխատանքով ու պրպտուն որոնումներով նորություն և թարմ շունչ մտցրին մարզի կրթական համակարգում:

Ինքնակրթությամբ ձեռք բերելով մասնագիտական հարուստ գիտելիքներ, Ի.Ալավերդյանը չբավարարվեց ստացած միջնակարգ մասնագիտական կրթությամբ, ընդունվեց Բաքվի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հեռակա բաժինը, սակայն 1941թ. հուլիսի 23-ին 3-րդ կուրսից կամավոր մեկնեց ռազմաճակատ, մասնակցեց հայրենիքի պաշտպանության համար մղվող կատաղի մարտերին, արժանացավ մի շարք մեդալների ու շքանշանների: 1943թ. գարնանը ծանր վիրավորվեց, զորացրվեց, վերադարձավ թիկունք ու շարունակեց մանկավարժական գործունեությունը Ստեփանակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցում՝ որպես ուսմասվար, հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: Միաժամանակ ավարտեց համալսարանը:

Հետպատերազմյան շրջանում արգասաբեր է եղել Ի.Ալավերդյանի մանկավարժական, գրական ու թատերագիտական գործունեությունը: Շուրջ երեք տասնամյակ (1947-1977թթ.) եղել է Ստեփանակերտի թիվ 1, 2, 3 միջնակարգ դպրոցների ուսմասվար, հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, հայոց լեզվի և գրականության ուսուցիչների մեթոդմիավորման քաղաքային հանձնաժողովի ղեկավար, մարզային կրթության բաժնի առաջատար մասնագետ, օգոստոսյան ուսուցչական խորհրդակցության պատվավոր անդամ:

Պրակտիկ մանկավարժական գործունեությանը զուգընթաց Ի.Ալավերդյանը արցախահայ դպրոցին, մշակույթին, գրականությանը, արվեստին, թատերագիտությանը և հասարակական-քաղաքական կյանքին առնչվող բազմաթիվ հոդվածներ, աշխատություններ, թատերագիտական ժողովածուներ է հրատարակել: Երբ այս տեսանկյունից ծանոթանում ես Ի.Ալավերդյանի տպագիր ու ձեռագիր ուսումնասիրություններին, հիացմունքի զգացում ես ապրում. թե մանկավարժական, թատերական, հասարակական-քաղաքական աշխատանքին զուգընթաց

ինչպիսի հսկայական աշխատանք է կատարել հանրապետության մշակույթի վաստակավոր գործիչը, որքան բեղմնավոր է եղել նրա գրիչը:

Փաստագրական հարուստ նյութերի, ժամանակակիցների հուշերի, պարբերական մամուլում տպագրված հոդվածների և անձնական արխիվների ուսումնասիրությունների հիման վրա ժամանակագրական կարգով ներկայացնենք նաև Լեռնային Ղարաբաղի կրթական համակարգում ճանաչված մանկավարժության նոր սերնդի ներկայացուցիչների բեղմնավոր գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին և հետպատերազմյան ժամանակաշրջանում, մինչև մեր ժամանակները, քանի որ նրանցից շատերը դեռևս աշխատում են ազատ ու անկախ Արցախի հանրակրթական դպրոցներում, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում: Ի դեպ, նշենք, որ այս հատորում ներկայացվում է միայն Լեռնային Ղարաբաղի դպրոցի ու մանկավարժության բնագավառի ներկայացուցիչների բեղմնավոր գործունեությունը նախապատերազմյան, Հայրենական պատերազմի տարիներին և հետպատերազմյան ժամանակաշրջանում: 1941-1954թթ. ծնված և մանկավարժության ասպարեզ մտած սերնդի բեղմնավոր մանկավարժական գործունեությունը կներկայացվի աշխատության երրորդ հատորում:

Լեռնային Ղարաբաղի հայրենասեր ու տաղանդաշատ մանկավարժների շարքերում ուրույն տեղ է գրավում անվանի մանկավրժ **Սարգիս Հակոբյանը (1922-1990):** Նախնական կրթությունը ստացել է Հադրութի շրջանի Արփագետիկ (նախկինում՝ Գորիսի շրջանի Քարինգ) գյուղի առաջին աստիճանի դպրոցում, այնուհետև միջնակարգ կրթությունը ստացել Թիֆլիսում, բարձրագույնը՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում: Ուսումնառության տարիներին նա չի բավարարվել միայն դասախոսություններով, ինքնակրթությամբ խորամուխ է եղել մաթեմատիկական գիտությունների մեջ և առաջին կարգի դիպլոմով ավարտելով ինստիտուտը, անցել մանկավարժական աշխատանքի հայրենի գյուղի 7-ամյա դպրոցում, քեռու՝ Մուշեղ Դավթյանի հիմնադրած Ղոշարխաչի միջնակարգ դպրոցում՝ որպես ուսմասվար, մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ: Շուրջ երկու տասնամյակ (1950-1970թթ.) նա իր հիմնադրած՝ Արփագետիկի 8-ամյա դպրոցի տնօրենն էր: Այդ տարիներին բազմահմուտ մանկավարժը, ընդօրինակելով իր սերնդակիցների (Ս.Աբրահամյան, Ե.Ղահրամանյան, Ն.Աբրահամյան և ուրիշներ) լավագույն փորձը, մշակել է հայրենի կրթօջախի ուսումնադաստիարակչական աշխատանքների նորովի կազմակերպման պլանը, որտեղ առաջնային խնդիրը համարում էր աշակերտների ուսման որակի բարձրացումը:

Նրա դուստր, դոցենտ Լիլիկ Հակոբյանի մեզ տրամադրած հարուտ փաստագրական տվյալներից տեղեկանում ենք, որ շրջանային օգոստոսյան ուսուցչական խորհրդակցություններում բազմիցս խրախուսվել է վաստակաշատ ու հայրենասեր մանկավարժի անգնահատելի ծառայությունը շրջանի ծայրամասային գյուղերի դպրոցներում: Լինելով ժողովրդավարության ոգու մարմնացում, Ս.Հակոբյանը վառ պահեց հայրենի՝ դարավոր պատմություն ունեցող գյուղի և իր տոհմի լուսավորիչների (Դավիթ պապի տոհմածառ) ավանդները, իրականացրեց նրանց երազանքը՝ հայեցի կրթություն տվող դպրոցի հիմնադրումն ու մատաղ սերնդին հայեցի կրթություն տալը: Անշուշտ, դպրոցում նա ծավալեց վերանորոգչական գործունեություն, նույնիսկ իր միջոցներով վերանորոգեց դպրոցի շենքը, աշակերտների համար գնում էր անհրաժեշտ գրենական պիտույքներ ու սարքավորումներ: Իր գործին նվիրված մանկավարժը շրջանի հանրակրթական ոլորտում

մեծ հեղինակություն է վայելել:

20-րդ դարի 70-ական թվականներին Ս.Հակոբյանը արգասավոր գործունեություն է ծավալում Ստեփանակերտի ուսումնաարտադրական կոմբինատում, որպես մաթեմատիկայի ուսուցիչ, ուսմասվար և տնօրեն: Սույն գրքի համահեղինակը(Հ.Գ.) մանկավարժական փորձուսուցման ժամանակ շատ առիթներ է ունեցել հանդիպելու անվանի մանկավարժի հետ, լսելու նրա ուսանելի խորհուրդները ուսանողներին. «Սիրելի ապագա մանկավարժներ՝ սկսնակ ուսուցիչներ: Հիշեք, որ մի լույս առավոտ ոտք եք դնելու դպրոցի շեմին և երկա՜ր, շատ երկար ճամփա պիտի անցնեք և նմանվեք մեր անվանի մանկավարժներին, որոնց բեղմնավոր գործունեությունը իրենց սաներին հղկել ու դարձրել է կատարյալ անձնավորություններ, որպեսզի մեր բովանդակ կյանքի, մեր իղձերի, նպատակների, իդեալների մեծ դրոշը շատ բարձր պահած առաջ տանեն ու իրենց ամուր ձեռքերով հանձնեն սերունդներին»[531]:

Փորձառու մանկավարժի մասին գիտության ու մշակույթի գործիչները գովեստի շատ խոսքեր են ասել: Օրինակ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը գրել է. «Ուրախ եմ, որ իմ դպրոցական տարիների ընկեր Սարգիսը ճանաչվել է որպես դարի լավագույն ուուցիչներից մեկը: Դա նրան բնորոշ է: Նա իմ հիշողության մեջ մնացել է իր բարոյական բարձր նկարագրով և պայծառ անուն է թողել սերունդների հիշողության մեջ»:

Ըստ արժանվույն գնահատվել է նրա բազմամյա մանկավարժական վաստակը, նա արշժանացել է մարզային կրթության բաժնի գովասանագրերի ու պատվոգրերի:

Վաստակաշատ մանկավարժ **Սեդրակ Օհանջանյանի (1924-1985)** մասին դրվատանքի շատ խոսքեր են ասել գործընկերներն ու շրջանավարտները: 1942թ. ավարտում է ծննդավայրի՝ Մարտակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցը, այնուհետև դասավանդում նույն դպրոցի 4-7-րդ դասարաններում, իսկ հետագայում ՝ Թալիշի, Կարմիրավանի, Կուսապատի դպրոցներում: Մանկավարժական գործունեությանը զուգընթաց առաջին կարգի դիպլոմով ավարտում է Ստեփանակերտի երկամյա մանակավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի հեռակա բաժինը: Հետագայում հեռակա կարգով ավարտում է նաև Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը:

Վաստակաշատ մանկավարժը շուրջ չորս տասնամյակ բեղմնավոր մանկավարժական գործունեություն է ծավալել շրջանի դպրոցներում: Ժամանակակիցների հուշերից[532] տեղեկանում ենք, որ բազմիցս նրան առաջարկել են դպրոցի տնօրենի, ուսմասվարի պաշտոն, սակայն հրաժարվել է՝ գերադասելով աշխատել որպես մաթեմատիկայի ուսուցիչ:

Բազմահմուտ մանկավարժ Ս.Օհանջանյանը իր բնատուր տաղանդով, որպես մաթմատիկայի ճանաչված մասնագետ, պարբերաբար դասախոսություններէր կարդում նաև ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտի մաթեմատիկայի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում, ինչպես նաև շրջանում կազմակերպված ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում:

Անշուշտ, բազմավաստակ մանկավարժի ծառայությունները շատ մեծ են շրջանի մաթեմատիկայի ուսուցիչների մեթոդական, մասնագիական որակավորման բարձրացման գործընթացում: Բազմամյա արգասավոր վաստակի համար Ս.Օհանջանյանը արժանացել է «Ուսուցիչ-մեթոդիստ» կոչմանն ու պարգևատրվել կառավարական պատվոգրերով ու գովասանագրերով:

Մարտունու շրջանի կրթական գործի զարգացման բնագավառում մեծ ծառա-

յություն ունի 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ, ուսումնամեթոդական ձեռնարկների հեղինակ, վաստակաշատ մանկավարժ **Շահեն Քամալյանը**: Հայրենի Գյուլեն Ճարտարի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո (1941-1942թթ), որպես արտակարգ ընդունակությունների տեր շրջանավարտ, շրջժողկրթբաժինը նրան թույլատրում է քիմիա և կենսաբանություն դասավանդել 5-7-րդ դասարաններում, քանի որ դպրոցի ուսուցիչները մեկնել էին ռազմաճակատ: Քամալյանը պատերազմի տարիներին նաև հասարակական, քաղաքական ակտիվ աշխատանք է կատարել: Նրա անմիջական ղեկավարությամբ դպրոցականները, գյուղի բնակիչները մեծ քանակությամբ դեղաբույսեր են հավաքել և ուղարկել ռազմաճակատ:

Շահեն Քամալյանը ավարտում է (1948թ.) Ստեփանակերտի երկամյա մանակավարժական ինստիտուտի բնագիտաաշխարհագրական ֆակուլտետը՝ կենսաբանություն և քիմիա մասնագիտությամբ: Այնուհետև հեռակա կարգով ավարտում է (1955թ.) նաև Հայկական մանկավարժական ինստիտուտի կենսաբանության և քիմիայի ֆակուլտետը:

Վաստակաշատ մանկավարժը շուրջ հինգ տասնամյակ բեղմնավոր գործունեություն է ծավալել Գյուլեն և Ղուզե Ճարտարի միջնակարգ, Գյուլեն Կալերի ութամյա դպրոցներում, ինչպես նաև շրջանային կրթության բաժնում, որպես մեթոդիստ: Երկար տարիներ եղել է նշված դպրոցների կենսաբանության և քիմիայի առարկայական մեթոդմիավորման հանձնաժողովների ղեկավար և կազմակերպել միջդպրոցական դասալսումներ, առաջավոր փորձը փոխանցել սկսնակ ուսուցիչներին[533]:

Մարզի հանրակրթական դպրոցի պրակտիկայում ճանաչված ուսուցչի փորձը ընդհանրացվել է շրջանային, մարզային օգոստոսյան ուսուցչական խորհրդակցություններում, ճանաչվել լավագույնը, տարածվել մարզի դպրոցներում: Ժամանակակիցների հուշերից տեղեկանում ենք, որ Շ.Քամալյանը, չնայած մասնակցում էր Ստեփանակերտի ուսուցիչների կատարելագործման ինստիտուտի կենսաբանության և քիմիայի դասընթացներին, հանդես էր գալիս «Կենսաբանության և քիմիայի դասավանդման որակի բարձրացման իմ փորձը», «Աշակերտների ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը կենսաբանության և քիմիայի դասերին», «Սովորողների գիտելիքների ու կարողությունների ստուգման կազմակերպումը կենսաբանությունից և քիմիայից» զեկուցումներով: Նրա տասնյակ գիտամանկավարժական հոդվածներ տպագրվել են մարզի պարբերական մամուլում, ինչպես նաև Հայաստանում լույս տեսնող «Սովետական դպրոց» թերթում, «Սովետական մանկավարժ», «Քիմիան և կենսաբանությունը դպրոցում» ամսագրերում:

Շ.Քամալյանի բազմամյա մանկավարժական վաստակը գնահատվել է ըստ արժանվույն: Նա արժանացել է ուսուցիչ-մեթոդիստի կոչման, «ԽՍՀՄ լուսավորության գերազանցիկ» կրծքանշանի, պարգևատրվել «Աշխատանքի վետերան» մեդալով և մի շարք պատվոգրերով: Վաստակաշատ մանկավարժը մասնակցել է նաև 2000թ. ԼՂՀ մանկավարժական ընթերցումներին և արժանացել 2-րդ կարգի մրցանակի:

Լեռնային Ղարաբաղի ու մանկավարժության ասպարեզի նվիրյալ գործիչներից է վաստակաշատ մանկավարժ **Լևոն Հարությունյանը (1928-2012)**: Գերազանց գնահատականներով ավարտելով հայրենի Աշան գյուղի միջնակարգ դպրոցը (1946թ.), ուսումը շարունակում է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրա-

կանության բաժնում (1946-1948թթ.), այնուհետև բարձրագույն կրթություն ստանում Բաքվի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում (1948-1952թթ.): Առաջին կարգի դիպլոմով ավարտելով ինստիտուտը, Լ.Հարությունյանը մանկավարժական աշխատանքի է անցնում Մարտունու շրջանի Եմիշճանի յոթնամյա դպրոցում, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար:

Զինվորական ծառայությունն ավարտելուց հետո (1957թ.), աշխատում է կոմերիտշրջկոմում, որպես քարտուղար, սակայն մանկավարժական մասնագիտության նկատմամբ ունեցած սերը նրան ստիպում է վերստին աշխատել հայրենի գյուղի կրթօջախում: Նրա բազմամյա մանկավարժական, դասը վարելու ուսանելի փորձի ուսումնասիրումը վկայում է, որ հայրենասեր մանկավարժը անսահմանորեն նվիրված էր այդ ազնվագույն և դժվարին մասնագիտությանը: Շուրջ չորս տասնամյակի բեղմնավոր գործունեության տարիներին (որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար, տնօրեն Աշանի, Եմիշճանի, Մյուրիշենի, Խերխանի, Բերդաշենի, Թաղավարդի դպրոցներում) գրած իր հուշերում վաստակաշատ մանկավարժը նշում է. «Տարիների աշխատանքային փորձը ինձ մշտապես հուշում է, որ ամեն մի ուսուցիչ միշտ պետք է կողմնորոշի աշակերտներին, սեր առաջացնի նրանց մեջ աշխատանքի և աշխատանքի մարդկանց հանդեպ, որպեսզի ամեն մի աշակերտ հենց դպրոցական նստարանից սիրի հայրենի երկիրը, մտերմանա հողին, զգա հողի բույրն ու դերը բարիքներ ստեղծելու ճանապարհին: Ուսուցիչը պետք է նմանվի այն շռայլ սերմնացանին, որ երջանկության հունդեր է ցանում մատաղ սերնդի հոգիներում՝ գալիքն էլ ավելի գեղեցիկ ու բարեկեցիկ դարձնելու համար»[534]:

Վաստակաշատ մանկավարժի գործունեությանը վերաբերող փաստագրական նյութերից տեղեկանում ենք, որ դասալսուների արդյունքները վերլուծելիս ուսուցիչներին խորհուրդ էր տալիս դասը կառուցել մանկավարժորեն ու մեթոդապես ճիշտ, գիտական խոր հագեցածությամբ: Աշկերտներին հետաքրքրում են միայն ուսուցիչների այն դասերը, որոնք ունեն խոր բովանդակություն: Այդ տեսակետից ավելի է մեծանում ուսուցչի դերը, քանի որ նա է դասերի կազմակերպիչը:

Մանկավարժական գործունեության տարիներին .Հարությունյանը իր դասը արդյունավետ կազմակերպելու ուսանելի փորձի, ներդպրոցական կյանքին վերաբերող բազմաբնույթ հարցերի(դպրոցի տնօրենի աշխատանքային պլանի, դպրոցի մեթոդմիավորումների աշխատանքների, դասվարների, դասղեկների աշխատանքնային պլանների և այլ հարցերի) վերաբերյալ բազմաթիվ հոդվածներով հանդես է եկել շրջանային, մարզային թերթերում, «Սովետական դպրոց», «Խորհրդային մանկավարժ», «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» ամսագրերում: Լ.Հարությունյանը զբաղվել է նաև ազգագրական աշխատանքով, հրատարակել է «Նշխարներ» (1991) ժողովածուն: Այդ թեմաներով 100-ից ավելի հոդվածների հեղինակ է: ՀՀ մանկավարժական ընկերության կողմից պարգևատրվել է«Ստեղծագործական աշխատանքի համար» կրծքանշանով և դիպլոմով:

Նրա բազմամյա վաստակը գնահատվել է նաև ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից, արժանացել մի շարք գովասանագրերի, պատվոգրերի: 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ է:

Մարտունու շրջանի հանրակրթական դպրոցներում բեղմնավոր մանկավարժական գործունեություն է ծավալել 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ, երկրամասի կրթական գործի զարգացմանը նվիրված, մի շարք աշխատու-

թյունների, 60-ից ավելի ուսումնամեթոդական աշխատությունների հեղինակ **Միքայել Բեգլարյանը (1926թ.)**: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի Քարահունջ գյուղի առաջին աստիճանի դպրոցում (1938թ.), այնուհետև՝ ավարտել է շրջանի Սոս գյուղի միջնակարգ դպրոցը (1943թ.), ուսումը շարունակել (1943-1945թթ.) Շուշիի (այնուհետև՝ Ստեփանակերտի) երկամյա մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում, ավարտել առաջին կարգի դիպլոմով(1945թթ.) և աշխատանքի անցել Խերխանի յոթնամյա դպրոցում, որպես պատմության ուսուցիչ, ուսմասվար: Որպես տնօրեն աշխատել է (1948-1950թթ.) Մաճկալաշենի յոթնամյա և Սոսի միջնակարգ դպրոցներում[535]:

Մ. Բեգլարյանը բեղմնավոր մանկավարժական գործունեություն է ծավալում հատկապես 1950-1970-ական թվականներին: Տնօրենի պաշտոնում աշխատում է շրջանի Հերհերի, Քերթի, Սոսի միջնակարգ դպրոցներում: Նա եղել է նաև (1953-1956թթ.) Մարտունու շրջանի կրթության բաժնի դպրոցական տեսուչ, մեթոդկաբինետի վարիչ, երկար տարիներ ղեկավարել է շրջանի պատմության և աշխարհագրության ուսուցիչների մեթոդական հանձնաժողովը, ինչպես նաև շրջանի դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի ստուգման՝ կրթության դպրոցական տեսուչների հանձնաժողովը:

Մ. Բեգլարյանի հուշերի ուսումնասիրությունից տեղեկանում ենք, որ դպրոցներում աշխատելու տարիներին ստեղծել է պատմության, աշխարհագրության ուսումնական կաբինետներ, առարկայական մեթոդմիավորումներ, նրանց համար կազմել աշխատանքային պլան, կազմակերպել բաց դասալսումներ, արդյունքները քննարկել մանկավարժական խորհրդի նիստում՝ ուսուցիչների գործունեության լավ և թույլ կողմերի վերլուծությանը: Ուշագրավ են հատկապես բազմավաստակ մանկավարժի կողմից մշակված՝ ուսուցչական կադրերի գործունեության գնահատման չափանիշները.

1. տվյալ դասարանում դասավանդելու մասնագիտական մանկավարժական, հոգեբանական նախադրյալները,
2. մեթոդական պատրաստվածությունը,
3. առարկայական պատրաստվածությունը,
4. սովորողների նկատմամբ հստակ պահանջները,
5. աշակերտների նկատմամբ մանկավարժական ճիշտ մոտեցումը,
6. անհատական մոտեցումը յուրաքանչյուր սովորողի նկատմամբ,
7. դասի ճիշտ տեղաբաշխումը և ժամանակի օգտագործումը,
8. մանկավարժական տակտը և այլն:

Ի դեպ, նշենք, որ այս չափանիշները մշակել է շրջանայի կրթության բաժնում աշխատելու տարիներին, և դրանք եղել են ուղեցույց շրջանի դպրոցների տնօրենների համար:

Մեծ է Մ. Բեգլարյանի դերը դպրոցաշինության ասպարեզում: Որ դպրոցում էլ նա աշխատել է, վերանորոգել է շենքը, ձեռք բերել անհրաժեշտ սարքավորումներ ուսումնական կաբինետների, կենսաբանության, քիմիայի և ֆիզիկայի լաբորատորիաների համար: Նախաձեռնել է նաև հանրօգուտ աշխատանքներ՝ Մեծ Հայրենականում հայրենի գյուղից զոհվածների հիշատակին հուշարձան կառուցելու, ինչպես նաև Քերթ գյուղի տիպային դպրոցական շենքի կառուցման նախաձեռնողներից մեկն է:

Իր բազմամյա հասարակական ակտիվ գործունեության համար արժանացել է Ադր. ԽՍՀ լուսավորության գերազանցիկի կրծքանշանի, ԼՂՀ ԿԳ նախարարության գովասանագրերի ու պատվոգրերի:

Ժամանակակից դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքների կարևոր միջոցներից է անցյալի դպրոցի, մանկավարժական ժառանգության առաջավոր փորձի ստեղծագործաբար օգտագործումը: Քանի որ աճող սերնդի կրթության ու դաստիարակության վերակառուցման շահերը պահանջում են մոռացության չտալ անցյալի դպրոցի լավագույն ավանդույթները, վաստակաշատ մանկավարժների ուսանելի փորձն ու նրանց ժառանգությունը: Այդ տեսանկյունով էլ աշխատության այս գլխում ներկայացվում են նաև 20-րդ դարի 50-80-ական թվականներին երկրամասի անկախության շրջանում 1990-ական թվականների սկզբներին բեղմնավոր գործունեություն ծավալած գործիչների ուսանելի կենսագրությունն ու մանկավարժական առաջավոր փորձը: Նկատի ունենք ժամանակագրական կարգով 1926-1932թթ. և 1940թ. ծնված սերնդի՝ կրթության գործի նվիրյալների գործունեությունը: Այդպես ներկայացվել է նաև նախորդ շրջափուլերում:

Լեռնային Ղարաբաղի կրթական համակարգի զարգացման գործում մեծ երախտիք ունի բազմավաստակ մանկավարժ, ԽՍՀՄ ժողովրդական ուսուցիչ, բազում գիտամանկավարժական հոդվածների (շուրջ 150), ուսումնամեթոդական ձեռնարկների հեղինակ **Իվան Աթայանը (1931-1998):** Երախտաշատ մանկավարժի գործունեության մասին հանգամանորեն նշվում են Բ.Դավթյանի («20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժներ» (2001թ.)), Թ.Հարությունյանի («Ժողովրդական ուսուցիչը» (2001թ.)) աշխատություններում, շրջանային, մարզային պարբերական մամուլում, «Մանկավարժ», «Կրթությունը և գիտությունը Արցախում» ամսագրերում և այլ թերթերում: Սակայն Ավետարանոցի (Չանախչի) դպրոցում պահպանված արխիվային փոստաթղթերի, ժամանակակիցների հուշերի, «Խորհրդային Ղարաբաղ», «Ազատ Արցախ». «Լուսարար» թերթերում տպագրված հոդվածների ուսումնասիրության հիման վրա համառոտակի կներկայացվի նաև նրա մանկավարժական առաջավոր և ուսանելի փորձը, որոնց մասին դեռևս չի հիշատակվել:

Սկզբնական կրթությունը ստացել է Ստեփանակերտի շրջանի Ջրաղացներ գյուղի առաջին աստիճանի(տարրական) դպրոցում (1942թ.), այնուհետև սովորել Ավետարանոցի 7-ամյա դպրոցում (1942-1946թթ.), Շուշիի միջնակարգ դպրոցում (1947-1949թթ.) և ընդունվել (1949թ.) Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Ուսանողական տարիներին նրա մանկավարժական, մասնագիտական հակումների մասին գովեստով էր խոսում երկամյակի ֆիզմաթ ֆակուլտետի դեկան (1946-1953թթ.) Սարգիս Արամյանը. «Աթայանը շատ էր կարդում ոչ միայն մասնագիտական, այլև հումանիտար գրքեր և կարդացած գրքերի բովանդակությունը պատմում էր ընկերներին, համակուրսեցիներին, և ֆակուլտետի ուսանողները Աթայանի օրինակով հրապուրվում էին ինքնակրթությամբ»[535]:

Իվան Աթայանը երկամյա ինստիտուտն ավարտեց (1951թ.) առաջին կարգի դիպլոմով և երկու տարի հայրենի գյուղի դպրոցում աշխատելուց հետո չբավարարվեց երկամյա մանկավարժական կրթությամբ, խորամուխ եղավ ընտրած մասնագիտության մեջ, ավարտեց (1957թ.) Բաքվի մանկավարժական ինստիտուտի վերոնշյալ բաժինը՝ նույպես առաջին կարգի դիպլոմով:

Բազմավաստակ մանկավարժը շուրջ 50 տարի արգասավոր գործունեություն է ծավալել Ավետարանոցի միջնակարգ դպրոցում (որպես ֆիզիկայի, որոշ տարիներ նաև մաթեմատիկայի ուսուցիչ, դասղեկ), որից 33 տարի (1965-1998) աշխատել է տնօրենի պաշտոնում: Նրա տնօրինության առաջին իսկ օրից առաջնա-

հերթ խնդիր դարձավ ստեղծել և ձևավորել մանկավարժական առողջ կոլեկտիվ: Ի.Աթայանը ձգտում էր նրան, որ յուրաքանչյուր ուսուցիչ զբաղվի ստեղծագործական ակտիվ աշխատանքով, սիրով նվիրվի մանկավարժական գործունեությանը: Եվ նա այդ նպատակին հասավ իր կառավարման արդյունավետ սկզբունքների(գործողությունների համաձայնեցվածության, համագործակցության, գիտականության) ու մեթոդների (խրախուսման, համոզման, կարգադրման, օբյեկտիվ քննադատության, անձնական օրինակի) կիրառման շնորհիվ:

Բազմահմուտ մանկավարժի նրբազգացությունը, կռահելու ընդունակությունը և խոր գիտելիքները հնարավորություն են ընձեռել ժամանակին հաղթահարել հակասությունները, տարաձայնություններն ու վեճերը մանկավարժական կոլեկտիվում:

Նա պաշտպանում էր կոլեկտիվի անդամների պատիվն ու արժանապատվությունը, ցանկանում էր ազատվել բոլորին վերահսկելուց, հենվում էր ուսուցիչների և աշակերտների համագործակցության վրա: Հենց այդ համագործակցությունն էլ համարվում է ուսումնադաստիարակչական գործընթացի հիմնական առանձնահատկություններից մեկը, որի հիման վրա էլ ձևավորվում է դպրոցական առողջ կոլեկտիվ, որտեղ չեն ոտնահարվում մարդկանց պատիվն ու արժանապատվությունը և օբյեկտիվորեն գնահատվում է յուրաքանչյուր ուսուցչի կատարած աշխատանքը ամբողջ ուսումնական տարվա ընթացքում:

Տաղանդաշատ մանկավարժը, ելնելով տարիների իր հարուստ փորձից, Ավետարանոցի դպրոցում ստեղծել է ուսումնադաստիարակչական աշխատանքների կուռ համակարգ: Ըստ նրա՝ դպրոցի կրթադաստիարակչական գործընթացի հաջողությունները կախված են աշխատանքների պլանավորումից, դրանց հմուտ և օպերատիվ կոորդինացումից: Այդ միտումով էլ տնօրենի պաշտոնավարության առաջին ուսումնական տարում (1965-) մշակվել է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման՝ շաբաթական, կիսամյակային, ուսումնական տարվա, ինչպես նաև դպրոցի զարգացման հեռանկարային պլանը, որն ունի տարողունակ բովանդակություն (36 էջ): Նրա մեջ ներառվում են.

- դպրոցի կառավարման համակարգը, սկզբունքները, մեթոդներն ու գործառույթները,
- մանկավարժական կոլեկտիվի պարտականությունները,
- դպրոցի առարկայական մեթոդմիավորման հանձնաժողովների պարտականությունները,
- սովորողների հետ ուսուցչի, դասվարի, դասղեկի հաղորդակցման ոճը՝ փոխըմբռնում ուսուցիչ-դաստիարակի և աշակերտների միջև,
- դասվարին, դասղեկին ներկայացվող մանկավարժական պահանջները,
- ծնողների հետ տարվող աշխատանքի համակարգի բաղադրիչները,
- ծնողական ժողովների նախապատրաստման և անցկացման մանկավարժական տակտի կանոնները,
- դպրոցի ուսուցիչների աշխատանքի գնահատման չափանիշները,
- ուսուցչի ինքնակրթության եռամյա ուսուցման պլանը,
- ներդպրոցական վերահսկողության և ուսուցիչների գործունեության ստուգման ու գնահատման ձևերը,
- դպրոցի աշակերտական արտադրական բրիգադների (ԱԱԲ) գործունեության պլանավորման ու իրականացման եղանակները և այլն:

Այսօր էլ Ավետարանոցի դպրոցում աշխատանքային պլան կազմելիս հիմք են

ընդունում Ի.Աթայանի մշակած օրինակելի աշխատանքային պլանը: Շնորհիվ փորձառու տնօրեն Ի.Աթայանի և մանկավարժական կոլեկտիվի շնորհաշատ ուսուցիչների, դպրոցը դարձել է ոչ միայն Ասկերանի շրջանի, այլ նաև մարզի օրինակելի փորձի դպրոց:

Ժամանակակիցների (նկատի ունենք Սամվել Ղուկասյանին, Թեմուր Ամիրջանյանին, Բ.Բաղրյանին) հուշերից տեղեկանում ենք, որ նորարար մանկավարժ Աթայանի առաջավոր փորձը ընդհանրացվել է շրջանային, մարզային ուսուցչական խորհրդակցություններում և երաշխավորվել հրատարակելու որպես մեթոդական ուղեցույց մարզի դպրոցների ուսուցիչների համար: Ահա այդ նպատակով էլ ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտի կողմից հրատարակվում է նրա «Ինքնահաստատման մասին» արժեքավոր աշխատությունը, որտեղ ընդհանրացնում է իր 40-ամյա մանկավարժական արգասավոր փորձը: Պարբերաբար տպագրվում են նրա «Աշակերտների ակտիվ մտածողության զարգացումը ֆիզիկայի դասերին», «Մանկավարժական տակտի դերը ուսուցման և դաստիարակության գործում» և այլ մեթոդամանկավարժական հոդվածներ, ուղեցույցներ, որտեղ մեթոդական խորհուրդներ է տալիս ուսուցիչներին, հատկապես սկսնակ ուսուցիչներին՝ պատշաճ մակարդակով նախապատրաստվել դասերին և դասը վարել մեծ պատասխանատվությամբ՝ դասանյութը պարզաբանելիս լուրջ ուշադրություն դարձնել դժվար ըմբռնելի հարցերին, դրանք մեկնաբանել օրինակներով, փաստերով, ապացույցներով:

Բազմավաստակ մանկավարժը շուրջ կեսդարյա մանկավարժական արգասավոր գործունեության համար արժանացել է «Աշխատանքային արիության համար», «Անձնվեր աշխատանքի համար» մեդալների, մարզային կրթության բաժնի գովասանագրերի, պատվոգրերի և ԽՍՀՄ ժողովրդական ուսուցչի բարձր կոչման: Բարձր գնահատելով բազմավաստակ մանկավարժի պրակտիկ գիտամանկավարժական արգասավոր գործունեությունը, ԼՂՀ կառավարության 1998թ. որոշմամբ Ավետարանոցի դպրոցը կրում է Իվան Աթայանի անունը:

Ասկերանի շրջանի դպրոցի պրակտիկայում ճանաչված պատմության ուսուցիչ է 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ **Արմեն Ավանեսյանը (1927-2013)**: Նախնական կրթությունը ստացել է Դահրավի յոթնամյա դպրոցում (1934-1941թթ.), այնուհետև գերազանցությամբ ավարտել Շուշիի մանկավարժական ուսումնարանը (1946թ.), որպես պատմության ուսուցիչ աշխատել հայրենի գյուղում: Ավանեսյանը հեռակա կարգով ավարտել է (1956թ.) նաև Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը և նշանակվել Բաղարայի միջնակարգ դպրոցի ուսմասվար, պատմության ուսուցիչ, իսկ 1964թ.-ից մինչ թոշակի անցնելը (1994թ.) եղել է նշված դպրոցի տնօրենը:

Բազմավաստակ մանկավարժը վերին աստիճանի համեստ, գաղափարապես կոփված, հայրենասեր անձնավորություն էր: Հայրենասիրության բարձր գաղափարը եղել է նրան առաջնորդողը ամենօրյա աշխատանքում: Նա իր ժամանակակից նվիրյալ մանկավարժների նման անմնացորդ նվիրվել է իր ժողովրդին, անձնվիրաբար պայքարում էր նրա բարօրության ու հաղթանակի համար և այդ ոգով էլ դաստիարակում իր սաներին:

Ստանձնելով տնօրենի պաշտոնը, Ա.Ավանեսյանը առաջին հերթին ձևավորում է մանկավարժական առողջ կոլեկտիվ: Նրա աշխատանքային փորձն ուսումնասիրվել և տարածվել է հանրապետության դպրոցներում: Նա լավ կազմակերպիչ էր, խորհրդատու, լավ դաստիարակ, պատմության լավ մասնագետ:

Բազմավաստակ մանկավարժը շուրջ 30 տարի ղեկավարել է պատմության ու-

սուցիչների շրջանային սեկցիան, կազմակերպել մանկավարժական ընթերցումներ:

Պատմության դասավանդման մեթոդիկայի միջառարկայական կապի ապահովման հիմնահարցերին նվիրված դասախոսություններ է կարդացել շրջանային ուսուցչական օգոստոսյան խորհրդակցություններում՝ պատմության ուսուցիչների սեկցիայում, ինչպես նաև տնօրենների սեմինարներում:

Մարզի հանրակրթության ոլորտում ունեցած մեծ վաստակի համար Ա.Ավանեսյանը պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» մեդալով, արժանացել «ԽՍՀՄ ժողովրդական կրթության գերազանցիկ» կրծքանշանի, մի շարք պատվոգրերի:

Հայոց լեզվի և գրականության փորձառու ուսուցիչ, 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ **Վլադիմիր Անտոնյանին** Մարտունու շրջանում և մարզում գիտեն որպես կրթական գործի հմուտ կազմակերպչի: Ավարտելով հայրենի Գիշի գյուղի միջնակարգ դպրոցը (1948թ.), ուսումը շարունակում է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում (1948-1951թթ.): Երկամյակն առաջին կարգի դիպլոմով ավարտելուց հետո 1951թ. ընդունվել է Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիուտի բանասիրական ֆակուլտետը: Ուսումնառության տարիներին Անտոնյանը խորամուխ է եղել ընտրած մասնագիտության մեջ, ինքնակրթությամբ ձեռք բերել հարուստ գիտելիքներ և, առաջին կարգի դիպլոմով ավարտելով լեզվագրական բաժինը (1955թ.), մանկավարժական աշխատանքի անցել Մարտունու շրջանի Բերդաշենի միջնակարգ դպրոցում, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար:

50-ական թվականներին Վ.Անտոնյանը Մարտունու շրջանի կրթության բաժնում որպես դպրոցական տեսուչ աշխատում է մեծ վերելքով: Այդ տարիներին մարզում դրված էին սովորողների պարտադիր 8-ամյա կրթության խնդիրները: 1958թ. օգոստոսի 26-28-ը կայացած՝ շրջանային ուսուցչական խորհրդակցությունում Վ.Անտոնյանը «Շրջանի հանրակրթական դպրոցներում ուսման որակի բարձրացումն ու պարտադիր յոթնամյա կրթությունից պարտադիր ութնամյա կրթության իրականացման ուղիները» խորագրով իր զեկուցման մեջ նշում է. «Ութնամյա դպրոցը, որը ոչ լրիվ միջնակարգ դպրոց է, պետք է սովորողներին տա հանրակրթական ու պոլիտեխնիկական կայուն գիտելիքներ, պրակտիկ գործունեության հմտություն և դաստիարակի սեր աշխատանքի նկատմամբ»[537]:

Երկու տարի կոմերիտշրջկոմի առաջին քարտուղարի պաշտոնում աշխատելուց հետո Վ.Անտոնյանը շուրջ 30 տարի՝ 1956-1958թթ., որպես տնօրեն ղեկավարել է Գիշու միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվը՝ գիտականության, ժողովրդավարության, գործողությունների համաձայնեցվածության սկզբունքով ու համոզման, կարգապահական մեթոդներով:

Վաստակաշատ մանկավարժի բեղմնավոր գործունեությունը և հասարակական- քաղաքական աշխատանքը (եղել է նաև գյուղխորհրդի պատգամավոր) գնահատվել է ըստ արժանվույն և նշվել մի շարք պատվոգրերով ու մեդալներով:

Ասկերանի շրջանում շուրջ 50 տարի բեղմնավոր մանկավարժական գործունեություն է ծավալել 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ **Անուշավան Արամյանը (1926-1999թթ.):**

Նախնական կրթությունը ստացել է հայրենի Քյաթուկ գյուղի յոթնամյա, այնուհետև՝ Նախիջևանիկի միջնակարգ դպրոցում, ուսումը շարունակել Շուշիի (հետագայում Ստեփանակերտի) երկամյա մանկավարժական ինստիտուտի հայոց

լեզվի և գրականության բաժնում: Ավարտելով առաջին կարգի դիպլոմով, Արամյանը մանկավարժական աշխատանքի է անցում հայրենի կրթօջախում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար:

Մանկավարժական գործունեությանը զուգընթաց Արամյանը հեռակա կարգով ավարտել է նաև Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետը:

Վաստակաշատ մանկավարժը շուրջ 50 տարի բեղմնավոր գործունեություն է ծավալել Նախիջևանիկի(1952-1953թթ.), Քյաթուկի(1953-1955թթ.), Խնձրիստանի(1955-1984թթ.) միջնակարգ դպրոցներում, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար, տնօրեն: Ստեղծագործական աշխատանքով Արամյանը բարելավել է նշված դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանքները, բարձրացրել ուսման որակը:

Լինելով շրջանի կրթական համակարգում ճանաչված դեմք, Ա.Արամյանը իր մասնագիտական և մանկավարժական փորձը սիրով փոխանցել է սկսնակ ուսուցիչներին, հետաքրքրություն առաջացրել մասնագիտության նկատմամբ, կամքի ուժ դաստիարակել նրանց մեջ: Արամյանը եղել է նաև շրջանային կրթության բաժնի արտահաստիքային տեսուչ, դպրոցի «Ուսման համար» պատի թերթի խմբագիր:

Բազմավաստակ մանկավարժը շրջանի հանրակրթության ոլորտում ունեցած մեծ վաստակի համար պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով ու կառավարական պարգևներով, արժանացել «ԽՍՀՄ լուսավորության գերազանցիկ» կրծքանշանի, ուսուցիչ-մեթոդիստի կոչման:

Երեխաների նկատմամբ ունեցած սերը անցել է Հադրութի շրջանի կրթական համակարգում ճանաչված մանկավարժ **Միքայել Բալյանի (1931-...)** ամբողջ կյանքի միջով, և դա եղել է գլխավորը նրա մանկավարժական ընդունակությունների ու հայացքների զարգացման գործում: Մանկավարժական հակումների մասին, որոնք Մ.Բալյանի մեջ դրսևորվեցին դեռևս դպրոցական տարիներին, իր հուշերում անդրադարձել է ուսուցիչ Խորեն Ղազարյանը[538]:

Գերազանցությամբ ավարտելով հայրենի Մեծ Թաղլարի միջնակարգ դպրոցը, Մ.Բալյանը ուսումը շարունակում է Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում և, առաջին կարգի դիպլոմով ավարտելով այն (1954թ.), աշխատանքի անցնում հայրենի գյուղում:

Բազմավաստակ մանկավարժը կես դար (1954-2004թթ.) բեղմնավոր գործունեություն է ծավալել Մեծ Թաղլարի միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար, փոխտնօրեն և երկու տասնամյակ՝ տնօրեն: Բալյանը դպրոցում մեծ տեղ էր տալիս նախասիրական (ֆակուլտատիվ) պարապմունքներին, առարկայական խմբակներին ու աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը: Նրա օրոք դպրոցի շրջանավարտների մեծ մասը հաջողությամբ ընդունվում էր բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Վաստակաշատ մանկավարժը սկսնակ ուսուցիչների խորհրդատուն էր: Դպրոցի արխիվային նյութերից տեղեկանում ենք, որ Բալյանը՝ մանկավարժական խորհրդի նիստերում քննարկելով դասալսումների արդյունքները, մատնանշում է, որ դասի արդյունքների վերլուծությունը ենթադրում է բացահայտել ոչ միայն ուսուցչի գործողությունների օպտիմալությունը, այլև այն արդյունքները, որոնք դրսևորվում են աշակերտների ստացած գիտելիքներում:

Բազմավաստակ մանկավարժը բազմիցս հոդվածներով հանդես է եկել «Սովե-

տական Ղարաբաղ», «Սովետական դպրոց» թերթերում և «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», «Սովետական մանկավարժ» ամսագրերում:

Իր ազգանվեր ու ստեղծագործական աշխատանքի, դպրոցի ներքին կյանքում կատարած բարեփոխումների համար Մ.Բալյանը արժանացել է բազմաթիվ պատվոգրերի ու գովասանագրերի, «Ավագ ուսուցչ» և 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժի կոչումների:

Հադրութի շրջանի կրթական համակարգի զարգացման գործում մեծ երախտիք ունի 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ **Խորեն Ղազարյանը (1928թ.):** Հայրենի Տումի գյուղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակում է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում (1946-1949թթ.): Առաջին կարգի դիպլոմով ավարտելով երկամյակը, աշխատանքի է անցնում Դոլանլարի (Արևշատի) յոթնամյա դպրոցում՝ որպես ուսուցիչ, ուսմասվար: Մանկավարժական գործունեության տարիներին (1949-1951թթ.) Խ.Ղազարյանը կարողացավ բարձրացնել պատմության և աշխարհագրության դասավանդման դրվածքը, ստեղծել նշված առարկաների կաբինետներ և կահավորել դրանք դիտազննական պարագաներով: Մեզ տրամադրած իր հուշերում (16 էջ) Խ. Ղազարյանը պատմում է, որ պատմության և աշխարհագրության թեմատիկայի հետ կապված՝ էքսկուրսիաներ էր կազմակերպում դեպի շրջանի պատմական հիշարժան վայրերը: Հետագայում նշված դպրոցի շատ աշակերտներ են ընտրել մանկավարժի մասնագիտությունը՝ սիրելի ուսուցչի օրինակով ոգևորված:

Խորհրդային բանակում զինվորական ծառայությունն ավարտելուց հետո (1951-1954թթ.) Խ.Ղազարյանը շարունակում է բեղմնավոր գործունեությունը Էդիլլուի (1955-1956թթ.), Մեծ Թաղլարի (1956-1958թթ.) միջնակարգ դպրոցներում: Այդ տարիներին հեռակա կարգով ավարտում է Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը:

Բազմավաստակ մանկավարժը ստեղծագործական աշխատանքով և պրպտուն որոնումներով նորություն մտցրեց երեք տասնամյակ ղեկավարած՝ Բլութանի ութամյա (1958-1960թթ.), Աղբուլաղի միջնակարգ (1960-1982թթ.) դպրոցներում: Նրա նախաձեռնությամբ կառուցվել է Աղբուլաղի դպրոցի տիպային շենքը, կահավորվել ուսումնական կաբինետներն ու լաբորատորիաները: Անուրանալի է անվանի մանկավարժի վաստակը հատկապես դպրոցի պատմության թանգարանի ստեղծման գործում. այն ունի բազային 2000 ցուցանմուշ: Նրա մտահղացմամբ ստեղծվել է 4 ալբոմներում ձեռագիր գրված՝ Աղբուլաղի դպրոցի պատմությունը: Երկար տարիների ստեղծագործական աշխատանքի արգասիքը գյուղի սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային և գոյամարտի հիմնահարցերին նվիրված «Տումի» խորագրով գիրքն է: Խորհրդային շրջանից առայսօր պարբերական մամուլում տպագրվել են նրա 100-ից ավելի հոդվածներ:

Ըստ արժանվույն է գնահատվել վաստակաշատ մանկավարժի բազմամյա գործունեությունը. նա արժանացել է ժողովրդական կրթության գերազանցիկի կրծքանշանի, մի շարք պատվոգրերի ու գովասանագրերի:

Մարտակերտի շրջանի դպրոցի պրակտիկայում ճանաչված մանկավարժ **Սերգեյ Ղուլյանի (1929-1980)** ապրած տարիները շրջանի կրթական համակարգում բեղմնավոր մանկավարժական գործունեության, հայրենանվեր ու տքնաջան աշխատանքի տարիներ էին: Արցախի արժանի զավակը իր մարդկային վեհ հատկանիշներով եղել է ու կմնա կենդանի օրինակ շատ սերունդների համար: Չնայած կարճատև մանկավարժական գործունեություն ունեցավ (1959-1980թթ.), սակայն

մեծ երախտիք ունի շրջանի կրթական գործի զարգացման գործում:

Գերազանցությամբ ավարտելով հայրենի Առաջաձորի միջնակարգ դպրոցը (1946թ.), Ս.Ղուլյանը ծառայել է խորհրդային բանակի շարքերում (1949-1952թթ.), զորացրվելուց հետո վերադարձել հայրենի գյուղ և աշխատանքի անցել Առաջաձորի գյուղական սպառողական կազմակերպությունում՝ որպես հաշվպահ:

Չբավարարվելով միջնակարգ կրթությամբ, Ղուլյանը 1954թ. ընդունվում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Առաջին կարգի դիպլոմով ավարտելով համալսարանը, վերադառնում է և աշխատանքի անցնում գյուղի դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար: Այդ պաշտոնում աշխատելու տարիներին (1964-1980թթ.) նրա մանկավարժական մտահղացումների և ստեղծագործական աշխատանքի շնորհիվ բարձրացվեց հայոց լեզվի և գրականության դասավանդման և դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման դրվածքը: Նրա նախաձեռնությամբ դպրոցում ստեղծվում է դպրոցական գրական ընկերություն, որում ընդգրկվում էին ոչ միայն Առաջաձորի, այլև հարակից գյուղերի բարձր դասարանների աշակերտներն ու հայոց լեզվի և գրականության ուսուցիչները:

Ղեկավարելով դպրոցի հայոց լեզվի և գրականության մեթոդմիավորումը, Ս.Ղուլյանը յուրաքանչյուր ուսումնական տարվա կիսամյակներում կազմակերպում է փնջային (միջդպրոցական) բաց և փոխադարձ դասալսումներ Առաջաձորի, Ծմակահողի, Վանքի, Շահմասուրի դպրոցներում և արդյունքների մասին զեկուցումներով հանդես գալիս օգոստոսյան ուսուցչական խորհրդակցություններում: Նա բազմիցս հոդվածներով հանդես է եկել ոչ միայն շրջանային ու մարզային, այլև Հայաստանի պարբերական մամուլում:

Բազմավաստակ մանկավարժը ոչ միայն մարզի, այլև Հայաստանի մշակույթի ոլորտում ճանաչված մտավորական էր, անզուգական ստեղծագործող: Արգասավոր մանկավարժական գործունեության, շրջանի կրթական համակարգի զարգացման գործում ունեցած ծառայությունների համար արժանացել է կառավարական պատվոգրերի ու գովասանագրերի[539]:

Մարտակերտի կրթական գործի նվիրյալ կազմակերպիչներից է 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ **Ռաֆայել Բաղդասարյանը (1930թ.):** Նախնական կրթությունը ստացել է հայրենի Գյուլաթաղ (Վարդաձոր) գյուղի յոթնամյա դպրոցում (1938-1945թթ.), այնուհետև գերազանցությամբ ավարտել է Կուսապատի միջնակարգ դպրոցը (1948թ.), ուսումը շարունակել Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի բնագիտական ֆակուլտետի քիմիա-կենսաբանության բաժնում: Առաջին կարգի դիպլոմով ավարտելով ինստիտուտը, մանկավարժական աշխատանքի է անցնում հայրենի գյուղի կրթօջախում՝ որպես քիմիա-կենսաբանության ուսուցիչ, ուսմասվար:

1952-1960թթ. Բաղդասարյանը հասարակական քաղաքական գործունեություն է ծավալում. եղել է «Սոցիալիզմի ուղիով» շրջանային թերթի պատասխանատու քարտուղար (1925-1953թթ.), կոմերիտշրջկոմի քարտուղար (1953-1957թթ.), Մարտակերտի շրջխորհրդի գործկոմի քարտուղար (1957-1961թթ.): Նա հատկապես բեմնավոր գործունեություն է ծավալել 1960-1980-ական թվականներին և Արցախյան շարժման տարիներին՝ մինչև 1994թ.:

Շրջանի կրթական համակարգում աշխատելու տարիներին Ռ.Բաղդասարյանը շուրջ 35 տարի եղել է ղեկավար պաշտոններում: Հեռակա կարգով ավարտել է Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի աշխարհագրության ֆակուլտետը և նշանակվել Ջանյաթաղի ութնամյա դպրոցի տնօրեն (1961-

1964թթ.), այնուհետև աշխատանքի է հրավիրվել շրջանի կրթության բաժին, որտեղ որպես դպրոցական տեսուչ, մեթոդկաբինետի վարիչ, շրջանի լուսավորության աշխատողների արիկոմի նախագահ աշխատել է 1964-1988թթ., իսկ 1988-1994թթ.աշխատել է Մարտակերտի շրջժողկրթբաժնի վարիչի պաշտոնում:

Իր հուշերում Մարտակերտի շրջժողկրթբաժնի վարիչ Ռաֆայել Ահարոնյանը, անդրադառնալով Ռ.Բաղդասարյանի գործունեությանը, գրում է, որ բազմամյա գործունեության տարիներին իրեն դրսևորել է որպես գործիմաց, սկզբունքային, շրջանի կրթական գործի անցյալին ու ներկային քաջատեղյակ անձնավորություն:

Մեծ ու արգասավոր վաստակի համար Ռ.Բաղդասարյանը արժանացել է Ադր. ԽՍՀ լուսավորության գերազանցիկի կրծքանշանի, մի շարք պատվոգրերի ու գովասանագրերի:

Մարտակերտի շրջանի կրթական գործի նշանավոր կազմակերպիչներից է **Արիս Պողոսյանը (1930-1995թթ.)**: Գերազանցությամբ ավարտելով հայրենի Առաջածորի միջնակարգ դպրոցը (1949թ.), ուսումը շարունակել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում և առաջին կարգր դիպլոմով ավարտելով այն (1951թ.), աշխատանքի անցել Նախիջևանի մարզի Օրդուբադի շրջանի հայկական Բիստ գյուղի յոթնամյա դպրոցում, որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ, ուսմասվար:

Խորհրդային բանակի շարքերում ծառայելուց հետո (1952-1954թթ.) վերադարձել է հայրենի երկրամաս, շարունակել մանկավարժական գործունեությունը Մարտակերտի շրջանի Չայլու գյուղի միջնակարգ դպրոցում, որպես նշված առարկաների ուսուցիչ (1954-1956թթ.): Այդ տարիներին հեռակա կարգով ավարտել է նաև Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը:

Ժամանակակիցների հուշերը վկայում են, որ Ա.Պողոսյանը շուրջ 38 տարի տնօրենի պաշտոնում աշխատել է շրջանի Կոճողոտի (1956-1959թթ.), Հարգոմերի (1959-1962թթ.), Քոլատակի (1962-1965թթ.), Առաջածորի (1965-1992թթ.) դպրոցներում:

Բազմավաստակ մանկավարժի վաստակը ըստ արժանվույն է գնահատվել: Նա արժանացել է Ադր. ԽՍՀ լուսավորության գերազանցիկի կրծքանշանի, պարգևատրվել «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով, կառավարական մի շարք պատվոգրերով ու գովասանագրերով:

Ինչպես վկայում են արխիվային փաստագրական նյութերը, ժամանակակիցների հուշերը և այլ աղբյուրներ, բացի վերոնշյալ վաստակաշատ մանկավարժներից, ուսումնասիրվող ժամանակաշրջանում եղել են նաև շատ անվանի մանկավարժներ, որոնք, չնայած ժամանակաշրջանի խեղդուկ մթնոլորտին, Ադրբեջանի կառավարության ազգահալած քաղաքականությանը, հաղթահարել են բազում դժվարություններ և մեծ մաքառումներով անձնվիրաբար կրթել ու դաստիարակել հայ մանուկներին, թողել մանկավարժական հարուստ ժառանգություն, որն ուսանելի է նաև այսօրվա հայեցի կրթություն տվող դպրոցի մանկավարժական կոլեկտիվների համար:

Թող ների մեզ հարգարժան ընթերցողը, որ ուսումնասիրության բնույթից ելնելով հնարավոր չէ մանրամասնորեն ներկայացնել նրանց կենսագրություններն ու մանկավարժական գործունեությունը: Կարծում ենք, որ դա հետագայի առանձին ուսումնասիրության նյութ է:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ (1920-1988թթ.)

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Լեռնային Ղարաբաղում, Հայաստանի կրթական համակարգում ձեռք բերված եռամյա փորձի հիման վրա (1920-1923թթ.), արմատականորեն վերափոխվեց նախկին բազմատիպ կրթական համակարգը: ԼՂ հեղկոմի որոշմամբ, բոլոր տիպի ուսումնական հաստատությունները տրվեցին նորաստեղծ լուսժողկոմատի իրավասությանը, հոգևոր հաստատությունները (եկեղեցական, ծխական, վանական դպրոցներ, հոգևոր ուսումնարաններ) վերափոխվեցին աշխարհիկ ուսումնական հաստատուեյնների: Ինչպես նշեցինք, կրթական համակարգի բազմատիպությունը վերափոխվեց (որը գոյություն ուներ 5-րդ դարից մինչև 20-րդ դարի սկիզբը) և ստեղծվեց միասնական նոր կրթական համակարգ: Չնայած ժողովրդական կրթության գործը վերակառուցելու աշխատանքները տեղի էին ունենում չափազանց ծանր պայմաններում, կրթական հաստատությունները ապահովված չէին նյութական միջոցներով, հատկապես որակյալ ուսուցչական կադրերով, բավականին լուրջ խոչընդոտներ էին ստեղծվել առողջապահության, ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում, չկային համապատասխան մասնագետներ, այնուամենայնիվ, հետևողականորեն իրականացվում էին պահանջվող աշխատանքները:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ ուղղությամբ ազգաշահ առաքելությամբ հայրենասիրական մեծ աշխատանք էին ծավալում Լեռնային Ղարաբաղի հեղկոմը և նորաստեղծ լուսժողկոմի ղեկավարներ Արշավիր Քամալյանը, Լևոն Վարդունին, Առաքել Առաքելյանը և ուրշներ: Արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ 1923թ. օգոստոսի 20-ին լուսժողկոմի կոլեգիայի նիստում ունեցած իր զեկուցման մեջ լուսժողկոմ Արշավիր Քամալյանը մատնանշում է, որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզում միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների կազմակերպումն ամենից առաջ պայմանավորված էր մարզի քայքայված տնտեսության վերականգնման, արդյունաբերության և ժողովրդական կրթության, տնտեսության հրատապ խնդիրների կենսագործմամբ: Հիմք ընդունելով լուսժողկոմի որոշման դրույթները, մարզային, շրջանային կրթության բաժինների ղեկավարները մարզում կադրերի մեծ պահանջը բավարարելու նպատակով, ակտիվ աշխատանք տարան ընդլայնելու նաև միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանցը: Լուսժողկոմի որոշմամբ մարզում գործող երկրորդ աստիճանի հանրակրթական դպրոցներից շատերը վերակառուցվեցին և սկսեցին մասնագետ կադրեր պատրաստել ժողովրդական կրթության, տնտեսության, առողջապահության և այլ ոլորտների համար:

Արխիվային փաստաթղթերի, պարբերական մամուլում տպագրված հոդվածների, ժամանակակիցների հուշերի, սկզբնաղբյուրների, վաստակաշատ մանկավարժների անձնական արխիվային փաստաթղթերի և այլ նյութերի ուսումնասիրումը հնարավորություն է ընձեռել սոցիալ-տնտեսական հարաբերությունների, քաղաքական իրադարձությունների համատեքստում, պատմաքննական վերլուծություններով համառոտակի ներկայացնել միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների (Շուշիի մանկավարժական ուսումնարանի, գյուղտեխնիկումի, երաժշտական ուսումնարանի, բժշկական ուսումնարանի)

բեղմնավոր գործունեությունը:

Ուսումնասիրության բնույթից ելնելով, ժամանակագրական կարգով համառոտակի ներկայացնենք վերոնշյալ ուսումնական հաստատությունների բեղմնավոր գործունեությունը պատմության երեք շրջափուլերում՝ նախապատերազմյան շրջանում (1920-1940թթ.), Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում (1941-1945թթ.) և հետպատերազմյան տարիներին (1946-1988թթ.):

1. Միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների կազմակերպումը և բարեփոխումների իրականացումը կրթության համակարգում (1920-1940թթ.)

1.1. Շուշիի մանկավարժական ուսումնարանի հիմնադրման նախապայմանները և գիտակրթական գործունեության զարգացման միտումները (1920-1940թթ.)

Շուշիի մանկավարժական ուսումնարանի պատմության առաջին ուսումնասիրողները եղել են սույն աշխատության համահեղինակ Գրիգորի Հարությունյանը և ուսումնարանի նախկին տնօրեն Ալբերտ Խաչատրյանը[540]: Սակայն դա առաջին փորձն էր և աշխատության հեղինակները չէին կարող տալ ուսումնական այդ հաստատության գործունեության և ներքին կյանքին վերաբերող բոլոր հարցերի գիտական սպառիչ պատասխանը:

Վերստին ուսումնասիրելով արխիվային նյութերը, ժամանակակիցների հուշերը, հատկապես ուսումնարանի դասախոսների անձնական արխիվային փաստաթղթերը և մամուլում տպագրված հոդվածները, շարժառիթ եղավ նորահայտ փաստագրական տվյալների հիման վրա պատմամանկավարժական քննական վերլուծություններով համառոտակի ներկայացնել ԼՂԻՄ-ում առաջին միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատության հիմնադրման նախապայմանները, երկու տասնամյակում (1920-1940թթ.) և հետագա ժամանակներում իրականացված բարեփոխումները գիտակրթական համակարգում:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մինչև 1920թ. Արցախի թեմի բազմատիպ դպրոցների համար միջին մասնագիտական որակավորում ունեցող կադրեր էին պատրաստում Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցը, ռեալական ուսումնարանը և Մարիամ Ղուկասյան օրիորդաց միջնակարգ ուսումնական հաստատությունը: Միջին մասնագիտական ուսումնական հաստատություն հինադրելու և դպրոցների համար որակյալ մանկավարժական կադրեր պատրաստելու հույժ կարևոր հարցերին են անդրադառնում դեռևս 1915թ. Շուշիում լույս տեսած «Փայլակ» թերթի աշխատակիցներ հասարակական-քաղաքական, մշակութային,կրթության ականավոր գործիչներ Աշոտ Հովհաննիսյանը, Առաքել Առաքելյանը, Լևոն Վարդունին, Խորեն Մանվելյանը և ուրիշներ: «Փայլակ» թերթի մարտի 8-ի թիվ 6-ում տպագրված «Դպրոցական ռեֆորմ»[541] վերնագրով հոդվածում Լևոն Վարդունին առաջարկում է հայկական դպրոցների համար (նկատի ուներ նաև Նուխի գավառի և այլ հայաշատ վայրերի հայկական դպրոցները) պատրաստել բարձրորակ ուսուցչական կադրեր և այդ նպատակով էլ հայոց մշակութային կենտրոն Շուշի քաղաքում հիմնադրել նոր տիպի՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, որտեղ կուսումնասիրեն մանկավարժահոգեբանական առարկաները: Առաքել Առաքելանը, որպես Արցախի թեմի դպրոցական տեսուչ (1912-1916թթ.) թերթի 9-րդ համարում տպագրված իր հոդվածում («Դպ-

ոոցական գործի վիճակը Լեռնային Ղարաբաղում 1913-1915թթ.») ներկայացնում է Արցախի թեմի (նաև Նուխի գավառի) դպրոցների ընդհանուր բնութագիրը և համոզիչ փաստերով ներկայացնում նաև դպրոցներում դասավանդող ուսուցչական կադրերի մասնագիտական որակը, որն արտահայտվում էր գիտելիքների ցածր մակարդակով: Ուսուցիչների աշխատանքի թույլ կողմերի վերլուծությանը նվիրված հոդվածներում հայրենասեր գործիչները անհրաժեշտ են համարում կազմակերպել վերապատրաստման դասընթացներ թեմական դպրոցում, ռեալական ուսումնարանում, հետագայում՝ նորաբաց մանկավարժական ուսումնարանում:

Չնայած Ղարաբաղում տիրող սոցիալ-տնտեսական, քաղաքական բարդ իրադրությանը, նրանք Շուշիի առաջադեմ մտավորականության աջակցությամբ անմիջապես ձեռնարկեցին այն բոլոր միջոցառումների կենսագործումը, որոնք անհրաժեշտ էին մանկավարժական ուսումնարանի բացման համար: Իսկ ի՞նչ հանգամանքներում է մանկավարժական կադրեր պատրաստող դարբնոցը հիմնադրվել: Արխիվային փաստագրական նյութերի[542], անհրաժեշտ սկզբնաղբյուրների, «Խորհրդային Ղարաբաղ» թերթի 1922-1923թթ. [543] համարներում տպագրված հոդվածների ուսումնասիրությունները վկայում են, որ 1920թ. ռեալական ուսումնարանի փակումից հետո ռեալականի շենքում գործող երկաստիճան հանրակրթական դպրոցը 1921-1922 ուստարում վերափոխվում է ուսուցչական սեմինարիայի, իսկ 1922-1923 ուստարում՝ մանկավարժական ուսումնարանի, դառնալով ռեալական ուսումնարանի իրավահաջորդը:

Պատմամանկավարժական գրականության և փաստագրական այլ նյութերի քննական վերլուծությունները ցույց են տվել, որ Արցախում նոր տիպի՝ երկրորդ աստիճանի մասնագիտական դպրոցների լայն ցանցը, նրանց հետագա զարգացումը և տարբեր մասնագիտությունների գծով բարձրորակ կադրերի պատրաստումը հնարավորություն ստեղծեցին կազմակերպելու նաև մի շարք միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ, որոնք կարևոր դեր խաղացին Արցախում օրըստօրե զարգացող ժողկրթության, տնտեսության և մշակույթի տարբեր բնագավառների համար միջին որակավորման մասնագետներ պատրաստելու գործում:

Հայաստանում, սակայն, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների կազմակերպումը տեղի է ունեցել այլ ձևով: Նախ ստեղծվել է բարձրագույն ուսումնական հաստատությունը, նոր միայն միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունը: Դա բացատրվում է նրանով,որ Հայաստանում բարձրագույն ուսումնական հաստատությունում աշխատելու համար կային բարձրորակ դասախոսական կադրեր: Ինչպես նշում է ԼՂ լուսժողկոմ Արշավիր Քամալյանը, Լեռնային Ղարաբաղում միջնակարգ մասնագիտական ուսումնական կրթօջախների կազմակերպումն ամենից առաջ պայմանավորված էր մարզի քայքայված տնտեսության վերականգնման, արդյունաբերության ու ժողովրդական կրթության, տնտեսության տարբեր ճյուղերի հետագա զարգացման հրատապ խնդիրների կենսագործմամբ [544]:

Մասնագետ կադրերի մեծ պահանջը բավարարելու նպատակով մարզում ընդլայնվեց միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների (տեխնիկումների, ուսումնարանների) ցանցը: Նույնիսկ երկրորդ աստիճանի դպրոցներից շատերը վերակառուցվեցին և սկսեցին մասնագետ կադրեր պատրաստել ժողովրդական կրթության, տնտեսության տարբեր բնագավառների համար:

Վերոնշյալ աղբյուրների և արխիվային տվյալների համաձայն, քննարկվող ժամանակաշրջանում Արցախի մշակութային կենտրոն Շուշիում, ռեալական

ուսումնարանի և թեմական դպրոցի փակումից հետո միակ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունը Շուշիի մանկավարժական տեխնիկումն էր, որը ոչ միայն ուսուցչական կադրեր էր պատրաստում Արցախի հայկական դպրոցների համար, այլև դարձել էր Արցախի կրթամշակութային, հասարակական-քաղաքական շարժումների, առաջավոր մտավորականների կենտրոն: Երկրամասի առաջադեմ մտավորականների նախաձեռնությամբ այստեղ պարբերաբար քննարկվում և առաջ էին քաշվում արցախահայության մշակութային կյանքին, լուսավորությանը, կրթությանն առնչվող բազմաբնույթ հարցեր:

Շուշիի մանկավարժական տեխնիկումը իր հիմնադրման առաջին ուստարում անվանվում էր մանկավարժական ուսումնարան, 1923-1930-ական թվականներին՝ տեխնիկում, այնուհետև կրկին վերանվանվում է ուսումնարան, իսկ այժմ՝ Արսեն Խաչատրյանի անվան հումանիտար ուսումնարան, որի պատմությունը կներկայացվի աշխատության երրորդ հատորում՝ 1988-2015թթ.: Իր հիմնադրման առաջին տարիներին ապրել է բավականին ծանր օրեր: Նրա գործունեության սկզբնական շրջանում ամենալուրջ դժվարությունը նյութատեխնիկական միջոցներով, անհրաժեշտ հարմարություններով, համապատասխան մասնագիտական որակավորում և տեսական պատրաստվածություն ունեցող կադրերով ապահովումն էր:

Արշավիր Քամալյանի զեկուցագրերում կարդում ենք, որ մանկավարժական տեխնիկումը իր հիմնադրման առաջին օրից վայելել է արցախահայության սերն ու հարգանքը, և կարող անձինք տեխնիկումի կայացման համար բազմաթիվ նվիրումներ են կատարել:

Համարձակորեն կարող ենք ասել, որ այն ժամանակ և իր հետագա բեղմնավոր գործունեության շրջանում Շուշիի մանկավարժական տեխնիկումը, մանավանդ սկզբնական ժամանակաշրջանում, իրապես լինելով համարյա միակ քիչ թե շատ բարեկարգ ուսումնական հաստատությունը Արցախում, դեպի իրեն էր ձգում հայ պատանիներին երկրամասի հեռավոր վայրերից:

Փաստագրական նյութերի ուսումնասիրությունից տեղեկանում ենք, որ Շուշիի մանկավարժական տեխնիկումի գոյության երկու տասնամյակում որակական փոփոխություններ են կատարվել թե՛ դիմորդների ընդունելության, թե՛ կառավարման համակարգում և թե՛ ներքին կյանքում՝ ուսուցման կազմակերպման առաջավոր մեթոդների կիրառման, դասավանդման որակի բարձրացման, ինչպես նաև դաստիարակչական և հանրօգուտ աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: Այսպես, օրինակ, ԼՂ լուսժողկոմ Ա.Քամալյանը (հետագայում՝ 1930-1932թթ., դասավանդել է մանկավարժական ուսումնարանում)1923-1924 ուստարվա իր հաշվետվության մեջ փաստում է, որ Շուշիի մանկավարժական տեխնիկումն ուներ երկու բաժին (հայկական և քրդական)՝ 144 ուսանող, 12 ուսուցիչ[545]:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մանկավարժական տեխնիկումի առաջին երկու տարիներին ուսանողների թիվը տատանվել է 100-120-ի միջև: Տեխնիկումի առավելություններից մեկն էլ այն էր, որ այստեղ, նախորդ ժամանակաշրջանի դպրոցների համեմատ, ուսումը ձրի էր: Տարբեր ֆոնդերի հաշվին սովորողների զգալի մասը ստանում էր նպաստ(հատկապես ծնողազուրկ և բազմազավակ ընտանիքների երեխաները), թոշակ և այլ կարգի օգնություն: Տեխնիկումի վարչության (տնօրինության) կարգադրությամբ ջանասեր, առաջադեմ սովորողների մի մասը ստանում էր դրամական օժանդակություն և պարգևներ՝ գրքեր: Մանկավարժական ներգործության այս միջոցների կիրառումը հեռավոր հայկական վայրերից ու Նուխի գավառից եկած հայ երեխաներին հնարավորություն է

տվել ստանալու միջնակարգ մասնագիտական կրթություն: 1922-1923 ուստարում մանկավարժական տեխնիկումը տվել է առաջին շրջանավարտները, որոնք անձնվեր աշխատանք են կատարել ինչպես մարզի, այնպես էլ նրանից դուրս գտնվող հայաշատ վայրերի քայքայված տնտեսության վերականգնման, անգրագիտության վերացման տարիներին: Որոշ հետաքրքրություն են ներկայացնում նաև մանկավարժական տեխնիկումի սովորողներին տրված մանկավարժական բնութագրերը: «Խորհրդային Ղարաբաղ» թերթի տարբեր համարներից և այլ աղբյուրներից տեղեկանում ենք, որ մանկավարժական բնութագրերում նշվում են ամեն մի սովորողի առաջադիմությունը, կարգապահությունը, թվանշանները և այլն: Օրինակ՝ «Գերազանց սովորող է և կարգապահ», «Բավականին ջանասեր է», «Հարգալից վերաբերմունք ունի իր ընկերների, ուսուցիչների նկատմամբ», «Գոհ ենք վարքից», «Դեպի լավը փոփոխության նշույլ անգամ չկա, օր-օրի վատանում է» և այլն:

Ինչպես տեսնում ենք, այստեղ լուրջ փորձ էր արվում հետազոտելու սովորողների ուսումնական, նյութական հնարավորությունները, կենցաղային պայմանները, առանց որի հնարավոր չէր մանկավարժական ճիշտ մոտեցում ունենալ ուսանողների նկատմամբ, պարզել այն պայմանները, որոնք անդրադառնում են նրանց վարքի ու առաջադիմության վրա: Ի դեպ, նշենք, որ մանկավարժական ներգործության այս միջոցներն ու հնարները ժամանակին կիրառվել են նաև Շուշիի թեմական դպրոցում, ռեալական ուսումնարանում և ուսանելի է նաև այսօր միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատությունների համար: Գտնում ենք, որ ուսումնական հաստատությունում յուրաքանչյուր ուսանողի համար անհրաժեշտ է բովանդակալից ձևով կազմել մանկավարժական բնութագրեր, որտեղ մանրամասնորեն արձանագրվի ուսանողի գործունեությունը և ավարտական կուրսերում ընդհանրացվի ու տրվի համապատասխան որակավորում:

Ուսումնասիրության արդյունքների վերլուծության հիման վրա քննարկենք նաև մանկավարժական տեխնիկումի գործունեության սկզբնական շրջանում մանկավարժական խորհրդի կազմավորման, ժողովրդավարական սկզբունքով ուսումնական հաստատության կառավարման ու ղեկավարման, կանոնադրության մշակման և ներքին կարգուկանոնի հետ կապված այլ հարցեր:

Մանկավարժական տեխնիկումն առաջին երկու տարիներին ուսմանն ու դաստիարակությանը, ներքին կյանքին վերաբերող հարցերի քննարկման համար հրավիրում էր ուսուցիչների (մանկավարժական) խորհուրդ, որին մասնակցելու էին հրավիրում նաև լուսժողկոմ Արշավիր Քամալյանին, Շուշի քաղաքի հասարակայնության ներկայացուցիչներին, վաստակաշատ մանկավարժների և ծնողների: Այսպիսով, ինչ-որ չափով սկիզբ էր դրվում տեխնիկումի կառավարման նոր ձևին, որը հետագայում ավելի է կատարելագործվում:

Հայտնի է, որ ժամանակաշրջանի քաղաքական անբարենպաստ պայմանների հետ կապված, ազգային կրթական համակարգում գործող ուսումնական այդ կրթօջախը գտնվում էր Ադրբեջանի լուսժողկոմի իրավասության տակ, իսկ անմիջական ղեկավարումը իրականացնում էին Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմն ու տեխնիկումի վարչությունը (տնօրինությունը) և նրան կից գործող խորհուրդը:

Մանկավարժական տեխնիկումի ղեկավարությունը լուսժողկոմի առաջատար մասնագետներից կազմում է մասնագիտական հանձնաժողով, ընդունում դասավանդող ուսուցիչների, կազմակերպում դասալսումներ, ստուգում նրանց մասնագիտական պատրաստվածությունը, ուսումնական տարվա վերջին ստուգում սովորողների առաջադիմությունը տվյալ առարկայից: Կուրսից-կուրս տեղափոխե-

լու համար տրվում էին համապատասխան վկայագրեր, իսկ առաջադեմ սովորողները պարգևատրվում էին գրքերով:

Տեխնիկումի մանկավարժական խորհրդի նիստերում (1922-1923թթ.) քննարկվում էին ուսուցիչների ատեստավորման, ուսանողների ընդունելության, ուսումնական պլանների, ծրագրերի մշակման, ուսումնական դասագրքերի ապահովման, գրադարանային ֆոնդի ստեղծման, կարգապահության և բազմապիսի այլ հարցեր: Քննարկվում և հաստատվում էր տեխնիկումի ժամանակավոր կանոնադրությունը, որը մշակվել էր լուսժողկոմի և տեխնիկումի փորձառու մասնագետների ջանքերով: Նրանում սահմանվում էր տեխնիկումում սովորողների և ուսուցիչների իրավունքներն ու պարտականությունները, սովորողների վարքի, տեխնիկումի ներքին կարգապահության կանոնները, աշխատանքների կազմակերպման և այլ հարցեր:

ԼՂ լուսժողկոմ Առաքել Առաքելյանի 1926-2927 ուստարվա հաշվետվությունից տեղեկանում ենք, որ տեխնիկումի գործունեության առաջին տասնամյակում (1921-1930թթ.) որոշակի փոփոխություններ են կատարվել նրա ներքին կյանքում և կառավարման համակարգում:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կանոնադրության համաձայն՝ մանկավարժական տեխնիկումը անմիջականորեն ենթարկվում էր Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմատին: Այն կառավարում էր վարիչը, իսկ անհրաժեշտության դեպքում սահմանվում էր նաև փոխվարիչի պաշտոն: Ըստ կանոնադրության՝ տեխնիկումի վարիչին իրավունք էր վերապահված.

1. մանկավարժական խորհրդի նիստում քննության առնել ուսման պլանների նախագծերը և ներկայացնել առաջարկություններ,
2. քննել տեխնիկումի տարեկան կամ կիսամյակային պլանը, տարեկան հաշվետվությունը, ուսանողների ընդունելության, առաջադիմության և փոխադրման հարցերը,
3. հաստատել առարկայական և այլ հանձնաժողովների կազմը,
4. նշանակել ուսումնաօժանդակ և ուսումնաարտադրական բաժինների վարիչների,
5. աշխատանքի հրավիրել դասատուների՝ նրանց թեկնածությունները նախօրոք համաձայնեցնելով լուսժողկոմատի հետ:

Կանոնադրության համաձայն ստեղծվում էր տեխնիկումի խորհուրդ, որի կազմի մեջ մտնում էին.

1. մանկավարժական տեխնիկումի վարիչը,
2. նրա օգնականը (փոխվարիչը),
3. ուսումնաօժանդակ հիմնարկությունների և բաժանմունքների վարիչները,
4. տեխնիկումի բոլոր դասատուները, լաբորանտներն ու հրահանգիչները,
5. արհեստակցական միության տեղկոմի ներկայացուցիչը,
6. յուրաքանչյուր կուրսից մեկ ուսանող,
7. ուսանողական գործադիր բյուրոյի (խորհրդի) ներկայացուցիչը,
8. կուսակցության շրջկոմի մեկական ներկայացուցիչը,
9. գավլուսբաժնի ներկայացուցիչը,
10. գավառական կոմիտեի ներկայացուցիչը:

Նոր կանոնադրության հիմնադրույթները մշակվել են դպրոցի ու մանկավարժության ասպարեզի անվանի դործիչներ Առաքել Առաքելյանի (ԼՂ լուսժողկոմ), Գուրգեն Էդիլյանի (ԼՂ սոցդաստիարակչության վարչության նախագահ), Շավարշ և Լևոն Վարդունիների, Նիկողայոս Հովհաննիսյանի (ԼՂ դպրոցների գլխա-

վոր տեսուչ, դասավանդում էր տեխնիկումում) անմիջական մասնակցությամբ: Կանոնադրությունը հիմք ծառայեց Լեռնային Ղարաբաղում միջնակարգ մասնագիտական կրթության մեկ միասնական համակարգ ստեղծելու համար:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ չնայած միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունը կազմակերպվել է 1921-1922 ուստարվանից, սակայն նրա միասնական համակարգը հիմնադրվում է 1927թ.՝ վերոհիշյալ կանոնադրությունը հաստատվելուց ու գործողության մեջ դրվելուց հետո:

1929-1930 ուստարում ընդունվում է միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների նոր կանոնադրություն, որի համաձայն տեխնիկումներն ու ուսումնարանները այլևս չեն կոչվում երկրորդ աստիճանի դպրոցներ, ինչպես նշված է 1926թ. ընդունված կանոնադրության մեջ, այլ՝ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ:

Սկսած 1930-ական թվականներից, Շուշիի մանկավարժական տեխնիկումը վերափոխվեց ուսումնարանի: Ինչպես հանրակրթական դպրոցների, այնպես էլ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների անցած ուղին հարթ չի եղել: Հնարավորությունները սահմանափակ էին, միջոցները՝ սուղ, շենքերը՝ անմխիթար վիճակում, քիչ էին դասարանները, բարձրորակ ուսուցիչների խիստ կարիք էր զգացվում: Այդ հարցին անդրադարձավ 1923թ. Ստեփանակերտում հրավիրված՝ Լեռնային Ղարաբաղի ուսուցչական առաջին համագումարը, որտեղ առաջարկվեց կազմակերպել երկամյա մանկավարժական դասընթացներ՝ բարձրացնելու ուսուցիչների մեթոդամանկավարժական պատրաստվածության որակը: Այդ դասընթացներն են անցել հետագայում ճանաչված ուսուցիչներ Վարդուհի Շահնազարյանը, Ստ.Ստեփանյանը, Պողոս Պողոսյանը, Բախշի Տեր-Գրիգորյանը, Ռ.Ղուկասյանը:

1930-ական թվականներին Շուշիի մանկավարժական ուսումնարանը թևակոխել է զարգացման նոր փուլ, որն արմատապես տարբերվում էր նախորդ շրջանից ամենից առաջ ուսման բովանդակության կատարելագործման, ուսման որակի, դաստիարակչական աշխատանքերի կազմակերպման, մանկավարժական կոլեկտիվը բարձրորակ կադրերով համալրելու, ինչպես նաև մանկաբանության բացասական ազդեցությունների հաղթահարման և այլ հարցերում:

Այդ շրջանում ուսումնարանի գործունեության մեջ որակական փոփոխություններ կատարելու գործում կարևոր նշանակություն ունեցան Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմի ընդունած, ինչպես նաև Հայաստանի լուսժողկոմից ստացված որոշումներն ու հրահանգները, որոնք մարզի բոլոր միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների զարգացման ուղենիշ հանդիսացան:

Այդ գործընթացի համար հատկապես կարևոր նշանակություն ունեցավ Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմի կոլեգիայում 1931-1932 ուստարում քննարկված և ընդունված «Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցներում, տեխնիկումներում, ուսումնարաններում ուսումնական դաստիարակչական աշխատանքների որակի բարձրացման մասին» որոշումը, որի համաձայն առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում մանկավարժական կադրերի որակի բարձրացման, ուսումնարանի առարկայական հանձնաժողովների աշխատանքների կատարելագործման, ընդունելության կանոնների փոփոխման (հիմնականում ընդունել բարձր գիտելիքների տեր դիմորդների), կիսամյակային, տարեվերջի քննությունների, ստուգարքների սահմանման (ավելորդ չծանրաբեռնել), գերազանցիկ, հարվածային, միջակ սովորող ուսանողներին թոշակավորման (ըստ կարգի) և ուսումնարանի ներքին կյանքին առնչվող այլ հարցերի: Ընդհանրություն ու մի-

ասնականություն էր ստեղծվում Լեռնային Ղարաբաղի բոլոր միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսման տևողության, ուսումնական տարին սկսելու և ավարտելու ժամկետների, կիսամյակների ու քննությունների (ստուգարքների) սահմանման, թոշակավորման և կազմակերպական այլ հարցերում:

«Խորհրդային Ղարաբաղ» թերթի 1931-1932թթ. համարներում տպագրված հոդվածներից տեղեկանում ենք, որ 30-ական թվականներին մարզում կային 4 տեխնիկում, 2 ուսումնարան (մանկավարժական և բժշկական)՝ մոտ 2000 սովորողներով: Մասնագետ կադրերի պատրաստման հարցում հատկապես մեծ էր Շուշիի մանկավարժական ուսումնարանի և Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի դերը: Ս.Ավագյանի «Էջեր Լեռնային Ղարաբաղի կուլտուրկրթական կյանքի պատմությունից» աշխատության տվյալներով՝ 1932-1933 ուստարում մանկավարժական ուսումնարանի հայկական, ադրբեջանական և քրդական բաժիններում աճեց սովորողների թիվը՝ յուրաքանչյուր բաժնում 25-ից ավելի, իսկ դասավանդող ուսուցիչներինը՝ 42[546]:

Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմ Ար.Վարդանովը (1929-1943թթ.) մատնանշում է այն փաստը, որ Շուշիի մանկավարժական ուսումնարանը բավականին լուրջ աշխատանք է տարել նաև մարզում անգրագիտությունը վերացնելու ուղղությամբ: Արխիվային տվյալների համաձայն, 1931-1932 ուստարում մարզում 8-10 տարեկան երեխաների 98 տոկոսը և 11-12 տարեկան երեխաների 95 տոկոսը արդեն ընդգրկվել էր համապատասխան դպրոցներում:

Ստորև ներկայացվում են ԼՂ կրթական համակարգի մեջ մտնող ուսումնական հաստատությունների, մանկապարտեզների, լիկկայանների թիվը, սովորողների, դասավանդող ուսուցիչների կազմը 1930-1934թթ.:

Հավելված 1

Ուսումնական հաստատությունների տիպերը	քանակը	սովորողների թիվը	ուսուցիչների թիվը
Մանկավարժական ուսումնարան	1	367	42
Նրան կից՝ բանֆակ	1	64	6
Ստեփ.գյուղ.տեխնիկում	1	230	26
Երաժշտական ուսումնարան	1	82	12
Բժշկական ուսումնարան	1	112	12
Երաժշտ. ուսումնարան Շուշիում (ադրբեջանական)	1	94	15
Կոմերիտդպրոց(Կ.Ե.Դ.)	2	130	18
Երեկոյան կուս.դպրոց	3	215	17
9-ամյա դպրոց	5	1500	82
7-ամյա դպրոց	3	390	38
1-ին աստիճանի դպրոց	165	2478	282
Ընդհ. միջն.դպրոց	2	75	8
Ֆեզդ	1	84	6
Մանկատուն	2	150	11
Մանկապարտեզ	6	340	15
Լիկկայան	803	2500	21
Ընդամենը՝	**998**	**31054**	**613**

Աղյուսակում բերված են մոտավոր տվյալներ, քանի որ արխիվային փաստաթղթերում և այլ աղբյուրներում բերված տվյալները իրար հակասում են: Ցավոք, ուսումնասիրվող շրջանում 1930-1934թթ. ուսումնարանի մասին շատ չնչին տվյալներ են պահպանվել:

Շուշիի մանկավարժական ուսումնարանի շրջանավարտ, պրոֆեսոր Մելքում Մելքումյանի անձնական արխիվային փաստաթղթերից[547] և այլ աղբյուրներից տեղեկանում ենք, որ 1936-1937 ուստարում մանկավարժական ուսումնարանը ղեկավարում էր թեմական դպրոցի շրջանավարտ Սամվել Խաչատրյանը:

Հաշվի առնելով ուսումնարանի հայկական բաժանմունքում մանկավարժական կադրերի սուր պահանջը, մարզժողկրթբաժնի կրթական գործի հմուտ կազմակերպիչ, դպրոցական տեսուչ Շավարշ Վարդունու ջանքերով դասախոսական աշխատանքի հրավիրվեցին հայ անվանի մտավորականներ, որոնք եկան հայրենի երկրամասում լուսավորչական աշխատանքներ կատարելու, պատանիներին ու աղջիկներին կրթելու, պատրաստակամությամբ: Նրանց շարքերում էին անվանի մանկավարժներ Սամվել Շինականյանը, Կարո Դավթյանը, Գուրգեն Գևորգյանը, Արշակ Նահապետյանը, Նադյա Վարդապետյանը, Աշոտ Շահրամանյանը, Օ.Այվազյանը, Ա.Միրզոյանը, Խ.Հարությունյանը, Նիկոլայ Եպիսկոպոսյանը, ԻսկուհիՀակոբյանը, Սուրեն Համբարձումյանը, Ելիզավետա Հովհաննիսյանը, Բագրատ Պողոսյանը, Ազիզբեկ Հակոբյանը, Արտաշես Ղուլյանը և ուրիշներ:

1936-1937 ուստարում Շուշիի մանկավարժական ուսումնարանի երեք բաժիններում (հայկական, ադրբեջանական, քրդական) սովորում էին 420-460 ուսանող, դասավանդում 27-ից ավելի ուսուցիչներ[548]:

Ուսումնարանն իր պատմության երկրորդ շրջանում մեծ հաջողությունների է հասել վաստակաշատ մանկավարժ Արսեն Խաչատրյանի օրոք (փոխարինել է Ռուբեն Խաչատրյանին՝ 1937-1938 ուստարվա տնօրեն):

Արսեն Խաչատրյանի անձնական արխիվային փաստաթղթերում[549] պահպանված հաշվետվությունների, գրառումների, մանկավարժական խորհրդի նիստերի արձանագրությունների և ժամանակակիցների հուշերի ուսումնասիրություններից տեղեկանում ենք, որ անվանի մանկավարժը իր գործունեության առաջին ուսումնական տարում (1938-1939) դրսևորում է կոլեկտիվը ղեկավարելու վարպետություն, ղեկավարին յուրահատուկ հետևողականություն ու պահանջկոտություն:

Հմուտ տնօրենը մանկավարժական կոլեկտիվի մասնակցությամբ մշակում է ուսումնարանի մանկավարժական խորհրդի նոր կանոնադրություն: Որակական փոփոխություններ են կատարվում ուսումնադաստիարակչական աշխատանքերը արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուսումնարանի հիմնադրման առաջին տարիներին պարբերաբար հրավիրվում էին մանկավարժական խորհրդի նիստեր, քննարկվում հաստատության ուսումնական գործընթացին, ներքին կյանքին վերաբերող բազմաբնույթ հարցեր: Օրինակ, 1924-1925 ուստարվա մարտ ամսվա մանկավարժական խորհրդի որոշմամբ փորձառու դասախոսների կողմից (Ար.Քամալյան,Առ.Առաքելյան, Գ.Էդիլյան, Լևոն Վարդունի և ուրիշներ) մի շարք միջոցառումներ են իրականացվել ուսումնարանում ուսումնական գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու ուղղությամբ.

1. Մշակվել է ուսումանարնի ուսումնադաստիարակչական աշխատանքերի կազմակերպման պլանը:

2. Որոշվել են ուսումնարանի նպատակները, խնդիրները, ինչ արդյունքների

են հասել և ինչ արդյունքների է ձգտում հասնել ուսումնարանի կոլեկտիվը:

3. Որոշվել են դրանց հասնելու պայմաններն ու ձևերը, պլանավորվել է, թե ինչ պետք է արվի այդ խնդիրների լուծման ուղղությամբ և այլն:

Մանկավարժական ուսումնարանի ուսումնական աշխատանքների ծավալը որոշվում է նրա ներքին ուղղվածությամբ, նպատակներով, խնդիրներով, կրթության բովանդակությամբ, սկզբունքներով ու մեթոդներով, խորությամբ ու հասարակական կյանքում նրա դերով:

Ուսումնարանի պատմության տարբեր փուլերում ուսուցման բովանդակությունը և եղանակները փոխվել են նպատակների փոփոխությանը համընթաց: Փոխվել ու կատարելագործվել են ուսումնարանի պլանները, ծրագրերը, դասագրքերը, ուսուցման ձևերն ու մեթոդները՝ պայմանավորված ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական, մշակույթի, գիտության զարգացման մակարդակով և այլ հանգամանքներով: Կրթության բովանդակությունը կախված էր կյանքի պահանջներից, անցյալի ավանդույթներից, մանկավարժական կադրերի գիտելիքների մակարդակից, ուսումնարանի տիպից և աստիճանից, նպատակներից ու խնդիրներից և այլ հանգամանքներից:

Նոր կանոնադրության համաձայն՝ ուսումնական պլաններն ու ծրագրերը գործածության մեջ էին մտնում 1922-1923 ուստարում: Այդ պլաններն ու ծրագրերը ժամանակի առումով հանդիսանում էին օրինակելի: Դրանք պահանջում էին հատուկ ուշադրություն դարձնել բնական և հասարակական գիտություններին:

Ուսումնական պլանի վերլուծությունը ցույց է տվել, որ Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցների, ինչպես նաև միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրեր կազմելու աշխատանքը ղեկավարել է ՀԽՍՀ լուսժողկոմատի (ադրբեջանական խմբի համար՝ Ադր. ԽՍՀ լուսժողկոմատի) սոցիալական դաստիարակության գլխավոր վարչության ակադեմիական սեկցիան, որն ստեղծվել է 1921թ. աշնանը: Սեկցիան ծրագրեր մշակելու համար կազմել է հատուկ հանձնաժողովներ՝ ընդգրկելով տվյալ առարկայի լավագույն մասնագետներին՝ Տ.Ռաշմաճյանին, Մ.Աբեղյանին, Արս.Տերտերյանին, Արշ.Մեհրաբյանին, Մ.Աղայանին, Ռոմանոս Մելիքյանին (երգի ծրագրի հեղինակ) և ուրիշների:

Ուսումնարանի ուսումնական պլանում պատշաճ տեղ է հատկացվել մայրենի լեզվին, ռուսաց լեզվին, պատմությանը, մաթեմատիկային, հասարակագիտությանը, աշխարհագրությանը և արվեստին: Ընդ որում,ուսումնական առարկաները դասավանդվել են շաբաթվա հինգ օրում, իսկ վեցերորդ օրը հատկացվել է արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներին: Այդ օրը կազմակերպվել են տարբեր միջոցառումներ՝ էքսկուրսիաներ, հանդեսներ, արշավներ: Կիրակի օրը հայտարարվել է հանգստյան օր: Սահմանվել է դասաժամերի 45 րոպե տևողություն, մեկ երկժամյակ՝ 90 և ընդմիջում 15-20 րոպե տևողությամբ:

Ուսումնական պլանում նախատեսված առարկաներին հատկացվել է առաջին խմբում՝ 36, երկրորդում՝ 38, երրորդում՝ 38 և չորրորդում՝ 38 ժամ: Ուսումնական տարվա ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է 150-156 ժամ:

Այսպիսով, վերը նշված ուսումնական պլանը, իր թերություններով հանդերձ, եղել է 20-ական թվականների մանկավարժական ուսումնարանի լավագույն պլաններից մեկը:

Առաջնորդվելով ՀԽՍՀ լուսժողկոմատի 1921թ.մշակած կանոնադրության դրույթներով, ԼՂ լուսժողկոմը առաջատար մասնագետներ Ար.Քամալյանի, Ս. Տեր-Ղուկասյանի, Բ.Թորոսյանի և ուրիշների մասնակցությամբ, կազմում է ման-

կավարժական ուսումնարանի առարկայական ծրագրեր, որոնցում մեծ տեղ է հատկացվում բանասիրական, բնագիտական ու մաթեմատիկական առարկաների ուսուցմանը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մանկավարժական ուսումնարանի պատմության երկու տասնամյակում հասարակության զարգացման, գիտության նվաճումներին համահունչ ոչ միայն փոխվել են ուսումնական պլանները, ծրագրերն ու դասագրքերը, այլև արմատական փոփոխություններ են տեղի ունեցել նաև ուսումնադաստիարակչական աշխատանքերի կազմակերպման ձևերի ու մեթոդների մեջ, ինչպես նաև արտադասարանական և արտադպրոցական հանրօգուտ աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:

1938-1939 ուստարում ուսումնարանի երեք բաժիններում սովորում էր 600-ից ավելի ուսանող: Դասավանդող ուսուցիչներից 28-ը հայեր էին:

Լայն աշխատանք է տարվում նաև մանկավարժական կադրերի վերապատրաստման ու ատեստավորման (վերաորակավորման) ուղղությամբ: Սակայն 1939-1940 ուստարում ձեռք բերված աննախադեպ նվաճումները ընդհատվեցին՝ պայմանավորված 1941թ. հունիսի 22-ին սկսված պատերազմով:

1.2. Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի գործունեությունը 1920-1940թթ.

Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության հաստատումից հետո մարզի ժողովրդական տնտեսության վերականգնման ու հետագա զարգացման համար անհրաժեշտ էին միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթությամբ կադրեր ինչպես ժողովրդական կրթության, այնպես էլ տնտեսության ու պետական կառավարման բնագավառում: 1923թ. օգոստոսի 26-ին լուսժողկոմի կոլեգիայի նիստում նորանշանակ լուսժողկոմ Ա.Քամալյանը մատնանշում է, որ Լեռնային Ղարաբաղին անհրաժեշտ են որակյալ կադրեր, որոնք կարողանային նոր պայմաններում արտադրություն կազմակերպել, գյուղական խորհուրդներ ղեկավարել, վճռել այն խնդիրները, որ առաջ է քաշում կյանքը: Ահա այդ ժամանակ էլ խնդիր դրվեց Լեռնային Ղարաբաղում հիմնադրել գյուղատնտեսական տեխնիկում, որը տվյալ ժամանակաշրջանում հիմնահարցի վճռման հնարավոր ամենախելացի մոտեցումն էր: Ինչպես այն ժամանակ լուսժողկոմի տեղակալ (հետագայում՝ լուսժողկոմ) Առաքել Առաքելյանն է ասել, ուսումնական այդ հաստատությունը պետք է դառնա մարզում գյուղատնտեսական կադրերի պատրաստման դարբնոց: Կոնկրետ այդպիսի որոշում կայացվեց 1923թ.սեպտեմբերին[550]:

Փաստագրական նյութերի և այլ աղբյուրների ուսումնասիրությունները[551] վկայում են, որ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղեր որակյալ կադրերով ապահովելու նպատակով 1923թ. նոյեմբերի 1-ին Ստեփանակերտում հիմնադրվում է Ալ.Ծատրյանի անվան գյուղատնտեսական տեխնիկումը: Այն առաջին տարում ուներ 2 բաժանմունք (անասնաբուժական և մեխանիկական), 2 դասարան, 48 աշակերտ, 6 ուսուցիչ: Ուսումնական այդ հաստատությունը դարձավ Լեռնային Ղարաբաղում գյուղատնտեսական կադրերի պատրաստման դարբնոց:

Աստիճանաբար ձևավորվեց ու համալրվեց տեխնիկումի մանկավարժական կոլեկտիվը: Առաջին տնօրեն նշանակվեց Սանկտ Պետերբուրգի գյուղատնտեսական բարձրագույն դպրոցի շրջանավարտ, փորձառու մանկավարժ և ուսումնա-

դաստիարակչական աշխատանքերի հիանալի կազմակերպիչ Արսո Հովհաննիսյանը: Նա 1918-1923թթ. բնագիտական առարկաներ էր դասավանդել Շուշիի ռեալական ուսումնարանում, որտեղ և կազմակերպել է բնագիտության կաբինետ, փորձնական դասեր և այդ ուսանելի փորձը տարածել նաև նորաստեղծ ուսումնական հաստատությունում:

ԼՂ լուսժողկոմ Ա.Քամալյանի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ 1924թ. Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումին կից կազմակերպվել է նաև առաջին գիշերօթիկ դպրոցը, որտեղ սովորում էր 40 աշակերտ: Արսո Հովհաննիսյանի մանկավարժական տաղանդն ու կազմակերպչական հմտությունները դրսևորվեցին նաև գիշերօթիկ դպրոցում:

Գյուղատնտեսական տեխնիկումի առաջին ուսուցիչներն էին Շուշիի թեմական դպրոցի և ռեալական ուսումնարանի շրջանավարտներ Վարդան Վարդապետյանը, Արտեմ Բաբայանը, Կարապետ Թիունիբեկյանը,Արմենակ Ստեփանյանը, Օլգա Տարասենկոն և ուրիշներ:

Սկզբնական շրջանում բավական դժվարություններ ստեղծվեցին տեխնիկումի համար: Չկային նյութատեխնիկական անհրաժեշտ բազա, հարմար շենք, հանրակացարան: Պարապմունքներն անց էին կացվում տեղական կայազորի զինվորական հոսպիտալի շենքում: 1924-1925թթ. ավելանում են տեխնիկումի աշակերտների և ուսուցիչների թիվը, դասասենյակները, աշխատասենյակները, ստեղծվում է նյութատեխնիկական բավարար բազա, բարձր հիմքերի վրա է դրվում ուսումնադաստիարակչական աշխատանքերի կազմակերպումը:

Ահա Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի 1924-1925 ուստարում սովորողների և ուսուցիչների կազմը՝ ըստ շրջանների

Աղյուսակ 23

դասարան	սովորողների կազմը ըստ սեռի			ըստ շրջանների				Ղարաբաղի շրջանից դուրս
	ար.	իգ.	ընդամենը	Խաչենի շրջ.	Վարանդայի շրջ.	Դիզակի շրջ.	Զրաբերդի շրջ.	
1-ին	39	9	48	10	11	10	7	1
2-րդ	28	11	39	10	17	7	4	1
3-րդ	25	4	29	9	6	5	5	2
4-րդ	20	7	27	7	10	1	1	-
ընդամենը	112	31	143	36	44	17	17	4

Արդեն 1926-1927 ուստարում տեխնիկումը տվեց իր անդրանիկ շրջանավարտները՝ թվով 21 հոգի: Տարեցտարի խտացան արտադրություն ուղարկված մասնագետների շարքերը: Շատերը ուսումը շարունակեցին բարձրագույն ուսումնական հաստատություններում, մի մասը գերադասեց ուսուցչություն անել դպրոցում, շատերն առաջ քաշվեցին ղեկավար պաշտոններում: Գյուղտեխնիկումն իր պատրաստած տեխնիկական, գյուղատնտեսական, անասնաբուժական կադրերով կարևոր դեր խաղաց Լեռնային Ղարաբաղի ժողտնտեսության զարգացման գործում: Ժողտնտեսության մեջ գնալով աճեց միջին որակի մասնագիտական կադրերի պահանջը և տարեցտարի ավելացավ տեխնիկումի ընդունելության կոնտինգենտը, բացվեցին նոր բաժիններ:

Եթե 20-ական թվականներին տեխնիկումում սովորում էր 150-160 ուսանող, ապա 1930-ական թվականներին վերջերին այդ թիվը հասավ 200-ի: Ուսումնական հաստատությունը երկու տասնամյակում տվել է 400-ից ավելի շրջանավարտներ, անասնաբույժ՝ 112, անասնաբույծ՝ 110, տեխնիկ-մեխանիկ՝ 96, տեխնիկ-էլեկտրիկ՝ 98: Ժամանակաշրջանի ժողտնտեսության պահանջների բավարարման առումով մասնագետ կադրերի նկատմամբ պահանջը չի նվազել: 1940-ական թվականներին, պատերազմի նախօրյակին, երկրամասում ստեղծվել էին այնպիսի արտադրաճյուղեր, որոնք իրենց հերթին մասնագետ կադրերի պահանջներ էին ներկայացնում:

Գյուղտեխնիկումի բեղմնավոր գործունեության տարիներին (1923-1940թթ.) մանկավարժական կոլեկտիվը համալրվել է Երևանից, Թբիլիսիից, Բաքվից, Մոսկվայից, Լենինգրադից և այլ վայրերից հրավիրված բարձրագույն կրթությամբ մանկավարժներով: Տեխնիկումի մանկավարժական կոլեկտիվի երախտավորներից են ԼՂ լուսժողկոմ, ռուսաց լեզվի ուսուցիչ Ար.Քամալյանը,Սամսոն Բարսեղյանը, գրականագետ, բանաստեղծ Գրիգոր Ներսիսյանը, Սարգիս Օսիպովը, Լևոն Մովսիսյանը, Ներսես Բաբայանը, Վարդան Վարդապետյանը, Արշակ Ղուկասյանը, Էմմա Ալթունյանը, Վաղարշակ Գրիգորյանը,Վաչագան Գրիգորյանը, Լևոն Օհանջանյանը, Գևորգ Դավթյանը և ուրիշներ:

Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի բեղմնավոր գործունեությունը ընդհատվեց Հայրենական պատերազմի ժամանակաշրջանում, ուսումնադաստիարակչական աշխատանքերը վերափոխվեցին պատերազմական պայմաններին համապատասխան (այդ մասին կնշվի հաջորդ բաժնում):

1.3. Ստեփանակերտի երաժշտական ուսումնարանի գործունեությունը 1923-1940թթ.

Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության հաստատման առաջին տարում հասարակական-մշակութային կյանքում տեղի ունեցած իրադարձություններից մեկը եղավ Ստեփանակերտ քաղաքում երաժշտական ուսումնարանի հիմնադրումը: Հայտնի է, որ մինչև 1920թ. Շուշիի թեմական դպրոցում և ռեալական ուսումնարանում լայն տեղ էր տրվում երաժշտական առարկաների դասավանդմանը՝ շնորհիվ անվանի երաժշտագետներ Ստեփան Դեմուրյանի (1872-1934), Գրիգոր Միրզոյանի (Սյունի, 1876-1939), Սպիրիդոն Մելիքյանի (1881-1938) և ուրիշների եռանդուն գործունեության[552]: Նրանք իրենց կարճատև գործունեության տարիներին ոչ միայն թեմական դպրոցում և ռեալականում, այլև Արցախի թեմի մյուս դպրոցներում բարձր հիմքերի վրա դրեցին երաժշտության դասավանդման դրվածքը, և այդ ավանդույթը շարունակվեց 1920-ական թվականներին: Մարզում երաժշտական կենտրոնի ստեղծման շարժառիթը արցախահայության ընդհանուր գեղագիտական և մշակութային բարձր մակարդակն էր:

Ինչպես նկատել են հայ երաժշտության դասականները, արվեստի ուսումնական հաստատությունը առանց երաժշտական մասնագիտացման դժվար է պատկերացնել: Ահա թե ինչ է գրել տաղանդավոր կոմպոզիտոր, երաժշտագետ Արամ Խաչատրյանը այդ մասին. «Երաժշտությունը, ինչպես որ արվեստի ամեն մի տեսակ, հայացքը ապագային՝ իր ետևից տանում է մարդկանց: Երազանքը ծնվում է այնտեղ, որտեղ հեռաստաններ են բացվում…»[553]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեծահռչակ կոմպոզիտոր ու երաժշտագետ Ռոմանոս Մելիքյանը ձեռնամուխ է եղել Հայաստանում, նրա

արևելյան հատվածում Արցախում, երաժշտական կրթության օջախների հիմնադրման գործին: 1921թ. աշնանը նրա ջանքերով ու անմիջական նախաձեռնությամբ կազմակերպվում է Երևանի երաժշտական ուսումնարանը: Օժտված լինելով կազամակերպչական աշխատանքի մեծ ընդունակություններով ու փորձով՝ Ռոմանոս Մելիքյանը գտնում է, որ անհրաժեշտ է երաժշտական հայկական կրթօջախներ բացել նաև Ղարաբաղում, ինչպես նաև ռուսահայ համայնքի հայկական գաղթօջախներում: Ավելին, ըստ նրա. «Առանց երաժշտական հասարակության չի կարող զարգանալ ստեղծագործական միտքը, առանց պահանջի չի կարող լինել արտադրանք: Նախ պիտի պատրաստել երաժշտությունը սպառողներին, որից հետո միայն ստեղծագործական միտքը առաջ կընթանա հախուռն թափով»[554]:

Անուրանալի է Ռոմանոս Մելիքյանի դերը նաև Ղարաբաղում հայկական առաջին երաժշտական կրթօջախի հիմնադրման, երաժշտական կուլտուրայի հետագա զարգացման գործում: Մեծ արվեստագետը խորապես համոզված էր, որ ժողովրդի մշակույթը, այդ թվում նաև երաժշտական արվեստը բարձրացնելու համար նախ և առաջ անհրաժեշտ է կրթել ու դաստիարակել բարձր կուլտուրայի որակյալ մասնագետներ, որոնք սեփական ժողովրդի մշակույթից բացի պիտի տիրապետեն նաև համաշխարհային ճանաչում ունեցող արվեստագետների գործերին:

Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմ Առաքել Առաքելյանը «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի լուսժողկոմատի 1925-1926 ուստարում կատարած աշխատանքների մասին» հաշվետվությունում ընդհանրացնելով հանրակրթական դպրոցների վիճակը, նշում է նաև, որ այդ ուստարում Ստեփանակերտում գործում էր 3 տեխնիկում՝ մանկավարժական, գյուղատնտեսական և երաժշտական: Վերջինս հիմնադրվել է 1924թ. աշնանը՝ անվանի երաժշտագետ Ռոմանոս Մելիքյանի նախաձեռնությամբ: Սկզբնական շրջանում այնտեղ սովորում էր 84 ուսանող,որից 61-ը՝ աղջիկ, դասավանդում էր 3 ուսուցիչ: Հենց առաջին պարապմունքը կազմակերպում է մեծ երաժշտագեր Ռոմանոս Մելիքյանը: 1925-1926 ուստարում սովորողների թիվը հասնումէ 174-ի, որից 104-ը՝ հայեր, իսկ մնացածը՝ այլազգի (ռուսներ, հույներ, ադրբեջանցիներ)[555]:

Երաժշտական ուսումնարանի ստեղծման առաջին տարիներին շենքային և նյութատեխնիկական անհրաժեշտ պայմանների բացակայության պատճառով ուսումնական պարապմունքները անց էին կացվում Ստեփանակերտի թիվ 1 դպրոցում՝ երեկոյան ժամերին: Ուսումնարանում մասնագիտական առարկաների հետ միասին դասավանդվում էին նաև հանրակրթական առարկաներ (հայոց լեզու և գրականություն, պատմություն, ռուսաց լեզու, մաթեմատիկա, թվաբանություն, հասարակագիտություն)՝ միջնակարգ դպրոցի ծրագրով:

Այսպիսով՝ Լեռնային Ղարաբաղում երաժիշտ կադրերի առկայությունը հնարավորություն տվեց էլ ավելի աշխուժացնելու «Պատմական, ազգային, ավանդական համերգ-զրույցներ»-ի ելույթները, որոնք սիստեմատիկ բնույթ էին կրում և, բացի Ստեփանակերտից, կազմակերպվում էին նաև շրջաններում: Ուշագրավ է նաև այն, որ ապագա երաժշտագետների մեջ դեպի հարազատ ժողովուրդը սեր առաջացնելու և նրանց գիտելիքները հայրենիքին ի սպաս դնելու նպատակով ուսումնարանի սովորողներն իրենց ուսուցիչների հետ միասին մեկնում էին հեռավոր շրջաններ՝ Նուխի, Շամախի, Բաքու և հայաշատ այլ վայրեր՝ ինքնագործ խմբեր ղեկավարելու, համերգներով հանդես գալու և աշխատավոր մասսաներին սպասարկելու համար: Այդ աշխատանքները հատկապես լայն թափ էին ստանում ազգային տոնակատարությունների նախօրյակին և տոնախմբությունների օրե-

ին: Հազարավոր հայ աշխատավորներ, մի պահ մոռանալով իրենց տառապանքները, երգում էին ու անօրինակ խրախճանքով լցնում բազմամարդ հրապարակը, մեծ հարգանք ու սեր տածում Արցախում երաժշտական կրթօջախի հիմնադիր-ռահվիրա Ռոմանոս Մելիքյանի նկատմամբ:

Առանձնահատուկ կարևորություն տալով աճող սերնդի գեղագիտական դաստիարակության և երաժշտական կրթության զարգացման խնդիրներին՝ երաժշտական ուսումնարանի դերի ու նպատակների վերաբերյալ իր տեսակետը հայտնելիս ԼՂ լուսժողկոմ Առաքել Առաքելյանը մատնանշել է, որ ուսումնարանի սովորողները գիտելիքներով զինվելու և իրենց ստեղծագործական ունակությունները զարգացնելու նպատակով ակտիվորեն մասնակցում էին համերգներին, թատերական ներկայացումներին, դպրոցներում կազմակերպում ցուցահանդեսներ, երգի ու պարի խմբակներ, իսկ ամառային արձակուրդներին՝ համերգներ:

1938-1939 ուստարում երաժշտական ուսումնարանում սովորում էր 100-ից ավելի ուսանող, դասավանդում 8-10 ուսուցիչ: Այն հետագայում փակվեց և նորից վերաբացվեց՝ վերանվանվելով Աղդամի երաժշտական ուսումնարանի մասնաճյուղ: Եվ միայն 1967թ. ԼՂԻՄ մտավորականության ջանքերի շնորհիվ Ստեփանակերտի երաժշտական ուսումնարանը ձեռք բերեց ինքնուրույն կրթական միավորի կարգավիճակ (այդ մասին կնշվի հաջորդ բաժնում):

1.4. Ստեփանակերտի բժշկական ուսումնարանի գործունեությունը 1923-1940թթ.

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղում մասնագետ կադրերի պահանջը բավարարելու նպատակով էլ ավելի ընդարձակվեց միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ ցանցը, հատկապես 1930-ական թվականներին: Մարզում առաջնահերթ խնդիր դարձավ նաև բուժսպասարկման գործի նորովի կազմակերպումը և բարելավումը: Մինչև 1930-ական թվականները հանրակրթական դպրոցի շրջանավարտներից շատերը միջնակարգ մասնագիտական և բարձրագույն բժշկական կրթություն էին ստանում Հայաստանի, Ռուսաստանի և արտասահմանյան այլ երկրների բուհերում, ուսումնարաններում և, վերադառնալով հայրենի երկրամաս, անձնվիրաբար ծառայում ժողովրդի բուժսպասարկման գործին (այդ մասին նշվել է աշխատության առաջին հատորում):

Լեռնային Ղարաբաղում բժշկական, ինչպես նաև մյուս մասնագիտությունների գծով բարձրագույն ուսումնական հասատությունների պակասի պատճառով մասնագետների պատրաստումը կատարվում էր միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում:

1920-ական թվականների վերջերին առաջնահերթ նշանակություն ունեին մարզի բնակչության բուժսպասարկման գործի բարելավումը և որակյալ կադրերի պատրաստումը: Այդ նպատակով 1932թ. սեպտեմբերի 1-ին Ստեփանակերտի քաղաքային առաջին բուժկետի (ծննդատան) բազայի վրա կազմակերպվեց բժշկական տեխնիկումը(այն 1958թ. վերանվանվեց ուսումնարան), որն այսօր ԼՂ Հանրապետության խոշոր միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններից մեկն է և մի շարք մասնագիտությունների գծով պատրաստում է միջին որակավորման բուժկադրեր (բուժքույրեր, բուժակներ, բուժակ-լաբորանտներ, սանիտար-բուժակներ, մանկաբարձներ, դեղագործներ և այլն):

Ուսումնարանի հիմնադրման տարում այնտեղ սովորում էին 37 պատանիներ

և աղջիկներ, դասավանդում 6 բժիշկներ, այնուհետև ավելացավ սովորողների և դասավանդողների թիվը:

Ուսումնարանի հիմնադրման և նրա հետագա բեղմնավոր գործունեության ընթացքում կարևոր դեր են կատարել Անդրկովկասի հանրապետություններ մայրաքաղաքներից հրավիրված ճանաչված բժիշկներ, թերապևտ Սամսոն Անաստասյանը(առաջին տնօրենը), վիրաբույժներ Մ.Ասրյանը, Ա.Աստվածատրյանը, թերապևտներ Ս.Աղամալյանը, Ա.Հայրապետյանը, մանկաբույժ Մ.Օկոևան և շատ ուրիշներ: Վերոնշյալ բժիշկները աշխատում էին համատեղության կարգով՝ մարզային հիվանդանոցում և տեխնիկումում:

1935-1936 ուստարում բժշկական ուսումնարանը տվեց իր առաջին շրջանավարտները: Հանդիսավոր պայմաններում դիպլոմներ և սպիտակ խալաթներ հանձնվեցին 22 շրջանավարտների: Առաջին շրջանավարտների թվում էին Նիկոլայ Մովսիսյանը, Ծաղիկ Դանիելյանը,Բենիամին Քարամյանը, Լիդա Վարդանյանը, Սիրան Բարսեղյանը և ուրիշներ[556]:

Մինչև Հայրենական մեծ պատերազմի սկիզբը բուժուսումնարանն արդեն շրջանավարտների 6 սերունդ էր տվել: Բուժաշխատողների շարքերը համալրել են 472 բուժակներ, մանկաբարձներ և բուժքույրեր: «Ազատ Արցախ» թերթի 2002թ. հոկտեմբեր ամսվա համարներից մեկում տպագրված «Բուժուսումնարան. այստեղ ուսուցանվում է ապրեցնելու դաս» խորագրով հոդվածում բժշկուհի Իրինա Ղուկասյանը նշում է, որ բժշկական ուսումնարանի սաների գործնական աշխատանքը գյուղերում տեղի բնակչության կողմից բարձր էր գնահատվում: Նրանց հարգում էին և հավատում նրանց հրաշագործ ձեռքերի զորությանը:

Ուսումնարանի հիմնադրման երկրորդ տարում մարզի բնակավայրերում բացվեցին բուժմանկաբարձական կետեր և մարդկանց հիշողություններից իսպառ դուրս վանվեց ավանդական բուժման հեքիմական ու սնոչիական հոգեբանությունը:

Այսպիսով, նախապատերազմյան շրջանում բժշկական ուսումնարանի մանկավարժական կոլեկտիվը քրտնաջան աշխատանք էր կատարում միջին որակի բժշկական կադրերի պատրաստման և վերապատրաստման գործում: Գնալով ավելանում էր ուսումնարանում սովորողների թիվը:

2. Միջնակարգ մասնագիտական կրթությունը Լեռնային Ղարաբաղում Հայրենական պատերազմի տարիներին (1941-1945թթ.)

Լեռնային Ղարաբաղի միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունները մեծ դեր կատարեցին Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Չնայած պատերազնի դաժան օրերին հանրակրթական դպրոցների,միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների կոլեկտիվների համար ստեղծված դժվարին և բարդ պայմաններին, այնուամենայինվ, մարզային, շրջանային կրթության բաժինների ղեկավարների եռանդուն գործունեության շնորհիվ մանկավարժական կադրերի ու սովորողների հերոսական ջանքերով ոչ միայն անխափան շարունակվում էին ուսումնական պարապմունքները դպրոցներում, միջին որակի կադրերի պատրաստումը, այլև միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների կոլեկտիվները զգալի դեր էին կատարում հայրենիքին բազմակողմանի օգնություն ցույց տալու գործում:

Արխիվային փաստաթղթերի, պարբերական մամուլում տպագրված հոդված-

ների, ժամանակակիցների հուշերի, սկզբնաղբյուրների, վաստակաշատ մանկավարժների անձնական արխիվային փաստաթղթերի և այլ նյութերի ուսումնասիրությունների հիման վրա համառոտակի ներկայացնենք՝

• Մարզի միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների խնդիրները Հայրենական պատերազմի տարիներին:

• ԼՂ Լուսժողկոմի ուրշումները, կանոնակարգերը ուսումնական հաստատությունների ներքին կյանքի ժամանակավոր փոփոխությունների մասին:

• Փոփոխությունները ուսումնական պլաններում ու ծրագրերում:

• Ուսումնադաստիարակչական աշխատանքերը պատերազմի տարիներին:

• Մանկավարժական կադրերի հայրենասիրական գործունեությունըՀայրենական պատերազմի տարիներին և այլ հարցեր:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Շուշիի մանկավարժական ուսումնարանի կոլեկտիվը, ուսանողները ակտիվ մասնակցություն ունեցան հայրենիքի պաշտպանության համար մղվող մարտերին և թիկունքում տարվող աշխատանքներին:

Ռազմաճակատ մեկնած հազարավոր ղարաբաղցիների շարքերում էին Շուշիի մանկավարժական ուսումնարանի հարյուրավոր հայրենասեր ուսուցիչներ, ուսանողներ Շաբո Մուսայելյանը, Վահան Հարությունյանը, Թեմուր Ամիրջանյանը, Նիկոլայ Երեմյանը, Հովսեփ Բաղունցը, Չերքեզ Դավթյանը, Բոգդան Ջանյանը, Մելքում Մելքումյանը, Բախշի Սիմոնյանը, Մուշեղ Բալայանը, Ահարոն Գրիգորյանը, Արամ Մարտիրոսյանը, Սերգեյ Շաքարյանը, Սեգեյ Խալատրյանը, Եսայ Եսայանը, Արտաշես Պողոսյանը, Ռաֆիկ Մովսիսյանը, Գաբրիել Գաբրիելյանը, Վարդան Բալայանը, Վերդի Խաչատրյանը, Ավետիս Ավետիսյանը, Սերգեյ Բալայանը, Հովհաննես Շեկյանը և շատ ուրիշներ:

Պատերազմի հենց առաջին իսկ օրերից, երբ տղամարդիկ մեկնել էին ռազմաճակատ և տնտեսությունը մնացել էր ծերերի ու կանանց հույսին, շատ ուսանողներ ստիպված էին թողնել ուսումնարանը: Տեսնելով, որ վտանգվում է 750-ի հասնող ուսանողական և ուսուցչական կոլեկտիվների ճակատագրերը, տնօրեն Արսեն Խաչատրյանը կոլեկտիվի միջոցներով ստեղծեց տնտեսություն, որի հաշվին բացեց ճաշարան և սովից փրկեց ուսանողներին, կարիքավոր ուսուցիչներին և Շուշիի հայաբնակ ընտանիքներին, և, ամենակարևորը, ուսումնարանը չփակվեց:

Չնայած երիտասարդ սերնդի կրթության ու դաստիարակության համար ստեղծված ծանր պայմաններին, այնուամենայնիվ, մանկավարժական կոլեկտիվը հայրենասիրական նախաձեռնությամբ շարունակեց եռանդուն ու քրտնաջան աշխատանքով կոփել երիտասարդ մանկավարժ մասնագետներին, մեծ ծառայություն մատուցել Արցախում գիտության, կրթության ու մշակույթի զարգացմանը:

Ուսումնարանին առաջադրված նոր խնդիրները իրենց արտացոլումը գտան ուսումնական պլաններում, ծրագրերում և ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման գործում: Այլ կերպ չէր էլ կարող լինել: Ուսումնական պլանները, ծրագրերը, դասագրքերը պետք է արտացոլեին ուսուցման ու դաստիարակության այն նոր խնդիրները, որոնք բխում էին հայրենիքի պաշտպանության շահերից:

Պատերազմական իրավիճակի հետ կապված՝ որոշ չափով վերանայվեցին ուսումնական պլաններն ու ծրագրերը: Ուսուցվող նյութի ծավալը թողնելով նույնը, խնդիր դրվեց, որպեսզի համապատասխան առարկաների ուսուցման ժամանակ սովորողներին պրակտիկ գիտելիքներ տրվեն այն մասին, թե ինչպես կողմնորոշվել շրջապատում, տեղանքի պլան գծել, քարտեզից և կողմնացույցից օգտվել,

շտապ օգնություն ցույց տալ, թունավոր քիմիական նյութերից պաշտպանվել և այլն: Պահանջվում էր պատմության և գրականության դասերին ավելի խորն ուսումնասիրել հայրենասիրական բնույթի պատմական իրադարձություններն ու գրական երկերը՝ սովորողների մեջ առաջացնելով սեր և նվիրվածություն դեպի հայրենիքը: Դա որոշակիորեն արտահայտվում էր նաև մյուս առարկաների ծրագրերում:

Ռազմական ուսուցման նոր ծրագրերն ապահովում էին ռազմական ընդհանուր գիտելիքների, զենքի հիմնական տեսակների ուսուցումը: Հատուկ ուշադրություն էր դարձվում հատկապես տղաների մարտական կոփվածությանը և հայրենասիրական դաստիարակությանը:

Ուսումնական պլանների և ծրագրերի մեջ կատարված փոփոխություններն ինքնին նոր դժվարություններ ստեղծեցին ուսումնական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար: Դրանցից բացի կային նաև այլ դժվարություններ: Այսպես՝ խիստ դժվարացավ դասագրքերի հրատարակման գործը: Թղթի պակասի պատճառով դասագրքերի տպաքանակը կրճատվեց և ուսումնական հաստատություններում լաբորատոր սարքավորումների, գործիքների, քարտեզների և այլ պարագաների խիստ կարիք զգացվեց: Որոշ դասագրքեր 2-3 տարին մեկ էին հրատարակվում:

Դասագրքերի նորացման, ինչպես նաև մանկավարժական ուսումնարանում դրանց փոխանակման գործը կատարվում էր տնօրենի, փոխտնօրենի և ուսուցիչների միջոցով, որն, իհարկե, մեծ ջանքեր էր պահանջում: Ուսումնարանի 1943-1944 ուստարվա շրջանավարտ Հրանտ Ղարախանյանն իր հուշերում պատմում է, որ ստեղծվել էր այնպիսի իրավիճակ, որ 3-5 ուսանողի տրվում էր մեկ դասագիրք և հերթականություն սահմանվում այն օգտագործելու համար: Երբեմն էլ կոլեկտիվ ձևով էր օգտագործվում դասագիրքը: Ծայրահեղ դժվար էր ուսանողներին տետրերով ապահովելը: Հասկանալի է, որ նման պայմաններում կրճատվում էին նաև գրավոր հանձնարարությունները: Ուսումնարանում ուսուցման գործին մեծ չափով վնասում էր նաև գրենական պիտույքների պակասը: Լաբորատոր նյութերով, քարտեզներով, պլակատներով ուսումնարանը գրեթե չէր մատակարարվում: Այդ պայմաններում մանկավարժական կոլեկտիվը, Արսեն Խաչատրյանի ղեկավարությամբ, հսկայական աշխատանք ծավալեց ունեցածը խնամքով օգտագործելու, ուսանողների և ուսուցիչների միջոցով դրանք վերականգնելու և ինքնաշեն գործիքներ, պիտույքներ ու սարքեր պատրաստելու ուղղությամբ:

Պատերազմական ծանր իրադրությունը մեծ դժվարություններ ստեղծեց նաև ուսումնական աշխատանքի կազմակերպման բնագավառում: Արսեն Խաչատրյանի ղեկավարությամբ ուսումնարանի կոլեկտիվը այդ իրավիճակում դրվատանքի արժանի շատ գործեր կատարեց: Կոլեկտիվը յուրօրինակ ու արդյունավետ ձևով լուծում էր սովորողների գաղափարաքաղաքական, բարոյական, աշխատանքային, ռազմահայրենասիրական դաստիարակության, ուսուցման գործընթացի հետ կապված շատ հարցեր: Ուսումնարանի շրջանավարտ, 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Ժորա Աբրահամյանը իր հուշերում պատմում է, որ ուսումնարանում գործում էին բանասերների, մաթեմատիկների ինքնագործունեության, գեղարվեստական, ասմունքողների, ռադիոսիրողների և սպորտային խմբակներ, որոնք նպաստում էին սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Պատերազմի տարիներին հատկապես նպատակասլաց աշխատանք էր տարվում ուսանողներին հայրենասիրության ոգով դաստիարակելու ուղղությամբ: Ար-

սեն Խաչատրյանը ուժեղացրեց պահանջկոտությունը ուսուցիչների նկատմամբ և նրանցից պահանջեց աշխուժացնել լեզվի և գրականության, գեղարվեստական ասմունքի խմբակների գործունեությունը, հաճախակի կազմակերպել գրական երեկոներ, հրատարակել պատի թերթեր, բարելավել ուսանողների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքները:

Սովորողների գաղափարական-քաղաքական դաստիարակության գործում մեծ դեր կատարեց պատմության ուսուցումը, որի ընթացքում առանձնապես նշվում էր հայ և ռուս ժողովուրդների հերոսական հաղթանակները Չինգիզ-Խանի, գերմանական, թուրք-պարսկական բռնակալների նկատմամբ: Պանծալի զորավարների՝ Նևսկու, Սուվորովի, Կուտուզովի, Ֆրունզեի, Վարդան Մամիկոնյանի, Աշոտ Երկաթի, Դավիթ Բեկի, Մխիթար Սպարապետի և մյուսների հաղթանակների լիարժեք վերհանումով սովորողների մեջ դաստիարակվում էր խոր հարգանք դեպի հայրենի երկրի ռազմական արվեստի բարձր արժանիքներն ու նրա անխուսափելի հաղթանակը:

Ինչպես հայոց լեզվի, գրականության, այնպես էլ հայ ժողովրդի պատմության դասերին (ի դեպ նշենք, որ 1943-1944 ուստարվանից միջնակարգ դպրոցներում, տեխնիկումներում, ուսումնարաններում մտցվեց հայ ժողովրդի պատմության դասընթացի ուսումնասիրումը) ուսումնարանի սովորողները նույնպես գրում էին ստեղծագործական շարադրություն: Այսպես, օրինակ՝ մանկավարժական ուսումնարանի գերազանցիկ շրջանավարտ, 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Ժորա Աբրահամյանը (45 տարուց ավելի հայոց լեզու և գրականություն է դասավանդել Ասկերանի շրջանի դպրոցներում) մեզ տրամադրած իր փաստաթղթերից մեկում պահպանում է նմանատիպ մի շարադրության օրինակ.«Հայ ժողովուրդն աշխարհի այն հնագույն ժողովուրդներից է, որ բազում փորձությունների միջով է անցել: Գտնվելով ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող ճանապարհների խաչմերուկում՝ Հայաստանը ռազմատենչ շատ պետությունների համար կռվախնձոր է հանդիսացել, պատերազմի թատերաբեմ դարձել: Ու ամեն անգամ, երբ թշնամին սուր է բարձրացրել, հայ ժողովուրդը համախմբել է իր բոլոր ուժերը՝ իր ազատությունը, անկախությունն ու պատիվը պաշտպանելու համար: Եվ այդ պահերին հայրենիքի պաշտպանության համար քաջությունը, անվեհերությունն ու հերոսությունը հանդիսացել են ազատաբաղձ ժողովրդի անբաժան հատկությունը: Այդպիսին է եղել մեր ժողովրդի պատմությունը»:

Պատերազմի շրջանում մանկավարժական ուսումնարանում զգալիորեն բարձրացավ նաև աշխարհագրության դասավանդման դաստիարակչական և գործնական նշանակությունը: Ուսումնարանի աշխարհագրության ուսուցիչ, վաստակաշատ մանկավարժ Թեմուր Ամիրջանյանը իր հուշերում գրում է, որ ուսուցման ընթացքում հատուկ ուշադրություն դարձվեց գործնական այնպիսի ունակությունների զարգացմանը, որոնք ռազմական նշանակություն ունեին (տեղագրական և ռազմական քարտեզների ու պլակատների ուսումնասիրում, կողմնորոշում տեղանքում և այլն):

Առանձնակի տեղ տրվեց ԽՍՀՄ և աշխարհի ֆիզիկական ու քաղաքական քարտեզների ուսումնասիրմանը: Աշխարհագրական ճշտգրիտ տվյալներով ուսանողի մեջ ամրացվում էր այն համոզմունքը, որ ֆաշիստական Գերմանիայի տնտեսական ռեսուրսները չեն կարող բավարարել երկարատև պատերազմի պահանջները, մինչդեռ մեր երկրի տնտեսական անսպառ պաշարներն ու մարդկային ուժերը անխուսափելի հաղթանակի հզոր գործոն են:

Հայրենական պատերազմի տարիներին ուսումնարանում մաթեմատիկայի,

ֆիզիկայի և քիմիայի դասավանդման ընթացքում առանձնակի ուշադրություն էր դարձվում այն թեմաների ուսուցմանը, որոնք կարող էին նպաստել ռազմական գիտելիքների արագ յուրացմանը: Օրինակ՝ ուսումնարանի սաները տեսական ու գիտական լուրջ գիտելիքներ և հմտություններ ձեռք բերեց տեղանքի մակերևույթի և զանազան օբյեկտների մեծության, բարձրության, լայնության, ծավալի, հեռավորության որոշման ուղղությամբ: Առավել խորությամբ էին ուսումնասիրվում այն թեմաները, որոնք նվիրված էին ներքին այրման շարժիչներին, ռադիոյին և կապի միջոցներին, մարտական թունավոր պայթուցիկ նյութերին, նրանցից պաշտպանվելու միջոցներին, բնական և արհեստական վառելանյութերին և այլն:

Ուսումնարանում կենսաբանության ուսուցումը նույնպես վերակառուցվեց նոր պահանջներին համապատասխան: Սովորողներին տեսական ու գործնական գիտելիքներ էին տրվում վարակիչ հիվանդությունների ու նրանցից պաշտպանվելու, արյունահոսության, ցրտահարության և այրվածքների դեպքերում շտապ օգնություն ցույց տալու վերաբերյալ, ինչպես նաև դեղաբույսերի դերն ու նշանակությունը պարզաբանելուն:

Մանկավարժական ուսումնարանում ռազմական ուսուցումը տարվում էր բարձր կազմակերպվածությամբ: Ստեղծվել էր ռազմական կաբինետ՝ զենքի անհրաժեշտ տեսակներով և ուսումնամարզական պիտույքներով: Պարապմունքները հիմնականում գործնական բնույթ էին կրում: Լսարանում տեսական որոշ գիտելիքներ տալուց հետո անց էին կացվում զենքի օգտագործման գործնական վարժություններ, զորախաղեր: Ռազմական ուսուցումը հիմնականում իրականացվում էր մարզային զինկոմիսարիատի հետ միասին: Ուսումնարանում զինղեկ և դասատուներ էին աշխատում մարտական փորձ ունեցող սպաներ, որոնք վիրավորվելու պատճառով զորացրվել էին: Նրանց աշխատանքը այդ բնագավառում, ինչ խոսք, ավելի արդյունավետ էր:

Ուսումնարանի 1945-1946 ուստարվա շրջանավարտ, 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Էմմա Վերդյանը մեզ տրամադրած իր հուշերում պատմում է, որ պատերազմի տարիներին ուսումնարանում ռազմական ուսուցումը բարձր հիմքի վրա էր դրված. «Ռազմական ուսուցումը և ուսանողների գիտելիքները հարստացնելու և կյանքում գործադրելու, կամքը կոփելու նպատակով տղաների և աղջիկների համար ուսումնական տարին ավարտելուց հետո ճակատային փորձ ունեցող սպաների և մեր զինղեկներ Վ.Հարությունյանի, Գ.Առստամյանի ղեկավարությամբ կազմակերպվում էին 15-օրյա ռազմական ճամբարային պարապմունքներ՝ սովորեցնելով հակաօդային, սանիտարական պաշտպանության գործը, հրաձգություն և այլն: Այդ պարապմունքներին մասնակցում էին նաև միջնակարգ դպրոցի բարձր դասարանների աշակերտներ, գյուղտեխնիկումի, բժշկական ուսումնարանի բարձր կուրսերի ուսանողներ»: Այդ պարապմունքի մասնակիցներից շատերը ռազմական անհրաժեշտ գիտելիքներով զինված, հայրենասիրական բարձր գիտակցությամբ մեկնեցին ռազմաճակատ՝ համալրելով մեր բանակի շարքերը: Է.Վերդյանը նաև պատմում է համակուրսեցի հայրենասեր տղաների մարտական սխրագործությունների մասին:

Պատերազմի տարիներին մանկավարժական ուսումնարանի ուսուցիչներն իրենց առաջավոր մանկավարժական փորձով ուսումնական աշխատանքի կազմակերպման մեթոդներով ու ձևերով, օրինակ են ծառայել նաև հանրակրթական դպրոցների մանկավարժական կոլեկտիվների համար: Նկատի ունենք հատկապես Սարգիս Ոսկերչյանին, Թեմուր Ամիրջանյանին, Սամվել Շինականյանին, Ամիր Առուշանյանին, Վահան Հարությունյանին, Գրիշա Մովսիսյանին, Գուրգեն

Առստամյանին, Տիրուհի Բաբայանին և ուրիշների: Նրանց ղեկավարությամբ ուսումնարանում հետաքրքիր ու նպատակասլաց ձևով էին կազմակերպվում նաև արտադասարանական միջոցառումները, ինքնագործ խմբակի պարապմունքները: Օրինակ՝ 1942-1945թթ. ուսումնարանի սովորողները Շուշիի շրջանի, Ստեփանակերտի բնակչության, զինվորական հոսպիտալի (Շուշի և Ստեփանակերտ քաղաքների) վիրավոր զինվորների համար տվել են 13 ներկայացում: Ուշագրավ է այն, որ քաղաքներում և շրջաններում տրվում էին գյուղտեխնիկումի, բժշկական ուսումնարանի և դպրոցների բարձր դասարանների աշակերտների միացյալ թատերական ներկայացումներ:

Ապաքինվող զինվորների համար նրանք կազմակերպում էին հանդեսներ, ժամանցի երեկոներ, նրանց ծանոթացնում իրենց ուսանողական կյանքին, ծաղիկներ ու սենյակային բույսեր աճեցնում, հարդարում հանգստի սենյակները, գրքեր հավաքում, գրադարան ստեղծում և այլն:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին մանկավարժական ուսումնարանի կոլեկտիվը, ուսանողները մեծ գործ կատարեցին ռազմաճակատին օգնություն ցույց տալու ուղղությամբ: Նշենք բազմատիպ միջոցառումներից մի քանիսը.

1. ուսուցիչներն ու ուսանողները կազմակերպված խմբերով (նրանց միանում էին նաև գյուղտեխնիկումի և բժշկական ուսումնարանի սովորողները) շրջում էին փողոցները, բակերը՝ հավաքելով մետաղի ջարդոն, ալյումինե ամաններ, արծաթե դրամներ և այլ բազմատեսակ իրեր, որոնք անհրաժեշտ էին տանկեր, ռումբեր, ինքնաթիռներ, հրանոթներ, զենքերի և ռազմանյութերի այլ տեսակներ պատրաստելու համար,

2. մեծ խանդավառությամբ մասնակցում էին Հայրենիքի պաշտպանության ֆոնդերի հարստացմանը, նախաձեռնություն ցուցաբերում դրամական նորանոր ֆոնդեր ստեղծելու գործում,

3. ռազմաճակատում կռվող մարտիկներին ուղարկում էին տարբեր նվերներ, ծանրոցներ, տաք հագուստ, գուլպա, մրգեղեն և այլն,

4. ուսումնարանի սովորողները ուսուցիչների հետ միասին հասարակական օգտակար աշխատանք էին կատարում կոլտնտեսային դաշտերում, գործարաններում, ֆաբրիկաներում, արհեստանոցներում, նորոգում էին ուսումնարանի սեղան-նստարանները, օգնում վառելիքի փոխադրմանը, մաքրում իրենց դասարանները և այլն,

5. ուսումնարանում ստեղծվում էին հանձնաժողովներ, որոնք նյութական օգնություն էին կազմակերպում ճակատայինների երեխաների համար, ծնողական գուրգուրանքով նրանց շրջապատում, հայրենասիրական ջերմ կոչով հանդես էին գալիս ուսուցիչներն ու ուսանողները:

Արսեն Խաչատրյանի նախաձեռնությամբ 3 հեկտար տարածությամբ հողամասից ստացվող ամբողջ բերքն օգտագործվում էր ճակատայինների երեխաներին բաժանելու համար և այլն:

Այսպիսով, պատերազմի տարիներին մանկավարժական ուսումնարանի ուսուցիչներն ու ուսանողները հսկայական աշխատանք կատարեցին մեր մարտիկներին օգնելու ուղղությամբ:

Չնայած մանկավարժական ուսումնարանի կոլեկտիվը, ուսանողները ռազմաճակատից հեռու էին, բայց անձնական շփում ունեին ճակատայինների հետ, նրանք հոսպիտալներում բուժվող մարտիկների մտերիմ բարեկամները դարձան: Բոլոր հոսպիտալներում ուսումնարանի սաները շեֆական մեծ աշխատանք կատարեցին:

Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում լուրջ խնդիրներ ծառացան նաև **Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի** մանկավարժական կոլեկտիվի առաջ: Արխիվային մի փաստաթղթից իմանում ենք, որ Հայրենական մեծ պատերազմի ընթացքում ռազմաճակատում կռվող 45 հազար ղարաբաղցիներից 467-ը Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի շրջանավարտներ էին: Պարբերական մամուլի էջերում («Սովետական Ղարաբաղ», «Կոմունիստ»և շրջանային թերթեր) նկարագրվում էին արցախցի զավակների ցուցաբերած խիզախությունն ու հերոսական սխրագործությունները:

«Սովետական Ղարաբաղ» թերթի 1941-945թթ.համարներում տպագրված հոդվածների և այլ աղբյուրների տվյալների հիման վրա բերենք կոնկրետ մի քանի օրինակներ ռազմաճակատ մեկնած տեխնիկումի մի քանի շրջանավարտների գործունեության մասին:

Մարտակերտի կուսշրջկոմի առաջին քարտուղար Արտեմ Պողոսյանը այդ օրերին գրած մի նամակում պատմում է, թե ինչպես միանգամից դատարկվեցին գյուղերը, աշխատանքի ընդունակ գրեթե բոլոր տղամարդիկ մեկնել էին ռազմի դաշտ: Ռազմաճակատ էին մեկնել գյուղտեխնիկումի նախկին շրջանավարտներ Գուրգեն Մկրտումյանը, Երվանդ Գաբրիելյանը, Հայկազ Սողոմոնյանը, Արտեմ Ավագյանը, Ջհանգիր Գրիգորյանը, Շահեն Պետրոսյանը, Անդրեյ Գրիգորյանը, Անդրանիկ Անաստասյանը, Հովսեփ Հովսեփյանը և շատ ուրիշներ:

Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի շրջանավարտ էր նաև Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղի բնակիչ Արամ Գասպարյանը(որի գործունեության մասին նշվել է աշխատության 4-րդ գլխում): Նա մասնակցել է Հայրենական պատերազմին, ծառայել 51-րդ բանակի 390-րդ հրաձգային գնդում և ցուցաբերած սխրագործությունների համար արժանացել բազում շքանշանների ու մեդալների:

«Սովետական Ղարաբաղ» թերթում բազմիցս մասնագիտական ու ռազմաճակատի մասին հուշերով հանդես է եկել նաև Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի շրջանավարտ, պատերազմի սկզբից մինչև նրա հաղթական ավարտը ռազմի դաշտում կռված Շահեն Պետրոսյանը: Վերադառնալով հայրենի երկրամաս, նա աշխատանքի է անցել գյուղտեխնիկումում՝ որպես անասնաբուժության դասատու: Նա իր անցած մեծ ճանապարհից, ապրածից, տեսածից ու լսածից մշտապես գերադասում էր ուսանողական տարիները գյուղտեխնիկումում, շեշտելով. «Ուրիշ բան էր մեր տեխնիկումը»[557]:

Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում իր հայրենասիրական պարտքն է կատարել գյուղատնտեսական տեխնիկումի շրջանավարտ, հետագայում՝ դասախոս, տնօրեն Արծվիկ Սուլեյմանյանը: Աբգար Դանիելյանը նրա մասին իր գրքում պատմում է. «Ով կիմանար Հայրենական պատերազմում նրա կատարած սխրագործությունների մասին, եթե ուրիշները չպատմեին: Մասնակցելով Հյուսիսային Կովկասի, Ղրիմի, Ուկրաինայի, Լեհաստանի ազատագրմանը, նա հասել է Արևելյան Գերմանիայի Ապոլդա քաղաքը: Եղել է Ապոլդայի պարետի քաղմասի գծով տեղակալը: Ապոլդա քաղաքի ղեկավարության բազմաթիվ առաջարկներից գերադասեց վերադառնալ հայրենի երկրամաս, հարազատ օջախ»:

Վերադառնալով Արցախ, Սուլեյմանյանը տարբեր պաշտոններ է վարում: Սակայն նրա կարիքը շատ էր զգացվում հենց գյուղտեխնիկումում: Նա աշխատանքի է անցնում տեխնիկումում, վերականգնում ուսումնական հաստատության նախկին ռիթմը:

Ռազմաճակատում իրենց կյանքն են զոհաբերել տեխնիկումցի Վասակ Պո-

ղոսբեկյանը, Հարություն Ղահրամանյանը, Սեդո Խանանյանը, Խաչատուր Մայիլյանը, Արամ Առաքելյանը, Ներսես Առստամյանը, Գուրգեն Չալյանը, նախկին տնօրեններ Սուրեն Սարգսյանը, Արտաշես Հարությունյանը և շատ ուրիշներ: Ըստ որոշ տվյալների՝ մարտերում զոհվել է պատերազմ մեկնած տեխնիկումցիների շուրջ 50 տոկոսը, կամ ոչ պակաս, քան 230 հոգի:

Հայրենական պատերազմի տարիներին ռազմաճակատին օգնելու և թիկունքն ամրապնդելու գործում գյուղտեխնիկումի մանկավարժական կոլեկտիվի առջև մի շարք խնդիրներ դրվեցին՝ մասնակցել երկրի պաշտպանության ֆոնդի ստեղծմանը, կազմակերպել մետաղի ջարդոնի հավաքման աշխատանքները, նվեր-ծանորցներ ուղարկել ռազմաճակատի մարտիկներին, հերթապահություն տանել ուսումնական հաստատությունում, Ստեփանակերտի գործարաններում, կոլտնտեսություններոում, զինվորական հոսպիտալում և այլ վայրերում: Գյուղտեխնիկումի կոլեկտիվը ակտիվորեն մասնակցում էր գյուղատնտեսական աշխատանքներին: Իսկ ռազմաճակատի մարտիկներին տեխնիկումցիների ուղարկած բազմապիսի նվերները ոչ միայն նյութական օգնություն էին, այլև նրանց բարոյական բարձր զգացմունքների արտահայտությունը:

Չնայած պատերազմի դաժան օրերին գյուղտեխնիկումի մանկավարժական կոլեկտիվի համար ստեղծված դժվարին և բարդ պայմաններին, այնուամենայնիվ, համառ ջանքերով շարունակվում էր կադրերի պատրաստման շնորհակալ աշխատանքը:

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերին **Ստեփանակերտի բժշկական ուսումնարանի** ուսուցիչներն ու նրանց սաները ևս լծվեցին հայրենիքի փրկության սուրբ գործին: Փաստագրական նյութերից հայտնի է, որ մինչև 1941թ. ուսումնարանում սովորում էին 400-ից ավելի ուսանողներ, և որ 1932-1941թթ. տվել է 5-6 թողարկում: Մարզի առողջապահական ոլորտ գործուղվեցին 472 բուժակներ, մանկաբարձներ, բուժքույրեր: Իրենց հմուտ, անձնուրաց աշխատանքով աչքի ընկան նրանցից շատերը, նկատի ունենք Շիրին Բաբայանին, Բագրատ Պետրոսյանին, Հարություն Բադալյանին, Եղիշե Առստամյանին, Հրաչյա Հովսեփյանին, Երվանդ Գրիգորյանին, Հրանտ Օհանյանին, Արմեն Գրիգորյանին, Աբգար Վանյանին և շատ ուրիշների: Սակայն պատերազմի տարիներին նրանցից շատերը կամավոր մեկնեցին ռազմաճակատ՝ կատարելու բուժաշխատողի իրենց պարտականությունները: Արխիվային փաստաթղթերի և այլ աղբյուրների համաձայն՝ ռազմաճակատ են մեկնել 233 շրջանավարտ, որոնցից 170-ը բուժակներ էին, ավելի քան 60-ը՝ բուժքույրեր: Ռազմաճակատ մեկնած ուսումնարանականների թիվը կազմում էր բուժուսումնարանի շրջանավարտների ընդհանուր թվի կեսը: Ցավոք, ոչ բոլորը վերադարձան պատերազմից: Նրանց մի մասը զոհվեց մասնագիտական պարտքը կատարելիս՝ փրկելով վիրավոր մարտիկների կյանքը:

Դեռևս սովորելու տարիներին, չնայած խաղաղ ժամանակներին, ուսումնարանի սաները ձեռք էին բերել ոչ միայն խաղաղ պայմաններում, այլև պատերազմական իրավիճակում աշխատելու հմտություններ: Բժիշկ-մանկավարժները անընդհատ կրկնում էին, որ բուժաշխատողը նաև զինվոր է և միշտ պետք է պատրաստ լինի զենք վերցնելու:

Ուսումնարանի նախկին շրջանավարտները ռազմաճակատում անգամ չէին մոռանում իրենց հարազատ կրթօջախը: Նրանք(Գրիգորի Աթայանը, Թարխան Փիրումյանը, Գրիգոր Սարդարյանը, Բագրատ Պետրոսյանը և ուրիշներ) նամակներ էին գրում,որոնցում պատմում էին, թե ինչպես են կռվում թշնամու դեմ, օգնության հասնում վիրավոր մարտիկներին, նրանց դուրս բերում ռազմի դաշտից:

Նամակներ էին ստացվում նաև զորամասի հրամանատարներից, քաղաշխատողներից, որոնք գրում էին, թե մարտական ինչպիսի սխրագործություններ են կատարում բուժուսումնարանի նախկին սաները: Դասախոսները հպարտանում էին նրանցով, ոգեշնչվում այն մտքից, որ զուր չի անցել իրենց աշխատանքը:

Բուժուսումնարանի նախկին շրջանավարտ, բուժակ Երվանդ Գրիգորյանը (Մարտունու շրջանի Խնուշինակ գյուղից) պատերազմի ժամանակ միշտ այնտեղ էր, որտեղ թեժ մարտեր էին ընթանում: Ղեկավարում էր սանիտարական դասակը: Մի քանի անգամ վիրավորվել է, ապաքինվել ու նորից վերադարձել շարքեր: Միայն մեկ օրում նա մարտի դաշտից դուրս է բերել 96 վիրավոր և այդ սխրանքի համար արժանացել մարտական շքանշանի: Ընդհանուր հաշվով նա կռվի դաշտից հանել է 361 վիրավոր:

Բուժուսումնարանի շրջանավարտ Գրիգորի Աթայանը երազում էր դառնալ վիրաբույժ: Նրա երազանքը իրականացավ, նրան ուղարկեցին շարունակելու ուսումը: Ավարտելով ռազմաբժշկական ակադեմիան, Գ.Ալթունյանը վերադարձավ բուժսանգումարտակ, որտեղ ծառայում էր մինչև ուսումը ավարտելը, ապա նշանակվեց էվակոհոսպիտալի վիրաբուժական բաժանմունքի վարիչ, հետո՝ հոսպիտալի պետ: Վախճանվել է 1980թ. Ուլյանովսկ քաղաքում:

Հմայակ Ալեքսանյանը պատերազմի առաջին իսկ օրից զորակոչվել է բանակ, կռվել տարբեր ռազմաճակատներում: Լեյտենանտի կոչումով քաջ ու բանիմաց բուժակին էր վստահված սանիտարական դասակի ղեկավարման գործը: Մարտական սխրանքների համար նա պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով: Պատերազմից հետո վերադարձել է հայրենի գյուղ՝ Կոլխոզաշեն, իր ամբողջ եռանդն ու գիտելիքները ի սպաս դրել մարդկանց առողջության պահպանման գործին: Հետագայում աշխատել է մարզային հակապալարախտային դիսպանսերում՝ որպես լաբորանտ:

Բուժակ Վահան Հարությունյանը ռազմաճակատում նույնպես նշանակվեց սանիտարական դասակի հրամանատար: Մասնակցել է բազում մարտական գործողությունների, ղեկավարել սանդրուժինա: Երազում էր շարունակել կրթությունը, դառնալ բժիշկ: Զորացրվելուց հետո, սակայն, ընտրեց այլ մասնագիտություն: Կրթությունը շարունակեց հասարակական գիտությունների գծով, աշխատանքի անցավ մարզային կուսակցական մարմիններում, հեղինակ է Արցախյան ազգային-ազատագրական շարժմանը նվիրված 6 գրքի: Վախճանվել է 2001թ. Ստեփանակերտում:

Պատերազմի մարտադաշտերում անօրինակ սխրանքներ են գործել նաև տեխնիկումն ավարտած բուժքույրերը, որոնցից շատերի մարտական ուղին հասել է Բեռլին: Նրանց թվում էին Նորա Զաքարյանը, Եվգենյա Մովսիսյանը, Ասյա Մնացականյանը, Համեստ Գրիգորյանը, Լուսիկ Ալավերդյանը, Աննա և Քնարիկ Օհանյանները, Վիկտորիա Մովսիսյանը, Արմենուհի Աղաջանյանը և շատ ուրիշներ, որոնք իրենց անձնվեր ծառայությամբ նոր փառավոր էջեր են ավելացրել կրթօջախի պատմությանը[558]:

3. Միջնակարգ մասնագիտական կրթության զարգացումը հետպատերազմյան վերականգման տարիներին (1946-1988թթ.)

Ինչպես նշել ենք նախորդ բաժիններում Հայրենական մեծ պատերազմը իր կնիքը դրեց ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառների վրա: Հիրավի, այդ տեսակետից հանրակրթական դպրոցը, միջնակարգ մասնագիտական

ուսումնական հաստատությունները բացառություն չկազմեցին: Ուստի պատերազմի ավարտից հետո, տնտեսության սոցիալիստական համակարգի առավելությունները ժողովրդին հնարավորություն տվին հիմնադրելու բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ, ուսումնական հաստատություններ, վերակառուցելու ուսումնադաստիարակչական աշխատանքերը: Հետպատերազմյան հնգամյա պլանով նախատեսված վիթխարի խնդիրների շարքում հատուկ տեղ էր հատկացված գիտության, մշակույթի, կրթության զարգացմանը:

Հետպատերազմյան տարիներին Շուշիի մանկավարժական ուսումնարանը զարգացման նոր փուլ ապրեց: Ուսումնարանում տեղի ունեցան լուրջ փոփոխություններ, բացվեցին նոր բաժիններ, լաբորատորիաներ, կաբինետներ: Կրթօջախի առջև ծառացած նոր խնդիրներին համապատասխան փոփոխության ենթարկվեցին նաև ուսումնական պլաններն ու ծրագրերը:

Փաստագրական նյութերից տեղեկանում ենք, որ 1948-1949 ուստարվանից ավելացան հանրակրթական առարկաներին հատկացված ժամերը: Այսպես, 1941-1942 ուստարվա համեմատ հայոց լեզվի, գրականության, պատմության, ռուսաց լեզվի և գրականության, մանկավարժահոգեբանական, բնագիտական առարկաներին հատկացվող շաբաթական ժամերն ավելացան, միաժամանակ կրճատվեց պատերազմի տարիներին ռազմական պատրաստության առարկաներին հատկացված լրացուցիչ ժամերի քանակը:

Նոր ուսումնական պլանը համեմատաբար թեթևացրեց ուսանողների շաբաթական ծանրաբեռնվածությունը, որը կազմում էր 46-48 ժամ, նոր պլանով՝ 34-36:

Հետպատերազմյան տարիներին Շուշիի մանկավարժական ուսումնարանում ուսումնական պլաններն ու ծրագրերը, դասագրքերի ուղղությամբ կատարված վերափոխումները պայմաններ ստեղծեցին վերակառուցելու նաև բուն ուսումնական աշխատանքի կազմակերպման ու մեթոդամանկավարժական ձևերն ու միջոցները:

Պատերազմի տարիներին, չնայած ուսումնարանի մանկավարժական կոլեկտիվի անձնվեր աշխատանքին, այնուամենայնիվ, ուսումնական գործում լուրջ թերություններ առաջացան,որոնց հետևանքները գոյատևեցին երկար ժամանակ:

Մանկավարժական ուսումնարանում ուսուցման հաջողությունն անմիջապես առնչվում էր ուսումնարանի շենքային պայմանների, ուսումնանյութական բազայի հետ: Այս լուրջ խոչընդոտները դեռ երկար ժամանակ իրենց զգացնել տվեցին:

Պատերազմից հետո մի քանի տարիների ընթացքում ուսումնարանի ուսուցչական կազմը մեծ փոփոխության ենթարկվեց: Լուրջ աշխատանքներ տարվեցին երկար ժամանակ մանկավարժական գործունեությունն ընդհատած ուսուցիչների հետ՝ մասնագիտական ու մեթոդական գիտելիքները թարմացնելու ուղղությամբ:

Ծնողների զբաղվածությունն աշխատանքում, կենցաղային գործերին ուսումնարանի սովորողների չափից ավելի մասնակցությունը թուլացրել էին նրանց հետաքրքրությունը ուսման նկատմամբ: Այդ երևույթի հաղթահարումը չափազանց կարևոր էր ուսումնարանի հետագա զարգացման համար: Պատերազմական տարիներին առաջ էր եկել մանկավարժական գիտության ու մեթոդական աշխատանքի հանդեպ անտարբերություն, որը շարունակվում էր մնալ նաև պատերազմից հետո: Նման պայմաններում սկսվեց Շուշիի մանկավարժական ուսումնարանի գործունեությունը:

Փորձառու մանկավարժներ Հ.Աղաբեկյանի, Ս.Ալեքսանյանի, Թ.Ամիրջանյանի, Ս.Ոսկերչյանի, Գ.Մովսիսյանի, Տ.Բաբայանի, Ն.Վարդապետյանի, Ա.Պողոսյանի, Ն.Երեմյանի և ուրիշների բեղմնավոր գործունեության շնորհիվ հաղթահարվում

էին պատերազմի տարիներին ուսումնական աշխատանքի համակարգում տեղ գտած թերությունները և արմատական փոփոխություններ կատարվում ուսուցման կազմակերպման ձևերի ու մեթոդների մեջ:

Հանրակրթական և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների ուսումնական աշխատանքի ռեժիմը կարգավորելու և այդ միջոցով նրանց գիտելիքների հարստացմանը նպաստելու գործում կարևոր նշանակություն ունեցավ ԼՂ լուսժողկոմի 1951թ. մարտի 12-ի «Մարզի ուսումնական հաստատություններում սովորողների հասարակական և ոչ ուսումնական այլ աշխատանքային ծանրաբեռնվածությունը վերացնելու մասին» որոշումը: Այդ որոշման հիման վրա մշակվեցին գործնական միջոցառումներ: Խստորեն արգելվեց հասարակական աշխատանքներ կատարելու համար սովորողներին դասերից կտրելը: Ինքնին հասկանալի է, որ նման պայմաններում խախտվում է ուսումնական հաստատության նորմալ կյանքը, իջնում սովորողների ուսման առաջադիմությունը:

1952թ. ապրիլին ԼՂ մարզժողկրթբաժինը կոլեգիայի նիստում ուսուցիչների ուշադրությունը հրավիրեց կարգապահության բնագավառում գոյություն ունեցող լուրջ թերությունների վրա: Դպրոցների, ուսումնական հաստատությունների ղեկավարներին պարտավորեցվեց հաստատել ամուր կարգուկանոն և հետևողականորեն կիրառել «Կանոններ աշակերտների համար», «Կանոններ ուսանողների համար» հրահանգները:

Լուրջ կարևորություն տալով մանկավարժական ներգործության միջոցներին, ուսումնարանում սահմանվեցին խրախուսանքի և պատժի միջոցներ:

Հմուտ մանկավարժներ Ա.Խաչատրյանի, Մ.Աբրահամյանի. Լ.Հովհաննիսյանի, Շ.Ավանեսյանի, Ս.Շինականյանի ղեկավարությամբ հիմնադրվեցին ուսանողական առաջին գիտական ընկերությունները(ՈՒԳԸ), որոնք մեծապես նպաստեցին ուսանողների մեջ գիտության նկատմամբ սեր արթնացնելուն և գիտական աշխատանքի ունակություններ մշակելուն: Այդ ընկերությունների անդամներից շատերն այսօր գիտությունների դոկտորներ, թեկնածուներ, հրապարակախոսներ, քաղաքական գործիչներ են:

1970-ական թվականներին Շուշիի մանկավարժական ուսումնարանը թևակոխում է որոնումների և հետագա զարգացման նոր շրջան, դառնում մշակույթի ու գիտության, մանկավարժական կադրերի պատրաստման խոշոր դարբնոց: Ուսումնարանն ուներ 500-523 ուսանող, 7 ուսումնական կաբինետ, լաբորատորիա, 60-63 մանկավարժական բարձրորակ կադրեր, խոշոր տնտեսություն, հողատարածք: Հավաստի տվյալների համաձայն, ուսումնարանը յուրաքանչյուր ուստարում թողարկում էր 200-ից ավելի շրջանավարտներ:

ԼՂ մարզժողկրթբաժնի վարիչ Սարգիս Արամյանի անձնական արխիվից տեղեկանում ենք, 1973թ. օգոստոսյան ուսուցչական խորհրդակցությունում բարձր գնահատականի արժանացավ Շուշիի մանկավարժական ուսումնարանի կոլեկտիվի 50-ամյա գործունեությունը, և հատկապես նշվեց Արսեն Խաչատրյանի մեծ ներդրումը ուսումնարանի զարգացման գործում:

1980-ական թվականների կեսերին Շուշիի մանկավարժական ուսումնարանը գտնվում էր նոր վերելքի ճանապարհին, բարեփոխումներ էին կատարվում ուսումնական աշխատանքի համակարգում: Հետևողական աշխատանք էր տարվում ուսանողների բարձր առաջադիմության հասնելու և ուսումնադաստիարակչական աշխատանքները արդյունավետ կազմակերպելու համար:

1984թ. ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը ընդունում է «Միջնակարգ մասնա-

գիտական ուսումնական հաստատությունների աշխատանքի բարելավման մասին» որոշումը, համաձայն որի ԽՍՀՄ մանկավարժական գիտությունների ակադեմիայի հանձնաժողովի կողմից միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների համար մշակվեցին նոր ուսումնական պլաններ ու ծրագրեր: Հիմք ընդունելով դրանք, Շուշիի մանկավարժական ուսումնարանի փորձառու ուսուցիչներից կազմված հատուկ հանձնաժողովը որոշակի փոփոխություն կատարեց նոր ուսումնական պլանում՝ այն հարմարեցնելով տեղական պայմաններին: Մանկավարժական ուսումնարանին ներկայացվող նոր պահանջներին ու խնդիրներին համապատասխան վերակառուցվեցին նաև ուսումնական ծրագրերը:

Արցախյան ազգային-ազատագրական շարժման առաջին օրերին ուսումնարանի հայկական բաժինը, ենթարկվելով նոր փորձությունների, տեղահանվում է Ստեփանակերտ:

Շուշին ազատագրվելուց հետո (1992թ. մայիս), ուսումնարանի կոլեկտիվը 1993թ. սեպտեմբերի 1-ին պարապմունքները վերսկսեց մայր կրթօջախի կամարների տակ:

Իր բեղմնավոր գործունեության տարիներին (1921-1988թթ.) մանկավարժական ուսումնարանը պատրաստեց միջին օղակի մասնագետներ (մոտ 10 հազար) Լեռնային Ղարաբաղի (նաև նրա սահմաններից դուրս գտնվող հայաշատ վայրերի) հանրակրթական դպրոցների համար: Շրջանավարտներից շատերը, բարձրագույն կրթություն ստանալով Երևանի, Բաքվի, Ռուսաստանի և այլ երկրների բարձրագույն ուսումնական հաստատություններում, դարձան ականավոր գիտնականներ, պատմաբաններ, հայագետներ, լրագրողներ, մշակույթի և մանկավարժության ասպարեզի նշանավոր գործիչներ: Նրանցից շատերը այսօր էլ բեղմնավոր գործունեություն են ծավալում ԼՂ Հանրապետության ուսումնական հաստատություններում, դպրոցներում, արվեստի, մշակույթի բնագավառներում:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում, չնայած առաջացած որոշ դժվարություններին, գյուղտեխնիկումի մանկավարժական կոլեկտիվը իր առաջնահերթ խնդիրը համարեց ուսման գործընթացի բարելավումը: Որոշ չափով վերանայվեցին նաև ուսումնական պլաններն ու ծրագրերը: Եթե պատերազմը արմատապես փոխեց ուսումնական հաստատության արտալսարանային աշխատանքի բովանդակությունը, առաջ քաշվեց այդ աշխատանքների կազմակերպման նոր՝ բազմազան ձևեր ու մեթոդներ, ապա պատերազմից հետո վերակառուցվեցին ուսումնադաստիարակչական աշխատանքները: Մարզում ժողովրդական տնտեսության վերականգնման մեծ թափը հնարավորություն տվեց գյուղտեխնիկումի ներքին կյանքում որակական փոփոխություններ կատարել:

Ինչպես հայտնի է, 1946թ. մարտին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանը հաստատեց երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման 1946-1950թթ. հնգամյա պլանը, որը նախատեսում էր վերականգնել արդյունաբերության ու գյուղատնտեսության նախապատերազմյան մակարդակը, և այնուհետև զգալի չափով գերազանցել այն[559]: Այդ նպատակով մարզի տնտեսության, արդյունաբերության ու գյուղատնտեսության վերականգնման ու զարգացման համար անհրաժեշտ էին որակյալ կադրեր: Այդ մեծ խնդիրների իրագործումն ապահովելու նպատակով լուրջ փոփոխություններ կատարվեցին գյուղտեխնիկումի ներքին կյանքում: Մանկավարժական կոլեկտիվը համալրվեց պատերազմից փառքով վերադարձած որակյալ կադրերով (Ար.Բալասանյան, Ա.Գասպարյան, Շ.Պետրոսյան, Թ.Ամիրջանյան և ուրիշներ), որոնց որոնումները ընթանում

էին կրթական բովանդակության հարստացման, ուսումնական աշխատանքները արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ: Գյուղտեխնիկումի ղեկավարների եռանդուն գործունեության շնորհիվ հետպատերազմյան շրջանում համալրվեց նաև նյութատեխնիկական բազան: Եթե 1941-1945թթ. տեխնիկումն ուներ ընդամենը ութ լսարան (երկուերք, եռահերթ, քանի որ շենքի մի մասը զինվորական հիվանդանոց էր), ապա հետպատերազմյան առաջին տասնամյակում (1946-1956թթ.) վերանորոգված ուսումնական հաստատությունն ուներ 16 լսարան, կահավորված կաբինետներ: Բացվեցին նաև նոր բաժիններ («Մեխանիզացիա», «Հաշվապահական»), ավելացավ նաև սովորողների թիվը. այն հասնում էր 450-ի: Տեխնիկումը ապահովված էր նաև հարուստ գրադարանով և ընթերցասրահով, սպորտային դահլիճով ու հրապարակով, նիստերի դահլիճով, մասնագիտական ու հանրակրթական առարկաների կաբինետ-լաբորատորիաներով: Ուսանողների հանգստի անցկացման համար այստեղ ստեղծվել էին բոլոր պայմանները:

Գյուղատնտեսական տեխնիկումի նյութատեխնիկական հարուստ բազայի և մանկավարժական որակյալ կադրերի առկայությունը հնարավորություն էին տալիս միջին որակի կադրեր պատրաստել մարզի տնտեսության համար անհրաժեշտ վեց մասնագիտությունների գծով: Տեխնիկումում սովորողների թիվը 60-70-ական թվականներին անցնում էր 500-ից:

60-70-ական թվականներին գյուղտեխնիկումի երեկոյան (հեռակա) ուսուցման բաժինների առաջին և երկրորդ կուրսերի ուսանողների համար նախատեսվեցին պրակտիկ աշխատանքներ բուն արտադրության մեջ, որտեղ նրանք թոշակի փոխարեն ստանում էին վարձատրություն՝ տվյալ հաստիքի համար նախատեսված աշխատավարձի չափով: Արտադրական աշխատանքի ժամանակ ուսանողները, ինչպես մյուս բոլոր աշխատողները, ենթարկվում էին ձեռնարկության ներքին կարգուկանոնին: Այդ մասին իր հուշերում պատմում է գյուղտեխնիկումի վաստակաշատ մանկավարժ Ամալյա Մանգասարյանը[560]:

Այսպիսով, գյուղտեխնիկումի ուսանողները հնարավորություն ստացան հանրակրթական, ընդհանուր տեխնիկական ու մասնգիտական առարկաները խորապես յուրացնելու հետ միասին իրենց տեսական գիտելիքներն ամրապնդել պրակտիկ աշխատանքում:

Հավաստի աղբյուրների տվյալներով՝ 1923-1988թթ.ընթացքում գյուղտեխնիկումի շրջանավարտների թիվը հասել էր 3796-ի, ըստ մասնագիտությունների՝ 947 անասնաբույժ, 894 անասնաբույծ, 968 տեխնիկ-մեխանիկ, 887 տեխնիկ-էլեկտրիկ և այլն: Այդ ամենով հանդերձ, մասնագետ կադրերի նկատմամբ պահանջը չի նվազել: Վերջին տասնամյակների ընթացքում ստեղծվել են այնպիսի արտադրաճյուղեր, որոնք իրենց հերթին մասնագետ կադրերի պահանջներ են ներկայացնում: Բացվեցին էկոնոմիկայի և հաշվապահական բաժիններ: Մինչ այդ Արցախում չկային նման կադրեր պատրսատող ուսումնական հաստատություններ, իսկ տնտեսագետների և հաշվապահների կարիքը զգացնել էր տալիս:

Ստեփանակերտի գյուղտեխնիկումը տվել է բարձրորակ այնպիսի կադրեր, որոնք հետագայում դարձել են անվանի գիտնականներ, ժողովրդական տնտեսության հմուտ մասնագետներ և իրենց բեղմնավոր գործունեությամբ ակնառու դեր խաղացել հասարակական կյանքի բոլոր բնագավառներում: Տեխնիկումի նախկին շրջանավարտներից են գիտությունների դոկտորներ Գուրգեն Շաքարյանը, Գուրգեն Քամալյանը, Հրաչիկ Արամյանը, Ռազմիկ Բեգլարյանը, Վերդի Հակոբյանը, Գեորգի Հակոբյանը, անասնաբուժական գիտությունների թեկնածու Էդուարդ Գասպարյանը, մարզում ճանաչված մասնագետ, բազում մեթոդական

գրքերի հեղինակ Արծվիկ Սուլեյմանյանը (հետագայում՝ տեխնիկումի տնօրեն), Ճարտարի կոլտնտեսության վարչության նախագահ, սոցիալիստական աշխատանքի հերոս Սուրեն Ադամյանը, Մարտակերտի խորհտնտեսության տնօրեն, սոցիալիստական աշխատանքի հերոս Սամվել Մամունցը և ուրիշներ: Շատերն այսօր էլ իրենց պատվաբեր գործն են կատարում ժողովրդական կրթության ու տնտեսության ոլորտում (այդ մասին կնշվի հաջորդ բաժնում):

Հայրենական պատերազմի նախօրյակին, 1938-1939 ուստարում, Ստեփանակերտի երաժշտական ուսումնարանը դարձել էր գեղագիտական դաստիարակության, երաժշտական կրթության զարգացման կենտրոն, որտեղ սովորում էին 100-ից ավելի ուսանողներ, դասավանդում 10-12 ուսուցիչ: Սակայն պատերազմի տարիներին այն փակվեց և նորից վերաբացվեց 1948-1949 ուստարում՝ դառնալով Աղդամի երաժշտական ուսումնարանի մասնաճյուղ: Եվ միայն 1961թ.ԼՂԻՄ մտավորականության ջանքերի շնորհիվ ուսումնարանը ձեռք բերեց ինքնուրույն կրթական միավորի կարգավիճակ: 1967թ. Լեռնային Ղարաբաղի հոգևոր-մշակութային կյանքում տեղի ունեցավ ևս մեկ կարևոր իրադարձություն՝ Ստեփանակերտ քաղաքում բացվեց հայ արվեստի, երաժշտության մեծ երախտավոր Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանը: Երաժշտական կենտրոնի բացման շարժառիթը ղարաբաղցիների ընդհանուր և գեղագիտական կուլտուրայի բարձր մակարդակն էր:

Կարճ ժամանակում ուսումնարանը դարձավ մասնագիտական կենտրոն, որը կադրեր էր պատրաստում մարզի երաժշտական դպրոցների համար: Աշխուժանում է քաղաքի երաժշտական կյանքը, բացվում են մշակույթի նոր օջախներ, այդ թվում՝ մշակույթի տուն, ստեղծագործական տուն, «Ղարաբաղ» պետական էստրադային նվագախումբ, որոնք հիմնականում ապահովված էին երաժշտական ուսումնարանն ավարտած կադրերով: Այդ տարիներին ուսումնարանում դրվեցին մի շարք ավանդույթների հիմքեր:

Երաժշտական ուսումնարանը 1961-1988թթ.ուներ 4 դասարան, 3 բաժին՝ դաշնամուրային, փողային, ժողովրդական, իսկ այսօրվա տվյալներով՝ 6 դասարան, 7 բաժանմունք՝ դաշնամուրի, վոկալի, լարային գործիքների (ջութակ, կիթառ), ժողովրդական և փողային գործիքների:

Ուսումնարանում իրենց մանկավարժական գործունեությունն են ծավալել վաստակաշատ մանկավարժներ Մարիա Դուրմիշևան (առաջին տնօրենն էր), Լ.Սարգսյանը, Բ.Հակոբջանյանը, Ռ.Մարտիրոսովը, Ա.Դանիելյանը, Ա.Պողոսյանը և ուրիշներ: Ուսումնարանի ներկա մանկավարժական կոլեկտիվի շատ անդամներ (Վ.Բաղդասարյան, Ա.Նասիբյան, Է.Կարապետյան, Ա.Ալավերդյան, Յու.Ալեքսանյան, Գ.Սարգսյան, Պ.Կարաբեկով և ուրիշներ) ուսումնարանի նախկին սաներն են: Երաժշտական ուսումնարանի շրջանավարտներից են նաև ժողովրդական երգչուհի Նաիրուհի Ալավերդյանը, Երևանի մանկական երաժշտական դպրոցի տնօրեն Գ.Հախնազարյանը, Ռ.Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի մանկավարժ Ա.Նաջարյանը, Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի նախկին մենակատար Լ.Օվչյանը, Երևանի կոնսերվատորիայի դասախոսներ Ա.Քոչարյանը, Ի.Ջավադյանը և ուրիշներ:

Այսօր ուսումնարանն ապահովված է բարձրագույն երաժշտական կրթությամբ մասնագետներով, որոնց զգալի մասը Երևանի կոնսերվատորիայի շրջանավարտներն են:

Վերոնշյալ փաստագրական տվյալները վկայում են, որ Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանն ունեցել է բեղմնավոր գործու-

նեություն և անցել է երկար ճանապարհ՝ ստեղծագործական որոշակի հաջողությունների հասնելով իր զարգացման տարբեր փուլերում:

Հետպատերազմյան շրջանում Ստեփանակերտի բժշկական ուսումնարանը բուռն զարգացման մի նոր փուլ ապրեց: Ոլորտի նվիրյալների շնորհիվ մեծ վերելքով սկսեց զարգացում ապրել մարզի առողջապահական համակարգը: Կառուցվեց նոր ուսումնարանի հարմարավետ շենք, հարստացավ նյութատեխնիկական բազան, ստեղծվեցին լաբորատորիաներ, զգալիորեն բարելավվեց ուսումնական գործընթացը: Բուժուսումնարանի զարգացմանը կցված նոր սերունդը՝ Շահեն Դանիելյան, Արշավիր Ղուկասյան, Հենրիխ Սեփյան, Թամարա Քամալյան, Էդուարդ Ղահրամանյան, Արմիկ Ասլանյան, Վարդան Դադամյան և ուրիշներ, նոր ոգևորություն մտցրին կրթօջախի կյանքում:

Հարկ է նշել, որ միջնակարգ մասնագիտական այս ուսումնական հաստատությունն ավարտած շատ շրջանավարտներ հետագայում բարձրագույն կրթություն են ստացել տարբեր բժշկական բարձրագույն ուսումնական հաստատություններում և, կատարելագործելով իրենց գիտելիքները, հենց իրենք էլ դարձել են այս կրթօջախի դասախոսներ: Դրանցից են ճանաչված բժիշկներ Փարավոն Ադամյանը, Բենիամին Միրզոյանը, Էդուարդ Ղուկասյանը, Յուրի Գրիգորյանը, Արմո Գրիգորյանը, Իրինա Ղուկասյանը և ուրիշներ:

Մանկավարժ բժիշկների քրտնաջան աշխատանքի շնորհիվ ուսումնարանն անցած տասնամյակներին տվել է միջին որակի 6250 բուժաշխատողներ՝ մանկաբարձներ, դեղագործներ, բուժակներ, սանֆելդշերներ, որոնք կարևոր դեր են խաղացել Լեռնային Ղարաբաղում առողջապահական գործի հիմնադրման ու հետագա զարգացման գործում:

Առողջապահության ոլորտում, հիմնական աշխատանքից բացի, ուսումնարանի սաներին իրենց հարուստ փորձն ու գիտելիքներն են հաղորդում հանրապետության փորձառու բժիշկներ, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ Էդուարդ Ղուկասյանը, Վարդան Ղուկասյանը, բժշկական գիտությունների թեկնածու Ալյոշա Մաղաքելյանը, ճանաչված բժիշկներ Յուրի Գրիգորյանը, Ռոզա Սարգսյանը, Ասյա Մելքումյանը, Բրինա Մարությանը, Մարգո Մարությանը, Սվետլանա Հայրապետյանը, Ռոբերտ Ղազարյանը, Անժելա Դանիելյանը, Անատոլի Սահակյանը, Գեորգի Մաղաքելյանը, Անժելա Ղուկասյանը, Աիդա Հարությունյանը և ուրիշներ:

Բուժուսումնարանում ստեղծված են բոլոր պայմանները, որպեսզի սովորողները ստանան կայուն և խոր գիտելիքներ: Հիրավի այն դարձել է հանրապետության բուժաշխատողների կրթման ու դաստիարակության իսկական դարբնոց, որտեղ շարունակվում են հնուց եկող լավագույն ավանդույթները:

Վերոհիշյալ տվյալներից կարելի է եզրակացնել, որ Լեռնային Ղարաբաղում խորհրդային շրջանում և այսօր միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունները կադրեր են պատրաստում ոչ միայն ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի, կրթության, արվեստի, մշակույթի, առողջապահության բնագավառների, այլև բարձրագույն ուսումնական հաստատությունների համար:

4. Միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների նշանավոր շրջանավարտների գործունեությունը (1930-1988թթ.)

Աշխատության չորրորդ գլխում համառոտակի ներկայացվել է ԼՂԻՄ կրթական գործի կազմակերպիչների, անվանի մանկավարժների գործունեությունը, որոնցից շատերն ավարտել են մարզի միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունները: Ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռել սույն գլխի այս բաժնում ներկայացնել նաև միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների նշանավոր շրջանավարտների գործունեությունը կրթության, գիտության, արվեստի, մշակույթի, առողջապահության, տնտեսության և այլ բնագավառներում: Անուրանալի է այն իրողությունը, որ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունները (Շուշիի մանկավարժական ուսումնարանը, Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումը, բժշկական ուսումնարանը) տվել են բարձորակ կադրեր, որոնք հետագայում դարձել են անվանի գիտնականներ, մանկավարժներ, բժիշկներ, իրենց բեղմնավոր գործունեությամբ ակնառու դեր են խաղացել հասարակական կյանքի բոլոր բնագավառներում: Չնայած նրանցից շատերը ապրում և ստեղծագործում էին մարզի սահմաններից դուրս՝ Երևանում, Ռուսատանում և այլ հանրապետություններում, այնուամենայնիվ, ամուր թելերով կապված էին Արցախի հետ և կարևոր դեր են խաղացել հայ ժողովրդի այս հատվածի կրթության, մշակույթի, գիտության, հայագիտության զարգացման գործում: Արխիվային փաստաթղթերի, պարբերական մամուլում տպագրված հոդվածների, ժամանակիցների հուշերի և այլ աղբյուրների ուսումնասիրությունները վկայում են, որ հետաքրքիր ու բազմակողմանի է եղել միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների գիտամանկավարժական, քաղաքական և այլ ոլորտներում ծավալած բեղմնավոր գործունեությունը, որը, անշուշտ, ուսանելի է նաև այսօրվա սերնդի համար:

Միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների հիմնադրման պատմության հետ կապված՝ հաջորդաբար ներկայացվում է շրջանավարտների գործունեությունը:

Շուշիի մանկավարժական ուսումնարանի 1931-1932 ուստարվա գերազանցիկ շրջանավարտներից է (25 շրջանավարտներից 5-ը ավարտել են գերազանց գնահատականներով) անվանի լեզվաբան, գիտության վաստակավոր գործիչ **Ահարոն Գրիգորյանը (1915-1992)**: Նախնական կրթությունը ստացել է Մարտակերտի շրջանի Առաջաձոր գյուղի յոթնամյա դպրոցում (1929թ.), այնուհետև ավարտել է Շուշիի մանկավարժական ուսումնարանը, աշխատել Առաջաձորի դպրոցում (1932-1937թթ.), որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար, տնօրեն[561]:

1937թ. Ս.Գրիգորյանը ընդունվել և 1941թ.գերազանց գնահատականներով ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1942թ.ընդունվել է ասպիրանտուրա՝ ժամանակակից հայոց լեզվի մասնագիտությամբ, նույն թվականի օգոստոսին զորակոչվել է բանակ և մինչև 1943թ. մասնակցել Հայրենական պատերազմին: Եղել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում, կռվել Օրջոնիկիձեի ու Մոզդոկի ազատագրման համար: 1943թ. հունվա-

ին Մոզդոկի տակ տեղի ունեցած կատաղի ճակատամարտում Ա.Գրիգորյանը ծանր վիրավորվում է և ապաքինվելուց հետո զորացրվում թիկունք: 1943-1944թթ. շարունակել է սովորել ասպիրանտուրայում, 1945թ. պաշտպանել է թեկնածուական թեզը, 1949թ.ստացել դոցենտի կոչում և մինչև 1957թ. աշխատել Երևանի պետական համալսարանում՝ որպես դասախոս: 1957 թվականից աշխատել է ՀՀ գիտությունների ակադեմիայի Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում՝ որպես ավագ գիտաշխատող:

Ա.Գրիգորյանի՝ ժամանակակից հայոց լեզվի կարևոր հիմնահարցերի լուսաբանման ուղղությամբ երկար տարիների կատարած ուսումնասիրություններն ամփոփված են 10-ից ավելի աշխատություններում, մեթոդական ձեռնարկներում, դասագրքերում:

Անվանի լեզվաբանը բարեխիղճ հոգածությամբ օժանդակել է գիտական կադրերի պատրաստմանը, ղեկավարել նրանց գիտական թեզերը, իր ծանրակշիռ խոսքն ասել լեզվաբանության հարցերին առնչվող ուսումնասիրությունների մասին:

Մեծ և ուսանելի կյանքի ուղի է անցել Շուշիի մանկավարժական ուսումնարանի 1936-1937 ուստարվա գերազանցիկ (այդ ուստարում 32 շրջանավարտներից 14-ը ավարտել են գերազանց գնահատականներով), **պրոֆեսոր Մելքում Մելքումյանը (1917-2004):** Երախտաշատ մանկավարժ գիտնականը իր արգասավոր գործունեությունը նվիրեց հայ դպրոցի ու մանկավարժության զարգացման, երիտասարդ սերնդի դաստիարակման, գիտական կադրերի պատրաստման գործին:

Մ. Մելքումյանը ծնվել է Ասկերանի շրջանի Շոշ գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի ոչ լրիվ միջնակարգ դպրոցում, կրթությունը շարունակել Շուշիի մանկավարժական ուսումնարանում և 1937թ. ավարտելով այն՝ աշխատանքի է անցել Սարուշեն գյուղի, այնուհետև Շուշիքենդի (Շոշ) դպրոցներում, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ:

1939թ. Մ.Մելքումյանը զորակոչվում է Կարմիր բանակ և ծառայում մինչև 1946թ.: Հայրենիքի պաշտպանության համար մղվող մարտերին անձնուրաց մասնակցության համար պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով, «Պրագայի ազատագրման համար» և «1941-1945թթ. Հայրենական պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով, շնորհակալագրերով:

1945-1946թթ. Ուկրաինայի Տուլչին քաղաքում աշխատելէ որպես պարետի տեղակալ,1946թ. զորացրվել է և վերադարձել Երևան: 1947թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հոգեբանություն բաժինը, 1952թ. առաջին կարգի դիպլոմով ավարտել և ընդունվել ասպիրանտուրա, պաշտպանել թեկնածուական թեզը և անցել դասախոսական աշխատանքի[562]:

Պրոֆեսոր Մ.Մելքումյանը 1967-1972թթ. եղել է համալսարանի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ: Տասնամյակներ շարունակ դասախոսել է Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում, Վ.Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտում, Երևանի հեռակա մանկավարժական, Կիրովականի, Լենինականի(Գյումրի) մանկավարժական ինստիտուտներում գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի ան-

դամ, ընդդիմախոս: Նա հոգատարությամբ և գիտական պահանջկոտությամբ աճեցրել է բազմաթիվ ասպիրանտների ու հայցորդների, որոնցից շատերը գիտության թեկնածուներ ու դոկտորներ են, պրոֆեսորներ ու դոցենտներ (նրանց թվում՝ սույն աշխատության համահեղինակ, մանկավարժության դոկտոր, պրոֆեսոր Գ.Հարությունյանը):

Պրոֆ. Մ.Մելքումյանը գործուն մասնակցություն է ունեցել մանկավարժական մամուլի ստեղծման ու զարգացման գործում: Երկար տարիներ եղել է «Սովետական մանկավարժ» ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ,նրա գրչին են պատկանում տասնյակ գիտական աշխատանքներ, հոդվածներ(ունի 14 մենագրություն), որոնք նվիրված են մանկավարժության և հոգեբանության բազմազան հարցերի լուսաբանմանը:

Շուշիի մանկավարժական ուսումնարանում է սովորել Հայաստանի Հանրապետության կուլտուրայի վաստակավոր գործիչ, գրողների միության անդամ, դրամատուրգ, մանկավարժ **Գուրգեն Բորյանը (1915-1971):**

Բարձրագույն կրթությունը ստացել է Մոսկվայի Մ.Գորկու անվան գրականության ինստիտուտում: Ավարտելուց հետո վերադառնում է Հայաստան, շարունակում իր գրական գործունեությունը:

Գ.Բորյանը 1938-1941թթ. եղել է «Գրական թերթի» խմբագիր, միաժամանակ՝ Հայաստանի գրողների միության պատասխանատու քարտուղար: Հայրենական պատերազմի ժամանակ եղել է զինվորական թղթակից: Պատերազմից հետո Գ.Բորյանը վերադառնում է Հայաստան և աշխատում գրողների միությունում, 1950-1954թթ. որպես քարտուղար, 1958-1968թթ՝ «Լիտերատուրնայա Արմենիա»-ի, ապա՝ «Սովետական գրականություն» ամսագրերի խմբագիր:

Գուրգեն Բորյանը հեղինակ է շուրջ 31 ժողովածուների, պիեսների, դրամաների, որոնք բեմադրվելեն Երևանում, Ստեփանակերտում, Ռուսաստանի և Թիֆլիսի հայկական համայնքներում: Թարգմանել է ռուս դասական գրողների՝ Մայակովսկու, Լերմոնտովի, Սիմոնովի , Մաքսիմ Ռիլսկու և վրացական մի շարք նշանավոր գրողների շուրջ 26 ստեղծագործություններ:

Գ.Բորյանի ստեղծագործություններից նշանավոր են «Ճանապարհ դեպի ծով» (1940), «Մարտիկի երդումը» (1942), «Հրացոլք» (1945), «Երևանյան լուսաբաց» (1947), «Հատընտիր» (1953), «Մանկական բանաստեղծություններ» (1942), «Բարձունքներում» (1949), «Կամրջի տակ» (1961), «Նույն հարկի տակ» (1947), «Սարոյան եղբայրներ» (1966) և այլն:

Արցախի գրական ընտանիքի անվանի բանաստեղծ, լրագրող, մանկավարժ **Բոգդան Ջանյանը (1917-2005)** սկզբնական կրթությունը ստացելէ հայրենի՝ Տումի գյուղի յոթնամյա դպրոցում: 1934-1935 ուստարում գերազանց գնահատականներով ավարտում է Շուշիի մանկավարժական ուսումնարանը, այնուհետև ուսումը շարունակում Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետի հայեց լեզվի և գրականության բաժնում: 1939-1940 ուստարում առաջին կարգի դիպլոմով ավարտում է ինստիտուտը և աշխատանքի անցնում հայրենի գյուղի դպրոցում, որպես հայեց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար:

Մանկավարժական գործունեությունը նա զուգակցել է գրական ստեղծագործական աշխատանքի հետ, 1939-1941թթ. աշխատել է «Երիտասարդ բոլշևիկ»

թերթի (Ստեփանակերտ) խմբագրությունում, որպես կուլտուրայի և գրականության բաժնի վարիչ, 1941թ.՝ Լեռնային Ղարաբաղի գրողների միության պատասխանատու քարտուղար:

Բոգդան Զանյանը 1941-1945թթ. հազարավոր իր հայրենակիցների հետ մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Զորացրվելուց հետո, 1945-1948թթ., նա շարունակել է աշխատել գրողների միության պատասխանատու քարտուղար, իսկ 1954-1968թթ.գրական աշխատող էր «Սովետական Ղարաբաղ» օրաթերթում:

Ադրբեջանի ազգահալած քաղաքականության պայմաններում, երբ Ղարաբաղում հալածվում էին հայ մտավորականները, շատերի հետ Բ. Զանյանը նույնպես տեղափոխվում է Երևան ու այնտեղ շարունակում գրական ստեղծագործական աշխատանքը: 1968թ. աշխատելէ Հայաստանի հեռուստատոսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեի արտասահմանյան հայության համար տրվող հաղորդումների գլխավոր խմբագրությունում:

Հեղինակ է 30-ից ավելի գրական գեղարվեստական աշխատությունների, թարգմանությունների: Դրանցից են «Իմ լուսաբացը» (1948), «Լեռնային վտակներ» (1948), «Ճամփան» (1957), «Իմ Երևանը» (1960), «Իմ մոտիկ հեռուն» (1969), «Իշխանածորի կանաչը» (1986), ռուսերենից թարգմանել է Զ.Բալայանի«Երկնագույն ճանապարհներ» և այլ ստեղծագործություններ:

Բ.Զանյանը իր հուշերում անդրադարձել է Շուշիի մանկավարժականում սովորելու տարիներին, ուսումնարանի մանկավարժների բեղուն գործունեությանը, քաղաքի պատմությունը: «Ես սովորել եմ Շուշի քաղաքում և մտերմացել նրա ազնիվ քարերին: Քաղաք ասելիս աչքերիս առաջ փռվում է առաջին հերթին Շուշին, հայոց Շուշին, իմ Շուշին»[563]:

Շուշիի մանկավարժական ուսումնարանի շրջանավարտներից է պատմաբան մանկավարժ, գիտությունների թեկնածու, դոցենտ **Ռաֆիկ Մովսիսյանը (1914-1979):**

Ծնվել է Ստեփանակերտ քաղաքում, նախնական կրթությունը ստացել քաղաքի յոթնամյա դպրոցում, ավարտել Շուշիի մանկավարժական ուսումնարանը, ուսումը շարունակել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, ավարտել է 1938թ. և ընդունվել ասպիրանտուրա:

1941թ.կամավոր մեկնում է ռազմաճակատ, ծառայում մինչև ռազմական գործողությունների ավարտը, 1946թ.զորացրվում և վերադառնում է Երևան: Սկզբում որպես դասախոս աշխատել է գյուղինստիտուտում, այնուհետև 1953թ. Երևանի պետական համալսարանի պատմության ամբիոնում: 1953թ. Երևանի Կիրովյան շրջկոմի առաջին քարտուղարն էր: 1955թ.-ից նորից դասավանդել է Երևանի պետական համալսարանի պատմության ամբիոնում:

Պատմական գիտությունների թեկնածու է, դոցենտ, մի շարք հրապարակումների հեղինակ[564]:

Շուշիի մանկավարժական ուսումնարանի սաներից է **Խաչատուր Սիմոնյանը (1915-1988):** Ծնվել է Մարտակերտ ավանում, ավարտել տեղի յոթնամյա դպրոցը, ուսումը շարունակել Շուշիի մանկավարժական ուսումնարանում (1932-1935թթ.): Որպես տարրական դպրոցի ուսուցիչ աշխատել է Մարտակերտի, Կուսպատի միջնակարգ դպրոցներում:

1937թ. զորակոչվում է Կարմիր բանակ: Սովորում և ավարտում է Օդեսայի

հրետանային դպրոցը և ստանում լեյտենանտի կոչում: Առաջին իսկ օրից մինչև հաղթական ավարտը մասնակցել է Հայրենական պատերազմին, կռվել տարբեր ռազմաճակատներում, պարգևատրվել բազմաթիվ շքանշաններով:

Խաչատուր Սիմոնյանը, որպես գնդապետ, պատերազմից հետո, մինչև 1960թ. բանակում ծառայել է պատասխանատու պաշտոններում: 1961թ. զորացրվել է, ուսումը շարունակել Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: Ավարտելուց հետո մինչև թոշակի անցնելը աշխատել է իրավաբանության ամբիոնում, որպես ավագ դասախոս: Հեղինակ է մի շարք գիտական աշխատանքների[565]:

Շուշիի մանկավարժական ուսումնարանի սաներից է բազմավաստակ մանկավարժ, Ստեփանամերտի մանկավարժական ինստիտուտի ռեկտոր, մանկ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր **Սերգեյ Խալատրյանը (1920-1985):**

Ծնվել է Ասկերանի շրջանի Նորագյուղ գյուղում, սովորել տեղի, այնուհետև Խանաբադի յոթնամյա դպրոցներում: Ուսումը շարունակել է Շուշիի մանկավարժական ուսումնարանում, որը 1939թ. գերազանցությամբ ավարտելով, որպես ռուսաց լեզվի ուսուցիչ աշխատանքի է անցել Խոջալլուի դպրոցում:

Ծառայել է խորհրդային բանակում, Հայրենական մեծ պատերազմի մասնակից է, հաշմանդամ: Պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով, մարտական ծառայության 2 և 10 հոբելյանական մեդալներով:

1945թ. ավարտել է Լենինգրադի հրետանային բարձրագույն դպրոցը, երկու տարի աշխատել որպես Մագնիտոգորսկի լեռնամետալուրգիական ինստիտուտի ռազմական ամբիոնի դասախոս, միաժամանակ ավարտել Մագնիտոգորսկի մանկավարժական ինստիտուտը:

1949թ. ավարտել է Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժինը:

1948-1955թթ. ծառայել է ներքին զորքերի կազմում, Մախաչկալայի հակաօդային զինվորական վարչության պետն էր:

1955թ. սեպտեմբերից աշխատել է որպես Բաքվի թիվ150 դպրոցի տնօրեն, իսկ 1956-1974թթ.՝ Բաքվի Լենինյան շրջանի երկարօրյա դպրոցի տնօրեն:

Դասախոսել է Բաքվի մանկավարժական ինստիտուտում:

1973թ. մանկավարժական գիտությունների թեկնածու է:

1974թ. աշխատել է Ստեփանակերտի նորաբաց ինստիտուտում՝ որպես ռուսաց և օտար լեզուների ամբիոնի վարիչ, իսկ 1975թ. վերջին նշանակվում է ինստիտուտի ռեկտոր:

Ս.Խալատրյանը ունեցել է ակտիվ հասարակական-քաղաքական կյանք, կատարել է ուսումնամեթոդական բազմաթիվ աշխատանքներ: Հրատարակել է 3 բրոշյուր, 250 հոդվածներ:

1981թ. արժանացել է Ադրբեջանի վաստակավոր ուսուցչի կոչմանը:

1938-1939 ուստարում Շուշիի մանկավարժական ուսումնարանը գերազանցությամբ ավարտել է հասարակական-քաղաքական գործիչ **Սերգեյ Շաքարյանը (1921-2001):**

Ծնվել է Մարտունու շրջանի Կոլխոզաշեն գյուղում: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, հաղթանակով վերադարձել հայրենի գյուղ, ապա տեղափոխվել է Ստեփանակերտ, կատարել կուսակցական, տնտեսական աշխատանքներ:

1965թ. Շաքարյանը, որպես Ստեփանակերտի քաղգործկոմի նախագահ, Բագրատ Ուլուբաբյանը և 11 հայրենասեր մտավորականներ ու բարձրաստիճան ղեկավարների հետ նամակով դիմում են ԽՄԿԿ Կենտկոմի նախագահությանը՝ Ղարաբաղը մայր Հայաստանին վերամիավորելու հարցով: Սակայն նամակի հեղինակներին ազատեցին աշխատանքից և տվեցին կուսակցական խիստ նկատողություն:

Ս.Շաքարյանը ստիպված էր տեղափոխվել Երևան, որտեղ ևս վարել է տարբեր պաշտոններ:

Տնտեսական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր **Մելքոն Աթաջանյանը (1919-1993)** Շուշիի մանկավարժական ուսումնարանի 1940-1941 ուստարվա գերազանցիկ շրջանավարտ է: Յոթնամյա կրթությունը ստացել է Հաթերքի միջնակարգ դպրոցում,ավարտել մանկավարժական ուսումնարանը ու կամավոր մեկնել ռազմաճակատ:

1945թ. զորացրվել և վերադարձել է հայրենի գյուղ: Մեկ տարի ուսուցիչ աշխատելուց հետո 1946թ. ընդունվում է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: Ավարտելուց հետո ընդունվել է ասպիրանտուրա, պաշտպանել թեկնածուական ատենախոսություն և որպես դասախոս աշխատել համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում:

Շուշիի մանկավարժական ուսումնարանում է սովորել ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ **Աղասի Թավադյանը (1918-2008):**

Ծնվել է Ստեփանակերտի շրջանի Հունոտ գյուղում: Սովորել է Շուշիի ոչ լրիվ միջնակարգ դպրոցում: Ավարտելով մանկավարժական ուսումնարանը, 1937-1938թթ. որպես մաթեմատիկայի ուսուցիչ աշխատել է Շուշիքենդի (Շոշ) դպրոցում: 1938թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզմաթ ֆակուլտետը: 1941թ., համալսարանի 4-րդ կուրսից, կամավոր մեկնել է ռազմաճակատ: 1943թ. հիվանդության պատճառով զորացրվել և վերադարձել է Ղարաբաղ, զբաղվել ուսուցչական աշխատանքով: 1945թ. շարունակել է սովորել Երևանի պետական համալսարանի ֆիզմաթ ֆակուլտետում: 1947թ. առաջին կարգի դիպլոմով ավարտել և աշխատանքի է անցել համալսարանում, սկզբում որպես ասպիրանտ, ապա՝ որպես դասախոս բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնում: 1955թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1957թ. ստացել դոցենտի կոչում:

Մինչև 1970թ. Թավադյանն աշխատել է համալսարանում, նույն թվականի սեպտեմբերից՝ Լենինականի Մ.Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտում, որպես հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի վարիչ:

Պատմավիպասան **Հայկ Խաչատրյանը (1926-2001),** Շուշիի մանկավարժական ուսումնարանի 1943-1945 ուստարվա առաջին կարգի շրջանավարտներից մեկն էր, որը իր համառ աշխատանքով և գիտական անդադրում պրպտումներով նպաստեց հայագիտության դարավոր ավանդույթների զարգացմանը:

Ծնվել է Խաչենի հովտի (Ասկերանի շրջան) Դահրավ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի երկդասյան դպրոցում, այնուհետև՝ Բալլուջայի յոթնամյա դպրոցում, ուսումը շարունակել Շուշիի մանկավարժական ուսումնարանում: Երկու տարի հայոց լեզու և գրականություն է դասավանդել հայրենի երկրամասի դպրոցներում: 1950թ. ընդունվում է Երևանի պետական հա-

մալսարանի բանասիրական ֆակուլտետի հեռակա բաժինը, միաժամանակ աշխատանքի անցնում (1950-1951թթ.) Ղափան քաղաքի արվարձան՝ Լեռնահանքեր բանավանի միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար:

Այնուհետև նա նշանակվում է Ղափանի շրջխորհրդի գործկոմի ժողկրթության բաժնի վարիչ (1952-1954թթ.), իսկ 1955-1959թթ.՝ Ղափանի «Պղնձի համար» և «Քաջարան» թերթերի պատասխանատու քարտուղար, խմբագիր:

1960-ական թվականներին սկսվում է Հ.Խաչատրյանի բեղուն գործունեության շրջանը: 1960-1965թթ. նա աշխատում է Հայաստանի հեռագրական գործակալությունում՝ որպես թղթակից, բաժնի վարիչ, ապա՝ գլխավոր խմբագիր, իսկ 1965-1971թթ. եղել է «Հայրենիքի ձայն» թերթի խմբագրի տեղակալը: 1971թ. մինչև իր կյանքի վերջը եղել է Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրության գիտական և գրական հսկողության բաժնի վարիչ:

Հ.Խաչատրյանը գրական ասպարեզ է մտել 50-ական թվականներին, լայն ճանաչում ստացել 60-ականներին, երբ լուս է տեսել նրա «Տիգրան Մեծ» (1967) պատմավեպը: Այնուհետև մեկը մյուսի ետեից լույս տեսան տաղանդավոր պատմավիպասանի «Էրեբունի» (1968), «Արտավազդ» (1975), «Գրական տեղեկատու» (1975), «Վանատուր» պատմաշարը (1978), «Արտաշես» (1980), «Քերթողահայր» (1985), «Տրդատ Մեծի խաչը» (1996), «Հայոց թագուհիները» (1998), «Վաչագան» (1998) և այլ արժեքավոր ստեղծագործություններ:

Հայկ Խաչատրյանը անգնահատելի ծառայություն մատուցեց Արցախի մշակույթին, գրական ընտանիքին, հույս ու հենարան եղավ իր հայրենակիցներին Արցախյան գոյապայքարում:

Շուշիի մանկավարժական ուսումնարանի 1934-1935 ուստարվա շրջանավարտներից է անվանի մաթեմատիկոս, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ **Շաբո Մուսայելյանը (1916-1987):**

Ծնվել է Ստեփանակերտի շրջանի Դեմիրչիլար (Զրաղացներ) գյուղում, ավարտել Չանախչու (Ավետարանոց) դպրոցը, ուսումը շարունակել Շուշիի մանկավարժական ուսումնարանում, որն ավարտելուց հետո ընդունվել է Բաքվի պետական համալսարանի ֆիզմաթ ֆակուլտետը: Ծառայել է խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո, 1949թ. ընդունվել է ասպիրանտուրա ու սկսել աշխատել հայտնի գիտնական, ֆիզիկայի ու մաթեմատիկայի բնագավառում նշանավոր դեմք, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Ի.Ա.Կիբելի ղեկավարությամբ:

Պաշտպանելով թեկնածուական և դոկտորական թեզեր, Շաբո Մուսայելյանը 1949թ.-ից մինչև իր կյանքի վերջը աշխատել է ԽՍՀՄ հիդրոօդերևութաբանական գիտահետազոտական կենտրոնում: Նա զբաղվել է նաև մթնոլորտի հիմնախնդիրներով: 1978թ. լույս է տեսնում նրա «О природе некоторых сверхдлительных атмосферных процессов» գիրքը, իսկ 1984թ.՝ «Проблемы предсказуемости: состояния атмосферы и гидродинамический долгосрочный прогноз погоды»:

Շուշիի մանկավարժական ուսումնարանի 1934-1935 ուստարվա շրջանավարտ **Հովսեփ Բաղունցը (1915-1977)** անուրանալի ծառայություն ունի Լեռնային Ղարաբաղի, Հայաստանի առողջապահության համակարգում: Ավարտելով Հադրութի շրջանի Տումու միջնակարգ դպրոցը(1934թ.), ուսումը շարունակում է

նշված ուսումնարանում, այնուհետև բարձրագույն կրթություն է ստանում Դաղստանի բժշկական ինստիտուտում (1935-1940թթ.):

Ավարտելով ուսումը, Բաղունցը վերադառնում է Ստեփանակերտ և աշխատանքի անցնում մարզային հիվանդանոցում: 1940թ. զորակոչվում է Կարմիր բանակ, ծառայում մինչև Հայրենական մեծ պատերազմի ավարտը: Վերադառնում է Երևան, շարունակում աշխատել որպես բժիշկ: 1954թ.օգոստոսից նա աշխատում է ՀԽՍՀ ՆԳ նախարարությունում, որպես բժիշկ- նյարդաբան, իսկ 1952-1967թթ.՝ Երևանի 1-ին և 2-րդ հիվանդանոցներում: Երկար տարիներ եղել է Հայաստանի Հանրապետության փորձագիտական հանձնաժողովի բժիշկ-նյարդաբանը:

Հայրենիքին մատուցած ծառայությունների համար պարգևատրվել է մարտական և աշխատանքային մի շարք շքանշաններով ու մեդալներով:

ՀՀ բանակի փոխգնդապետ **Չերքեզ Դավթյանը (1921-2004)** ծնվել է Ասկերանի շրջանի Դահիրավ գյուղում: Գյուղի յոթնամյա դպրոցն ավարտելուց հետո ընդունվում է Շուշիի մանկավարժական ուսումնարանը, 1940թ. այն ավարտում գերազանցությամբ և որպես ուսուցիչ աշխատում Մեհթիշենի 7-ամյա դպրոցում մինչև1941թ. ապրիլի 10-ը:

1941թ. ապրիլի 12-ին զորակոչվում է խորհրդային բանակի շարքերը, մասնակցում Մեծ Հայրենականին: 1945թ. վերջերին զորացրվում է, վերադառնում հայրենի գյուղ և նշանակվում գյուղի 7-ամյա դպրոցի զինղեկ:

1952թ. որպես պահեստի սպա Չ.Դավթյանը երկրորդ անգամ է զորակոչվում ԽՍՀՄ զինված ուժեր և նշանակվում 89-րդ Թամանյան դիվիզիայի 1078 հրանոթային գնդի մարտկոցի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ:

1955թ. երկրորդ կեսին 89-րդ Թամանյան դիվիզիայի լուծարումից հետո Դավթյանը նշանակվում է ՀՀ Գորիսի շրջզինկոմիսարիատի 2-րդ բաժանմուքի պետ, աշխատում մինչև 1960թ. սեպտեմբերը, այնուհետև նա տեղափոխվում է ՀՀ Հոկտեմբերյանի շրջզինկոմիսարիատ՝ որպես 2-րդ բաժանմունքի պետ աշխատում մինչև 1971թ. մայիս ամիսը:

1971թ. մայիսից զինվորական թոշակի անցնելուց հետո Չ.Դավթյանը որպես զինղեկ, աշխատել է Երևանի թիվ 24, 198, 195 միջնակարգ դպրոցներում:

Իր բազմամյա անբասիր աշխատանքի և հայրենիքին մատուցած ծառայությունների համար Չ.Դավթյանը պարգևատրվել է բազմաթիվ մեդալներով և շքանշաններով:

Արտաշես Պողոսյանը (1922-2008) Հադրութի մանկավարժական ուսումնարանի 1940-1941 ուստարվա գերազանցիկ շրջանավարտներից է: Ծնվել է Հադրութի շրջանի Խծաբերդ գյուղում: Նախնական կրթությունը ստացել հայրենի գյուղի յոթնամյա դպրոցում, այնուհետև ավարտել նշված ուսումնարանը, աշխատել հայրենի գյուղի դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար:

1942-1946թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին:

1946թ. աշխատել է Բաքվի «Կոմունիստ» (հայերեն) թերթի խմբագրությունում, ապա վերադարձել հայրենի Խծաբերդ գյուղ:

1953թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, 1953-1958թթ. աշխատել «Խորհրդային գրականություն» ամսագրի խմբագրությունում՝պոեզիայի բաժնում:

1958-1960թթ. սովորել է Մոսկվայի Մ.Գորկու անվան գրականության ինստիտուտի գրական բարձրագույն դասընթացներում:

Մինչև 1967թ. աշխատել է «Հայֆիլմ» կինոստուդիայում՝ որպես կրկնօրինակման ավագ խմբագիր:

1967-1971թթ. բաժնի վարիչ էր ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի մամուլի պետական կոմիտեում:

1971-1975թթ. եղել է «Հայաստան» հրատարակչության մանկապատանեկան գրականության խմբագրության վարիչ:

Արտաշես Պողոսյանի գրչին են պատկանում «Փոթորկից հետո» (1955), «Պոեմներ» (1958), «Բախտը դժվար է տրվում» (1969), «Կապույտ հանգրվան» (1972), «Հիմն հողի և արևի» (1975) գրքերը և բազմաթիվ թարգմանություններ:

Շուշիի մանկավարժական ուսումնարանում է սովորել 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ **Ալեքսանդր Հակոբյանը (1925-1996):** Ծնվել է Ստեփանակերտի շրջանի Հարավ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է տեղի 8-ամյա դպրոցում, ուսումը շարունակել նշված ուսումնարանում և 1944թ. ավարտելով այն՝ մանկավարժական գործունեություն ծավալել Քռասնու 7-ամյա դպրոցում: 1949թ. տեղափոխվել է Բալլուջա և մանկավարժական աշխատանքը շարունակել տեղի միջնակարգ դպրոցում, որտեղ 1957-1979թթ. տնօրեն էր:

Ա.Հակոբյանի մանկավարժական աշխատանքը ուղեկցվել է ակտիվ հասարակական գործունեությամբ, Արցախյան շարժման օրերին:

Շուշիի մանկավարժական ուսումնարանի 1936-1937 ուստարվա գերազանցիկ շրջանավարտներից է (այդ ուստարում 9-ը շրջանավարտներ ավարտել են գերազանց գնահատականներով) կենսաբան-քիմիկոս **Աշոտ Բաղդասարյանը (1919-2004):**

Ծնվել է ԼՂ Մարտունու շրջանի Ճարտար գյուղում, սկզբնական կրթությունը ստացել հայրենի գյուղում, իսկ միջնակարգը՝ Շուշի քաղաքում: Ուսումնարանը ավարտելուց հետո նա մեկ տարի որպես ուսուցիչ աշխատում է հայրենի գյուղի դպրոցում, այնուհետև 1938թ. ընդունվում Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետը: 3-րդ կուրսից նա զորակոչվում է ռազմաճակատ, մասնակցում բազմաթիվ մարտական գործողությունների, ծանր վիրավորվում և 1943թ., որպես երրորդ խմբի հաշմանդամ, զորացրվում:

Զորացրվելուց հետո Ա.Բաղդասարյանը շարունակում է կիսատ թողած ուսումը Երևանի պետական համալսարանում: 1946թ. աշխատանքի է նշանակվում Հայկ. ԽՍՀ գիտությունների ակադեմիայի կենսաբանական ինստիտուտում: 1952թ.պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, նշանակվել ավագ գիտաշխատող:

Ա.Բաղդասարյանը մինչև թոշակի անցնելը (1984թ.) Ստեփանակերտում վարել է մի շարք ղեկավար պաշտոններ, պարգևատրվել մի շարք շքանշաններով, մարտական և հոբելյանական մեդալներով:

Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումը տվել է բարձորակ կադրեր, որոնք հետագայում դարձել են անվանի գիտնականներ, հասարակական գործիչներ, տնտեսագետներ, մանկավարժներ: Իրենց բեղմնավոր գործունեության տարիներին նրանք անգնահատելի ծառայություններ են մատուցել մեր ժողովրդին և ակնառու դեր խաղացել երկրամասի հասարակական կյանքի բոլոր

բնագավառներում: Մեր ձեռքի տակ եղած փաստագրական նյութերը և ժամանակակիցների հուշերը հնարավորություն են ընձեռել համառոտակի ներկայացնել նրանցից մի քանիսի բեղմնավոր գործունեությունը(ստույգ տեղեկությունների սղության պատճառով՝ նրանցից մի քանիսի ծննդյան թվերը չեն նշվում):

Գյուղտեխնիկումի 1928-1929 ուստարվա գերազանցիկ շրջանավարտներից է դոկտոր-պրոֆեսոր **Գուրգեն Շաքարյանը: Ծնվել է 1911թ.** [566] Մարտունու շրջանի Խնուշինակ գյուղում, սկզբնական կրթությունը ստացել հայրենի գյուղի 7-ամյա դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումում: 1929թ. ավարտելով տեխնիկումը, ընդունվում է Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտը, այնուհետև ուսումը շարունակում նույն ինստիտուտի ասպիրանտուրայում: 1937թ. Մոսկվայի անասնաբուժական ակադեմիայում պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն: 1946թ. նույն ակադեմիայում պաշտպանում է դոկտորական ատենախոսություն, միաժամանակ արժանանալով պրոֆեսորի կոչման: 1934թ. աշխատանքի է անցնում սկզբում ասիստենտի, ապա դոցենտի ու ամբիոնի վարիչի պաշտոնով: 1942-1955թթ., գրեթե մեկուկես տասնամյակ, Գ.Շաքարյանը եղել է Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի տնօրենը:

Նա հեղինակ է գրեթե 180 գիտական աշխատությունների, այդ թվում առաջին անգամ հայերեն լեզվով միկրոբիոլոգիայի դասագրքի (անասնաբուժական բաժնի ուսանողների համար): Ամբողջ 30 տարի նրա հետազոտությունների գլխավոր թեման եղել է հակաբիոտիկների հիմնահարցը, որոնց ուսումնասիրությանը նվիրել է 130 աշխատություն:

1965թ. Շաքարյանին շնորհվել է Հայկ.ԽՍՀ գիտությունների ակադեմիայի վաստակավոր գործչի պատվավոր կոչում, արժանացել է կառավարական բազում պարգևների:

Ավագ սերնդի արցախցիները առանձին սիրով են հիշում մեծավաստակ մանկավարժներ Արշավիր և Թամարա Քամալյաններին ու նրանց եղբորը՝ Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի շրջանավարտ **Գուրգեն Քամալյանին (ծնվ. 1913թ.):**

Գյուղտեխնիկումն ավարտելուց հետո Գուրգեն Քամալյանին հատուկ ուղեգրով ուղարկում են սովորելու Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտում, որտեղ ի հայտ են գալիս նրա արտակարգ ընդունակություններն ու կարողությունները: Ուսումը շարունակում նույն ինստիտուտի ասպիրանտուրայում, որտեղ և պաշտպանում է ատենախոսություն՝ ստանալով բիոքիմիական գիտությունների թեկնածուի աստիճան:

1941-1945թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Վերադառնալով, դասախոսական աշխատանքի է անցել նույն ինստիտուտի բիոքիմիայի ամբիոնում, այնուհետև մի քանի տարի վարել է ամբիոնի վարիչի պաշտոնը: 1952թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ ստանալով պրոֆեսորի կոչում:

Նա հեղինակ է 150 գիտական աշխատությունների, այդ թվում 1960թ. հրատարակված հայերեն լեզվով գրված առաջին և միակը հանդիսացող բիոքիմիայի դասագրքի:

1960թ. Քանալյանին շնորհվել է Հայկ.ԽՍՀ գիտությունների ակադեմիայի վաստակավոր գործչի պատվավոր կոչում: Այդ նույն տարում նրա նախաձեռնու-

թյամբ ինստիտուտում ստեղծվում է նյութատեխնիկական պրոբլեմային լաբորատորիա: Նա հանդիսանում է Հայաստանի գյուղատնտեսական բիոքիմիայի դպրոցի հիմնադիրը: Ամբողջ 17 տարի Քամալյանը եղել է Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի տնօրենը:

Գյուղտեխնիկումի սաներից է **Հրաչիկ Փարամազյանը: Ծնվել է 1929թ.** Մարտունու շրջանի Խերխան գյուղում, սկզբնական կրթությունը ստացել հայրենի գյուղի 7-ամյա դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումում, որը գերազանց գնահատականներով ավարտել է 1947թ.: Բարձրագույն կրթությունը ստացել է Բաքվի ժողովրդական տնտեսության ինստիտուտում: 1952թ. առաջին կարգի դիպլոմով ավարտելով ինստիտուտը, որպես ավագ տնտեսագետ աշխատել է Լեռնային Ղարաբաղում:

Հետագա տարիներին Փարամազյանը գիտամանկավարժական գործունեություն է ծավալել վերոնշյալ ինստիտուտում: 1958թ. հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական, իսկ 1966թ. դոկտորական ատենախոսություններ և գիտական կոչումով պաշտոններ զբաղեցրել նույն ինստիտուտում: Նրա գրչին են պատկանում մեծ քանակությամբ գիտական աշխատություններ, որոնցից մի քանիսը թարգմանվել են անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն և այլ լեզուներով:

Սուրեն Բարխուդարյանը, գյուղտեխնիկումի առաջին շրջանավարտներից է, ավարտել է 1926-1927 ուստարում: Ծնվել է 1909թ. Ասկերանի շրջանի Խանաձախ գյուղում, սկզբնական կրթությունը ստացել է գյուղի առաջին աստիճանի դպրոցում, այնուհետև ավարտել Բալլուջայի (Այգեստան) 7-ամյա դպրոցը, ապա ուսումը շարունակել գյուղտեխնիկումում: 1927թ. առաջին կարգի դիպլոմով այն ավարտելուց հետո, ընդունվել է Երևանի պետական համալսարանի գյուղատնտեսական բաժինը, սակայն չի ավարտել, շատերի հետ մոբիլիզացվել և ուղարկվել է գյուղական դպրոցներում որպես ուսուցիչ աշխատելու:

Երկար ընդմիջումից հետո 1934թ. Ս.Բարխուդարյանը ընդունվել է Ադրբեջանի պետական համալսարանի բնագիտական բաժնի 3-րդ կուրս: Ավարտելուց հետո նա աշխատանքի է անցել նույն ինստիտուտի մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնում, որին զուգընթաց եղել է քաղաքի թիվ 169 դպրոցի տնօրեն:

1943թ. Բարխուդարյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և նույն տարում արժանացել դոցենտի կոչման: Այդ ժամանակահատվածում նա մի քանի տարի տարի շարունակ աշխատել է Ադր. ԽՍՀ լուսավորության մինիստրի տեղակալի պաշտոնում:

1949թ. Բարխուդարյանը տեղափոխվում է Սանկտ-Պետերբուրգ և աշխատանքի անցնում ԽՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի Ի.Պ.Պավլովի անվան էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի ու պաթոլոգիայի(տնօրեն՝ Լ.Ա.Օրբելի), այնուհետև՝ Ի.Մ.Սեչենովի անվան ինստիտուտներում, որոնց հաջորդում է աշխատանքը բժշկական-փորձագիտական ինստիտուտում:

1955թ. Բարխուդարյանը կենսաբանական գիտությունների դոկտոր է: Նրա գրչին են պատկանում մի քանի տասնյակ գիտական աշխատություններ:

Գյուղտեխնիկումի 1949-1950 ուստարվա գերազանցիկ շրջանավարտ **Գևորգ Հակոբյանը ծնվել է 1930թ.** Մարտունու շրջանի Ճարտար գյուղում, որտեղ և ստացել է սկզբնական կրթությունը: Տեխնիկումն ավարտելուց հետո մի քանի տարի աշխատել է շրջանային կոմերիտական և կուսակցական մարմիններում,

հեռակա կարգով շարունակել ուսումը Կիրովաբադի (այժմ՝ Գյանջա) գյուղինստիտուտում:

Բարձրագույն կրթություն ստանալուց հետո Գ. Հակոբյանը ընդունվում է Կրասնոդարի պտղախաղողագործական գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրան, որտեղ պաշտպանում է ատենախոսությունը և ստանում գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1968թ. վերադառնում է Ստեփանակերտ և աշխատանքի նշանակվում Ստեփանակերտի զոնալ փորձակայանում՝ խաղողագործության և պտղագործության բաժնի վարիչի պաշտոնում:

1989թ. Գ.Հակոբյանը պաշտպանում է հաջորդ ատենախոսությունը և արժանանում գյուղատնտեսական գիտությունների դոկտորի կոչման:

1990-2012թթ. Գ.Հակոբյանը գիտամանկավարժական բեղմնավոր գործունեություն է ծավալել Արցախի պետական համալսարանում: 2013թ. սեպտեմբերից աշխատում է ագրարային համալսարանում՝ որպես ամբիոնի վարիչ: Նա հեղինակ է երկու տասնյակ աշխատությունների, գիտական բազմաթիվ հոդվածների:

Գյուղտեխնիկումի 1951-1952 ուստարվա գերազանցիկ շրջանավարտ **Վերդի Հակոբյանին** Սարդարաշենում պատկառանքով են հիշում: Տեխնիկումն ավարտելուց հետո փայլուն ընդունակությունների տեր երիտասարդը 1947թ. ընդունվում և 1952թ. գերազանցության դիպլոմով ավարտումէ Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտը, այնուհետև ուսումը շարունակում նույն ինստիտուտի պարազիտոլոգիայի ամբիոնին կից ասպիրանտուրայում: 1956թ. Վ.Հակոբյանը անասնաբուծական գիտությունների թեկնածու էր: 1955թ. սկսած նա աշխատել է Հայաստանի անասնաբուծական գիտահետազոտական ինստիտուտում, սկզբում կրտսեր, ապա՝ ավագ գիտաշխատողի պաշտոններում: 1987թ. Մոսկվայում, հելմինտոլոգիայի համամիութենական ինստիտուտում պաշտպանած ատենախոսությամբ արժանանում է անասնաբուժական գիտությունների դոկտորի աստճանի:

Վերջին ժամանակներս Վերդի Հակոբյանը զբաղեցնում էր Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի պարազիտոլոգիայի և անասնաբուժական-սանիտարական փորձաքննության ամբիոնի վարիչի պաշտոնը:

Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի սաներից է **Բորիս Սաղյանը,** ծննդով Մարտակերտի շրջանի Չափար գյուղից: 1958թ. ավարտելով տեխնիկումը՝ զորակոչվում է խորհրդային բանակի շարքերը: Վերադառնալով զինծառայությունից, 1961թ. ընդունվում և 1965թ. ավարտում է Երևանի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտը: 1971թ. աշխատանքի է անցնում նույն ինստիտուտում:

Ավարտելով Մոսկվայի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի ասպիրանտուրան, 1972թ. Բ.Սաղյանը պաշտպանում է թեկնածուական, իսկ 1991թ.՝ դոկտորական ատենախոսություններ: Այժմ նա մանկավարժական գիտությունների դոկտոր է:

Երկար տարիների գլխավորել է սամբոյի և ձյուդոյի գծով ՀՀ հավաքական թիմը, պատրաստել սպորտի 36 վարպետներ: Նա գիտական 48 աշխատությունների հեղինակ է:

Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի մեծ թվով շրջանավարտ-

ներ, ուսումը շարունակելով երկրի տարբեր բուհերում և աշխատելով տարբեր հաստատություններում, դարձել են գիտությունների թեկնածուներ, գիտության, սպորտի ու արվեստի գործիչներ, վաստակավոր ուսուցիչներ, ավագ սպաներ, գրողներ, լրագրողներ, որոնցից շատերը այսօր էլ մնում են մեր շարքերում (ցավոք, կան մահացածներ) և իրենց պատվաբեր գործը կատարում ժողովրդական տնտեսության տարբեր ոլորտներում ու հասարակական կյանքի տարբեր բնագավառներում: Հնարավորինս ճշտված են նրանց անուն-ազգանունները, հետագա ճակատագրերը: Հիշենք մի քանիսին ևս: Անասնաբուժական գիտությունների թեկնածուներ Ա.Գ.Մովսիսյան, Ս.Գ.Դանիելյան, Է.Ս.Գասպարյան, Ե.Ս.Մամունց, Ա.Խ.Սիմոնյան, Ա.Բ.Աղասյան, Է.Մ.Ղարայան, տեխնիկական գիտությունների թեկնածուներ Ա.Հ.Ամիրջանյան, Ս.Գ.Բեգլարյան, պատմական գիտությունների թեկնածու Գ.Ա.Հովհաննիսյան, գրականագետ Գ.Հովհաննիսյան (Հովնան), վաստակավոր ուսուցիչներ Ս.Ն.Արամյան, Ս.Պ.Սարգսյան, լրագրողներ Ս.Ս.Գրիգորյան, Զ.Հ.Թադևոսյան:

Ստեփանակերտի բժշկական ուսումնարանի շրջանավարտներից շատերը դարձել են բժիշկներ, գիտնականներ: Այստեղ են բժշկական այբուբենը սովորել Լեռնային Ղարաբաղում անուն հանած այնպիսի բժիշկներ,ինչպիսիք են Յուրի Գրիգորյանը, Եղիշե Փարամազյանը, Փարավոն Ադամյանը, Բենիամին Միրզոյանը, Իվան Հարությունյանը, Սվետլանա Սաֆարյանը, Արմո Միրզոյանը, Նապոլեոն Պետրոսյանը, Վերա Մուսայելյանը, Էդուարդ Ղահրամանյանը, Մանվել Բախշիյանը, Ալեքսանդրա Օսիպովան, Զինա Շաքարյանը, Սուրեն Սուվարյանը, Ռոզա Գրիգորյանը, Իրինա Գրիգորյանը, Բորիս Աղաբեկյանը… շուրջ 200 անուն, որոնց անհնար է թվարկել:

Ուսումնարանի նախկին սաներից շատերը էլ ավելի խորացան բժշկության մեջ՝ դառնալով հայտնի գիտնականներ, դրանով իսկ իրենց նպաստը բերելով հայրենական բժշկության զարգացմանը: Ներկայացնենք մի քանիսին:

1953թ. գերազանցության դիպլոմով ավարտելով Ստեփանակերտի բժշկական ուսումնարանը, **Նորայր Ավանեսյանը** նույն տարում ընդունվել է Ադրբեջանի պետական բշժկական ինստիտուտը, այնուհետև ուսումը շարունակել Կիևում, որտեղ ավարտել է ասպիրանտուրան: Թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելուց հետո աշխատանքի է անցել Երևանի հանրապետական հակապալարախտային դիսպանսերում, որպես վիրաբուժության բաժնի վարիչ, այդ պաշտոնում մնալով մինչև կյանքի վերջը:

Ստեփանակերտի բժշկական ուսումնարանը գերազանցության դիպլոմով ավարտելով՝ **Արտաշես Հակոբյանը** (ծնվ. Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղում) ուսումը շարունակում է Երևանի պետական բշժկական ինստիտուտում, որն ավարտում է 1957թ: Այնուհետև ավարտում է Լենինգրադի 1-ին բժշկական ինստիտուտի ուրոլոգիայի ամբիոնին կից ասպիրանտուրան և պաշտպանում թեկնածուական թեզ: 1967թ. Արտաշես Հակոբյանը նշանակվում է Երևանի թիվ 1 քաղաքային հիվանդանոցի ուրոլոգիական բաժանմունքի վարիչ: Հեղինակ է 50-ից ավելի գիտական աշխատությունների:

Ստեփանակերտի բժշկական ուսումնարանի գերազանցիկ շրջանավարտ **Ալեքսեյ Մամունցը** (ծնվ. 1935թ. Մարտակերտում) ուսումը շարունակել է Ադրբեջանի պետական բշժկական ինստիտուտում: Առաջին կարգի դիպլոմով ավարտե-

լով ինստիտուտը, Ա. Մամունցը գործուղվել է Մարտունու շրջանային հիվանդանոց:

1963-1967թթ. սովորել է Պերմի բշժկական ինստիտուտի ասպիրանտուրայում, պաշտպանել թեկնածուական ատենախոսություն, նույն ինստիտուտում աշխատել որպես ամբիոնի վարիչ:

Ասկերանի շրջանի Դաշբուլաղ գյուղի միջնակարգ դպրոցի շրջանավարտ, 1931թ.ծնված **Ռոլանդ Գրիգորյանը** գերազանցության դիպլոմով ավարտելով Ստեփանակերտի բժշկական ուսումնարանը, 1951թ. ընդունվել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը: 1968թ. պաշտպանել է թեկնածուական, այնուհետև դոկտորական ատենախոսություններ ընդհանուր վիրաբուժության գծով և աշխատանքի անցել նույն ինստիտուտի ընդհանուր վիրաբուժության ամբիոնում: Չորս տասնյակից ավելի աշխատություններն ու գիտական հոդվածները նրա երկարամյա գիտահետազոտական աշխատանքի արդյունք են:

Վերոշարադրվածից դժվար չէ եզրակացնել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում, չնայած Ադրբեջանի իշխանությունների ազգահալած քաղաքականության հետևանքով ստեղծված անբարենպաստ պայմաններին, այնուամենայնիվ, վերոնշյալ և ԼՂԻՄ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների բազմաթիվ շրջանավարտներ կանգնած էին մեր ժողովրդին ազնվորեն ծառայելու դիրքերում և ոչ միայն անգնահատելի ծառայություն են մատուցել գիտության զարգացման բնագավառում, այլև կրթել ու դաստիարակել են միջին որակի կադրերի մի ամբողջ սերունդ, որոնք հետագայում իրենց ուսերի վրա տարան արցախահայ մտավորականության նոր կադրեր պատրաստելու դժվարին, բայց պատվավոր գործը:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ (1938-1988թթ.)

1. Երկամյա մանկավարժական ինստիտուտի (ուսուցչական ինստիտուտի) գիտակրթական գործունեությունը 1938-1953թթ.

Բազմադարյան մշակույթի հարստացման և, մասնավորապես, մեր դպրության զարգացման համար վիթխարի նշանակություն են ունեցել հայոց բարձրագույն դպրոցները՝ Գլաձորի համալսարանը (1280-1340թթ.), Տաթևի համալսարանը (1340-1410թթ.), Կիլիկյան բարձր տիպի դպրոցը՝ Սիս ճեմարան համալսարանը (14-րդ դար), Երզնկայի բարձր տիպի դպրոցը՝ Կապուսի ճեմարանը (15-րդ դար), ինչպես նաև բարձր տիպի հոգևոր ուսումնարանները: Այսպիսով՝ 12-15-րդ դարերում սկզբնավորում է բարձրագույն կրթության կազմավորումը պատմական Հայաստանում: Ուսումնագիտական այդ հաստատությունները իրենց արգասավոր գործունեության տարիներին մեծ դեր են խաղացել ոչ միայն մշակույթի ոչնչացումից փրկելու, հայ ժողովրդի զավակներին կրթելու, նրանց մասնագիտություններ տալու, այլև օտար ազգերին ձուլվելու վտանգից փրկելու ազգապահպան վեհ գործում:

Հայ նոր դպրոցի կազմավորման շրջանում՝ 19-րդ դարում, հայկական բարձրագույն դպրոցներն էին Մոսկվայի Լազարյան ճեմարանը (1914թ.), Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1824թ.), Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1874թ.), Հայ լուսավորչական թեմերում գործող թեմական դպրոցները (Երևանում, Վրաստանում, Նոր Նախիջևանում, Շամախիում, Արցախում):

Հայաստանի բարձրագույն դպրոցի զարգացման երկրորդ փուլն ընդգրկում է խորհրդային շրջանը (1920-1988թթ.): Տարբեր ժամանակներում հիմնադրվում են բարձրագույն ուսումնական հաստատություններ. Երևանի պետական համալսարանը (1919թ. Գյումրիում, 1920թ. Երևանում), Կոնսերվատորիան (1923թ.), Անդրկովկասյան անասնաբուժական ինստիտուտը (1928թ.), Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը (այժմ՝ ՀՊՄՀ, 1922-1932թթ.), Երևանի բժշկական ինստիտուտը (1930թ.),Հայկական գյուղատնտեսական ինստիտուտը (1930թ.), Ինժեներատեխնիկական ինստիտուտը (1933թ.), առևտրակոոպետատիվ (1933թ.), Գյումրիի մանկավարժական ինստիտուտը (1934թ.), Երևանի Վ.Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտը (1935թ.): Հետագա տարիներին (1935-1975թթ.) Հայաստանում բացվում են նոր տիպի ուսումնական հաստատություններ:

Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում ձևավորված ավանդույթները հիմք են դարձել նաև Լեռնային Ղարաբաղում բարձրագույն կրթության կազմակերպման և զարգացման համար:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ԼՂԻՄ-ում բարձրագույն կրթական համակարգի հիմքերը դրվել են 1938-1939 ուստարում, երբ հիմնադրվում է երկամյա մանկավարժական ինստիտուտը: Իսկ ինչպիսի՞ պայմաններում է հիմնադրվել վերոհիշյալ ինստիտուտը:

Պատմամանկավարժական աղբյուրների ուսումնասիրություններից հայտնի է դառնում, որ Հայաստանում միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթա-

կան օջախների կազմակերպումը տեղի է ունեցել յուրօրինակ ձևով. նախ ստեղծվել է բարձրագույն ուսումնական հաստատություն և նոր միայն միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ: Այս ուշագրավ երևույթը բացատրվում է նրանով, որ բարձրագույն ուսումնական հաստատություններում աշխատելու համար կային բարձրորակ դասախոսական կադրեր և՛ տեղում, և՛ «դրսում»: Խոսքը վերաբերում է Խորհրդային Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների առաջնեկին՝ Երևանի պետական համալսարանին (1920թ.), որը հետագայում կադրեր է պատրաստել ոչ միայն Հայաստանի, այլև Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցների, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների համար: Հավաստի աղբյուրների համաձայն, 1920-30-ական թվականներին Հայաստանում ընդլայնվում էր ինչպես միջնակարգ մասնագիտական, այնպես էլ բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանցը:

Սակայն, ինչպես նշվել է, Լեռնային Ղարաբաղում մանկավարժական կրթությամբ կադրերի պատրաստումը սկզբում կատարվում էր հատուկ մանկավարժական թեքում ունեցող երկրորդ աստիճանի դպրոցներում, հետագայում՝ մանկավարժական տեխնիկումներում, ուսումնարաններում (այդ մասին տես աշխատության 5-րդ գլուխը): Նշենք նաև, որ մարզում 1922-1930-ական թվականներին կազմակերպվում էին միայն միջնակարգ մասնագիտական կրթական օջախներ, որոնք կադրեր էին պատրաստում ժողովրդական տնտեսության, կրթության և առողջապահության ոլորտի համար:

Քննարկվող ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղում որոշակի հաջողություններ են ձեռք բերվել նաև բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառում: Խորապես մտահոգված լինելով մարզում մասնագիտական կրթության հիմնադրման և բարձրորակ կադրերի պատրաստման հարցերով՝ հայրենասեր գործիչներն ակտիվ աշխատանք են տանում երկրամասում հիմնադրելու բարձրագույն ուսումնական հաստատություն:

Եվ այսպես, մարզի հանրակրթական դպրոցները բարձրագույն կրթություն ունեցող որակյալ ուսուցչական կադրերով ապահովելու հարցը պարբերաբար քննարկվում է 1939թ. մարտ-ապրիլ ամիսներին հրավիրված՝ ԼՂ լուսժողկեմի կոլեգիայի նիստերում: Մարզլուսբաժնի կողմից ներկայացված նախագիծը՝ երկամյա մանկավարժական ինստիտուտի բյուջեն, կառուցվածքը, ուսումնական հաստատության ներքին կյանքին առնչվող այլ հարցեր, քննարկվում է նաև կուսակցության ԼՂ մարզկոմի բյուրոյի նիստում և հավանության արժանանում, իսկ այնուհետև քննարկվում և հաստատվում է Ադրբեջանի լուսժողկոմի կոլեգիայում, որից հետո Ադրբեջանի կառավարությունը հունիսի 17-ին որոշում է ընդունում Շուշիի մանկավարժական ուսումնարանի շենքում բացել մանկավարժական ինստիտուտ՝ երկամյա դասընթացով: Ի դեպ նշենք, որ մարզի հայ մտավորականները (Ս.Աբրահամյան, Ս.Հայրապետյան, Լ.Վարդունի, Ա.Խաչատրյան, Գր.Գրիգորյան և ուրիշներ) պահանջում էին երկամյա ինստիտուտը բացել Ստեփանակերտում, սակայն Բաքվի իշխանությունները համառորեն «ինտերնացիոնալ» կրթօջախը բացեցին Շուշիում՝ հետապնդելով քաղաքական հեռահար նպատակներ: Լուսժողկոմի որոշման հիման վրա հաստատվեց նաև նորաստեղծ ինստիտուտի կանոնադրությունը, որի համաձայն, ինստիտուտը պետք է ունենա հայկական, ադրբեջանական և ռուսական բաժիններ: Ադրբեջանի լուսժողկոմատի 1939թ. հունիսի 20-ի և ԼՂ լուսժողկոմի հունիսի 24-ի որոշումներով հաստատվեց ինստիտուտի վարչատնտեսական ապարատի կազմը. հաստիքները բաղկացած էին 40

հոգուց՝ դիրեկտոր (տնօրեն), ուսումնական մասի վարիչ, դեկան, ամբիոնի վարիչ, դասախոսական կազմ (սկզբում 25), ուսումնական օժանդակ անձնակազմ:

ԼՂ լուսժողկոմի առաջնահերթ խնդիրներից մեկն էլ եղավ նորաստեղծ ինստիտուտի կանոնադրության մշակումը, և այդ նպատակով կազմվեց հանձնաժողով (լուսժողկոմ Գ.Բաղյան՝ նախագահ, անդամներ՝ Ս.Աբրահամյան, Լ.Վարդունի, Ս.Հայրապետյան), որը շուտով մշակում է կանոնադրության նախագիծը, որը քննարկվում ու հաստատվում է 1939թ. օգոստոսի 20-ին: Երկամյակի կանոնադրությունը և նրա առաջին շրջանի գործունեությունը ցույց են տալիս, որ հենց սկզբից հաշվի էին առնվել Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների փորձը, 1920-1938թթ. ընթացքում բարձրագույն դպրոցի վերակառուցման համար ձեռնարկված միջոցառումները: Երկամյա մանկավարժական ինստիտուտը առաջին իսկ օրվանից իր աշխատանքը սկսեց որպես մարզում առաջին բարձրագույն տիպի դպրոց:

Ինստիտուտի կանոնադրությունում նշվում է, որ ինստիտուտի բարձրագույն օրգանը նրա խորհուրդն է, որի մեջ մտնում են տնօրենը (նախագահ), ուսումնական մասի վարիչը, դեկանները, ամբիոնների վարիչները, երեք ներկայացուցիչ դասախոսներից, մեկական ներկայացուցիչ լուսժողկոմատից, արհմիությունից, հինգ ներկայացուցիչ ուսանողներից: Ըստ կանոնադրության՝ խորհրդում ուսանողների ներկայացուցիչների մասնակցությունը նախատեսված էր բուհերի ղեկավարման գործին ուսանողությանը մասնակից դարձնելու, բարձրագույն դպրոցը դեմոկրատացնելու համար: Ի դեպ, նշենք, որ լուսժողկոմի 1939թ. նոյեմբերի 18-ի որոշմամբ հրահանգ է տրվել միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների, նորաստեղծ ինստիտուտի ղեկավարման գործին մասնակից դարձնել նաև ուսանողությանը, և այդ սկզբունքն իր արտահայտությունը գտավ նաև երկամյա մանկավարժական ինստիտուտի կանոնադրության մեջ, թեև այնտեղ միաժամանակ առաջ էր քաշվում բուհի ղեկավարի՝ տնօրենի (ռեկտորի) միանձնյա պատասխանատվությունը[567]:

Ըստ կանոնադրության, երկամյա մանկավարժական ինստիտուտի խորհրդի իրավասության մեջ մտնում էին հետևյալ խնդիրները՝ վարչակազմի ղեկավարությունը, ֆակուլտետների կողմից առաջադրվող դասախոսների հաստատումը, բյուջեի սահմանումն ու իրացումը, տնօրենի (դիրեկտորի) ընտրությունը: Տարաձայնությունների դեպքում հարցի վերջնական լուծումը վերապահվում էր ԼՂ լուսժողկոմին: Երկամյակի խորհրդում լուսժողկոմի ներկայացուցիչն էր Սուրեն Հայրապետյանը: Թեև խորհրդի նիստում հարցերը ընդհանրապես լուծվում էին բաց քվեարկությամբ(եթե խորհրդի անդամների մեկ քառորդը չէր պահանջում փակ քվեարկություն), սակայն տնօրենի, վարչության անդամների և դասախոսների ընտրությունը կատարվում էր փակ քվեարկությամբ: Կանոնադրությունից երևում է, որ երկամյա ինստիտուտի ղեկավարման համակարգը հենց սկզբից դեմոկրատական բնույթ ուներ, որն ապահովում էր դասախոսների և ուսանողների լայն մասնակցությունը արմատական հարցերի քննարկմանն ու լուծմանը: Անշուշտ, այդ ավանդույթները հետագայում շարունակվել են նաև Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում(1969-1988թթ.) և Լեռնային Ղարաբաղի անկախության շրջանում՝ Արցախի պետական համալսարանում 1992թ.-ից առայսօր:

1938-1939 ուստարվա սկզբին ԼՂ լուսժողկոմատը հրավիրում է երկամյա մանկավարժական ինստիտուտի խորհրդի առաջին նիստը, որտեղ ներկայացվում է երկամյակի տնօրենի նշանակման հրամանը, սակայն առաջարկվում է տնօրենի ընտրությունը կատարել փակ գաղտնի քվեարկությամբ: Հրամանի հա-

մածայն՝ խորհրդի մեծամասնության քվեարկությամբ տնօրեն է ընտրվում Մոսկվայի պետական համալսարանի շրջանավարտ, մաթեմատիկոս Ջավադ Մայիլյանը: Իր գործունեության տարիներին անվանի մանկավարժը Մարտունու, Հադրութի, Շուշիի դպրոցներում, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում ձեռք բերած երկարամյա հարուստ փորձն ի սպաս դրեց ինստիտուտի ուսումնադաստիարակչական աշխատանքերի արդյունավետ կազմակերպման, ուսումնանյութական բազայի հարստացման, դասախոսական որակյալ կադրերով ապահովելու գործին:

Երկամյակում դասախոսական աշխատանքի են հրավիրվում մարզում ճամաչված վաստակաշատ մանկավարժներ Ա.Մարտիրոսյանը, Ս.Աբրահամյանը, Կ.Դավթյանը, Ս.Հայրապետյանը, Վ.Ստեփանյանը, Ս.Արամյանը, Տ.Ալեքսանդրովան, Գ.Գրիգորյանը, Թ.Ամիրջանյանը, Ջ.Մայիլյանը (առաջին տնօրեն), Ս.Հովհաննիսյանը, Խ.Բալյանը և ուրիշներ:

Ի պատիվ մեր անցյալի մտավորականության պետք է ասել, որ նրանք կանգնած էին մեր ժողովրդին ազնվորեն ծառայելու դիրքերում և անգնահատելի ծառայություն մատուցեցին մեր ժողովրդին ոչ միայն գիտության զարգացման բնագավառում, այլև կրթեցին ու դաստիարակեցին մարզի առաջին բարձրագույն ուսումնական հաստատության մի ամբողջ սերունդ և իրենց ուսերի վրա տարան արցախահայ մտավորականության նոր կադրեր պատրաստելու դժվարին, բայց պատվավոր գործը:

Հարկ է նշել, որ երկամյա մանկավարժական ինստիտուտի բացումը, չնայած նրա «ինտերնացիոնալ» լինելուն, բացառիկ կարևոր իրադարձություն էր Լեռնային Ղարաբաղի հայության կյանքում, քանի որ հայ մտավորականությունը լայն հնարավորություն էր ստանում աշխատելու մարզում և ծառայելու հարազատ ժողովրդի գիտական ու հոգևոր պահանջմունքներին:Հիրավի, երկրամասի հայ երիտասարդության համար բացվեցին մայրենի լեզվով բարձրագույն (ոչ լրիվ բարձրագույն) դպրոցի դռները: Դրանով պետք է բացատրել այն մեծ ոգևորությունն ու խանդավառությունը, որով Հայաստանի մտավորականությունն ընդունեց երկամյակի բացման լուրը: Այդ ուրախության փաստը մեծ ցնծությամբ ընդունեց նաև մարզի սահմաններից դուրս բնակվող (Շահումյանի, Խանլարի շրջանների, Կիրովաբադ քաղաքի, Բաքվի շրջանների) հայաշատ վայրերի մտավորականությունը, որը խորապես գիտակցում և բարձր էր գնահատում ազգային կրթօջախի պատմական դերը: Ինչպես վկայում են երկամյակի դասախոսների (Ս.Աբրահամյան, Կ.Դավթյան, Ս.Հայրապետյան և ուրիշներ) և շրջանավարտների (Ն.Ավետիսյան, Մ.Բեգլարյան, Վ.Գրիգորյան և ուրիշներ) հուշերը[568], ուսումնագիտական այդ կրթօջախում սովորել են (1939-1953թթ.) նաև վերոնշյալ և այլ շրջանների հայ երիտասարդները: Պատահական չէ, որ Բաքվի հայ համայնքի միությունը(որի անդամներ էին նաև Բաքվի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնի դասախոսները) նորաբաց ինստիտուտի տասնամյա պատմության տարեդարձի (1949-1950 ուստարվա սեպտեմբերին) առթիվ ուղարկած իրենց ողջույնի նամակում գրում էին. «Երկամյա մանկավարժական ինստիտուտի պատվարժան տնօրինությանը. Դուք անհնարին պայմանների մեջ, բազում դժվարությունների դեմ պայքարելով, հայ մտավորականության հետ համագործակցելով՝ հայոց արցախական աշխարհում ստեղծեցիք հայկական մշակութային բարձրագույն գիտակրթական օջախ՝ վերականգնելով մեր բազմադարյան քաղաքակրթությունն ու մեսրոպյան դպրության ավանդույթները»[569]:

Փաստագրական նյութերի վերլուծությունը ցույց է տվել, որ երկամյա մանկա-

վարժական ինստիտուտը, ինչպես նշվեց, բացվեց մարզի համար չափազանց ծանր պայմաններում: Այդ հանգամանքը, բնականաբար, չէր կարող չանդրադառնալ նրա գործունեության վրա, մանավանդ սկզբնական շրջանում: Սակայն տնտեսական այդպիսի անմխիթար պայմաններում անգամ մարզային ղեկավար մարմինները, լուսժողկոմատը մեծ դժվարություններով անում էին հնարավոր ամեն ինչ՝ երկամյակի համաչափ աշխատանքն ապահովելու համար:

Սկզբնական շրջանում՝ 1939-1940 ուստարում, ինստիտուտի հայկական, ադրբեջանական և ռուսական բաժիններում գործում էին լեզվագրական, ֆիզմաթ և պատմության ֆակուլտետներ՝ 250-300 ուսանողներով: Ըստ ֆակուլտետների ստեղծվեցին դեկանատներ, համապատասխան ամբիոններ: Ամբիոնները մեծ դեր խաղացին դասընթացների որակի բարձրացման, մասնագետների համախմբման, ուսումնական ծրագրերի ու դասավանդման մեթոդների մշակման գործում: Հայրենական պատերազմի նախօրյակին՝ 1940թ, երկամյա ինստիտուտի ադրբեջանական բաժնի լեզվագրական ֆակուլտետին կից բացվեց հեռակա բաժին՝ 28 ուսանողով: Ինստիտուտի դասախոսների թիվը հասնում էր 35-40-ի, որից գիտությունների թեկնածու՝ 1, դոցենտ՝ 2, ավագ դասախոս՝ 22, իսկ մնացածը՝ դասախոսներ, ասիստենտներ:

Չնայած երկամյակի հայկական բաժնի գործունեության համար անհրաժեշտ նյութական միջոցների սղությանը, ուսումնական կաբինետների սարքավորումների, ինչպես նաև որոշ մասնագիտությունների ակնհայտ պակասին(մանավանդ, որ Ադրբեջանի իշխանությունները արգելում էին Հայաստանից մասնագետների այցելությունը Ղարաբաղ), այնուամենայնիվ, նախապատերազմական շրջանում (1939-1941թթ.), ինստիտուտի պարապմունքներն ընթանում էին միանգամայն կազմակերպված ձևով: Որոշակիորեն զգացվում էին երիտասարդության՝ ուսման անսահման ծարավը, դասախոսների ոգևորությունը, դժվարությունները հաղթահարելու նրանց պատրաստակամությունն ու կամքը: Սակայն ընդամենը երեք ուսումնական տարում, երկամյա մանկավարժական ինստիտուտի գիտակրթական համակարգում իրականացվող բարեփոխումները ժամանակավորապես դադարեցին պատերազմական պայմաններին համապատասխան վերափոխվեցին ուսումնական պլանները, ծրագրերը, արտաուսումնական (արտալսարանային) դաստիարակչական աշխատանքի կազմակերպման ձևերը:

Փաստագրական նյութերից տեղեկանում ենք, որ Հայրենական մեծ պատերազմի տարիներին զգալի փոփոխություններ տեղի ունեցան ինստիտուտում: Բազմաթիվ արցախցիների հետ պատերազմ մեկնեց նաև ինստիտուտի առաջին տնօրեն Ջավադ Մայիլյանը և տնօրեն նշանակվեց պատմաբան, ճանաչված մանկավարժ Աղասի Սաֆարյանը (1941-1947թթ.):

Ռազմական պայմաններին համապատասխան վերանայվեցին ուսումնական պլաններն ու ծրագրերը, որպեսզի ավելի արագ ապահովվի տարբեր մասնագիտությունների գծով կադրերի պատրաստումը: Փոփոխության ենթարկվեց նաև ուսումնական հաստատության աշխատանքային ռեժիմը: Ինստիտուտում ուսանողների շաբաթական ծանրաբեռնվածությունը հասավ 38-42 ժամի: Կրճատվեցին ուսման, կիսամյակային քննությունների և ամառային արձակուրդների ժամկետները: Երիտասարդ դասախոսների, 2-րդ կուրսից ուսանողների մի մասի ճակատ մեկնելու պատճառով 1941-1942 ուստարում կտրուկ նվազեց նրանց քանակը: Մի մասն էլ թերավարտ վկայականներով աշխատանքի անցավ մարզի հանրակրթական դպրոցներում՝ փոխարինելով պատերազմ մեկնած ուսուցիչներին: Այդ մասին տեղեկանում ենք այն տարիների շրջանավարտներ Ռոզալիա Իվա-

նովնայի, Վլադիմիր Գրիգորյանի, Ալեքսանդր Հարությունյանի, Սեդա Շահնազարյանիև ուրիշների մեզ տրամադրած նյութերից:

1944-1945 ուստարում, երբ Հայրենական պատերազմի ընթացքի մեջ տեղի ունեցավ արմատական բեկում, ինստիտուտի դասախոսների և ուսանողների թիվը սկսեց աճել: 2-րդ կուրսի ուսանողներին այլևս բանակ չէին զորակոչում, միաժամանակ ուսանողների շարքերը համալրեցին ռազմաճակատայիններ, որոնք բանակից զորացրվել էին վիրավորվելու և այլ պատճառներով: Մեծ հաղթանակի նախօրյակին վերականգնվեց ինստիտուտի նախկին ռիթմը:

Արխիվային նյութերը վկայում են, որ հետպատերազմյան շրջանում՝ 1945-1946 ուստարում, երկամյա ինստիտուտի ներքին կյանքում կատարվում են զգալի փոփոխություններ: Այդ ուսումնական տարվանից սկսած՝ լեզվագրականը և պատմականը միացվեցին և կոչվեց պատմալեզվագրական (պատմաբանասիրական) ֆակուլտետ: 1946թ. սեպտեմբերի 1-ին, երբ երկամյա ինստիտուտը տեղափոխվեց Ստեփանակերտ, հիմք դրվեց նոր՝ բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի:

Անվանի մանկավարժ, պատմաբան Գրիգոր Հովհաննիսյանի տնօրինության շրջանում (1947-1951թթ.) Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի ներքին կյանքում տեղի ունեցան լուրջ փոփոխություններ, բացվեցին նոր ամբիոններ, դեկանատ՝ հեռակա բաժնի համար, կաբինետներ, լաբորատորիաներ, ընդլայնվեցին ինստիտուտի հնարավորությունները, ամրապնդվեց ուսումնանյութական բազան, բարելավվեց ուսումնական աշխատանքի կազմակերպման գործը: Ինստիտուտի դասախոսական կազմը համալրվեց բարձորակ մասնագետներով: Ինչպես տեսանք, ինստիտուտի հիմնադրման առաջին շրջանում ստիպված էին օգտագործել դպրոցի, ժողկրթության ասպարեզի առաջատար մասնագետներին, որոնք, հնարավորություն տվեցին սկսել և առաջ տանել ինստիտուտի կազմակերպման գործը: Ինստիտուտում դասախոսելու են հրավիրվում Երևանի, Թիֆլիսի, Բաքվի, Մոսկվայի բարձրագույն ուսումնական հաստատություններում բազամյա փորձ ունեցող գիտնականներ, որոնք ուրախությամբ են ընդունում Ղարաբաղի նորաստեղծ ինստիտուտում աշխատելու հրավերը: Նկատի ունենք փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր Հրաչիկ Սիմոնյանին, մանկավարժության դոկտոր, պրոֆեսոր Հրաչիկ Քարամյանին (դասավանդել է Բաքվի, Երևանի բուհերում), գիտությունների թեկնածու, դոցենտ Կարո Դավթյանին, Սարգիս Ոսկերչյանին, պրոֆեսոր Ա. Տեր-Գասպարյանին, ավագ գիտաշխատող Գեորգի Հովհաննիսյանին և ուրիշների: Աստիճանաբար դասախոսական կազմը համալրվում է նաև մարզում ճանաչված մանկավարժներով, որոնք բարձրագույն որակավորում են ստացել Երևանի պետական համալսարանում, Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում, Վ.Բրյուսովի անվան ինստիտուտում, Մոսկվայի համալսարանում և այլ բուհերում: Նրանցից են Բոգդան Ջանյանը, Բագրատ Ուլուբաբյանը, Սարգիս Արամյանը, Սուրեն Հայրապետյանը, Միքայել Ասրյանը, Միշա Պետրոսյանը, Արմենակ Ղալայանը, Լևոն Բաղդասարյանը և ուրիշներ: Սակայն հայտնի մտավորականների մի մասը հալածվեց Բաքվի ազգայնամոլ իշխանությունների կողմից, մի մասն էլ (Բոգդան Ջանյան, Սարգիս Ոսկերչյան, Խորեն Բալայան, Արտավազդ Ավագյան և ուրիշներ) ստալինյան ռեպրեսիայի շրջանում անարդարացիորեն աքսորվեց Սիբիր:

1950-1951 ուսումնական տարում ինստիտուտի տնօրեն Գրիգոր Հովհաննիսյանն ընտրվեց կուսակցության ԼՂ մարզկոմի քարտուղար և նրան փոխարինեց մարզում ճանաչված մանկավարժ (հետագայում՝ 20-րդ դարի Արցախի լավա-

գույն մանկավարժ) Սուրեն Հայրապետյանը, որը զգալի աշխատանք է կատարում երկամյակում ուսումնադաստիարակչական աշխատանքերն արդյունավետ կազմակերպման ուղղությամբ:

Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտը 1939-1953թթ. ժամանակաշրջանում տվել է շրջանավարտների 6 սերունդ, 450-ից ավելի բարձրորակ մանկավարժներ: Շրջանավարտներից լավագույնները դասախոսական, ասիստենտական ու լաբորատոր աշխատանքի պահվեցին հենց երկամյա մանկավարժական ինստիտուտում (Աշոտ Շահինջանյան, Սերգեյ Հախումյան, Մակեևա Ռիմա, Վլադիմիր Գրիգորյան և ուրիշներ), իսկ մի մասն էլ աշխատանքի անցավ մարզի հանրակրթական դպրոցներում, ժողկրթության մարմիններում, կուսակցության մարզկոմի ապարատում և այլ հիմնարկ-ձեռնարկություններում:

Այսպիսով՝ երկամյա մանկավարժական ինստիտուտի՝ Արցախի Հանրապետության պետական և ոչ պետական բուհերի առաջնեկի հիմնադրումը բացառիկ երևույթ էր Արցախի ժողովրդի կյանքում: Դա ժողովրդի ու նրա լուսավորության նկատմամբ Արցախի հայրենասեր ղեկավարների, մտավորականության ցուցաբերած մեծագույն հոգատարության վառ արտահայտություններից էր:

Չնայած Ադրբեջանի կառավարության հայատյաց քաղաքականությանը, որ ամեն կերպ ձգտում էր խեղդել երկրամասում ազգային ինքնագիտակցության զարթոնքը, սահմանափակել հայեցի կրթության շրջանակները և լայն հնարավորություններ տալ ադրբեջանական բաժնին, այնուամենայնիվ, երկամյա մանկավարժական ինստիտուտն իր գործունեության տարիներին դուրս է եկել իր համար գծված նեղ շրջանակներից և դրական դեր խաղացել մարզի մշակույթի, լուսավորության, գիտության, հասարակական և քաղաքական կյանքի տարբեր բնագավառներում:

Սակայն մեծ աղմուկով բացված՝ Արցախում առաջին ոչ լրիվ ուսումնական հաստատության գիտամանկավարժական գործունեությունը շատ կարճ տևեց: Այն փակվեց 1953թ. և հայկական բաժինը տեղափոխվեց Բաքվի Լենինի անվան մանկավարժական ինստիտուտ: Դասախոսների մի մասը իր գործունեությունը շարունակեց Բաքվի մանկավարժական ինստիտուտում, իսկ մյուս մասը՝ մարզի միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, հանրակրթական դպրոցներում և այլ տեղերում:

2. Երկամյա մանկավարժական ինստիտուտի տնօրենների գործունեությունը 1939-1953թթ.

Երկամյա մանկավարժական ինստիտուտի առաջին տնօրեն **Զավադ Մայիլյանը** ավարտելով Հադրութի երկրորդ աստիճանի 9-ամյա (միջնակարգ) դպրոցը ուսումը շարունակում է Մոսկվայի համալսարանի ֆիզմաթ ֆակուլտետում: Առաջին կարգի դիպլոմով այն ավարտելուց հետո վերադառնում է Ղարաբաղ, մանկավարժական գործունեություն ծավալում Հադրութի, Մարտունու, Շուշիի շրջանի դպրոցներում՝ որպես մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ, ուսմասվար, տնօրեն:

Մարզային լուսբաժինը գնահատելով դպրոցի պրակտիկայում արդեն ճանաչված ու հեղինակություն վայելող մանկավարժի մեթոդամանկավարժական պատրաստվածությունն ու կոլեկտիվը ղեկավարելու ունակությունները, նրան նշանակում է նորաբաց ինստիտուտի տնօրեն:

Ղեկավարվելով կոլեկտիվը կառավարելու ժողովրդավարական սկզբունքով,

Ձ.Մայիլյանը իր շուրջն է համախմբում փորձառու մանկավարժներին, հաշվի առնում նրանց առաջարկությունները, մշակում բուհի գործունեության ուղղությունները: Վաստակաշատ մանկավարժ Թեմուր Ամիրջանյանը հետագայում իր հուշերում գրում է, որ Ձ.Մայիլյանը, որպես տնօրեն, կարողանում էր կոլեկտիվին նպատակաուղղել մտածելու բուհի մասին: Նրա ղեկավարության շրջանում կոլեկտիվում ձևավորվել է համագործակցության և փոխօգնության հարաբերությունների ոգին և այդ պարագայում կոլեկտիվի յուրաքանչյուր անդամ ցուցաբերել է սեփական նախաձեռնությունն ու պոտենցիալ հնարավորությունները[570]:

Փորձառու մանկավարժը երկամյակի գործունեության առաջին իսկ օրերից ձեռնամուխ եղավ բուհը մանկավարժական բարձրորակ կադրերով համալրելու գործին: Նրա մշակած աշխատանքային պլանի համաձայն սկզբում ձևավորվեցին ֆակուլտետները(հայկական, ադրբեջանական և ռուսական բաժիններում), հայկական՝ լեզվագրական, ֆիզմաթ և պատմության ամբիոնները՝ հայոց լեզվի և գրականության, պատմության նաշխարհագրության, մաթեմատիկայի և ֆիզիկայի, այնուհետև աստիճանաբար ստեղծվում են կահավորված ուսումնական կաբինետներ, գրադարան, ընթերցասրահ:

Գիտխորհրդի 1939թ. հոկտեմբերի 16-ի նիստում երկամյակի տնօրեն Ձ.Մայիլյանը ստորաբաժանումների ղեկավարներին (ամբիոնների վարիչներ, դեկաններ, ուսումնական մասի վարիչ, առարկայական կաբինետների լաբորանտներ, գրադարանի վարիչ, տնտեսական մասի վարիչ) հանձնարարում է գիտխորհրդի հաստատմանը ներկայացնել ուսումնական տարվա աշխատանքային պլանը, որտեղ նշված լինեն նպատակները, խնդիրները, գլխավոր ուշադրությունը հատկացվի ինստիտուտում ուսումնադաստիարակչական աշխատանքերի արդյունավետ կազմակերպմանն ու որակի բարձրացմանը: Երկամյակի տնօրենի կարգադրությամբ առաջադեմ ուսանողների մի մասը ստանում էր դրամական օժանդակություն և պարգևներ՝ գրքեր և այլ իրեր:

Չնայած կարճատև գործունեությանը, Ձ.Մայիլյանը երկամյա մանկավարժական ինստիտուտի գիտակրթական համակարգի զարգացման գործում մեծ երախտիք ունի: Ստանձնելով տնօրենի պաշտոնը, նա ծավալուն աշխատանք է կատարել ուսումնական հաստատությունը բարձրորակ կադրերով ապահովելու, ուսանողական համակազմը հավաքագրելու, ընդունելության քննությունները կազմակերպելու, ուսումնադաստիարակչական աշխատանքների մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրը Ձ.Մայիլյանը բազմաթիվ արցախցիների հետ մեկնեց ռազմաճակատ: ԼՂ մարզլուսբաժնի վարիչ Գրիգոր Գրիգորյանի հրամանով երկամյակի տնօրեն նշանակվեց պատմաբան, ճանաչված մանկավարժ **Աղասի Սաֆարյանը (1941-1947թթ.)**: Փաստագրական նյութերի բացակայության պատճառով այստեղ չեն նշվում նրա կենսագրական տվյալները, միայն համառոտակի ներկայացվում է ուսումնագիտական կրթօջախում ծավալած բեղմնավոր գործունեությունը, հատկապես պատերազմական պայմաններում:

Հայտնի է, որ Մեծ Հայրենականի տարիներին ինչպես հանրակրթական, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների, այնպես էլ մարզի միակ ոչ լրիվ բարձրագույն ուսումնական հաստատության համար ստեղծվեցին ծանր պայմաններ: Մանկավարժական կադրերի մի մասը և բարձր կուրսերի ուսանողները մեկնել էին ռազմաճակատ: Ուսումնական կաբինետներում, լաբորատորիաներում պակասում էին սարքավորումները, գործիքները, քարտեզները

և այլ պարագաներ: Պատերազմի պայմաններին համապատասխան երկամյակին առաջադրված նոր խնդիրները իրենց արտացոլումը գտան նաև կրթության բովանդակությունում՝ ուսումնական պլաններում, ծրագրերում և ուսումնադաստիարակչական աշխատանքերի կազմակերպման բնագավառում: Պատերազմական այդ իրավիճակում փորձառու տնօրեն Ա.Սաֆարյանի ղեկավարությամբ մանկավարժական կոլեկտիվը յուրօրինակ, արդյունավետ ձևով են լուծում ուսանողների գաղափարաքաղաքական, բարոյական, աշխատանքային և ռազմահայրենասիրական դաստիարակության, ուսուցման գործընթացի հետ կապված շատ հարցեր:

Ինստիտուտի շրջանավարտներ Սուրեն Ղարախանյանի (1940-1941 ուստարի), Բենիկ Ջհանգիրյանի (1942-1943 ուստարի) հուշերից տեղեկանում ենք, որ պատերազմի տարիներին երկամյակում հատկապես նպատակասլաց աշխատանք էր տարվում ուսանողներին հայրենասիրության ոգով դաստիարակելու ուղղությամբ: Պատմության և գրականության դասերին ավելի խորն էին ուսումնասիրվում հայրենասիրական բնույթի պատմական իրադարձություններն ու գրական երկերը՝ ուսանողների մեջ առաջացնելով սեր և նվիրվածություն դեպի հայրենիքը[571]:

Փաստագրական նյութերից տեղեկանում ենք, որ 1942թ. հոկտեմբերին հրավիրված գիտխորհրդի նիստում, քննարկելով ինստիտուտի ներքին կյանքին առնչվող բազմաբնույթ հարցեր, տնօրեն Ա.Սաֆարյանը պարտավորեցնում է դասախոսներին՝ պատշաճ մակարդակով կազմակերպել ուսումնական պարապմունքները:

Ուսման որակը բարձրացնելու, սկսնակ դասախոսներին մեթոդական օգնություն ցույց տալու նպատակով տնօրենի նախաձեռնությամբ ինստիտուտում կազմակերպվեցին առարկայական մեթոդմիավորման հանձնաժողովներ, դասալսումներ կատարվեցին ու արդյունքներն ընդհանրացվեցին ամբիոններում, ֆակուլտետի, գիտխորհրդի նիստերում: Ինստիտուտի գիտխորհրդի նիստում քննարկված հարցերից մեկն էլ թիկունքում տարվող աշխատանքներն էին՝ օգնություն ցույց տալ ճակատայինների ընտանիքներին, հավաքել դեղաբույսեր, երկաթի, ալյումինի, պղնձի կտորտանքներ, որը շատ անհրաժեշտ էր ռազմական արդյունաբերության համար: Այդ աշխատանքը բացառիկ նշանակություն ստացավ պատերազմի տարիներին և ուսանողների համար հանդիսացավ հայրենիքին ծառայելու կարևորագույն պարտականություններից մեկը: Երկամյակի 1943-1944 ուստարվա շրջանավարտներ Միքայել Բեգլարյանը, Արտաշես Գասպարյանը իրենց հուշերում պատմում են, որ երկամյա մանկավարժական ինստիտուտում դասախոսների և ուսանողների ուժերով պարբերաբար կազմակերպվում էին գրական-գեղարվեստական ցերեկույթներ, երեկույթներ, թատերական ինքնագործ խմբակի պարապմունքներ, որոնց մասնակից էին դարձնում պատերազմի մասնակից հաշմանդամներին, Շուշիի զինվորական հիվանդանոցի վիրավոր զինվորներին[572]:

1946թ. սեպտեմբերի 1-ին երկամյակը տեղափոխվեց Ստեփանակերտ, տնօրեն Ա.Սաֆարյանի եռանդուն գործունեության շնորհիվ որոշակի բարեփոխումներ իրականացվեց ինստիտուտի գիտակրթական համակարգում՝ բացվեցին նոր ֆակուլտետ (բնագիտա-աշխարհագրական), ամբիոններ, նորովի կահավորվեցին ուսումնական կաբինետներն ու լաբորատորիաները, ինչպես նաև պատշաճ մակարդակով կազմակերպվեցին ուսումնական պարապմունքները, ուսանողների ավարտական քննությունները: Փորձառու տնօրենի գործունեության տարինե-

ին երկամյակը տվել է շուրջ 350 շրջանավարտներ, որից 136-ը ավարտել են առաջին կարգի դիպլոմով: Նրանցից շատերը այսօր էլ բեղմնավոր գործունեություն են ծավալում մեր հանրապետության հանրակրթական դպրոցներում, ուսումնական հաստատություններում, մշակույթի բնագավառներում (նրանց մասին կնշվի հաջորդ բաժնում):

Անվանի մանկավարժ, պատմաբան **Գրիգոր Հովհաննիսյանի տնօրինության շրջանում (1947-1951թթ.)** Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի գիտակրթական համակարգում իրականացվեցին լուրջ փոփոխություններ: Մշակվեց ինստիտուտի զարգացման հեռանկարային պլանը, որի հիման վրա բացվեցին նոր ամբիոններ, դեկանատ, հեռակա բաժին, ամրապնդվեց ուսունանյութական բազան, բարելավվեց ուսումնական աշխատանքների կազմակերպման գործը, ստեղծվեց ուսանողական գիտական ընկերություն (ՈւԳԿ), հարստացավ գրադարանային ֆոնդը: Դասախոսական կազմը համալրվեց տեսական բարձր պատրաստություն ունեցող մասնագետներով: Տնօրենի անմիջական նախաձեռնությամբ ինստիտուտում դասախոսելու հրավիրվեցին անվանի գիտնականներ Հրաչիկ Սիմոնյանը, Արամ Բալայանը, Լևոն Վարդունին, Հրաչիկ Շաքարյանը, Ռ.Տեր-Գասպարյանը և շատ ուրիշներ: Ինստիտուտի առջև ծառացած խնդիրները պահանջում էին՝

- արմատապես վերակառուցել ուսուցման կազմակերպման ձևերը,
- համագործակցել Հայաստանի բուհերի հետ և առաջավոր փորձը ներդնել պրակտիկայում,
- որոշակի աշխատանք տանել ուսանողների ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ,
- վերականգնել անխափան կապը դպրոցների հետ և ստեղծել մշտական բազային դպրոցներ,
- բարձր մակարդակով ուսանողներին նախապատրաստել պետական քննություններին,
- ամրապնդել բուհի շրջանավարտների համագործակցության կապը և այլն:

Փաստագրական նյութերից տեղեկանում ենք, որ 1950թ. հունիսին կայացած գիտխորհրդի նիստում Գ.Հովհաննիսյանը, ընդհանրացնելով բուհի ներքին կյանքում կատարված վերափոխումները, մատնանշեց, որ արդյունավետ գործունեության չափանիշը ուսումնական պլանների ու ծրագրերի կատարելությունն է, դասախոսական կազմի և դիմորդների ճիշտ ընտրությունը: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ուսման գործընթացի հաջող կազմակերպմանը, որպեսզի ուսուցումը տարվի բարձր մակարդակով, և ուսանողները ոչ միայն յուրացնեն տեսական հիմունքները, այլև իմանան գործնական կիրառումը: Եթե երկամյակի գործունեության առաջին շրջանում (1939-1945թթ.) հիմնական տեղը շարունակում էին զբաղեցնել դասախոսությունները, որովհետև գործնական աշխատանքի հնարավորությունները շատ քիչ էին, ապա երկրորդ շրջանում (1946-1950թթ.) ուսումնական ծրագրերից երևում են, որ ուսանողների ծանրաբեռնվածության հետ միասին նկատելիորեն ավելացվում էին և գործնական պարապմունքների ժամերը, որոնք ուսանեղներին հնարավորություն էին տալիս փորձով ստուգելու, ամրապնդելու և խորացնելու տեսական այն գիտելիքները, որ ստացել էին լսարանում:

Բուհը կյանքին մոտեցնելու ուղղությամբ ձեռնարկված ամենալուրջ քայլը բարձրագույն ուսումնական հաստատություններում արտադրական պրակտիկայի (փորձուսուցման) արդյունավետ կազմակերպումն է դպրոցներում: Գիտխորհր-

դի նիստում քննարկելով այդ կարևորագույն հարցը, Գ.Հովհաննիսյանը մասնագիտական ամբիոններին, դեկաններին հանձնարարում է պատշաճ մակարդակով կազմակերպել պրակտիկան, լինել դպրոցներում, մեթոդապես օգնել և՛ ուսուցիչներին, և՛ փորձուսուցման մասնակից ուսանողներին՝ ապագա ուսուցիչներին, իսկ փորձուսուցման արդյունքները ընդհանրացնել ֆակուլտետի խորհրդի, ամբիոնի նիստում, միաժամանակ բացահայտել թերությունները: Փորձառու տնօրենի ձեռնարկումներից մեկն էլ եղավ ինստիտուտում բաց և փոխադարձ դասալսումների կազմակերպումն ու արդյունքների քննարկումը գիտխորհրդի նիստում, լավագույն դասախոսների աշխատանքի գնահատում: Ինչպես իր հուշերում վկայում է երկամյակի աշխարհագրության դասախոս Թեմուր Ամիրջանյանը, Գ.Հովհաննիսյանը սկսնակ դասախոսներին խորհուրդներով օգնում էր, ոգևորում աստիճանաբար զբաղվել ինքնակրթությամբ և բարձրացնել իրենց մասնագիտական որակը:

Կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմում աշխատանքի անցնելու կապակցությամբ (ընտրվում է ԼՂ մարզկոմի երկրորդ քարտուղար) 1951թ. սեպտեմբերին Գրիգոր Հովհաննիսյանին ազատում են երկամյակի տնօրենի պարտականություններից և նրա փոխարեն տնօրեն է նշանակվում մարզի դպրոցի պրակտիկայում ճանաչված մանկավարժ Սուրեն Հայրապետյանը: Նրա գործունեության մասին, որպես մարզլուսժողկոմի բաժնի վարիչ, արդեն նշվել է աշխատության չորրորդ գլխում, այստեղ համառոտակի կնշվեն երկամյակում աշխատելու տարիներին նրա կատարած աշխատանքները:

Չնայած մարզում միմյանց հաջորդած ծանր քաղաքական պայմաններին, ինստիտուտի տնօրեն Սուրեն հայրապետյանի առաջին ձեռնարկումը եղավ երկամյակում կազմակերպել մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար վերապատրաստման դասընթացներ, ամուր կապ հաստատել դպրոցների հետ, հաճախակի լինել դպրոցներում, ծանոթանալ երկամյակի շրջանավարտների գործունեությանն ու մեթոդական օգնություն ցույց տալ նրանց: Ինչպես իրենց հուշերում պատմում են երկամյակի շրջանավարտներ Միքայել Բեգլարյանը, Ռաֆայել Բաղդասարյանը, Վլադիմիր Անտոնյանը, առաջին անգամ երկամյա մանկավարժական ինստիտուտում 1952թ. հունիսին կազմակերպվել է հանդիպում շրջանավարտների հետ (1941-1951թթ.): Այդ միջոցառմանը մասնակցել են նաև մարզի դպրոցների տնօրենները, որոնք իրենց բարձր գնահատականներն են տվել շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության և դասավանդման որակի մասին[573]: Մեր կարծիքով այդ լավագույն ավանդույթը պետք է շարունակվի հանրապետության այսօրվա բուհերում, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Գ.Հովհաննիսյանի մշակած՝ երկամյա մանկավարժական ինստիտուտի գիտակրթական համակարգի զարգացման աշխատանքային պլանի համաձայն, ամբիոններին կից գործում են գիտամեթոդական և գործնական սեմինարներ, որոնց հրավիրվում են նաև Հայաստանի բուհերի և մարզի միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների դասախոսները, ինչպես նաև մարզի դպրոցների տնօրենները: Բացի այդ, ինստիտուտում համալիր ձևով պլանավորվում են նաև դասախոսների գիտահետազոտական աշխատանքները, իհարկե, հիմք ընդունելով Հայաստանի բուհերի լավագույն դասախոսների փորձը: Ուշագրավ է նշել նաև մի կարևոր փաստ այն մասին, որ Գ.Հովհաննիսյանը իր գործունեության տարիներին գիտխորհրդի որոշմամբ ամբիոններին պարտավորեցնում էր ինստիտուտի ուսումնական գործընթացը բարձր մակարդակով կազ-

մակերպելու նպատակով փորձառու դասախոսներից ըստ մասնագիտությունների կազմել առարկայական հանձնաժողովներ, որոնք պետք է զբաղվեն ուսումնական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական հարցերով: Նրանց իրավունք է վերապահվում դասախոսների միջև բաշխել ժամերը, հաշվի առնելով նրանց մասնագիտական որակը, պարբերաբար վերահսկել պարապմունքները, ուսումնական կաբինետների, լաբորատորիաների աշխատանքները:

Այսպիսով, ի մի բերելով վերոշարադրյալը, հարկ է նշել, որ Լեռնային Ղարաբաղի առաջին բարձրագույն դպրոցի (ոչ լրիվ) զարգացման այս փուլում (1939-1953թթ.), երկամյակի տնօրենները զգալի աշխատանք են կատարել ուսումնական, դաստիարակչական, ուսումնամեթոդական, գիտական աշխատանքները արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ: 13 տարիների ընթացքում կրթօջախի ամբիոններում, դեկանատներում միաժամանակ ծավալվել է դասախոսների գիտական-ստեղծագործական աշխատանք, Հայաստանի բուհերի փորձառու դասախոսների օգնությամբ հրատարակվել են գիտամեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, ծրագրեր: Այդ բնագավառում իրենց մեծ դերակատարությունն ունեն երկամյակի մանկավարժական կադրերը, որոնց գործունեության մասին կնշվի հաջորդ բաժնում:

3. Երկամյա մանկավարժական ինստիտուտի մանկավարժական կադրերը

Շուշիի երկամյա մանկավարժական ինստիտուտի (հետագայում՝ 1946-1953թթ., Ստեփանակերտի) հիմնադրման և նրա գործունեության սկզբնական շրջանում ու հետագա տարիներին ամենալուրջ դժվարությունը կապված էր համապատասխան մասնագիտական որակավորում և տեսական պատրաստություն ունեցող դասախոսական կազմի ապահովման հետ: Հայտնի է, որ խորհրդային կարգերի հաստատումից հետո Լեռնային Ղարաբաղում ազգահալած քաղաքականության պայմաններում ստեղծվել էր խեղդուկ մթնոլորտ մտավորականության համար: Երկրամասի հայ գիտական ներուժն ու որակյալ մասնագետները դուրս էին Արցախից և գործունեության ասպարեզ էին մտել Հայաստանում, Ռուսաստանում կամ այլ հանրապետություններում: Դա դժվարացնում էր միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների, նաև նորաստեղծ ինստիտուտի համար բարձրորակ մասնագիտական կազմ հավաքագրելը, որովհետև դա կապված էր դրսից կադրեր հրավիրելու, հետևաբար նրանց համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու հետ: Մինչդեռ անհրաժեշտ էին որակյալ մանկավարժական կադրեր, որովհետև ուսումնագիտական կրթօջախի դեմքն ու մակարդակը որոշողը, ի վերջո, դասախոսներն են: Այդ հիմնահարցը լուծելու և երկամյա մանկավարժական ինստիտուտը դասախոսական կադրերով համալրելու երկու ճանապարհ կար. նախ մարզի մտավորականության ներկայացուցիչներին այդ գործի մեջ ներգրավելը, ապա մանկավարժական նոր կադրեր հրավիրելը: Իհարկե, տեղական կադրեր պատրաստելը ևս տարբերակներից մեկն էր, սակայն այդ գործընթացը երկար ժամանակ էր պահանջում: Այս իմաստով անգնահատելի են մարզի հայրենասեր մտավորականության ջանքերը,որ գործադրվեցին նորաստեղծ ինստիտուտը բարձրորակ մասնագիտական կադրերով ապահովելու համար:

Կադրերի խնդիրը լուծելու համար Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմատի ձեռնարկումները լայն ծավալ են ստանում: Ինստիտուտում աշխատանքի հրավիր-

վեցին հայ հասարակայնության անվանի մտավորականներ:

Սկզբնական շրջանում լուսժողկոմը դասախոսական աշխատանքի է հրավիրել մարզի կրթական համակարգում արդեն ճանաչված փորձառու մանկավարժներին, որոնցից շատերը բարձրագույն կրթություն են ստացել Հայաստանի, Ռուսաստանի, ինչպես նաև արտերկրի բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Երկարամյա ուսումնասիրությունները հեղինակներին հնարավորություն են ընձեռել այս բաժնում հնարավորին չափ ներկայացնել երկամյա մանկավարժական ինստիտուտի մանկավարժական կադրերի բեղմնավոր գործունեությունը ուսումնագիտական կրթօջախի 13 տարվա պատմության ժամանակահատվածում, ինչպես նաև հանրակրթական դպրոցներում, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, գիտության, արվեստի, մշակույթի և այլ բնագավառներում:

Նրանց կենսագրության ուշագրավ կողմերից մեկն էլ այն է, որ անգամ խորհրդային շրջանում՝ Ադրբեջանի ազգայնամոլ քաղաքականության պայմաններում, հայրենասեր մանկավարժները երբեք չեն կորցրել իրենց հավատն ու հույսը լուսավոր ապագայի նկատմամբ, ամեն ինչ, անգամ անկարելին են արել խեղդուկ մթնոլորտում կեղծ «ինտերնացիոնալիստական» կարգախոսի ազդեցության տակ ազգային մշակույթն ու լուսավոր օջախը պահպանելու ու զարգացնելու համար:

Հարկ ենք համարում նշել, որ արխիվային տվյալների և անհրաժեշտ շատ նյութերի բացակայության պատճառով հնարավոր չի եղել ներկայացնել տեղեկություններ ինստիտուտի գործունեության տարիներին դասավանդած բոլոր մանկավարժական կադրերին: Նշենք նաև, որ աշխատության 4-րդ գլխում, արդեն մարզի պրակտիկայում ճանաչված մանկավարժների գործունեությունը ներկայացնելիս ներառել ենք նաև այն մանկավարժներին, ովքեր ժամանակին դասավանդել են նաև երկամյակում:

Այս գլխում համառոտակի կնշվեն երկամյա մանկավարժական ինստիտուտի դասախոսների կողմից կատարված ուսումնական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական և դաստիարակչական աշխատանքները:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ինստիտուտի հիմնադրման առաջին ուսումնական տարում ԼՂԻՄ լուսժողկոմ Գրիգոր Բաղյանի հրամանով դասախոսական աշխատանքի են ընդունվում Կարո Դավթյանը, Սարգիս Աբրահամյանը, Գրիգոր Գրիգորյանը, Վարդան Ստեփանյանը, երկրորդ ուստարում (1940-1941)՝ Արամ Մարտիրոսյանը, Տատյանա Ալեքսանդրյանը և ուրիշներ: Հետագա տարիներին երկամյակը համալրվումէ բարձրորակ մանկավարժական կադրերով:

Ինչպես արդեն նշեցինք, վերոնշյալ մանկավարժներից և հետագա տարիներին երկամյակում աշխատած դասախոսներից շատերի գործունեությունը ներկայացվել են 4-րդ գլխում: Այստեղ կնշվի, թե ինչ աշխատանքներ են կատարվել ուսումնագիտական կրթօջախի՝ որպես մարզի միակ բարձրագույն գիտակրթական կենտրոնի, դերի բարձրացման ուղղությամբ:

Փաստագրական նյութերից տեղեկանում ենք, որ ինստիտուտի տնօրեն Ջ.Մայիլյանի հրամանով լեզվագրական ֆակուլտետի դեկան է նշանակվում բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Կարո Դավթյանը** (այն ժամանակ ինստիտուտի միակ գիտական աստիճան ունեցողն էր), որը դասավանդում էր «լեզվաբանության ներածություն», «գրականության տեսություն», «հայ գրակա-

նության պատմություն» և այլ առարկաներ: Անվանի լեզվաբանն ու գրականագետը ձեռնամուխ է լինում մշակելու դեկանատի աշխատանքային պլանը, ամբիոնների ուսումնական պլաններն ու ծրագրերը: Նրա ուշագրավ ձեռնարկումներից մեկն էլ այն է, որ դասախոսների և ուսանողների ուժերով, ըստ կիսամյակների, ձեռագիր լույս է տեսնում ֆակուլտետի «Լեզվագրական» պատի թերթ, որտեղ ներկայացվում են ոչ միայն ինստիտուտի, այլև մարզի դպրոցական, մշակութային կյանքը, ուսանողների առաջադիմությունը: Շրջանավարտների հավաստմամբ (Սուրեն Ղարախանյան, Բենիկ Ջհանգիրյան), Դավթյանը մեծ հեղինակություն ուներ կոլեկտիվում որպես դեկան, դասախոս, նա ուսանողների հոգատար դաստիարակն էր, սկսնակ դասախոսների խորհրդատուն (Կ.Դավթյանի հետագա գործունեության մասին տես 4-րդ գլուխը):

Սաթենիկ Սողոմոնյանի մեզ տրամադրած արխիվային նյութերի համաձայն, արգասավոր գործունեություն է ունեցել նրա ամուսինը՝ բազմավաստակ մանկավարժ, գրականագետ, հասարակական-քաղաքական գործիչ **Սարգիս Աբրահամյանը,** որի մասին նշվել է 4-րդ գլխում:

Վաստակաշատ մանկավարժը 1939-1940 ուստարում Մարտունու շրջանի Բերդաշեն (Ղզղալա) դպրոցի տնօրենի, ԼԿԵՄ մարզկոմի երկրորդ քարտուղարի (1940-1941թթ.), մարզային կրթության բաժնի վարիչի պաշտոններում աշխատելու տարիներին (1939-1949թթ.), համատեղության կարգով, որպես պատմության դասախոս, աշխատել է երկամյա մանկավարժական ինստիտուտում, իսկ 1951-1953թթ. եղել է պատմության ամբիոնի վարիչ:

Ժամանակաշրջանի մարզի հայ գրական անդաստանի երախտավոր Աբրահամյանը, չնայած ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը, ինստիտուտի հիմնադրման երկրորդ տարում դասավանդել է նաև հայ գրականության պատմություն: Նրա ջանքերով ստեղծվել է պատմության կաբինետ, կահավորվել հայ պատմիչների, պատմական հուշարձանների նկարներով և այլ դիտազննական պարագաներով: Այդ մասին են վկայում տիկին Սողոմոնյանի հուշերը[574]:

Ս.Աբրահամյանի նախաձեռնությամբ երկամյակում կազմակերպվել են պատմության ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ:

Երկամյակը փակվելուց հետո հետագա տարիներին Ս.Աբրահամյանը շարունակում է իր հասարակական-քաղաքական, գրական-ստեղծագործական աշխատանքը:

Երկամյա մանկավարժական ինստիտուտում 1939-1940 ուստարում հայոց լեզու, հայ գրականություն, հայոց լեզվի պատմություն առարկաները դասավանդել է կրթության մարզային բաժնի դպրոցական տեսուչ **Գրիգոր Գրիգորյանը**: Մարզժողկրթբաժնի վարիչի պաշտոնում աշխատելու տարիներին (1940-1941թթ.), նույնպես համատեղության կարգով, դասավանդել է երկամյակում (նրա գործունեության մասին տես 4-րդ գլուխը):

Երկամյակի շրջանավարտ Սուրեն Ղարախանյանի հուշերում նշվում է, որ 1940-1941 ուստարում հայոց լեզու, հայ գրականություն, արտասահմանյան գրականություն է դասավանդել **Արամ Մարտիրոսյանը**: Հայրենական մեծ պատերազմում վիրավորվելուց և ապաքինվելուց հետո զորացրվել և վերադարձել է հայրենի երկրամաս (1944թ. օգոստոսին), շարունակել գիտամանկավարժական գործունեությունը երկամյակում (1945-1953թթ.)՝ որպես դասախոս, ամբիոնի վարիչ, գիտքարտուղար: Ա.մարտիրոսյանի մասնագիտական պատրաստվածության մասին իր հուշերում երկամյակիշրջանավարտ, վաստակաշատ մանկա-

վարժ Վաղարշակ Աղաբեկյանը գրում է, որ նրա դասախոսությունները արթնացնում էին ուսանողի միտքը, ստիպում նրան խորհել տվյալ գիտության, առարկայի մասին, ուսանողին դեպի գրքերի աշխարհ, պահանջում խորացված ու ինքնուրույն աշխատանք: Հայոց լեզվի և գրականության կաբինետում Ա.Մարտիրոսյանի ղեկավարությամբ պարբերաբար կազմակերպվում էին գրական-գեղարվեստական ցերեկույթներ, երեկույթներ՝ նվիրված հայ դասական գրողների հոբելյաններին կամ նոր հրատարակված գրքերի քննարկմանը[575]:

Երկամյակը փակվելուց հետո շարունակել է իր մասնագիտական գործունեությունը Ստեփանակերտի թիվ 1 դպրոցում՝ մինչև թոշակի անցնելը (տես 4-րդ գլուխ):

Ժամանակակիցների հուշերի համաձայն՝ 1941-1942 ուստարում երկամյակում բնագիտական առարկաները (մաթեմատիկա, ֆիզիկա, գծագրություն, երկրաչափություն) դասավանդել է **Վարդան Ստեփանյանը**: Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո Ստեփանյանը վերադառնում է Ստեփանակերտ, շարունակում գիտամանկավարժական գործունեությունը երկամյակում (1946-1950թթ.): Երկամյակի շրջանավարտ, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի (ԱրՊՀ) մաթեմատիկայի ամբիոնի դասախոս, դոցենտ Աշոտ Շահինջանյանը իր հուշերում Վ.Ստեփանյանի մասին գրում է, որ նա խորապես տիրապետում էր իր մասնագիտությանը, մեծ հեղինակություն ուներ դասախոսների և ուսանողության շրջանում:

Վարդան Ստեփանյանի հետագա գործունեության վերաբերյալ ստույգ տվյալներ չկան:

Երկամյա մանկավարժական ինստիտուտում 1942-1943 ուստարում դասավանդել է Բաքվի պետական համալսարանի ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետն առաջին կարգի դիպլոմով ավարտած **Տատյանա Ալեքսանդրյանը**: Երկամյակի տնօրեն Աղասի Սաֆարյանի հրամանով նա նշանակվում է ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ: Իր գործունեության տարիներին (1942-1953թթ.) Տ.Ալեքսանդրյանը լուրջ ուշադրություն է դարձնում ռուսաց լեզվի դասավանդման որակի բարձրացմանը: Ինչպես վկայում է երկամյակի ռուսաց լեզվի և գրականության բաժնի գերազանցիկ շրջանավարտ Ջավեն Բաբայանը (նրա մասին նշվել է 4-րդ գլխում), Տ.Ալեքսանդրյանը ուսանողների ուժերով կահավորվել էր ռուսաց լեզվի և գրականության կաբինետ, որտեղ և անց էր կացնում պարապմունքները: Ջ.Բաբայանի հավաստմամբ, նա ավարտական կուրսի ուսանողներին մասնակից էր դարձնում քաղաքի դպրոցների ռուսաց լեզվի ուսուցիչների համար կազմակերպված գիտագործնական սեմինարներին և մարզի դպրոցների ռուսաց լեզվի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին (Տ.Ալեքսանդրյանի գործունեության մասին նշվելու է աշխատության 7-րդ գլխում):

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 1946-1953թթ. Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտում գիտամանկավարժական գործունեություն են ծավալել Հայաստանից, ինչպես նաև Բաքվի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնից հրավիրված գիտնականներ, մարզի դպրոցի, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների պրակտիկայում ճանաչված մանկավարժներ:

Գրիգոր Հովհաննիսյանի տնօրինության շրջանում (1947-1950թթ.) ինստիտուտում դասավանդել են **գիտնականներ Հրաչիկ Սիմոնյանը** (փիլիսոփայություն, փիլիսոփայության պատմություն), Արամ Բալյանը (մանկավարժություն և հոգբանություն), **Հրաչիկ Քարամյանը** (մանկավարժություն և մանկավարժության պատ-

մություն), **Լևոն Վարդունին** (ընդհանուր մանկավարժություն, հատուկ մանկավարժություն, դեֆեկտոլոգիա), **Աշոտ Տեր-Գասպարյանը** (քաղաքատնտեսություն, սոցիոլոգիա), **Սարգիս Ոսկերչյանը** (գիտական կոմունիզմ, ՍՄԿԿ պատմություն, մարքսիզմի հիմունքներ):

Հետպատերազմյան շրջանում՝ 1946-1952թթ. Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի դասախոսական կազմը համալրվում է նաև Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մշակույթի, արվեստի ոլորտում ճանաչված մանկավարժներով, որոնք բարձրագույն որակավորում էին ստացել Հայաստանի, Բաքվի, Մոսկվայի, Վրաստանի և այլ հանրապետությունների բուհերում:

Վաստակաշատ մանկավարժ **Սարգիս Արամյանը 1946-1953թթ.** աշխատել է երկամյա մանկավարժական ինստիտուտում, որպես մաթեմատիկայի, ֆիզիկայի դասախոս, ֆիզմաթ ֆակուլտետի դեկան: Նրա նախաձեռնությամբ ստեղծվել ու կահավորվել են մաթեմատիկայի կաբինետ,ֆիզիկայի լաբորատորիա, կազմակերպվել մարզի դպրոցների ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ: Ինչպես արդեն նշել ենք, մինչև ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտի հիմնադրումը ուսուցիչների վերապատրաստման դասընթացները կազմակերպվում էին երկամյակում: Բացի այդ, Արամյանը առաջին անգամ երկամյակի գիտխորհրդի նիստում առաջարկում է երկամյակում կազմակերպել պրոֆեսորադասախոսական գիտաժողով՝ հրավիրելով Հայաստանի բուհերի, ինչպես նաև Բաքվի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնի, մարզի միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների փորձառու դասախոսներին, դպրոցների տնօրեններին, վաստակաշատ մանկավարժներին: Գիտաժողովը հրավիրվում է 1949թ. նոյեմբերին: Այդ մասին իրենց հուշերում պատմում են գիտաժողովի մասնակիցներ Արսեն Խաչատրյանը, Թեմուր Ամիրջանյանը, երկամյակի շրջանավարտ Նորայի Ավետիսյանը և ուրիշներ[576]:

Ս.Արամյանը իր հավասարակշռված, պահանջկոտ, մեղմ ու շիտակ բնավորությամբ, սրտացավ հոգատարությամբ ու բեղմնավոր մանկավարժական գործունեությամբ թե՛ երկամյակի կոլեկտիվի, թե՛ հետագայում գիշերօթիկ դպրոցի և թե՛ մարզժողկրթբաժնի պաշտոնում 20-ամյա գործունեության տարիներին մանկավարժական կոլեկտիվների համար կենդանի օրինակ հանդիսացավ (այդ մասին տես 4-րդ գլուխը):

Երկամյա մանկավարժական ինստիտուտը դասախոսական նոր կադրերով ապահովելու գործն ավելի բարելավվեց 1946-1947 ուստարում, երբ ստեղծվեց նոր՝ բնագիտական-աշխարհագրական ֆակուլտետը: Այդ ուստարում ինստիտուտ են հրավիրում Շուշիի մանկավարժական ուսումնարանի աշխարհագրության դասախոս **Թեմուր Ամիրջանյանին,** Բաքվի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնից հայ գրականության դասախոս Խորեն Բալյանին, Մարտակերտի թիվ 1 դպրոցի մաթեմատիկայի լավագույն ուսուցիչ Միշա Պետրոսյանին: Ինստիտուտի տնօրեն Գ.Հովհաննիսյանի հրամանով Թ.Ամիրջանյանը նշանակվում է աշխարհագրության ամբիոնի վարիչ, Ն.Աբրահամյանը՝ լեզվագրական ֆակուլտետի դեկան:

1948-1952թթ. ինստիտուտի դասախոսական կազմը համալրվում է նաև մարզում ճանաչված մանկավարժներով, որոնք բարձրագույն որակավորում էին ստացել Երևանի պետական համալսարանում, Վ.Բրյուսովի անվան ինստիտուտում, Մոսկվայի, Բաքվի, Թիֆլիսի համալսարաններում և այլ բուհերում: Նկատի ունենք **Լուսաբեր Օգանեսովային, Լևոն Բաղդասարյանին, Սարգիս Սարգսյանին**

(Սարգիս Գուլիևիչ), Արմենակ Ղազարյանին, Բագրատ Ուլուբաբյանին, Բոգդան Ջանյանին, Քրիստափոր Պետրոսյանին, Սանջան Հովհաննիսյանին և ուրիշների: Ինչպես նշել ենք, այդ դժնդակ տարիներին անամպ չի եղել մարզի ուսումնական հաստատությունների, այդ թվում երկամյակի երկինքը: Մարզի հայտնի մտավորականների մի մասը հալածվեց Բաքվի ազգայնամոլ իշխանավորների կողմից, իսկ մի մասն էլ (Բոգդան Ջանյան, Սարգիս Ոսկերչյան, Խորեն Բալյան, Արտավազդ Ավագյան և ուրիշներ) ստալինյան ռեպրեսիայի շրջանում անարդարացիորեն աքսորվեց Սիբիր:

Չնայած իրար հաջորդած ծանր քաղաքական պայմաններին՝ Ադրբեջանի իշխանությունների հայատյաց քաղաքականությանը, որ ամեն կերպ ձգտում էր խեղդել երկրամասում ազգային ինքնագիտակցության զարթոնքը, մարզում լայն հնարավորություններ ստեղծել ադրբեջանական մտավորականության համար, այնուամենայնիվ, երկամյա մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնի դասախոսները այդ դժնդակ տարիներին կանգնած էին մեր ժողովրդին ազնվորեն ծառայելու դիրքերում և անգնահատելի ծառայություն մատուցեցին արցախահայության ոչ միայն գիտակցության զարգացման բնագավառում, այլև կրթեցին ու դաստիարակեցին մի ամբողջ սերունդ, որը դրական դեր խաղաց մարզի մշակույթի, լուսավորության, գիտության, հասարակական-քաղաքական կյանքի տարբեր բնագավառներում:

4. Երկամյա մանկավարժական ինստիտուտի շրջանավարտները

Երկամյա մանկավարժական ինստիտուտի ամբողջական պատմությունը (1939-1953թթ.) շարադրելու համար կարևոր նշանակություն ունի վեր հանել նաև նրա բազում շրջանավարտների բեղուն գործունեությունը մանկավարժական, մշակույթի, գիտության և հասարակական կյանքի մյուս բոլոր բնագավառներում: Անուրանալի է այն իրողությունը, որ ուսումնագիտական այդ կրթօջախը տվել է բարձրորակ կադրեր, որոնք հետագայում դարձել են անվանի մանկավարժներ, գիտնականներ, ռազմական ու մշակութային գործիչներ, գրողներ և այլ ոլորտի մասնագետներ: Շրջանավարտների գործունեությունը ամբողջացնելու լավ հնարավորություն են ընձեռել նամակագրական կապերը, բազմաթիվ արժեքավոր տեղեկությունները, հատկապես վաստակաշատ մանկավարժներ Միքայել Բեգլարյանի, Նորայր Ավետիսյանի, Վլադիմիր Անտոնյանի, Ռաֆայել բաղդասարյանի և շատ ուրիշների անձնական արխիվում խնամքով պահպանված նյութերը, ինչպես նաև ուսումնասիրությունների համար հիմք են ծառայել շրջանավարտների հետ ունեցած մեր զրույցները, որոնք սիրով էին պատմում ուսումնագիտական այդ կրթօջախի գործունեության մասին:

Ժողովրդին անձնվիրաբար ծառայելու նպատակաուղղվածությամբ շատ շրջանավարտներ՝ մանկավարժներ, գիտության գործիչներ և այլ բնագավառների աշխատողներ, որոնց մենք հպարտությամբ ենք հիշում, բայց հանգամանքների բերումով և անհրաժեշտ փաստագրական տվյալների բացակայության պատճառով հնարավոր չեղավ աշխատության մեջ նշել նրանց անունները, բայց բոլորին ասում ենք՝ շնորհակալություն Ձեզ, մեր ազգանվեր շրջանավարտներ, որ Ձեր անձի ձևավորման գործում մեծ ավանդ ունի նաև երկամյա մանկավարժական ինստիտուտը:

Մեր ձեռքի տակ եղած փաստագրական հարուստ տվյալները, ժամանակակիցների հուշերը և այլ հարուստ նյութեր հնարավորություն են ընձեռել ներկա-

յացնել երկամյա մանկավարժական ինստիտուտի ութսունից ավելի շրջանավարտների կյանքն ու գործունեությունը խորհրդային շրջանում և մեր ժամանակներում: Չնայած համառոտակի է ներկայացվում միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների(տես աշխատության 5-րդ գլուխը), ինչպես նաև երկամյա մանկավարժական ինստիտուտի շրջանավարտների գործունեությունը, կարծում ենք, որ դա ավելի կհարստացնի մեր կողմից ներկայացված աշխատության 2-րդ հատորի բովանդակությունը:

Ուսումնասիրության բնույթից ելնելով, նպատակահարմար ենք գտել երկամյա մանկավարժական ինստիտուտի շրջանավարտների գործունեությունը ներկայացնել ըստ ուսումնական տարիների:

Ինստիտուտի առաջին՝ 1939-1940 ուստարվա շրջանավարտներից(թվով 22 հոգի) 9-ը ավարտել են գերազանց գնահատականներով: Ներկայացնենք նրանցից մի քանիսի գործունեությունը:

Միշա Սարգսյան (1923-2004թթ.): Ծնվել է Մարտունու շրջանի Ճարտար գյուղում[577]: Տեղի միջնակարգն ավարտելուց հետո 1938-1939 ուստարում ընդունվում է Շուշիի երկամյա ուսուցչական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը և գերազանց գնահատականներով ավարտում 1940թ. հունիսին ու նշանակվում Գյունե Ճարտարի յոթնամյա դպրոցի հայոց լեզվի և գրականությոան ուսուցիչ, ուսմասվար: 1942թ. զորակոչվում է Կարմիր բանակ: Ալագիր քաղաքի պաշտպանության համար մարտերին մասնակցելու ժամանակ վիրավորվում է: Պարգևատրվում է «Մարտական ծառայության համար» մեդալով: Ապաքինվելուց հետո ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի, զորացրվում, վերադառնում հայրենի երկրամաս և ուսուցչի պաշտոնով աշխատում Շուշի քաղաքի Ս.Շահումյանի անվան տեխնիկումում: Բարձրագույն կրթությունը ստանում է Բաքվի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնում: Առաջին կարգի դիպլոմով ավարտելով ինստիտուտը (1956թ.), նշանակվում է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցի ուսմասվար, տնօրեն:

Հետագա տարիներին (1962-1998թթ.) աշխատում է Երևան քաղաքի 108-րդ դպրոցում, որպես դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար:

Մանկավարժական անբասիր աշխատանքի համար պարգևատրվում է «Աշխատանքային արիության համար» մեդալով:

Բելլա Դավթյան: Ծնվել է 1922թ. Հադրութում: Ծննդավայրի միջնակարգն ավարտելուց հետո հեռակա կարգով սովորում և ավարտում է (1940թ.) Շուշիի երկամյա ուսուցչական ինստիտուտի կենսաբանության ֆակուլտետը: Տարբեր տարիների դասավանդում է Հադրութի շրջանի Տումու, Տողի, Մեծ Թաղլարի դպրոցներում, իսկ 1948թ.՝ Հադրութի միջնակարգում:

Զոհվել է 1992թ. ապրիլի 18-ին՝ հրետակոծության ժամանակ:

Զավեն Պետրոսյանը (1920-2004) սկզբնական կրթությունը ստացել է հայրենի Դաշբուլաղ (Աստղաշեն) գյուղի յոթնամյա դպրոցում, այնուհետև ավարտել Բալուջայի 9-ամյա միջնակարգ դպրոցը, ուսումը շարունակել Շուշիի երկամյա ուսուցչական ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետում (1938-1940թթ.)[578]: Սակայն դեռ ուսումը չավարտած, 1940թ. մայիսին զորակոչվում է Կարմիր բանակ: Մասնակցել է Հայրենական պատերազմին, հինգ անգամ վիրավորվել, հինգերորդ անգամ վիրավորվելուց և ապաքինվելուց հետո, 1944թ. ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և որպես 2-րդ կարգի հաշմանդամ զորացրվում:

1944-1946թթ. աշխատել է որպես Շուշիի մանկատան տնօրեն, այնուհետև

1946-1947 ուստարում՝ Դաշբուլաղի յոթնամյա դպրոցում որպես ուսուցիչ: 1949թ. հանձնում է պետական քննությունները և ավարտում Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետը: 1949-1960թթ. որպես ուսուցիչ աշխատել է շրջանի Բաղարա գյուղի միջնակարգ, իսկ 1961-1989թթ՝ Դաշբուլաղի յոթնամյա դպրոցներում:

Զավեն Պետրոսյանը պարգևատրվել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով և «Արիության համար» մեդալով:

Շամիր Հայրիյանը ծնվել է 1924թ. Ստեփանակերտի շրջանի Հարավ գյուղում: Ավարտելով հայրենի գյուղի յոթնամյա դպրոցը, 1938թ. ընդունվում է Շուշիի մանկավարժական ուսումնարանը: Ուսումնարանն ավարտեկուց հետո ուսումը շարունակում է Շուշիի երկամյա մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետում, որը 1939-1940 ուստարում ավարտում և նշանակվում է Բալուջայի 8-ամյա դպրոցում որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ: 1942թ. օգոստոսին զորակոչվում է Կարմիր բանակ ու ծառայում մինչև պատերազմի ավարտը: 1945թ. հոկտեմբերին զորացրվում և վերադառնում է հայրենի գյուղ, աշխատանքի անցնում յոթնամյա դպրոցում որպես մաթեմատիկայի ուսուցիչ, 5 տարի՝ ուսմասվար, 17 տարի՝ տնօրեն:

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով և 7 մեդալներով:

Հայկազ Ասատրյանը ծնվել է 1917թ. Մարտակերտի շրջանի Մարաղա գյուղում: Սովորել է տեղի յոթնամյա, ապա Մարտակերիտի միջնակարգ դպրոցներում: 1938-1938 ուստարում ընդունվում է Շուշիի երկամյա ուսուցչական ինստիտուտը, 1940թ. գերազանց գնահատականներով ավարտում այն ու աշխատանքի անցնում հայրենի գյուղի դպրոցում, որպես ուսուցիչ, ուսմասվար: 1941թ. զորակոչվում է Կարմիր բանակ, 1943թ. ծանր վիրավորվում և ապաքինվելուց հետո զորացրվում որպես երրորդ կարգի հաշմանդամ:

1944-1976թթ. աշխատում է Մարտակերտի շրջանի Լենինավանի միջնակարգ դպրոցում որպես տնօրեն, ապա՝ ուսմասվար: Մինչև թոշակի անցնելը՝ 1978թ. աշխատել է որպես ուսուցիչ[579]:

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով, «Արիության համար» և մի շարք այլ մարտական ու հոբելյանական մեդալներով:

Անդրանիկ Առուշանյանը ծնվել է 1918թ. Մարտակերտի շրջանի Չլդրան գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է Առաջածորի միջնակարգ դպրոցում, մեկ տարի աշխատել Պառավաքարի յոթնամյա դպրոցում որպես ուսուցիչ, այնուհետև ընդունվել Շուշիի երկամյա ուսուցչական ինստիտուտի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետը, որն ավարտել է 1940թ.: 1942թ. սկզբներին զորակոչվում է բանակ: Մարտական առաջադրանքները օրինակելի կատարելու համար պարգևատրվում է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով:

Գրիգոր Եղիյանը ծնվել է Հադրութի շրջանի Տումի գյուղում[580]: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում (9-ամյա), այնուհետև՝ 1940թ. ավարտել Շուշիի երկամյա ուսուցչական ինստիտուտը, աշխատել Հադրութի շրջանի Ծամձոր գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես ուսմասվար: 1942-1945թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Վերադառնալով՝ բարձրագույն կրթությունը շարունակել է Երևանում, այնուհետև 1961-1991թթ. աշխատել Հայաստանի տարբեր շրջանների դպրոցներում, որպես ուսմասվար և տնօրեն, Աբովյանի շրջանի ժողկրթբաժնի վարիչի տեղակալ և արիմիության շրջկոմի նախագահ:

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի շքանշաններով և մի շարք մեդալներով:

Կարապետ Առուշանյանը (1909-1942) ծնվել է Մարտակերտի ծրջանի Հաթերք գյուղում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղում, այնուհետև 1929թ. ավարտել Առաջաձորի միջնակարգ դպրոցը, ուսումը շարունակել Շուշիի երկամյա ուսուցչական ինստիտուտում, որն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Հաթերքի յոթնամյա դպրոցում որպես ուսուցիչ: Հետագա տարիներին նա աշխատել է Մարտակերտի շրջանի Դրմբոն, Կոճողոտ, Հարությունագոմեր և Վաղուհաս գյուղերի դպրոցներում[581]:

1939թ. զորակոչվում է բանակ, մասնակցում Հայրենական պատերազմին, արիաբար մարտնչում մինչև 1942թ. մայիսը և հերոսի մահով զոհվում Ղրիմի համար մղվող ահեղ մարտում:

Ազատ Աղաջանյանը (1919-1943) ծնվել է Մարտունու շրջանի Ղավախան գյուղում: Սովորել է գյուղի, այնուհետև Կարմիր գյուղի միջնակարգ դպրոցներում: 1940թ. ավարտել է Շուշիի երկամյա ուսուցչական ինստիտուտը և աշխատանքի անցել Ղավախանի դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, միաժամանակ հեռակայել Բաքվի մանկավարժական ինստիտուտին:

Պատերազմի հենց առաջին օրերից նա գործող բանակում էր: Մարտնչել է Հայրենքի պաշտպանության համար և 1943թ. զոհվել ահեղ մարտերից մեկում:

Ավանես Ալեքսանյանը (1910-1986) ծնվել է Մարտունու շրջանի Ղավախան գյուղում: Յոթնամյակն ավարտել է Կուսաբերդի (Ղզղալա) դպրոցում: 1934թ. ավարտել է Բաքվի մանկավարժական ուսումնարանը և աշխատանքի անցել Բաքվի 177-րդ հայկական դպրոցում, իսկ 1935թ.՝ հայրենի գյուղի՝ Ղավախանի դպրոցում: 1940թ. ավարտել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը:

Մինչև 1942թ. մայիսը պատմություն է դասավանդել Շաքիի (Նուխի) հայկական միջնակարգ դպրոցում, որտեղից էլ զորակոչվել է բանակ: Զորացրվել է 1945թ. դեկտեմբերին: 30 տարի աշխատել է Շաքի քաղաքի 9-րդ դպրոցում:

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով և մի շարք մեդալներով:

Առաքել Աղաբեկյանը (1915-1999) ծնվել է Ստեփանակերտի շրջանի Շոշ գյուղում: 1934թ. ավարտել է հայրենի գյուղի յոթնամյա, այնուհետև՝ Կարմիր գյուղի միջնակարգ դպրոցը և աշխատանքի անցել Ասկերանի դպրոցում՝ որպես թվաբանության ուսուցիչ: Նույն տարում ընդունվել է Շուշիի երկամյա ուսուցչական ինստիտուտ: 1940թ. զորակոչվել է Կարմիր բանակ և մինչև վերջին օրը մասնակցել Հայրենական մեծ պատերազմին:

Զորացրվել է 1946թ. հուլիսին: Մարտերում ցուցաբերած արիության համար պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին և 2-րդ աստիճանների, Կուտուզովի, Բոգդան Խմելնիցկու շքանշաններով և մեկ տասնյակից ավելի մարտական ու հոբելյանական մեդալներով:

Զորացրվելուց հետո աշխատել է Սղնախի 8-ամյա դպրոցում, դասավանդել ռուսաց լեզու, իսկ 1950թ. Շոշ գյուղում որպես զինղեկ:

Երկամյա մանկավարժական ինստիտուտի 1941-1942 ուստարվա 18 գերազանցիկ շրջանավարտներից են Աշխեն Առուշանյանը և Նիկոլայ Մանուչարյանը:

Աշխեն Առուշանյանը ծնվել է 1924թ. Մարտունու շրջանի Հաղորտի գյուղում: 1937թ. ավարտել է տեղի ութամյա դպրոցը, 1938-1939թթ. ուստարում ընդունվել և 1941-1942 ուստարում ավարտել է Շուշիի երկամյա ուսուցչական ինստիտուտի

ֆիզմաթ ֆակուլտետը, որպես մաթեմատիկայի ուսուցիչ նշանակվել և մինչև 1950թ. աշխատել է Հաղորտու միջնակարգ դպրոցում: 1951թ. նա մաթեմատիկա է դասավանդել Մարտունու դպրոցներում:

Անբասիր մանկավարժական գործունեության համար 1966թ. Աշխեն Առուշանյանին շնորհվել է հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչում:

Նիկոլայ Մանուչարյանը ծնվել է Ստեփանակերտի շրջանի Ղարաբուլաղ գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է Չանախչու յոթնամյա դպրոցում, միջնակարգը ավարտել Կարմիր գյուղի դպրոցում: 1941-1942 ուստարում ավարտել է Շուշիի երկամյա ուսուցչական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը[582] և նույն թվականին զորակոչվել Կարմիր բանակ: Մասնակցել է ռազմական գործողություններին մինչև 1944թ. ծանր վիրավորվելը: Ապաքինվելուց հետո որպես երկրորդ կարգի հաշմանդամ զորացրվել և նույն տարում անցել է մանկավարժական աշխատանքի: 8 տարի վարել է ուսմասվարի, 13 տարի՝ տնօրենի պաշտոնները, իսկ վերջին 10 տարիներին աշխատել է որպես զինղեկ:

Պարգևարտվել է Կարնիր աստղի երկու, Հայրենական պատերազմի 1-ին և 2-րդ աստիճանների շքանշաններով ու 11 մեդալներով:

Ժամանակակիցների հուշերից[583] տեղեկանում ենք, որ 1942-1943 ուստարում երկամյա մանկավարժական ինստիտուտի 18 շրջանավարտներից 6-ը ավարտել են գերազանցությամբ: Նրանցից է **Աշխեն Ասկարյանը (1920-2002)**: Սկզբնական կրթությունը ստացել է Ասկերանի շրջանի Կարմիր գյուղի առաջին աստիճանի դպրոցում, այնուհետև ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ 1938թ. դասավանդել է տարրական դասարաններում: 1942-1943 ուստարում ավարտելով Շուշիի երկամյա մանկավարժական ինստիտուտը, աշխատանքի է անցնում Կարմիր գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես պատմության ուսուցիչ, ուսմասվար: Հետագա տարիներին, մինչև թոշակի անցնելը, աշխատել է Խնապատի միջնակարգ դպրոցում՝ որպես պատմության ուսուցիչ և ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ:

Վերոնշյալ ուսումնական տարում երկամյա մանկավարժական ինստիտուտը առաջին կարգի դիպլոմով ավարտել է 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ **Բենիկ Ջհանգիրյանը (1925-1967)** (նրա մասին տես գլուխ 4-րդ):

Շուշիի երկամյա ուսուցչական ինստիտուտի 1943-1944 ուստարվա գերազանցիկ շրջանավարտներից է **Օհան Մուսայելյանը (1926-1991թթ):** Ծնվել է Սղնախ գյուղում, սկզբնական կրթությունը ստացել հայրենի գյուղի յոթնամյա, միջնակարգը՝ Ավետարանոցի դպրոցներում: Այնուհետև ուսումը շարունակել է Շուշիի երկամյա ուսուցչական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում:

1944-1945 ուստարվա սկզբներին աշխատանքի է անցել Խանածախի յոթնամյա դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1944թ. զորակոչվել է խորհրդային բանակի շարքերը, զորացրվել 1948թ.: 1948-1965թթ. աշխատել է շրջանի Ղարաբուլաղ, Կարմիր գյուղ, Շոշ և Խնապատ գյուղերի դպրոցներում, միաժամանակ հեռակայելով Ադրբեջանի պետական հեռակա մանկավարժական ինստիտուտում, որը ֆիզիկա և մաթեմատիկա մասնագիտությամբ ավարտել է 1954թ.: 1974-1986թթ. Օհան Մուսայելյանը գլխավորել է մայրաքաղաքի հերթափոխային և երեկոյան դպրոցները, իսկ՝ 1989թ.-ից մինչև թոշակի անցնելը, որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ աշխատել է հայրենի գյուղի դպրոցում:

Երկամյա մանկավարժական ինստիտուտի 1944-1945 ուստարվա գերազանցիկ շրջանավարտներից է վաստակաշատ մանկավարժ **Մանվել Առուշանյանը:**

Ծնվել է 1925թ. Մարտակերտի շրջանի Չլդրան գյուղում: 1939թ. ավարտել է հայրենի գյուղի 7-ամյա, այնուհետև՝ Առաջածորի միջնակարգ դպրոցները: 1943թ. զորակոչվել է բանակ, անմիջապես մասնակցել պատերազմական գործողություններին, Ուկրաինայի ազատագրման համար մղվող մարտերում ծանր վիրավորվել և, ապաքիվելուց հետո, որպես 2-րդ կարգի հաշմանդամ, զորացրվել: 1945թ. հեռակա կարգով ավարտել է Շուշիի երկամյա ուսուցչական ինստիտուտը և աշխատանքի անցել Մարտակերտի շրջանային «Սոցիալիզմի ուղիով» թերթի խմբագրությունում որպես պատասխանատու քարտուղար: 1956թ. աշխատել է հայրենի Չլդրան գյուղի դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ և ուսմասվար: 1985թ. արժանացել է Ադր. ԽՍՀ վաստակավոր ուսուցչի կոչման[584]:

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով ու 5 մեդալներով:

Նույն ուսումնական տարում երկամյա մանկավարժական ինստիտուտը առաջին կարգի դիպլոմով ավարտել են 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժներ **Միքայել Բեգլարյանը, Արտաշես Գասպարյանը, Անուշավան Արամյանը** (նրանց գործունեության մասին տես 4-րդ գլուխը):

Անվանի լեզվաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Հրանտ Պետրոսյանը (1927-2002)** գերազանց գնահատականներով ավարտել է հայրենի Հաթերքի միջնակարգ դպրոցը, այնուհետև՝ Շուշիի երկամյա ուսուցչական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետը (1945-1946 ուստարում) և մանկավարժական աշխատանքի անցել Մարտակերտի շրջանի Չափարի միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար, միաժամանակ ղեկավարել է հայոց լեզվի և գրականության առարկայական հանձնաժողովը[585]:

Այնուհետև Հ. Պետրոսյանը ընդունվում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի լեզվագրական բաժինը, ընտրում լեզվաբանություն մասնագիտությունը: 1951թ. առաջին կարգի դիպլոմով ավարտելով համալսարանը, ընդունվում է ասպիրանտուրա, 1954թ. հաջողությամբ պաշտպանում թեկնածուական, իսկ 1974 թվականին՝ դոկտորական ատենախոսությունները:

Գիտամանկավարժական գործունեության տարիներին Հ. Պետրոսյանը աշխատել է Երևանի պետական համալսարանի հրատարակչությունում որպես խմբագիր, իսկ 1957-1963թթ. ԳԱ լեզվի ինստիտուտում՝ որպես գիտաշխատող, այնուհետև՝ համալսարանում որպես դասախոս: 1986թ. վարել է համալսարանի լեզվաբանության ամբիոնի վարիչի պաշտոնը: Հեղինակ է բազմաթիվ գրքերի ու գիտական հոդվածների: Նա իրավմամբ համարվում է լեզվաբանական բառարանագիության հիմնադիրը:

Հ. Պետրոսյանը 75-ամյա հասակում իր մահկանացուն կնքել է օտար ափերում:

1945-1946 ուստարում երկամյա մանկավարժական ինստիտուտը գերազանց գնահատականներով ավարտել են **Սամսոն Ալեքսանյանը, Սեյոժա Ամիրջանյանը, Արշակ Գալստյան**ը և ուրիշներ:

Սամսոն Ալեքսանյանը ծնվել է 1922թ. Մարտակերտի շրջանի Չլդրան գյուղում: 1937թ. ավարտել է Շուշիի մանկավարժական ուսումնարանը և աշխատանքի անցել հայրենի գյուղի դպրոցում: 1941թ. զորակոչվել է բանակ, մասնակցել պատերազմին, 1946թ. զորացրվել ու նորից շարունակել իր սիրած գործը: 1949թ. ավարտել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի ֆիզ-

մաթ ֆակուլտետը, իսկ 1961թ. մանկավարժական աժխատանքին զուգընթաց ավարտել Երևանի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը:

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով ու բազմաթիվ մեդալներով:

Սերյոժա Ամիրջանյանը ծնվել է 1922թ. Հադրութի շրջանի Տումի գյուղում[586]: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում: 1946թ. առաջին կարգի դիպլոմով ավարտել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի բնագիտաաշխարհագրական ֆակուլտետը՝ աշխարհագրություն մասնագիտությամբ:

Բեղմնավոր մանկավարժական գործունեություն է ծավալել շրջանի Մեծ Թաղլարի միջնակարգ դպրոցում, որպես աշխարհագրության ուսուցիչ, ուսմասվար, հետագայում՝ տնօրեն: Բարձրագույն կրթությունը ստացել է Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում և ավարտելուց հետո՝ 1954թ. նշանակվել Հադրութի շրջանի ժողկրթբաժնի տեսուչ, մեթոդկաբինետի վարիչ: Այնուհետև՝ աշխատել է հայրենի գյուղի դպրոցում, որպես պատմության ուսուցիչ: 1965-1993թթ. աշխատել է Երևանի կոոպերատիվ տեխնիկումում, միաժամանակ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի պատմության ամբիոնում որպես ավագ դասախոս: 1983թ. ստացել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Բազմաթիվ գիտական աշխատությունների հեղինակ է:

Արշակ Գալստյանը ծնվել է 1925թ. Տումի գյուղում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: Այնուհետև ավարտել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի բնագիտաաշխարհագրական ֆակուլտետը և մանկավարժական աշխատանքի անցել Խանձաձորի յոթնամյա դպրոցում, որպես աշխարհագրության ուսուցիչ, ուսմասվար: Միաժամանակ հեռակա կարգով ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի քիմիա և կենսաբանության ֆակուլտետը, նշանակվել հայրենի գյուղի քիմիա և կենսաբանության ուսուցիչ, ուսմասվար:

Երկարամյա բեղմնավոր մանկավարժական գործունեության ու անբասիր աշխատանքի համար արժանացել է ավագ ուսուցչի կոչման և շրջանային կրթության բաժնի գովասանագրերի:

Աշոտ Բաբայանը ծնվել է 1922թ. Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղում[587]: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց անմիջապես հետո 1941թ. զորակոչվում է Կարմիր բանակի շարքերը: Բրյանսկի ազատագրման համար մղվող մարտերում ծանր վիրավորվում է և ապաքինվելուց հետո զորացրվում թիկունք: Սկզբում աշխատում է Մարտակերտի շրջանային զինկոմիսարիատում, այնուհետև՝ հայրենի գյուղի դպրոցում՝ որպես զինղեկ:

Մանկավարժական գործունեության տարիներին Ա.Բաբայանը հեռակա կարգով ավարտում է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետը, 1950-1955թթ. Բաքվի մանկավարժական ինստիտուտի նույն ֆակուլտետը և նշանակվում Մարտակերտի շրջանի Ն.Հոռաթաղի դպրոցի տնօրեն, այնուհետև՝ շրջանային կրթության բաժնի դպրոցական տեսուչ:

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով, մարտական ու հոբելյանական բազմաթիվ մեդալներով:

Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի 1945-1946 ուստարվա գերազանցիկ շրջանավարտներից է **Արտավազդ Խաչատրյանը:**

Ծնվել է 1920թ. Մարտունու շրջանի Մաճկալաշեն գյուղում: Տարրական կրթությունը ստացել է հայրենի գյուղի, իսկ միջնակարգը՝ Թաղավարդի միջնակարգ դպրոցներում: Այնուհետև զորակոչվել է բանակ, մասնակցել պատերազմին մինչև 1943թ. հուլիսը, ծանր վիրավորվել, 1943թ. դեկտեմբերին զորացրվել և մեկ տարի որպես զինղեկ աշխատել Մաճկալաշենի դպրոցում: Այնուհետև ուսումը շարունակել է Շուշիի երկամյա ուսուցչական ինստիտուտում և 1946թ. ավարտելով այն՝ նշանակվել Շեխերի դպրոցի պատմության ուսուցիչ և ուսմասվար: Աշխատանքին զուգընթաց հեռակա կարգով ավարտել է նաև Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետը և նշանակվել վերոնշյալ դպրոցի տնօրեն:

Բազմամյա բեղմնավոր մանկավարժական գործունեության համար արժանացել է մարզային կրթության բաժնի մի շարք գովասանագրերի:

Վաստակաշատ մանկավարժ Արամ Մարտիրոսյանի անձնական արխիվային փաստաթղթերում պահպանվում են հուշեր երկամյա մանկավարժական ինստիտուտի գործունեության ու շրջանավարտների մասին: Հատկապես գովեստով է խոսում 1946-1947 ուստարվա շրջանավարտ **Արմենակ Մինասյանի (1920-1986)** մասին[588]:

Ծնվել է Մարտակերտի շրջանի Գյուլաթաղ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի յոթնամյա դպրոցում, այնուհետև 1937թ. ընդունվել է Շուշիի մանկավարժական ուսումնարանը: 1940թ. ավարտելով այն, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ աշխատանքի է անցել Մարտակերտի շրջանի Մեծ շեն գյուղի դպրոցում:

1941թ. նոյեմբերից մինչև 1943թ. մարտը, մինչև ծանր վիրավորվելը, մասնակցել է պատերազմին, այնուհետև զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվել և զորացրվել բանակից:

1944-1947թթ. Արմենակը սովորել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտում, իսկ հետո ուսումը շարունակել Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետում: 1952թ. ավարտելով այն՝ անցել է ուսուցչական աշխատանքի: Աշխատել է Մարտակերտի շրջանի տարբեր գյուղերում՝ որպես ուսուցիչ, ուսմասվար, տնօրեն, ժողկրթբաժնի մեթոդկաբինետի վարիչ:

1966թ. Ա. Մինասյանը տեղափոխվում է Հայաստան և մինչև թոշակի անցնելը 1980թ. որպես ուսուցիչ, ուսմասվար աշխատում Աբովյանի շրջանի տարբեր դպրոցներում:

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով և մարտական մի քանի մեդալներով:

Երկամյա մանկավարժական **ինստիտուտի շրջանավարտ Ա.Շահինջանյանի** արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ երկամյակի 1947-1948 ուստարվա 56 շրջանավարտներից 20-ը ավարտել են գերազանց գնահատականներով: Մեր ձեռքի տակ եղած նյութերը հնարավորություն են տալիս ներկայացնել նրանցից 13-ի հետագա գործունեությունը, իսկ նրանցից երեքինը՝ 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժներ **Սուրեն Բաղդասարյանի, Լևոն Հարությունյանի և Շահեն Քամալյանի** գործունեությունը արդեն ներկայացվել է աշխատության 4-րդ գլխում:

Աշոտ Շահիջանյանը (1930-1997) ծնվել է Մարտակերտի շրջանի Առաջաձոր գյուղում: Նախնական կրթությունը ստացել է Առաջաձորի դպրոցում, այնուհետև՝ Ստեփանակերտի թիվ1 միջնակարգ դպրոցում: Ուսումը շարունակել է Ստեփա-

նակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական բաժնում: 1948-1951թթ. աշխատել է Մարտակերտի շրջանի Վանք և Գառնաքար գյուղերի դպրոցներում, միաժամանակ հեռակա կարգով ավարտել Բաքվի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի բաժինը: 1951-1952թթ. ծառայել է խորհրդային բանակի շարքերում: 1952-1974թթ. մաթեմատիկա է դասավանդել Շուշիի շրջանի Լիսագորի, Ասկերանի շրջանի Շոշի և Ստեփանակերտի գիշերոթիկ դպրոցներում: 1974թ., որպես հիմնական դասախոս, աշխատանքի է անցել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում, 1976թ.-ից՝ ինստիտուտի մաթեմատիկայի ամբիոնի ավագ դասախոս էր:

Հանրապետության լուսավորության գերազանցիկ է, պարգևատրվել է «Աշխատանքի վետերան» մեդալով, կառավարական պատվոգրերով և գովասանագրերով:

Միքայել Աղաջանյանը ծնվել է Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում: Սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում, այնուհետև ավարտել Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Ավարտելով այն, 1948-1950թթ. աշխատել է Ադր. ԽՍՀ Կուտկաշենի շրջանի Ամիրավան գյուղի դպրոցում՝ որպես պատմության ուսուցիչ: 1950-1953թթ. ծառայել է խորհրդային բանակի շարքերում: 1953-1954թթ. աշխատել է Մարտակերտի շրջանի Լյուլասազի, իսկ 1955-1958թթ.՝ Հաթերքի միջնակարգ դպրոցներում:

1954թ. ընդունվել է Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետի հեռակա բաժինը, որն ավարտել է 1957թ: 1958-1975թթ. աշխատել է Հաթերքի «Նոր կյանք» կոլտնտեսությունում, նախ՝ որպես նախագահի տեղակալ և կուսկոմիտեի քարտուղար, ապա՝ կոլտնտեսության նախագահ (1965-1975թթ.):

1975-1983թթ. աշխատել է Հաթերքի միջնակարգ դպրոցում որպես պատմության և հասարակագիտության ուսուցիչ և փոխտնօրեն: 1993թ. անցել է թոշակի և որպես ուսուցիչ աշխատել մինչև 2003թ:

Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով, հոբելյանական մեդալով, 19 պատվոգրերով: Հեղինակ է երկու գրքերի, 100-ից ավելի հոդվածների: Արժեքավոր է հատկապես 2012թ. հրատարակված «Հաթերք» ստվարածավալ աշխատությունը:

Այդին Պետրոսյանը ծնվել է 1923թ. Ասկերանի շրջանի Նորագյուղ գյուղում[589]: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի յոթնամյա դպրոցում, այնուհետև ավարտել Խնապատի միջնակարգ դպրոցը: 1941թ. զորակոչվել և մինչև 1946թ. ծառայել է Կարմիր բանակի շարքերում: Պատերազմում վիրավորվել է և ստացել 2-րդ կարգի հաշմանդամություն: Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի և մի շարք այլ շքանշաններով ու մեդալներով:

Զորացրվելուց հետո 1946թ. ընդունվել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը, 1948թ. ավարտել այն ու նույն տարում նշանակվել է Նորագյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն, որտեղ աշխատել է երկու տարի:

1955-1962թթ. ընկած ժամանակահատվածում աշխատել է կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմում, նախ պրոպագանդայի և ագիտացիայի, այնուհետև կազմակերպական բաժնի վարիչի պաշտոններում: Եղել է մարզկոմի բյուրոյի անդամ:

1962թ. նոյեմբերին տեղափոխվել է ԼՂԻՄ ներքին գործերի վարչություն՝ որպես պետի տեղակալ: 1965թ. նշանակվել է ԼՂԻՄ գլխավոր դատախազ: Հետագա

տարիներին ակտիվ գործունեություն է ծավալել մարզի հասարակական-քաղաքական կյանքում:

Բազմիցս արժանացել է խրախուսանքների ու պատվոգրերի: Ուներ բանակի կապիտանի, ոստիկանության փոխգնդապետի, դատախազության գնդապետի կոչումներ:

Սամուրկա Խաչատրյանը ծնվել է 1927թ. Նորագյուղում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի յոթնամյա դպրոցում, այնուհետև ավարտել Խանաբադի միջնակարգ դպրոցը, 1946թ. ընդունվել և 1948թ. ավարտել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ բաժինը: 1950-1954թթ. հեռակա կարգով սովորել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ բաժնում:

1948-1994թթ. աշխատել է Նորագյուղի դպրոցում որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ, 1956-1987թթ. միաժամանակ եղել է նույն դպրոցի ուսմասվարը:

Մանկավարժական երկարամյա և բեղմնավոր աշխատանքում փայլուն հաջողությունների համար կրթության նախարարության և հանրապետական կազմակերպությունների կողմից արժանացել՝ մի շարք գովասանագրերի, իսկ 1988թ.՝ ավագ ուսուցչի կոչման:

Աբրահամ Հայրապետյանը (1919-2001) նախնական կրթությունը ստացել է Խանաբադի յոթամյա դպրոցում, ուսումը շարունակել Շուշիի մանկավարժական ուսումնարանում, որն ավարտելով, 1937թ. սեպտեմբերից սկսել է աշխատել հայրենի գյուղի դպրոցում որպես ուսուցիչ: Այնուհետև զորակոչվել է Կարմիր բանակ, մասնակցել Հայրենական պատերազմին, մի քանի անգամ վիրավորվել և 1945թ. զորացրվել որպես երկրորդ կարգի հաշմանդամ: Ուսումը շարունակել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի պատմաաշխարհագրական բաժնում, որն ավարտելով 1948թ. աշխատել է Ստեփանակերտ քաղաքի թիվ 6, 7 և հերթափոխային դպրոցներում:

1953թ. ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմա-աշխարհագրական ֆակուլտետը: Շուրջ 15 տարի աշխատել է ՆԳ մարզային վարչությունում անչափահասների գծով տեսչի պաշտոնում:

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով և 10-ից ավելի մեդալներով:

Արտաշես Աբրահամյանը (1929-1999) Հադրութի շրջանի Տումի գյուղի միջնակարգն ավարտելուց հետո ուսումը շարունակել է (1946-1948թթ.) Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետում: Ավարտելուց հետո նշանակվել է շրջանի Խանձաձորի յոթնամյա դպրոցի տնօրեն, այնուհետև որպես տնօրեն աշխատել է Տողի, Արփագյադուկի, Կարմրակուճի, Դոլանլարի դպրոցներում: 1990-ական թվականներին եղել է «Կոլտնտեսական» շրջանային թերթի պատասխանատու քարտուղար:

Արտյուշա Ավանեսյանը (1921-1961) ծնվել է Ասկերանի շրջանի Սեյդիշեն գյուղում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի յոթնամյա դպրոցում, միջնակարգը՝ Բաղարայի միջնակարգ դպրոցում: 1939թ. զորակոչվել է Կարմիր բանակ, ծառայել մինչև Հայրենական պատերազմի հաղթական ավարտը, 1946թ. զորացրվել է կուրծքը զարդարված Կարմիր աստղի երկու, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով ու բազմաթիվ մեդալներով:

1948թ. ավարտել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտը և նույն տարվա սեպտեմբերից աշխատանքի անցել հայրենի գյուղում: Աշխա-

տանքին զուգընթաց ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմաաշխարհագրական ֆակուլտետը և 1953թ. նշանակվել Սեյդիշենի դպրոցի տնօրեն:

Աշոտ Բաբայանը ծնվել է 1922թ. Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղում: 1940թ. ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը, 1941թ. զորակոչվել Կարմիր բանակի շարքերը, կռվել Հայրենական պատերազմի տարբեր ռազմաճակատներում, մի քանի անգամ վիրավորվել: Մարտերից մեկում ծանր վիրավորվելուց հետո և զորացրվել է և աշխատանքի անցել հայրենի գյուղի դպրոցում որպես զինղեկ: 1948թ. ավարտել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտը, 1954թ.՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժինը:

Ա.Բաբայանը որպես տնօրեն աշխատել է Ն.Հոռաթաղի դպրոցում, այնուհետև եղել է դպրոցի ուսմասվար, շրջժողկրթբաժնի դպրոցական տեսուչ, կուսակցության շրջկոմի հրահանգիչ:

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով ու բազմաթիվ մեդալներով:

Լարիսա Բեգլարյանը (1925-2004) ծնվել է Ստեփանակերտ քաղաքում: 1943թ. ավարտել է քաղաքի թիվ 1 դպրոցը, 1948թ.՝ Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտը և նշանակվել թիվ 1 մանկապարտեզի վարիչ, որտեղ աշխատել է մինչև 1981թ. փետրվարը: Այնուհետև մինչև 1992թ. նա որպես մեթոդիստ աշխատել է մսուր-մանկապարտեզում:

Լ.Բեգլարյանը երկար տարիներ Ստեփանակերտի քաղժողկրթբաժնի նախադպրոցական հիմնախնդիրների գծով արտահաստիքային մեթոդիստ էր: Մի քանի անգամ ընտրվել է Ստեփանակերտի քաղաքային խորհրդի պատգամավոր:

1965թ. նրան շնորհվել է հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչում:

Սուրեն Բաղդասարյանը ծնվել է 1927թ. Հադրութի շրջանի Տումի գյուղում: Գյուղի միջնակարգն ավարտել է 1946թ., Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը՝ 1948թ.: Ավարտելուց հետո նշանակվել է շրջանի Մամեդաձոր գյուղի դպրոցի ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ, տնօրեն:

Խորհրդային բանակում զինծառայությունն (1950-1953թթ.) ավարտելուց հետո ընդունվել է Դաղստանի պետհամալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետը և աշխատանքի անցել Հադրութի միջնակարգ դպրոցում:

Արժանացել է ուսուցիչ-մեթոդիստի կոչման, Ադր. ԽՍՀ լուսավորության գերազանցիկ է, 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ:

Մուշեղ Պետրոսյանը ծնվել է 1921թ. Շուշի քաղաքում: Ավարտել է տեղի յոթնամյա դպրոցը, այնուհետև մանկավարժական ուսումնարանը 1940թ.-ին և աշխատանքի անցել Ասկերանի յոթնամյա դպրոցում որպես ռուսաց լեզվի ուսուցիչ:

Հայրենական պատերազմի առաջին իսկ օրից զորակոչվել է բանակ, 1943թ. հիվանդության պարճառով զորացրվել:

1944-1945 ուստարում նշանակվել է Ղարաբուլաղի միջնակարգ դպրոցում սկզբում որպես ուսմասվար, ապա՝ տնօրեն: Միաժամանակ ավարտել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի ռուսական բաժինը: Այն ավարտելուց հետո շուրջ 19 տարի աշխատել է Խնապատի միջնակարգ դպրոցում: Այդ տարիներին հեռակա կարգով ավարտել է նաև Բաքվի մանկավարժական ինստիտուտի ռուսական բաժինը:

1966թ. նշանակվել է շրջժողկրթբաժնի մեթոդիստ և աշխատել մինչև թոշակի անցնելը՝ 1986թ.:

Պարգևատրվել է հանրապետության և մարզի լուսավորության մարմինների պատվոգրերով:

Գևորգ Գևորգյանը (1915-1975) նախնական կրթությունը ստացել է Ասկերանի շրջանի Քռասնի գյուղի առաջին աստիճանի դպրոցում, իսկ միջնակարգը՝ Ստեփանակերտի թիվ 1 դպրոցում: Դպրոցն ավարտելուց հետո մանկավարժական աշխատանքի անցել նախ հայրենի գյուղի, ապա՝ Մխիթարիքենդի, Սզնեքի դպրոցներում որպես ուսուցիչ, տնօրեն:

1942թ. զորակոչվել է բանակ, 1944թ. ծանր վիրավորվել և զորացրվել բանակից:

1946թ. Գևորգյանը աշխատել է Ստեփանակերտի թիվ 2 միջնակարգ դպրոցում: Ավարտելով Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտը, 1948թ. նշանակվում է տնօրեն:

Պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով և մի շարք մեդալներով:

Եվգենյա Բաբայանը (1923-2002) 7-ամյա դպրոցն ավարտել է Ղուզե Կալերի, միջնակարգը՝ Գյունե Կալերի դպրոցում: 1942թ. հազարավոր հայրենասեր աղջիկների պես մեկնում է ռազմաճակատ: Պատերազմի հաղթական ավարտից հետո վերադառնում է հայրենի երկրամաս և ուսումը շարունակում Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտում: 1948թ. ավարտում է այն և իր ամբողջ կյանքը նվիրաբերում մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործին:

1948-1949 ուստարում երկամյա մանկավարժական ինստիտուտի 58 շրջանավարտներից 22-ը ստացել են առաջին կարգի դիպլոմ: Երկամյակի դասախոսների և շրջանավարտների հուշերի հիման վրա ներկայացնում ենք 12 շրջանավարտների գործունեությունը, որից 2-ը (Խորեն Ղազարյան, Վազգեն Սարգսյան) արդեն ներկայացվել են աշխատության 4-րդ գլխում:

Զիվան Աթայանը ծնվել է 1927թ. Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում[590]: Ավարտելով գյուղի միջնակարգ դպրոցը, երկու տարի աշխատել է կոլտնտեսությունում: 1948թ. ավարտել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի բնագիտա-աշխարհագրական ֆակուլտետը: 1949-1952 թթ. որպես աշխարհագրության և քիմիայի ուսուցիչ աշխատել է Հաթերքի և Վաղուհասի դպրոցներում:

1952-1956թթ. ուսումը շարունակել է Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի աշխարհագրական ֆակուլտետում և ավարտելուց, նշանակվել Հայկ.ԽՍՀ Արտաշատի շրջանի Քաղցրաշեն գյուղում որպես դպրոցի տնօրեն:

1965թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրան, 1968թ. պաշտպանել թեկնածուական թեզ և ստացել աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Այդ տարվանից աշխատանքի է անցել Երևանի պետական համալսարանի աշխարհագրական ամբիոնում՝ դոցենտի կոչումով:

Հեղինակ է 43 հոդվածների և 4 մենագրության:

Գերասիմ Հովսեփյանը (1923-1992) նախնական կրթությունը ստացել է Ասկերանի շրջանի Շուշիքենդ գյուղի 7-ամյա դպրոցում: Այնուհետև զորակոչվել է Կարմիր բանակ, մասնակցել պատերազմին, մի քանի անգամ վիրավորվել և զորացրվել որպես 2-րդ կարգի հաշմանդամ:

Զորացրվելուց հետո 1945-1949թթ. ուսուցչություն է անում Քռասնի, Խնձրիստան, Դաշուշեն գյուղերում և միաժամանակ, հեռակա կարգով ավարտում (1948-

1949 ուստարում) Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտը:

1950 թվականից մինչև իր կյանքի վերջը աշխատել է «Սովետական Ղարաբաղ» օրաթերթում՝ որպես ավագ սրբագրիչ: 1953թ. գրողների միության անդամ էր: Նա շնորհալի բանաստեղծ էր, ակտիվ մտավորական:

Սուրեն Քոչարյանը (1918-1994) 1935թ. ավարտել է Մարտակերտի թերի միջնակարգ դպրոցը, նույն թվականին ընդունվել Շուշիի մանկավարժական տեխնիկումը, որն ավարտելով 1938թ. աշխատանքի է անցել Մոխրաթաղի յոթնամյա դպրոցում որպես ուսուցիչ: Մանկավարժական կարճատև գործունեությունից հետո Ս.Քոչարյանը զորակոչվում է Կարմիր բանակ, մասնակցում Հայրենական պատերազմին մինչև նրա հաղթական ավարտը և զորացրվում 1946թ. աշնանը: Զորացրվելուց հետո շարունակում է մանկավարժական աշխատանքը հայրենի Հոռաթաղ գյուղի դպրոցում, միաժամանակ հեռակա կարգով ավարտում Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտը և Բաքվի մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետը:

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով:

Հայկազ Սարգսյանը ծնվել է 1928թ. Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում: 1945թ. ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը, 1948թ.՝ Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի աշխարհաբնագիտական ֆակուլտետը և աշխատանքի անցել Վաղուհասի միջնակարգ դպրոցում որպես ուսուցիչ, ուսմասվար[591]:

Երկար տարիներ, 1950-1992թթ., աշխատել է Զագլիկի և Հաթերքի դպրոցներում՝ որպես ուսուցիչ և դասվար:

Մանկավարժական, մեթոդական և մասնագիտական բարձր որակավորում ունենալու հանար նրան շնրհվել է ավագ ուսուցչի կոչում, պարգևատրվել է բազմաթիվ պատվոգրերով:

Պավել Մեժլումյանը ծնվել է 1922թ. Մարտունու շրջանի Մյուրուշեն գյուղում: նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի 7-ամյա, միջնակարգը՝ Կաղարծու միջնակարգ դպրոցներում:

1942թ. զորակոչվել է Կարմիր բանակի շարքերը, մասնակցել Հայրենական պատերազմին մինչև նրա հաղթական ավարտը և զորացրվել 1946թ. դեկտեմբերին: Աշխատանքի է անցել կոլտնտեսությունում:

1947-1949թթ. սովորել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտում, որն ավարտելուց հետո մինչև 1952թ. ռուսաց լեզու է դասավանդել շրջանի Ավդուռ և Մյուրիշեն գյուղերում:

1954թ. ավարտել է Երևանի մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժինը: 1954-1961թթ. աշխատել է Հաղորտու միջնակարգ դպրոցում՝որպես ուսմասվար, 1961-2003թթ.՝ Ավդուռ և Մյուրիշեն գյուղերի դպրոցներում որպես ուսուցիչ:

Սերյոժա Ազիզբեկյանը ծնվել է 1923թ. Տումի գյուղում: 1942թ. ավարտել է գյուղի միջնակարգն ու մեկնել ռազմաճակատ:

1949թ. ավարտել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի աշխարհագրության ֆակուլտետը և աշխատանքի անցել հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում որպես ուսուցիչ, ուսմասվար: Այնուհետև երկար տարիներ, մինչև 1987թ., որպես ուսուցիչ աշխատել է շրջանի Ջրակուս, Խանձաձոր գյուղերում:

Էդուարդ Մկրտչյանը ծնվել է 1930թ. Հադրութի շրջանի Խծաբերդ գյուղում: 1947թ. ավարտել է Հին Թաղլարի միջնակարգ դպրոցը, 1949թ.՝ Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը, 1954թ.՝

Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը: 1954-1958թթ. աշխատել է Սիսիանի շրջանի Դարբասի միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, 1958-1963թթ.՝ նույն շրջանի Լեռնաշենի ութամյա դպրոցում: 1966թ. ավարտել է Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրան՝ գրաբարի գծով: 1968թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1999թ.-ին՝ դոկտորական ատենախոսություններ և ստացել բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, այնուհետև՝ պրոֆեսորի կոչում: 1965թ.-ից աշխատել է Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում որպես գրաբարի, գրական լեզվի պատմության դասախոս:

Հեղինակ է բազմաթիվ գիտական հոդվածների:

Շահեն Քամալյանը ծնվել է 1925թ. Մարտունու շրջանի Գյունե Ճարտար գյուղում: 1942թ. ավարտելով գյուղի միջնակարգ դպրոցը, երկու տարի աշխատել է Ճարտարի կոլտնտեսությունում: 1946թ. ընդունվել և 1948թ. ավարտել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի բնագիտա-աշխարհագրական ֆակուլտետը:

1950-1955թթ. սովորել է Հայկական հեռակա մանկավարժական ինստիտուտի կենսաբանության և քիմիայի ֆակուլտետում: 1951-1969թթ. աշխատել է Գյունե Կալերի և Գյունե Ճարտարի դպրոցներում՝ որպես կենսաբանության, քիմիայի և աշխատանքի ուսուցման ուսուցիչ:

Երկար տարիներ եղել է շրջանային կրթության բաժնի մեթոդիստը:

Արժանացել է «Ուսուցիչ-մեթոդիստի» կոչման, «ԽՍՀՄ լուսավորության գերազանցիկ» կրծքանշանի, պարգևատրվել «Աշխատանքի վետերան» մեդալով, կառավարական պատվոգրերով: 2000թ, ԼՂՀ մանկավարժական ընթերցումների երկրորդ կարգի դիպլոմի մրցանակակիր է:

Փաստագրական նյութերից և ժամանակակիցների հուշերից տեղեկանում ենք, որ 1949-1950 ուստարում Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի 62 շրջանավարտներից 24-ը ստացել են առաջին կարգի դիպլոմ: Հնարավորինս ներկայացնում ենք նրանցից 8-ի հետագա գործունեությունը (այդ նույն ուսումնական տարում երկամյակն առաջին կարգի դիպլոմով ավարտած Զավեն Բաբայանի գործունեությունը ներկայացվել է 4-րդ գլխում):

Ռաֆայել Բաղդասարյանը ծնվել է 1930թ. Մարտակերտի շրջանի Գյուլաթաղ (Վարդաձոր) գյուղում: 7-ամյակն ավարտել է հայրենի գյուղում, միջնակարգը՝ Կուսապատ գյուղի դպրոցում: 1948թ. ընդունվել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի քիմիա-կենսաբանական ֆակուլտետը, որն ավարտելով 1950թ., աշխատանքի է անցել հայրենի գյուղի դպրոցում: 1952թ. նշանակվել է «Սոցիալիզմի ուղիով» շրջանային թերթի պատասխանատու քարտուղար: 1953թ. ընտրվել է ԼԿԵՄ Մարտակերտի շրջկոմի առաջին քարտուղար, 1957թ.՝ շրջխորհրդի գործկոմի քատուղար: 1961թ. նշանակվել է Ձանյաթաղի ութնամյա դպրոցի տնօրեն: Աշխատանքին զուգահեռ 1963թ. հեռակա կարգով ավարտել է Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի աշխարհագրական ֆակուլտետը: 1946թ. աշխատանքի է հրավիրվել կրթության բաժնում՝ որպես դպրոցական տեսուչ: 1988-1994թթ. աշխատել է շրջժողկրթբաժնի վարիչի պաշտոնում:

Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով, «Աշխատանքային արիության համար», «Աշխատանքային գերազանցության համար», «Աշխատանքի վետերան» մեդալներով, «Ադր.ԽՍՀ լուսավորության գերազանցիկ» կրծքանշանով,

բազմաթիվ այլ պատվոգրերով ու գովասանագրերով:

Սեդրակ Օհանջանյանը (1924-1988)՝ ավարտելով ծննդավայրի՝ Մարտակերտ քաղաքի միջնակարգ դպրոցը, մաթեմատիկա է դասավանդել նույն դպրոցի 1-4-րդ դասարաններում, իսկ 1942թ.-ից՝ մանկավարժական աշխատանք է կատարել Թալիշի, Կարմիրավանի, Կուսապատի դպրոցներում: 1950թ. հեռակա կարգով ավարտել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ֆակուլտետը: 1954թ. մինչև կյանքի վերջը աշխատել է Մարտակերտ քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոցում և, չկտրվելով աշխատանքից, 1957թ. հեռակա կարգով ավարտել Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը:

Երկար տարիներ եղել է շրջանի մաթեմատիկայի ուսուցիչների առարկայական հանձնաժողովի նախագահը, կրթության շրջանային բաժնի արտահաստիքային տեսուչն ու մեթոդիստը:

Արժանացել է «Ուսուցիչ-մեթոդիստի» կոչման և պարգևատրվել կառավարական պատվոգրերով ու գովասանագրերով:

Ալեքսանդր Բաղրյանը (1924-1984) միջնակարգ կրթությունը ստացել է ծննդավայրի՝ Ասկերանի շրջանի Չանախչիի (Ավետարանոց) միջնակարգ դպրոցում: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին ու նրա ավարտից հետո բանակի շարքերում ծառայել ևս երկու տարի: Զորացրվելուց հետո աշխատել է կոլտնտեսությունում:

1948թ. Ա.Բաղրյանը ընդունվում է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը և, 1950թ. ավարտելով այն, աշխատանքի անցնում հայրենի գյուղի դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ:

Պավել Իլյիչ Սլոտինը (1910-1993) ծնվել է Ռուսաստանի Կիրովի մարզի Սլոբոդսկոյի շրջանի Չուբարի գյուղում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղում, այնուհետև 1941-1945թթ. ծառայել խորհրդային բանակում, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: 1946թ. բնակվել է Լեռնային Ղարաբաղում:

1946թ. Պ.Սլոտինը աշխատանքի է անցել Ստեփանակերտի թիվ 3 դպրոցում, սկզբում որպես զինղեկ, ապա՝ ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ: 1950թ. ավարտել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության բաժինը: Աշխատանքին զուգահեռ հեռակա կարգով ավարտել է նաև Բաքվի ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտը: 1955-1991թթ. եղել է թիվ 3 դպրոցի ուսմասվարը:

Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով, «Աշխատանքային արիության համար» մեդալով և բազում պատվոգրերով ու գովասանագրերով:

Ռայիսա Ավանեսովան ծնվել է 1930թ. Ստեփանակերտում: 1948թ. ավարտել է Ստեփանակերտի միջնակարգ դպրոցը, 1950թ.՝ Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտը: 1951թ. աշխատանքի է անցել Ստեփանակերտի թիվ 2 միջնակարգ դպրոցում որպես ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի, աշխատանքին զուգահեռ սովորել և 1969թ. ավարտել է Հայաստանի հեռակա մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետը:

Մանկավարժական գործունեության 37 տարիների ընթացքում անվանի ուսուցչուհին արժանացել է բազմաթիվ պարգևների ու պատվոգրերի:

Եպրաքսյա Կարապետյանը ծնվել է 1930թ. Մարտակերտի շրջանի Ղազանչի գյուղում: 1950թ. ավարտել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը և նույն տարվա սեպտեմբերից աշխա-

տանքի անցել Ասկերանի շրջանի Քարագլուխ գյուղի 7-ամյա դպրոցում: 1954-1993թթ. աշխատել է Ասկերանի միջնակարգ դպրոցում որպես դասվար: Երկար տարիներ եղել է Ասկերանի շրջժողկրթբաժնի արտահաստիքային տեսուչը:

Կրթության ասպարեզում ունեցած հաջողությունների համար 1970թ. պարգևատրվել «Աշխատանքային արիության համար» մեդալով, 1976թ.՝ «Պատվո նշան» շքանշանով, 1981թ. արժանացել է ավագ ուսուցչի կոչման:

1986թ. ընտրվել է մարզային խորհրդի պատգամավոր:

Մայոր Պետրոսյանը (1925-1995) նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի՝ Բերդաձոր գյուղի միջնակարգ դպրոցում: Պատերազմի հենց առաջին օրերին մեկնել է ռազմաճակատ, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին՝ մինչև նրա հաղթական ավարտը: Զորացրվել է 1946թ.: 1948-1949 ուստարում ընդունվել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը, որն ավարտելուց հետո աշխատանքի է անցել հայրենի գյուղի դպրոցում որպես պատմության ուսուցիչ, ուսմասվար: Տասնյակ տարիներ եղել է Մեղրաձորի դպրոցի տնօրեն:

Օրինակելի աշխատանքի համար պարգևատրվել է պատվոգրերով ու գովասանագրերով:

1950-1951 ուստարում երկամյա մանկավարժական ինստիտուտը առաջին կարգի դիպլոմով ավարտել են Արիս Պողոսյանը, Վիկտորիա Պետրոսյանը, Արտյուշա Ավետիսյանը, Շիրին Մինասյանը, Լիդա Շահրամանյանը և ուրիշներ:

Արիս Պողոսյանը (1930-1995) 1949թ. ավարտել է Մարտակերտի շրջանիԱռաջաձորի միջնակարգ դպրոցը: Նույն տարում ընդունվել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական բաժինը և, ավարտելով այն, աշխատանքի անցել Նախիջևանի մարզի Օրդուբադի շրջանի Բիստ գյուղի դպրոցում որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ:

1952-1954թթ. ծառայել է խորհրդային բանակի շարքերում: Զորացրվելուց հետո որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ աշխատանքի է անցել Մարտակերտի շրջանի Չայլու գյուղի դպրոցում: Հեռակա կարգով, ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը:

Ա.Պողոսյանը եղել է 1955-1959թթ.՝ Կոճողոտի, 1959-1962թթ.՝ Հար-գոմերի, 1965-1992թթ.՝ Առաջաձորի դպրոցների տնօրենը:

Մանկավարժական բեղմնավոր գործունեության համար վաստակաշատ մանկավարժն արժանացել է «Հանրապետության լուսավորության գերազանցիկ» կրծքանշանի, պարգևատրվել «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով և կառավարական մի շարք պատվոգրերով ու գովասանագրերով:

Վիկտորիա Պետրոսյանը (ծնվ. 1930թ.) 1949թ. ավարտել է ծննդավայրի՝ Հաթերքի միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական բաժինը, որն ավարտելով (1951թ.) աշխատանքի է անցել Հաթերք գյուղի միջնակարգ դպրոցում որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ:

1952թ. ընդունվել և 1956թ. ավարտել է Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը:

1956-2008թթ. աշխատել է Հաթերք գյուղի միջնակարգ դպրոցում որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ և կազմակերպիչ, իսկ 1979-1983թթ.՝ դպրոցի տնօրեն: Նրա մանկավարժական աշխատանքը ըստ արժանվույն է գնահատվել. նա 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ է:

Լիդա Շահրամանյանը ծնվելէ 1927թ. Նախիջևանիկ գյուղում: Նախնական կր-

թությունը ստացել է Ստեփանակերիտի 7-ամյա դպրոցում, միջնակարգը՝ Գորկու անվան թիվ 1 դպրոցում: 1948թ. է ընդունվել Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական բաժինը, որն ավարտելով 1951թ., բեղուն մանկավարժական գործունեություն է ծավալել Կարմիր գյուղի (1951-1952թթ.), Սղնախի (1952-1953թթ.), Շուշիի (1953-1956թթ.), Խանաբադի (1955-1956թթ.) և Խնածախի (1966-1977թթ.) դպրոցներում որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ, ուսմասվար, տնօրեն:

Արտյուշա Ավետիսյանը ծնվել է 1923թ. Ստեփանակերտի շրջանի Սղնախ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի 7-ամյա դպրոցում, այնուհետև ավարտել Շուշիի մանկավարժական ուսումնարանը: Պատերազմի առաջին օրերին զորակոչվել է Կարմիր բանակ, ծառայել մինչև 1945թ. դեկտեմբերը և զորացրվել: 1946-1947թթ. աշխատել է Ստեփանակերտի ֆինբաժնում, 1948-1949թթ.՝ ընտրվել Սղնախի գյուղխորհրդի նախագահ:

1949թ. ընդունվել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության բաժինը, որն ավարտելով 1951-1952թթ., աշխատել է Սխնախի ութամյա դպրոցում որպես ուսուցիչ: 1962թ. տեղափոխվել է Ստեփանակերտ և երկու տարի աշխատել էլեկտրատեխնիկական գործարանում: 1965-1985թթ. աշխատել է Շուշիի շրջանի Կուշչուլար գյուղի դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի ուսուցիչ:

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով, «Արիության համար» և ութ այլ մեդալներով:

Շիրին Մինասյանը (1924-1992) նախնական կրթությունը ստացել է հայրենի՝ Նախիջևանիկի թերի միջնակարգ դպրոցում, այնուհետև ավարտել Խանաբադի միջնակարգ դպրոցը, 1942թ. ավարտել Շուշիի մանկավարժական տեխնիկումը:

1942թ. զորակոչվել է Կարմիր բանակ, ծառայել մինչև պատերազմի հաղթական ավարտը, զորացրվել 1945թ. նոյեմբերին:

Զորացրվելուց հետո աշխատել է Ասկերանի շրջանի Արանզամինի տարրական դպրոցում որպես վարիչ, 1947թ. սեպտեմբերից՝ Նախիջևանիկի դպրոցում որպես զինղեկ: 1951թ. ավարտել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը, իսկ 1955թ.՝ Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Մինչև 1988թ. աշխատել է նույն դպրոցում որպես զինղեկ և պատմության ուսուցիչ:

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով և 10-ից ավելի մեդալներով, «Քաղաքացիական պաշտպանության գերազանցիկ» կրծքանշանով:

Զոհվել է Արցախյան գոյամարտում՝ 1992թ.:

1951-1952 ուստարում Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտը գերազանց գնահատականներով ավարտել են **Էմմա Վերդյանը, Էմմա Գաբրիելյանը, Սուրեն Առաքելյանը, Ռուբեն Խալափյանը, Նիկոլայ Հարությունյանը,** հարվածային գնահատականներով՝ **Միքայել Գասպարյանը:** Առաջին կարգի դիպլոմով ավարտած երկամյակի շրջանավարտներ **Իվան Աթայանի, Վլադիմիր Անտոնյանի, Վլադիմիր Գրիգորյանի, Մովսես Ուլունցի** բեղուն մանկավարժական գործունեությունը ներկայացվել է աշխատության 4-րդ գլխում:

Էմմա Վերդյանը ծնվել է 1929թ. Ասկերանի շրջանի Բալլուջա գյուղում: Հայրենի գյուղի դպրոցում յոթնամյա կրթություն ստանալուց հետո ուսումը շարունակել է Շուշիի մանկավարժական ուսումնարանում, որն ավարտել է 1946-1947 ուստարում:

1951-1952 ուստարում հեռակա կարգով ավարտել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը, 1961-1962 ուստարում՝ Երևանի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետի հեռակա բաժինը:

Աշխատանքային գործունեությունը սկսել է 1947թ., Բալլուջայի յոթնամյա դպրոցում՝ որպես տարրական դասարանների ուսուցչուհի: 1949-1950 ուստարում տեղափոխվել է Խանածախի յոթնամյա դպրոց, որտեղ շուրջ 50 տարի հայոց լեզու և գրականություն է ուսուցանել մատաղ սերնդին:

Է.Վերդյանը արժանացել է ավագ ուսուցչի, մեթոդիստ-ուսուցչի կոչումների, «ԽՍՀՄլուսավորության գերազանցիկ» կրծքանշանի և պարգևատրվել «Պատվո նշան» շքանշանով:

Էմմա Գաբրիելյանը ծնվել է 1931թ. Ասկերանի շրջանի Բալլուջա գյուղում: Ստեփանակերտում միջնակարգ կրթություն ստանալուց հետո ուսումը շարունակել է երկամյա մանկավարժական ինստիտուտում, որն ավարտել է 1951թ: Նույն տարում նա նշանակվում է Շուշիի միջնակարգ դպրոցի ռուսաց լեզվի ուսուցիչ, որտեղ աշխատում է մինչև 1959թ.: 1959թ. աշխատանքի է անցնում Ստեփանակերտի թիվ 2 մանկապարտեզում, որպես դաստիարակ: 1964թ. նշանակվում է Ստեփանակերտի թիվ 6 մանկապարտեզի տնօրեն, 1966թ.՝ Ստեփանակերտի թիվ 4 մանկապարտեզի տնօրեն:

1982թ. է.Գաբրիելյանին շնորհվել է հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչում:

Սուրեն Առաքելյանը ծնվել է 1929թ. Մարտակերտի շրջանի Չլդրան գյուղում: Հայրենի գյուղի դպրոցում ստացել է յոթնամյա կրթություն, միջնակարգն ավարտել Առաջածորի դպրոցում: 1948-1950թթ. սովորել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտում: Ավարտելուց հետո, որպես մաթեմատիկայի ուսուցիչ, աշխատանքի է անցել Շուշիի շրջանի Քարին տակ գյուղի միջնակարգ դպրոցում, 1954թ. տեղափոխվել Չլդրանի միջնակարգ դպրոց: Ս.Առաքելյանը հեռակա կարգով ավարտել է Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը:

1966թ. ղեկավարել է Չլդրանի միջնակարգ դպրոցը:

2005թ. արժանացել է հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչման:

Ռուբեն Խալափյանը ծնվել է 1919թ. Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղում: 1938թ. ավարտել է Թալիշի միջնակարգ դպրոցը, 1939թ. զորակոչվել Կարմիր բանակի շարքերը: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, մի քանի անգամ վիրավորվել, ապաքինվել ու կրկին վերադարձել ռազմաճակատ: Ծառայել է մինչև 1946թ. աշունը և զորացրվել՝ պարգևատրված Փառքի 3-րդ աստիճանի շքանշանով:

1946-1949թթ. աշխատել է Մադաղիսում գործող կաուչուկի գործարանում որպես բանվոր:

1949թ. ընդունվել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության բաժինը, որն ավարտելով 1951թ. որպես ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ և ուսմասվար աշխատանքի է անցել Մարաղայի միջնակարգ դպրոցում: 1957թ. հեռակա կարգով ավարտել է նաև Բաքվի ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտը:

Նիկոլայ Հարությունյանը ծնվել է 1915թ. Ստեփանակերտի շրջանի Նորագյուղ գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է Նորագյուղում, ապա՝ Խանաբադի 7-ամյա դպրոցում:

1935-1936 ուստարում ավարտել է Շուշիի մանկավաժական տեխնիկումը և աշխատանքի անցել Մեծ Ղարաղշլաղ գյուղում:

1936թ. որպես ուսուցիչ աշխատել է հայրենի Նորագյուղի 7-ամյա դպրոցում:

1942թ. հունվարին զորակոչվել է Կարմիր բանակի շարքերը: 1942թ.ծանր վիրավորվել է և ապաքինվելուց հետո զինվորական ծառայության համար ոչ պիտանի լինելու պատճառով 1943թ. մայիսին զորացրվել բանակի շարքերից:

1943-1944. ուստարվանից նորից անցնում է մանկավարժական աշխատանքի Նորագյուղի դպրոցում: 1952թ. ավարտել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի բնագիտաաշխարհագրական ֆակուլտետը, 1960-1966թթ. հեռակա կարգով՝ Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի նույն ֆակուլտետը և նշանակվել Սարդարաշենի միջնակարգ դպրոցի տնօրեն:

Բեղուն մանկավարժական գործունեության համար Ն.Հարությունյանը արժանացել է շրջանային և մարզային կրթության բաժինների պատվոգրերի ու գովասանագրերի:

Միքայել Գասպարյանը ծնվել է 1922թ. Հադրութի շրջանի Հին Թաղլար գյուղում: Հայրենի գյուղի դպրոցում ստացել է ոչլրիվ միջնակարգ կրթություն, այնուհետև 1941թ. ավարտել Հադրութի մանկավարժական ուսումնարանն ու անցել մանկավարժական աշխատանքի:

1942թ. զորակոչվել է Կարմիր բանակ, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին մինչև նրա հաղթական ավարտը և զորացրվել 1946թ.-ին՝ կուրծքը զարդարված Փառքի 2-րդ աստիճանի շքանշանով ու մեդալներով:

1946թ. աշխատանքի է անցել Հադրութի շրջանի Դոլանլարի 7-ամյա դպրոցում: 1952թ. ավարտել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը, իսկ 1955թ.՝ հեռակա կարգով Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի նույն ֆակուլտետը: 1951-1952 ուստարում աշխատանքի է անցել Հին Թաղլարի միջնակարգ դպրոցում որպես պատմության ուսուցիչ:

1952-1953 ուստարում Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտը առաջին կարգի դիպլոմով ավարտել են Նորայր Ավետիսյանը, Էմմա Սարդարյանը, Վլադիմիր Գևորգյանը և ուրիշներ: Նույն ուսումնական տարում ինստիտուտը առաջին կարգի դիպլոմով ավարտած շրջանավարտներ Կիմ Գաբրիելյանի, Եսայ Եսայանի, Անդրանիկ Աբրահամյանի գործունեության մասին ներկայացվել է աշխատության 4-րդ գլխում:

Նորայր Ավետիսյանը (1934-2014) ծնվել է Մարտունու շրջանիՀաղորտի գյուղում: Միջնակարգը հայրենի գյուղի դպրոցում ավարտելուց հետո 1951թ. ընդունվել և 1953թ.ավարտել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը, աշխատանքի անցել շրջանային «Դեպի կոմունիզմ» թերթի խմբագրությունում՝ որպես պատասխանատու քարտուղար: 1954-1957թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1957թ. հունվարից աշխատանքի է անցել հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում:Աշխատանքին զուգահեռ 1957-1962թթ. սովորել և ավարտել է Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի հեռակա բաժինը: Դպրոցում աշխատել է որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, փոխտնօրեն, տնօրեն:

Անբասիր աշխատանքի համար արժանացել է ավագ ուսուցչի կոչման:

Էմմա Մարդանյանը ծնվել է 1936թ. Հադրութի շրջանի Աղբուլաղ (Ակնաղբյուր)

գյուղում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի 7-ամյա դպրոցում, այնուհետև 1950թ. ավարտել Հադրութի միջնակարգ դպրոցը և ուսումը շարունակել Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժնում: Ավարտելով այն, 1952-1953 ուստարում աշխատանքի է անցել Բլուբանի դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար: Այնուհետև աշխատել է Տումու միջնակարգ դպրոցում:

Արժանացել է հանրապետության ժողկրթության գերազանցիկի կրծքանշանի:

Վլադիմիր Գևորգյանը ծնվել է 1923թ. Ասկերանի շրջանի Նորագյուղ գյուղում: Սովորել է Կարմիր գյուղի գիշերօթիկ դպրոցում, 1938-1939թթ. ուսումը շարունակել Շուշիի մանկավարժական տեխնիկումում: Մանկավարժական գործունեությունը սկսել է հայրենի գյուղի դպրոցում, որտեղ աշխատել է մինչև 1942թ. հունվարը՝ մինչև Կարմիր բանակ զորակոչվելը: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, ծառայությունը շարունակել մինչև 1947թ.:

1947թ. Վ.Գևորգյանը զորացրվում է բանակի շարքերից, վերադառնում հայրենի երկրամաս, 1950թ. ընդունվում Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը: Ավարտելով ինստիտուտը, Վ.Գևորգյանը աշխատանքի է անցնում Ստեփանակերտի դպրոցներում որպես ուսուցիչ, ուսմասվար:

Հետագա տարիներին (1955-1960թթ.) հեռակա կարգով ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը և աշխատանքի անցել Խանածախի դպրոցում՝ որպես ուսմասվար: Երկար տարիներ (1974-1983թթ.) աշխատել է Ստեփանակերտի գիշերօթիկ և թիվ 9 դպրոցներում:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում, չնայած քաղաքական ծանր պայմաններին, այնուամենայնիվ, երկամյա մանկավարժական ինստիտուտի նշված և շատ ուրիշ շրջանավարտներ գիտության, կրթության, մշակույթի և այլ ոլորտներում հնարավորինս բեղուն գործունեություն են ծավալել և նախադրյալներ ստեղծել երկրամասի դպրոցի, լուսավորության, մշակույթի և այլ ոլորտների հետագա զարգացման համար: Այդ դժնդակ տարիներին նրանք ժողովրդին կոչ էին անում միաբանությամբ պայքարել ազատության ու անկախության համար:

5. Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի գիտակրթական գործունեությունը 1969-1988թթ. (համառոտ տեղեկություններ)

Ինչպես նշել ենք աշխատության վեցերորդ գլխի առաջին բաժնում, մեծ աղմուկով բացված Շուշիի (հետագայում՝ Ստեփանակերտի) երկամյա մանկավարժական (ուսուցչական) ինստիտուտի գործունեությունը շատ կարճ տևեց (1939-1953թթ.): Այն փակվեց և հայկական բաժինը տեղափոխվեց Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտ, որտեղ արդեն գործում էին յոթ մասնագիտությունների գծով (հայոց լեզու և գրականություն, պատմություն, աշխարհագրություն, տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն) պատմաբանասիրական և բնագիտական բաժիններ՝ առկա և հեռակա ուսուցմամբ:

Սակայն երկու տասնամյակ հետո՝ 1969թ., Ադրբեջանի իշխանությունները, փակելով Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի հայկական բաժինը, այն տեղափոխեցին Ստեփանակերտ, որպես մասնաճյուղ, երեք բաժիննե-

րով՝ հայկական, ադրբեջանական և ռուսական: Բաքվի իշխանությունները նպատակամետ քաղաքականություն էին վարում՝ հայակերտ և հայաշունչ Բաքվից օտարել հայոց լեզուն, իսկ Ղարաբաղում հիմքեր ստեղծել ադրբեջաներենի մասսայականացման և ազերի մտավորականության խիտ բանակ ունենալու համար:

Փաստագրական նյութերի և այլ աղբյուրների ուսումնասիրությունից տեղեկանում ենք, որ Ստեփանակերտում հայկական բարձրագույն ուսումնական հաստատություն ստեղծելու վերաբերյալ ինքնավար մարզի ղեկավարների, մտավորականների օրինական պահանջը Բաքվի իշխանություններն օգտագործեցին բավականին հնարամիտ ձևով և լուծեցի նիրենց համար կարևոր մի շարք ռազմավարական հարցեր.

• դադարեցվեց հանրապետության մայրաքաղաքի, թեկուզև մասամբ, բայց, այնուամենայնիվ, հայեցի բարձրագույն կրթօջախի գոյությունը,

• վերացվեց Բաքվում հայ մտավորականության վերարտադրության և հետագա առկայության հնարավորությունը,

• արագացվեց Ադրբեջանի մայրաքաղաքի հայաթափման վաղուց արդեն հետևողականորեն իրականացվող գործընթացը,

• սկսվեց ձևավորվել զուտ ադրբեջանական ազգային մտավորականություն հայկական Արցախում,

• կտրուկ ավելացավ ինքնավար մարզի ադրբեջանական բնակչության թվաքանակը հարակից շրջաններից վերաբնակների հաշվին,

• սկսեց հետզհետե մեծանալ Բաքվի իշխանությունների կողմից «տեղական կադրեր» հորջորջված ադրբեջանցի պաշտոնյաների տեսակարար կշիռն ինքնավարության պետական և հանրային կառույցներում:

Այն, որ Բաքվի իշխանությունները նպատակամետ քաղաքականություն էին վարումՂարաբաղի նկատմամբ և ամեն կերպ ջանում ադրբեջանական տարրն ավելացնել այնտեղ, հստակ երևում է հետևյալ օրինակից:Բաքվից իջեցված պլանի համաձայն 1970-71 ուստարում նախատեսված էր հայկական բաժնում ընդունել 200 ուսանող, իսկ ադրբեջանականում՝ 175, այն դեպքում, երբ Ղարաբաղի տարածքում ադրբեջանական դպրոցների թիվը մոտ 10 անգամ պակաս էր հայկական դպրոցներից: Ինստիտուտի ռուսական բաժնում սովորող ուսանողների թիվը մնում էր անփոփոխ, մինչդեռ Ղարաբաղում ամեն տարի ավելանում էր ռուսաց լեզու սովորողների թիվը: Այդ քաղաքականությունը շարունակվեց մինչև 1988թ. ղարաբաղյան շարժումը:

Նորաստեղծ մասնաճյուղի տնօրեն նշանակվեց Շ.Աբրահամյանը: Նրա առաջին ձեռնարկումը եղավ հավաքագրել դասախոսական նոր կազմ և վերափոխել կառուցվածքը: Հետագայում, Յուրի Մարտիրոսյանի տնօրինության շրջանում (1971-1972 ուստարում) կազմակերպվեց երկու ֆակուլտետ՝ պատմաբանասիրականև ֆիզիկամաթեմատիկական՝ մոտ 250-300 ուսանողներով: 1972-1973 ուստարում մասնաճյուղը տվեց իր առաջին 132 շրջանավարտներին, որոնք աշխատանքի անցան լուսավորության բնագավառում:

1973թ. դեկտեմբերին Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի և Մինիստրների խորհրդի որոշումներով Ադրբեջանի Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղը վերակազմավորվեց՝ կոչվելով Ստեփանակերտի Սովետական Ադրբեջանի 60-ամյակի անվան մանկավարժական ինստիտուտ:

Ստեփանակերտում Բաքվի մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղի բացումը կարելի է դիտարկել որպես մարզում ծավալվող հուզումների մեղմաց-

ման, այսպես կոչված, քայլ կամ կիսաքայլ (1965թ. «13»-ի հայտնի նամակն ու այդ պատմական փաստաթղթին նախորդած ու հաջորդած մյուս իրադարձությունները իրենց զգացնել էին տալիս նաև 70-ական թվականներին)[592]:

Բաքվում լավ էին գիտակցում, որ այն չի կարող գոհացնել մարզի բնակչությանը և առաջին հերթին մտավորականությանը: Ուստի ստիպված էին կատարել հաջորդ կիսաքայլը՝ գործող մասնաճյուղը վերակազմավորելով ինքնուրույն ինստիտուտի:

Եվ այսպես, 1973թ. դեկտեմբերին Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի և Մինիստրների խորհրդի որոշումներով Ադրբեջանի Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղը վերակազմավորվեց Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի:

Քննարկման առարկա դարձավ ինստիտուտի անվանակոչումը: Հայ դասախոսների կողմից առաջարկվել էր ինստիտուտը կոչել հայագիտության մեծ երախտավոր Լեոյի կամ հայ դասական գրող Մուրացանի անունով: Սակայն Բաքուն նորաստեղծ մանկավարժական ինստիտուտը կոչեց «Սովետական Ադրբեջանի 60-ամյակի անվան»:

ԼՂԻՄ առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը պետք է մանկավարժական կադրեր թողարկեր ԼՂԻՄ-ի և նրա հարակից ադրբեջանական շրջանների դպրոցների համար: Սկզբնականշրջանում ինստիտուտը միջնակարգ հանրակրթական դպրոցների համար ուսուցիչներ էր պատրաստում հետևյալ հինգ մասնագիտությունների գծով՝ մաթեմատիկա, ֆիզիկա, պատմություն, մանկավարժություն և տարրական ուսուցման մեթոդիկա, մայրենի լեզու և գրականություն:

Ինստիտուտի ստեղծման պահին(նորաստեղծ բուհի առաջին ռեկտոր նշանակվեց Սերգեյ Գերասիմի Սարկիսովը) հաստատությունը կառուցվածքային առումով բաղկացած էր հետևյալ ստորաբաժանումներից՝ ղեկավար մարմիններ(ռեկտոր և պրոռեկտոր), աշխատակազմ, 2 ֆակուլտետ, 9 ամբիոն, 8 ճյուղային լաբորատորիաներ և մեխանիկական արհեստանոց:

1973-74 ուստարում ինստիտուտում ձևավորվել է 9 ամբիոն՝ հայոց լեզվի և գրականության, ադրբեջաներեն լեզվի և գրականության, ռուսաց լեզվի և գրականության, ԽՍՀՄ պատմության և տնտեսագիտության, փիլիսոփայության և գիտական կոմունիզմի, մանկավարժության և հոգեբանության, ֆիզիկայի և ընդհանուր մաթեմատիկայի, մաթեմատիկական անալիզի, մարմնակրթության և բուժական պատրաստության: Ձևավորվել է նաև ինստիտուտի գիտական խորհուրդը, որում ընդգրկվեցին հաստատության առաջատար դասախոսները:

Նոր դասընթացներ կարդալու համար հրավիրվում են համապատասխան մասնագետ-դասախոսներ Հայաստանից և ադրբեջանական բաժնի համար՝ Բաքվից:

Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում 1973-1974 ուստարում դասավանդել է 81 դասախոս (տես՝ աղյուսակ 17):

Աղյուսակ 24

ՍՄԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմը 1973-74 ուստարում

Դասախոսներ	Պրոֆեսորներ, գիտության դոկտորներ	Դոցենտներ, գիտության թեկնածուներ	Ընդամենը
Հաստիքային	3	15	59
Ժամավճարային	-	2	21
Համատեղմաբ	-	-	1

Իսկ ըստ հաստիքացուցակի՝ հաստատության պրոֆեսորադասախոսական կազմը հետևյալ պատկերն ուներ (տես՝ աղյուսակ 18):

Աղյուսակ 25

ՍՄԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմը 1973-74 ուստարում

Պաշտոնները	Հաստիքային միավորների քանակը
Ամբիոնների վարիչներ	9
Պրոֆեսոր	3
Դոցենտ	8
Ավագ դասախոս	20
Դասախոս	27
Ընդամենը՝	67

Ուսուցման գործընթացից բացի Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում տարվել են նաև գիտահետազոտական աշխատանքներ՝ պետական բյուջեից կատարվող ֆինանսավորմամբ: Այդ աշխատանքներում ընդգրկված էր տարբեր մասնագիտությունների 58 դասախոս: Յուրաքանչյուր ուստարում ամբիոններում մշակվում էին դասախոսների ուսումնական տարվա գիտահետազոտական աշխատանքային պլանները՝ դրանք ներառելով անհատական աշխատանքային պլանում, որպես ուսումնական ծանրաբեռնվածության մի բաղկացուցիչ մաս:

Արխիվային փաստաթղթերից[593] տեղեկանում ենք, որ նշված դասախոսները իրենց հետազոտությունների հիմնահարցերի շուրջ դասախոսություններ էին կարդում նաև Ստեփանակերտի որակավորման ինստիտուտում կազմակերպված ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում, ինչպես նաև մարզի դպրոցներում:

Նորաստեղծ ուսումնական հաստատությունում ուսումնական խմբերը ներառված էին երկու՝ ֆիզիկամաթեմատիկական և պատմաբանասիրական ֆակուլտետներում: Բացի առկա ուսուցման ձևից, նույն մասնագիտություններով տարվում էր նաև հեռակա ուսուցում: Ուսման տևողությունը առկա բաժնում չորս տա-

րի էր, իսկ հեռակա ուսուցման բաժնում՝ հինգ տարի:

Որպեսզի պարզ լինի, թե ինչպիսին էր Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի զարգացման դինամիկան, համադրության մեջ ներկայացնենք բուհի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ աշխատակիցների քանակը 1974թ.և 1979թ. հունվարի 1-ի դրությամբ (տես՝ աղյուսակ 19):

Աղյուսակ 26

ՍՄԻ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ աշխատակիցների քանակը 1974թ.և 1979թ.

Աշխատակիցները	Քանակը	
	01.01.1974թ.	01.01.1979թ.
աշխատակիցների ընդհանուր քանակը, որից՝	150	198
ռեկտոր և պրոռեկտոր	2	2
պրոֆեսորադասախոսական կազմ	59	90
պրոֆեսոր, գիտ. դոկտոր	1	3
դոցենտ, գիտ. թեկնածու	11	12
ավագ դասախոս	20	34
դասախոսներ և ասիստենտներ	27	41
ուսումնաօժանդակ անձնակազմ	14	26

Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը իր աշխատանքային գործունեության տասը տարիների (1969-1979թթ.) ընթացքում կրել է կառուցվածքային մի շարք փոփոխություններ՝ պայմանավորված աշխատանքներն առավել գործուն կազմակերպելու անհրաժեշտությամբ: Այսպես՝ 1978-79 ուստարում ինստիտուտում մասնագետների պատրաստումն իրականացվում էր երեք՝ ֆիզիկա-մաթեմատիկական, պատմության և բանասիրական ֆակուլտետներում: Ինստիտուտն ապահովված էր ուսումնանյութական բազայով՝ զբաղեցնում էր երկհարկանի շենք՝ 5618 քառ. մետր ընդհանուր մակերեսով, լսարանների, կաբինետների և լաբորատորիաների համար 44 սենյակով: Բացի այդ, ուներ նիստերի դահլիճ՝ 342 նստարանով, գրադարան՝ 120 տեղանոց ընթերցասրահով, մարզասրահ և ուսանողական ճաշարան[594]:

Պայմանավորված նոր մասնագիտությունների ընդգրկմամբ՝ 1980-1981 ուստարում ևս ինստիտուտի կառուցվածքում կատարվեցին որոշակի փոփոխություններ: Այդ ուսումնական տարում մասնագետների պատրաստումը տարվում էր ըստ հետևյալ մասնագիտությունների՝ մայրենի լեզու և գրականություն, պատմություն, մաթեմատիկա, ֆիզիկա, ընդհանուր տեխնիկական մասնագիտություններ և աշխատանք, մանկավարժություն և տարրական ուսուցման մեթոդիկա, քիմիա լրացուցիչ մասնագիտություն, կենսաբանություն:

Ինստիտուտում ստեղծվեց 4 ֆակուլտետ՝ պատմության, բանասիրական, ֆիզիկա-մաթեմատիկական, մանկավարժական և տարրական ուսուցման մեթոդի-

կա, որոնցում ուսուցման գործընթացն իրականացվում էր 11 ամբիոններում՝ մարքսիզմ-լենինիզմի, ընդհանուր պատմության, հայոց լեզվի և գրականության, ադրբեջաներեն լեզվի և գրականության, ռուսաց և օտար լեզուների, մաթեմատիկական անալիզի, հանրահաշվի և մաթեմատիկայի, դասավանդման մեթոդիկայի, մանկավարժության և հոգեբանության, ֆիզիկական դաստիարակության, ընդհանուր տեխնիկական առարկաների և քաղաքացիական պաշտպանության:

Ստորև ներկայացնում ենք 1973-1974 ուստարում ինստիտուտի ուսանողության կազմը(տես՝ աղյուսակ 20):

Աղյուսակ 27

ՍՄԻ-ի ուսանողության կազմը 1973-74 ուստարում՝ ըստ բաժինների, մասնագիտությունների, կուրսերի, խմբերի, ուսուցման առկա և հեռակա ձևերի

Բաժինը	Մասնագիտությունը	Ուսնող.կուրսերը		Խմբերը ընդ.	Ուսանողների քանակը		Ընդամենը
		առկա	հեռակա		առկա	հեռակա	
Հայկական	1. Լեզու և գրականություն	I,II,III, IV	I,II,III, IV,V	9	101	134	235
	2.Մանկավարժ. և մեթոդիկա	-	I,II,III-2, IV-2,V-2	8	-	176	176
Ադրբեջանական	1. Լեզու և գրականություն	I,II,III,IV	I,II,III, IV,V	9	98	133	231
	2.Պատմություն	I	I	2	26	25	51
	3.Մանկավարժ. և մեթոդիկա	-	I	1	-	24	24
Ռուսական	1. Մանկավարժ. և մեթոդիկա	-	I	1	-	25	25
	2.Պատմություն	I	-	1	25	-	25
Ընդամենը՝	Պատմաբանասիրական ֆակուլտետում	10	21	31	250	527	767
Հայկական	1.Մաթեմատիկա	I,II,III, IV	I,II,III, IV,V	9	97	134	231
	2.Ֆիզիկա	I,II,	-	2	45	-	45
Ադրբեջանական	1.Մաթեմատիկա	I,II,III, IV	I,II,III, IV,V	9	99	96	195
Ռուսական	1.Մաթեմատիկա	I	-	1	25	-	25
Ընդամենը՝	Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում	11	10	21	266	230	496
Ընդամենը՝	Ինստիտուտում	21	31	52	516	757	1263

1974թ. ինստիտուտն իրականացրեց մանկավարժների առաջին թողարկումը, ընդ որում՝ պետական ավարտական քննություններին թույլատրվել է 132 ուսանող:

Այժմ դիտարկենք Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտ ընդունված ուսանողների թվաքանակի աճի դինամիկան հետագա ուսումնական տարիներին (տես՝ աղյուսակ 21):

Աղյուսակ 28

Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտ ընդունված ուսանողների թվաքանակը 1974-80թթ.՝ ըստ ուսումնական տարիների

Ուս.տարի	1974-75	1975-76	1976-77	1977-78	1978-79	1979-80	Ընդամենը
Ընդուն. պլան	200	250	275	275	275	275	1275
Դիմել են	1710	1620	1556	1614	1555	1306	9361
Ընդունվել են	201	250	275	275	275	273	1549
Հայկական բաժին	123	146	172	172	172	173	958
Ադրբեջ. բաժին	77	102	101	102	102	99	583
Ռուսական բաժին	1	2	2	1	1	1	8

Այդ նույն տարիներին Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը թողարկել է հետևյալ քանակությամբ մասնագետներ՝ ըստ բաժինների (տես՝ աղյուսակ 22):

Աղյուսակ 29

ՍՄԻ-ի շրջանավարտների թվաքանակը՝ 1974-80թթ. ընդգրկմամբ

Թողարկման տարին	Ընդամենը թողարկվել է	Պատմություն				Մայրենի լեզու				Մաթեմ. և դիզիկա				Մանկ. և հոգեբան.			
		Հայկական	Ադրբեջան.	Ռուսական	Ընդամենը	Հայկական	Ադրբեջան.	Ռուսական	Ընդամենը	Հայկական	Ադրբեջան.	Ռուսական	Ընդամենը	Հայկական	Ադրբեջան.	Ռուսական	Ընդամենը
1976	245					55	48	-	103	77	39	-	86	56	56	-	112
1977	281					47	45	-	92	69	27	-	96	45	45	-	90
1978	428	-	26	24	50	80	80	-	160	93	57	22	172	46	46	22	114
1979	437	25	44	25	94	52	54	-	106	75	70	42	169	24	20	24	68
1980	451	24	24	23	71	25	24	-	49	21	23	21	88	-	25	-	25
Հեռակա- կա		-	20	-	20	25	26	-	51	32	32	-	64	24	25	21	70
Առկա		-	3	-	3	3	3	-	6	-	31	-	31	-	-	-	

1979թ. հունվարի 1-ի տվյալներով՝ ինստիտուտում կային 80 ուսումնական խմբեր, որոնցում ընդհանուր առմամբ ընդգրկված էր 2016 ուսանող: Գործող 80 խմբից 43-ում ընդգրկված էին առկա ուսուցմամբ ուսանողները՝ 1075 հոգի, իսկ հեռակա բաժնում՝ 37 խումբ՝ 941 ուսանող (տես՝ աղյուսակ 23):

Աղյուսակ 30

ՍՄԻ-ի ուսանողության բաշխվածությունն՝ ըստ ուսումնական խմբերի, 1979թ. փետրվարի 1-ի դրությամբ

	ընդհան.	առկա	հեռակա	Ուսանողների թիվը		
				ընդհան.	առկա	հեռակա
Ուսումնական խմբերը, այդ թվում՝	80	43	37	2016	1075	941
Պատմության ֆակուլտետ	17	12	5	421	298	123
հայկական բաժին	4	4	-	100	100	-
ադրբեջանական բաժին	9	4	5	221	98	123
ռուսական բաժին	4	4	-	100	100	-
Բանասիրական ֆակուլտետ	33	11	22	830	272	558
հայկական բաժին	13	4	9	330	97	233
ադրբեջանական բաժին	15	7	8	373	175	198
ռուսական բաժին	5	-	5	127	-	127
Ֆիզմաթ. ֆակուլտետ	30	20	10	765	505	260
հայկական բաժին	13	11	5	425	286	142
ադրբեջանական բաժին	10	5	5	243	125	118
ռուսական բաժին	4	4	-	97	97	-

ԼՂԻՄ-ում առանձին մանկավարժական ինստիտուտի հիմնադրումը, ինչ խոսք, ինքնին ուրախալի փաստ է: Սակայն, ընդունելով հանդերձ երևույթի դրական կողմը, այնուամենայնիվ, չմոռանանք նաև բացասական դերը, որ խաղաց մանկավարժական ինստիտուտը՝ ապահովելով ադրբեջանցի մտավորականների շռնդալի ներհոսքն ինքնավար մարզ և նրանց քայքայիչ գործունեությունն Արցախյան շարժման ժամանակ, ինչը անհերքելի է:

Համոզվելու համար Բաքվի իշխանությունների կրթական քաղաքականության դավագրգիռ էության մեջ, ստորև բերվող աղյուսակում (աղյուսակ 24) դիտարկենք Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ուսանողության ազգային պատկանելության համապատկերն ու նրա զարգացման դինամիկան՝ ըստ տարիների(տվյալները բերված են՝ հիմք ընդունելով ԼՂՀ հանրապետական արխիվում պահվող տարաբնույթ նյութերը, որոնց մի զգալի մասը, ցավոք, հրդեհի ճարակ է դարձել ադրբեջանական զորքերի կողմից քաղաքը հրետակոծության ենթարկվելու պատճառով):

Աղյուսակ 31

ՍՄԻ-ի ուսանողության կազմն՝ ըստ ազգային պատկանելության՝ 1979թ. դրությամբ

	Պատմության ֆակուլտետ			Բանասիրական ֆակուլտետ			Ֆիզմաթ ֆակուլտետ			Ընդամենը		
	առկա	հեռ.	ընդ.	առկա	հեռ.	ընդ.	առկա	հեռ.	ընդ.	առկա	հեռ.	ընդ.
Հայ	194	-	194	97	344	441	373	142	515	664	486	1150
Ադրբեջանցի	101	123	224	175	209	384	126	118	244	407	450	852
Ռուս	3	-	3	-	5	5	6	-	6	9	5	14
Ընդամենը՝	298	123	421	272	558	830	505	260	765	1075	841	2016

Աղյուսակից երևում է, որ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ուսանողների թիվը 1973-74 ուստարում, տոկոսային համադրությամբ, ըստ բաժինների բաշխված էին հետևյալ կերպ՝ հայկական բաժնի ուսանողները կազմում էին ուսանողության ընդհանուր թվի 58%-ը, ադրբեջանցիները՝ 40%-ը, ռուսական բաժնի ուսանողները՝ 2%-ը:

Նույն ուսումնական տարում պրոֆեսորադասախոսական անձնակազմի մոտ 61%-ը կազմում էին հայազգի դասախոսները, 39%-ը՝ ադրբեջանցիները:

Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ սկսած 1979-80 ուստարվանից, զգալի չափով ավելանում էր ադրբեջանցի ուսանողների և աշխատակիցների թվաքանակը:

Բարեբախտաբար, ինքնավար մարզում այդ իրավիճակը երկար չտևեց: 1988թ.ինստիտուտի հայազգի դասախոսական կազմը ուսանողության հետ միասին ոտքի ելավ ազգային ազատագրական պայքարի, հայոց պատմական 10-րդ նահանգը՝ Արցախը, մայր Հայաստանի հետ վերամիավորելու պահանջով:

Այդ օրերին ինստիտուտում ադրբեջանցիների հետ համատեղ աշխատանքը դարձավ անհնարին: Մեկուկես տասնամյակ գործած մանկավարժական ինստիտուտը 1988թ. փակվեց: Ադրբեջանական բաժինը տեղափոխվեց Շուշի, իսկ հայկական բաժինը՝ Վանաձոր: 1988թ. դեկտեմբերի 7-ի ահավոր երկրաշարժից հետո հայկական բաժինը վերադարձվեց Ստեփանակերտ և սկսեց գործելորպես Վանաձորի մանկավարժական ինստիտուտի բաժանմունք: Հետագայում Ստեփանակերտում գործող՝ Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան մանկավարժական ինստիտուտի բաժանմունքի և Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի (այժմ՝ Ճարտարագիտական համալսարան) Ստեփանակերտի բաժանմունքի բազայի վրա նորանկախ Արցախի Հանրապետությունում ձևավորվեց համալսարանական կրթությունը:

Այսպիսով, հայ մտավորականության վաղեմի երազանքը իրականացվեց: Արցախի գիտակրթական համակարգը, այդ թվում հանրակրթությունը, լրիվությամբ ներառվեց ՀՀ կրթական համակարգի մեջ: Այդ մասին մանրամասն կնշվի աշխատության 3-րդ հատորում:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԿԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1920-1988թթ.)

Աշխատության առաջին հատորում (էջ 336-369) պատմագիտական աղբյուրների, արխիվային փաստաթղթերի և այլ նյութերի ուսումնասիրության հիման վրա համառոտակի ներկայացվել է Արցախի կին լուսավորիչ-մանկավարժների գործունեությունը 1850-1920-ական թվականներին: Որպես տրամաբանական շարունակություն, նպատակահարմար գտանք երկրորդ հատորում նույնպես ներկայացնել խորհրդային շրջանում Լեռնային Ղարաբաղի կին մանկավարժների բազմաբովանդակ գործունեությունը 1920-1988թթ.: Ինչպես նախախորհրդային շրջանում, այնպես էլ ուսումնասիրվող ժամանակաշրջանում, դպրոցական գործը, մատաղ սերնդի հայեցի կրթությունն ու դաստիարակությունը մշտապես եղել են նաև հայրենասիրության գաղափարներով տոգորված կին մանկավարժների ուշադրության կենտրոնում: Նրանք ոչ միայն բեղմնավոր մանկավարժական գործունեություն են ծավալել, այլև արցախահայության համար դժնդակ տարիներին ակտիվորեն մասնակցել են երկրամասի հասարակական, քաղաքական աշխատանքներին, հայության համար ստեղծված ամենածանր պայմաններում անգամ հետևողականորեն, տղամարդկանց հետ համահավասար զբաղվել նաև հասարակական, քաղաքական հարցերով՝ չխնայելով ջանք ու եռանդ, իսկ անհրաժեշտության և վճռական պահերին՝ իրենց կյանքը զոհաբերել հայրենիքի պաշտպանության և ազգային նպատակների իրականացման համար: Կին մանկավարժների գործունեության ուշագրավ կողմերից մեկն էլ այն էր, որ անգամ անբարենպաստ, հատկապես խորհրդային շրջանում Ադրբեջանի ազգայնամոլ քաղաքականության պայմաններում, հայրենասեր մանկավարժ գործիչները երբեք չեն կորցրել իրենց հավատն ու հույսը լուսավոր ապագայի նկատմամբ, ամեն ինչ արել են ազգային մշակույթն ու լուսավոր օջախը պահպանելու ու զարգացնելու համար:

Մեր աշխատության այս բաժնում, հնարավորինս ժամանակագրական առումով, ներկայացրել ենք 90-ից ավելի բազմավաստակ կին մանկավարժների արգասավոր գործունեությունը 1920-1988թթ.: Նրանց գործունեությանը վերաբերող տեղեկությունները հիմնականում վերցված են համապատասխան աղբյուրներից, մեզ տրամադրած նրանց (ովքեր այսօր կենդանի են) և նրանց հարազատների, գործընկերների հուշերից, դպրոցներում պահպանվող արխիվային փաստաթղթերից, դպրոցների պատմության վերաբերյալ աշխատություններից (Մ.Աղաջանյան, Բ.Դավթյան, Խ.Ղազարյան, Մ.Բեգլարյան, Ռ.Դադայան և ուրիշներ), պարբերական մամուլում («Խորհրդային Ղարաբաղ», «Կոմունիստ», «Ձրաբերդ», «Աշխատանք», «Լուսարար» և այլն) տպագրված հոդվածներից և այլ աղբյուրներից: Բնականաբար, փաստագրական նյութերի բացակայության պատճառով հնարավոր չի եղել աշխատության մեջ ընդգրկել բոլոր նշանավոր կին մանկավարժներին: Կարծում ենք, աշխատության մեջ ներկայացված կին մանկավարժների գործունեությունը, նրանց հուշերն ու մանկավարժական հայացքները բավարար հիմքեր կստեղծեն հետագայում Արցախի կրթական համակարգի ամբողջական պատմությունը (1988-2016թթ.) գրելու համար:

Վաստակաշատ մանկավարժ **Էսթեր Մովսիսյանի (1898-1974)** մանկավարժական գործունեությունը ընդգրկում է նախախորհրդային և խորհրդային շրջանը:

Նախնական կրթությունը ստացել է հայրենի Վանք գյուղի երկդասյան դպրոցում (1-5-րդ դասարան), Այնուհետև ավարտում է Շուշիի Մարիամ Ղուկասյան օրիորդաց միջնակարգ դպրոցը (1916թ.), երկու տարի սովորում Շուշիի երկամյա ուսուցչական դասընթացներում (1916-1918թթ.) և անցնում մանկավարժական աշխատանքի: Սկզբուն նա դասավանդում է հայրենի գյուղի դպրոցում, այնուհետև՝ շրջանի Մատաղիսի առաջին աստիճանի դպրոցում, Մարտակերտի երկաստիճան 9-ամյա միջնակարգ դպրոցում[595]:

1928-1929 ուստարուց Էսթեր Մովսիսյանը տեղափոխվում է Ստեփանակերտ և շուրջ 4 տարի մանկավարժական գործունեություն ծավալում քաղաքի դպրոցներում:

Էսթեր Մովսիսյանը նպատակասլաց աշխատանք է տանում Ստեփանակերտի դպրոցների դասվարների շրջանում ու երկու տարի գլխավորում դասվարների քաղաքային մեթոդմիավումը:

Մանկավարժական գործունեությանը զուգընթաց Էսթեր Մովսիսյանը նաև ակտիվ հասարակական աշխատող էր ու բազմիցս ընտրվել է համաժողովների և համագումարների պատգամավոր: Ակտիվ ստեղծագործական ու մանկավարժական աշխատանքի շնորհիվ Է.Մովսիսյանը արժանացել է հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչման, շքանշանի և մեդալների:

Արցախի դպրոցի մանկավարժության ասպարեզի նշանավոր գործիչներից է **Սոֆյա Համբարձումյանը(1898-1971):** Նախնական կրթությունը ստացել է հայրենի՝ Շուշի քաղաքի երկդասյան դպրոցում, այնուհետև ավարտում է Բաքվի Արմենիքենդի հայկական միջնակարգ դպրոցը (1934թ.), ուսումը շարունակում Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետում ու առաջին կարգի դիպլոմով այն ավարտելուց հետո դասավանդում է Բաքվի հայկական դպրոցներում (1939-1941թթ.):

Հայրենական մեծ պատերազմը սկսվելուց վերադարձել է հայրենի երկրամաս և բեղուն մանկավարժական գործունեություն ծավալել Շուշիի, Ստեփանակերտի դպրոցներում: Շուրջ 25 տարի, որպես մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ, ուսմասվար, փոխտնօրեն աշխատել է Ստեփանակերտի թիվ 3 ռուսական դպրոցում: Նա իր կյանքի 40 տարիները նվիրել է դպրոցին, մատաղ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը և ուներ ականռու հաջողություններ մանկավարժության բնագավառում: Այսօր Ս.Համբարձումյանի սաները գիտության տարբեր բնագավառների աշխատողներ են:

Ս.Համբարձումյանը պրակտիկ մանկավարժական գործունեությանը զուգընթաց զբաղվում էր նաև ստեղծագործական աշխատանքով, պարբերական մամուլում՝ թերթերում, ամսագրերում, հաճախակի հանդես էր գալիս գիտամեթոդական, մաթեմատիկայի ուսուցման տարբեր հարցերի վերաբերյալ հոդվածներով:

Բազմամյա մանկավարժական անգնահատելի ծառայությունների համար Սոֆյա Համբարձումյանը արժանացել է հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչման:

Վաստակաշատ մանկավարժ **Ելիզավետա Հովհաննիսյանը (1903-1966)** ավարտել է հայրենի Շուշի քաղաքի հայոց հոգևոր թեմական դպրոցը (1919-1920 ուստարում) և աշխատանքի անցել քաղաքի երկրորդ աստիճանի հայկական դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: Բարձրագույն կրթությունը ստացել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում (1926-1930թթ.) և ավարտելով այն, վերադարձել հայրենի երկրամաս ու աշխատանքի անցել Ստեփանակերտի դպրոցներում, իսկ 1932-1962թթ. հայոց լեզու և գրականություն, մանկավարժություն և հոգեբանություն է դասավանդել Շուշիի

մանկավարժական ուսումնարանում[596]:

Իր բազմամյա մանկավարժական գործունեության տարիներին Ե.Հովհաննիսյանը ազգանվեր աշխատանք է տարել հասարակության մեջ՝ Շուշին հայ պահելու գործում, նրա ջանքերով Շուշիում միշտ գործել է հայեցի կրթություն տվող դպրոցը: Մինչև կյանքի վերջը մնացել է հայրենի քաղաքում՝ անտեսելով կյանքի պարտադրած դժվարությունները:

Ըստ արժանվույն է գնահատվել վաստակաշատ մանկավարժի արգասավոր գործունեությունը, նա արժանացել է 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժի և հանրապետության վաստակավոր ուսուցչի պատվավոր կոչումների:

Հետաքրքիր ու բովանդակալից է 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ **Ասյա Աղավելյանի (1909-1985)** մանկավարժական գործունեությունը: Սկզբնական կրթությունը ստացել է Շուշիի Մարիամ Ղուկասյան օրիորդաց միջնակարգ դպրոցում, այնուհետև ավարտել Բաքվի թիվ 22 հայկական դպրոցը (1926թ.) և վերադարձել հայրենի երկրամաս ու անցել մանկավարժական գործունեության:

1926-1930թթ. Ասյա Աղավելյանը աշխատել է Մարտակերտի շրջանի գյուղերում: 1938թ.-ից աշխատանքի է անցել Ստեփանակերտի թիվ 1 դպրոցում և առանց աշխատանքից կտրվելու հեռակա կարգով ավարտել Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտը:

Մանկավարժական աշխատանքին զուգահեռ Ա.Աղավելյանը զբաղվել է նաև հասարակական հանրօգուտ աշխատանքով. երկար տարիներ եղել է լուսավորության աշխատողների արհմիության Ստեփանակերտի քաղաքային կոմիտեի քարտուղարը:

Ըստ արժանվույն է գնահատվել Ա.Աղավելյանի գործունեությունը, նա պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի և «Պատվո նշան» շքանշաններով, 5-ից ավելի մեդալներով, արժանացել է Ադր. ԽՍՀ լուսավորության գերազանցիկի կրծքանշանի, հանրապետության վաստակավոր ուսուցչի պատվավոր կոչման:

Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության հաստատումից հետո, 1920-30-ական թվականներին, մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության ուղղությամբ ակտիվ աշխատանք են ծավալել նաև ճանաչված մանկավարժներ Արշալույս Ղազարյանը, Գյուլի Մելքումյանը, Տատյանա Ալեքսանդրյանը, Ելենա Աղաջանյանը, Արուսյակ Մախմուրյանը և ուրիշներ:

Արշալույս Ղազարյանը (1901-1989) սկզբնական կրթությունը ստացել է Հադրութի շրջանի Տումի գյուղի առաջին աստիճանի դպրոցում (1-3-րդ դասարաններ), այնուհետև ավարտել Շուշիի Մարիամ Ղուկասյան օրիորդաց դպրոցը և մանկավարժական աշխատանքի անցել հարազատ գյուղի տարրական դպրոցում (1-4-րդ դասարաններ)[597]: Պրակտիկ մանկավարժական գործունեության տարիներին ավարտել է նաև Բաքվի մանկավարժական ինստիտուտի մանկավարժական ֆակուլտետը: Շուրջ 4 տասնամյակ աշխատել է Տումու միջնակարգ դպրոցում՝ որպես դասվար, ուսումնադաստիարակչական աշխատանքերի գծով տնօրենի տեղակալ, միաժամանակ ղեկավարել է դպրոցի տարրական դասարանների մեթոդմիավորումը: Իսկ 1970-ական թվականներին եղել է Ստեփանակերտի քաղաքային ժողկրթբաժնի վարիչ:

Վաստակաշատ մանկավարժը բեղուն մանկավարժական և հասարակական գործունեության համար պարգևատրվել է Լենինի շքանշանով և մարզժողկրթբաժնի գովասանագրերով:

Գյուլի Մելքումյանը (1903-1987), ըստ Խ.Ղազարյանի «Տումի» գրքի (Երևան,

2003թ.) տվյալների, ծնվել է Հադրութի շրջանի Տումի գյուղում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի ծխական դպրոցում (1-3-րդ դասարան), այնուհետև ավարտել Շուշիի Մարիամ Ղուկասյան օրիորդաց դպրոցը (1919-1920 ուստարում) և մանկավարժական աշխատանքի անցել հայրենի գյուղի առաջին աստիճանի դպրոցում՝ որպես տարրական դպրոցի ուսուցիչ, վարիչ: Բարձրագույն կրթությունը ստացել է Երևանի պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետում (1930-1935թթ.) և ավարտելուց հետո աշխատել շրջանում՝ որպես գլխավոր գյուղատնտես: Սակայն նրա կապը հարազատ կրթօջախի հետ երբեք չի կտրվել: Դասավանդել է աշխատանք, քիմիա, հայրենի բնություն, բուսաբանություն առարկաներ: Հետպատերազմյան շրջանում աշխատել է Ադրբեջանի գյուղատնտեսության նախարարության բույսերի պաշտպանության բաժնում: Երկար տարիներ զբաղվել է նաև ստեղծագործական աշխատանքով և պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն՝ ստացել գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Կենսաթոշակի անցնելուց հետո տեղափոխվել է Հայաստան, շարունակել աշխատանքը Երևանի գյուղատնտեսական ինստիտուտում:

Տատյանա Ալեքսանդրյանը (1913-1991) ծնվել է ՌԴ Ստավրոպոլի երկրամասի Գեորգիևսկ քաղաքում: Իր գործունեությունը սկսել է 1928թ. Օրջոնիկիձե քաղաքի մանկապարտեզներից մեկում՝ որպես դաստիարակ: 1933թ.տեղափոխվել է Բաքու և շարունակել մանկավարժական գործունեությունը քաղաքի տարբեր մանկական հիմնարկներում: Այստեղ Տ.Ալեքսանդրյանը ընդունվում և 1942թ. ավարտում է Բաքվի պետական համալսարանը և նույն տարում գործուղվում Շուշիի երկամյա մանկավարժական ինստիտուտ,որտեղ շուտով զբաղեցնում է ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի պաշտոնը: Նա զգալի ներդրում ունի Ղարաբաղի դպրոցները որակյալ ուսուցիչներով ապահովելու գործում:

1953-1970թթ. Տ.Ալեքսանդրյանը աշխատել է Ստեփանակերտի թիվ 2 դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի ուսուցիչ:

Ելենա Աղաջանյանը (1914-2001) ծնվել է Ստեփանակերտի շրջանի Փահլուր գլուղում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի առաջին աստիճանի դպրոցում, այնուհետև ավարտել Ստեփանակերտի երկրորդ աստիճանի 9-ամյա միջնակարգ դպրոցը և մանկավարժական աշխատանքի անցել Ստեփանակերտի թիվ 2 դպրոցում՝ որպես քիմիայի և կենսաբանության ուսուցիչ: 1939թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի քիմիա և կենսաբանության ֆակուլտետը և մանկավարժական աշխատանքի անցել Հայաստանի դպրոցներում՝ որպես ուսուցիչ, ուսմասվար:

Արցախի կանչով Ե.Աղաջանյանը վերադառնում է հարազատ եզերք (1942թ.) և աշխատանքի անցնում թիվ 2 դպրոցում՝ որպես քիմիայի ուսուցիչ: 1961թ. նշանակվել է նույն դպրոցի տնօրեն և այդ պաշտոնում աշխատել մինչև թոշակի անցնելը:

Վաստակաշատ մանկավարժի բեղուն մանկավարժական գործունեությունը գնահատվել է ըստ արժանվույն: Նա բազմիցս պարգևատրվել է մարզժողկրթբաժնի գովասանագրերով, արժանացել 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժի պատվավոր կոչման:

Ասկերանի շրջանի Այգեստան (Բալլուջա) գյուղի դպրոցում պահվող արխիվային փոստաթղթերից տեղեկանում ենք, որ **Արյուսակ Մախմուրյանը (1916-1978)** սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի 7-ամյա դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել Շուշիի մանկավարժական ուսումնարանում և ավարտելով այն (1933թ.) մանկավարժական աշխատանքի անցել Բալլուջայի

դպրոցում, որպես դասվար և ուսմասվար:

1957թ. Ստեփանակերտում գիշերօթիկ դպրոց հիմնադրվելուց Ա.Մախմուրյանը աշխատանքը շարունակել է այդ դպրոցի տարրական դասարաններում և աշխատել մինչև թոշակի անցնելը՝ միշտ կապված մնալով դպրոցին,անմնացորդ նվիրվելով մատաղ սերնդի դաստիարակության գործին:

Ա.Մախմուրյանի ծառայությունները արժանիորեն են գնահատվել, պարգևատրվել է Լենինի շքանշանով, կառավարական տարբեր պարգևներով ու գովասանագրերով: Նրան շնորհվել է հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչում:

Մեծ Հայրենականի տարիներին արցախահայ կին մանկավարժները տղամարդկանց հետ համահավասար մարտնչել են արցախցուն վայել արժանապատվությամբ: Պատերազմը ոչ միայն զինվորներ էր պահանջում, այլև թիկունքում՝ հանրակրթական դպրոցներում և այլ բնագավառներում պատերազմական պայմաններում աշխատողներ, որոնք անխափան կկազմակերպեն մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործը, կկատարեն գյուղատնտեսական և հանրօգուտ այլ աշխատանքներ:

Ժամանակակիցների հուշերի և փաստագրական հարուստ նյութերի ուսումնասիրությունների հիման վրա համառոտակի ներկայացնենք նրանցից մի քանիսի գործունեությունը նախապատերազմյան, պատերազմյան և հետպատերազմյան շրջանում:

Սիրան Հարությունյանը (1914-1983) սկզբնական կրթությունը ստացել է Մարտունու շրջանի Հերհեր գյուղի 7-ամյա դպրոցում, այնուհեև ուսումը շարունակել Բաքվի մանկավարժական ուսումնարանում: Ավարտելով միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունը, գործուղվում է Լեռնային Ղարաբաղ և նշանակվում Ստեփանակերտի (Ասկերանի) շրջանի Նախիջևանիկի 7-ամյա դպրոցի ռուսաց լեզվի ուսուցիչ, ուսմասվար: Միևնույն ժամանակ հեռակա կարգով ավարտում է Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմական բաժինը:

Սկսվում է Հայրենական մեծ պատերազմը: Ս.Հարությունյանը կամավոր մեկնում է ռազմի դաշտ և տղամարդկանց հետ հավասար կռվում թշնաու դեմ: Պարգևատրվելով մի շարք շքանշաններով, Ս.Հարությունյանը վերադառնում է պատերազմից և աշխատում որպես կուսակցության մարզկոմի քարտուղարի օգնական:

1950թ. մեկնում է Մոսկվա և ուսանում Լոմոնոսովի անվան համալսարանի փիլիսոփայության բաժնում: Ավարտելուց հետո վերադառնում է Ստեփանակերտ, աշխատանքի անցնում որպես կուսշրջկոմի 2-րդ քարտուղար:

1964թ. տեղափոխվում է Երևան, պաշտպանում գիտական թեզ և 1979թ. դոցենտի կոչումով վերադառնում է հայրենի եզերք, աշխատանքի անցնում Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի փիլիսոփայության ամբիոնում՝ որպես փիլիսոփայության դասախոս, միաժամանակ ղեկավարում ուսանողական գիտական ընկերությունը (ՈւԳԸ):

Անբասիր ասշատանքի համար բազմիցս պարգևատրվել է պատվոգրերով ու գովասանագրերով:

Արմիկ Արամյանը (1919-2002) ծնվել է Թբիլիսի քաղաքում, այնուհետև ծնողների հետ տեղափոխվել Ստեփանակերտ, որտեղ և ավարտել է միջնակարգ դպրոցը: Նախապատերազմյան շրջանում Արմիկը աշխատել է Շոշ գյուղի միջնակարգ դպրոցում, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, 1942թ. ԼՂ մարզժողկրթբաժնի մեթոդկաբինետում՝ որպես մեթոդիստ: Պատերազմի սկզբին հազարավոր աղջիկ-կամավորականների հետ նա մեկնում է ռազմաճակատ: Մարտնչելով մինչև պատերազմի ավարտը, Ա.Արամյանը զորացրվում է և վերադառնալով հայրենիք՝

շարունակում մանկավարժական գործունեությունը: Մինչև 1974թ. սեպտեմբերը հայոց լեզու և գրականություն է դասավանդում Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումում, 1974թ. սեպտեմբերից ընտանիքով տեղափոխվում է Ասկերանի շրջանի Խնձրիստան գյուղը, որտեղ աշխատում է տեղի միջնակարգ դպրոցում՝ որպես ուսուցչուհի, ուսումնական մասի վարիչ, այնուհետև՝ տնօրեն:

Հայրենավեր աշխատանքի համար Ա.Արամյանը պարգևատրվել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով, լուսավորության գերազանցիկի կրծքանշանով և մի շարք այլ մարտական ու հոբելյանական մեդալներով:

Արուսյակ Հարությունյանը (1917-1999) հայրենի Հաթերք գյուղի միջնակարգ դպրոցի առաջին շրջանավարտներից է (1937թ.): Միջնակարգից հետո նա ավարտում է ուսուցիչների որակավորման դասընթացները և աշխատանքի անցնում հայրենի գյուղի դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ (5-6-րդ դասարաններում): Հետագա տարիներին աշխատել է նաև շրջանի տարբեր գյուղերի դպրոցներում:

1939թ. ընդունվել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի հեռակա բաժինը, որտեղ սովորել է մինչև 1942թ.[598]:

1942թ. դեկտեմբերին զորակոչվում է խորհրդային բանակ: Հայրենիքի համար մարտնչում է անձնուրացաբար, մի քանի անգամ վիրավորվում, ապաքինվելուց հետո նորից վերադառնում ռազմի դաշտ: Ահեղ մարտերից մեկում ծանր վիրավորվելուց և ուղեղի ցնցում ստանալուց հետո տեղափոխվում է Բաքվի հոսպիտալ, որտեղ բուժվում է շուրջ մեկ տարի: 1945թ. աշնանը զորացրվում ու շարունակում է աշխատել որպես ուսուցչուհի: Սակայն նրա առողջական վիճակը գնալով վատանում է, ստանում է 2-րդ, ապա՝ 1-ին կարգի հաշմանդամություն ու այլևս ի վիճակի չի լինում շարունակել մանկավարժական աշխատանքը:

Հայրենիքը բարձր է գնահատել նրա աշխատանքը և բազմիցս պարգևատրել մեդալներով:

Քնարիկ Սիմոնյանը ծնվել է 1922թ. Մարտակերտի շրջանի Առաջաձոր գյուղում: Նախնական կրթությունը ստացել է գյուղի միջնակարգ դպրոցում, այնուհետև կրթությունը շարունակել Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումում և մի քանի տարի որպես անասնաբույժ աշխատելուց հետո ընդունվել Բաքվի մանկավարժական ինստիտուտը: Ինստիտուտն ավարտելու օրերին սկսվում է Հայրենական մեծ պատերազմը: Քնարիկը մեկնում է ռազմաճակատ՝ որպես գթության քույր և ծառայում մինչև հաղթանակը:

Զորացրվելուց հետո Ք.Սիմոնյանը վերադառնում է Հաթերք և աշխատանքի անցնում գյուղի միջնակարգ դպրոցում, որտեղ երկար տարիներ աշխատում է որպես ռուսաց լեզվի ուսուցչուհի:

Հայրենիքին մատուցած ծառայությունների համար նա արժանացել է բազմաթիվ շքանշանների ու մեդալների:

Աստղիկ Բաբայանը (1921-1994) ծնվել է Մարտունու շրջանի Կոլխոզաշեն գյուղում: Նախնական կրթությունը ստացել է գյուղի 7-ամյա դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել Շուշիի մանկավարժական ուսումնարանում, որն ավարտելուց հետո, մինչև խորհրդային բանակ զորակոչվելը, աշխատել Կոլխոզաշենի դպրոցում: Մասնակցել է ռազմական գործողություններին՝ մինչև պատերազմի հաղթական ավարտը և, 1945թ. օգոստոսին զորացրվելով, նույն թվականի սեպտեմբերի 1-ից անցել մանկավարժական աշխատանքի Կոլխոզաշենի, Ծովատեղի դպրոցներում:

Բազմամյա մանկավարժական գործունեության և հայրենիքին մատուցած ծառայությունների համար Ա.Բաբայանը պարգևատրվել է Հայրենական պատերազ-

մի 2-րդ աստիճանի շքանշանով ու մի շարք մեդալներով:

Զաբելա Թավադյանը (1920-1999) սկզբնական կրթությունը ստացել է հայրենի Հացի գյուղի 7-ամյա դպրոցում (1936թ.), այնուհետև ավարտել Շուշիի մանկավարժական ուսումնարանը (1939թ.) և մանկավարժական աշխատանքի անցել Ճարտարի միջնակարգ դպրոցում՝ որպես տարրական դասարանների դասվար, իսկ 1941թ. սեպտեմբերից դասավանդել է նաև Ղուզե Կալերի 7-ամյա դպրոցում:

1942թ. Զ.Թավադյանը Ղարաբաղի շատ ուսուցիչների հետ մեկնում է ռազմաճակատ և հերոսաբար մարտնչում մինչև պատերազմի հաղթական ավարտը:

Զորացրվելուց հետո վերադառնում է հայրենի եզերք և շարունակում մանկավարժական աշխատանքը Կաղարծու, Սարգսաշենի և Լիսագորի դպրոցներում:

Հայրենիքին մատուցած ծառայությունների համար Զ.Թավադյանը արժանացել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանի, մի շարք մեդալների ու ժողկրթբաժնի գովասանագրերի:

Եպրաքսյա Հովհաննիսյանը (ծնվ.1921թ.) սկզբնական կրթությունը ստացել է հայրենի Սարուշեն գյուղի 7-ամյա դպրոցում, այնուհետև ընտանիքի հետ տեղափոխվում է Բաքու և ուսումը շարունակում հայկական թիվ 47 միջնակարգ դպրոցում, որն ավարտում է 1939թ. և աշխատանքի անցնում կահույքի ֆաբրիկայում: Պատերազմի առաջին օրերին կամավոր մեկնում է ռազմաճակատ, մասնակցում հայրենիքի պաշտպանությանը: Զորացրվելուց հետո նա վերադառնում է Ստեփանակերտ և 1946-1954թթ. աշխատում տարբեր դպրոցներում՝ որպես ռուսաց լեզվի ուսուցչուհի, 1954թ. թիվ 3 դպրոցում՝ որպես դասվար, այնուհետև մինչև թոշակի անցնելը թիվ 8 դպրոցում՝ որպես գրադարանավարուհի:

Ե.Հովհաննիսյանը պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով, մի շարք մարտական ու հոբելյանական մեդալներով, ժողկրթբաժնի գովասանագրերով:

Արփիկ Շահնազարյանը (1922-1996) ավարտել է Թաղավարդի միջնակարգ դպրոցը և աշխատանքի անցել Կարմիր շուկայի 7-ամյա դպրոցում՝ որպես ջոկատավար:

1942թ. զորակոչվում է Կարմիր բանակի շարքերը, կանգնում հայրենիքի զինվորների կողքին՝ իր սխրագործություններով օրինակ ծառայելով նրանց համար, արժանանում Գերագույն գլխավոր հրամանատարի պատվոգրերին ու շնորհակալագրերին:

Պատերազմի ավարտից հետո, պարգևատրվելով Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով, «Մարտական ծառայության համար» և մի շարք այլ մեդալներով, Ա.Շահնազարյանը զորացրվում և վերադառնում է հայրենի եզերք, շարունակում մանկավարժական գործունեությունը, նախ որպես ավագ ջոկատավար, այնուհետև դասավանդում է ռուսաց լեզու Մարտունու շրջանի դպրոցներում:

Արուսյակ Ավթանդիլյանը ծնվել է 1923թ. Մարտակերտում: 1941թ. ավարտելով միջնակարգ դպրոցը՝ ուսումը շարունակում է Երևանի պետական համալսարանի լեզվագրական ֆակուլտետում:

1942թ. նա զորակոչվում է բանակի շարքերը, 1943թ. տեղափոխվում ռազմաճակատ և մասնակցում հայրենիքի պաշտպանության համար մղվող մարտերին մինչև պատերազմի ավարտը: 1945թ. հոկտեմբերին զորացրվում է և վերադառնում Մարտակերտ՝ պարգևատրված մարտական ծառայությունների համար մի շարք մեդալներով: Աշխատանքի է անցնում նախ Մարտակերտի շրջգործկոմում, ապա՝ կենցաղսպասարկման կոմբինատում՝ որպես հաշվապահ (1949-1952թթ.): 1952թ. մինչև թոշակի անցնելը (1973թ.) աշխատել է Հաթերքի փոստի բաժան-

մունքում՝ որպես վարիչ, իսկ թոշակի անցնելուց հետո, մինչև 1992թ.՝ բաժանմունքի վարիչի տեղակալ: Ընտրվել է գյուղխորհրդի պատգամավոր և կուսբյուրոյի քարտուղար: Աշխատանքի և պատերազմի վետերան է, պարգևատրվել է պատվոգրերով, արժանացել շնորհակալագրերի:

Եպրաքսյա Բաբայանը (1923-1986) ծնվել է Մարտակերտի շրջանի Չափար գյուղում: Ծնողների հետ տեղափոխվում է շրջանի Չայլու գյուղ, որտեղ և ավարտում է միջնակարգ դպրոցը:

Հայրենական պատերազմի առաջին իսկ օրից Ե.Բաբայանը կամավոր մեկնում է ռազմաճակատ, մշտապես կրակի առաջին գծում ակտիվորեն մասնակցում ռազմական գործողություններին, բազմիցս արժանանալով Գերագույն գլխավոր հրամանատարի պատվոգրերին ու շնորհակալագրերին: Պարգևատրվել է «Մարտական ծառայությունների համար», «Կովկասի պաշտպանության համար» և մի շարք այլ մեդալներով, արժանացել «Գերազանցիկ կապավոր» կրծքանշանի:

Զորացրվելով բանակից, Ե.Բաբայանը աշխատանքի է անցնում Չայլվի միջնակարգ դպրոցում՝ որպես ավագ ջոկատավար: Այնուհետև ավարտում է Երևանի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը և հայոց լեզու, գրականություն դասավանդում Չայլվի միջնակարգ դպրոցում:

Ե.Բաբայանը մանկավարժական գործունեության համար բազմիցս արժանացել է շրջժողկրթբաժնի պատվոգրերի ու գովասանագրերի:

Եվգենյա Բաբայանը (1923-2002) սովորել է Մարտունու շրջանի, Ղուզե կալերի 7-ամյա, այնուհետև՝ Գյունե կալերի միջնակարգ դպրոցներում: 1942թ. նոյեմբերին զորակոչվում է խորհրդային բանակի շարքերը, մասնակցում ռազմական բազմաթիվ գործողությունների, հաղթանակով վերադառնում հայրենի օջախ և ուսումը շարունակում Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտում: 1948թ. ավարտելով այն, Ե.Բաբայանը իր ամբողջ կյանքը նվիրում է մատաղ սերնդի ուսուցման ու դաստիարակության գործին:

Լուսիկ Միրզոյանը (ծնվ.1922թ.) սկզբնական կրթությունը ստացել է Մարտունու շրջանի Խերխան գյուղի 7-ամյա, ապա Ծովատեղի միջնակարգ դպրոցներում: Ուսումը շարունակում է Շուշիի, այնուհետև Հադրութի մանկավարժական ուսումնարաններում, ավարտելուց հետո ուսուցչական աշխատանքի է անցնում Ծովատեղի դպրոցում և աշխատում մինչև 1942թ. դեկտեմբեր ամիսը՝ մինչև կամավոր ռազմաճակատ մեկնելը:

Պատերազմի հաղթական ավարտից հետո Լ.Միրզոյանը զորացրվում և աշխատանքի է անցնում որպես տարրական դասարանների դասվար, ուսմասվար:

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով, մի շարք մեդալներով, շրջժողկրթբաժնի պատվոգրերով ու գովասանագրերով:

Գոհարիկ Զաքարյանը (1923-2002) ծնվել է Ստեփանակերտի (Ասկերանի) շրջանի Դահրավ գյուղում, սկզբնական կրթությունը ստացել գյուղի 7-ամյա, միջնակարգ կրթությունը՝ շրջանի Բաղարա գյուղի դպրոցներում: Միջնակարգն ավարտելուց հետո աշխատել է Դահրավի 7-ամյա դպրոցում՝ որպես ջոկատավար: 1942թ. զորակոչվել է Կարմիր բանակի շարքերը:

Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո վերադառնում է հայրենի օջախը: 1946թ. ընդունվում է Ադրբեջանի հեռակա մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը, ավարտում 1950թ.: 1946-1990թթ. աշխատել է Ստեփանակերտի շրջանի Խնձրիստանի միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: 1962-1970թթ. եղել է դպրոցի դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը:

Գ.Զաքարյանը հայրենիքին մատուցած ծառայությունների համար պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով և մի շարք մեդալներով, իսկ մանկավարժական գործունեության համար՝ շրջժողկրթբաժնի պատվոգրերով ու գովասանագրերով:

Զաբելա Թավադյանը (ծնվ. 1924թ.) սկզբնական կրթությունը ստացել է Ասկերանի շրջանի Խնապատ գյուղի 7-ամյա դպրոցում, ընդունվել Շուշիի մանկավարժական ուսումնարանը, սակայն ուսումը դեռ չավարտած, հայրենիքի կանչով կամավոր մեկնում է ռազմաճակատ և արիաբար մարտնչում թշնամու դեմ:

Պատերազմի ավարտից հետո Զ.Թավադյանը զորացրվում և վերադառնում է հայրենի երկրամաս, ավարտում ուսումնարանը և շարունակում մանկավարժական գործունեությունը:

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով և շրջժողկրթբաժնի գովասանագրերով:

Հայրենական պատերազմի տարիներին Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցներում մանկավարժական գործունեություն են ծավալել հայրենասեր կին մանկավարժները: Նրանք Ղարաբաղից ռազմաճակատ մեկնած հայ ռազմիկների երեխաների նկատմամբ մեծ հոգատարություն հանդես բերեցին՝ անխափան կազմակերպելով նրանց կրթության ու դաստիարակության գործը: Հատկապես մեծ աշխատանք տարվեց պատերազմի պայմաններում պարտադիր ուսուցման իրականացման, դպրոցականների հետ միասին հանրօգուտ աշխատանքներ կազմակերպելու, ռազմաճակատին օգնության ֆոնդ ստեղծելու գործում:

Ժամանակակիցների հուշերը և փաստագրական նյութերը հնարավորություն են ընձեռել ներկայացնելու նրանցից մի քանիսի բեղմնավոր գործունեությունը:

Ազնիվ Աղաբեկյանը (1917-1998) նախնական կրթությունը ստացել է Ստեփանակերտի (Ասկերանի) շրջանի Ակնաղբյուր (Ղարաբուլաղ) գյուղի 7-ամյա դպրոցում, այնուհետև տեղափոխվում է Բաքու, միջնակարգ կրթություն ստանում Արմենիքենդի թիվ 8 հայկական դպրոցում և 1935թ. ընդունվում Բաքվի պետական համալսարանի քիմիա և կենսաբանություն ֆակուլտետը:

Համալսարանն ավարտելուց հետո աշխատում է Ստեփանակերտի թիվ 3 դպրոցում նախ որպես ուսմասվար (1947-1949թթ.), այնուհետև որպես տնօրեն (1949-1953թթ.): 1956թ. նշանակվում է թիվ 5 դպրոցի տնօրեն, 1962թ.-ին՝ թիվ 8 դպրոցի ուսմասվար, 1967թ.՝ կրկին թիվ 3 դպրոցում՝ որպես ուսումնադաստիարակչական աշխատանքերի գծով տնօրենի տեղակալ: 1972թ., կենսաթոշակի անցնելուց հետո, մինչև 1987թ. աշխատել է որպես քիմիայի ուսուցիչ[599]:

Շուրջ 52 տարի Աղաբեկյանը մանկավարժական աշխատանքի մեջ է եղել. սիրել է երեխաներին ու իր մասնագիտությունը, մշտապես ղեկավարվել է բարձր բարոյական սկզբունքներով: Իր աշխատած դպրոցներում ձեռնամուխ է եղել քիմիայի լաբորատորիաների ստեղծմանը:

Հավուր պատշաճի է գնահատվել ճանաչված ուսուցչի մանկավարժական աշխատանքը: Նա արժանացել է «ԽՍՀՄ լուսավորության գերազանցիկ» կրծքանշանի, ավագ ուսուցչի կոչման:

Նինա Գրիգորյանը (1917-1999) սկզբնական կրթությունը ստացել է Մարտունու շրջանի Աշան գյուղի 7-ամյա դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել Հադրութի մանկավարժական տեխնիկումում: 1937թ. ավարտելով տեխնիկումը, նշանակվում է Ասկերանի շրջանի Հարավ գյուղի 7-ամյա դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար: Մանկավարժական աշխատանքին զուգահեռ Ն.Գրիգորյանը հեռակա կարգով սովորում է Երևանի Խ.Աբովյանի անվան

մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում (1942-1944թթ.), սակայն պատերազմական պայմանների թելադրանքով կիսատ թողնելով ուսումը, անցնում է թիկունքում տարվող բազմաբնույթ աշխատանքների, առաջին հերթին՝ պարտադիր ուսման իրականացմանը:

Հայրենասեր մանկավարժը Հայրենական պատերազմի տարիներին արտադասարանական և արտադպրոցական պարապմունքներին կազմակերպել է հանրօգուտ աշխատանքներ: Աշակերտների հետ միասին հավաքել է դեղաբույսեր, մետաղի ջարդոն, մարտիկների համար նվեր-ծանրոցներ, ակտիվորեն մասնակցել գյուղատնտեսական աշխատանքներին և այլն: Նման կարգի աշխատանքները պատերազմի տարիներին մեծ լարվածություն ու ջանք էին պահանջում մարզի ժողովրդական կրթության մարմիններից և այդ առումով մարզի հանրակրթական դպրոցների դերը անգնահատելի է:

Հետպատերազմյան շրջանում Ն.Գրիգորյանը շարունակում է իր բեղմնավոր մանկավարժական գործունեությունը Հարավի ութամյա դպրոցում՝ որպես ուսուցիչ, ուսմասվար:

Ըստ արժանվույն է գնահատվել վաստակաշատ մանկավարժի գործունեությունը: 1964թ. նա արժանացել է հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչման և պարգևատրվել բազմաթիվ մեդալներով ու գովասանագրերով:

Արաքսյա Հարությունյանը (1917-2001) միջնակարգ կրթությունը ստացել է Շամխորի շրջանի Չարդախլու գյուղի դպրոցում: Այնուհետև ընդունվել ու ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի կենսաբանության բաժինը: 1939թ. տեղափոխվել է Ստեփանակերտ ու աշխատանքի անցել թիվ 2 դպրոցում՝ որպես կենսաբանության ուսուցիչ: 1957թ. նշանակվել է Ստեփանակերտի գիշերօթիկ դպրոցի ուսմասվար և կենսաբանության ուսուցիչ: 1974թ. գիշերօթիկի փակվելու պատճառով Ա.Հարությունյանը տեղափոխվել է նորաբաց թիվ 9 դպրոց և շարունակել մանկավարժական գործունեությունը:

Լինելով կենսաբանության ուսուցիչ, Ա.Հարությունյանը մշտապես ուշադրության կենտրոնում է պահել սովորողների բնության հետ հարաբերվելու, դպրոցամերձ տարածքները կանաչապատելու և ընդհանրապես շրջապատի բնությունը պահպանելու հարցերը:

1977թ. վաստակաշատ մանկավարժը աշխատել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնում՝ որպես մանկավարժական պրակտիկայի ղեկավար և կենսաբանության դասախոս: Բազմամյա մանկավարժական գործունեության տարիներին նա պարբերական մամուլում բազմիցս հանդես է եկել գիտամեթոդական հոդվածներով, իր հարուստ մանկավարժական փորձը փոխանցել ուսուցիչներին:

Բազմամյա անբասիր աշխատանքի համար անվանի մանկավարժը արժանացել է վաստակավոր ուսուցչի կոչման, բազմաթիվ մեդալների ու պատվոգրերի:

Ռոզա Հախումյանը (1925-1983) նախնական կրթությունը ստացել է Ասկերանի շրջանի Դահիրավ գյուղի 7-ամյա դպրոցում, այնուհետև ավարտել Շուշիի մանկավարժական ուսումնարանը: 1943թ. սեպտեմբերից աշխատել է Դահիրավի 7-ամյա, 1945թ.-ից՝ Խնապատի միջնակարգ դպրոցներում՝ որպես ուսուցչուհի:

Անբասիր մանկավարժական աշխատանքի համար Ռոզա Հախումյանը արժանացել է գովեստների, պարգևատրվել մի շարք մեդալներով ու պատվոգրերով:

Գալյա Բաղասյանը (1923-2002) սկզբնական կրթությունը ստացել է Հադրութի շրջանի Մեծ Թաղլար գյուղի 7-ամյա դպրոցում, այնուհետև ավարտել Շուշիի մանկավարժական ուսումնարանը (1940թ.), ծննդավայրի դպրոցում աշխատել

որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, ուսմասվար[600]:

Հայրենական պատերազմի տարիներին Գ.Բաղասյանը աշխատել է և դպրոցում, և կոլտնտեսային արտադրության մեջ:

1943թ. ընդունվել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը և ավարտելով այն, մանկավարժական աշխատանքի անցել հայրենի գյուղի դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, իսկ 1948թ.-ից՝ նաև փոխտնօրեն:

Գ.Բաղասյանը մանկավարժական աշխատանքը համատեղել է հասարակական աշխատանքին: Եղել է գյուղխորհրդի պատգամավոր:

1951-1953թթ. աշխատել է կուսակցության Հադրութի շրջանային կոմիտեում՝ որպես քաղլուսկաբինետի վարիչ:

1953թ. կրկին վերադարձել է իր սիրած աշխատանքին և մինչև 1989թ. աշխատել որպես ուսուցիչ, ապա՝ տնօրեն: Բազմաթիվ անգամ արժանացել է խրախուսանքի ու պատվոգրերի, հանրապետության վաստակավոր ուսուցչի պատվավոր կոչման, պարգևատրվել է «Աշխատանքի վետերան» մեդալով: 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ է:

Համեստ Աղաբեկյանը (1923-2001) ծնվել է Բաքու քաղաքում: 1939թ. ավարտելով Արմենիքենդի թիվ 4 հայկական միջնակարգ դպրոցը, ուսումը շարունակում է Բաքվի պետական համալսարանի քիմիա-բիոլոգիական ֆակուլտետում: 1942թ. առաջին կարգի դիպլոմով ավարտելով համալսարանը, մեկնում է Լեռնային Ղարաբաղ և մարզլուսբաժնի կողմից նշանակվում Շուշիի մանկավարժական ուսումնարանի քիմիայի և անատոմիայի ուսուցիչ, ուսմասվար[601]: Ուսումնարանում աշխատած տարիներին (1942-1946թթ.) նա փոփոխություններ է մտցնում այդ առարկաների դասավանդման դրվածքի, ինչպես նաև ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման մակարդակի բարձրացման ուղղությամբ: Նրա ջանքերով ուսումնարանում ստեղծվում է քիմիայի և անատոմիայի կահավորված լաբորատորիա:

1946թ. Հ.Աղաբեկյանը տեղափոխվում է Բաքու, աշխատանքի անցնում «Կոմունիստ» (հայերեն) թերթի խմբագրությունում՝ որպես գրական աշխատող:

Հ.Աղաբեկյանը նորից վերադառնում է Ղարաբաղ և 1948-1953թթ. աշխատում Մարտակերտի շրջանի տարբեր գյուղերի դպրոցներում, 1953-1956թթ. կրկին Շուշիի մանկավարժական ուսումնարանում: 1956թ. տեղափոխվում է Երևան և աշխատանքի անցնում Խ.Աբովյանի անվան դպրոցում, իսկ 1962թ. մինչև իր կյանքի վերջը՝ Երևանի թիվ 22 գիշերօթիկ դպրոցի քիմիայի և բիոլոգիայի ուսուցչուհի էր:

Զարուհի Գրիգորյանը (1924-2002) նախնական կրթությունը ստացել է Ասկերանի շրջանի Սարդարաշեն գյուղի տարրական, Նորագյուղի 7-ամյա դպրոցներում: Այնուհետև 1940թ. ավարտելով Շուշիի մանկավարժական ուսումնարանը, աշխատանքի է անցնում հարազատ գյուղի դպրոցում:

1959թ. ընդունվում է Երևանի պետական համալսարանի լեզվագրական բաժինը և 1964թ. ավարտելով այն՝ շարունակում մանկավարժական գործունեությունը հայրենի գյուղում:

40 տարվա մանկավարժական աշխատանքի վետերանը բազմաթիվ անգամ պարգևատրվել է շքանշաններով ու պատվոգրերով, համարվում էր շրջանի լավագույն ուսուցիչներից մեկը:

Սոնյա Մելքումյանը միջնակարգն ավարտել է հայրենի Խնապատ գյուղի միջնակարգ դպրոցում և 1940թ. ընունվել Շուշիի մանկավարժական ուսումնարանը: Սակայն ուսումնարանը չավարտած, պատերազմական տարիներին դպրոցներում

մանկավարժների պակասության պատճառով երկրորդ կուրսից նրան գործուղում են հայրենի գյուղի դպրոց՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ:

Պատերազմը վերջանալուց հետո Ս.Մելքումյանը ընդունվում է Բաքվի մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժինը և ստանում լեզվի և գրականության ուսուցչի մասնագիտություն: Մինչև 1949թ. հունվարը աշխատում է Խնապատի դպրոցում, այնուհետև՝ մեկ տարի Խնձրիստանի դպրոցում, հետո նորից վերադառնում Խնապատի միջնակարգ դպրոց:

Ս.Մելքումյանը մշտապես մանկավարժական աշխատանքը համատեղել է հասարակական աշխատանքների հետ. նա ագիտպրոպագանդիստ էր, գյուղական խորհրդի պատգամավոր, մարզային դատարանի ատենակալ և այլն:

Հասարակական գործունեության համար, հատկապես պատերազմի տարիներին, որպես թիկունքում աշխատող, պարգևատրվել է շքանշաններով, «Աշխատանքի վետերան», հաղթանակի տարելիցների առթիվ սահմանված մեդալներով:

Մեծ Հայրենականի տարիներին մարզի դպրոցներում բեղուն գործունեություն ծավալած նվիրյալ մանկավարժներ Աշխեն Ասկարյանի, Աշխեն Առուշանյանի մասին արդեն նշվել է աշխատության 5-րդ և 6-րդ գլուխներում: Համառոտակի ներկայացվել է նաև հետպատերազմյան շրջանում ճանաչված ուսուցիչների՝ **Եվգենյա Բաբայանի, Եպրաքսյա Կարապետյանի, Վիկտորյա Պետրոսյանի, Էմմա Վերդյանի, Բելլա Դավթյանի, Ռայա Ավանեսյանի, Լիդա Շահումյանի, Էմմա Գաբրիելյանի, Էմմա Մարդանյանի** և ուրիշների գործունեությունը: Այստեղ կներկայացվի միայն հետպատերազմյան շրջանում մարզի հանրակրթական դպրոցներում, կրթության մարզային, շրջանային բաժիններում բեղմնավոր գործունեություն ծավալած ուսուցիչներից մի քանիսի գործունեությունը, իհարկե՝ նկատի ունենալով նաև մեր ձեռքի տակ եղած փաստագրական նյութերը:

Սաթիկ Սողոմոնյանը (1922-2014) սկզբնական կրթությունը ստացել է Մարտունու շրջանի Բերդաշեն գյուղի միջնակարգ դպրոցում, դասավանդել հայրենի գյուղի դպրոցում, որպես պատմության ուսուցիչ, քանի որ ուսուցիչների մի մասը մեկնել էր ռազմաճակատ: Բարձրագույն կրթությունը ստացել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժնի պատմության ֆակուլտետում (1944-1949թթ.), շուրջ չորս տասնամյակ աշխատել Ստեփանակերտի դպրոցներում (թիվ 1, 2)՝ որպես պատմության ուսուցիչ, ուսմասվար (1972-1988թթ.): Միաժամանակ դասավանդել է Ստեփանակերտի երաժշտական ուսումնարանում:

Իր պրակտիկ մանկավարժական աշխատանքին զուգահեռ Ս.Սողոմոնյանը կատարել է նաև մի շարք այլ աշխատանքներ. ընտրվել է քաղխորհրդի պատգամավոր, 60-ական թվականներին եղել է Ստեփանակերտում գործող կանանց երեկոյան համալսարանի ռեկտոր:

Բազմամյա բեղուն մանկավարժական գործունեության համար Ս.Սողոմոնյանը արժանացել է մի շարք մեդալների ու պատվոգրերի:

Արմիկ Պողոսյանը սկզբնական կրթությունը ստացել է Շուշիի շրջանի Քարին տակ գյուղի 7-ամյա դպրոցում, միջնակարգը՝ Շուշիի հայկական միջնակարգ դպրոցում, որն ավատելով, 1940թ, մանկավարժական աշխատանքի է անցել ծննդավայրի դպրոցում, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար:

1945թ. հեռակա կարգով ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը և դասավանդել Շուշիի մանկավարժական ուսումնարանում՝ մինչև 1947թ. հունիսը: Այնուհետև մեկ տարի Մարտունու միջնակարգ դպրոցում աշխատելուց հետո 1948թ. ընտանիքով տեղափոխվում է Հայաստան: 1948-1952թթ. աշխատել է Աբովյանի միջնակարգ դպրոցում, այնու-

հետև նորից վերադարձել Ղարաբաղ: 1952-1984թթ, շուրջ 22 տարի եղել է Ճարտարի միջնակարգ դպրոցի տնօրենը:

1992թ. Ա.Պողոսյանը նորից է վերադառնում Ճարտարի միջնակարգ դպրոց, աշխատում որպես փոխտնօրեն, ապա տնօրեն:

Ա.Պողոսյանի բեղմնավոր աշխատանքը բարձր է գնահատվել. նա պարգևատրվել է մի շարք պատվոգրերով, արժանացել 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժի պատվավոր կոչման:

Մանյա Ղուլյանը (1925-1991) նախնական կրթությունը ստացել է Ասկերանի շրջանի Դաշբուլաղ (Աստղաշեն) գյուղի 7-ամյա դպրոցում, այնուհետև ավարտել Բաղարայի միջնակարգ դպրոցը և դասավանդել հայրենի գյուղի դպրոցի տարրական դասարաններում:

1944-1949թթ. սովորել է Բաքվի մանկվարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում,որից հետո աշխատանքի է անցել հայրենի գյուղի դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար:

Վաստակաշատ մանկավարժը շուրջ 35 տարի (1952-1987թթ.) եղել է Ասկերանի միջնակարգ դպրոցի տնօրեն: Նորարար էր աշխատանքում, ձեռներեց ու ստեղծագործող: Նրա ջանքերով Ասկերանի դպրոցը վերակազմավորվել է միջնակարգի և համարվել օրինակելի հենակետային դպրոց: Ուսումնադաստիարակչական աշխատանքերում ձեռք բերած հաջողությունների համար 1971թ. դպրոցն արժանացել ԽՍՀՄ ԺՏՆՑ բրոնզե մեդալի:

Բազմավաստակ մանկավարժի երկարամյա անձնվեր աշխատանքը գնահատվել է ըստ արժանվույն: Նա պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, արժանացել հանրապետության լուսավորության գերազանցիկի կրծքանշանի:

Աշխեն Պետրոսյանը (1925-1999) ծնվել է Մարտունու շրջանի Աշան գյուղում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվում է Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետը, որից հետո աշխատանքի անցնում շրջանի Նորշենի դպրոցում՝ որպես ուսուցիչ, այնուհետև շուրջ 37 տարի եղել է դպրոցի տնօրենը:

Ա.Պետրոսյանը երկարամյա մանկավարժական անբասիր աշխատանքի համար արժանացել է հանրապետության լուսավորության գերազանցիկի կրծքանշանի:

Գալյա Բաբայանը (1925-1980) միջնակարգ կրթությունը ստացել է Խնապատ գյուղի միջնակարգ դպրոցում և դասավանդել նույն դպրոցի տարրական դասարաններում: Աշխատանքին զուգահեռ հեռակա կարգով ուսումը շարունակել է Բաքվի մանկավարժական ինստիտուտում՝ ստանալով ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցչի որակավորում: 1942թ. մանկավարժական աշխատանքի է անցնում Խնապատի դպրոցում որպես մաթեմատիկայի ուսուցիչ, իսկ 1961-1980թթ.եղել է դպրոցի տնօրենը:

Գ.Բաբայանի տնօրինության շրջանում, Խնապատի միջնակարգ դպրոցի անունը հռչակվել է մարզի սահմաններից դուրս՝ իր լավագույն սաների ու ավանդույթների շնորհիվ: Դպրոցը բազմիցս մասնակցել է հանրապետական ու միութենական ԺՏՆՑ-ներին: Նրա սաներից շատերը գիտության թեկնածուներ, դոկտորներ են, վաստակավոր գործիչներ:

Գ.Բաբայանը պարգևատրվել է Լենինի շքանշանով, «Անձնվեր աշխատանքի համար» մեդալով, արժանացել հանրապետության լուսավորության գերազանցիկի կրծքանշանի:

Ռայիսա Ավանեսյանը (Ավանեսովա) ծնվել է 1930թ. Ստեփանակերտ քաղաքում: 1948թ. ավարտել է Ստեփանակերտի ռուսական դպրոցը, 1950թ.՝ Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտը: Աշխատանքին զուգահեռ սովորել և 1969թ. ավարտել է Հայաստանի հեռակա մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետը և աշխատանքի անցել թիվ 2 միջնակարգ դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ:

Մանկավարժական գործունեության 37 տարիների ընթացքում անվանի ուսուցչուհին արժանացել է բազմաթիվ պարգևների ու պատվոգրերի:

Հայկուշ Ազարյանը (ծնվ. 1923թ.) Մարտունու շրջանի Բերդաշեն գյուղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետի պատմության բաժինը: Ավարտելով այն, 1949թ. մեկ տարի աշխատել է Աշանի միջնակարգ դպրոցում, այնուհետև, որպես պատմության և աշխարհագրության ուսուցիչ աշխատանքի անցել Բերդաշենի միջնակարգ դպրոցում:

Իր երկարամյա մանկավարժական գործունեության համար արժանացել է ուսուցիչ-մեթոդիստի կոչման, պարգևատրվել «Աշխատանքի վետերան» մեդալով ու մի շարք պատվոգրերով:

Ժենյա Սարգսյանը (ծնվ. 1928թ.) նախնական կրթությունը ստացել է Հարավի 7-ամյա դպրոցում, 1943-1946թթ. սովորել Շուշիի մանկավարժական ուսումնարանում: Ուսումնարանն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Սառնաղբյուրի (Աղբուլաղի) յոթնամյա դպրոցում, այնուհետև 1948թ. տեղափոխվել է հայրենի Հարավի դպրոցը, որտեղ աշխատել է մինչև 1950թ.:

1950-1984թթ., մինչև թոշակի անցնելը, աշխատել է Այգեստանի (Բալլուջայի) միջնակարգ դպրոցում՝ որպես դասվար: Վաստակաշատ մանկավարժի հաջողության գրավականը եղել են աշխատասիրությունը, բարեխղճությունը, բարձր պատասխանատվությունը:

Լիդա Շահրամանյանը (1927-2001) սկզբնական կրթությունը ստացել է Ստեփանակերտի 7-ամյա դպրոցում, միջնակարգ կրթությունը ստացել է Մ.Գորկու անվան թիվ 1 դպրոցում: 1951թ. ավարտել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Երկար տարիներ աշխատել է Ստեփանակերտի (Ասկերանի) շրջանի տարբեր դպրոցներում՝ որպես մաթեմատիկայի ուսուցչուհի:

Ռայա Հայրապետյանը ծնվել է Շուշիի շրջանի Բերդաձոր գյուղում 1929թ.: Ավարտելով գյուղի միջնակարգ դպրոցը, ուսումը շարունակել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտում, ստացել քիմիա և կենսաբանության ուսուցչուհու որակավորում:

1950-1960թթ. Ռ.Հայրապետյանը դասավանդում է հայրենի գյուղի դպրոցում, 1960-1976թթ.՝ Շուշիի մանկավարժական ուսումնարանում:

Հետագա տարիներին (1978-1990թթ.) Ռ.Հայրապետյանը դասավանդել է Շուշիի Խ.Աբովյանի անվան դպրոցում, միաժամանակ ստանձնելով տնօրենի պարտականությունները:

Զաբելա (Շահխանում) Ավագյանը (ծնվ. 1929թ.) նախնական կրթությունը ստացել է Մարտունու շրջանի Սոս գյուղի միջնակարգ դպրոցում, բարձրագույնը՝ Բաքվի Ախունդովի անվան ռուսաց լեզվի և գրականության ինստիտուտում: Մանկավարժական գործունեություն է ծավալել Ստեփանակերտի, Շուշիի դպրոցներում, 1951-1959թթ.՝ Շուշիի մանկավարժական ուսումնարանում, իսկ հետագա տարիներին՝ հանրակրթական դպրոցներում:

Պարգևատրվել է մի շարք պատվոգրերով, արժանացել «Կրթության առաջավոր» կոչմանը և «Մայրության առաջին աստիճանի» մեդալի:

Աիդա Մանգասարյանը (1929-1992) ծնվել է Բաքու քաղաքում: 1948թ. ավարտել է Բաքվի թիվ 96 դպրոցը, 1949թ. տեղափոխվել Մարտունի և մինչև կյանքի վերջը ռուսաց լեզու և գրականություն դասավանդել Մարտունու միջնակարգ դպրոցում: Աշխատանքին զուգահեռ 1961թ. ավարտել է Բաքվի ռուսաց և օտար լեզուների ինստիտուտը:

Բարեխիղճ աշխատանքի համար արժանացել է ուսուցիչ-մեթոդիստի կոչման, պարգևատրվել «Աշխատանքային արիության համար» մեդալով և մի շարք կառավարական պարգևներով:

Լենա Մարությանը (ծնվ. 1930թ.) ավարտել է ծննդավայրի՝ Մարտակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցը, ուսումը շարունակել Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի քիմիա-կենսաբանության ֆակուլտետում և ավարտելով այն, աշխատանքի անցել Չայլվի միջնակարգ դպրոցում որպես քիմիա-կենսաբանության ուսուցիչ:

1956թ. նշանակվում է նշված դպրոցի ուսմասվար, 1963-1985թթ.՝ տնօրեն: Թոշակի անցնելուց հետո շարունակում է մանկավարժական գործունեությունը դպրոցում:

Լ.Մարությանը ակտիվ մասնակցություն է ունեցել գյուղի և շրջանի հասարակական կյանքին: Շուրջ 20 տարի եղել է գյուղխորհրդի պատգամավոր, կուսշրջկոմի անդամ, ուսուցիչների ատեստավորման մարզային հանձնաժողովի անդամ: Երկարատև անբասիր աշխատանքի համար պարգևատրվել է Լենինի շքանշանով, արժանացել «Ադր. ԽՍՀ լուսավորության գերազանցիկ» կրծքանշանի:

Վալենտինա Սարգսյանը (Սարկիսովա) (1931-1998) ծնվել է Թուրքմենիայում: Ավարտել է Կախկինի շրջանի Դուշակ ավանի դպրոցի յոթերորդ դասարանը և ընդունվել Մարիի մանկավարժական ուսումնարանը: Ավարտելով այն՝ 1950թ. տեղափոխվել է Բաքու և ուսումը շարունակել ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության բաժնում: Ինստիտուտն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Մարտակերտի շրջանի Վանք գյուղում և որպես ռուսաց լեզվի ուսուցչուհի աշխատել մինչև կյանքի վերջը:

Վ. Սարկիսովան համատեղության կարգով աշխատել է նաև Առաջածորի դպրոցում: Անընդմեջ ղեկավարել է դպրոցի ռուսաց լեզվի և գրականության առարկայական հանձնաժողովի և շրջանային մեթոդմիավորման աշխատանքները, եղել է կրթության շրջանային բաժնի արտահաստիքային մեթոդիստը:

Ճանաչված ու հարգված մանկավարժը արժանացել է ուսուցիչ-մեթոդիստի կոչման և «Ադր. ԽՍՀ լուսավորության գերազանցիկ» կրծքանշանի:

Ռազմուհի Այդինյանը (1931-2000) նախնական կրթությունը ստացել է Ասկերանի շրջանի Բադարա գյուղի միջնակարգ դպրոցում, այնուհետև 1953թ. առաջին կարգի դիպլոմով ավարտել է Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտը և աշխատանքի անցել ծննդավայրի դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

1961թ.-ից մինչև 1986թ. Ռ.Այդինյանը միաժամանակ եղել է Բադարայի միջնակարգ դպրոցի ուսմասվարը:

Առաջավոր մանկավարժի աշխատանքը բարձր է գնահատվել. նա արժանացել է հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչման և մի շարք մեդալների:

Օֆելյա Հայրապետյանը ծնվել է 1932թ. Ստեփանակերտում: 1955թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1955-

1956թթ. աշխատել է Շուշիի մանկավարժական ուսումնարանում՝ որպես ռուսաց լեզու և գրականության ուսուցչուհի: 1956թ. տեղափոխվել է Ստեփանակերտ և աշխատել թիվ 5 դպրոցում որպես փոխտնօրեն, ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի: 1960 թվականից աշխատել է թիվ 3 դպրոցում որպես փոխտնօրեն, ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի:

Օ.Հայրապետյանը 1970թ. արժանացել է« Ադր. ԽՍՀ լուսավորության գերազանցիկ» կրծքանշանի, 2005թ.՝ ԼՂՀ վաստակավոր ուսուցչի կոչման: 2000-2005թթ. աշխատել է ԼՂՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում՝ որպես գլխավոր մասնագետ:

Ռիմա Ամիրջանյանը ծնվել է 1936թ. Շուշիի շրջանի Քարին տակ գյուղում: Ավարտել է Շուշիի միջնակարգ դպրոցը, ընդունվել Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը և ավարտել գերազանցությամբ:

Որպես մաթեմատիկայի ուսուցչուհի՝ իր մանկավարժական աշխատանքը սկսել է 1960թ. Շուշիի թիվ 2 նորաբաց գիշերօթիկ դպրոցում, իսկ 1963թ. տեղափոխվել է Խ.Աբովյանի անվան դպրոցը, աշխատել որպես մաթեմատիկայի ուսուցչուհի և փոխտնօրեն:

1974-1987թթ. աշխատել է Շուշիի մանկավարժական ուսումնարանում՝ որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցչուհի, իսկ 1987թ.սեպտեմբերից՝ շրջանային ժողկրթության բաժնի տեսուչ:

Մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում ունեցած ծառայությունների համար Ռ.Ամիրջանյանը արժանացել է գովասանագրերի ու պատվոգրերի:

Ռոմելա Ավագյանը ծնվել է 1936թ. Ստեփանակերտում: 1953թ. ավարտել է քաղաքի թիվ 3 միջնակարգ դպրոցը, նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը և 1958թ. ավարտել այն, ստանալով ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցչի որակավորում: Նույն տարում աշխատանքի է անցել Ստեփանակերտի թիվ 3 միջնակարգ դպրոցում որպես դասվար: 1960-1998թթ. աշխատել է թիվ 8 միջնակարգ դպրոցում որպես մաթեմատիկայի ուսուցչուհի, իսկ 1983-1991թթ. եղել է նույն դպրոցի ուսմասվարը:

1993թ. սեպտեմբերից աշխատելէ Ստեփանակերտի «էրուդիտ» վարժարանում՝ որպես ուսմասվար և մաթեմատիկայի ուսուցչուհի:

Հանրապետության լուսավորության գերազանցիկ է, Իսկ 2005թ. հունիսին արժանացել է հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչման:

Ադելա (Արշալույս) Սարգսյանը ծնվել է 1937թ. Մարտունու շրջանի Պառավաթումբ գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է Կաղարծի գյուղի դպրոցում, այնուհետև ավարտել Շուշիի մանկավարժական ուսումնարանը, հետագայում՝ Երևանի պետական մանկավարժական ինստիտուտի դպրոցական բաժինը:

Ադելա Սարգսյանը մանկավարժական գործունեությունը սկսել է Մարտունու շրջանի Հաղորտի գյուղում, 1964թ. տեղափոխվել է Հայաստան, աշխատել Աբովյան քաղաքի թիվ 1 և 4 դպրոցներում, իսկ 2000թ.՝ արհեստագործական ավագ դպրոցում:

Սվետլանա Դավթյանը ծնվել է 1937թ. Ասկերանի շրջանի Բաղարա գյուղում: Նախնական կրթությունը ստացել է Ստեփանակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցում, այնուհետև 1959թ. ավարտել Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը:

1959-1973թթ. աշխատել է գիշերօթիկ դպրոցում: 1974թ. գիշերօթիկը փակվելուց հետո աշխատանքի է անցել նորաբաց թիվ 9 դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, իսկ 1975թ.-ից աշխատել է թիվ 1 դպրոցում՝ որպես ուս-

մասվար: 1980թ. նշանակվել է նույն դպրոցի տնօրեն և այդ պաշտոնում աշխատել մինչև 1994թ.: 1994-1999թթ. նույն դպրոցում աշխատել է որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: 1999-2006թթ. աշխատել է Ստեփանակերտի «Էրուդիտ» վարժարանում՝ որպես հայոց լեզվի, գրականության և պատմության ուսուցչուհի:

2005թ. արժանացել է հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչման:

Լարիսա Ղազարյանը ծնվել է 1939թ. Ջավախքում: Ավարտել է ծննդավայրի յոթնամյա դպրոցը, այնուհետև՝ Ախալքալաքի մանկավարժական ուսումնարանը, իսկ 1958թ.՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետը:1963թ. ավարտելով այն, աշխատանքի է անցնում Շուշիի թիվ 2 գիշերօթիկ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

1967թ. աշխատանքի է անցնում Շուշիի մանկավարժական ուսումնարանում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

1997-2002թթ. աշխատել է Շուշիի ժողովրդական համալսարանում՝ որպես ուսումնական գծով պրոռեկտոր:

Ըստ արժանվույն է գնահատվել նրա մանկավարժական վաստակը. նա արժանացել է ԼՂ Հանրապետության վաստակավոր մանկավարժի կոչման:

Ռոմելա Խաչատրյանը ծնվել է 1939թ. Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է Շուշիի միջնակարգ դպրոցում, այնուհետև ավարտել Շուշիի մանկավարժական ուսումնարանը, իսկ 1963թ.՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետը: Նույն թվականի սեպտեմբերից աշխատել է Շուշիի թիվ 2 ռուսական դպրոցում՝ որպես պատմության ուսուցչուհի և արտադասարանական աշխատանքների գծով փոխտնօրեն:

1967թ. տեղափոխվել է Երևան, աշխատանքի անցել թիվ 10 գիշերօթիկ դպրոցում՝ որպես պատմության ուսուցչուհի:

Սվետլանա Գևորգյանը ծնվել է 1940թ. Մարտունու շրջանի Ճարտար գյուղում: Ավարտելով գյուղի միջնակարգը, 1957թ. ընդունվում է Երևանի պետական համալսարանի օտար լեզուների ֆակուլտետի անգլերեն լեզվի բաժինը: Ավարտելուց հետո աշխատանքի է անցնում Մարտունու միջնակարգ դպրոցում՝ որպես անգլերեն լեզվի ուսուցչուհի:

2000 և 2001 թվականներին ճանաչվել է շրջանի տարվա լավագույն ուսուցիչ, իսկ 2007թ. արժանացել հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչման:

Էվելինա Ոսկանյանը ծնվել է 1941թ. Մարտունու շրջանի Ղավախան գյուղում: 1960-1961թթ. աշխատանքի է անցել Մարտունու թիվ 2 միջնակարգ դպրոցում՝ որպես տարրական դասարանների դասվար, միաժամանակ 1968թ. ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի տարրական բաժինը: Պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» մեդալով, արժանացել ուսուցիչ-մեթոդիստի կոչման: 2005թ. նրան շնորհվել է ԼՂ Հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչում[602]:

Այսպիսով, վերոհիշյալ համառոտ շարադրանքից էլ կարելի է եզրակացնել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում, չնայած Ադրբեջանի ղեկավարության ազգահալած քաղաքականության, վերոնշյալ և շատ ուրիշ կին մանկավարժներ, ժողովրդական ուսուցիչներ, վաստակավոր մանկավարժներ իրենց հասարակական, քաղաքական և մանկավարժական բեղմնավոր գործունեությամբ անձնվիրաբար շարունակել են ազգաշահ գործունեությունը, ինչը երախտագիտությամբ է գնահատվում նաև այսօր՝ մեր ժամանակներում: Իսկ 1942-1960թթ. ծնված և հետագա տարիներին արգասավոր գործունեություն ծավալած կին մանկավարժների մասին՝ սույն աշխատության 3-րդ հատորում:

Ա Մ Փ Ո Փ Ու Մ

Իր բազմադարյան պատմության ընթացքում արցախահայ դպրոցն անցել է մեծ, բայց դժվարին ու բարդ ճանապարհ: Պատմության տարբեր շրջաններում՝ 5-դարից մինչև 20-դարի երկրորդ տասնամյակը, սոցիալ-տնտեսական և քաղաքական անբարենպաստ պայմանները չէին կարող իրենց կնիքը չդնել դպրոցի վրա: Եվ, չնայած այդ ամենին, հայ ժողովրդի այս հատվածի կրթօջախները շարունակել են ծառայել երկրամասի ժողովրդի մշակույթի լուսավորական կարիքներին, նրա ազգապահպան գործին:

Արցախի հասարակական, քաղաքական, մշակութային և դպրոցական կյանքում զգալի տեղաշարժ կատարվեց հատկապես 20-դարում (1920-1988թթ.), որը եղել է մշակույթի և գիտության բոլոր բնագավառներում, այդ թվում նաև կրթական համակարգի զարգացման մի հարուստ շրջան:

Արխիվային նյութերի և սկզբնաղբյուրների համակողմանի ուսումնասիրումն ու վերլուծությունը ցույց տվեցին, որ խորհրդային կարգերի հաստատման նախօրյակին Լեռնային Ղարաբաղում կրթության գործը շատ խղճուկ վիճակում էր այն պատճառով, որ դեռևս 20-րդ դարի սկզբին ցարական կառավարության ռեակցիոն, ազգային ճնշման քաղաքականությունը արգելակում էր ժողովրդական կրթության զարգացումը: Ցարիզմի ռուսականացման քաղաքականության ազդեցության տակ ազգային դպրոցներում հաճախակի արգելվում էր մայրենի լեզվով դասավանդումը: Լեռնային Ղարաբաղում կրթության գործի զարգացման համար առավել անբարենպաստ պայմաններ ստեղծվեցին առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և, հատկապես 1918-1920թթ. ազգամիջյան կռիվների ու բախումների ժամանակաշրջանում: Ինչպես վկայում են ժամանակակիցները (Աբրահամ Կիսիբեկյան, Լևոն Վարդունի, Առ.Առաքելյան), Ղարաբաղում կրթության վիճակը էլ ավելի վատացավ այդ տարիներին: Բազմավաստակ պատմաբան Լեոն Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցի պատմությանը նվիրված աշխատությունում հիշատակում է,որ այդ մռայլ տարիներին Ղարաբաղում գործող հայկական դպրոցներիհամեմատ, քիչ թե շատ բարեկարգ վիճակում էր ռուսական տիպի ուսումնական հաստատությունը, ռեալական ուսումնարանը, որտեղ հայ աշակերտները մեծ թիվ են կազմում:

Մեր ձեռքի տակ եղած հավաստի փաստագրական տվյալները վկայում են, որ 1920-1923թթ. զգալի տեղաշարժ է կատարվում երկրամասի կրթական համակարգում: Կյանքի պահանջներին համընթաց, Ղարաբաղի հայկական գյուղերում ակտիվանում է ժողովրդի հասարակական նախաձեռնությունը նոր դպրոցների ստեղծման գործում: Համեմատաբար մեծանում է հայ բնակչության հետաքրքրությունը լուսավորական գործի նկատմամբ: Հարկ է նաև նշել, որ նորաստեղծ Խորհրդային Հայաստանի կուսակցական, պետական մարմինները, լուսավորության աշխատողները անգնահատելի օգնություն են ցույց տվել Լեռնային Ղարաբաղում առկա դժվարությունները համեմատաբար կարճ ժամանակամիջոցում հաղթահարելու և նոր տիպի դպրոց ստեղծելու գործում:

Խորհրդային իշխանության հաստատման առաջին իսկ օրերից Լեռնային Ղարաբաղում սկսվեց ժողովրդական կրթության ամբողջ համակարգի վերակառուցումը: Իհարկե, այդ աշխատանքները սկզբնական շրջանում տեղի են ունենում բավականին դժվարին պայմաններում: Այդ ուղղությամբ ակտիվ աշխատանք են ծավալում հայրենասեր գործիչներ Արշավիր Քամալյանը (լուսժողկոմ), Առաքել Առաքելյանը, Լևոն Վարդունին, Անդրանիկ Ավագյանը և ուրիշներ:

Վերոնշյալ և այլ գործիչների, ինքնավար մարզի նվիրյալ մտավորականների նախաձեռնությամբ շրջանային ժողկրթբաժվարները և գյուղական կազմակերպությունները բացատրական լայն աշխատանք էին տանում երկրամասի բնակչության

շրջանում՝ նրանց կոչ անելով օգնելու դպրոցական շենքերի վերանորոգման, սեղան-նստարանների, գրատախտակների և անհրաժեշտ այլ գույքի պատրաստման աշխատանքներին, ինչպես նաև միջոցներ տրամադրել ուսուցիչների նյութականն ապահովելու համար և այլն: Լուսժողկոմի ձեռնարկած միջոցառումները տվեցին դրական արդյունք: Այսպես, նախորդ տասնամյակի (1913-1923թթ.) համեմատությամբ, 1923-1924 ուստարում Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում գործում էին 79 առաջին և 3 երկրորդ աստիճանի աշխատանքային միասնական դպրոցներ, իսկ հաջորդ ուսումնական տարում դրանց թիվը հասնում է 102-ի, որտեղ սովորում էր 7940 աշակերտ, դասավանդում 212 ուսուցիչ: Այսպիսով, 1920-1930 թթ. ԼՂԻՄ-ում գործում էին առաջին աստիճանի 134 դպրոցներ, երկրորդ աստիճանի 5, այլազգի 25 դպրոցներ, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ՝ 3 (տես՝ աշխատության 1 -ին գլուխ): Բացի նշվածներից, այդ տասնամյակում մարզի շրջաններում ստեղծվեցին նոր տիպի դպրոցներ(գյուղերիտ) տարրական դպրոցների բազայի վրա և ունեին ուսուցման եռամյա տևողություն: Արտադրական խոշոր ձեռնարկություններին կից ստեղծվեցին նաև ֆաբրիկագործարանային յոթնամյա դպրոցներ, որոնք մեծ ժողովրդականություն վայելեցին բանվորական շրջանում, դպրոցներ, որոնք սովորողներին տալիս էին ընդհանուր և պոլիտեխնիկական կրթություն: Այդ տասնամյակում առաջնահերթ խնդիր էր վերացնել մասսայական անգրագիտությունը, արմատականորեն վերակառուցել ուսումնական աշխատանքների համակարգը (տես՝ աշխատության գլուխ 1, 3): Դպրոցի կյանքում զգալի տեղաշարժ է կատարվում հատկապես 1930-1940թթ., ընդլայնվում է տարրական, ոչ լրիվ յոթնամյա և լրիվ միջնակարգ դպրոցների, ինչպես նաև՝ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների (տեխնիկումներ, ուսումնարաններ) ցանցը, իսկ 1938-1939 ուստարում Շուշիում բացվում է երկամյա մանկավարժական (ուսուցչական) ինստիտուտ, որը հետագայում տեղափոխվում է Ստեփանակտրտ և գործում մինչև 1953 թվականը:

Հանրակրթական դպրոցի զարգացման այս ժամանակաշրջանը նշանակալից է ոչ միայն այն վիթխարի նվաճումներով, որոնք ձեռք են բերվել պարտադիր ուսուցման իրականացման, դպրոցական ցանցի ընդլայնման, աշակերտության թվի ավելացման, ուսուցչական կազմի քանակական ու որակական բարելավման բնագավառում, այլև ուսումնադաստիարակչական աշխատանքների արմատական բարելավմամբ: Լուսժողկոմի ընդունած որոշման համաձայն (1931թ. 26 սեպտեմբեր) հաստատվեցին նոր ուսումնական պլաններ, ծրագրեր, որոնք կառուցված էին առարկայական դասավանդման հիման վրա: Նորացվեց դասագրքաստեղծման գործը, վերացվեց ուսուցման և դաստիարակության նկատմամբ կոմպլեքսային (համալիրային) մոտեցումը, այն դրվեց նոր հիմքերի վրա, հաշվի առնվեցին սոցիալական-հոգեբանական և մանկավարժական գործոնները, արմատավորվեցին ուսումնական աշխատանքի կազմակերպման նոր ձևեր (դասը համարվեց ուսուցման կազմակերպման հիմնական ձև), տարածվեց առաջավոր մանկավարժական փորձը՝ տեղի պայմանների հաշվառմամբ, դպրոցը ուսուցչական կադրերով ապահովելու և նրանց կրթական ցենզը բարձրացնելու նպատակով մտցվեց հեռակա ուսուցման համակարգ և այլն:

Լեռնային Ղարաբաղի դպրոցի պատմության զարգացման այս երկու տասնամյակում (1920-1940թթ.) զգալի աշխատանք է տարվել նաև ուսուցչական կադրերի պատրաստման ու որակավորման բարձրացման ուղղությամբ: Այդ հարցը պարբերաբար քննարկվելէ մարզային, շրջանային ուսուցչական համագումարներում ու կոնֆերանսներում: Ուսուցիչների մանկավարժական-մեթոդական, մասնագիտական որակի բարձրացման, պատրաստման ու վերապատրաստման հիմնախնդիրները մտահոգել են ԼՀ լուսժողկոմի աշխատողներին: Խորհրդային դպրոցի սկզբ-

նավորման շրջանում մարզի դպրոցներում ուսուցչական քիչ կադրեր կային, հին ուսուցիչների մի մասն ի վիճակի չէր բավարարելու ժողկրթության վերակառուցման պահանջները: Մասնագետ կադրերի մեծ պահանջը բավարարելու նպատակով բացվում են միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ, ուսումնարաններ, տեխնիկումներ, նույնիսկ երկրորդ աստիճանի հանրակրթական դպրոցներից շատերը վերակառուցվեցին և սկսեցին մասնագետ կադրեր պատրաստել ինչպես դպրոցների, այնպես էլ ժողտնտեսության տարբեր ճյուղերի համար: Մարզի հայկական դպրոցներն ուսուցչական կադրերով ապահովելու գործում կարևոր դեր են խաղացել Շուշիի մանկավարժական ուսումնարանը, երկամյա մանկավարժական (ուսուցչական) ինստիտուտը, ինչպես նաև Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը: Տարրական և միջնակարգ դպրոցների համար ուսուցչական կադրեր պատրաստող լրացուցիչ օղակներ են հանդիսացել զանազան դասընթացները, որոնք անց էին կացվում Ստեփանակերտում, Շուշի քաղաքում, շրջաններում, ինչպես նաև Երևանի ուսուցիչների կատարելագործման ինստիտուտում: Ըստ պաշտոնական տվյալների, 1935-1936 ուստարում Ստեփանակերտում անցկացված մանկավարժական դասընթացներին մասնակցել են 100-ից ավելի ուսուցիչներ, իսկ Երևանում կազմակերպված վերապատրաստման դասընթացներին՝ 66 ուսուցիչներ: Պետք է նշել նաև, որ այդ շրջանում ուսուցիչներն ակտիվ աշխատանք են կատարել աճող սերնդի հայեցի կրթության ու դաստիարակության գործում: Իրենց պարտականություններից բացի, ուսուցիչները գյուղական վայրերում, շրջաններում և քաղաքում ակտիվ մասնակցություն էին ունենում մշակութալուսավորական բոլոր աշխատանքներին: Ուսուցիչն էր խրճիթ-ընթերցարանի գլխավոր ուժը, անգրագիտության վերացման կետերի կազմակերպողն ու պարապողը, երեկույթների, ցերեկույթների, թատերական ներկայացումների և այլ մշակութային միջոցառումների կազմակերպողը և այլն: Սակայն նշենք,որ այդ շրջանում և հետագա տասնամյակներում դառն են եղել Ղարաբաղի ժողովրդի ճակատագիրը, նրա կյանքի ճանապարհը: Եվ նրանք, ովքեր այսօր հետադարձ հայացքով չափում են այդ ճանապարհը, զարմանքով մտածում են, թե ինչպես նա կարողացավ վերակենդանանալ, վերընձյուղվել և գոյատևել կյանքի ու մահվան սահմանագծում: Անշուշտ, դա Ղարաբաղի ժողովրդի և նրա անձնազոհ մտավորականության համառության ու հայրենասեր բարերարների աշխատանքի արդյունքն է: Նրանք հավատ ունենալով ապագայի նկատմամբ՝ սերտորեն համագործակցել են մայր Հայաստանի հետ, իհարկե, շատ դեպքերում գաղտնի, պահպանել հայեցի կրթություն տվող ազգային դպրոցը և հոգևոր մշակութային արժեքները:

Կրթական համակարգի պատմության երկրորդ շրջանն ընդգրկում է Հայրենական պատերազմի տարիները: Այս շրջանում դպրոցի առջև դրվեցին նոր, չափազանց լուրջ խնդիրներ, արմատական փոփոխությունների ենթարկվեցին կրթության բովանդակությունը, ուսուցման կազմակերպման ձևերն ու մեթոդները, դաստիարակչական աշխատանքները, վերանայվեցին ուսումնական պլանները, ծրագրերն ու դասագրքերը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին մարզի հանրակրթական դպրոցներում ուսումնական աշխատանքին զուգահեռ մանկավարժական կոլեկտիվների աշխատողների եռանդուն գործունեության շնորհիվ շատ բան արվեց նաև սովորողների դաստիարակության, գիտակցական կարգապահության, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների արդյունավետ կազմակերպման ու որակի բարձրացման ուղղությամբ: Ժամանակավորապես փոխվեց արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների բովանդակությունը, օգտագործվեցին դրանց կազմակերպման նոր ձևեր ու մեթոդներ: Պատերազմի առաջին իսկ օրից սկսեցին վերակառուցվել արտադասարանական խմբակների աշխատանքնե-

ը: Ստեղծվեցին նոր տիպի խմբակներ՝ հակաօդային պաշտպանության, նռնակաձիգների, ավտոմատավորների, հրաձիգների, սվինամարտի, ՊԱՊ համալիրի և այլն: Դպրոցներում հատկապես արդյունավետ էին կազմակերպվում արտադասարանական, ինչպես նաև արտադպրոցական հանրօգուտ աշխատանքները, որի մասին պարբերաբար հիշատակվում էր «Սովետական Ղարաբաղ» թերթի 1941-1945թթ. համարներում: Արտադասարանական, արտադպրոցական աշխատանքները լուրջ ազդակ հանդիսացան աշակերտների ձեռք բերած գիտելիքների յուրացման ու խորացման համար՝ մի կողմից, նրանց ստեղծագործական ակտիվության և ինքնագործունեության զարգացման համար՝ մյուս կողմից: Դրանց հարուստ բովանդակությունը, գաղափարական-քաղաքական ուղղվածությունը մեծապես նպաստեցին դպրոցականների մեջ հայրենասիրության դաստիարակությանը, հայրենիքի նկատմամբ գիտակցական սիրո ու պարտքի զգացումի ձևավորմանը:

Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում գործուն մասնակցություն ունեցած հազարավոր հայ ռազմիկների մի զգալի մասը Հայաստանի ժողկրթության մարմիններում աշխատողներն ու հանրակրթական դպրոցների ուսուցիչներն էին և նրանց դաստիարակած սաները, որոնց շարքերում էին նաև Ղարաբաղի ուսուցիչներն ու աշակերտները:

Մեծ Հայրենականի հաղթական ավարտից հետո Լեռնային Ղարաբաղի հարյուրավոր ուսուցիչներ ու նրանց սաներ, մարտական շքանշաններով ու մեդալներով պարգևատրված, վերադարձան հայրենի օջախ և նոր եռանդով նվիրվեցին մանկավարժական գործունեության, իսկ նրանց սաները ավարտեցին միջնակարգ դպրոցը, բարձրագույն ուսումնական հաստատությունները և աշխատանքի անցան հանրակրթական դպրոցներում, կրթության, մշակույթի, գիտության և ժողտնտեսության ոլորտներում:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում (1946-1988թթ.) վերակառուցվում է Լեռնային Ղարաբաղի կրթական համակարգը: Հսկայական աշխատանք է տարվում նոր դպրոցական շենքեր կառուցելու, եղած շենքերը վերանորոգելու, դպրոցների նյութատեխնիկական բազան հարստացնելու ուղղությամբ: Հետևողական աշխատանք է տարվում նաև դպրոցները մանկավարժական բարձրորակ կադրերով ապահովելու, ինչպես նաև նրանց որակը սիստեմատիկաբար բարձրացնելու ուղղությամբ: Ուսուցչական կադրերի պատրաստման ու վերապատրաստման գործում հսկայական դեր ունեցան 1963թ. Ստեփանակերտում բացված՝ ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտը և 1969-1970 ուստարում հիմնված՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղը, 1974-1988թթ.՝ ինքնուրույն մանկավարժական ինստիտուտը:

Հարկ է նշել, որ բնութագրվող ժամանակաշրջանում (1946-1988թթ.) լուրջ փոփոխություններ կատարվեցին նաև մարզի հանրակրթական դպրոցների ներքին կյանքում: Մարզային, շրջանային կրթության բաժինների, դպրոցների մանկավարժական կոլեկտիվների որոնումներն ուղղված էին կրթության բովանդակության հարստացմանը, ուսումնական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը: Եվ, իրոք, հետպատերազմյան տարիներին այդ որոնումների ընթացքում մանկավարժական կոլեկտիվներում կուտակվել է բավականաչափ հարուստ ու հետաքրքիր փորձ, որի շատ տարրեր արժեքվոր և օգտակար են նաև այժմ: Հանրակրթական դպրոցի առջև ծառացած նոր խնդիրներին համապատասխան արմատական փոփոխության ենթարկվեցին ուսումնական պլանները, ծրագրերն ու դասագրքերը, ուսուցման կազմակերպման ձևերը: Պատերազմից հետո, չնայած առաջացած դժվարություններին, մանկավարժական կոլեկտիվներն իրենց առաջնահերթ խնդիրը համարեցին ուսուցման գործընթացի բարելավումն ու կատարելագործումը: Այդ եղանակով միայն նրանք հասան դպրոցականների բարձր առաջադիմության:

Հանրակրթական դպրոցի վերակառուցման այս ժամանակաշրջանի կարևոր իրադարձություններից էր նաև յուրաքանչյուր ուսումնական տարում ուսուցչական խորհրդակցությունների, գիտագործնական կոնֆերանսների կազմակերպումը, որին մասնակցում էին ուսուցիչները, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների դասախոսները, ուսանողները, թոշակառու մանկավարժները, շրջանային, մարզային կրթության բաժինների աշխատողները:

Հրավիրված ուսուցիչներին հայտնի է եղել, որ այդ օրվան պետք է նախապատրաստվել լրջորեն, որ այնտեղ խոսակցություն է բացվելու այն ուսուցիչների մասին, ովքեր իրենց փորձով վարպետորեն են կազմակերպում ուսուցման գործընթացը, ամեն ինչ անում՝ սովորողներին խոր և կայուն գիտելիքներ տալու համար:

Քննարկվող ժամանակաշրջանում (1920-1988թթ.) Լեռնային Ղարաբաղի լուսավորության, մասնավորապես դպրոցական գործը, մատաղ սերնդի հայեցի կրթության և դաստիարակության հարցերը եղել են նաև մարզային, շրջանային կրթության բաժինների նշանավոր գործիչների ուշադրության կենտրոնում (այդ մասին մանրամասն նշվել է աշխատության 4-րդ գլխում): Նրանք ժամանակի սոցիալ-տնտեսական, քաղաքական բարդ պայմաններում կարողացան պահպանել երկրամասի հայության մշակույթի ինքնատիպությունն ու միասնությունը, որը կարևոր դեր խաղաց ազգի համախմբման, առաջադիմական գաղափարների մշակման և հետագայում արցախահայության ազատագրական պայքարի ու անկախության ձեռքբերման գործում: Այդ գործիչներն իրենց արգասավոր գործունեության բազմազանությամբ նախադրյալներ ստեղծեցին ժամանակաշրջանի քաղաքական բարդ պայմաններում հայ կրթական համակարգի զարգացման համար:

Երկարամյա ուսումնասիրությունները հեղինակներին հնարավորություն են ընձեռել աշխատության այս բաժնում առաջին անգամ ներկայացնել նաև ԼՂԻՄ-ի ուսուցիչների կատարելագործման ինստիտուտի տնօրենների, ուսուցիչների վերապատրաստման դասընթացների նշանավոր կազմակերպիչների գործունեությունը ոչ միայն կատարելագործման ինստիտուտում, այլև ամբողջությամբ վերցրած մարզի դպրոցներում, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում, գիտության, արվեստի, մշակույթի և այլ բնագավառներում: Ներկայացվում է նաև ուսումնասիրվող ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի վաստակաշատ մանկավարժների բեղմնավոր գործունեությունը (1923-1988թթ.): Նրանց կենսագրության ուշագրավ կողմերից մեկն էլ այն է, որ անգամ ամենաանբարենպաստ, հատկապես խորհրդային շրջանում, Ադրբեջանի ղեկավարության ազգայնամոլ քաղաքականության պայմաններում, երբեք չեն կորցրել իրենց հավատն ու հույսը լուսավոր ապագայի նկատմամբ, ամեն ինչ, անգամ անկարելին՝ ամենախեղդուկ մթնոլորտում, կեղծ «ինտերնացիոնալիստական» կարգախոսի ազդեցության տակ, ազգային մշակույթն ու լուսավոր օջախը պահպանելու ու զարգացնելու համար: Նրանց համար միշտ հոգեհարազատ են եղել նրանց համար երկրամասի ազատությունն ու լավատեսությունը, որոնց խորապես ու սրբությամբ հավատացել են: Վկան՝ մեր ժողովրդի այսօրվա ազատությունն ու անկախությունը:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղում հանրակրթական նոր տիպի դպրոցների լայն ցանը, նրա հետագա զարգացումը և տարբեր մասնագիտությունների գծով բարձրորակ կադրերի պատրաստումը հնարավորություն տվին կազմակերպել նաև մի շարք միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ, որոնք լուրջ դեր խաղացին մարզում օրըստօրե զարգացող ժողկրթության, տնտեսության և մշակույթի տարբեր բնագավառների համար միջին որակի մասնագետներ պատրաստելու գործում: Միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների կազմակերպումն ամենից առաջ պայմանավորված էր մարզի քայքայված տնտեսության վերականգնման, արդյունաբերության,

ժողովրդական կրթության ու առողջապահության հրատապ խնդիրների կենսագործմամբ: Մասնագետ կադրերի մեծ պահանջը բավարարելու նպատակով մարզում ընդլայնվեց միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանցը: Լեռնային Ղարաբաղի կրթական համակարգի պատմության առաջին տասնամյակում (1920-1930թթ.) բացվեցին Շուշիի մանկավարժական ուսումնարանը, Հադրութի մանկավարժական ուսումնարանը, Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումը, երաժշտական ուսումնարանը, իսկ երկրորդ տասնամյակում (1930-1940թթ.)՝ Ստեփանակերտի բժշկական ուսումնարանը (1932թ.), Շուշիի մանկավարժական ուսումնարանին կից բանֆակը (1939թ.): Այդ ուսումնական հաստատությունները կադրեր են պատրաստել ոչ միայն ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի, կրթության, արվեստի, մշակույթի, առողջապահության բնագավառների, այլև բարձրագույն ուսումնական հաստատությունների համար: Միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններն ավարտած շրջանավարտները բեղմնավոր գործունեություն ծավալեցին նախապատերազմյան շրջանում, Մեծ Հայրենականի տարիներին, հետպատերազմյան ժամանակաշրջանում, իսկ նրանցից շատերն ակտիվորեն մասնակցեցին Արցախյան ազգային ազատագրական շարժմանը (այդ մասին կնշվի աշխատության 3-րդ հատորում):

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում կրթական գործի զարգացման, բարձրորակ մասնագետների պատրաստման գործում վճռական դեր խաղացին հատկապես Շուշիի (հետագայում՝ Ստեփանակերտի) երկամյա մանկավարժական ինստիտուտը (1939-1953թթ.), հետագայում՝ Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտը (1969-1988թթ.): Արխիվային փաստաթղթերի, պարբերական տպագրված տեսած հոդվածների, ժամանակակիցների հուշերի և աղբյուրների համակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռել հեղինակներին ներկայացնել երկամյա մանկավարժական ինստիտուտի գիտակրթական գործունեությունը, կրթօջախի տնօրենների, մանկավարժական կադրերի, շրջանավարտների աշխատանքը: Պատմաշրջանի քաղաքական իրադարձությունների վերլուծություններով համառոտակի բնութագրվում է նաև Բաքվի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղի (1969-1973թթ.), ինքնուրույն մանկավարժական ինստիտուտի (1974-1988թթ.) գիտակրթական գործունեությունը:

Ինչպես արդեն նշել ենք, բնութագրվող ժամանակաշրջանում (1920-1988թթ.) Լեռնային Ղարաբաղում կրթական գործը, մատաղ սերնդի հայեցի կրթությունն ու դաստիարակությունը մշտապես եղել են նաև հայրենասիրության գաղափարներով տոգորված կին մանկավարժների ուշադրության կենտրոնում: Նրանք ոչ միայն բեղմնավոր մանկավարժական գործունեություն են ծավալել, այլև արցախահայության համար ստեղծված անտանելի պայմաններում ակտիվորեն մասնակցել են երկրամասի հասարակական, քաղաքական աշխատանքներին, իսկ անհրաժեշտության դեպքում վճռական պահերին իրենց կյանքը զոհաբերել հայրենիքի պաշտպանության և ազգային նպատակների իրականացման համար: Ժամանակակիցների հուշերի, փաստագրական նյութերի և այլ աղբյուրների ուսումնասիրումը հնարավորություն է ընձեռել ներկայացնել 90-ից ավելի բազմավաստակ կին մանկավարժների բազմաբովանդակ գործունեությունը նախապատերազմյան շրջանում (1920-1941թթ.), Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945թթ.)՝ ռազմաճակատում և թիկունքում և հետպատերազմյան ժամանակաշրջանում (1946-1988թթ.): Նրանցից շատերը մասնակցել են Արցախյան ազգային ազատագրական պայքարին և այսօր էլ շարունակում են իրենց բեղմնավոր գործունեությունը (այդ մասին կնշվի աշխատության 3-րդ հատորում):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վ. Երկանյան, Հայ դպրոցը և ցարիզմի քաղաքականությունը(1890-ական թթ.), (Փաստաթղթերի հրապարակում), «Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, թիվ 1:
2. Ա. Կիսիբեկյան, Հուշեր, հատ. 1, Երևան, 2011, էջ 348:
3. Ա. Կիսիբեկյան, Հուշեր, հատ. 1, Երևան, 2011, էջ 350-352:
4. Ս. Խուդոյան, Սովետահայ դպրոցի պատմությունը, Երևան, 1973, էջ 16-18: Այդ մասին տես նաև Ա.Մովսիսյան, Մ.Սանթրոսյան, Գ.Նազիկյան, Ակնարկներ Սովետական Հայաստանի հանրակրթական դպրոցի պատմության, Երևան, 1955, էջ 12:
5. ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, թ.8, գ. 543, թ. 10:
6. Ա. Կիսիբեկյան, Հուշեր, հատ. 2, Երևան, 2011, մաս 3-րդ, («Խորհրդային շրջան»), էջ 44-46: Նաև տես՝ Վ.Բալայան, Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Երևան, 2012, էջ 73-99, էջ 149:
7. Հ. Գրիգորյան, Գ. Հարությունյան, Շուշիի ռեալականը, Երևան, 2001, էջ 20-60:
8. Ռ. Գասպարյան, Շուշի, Երևան, 1993, էջ 102-109:
9. Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի (1838-1913թթ.), Թիֆլիս, 1914, էջ 84-86: Նաև տես՝ Հ.Առաքելյան, Շուշիի թեմական դպրոցի 75-ամյակը, Շուշիի, 1913, էջ 68-70:
10. Ա. Խաչատրյան, Գ. Հարությունյան, Շուշիի մանկավարժական ուսումնարան, Ստեփանակերտ, 2006, էջ 6-12: Նաև տե՛ս ՀՀ հանրագիտարան, հ. 8, էջ 601:
11. Ար. Քամալյան, «Զեկուցագրեր» (доклады 1923-1934гг.).
12. Ար. Քամալյան, նշվ. «Զեկուցագրեր», էջ 12-14: Նաև տե՛ս Տ.Մուշեղյան, «Մեր յոթ տարվա նվաճումները լուսավորության ֆրոնտում», «Խորհրդային Հայաստան» (օրաթերթ, 1927, թիվ 27, 73):
13. Ա. Կիսիբեկյան, նշվ. աշխ., հատ. 1, Երևան, 2011, էջ 236-250:
14. Ար. Քամալյան, նշվ. «Զեկուցագրեր», էջ 92-94:
15. Մ. Աղաջանյան, Հաթերք, Ստեփանակերտ, 2012, էջ 231-237:
16. Խ. Ղազարյան, Տումի, Երևան, 2003, էջ 84:
17. Ս. Մելքումյան, Արցախ-Ղարաբաղ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Երևան, 2010, էջ 144:
18. Մ. Բեգլարյան, Իմ սերնդի ճակատագիրը, Ստեփանակերտ, 1998, էջ 12:
19. Ա. Գրիգորյան, Հաղորտին գոյամարտի բովում, Ստեփանակերտ, 2012, էջ 24-26:
20. Աղյուսակ 1-ում բերված տվյալների մասին տես Ա. Քամալյան, նշվ. «Զեկուցագրեր», Գ. Հարությունյան, Ժողովրդական կրթության զարգացումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1985, էջ 93-94:
21. Գ. Հարությունյան, նշվ. աշխ., նույն տեղում:
22. Աղյուսակ 2-ում բերված փաստագրական տվյալների մասին տես Գ.Հարությունյան, նշվ. աշխ., նաև՝ «Խորհրդային Ղարաբաղ» թերթի 1912-1923թթ. համարները:
23. Խ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 85:
24. ՀՍԽՀ Բ գ. և կ. Բանակայինների խորհուրդների առաջին համագումար, Երևան, 1922, էջ 19: Նաև տե՛ս Ա.Ղուկասյան, Ա.Աբրահամյան և ուրիշներ, Հայ դպրոցն ու մանկավարժական միտքը 20-րդ դարում, Երևան, 2004, էջ 17:
25. Ա. Ղուկասյան և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 18-19:
26. Ա. Կիսիբեկյան, նշվ. աշխ., էջ 348:
27. Գ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 88-89:
28. Արշավիր Քամալյանի կենսագրական գործունեության մասին տե՛ս Հ.Գրիգորյան, Գ.Հարությունյան, Շուշիի ռեալականը, նշվ. աշխ., էջ 125: Նաև՝ Ս.Ավագյան, էջեր Լեռնային Ղարաբաղի կուլտուր-կրթական կյանքի պատմությունից, Երևան, 1982, էջ 38-42:
29. «Խորհրդային Ղարաբաղ», 1925, օգոստոսի 9: Նաև տե՛ս Ա.Աբրահամյան, Ժողովրդական կրթության նվաճումները Սովետական Հայաստանում, Երևան, 1959:
30. Գ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 89:

31. ԼՂՀ ՊԱ ֆ. 10, ց. 1, գ. 1, թ. 5, 6, 7, 8:
32. ՀՀ(ՀՍԽՀ) դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, էջմիածին, 1921, էջ 7:
33. Հայաստանի Հանրապետության «Օրենքների ժողովածու», 1919, թիվ 10, էջ 79:
34. ԼՂՀ ՊԱ ֆ. 10, ց. 1, գ. 1, թ. 5, 6: Նաև տես՝ Ար. Քամալյանի նշվ. Զեկուցագրերը:
35. ԼՂՀ ՊԱ ֆ. 10, ց. 1, գ. 1, թ. 7, 8, 9:
36. «Խորհրդային Ղարաբաղ», 1923, հունիսի 16: Նաև՝ Գ. Հարությունյան, նշվ. աշխ. էջ 92:
37. ԼՂՀ ՊԱ ֆ. 10, ց. 1, գ. 1, թ. 5, 6:
38. Նույն տեղում, թ. 7, 8:
39. Այդ մասին մանրամասն տե՛ս Ա.Խաչատրյան, Գ.Հարությունյան, Շուշիի մանկավարժական ուսումնարան:
40. Այդ մասին տես Ա. Մովսիսյան, Մ.Սանթրոսյան, Գ.Նազիկյան, նշվ. աշխ. էջ 68-69:
41. Ար. Քամալյան, «Զեկուցագրեր», էջ 16-18:
42. «Զեկուցագրեր», էջ 19-20
43. ԼՂՀ ՊԱ ֆ. 10, ց. 1, գ. 1, թ. 6-10:
44. Ար. Քամալյանի «Զեկուցագրերում» զետեղված են մարզի շրջանային կրթության բաժինների վարիչների զեկուցագրերը դպրոցների, ուսուցիչների և սովորողների քանակական կազմի մասին:
45. Ս. Ավագյան, էջեր Լեռնային Ղարաբաղի կուլտուր-կրթական կյանքի պատմությունից, Երևան, 1982, էջ 42-44:
46. «Խորհրդային Ղարաբաղ», 1924թ. նոյեմբերի 30:
47. ԼՂՀ ՊԱ ֆ. 10, ց. 1, կապ. 1, պ.մ. 5:
48. Նույն տեղում, պ.մ. 6:
49. Ա. Քամալյան, «Զեկուցագրեր», էջ24-28:
50. Առ. Առաքելյանի զեկուցագրերում նշված փաստագրական տվյալների մասին տե՛ս նաև Ս.Ավագյան, նշվ. աշխ. էջ 42-46:
51. Գ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 94-98:
52. «Խորհրդային Ղարաբաղ», 1929, նոյեմբերի 14-15 համարներում:
53. Նույն տեղում, թիվ 16:
54. «Խորհրդային Ղարաբաղ», 1929, նոյեմբերի 21:
55. ԼՂՀ ՊԱ ֆ. 10, գ. 141, 443, 151, 161:
56. ԼՂՀ ՊԱ ֆ. 10, գ. 140, 142, 143, 151:
57. Նույն տեղում, գ 161:
58. Ս. Ավագյան, նշվ. աշխ.,էջ 46: Գ.Հարությունյան, նշվ. աշխ. էջ 94-96:
59. Ա. Մովսիսյան, Մ. Սանթրոսյան, Գ. Նազիկյան, նշվ. աշխ., էջ 31:
60. ՀԱԱ, ֆ. 16, 138, գ. 285, թ. 74, 182, գ. 25, թ. 5:
61. Ա. Քամալյան, «Զեկուցագրեր», էջ 64-66:
62. Մարտակերտի շրջանային կրթության բաժնի դպրոցական տեսուչ Լազր Մովսիսյանի հուշերը պահպանվում են շրջանային կրթության բաժնի արխիվում:
63. Գ.Հարությունյան, նշվ. աշխ., էջ 119-120:
64. Լազր Մովսիսյանի զեկուցագրերը զետեղված են Ար. Քամալյանի «Զեկուցագրերում», էջ 6-12:
65. Մ. Աղաջանյան, նշվ. աշխ., էջ 237-238:
66. Ա. Քամալյան, «Զեկուցագրեր», էջ 31-36: Ստեփանակերտի թիվ 1 դպրոցի պատմության մասին տե՛ս Ռ.Դադայան. «Իմ հավերժող կրթարան», Ստեփանակերտ, 2006, էջ 4-10:
67. Անահիտ Թունիբեկյանի օրագրում նշված փաստերը վկայում է Ռ. Դադայանի գրքույկը:
68. Ս. Մելքումյան, նշվ. աշխ., Երևան, 2010, էջ 144-145:
69. Վ. Բալայան, Գիշի, պատմական անցյալն ու ներկան, Երևան, 1997:
70. Գ. Հարությունյան, նշվ. աշխ., Երևան, 1985:
71. Խ.Ղազարյան, նշվ. աշխ., 2003:
72. Ա. Կիսիբեկյան, նշվ. աշխ., հ. 1, 2, Երևան, 2011, 2012:

73. «Խորհրդային Ղարաբաղ», 1923-1930թթ. համարները:
74. «Խորհրդային Ղարաբաղ», 1926, ապրիլի 23:
75. Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 42-44:
76. Ա. Մովսիսյան, Մ. Սանթրոսյան, Գ. Նազիկյան, նշվ. աշխ., էջ 32-34, 43-46:
77. Գ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 101-104:
78. «Խորհրդային Ղարաբաղ», 1926, ապրիլի 23, 26 համարները:
79. ԼՂՀ ՊԱ ֆ. 10, գ. 144, 146, 148:
80. Նույն տեղում, գ. 49, 50:
81. Նույն տեղում, գ. 50, թ. 1-2:
82. Ա. Քամալյան, «Զեկուցագրեր», էջ 59-60:
83. Նույն տեղում, էջ 62-64:
84. ԼՂՀ ՊԱ ֆ. 10, g. 1, գ. 5, թ. 1-6:
85. Նույն տեղում, թ. 7, 8:
86. ԼՂ լուսբաժվարի զեկուցագրերը պահպանվում են ԼՂՀ ՊԱ ֆոնդերում (թ. 10, 11, 12, գ. 4, 5, 6, 7 և այլն):
87. Ա. Քամալյան, նշված «Զեկուցագրեր»:
88. Մ. Սանթրոսյան, էջեր Սովետահայ դպրոցի ու մանկավարժական մտքի պատմությունից, «Սովետական մանկավարժ», 1967, թ. 8, էջ 10:
89. «Խորհրդային Ղարաբաղ», 1931, մայիսի 9:
90. Ն. Կոնստանտինով, Ե. Մեդինսկի, Մ. Շաբաևա, Մանկավարժության պատմություն (թարգմ. հայերեն), Երևան, 1970, էջ 474-475:
91. Ա.Ղուկասյան, Ա.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 30-31:
92. Մանկավարժության պատմություն, Երևան, 1970, էջ 474-476,: Նաև՝ Ս. Խուդոյան, Խորհրդահայ դպրոցի պատմություն, Երևան, 1973, էջ 198-199:
93. Գ.Հարությունյան, նշվ.աշխ., էջ 113-114:
94. Նույն տեղում, էջ 114-115:
95. Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 56-57:
96. ԼՂՀ ՊԱ ֆ. 30, g. 1, պ. միավ. 12, կապ 2:
97. Նույն տեղում, պ. միավ. 13, կապ 3-4:
98. «Խորհրդային Ղարաբաղ», 1930, դեկտեմբեր: Տե՛ս նաև՝ ԼՂՀ ՊԱ լուսբաժին, ֆ. 30, g. 1, պ. միավ. 13, կապ 2:
99. ԼՂՀ ՊԱ ֆ. 30, g. 1, պ. միավ. 78, կապ 8, պ. միավ. 831, կապ 11:
100. Նույն տեղում, g. 1, պ. միավ. 78, կապ 8, 9:
101. Գ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 120-121:
102. Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 60:
103. Ս. Խուդոյան, նշվ. աշխ., էջ 218-220:
104. ԼՂՀ ՊԱ լուսբաժին, ֆ. 30, g. 1, գ. 78, թ. 8:
105. Մանկավարժության պատմություն, էջ 478: Նաև տե՛ս Ս. Խուդոյան, նշվ. աշխ., էջ 262-264:
106. Ա.Ղուկասյան, Ա.Աբրահամյան, նշվ.աշխ., էջ 12-13:
107. Ա.Մովսիսյան, Մ.Սանթրոսյան, Գ.Նազիկյան, նշվ. աշխ., էջ 114-116: Նաև՝ Շ.Սիմոնյան, Սովետական Հայաստանի ժողովրդական կրթության նվաճումները 60 տարում, Երևան, 1961:
108. ՀԱԱ, ֆ.113, g.1, գ. 22-72, թ. 6-7: Նաև՝ Ս.Խուդոյան, նշվ. աշխ., էջ 265-266:
109. Ա.Մովսիսյան, Մ.Սանթրոսյան, Գ.Նազիկյան, նշվ. աշխ., էջ 110-112:
110. ԼՂՀ ՊԱ, Լուսբաժին, ֆ.30, g.1, գ. 78, թ. 8-9:
111. Ս.Անդրյանի, Գ.Գրիգորյանի, Ս.Արամյանի հուշերը պահպանվում են Ստեփանակերտի թիվ 2 դպրոցի արխիվում:
112. Նույն դպրոցի արխիվ, գ. 1, 2: Նաև նշենք, որ թիվ 2 դպրոցի պատմության մասին համառոտ տեղեկություններ է հեղինակներին տրամադրել դպրոցի տնօրեն Լաուրա Մարտիրոսյանը:
113. Ա. Քամալյան, նշված «Զեկուցագրեր», էջ 62-64:

114. ԼՂՀ ՊԱ, Լուսբաժին, ֆ.10, գ. 144, 146:
115. «Խորհրդային Հայաստան», 1931, թիվ 144:
116. Նույն տեղում, թ, 145:
117. Ս. Խուդոյան, նշվ. աշխ., էջ 274-276:
118. 1936թ. հուլիսի 4-ի որոշումը «Լուսժողկոմատի սիստեմում եղած մանկաբանական խեղաթյուրումների մասին», Մանկավարժության պատմություն, 1970, էջ 483-484:
119. Այդ մասին տե՛ս Յու.Ամիրջանյան, Պրոբլեմային ուսուցում, Երևան, 1984:
120. Ա.Մովսիսյան, Մ.Սանթրոսյան, Գ.Նազիկյան, նշվ. աշխ., էջ 20-21: Նաև՝ Ս. Խուդոյան, նշվ. աշխ., էջ 34-35:
121. ԼՂՀ ՊԱ, ֆ.10, g. 1, պ. մ. 5, կապ 2:
122. Նույն տեղում, կապ 3:
123. Գ.Հարությունյան, նշվ. աշխ. էջ 88:
124. Նույն տեղում, էջ 89:
125. ԼՂՀ ՊԱ, Լուսբաժին, ֆ.10, g. 1, գ. 10:
126. Նույն տեղում, գ. 10, 11:
127. Ա. Քամալյան, նշված «Զեկուցագրեր», էջ 24-32:
128. ԼՂՀ ՊԱ, Լուսբաժին, ֆ.10, g. 1, գ. 5:
129. Նույն տեղում, գ.10, թ. 2, 3, 4:
130. Ս. Խուդոյան, նշվ. աշխ., էջ 96-97, նաև՝ ԼՂՀ ՊԱ, ֆ.10, g. 1, պ. մ. 5, կապ 7:
131. Նույն տեղում, g. 1, գ. 54, թ. 3:
132. Ա. Քամալյան, «Զեկուցագրեր», էջ 34-36:
133. Նույն տեղում, էջ 36-38:
134. Նույն տեղում, էջ 39-40:
135. «Խորհրդային Ղարաբաղ», 1925, հունիսի 28-29:
136. Նույն տեղում, 29-30:
137. «Խորհրդային Ղարաբաղ», 1925թ. սեպտեմբեր:
138. «Կոմունիստ», 1924թ., թ.22:
139. ԼՂՀ ՊԱ, ֆ.10, g. 1, գ. 54: Նաև՝ Գ.Հարությունյան, նշվ. աշխ. էջ 98-99:
140. Ա.Խաչատրյան, Գ.Հարությունյան, Շուշիի մանկավարժական ուսումնարան, 2006թ.:
141. Նույն տեղում (Գ.Հարությունյան, նշվ. աշխ. էջ 99):
142. Ս. Խուդոյան, նշվ. աշխ., էջ 112:
143. ԼՂՀ ՊԱ, ֆ.3, g. 1, պ. մ. 196, կապ 17:
144. Նույն տեղում, պ. մ. 64, կապ 6:
145. Նույն տեղում, գ. 10, պ. մ. 64, 65, 66, կապ 6, 7, 8:
146. Նույն տեղում, գ. 10, պ. մ. 66, կապ 6, 8, 9:
147. Բ.Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, Երևան, 1994, էջ 255:
148. Նույն տեղում, էջ 255:
149. Այդ մասին տես Ա.Մնացականյան, Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում, Երևան, 1954: Նաև՝ Կ.Ա.Հարությունյան, Հայ ժողովրդի մասնակցությունը երկրորդ համաշխարհային պատերազմին (1939-1945թթ.), Երևան, 2001:
150. ԼՂՀ ՊԱ, Լուբաժին, ֆ. 30, պ. մ. 892, կապ 45, թ. 244:
151. Народное образование в СССР, Сборник документов, 1917-1973гг., М., 1974, Стр. 117.
152. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 618, կապ 52:
153. Նույն տեղում, կապ 621:
154. Ա.Շահնազարյան, ԼՂԻՄ կոմերիտական կազմակերպությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945թթ), Ստեփանակերտ, 1958, էջ 34-40:
155. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 614, կապ 52, 53, 57:
156. «Պրավդա», 1942, մարտի 24 («Պրավդա»-ի համարները գտնվում են Հայաստանի Ազգային գրադարանում):
157. Ա.Մովսիսյան, Մ.Սանթրոսյան, Գ.Նազիկյան, նշվ. աշխ., էջ160-161:
158. Ա.Շահնազարյան, նշվ. աշխ., էջ 39-40:

159. «Պրավդա», 1942, մարտի 24:
160. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 548, կապ 46, 48:
161. Նույն տեղում, g. 1, պ. մ. 618, կապ 52, 54:
162. «Խորհրդային Ղարաբաղ», 1941թ. նոյեմբերի 21, 1942թ. մարտի 16, 17, ապրիլի 20, 22, 24 և այլ համարներ:
163. Նույն տեղում, մարտի 16, 17:
164. Նույն տեղում, ապրիլի 22, 23:
165. Գ.Հարությունյան, նշվ. աշխ. էջ 134-136:
166. Ա.Ղազախեցյան, Հանրակրթական դպրոցը Սովետական Հայաստանում (1941-1970թթ.), Երևան, 1972, էջ 12-13:
167. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 568, կապ 21:
168. Նույն տեղում, պ. մ. 697, կապ 59, 60: Նաև՝ Գ.Հարությունյան, նշվ. աշխ. էջ 134-135:
169. Ա.Մովսիսյան, Մ.Սանթրոսյան, Գ.Նազիկյան, նշվ. աշխ., էջ 173:
170. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 568, կապ 60, 62:
171. Նույն տեղում, պ. մ. 568, կապ 62, 63:
172. Նորայր Ավետիսյանի հուշերը՝ 10 էջի ծավալով հեղինակներին է տրամադրել նրա որդին՝ Հունան Ավետիսյանը:
173. Ս.Ղուկասյանի անձնական արխիվային նյութերը հեղինակներին է տրամադրել նրա որդին, ԼՂՀ սպորտի վաստավոր գործիչ Շավարշ Ղուկասյանը:
174. Սամվել Ղուկասյանի նշված հուշերը:
175. Ասյա Աղավելյանը դասավանդել է նաև Վաղուհասի դպրոցում: Նրա մասին Վաղուհասի դպրոցի վաստակաշատ մանկավարժ Ռոզա Աթասյանի հուշերը հեղի-նակներին է տրամադրել նրա բարեկամ Ռուզաննա Օհանյանը:
176. Ռուսաց լեզվի նշված ուսուցիչների մասին մեզ հետաքրքիր տեղեկություններ են տվել նրանց սաներն ու բարեկամները:
177. Ստեփանակերտի թիվ 2 դպրոցի արխիվ, թղթ. 4, 5:
178. Աբգար Տեր-Գրիգորյանի հուշերը հեղինակների խնդրանքով տրամադրել են նրա հարազատները (բնակվում են Օմակահող գյուղում):
179. Սարգիս Աբրահամյանի հուշերը մեզ տրամադրել է նրա տիկինը՝ Սաթենիկ Սողոմոնյանը 2008թ. մարտին, բացի այդ, նրա գործունեության մասին տես «Լուսարար» թերթի 2005թ. և 2009թ. համարները:
180. Ա.Մովսիսյան, Մ.Սանթրոսյան, Գ.Նազիկյան, նշվ. աշխ., էջ 182-183:
181. Նշված մանկավարժների հուշերը տրամադրել են հեղինակներին նրանց բարեկամները:
182. Ա.Մովսիսյան, Մ.Սանթրոսյան, Գ.Նազիկյան, նշվ. աշխ., էջ 184-185:
183. ԼՂՀ ՊԱ, Լուբաժին, ֆ. 30, պ. մ. 546, 553 կապ 46, 47:
184. Ա.Մովսիսյան, Մ.Սանթրոսյան, Գ.Նազիկյան, նշվ. աշխ., էջ 184:
185. Բ.Դավթյան, 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժները, Ստեփանակերտ, 2001, էջ 15, 20, 22:
186. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 576:
187. Ա.Ղազախեցյան, նշվ. աշխ. էջ 20-21:
188. Մանկավարժության պատմություն, 1972, էջ 530:
189. Այդ մասին տես «Խորհրդային դպրոց», 1944, թիվ 8:
190. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 576, 577, կապ 48, 49:
191. Մարտակերտի շրջժողկրթբաժնի արխիվ , թղթ. 10:
192. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 546, 549, կապ 32, 34:
193. ՀՀ Մանկավարժական Գիտ.Գիտահետազոտական ինստիտուտի (այժմ՝ Ազգային ինստիտուտի) արխիվ, բաժին 7, գործ թիվ 5, թ. 129:
194. ԼՂՀ լուսբաժնի արխիվ, նույն տեղում:
195. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 47, կապ 2:
196. Նույն տեղում, g. 1, պ. մ. 645, 654, 655, կապ 55, 56:
197. Նույն տեղում, պ. մ. 253, կապ 66, թ. 17:

198. Նույն տեղում, g. 1, պ. մ. 95, 99, կապ 9: Նաև տե՛ս «Ուղեցույց դպրոցի դիրեկտորի համար», Երևան, 1956, էջ 29-31:
199. Նույն տեղում:
200. Նույն տեղում:
201. «Խորհրդային Ղարաբաղ», 1929թ. նոյեմբերի 21:
202. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 621, 625:
203. Նույն տեղում:
204. «Խորհրդային Ղարաբաղ», 1945, հունվարի 5:
205. Կ.Ա.Հարությունյան, նշվ. աշխ. էջ 9-10:
206. Հ.Աբրահամյան, Արցախի գոյամարտ, Երևան, 1991, էջ 68:
207. Շ.Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղը Հայրենական մեծպատերազմի տարիներին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1985, թիվ 1, էջ 111:
208. Գ. Աղասարյան, Ռ.Հովսեփյան, Արցախի հայ ուսուցիչները Մեծ Հայրենականում, Ստեփանակերտ, 2005, էջ 6:
209. Նույն տեղում:
210. Հադրութի շրջանի Տումու միջնակարգ դպրոցի արխիվ: Այդ մասին նշում է նաև Խիկար Բարսեղյանը «Կրակների միջով» աշխատությունում, Երևան, 1982:
211. Այդ մասին տես Մ.Աղաջանյան, Հաթերք, Ստեփանակերտ, 2012, էջ 143-146:
212. Նույն տեղում:
213. Նույն տեղում:
214. Նույն տեղում:
215. Նույն տեղում:
216. Հաթերքի միջնակարգ դպրոցի արխիվում պահպանվում են Հայրենական պատերազմին վերաբերող նյութերը, որից էլ օգտվել են հեղինակները:
217. Նույն տեղում:
218. Հայրապետ Առուշանյանի մանկավարժական գործունեության և զինծառայության մասին որոշ փաստագրական նյութեր պահպանվում են նշված դպրոցի արխիվում: Նաև որոշ նյութեր են տրամադրել հեղինակներին նրա հարազատները:
219. Մ.Աղաջանյան, նշվ.աշխ. էջ 164-166, նաև՝ Հաթերքի դպրոցի արխիվ, թղթ. 2, 3, 4:
220. Նույն տեղում:
221. Մարտակերտի շրջժողկրթբաժնի արխիվ , թ. 4, 5: Նաև՝ Գ.Աղասարյան, նշվ. աշխ. էջ 94:
222. Հովսեփ Գևորգյանի հասարակական, քաղաքական և ռազմական գործունեության մասին նյութեր տողերիս համահեղինակին (Գ.Հ.) տրամադրել են նրա դուստրը՝ Սվետլանա Գևորգյանը և քրոջ որդին՝ Կարմեն Հարությունյանը:
223. Նույն տեղում: Նաև՝ Մարտակերտի «Սոցուղի» թերթի 1937-1938թթ. համարները:
224. Հ.Գրիգորյան, Արցախահայերի մասնակցությունը Կուրսկի ճակատամարտում: 1943թ. հուլիսի 5, օգոստոսի 23, «Հայոց պատմության հարցեր», Երևան, մաս 7, 2006, էջ 236-237:
225. Գուրգեն Պետրոսյանի մանկավարժական և զինվորական ծառայության վերաբերյալ որոշ նյութեր պահպանվում են Մարտակերտի թիվ 1 դպրոցի արխիվում:
226. Գ.Աղասարյան, նշվ. աշխ. էջ 118:
227. Նշված ուսուցիչների՝ Մամունց եղբայրների մանկավարժական գործունեության և ռազմաճակատում ցուցաբերած սխրանքների մասին նյութերը հեղինակներին տրամադրել են նրանց հարազատները:
228. Վահան Գասպարյանի, Գրիգոր Բալասանյանի և Կոլյա Սարգսյանի գործունեության մասին նյութերը պահպանվում են Կուսապատի դպրոցի արխիվում:
229. Այդ մասին տես Մարտակերտի շրջժողկրթբաժնի արխիվ, թղթ.6:
230. Նույն տեղում:
231. Արշավիր Գրիգորյանի բանաստեղծությունը տպագրվել է «Խորհրդային Ղարաբաղ» թերթում 1941թ. նոյեմբեր, թ. 12:

232. Սուրեն Աղասյանի գործունեության մասին հուշերը հեղինակներին է տրամադրել նրա որդին՝ Աբել Աղասյանը (Գ.Հարությունյանի ուսանողական ընկերը):
233. Բաբա Թելյանի գործունեության մասին նյութերը պահպանվում են Առաջաձորի միջնակարգ դպրոցի արխիվում:
234. Նշված ուսուցիչների մանկավարժական գործունեության մասին նյութերը պահպանվում են իրենց հայրենի գյուղի դպրոցի արխիվում:
235. Ազատ Աղաջանյանի գործունեության մասին հեղինակներին նյութերը տրամադրել են նրա բարեկամները:
236. Աշոտ Ղուլյանի գործունեության մասին հեղինակներին նյութեր է տրամադրել Խնձրիստանի բնակիչ Նիկոլայ Մուսայելյանը (Կոլյան):
237. Նույն տեղում:
238. Ս. Սարգսյան, Խնապատ, Երևան, 2006, էջ 103-104:
239. Նույն տեղում:
240. Նույն տեղում:
241. Գ.Աղասյան, նշվ. աշխ. էջ 31-32:
242. Հ.Գրիգորյան, Արցախահայերի մասնակցությունը Կուրսկի ճակատամարտում (1943թ.), «Հայոց պատմության հարցեր», Երևան, մաս 7, 2006, էջ 234:
243. Գ.Աղասյան, նշվ. աշխ. էջ 19:
244. Այդ մասին տես Մեծ Թաղլարի դպրոցի արխիվ, թղթ. 2:
245. Այդ մասին տես Մարտակերտի շրջժողկրթբաժնի արխիվ, թղթ. 2-3:
246. Կ.Դալլաքյան, Մարտական 89, Երևան 1968, էջ 186-187:
247. Նույն տեղում, էջ 187-188:
248. Վ.Աղաբեկյան, Պատգամ սերունդներին, Երևան, 2003, նաև՝ Մ.Աղաջանյան, Հաթերք, 2012:
249. Աբգար Աթաջանյանի հուշերը հեղինակներին տրամադրել են նրա բարեկամները:
250. Հ.Այվազյանի գործունեության մասին փաստագրական նյութերը պահպանվում են Հաթերքի դպրոցի արխիվում, նաև տես՝ Մ.Աղաջանյան, նշվ. աշխ.:
251. Աշոտ Ազատյանի գործունեության մասին հեղինակներին արխիվային նյութեր է տրամադրել նրա որդին՝ Կամո Ազատյանը:
252. Գ.Աղասյան, նշվ. աշխ. էջ 35: Նաև՝ Վանքի մինջն. դպրոցի արխիվ, թղթ. 2:
253. Մարտակերտի շրջժողկրթբաժնի արխիվ, թղթ. 12-13:
254. Նույն տեղում, թղ. 4-5:
255. Նույն տեղում: Նաև՝ Գ.Աղասյան, նշվ. աշխ. էջ 83:
256. Տե՛ս Կուսպատի դպրոցի արխիվ, թղթ. 4-5:
257. Մարտակերտի շրջժողկրթբաժնի արխիվ, թղթ. 11-12:
258. Խ.Բարսեղյանի «Կրակների միջով» գրքում նկարագրում են Հայկական 89-րդ դիվիզիայի հերոսական դրվագները, Երևան, 1982:
259. Տե՛ս Ասկերանի շրջանի Չանախչիի միջնակարգ դպրոցի արխիվ, թղթ. 4-5:
260. Ավետարանոցի դպրոցի նշված ուսուցիչների գործունեության վերաբերյալ նյութերը պահպանվում են դպրոցի արխիվում:
261. Ս.Ավետիսյանի գործունեության վերաբերյալ փաստագրական նյութեր պահպանվում են Սարուշենի դպրոցի արխիվում:
262. Այդ մասին տես Ասկերանի շրջանի Դահրավի դպրոցի արխիվ, թղթ. 2: Նաև՝ Խնձրիստանի դպրոցի արխիվ թղթ. 3, որտեղ դասավանդել է Գ.Զաքարյանը:
263. Մ. Բադալյանի գործունեության վերաբերյալ փաստաթղթերը պահպանվում են Խնապատի դպրոցի արխիվում:
264. Ս. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 141:
265. Մարտունու շրջանի Գյուլեն Ճարտարի դպրոցի արխիվում պահպանվում են նշված մանկավարժների գործունեության վերաբերյալ արխիվային նյութեր:
266. Ղուզե Ճարտարի դպրոցի արխիվ, թղթ.4-5:
267. Մարտունու շրջժողկրթբաժնի արխիվ, թղթ.9:

268. Նշված մանկավարժների գործունեության վերաբերյալ արխիվային նյութերը պահպանվում են հայրենի գյուղի դպրոցի արխիվում:
269. Ս.Հովհաննիսյանի հուշերը հեղինակներին տրամադրել են նրա բարեկամները:
270. Ա.Աբրահամյանի հուշերը հեղինակներին տրամադրել են նրա բարեկամները:
271. Նշված մանկավարժների գործունեության վերաբերյալ արխիվային նյութերը պահպանվում են հայրենի գյուղի դպրոցի արխիվում:
272. Այդ մասին տե՛ս Հադրութի շրջանի Ազոխի միջնակարգ դպրոցի արխիվ, թղթ. 3:
273. Ա.Ասրյանի գործունեության վերաբերյալ փաստագրական նյութերը պահպանվում են նշված դպրոցի արխիվում:
274. Նույն տեղում:
275. Նույն տեղում: Նաև՝ Գ.Աղասյան, նշվ. աշխ. էջ 8, 47, 95, 96:
276. Մանկավարժության պատմություն, Երևան, 1970, էջ 536:
277. Նույն տեղում, 537:
278. Ա. Մովսիսյան, Մ. Սանթրոսյան, Գ. Նազիկյան, նշվ. աշխ., էջ 220-221:
279. Նույն տեղում, էջ 222:
280. Նույն տեղում, էջ 223-224:
281. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 713, կապ. 61, 64:
282. Նույն տեղում, պ. մ 730, կապ. 64:
283. Նույն տեղում, պ. մ. 713, կապ. 62:
284. Նույն տեղում, պ. մ 714, կապ. 65, պ. մ. 814, կապ. 76:
285. Նույն տեղում, պ. մ 814, կապ. 76:
286. Նույն տեղում, պ. մ 839, կապ. 79:
287. Ա.Ղազախեցյան, Հանրակրթական դպրոցը Սովետական Հայաստանում, Երևան, 1972, էջ 47:
288. Մանկավարժության պատմություն, էջ 542-543:
289. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 979, կապ. 12, պ. մ. 982, կապ. 95:
290. Նույն տեղում, պ. մ. 991, կապ. 95, 96:
291. Մանկավարժության պատմություն, էջ 540-541:
292. Ա.Անդրեասյան, Դաստիարակչական աշխատանքը գիշերօթիկ և երկարօրյա դպրոցներում, Երևան, 1981:
293. Արսեն Խաչատրյանի հուշերը և անձնական արխիվային նյութերը հեղինակներին տրամադրել է նրա որդին՝ Ալբերտ Խաչատրյանը:
294. Ս. Հախումյան, Ժողովրդական կրթությունը 60 տարում, «Խորհրդային մանկավարժ», 1977, էջ 10:
295. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 982, կապ. 94, 95:
296. Նույն տեղում, պ. մ. 972, կապ. 12:
297. Ս.Միքայելյան, Մասնագիտություն, միջնակարգ կրթություն, Երևան, 1974:
298. Ս.Արամյան, Ժողովրդական կրթության զարգացումը ԼՂԻՄ-ում 60 տարում, Ստեփանակերտ, 1983:
299. Նույն տեղում:
300. Նույն տեղում:
301. Գ.Հարությունյան, նշվ. աշխ. էջ 104:
302. Խորհրդային Լեռնային Ղարաբաղ, Բաքու, 1983, էջ 138:
303. Բ.Ուլուբաբյան, Արցախի պատմություն, Երևան, 1994, էջ 255:
304. Նույն տեղում:
305. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 713, կապ. 64-66:
306. Նույն տեղում, պ. մ. 714, կապ. 66:
307. «Սովետական դպրոց», 1954, թ. 4:
308. Ա.Ղազախեցյան, նշվ. աշխ. էջ 81-82:
309. Տարրական դասարանների մայրենի լեզվի ծրագիր, 1961թ.:
310. Ա.Ղազախեցյան, նշվ. աշխ. էջ 101-102:
311. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 730, կապ. 61, 64:

312. Նույն տեղում:
313. Ս.Աբրահամյանի հաշվետվությունների ու զեկուցագրերի մասին տե՛ս ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 820, 834, կապ. 76, 79:
314. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 723, կապ. 64:
315. Նույն տեղում, պ. մ. 831, կապ. 76:
316. Արշակ Անանյանի հաշվետվությունները պահպանվում են Մարտակերտի շրջժողկրթբաժնի արխիվում, գ. 10-11:
317. Վ.Աղաբեկյան, Պատգամ սերունդներին, Երևան, 2003:
318. «Սովետական դպրոց», 1956, թիվ 13:
319. Միքայել Բալյանը իր հուշերը տրամադրել է հեղինակներին 2014թ. մարտին, 12 էջ:
320. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 732, կապ. 64:
321. Մանկավարժության պատմություն, էջ 548-549:
322. Գ.Հարությունյան, Դպրոցականներին դաստիարակել առաջադիմական ավանդույթներով, Երևան, 1989, էջ 72, 76:
323. Միքայել Բեգլարյանը իրհուշերը տրամադրել է հեղինակներին 2013թ. մայիսին, 14 էջ:
324. Մանկավարժության պատմություն, էջ 551:
325. ԽՄԿԿ 22-րդ համագումարի նյութեր, (ԽՄԿԿ ծրագիր), Հայպետհրատ, Երևան, 1962, էջ 547:
326. «Սովետական դպրոց», 1963, թիվ 39:
327. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 743, կապ. 61-64:
328. «Սովետական մանկավարժ», 1970, թիվ9, էջ 3-12:
329. Ս.Արամյանի հաշվետվություններ ու զեկուցագրեր, ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 824, կապ. 62-64:
330. Հանրակրթական և պրոֆեսիոնալ դպրոցի ռեֆորմի հիմնական ուղղությունները, Երևան,1985:
331. Ուղեցույց դպրոցի դիրեկտորի համար, Երևան, 1956, էջ 255:
332. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 714, կապ. 62:
333. Նույն տեղում, պ. մ. 714, կապ. 2-3:
334. «Խորհրդային Ղարաբաղ», 1951, հունվար:
335. Նույն տեղում, Մարզժողկրթբաժնի վարիչ Ս.Հայրապետյանի հաշվետվությունը, ֆ. 30, g. 1, գ. 12:
336. «Սովետական Ղարաբաղ», 1983թ., նոյեմբերի 26:
337. Գ.Հարությունյան, նշվ. աշխ. էջ 27:
338. Նույն տեղում:
339. «Խորհրդային Ղարաբաղ», 1984թ., հուլիսի 17-ի համարը:
340. Գ.Հարությունյան, նշվ. աշխ. էջ 72-74:
341. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 714, կապ. 41-42:
342. Նույն տեղում:
343. Վ.Աղաբեկյան, նշվ. աշխ. էջ 35-36:
344. «Սովետական Ղարաբաղ», 1951թ., հունվարի 4-ի համարը:
345. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 714, կապ. 61-64:
346. Նշված մանկավարժների հուշերը հեղինակներին են տրամադրել նրանց բարեկամները:
347. Մարտունու շրջժողկրթբաժնի արխիվ, թղթ. 5-6:
348. Մարտակերտի շրջժողկրթբաժնի արխիվ, թղթ. 11-12:
349. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 714, կապ. 62: Նաև տես՝ մարզի ուսուցչական կոնֆերանսի մասին Արսեն Խաչատրյանի հուշերը:
350. Լևոն Վարդունու գործունեության մասին եղած փաստագրական նյութերը տրամադրել են հեղինակներին Ճարտարում բնակվող նրա բարեկամները:
351. Այդ մասին 20-րդ դարի Արցախին լավագույն մանկավարժ, Մարտակերտի շրջժողկրթբաժնի նախկին վարիչ Ռաֆայել Բաղդասարյանը իր հուշերը տրամադրել է հեղինակներին:

352. Արսեն Խաչատրյանի նշված հուշերը:
353. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 714, կապ. 61,պ. մ. 723, կապ. 64 :
354. «Սովետական դպրոց», 1956, թ. 14:
355. «Խորհրդային Ղարաբաղ», 1956, թ. 29:
356. Նիկոլայ Աբրահամյանի հուշերը հեղինակներին հեղինակներին է տրամադրել 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Միքայել Բալյանը:
357. Արսեն Խաչատրյանի նշված հուշերը:
358. Պավել Անդրյանի հուշերը հեղինակներին տրամադրել է նրա որդին՝ Կարեն Անդրյանը:
359. Ա.Խազախեցյան, նշվ.աշխ., էջ 115:
360. ԼՂՀ ՊԱ, ֆ. 56, g. 1, գ. 54, կապ. 12,պ. մ. 1, կապ. 18:
361. Նույն տեղում, ֆ. 30, g. 1, պ. մ. 972, կապ. 12,98:
362. Մարտակերտի շրջժողկրթբաժնի արխիվ, թղթ. 11-12:
363. Խորեն Ղազարյանը իր հուշերը (14 էջ) տրամադրել է գրքի հեղինակներին 2013թ. մարտին:
364. Գ.Հարությունյանի՝ տողերիս համահեղինակի հուշերը, 16 էջ:
365. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 713, կապ. 61-62:
366. Վաղուհասի միջնակարգ դպրոցի ուսուցիչ Սեդրակ Խաչատրյանը իր հուշերը տրամադրել է գրքի համահեղինակ Գ.Հարությունյանին:
367. Մարտունու շրջժողկրթբաժնի արխիվ, թղթ. 22:
368. «Սովետական մանկավարժ», 1969, թ. 6:
369. Այդ մասին տես նշված դպրոցներում պահպանվող փաստագրական նյութերը և վաստակաշատ մանկավարժների հուշերը:
370. Այդ խորհրդակցությանը մասնակցել է գրքի համահեղինակ Գ.Հարությունյանը, այն ժամանակ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մանկավարժության ամբիոնի վարիչն էր:
371. Ա. Ներսիսյանի հուշերը գրքի հեղինակներին է տրամադրել նրա որդին՝ Կարեն Ներսիսյանը:
372. Նույն տեղում:
373. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, գ. 64, թ. 196:
374. Նույն տեղում:
375. Ս.Ալեքսանյանի հուշերը հեղինակներին է տրամադրել նրա դուստրը՝ Ս.Ալեքսանյանը:
376. ԼՂՀ ՊԱ, ֆ. 10, g. 1, գ. 64, 65:
377. Նույն տեղում, գ. 52:
378. Նույն տեղում, ֆ. 30, g. 1, պ. մ. 844, կապ. 79:
379. «Սովետական դպրոց», 1954, թ. 1:
380. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, պ. մ. 713, 729, կապ. 61-62:
381. Ա.Ներսիսյանի անձնական արխիվ, թ. 6-12:
382. Գ.Հարությունյանի անձնական արխիվում պահպանվում է նշված թեմատիկան:
383. Գ.Հարությունյան, նշվ. աշխ. 1985թ., Ս.Արամյան, նշվ. աշխ., 1983:
384. «Փայլակ», 1917, թ. 25, 27: Արշավիր Քամալյանի գործունեության մասին տե՛ս Հ.Գրիգորյան, Գ.Հարությունյան, Շուշիի Ռեալականը, էջ 125:
385. Ա.Քամալյան, նշված «Ձեկուցագրեր»:
386. «Խորհրդային Ղարաբաղ», 1911թ., ապրիլի 14-15-ի համարները:
387. Առաքել Առաքելյանի գործունեության մասին տես նույն աշխատության 1-ին հատոր, 2014թ.:
388. ԼՂՀ ՊԱ, ֆ. 10, g. 1, գ. 8-9, Գուրգեն Էդիլյանի գործունեության մասին տես Շուշիի Ռեալականը, 2001թ.:
389. «Խորհրդային Ղարաբաղ», 1925-1926թթ. համարները:
390. Ա.Քամալյան, նշված «Ձեկուցագրեր», էջ 34-36:
391. Նույն տեղում, նաև՝ ԼՂՀ ՊԱ, ֆ. 10, g. 1, գ.144:

392. ԼՂՀ ՊԱ, Լուսբաժին, ֆ. 30, g. 1, պ. մ. 744-745, նաև՝ «Խորհրդային Ղարաբաղ», 1932-1939թթ. համարները:
393. Գրիգոր Գրիգորյանի գործունեության մասին տես Գ.Հարությունյանի նշվ. աշխ. 1985, էջ 128-129, նաև՝ Բ.Դավթյան, նշվ. աշխ. էջ 51:
394. Սարգիս Աբրահամյանի գործունեության մասին գրքի հեղինակներին փաստագրական նյութեր և հուշեր է տրամադրել նրա տիկինը՝ Սաթենիկ Սողոմոնյանը (2011թ.):
395. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, գ. 64, թ. 196-197:
396. Նույն տեղում:
397. Ղ.Աղայան, Երկ.ժող., հ. 4, Հայպետհրատ, Երևան, 1968, էջ 164:
398. Բ.Դավթյան, նշվ. աշխ. էջ 114:
399. Գ.Ուլուբաբյանի հուշերը գրքի հեղինակներին տրամադրել է նրա որդին՝ Կարեն Ուլուբաբյանը:
400. Սամվել Ղուկասյանի հուշերը գրքի հեղինակներին տրամադրել է նրա որդին՝ Շավարշ Ղուկասյանը:
401. Բահատուր Դավթյանը իրհուշերը տրամադրել է հեղինակներին 2014թ.:
402. ԼՂՀ ՊԱ, Լուսբաժին, ֆ. 30, g. 1, գ. 144, 145:
403. Բ.Դավթյան, նշվ. աշխ. էջ 114:
404. Սուրեն Հայրապետյանի հուշերը գրքի համահեղինակ Ա.Ավանեսյանին է տրամադրել նրա որդին՝ Վիգեն Հայրապետյանը:
405. Ա.Քամալյան, նշված «Ձեկուցագրեր», էջ 24:
406. ԼՂՀ ՊԱ, Լուսբաժին, ֆ. 30, g. 1, պ. մ. 814, կապ. 76:
407. Մ.Բեգլարյան, նշվ. հուշեր:
408. Հակոբ Օհանջանյանի գործունեության մասին տես Ջ.Մարտիրոսյան, Նորագյուղի դպրոցը, (1923-2008թթ.), Ստեփանակերտ, էջ 39-40:
409. ԼՂՀ ՊԱ, ֆ. 30, g. 1, գ. 144-146:
410. Նույն տեղում, գ. 148:
411. Գ.Հարությունյանի՝ գրքի համահեղինակի հուշերը:
412. Սարգիս Արամյանի հուշերը և անձնական արխիվային նյութերը գրքի հեղինակներին տրամադրել է նրա որդին՝ Կարեն Արամյանը:
413. Վահե Աթանեսյան, Միքայել Արամյան, Կյանքի և գործունեության դրվագներ, Երևան, 2013:
414. Աբ.Դանիելյանի հուշերը գրքի հեղինակներին է տրամադրել նրա դուստրը՝ Ն.Դանիելյանը: Նաև՝ Արամյանի գործունեության մասին տես Կ.Աթայան, Իմ ուսուցիչները, «Կրթությունը և գիտությունը Արցախում», Երևան, 2005, թ. 3-4, էջ 100-104:
415. Տե՛ս Ս.Արամյանի նշվ. հուշերը:
416. Աշոտ Շահինջանյանը իր հուշերը ժամանակին տրամադրել է գրքի համահեղինակ Գ.Հարությունյանին:
417. Ս.Արամյանին նշվ. հուշերը:
418. Բ.Դավթյան, նշվ. հուշերը:
419. Յուրա Անաստասյանի հուշերը գրքի հեղինակներին է տրամադրել նրա տիկինը՝ դոցենտ Ժաննա Գալստյանը:
420. Բորիս Բաղրյանը իր հուշերը գրքի հեղինակներին է տրամադրել 2013թ. մարտի 26-ին:
421. Ս.Արամյանի նշվ. հուշերը:
422. Բ.Դավթյան, նշվ. աշխ., էջ 71:
423. Ա.Քամալյան, նշված «Ձեկուցագրեր»:
424. ԼՂՀ ՊԱ, Լուսբաժին, ֆ. 10, g. 1, գ. 114:
425. Նույն տեղում, ֆ. 30, g. 1, պ.մ. 714, կապ. 62:
426. Մարտակերտի շրջժողկրթբաժնի արխիվ, թղթ.12: Ս.Գասպարյանի գործունեության մասին տես նաև՝ Գ.Աղասարյան, նշվ. աշխ., էջ 97:
427. Նույն տեղում, թղթ.14, 15, 16:
428. Մարտակերտի շրջժողկրթբաժնի արխիվ, թղթ. 14:

429. Վաղուհասի միջն. դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Սուրեն Միքայելյանի հուշերը գրքի հեղինակներին է տրամադրել նրա բարեկամները:
430. Կուսապատի դպրոցի արխիվ, թղթ. 4-5:
431. Այդ մասին տես Մարտակերտի շրջժողկրթբաժնի արխիվ, թղթ. 12, իսկ ուսուցչական խորհրդակցության նյութերի մասին՝ Ռոզա Աթասյանի հուշերը: Այն գրքի հեղինակներին է տրամադրել նրա բարեկամ Ռուզաննա Օհանյանը:
432. Այդ մասին իր հուշերում պատմում է Կուսապատի դպրոցի տնօրեն Սերգեյ Գրիգորյանը, նրա հուշերը գրքի հեղինակներին է տրամադրել ներկայիս տնօրեն Անյուտա Խաչատրյանը:
433. Մարտակերտի շրջժողկրթբաժնի արխիվ, թղթ. 10-11:
434. Այդ մասին նշված ուսուցիչների հուշերը գրքի հեղինակներին են տրամադրել նրանց բարեկամները, նաև՝ Ռաֆայել Բաղդասարյանը:
435. Ս.Երիցյանի հաշվետվություններն ու զեկուցագրերը պահպանվում են Մարտակերտի շրջժողկրթբաժնի արխիվ, թղթ. 11, 12, 13:
436. Նույն տեղում:
437. Նշված խորհրդակցության մասնակից, Վաղուհասի միջն. դպրոցի ուսուցիչ Ս.Միքայելյանի, Կուսապատի դպրոցի ուսուցիչ Ա.Մարդյանի հուշերը գրքի հեղինակներին են տրամադրել նրաց բարեկամները:
438. Մարտակերտի շրջժողկրթբաժնի արխիվ, գ. 4, թղթ.8: Նաև՝ Վ.Աղաբեկյան, նշվ. աշխ., 2003թ.:
439. Բ.Դավթյան, նշվ.աշխ., էջ 117: Իսկ Շ.Օհանջանյանի գործունեության վերաբերյալ փաստագրական նյութերը պահպանվում են Մարտակերտի շրջժողկրթբաժնի արխիվում:
440. Շուրա Հասրաթյանը իր հուշերը գրքի հեղինակներին է տրամադրել 2014թ. մարտին:
441. Շահեն Օհանջանյանի տեղակալ Ռաֆայել Բաղդասարյանը իր հուշերը տրամադրել է հեղինակներին:
442. Մարտունու շրջժողկրթբաժնի արխիվ, թղթ.1-4:
443. Նույն տեղում:
444. Մ.Բեգլարյան, Իմ սերնդի ճակատագիրը, Ստեփանակերտ, 1998, էջ 59-60:
445. Մարտունու շրջժողկրթբաժնի արխիվ, թղթ. 5-6: Նաև՝ Մ.Բեգլարյան, նշվ.աշխ.:
446. Նույն տեղում:
447. Բ.Դավթյան, նշվ. աշխ., էջ 102:
448. Մ.Բեգլարյանը իր հուշերը տրամադրել է հեղինակներին:
449. Նորայր Ավետիսյանի հուշերը(14 էջ) գրքի հեղինակներին է տրամադրել նրա թոռը՝ ԱրՊՀ դոցենտ Գայանե Մարգարյանը:
450. Մ.Բեգլարյան, նշվ. աշխ., էջ30-31:
451. Մարտունու շրջժողկրթբաժնի արխիվ, գ. 12-13:
452. Ես. Եսայանի հուշերը հեղինակներին տրամադրել է նրա որդին՝ Ռ.Եսայանը: Եսայանի գործունեության մասին տես Բ.Դավթյան, նշվ. աշխ., էջ 32-33:
453. Նույն տեղում:
454. Գ.Հարությունյան, նշվ. աշխ., 1989թ., էջ 76-77:
455. Մ.Բեգլարյան, նշվ.հուշերը(14 էջ):
456. Շահեն Հայրապետյանի հուշերը հեղինակներին տրամադրել են նրա բարեկամները:
457. Շահեն Քամալյանը իր հուշերը գրքի հեղինակներին է տրամադրել 2014թ. հոկտեմբերին:
458. Մ.Բեգլարյանը նշվ.հուշերը: Նաև տես՝ Գիշու դպրոցի նախկին տնօրեն Վ.Անտոնյանի հուշերը:
459. Խորեն Ղազարյանը իր հուշերը տրամադրել է հեղինակներին (16 էջ):
460. Նույն տեղում: Նաև՝ Խ.Ղազարյան, «Տումի» աշխ., Երևան, 2003թ.:
461. Հադրութի շրջժողկրթբաժնի արխիվ, թղթ. 1-5:

462. Ս.Աբրահամյանի հուշերը հեղինակներին տրամադրել է Խ.Ղազարյանը:
463. Նույն տեղում:
464. Նույն տեղում:
465. Միքայել Բալյանը իր հուշերը(12 էջ) տրամադրել է հեղինակներին:
466. Ն.Աբրահամյանի հաշվետվությունները պահպանվում են Հադրութի շրջժողկրթբաժնի արխիվ, թղթ. 11-12:
467. Ա.Արամյանի հուշերը հեղինակներին տրամադրել են նրա բարեկամները (8 էջ):
468. Մ. Բալյանի նշվ. հուշերը (12 էջ):
469. Հադրութի շրջժողկրթբաժնի արխիվ, թղթ. 6-8:
470. Խ.Ղազարյան, նշվ. հուշեր:
471. Արմիկ Ասրյանի հուշերը հեղինակներին տրամադրել է Միքայել Բալյանը:
472. Հադրութի շրջժողկրթբաժնի արխիվ, թղթ. 4-5:
473. Եղիշե Գասպարյանի հուշերը հեղինակներին տրամադրել է Միքայել Բալյանը:
474. Խ.Ղազարյանի, Մ.Բալյանի հուշերը:
475. Լ. Սանամյանի հուշերը հեղինակներին տրամադրել է Միքայել Բալյանը (6 էջ):
476. Հադրութի շրջժողկրթբաժնի արխիվ, թղթ. 7-8:
477. ԼՂՀ ՊԱ, Լուսաբաժին, ֆ. 30, ց. 1, գ. 164, 165:
478. Անդրանիկ Աբրահամյանի հուշերը հեղինակներին տրամադրել է Խ.Ղազարյանը (8 էջ), իսկ նրա կենսագրության մասին տես Բ.Դավթյան, նշվ. աշխ., էջ 9-10:
479. Այդ մասին նշվում է նաև Ա.Աբրահամյանի հուշերում:
480. ԼՂՀ ՊԱ, Լուսաբաժին, ֆ. 30, գ. 24, 26, 27: Այդ մասին նշված է նաև «Խորհրդային Ղարաբաղ»-ի 1958-1962թթ. համարներում:
481. Նույն տեղում:
482. Վ.Գրիգորյանի հուշերը հեղինակներին տրամադրել են նրա բարեկամները, իսկ նրա կենսագրության մասին տես Բ.Դավթյան, նշվ. աշխ., էջ 52:
483. Այդ մասին իր հուշերում պատմում է Ս.Ղուկասյանը: Այն հեղինակներին տրամադրել է նրա որդին՝ Շավարշ Ղուկասյանը:
484. Ժորա Աբրահամյանի հուշերը հեղինակներին տրամադրել է նրա գործընկեր Բորիս Բաղրյանը (8 էջ):
485. Նույն տեղում:
486. Վ.Անտոնյանի նշվ. հուշերը:
487. Արմո Ներսիսյանի գիտամանկավարժական գործունեության մասին իր հուշերում պատմում են սույն գրքի համահեղինակ Գ.Հարությունյանը և նրա գործընկեր Սամվել Ղուկասյանը:
488. Ա.Հովհաննիսյանի հուշերը հեղինակներին է տրամադրել Սամվել Ղուկասյանը (9 էջ):
489. Ա. Ներսիսյանի անձնական արխիվային փաստաթղթերը հեղինակներին տրամադրել է նրա որդին՝ Կարեն Ներսիսյանը:
490. Ս.Ղուկասյանի նշվ. հուշերը: Նաև՝ Թեմուր Ամիրջանյանի հուշերը: Այն հեղինակներին է տրամադրել Նաիրա Ամիրջանյանը:
491. Այդ մասին տե՛ս Թեմուր Ամիրջանյանի նշված հուշերը(14 էջ):
492. Արմեն Ավանեսյանի հուշերը հեղինակներին տրամադրել են նրա բարեկամները:
493. Թեմուր Ամիրջանյանի նշված հուշերը, նաև՝ Շուշիի մանկավարժական ուսումնարանը, նշվ. աշխ.:
494. Վարդան Արզումանյանի հուշերը հեղինակներին տրամադրել է նրա գործընկեր Նիկոլայ Բաղդասարյանը:
495. Մեծ շենի դպրոցի ուսուցիչ Վ.Դանիելյանը իր հուշերը տրամադրել է հեղինակներին:
496. Ս.Ղուկասյան, նշվ. աշխ.:
497. Ս.Դավթյանը իր հուշերը տրամադրել է հեղինակներին(4 էջ):
498. Ս. Թամրազյանի հուշերը հեղինակներին տրամադրել է նրա դուստրը՝ Նաիրա Թամրազյանը:
499. Բ.Դավթյան, նշվ. աշխ., էջ 89:

500. Մ.Մանվելյանի գործունեության մասին հեղինակներին տեղեկություններ է տրամադրել նշված դպրոցի կոլեկտիվը:
501. Ա.Տեր Գրիգորյանի գործունեության վերաբերյալ նյութերը պահպանվում են Մարտակերտի շրջանի Վանքի միջն. դպրոցի արխիվում:
502. Ս.Անդրյանի (Ժան Անդրյանի հայրը) անձնական արխիվային նյութերը հեղինակներին տրամադրել են նրա հարազատները:
503. Կարո Դավթյանի հուշերը հեղինակներին տրամադրել է Ա. Պողոսյանը:
504. Բ.Դավթյան, նշվ. աշխ., էջ 60:
505. Հադրութի շրջժողկրթբաժնի արխիվ, թղթ. 4, 5:
506. Հ.Մինասյանի հուշերը հեղինակներին տրամադրել են նրա հարազատները:
507. Խ.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 64-65:
508. Թ. Ամիրջանյանի նշված հուշերը, նաև՝ Ա.Խաչատրյանի անձնական արխիվ, թղթ. 1-8: Այն հեղինակներին տրամադրել է որդին՝ Ա.Խաչատրյանը:
509. Նույն տեղում:
510. Ա.Մարտիրոսյանի գործունեության մասին փաստագրական նյութերը պահպանվում են Ստեփանակերտի թիվ 1 դպրոցի արխիվում, թղթ. 4, 5, 6:
511. Ս.Դավթյանը իր հուշերը տրամադրել է հեղինակներին (6 էջ):
512. Ստեփանակերտի թիվ 2 դպրոցի արխիվ, թղթ. 4, 5:
513. Մ.Մուսայելյանի հուշերը հեղինակներին տրամադրել է նրա գործընկեր Ն.Պետրոսյանը (սույն գրքի համահեղինակ Գ.Հարությունյանի ուսանողական ընկերը):
514. Նույն տեղում:
515. Բ.Դավթյան, նշվ. աշխ., էջ 94:
516. Ս.Ղարախանյանի գործունեության մասին փաստագրական նյութերը պահպանվում են Շոշ գյուղի միջն. դպրոցի արխիվում, թղթ. 11-12:
517. Վ.Անտոնյան, նշվ. հուշեր:
518. Բ.Ուլուբաբյան, «Կանթեղ», Երևան, 1986:
519. Ա.Շահնազարյանի հուշերը հեղինակներին տրամադրել է նրա որդին՝ Ս.Շահնազարյանը (6 էջ):
520. Խ.Ղազարյան, նշվ. աշխ. և հուշերը:
521. Նույն տեղում:
522. Վ.Բալայանի գործունեության մասին փաստագրական նյութերը պահպանվում են Մարտունու շրջժողկրթբաժնի արխիվում, թղթ. 11-12, նաև տե՛ս «Շուշիի մանկավարժական ուսումնարան», նշվ. աշխ. էջ 148:
523. Կուսապատի դպրոցի արխիվ, թղթ. 2-3:
524. Խ.Դանիելյանի հուշերը հեղինակներին տրամադրել են նրա բարեկամները:
525. Մարտակերտի շրջժողկրթբաժնի արխիվ, թղթ. 4:
526. Մ.Բեգլարյան, նշվ. հուշեր:
527. Ստեփանակերտի թիվ 7 դպրոցի արխիվ, թղթ. 6-7, նաև՝ գործընկեր Լազր Թումանյանի հուշերը:
528. Նույն տեղում:
529. Խ.Ղազարյան, նշվ. աշխ. և հուշերը:
530. Ե.Ղահրամանյանի հուշերը (4 էջ) հեղինակներին է տրամադրել նշված դպրոցի կոլեկտիվը:
531. Իսահակ Ալավերդյանի գործունեության վերաբերյալ փաստագրական նյութերը հեղինակներին տրամադրել է դուստրը՝ Կարինե Ալավերդյանը:
532. Ս.Հակոբյանի հուշերը հեղինակներին տրամադրել է դուստրը՝ Լ.Հակոբյանը:
533. Ռ.Բաղդասարյանի նշվ. հուշերը:
534. Շ.Քամալյանը իր հուշերը տրամադրել է սույն գրքի համահեղինակ Արպատ Ավանեսյանին:
535. Լ.Հարությունյանի հուշերը հեղինակներին տրամադրել է նրա գործընկեր Մ.Բեգլարյանը, նրա գործունեության վերաբերյալ փաստագրական նյութերը պահպանվում են Աշանի դպրոցում:

536. Մ.Բեգլարյանը իր հուշերը տրամադրել է հեղինակներին:
537. Ս.Արամյանի նշվ. հուշերը (այն տրամադրել է հեղինակներին նրա որդին՝ Կարեն Արամյանը):
538. Վ.Անտոնյանը իր հուշերը տրամադրել է սույն գրքի համահեղինակ Ա.Ավանեսյանին:
539. Խ.Ղազարյան, նշվ. հուշերը:
540. Ս.Ղուլյանի գործունեության վերաբերյալ փաստագրական նյութերը հեղինակներին տրամադրել է որդին՝ Վահրամ Աթանեսյանը:
541. Ա.Խաչատրյան, Գ.Հարությունյան, Շուշիի մանկավարժական ուսումնարան, Ստեփանակերտ, 2006:
542. «Փայլակ», 1915, մարտ, թ. 6:
543. ԼՂՀ ՊԱ, Լուսաբաժին, ֆ. 10, g. 1, թ. 12, 14, 16:
544. «Խորհրդային Ղարաբաղ», 1922-1923թթ. համարները:
545. Ա.Քամալյանի նշված «Ձեկուցագրեր», էջ 42-43:
546. Նույն տեղում:
547. «Խորհրդային Ղարաբաղ», 1930թ. 6 դեկտեմբերի:
548. Մ.Մելքումյանը անձնական արխիվային տվյալները տրամադրել է սույն գրքի համահեղինակ Գ.Հարությունյանին 2003թ. հունիսին:
549. Ա.Խաչատրյան, Գ.Հարությունյան, նշվ. աշխ., էջ 48:
550. Արսեն Խաչատրյանի անձնական արխիվ, թղթ. 16:
551. Ա.Քամալյանի նշված «Ձեկուցագրեր», էջ 42: Նաև՝ Ա.Դանիելյան, Հարազատ օջախ (գյուղտեխնիկումի 70-ամյակի առթիվ), Երևան, 1983:
552. ԼՂՀ ՊԱ, ֆ. 10, g. 1, գ. 16, 17:
553. Ա.Ավանեսյան, Գ.Հարությունյան, Արցախի կրթական համակարգը, հատ. 1, 2014թ. էջ 206:
554. Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանի 40-ամյա պատմությունը, Ստեփանակերտ, 2001, էջ 3:
555. Խ.Թոռոջյան, Ռոմանոս Մելիքյան, Երևան, 1960, էջ 48:
556. Ա.Քամալյան, «Ձեկուցագրեր», էջ 112-113:
557. Ի.Ղուկասյան, Հայացք 70-ամյա բարձունքից, Ստեփանակերտ, 2002:
558. Ա.Դանիելյան, նշվ. աշխ. էջ 17-18:
559. Ի.Ղուկասյան,նշվ. աշխ. էջ 23-24:
560. Օրենք ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման 1946-1950թթ. հնգամյա պլանի մասին, Երևան, 1946, էջ 12-13:
561. Ա.Մանգասարյանը իր հուշերը տրամադրել է հեղինակներին 2014թ. մարտին:
562. Ա.Խաչատրյան, Գ.Հարությունյան, նշվ. աշխ., 2006թ.:
563. Մ.Մելքումյանը իր հուշերը տրամադրել է իր ասպիրանտին՝ սույն գրքի համահեղինակ Գ.Հարությունյանին, 2003թ. մայիսին:
564. Գ.Բորյանի, Բ.Ջանյանի հուշերը ժամանակին սույն գրքի համահեղինակ Գ.Հարությունյանին է տրամադրել Մ.Մելքումյանը:
565. Փ.Ենգոյան, Երևանի պետական համալսարանը Մեծ Հայրենականի տարիներին, Երևան, 1975, էջ 183:
566. Նույն տեղում:
567. Ստեփանակերտի գյուղտեխնիկումի շրջանավարտների գործունեության մասին տե՛ս Ա.Դանիելյան, նշվ. աշխ., նաև՝ գյուղտեխնիկումի արխիվ, թղթ. 11, 12, 13:
568. ԼՂՀ ՊԱ, ֆ. 7, g. 1, գ. 78, թ. 172-174:
569. Նշված մանկավարժների հուշերը հեղինակներին տրամադրել են նրանց բարեկամներն ու հարազատները:
570. Արսեն Խաչատրյանի անձնական արխիվում պահպանվում են նշված փաստերը:
571. Թեմուր Ամիրջանյանի նշվ. հուշերը:
572. Սուրեն Ղարախանյանի հուշերը հեղինակներին տրամադրել է նրա դասընկեր Միքայել Բեգլարյանը:

573. Նույն տեղում:
574. Նույն տեղում, նաև՝ Վլադիմիր Անտոնյանի նշվ. հուշերը:
575. Ս.Սողոմոնյանի նշվ. հուշերը:
576. Վ.Աղաբեկյանի նշվ. հուշերը:
577. Նորայր Ավետիսյանի հուշերը(12 էջ) հեղինակներին տրամադրել է նրա թոռը՝ ԱրՊՀ դասախոս Գայանե Մարգարյանը:
578. Մ.Սարգսյանի հուշերը Ա.Ավանեսյանին տրամադրել են նրա հարազատները:
579. Զ.Պետրոսյանի հուշերը հեղինակներին տրամադրել է որդին՝ Բ.Պետրոսյանը:
580. Մարտակերտի շրջժողկրթբաժնի արխիվ, թղթ. 6-7:
581. Խ.Ղազարյան, նշվ.աշխ.:
582. Մ.Աղաջանյան, նշվ. աշխ.: Նաև՝ Ռոզա Աթասյանի նշվ.հուշերը իր ուսուցչի մասին:
583. Թ. Ամիրջանյանի նշվ. հուշերը:
584. Նույն տեղում:
585. Մ.Առուշանյանի գործունեության վերաբերյալ փաստագրական նյութերը պահպանվում են Չլդրանի միջն. դպրոցի արխիվում:
586. Մ.Աղաջանյան, նշվ. աշխ. էջ 301-302:
587. Խ.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 122:
588. Կուսապատի դպրոցի արխիվ, թղթ. 6, 7:
589. Ա.Մարտիրոսյանի հուշերը սույն գրքի համահեղինակ Ա.Ավանեսյանին տրամադրել է նրա դուստրը՝ Կ.Մարտիրոսյանը:
590. Նշված շրջանավարտների հուշերը գրքի հեղինակներին տրամադրել են նրանց բարեկամները և Մ.Աղաջանյանը:
591. Մ.Աղաջանյան, նշվ. աշխ. էջ 322:
592. Ռոզա Աթասյանի նշվ.հուշերը:
593. Ա.Ավանեսյան, Արցախի բուհական համակարգը, Ստեփանակերտ, 2013, էջ 45-46:
594. ԱրՊՀ արխիվ, գ. 6, 7, 8:
595. Նույն տեղում:
596. Էսթեր Մովսիսյանի գործունեությանը վերաբերող նյութերը պահպանվում են Մարտակերտի շրջանի Վանք գյուղի միջն. դպրոցի արխիվում:
597. Ա.Խաչատրյան, Գ.Հարությունյան, Շուշիի մանկավարժական ուսումնարան, 2006, էջ 107:
598. Խ.Ղազարյան, նշվ.աշխ., էջ 100:
599. Մ.Աղաջանյան, նշվ. աշխ. էջ 168:
600. Բ.Դավթյան, նշվ. աշխ. էջ 20:
601. Ա.Խաչատրյան, Գ.Հարությունյան, նշվ. աշխ. էջ 163:
602. Նույն տեղում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ (1920-1941թթ.)
1. Դպրոցական գործի վիճակը Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության հաստատման առաջին տարիներին (1920-1923թթ.)..... 9
2. Նոր դպրոցի և կրթության համակարգի ստեղծման առաջին քայլերը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում (1923-1930թթ.)..... 14
3. Ուսումնադաստիարակչական աշխատանքների համակարգը ԼՂԻՄ հանրակրթական դպրոցներում (1923-1930թթ.) 24
4. Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կրթության համակարգում իրականացվող բարեփոխումները (1930-1940թթ.) 34
5. Ուսումնադաստիարակչական աշխատանքների համակարգը ԼՂԻՄ հանրակրթական դպրոցներում (1930-1940թթ.)..... 42
6. Ուսուցչական համագումարները և կոնֆերանսները, մանկավարժական կադրերի պատրաստումը և վերապատրաստումը (1920-1940թթ.) 57

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941-1945թթ.)
1. Հանրակրթական դպրոցի հիմնական խնդիրները Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում (1941-1945թթ.) 73
2. Հանրակրթական դպրոցի ուսումնադաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական և հանրօգուտ աշխատանքները Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945թթ.) 84
3. Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցի հայ ուսուցիչների ու նրանց սաների սխրանքները Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում (դպրոց-ռազմաճակատ) 103
4. ԼՂԻՄ հանրակրթական դպրոցի հայ ուսուցիչների ու աշակերտների սխրանքները Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում և հետպատերազմյան ժամանակաշրջանում նրանց հասարակական-քաղաքական, ռազմական և մանկավարժական գործունեությունը (դպրոց- ռազմաճակատ-դպրոց) 131

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1946-1988թթ.)
1. ԼՂԻՄ կրթական համակարգի զարգացման փուլերը, իրականացվող բարեփոխումները հետպատերազմյան վերականգնման ու զարգացման տարիներին (1946-1988թթ.) 163
2. Ուսումնադաստիարակչական աշխատանքների համակարգը Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցներում (1946-1988թթ.) 180
3. Ուսուցչական համագումարները և կոնֆերանսները, մանկավարժական որոնումներ, առաջավոր փորձի վերլուծություններ, մեկնաբանումներ, միտումներ 217

4. Մանկավարժական կադրերի պատրաստումը և
վերապատրաստումը (1946-1988թթ.) …….....238

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐԳԱՍԱՎՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1923-1988թթ.)

1. ԼՂԻՄ մարզլուսբաժնի (մարզժողկրթբաժնի) վարիչների
գործունեությունը (1923-1988թթ.) ……..... 249
2. ԼՂԻՄ-ի շրջանային կրթության բաժինների վարիչների
գործունեությունը (1923-1988թթ.) ……... 276
3. ԼՂԻՄ-ի ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտի(ՈՒԿՄԻ)
տնօրենների և վերապատրաստման դասընթացների նշանավոր
կազմակերպիչների գործունեությունը (1963-1988թթ.)……..... 313
4. ԼՂԻՄ-ի վաստակաշատ մանկավարժների, ժողովրդական ուսուցիչների
գործունեությունը (1923-1988թթ.) ……..... 329

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ (1920-1988թթ.)

1. Միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների
կազմակերպումը և բարեփոխումների իրականացումը
կրթության համակարգում (1920-1940թթ.) ……..... 376
2. Միջնակարգ մասնագիտական կրթությունը Հայրենական մեծ
պատերազմի տարիներին (1941-1945թթ.) …….....390
3. Միջնակարգ մասնագիտական կրթության զարգացումը
հետպատերազմյան վերականգնման տարիներին (1946-1988թթ.) ……398
4. Միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների
նշանավոր շրջանավարտների գործունեությունը (1930-1988թթ.) ……... 405

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՓՈՒԼԵՐԸ (1938-1988թթ.)

1. Երկամյա մանկավարժական ինստիտուտի (ուսուցչական ինստիտուտի)
գիտակրթական գործունեությունը (1938-1953թթ.) ……..... 419
2. Երկամյա մանկավարժական ինստիտուտի տնօրենների
գործունեությունը (1939-1953թթ.)…….....425
3. Երկամյա մանկավարժական ինստիտուտի մանկավարժական կադրերը... 430
4. Երկամյա մանկավարժական ինստիտուտի շրջանավարտները…..... 435
5. Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի գիտակրթական
գործունեությունը (1969-1988թթ.), համառոտ տեղեկություններ …..……454

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԿԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1920-1988թթ.)..... 463

ԱՄՓՈՓՈՒՄ…… 480
ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ…….....486

ԱՐՊԱՏ ՍԱՆՋԱՆԻ ԱՎԱՆԵՍՅԱՆ
Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ԳՐԻԳՈՐԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ (1923-1988թթ.)

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

Խմբագիր՝ Ա.Գասպարյան
Սրբագրիչ՝ Ա.Գասպարյան
Համակարգչ. շարվածքը՝ Մ.Գաբրիելյանի
Համակարգչ. էջադրումը՝ Թ.Հարությունյանի

Թուղթը՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16,
ծավալը՝ 31.5 տպ. մամուլ: Տառատեսակը՝ Arial Armenian: Տպաքանակը՝ 300:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
Հ.Հակոբյան 25, Ստեփանակերտ, 2015
Հեռ.՝ +37447946360, +37497302002, E-mail:dizak-plus@mail.ru